ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆ

ԵՐԿԵՐ

4

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE
REPUBLIC OF ARMENIA
INSTITUT OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

ERVAND LALAYAN

WORKS

IN SIX VOLUMES
VOLUME

4

PUBLISHING HOUSE OF THE INSTITUTE OF
ARCHAEOLOGY AND ETNOGRAPHY
YEREVAN 2021

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ЕРВАНД ЛАЛАЯН

ТРУДЫ

В ШЕСТИ ТОМАХ
ТОМ

4

ИЗДАТЕЛЬСТВО ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ
И ЭТНОГРАФИИ
ЕРЕВАН 2021

ԿՐԿՆՕՐԻՆԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

108300

ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆ

ԵՐԿԵՐ

ՎԵՑ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ

4

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2021

ՀՏԴ 93/94:39
ԳՄԴ 63.3+63.5
Լ 140

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Հատորը կազմել և տպագրության է պատրաստել ՍՈՒՐԵՆ ՀՈՎՀՈՍՓԱՆԸ
Պատասխանատու խմբագիրը՝ պատ. գիտ. թեկնածու Ս. Գ. ՀՈՎՀՈՍՓԱՆ
Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսները՝
պատ. գիտ. դոկտոր Ս. Ս. ՄԿՐՏՉՓԱՆԸ և
բան. գիտ. դոկտոր Թ. Լ. ՀԱՓՐԱՊԵՏՓԱՆԸ

ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՓԱՆ
Երկեր: Վեց հատորով, պատ. խմբ.՝ Ս.Գ. Հովհաննիսյան; ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակչություն, 2021:
Լ 140 Հատոր 4, Հատորը կազմ. և տպագր. պատրաստ. Ս.Գ. Հովհաննիսյանը, 2021, 692 էջ:

Հատորն ընդգրկում է Այունիքի, Վայոց ձորի և Գեղարքունիքի պատմազգագրական շրջանների վերաբերյալ պատմական, տեղագրական, ազգագրական, վիմագրական և այլ նյութեր, որոնք Ե. Լալայանը հրատարակել է «Ազգագրական հանդեսի» հատորներում:

Առանձնակի կարևորություն ունեն տարածաշրջանի ճարտարապետական հուշարձաններին նվիրված բաժինները: Բուն նյութից բացի հատորն ունի նաև լուսանկարներ, ծանոթագրություններ և ցանկեր:

Նախատեսված է ազգագրագետների, պատմաբանների, բանագետների և ընթերցող լայն զանգվածների համար:

ISBN 978-9939-886-24-4

ՀՏԴ 93/94:39
ԳՄԴ 63.3+63.5

© Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատարակչություն, 2021
© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Անվանի ազգագրագետ Երվանդ Լալայանի «Երկերի» չորրորդ հատորն ընդգրկում է Սյունիքի (Զանգեզուր), Վայոց ձորի (Շարուր-Դարալագյազ) և Գեղարքունիքի (Նոր Բայազետի գավառ) նյութական և հոգևոր մշակույթը: Հատորի շարադրման հիմք են ծառայել հեղինակի հավաքած և տեղացի մտավորականների տրամադրած նյութերը, որոնք գրառվել են նրա իսկ կազմած ծրագրով:

Սյունիքում, Վայոց ձորում և Գեղարքունիքում նա առանձնացնում է ներէթնիկ տարբեր խմբեր, որոնց ներկայացնում է իրենց բնորոշ առանձնահատկություններով: Ազգագրական նյութերը հավաքվել են հետևյալ ծրագրով. պատմական տեսություն, տեղագրություն, կլիմա, բուսական և կենդանական աշխարհ, բնակավայրեր, բնակչություն, բնակարան, զգեստ և զարդ, ընտանեկան բարք (ամուսնություն, տղաբերք և կնունք, ընտանեկան կյանք, հիվանդություն և բժշկություն, մահ, թաղում, մեռելոց հիշատակ, հոգու և հանդերձյալ կյանքի մասին), տոներ:

Առանձնակի հետաքրքրություն ու կարևորություն են ներկայացնում տարածաշրջանի հնագիտական և ճարտարապետական հուշարձաններին նվիրված բաժինները:

Մեծ է Ե. Լալայանի ավանդը նաև հայ վիմագրության ուսումնասիրության ասպարեզում: Հայ իրականության մեջ նա առաջիններից էր, որ ձեռնամուխ եղավ վիմագրերի վերծանության ու հրատարակության: Նրա ընդօրինակած չատ վիմագրեր ձեռք են բերել սկզբնաղբյուրային արժեք, քանի որ չեն պահպանվել:

Ե. Լալայանի հրատարակվող աշխատությունները արժեքավորվում են նաև լուսանկարներով ու չափագրություններով:

1904 թ. նա լուսանկարել է Վայոց ձորի նշանավոր վանական համալիրներն ու արձանագրությունները, սակայն մի ավազակային խումբ դրանց նեգատիվներն ու այլ նյութեր գողացել է: 1908 թ. ժամանակի նշանավոր լուսանկարիչ Դ. Երմակովի հետ նա մեկնել է Վայոց ձոր: Նա այդ լուսանկարներն օգտագործել է իր կազմած «Հայկական արձանագրություններ» խորագրով ալբոմում, որը 1914 թ. արժանացել է Լազարյան ճեմարանի Քանանյան մրցանակին:

Հատորում ընդգրկված այն վիմագիր արձանագրությունները, որոնք հետագայում հրատարակվել են «Դիվան հայ վիմագրության» համապատասխան մատենաշարում, տողատակում հղվել են չեղատառով, մնացած դեպքերում, երբ որևէ նշում չկա, ծանոթագրությունները հեղինակինն են:

Այս հատորում, ինչպես նախորդներում, պահպանվել է հեղինակի ոճն ու լեզուն, կատարվել են միայն մասնակի չակումներ, հին ուղղագրությունը փոխարինված է նորով, տպագրական ակնհայտ վրիպակներն ուղղվել են: Նախապես պլանավորված հինգ հատորի փոխարեն Ե. Լալայանի աշխատությունները կտպագրվեն վեց հատորով: Առաջին հինգ հատորում կընդգրկվեն «Ազգագրական հանդեսում» հրատարակված նյութերը: Վերջին վեցերորդ հատորում, կընդգրկվեն ազգագրության, բանահյուսության, պատմության, հնագիտության և մշակույթի այլ բնագավառներին վերաբերող Ե. Լալայանի ուսումնասիրություններն ու հոդվածները:

ԳԻՐՔԸ ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ՌԱՖԻԿ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

ՌԱՖԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

Ծնվել է 1961թ., վայոց Ձորի Արենի (պատմական Արփա) գյուղում:

Կինը՝ Գայանե Շահգելդյանն է, ունեն երեք զավակներ և հինգ թոռներ: Հայրը՝ Կառլեն Ստեփանի Սիմոնյանը (1932-1973), կոլտնտեսությունում վարորդ էր, հայտնի էր իր եռանդով: Մայրը՝ Հասմիկ Հմայակի Դավթյանը (1936-1985), ամուսնու մահից հետո ստիպված մի քանի տեղ սկսեց աշխատել՝ ապահովելու համար ընտանիքի բարվոք վիճակը:

Ռ.Սիմոնյանը ավարտել է ԵՐԺՏԻ-ն: Սովորելուն զուգահեռ եղեգնաձորի տարբեր հիմնարկ-ձեռնարկություններում աշխատել է տնտեսագետ, հաշվապահ: Երբ սկսվեց 88-ի Արցախյան շարժումը, նա Վայոց Ձորում շարժման ակտիվիստներից էր և շրջանում առաջին իշխանափոխությունը՝ Արենի գյուղում կատարվեց նաև իր մասնակցությամբ: 1993թ. կանգ առավ շրջանի միակ պետական դինեգործարանը՝ էլ ավելի ծանրացնելով շրջանի գյուղացիների վիճակը: Ուստի 1994թ. ՀՕՖ-ի փոքրիկ օժանդակությամբ մի քանի հոգով հիմնեցին շրջանում առաջին մասնավոր փոքրիկ գինու արտադրամաս, որն իր տոկունության, ու նաև Հայաստանի տնտեսությանը աջակցող մի շարք Ամերիկյան և միջազգային կազմակերպությունների հետ ստեղծված լավ հարաբերությունների շնորհիվ կուլ չգնաց այդ ժամանակներում իշխող քրեաօլիգարխիային: Եվ արդեն քառորդ դար է տասնյակ աշխատատեղիներով ու խաղողի մեծաքանակ մթերումներով ապահովում է տասնյակ ընտանիքների տարեկան եկամուտները:

ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԱՎԱՌ

ՍԻՍԻԱՆ
ՆՑՈՒԹԵՐ ԱՊԱԳԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՑԱՆ ՀԱՄԱՐ

ԱՌԱՋԱԲԱՆ

Նպատակ դնելով մեզ ազգագրական նյութեր հավաքել ամբողջ Զանգեզուրի գավառի մասին, որ բռնում է Սյունյաց աշխարհի մեծագույն մասը և բնակված է բավական տարբեր ժողովուրդներով, մենք որոշեցինք նրան բաժանել մի քանի՝ ազգագրական տեսակետից անհրաժեշտ մասերի և յուրաքանչյուրն առանձնապես ուսումնասիրել հետևյալ ծրագրով.

1. Պատմական տեսություն. Այս մասում մենք չատ համառոտ կերպով հիշելու ենք մեր հին մատենագիրների ավանդածները մեր ուսումնասիրելիք գավառի մասին, և ավելի մանրամասն պիտի կանգ առնենք մելիքների պատմության վրա:

2. Տեղագրություն. Այս մասում ավելի ուշադրություն դարձնելով բնական մասի վրա՝ պիտի նկարագրենք առավելապես այժմյան քաղաքական վիճակը, միանգամայն հիշելով և հինը:

3. Բնակիչների մասին կարելվույն չափ մարդաբանական տեղեկություններ:

4. Բնակարանը և իր պարագաները:

5. Ձգեստը և զարդը:

6. Ընտանեկան բարք. Որոշելով յուրաքանչյուր չրջանի բնիկ ժողովուրդը՝ հավաքելու ենք ազգագրական տեղեկություններ նրանց ընտանեկան բարքի մասին (ամուսնություն, տղաբերք և կնունք, ընտանեկան կյանք, հիվանդություն և բժշկություն, մահ, թաղում, մեռելոց հիշատակ, հոգու և հանդերձյալ կյանքի մասին):

7. Տարվա կարևորագույն տոները և նրանց առթիվ կատարվող ծեսերն ու ժողովրդական սովորությունները:

8. Ժողովրդական բանավոր գրականություն:

Երբ այս ծրագրով նյութեր կհավաքենք Զանգեզուրի ամբողջ գավառի բոլոր մասերի վերաբերությամբ՝ այն ժամանակ կտանք ամբողջ գավառին վերաբերյալ հետևյալ մեծ հոդվածները.

1. Վիճակագրական տեղեկություններ ամբողջ գավառի վերաբերյալ:

2. Ամբողջ գավառի տնտեսական դրությունը:

3. Կերակուր և խմիչք:

4. Հավատք:

5. Ազգային իրավաբանական սովորություններ:

6. Հայ գրչագիրներ:

Մեր այսպես վարվելու գլխավոր պատճառն այն է, որ թե՛ տնտեսական և թե՛ վիճակագրական տեղեկությունները, որոնց մեծագույն մասը պաշտոնական հիմնարկություններից պետք է խնդրել, խառն են և ամբողջ գավառին են վերաբերում և ոչ թե գավառի մեր ցանկացած մասերին առանձնապես: Մեկ էլ որ համեմատությունների և ընդհանուր եզրակացությունների համար անհրաժեշտ է, որ միասին նկատվեն:

Ինչ վերաբերում է աննդին՝ պետք է ասեմ, որ մեևնույն գավառի զանազան մասերի մեջ մեծ տարբերություններ չեն նկատվում. մանավանդ որ փոքրիկ առանձնահատկություններն էլ դժվար չէ առանձնապես հիշել:

Հավատքի բաժնում մենք հավաքելու ենք գլխավորապես կռապաշտական կրոնների մնացորդները, սնոտիապաշտությունները, կախարդությունները և այլն, որոնք առանձնապես բնիկ ժողովրդի հետ այնքան էլ սերտ կապված չեն, և կարող են վերագրվել ամբողջ գավառին, թեև հարկավոր դեպքերում հիշելու ենք տեղը, ժողովուրդը և այլն:

Ազգային իրավաբանական սովորությունների մեջ մենք առավելապես աշխատելու ենք նյութեր հավաքել մելիքների ժամանակ տիրապետող սովորություններից, թեև այդ միջոցներում միևնույն գավառում մի կամ մի քանի մելիքներ են եղել, բայց նրանք իրենց կարգերով, իրավունքներով ու սովորություններով միմյանցից շատ չեն տարբերվել:

Մեր ճանապարհորդության միջոցին մենք իբր ուղեցույց ընդունում ենք բազմարդյուն Հայր Ալիշանի «Սիսական»-ը: Այս գեղեցիկ աշխատությունը մեզ արդեն բավական նպաստեց մեր անցյալ ամառվա ճանապարհորդության միջոցին: Վերաստուգել այստեղ նկարագրված տեղերը և լրացնել, ահա այս կլինի մեր նպատակը մեր աշխատության տեղագրական բաժնի մեջ: Իսկ նրա թանկագին պատմական տեղեկությունները մեզ կառաջնորդեն ավելի ուշադրություն դարձնելու պատմական միջավայրերի վրա: Այս անգամ տպագրելով «Սիսիան»-ը՝ մենք արդեն պատրաստ ունենք նաև Զանգեզուրի ոստիկանական չրջանի տեղագրությունը, որ լույս կտեսնի Հանդեսի ներկա տարվա Բ դրքում: Իսկ այս ամառ մենք կրկին կշարունակենք մեր ճանապարհորդությունը:

Խնդրում ենք ձեռնհաս անձանց՝ քննադատել մեր ընդունած այս ծրագիրը և մատնանիշ անել այն միջոցների վրա, որոնք կարող են նպաստել գործը ավելի լրիվ կատարելու:

Ս Ի Ս Ի Ա Ն

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Զանգեզուրի գավառը, որ Հայոց միրապետության ժամանակ կազմում էր Սյունյաց աշխարհի մի մասը, այժմ ընկնում է Ելիսավետպոլի (Գանձակի) նահանգի մեջ: Նրա սահմաններն են՝ արևելքից և արևելահյուսիսից՝ Ջիբրայիլի և Շուշու գավառները, հյուսիսից՝ Ջիվանշիրի գավառը, արևմուտքից և արևմտահարավից՝ Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի գավառները, և հարավից ու արևելահարավից՝ Արաքս գետը, որ միանգամայն սահմանագիծ է Ռուսաստանի և Պարսկաստանի մեջ:

Այս ընդարձակ գավառը բռնում է 137,32 քառ. մղոն տարածություն և աստրաբաժանվում է չորս ոստիկանական մասերի՝ Սիսիան, Զանգեզուր, Ղափան և Մեղրի: Սրանցից առաջինը կազմում է մեր այժմյան հետազոտության չրջանը:

Սա հին ժամանակ աստրաբաժանված էր երկու մասի. արևելահարավային մասը կոչվում էր Ծղուկ, իսկ արևմտահյուսիսայինը, այժմյան Բազարքենտի մասը՝ Այլախ:

Ծղուկը կոչված է նաև Սյունիք կամ Սիսական, որպես Սյունյաց իշխանների բուն գահատեղի: Այս անունը ծագում է, Մովսես Խորենացու ասելով, Գեղամի որդի Սիսակից, իսկ Հայր Ալիշանի կարծիքով՝ ավանդական Սևուկ նահապետից, որից առաջացել է Սևորդյաց ազգը և որի անունով էլ թերևս Գեղամա լիճը կոչվել է Սևան: Սիսական անունը, փոքր-ինչ փոխված, մինչև այժմ էլ մնացել է Ծղուկի դաշտային մասի վրա, որ կոչվում է Սիսիան:

ՍՓՈՒՆՑԱՑ ՄԵՏՐԱՊՈԼՏՈՒԹՅՈՒՆ

Ծղուկ գավառը Սյունյաց աշխարհի այն մասն է, որ միջավայր է կազմել կրոնական կյանքի զարգացման, մինչդեռ քաղաքական կյանքը, թեև սկիզբ է առել նույն այս գավառում, սակայն չուտով հեռացել է այստեղից և կենտրոնացել Բաղք և Կապան գավառներում: Ուստի և ներկա գրքի մեջ մենք համառոտ կերպով կպատմենք Սյունիքի մետրապոլտուության պատմությունը, իսկ քաղաքական պատմությունը կթողնենք վերոհիշյալ գավառների ուսումնասիրության միջոցին անելու: Սակայն որովհետև վերջին դարերում այս գավառները գրեթե միմյանցից անկախ կառավարվել են առանձին մելիքական տներով, ուստի և մենք առանձին-առանձին կպատմենք այդ մելիքների գործերը՝ քաղելով առավելապես բանավոր և մասամբ գրավոր աղբյուրներից:

Ավանդության ասելով՝ քրիստոնեությունը Սյունիքում քարոզել է նախ ս. Բարթուղիմեոս առաքյալը, և հետո, ս. Գրիգոր Լուսավորչի ժամանակ,

Տրդատի հետ մկրտվել է և Սյունյաց իշխանը: Սա Լուսավորչի հետ գնացել է Կեսարիա և վերադառնալիս Տարոնում, Գիսանյան կռքերի քրմերի դեմ մղած պատերազմում, մեծ քաջություններ է արել, ապա խնդրել է Տրդատից և ս. Գրիգորից մի ուսուցիչ յուր նահանգի համար, և ստանալով ս. Գրիգորի բերած մի ասորի հոգևորական՝ գալիս է իր աշխարհը, ուր մկրտվում են նրա ամբողջ ընտանիքը և բոլոր ժողովուրդը:

Նա՝ իշխանը, քանդում է կռատուները և պատրաստվում է նրանց տեղ եկեղեցիներ շինելու, երբ կանչվում է ս. Գրիգորի և Տրդատի հետ միասին Հռոմ գնալու: Վերադառնալուց հետո ս. Գրիգորի հետ միասին շրջում է ամբողջ Սյունյաց երկիրը և պատշաճավոր տեղերում եկեղեցիներ շինում: ս. Գրիգոր վերադառնալով Վաղարշապատ իր մերձավոր աշակերտներից մեկին, Գրիգորիս անունով, «այր ճշմարիտ և լավ, լի ամենայն հմտությամբ», տալիս է այս իշխանին, որ տանի «վիճակեցուցանել յեպիսկոպոսութիւն աշխարհին Սիւնեաց»: Եվ ահա այս Գրիգորիսից է սկսվում Սյունյաց եպիսկոպոսությունը:

Արշակ Բ ժամանակ Գրիգորիս Սյունյաց եպիսկոպոսը, «զլուսն եպիսկոպոսացն Հայոց», Ներսեսի հետ միասին գնաց Կեսարիա, վերջինիս կաթողիկոս ձեռնադրելու, և սրա համար էլ՝ վերադարձին մեծամեծ պատիվներ ստացավ: Ներսես տվեց նրան «բազմական ոսկեթել», և Սյունիքը նախաթոռ կարգեց, որ հռոմ լեզվով կոչվում է «պռոտոֆրաւնտէս»:

Գրիգորիսին հաջորդեց Մաշտոցը, որ մի քանի տարուց հետո վախճանվեց և այնուհետև եպիսկոպոսական աթոռը միառժամանակ թափուր մնաց, որի պատճառը հետևյալն էր. Սյունյաց առաջին եպիսկոպոսները նստում էին Շաղատ գյուղում, որ միևնույն ժամանակ և իշխանանիստ էր: Արշակի բանտարկությունից հետո, երբ Սյունյաց երկիրն անցավ Պարսից ձեռքը՝ Սյունյաց տեր Անդոկ իշխանը, Փառանձեմ թագուհու հայրը, պարսից արքունիքում էր լինում: Այստեղ մի անգամ հայ նախարարների բարձերը որոշելիս՝ Շապուհ Բ տասնչորսերորդ տեղը տվեց Անդոկին: Սա իրան անպատված համարելով՝ չմասնակցեց ուրախության սեղանին: Իսկ քիչ հետո, երբ Շապուհ Բ գնաց խազիրների դեմ պատերազմելու, Անդոկը 1700 հոգով հարձակվեց Թագավորանիստ Տիսբոնի վրա, կողոպտեց և փախավ:

Եվ որպեսզի իր երկիրը Շապուհի վրեժխնդրության ավար չդառնա, հրամայեց իր հպատակներին, որ իրենց գույքերը պահեն և փախչեն: Ուսոի և Սյունիքի բոլոր գավառներից հավաքեցին Թանկագին խաչերն ու սրբերի մասունքները, դրին Շաղատի «քարկով և զմբեթաձեւ» եկեղեցու մեջ և հողով ծածկելով՝ իրենք ցրվեցին զանազան տեղեր:

Կարճ միջոցից պարսից զորքը լցվեց Սյունիք, քանդեց, ավերեց երկիրը և երբ եկավ Շաղատ՝ մի քանիսը բարձրացան եկեղեցաբլրի վրա, բայց «յանկարծօրէն թնդիւն որոտման չարժումն եղև, և յեկեղեցաբլրէն արտաքս ձգեալք՝ վերելեակքն պարսից սատակեցան»: Որից ահաբեկվելով, պարսից

գունդը փախաւ, առանց ձեռք տալու եկեղեցուն: Իսկ Անդոկ իշխանը գնաց Թեոդոս կայսեր մոտ, ուր պատրկաց պատրիկ տիտղոս առացաւ և մնաց այնտեղ մինչև իր մահը: Նրա միակ որդին՝ Բարիկը, կամենալով վերստին ժառանգել իր հայրենական երկիրը՝ ձգտած եկաւ Պարսից Շապուհի արքունիքը:

Այստեղ իր քաջութեամբ հռչակ առացաւ և մեհնամարտի դուրս գալով հոնաց Հունագուր հսկայի հետ, որ ասպատակում էր պարսից երկրները, նրան սպանեց: Ապա՝ որպես վարձատրութեյուն խնդրեց Շապուհ Բ, որ վերցնել տա դարպասի մոտ դրված սանդը, որի մեջ պարսիկները մոխիր ածելով, ծեծում էին և ասում. «Սիւնեաց տէրանցն նախագահութիւն տէրութեանն ընդ այս մոխիրս ի վայր լիցի, և որպիսութիւն նոցին խորհրդոց և կենաց»:

Շապուհ Բ զարմանալով, որ նա Անդոկի որդին է՝ կատարեց նրա խնդիրը և միևնույն ժամանակ վերադարձրեց նրան իր հայրենի երկիրը: Բարիկը եկաւ Շաղատ գյուղը, և երբ բլուրն էր բարձրանում՝ մի եղջերու վազեց նրա առաջից: Բարիկը հետևեց նրան, սակայն սա բարձրացաւ եկեղեցաբլուրը, ուր ձիու ոտքը խրվեց գետնի մեջ, իսկ եղջերուն հանկարծ անհետացաւ: Երբ ձիու ոտքը դուրս քաշեցին՝ տեղից անուշահոտութեյուն բուրեց: Այս բանի վրա զարմանալով՝ Բարիկը քանդել տվեց բլուրը և գտաւ «քարիկոփ չքնաղաչեն» եկեղեցին: Այս գյուղը այնքան նշանավոր էր, որ այնուհետև ամենայն տարի հավաքվում էին այստեղ և տոնում եկեղեցու երեման օրը «իբրև զմայր եկեղեցեաց աշխարհին ամենայն Սիւնեաց»:

Որովհետև այդ օրը աղօթողների ամեն մի խնդրվածք կատարվում էր՝ ուստի Բարիկի հետ եկած Գոր և Գազան պարսիկ եղբայրները հավատացին և իրենց գնդերով ընդունեցին քրիստոնեութեյուն: Բարիկը վիճակ ձգելով՝ տվեց Գազանին՝ Շաղատ գյուղը «հանդերձ եկեղեցեաւն, որ յայնմ ժամանակի Մայր եկեղեցեաց անուանէին», Տիրոտ սքանչելագործ քահանային էլ վանական և սպասավոր կարգեց:

Այս Տիրոտի մասին իր ժամանակին շատ ավանդութեյուններ են կազմվել, որոնցից մի քանիսը մինչև այժմ էլ մնացել են ժողովրդի մեջ: Այսպես, մենք լսել ենք Շաղատի այժմյան բնակիչներից, թե ժամանակով մի քահանա է եղել, որ մի անգամ անցնելով գյուղի մոտակա լճակի մոտով՝ հրամայել է գորտերին, որ լռեն, և նրանք հնազանդել են իրեն: Միևնույն ավանդութեյունը պատմում է նաև Օրբելյանը: Այս Տիրոտը կարգադրել էր, որ կանայք չմտնեն այդ ս. Ստեփանոս կոչված եկեղեցին և կանամբի քահանայք էլ սպասավորութեյուն չանեն այնտեղ, և այս կարգերը 300 տարի շարունակ պահպանվել են:

Ս. Մեսրոպը յուր քարոզութեյունների ժամանակ եկավ Սյունիք և արմատախիլ արեց հեթանոսական կրոնի մնացորդները: Սրա աշակերտ Անանիան

կարգվեց Սյունյաց եպիսկոպոս: Սա ս. Մեսրոպի հետ միասին հնարեց Աղվանից տառերը, ուստի և Աղվանից Եվսեղեն թագավորը պարգևեց նրան «զիւր նշանակն թագաւորական ոսկետուռն վառիւ, և ի գլուխն գունդ ոսկի, և ի վերայ խաչ պատուական, և հրամայէ զայն հանապազ շրջեցուցանել ընդ իւրեանս եպիսկոպոսացն Սիւնեաց ի յիշատակ թագաւորացն Աղուանից»:[1] Անանիայի առաջին գործը եղավ դպրատուն բանալ, որի կառավարությունը հանձնեց իր աշակերտակից Բենիամինին: Այնուհետև այնքան նշանավոր եղավ այս վարդապետարանը, որ առաջինը համարվեց, և ս. Սահակից ու Մեսրոպից իրավունք ստացավ թարգմանություններ ու մեկնություններ աննելու:

Այս դպրոցը շատ ծաղկեցրեց նաև Մաթուսաղա Քերթողը է դարի սկզբում, որ Սյունյաց վարժարանի բոլոր վարդապետների գլուխ կարգվեց, այնպես որ Կոմիտաս կաթողիկոսը, զանց առնելով կաթողիկոսարանի և Արշարունյաց վարդապետարանի բոլոր վարդապետները՝ սրա մոտ ուղարկեց ուսանելու իր եղբորորդի Թեոդորոսին:

Այս վարդապետարանից ելան երկու նշանավոր մատենագիրներ, որոնցից առաջինը Սյունյաց եպիսկոպոս Պետրոս Ինններորդն է (Ե դարի վերջում), Քերթող մականվանված,[2] աշակերտ Մովսես Քերթողահոր: Սա արել է թարգմանություններ, և Անդոկ իշխանի Բաբիկ որդու և Քրիստոսի ծննդյան մասին ներբողներ: Երկրորդը՝ Սյունյաց քսաներկուերորդ եպիսկոպոս Ստեփանոսն է (Ը դարում), որ զանազան թարգմանություններ ունի: Բայց Զ դարի վերջում Սյունյաց եպիսկոպոսների պատիվը պակասեց, որովհետև երբ երկու կաթողիկոսներ նստան, մինը պարսից բաժնում և մյուսը հունաց՝ Սյունյաց եպիսկոպոս Պետրոս Քերթողը հրամայեց իր ժողովրդին, որ աղվաններից ատանան ձեռնադրությունը և մեռոնը, մինչև որ խռովությունը խաղաղի:

Մինչև այս ժամանակ Շաղատը եպիսկոպոսանիստ և նախաթոռ էր համարվում, սակայն այս միջոցներում, այսինքն Հովակիմ Սյունյաց եպիսկոպոսի ժամանակ, սրա և մյուս նշանավոր վանքերի մեջ նախաթոռության վերաբերությամբ վեճեր ծագեցին: Բայց Շաղատի տեր Խոսրովը, որ Գազանի սերնդից էր, ներկայացրեց Սյունյաց տեր Ատրներսեհին Բաբիկի վճիռը Շաղատի քահանաների նախաթոռության մասին, և սա նախագահությունը հաստատեց Շաղատի Գեորգ վարդապետի վրա: Միևնույն ժամանակ որոշվեց, որ Շաղատից հետո երկրորդ համարվի Շաքեն, երրորդը՝ Աղիտուն, չորրորդը՝ Մորենին և հինգերորդը՝ Ույծը:

Սակայն չուտով Շաղատը իր նախաթոռության պատիվը կորցրեց, որովհետև Թ դարում արդեն բարձրացավ Տաթևի վանքը, ուր և փոխադրվեց Սյունյաց եպիսկոպոսարանը, իսկ իշխանանիստ լինելուց այս գյուղը դա-

---

[1] Ստ. Օրբելեան, գլ. ԺԶ:
[2] Ստ. Օրբելեան, գլ. Ժ և ԻԲ:

դարել էր դեռ Դ դարից, երբ Բաբիկը նրան տվել էր Գազան պարսիկին և ինքը բնակել Հավանորեն Սիսիանում:

ՏԱԹԵՎ

Հայր Ալիշանի կարծիքով՝ դեռ հեթանոսության ժամանակ Հավանորեն Տաթևի այժմյան տեղում մեհյան է եղել, որ հետո ս. Գ. Լուսավորչի ձեռքով եկեղեցու է փոխարկվել: Ավանդության ասելով՝ այս վանքը իր անունը ստացել է ս. Թադեոս առաքյալի աշակերտ Եվստաթեից կամ Ստաթեից, որ եկել քարոզել է Սյունիքում և այստեղ էլ նահատակվել: Սակայն սա հազիվ թե ճիշտ լինի, որովհետև, նախ որ Ստ. Օրբելյանը՝ Սյունիքի ամենանշանավոր պատմաբանը, այդ մասին ոչինչ չի հիշում, երկրորդ՝ հայտնի չէ, որ ս. Թադեոսը այդ անունով աշակերտ ունեցած լինի և երրորդ՝ որ Տաթև անունը գոյություն է ունեցել և քրիստոնեությունից առաջ, որովհետև Ներսիսի Գահնամակի մեջ բարձականների հետ դասվում է նաև Տաթևեանք, որ Հավանորեն այս կողմը տիրապետող մի տոհմ է եղել:[3] Այս միայն որոշ հայտնի է, որ Ներսես Մեծի և ս. Սահակի օրերում, այստեղ որձաքարից շինված մի անշուք հին եկեղեցի է եղել, ուր մշտապես ճգնելիս են եղել հայ ճգնավորներ:

Այնուհետև այս վանքի մասին ոչինչ չի հիշվում մինչև Թ դարը, երբ Սյունյաց եպիսկոպոս Դավիթը, որ ստացավ մետրապոլիտ տիտղոսը և կրծքին խաչանիշ նշան կրելու իրավունք՝ 839 թվին Սյունյաց Փիլիպպե նահապետից 10,000 դրամի դնեց այս վանքը և Սյունյաց եպիսկոպոսական աթոռը այստեղ փոխադրեց: Հինգ տարուց հետո նույն Փիլիպպեն՝ իր սեփական Տաթև գյուղը նվիրեց այս վանքին: Սրա օրինակին հետևեցին շատերը, և վանքը գնալով հարստացավ: Այս միևնույն Փիլիպպե իշխանը հին եկեղեցու մոտ մի նոր գեղեցկաշեն եկեղեցի շինեց ս. Գրիգոր Լուսավորչի անունով, որի դռան առաջն էլ ինքը թաղվեց:

Դավթի հաջորդներից Հովհաննես եպիսկոպոսը, հրեշտակի ցուցմունքով, քանդեց հնակառույց եկեղեցին և 895 թվին, առավելապես Աշոտ Սյունյաց մեծ իշխանի և նրա կնոջ՝ Շուշանի ձեռնտվությամբ, տասնմեկ տարվա ընթացքում շինեց մի հրաշակերտ եկեղեցի, հաստատելով երկու սյուների վրա, որոնց հիմքերում ամփոփել էր Պողոս և Պետրոս առաքյալների նշխարներից: Հետո շինեց ս. Երրորդության անվան նվիրած սյուն-գավազանը, պարսպեց վանքը, հարթեց գետինը, վանքի ներքևում գաղտնարաններ պատրաստեց և զանազան շինություններ ու մի գրատուն կանգնեց:

Այս ժամանակում վանքը 500 չափ միաբաններ ունեցավ. նրանց մեջ կային հեռու տեղերից եկած երաժշտագետներ. ծաղկում էր վարժարանը, և բազմաթիվ էին մատյաններ ընդօրինակողներն ու զարդագրողները:

---

[3] Ալիշան, Սիսական, եր. 224, Արարատ, եր. 432:

Սրա հաջորդ Տեր Հակոբ Դվնացին (918-958), Հովհաննես Ջ կաթողիկոսի եղբորորդին և ձեռնասունը, Ջաղեձորի կամ Վարարակ ջուրը գնելով՝ բերեց մինչև վանքի դեմ, և այն ամայի փշալից տեղը տունկերով և բուսակաճուքյամբ լցրեց: Սա օտար նկարիչներ հրավիրեց և զարդարել տվեց տաճարի պատերը գեղեցիկ պատկերներով:

Այս Հակոբը, ինքնահավան լինելով՝ փոքր-ինչ հպարտացավ և ծանր համարելով գնալ հայոց կաթողիկոսից ս. Մեռոն խնդրելու՝ Ագվանից կաթողիկոսից առավ: Սրա համար Անանիա կաթողիկոսը կանչեց նրան և երբ սա չգնաց, ինքը՝ կաթողիկոսն եկավ Տաթև, ուր Հակոբը, քաշվելով Սյունյաց իշխաններից՝ կաթողիկոսի ոտն ընկավ և թողութիւն ստացավ: Սակայն կարճ միջոցից նորից ապստամբեց և հարեց քաղկեդոնականներին, որի համար և Անանիա կաթողիկոսը կրկին եկավ Տաթև: Սակայն Հակոբը փախավ Բաղաց բերդը: Կաթողիկոսը «սաստիկ բարկանալով... ավերից, քանդեց այն տեղը և «չարաչար նզովիւք կապեալ»... վերադարձավ յուր աթոռը:

Հակոբի մահից հետո Անանիա կաթողիկոսը նորից եկավ Տաթև, հրամայեց ժողովել կրոնավորներին և վերականգնել վանքը: Ապա անցավ Կապան, ուր երկրի իշխանի՝ Ջվանշիրի որդի Վահանին ձեռնադրեց եպիսկոպոս, որ հետո կաթողիկոս էլ դարձավ: Սրան հաջորդեցին մի քանի եպիսկոպոսներ, որոնց ջանքը եղավ շատացնել վանքի կալվածները և պայծառացնել տաճարը: Եվ հիրավի, Հովհաննես եպիսկոպոսի ժամանակ (1006-57), ոչ միայն մետրապոլիտական պատիվը, որ Անանիան վերցրել էր Հակոբի ապստամբության պատճառով, վերադարձվեց, այլև վանքը զարդարվեց զանազան զարդերով, մեծամեծ սպասներով և գեղեցիկ կարպերով. լցվեց «բազմութիեամբ կրօնաւորօք, անյաղթ փիլիսոփայիւք և աննման երաժշտօք և բանիբուն վարդապետօք և աստուածազգեաց ճգնաւորօք, նաև յոգնապատիկ արհեստաւորօք. և էր այնուհետև տեսանել զտունն զայն իբր զմայրաքաղաք բազմաժողով. քանզի և չինեալ կայր բազմութիւն երդոց և ամբոխութիւն իբրև հազար արանց»:[4]

Սակայն երկար չտևեց այս ծաղկած վիճակը, որովհետև չուտով Ատրպատականից իսմայելացիները հարձակվեցին Տաթևի վրա՝ երբ Հովհաննես եպիսկոպոսը բացակա էր: Միաբաններից շատերին սպանեցին, վանքը կողոպտեցին, ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին փայտով լցրին և կրակ տվին: Կամեցան աքանչելի սյունն էլ կործանել, բայց հրաշք տեսնելով՝ չհամարձակվեցին, ինչպես և մեծ, Առաքելոց եկեղեցուն էլ ձեռք չտվին, այլ միայն խցերն ու սեղանատունը քանդեցին և ավարելով՝ հեռացան գնացին:

Հովհաննես եպիսկոպոսը, որ այս աոպատակի ժամանակ բացակա էր վանքից, վերադառնալով ավերածի տեղը՝ ձեռնարկեց վերանորոգել կործանվածները և գրեթե նորից շինեց ս. Գրիգորի եկեղեցին, ավագ կամարի

[4] Սիսական, եր. 229-30:

այան գլխում թաքցնելով Լուսավորչի աջի մի մասը, որը հետո Ստ. Օրբելյանը կրկին նորոգության ժամանակ գտավ: Շինեց նաև մեծ եկեղեցու հարավային դռան առջև երկար գավիթ միաբանների հանգստյան համար և այլն:

Նրա հաջորդ Գրիգոր եպիսկոպոսը (1057-1115 թթ.) զանազան չինուԹյուններով հետ միասին չինեց նաև «տուն սրբաչէն և ի վերայ սոցա եկեղեցի մի գմբեԹաւոր, գեղեցկայարմար յանուն Սրբուհւոյ Աստուածածնին. և էր նա իբր դիտանոց բարձր, որ հայէր ի վերայ վանացն, և ի չորեսին կողմանն յօրինեաց դաւիԹս, բայց յառաջի կողմն բարձրաբերձ սեամբք չինէր սրահս վայելուչս՝ իբր քաղցր հովանոց»:

Գրիգորին հաջորդեց Ստեփանոս եպիսկոպոսը, որի ժամանակ պատահեց Գանձակի մեծ երկրաշարժը 1138 թվին, երբ Տաթևի եկեղեցու գմբեթը թռավ և ընկավ ս. Գրիգոր եկեղեցու և գավթի վրա ու նրանց էլ քանդեց: Տիրող չվոթուԹյուններից պատճառով, երբ Բաղաց Թագավորությունը վերջացավ, Բաղաբերդը առնվեց (1170 թ.), որի ժամանակ ավար առնվեցին և Տաթևի եպիսկոպոսարանի և վանքի սպասներն ու 10,000 դրքերը: Տաթևն ավերակ դրության մեջ մնաց մինչև ԺԲ դարի վերջը, այսինքն մինչև Զաքարեանց զորանալը, երբ Ստեփանոս եպիսկոպոսը, Գրիգոր Մեղրացի եպիսկոպոսի որդին, վանքը նորոգեց և գմբեթը նորից կանգնեցրեց:

Սրան հաջորդեց իր քեռորդին՝ տեր Սարգիսը, որ նստավ Նորավանքում, իսկ նրա հորեղբորորդի Հովհաննեսը, Աղթամարի եպիսկոպոսից ձեռնադրվելով՝ նստավ Տաթև և այսպիսով Սյունյաց եպիսկոպոսությունը երկուսի բաժանվեց, որ տևեց մինչև ԺԳ դարի վերջը, երբ միապետեց Օրբելյան Ստեփանոս պատմիչը:

Տեր Հովհաննեսի հաջորդ՝ Հայրապետ եպիսկոպոսի ժամանակ, երբ վերանորոգում էին Տաթևը, գտնվեց հյուսիսային կողմի առաջի խորանի վերև մի գաղտնանոց, որի մեջ կային «մԹերք անհուն սրբուԹեանց և նչխարաց առաքելական, հայրապետական և մարտիրոսական, յորում և աստուածընկալ խաչն Բաբգենեան»:

Սրա ժամանակ Կիլիկիայի Լևոն Բ Թագավորը նվեր ուղարկեց «երկնաճեմ եկեղեցւոյ» սեղանի համար մետաքսյա զգեստ, խաչ, սկիհներ և այլն:

Ստեփանոս Օրբելյան, հաջորդելով Հայրապետ եպիսկոպոսին և միացնելով Սյունյաց երկուսի բաժանված եպիսկոպոսական աԹոռը՝ երրորդ անգամ վերաշինեց ս. Լուսավորիչ եկեղեցին և գտնելով ս. Գրիգորի նչխարները «ի վերաշինեց ս. Լուսավորիչ եկեղեցին և գտնելով ս. Գրիգորի նչխարները «ի վոքրիկ սնդուկ փայտեայ՝ կուղպեալ և մատանեալ կապարեայ կնքով»՝ դարձյալ դրեց միևնույն խորանի մեջ, մի գաղտնի տեղ:

Ստ. Օրբելյանը նչանավոր եղավ և նրանով, որ գրեց «Սիսական նահանգի պատմությունը», որով մոռացությունից ազատեց Սյունիքի անցյալը: Մինչդեռ նրա ավելի մոտակա պատմությունը մնաց բավական անորոշ:

ԺԴ դարի վերջում նշանավոր եղավ այստեղ Հովհան Որոտնեցին, որ չինեց զանգակատունը և բացեց վարդապետարանը, ուր ուսավ և ծաղկեցավ նշանավոր աստվածաբան և մատենագիր Գրիգոր Տաթևացին: Սրա ինքնաձեռագիր Ավետարանը մինչև հիմա էլ պահվում է վանքում, փաթաթված նրա քույր Հռիփսիմեի ասեղնակար ծածկույթով: Սրա ազգական Առաքել եպիսկոպոսը չինեց եկեղեցու հարավային կողմի գավիթը:

ԺԵ դարի սկզբում վանքը ավերեցին Լանգ-Թամուրի զորքերը, իսկ նրա անչարժ կալվածները դրավեցին շրջակա մահմեդական կալվածատերերը: Թեպետ Սիմեոն Անդեղակոթեցի եպիսկոպոսը գնաց պարսից շահի մոտ և հրովարտակ ստացավ վերադարձնելու վանքին իր նախկին կալվածները՝ սակայն ճանապարհին սպանվեց մահմեդականներից: Սրա օրինակին հետևեց Հովհաննես Շնաթաղցին, որ նույնպես գնաց շահի մոտ և ստացավ վերահաստատիչ հրովարտակ, սակայն վերադարձին մեռավ Թավրիզում:

ԺԵ-ԺՋ դարերից շատ քիչ տեղեկություն է մնացել Տաթևի մասին: Հայտնի է, որ ԺԷ դարում Տաթևի վանքը բարձրիթողի էր արված: Այս դարի երկրորդ կեսին սկսում է վերանորոգվել, գլխավորապես Ներսես եպիսկոպոսի ջանքով, որ ուղարկված էր Փիլիպպոս կաթողիկոսից: Նա բարեկարգեց վանքի տնտեսական վիճակը և չինեց Տաթև գյուղի եկեղեցին: Սրանից հետո նշանակվեցին մի շարք եպիսկոպոսներ, որոնք մի առանձին նշանավոր գործ չարին: Մխիթար Աստվածատուր Մըզմըզ-օղլին հարստացրեց վանքը նվերներով և ձեռագրերով: Սակայն շուտով սրա հաջորդ Հովհաննես Տաթևացու ժամանակ, պարսիկները կրկին հարձակվեցին վանքի վրա, սպանեցին այս եպիսկոպոսին և թալանեցին վանքը: Սրա հաջորդ Մինաս Շնաթաղցի եպիսկոպոսը նորից վերանորոգեց, իսկ սրա երկրորդ հաջորդ Աբրահամ Աստապատեցին, Սիմեոն կաթողիկոսի (1763-1780 թթ.) ժամանակակիցը, նորից ծաղկեցրեց վանքը և չինեց 16 նոր խցեր:

Աբրահամի աշակերտ Հովակիմ եպիսկոպոսը չարունակեց շինությունները և Գրիգոր Տաթևացու դամբարանը կանգնեց: Սակայն նրա ժամանակ, 1796 թ., Աղա Մահմատ խանը քարուքանդ արեց վանքը և ցրեց միաբաններին: Պետք է ենթադրել, որ դրանից հետո վանքը երկար ժամանակ մնաց ավեր դրության մեջ, մինչև ռուսների տիրապետությունը: Նոր նշանակված Մարտիրոս եպիսկոպոսը կարողացավ կառավարչապետ Ռտիշչևից և Երմոլովից հրաման հանել վերադարձնելու վանքին նրա անչարժ կալվածները և 1820 թ. սկսեց վերանորոգել Տաթևը: Սակայն, որովհետև այս եպիսկոպոսը ռուսների կողմնակից էր համարվում, ուսաի և պարսկական պատերազմների սկզբում պարսիկները թալանեցին վանքը և եպիսկոպոսին էլ դերի տարան Թավրիզ, ուր պահեցին 15 ամիս: Պատերազմը վերջանալուց հետո, 1827 թ., նա վերադարձավ Տաթև, և դարձյալ սկսեց բարեկարգել վանքը, մանավանդ նրա տնտեսական վիճակը և մեռավ 1830 թ.:

1837 թ. վերացվեց Սյունյաց մետրապոլիտությունը, և այս ահագին նահանգը դարձավ Երևանյան թեմի մի մասը, կազմելով մի քանի հաջորդություններ:

Տաթևում ամփոփվեց Զանգեզուրի հաջորդության կառավարությունը, և նրա վանահայրերը միաժամանակ համարվում են և Զանգեզուրի գավառի հաջորդներ: Այժմյան հաջորդն է արժ. Գրիգորիս վարդապետը, որ եռանդով շարունակում է իր նախորդի ժամանակ սկսված զանգակատան շինությունը:

ՍԻՍԻԱՆԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆ

Սիսիանը, գլխավորապես պարսկական տիրապետության ժամանակ, կառավարվել է մելիքներով, որոնք հաջորդել են միմյանց՝ որդուց որդի: Իշխանությունը ժառանգել է միշտ ավագ որդին և կրել մելիք տիտղոսը, մինչդեռ մյուս որդիները կոչվել են բեկ: Մելիքների ձեռքումն էր գավառի ներքին կառավարությունը. նրանք էին նշանակում և հավաքում հարկերը, նրանք էին վճռում դատաստանական վեճերը, և կռիվների ժամանակ նրանք էին գինում իրենց գյուղացիներին և նրանց գլուխն անցած՝ կռիվ գնում: Գրավոր օրենքներ, դատարան, պարապմանն որոշ ժամեր՝ բոլորովին չեն եղել: Սովորության իրավունքը և մելիքի հաճույքը միշտ գերակշռող ուժ են կազմել:

Սիսիանում, որքան հայտնի է, տիրապետել են նախ Սաֆրազ-Բեկյաններ և ապա Մելիք-Թանգյանների տոհմերը, որոնք միմյանց հետ բավական ընդհարումներ են ունեցել:

Այս երկու տոհմերից էլ այժմ ժառանգներ կան. առաջինից՝ Զիլֆիղար բեկը, բնակվում է Ղարաքիլիսա գյուղում, իր բավական գեղեցիկ, երկհարկանի և եվրոպական ճաշակով զարդարված բնակարանում, իսկ երկրորդից՝ Կարապետ բեկը, Բռնակոթում, նախկին մելիքների բնակարանում: Ես եղա այս երկուսի մոտ էս, և նրանք ամենայն սիրով պատմեցին իրենց գիտեցածները իրենց նախնիքների վերաբերությամբ և ցույց տվին նրանցից մնացած հրովարտակներն ու թղթերը:

Սակայն դժբախտաբար պետք է ասել, որ նրանց պատմածները շատ կցկտուր էին և միմյանց հետ չեն կապվում: Համագյուղացի ծերունիների պատմածներն էլ այնքան չեն լրացնում նրանց տված տեղեկությունների թերին: Այնպես որ շատ դժվար է փոքրիշատե լրիվ և ամփոփ պատմություն տալ: Սակայն ցանկանալով գոնե մինչև այժմ մնացած փաստերը ազատել մոռացությունից՝ ես ավելորդ չհամարեցի արձանագրել այստեղ, հուսալով որ ապագային թերևս նորանոր նյութեր կգան լրացնելու և լուսաբանելու հայ մելիքների այնքան հետաքրքիր պատմությունը:

Մելիք-Սաֆրազյանների նախահայր համարվում է մելիք Սաֆրազը, որ իշխել է Անգեղակոթում: Սրա մոտ 1699 թ., Իսրայել Օրիի թելադրությամբ հավաքվեցին շրջակա գյուղերի 9-10 տանուտերները՝ խորհրդակցելու պարսից բռնությունից ազատվելու հնարների մասին:

Սրան հաջորդեցին մելիք Ամիրխան և ապա մելիք Նարին, որոնց մասին ոչինչ հայտնի չէ: Միայն վերջինիս որդի և հաջորդ մելիք Մադաթի մասին Հայր Ջամչյանը պատմում է, թե Նախիջևանի Հեյտար խանը անհիմն մեղադրությամբ 1749 թ. սպանեց շատ հայ իշխաններ, որոնց մեջ և սրան: Սրա գերեզմանը, ժառանգների ասելով՝ այժմ գտնվում է Նախիջևանի ս. Աստվածածնի Երիք-խորան եկեղեցում:

Մելիք Մադաթին հաջորդեց նրա որդին, մելիք Սաֆրազ երկրորդ, որ ագուլեցիներին ու ղազանչեցիներին առաջնորդեց Շուշի գաղթելու, բայց ինքը մնաց Անգեղակոթում: Սա հաճախ լինում էր նաև Բռնակոթ, ուր հետզհետե բարձրանում էր Մելիք-Թանգյանների տոհմը:

Կարապետ Թանգյանի ասելով՝ այս տոհմի նախահայրը եղել է մելիք Ստեփանը, որ Անիում զորապետության պաշտոն ունենալով՝ վերակոչվել է մելիք Սարդար: Հայտնի չէ, թե ե՞րբ և ի՞նչ պատճառներով սա գաղթել է Բռնակոթ:

Սրա սերնդից նշանավոր է եղել մելիք Թանգի Ա, որի անունով և տոհմը Մելիք-Թանգյան է կոչվել: Սրա ժամանակ մի թյուրք խումբ հարձակվում է Բռնակոթի վրա և թալանում, միանգամայն վիրավորելով և մելիք Թանգու հորը: Մելիք Թանգին հետ է առնում մի գյուղացուց իր նվիրած եզը, ինքը հեծնում, մի ձիու վրա էլ վիրավոր հորը դնում և փախչում է Տաթև: Այստեղ հայրը վախճանվում է, մելիք Թանգին մորթում է իր միակ եզը, հոգու հաց տալիս և ապա անցնում Շնհեր, ուր մնում է մինչև որ Բռնակոթը խաղաղում է: Սակայն կարճ միջոցից հետո նորից խռովություններ են բարձրանում, որովհետև մելիքի եղբորորդի Մանուչարը մի թուրքի կին է սիրելիս եղել: Թուրքերը այս իմանալով՝ հարձակվել են մելիքի տան վրա, սակայն սա փախել և թաք է կացել Տեր Ստեփանի թոնրում: Երբ թուրքերը եկել են այդտեղ որոնելու մելիքին՝ քահանան խաչը ձեռին դուրս է եկել նրանց առաջ և հավատացրել, թե մելիքը իր տանը չէ:

Մի ուրիշ անգամ էլ այս մելիքի եղբայր Փանումն (Ստեփան) է կամեցել Սաֆրազբեկյանների հարսին առևանգել: Սրա աղաղակներին վրա է հասել Սաֆի քավորը և դաշույնը խրել Փանումի փորը. սա դաշույնը փորին կամեցել է փախչել, բայց Շետ Ասին փայտով խփել է նրան և գետին գլորել: Մելիք Թանգի Ա այս իմանալով՝ կամեցել է կրկին փախչել, սակայն Սաֆրազբեկյան Նազարը գնդակահար է արել նրան: Նա գլորվել, ընկել է այնպիսի մի տեղ, ուր մի նոր սպանած գայլ է եղել ընկած, որին և գրկել է ու մեռել: Այս պատճառով էլ «Գելխըտըտող» է կոչվում:

Մելիք Թանգի Ա այրին դիմում է Շուշու Իբրահիմ խանին, գանգատվում նրան իր ամուսնու սպանության մասին և խնդրում իր որդի Թանգուն մելիք հաստատել: Իբրահիմ խանն էլ կատարում է նրա խնդիրը:

Այս ժամանակ մելիք Սաֆրազին հաջորդած է եղել մելիք Դավիթը, որ Մելիք-Թանգյաններից վրեժ առնելու համար գնում է Նախիջևան՝ խանի մոտ և մի անգամ հարմար առիթ գտնելով՝ գալիս է Բռնակոթ և Մելիք-Թանգյանների տունը կրակ տալիս:

Մելիք Թանգի Բ վերադառնում է Շուշուց, և տեսնելով իր հայրենական տունը կրակ տված՝ հարձակվում է Սաֆրազբեկյանների տան վրա, ավերում և նրա քարն ու դերանները բերում իր համար նոր տուն շինում:

Այնուհետև մելիք Թանգին հարում է ռուսների կողմը և մասնակցում ռուս-պարսկական պատերազմներին, որից հետո Պարսկաստանից եկած գաղթականներից բերում, բնակեցնում է Ուզ, Ալելու, Մազրա, Թազագյուղ, Շաղատ, Անգեղակոթ և Բալաք գյուղերը: Անուհետև իր ուշքը դարձնելով

վրայից՝ չուխա, երկար թևքերով: Ձմեռը երկուսն էին հագնում, բրդեն տակը, մահուդինը՝ վրան: Ձմեռը որպես վերարկու առնում էին բիրումմե: Սա կարվում էր բրդյա կտորից և վարդապետների փարաջի ձևն ուներ, միայն թևքերը նեղ էին և իջնում էին մինչև ոտները: Հագնելիս թևքերը վեր էին քաշում և մի ձեռքը մյուսի թևքի մեջ կոխում, որ տաք մնա: Թևքերի կռնատակից բացվածք էլ կար, որպեսզի տաք ժամանակները ձեռները այդ տեղերից անցկացնեն և թողնեն թևքերը կախ ընկնելու: Օձիքի մոտ պալթա՝ ժապավեն կար, որ բկի տակ հանգույց էին ձգում:

Գլխներին ծածկում էին բուխարա՝ երկար փափախ: Ոտներին հագնում էին դուլպա և սև քոշեր, իսկ ձի հեծնելիս՝ չյաքմա:

Ծերունի կարապետ բեկը և ուրիշ ծերունիներ այսպես էին նկարագրում մելիք Թանգի Բ կյանքը, որ կարող է դաղափար տալ ընդհանրապես մելիքների կյանքի մասին:

Առավոտները նա վեր էր կենում վաղ, ժամը վեցին և անմիջապես թեյ էր խմում ու հաց ուտում: Հետո մատուցանում էին կերակուր (միշտ մի տեսակ), որ սովորաբար լինում էր կամ խորոված, կամ փլավ և կամ բոզբաշ: Հացը բաց էր անում օղիով և վերջացնում էր դինով: Այս նախաճաշիկից հետո դուրս էր գալիս գյուղում շրջելու, և ուր որ մի դանգատավոր պատահեր՝ անմիջապես, տեղն ու տեղը դատը կկտրեր: Ապա կեսօրին մոտ դառնում էր տուն և սկսում էր սաղմոս քաղել մինչև կեսօր, երբ ճաշի էր նստում, միշտ սեղանակից ունենալով մի քահանա և մի քանի ուրիշ մարդիկ: Ճաշին լինում էր սովորաբար մի և կամ երկու տեսակ կերակուր, իսկ գինի՝ առատությամբ (տարեկան 8000 չիշ): Ճաշից հետո երկու ժամ քնում էր և ապա նորից, կամ իր բնակարանում և կամ գյուղի փողոցներում, դատ էր կտրում: Երեկոները միշտ գնում էր եկեղեցի, ուր առանձին և պատվավոր տեղ ուներ: Տուն վերադառնալով՝ թեյ էր խմում, հնեցիների և կամ հյուրերի հետ նարդի խաղում և ապա ընթրում, ուտելով սովորաբար մի տեսակ կերակուր (ընդհանրապես՝ ճաով փլավ) ու անմիջապես «եկեսցե» էր անում ու պառկում քնելու:

Սովորաբար որսի չէր գնում, որովհետև որսորդության հարմար տեղեր չկային: Բայց երբ հարկավորվում էր որևէ տեղ գնալ՝ նրա ձիու հետևից տանում էին մի կամ մի քանի ձի, որ ճանապարհին եթե կամենա, փոխի: Նրան հետևում էին մի քանի հետի և ձիավոր ծառաներ, զինված, որոնցից մինը տանում էր մելիքի հրացանը, իսկ մելիքը կրում էր միայն կեռ թուր:

Առավելապես կիրակի օրերը հավաքվում էին նրա դռանը շրջակա գյուղերից դանգատավորներ, որոնց դատը նա կտրում էր իր հաճույքի և հասկացողության համեմատ:

Թե Սաֆրազբեկյան և թե Մելիք-Թանգյան մելիքները ենթարկվել են կամ Նախիջևանի և կամ Շուշու խաներին. նրանց պարտականությունն է եղել. 1. շահի կամ խանի պատերազմ գնալիս՝ իրենց վիճակում յուրաքանչ-

յուր տնից մի մարդ զինվորել և նրանց գլուխն անցած՝ գնալ օգնության, 2. յուրաքանչյուր տնից մի ոսկի (մոտ 3 ռ.) հավաքել և ուղարկել խանին, որպես շահին հասանելի հարկ, 3. մելիքի որդիներից կամ տնեցիներից մեկին ուղարկել խանի դռանը միաժամանակ ծառայելու, 4. նշանավոր տոներին խանին ընծաներ տանել:

Մելիքները ժողովրդից ստանում էին.

1. Տասանորդ՝ հացահատիկներից և խոտից:

2. Յուրաքանչյուր տնից մի ոսկի, որ խանին էին ուղարկում:

3. Յուրաքանչյուր տուն մի մարդ էր ուղարկում մելիքի արտերը և արոտատեղերը հնձելու, մելիքի համար անտառից փայտ բերելու:

4. Բոլոր գութանները մի-մի օր մելիքի համար վար էին անում:

5. Հասարակությունը իր ծախսով տալիս էր մելիքին մի ամբողջ տարի ծառայելու մի ռաճպար՝ վար անելու, մի գզիր, մի ձիապան, մի իշապան և տան համար մի քանի ծառաներ:

6. Կանայք գնում էին մելիքի համար բոխի, պանճար և այլ կանաչեղեններ քաղելու, մելիքի համար բուրդ գզելու և այլն:

7. Նավասարդին ամեն մի տան մեծ մի խնձորի մեջ մի 20 կ. կամ մի պարսկական դրամ ցցած, մի կուլա գինի և մի չիշ օղի տանում էր մելիքին, նրա նոր տարին չնորհավորելու: Սա էլ երկու եզ էր մորթել տալիս և ճաշով հյուրասիրում դրանց բոլորին:

8. Գյուղական հարսանիքների ժամանակ՝ մելիքին տանում էին մի կուժ գինի, մի չիշ օղի, եզան սուկին և պլոճիկները:[6]

Մելիքները իբրև պատիժ գործ էին դնում հետևյալ միջոցները.

1. Հօգուտ իրենց տուգանք էին առնում:

2. Մեծում էին, ոմանց կապում էին ծառից և ճիպոտով թակում, ոմանց մորուքները պոկում էին, ոմանց վայր էին ձգում և կոխ տալիս, երկարամորուք հանցավորներից երկուսի մորուքները միմյանց հետ հանգուցտում էին և սկսում ծեծել, մինչև որ սաստիկ ցավից ստիպված՝ մեծ փրկանք տային ծեծից ազատվելու:

4. Հանցավորին ականջներից մեխում էին ծառի վրա: (Երբեմն ծեծի տակ ուշագնաց եղողի վզից թոկ էին գցում և քաշ տալիս, ինչպես արել են Հովհաննես Մելքումյանին: Պատահում էր նույնիսկ, որ ծեծի տակ հանցավորը մեռնում էր, ինչպես Մելքումյանը, բայց մելիքը այս բանի համար պատասխանատու չէր):

5. Բանտարկում էին (գոմում կամ հացի հորում):

---

[6] Թագավորն էլ պարտավորված էր նախքան պսակ գնալը՝ գնալ համբուրել մելիքի և նրա կնոջ ձեռները:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԱԹԵՎ

Ճարտարապետը, ավարտելով Տաթևի վանքի շինությունը՝ բարձրացել է գմբեթի վրա, դրել է խաչը և հետո խնդրելով ներքևում եղող բանվորներից երկու տախտակ՝ բռնել է ձեռներում, համբուրել և ասել. «Հոգին սուրբ տա Թև»: Անմիջապես տախտակները Թևերի են փոխարկվել, և նա Թռել, աներևութացել է: Այս պատճառով էլ վանքի անունը մնացել է՝ Տա Թև՝ Տաթև:

ԳԱՎԱԶԱՆ-ՍՅՈՒՆ

1. Առաջները աբեղային վարդապետական գավազան տալու ժամանակ եպիսկոպոսը պատարագելուց հետո հանդիսավոր կերպով դուրս էր գալիս տաճարից և երեք անգամ խունկ ծխում այս գավազան-սյան առաջ: Եթե աբեղան արժանի էր վարդապետական գավազանի՝ գավազան-սյունը չարժվում էր, եթե ոչ՝ մնում էր անշարժ: Դրա համեմատ էլ վարվում էր եպիսկոպոսը:

2. Լանկթամուրը կամենալով այս սյուն-գավազանը հիմնովին կործանել՝ հրամայել է տասը գույգ գոմեշ լծել, և նրանց լծերից գուլթանի փոկով կապել սյուն-գավազանը: Երբ գոմեշները սկսել են քաշել՝ փոկը կտրվել է, բոլոր գոմեշները ձորն են թափվել, իսկ սյանը ոչ մի վնաս չի հասել: Այս «կաղ դևը» հրամայել է, որ վանքի մեջ էլ փայտ դարսեն, վառեն, որպեսզի վանքն էլ այրվի: Կրակը վառել են զանգակատան տակ, և ահա՝ թե ինչու այդ օրից սկսած Տաթևի զանգակները այլևս լավ ձայն չեն հանում:[7]

ՀՈՎՆԱՆ ՈՐՈՏՆԵՑԻ

1. Սիսիանում եղել են կռապաշտներ, որ շատ նեղություններ են տալիս եղել հայերին: Սրանք տախտակները ծակել անց են կացրել հայերի վզները և երկու կողմից մի-մի մարդ նստելով՝ ման են եկել: Մի օր մի որբևայրի կին գնացած է եղել ջրաղաց աղուն աղալու, երբ այդ կռապաշտներից մինը բռնել է նրան և կամեցել անպատվել: Սա ճողոպրել է նրա ձեռքից և փախել, գանգատվել է Հովհան Որոտնեցուն: Սա իսկույն ձին հեծել, գնացել է պարսից Շամ շահից զորք խնդրել, որ այս անօրեններին կոտորի: Երբ զորքն ստացած վերադարձել է՝ գետն անցնելիս դիտել է, և որ դինվորի սակրը երևացել է ջրի մեջ՝ նրան վերցրել է իր հետ, իսկ որինը չի երևացել՝ վերադարձրել է: Ապա սրանց միջոցով կոտորել և դուրս է քշել կռապաշտներին Սիսիանից: Նրանց մնծամեծներին էլ բռնել, ձգել է կաթսաների մեջ, եփել և թափել քարերի տակ: Հետո, երբ կամեցել է զորքը վերադարձ-

[7] *Լևո, Իմ հիշատակարանը, եր. 135:*

նել՝ չահը նվիրել է նրան, ուստի և նա բնակեցրել է նրանց Սիսիանում: Ահա այս զորքերից են առաջացել Սիսիանի այժմյան պարսիկները:

2. Հովհան Որոտնեցին կամենալով իր գերեզմանը անհայտ պահել՝ մեռնելիս պատվիրել է, որ իր մի կողքին կաթսայով կաթ, մյուսին՝ գինի թաղեն: Ուստի և այժմ, երբ Սողոմոնի են նայում՝ որպեսզի նրա գերեզմանը գտնեն՝ տեսնում են, որ նա թաղված է կարմիր ու սպիտակ ծովերի մեջ և չեն կարողանում գտնել:

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

Մի անգամ, երբ Գրիգոր Տաթևացին սովորելիս է լինում Տաթևի վանքում՝ վանահայրը հրամայում է նրան, որ մի փարչով ջուր բերի: Գրիգորը փոխանակ բերելու՝ ցույց է տալիս բերանն ու ականջները, կամենալով հասկացնել, որ բերանն ասաց, թող ականջը չլսի, իրեն նման սրբին չի կարելի հրամայել: Երբ վանահայրը չհասկանալով, կրկնում է իր հրամանը՝ Գրիգորը նույնը հրամայում է իր աշակերտակիցներից մեկին, և երբ սա չի կատարում՝ անիծում է նրան, ասելով՝ գետինն անցնիս: Իսկույն երեխան կիսով չափ մտնում է գետնի մեջ: Վանահայրը անմիջապես միջամտում է և խնդրում Գրիգորին, որ հանի: Սա էլ կատարում է նրա խնդիրը: Վանահայրը զարմացած գրում է կաթողիկոսին Գրիգորի սրբության մասին, և սա հրամայում է, որ անմիջապես ուղարկեն իր մոտ: Սակայն Գրիգորը չի գնում: Վերջապես կաթողիկոսը երկու վարդապետ է ուղարկում, որ տանեն: Գրիգորը սրանց ներկայությամբ կշռում է 1/4 ֆունտ կրակ, դնում է մի ֆունտ բամբակի մեջ, փաթաթում է մի թղթի մեջ և տալիս նրանց և ասում. «Տարեք այս կաթուղիկոսին և այնտեղ կշռեցեք. եթե իրենց քաշերից մի քիչ կորցնեն՝ ես ինքս ինձ ու ինձ կգամ»: Վարդապետները վերցնում, գնում են և կաթողիկոսի ներկայությամբ կշռում են: Երբ քաշը բոլորովին նույնն է լինում՝ կաթողիկոսը բացականչում է. «Նա արդեն երկինք ու գետին կշռել է, նա անչափ իմաստուն ու արդար է»:

ՏԱԹԵՎ
ԲՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սահմանները. Տաթևը նախկին Ծղկա գավառի վերջին, այսինքն արևելահարավային մասն է: Նրա սահմանները կազմել են արևմուտքից՝ Լորաձորը, հարավից և արևելքից՝ Բաղքը, իսկ հյուսիսից՝ Հաբանդը: Ինչպես հին ժամանակներում, նույնպես և այժմ Տաթևը իր չրջակա ընդարձակ կալվածներով թեև ոչ քաղաքական, բայց և այնպես՝ աշխարհագրական մի առանձին միություն է կազմում. սրան մանավանդ նպաստում է նրա աշխարհագրական դիրքը, նա մի գետահովիտ է, ձգված հարավից դեպի հյուսիս:

Լեռներ. Սա ներկայացնում է մի հարթ բարձրավանդակ, որի հյուսիսային և արևմտյան կողմերը գրեթե ուղղահայաց իջնում են մինչև Որոտնա գետի ափը, իսկ արևելյան և հարավային կողմերում, Լորաձորի սահմաններում, ձգվում է մի լեռնաշղթա, որ մտնելով Սիսիան՝ մոտենում է Ելլիճու շղթային: Այս շղթայի մեջ ամենաբարձրը Գազրելն է (10550 ոտ.), որի մոտ Ղամբելը միայնակ կանգնած է, որ 8918 ոտ. բարձրություն ունի և գտնվում է Տաթևի վանքի արևմտահարավային մասում: Մյուս բարձր գագաթը՝ Մեչետյուն է, վանքից դեպի հյուսիս, 8433 ոտ. բարձրությամբ: Սրա մոտ նշանավոր են Պետրոսախաչ լեռը (6717 ոտ.) և Սուլուլ-քարը, իսկ Ղամբելի մոտ՝ Ջըրչըրան (7535 ոտ.) և Խաչ-քար (7947 ոտ.), ինչպես և Պաղաբերդը, Թյաք սարը և Կարիմլը-դաղը:

Գետեր. Ղամբելից մի փոքրիկ գետակ սկիզբ առնելով՝ հոսում է քարհանքի մոտով, որի անունով և կոչվում է Քրհանոնց գետ: Գազրելից էլ մի ուրիշ գետակ սկիզբ առնելով, անցնում է Աղանձ ավերակ գյուղի միջով և նրա անունով կոչվում Աղանձու գետ: Այս երկու գետակները միախառնվում են Հարանց անապատի մոտ: Տանձուտում սրանց հետ միանում է Ջղրվանի գետակը, որ սկիզբ է առնում Օրդուխաներ բլուրներից: Այս երեքն էլ թափվում են Որոտնա գետը:

Սատանի կամուրջ. Տաթևից արևելահյուսիս, Հարանց մեծ անապատից փոքր-ինչ բարձր, գտնվում է Սատանի կամուրջը, բնության հրաշալիքներից մեկը: Որոտնա գետի երկու ափին, կարմիր, ահագին ժայռերը գալով նեղանում են, և այնտեղ, ուր այժմ կամուրջն է, մոտ 100 սաժեն լայնության անցք կազմում:

Ահա այդ անցքը ծածկված է կրային բաղադրության ահագին քարերով, որոնց տակից անցնում է Որոտնա գետը և փրփրալից ալիքներով նորից վայր թափվում, հորձանքներ կազմում ու գնում հեռանում:

Այս ահագին քարերի տակ երևում են զանազան ձևի և մեծության ստալակտիտներ, որոնք մի քանի արշին երկարությամբ կախ են ընկած ջրի երեսին: Սրանք մի քանի աստիճաններով կամարներ են կազմում, որոնցից ամենանեղքինը կանաչ գույն է ստացել, իսկ մյուսները դեղնավուն են: Ընդհանրապես կարծվում է, որ այս Սատանի կամուրջը առաջացել է կրային ջրի դարևոր զանգվածներից, որ հետզհետե պնդացել է:

Ջրանցքներ. Տաթևի շրջանում գտնվում է Վարարակի ջրանցքը: Հարանց անապատի գրեթե հանդեպ, Որոտնա գետի ձախ ափին, դեպի հյուսիս ձգված մի լանջ կա, որի հողը կոշտ և քարախառն լինելով՝ միմիայն փշի թփեր էր բուսցնում, այդ պատճառով էլ այդ տեղը Ցաքուտ էր կոչվում (ցաք նշանակում է փուշ): 932 թվին Տաթևի վանահայր Հակոբ եպիսկոպոսը 12.000 դրամի և մի պատվական գոհարի առել է Ջագեձորի կամ Վարարակի ջուրը և բավական մեծ ծախսեր անելով, բերել մինչև այս Ցաքուտ

կոչված տեղը, որի շնորհիվ այստեղ ոչ թե ցաքեր, այլ վարդեր են բուսել, և տեղն էլ Վարդուտ է կոչվել:

Նույն Հակոբ եպիսկոպոսը այստեղ գեղեցիկ այգիներ է ձգել, որոնց մեջ տնկել է խաղողի որթեր, ձիթենիներ, թզենիներ, նռենիներ և ամեն տեսակ պտղատու ծառեր: Հետո այդտեղ մի գեղեցիկ բլուր տեսնելով՝ հարթել է նրա գագաթը, պարսպով պատել և շինել մի գեղեցիկ դիտանոց, որ նայում էր բոլոր այգիների վրա: Բլրի գլխին շինել է «գմբեթայարկ խորան մի յոյժ հրաշակերտ յօրինուածովք, և զորմ և զձեղուն նորա ետ զարդարել նկարչաց զանազան երանգօք, նկարել զամենայն տնօրինական և տէրունական պատկերս և զառաքելոց և զհայրապետաց, և բոլոր շուրջ զեկեղեցեաւն սրահակս գավթաց»:[8] Օրբելյանի հիշած այս գեղեցիկ բլուրը գտնվում է ցաքուտից քիչ ներքև, մի փոքրիկ տափարակի մեջտեղը: Նրա գագաթին այժմ էլ կանգնած է հիշյալ փոքրիկ եկեղեցին, որ կիսավեր դրության մեջ է: Բլրակի չորս կողմում կան կիսավեր շինություններ, որոնք հավանորեն եղել են նախկին սրահազարդ գավիթները:

Այս գեղեցիկ ձեռակերտը ժամանակով հնանալով՝ կարիք է եղել վերանորոգելու: Եվ ահա Հովհաննես արքեպիսկոպոսը վերանորոգել է նրան և Զաքեձորի ու Տաթևի մեջ եղած մի ժայռի լանջին, որը ճեղքելով անց է կացրել ջուրը՝ արձանագրել է իր այս գործը այսպես.

Ցամի յորում էր թվ. ՉԽԱ (1292) ես Տր Ցոհաննէս կամաւն Այ եւ աղթիւք հոգեւոր հոր իմոյ Տր Հայրապետի տարայ զջուրս Վարարական աւարտումն (?) զոր ածապատիւ հոգեոր Տր Ցակոբ գնեալ եւ տարեալ էր բազում աշխատութեամբ եւ արդեամբք. զխափանեալն ի բազում ժամանակաց կրկին նորոգեցաք յիշատակ մեզ եւ նախնեաց մերոց. որք հանդիպիք սբ երրորդութեան յիշեցէք ի Քս:[9]

Այս ջրանցքին ժողովուրդը «Քեչիչ-արխ» է կոչում և ավանդաբար պատմում, թե մի քահանա է շինել. երբ ջուրը հասել է վերհիշյալ արձանագրությունը կրող ժայռին, և երբ տեսել են, որ ոչ ժայռի ներքևից և ոչ բարձրից կարող է ջուրը անց կենալ՝ քահանան բացականչել է. «Ի՞նչ ահագին ժայռ է»: Եվ խսկույն ժայռը մեջտեղից երկուսի է ճեղքվել: Մոտի մշակը այս տեսնելով՝ ասել է.

— Տերտեր, ի՛նչ լավ աչք ունիս... Եվ հենց այս ասելուն պես՝ քահանայի աչքն էլ տրաքվել է:

Այժմ այս ջրանցքը դարձյալ քանդված է և նախկին վարդուտը դարձյալ ցաքուտ է մնացել:

Հանքային ջրեր. Ամենից նշանավորը Սատանի կամուրջի մոտ գտնված երկաթաջուրն է, որ առատությամբ դուրս է ցայտում Տաթևի սարի լանջից: Առաջները Տաթևի վանահայրը այստեղ մի ավազան էր շինել և շատ հի-

---

[8] Ստ. Օրբելեան, գլ. ԽԹ:
[9] Տե՛ս Դիվան հայ վիմագրության (այսուհ՝ ԴՀՎ), պրակ II, եր., 1960, էջ 78:

վանդներ գալիս, օգտվում էին, բայց երբ Որոտնա գետը բարձրանալով, սկսեց Սատանի կամուրջի վրայով անցնել՝ քշից տարավ և այս ավազանը: Այնուհետև թեպետ գետը նորից իջավ և արդեն բավական ժամանակ է, որ դարձյալ կամուրջի տակով է անցնում, սակայն այլևս ուշադրություն դարձնող չկա այս հրաշալի հանքային ջրի վրա, որ բոլորովին ապարդյուն կերպով թափվում է գետի մեջ: Այստեղից փոքր-ինչ բարձր, գետի ուղղությամբ, մի նեղ և սաստիկ վտանգավոր կածան տանում է դեպի մի ուրիշ հանքային (երկաթային) ջրի լողարան, որ չինված է մի սարսափելի, գետի վրա կախ ընկած ապառաժի կրծքի վրա և հավաքում է իր մեջ երեք առատ հանքային աղբյուրներ: Սա «ճգնավորի բաղանիք» է կոչվում, որովհետև այնպիսի մի տեղ է գտնվում, ուր միայն իր դլխից ձեռք վեր առած ճգնավորը կարող է գնալ: Այս ամառ (1897 թ.) մի կին և մի տղամարդ այդտեղ բարձրանալիս՝ գլորվել են ներքև և գետի մեջ խեղդվել:

Ոչ պակաս նշանավոր է և Ուրուտ (Որոտ) թրքաբնակ գյուղում գտնված երկաթաջուրը, որ հավաքվում է մի ավազանի մեջ: Սրանից գոնե տեղացիները բավական օգտվում են:

Կլիման. Տաթևի լեռնադաշտի կլիման ընդհանրապես բարեխառն խոնավ է. ամառը հով է, ձմեռը բարեխառն, բայց երբեմն սաստիկ ցուրտ, թեպետ ոչ այնքան, ինչպես Ուչ-Թափալարի հարթության վրա, որ նրանից 7-8 վերստ հեռու է գտնվում: Այստեղ այնքան հաճախ և սաստիկ են լինում փոթորիկները, որ Տաթևի և Գորիսի մեջ գրեթե երեք ամիս շարունակ հաղորդակցությունը կտրվում է, որովհետև ճանապարհը այստեղով է անցնում:

Օգոստոսի երկրորդ կեսից սկսած մինչև ապրիլի վերջը այս Ուչ-Թափալարի հարթությունից սառը քամի է փչում դեպի Տաթևի բարձրավանդակը, իսկ տարվա մյուս ժամանակներում փչում են հարավային տաք և խոնավ քամիներ:

Տարվա ընթացքում այստեղ անձրևային և ամպամած օրեր ավելի են լինում, քան թե պարզ: Շատ անգամ գարնանը և ամառը, Արաքսի կողմերում մշուշ է բարձրանում, անցնում է Զանգեզուրի գավառի անտառները և ամբողջ շաբաթներով շրջապատում Տաթևն ու շրջակա լեռները և կամաց-կամաց մաղվում: Այս տեսակ եղանակը շատ անգամ վնասում է հասկերին:

Ձյունը երևում է նոյեմբերին. գետերը սառչում են դեկտեմբերին, իսկ սառույցից ազատվում մարտի վերջին: Սակայն ձյունը երկար չի մնում. 2-4 օրից հալչում է, իսկ լեռների լանջերին ու գագաթներին մնում է մինչև ամառ: Պողատու ծառերից կեռասենին, ալուչան (алыча) և վայրի նուշը (дикий миндаль) ծաղկում են սովորաբար ապրիլի սկզբին:[10]

---

[10] *Село Татевь, Сбор. мат. для опис. мест. и племен Кавказа, вып. 13.*

Բուսականություն. Տաթևը չատ հարուստ է բուսականությամբ: Ունի մի քանի փոքրիկ անտառակներ, բավական թվով այգիներ, որ գլխավորապես տարածվում են Որոտնա գետի ափին, արտեր և դեղեցիկ արուտատեղիներ:

Անտառակներում գտնվում են նաև բոխի (грабовое дерево, Carpinus Betulus), հաճարկի (бук, Fagus silvaticus), թխկի (клен, Acer platonoides), հացիկի (ясень), արջածառ (рябина), սզնի-եմշան (боярышник, Crataegus oxyacantha): Թփերից նշանավոր են ցրտնին (можжевельник, juniperus), ճապկե (алаҗаҳрі, калина, Viburnum opulus), թըղլի (акрадаванник), նարնջափայտ (сараган), կոծախուրի (барбарис, Berberis vulgaris), մոչի (ежевика, Rubus-fruficosus).

Այգիներում աճում են խնձորենի, տանձենի, ընկուզենի, խոզակաղնի, թթենի, հոնի ծառ և սալորենի: Նշանավոր է մանավանդ թուզը, որ բավական մեծ և քաղցր է լինում:

Արտերում ցանում են գլխավորապես զանազան տեսակի ցորեն, գարի, հաճար, ոսպ, կանեփ:

Արուտատեղերում, բացի սովորական խոտերից և ծաղիկներից, բուսնում է և լուսածաղիկ, բայց տեղացիները չգիտեն նրան չահագործել, թեև իսկապես չատ մեծ պահանջ կա:

***Կենդանիներ.** Անտառներում լինում են նապաստակներ, եղնիկներ, այծյամներ, աղվեսներ, գայլեր և սակավ՝ արջեր:*

***Թռչուններ.** Բազմազան թռչուններից նշանավոր են մարահավ, կաքավ, դռոն, աղունիկ, մշահավ, տատրակ և այլն:*

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍ

Տաթևի բարձրավանդակի հարավային սահմանում բարձրանում է Տաթևի վանքը. սրա առաջ, դեպի Որոտնա գետը իջնում է մի ձորակ, բանաստեղծական բոլոր հրապույրներով օժտված: Տաթևի գետակը, մրմունջներ բարձրացնելով և հրաշալի, փոքրիկ ջրվեժներ կազմելով՝ գնում է թափվում Որոտնա գետի մեջ: Հեռուն «բաց ճակատով» ցցել է իր գլուխը Շահանդուխտի գագաթը, հայ օրիորդի ողջախոհության այդ հսկա կոթողը: Այստեղ մի տափարակի վրա, տանձի ծառերի տակ հանգչում է Տանճատափ փոքրիկ դյուղը. բնական կանաչազարդ, գույնզգույն գորգը տարածված է անհոդությամբ ամբողջ ձորակում, նույնիսկ ժայռերի վրա, քարերի ճեղքերից դուրս է ցայտել բույսը՝ կյանք վայելելու: Ծառերի վրա ճոխողում են բազմաթիվ թռչուններ՝ դարձյալ կյանք երգելով. բայց այս կյանքով լի ձորակի գլխին կանգնած է «կյանքից զրկված» Տաթևը իր փոքրիկ, կիսամեռ միաբանությամբ:

Վանքը շրջապատված է հաստ պարսպով, որ ունի չորս աշտարակ և մի մեծ դարպաս: Պարսպված տարածության կենտրոնում, կողք-կողքի կանգնած են Պողոս-Պետրոսի և Լուսավորչի տաճարները, իսկ սրանց հանդեպ, դարպասի մոտ, պարապին կից բարձրանում է ս. Աստվածածնի երկհարկանի մատուռը: Եկեղեցու հարավային կողմում կանգնած է «գավազան» սյունը, հայկական ճարտարապետության հրաշալիքներից մինը: Պարիսպների երկարությամբ ձգվում են միաբանների խցերը, վանահոր երկհարկանի բնակարանը, ընդհանուր սեղանատունը, խոհանոցը և ախոռը: Սրանց մի մասը արդեն կիսով չափ քանդված է:

Ս. Պողոս-Պետրոսի եկեղեցու երկարությունն է 27,9 մ (13,1 սաժ.), լայնությունը 16,68 մ (8,3 սաժ.) և բարձրությունը մոտավորապես 53,25 մ (25 սաժ.) (ստվերով չափած): Շինված է տաշած քարով. ունի երկու սյուն, մյուս երկուսը կեղծ են, և դուրս են բերված արևմտյան դռան երկու կողմում շինված խորանների պատերի մեջ: Առաջի երկու սյունը բոլորովին ինքնատիպ են. սրանք քառանկյունի են, միայն դեպի ժողովուրդը և դեպի ատյանը դարձած երեսների վրա 1/4 արշ. հաստությամբ և բուն սյունից նույնպես 1/4 արշին նեղ՝ քառանկյունի շերտ է ձգվում, որի սյան հետ կազմած անկյուններում քառորդ բոլորակ սյուներ են բարձրանում մինչև կարնիզավոր խարիսխները:

Այս և կեղծ սյուների վրա բոլորում են դեղեցիկ ռոմանական կամարներ, կրելով մի բավական բարձր և դեղեցիկ կաթուղիկե, որի տասներկու նեղ և երկար պատուհաններից լույս է ստանում տաճարը: Ընդհանրապես տաճարը չատ լուսավոր է, որովհետև հյուսիսային պատի մեջ էլ չորս պատուհաններ կան, խաչաձև դասավորված, մի-մի հատ էլ հարավային և արևմտյան պատերի մեջ:

Սեղանը կիսաբոլորակ է և կամարակապ: Տաճարի չորս անկյուններում կան մի-մի խորան, փոքրիկ պատուհանով: Սրանց վերի մասերում կան գաղտնի պահարաններ:

Հարավային պատի մեջ բացված է մի դուռ, որի առջև թաղված է ս: Գրիգոր Տաթևացին: Այժմ այդ դերեզմանի վրա մի փոքրիկ մատուռ է շինված 4,66 մ (2 սաժ. 9 վ.) երկար, 1,82 մ (2 արշ. 9 վ.) լայն և 3,55 մ (5 արշ.) բարձր: Մատուռի վրա բարձրանում են երեք փոքրիկ կաթուղիկե, իսկ պատերի արտաքին երեսներին քանդակված են դեղեցիկ խաչեր:

Տապանաքարը մի մեծ հասարակ քար է, որի վրա մարմարիոն է ամրացրած և սրա վրա քանդակված մի խաչ, ներքևում մի ձեռք՝ եպիսկոպոսական գավազան բռնած: Սրա չուրջը կա հետևյալ տապանագիրը (բերում ենք տառացի կերպով).

«Ծառայ Ցսի սրբոյն Գրիգորի Տաթեւացւոյն. Յովակիմ եպիսկոպոս եւ Աբրահամ վարդապետ»:

Խաչի շուրջը կան հետևյալ տառերը. Գ. Ս. Ք. Ի.[11]

Դամբարանի վրա էլ արտաքին կողմից կա հետևյալ արձանագրությունը.

Շնորհիւն Այ չինեցաւ սբ մատուռս եօթնալոյս բաբունապետին եւ երկրորդ ոսկեբերանին երիցս երանեալ վրժպետին մերոյ եւ չորրորդ Լուսաւորչին սբն Գրիգորի Տաթեւացւոյն ձեռամբ բազմաչխատ եւ օգտաշան Սիւնեաց պետի տն Յովակիմայ Սիւնեցւոյ արդեամբ եւ ծախիւք բռնակոթեցւոց, այսինքն Տր Գէորգ Տր Յակոբ եւ Տր Յարութիւն քահանայիցն. նաեւ կարապետին եւ Մկրտչին, Յակոբջանին, Սիմիոնին, Ադդէին, Յովակիմին, Պետրոսին, Գրիգորին եւ Մարտիրոսին, Քարամղուլոյն, Ստեփանին եւ Յոնանին, Յարութիւնին, Մօսէսին, Մկրտչին, Շահնազարին եւ Ածատուրին, այլեւ բարեպաշտուհի կանանցն Նազլուին, Հուրիզատին, Մարիամին, Գուլփարիին, որոց յիշոյն օրհնութիւք եղիցի եւ աղօթք սրբոյս Գրիգորի ի վերա նոցա լիցի, ամէն: Կառուցաւ սբ մատուռս ի հայրապետութեան սբոյ գահին էջմիածնի Տն Ղուկասու ի ՌՄԼԶ (1787) թուոջս մերում, յաւուրս Փանահեան Իբրահիմ խանին:[12]

Աջ խաչի տակ.

Սբ Խաչս յիշատակ է Լծենեցի Մօսէսեան Յարութիւնին:

Գերեզմանի մոտ կախված է մի յուղանկար պատկեր, որ ներկայացնում է Գրիգոր Տաթևացուն: Սա նկարված է 1814 թ. և գեղարվեստական մի առանձին նշանակություն չունի:

Մի փոքրիկ ջահ և մի քանի մոմակալներ կազմում են մատուռի զարդարանքը:

Պողոս-Պետրոսի տաճարը ներքին զարդարանքից զուրկ է. ունի միայն մի չատ հասարակ ջահ և մի քանի չատ վատ պատկերներ: Միայն սեղանը զարդարված է ամենանուրբ մետաքսից պատրաստված մի հրաշալի վարագույրով, որի մասին ասում են, թե նվիրել է Շահ-Աբասի քույրը: Սա արդեն սկսել է փչանալ և տեղ-տեղ կարկատված է:

Շատ նշանավոր են լինչպես այս եկեղեցու, այնպես և ս. Լուսավորչի դռները: Սրանք մի-մի հատ չափազանց հատ և բավական լայն ընկուզենու տախտակներից են շինված և զարդարված կանոնավոր, նուրբ և հիանալի քանդակներով:

Տաճարի նախկին զանգակատունը այժմ քանդել են և սրա փոխարեն այժմ շինում են նորը, տաճարի արևմտյան պատին կից, չորս գեղեցիկ սյուների վրա հաստատված:

---

[11] *Երևի չորս ավետարանի սկզբնագրերը. Գիրք Ծննդյան. Սկիզբն ավետարանի, Քանզի բազումք, ի սկզբան էր բանն:*

[12] *Տե՛ս ԴՀՎ II, էջ 23-24:*

Ս. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԵԿԵՂԵՑԻ

Ս. Պողոս-Պետրոսի եկեղեցուն կից, դեպի հարավ գտնվում է ս. Լուսավորչի փոքրիկ եկեղեցին, որի երկարությունն է 10,65 մ (5 սաժ.), լայնությունը 6,4 մ (3 սաժ.): Եկեղեցին անույշն է, միայն երեքական կեղծ սյուներ ձգվում են հյուսիսային և հարավային պատերի վրա՝ կրելով ռոմանական կամարներ և կամարակապ ձեղուն:

Սեղանի վերևում կան երկու խաչաձև լուսամուտներ, իսկ սրանց վերևում մի կլոր պատուհան: Հարավային պատի մեջ ևս կան երկու լայն և սրանց վերևում՝ երկու նեղ պատուհաններ. ինչպես նաև մեկը արևմտյան պատի մեջ: Եկեղեցին խորաններ չունի:

Ս. Լուսավորչի եկեղեցու առջև շինված է մի կամարակապ դավիթ, ուր գտնվում է ս. Գրիգոր Տաթևացու մատուռ-դամբարանը: Այս շենքը արդեն բավական քայքայվել է, ուստի և ս. Էջմիածնի Սինոդը հրամայել է քանդել: Այս դավթում կան բավականաչափ դերեզմաններ:

ԳԱՎԱԶԱՆ ՍՅՈՒՆԸ

Եկեղեցու հարավային կողմում կանգնած է ս. Երրորդության անվան նվիրված մի խաչակիր սյուն, ճարտարապետական մի գեղեցիկ հրաշակերտ: Շինված է մանր սրբատաշ քարից: Ուխտանիստ է, յուրաքանչյուր կողմի լայնությունը՝ 36 սմ (0,5 արշ.), ուրմին չրջապատը՝ 2,88 մ (4 արշ.), բարձրությունը 15 մ (7 սաժ.) է: Կրկնակի ներքնախարիսխների վրա բարձրանում է բունը, որի մեջտեղում բոլորում է մի կրկնակի մանյակ: Պսակավոր վերնախարիսխի վրա բարձրանում է վարդիկներով (rosace) զարդարված մի անուր (tore), իսկ սրա վրա՝ մի գունդ, կրելով մի կամարաձև քար, մեջը քեռուրաքանդակ (ավելորդ մասերը քերելով դուրս հանված) խաչ: Վերջին տարիներս մի փոքրիկ ցանկապատ է շինված սյան շուրջը: Այս գավազան սյունը նշանավոր է նրանով, որ երբ բարձրից չարժում են՝ օրորվում է: Այս հանդամանքը առիթ է տվել բազմաթիվ ավանդություններ կազմվելու: Ասում են, թե սնդկի վրա է կանգնեցրած, և այդ է պատճառը, որ չարժվում է:

***Ս. Աստվածածնի** փոքրիկ և գեղեցիկ եկեղեցին գտնվում է վանքի հյուսիսային կողմը, պարսպի դարպասին կից: Սա երկհարկանի է. առաջին հարկը կամարակապ է, իսկ երկրորդը դմբեթավոր: Երկրորդի դուռը բացվում է դարպասի ճակատի ծայրին, ուր բարձրանում են քարե սանդուխով: Այս եկեղեցու երկարությունն է 7,14 մ (10 արշ. 4 վ.), լայնությունը՝ 5,1 մ (7 արշ. 3 վ.): Շինված է սրբատաշ քարից և կողմնակի խորաններ չունի: Վրայի արձանագրությունը վկայում է, որ չինել է Գրիգոր եպիսկոպոսը: Պարսպին կից կան բազմաթիվ թաղակապ սենյակներ, որոնցից նշանավոր են հարավային կողմում գտնվածները, ուր այժմ բնակում է վանահայրը: Այստեղ*

գլխավոր դահլիճից մի դուռ է բացվում դեպի մի քայքայված պատշգամբ, որ կախված է վերը հիշած բանաստեղծական ձորակի վրա, և շատ գեղեցիկ տեսարան է ներկայացնում:

Մյուս սենյակներից նշանավոր է սեղանատունը, ուր չինված են քարե երկար սեղաններ և նստարաններ: Սա բոլորովին նման է Հարանց անապատի սեղանատանը, միայն նրանից ավելի փոքր և ավելի հասարակ է չինված:

Տաճեւի վանքում կան բավական նշանավոր սրբություններ և հնություններ, որոնք պահվում են եկեղեցու մեջ դրված երկու մեծ պահարաններում: Սրանցից նշանավորներն են.

1. Ավագ ս. Նշան: Արծաթապատ է և երեսին կերտված է Հիսուսը խաչից իջեցնելիս: Պարունակում է իր մեջ մի կրկնախաչ, որ ներփակում է խաչափայտի մի մասը: Ս. Նշանի վրա կա հետևյալ արձանագրությունը.

Ձիչատակ է զազանչեցի Դաւիթի որդի Ծոնանու. թվ. ՌՄԼԴ (1785):

2. Մասունք ս. Հակոբի եղբոր Տեառն: Արծաթապատ և ոսկեզօծ մի պահարան է, որ պարունակում է ս. Հակոբի մասը: Պահարանի վրա կերտված է ս. Հակոբը, հայրապետական զգեստով. նրա առաջ՝ Երուսաղեմի տաճարը: Մոտը գրված է. **Եղբայր Տեառն:** Մյուս երեսին կերտված է մի խաչ և անկյուններում մի-մի հրեշտակ:

Պահարանի կողքերին գրված են.

Եգեալ ի վանս սուրբ Թադէի, մասունք սրբոյն Ցակոբոսի, եղբօր ըստ մարմնոյ տեառն Ցի:

Կան նաև ս. Հովհաննու, ս. Ստեփանոսի և էլի ուրիշ երկու Աջեր:

Մի առանձին պահարանում էլ պահվում են բավական հին և թանկագին եկեղեցական զգեստներ և սպասներ, որոնցից նշանավոր են. երեք հատ քահանայական սաղավարտներ, ՌՀԵ (1626), ՌՄԼԴ (1785) և ՌՄԹ (1760) թվերին նվիրված: Երեքն էլ արծաթապատ և ոսկեզօծ են, սակայն երրորդը ամենագեղեցիկն է և զարդարված է ս. Աստվածածնի և տասներկու առաքյալների պատկերներով:

Հետաքրքրական են նույնպես մի եպիսկոպոսական թագ ՌՀԵ (1626) թվից, մի վարագույր ՌՃ (1651) թվից, զգեստներ և այլն:

ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՑՈՒՆՆԵՐ[13]

Գավթի պատի վրա.

†Թվին ՆՂԲ (1043) ի թագաւորութեանն Սմբատայ որդւոյ Աշոտոյ եւ Տէր Յովհաննէս չինեցի զսրահս աւգնականութեամբ Սմբատայ, որք աղաւթէք յիշեցէք ի Քրիստոս:[14]

Ա. Զանգակի վրա.

---

[13] Դասավորված են ժամանակագրական կարգով:

[14] Տե՛ս ԴՀՎ II, էջ 19:

Լսելի արա ինձ Տէր զձայն ցնծութեան եւ ուրախութեան ՉԾԱ (1302) թվ.:

Անեղին ծննդեամբ զՏէր Ստփ. Սիւնեաց գահին կոչեա ի փառսդ հայրենեաց:

Բ. Ձանգակի վրա.

Այս Տէր Ստեփ. Օրբէլեան մեծաւ ջանիւ ուղղափառ պահէ զաւանդս յեկեղեցիս Հայոց ՉԾԳ (1304).

Տէր Ստփ. միտրապօլիտ Սիւնեաց որ է պրօտօֆրաւնտէս ամենայն Հայոց:

Լուսավորիչ եկեղեցու դռան.

ՉՏէր Ստեփաննոս Միտրապօլիտ Սիւնեաց որ է պռօֆռանտէս Հայոց մեծաց, որդի մեծափառ իշխանին Տարսայիճի, չինողի սուրբ եկեղեցւոյս յիշեցէք ի Քս.:[15]

Լուսավորիչ եկեղեցու հարաւային կողմում.

Մեք Սիսաք եւ Սարքիս կամաւն Աստուծոյ, որդիք Շահանդխտոյ...թվ. ՉԿԵ (1316).

Լուսավորիչ եկեղեցու հարաւային պատի վրա.

Այս է գիր արձան... որ Մաղրէն մինչեւ կոթ ինչ գեղ...կպալ...վախթն տուին սբ առաքելոյս Լու...իւրեանց հոգոյն որդոց եւ թոռեանց անձն զյիշատակ մելիք Թանգրղուլ փառկուն...որ Մզեն թեւաքալին Աղճաղալէն, Ճանղուլին, Աւետ...վրդեն...ից Ստեփանոս Կոթայ Ղուլիկն Գետկայ իւրեանց ձեռաց գիրով գիր տուին Շմաւոն եպիսկոպոսին, թէ ով ոք ընտանեաց կամ աւտարաց խապանել կամենայ մեր մեղաց տէր լինի, եւ մասն Ուդայի առցէ ձեռս փթի եւ հող դառնայ. գիր յիշատակ առ ձեզ մնայ Ներսէս սուտանուն աբեղայ թվ. ՉՁԱ (1332):[16]

Գավթում, մի սեմաքարի վրա.

Կամաւն Աստուծոյ ես Գրիգոր փոխեցի զիմ հողն, զինչ որ հաւատուն կայր գնեցի եւ փոխեցի...եւ ետու յիշատակ սուրբ եկեղեցւոյս, որ խափանել ջանայ մեր մեղացս տէրն է. թվ. ՉՂԴ (1345):

Ընկուզենի դռան վրա. Ես Տէր Հայրապետս ծառայ Բարձրելոյն կանգնեցի զԴասերս եւ նորոգեցի զԴուռնս. զիս յաղաւթս յիշեցէք աղաչեմ:

Գավթի սյան վրա.

Ցանուն Աստուծոյ, այս մեր գիր է Տէր Բարսղի, որ առի զտանձուտս ի հայրենեացս ի տարւոջն ղ. աւր ժամ Քրիստափորայ եւ Մխիթարայ, կատարիչք հրամանացս օրհնին յԱստուծոյ:[17]

Ցանուն Այ ես Յովհաննէս քահանայ իմ հալալ ընչից գնեցի կոծմակոթն տուի ի սուրբ Առաքելոցն առաջնորդութեամբ սուրբ Ուխտիս Տէր-Հայրա-

---

[15] Տե՛ս ԴՀՎ II, էջ 25:

[16] Տե՛ս ԴՀՎ II, էջ 27:

[17] Տե՛ս ԴՀՎ II, էջ 21:

պետ Տէր-Յոհաննէս եռուն ի տարին վեց պատարագ սուրբ Յակոբայ տոնին:[18]

Գավթի միջին կամարի վրա.

Թվ ՌԾԴ (1605) վերստին ետ նորոգել Տէր-Եղիչէն զգաւթաւք եւ սալն. յիշատակ իւրոյ յիշեցէք:

ՏԱՊԱՆԱԳՐԵՐ

Այս յարկ տապանի եւ դիր դամբարան մեծահաւատ կնոջ Արուս խաթունի դստեր Սադունի եւ ամուսնոյ Տարսայիճ իշխանին. թվին ՉԼԵ (1286):

Տէր Յովհաննէս արքեպիսկոպոս չինող եկեղեցւոյս. թվ. ՉՀ (1291):

Գավթի Բ սյան մի խաչի շուրջ.

Կամաւն Այ ես Առաքել Սիւնեաց եպիսկոպոս կանգնեցի զխաչս ի փրկութիւն...հոգւոյ. Ած... որ ի Քս. զրաբունապետ Գրիգորի յիշեցէք ի Քս. ՊԾԹ (1410):

Ի յայս տապան քնարանի, կայ հանգուցեալ նչխար մեծի Ներսէսի բարեւնեաց պետի, եւ եպիսկոպոսի Սիւնեաց նահանգի, գոլով տեղեաւ Տաթեւացի, եւ եկեղեցւոյ չինողի. եղեւ փոխեալ ի կենաց աստի ՌՃ. երրորդ թուի (1654) յիշեցէք:

Այս հանգիստս Զաքարիայի երջանիկ արհի եպիսկոպոսի թուականիս հայկականի ՌՃԲ (1653):

Այս է հանգիստ Տէր Մկրտչի, որ ի լեհաց եկեալ լինի, աստ սուրբ կրօնաւոր առ Տէր փոխի, հազար հարիւր իննեակ թվի:

Այս տապան՝ հանգստարան սրբազան արհի եպիսկոպոսին Մեսրովբայ Սիւնեաց նահանգի ՌՃԺԲ (1663):

Գավթի Բ սյան վրա.

Այս արձան փրկութեան եւ նկարեալ արեամբ Փրկչին ի բարեխաւսութիւն Սողոմոն քահանս:

Պարսպից դուրս, վանքից փոքր-ինչ հեռու դանվում են վանքի կալը, մարագը և ախոռը, բավական դեղեցիկ շինված: Այստեղ կա հետևյալ արձանագրությունը.

Շինեցաւ մարաքս եւ թաւլաս եւ աղբիւրս ի ՌՂԳ (1644): Աւարտեցաւ ձեռամբն Տաթեւացի Ղալամեանց Տէր Գրիգորի թոռ Տէր Բաղդասարի որդի Սիւնեաց եպիսկոպոսի Օվանէս վարդապետին. Նադիր-Շահին ժամանակն էր, ցորնին բեռն գնայր Ժ. Թասսալի քռդիեն (?) թվ. ՌՃՂԴ (1745):[19]

Տաթևի տնտեսական դրությունը, համեմատելով իր նախկին դրության հետ՝ շատ աննախանձելի է: Մինչդեռ առաջները հիսունից ավելի սեփա-

[18] Տե՛ս ԴՀՎ II, էջ 21:

[19] Տե՛ս ԴՀՎ II, էջ 34:

կան դյուղեր ուներ, 600,000 չահի[20] եկամուտ էր ստանում՝ այժմ ունի միայն հետևյալ դյուղերը.

1) Տաթև, որ վճարում է վանքին տարեկան 600 ռ.
2) Տանձատափ .....120 ռ.
3) Լծեն ..... մոտ 150 ռ.
4) Հալիճոր ..... 250 ռ.
5) Շինահայր ..... 800 ռ.
6) Խոտ ..... 600 ռ.
7) Աղքենտ ..... 200 ռ.
8) Ղարաքիլիսա ..... 620 ռ.
9) Քիրս.....80 ռ.

Ընդամենը 9 դյուղ, որոնցից տարեկան ստացվում է 3420 ռուբլի:

Բացի սրանցից ունի և ուրիշ վեց դյուղ, որոնց մասին մի քանի կալվածատերեր վեճեր են հարուցել և կամենում են խլել: Սրանք են Խասխասիկ, Սիսիանի, Շահվերդիլար, Քյալբալա-էյվազլար, Հյուլյութ, Դաստակերտ:

Վանքը ունի նաև սեփական արոտատեղիներ, ուր պահում են վանքապատկան անասուններ. ունի արտեր, այգիներ, որոնց մեջ նշանավոր է Շնհերի և մանավանդ Շվանիձորի այգին իր պատվական գինով, ջրաղացներով և այլն:

Վանքը յուր միաբանների համար ամբողջ Տաթևի վիճակից որպես տուրք ստանում է.

1. Պանիր. Մայիս ամսին, բոլոր ոչխարների մի օրվա կաթը հավաքում և պանիր են պատրաստում: Գործակալները գնում են դյուղերը, կանգնում այն ճանապարհների վրա, որտեղով կաթը արոտատեղից պիտի բերեն տուն, վերցնում են կաթը և ուղարկում դյուղի քահանայի տուն: Այստեղ պանիր են պատրաստում և ուղարկում Տաթև: Պատահում էլ է, որ դյուղացիները կաթի փոխարեն պատրաստի պանիր են տալիս:

2. Ցուղ. Աշնանը նույն գործակալները դյուղերը ցրվելով, բոլոր կով ունեցողներից յուղ են պահանջում, յուրաքանչյուր կովից մի քառորդ փունտ:

3. Ձու. Զատկին մոտիկ ձու են հավաքում, յուրաքանչյուր տնից առնվազը երկու հատ: Պետք է ասել, որ այս տուրքերը հետզհետե ավելի դժվարությամբ և ավելի քիչ են վճարվում:

Այս եկամուտներից վանքը պաշտոնապես վերցնելով 900 ռ., որպես վարդապետների ռոճիկ, 150 սոմար ցորեն, 75 սոմար գարի, 12 փութ յուղ, 20 փութ պանիր, երկու ծառայի և հացթուխի վարձ՝ մնացածը ուղարկում է Էջմիածին:

---

[20] Տե՛ս Ալիշան, Սիսական, եր. 242:

Վանքում այժմ կա մի վանահայր, որ միևնույն ժամանակ վիճակի հաջորդն է, երկու ուրիշ վարդապետ, երկու դպիր և երկու ծառա:

ՏԱԹԵՎ ԳՅՈՒՂ

Տաթևի վիճակի ամենանշանավոր գյուղը Տաթևն է, որ գտնվում է վանքից հազիվ երկու վերստ հեռավորության վրա, մի բլրակի ստորոտում. գյուղի միջով անցնում է մի փոքրիկ աննշան առվակ: Փողոցները ծուռումուռ են, տները անկանոն: Գյուղի արևելյան կողմում, մի փոքրիկ տափարակի վրա գտնվում է ս. Մինաս անունով եկեղեցին, փոքրիկ գմբեթով. չինված է սրբատաշ քարերով, ճեղունը կամարակապ է և հանգչում է չորս սյուների վրա:

Եկեղեցու արևմտյան դուռը գեղեցիկ նախշերով եզրափակված է և վերին մասը վեղարաձև դուրս է փորված: Մյուս, հարավային դռան վրա գրված է.

Ներսէս վարդապետ չինող սրբոյ եկեղեցւոյս յիշեցէք ի Քս Ած. Թվ. ՌՂԵ (1646):

Հետաքրքիր են նաև արևելյան կողմի պատուհանը և սրա մոտի խաչաձև լուսամուտները, ինչպես նաև մի պատուհան, որ երևի ուրիշ հին շինությունից բերված և դրված է հասարակ զանգակատան մեջ. այս պատուհանը միակտուր մի քար է, վանդակի ցանցը փորված հանված է իր միջից. նրա վերևի մի անկյունում քանդակված է մի այծյամ, մյուսում՝ մի որսորդ:

Եկեղեցին ներքուստ շատ պարզ է, դուրկ զարդարանքից: Հյուսիսային պատի մեջ մի փոքրիկ խորշ կա, որտեղից մի աղբյուր կարկաչելով վազում է փոքրիկ ավազանի մեջ և ապա անցնում գնում Տաթևի վանքի գավիթը: Շատ ախորժելի տպավորություն է թողնում այս աղբյուրի կարկաչյունը՝ միախառնվելով դպիրների և աղոթողների փառաբանության ձայնին:

Եկեղեցին պարսպապատ է, և գավթում գտնվում են բավական թվով գերեզմաններ, որոնց մեջ նշանավոր են Օրբելյաններինը:

Գյուղը 844 թվականից սկսած պատկանում է Տաթևի վանքին: Բնակիչները բոլորն էլ հայ լուսավորչական են. 219 տուն, 956 ար., 925 իգ., ընդամենը՝ 1881 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Դպրոց չունեն, բայց ուսման սերը բավական տարածված է, որովհետև առաջները երեխաները սովորում էին Տաթևի վանական դպրոցում, որ այժմ փակ է: Հիմա Կովկասի միջնակարգ դպրոցներում սովորում են այս գյուղից 5-6 երեխա:

Գյուղի բարոյական վիճակը բավական ընկած է:

Սա գտնվում է Որոտն գետի աջ ափին, Հալիճոր գյուղի հանդեպ, մի փոքրիկ հարթության վրա, որ երեք կողմից պատած է ժայռերով: Այս հարթությունից մի քիչ բարձր երևում է մի փոքրիկ տափարակ տեղ, որտեղ, Առաքել Դավրիժեցու ասելով, չինված է եղել այս վանքը (ԺԷ դարում), որ հետո, մի մեծ երկրաշարժի ժամանակ, սահել, իջել է այժմյան տեղը:

Ջորն ամբողջապես չատ հրաշալի է, ծածկված պտղատու ծառերով: Այստեղ թռչունների ճռվողյունին ներկայումս փոխարինում են նախկին անապատականների սաղմոսերգությունները:

Հարանց անապատը չորս սյուների վրա ռոմանական կամարներով և նույնպիսի ձեղունով մի վանք է 18,7 մ (8,5 սաժ.) երկար., 8,88 մ (4 սաժ. 0,5 արշ.) լայն. և 10 մ (5 սաժ.) բարձր.: Շինված է մասամբ տաշած, մասամբ էլ անտաշ քարերից: Ունի երկու խորան. ձախակողմյանի միջից մի դուռ է բացվում դեպի մի փոքրիկ մատուռ, ուր կա մի գերեզման, սակայն առանց տապանագրի:

Եկեղեցին ունի ութ փոքրիկ պատուհան և երեք դուռ. արևմտյան դուռը տանում է դեպի մի կամարակապ դավիթ, որ արդեն փուլ է եկած:

Այս դռան կամարակալ քարի վրա կա հետևյալ արձանագրությունը.

Ձիշեցէք ի Քս զմեղապարտ Սահակ աբեղայս, որ նորոգեաց զեկեղեցիս եւ չինեաց զգաւիթս, զպարիսպս եւ այլ չինուածք սուրբ անապատիս յիշատակ իւր եւ իւր ծնողացն Տէր Ովանէսին եւ Փարիխաթունին:[21]

Սույն դռան երկու կողմերում փոքրիկ քարերի վրա փորագրված են.

Ձիշատակ է զայս խաչս Մատուռ պապին:

Ձիշատակ է խաչս Մարտիրոսին:

Գավթում կան երեք գերեզմաններ, առանց տապանագրերի:

Անապատը պատած է պարսպով, որի գեղեցկաշեն դարպասի վրա գրված է:

Ձիշատակ է դուռս աղաղնեացն Այ Անթառանին, Հռիփսիմին, Մարեանոսին, Սեւուն եւ Ալէքսիանոսին. թվ. ՌՃԿԶ (1717) էր:

Եւս առաւել Յակոբին, Աբրահամին:

Սրանից բարձր կա մի ուրիշ արձանագրություն ևս, որ անընթեռնելի է: Պարսպի մեջ կան գեռնափոր, փոքրիկ խցեր:

Հարանց անապատից փոքր-ինչ ցած, գետի գետի ափը, ձորի լանջին գտնվում է մի փոքրիկ, անսյուն, թաղակապ մատուռ, բոլորովին կանգուն: Ոչ մի արձանագրություն չկա վրան. իմ առաջնորդ չինահերցի քահանան և գյուղացիները ասում էին, թե իրենք ավանդաբար լսել են, թե այս մատուռի անունը Պողոս-Պետրոս է: Մատուռի չուրջը կան գերեզմաններ, եղծված տապանագրերով:

---

[21] Տե՛ս ԴՀՎ II, էջ 54:

Ճանապարհը, որ տանում է Շինահայր գյուղից դեպի Հարանց անապատը՝ սաստիկ վատ է և վտանգավոր: Շատ տեղեր անհրաժեշտ է ոտով գնալ:

ՄԵԾ ԿԱՄ ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ

Սատանի կամուրջից փոքր-ինչ ներքև ձորակը ավելի լայնանում է և դետի աջ ափին կազմում է մի փոքրիկ հարթություն, որը հարավային կողմից կտրում է Տաթևի առվակը՝ տալով նրան լեզվակի ձև:

Նրա մի կողմից Տաթևի սարը գրեթե ուղղահայաց կտրվածքով մի բնական պարիսպ է կազմում, իսկ Որոտնա գետը պաշտպանում է այդ լեզվակը արևելյան կողմից: Հյուսիսային կողմից միայն մի արվեստական պարիսպ բավական է եղել անմատչելի դարձնելու այն տեղը, ուր հիմնված է Մեծ անապատը:

Հովիտն ամբողջապես ծածկված է ճոխ բուսականությամբ: Դարավոր թթենիներ նվիրում են անցորդներին իրենց զովարար ստվերն ու ահագին թուրթը: Գետի դոչյունը խլացնում է մարդկանց:

Ահա այս գեղեցիկ, իսկապես բանաստեղծական տեղում բարձրանում է Մեծ կամ Տաթևի անապատը, որը հիմնարկել է Հակոբ կաթողիկոսը (ԺԷ դարում), բերելով այստեղ Հարանց անապատի միաբաններին: Այս անապատը, չնայած իր բնական ամրության՝ շրջապատված է նաև մի հաստ պարսպով, որ ունի չորս աշտարակ:

Սրա կենտրոնում բարձրանում է ս. Աստվածածնի վանքը: Սա վեց գեղեցիկ սյուների վրա բոլորող երեք ռոմանական կամարներով և նույնպիսի ձեղունով մի մեծ շենք է: Միջին կամարի վրա բարձրանում է մի շատ փոքրիկ կաթուղիկե: Ութ փոքրիկ պատուհաններ աղոտ կերպով լուսավորում են ահագին վանքը:

Արևմտյան կողմում գտնվում է մի բարձր, երկու գեղեցիկ սյուներով ու ռոմանական կամարներով կիսաբաց դավիթ: Այս դավթի մեջ թաղված են երեք վանահայր:

Մի փոքրիկ, բայց շատ հասարակ դավիթ էլ կա վանքի հյուսիսային կողմում:

Պարսպին կից չինված են վաթսունից ավելի խցեր, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է մի կամարակապ բակից և մի փոքրիկ խցից, որի մեջտեղում կա մի փոքրիկ բուխարի (վառարան) և սրա առաջ փոքր-ինչ հեռու, քարե փոքրիկ թոնիր, ուր կրակ են ածելիս եղել քյուրսիի (թաղար) համար:

Վանքի հարավային կողմում գտնվում է ահագին սեղանատունը, որ 27,1 մ (10 ս.) երկարություն, 6,4 մ (3 ս.) լայնություն և 7,46 մ (3,5 ս.) բարձրություն ունի, կամարակապ ձեղունով և փոքրիկ պատուհաններով: Սեղանատան երկարությամբ ձգվում են երկու կարգ քարե երկար սեղաններ, մի-մի կարգ քարե նստարաններով:

Սեղանատունը մի դռնով հաղորդակցվում է մի ուրիշ, նույնպես համաբակապ և բավական մեծ չինության հետ, որ խոհանոցն է եղել: Պատի մեջ բացված է միջնադարյան մի օջախ, 2,84 մ (4 արշ.) լայն, 0,71 մ (1 արշ.) խոր և 2,13 մ (1 ս.) երկար: Մի անկյունում էլ չինված է մի հնձան:

Վանքի բակում դարավոր թթենիների տակ դուրս է ցայտում մի սառնորակ աղբյուր: Վանքից փոքր-ինչ հեռու, Տաթևի սարի մեջ, մի տեղ կա, ուր հուլիսյան տոթի ժամանակ կժով ջուրը մի քանի րոպեում սաստիկ պաղում է:

Անապատը այժմ կալվածներ չունի, բացի մի այգուց: Վանահայր համարվում է խոսրով վարդապետը, որ Գորիսում է բնակում, որպես այն մասի գործակալ: Վանքի պահպանությունը հանձնված է մի գյուղացի ընտանիքի, որ շատ քիչ խնամք է տանում նրա վրա:

ՈՐՈՏՆԱ ՎԱՆՔԸ

Որոտնա վանքը գտնվում է մի գեղեցիկ ձորակի լանջին, որի միջով գոչ-գոչալով հոսում է Որոտնա գետը: Վանքի արևելահյուսիսային կողմը բարձրանում է մի սուր լեռ, որի ժայռոտ գագաթին երբեմն եղել է Որոտնա բերդը: Արևելյան և արևմտյան կողմերն էլ պատած են լեռներով: Ամբողջ ձորակը թաղված է այգիների մեջ և շատ գեղեցիկ տեսք ունի:

Վանքը շրջապատված է հաստ պարսպով, որի մի քանի մասերը բնական ժայռերն են կազմում: Ունի միայն մի դարպաս, մինչդեռ հնում երկուսն է ունեցել: Մի սառնորակ, վարար աղբյուր դուրս է ցայտում դարպասի մոտ:

Հովհան Որոտնեցու անվան նվիրված վանքը շինված է կարմիր, տաշած քարից, երկարությունն է 12,78 մ (6 ս.), լայնությունը 10,65 մ (5 ս.), իսկ բարձրությունը՝ մոտ 21,3 մ (10 ս.): Եկեղեցին անսյուն է և խաչաձև: 3,55 մ (5 արշ.) լայնության և 2,84 մ (4 արշ.) խորության կիսաբոլոր թևեր բոլորում են երեք կողմում, իսկ արևմտյան կողմը քառանկյունի է: Ջորս անկյուններում էլ կան մի-մի փոքրիկ խորան, յուրաքանչյուրը մի-մի նեղ պատուհանով: Կեղծ սյուները բավական գեղեցիկ են, սրանց վրա բոլորում են ռոմանական կամարներ, պահպանելով իրենց վրա բարձրացող կաթուղիկեն, չորս նեղ և կարճ պատուհաններով: Խորանների վերևում կան գաղտնի պահարաններ:

Վանքի առաջ կա մի գավիթ, արաբական կամարներով և ձեղունով, որ այժմ բոլորովին քանդված է: Հատակը ամբողջապես ծածկված է տապանաքարերով:

Վանքի հյուսիսային կողմում գտնվում է ս. Աստվածածին եկեղեցին, որ 11,96 մ (5 ս., 1 արշ.) երկարություն և 4,62 մ (2 ս., 1 արշ.) լայնություն ունի, անսյուն և առանց գմբեթի, ռոմանական ձեղունով: Լուսավորվում է միայն երեք պատուհաններով: Ունի երեք խորան: Եկեղեցու հարավային և արևմտյան կողմերում կան մի-մի գավիթ, ուր կան շատ դերեզմաններ:

Այս երկու եկեղեցիների արևմտյան կողմում ևս կա մի փոքրիկ, այժմ բոլորովին ավերված եկեղեցի:

Վանքի հարավային կողմում բարձրանում է մի սյուն գավազան, որ թեև նման է Տաթևի վանքի սյուն-գավազանին, բայց նրանից փոքր է և ավելի հասարակ է շինված: Սա մի պատվանդանի վրա կանգնեցրած քառանկյունի 0,40 մ (9 վերշոկ) լայնության և 2,13 մ (1 ս.) բարձրության քար է, վրան մի խոյակ և մի քարե խաչ ամրացրած: Ամբողջ գավազան-սյունը գետնից 5,68 մ (8 արշ.) բարձրություն ունի:

Վանքը ներկայումս չատ խեղճ դրություն ունի: Ժամասացություն կատարվում է միայն ս. Հովհաննու վանքում, որ ոչ մի զարդարանք չունի:

Պարսպի մեջ կան մի քանի ավերակ խցեր և դամեր: Վանքը պահպանում է մի քահանա, որը տարվա մնծագույն մասը բացակայում է, թողնելով վանքը մի պառավ կնոջ և նրա պատանի որդու խնամքին: Պատերի և կաթուղիկեի մեջ բուսած են զանազան բույսեր, որոնք անտարակույս ավելի կարագացնեն շենքի վերջնական քայքայումը:

ՈՐՈՏՆԱ ՎԱՆՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Տաճարի հյուսիսային կողմում.

Թվն. ՉՀԵ (1326) ամի կամաւն Այ. ես Տէր Ստէփաննոսս Օրպէլեան որդի Ջալալեան արք եպկոպ տանն Սիսական եկի մեր հայրենի տունս, ի վանս Վաղատնու. եւ տեսի զհիւրանոցն զոր կտեալ էր հայր Սարգիսն. վս արեւշատութեան Բուրթելին եւ զաւակացն իւր Բէլքէնէքին եւ Իվանեա յիշատակի իւր, կամ եղեւ ինձ մասնակցիլ այնմ արդեանց եւ տվել զՎաղատնի զխաչահորէն զգիւղ մեր եւ կիւրղի վանս ազատ ի մեր յամէն զի յառաջ տուած էր. ժողովուրդ եւ մեք զմեր բաժին հասն տվաք ի պէտս պանտոկին. արդ այսմհետէ չունի ոք հրաման աթոռակալաց կամ հայ իշխողաց զմեր տված ի սբ ուխտս հանել կամ խափանել ջանայ մեր մեղացը պարտական լիցի եւ յերից սբ ժողովոցն որոշ ելցէ՝ մասն եւ բաժին ընդ խաչողացն եւ յուդային առցէ ամէն:[22]

Տաճարի արևմտյան կողմում.

Կամաւն Այ մեք Բուրթելս եւ Գուղտայս են որդիք էլէկոմին որդոյ Տարսայիճին, եղբայր Սմպաթայ. իշխանք տանս Սիսակայ. տեսեալ զձեռագիր նոցին զոր չինել կամելով զվաղինջուց աւետեալ եւ խաղտեալ վանս Վաղատնու ի ձեռն հայր Մխիթարայ հատեալ էին սահման գետովն ի շրջանաքարն եւ քայլիճն: Հայ ծաղիկն է տվել իւրեանց հայրենեաց զԻրիմիս գիւղ, Ուզ գիւղ, Շամպին հողերն իւրեանց սահմանովն. եւ ի Շնհէր զաղուջանց հողն եւ զջուր եւ զայգիքն ամէն սահմանաւն. եւ

---

[22] Տե՛ս ԴՀՎ II, էջ 101:

խնդրեալ արձանագրել յիշատակ զոր անփոյթ արարեալ եհաս առ մեզ. եւ մեք կամելով արձանագրեցաք վս յիշատակի նոցին ի չատութեան մեզ եւ զաւակաց մեր. եւ իշխօղք տանս կարդեցին տարին մի քառասունք անխափան կատարել. արդ եթէ ոք ի մերոց կամ յօտարաց զմեր սահմանեալ տուրքս, խափանել զգիրս զմեր մեղացն պարտական լիցի. եւ թէ առաջի Այ ամօթ երես ելցէ: Եւ թէ տաճիկ կմ այլազգ փոխի եւ հանել կամիցի իւր մահմետին ապիզար լինի. եւ ո ոը նահլաթ առնու թվ. ՉԿԴ (1315):[23]

Տաճարի արեւելյան կողմին.

Էլիկում յիշխն Սմպաթայ եղբայր նորա Տարսայիճիս որ կրկին նորոգեցի զեկեղեցիս յիշատակ ինձ:

Տաճարի դռան գլխին.

ՉՕհաննէս մեղուցեալ ած սիրող աղաչեմ յիշեցէք ծնողքս ի թվ. ՌԾ (1601):

Տաճարի գավթի դռան.

Ես Ամիրս Որգայ որդի Ղազիկին Անկեղակոթեցի չինեցի զգլուխ սբ կարապետիս այս եւ խաչն կանգնեցի աթոռական Տէր Շմաւոն վարդպին թվ. ՊՉէ ին (1438):[24]

Մեծ եկեղեցու արեւելյան կողմին.

Վասակ որդի Սմպաթայ չինեցաւ հրամանաւ թագաւորին Սմպատայ. ի ձեռն Շահանտուխտ թագուհոյ բարեպաշտի, որ տաճկերէն կասուի ամիր փարի:[25]

ՈՐՈՏՆԱ ԲԵՐԴ

Հայոց նշանավոր, հազարամյա բերդերից մեկը եղել է նաև Որոտնա բերդը, որ դեռ Վարդանանց ժամանակ պարսիկներից խլվել և միայն մեծ դժվարությամբ կրկին անցել է Վարդանանց ձեռքը: Պատմական շատ անցքերից և շատ դարերից հետո, երբ Սենեքերիմ թագավորն սպանվել և Կապան մայրաքաղաքն էլ առնվել է՝ թուրքերը սկսել են նաև Որոտնա բերդին (1104 թ.), որից 115 տարի հետո, այսինքն 1219 թ. Իվանե աթաբեկը խլել է նրանց ձեռքից: Շատ տարիներ հետո, երբ թաթարները նորից սկսրապետել են Հայաստանին՝ Լիպարիտի որդի Սմբատ Օրբելյանը կողմնակալ Բալու Նոյի հավանությամբ նորից սկսրել է Որոտնա ամբողջ երկիրը,[26] *և ինչպես կարծվում է՝ հանձնել է այն իր եղբոր Տարսայիճին, որ այս վիճակի տեր է կոչվում նախքան իր եղբորը հաջորդելն ու դնալ Վայոց ձորում բնակելը: Սրանց տոհմից մնացին պայազատողներ ոչ միայն Որոտնա, այլև Տաթևի,*

---

[23] Տե՛ս ԴՀՎ II, էջ 101:

[24] Տե՛ս ԴՀՎ II, էջ 103:

[25] Տե՛ս ԴՀՎ II, էջ 100:

[26] Ջամչեան Գ., եր. 246:

մինչև մեր ժամանակները, առաջիններըը որպես իշխող տերեր, իսկ հետինները լոկ որպես կալվածատերեր:

ԺԴ դարի սկզբում, Գուգարաց Հովհան-Ասան խանը, Դավիթ բեկի պատմիչի ասելով՝ 56, 000 (!) հայկական զորքով եկել, պաշարել է այս բերդը, սակայն չի կարողացել առնել: Մի քիչ հետո, նույն տարին (1723 թ.) Դավիթ բեկն է պաշարել և չնորհիվ այն հանգամանքին, որ հորդ անձրևները փլցրել են պարսպի մի մասը՝ Դավիթ բեկ[27] անցել է այդ տեղով, տիրել բերդին և սրի քաշել այլազգիներին:[28]

Ահա այս բերդը գտնվում է համանուն վանքից արևելահյուսիս, գետի անմիջապես աջ ափին բարձրացող լեռան վրա, որի երեք կողմը գահավեժ ժայռեր են և միայն մի կողմը դեպի առաջ թեքվելով՝ մի փոքրիկ հարթություն է կազմում: Այստեղ այժմ մնում են բերդի ավերակները: Լեռան բուն գագաթին, որ նույնպես երեք կողմից պատած է բնական ժայռերով և միայն մի կողմից է մատչելի՝ գտնվում է միջնաբերդը: Այս բաց կողմն էլ պատած է եղել հաստ պարսպով, որ այժմ քանդքանդված է: Միջնաբերդում կա մի ավերակ մատուռ, իսկ սրանից ձախ, ժայռի ամենաբարձր տեղում մի շինություն, որ միայն երկու պատ ունի: Գուցե սա դիտանոց եղած լինի:

Մի ստորերկրյա ջուր բերելու նպատակով շինված անցքն իջնում է մինչև գետի ափը. անցքը այժմ տեղ-տեղ քանդված և լցված է:

Միջնաբերդում կա մի տապանաքար, որ թավալված է երևում իր տեղից և կրում հետևյալ արձանագրությունը.

Այս է հանգիստ բարեպաշտ իշխանին արքայազուն Սմբատայ՝ որ ի կէս աւրեայ ի Քս փոխեցաւ յիշեցէք ի Քրիստոս. թվ. ՊՀԹ (1430):

Բերդի ստորոտում կա մի կամուրջ, որ շինել է 1853 թ. բռնակոթեցի մելիք Թանդին: Կամուրջից քիչ բարձր, Որոտն գետի ձախ ափին, գտնվում են հին Որոտն գյուղի ավերակները, և սրանց կից այժմյան Ուրուտ գյուղը, ծածկված պտղատու ծառերով: Բնակիչները չիա-պարսիկներ են, ընդամենը 180 տուն:

ՇԱՀԱՆԴՈՒԽՏԻ ԺԱՑՈՒ

Տաթևի հարավային կողմում, մոտ 4 վերստ հեռու, երեք գագաթներ ուղղահայաց լանջերով իջնում են Որոտն գետի ափը. սրանցից միջինը, որ ժայռոտ է՝ կոչվում է Շահանդուխտի ժայռ կամ թուրքերեն՝ Գյալին-ղայա (Հարսնաքար): Սրա գագաթին մոտ, մի փոքրիկ ձորակ է բացվում, ուր կարմիր քարից մի փոքրիկ մատուռ կա շինված; կարմիր կիրակիին շրջակա գյուղերից նորահարսները այստեղ ուխտ են գալիս, որպեսզի իրենց հրեխաները ծաղիկ չհանեն:

---

[27] Ջամչեան, Գ., եր. 787:
[28] Ալիշան, Սիսական, եր. 217-218:

Ժողովուրդը այսօր էլ հիացմամբ պատմում է, թե ինչպես Շահանդուխտ անունով մի աղջիկ հարս գնալիս ենթարկվել է անօրինների հարձակման, որոնք կամեցել են նրան փախցնել, և թե ինչպես նա, չկամենալով անօրինների ձեռքն ընկնել՝ ձիով թռել է այդ ժայռի գագաթից ու անվնաս կանգնել Որոտնա գետի ափին: Այսպիսի հրաշքով ազատվելուց հետո՝ նա այլևս չի կամեցել հարսնանալ. այդ լեռան լանջին շինել է մեր հիշած մատուռը և այնտեղ ճգնել. իսկ իր կալվածները նվիրել է աղքատներին և Տաթևի վանքին:

Ժողովրդի հիշողության մեջ այսպես վառ պահված դեպքը իսկապես պատմական է, և ահա թե ինչպես է պատմում այդ դեպքը Ստեփանոս Օրբելյանը (գլ. ԼԶ), օգտվելով հենց հերոսուհու գրած նամակից, որ պահվել է Տաթևի վանքում:

Աննյքը պատահել է ի գարի կեսում. «Ես մեղուցեալ ազախինս Քրիստոսի Շահանդուխտ՝ դուստր Վարազ Տրդատայ երթայի հարսն ի տունն Թորգոմեան. և եկեալ ի սահմանս Բաղաց՝ ի գլուխ քարիս, ընդ որ անցանէ ճանապարհն՝ յանկարծակի պատահեցան ինձ Իսմայելացիք, որք վասն համբաւոյ գեղոյ իմոյ կամէին յափշտակել զիս, և սուր ի վերայ եդեալ կոտորէին զհնձելագունդն որ ընդ իս. ապա լա՛վ համարեցայ քան ի ձեռն այլազգեացն գայլապատառ կորնչիլ, վասն Քրիստոսին իմոյ զահավէժ մեռանել: Եւ յիշելով զսուրբ Աստուածածին և զսուրբն Հռիփսիմէ՝ յանձնեցի զիս սուրբ երրորդութեանն և կնքեցի զողորմելի անձն իմ սուրբ խաչիւն և դարձուցեալ դերասանակ երիվարին՝ թռեայ ընդ քարս: Եւ յահապին չնչմանէ հողմոյ և աներևոյթ զօրութեամբ իջի իբր կառօք ի խորութիւն ձորոյս ես և երիվարն իմ անվնաս:...Եւ իջեալ ի հեչտավայրն՝ նուիրեցի զանձն իմ Քրիստոսի և ուխտեցի այլ ոչ ելանել աստի մինչ ցվախճանն իմ...»:

ԼՈՐԱՁՈՐ
ԲՆԱԳՐՈՒԹՑՈՒՆ

Սահմանները. *Տաթևից դեպի արևմուտք և Այրիչայից դեպի արևելք, հյուսիսից հարավ ձգվում է մի հովիտ, որ կոչվում է Մեծ Ձոր կամ Ձորեր և կամ Լորաձոր: Այս հովիտը հյուսիսային կողմում, Դարաբասի մոտ, բավական լայն է և դեպի հարավ գնալով՝ նեղանում է:*

Գետեր. *Հովտի միջով հոսում է մի գետ, որ կոչվում է Շնաթաղի գետ կամ Հաչենու չայ, որ բաղկացած է երեք վտակներից: Առաջինը կոչվում է Տատնու գետ, Տատնու ավերակի անունով, և սկիզբ է առնում Դամուրի դաշից, երկրորդը Հաչենու չայ, որ սկիզբ է առնում Հաչա դայախից, իսկ երրորդը՝ Աղբաչ, որ սկսվում է Ղամբիլից (8918): Այս երեք վտակները խառնվում են միմյանց Շնաթաղ գյուղի մոտ և հետո Լոր գյուղի մոտ*

ընդունում Մուրուց առվակը, որ սկիզբ է առնում Մուրուց ավերակ գյուղի աղբյուրներից, և Սալկուդը՝ Գետաթաղ գյուղի մոտ: Ապա՝ Դարաբասի մոտ իր ընթացքը դեպի արևելահյուսիս փոխելով՝ թափվում է Որոտան գետի մեջ: Շնաթաղի գետը շատ հստակ ու արագավազ է և ունի փոքր քանակությամբ մանր ձկներ:

Լեռները. Լորաձորի հարավային կողմը սաստիկ լեռնոտ է: Այստեղ, բացի վերոհիշյալ լեռներից, կան նաև Ալմերան դաշ (11030), Արմազ (11188), Ղարա-ղայա և այլ լեռներ: Սրանցից նշանավոր է Ղարա-ղայա լեռը, որ ընկնում է Մուրուց, Հըղլաձոր և Տատնու ձորերի մեջ: Լեռան գագաթը ծածկված է բավական մեծ ժայռերով, որոնցից ամենաբարձրը պաշտվում է թե հայերից և թե թուրքերից: Այդտեղ ոչ գերեզման և ոչ խաչարձան կա, միայն սրանից 10 տարի առաջ Շնաթաղի քահանան մի փոքրիկ մատուռ է շինել այնտեղ, որ վաղուց ի վեր պաշտվում էր:

Մյուս լեռները, որ ձգվում են գետի ուղղությամբ՝ մենք կհիշենք գյուղերը նկարագրելիս:

Ժայռեր. Բացի լեռներից՝ Լորաձորի հարավային կողմը հարուստ է նաև ահագին կարմիր ժայռերով, որոնց մեջ կան բնական և արհեստական այրեր: Այսպես՝ Տատնու ձորակում, որ Լորաձորի չարունակությունն է կազմում, Շնաթաղից կես վերստ դեպի հարավ՝ գտնվում է մի ահագին, կարմիր քարի ժայռ, մոտ 74,5 մ (35 ս.) բարձրության, որի ստորոտում գտնվում է ս. Սարգսի խոռոչը:

Այս ժայռից բարձր գտնվում է Քրատակ ժայռը, որի մեջ հինգ քարայր կա, մի քանիսը բնական, իսկ մի քանիսը արհեստական: Սրանից էլ փոքր-ինչ բարձր գտնվում է Որին քարաժայռը, որ առաջիններից անհամեմատ բարձր է և մեծ: Այստեղ կա մի բնական քարայր, որ 12,78 մ (6 ս.) երկարություն, 4,26 մ (2 ս.) լայնություն և 6,35 մ (3 ս. ավելի) բարձրություն ունի: Այստեղ այժմ ոչխարներ են պահում: Նույն ժայռի մեջ կան ուրիշ այրեր ևս, որոնցից մի քանիսը արհեստական են:

Ժայռի ստորոտում, նեղ ձորակի մեջ կուտակվում են հանդիպակաց սարերից թափված հյուսերը, որ ամբողջ ամառ մնում են անհալ:

Որին քարաժայռից էլ փոքր-ինչ բարձր գտնվում է մի ուրիշ քարաժայռ, որ տարածվում է արևելքից արևմուտք: Այս ժայռի վրա գտնվում է ժողովրդի «Սադու ղալա» կոչած ամրոցը: Ժայռի վրա նկատելի են պարսպի և տների հետքեր. կա նաև մի քարուկրկե հոր: Ժայռի հարավային լանջին, բերդից դուրս նկատելի են տների հետքեր: Բերդը շատ դժվարամատչելի է:

Հանքեր. Լորաձորում միայն Շնաթաղ գյուղի մեջ նկատված է պղնձի հանք, որ բոլորովին անմշակ է թողնված:

Հանքային ջրեր. Կա միայն ածխաթթվային ջուր նույն Շնաթաղ գյուղում, գետակի ափին, որին տեղացիները «չոռ ջուր» են կոչում և բոլորովին չեն օգտվում:

Կլիման. Լորաձորում մեղմ է. այստեղ չեն հասնում խաղողը և թութը. իսկ ձմեռը լեռների արևահայաց լանջերը ծածկված են մնում կարճ խոտով. այնպես որ անասուններըը ամբողջ ձմեռ արածում են:

Բուսականություն. *Ամբողջ հովիտը ծածկված է պաղատու ծառերով: Տներն անգամ ցրված են այդինների մեջ: Այստեղ առավելապես աճում են կեռասենիներ (որոնք տալիս են զանազան տեսակի կեռասներ, ինչպես սպիտակենի՝ սպիտակ և մեծ, աղվըկենի՝ աղու, դառը, ժեռ, թթվաչ), խնձորենիներ (հետևյալ տեսակներով. կարմրկենի, կարմիր և շատ մեծ, Թիֆլիզենի, Թիֆլիսից բերած, փափուկ. տըփըրկենի, փոքր-ինչ տափակ. Նախիջևանի, մանր և քաղցր, սըլըլկենի, երկար և ծայրը սուր. սերկևելի, երկար, փափուկ) և տանձենիներ (հետևյալ տեսակներով. թթվատանձ, որից թթու են դնում. մեղրատանձ, շատ քաղցր է. փչփչոտ տանձ, պինդ և փչուր. ձմեռնատանձ, պահվում է ձմեռը. հափսենի տանձ, մանր և շատ քաղցր. ղըզըլարմուտ (ոսկե խնձոր), դեղնավուն, փափուկ և քաղցր):*

Կենդանիներ. *Լորաձորում, չնորհիվ բազմաթիվ դեղեցիկ արոտատեղերի, պահվում են բավական մեծ քանակությամբ ձիեր, ջորիներ, կովեր, ոչխարներ և այծեր: Վայրի կենդանիներ, բացի նապաստակից և աղվեսից չեն պատահում:*

Այդինները լի են թռչուններով: Բազմաթիվ են մանավանդ աղավնիները, որոնք ազատ ապրում են եկեղեցիների մեջ և նրանց կատուրների տակ: Ընտանի թռչուններից պահվում են միայն հավեր:

ՆՇԱՆԱՎՈՐ ԳՅՈՒՂԵՐ

Լորաձորում կան հետևյալ գյուղերը. Շնաթաղ, Լոր, Գետաթաղ, Դարաբաս, Շամբ և Լծեն: Սրանց բնակիչների մի մասը բնիկներ, իսկ մնացածը Պարսկաստանի գաղթականներ են: Բայց այս բոլոր գյուղերի սովորությունները, բացի Լծենից, գրեթե միակերպվել են, և միայն լեզուների մեջ փոքր-ինչ տարբերություններ են նկատվում:

Շնաթաղ. *Գտնվում է համանուն գետի ալ ափին, փոքր հարթության վրա: Տների առաջ կան փոքրիկ այդիներ, որոնք գյուղին դեղեցիկ տեսք են տալիս: Հին, անկանոն ձևով չինված տների շարքում երևում են երկհարկանի, պատշգամբավոր տներ: Գյուղի կենտրոնում գտնվում է քարաշեն, համարակապ և բավական դեղեցիկ եկեղեցին, որ չինված է 1860 թ.:*

Այս եկեղեցու մոտ կա մի դաղաղաձև դերեզմանաքար, որի վրա, դեղեցիկ նախշերի մեջ բարձր քանդակված է մի ձիավոր, ձեռքին բազե, առաջն էլ մի շուն և մի բազե: Սրա մոտ մի մարդ՝ որ շղթայակապ բռնած ունի մի առյուծ: Մի քիչ հեռու մի նկանակ: Բարձրում փորագրված է.

Անուն Այ, ես Մէլիք Ղուլիս կանգնեցի զտապանս եղբօր իմոյ պըռն Պարիքին. զհայրն իմ զԷլինախաղէն, զմայրն իմ Թանգուլչիչին. եղբ. Փիրհամ:

Գյուղացիները մի այսպիսի մելիքի անուն չէին հիշում: Գերեզմանաքարի վրա, դժբախտաբար, թվական չկար, միայն սրանից մի քիչ հեռու կա մի հին գերեզմանատուն, ուր կան ՌՃ (1651 թ.) գերեզմանաքարեր: Սրանց հանդեպ, բլրակի վրա կա մի հին եկեղեցու ավերակ Շլորդվանց անունով:

Գյուղացիները հիշում են Հովհաննես եպիսկոպոս Շապանօղլի, Շահգիտան մականվանյալ Տաթևի վանահորը, որ ըստ Հ. Ալիշանի, եղել է ԺԷ դարի վերջում:[29]

Այժմյան բնակիչները բնիկ են համարվում: Ընդամենը 71 տուն, 332 ար., 343 իգ., միասին՝ 675 հոգի. բոլորն էլ լուսավորչական հայեր: Խոսելիս վերջին խոսքը երկարացնում են: Սրանք մյուս գյուղացիների համեմատությամբ քաղաքավարի և ունևոր են: Աղվեսի մորթից մուշտակներ այստեղ էլ են երևան գալիս:[30]

Գյուղի հողը արքունական է, և թեպետ վարելահողը շատ քիչ է, բայց արոտատեղերը շատ ընդարձակ են, ուստի և բնակիչները գլխավորապես պարապում են անասնապահությամբ: Երկրագործությունն ու այգեգործությունը նույնպես բավական արդյունք են տալիս: Գյուղում երբեք կանոնավոր դպրոց չի եղել:

Լոր. Գտնվում է նույն հովտի գրեթե կենտրոնում, գետի ձախ ափին: Նրա արևելյան կողմից բարձրանում է Սըրըտներ լեռը, արևելահարավից՝ Ջրակներ, արևելահյուսիսից՝ Եղիակը, իսկ արևմտյան կողմում՝ ձգվում է Խչաղբյուր լեռնաշղթան:

Տները ցրված են այգիների մեջ: Գյուղի կենտրոնում գտնվում է ս. Գևորգ եկեղեցին, որ երկու գեղեցիկ սյուների վրա բոլորող ռոմանական կամարներով և ձեղունով մի բավական մեծ շինք է, առանց գմբեթի: Ունի միայն մի դուռ, գեղեցիկ նախշերով եզրափակված, որի վերևում կա հետևյալ արձանագրությունը.

Ի թվ. ՌՃԺԵ (1666) Շնորհօք ամենակալին Այ չինեցաւ ս. եկեղեցիս ի հալալ վաստակոց իւրոց ագուլեցի մահտեսի Պետրոսի որդի Խօջայ Պօղոսին եւ իւր որդոց Փրանգիւլին եւ միւս հանգուցեալ որդոյ Ըստեփաննոսին եւ կրտսեր որդոյն Ցարութիւնին. յիշեցէք ի Քս Ած:[31]

Ավանդությունն ասում է, թե Շահ-Աբասը խլել է հիշյալ Խոջա-Պողոսի կնոջը և տարել իր հարեմը: Մի քանի տարուց հետո կինը սաստիկ թախանձելով Շահ-Աբասին՝ ազատվում և վերադառնում է ամուսնու մոտ, սակայն սա չի ընդունում նրան, ասելով, թե նա այժմ մեղավոր է, քանի որ հավատափոխ է եղել: Կինը կրկին վերադառնում է Շահ-Աբասի մոտ և նրանից մի մեծ գումար է ստանում, որպեսզի եկեղեցի կառուցի մեղքերից փրկվելու

---

29 Միսական, եր. 220:

30 Ձեմ կարող չհիշել, որ խեղճ գյուղացիները հուլիսյան տոթին մուշտակները վրաներն առած էին գալիս ինձ տեսնելու, որպեսզի ցույց տան ինձ:

31 Տե՛ս ԴՀՎ. II, էջ 109:

նպատակով: Եվ միայն այս դեպքում Խոջա-Պողոսը ընդունում է կնոջը և չինում Լորի, Խոտ գյուղի և էլի մի ուրիշ եկեղեցի:

Բացի այս եկեղեցուց, գյուղի արևմտյան կողմում գտնվում է ս. Սարգիս, իսկ հյուսիսայինում՝ Դռնապան կոչված մատուռների ավերակները:

Գյուղից 270 մ (1/4 վ.) դեպի հյուսիս կա «Սպիտակ խաչ» անունով մի խաչարձան, որ 2,5 մ (3,5 արշ.) բարձրություն և 1,78 մ (2,5 արշ.) լայնություն ունի և վերջերս ներկած է կարմիր ներկով: Քանդակված դեղեցիկ խաչերի վերևում փորագրված է.

Որոտ ծառայ Այ Գրիգոր եւ Լորիկ կանգնեցաք զխաչս հաւր իմ Հայրապետի մաւր իմ Մարթայի, յիշեցէք ի Քս. ի թվ. ՉԻ (1271):[32]

Խաչարձանի մոտ և չրջակայքում կան բավական թվով գերեզմաններ, որոնցից մեկի վրա կա հետևյալ տապանագիրը.

Այս է հանգիստ գեղեցիկ ծին, ծաղկածին, ծաղկափթիթ Աննա-Խաթունին, փոխեցաւ ի Քս ՉԻԶ (1277) ամի. Մասիկ:[33]

Գյուղից դեպի արևմտահարավ, մոտ 533 մ (կես վերստ) հեռավորության վրա, երեք բլրակների հատման անկյունում գտնվում է «Ծառու ս. Յոհաննես» ուխտատեղին: Սա մի հասարակ մատուռ է անույն և կամարակապ ձեղունով: Սրա հարավային կողմում կա նույն մեծության մի հասարակ գավիթ: Մատուռի միակ դռան վերևում կա մի բոլորովին եղծված արձանագրություն, իսկ նույն պատի մեջ կանգնեցրած խաչարձանի նույնպես անընթեռնելի արձանագրության մեջ նկատելի է «Թվ. Պ»:

Բնակիչները բոլորն էլ հայ լուսավորչական են, մեծ մասամբ բնիկ, բացի մի քանի տուն խոյեցիներից: Ընդամենը 43 տուն, 221 ար., 216 իգ., միասին՝ 437 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Գյուղը պատկանում է Օրբելյաններին: Միայն այս գյուղը նշանավոր է իր կըրմըրկենի խնձորով:

Ժողովուրդը մտավորապես բավական առաջացած է, թեև ոչ մի ժամանակ կանոնավոր ուսումնարան չի ունեցել, սակայն տղամարդկանց 2/3 մասը գրագետ է: Նրանց մեջ կա մի համալսարանավարտ, իսկ 10 հոգի ավարտել են միջնակարգ դպրոցներ: Նույնիսկ գյուղի 2 քահանաներից մեկը ավարտել է Գևորգյան ճեմարանի դպրոցական մասը:

Գետաթաղ. Լորի և Դարաբաղի մեջ, Շնաթաղ գետի ձախ ափին, ընկնում է Գետաթաղ գյուղը: Նրա արևելյան կողմից բարձրանում է եղիակ գագաթը, իսկ արևմտյան կողմից Սառնըծակերը: Այս վերջինս այսպես է կոչվում, որովհետև սարի գագաթին մի ժայռ քար կա, որի ծակերի մեջ սառույցը (սառնը) մնում է և ամառ ժամանակ:

---

[32] Տե՛ս ԴՀՎ II, էջ 107:

[33] Տե՛ս ԴՀՎ II, էջ 108:

Գյուղում կա մի գեղեցիկ, չորս սյուների վրա հաստատված, կամարակապ, առանց գմբեթի եկեղեցի: Ջեղունի մեջ և խորանների վերին մասում կան գաղտնի պահարաններ և պաշտպանության տեղեր: Խորանների մոտ կան մի-մի հատ գեղեցիկ խաչարձաններ: Եկեղեցին շինված է ՌՃԾԱ (1702) թվին: Միակ քահանան գրել չգիտի և հազիվհազ է կարդում:

Բնակիչները մեծ մասամբ Հին-Նախիջևանից գաղթականներ են. ընդամենը 39 ծուխ. 163 արս., 199 իգ., միասին՝ 362 հոգի, բոլորն էլ հայ լուսավորչական: Այս գյուղից Բաստամանց ընտանիքից Փիրզատե անունով մի մարդ 1586-87 թթ. ճանապարհորդել է ամբողջ Մեծ և Փոքր Հայաստանը, ապա Փոքր Ասիա, Կ. Պոլիս, Լեհաստան, Միջին և Արևմտյան Եվրոպա, հավանորեն վաճառականական նպատակով:[34]

Գյուղը պատկանում է մի չուշեցի թուրք բեկի. պարապմունքը նույնն է, ինչ որ վերը հիշած գյուղերում: Մտավոր դրությունն էլ համապատասխան իրանց քահանայի մտավորականին: Դպրոց երբեք չեն ունեցել:

Դարաբաս. Գտնվում է նույն գետի ձախ ափին: Սրա արևմտահյուսիսային կողմում ձգվում է Ելլիճա (քամոտ) լեռնաշղթան, որի միայն ծմակ (դեպի հյուսիս դարձած) լանջն է անտառապատ, մինչդեռ արևահայաց լանջը զուրկ է ծառերից: Արևմտյան կողմում բարձրանում է Ճիպլիր-տաշ մացառուտ սարը, իսկ արևելյան կողմում Մարահունջի նույնպես մերկ լեռը: Իսկ հյուսիսից սրան պատում են Հանազուր բլրակները: Գյուղը ընկած է մի փոքրիկ հարթակի վրա: Մի նեղ ձորակ բաժանում է գյուղը հայկական և թրքական թաղերի, երկուսն էլ այգիներով պատած: Հայկական մասում գտնվում է ս. Ստեփանոս, իսկ թրքականում՝ ս. Աստվածածին եկեղեցիները:

Ս. Ստեփանոս եկեղեցին, ուր այժմ էլ կատարվում է ժամասացություն՝ մի չատ հասարակ, առանց գմբեթի շենք է: Շուրջը կան միաբանների խցերի և պարսպի հետքեր: Խորանների մոտ կան մի-մի խաչարձան, որոնցից մեկի վրա կա հետևյալ արձանագրությունը.

Թվ. ՉԼԷ (1288) Ես Գրիգոր կանգնեցի զխաչս...:[35]

Ս. Աստվածածին եկեղեցին կարմիր, սրբատաշ քարերով շինված մի փոքրիկ շենք է, որի ձեղունը այժմ բոլորովին քանդված է. ներսը, հյուսիսային պատի վրա, կա հետևյալ արձանագրությունը, որի մի քարը ընկած և կոտրած լինելով՝ չի կարելի ամբողջովին ընդօրինակել.

Ծուսով ամենակալին Այ...որդի մեծին Լիպարտի ես եւ ամուսին իմս...կողմնակալ այսմ նահանգի զոր ետ մեզ...շինեցաք զԱստուածածինս ի հալալ...տվաք ի պէտս ապաստուորաց զսենեկատս (?)... ... ակին հողն եւ զնելքին ծաղկոցն ի Շնհեր զՏաթեւ...կատարեն ամեն. ծ: ե: Ցայտնութեան ե. զատկին...զՏարսաիճիս. ե. Մինախաթունին. եթէ ոք ի մերոց կամ յաե. զատկին...զՏարսաիճիս. ե. Մինախաթունին. եթէ ոք ի մերոց կամ յաե

---

[34] Սիսական, եր. 220:

[35] Տե՛ս ԴՀՎ II, էջ 112:

տարաց խափանեսցէ զսահմանեալս մերոց ՅԺԸ. հայրապետաց նզովեալ լիցի. գյուղայի եւ զկայէնի անէծան առցէ: Ի թվ. ՉԻԱ (1272):

Սրանից ներքև փորագրված է.

Շնորհօքն Այ նորոգեցի զԱծածինս ՌՃԻԶ (1677) թվին վերակացութեամբ Տէր-Մարտիրոսին եւ Տէր Գէորգին Տէր Եփրեմին:

Այս մատուռի հյուսիսային կողմը կա մի տապանաքար, հետևյալ տապանագրով.

Այս է հանգիստ Գե...մանկան պրն Սմպատին իշեցէք ի Քս. թվ. ՉԽԳ (1494):

Եկեղեցուց փոքր-ինչ բարձր կա մի գերեզմանատուն, ուր կան նույն թվականով տապանագրեր. օրինակ, մի խաչարձանի տակ գրված է.

Ես Թագվոր Խէչան Սոլթան կանգնեցի խաչս փրկութիւն հոգւոյն մերում. թվին ՉԽԳ (1494):

Մի հին քարե կամուրջ ձգվում է գետի վրա, որ ունի մի եղծված արձանագրություն: Ավանդաբար այս կամուրջը Արզումանի կամուրջ է կոչվում:

Այժմյան գյուղի տները բոլորն էլ, բացի մինից, կիսագետնափոր են, այգիների մեջ ցրված: Հայկական մասը համեմատաբար մաքուր է: Բնակիչները հայեր և թուրքեր են՝ ընդամենը 152 տուն. 521 ար. և 365 իգ., 886 հոգի միասին, որոնցից հայեր են 42 տուն. 200 ար., 133 իգակ., իսկ թուրքեր՝ 110 տուն. 321 ար., 232 իգ.:

Հայերը և թուրքերը միմյանց հետ հաշտ են ապրում. կրոնականատելություն, կրոնական զգացմունքից ծագած կռիվներ չեն պատահում: Մինչև անգամ հայ քահանան ահագին ազդեցություն և հեղինակություն ունի թուրքերի մեջ: Իմ այս գյուղում եղած միջոցին թուրքերը մի աղջիկ էին փախցրել նույն գյուղից, որի պատճառով և կռիվ էր ծագել: Երեկոյին պատվավոր թուրքերը եկան հայ քահանայի մոտ և նրան թախանձելով տարան աղջիկ փախցնողի տունը, ուր նա հաշտեցրեց երկու կողմերը, տուդանք դնելով փախցնողի վրա: Բոլոր հայերը գիտեն թուրքերեն, մինչդեռ թուրքերից մի քանիսը միայն կարողանում են խոսել հայերեն: Պարապմունքը սովորականն է: Գյուղը երբեք զրոց չի ունեցել: Հայերից միայն 7 հոգի գրագետ կան, իսկ թուրքերից՝ 5:

Առաջ դարաբաղցիների ձմեռանոցն էր Շամբը, որտեղա գետի եզրին, որ իր անունն ստացել է տեղի ճահճային և շամբոտ լինելուց: Այժմ այնտեղ 24 տուն մշտական բնակիչներ հաստատվելով՝ գյուղ են դարձրել:

Դարաբաղցիները մյուս գյուղերի համեմատությամբ ավելի կոպիտ են: Տեղական առասպելն ասում է, թե մի անգամ Մովսես մարգարեն գնում էր աստծու մոտ, արջը խնդրեց նրանից, որ Աստծուն խնդրի իրեն մարդ դարձնել: Վերադարձին Մովսես մարգարեն հայտնեց արջին, թե խնդիրը հարգված է, միայն դարաբաղցի պիտի դառնա:

– Դեհ, որ դարաբաղցի պիտի դառնամ,- պատասխանում է արջը-, էլ ինչի՞ եմ մարդ դառնում:

Լծեն. Լորաձորի վերջին գյուղն է և տեղավորված է Շինաթաղ ու Որոտն գետերի միախառնման մոտ, մի հարթակի վրա: Առջևից ձգվում է Խյութուղի լեռնաշղթան: Ավելի հեռուն, դեպի հյուսիս բարձրանում է Իշղլու լեռը, իսկ արևմտյան կողմում ձգվում է Շիշթափա լեռնաշղթան մինչև Սվարանց գյուղը:

Տները կիսագետնափոր, կավից շինված ղարաղամներ են: Ունի մի հնավեր եկեղեցի, բայց առանց քահանայի: Գյուղի արևմտյան կողմում, Շիշթափա լեռան լանջին, կա մի ավերակ մատուռ, որը տեղացիները «անապատ» են կոչում: Սա մի փոքրիկ, հասարակ շենք է, որի դռան խաչարձանի վրա գրված է թվ. ՉՂՉ (1347): Նշանավորն այն է, որ մատուռի երկու պատերի միջից մի-մի սոսի ծառ բարձրանալով կամար են կապել և միացել միմյանց, «բարև տվել»: Ծառը պաշտվում է և ծածկված է հանդերձների բազմաթիվ կտորներով:

Գյուղը պատկանում է Տաթևի վանքին: Բնակիչները խոյեցիներ են, որ 1828 թ. գաղթել են այստեղ, բոլորն էլ հայ լուսավորչականներ. ընդամենը 32 տուն. 149 ար., 165 իգ., միասին՝ 314 հոգի, պարապում են երկրագործությամբ, անասնապահությամբ և այգեգործությամբ: Դպրոց չունեն: Թև ծուխ, 64 ար. և 64 իգ. բնակիչ, իսկ Իրիմիսը՝ 35 ծուխ, 125 ար. և 105 իգական: սովորություններով և թե լեզվով տարբերվում են Լորաձորի մյուս գյուղերից:

Լծենից դեպի արևմտահյուսիս, Մեչհալու և Տուղյուրտ լեռների մեջ, Ծայճի (Հարժիս). Լորաձորի և Տաթևի սահմանների մեջ ընկնում է Ծայճի գյուղը, որ ըստ Հայր Ալիշանի նախկին Հարժիք գյուղը պիտի լինի: Սա գտնվում է Բազարչայի ձախ ափին, հովտի լանջին, հյուսիսային կողմից պատած է բարձր ժայռերով, որոնց մեջ կան մի մեծ և մի քանի փոքր քարայրեր: Արևմտյան կողմում էլ գետի աջ ափին բարձրանում է մի ահագին ժայռ, որի գագաթին հնում եղել է մի ամրոց, որի հետքերն են մնում այժմ: Գյուղի կենտրոնում գտնվում է մի հին, բավական գեղեցիկ եկեղեցի ս. Մինաս անունով: Եկեղեցու գավթում կան բավական թվով հին գերեզմաններ:

Բնակիչները բնիկ հայեր են, ընդամենը 58 ծուխ. 221 ար. և 198 իգ., միասին՝ 419: Պարապում են անասնապահությամբ և երկրագործությամբ: Այգիներ չունեն:

Ծայճի գյուղից դեպի արևելահյուսիս, Քյուրտլար գյուղի արևմտյան կողմը, Որոտնա գետի ձախ ափին, գտնվում է մի ավերակ եկեղեցի, մասամբ սրբատաշ, մասամբ հասարակ քարերից շինված: Եկեղեցու գավթի դուռը երկկամար է և բավական գեղեցիկ: Գավթի մեջ կա մի գերեզման, որի տապանաքարը դագաղաձև է, 1,83 մ (2 արշ. 10 վ.) երկարության, 1,07

մ (1,5 արշ.) բարձրութեան, 0,42 մ (10 վ.) լայնութեան: Տապանաքարի մեջտեղը մի ձիավոր է քանդակված, որի շուրջը գրված է.

Զգեղեցկատիպ եւ զծաղկափթիթ քաջ զաւրական ազատածին դեռաբոյս մանկիկն Ալան կին...[36] *փոխեալ յաշխարհէ թողեալ սուգ անմխիթար անզաւակ ծնողացն Զաղարին եւ Բաբախաթունին: Ցիշեցէք ի Քս. թվ. ՋՀԵ (1326):*[37]

Գավթի դռան մոտ մի խաչ կա, վրան ՆՂԲ (1043 թ.) գրած, իսկ կամարի վրա կարդացվում է.

Ցանուն Այ ու արքաւուն Սմպատայ ու Տարսաիճին իշխանութեամբ... վերապատրօնութեամբ ես կոտլ (?) միաբանեցայ:

Փոքր-ինչ ներքև՝ մեծ տառերով.

Հիշեա Քս. Ած. զՄամիկոյ թագոհի եւ ողորմեա:

Եկեղեցին պարսպապատ է, որի շուրջը կան բավական թվով հին գերեզմաններ: Կան նաև տների ավերակներ:

---

[36] *Ինձ ուղեկցող Ցայճի գյուղի քահանան ասում էր, թե այդ եղծված տեղում ինքը մի քանի տարի առաջ կարդացել է «Նորա Շուշանիկ»:*

[37] *Տե՛ս ԴՀՎ. II, էջ 82:*

ՍԻՍԻԱՆ

ԲՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սահմանները. Հին սահմանները կազմում էին. հյուսիսից Արցախի Շաբա գավառակը, արևմուտքից՝ Վայոց Ձոր և ներքևում՝ Ճահուկ, հարավից՝ Երնջակ և Արևիք, արևելքից՝ Բաղք, Հաբանդ և Աղահեճք:[38]

Այժմյան սահմաններն են՝ Ջվանչիրի, Շարուր-Դարալագյազի, Նախիջևանի գավառները, Ղափանի ու Զանգեզուրի ոստիկանական մասերը և Լորաձորն ու Տաթևը:

Սիսիանը իր բնական կազմությամբ բաժանվում է երկու մասի. հյուսիսարևելյան, որ կազմում է նշանավոր արոտատեղիներ (յայլախ), և հարավարևմտյան, որ գավառի բնակաշատ մասն է:

Բուն Սիսիանը մեծ մասամբ դաշտավայր է, տեղ-տեղ, մանավանդ սահմանագլխներում, կտրտված ցածր լեռների չղթաներով, որոնք գուրկ են անտառներից:

***Լեռները.** Սիսիանի լեռներից, որոնք գլխավորապես բարձրանում են նրա սահմանագծերի վրա՝ նշանավոր են. հյուսիսում Միխտուքյան լեռնաշղթան (11851) և Դալի-դաղ լեռը (11907). արևմուտքում՝ Գյալին-ղայա (11002), Ուչթափա, Դյավա-գյոզի, Ղըսըր-դաղ, Կյաբիրլի (11,000), մեծ և փոքր Ախտաբան (10194 և 7777), Արիկլի (7144), Կազուչի-դաղ (8777), Սալվարտի (10422), Ղարա-թութրաղ (2527), Դալուղու-դաղ. հարավում՝ Արաժին (10425), Կյավին-ղայա (9100), Դյամուրլի-դաղ (11023). արևելքում՝ Կյուպրու սար (9377), Լոր, Ալչա-դաղ, Գելիդու լեռներ (8222 և 7189), Շիշ-թափա (7327), Յան-թափա (7591), Ուչթափայի լեռնաշղթան, Մեծ (11695) և Փոքր Իշխլի, Քաչալ-դաղ (10648), Ջան-ղուրդարան (9219), Ղարան-կադըկ (7816), Զիրակլի (6999):*

Ներքին լեռներից նշանավոր են. Կյատիր-դաշ (10492), Լյուլապար (10416), Պիրիչինկիլ (10572), Ղըզըլ-բողաս-դարի (11059), Ղըզըլ-բողասն-չալի (11872), Ղըզլ-թափա, Ղըրմըզ-թափա (7496), Զեչագյոլ (7924), Դավա-բոյնի, Արյուկլու (7144), Ախճա (7155), Խարտի-յուզ (7792), Լաստ, Արփա-թափա (6421), Ղարա-ղայա (6118), Քեչաբերդ (8086), Ահմետ-յուրտ (6818), Կետան-թափա (5962), Կիզիլճիղ (7252):

***Լճեր.** Սիսիանը չունի ոչ մի մեծ լիճ. եղած փոքրիկ չորս լճակներն էլ գտնվում են հյուսիսային մասում, որ շատ ակակավ է բնակված և գեղեցիկ արոտատեղիներ է ներկայացնում:*

Սրանցից ամենամեծը Ալա-գյոլն է, որ գտնվում է Պիրիչինկիլ լեռան ստորոտում, սրանից փոքր-ինչ հյուսիս՝ Ղարագյոլը, իսկ հարավ՝ Օլտուլար փոքրիկ լճակը Ղըզըլ-բողաս-դարի լեռան լանջին:

---

[38] *Ալիշան, Սիսական, եր. 206:*

Գետեր. Սիսիանի միակ նշանավոր գետն է Բարկուշատը, որ գանազան տեղերում տարբեր անուններ է կրում: Նա սկիզբ է առնում Զանգեզուր և Շարուր-Դարալագյազ գավառների սահմանագլխում ընկած լեռներից ու նրանց մոտ գտնված փոքրիկ լճակներից ու Բազար-քենտ գյուղի մոտի բազմաթիվ աղբյուրներից: Սկզբում, Բազար-չայ անունով հոսում է շարունակ դեպի հարավ-արևելք. Որոտնա վանքի մոտ ստանալով Որոտնա-գետ անունը՝ անցնում է Մեծ Անապատի մոտի Սատանի կամուրջի տակից և ապա՝ ուղղվելով դեպի արևելահյուսիս՝ նախ Հալիճորի և ապա Բարկուշատ անունով՝ հոսում է մինչև Կալա-Հասանլի գյուղը, ուր նորից ընթացքը դեպի հարավ-արևելք ուղղելով՝ նույն անունով գնում է մինչև Կարալար գյուղը, որից փոքր-ինչ հարավ խառնվում է Հաքեարու հետ և Շարիֆանյան կոզակների կայանի մոտ թափվում Արաքսի մեջ:

Բարկուշատի վտակներն են՝ աջ կողմից՝ Արյուկլու-չայը, որ սկիզբ է առնում Արյուկլու լեռից (7144 ոտ.) և թափվում է նրա մեջ Շաղատ գյուղի մոտ: Այրի-չայը, որ սկիզբ է առնում Այրի-սարից, և անցնելով Շելար, Ախլաթյան, Տուլորս և Ուզ գյուղերը՝ թափվում է նրա մեջ վերջին գյուղիս մոտ: Սա նախապես ընդունում է իր մեջ Տուլորսի մոտ Սիսիան գետը, իր վտակ Զակով և Ուզի մոտ՝ Դալի-չայը: Ձախ կողմից՝ Ախմեչի չայը, Բուղուր չայը և Մուխորթոլյան, որ սկիզբ են առնում Մուխորթոլյան լեռան լանջերից:

Հանքեր. Սիսիանը հանքաբանական տեսակետից ուսումնասիրված չէ: Հայտնի, մշակվող հանքեր չկան, սակայն երկիրը հարուստ է հանքերով: Այսպես՝ Մազրա գյուղի արևելահարավային կողմում գտնվում է արծաթի հանք: Սրանից 15 տարի առաջ հանեցին այս հանքից և տարան գտելու Լծեն գյուղը, որովհետև Սիսիանում անտառներ չկան: Սակայն ծախսը շատ մեծ լինելով՝ օգտավետ չգտան շարունակելու և անմշակ թողին: Նույն գյուղի արևելյան կողմում էլ գտնվում է պղնձի հանք, որ նույնպես անմշակ է մնում:

Այս հանքերը ամենայն հեշտությամբ կարելի կլինի մշակել՝ եթե նախապես մշակեն այդտեղից հազիվ մի ժամվա հեռավորության վրա գտնվող Շուբար գյուղի մոտի քարածխի հանքը: Սա գտնվում է գյուղից հազիվ մեկ կիլոմետր հեռավորության վրա, Գյոյ-բուլախի ձորում: Թուրքերը չեն օգտվում այս քարածխից, մինչդեռ Բազարչայի դուխոբորները գալիս, հանում են և ֆուրգոնները բարձած տանում իրենց գյուղը գործածելու: Նույն ձորակում, փոքր-ինչ ցածր գտնվում է նաև պղնձի հանք, նույնպես անմշակ և անհայտ: Պղնձի հանք գտնվում է նաև Ալիչար Թրքաբնակ գյուղում:

Լավ, կրակի դիմացող կավ գտնվում է Բազար-չայ գյուղի մոտ:

Հանքային ջրեր. Հանքային ջրերով հարուստ է Սիսիանը, սակայն նրանցից ոչ մեկը դեռ հիմնովին ուսումնասիրված չէ: Տեղացիները նրանց

նշանակությունը չհասկանալով՝ չեն օգտվում և բոլորովին անխնամ են թողել: Առավելապես գտնվում են ածխաթթվային ջրեր (углекислые воды), որոնցից նշանավոր են.

1. Տուլորա գյուղինը, որ գտնվում է գյուղի հյուսիսային կողմում, մոտ 0,5 կիլոմետր հեռու, Այրի-չայի ձախ ափին, մի փոքրիկ բլրակի տակ: Տեղացիները նրան կոչում են «Դարատակի շոռ ջուր» և, ինչպես ասացի՝ բոլորովին չեն օգտվում:

2. Ախալթյան գյուղինը: Առաջները սա բավական հորդությամբ բխելիս է եղել միայն մի տեղից, սակայն 1896 թ. պատահած երկրաշարժից երկիրը ճեղքվել է և ջուրը՝ ցրվել: Այժմ բոլորովին անխնամ է թողնված:

3. Շխլար գյուղինը, որ բխում է Այրի չայի ձախ ափին:

4. Դաստակերտ գյուղինը, որ գտնվում է Այրի չայի աջ վտակ՝ Կչիկանտի-չայի աջ ափին, գյուղից երկու կիլոմետր բարձր:

Կա նաև տաք, հանքային ջրի մի աղբյուր Սիսիանի արևմտահյուսիսային կողմում, Մուխորտոլյան լեռից վոքր-ինչ հյուսիս, 9289 ոտն. բարձրության վրա:

Կլիման. Բուն Սիսիանը ծովի մակերևույթից բավական բարձր դիրք ունենալով՝ ցուրտ կլիմա ունի: Ձմեռը տևում է ամբողջ վեց ամիս և բավական խիստ է. ամբողջ երկիրը մեծ մասամբ պատած է լինում ձյան հաստ շերտերով: Առավելապես Յալլիճու (քամոտ) սարերից սաստկությամբ փչում են քամիներ և բուք բարձրացնում, այնպես որ գյուղերի մեջ հարաբերությունը շատ անգամ ամբողջ շաբաթներով կտրվում է: Գարունն անցնում է շատ աննկատելի կերպով, իսկ ամառը այնքան էլ զգալի չի լինում: Փոքր-ինչ ավելի բարձրադիր տեղերում, ինչպիսիք են՝ Մազրա, Ալելու և այլն, հացաբույսերը միայն օգոստոսին են հասնում: Բազարքենտի կողմերում արտերը շատ անգամ վնասվում են վաղահաս ցրտերից, ուստի և բնակիչները, գլխավորապես մալականներ, այնքան էլ չեն զբաղվում երկրագործությամբ, այլ առավելապես պարապում են անասնապահությամբ: Արդեն օգոստոսի սկզբին յայլախներում այնքան զգալի է դառնում ցուրտը, որ բոլոր սարվորները վերադառնում են:

Օդը ընդհանրապես խոնավ է. գարնան սկզբում հորդ անձրևներ են տեղում: Ամառը չորային է լինում և երբեմն նույնիսկ երաշտ է պատահում:

Բուսականություն. Սիսիանը բուսականության կողմից շատ աղքատ է: Բոլոր լեռները մերկ են և ոչ մի անտառ չկա, այս պատճառով բնակիչների միակ վառելանյութը քակորն է: Պաղատու ծառեր ևս բոլորովին չկա: Միակ ծառը, որ զարդարում է գյուղերի առուների և գետերի ափերը՝ ուռենին է: Բույսերն էլ բազմազան չեն: Գարին ու ցորենը այնքան ցածր են բուսնում, որ գյուղացիներն ստիպված են մանգաղով հնձելու, որ անհամեմատ դան-

դաղ և դժվար է կատարվում, ուստի խնդճ գեղջուհիներն էլ հարկադրվում են մանգաղ վերցնել և օգնել ամուսիններին:

Կենդանիներ. Սիսիանը հարուստ է բազմատեսակ ընտանի կենդանիներով, որոնց արածեցնելու համար ունի բազմաթիվ արոտատեղիներ, առավելապես Բազարքենդի կողմերում: Ամենից ավելի պահում են ոչխարներ, կովեր, եզներ, էշեր և ձիեր: Դաշտերում պատահում են նապաստակներ, աղվեսներ, գայլեր և այլն: Ընտանի թռչուններից գլխավորապես պահում են հավեր, իսկ սագ, բադ, հնդկահավ և այլն՝ շատ քիչ:

ՆՇԱՆԱՎՈՐ ՏԵՂԵՐ ԵՎ ԳՅՈՒՂԵՐ

Ղոչուն դաշ. Ղարաքիլիսից մոտ երկու կիլոմետր հեռավորության վրա գտնվում է Ղոչուն-դաշ կոչված տեղը, ուր կան բազմաթիվ դոլմեններ: Այս տարածությունը մի ժամանակ շրջապատված է եղել հատա պարսպով, որ արևմտյան կողմում գալիս հանգում է մի բարձր ժայռի: Պարսպի մեջ կան քարակույտեր, շրջապատված ցից-ցից կանգնեցրած սրածայր քարերով: Այս շրջանների տրամագիծը հասնում է 5-30 մ (2-14 սաժ.): Քարերը ընդհանրապես սրածայր են, 1 մ (2-4 արշ.) բարձրության, 1-2 մ (1-3 արշ.) լայնության և 1-1,5 մ (1,5-2 արշ.) հաստության: Սրանցից մի քանիսի ծայրերը ծակված են: Կան նաև այնպիսիները, որոնք մի քանի ծակեր ունեն: Մի քանի տեղեր էլ բարձրանում են սոսկ քարակույտեր, առանց շրջապատող քարերի, ինչպես և տեղ-տեղ կան միայնակ և կամ ուղիղ գծով չարված քարեր (մանհիրներ):

Շրջակա ժողովուրդը պատմում է, թե այս քարակույտերի տակ թաղված են զորապետների, իսկ կանգնեցրած քարերի տակ՝ զինվորների մարմիններ, ուստի և դրանց կոչում է Ղոչուն-դաշ, այսինքն Զորքի քար:

Այստեղ կան նաև մի քանի արհեստական քարայրեր, չինված ահագին, 2-4 մ (3-6 արշ.) երկարության և 2-3 մ (3-4,5 արշ.) լայնության սալաքարերից, որոնց մեծ մասը գետնի մեջ է ամրացրած, իսկ մի քանիսը՝ գետնի մակերևույթի վրա: Այս քարայրները զանազան մեծության և 1,5-3 մ (2-5,5 արշ.) բարձրության են: Երկարության ուղղությամբ ունեն 0,71 մ (1 արշ.) բարձրության և նույնչափ լայնության դռներ:

Այստեղ դեռևս պեղումներ չեն կատարվել, դյուղացիները տեղ-տեղ փորելով գտել են մարդկանց ղիակներ և կավե անոթներ:

Սիսիան. Սիսիան գետի ձախ ափին բարձրանում է մի բլուր, որի գագաթը պատած է ժայռերով: Այս բլրի արևմտյան կողմից էլ հոսում է Ջեկասու գետակը, որ սկիզբ է առնում Ալելու գյուղի մոտի Փիր-դաղից և բլրի հյուսիսային կողմում թափվում Սիսիան գետի մեջ: Բլրի երեք կողերը զառիվայր են և միայն արևելյանը փոքր-ինչ մատչելի է, ուր և գտնվում է միակ ճանապարհը: Այս բլրի գագաթին գտնվում է մի հին բերդ, որ ունե-

ցել է երկու պարիսպ: Բերդի դաշտին կա մի ավազան, որի ջուրը բերված է եղել մոտակա, հարավային կողմի լեռներից, որովհետև այդ ուղղության վրա դանվել են փողրակներ: Ժայռերի մեջ կա երեք փոքրիկ քարայր: Թե բերդի չուրջը և թե մեջը նկատելի են տների հետքեր: Բերդի հյուսիսային ստորոտում, գետի ափին, դտնվել են կարասներ, լի մարդկանց ոսկորներով:

Բլրի արևելահարավային լանջը բավական փորած է, որտեղից երբեմն արծաթի հանք է արտահանած: Բերդի ստորոտում գտնվում է Սիսիան Թրքաբնակ գյուղը:

Բռնակոթ. Այս նախկին մելիքանիստ գյուղը տեղավորված է բլրակների մեջ, մի ընդարձակ հովտում, որի միջով հոսում են երկու փոքրիկ առվակներ: Սրանց ափերին տնկված են ուռենիներ, որ բավական գեղեցկություն են տալիս գյուղին: Կանոնավոր փողոցներ չկան, տները ցեխից են շինված, ցեխի պարիսպներով շրջապատված: Կան միայն մի քանի երկհարկանի տներ, որոնց մեջ նշանավոր է Մելիք-Թանգյանների նախկին ապարանքը: Գյուղի արևելյան մասում գտնվում է մի գեղեցիկ, չորս սյուների վրա հաստատված եկեղեցի, փոքրիկ, գմբեթավոր զանգակատնով: Վերջինս շինել է մելիք Թանգի Բ, ուր և թաղվել են ինքը, իր կինը, որդին, Ղուկաս բեկը և մելիք Աղաբեկը:

Եկեղեցու գավթում գտնվում է Հայոց եկեղեցական ծխական դպրոցի շենքը: Դպրոցը ներկայումս փակված է:

Գյուղի արևմտյան կողմում գտնվում է մի հին եկեղեցու ավերակ, որին գյուղացիները կիս են կոչում, և որի վրա կա հետևյալ արձանագրությունը.

Թվ. ՌՃՄԳ (1704) ես Ածատուր վարդապետս չինեցի զայս սուրբ եկեղեցիս:

Այս եկեղեցու մոտ կան երկու, միմյանց կից գերեզմանաքարեր, որոնցից մեկի տապանագրից կարդացվում է.

Այս է շիրիմն Հանգստեան պարոն Շահիկայ որդի Վարհամայ եւ իւրոյ տիկնոյ. առաջնորդ գեղոյս. որ թերակատար ժամանակաւ փոխեցաւ ի Քս եւ եթող զծնողսն իւր սուգ անմխիթար յունէնացեալ աչխարհիս...թվ. ՉՀԵ (1326):

Գյուղի արևմտյան կողմում ևս կա մի ավերակ, բայց այժմ փոքր-ինչ նորոգված եկեղեցի, որին տեղացիները Խաչեր են կոչում: Սրա մոտ ևս կա գյուղատեղի և գերեզմանատուն, բայց անունը անհայտ է:

Բռնակոթից դեպի հյուսիս, մեկ կիլոմետր (մոտ 1 վերստ) հեռավորության վրա ձգվում է մի բավական խոր ձոր, որը գյուղացիները «Ծակերի-ձոր» են կոչում: Սա բաղկացած է կարմիր հողից և կարմիր ժայռերից. սրանց մեջ փորված են 10-15 այրեր, որ ներկայացնում են մեծ և փոքր սենյակներ: Բռնակոթցիները ոչ մի բան չկարողացան պատմել այդ այրերի մասին: Այդ արհեստական այրերից փոքր-ինչ բարձր, հոսում է մի փոքրիկ աղբյուր, որ սուրբ է համարվում: Կաթ չունեցող մայրերը աղանձ են անում, չաղ տալով գալիս այստեղ, մնացած աղանձը ածում աղբյուրի մեջ, մոմեր վառում և կաթ խնդրում:

Գյուղի բնակիչները բնիկներ են, բոլորն էլ հայ լուսավորչական: Ընդամենը 178 տուն. 1107 ար., 953 իգ., միասին՝ 2060 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ:

Ախլաթյան. *Ընկած է մի դաշտավայրի մեջ, որի արևմտյան կողմից հոսում է Այրի գետը, իսկ արևելահյուսիսից՝ Ղարա-սու վտակը, որ գյուղից ներքև թափվում է առաջինի մեջ: Գյուղի արևելյան կողմում ձգվում են Յալլիճու չղթայի Պատալատի և Գափըլու լեռները, իսկ արևմտյան կողմում՝ Լաստ լեռը:*

Փողոցները ծուռումուռ են, տները ցեխից, ցեխի պարիսպներով: Եկեղեցին չատ հասարակ է: Գերեզմանատունում կա երկու փոքրիկ հասարակ մատուռ: Գյուղը 1896 թ. պատահած երկրաշարժից բավական վնասվել է:

Բնակիչները բնիկներ են, բոլորն էլ լուսավորչական հայեր. ընդամենը 111 տուն, 578 ար., 510 իգ., միասին՝ 1088 հոգի: Պարապմունքը նույնն է: Առաջ ունեին մի եկեղեցական ծխական դպրոց, որին պ. Ծատուրյանը տարեկան 100 ռ. նպաստ էր տալիս: Գյուղում այժմ կլինեն մինչև 40 հոգի դրագետներ:

Բնունիս. *Ընկած է Ախլաթյան գյուղից փոքր-ինչ արևմուտք, Լաստ լեռան հյուսիսային կողմը, մի փոքրիկ ձորակի մոտ, որտեղից մի առվակ է հոսում: Նրա հարավային կողմում բարձրանում է մի բլուր, որի գլխին դեռ հին ժամանակներում խրամներ են հատված պաշտպանության համար: Բլրի ստորոտում կա մի ավերակ եկեղեցի:*

Գյուղի հյուսիսային կողմում ընկած է մի հին գերեզմանատուն, ուր կանգնած է մի գեղեցիկ դամբարան 2,66 մ (1 ս. 12 վ.) երկարության, 2,13 մ (1 ս.) լայնության և 3,55 մ (1ս. 2 արշ.) բարձրության: Շինված է սև քարից: Դամբարանի քիվի (corniche) արևելյան ճակատին կա մի բարձրաքանդակ վագր և առյուծ, ոտների տակ մի թռչուն: Արևմտյան երեսը զարդարված է մի գեղեցիկ խաչով, որի թևերի բացվածքներում գրված են.

Պապ. Սիմոն. յիշեցէք ի ՔՍ: Թվ. ՉՉ (1331):

Իսկ ներքևում.

Երկրպագողք Ածընկալ սբ խաչիս խնդրեմք ի ձեռնջ մեք Մոիրոս Վանեանի վս քաղցր եւ անոյշատես արեգակնանման եւ ծաղկատեսիլ զաւակին մեր Աւրպէլին որ էր ածաին չնորհաւքն լցեալ այնչափ որ ի կէս տարոջն զհայ գիրս եւ ի մի ամսոջն զմուղալին ուսաւ. զտեսողսն իւր զամէն զարմացոյց, եւ ի սէրն իւր յորդորէր. ամենեցուն լինէր սիրելի. պիտանի պարոնաց չինականաց ածսիրաբար. կէսաւրեայ փոխեալ աշխարհէ ընդ նահատակաց լուսոյ թողել մեզ դառն կսկիծ անմխիթար սուգ. յիշատակ տեսողաց իւր. աղաչեմք զձեզ յիշել զորդիս մեր զԱւրպէլն եւ զանմխիթար ծնողքս:[39]

---

[39] *Տե՛ս ԴՀՎ II, էջ 115-116:*

Հայր Ալիշանի ասելով՝ վերոհիշյալ Մարտիրոսը եղել է ԺԹ դարում Բնունիս և Կիրակոսիկ (Աղբենա) գյուղերի տերը, որ իր միակ որդու, Օրպելի մահվան պատճառով նվիրել է այդ գյուղերը Տաթևի վանքին:

Դամբարանի առաջը և չուրջը կան գերեզմաններ, որոնց տապանաքարերի վրա քանդակված են մի մարդու պատկեր և բլիթներ: Այս հացերը ննջեցյալների հյուրասիրությունը ցույց տալու նպատակով են քանդակված: Գերեզմաններից մինը, որ ունի «Գրիգորիկ քաջ վարդապետ» տապանագիրը՝ գյուղացիները սուրբ են համարում և շատ հիվանդներ գալիս են այստեղ բժշկություն հայցելու:

Այս գյուղից է եղել Զաքարիա վարդապետ Աղամյանը, որ շատ լեզուներ է իմացել, Հայաստանում կաթոլիկություն է քարոզել և հետո Հռոմի ս. Մարիամ Եգիպտացի անվանված եկեղեցում հայերի խոստովանահայր և հավատի ծավալման (Propaganda-ի) ժողովի տպարանում հայերեն գրքերի սրբագրիչն է եղել: Այնտեղ էլ մեռել է 1688 թ., թողնելով իր ստացվածքը նույն եկեղեցուն:[40]

Արդի Բնունիս գյուղը վերաշինվել է 1866 թ., երբ ալխաթյանցիներից նրանք, որոնց հողաբաժինը այդ կողմերումն է ընկել՝ իրենց բնակությունը այդտեղ են տեղափոխել: Բնակիչները բոլորն էլ հայ լուսավորչական են, ընդամենը 36 տուն, 160 ար., 122 իգ., միասին՝ 282 հոգի:

Պարապմունքը նույնն է. ունեն մինչև 15 հոգի դրագետ և մի քահանա, իսկ դպրոց երբեք չեն ունեցել:

Անգեղակոթ. Այս գյուղը, որ ԺԵ դարում գրված մի ավետարանի հիշատակարանի մեջ կոչված է «գիւղաքաղաք Անկեղակութ», գտնվում է Շաղատի և Շաքիի մեջ: Գյուղի մի մասը ընկած է Բազար-չայի ափին, իսկ մյուսը՝ փոքր-ինչ բարձրացող բարձրավանդակի վրա: Գետի ափը ծածկված է ծառերով և բավական գեղեցիկ տեսք ունի: Կանոնավոր փողոցներ չկան, այլ նեղ, ծուռումուռ կածաններ:

Գյուղի գրեթե կենտրոնում, բարձրավանդակի վրա, որի առաջից հոսում է Բազար-չայը և բացվում մի գեղեցիկ տեսարան՝ գտնվում է ս. Աստվածածին եկեղեցին: Սա քարաշեն է, բավական գեղեցիկ, ներքուստ էլ զարդարված խաչկալով ու ջահերով:

Բացի սրանից կան նաև ուրիշ երկու, հին եկեղեցիներ, որոնցից մինը, ս. Ստեփանոս՝ հասարակ շինք է: Պատերի մեջ կան գերեզմաններից վերցրած տապանաքարեր, որոնց վրա կարդացվում է ՉԼԲ (1283) թվականը: Իսկ եկեղեցու վրա կա հետևյալ արձանագրությունը.

Ես Գարնեցի տէր Վիլասի որդի ուստայ Փանէս չինեցի սբ եկեղեցիս թվ. ՌՃԾԷ (1708):[41]

---

[40] Ալիշան, Սիսական, եր. 216:

[41] Տե՛ս ԴՀՎ II, էջ 121:

Եկեղեցին պարսպապատ է: Այժմ այս եկեղեցումն է կատարվում ժամասացությունը:

Մյուս եկեղեցին, որը տեղացիները ս. Հազարափրկիչ են անվանում՝ գտնվում է փոքր-ինչ արևելք, բարձր ժայռերին կից: Սա մի փոքրիկ շենք է և այժմ ավերակ: Թե սրա և թե ս. Ստեփանոս եկեղեցու մոտից վարար աղբյուրներ են բխում:

Գյուղում կա երկու հին գերեզմանատուն, որոնցից մեկում նշանավոր են «հարս ու փեսի» գերեզմանները: Սրանք երեք գեղեցիկ խաչարձաններ են մի չարքի վրա կանգնեցրած, որոնցից մեջլինը քիչ փոքր է: Մեջլինի առաջ մի տապանաքար է ձգված, որի վրա նկարված է ձեռները կրծքին դրած մի հարս: Մեջլին խաչարձանի վրա գրված է.

Կամաւն Այ կանգնեցաւ զխաչս ի փրկութիւն Ամիրին եւ իւր ամուսնուն եւ իւր ծնողաց. թվ. ՊԿԵ (1416):

Ավանդությունն ասում է, թե այդ երեք գերեզմանները պատկանում են մի թագավորի, իր հարսին և քավորին, որոնք պսակից վերադառնալիս սպանվել են հարսին փախցնել կամեցող անօրեններից: Պատմում են, թե նույն կռվում սպանվել է նաև գյուղի իշխանի որդին, որ թաղված է սրանց հանդեպ և որի դամբարանը աստիճանաբար փոքրացող մի պատվանդանի վրա բարձրացած մի խաչարձան է, առանց տապանագրի:

Գյուղից դեպի արևմուտք, մոտ քառորդ կիլոմետր հեռավորության վրա, բարձր ժայռերին կից չինված երկու եկեղեցի կա, որոնցից մեկը մասամբ ժայռի մեջ է փորված: Այս եկեղեցիները, որ այժմ գրեթե բոլորովին ավերված են՝ տեղացիներից կոչվում են ս. Վարդանանց, և սրանց տոնին բավական ուխտավորներ են գալիս:

Այստեղ կան ՁԼ (1281) թվական կրող տապանաքարեր:

Այս եկեղեցիների մոտից բխում է հինգ վարար աղբյուր:

Ժէ դարի վերջում այս գյուղի տանուտերը եղել է մելիք Սաֆրազը, որի մոտ 1699 թ. Իսրայել Օրիի թելադրությամբ հավաքվել են մոտիկ ավանների 9 կամ 10 տանուտերներ, հայոց տերությունը վերականգնելու մասին խորհրդակցելու:[42]

Այժմյան բնակիչները Թավրիզի Ղարա-Քյոփչան գյուղից են, բոլորն էլ հայ լուսավորչական. ընդամենը 179 տուն. 885 ար., 746 իգ., միասին՝ 1631: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Դպրոց չունեն. գրագետների թիվը հասնում է 50-ի:

Տուլորս. Գտնվում է Այրի-չայի աջ ափին, որի մեջ է թափվում Սիսիանու գետը՝ գյուղի հյուսիսային կողմում, իսկ արևելքից արևմուտք հոսում է Ալաքչու ջուրը, որ բխում է Ալաքչի (Ցղունի) ավերակ գյուղից և թափվում միևնույն գետը: Գյուղի արևելյան կողմում ձգվում են Յալլիճու սարերը, որոնց հետ ուղիղ անկյուն կազմելով՝ դեպի արևմուտք ձգվում է մի

---

[42] Սիսական, եր. 212:

ուրիշ լեռնաշղթա, որի ամենաբարձր գագաթը կոչվում է Փիր-դաղ կամ Գյուննեյ: Հարավային կողմում բարձրանում է Ղոնաղ-գյորմազ սարը: Գյուղը ամբողջապես զետեղված է մի հարթության վրա, որի արևելյան կողմում բարձրանում է մի փոքրիկ բլրակ, մի հին գերեզմանատնով: Այստեղ կան տապանագրեր ՋԾ (1501) թվականից: Եկեղեցին մի հասարակ, կամարակապ շինք է: Գյուղում կան բավականաչափ կանոնավոր և լայն փողոցներ: Գետի ափին բուսած են ուռենիներ, որ բավական զեղեցկություն են տալիս գյուղին:

Բնակիչները գաղթականներ են Շուշու, Մշի և Հին-Նախիջևանի գավառներից: Հայ լուսավորչականներ՝ 60 տուն են, 290 ար., 273 իգ., միասին՝ 563, կան նաև 22 տուն չիա-պարսիկներ, 113 ար., 63 իգ., միասին՝ 176:

Պարապում են երկրագործությամբ, հողը պատկանում է մի թուրք բեկի: Անասնապահությունը նույնպես բավական զարգացած է:

Գյուղը երբեք կանոնավոր դպրոց չի ունեցել, զրագետների թիվը հասնում է 10-ի:

Ցղունի. Փիր-դաղ և Ղոնաղ-գյորմազ սարերի մեջ մի հարթակի վրա գտնվում է մի ավերակ եկեղեցի և տների հետքեր: Տուլորս գյուղի ծերունիները պատմում են, որ այդ տեղը երբեմն գյուղ է եղել Ցղունի անունով և պատկանել է Տաթևի վանքին: Տուլորսի կալվածատեր Սաֆար-Ալի-բեկը վաղատնից 10 տուն թուրք է բերել բնակեցրել այդտեղ և անունն էլ փոխել՝ Ալաքչի: Հետո թուրքերը կրկին վերադարձել են, բայց և այնպես հողը մնացել է Սաֆար Ալի-բեկին սեփականություն:

Տուլորսի մոտ է Աղբյանտ, փոքրիկ հայաբնակ գյուղը:

Ալելու. Զետեղված է Սալվարտ լեռան ստորոտում, դիմացը բարձրանում են անանուն բլուրներ: Սալվարտի լանջերը ներկայացնում են ամենագեղեցիկ արոտատեղեր, ուր Զանգեզուրի և Ջիբրայիլի թուրքերը իրենց անասուններով «յայլախ» են դուրս գալիս: Լեռան լանջերից բխում են բազմաթիվ աղբյուրներ. սրանք միանալով կազմում են Ալելուի վտակը, որ նախ նույն գյուղի առաջով և ապա Սիսիանու բերդի արևմտյան կողմով անցնելով՝ թափվում է Սիսիան գետի մեջ:

Սալվարտը ունի երեք գագաթ, որոնցից ամենաբարձրը միջինն է: Այստեղ կան մեծ և մանր քարերով շինված բազմաթիվ սենյակներ, որոնց ոչ մեկը ծածկ չունի: Բարձր կետերում և սենյակների շուրջը քարերը միմյանց վրա դարսված են և փոքրիկ աշտարակներ են ներկայացնում: Սենյակներից երկուսը ուխտատեղի են համարվում, չնայելով որ ոչ մի պաշտելու արժանի բան չի նկատվում: Սրանցից մեկի մեջ ոչխարի մի քարե արձան կա: Պատերը ծածկված են ուխտավորների կապած դույնզդույն շորերի կտորներով, մեխերով, պայտերով և այլն:

Գագաթից փոքր-ինչ ներքև, արևելյան կողմում մի փոքրիկ աղբյուր է բխում, որ 2 մետրաչափ հոսելուց հետո անհայտանում է գետնի տակ:

Ասում են, թե արեգակի ճառագայթները նախ այս ջրի վրա են ընկնում, թե նա սուրբ է, կոտորում է դաշտային մկներին՝ եթե դան հանդիսով տանեն և չաղ տան արտերի վրա:

Լեռան արևմտյան լանջի վրա ութ աղբյուր են բխում, որոնցից մեկը ավելի բարձրից. սրանց ջուրը հավաքվելով մի տեղ՝ մի փոքրիկ լիճ է գոյացրել:

Լեռան գագաթից պարզ եղանակին երևում են Նախիջևանը և Արաքսը: Սակայն հազիվ է պատահում, որ այստեղ եղանակը պարզ լինի, այլ միշտ պատած է թուխսով և քամին սաստկությամբ փչում է: Ձյունն էլ լանջերին մնում է ամբողջ ամառ: Իմ բարձրացած օրը, հուլիսի 25-ին, ջերմությունը 9° էր Ռեոմյուրով:

Գյուղում ուշադրության արժանի բան չկա. նույնիսկ եկեղեցին ցեխից շինված մի հասարակ շենք է: Բայված և մասամբ նորոգված է մի հին փոքրիկ եկեղեցի:

Բնակիչները Պարսկաստանից 1828 թ. գաղթած լուսավորչական հայեր են. ընդամենը 79 տուն, 305 ար., 257 իգ., միասին՝ 562 հոգի:

Բացի սովորական պարապմունքից՝ սրանք նաև աղ են տանում Նախիջևանից Շուշի: Դպրոց չունեն:

Մազրա. Գտնվում է Շաղատից արևելահարավ, Ճղնավորի-սար (Աբուդյունեյ), Ախճա, Յար-Յարլաղան և Սուլու-քար լեռների ստորոտների միախառնվելու տեղում: Գյուղի հյուսիսային կողմում երկու խոր ձորեր միմյանց կտրելով՝ կազմում են մի բարձրավանդակ լեզվակ, որի վրա հնում եղել է մի բերդ, որի միայն հետքերը նշմարելի են այժմ: Ձորերի միջով հոսում են առվակներ, որոնք միախառնվելով՝ Շաղատի մոտ թափվում են Բազար-չայը:

Բերդի մոտ կա մի հին գերեզմանատուն: Գյուղի հողի մեծ մասը կարմիր է, որից շինված տներն էլ կարմիր են:

Եկեղեցին պարսպապատ է և բավական դեղեցիկ, մանավանդ ներսից: Սրա մոտ գտնվում է հայոց եկեղեցական ծխական այժմ փակված դպրոցի շենքը:

Բնակիչները Խոյի Ղռիա գյուղից են, 1828 թ. գաղթած: Ընդամենը 76 տուն են, 454 ար., 367 իգ., միասին՝ 821 հոգի: Գյուղում, Բաքվի ազդեցությամբ, կա փոքր-ինչ կրթված երիտասարդություն, որ ընկերակցությամբ ստանում է հայ լրագիրներ և գրքեր:

Գյուղացի երիտասարդները բավական քաջ են: Շատ անգամ կռիվ է պատահում սրանց և գյուղի շրջակայքում «յայլախ» դուրս եկած թուրքերի մեջ, որոնք իրենց ոչխարները արածեցնելիս են լինում սրանց արտերում: Այս կռիվները երբեմն սպանությամբ են վերջանում: Շատ անգամ այս քաջ երիտասարդները քշում են թուրքերի իրենց արտերը մտած ոչխարները և բերում գյուղ: Իսկույն երկու կամ երեքը մորթում, «մատաղ են անում»:

Անմիջապես գյուղի գլխից շրջում է գյուղը և բղավում. «Ամեն տնից մեկը, մի ման, չորս հաց առնի գայ հա՞, առնի գա»: Անմիջապես տնից մի-մի հոգի են հավաքվում և հազար ու մի կատակներով, ուրախությունով ուտում են: Մյուս օրը թուրքերը գալիս են գյուղ և հազար աղաչանքներով, տուգանքներ վճարիլով հետ ստանում իրենց մնացած ոչխարները և գնում:

Ընդհանրապես պարապում են երկրագործությամբ: Արտերը հասնում են օգոստոսին: Անասնապահությունը նույնպես բավական զարգացած է: Ոմանք էլ Նախիջևանից աղ են տանում Շուշի ծախելու:

Ուզ. Դալի-չայը, որ սկիզբ է առնում Ուղի մոտակա լեռներից, Այրի-չայի հետ միախառնվելով՝ թափվում է Բազար-չայը: Այս միախառնման մոտ, գետի աջ ափին, մի բարձրավանդակի վրա գետեղված է Ուզ գյուղը, որ հնում Ույծ է կոչվել: Գյուղի հանդեպ, հյուսիսային կողմը բարձրանում են երկու բարձր գագաթներ, որոնց վրա հնում բերդ է եղել: Արևմտահյուսիսային կողմում էլ, գյուղից մոտ երկու կիլոմետր հեռավորության վրա գտնվում է մի հին անապատ, ս. Կիրակոս անունով: Վանքը բոլորովին քանդված է և արձանագրություններ չկան:

Թ դարից սկսած այս անապատը բավական նշանավոր է եղած և այստեղից են եղել Հակոբ Ույծա ավագերիցը, որ «նախակարգի ոչ միայն քան զՍիմէոն Շաղատայ վանականն, այլև քան զՄանկիկ քորեպիսկոպոս Մղկայ»:[43] ԺԱ դարում դիտնական վարդապետների շարքում հիշված է նաև Գեորգ Ուծեցին:

Անապատից ցած, ձորակի մեջ կան արվեստական այրեր:

Գյուղի մեջ երկու հին եկեղեցիներ կան, որ ճարտարապետական տեսակետից չատ հասարակ են:

Այժմյան բնակիչները Պարսկաստանի Գյարմարի (Թավրիզի մոտ) մահալի Ուզումչի գյուղից են, բոլորն էլ լուսավորչական հայեր, 175 տուն, 562 ար., 611 իգ., միասին `1173 հոգի:

Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Հողը արքունական է: Կանոնավոր դպրոց չեն ունեցել: Ունեն մի քահանա, որի հետ խոռված են:

ՆՇԱՆԱՎՈՐ ՎԱՆՔԵՐ

Շաղատ. եղել է առաջ գահանիստ քաղաքական, բայց այժմ մի հասարակ գյուղ է և գտնվում է մի թեթակղղիաձև հարթության վրա: Նրա հյուսիսային կողմից հոսում է Բազար-չայը, որի հետ խառնվելով արևմտահյուսիսից հոսող վտակը՝ անցնում է դեպի արևելք, մինչև Բերդի սարը, ուր նրա հետ խառնվում է Մազրա գետը: Գյուղի արևելյան կողմում բարձրանում են երկու բլուր, ուր հնում մի բերդ է եղել, որի հետքերը միայն

[43] Ալիշան, Սիսական, եր. 216:

կարելի է այժմ նշմարել: Փոքր-ինչ հեռու, հյուսիսային կողմում երևում է Քեչաբերդի սարը, որի վրա նույնպես հնում եղել է մի բերդ, որ այժմ բոլորովին քանդված է: Իսկ հարավային կողմում բարձրանում է «Ճգնավորի սարը»: Սրա գագաթին, մոտ 30 մ երկար և 12 մ բարձր մի ժայռ կա, բաղկացած 1-4 մ երկար և գրեթե 1 մ լայնության, կանոնավոր, միմյանց մոտ դարսած քարերից, որոնք աստիճանաբար բարձրանալով՝ մի գեղեցիկ պրիզմա են կազմում:

Այս ժայռի մեջ մի փոքրիկ անցք կա որ 2,88 մ խորություն ունի, սակայն շատ նեղ է, այնպես որ միայն տասը տարեկան երեխան կարողացավ ներս մտնել:

Այս ժայռը երկար ժամանակ պաշտվում էր, հենց այժմ էլ, երաշտ ժամանակ Շաղատի և շրջակա գյուղերի բնակիչները այստեղ են գիմում ուխտ անելու, զոհեր մատուցելու մի փոքրիկ մատուռի մեջ, որ սրանից տասը տարի առաջ շաղատցիները շինել են այս լեռան լանջին: Այստեղ մի տափարակ և մի գմբեթաձև փոքրիկ քար կա: Պեղումները ցույց են տվել, որ այդ սուրբ համարված տեղում բացի կճուճների կտորներից ուրիշ ոչինչ չի եղել: Այս ժայռի մոտ կա մի ուրիշ նույնպիսի ժայռ, իսկ սրանց մեջ նկատվում են պարսպի հետքեր:

Գյուղի արևմտյան կողմում, բլրակների մեջ մի փոս կա, ուր երբեմնի լիճ է եղել: Այժմ գարնան ժամանակ միայն լցվում է նա և ջուրը միառժամանակ մնում:

Գյուղի գրեթե կենտրոնում կա մի փոքրիկ, հասարակ, ցեխից շինված մատուռ, որ ըստ ոմանց ս. Ստեփանոս, ըստ այլոց՝ ս. Դանիել է կոչվում: Սրա մեջ կա երկու գերեզման առանց տապանագրի: Մատուռի շուրջը կան հին գերեզմաններ, որոնցից մեկի վրա կարդացվում է՝ թվ. ՋՃ (1301): Ննջեցյալի անունը եղծված է, միայն կարդացվում է «բեկ» խոսքը:

Մատուռից փոքր-ինչ հեռու կանգնած է գյուղական եկեղեցին, որը կառուցել են գյուղացիները՝ նախկին եկեղեցու տեղում, կոչվում է սուրբ Գևորգ: Երկու, պատերին կից կեղծ-այուների վրա, բոլորում են ռոմանական կամարներ և նույնպիսի ձեղուն: Ջորս սաստիկ փոքրիկ լուսամուտներ աղոտ լույս են սփռում: Եկեղեցին ներսից բավական զարդարված է. ունի գեղեցիկ խաչկալ, երկու ջահ: Հատակը ծածկված է գորգերով:

Եկեղեցու շուրջը կան հին գերեզմանաքարեր: Փողոցները փոքրիշատե կանոնավոր են: Տների առաջ կան փոքրիկ պարտեզներ, ուռի ծառերով:

Բնակիչները 1829 թ. Պարսկաստանի Մարաղայից, Խոյից և Սալմաստից գաղթած հայ լուսավորչականներ են, ընդամենը 126 տուն. 667 ար., 550 իգ., միասին՝ 1217 հոգի:

Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Ուսումնարան չունեն: Գյուղում կլինեն մոտ 25 գրագետ:

Շաղատի մոտ է Բալաքը, ուր ոչ մի հնություն չկա: Բնակիչները Սպահանից ու Սալմաստից են գաղթած:

Ղարաքիլիսա. Համանուն գյուղի արևմտահյուսիսային կողմում, մի բարձրության վրա կանգնած է ս. Հովհաննես եկեղեցին: Սա սև, տաշած քարից շինված մի գեղեցիկ չենք է, 19,17 մ (9 սաժեն) երկարության, 14,91 մ (7 ս.) լայնության և 19,17 մ (9 ս.) բարձրության, չհաշված գմբեթը, որ քանդված է: Յուրաքանչյուր պատի մեջ կան երկուական եռանկյունաձև ներսանկվածներ, իսկ պատուհանների գլխներին գեղեցիկ նախշեր: Եկեղեցին ներքուստ խաչաձև է և անսյուն: Զորս կիսաբոլոր, չորսական մետր լայնության թևեր բաժանում են եկեղեցին չորս մասի, որոնց անկյուններում կան խորհրդանոց՝ յուրաքանչյուրը մի պատուհանով:

Կամարները, որ բոլորում են թևերի պատերին կից կեղծ սյուների վրա՝ ռոմանական են, իսկ սրանց վրա բարձրանում է կաթողիկեն, 7,2 մ (3 ս. և 1 արշ.) բարձրության, որ ունի չորս պատուհան: Գմբեթը քանդված է:

Կաթողիկեի մեջ կան երեք բարձրաքանդակ անդրիներ, որոնցից միջինը փոքր-ինչ ավելի մեծ է: Սրա շուրջը գրված է.

Տէր Յովսէփ Սիւնեաց եպիսկոպոս.

Իսկ մյուսների վրա.

Թէոդորոս Սիոնի վանական.

Կոհազատ Սիւնեաց տէր:

Կաթուղիկեի շուրջը՝ արտաքուստ փորագրված է.

Շերոյեանի Բաբենի (?) Մամիկոնեան.

Կաթուղիկեի վերին քիվի (corniche) վրա շինված են չորս ավետարանիչների անդրիները, յուրաքանչյուրի տակ անունը փորագրված:

Իսկ ներքին քիվի վրա արձանագրված է.

Սուրբ Գրիգոր ողորմեա Գրիգորի Սիւնւոյ և կորուսեալ Ռոստոմոյ:

Եկեղեցին ունի երկու դուռ, արևմտյան և հարավային կողմերում, որոնց վերևում կան մի-մի մեծ պատուհան:

Արևմտյան դռան մոտ կա մի արձակնային ժամացույց և սրա մոտ հետևյալ արձանագրությունները.

Թվ. ՆԿԶ (1017) Սմբատ որդի Աշոտոյ Սիւնեաց իշխանաց իշխան. Ցաղաւթս յիշեցէք:

Զգրող ժամացոյցիս յիշեցէք. ես Գրիգոր գրեցի:[44]

Եկեղեցու մեջ, սեղանի աջ պատի վրա, կա հետևյալ եղծված արձանագրությունը.

Ես Շապու գարդայ պատրիկայ որդի...ի վանից սուրբ եկեղեցուս գնեցի սերտիլ վարդար (?) քառասուն երկրորդ շաբաթի հինգշաբթի աւուր, որ խափանէ իմ մեղացն...[45]

---

[44] Տե՛ս ԴՀՎ. II, էջ 88:

[45] Տե՛ս ԴՀՎ. II, էջ 90:

Սեղանի ձախ կողմում.

Ցիշա՝ Քս Ա՛ծ Վարագորդի Սիւնեաց Հազարապետ:

Եկեղեցին այժմ վերանորոգում են գյուղացիները, որովհետև իրենց միակ աղոթատեղին է: Ներքուստ բոլորովին գուրկ է որևէ զարդարանքից:

Գյուղը գտնվում է Բազար-չայ գետի ձախ ափին: Հայկական թաղը գետեղված է գլխավորապես գետի ափին, իսկ թրքականը՝ փոքր-ինչ վերև մի բարձրավանդակի վրա: Գետի ափին և մանավանդ գյուղի հարավային կողմում կան գլխավորապես ուռենիներ, որ բավական գեղեցկություն են տալիս գյուղին: Կանոնավոր փողոցներ չկան, տները քարաշեն են, իրենց առանձին, պարապատատ բակերով: Կան նաև վեց կանոնավոր, եվրոպական ճաշակով շինված և զարդարված տներ: Գյուղի կենտրոնում գտնվում է արքունական միդասյան դպրոցը, որ բացված է 1882 թ., ունի երկու ուսուցիչ, 70 աշակերտ և մի քանի աշակերտուհի:

Բնակիչները 1829 թ. գաղթած են Խոյից և Սալմաստից. կան նաև հինգ տուն բնիկներ, որոնք այժմ 36 տուն են դառել: Ընդամենը 185 տուն, 630 ար., 638 իգ., միասին՝ 1268 հոգի: Գյուղը պատկանում է Տաթևի վանքին:

Կարմիր վանք. *Սիսիանի հովտում, Հորթեկյուղ թրքաբնակ գյուղի մոտ, Ղարաքիլիսա կոչվող լեռան լանջին գտնվում է մի ավերակ վանք: Սա ամբողջովին շինված է եղել տաշած կարմիր քարից, առանց այլուների. երկարությունը 19,17 մ (9 սաժեն), իսկ լայնությունը՝ 7,81 մ (3 ս. 2 արշ.). միայն երեք պատը մնում են կիսավեր և մի ռոմանական կամար, որ բոլորում է սեղանի վերև:*

Եկեղեցու հարավային պատին կից, որպես մի առանձին շենք, գտնվում է մի փոքրիկ, կամարակապ ձեղունով մատուռ, ուր նկատվում են երկու դերեզման:

Պատերի վրա կան արձանագրություններ, բայց բոլորովին եղծված են: Վանքի հարավային կողմից իջնում է մի ձորակ, որի միջով հոսում է կարմիր վանքի ջուրը, որ թափվում է Սիսիան գետի մեջ: Իսկ սրա աջ ափին նկատելի է մի գյուղի ավերակ:

Ավանդություն ասում է, թե այս վանքը մի աղջիկ և մի եզ են շինել: Եզը ինքնակամ քար է կրել, իսկ աղջիկը միայնակ շարել:

Եկեղեցու հանդեպ բլրակը մոտ 200 մ երկարությամբ ձգվում է լեզվակի ձևով և ապա իջնում մինչև Սիսիան գետը: Այս հարթության վրա կա մի փոքրիկ, գետնափոր, արհեստական այր, որի մեջ, ասում են, իբր թե ճգնավոր է թաղված: Ուխտավորները մի նեղ անցքով ներս են կախվում և համբուրում այնտեղ թափթփված քարերը: Մի կանոնավոր դերեզմանի տեղ չի նկատվում: Սրա մոտ կան դերեզմանաքարեր, որոնցից մեկի վրա մի փոս է շինված, հատկապես նրա համար, որպեսզի անձրևի ջուրը այդտեղ հավաքվի և թռչունները խմելով՝ ննջեցյալի հոգին մխիթարվի:

Շաքեի վանք. Շաքեի վանքը գտնվում է Շաքի գյուղում, որ ընկած է Անգեղակոթ և Ղարաքիլիսա գյուղերի մեջ, Շաքի-չայի աջ ափին, մի հարթության վրա: Այս գյուղի այժմյան բնակիչները մեծ մասամբ չիա թուրքեր և սյունեցի օսմանցիներ են:

Վանքը 17,75 մ (8 ս. 1 արշ.) երկարություն, 7,81 մ (3 սաժ. և 2 արշ.) լայնություն և 12,78 մ (6 սաժ.) բարձրություն ունի և շինված է մեծ մասամբ տաշած քարից:

Պատերին կից ձգվում են չորսական կեղծ սյուներ, որոնց վրա նույնպես պատերին կից բոլորում են ռոմանեսկան կամարներ, որոնց մեջ կան մի-մի փոքրիկ պատուհան: Կամարների վրա հանգում է ռոմանեսկան ձեղունը, որ սեղանի մոտ արդեն փոքր-ինչ քանդվել է: Վանքը ունի մի դուռ, արևմտյան կողմում, որի վերև կա մի նեղ և երկար պատուհան, իսկ սրա վերև, կամարի վրա կանգնեցրած է մի գեղեցիկ 2 մետրաչափ խաչարձան:

Դուռն ճակատակալ քարի վրա գրված է.

Շաքու եկեղեցիս շինեցինք Թ. ՌՀԵ (1626):

Եկեղեցու հանդիսակաց բլրակի վրա կա մի փոքրիկ խարխուլ մատուռ:

Եկեղեցու շուրջը թուրքերի տներ ու կալեր շինված լինելով՝ չի կարելի որոշել, թե հին է արդյոք խցեր և պարիսպ:

Այս գյուղում գտնված է մի մեծ քարե սարկոֆագ (չիրիմ), որ այժմ գործ են ածում որպես ալյուրի չտեմարան:

Շուքար. Ընկած է Արյուկլու գետի ձախ կողմը, մի հովտում: Գյուղի հարավային և հյուսիսային կողմերում կան բարձր, կարմիր ժայռեր: Գյուղի մեջ կա մի մեծ, տաշած քարից շինված եկեղեցի, որի միայն մի խորանը և սեղանի պատն են մնացել կանգուն: Եկեղեցու մոտ կա մի հին, հայկական գերեզմանատուն, որի տապանաքարերը թուրքերը տարել գործածել են:

Այժմյան բնակիչները չիա թուրքեր են, ընդամենը 35 տուն, 125 ար., 93 իգ., միասին՝ 218 հոգի:

Վաղուդի. Այս գյուղը գտնվում է Որոտնա վանքի արևելահյուսիսային կողմում, մի բարձրավանդակի վրա, որ երեք կողմից պատած է բլուրներով: Արևելյան կողմից էլ ձգվում է մի խոր ձոր և բարձրանում մի մեծ լեռ, որի գագաթին հնում մի ամրոց է եղել: Գյուղում կա մի բոլորովին ավերված եկեղեցի և նրա մոտ՝ գերեզմաններ:

Այս գյուղը նախկին Վաղադինն է, Հովհան Որոտնեցու հայրենիքը: Այստեղ Սյունյաց առաջին թագուհի Շահանդուխտը Քս. 1000 թվականին չինել է «գեղեցկահաղմար և վայելչադիտակ» Վաղադնի վանքը այն տեղում, ուր ըստ ավանդության ս. Գ. Լուսավորչից հիմնված և Ստեփանոս անունով մի ճգնավորից շինված եկեղեցի է եղել, որ Թունավոր օձերից խայթվածներին բժշկելիս է եղել. «Ձհարեալսն ի թունաւորաց և զսևացեալսն և զուռուցիկսն մերձ ի պայթել՝ հանեն ի բարձրաւանդակ լերինսն և

ցուցանեն զվանան, և կամ սակաւ մի հող յեկեղեցւոյն հասուցանեն, փութթապէս բժշկէ»:[46]

Այժմ այդ միևնույն գորութիւնը Որոտնա վանքին են վերագրում, ասելով, որ երբ օձը կծում է՝ անմիջապես սկսում է վազել դեպի Որոտնա վանքը, և եթե նա ավելի շուտ է կարողանում հասնել վանքին, քան խայթվածը՝ այն ժամանակ վերջինս չի բժշկվի, իսկ եթե խայթվածը առաջ հասնի և համբուրի եկեղեցու դուռը՝ անմիջապես կբժշկվի:

Շահանդուխտ թագուհին թաղված է եղել նույն եկեղեցու դռան մոտ:

Վեց տարի հետո նույն Շահանդուխտի և Վասակ թագավորի որդի Սևադան «Մեծածախ աշխատութիւամբ» շինում է մի եկեղեցի, «յոյժ պայծառ և գեղեցկայարմար, գմբեթայարկ հանուն սրբո Կարապետի»:

Գյուղի այժմյան բնակիչները չիա թուրքեր են: Ընդամենը 151 տուն, 738 ար., 558 իգական, մնասին՝ 1296 հոգի:

Աղուտի. Ուզի և Որոտնա վանքի մեջ, Բարկուշատի ձորի ձախ լանջին ընկած է Աղուտի, նախկին Աղիտու գյուղը, ծածկված ծառերով: Գյուղի գրեթե կենտրոնում գտնվում է մի եկեղեցու ավերակ, որի միայն սեղանի կամարը և սրա մոտ՝ զանգակատան ճակատն է կանգուն մնացել: Այս մասը շատ գեղեցիկ է: 6,40 մ (3 ս.) բարձրութիյան երկու կեղծ և մի կլոր սյուների վրա բոլորում են երկու գեղեցիկ ռոմանական կամարներ, իսկ սրանց վրա՝ 2,13 մ (1 ս.) բարձր երկու կեղծ և երկու իսկական գեղեցիկ սյուներ են բարձրանում, միանալով միմյանց հետ դարձյալ ռոմանական կամարներով:

Եկեղեցու մոտ կա գերեզմանատուն, ուր կան ՌՃ (1651) թվականից տապանաքարեր:

Գյուղի այժմյան բնակիչները չիա թուրքեր են, 159 տուն. 647 ար., 515 իգ., ընդամենը՝ 1162 հոգի:

ԲՆԱԿԻՉՆԵՐ

Սիսիանի ոստիկանական շրջանի բնակչութիյունը կազմում են հայերը, թաթարները և ռուս աղանդավոր մալականները:

Հայերի փոքրագույն մասը բնիկներ են, և բնակվում են Սիսիանի Բռնակոթ, Ախլաթյան և Բնունիս, ինչպես և Լորաձորի Շնաթաղ, Լոր և Դարբաս գյուղերում: Բնիկ են համարվում նաև տաթևացիները, իսկ մյուս, մեծագույն մասը գաղթականներ են, որ գլխավորապես եկել են Պարսկաստանից, 1828-29 թվի ռուս-պարսկական պատերազմների միջոցին: Սրանցից Գերմալինները բռնել են Ալելու, Անգեղակոթ, Ղուշչի-թաղա-քենտ և Ուզ, Մազրա, Բալաք, խոյեցինները՝ Շաղատ, Լծեն, սալմաստցինները՝ Ղարաքիլիսա: Վերջին ժամանակներս սրանցից մի մասը տեղափոխվեց Ղալաջըղ և նրան վերակոչեց՝ երկրորդ կամ նոր Ղարաքիլիսա: Պարզ է, որ այս գաղ-

---

[46] *Սիսական, եր. 217:*

թական ժողովուրդները, պահելով իրենց նախկին միջավայրերի առանձնահատկությունները՝ տարբերվում են միմյանցից թե բարքաուռով, թե սովորություններով և թե բնավորությամբ: Մեր ներկա հետազոտության մեջ մենք միայն նրանց գյուղերը նկարագրեցինք, որպեսզի տեղագրական բաժինը փոքրիշատե լրիվ կարողանայինք ներկայացնել, այնինչ մյուս, զուտ ազգագրական կետերում, մենք նրանց բոլորովին անուշադիր թողեցինք, հետազոտելով միմիայն բնիկ ժողովրդին, որպեսզի ազգագրական տեսակետից սխալներ արած չլինենինք և տարբեր սովորություններ միմյանց չխառնեինք: Այնպես որ, մեր բոլոր ազգագրական տեղեկությունները վերաբերում են Բռնակոթ, Ախալթյան, Բնունիս, Շնաթաղ, Լոր և Դարաբաս գյուղերին, և «Սիսիանի ժողովուրդ» ասելով՝ մենք կամեցել ենք հատկապես այս գյուղերի բնակիչները հասկանալ: Տաթևացիների վրա մենք պակաս ուշադրություն ենք դարձրել, որովհետև վանքի ազդեցությամբ շատ բան փոխվել է նրանց մեջ:

Արդ, մասնավորելով մեր խոսքը հատկապես վերոհիշյալ գյուղերի հայ բնակիչների մասին՝ կասենք, որ սրանք ընդհանրապես միջահասակ, առողջակազմ և բավական զեղեցիկ մարդիկ են: Սրանց բնավորության հատկանիշ կողմը անչափ կոպտությունն է, որ զարաբաղցու կոպտությունից էլ անցնում է: Վերին աստիճանի տգիտությունն էլ միանում է այդ կոպտության հետ, և անտանելի դարձնում նրան՝ մանավանդ երբ բաքվի ազդեցությամբ կեղծ լուսավորությունը գալիս է լրացնելու պակասը: Կասկածոտությունն ու անվստահությունը նույնպես բավական հատկանիշ գծեր են այս ժողովրդի բնավորության:

Բայց այս բոլորը հետևանք է այս ժողովուրդների անցյալ կյանքի. սրանք այնքան անդամ ենթարկվել են թշնամիների հալածանքներին, ճնշման, այնքան անդամ կողոպտվել, կոտորվել են, որ չէին կարող վերոհիշյալ բնավորությունը չստանալ:[47]

Սակայն այս բացասական կողմերի հետ այս գյուղացիները ունեն հատկերելի կողմեր էլ. այն՝ որ նրանք բավական հյուրասեր են, թեև այս էլ պետք է ասել, որ սրանց հյուրասիրությունն էլ չի կարող հավասարվել շիրակեցու կամ նույնիսկ ախալքալաքցու հյուրասիրության: Վերին աստիճանի աշխատասիրությունն ու տոկունությունը մի ընդհանուր, գրեթե բոլոր հայ գյուղացիների համար հատուկ գիծ լինելով՝ մի առանձին արժանավորություն չեն ավելացնում սրանց վրա: Բայց աշխատության ու տոկունության կողմից ավելի նշանավոր է հայ գեղջկուհին, որ տղամարդից եթե ոչ ավելի՝ գեթ նրան հավասար աշխատում է: Նա ոչ միայն կառավարում է տունը, կատարում տնային աշխատանքները, այլև օգնում է տղամարդուն դաշտային աշխատանքների մեջ և նրա հետ միասին նույնիսկ

---

[47] *Зелинский. Исследование экономического быта государственных крестьян в Зангезурском уезде. с. 22.*

հունձ անում: Այս ծանր և մշտատև աշխատանքները շատ շուտով խլում են նրանից կանացի քնքշությունն ու թարմությունը: Սրանք թեև բավականաչափ գեղեցիկ են, բայց չեն կարող մրցել Զանգեզուրի գավառի և մասնավորապես խնձորեսկի կանանց հետ, որոնք անհամեմատ գեղեցիկ են: Սակայն սիսիանցիները բարոյականությամբ բարձր են այս վերջիններից, որոնք մեծ մասամբ Բաքվի և մասամբ Գորիս քաղաքի ազդեցությամբ, բավական չեղված են բարոյականության ճանապարհից:

Սիսիանի թաթարները. Միջին Ասիայի մոնղոլական զանազան ցեղերի և առավելապես սելջուկների մնացորդներ են, որոնք հետո խառնվել են Պարսկաստանից եկողների և արաբական ցեղերի հետ:[48] Առաջները այս թաթարները բաժանվում էին բազմաթիվ, առանձին-առանձին ցեղերի և հովվական կյանք էին վարում, բայց ժամանակի ընթացքում նրանց սերունդները այնպես խառնվեցան միմյանց հետ, որ շատերը կորցրին իրենց ցեղական կազմակերպությունը և մահմեդականության ազդեցությամբ սկսեցին մի ընդհանուր, մուսուլման անունով կոչվել: Այժմ միևնույն ցեղի անդամների մեջ չկա այն սերտ կապը, որ նկատվում է հովվական ցեղերի մեջ, և նախկին ցեղական խիստ բաժանումը արդեն վերացել է:

Միայն մի քանի հասարակություններ մասամբ պահպանել են իրենց ցեղական կազմակերպությունը, այն էլ շնորհիվ այն հանգամանքի, որ աշխարհագիր անելիս (ընտանեկան ցուցակ, посемейный список) կազմելիս սրանց ոչ թե առանձին-առանձին, որպես այս կամ այն գյուղի բնակիչ են գրել, այլ որպես մի ամբողջ ցեղ, որ ապրում է տարբեր գյուղերում և ձմեռանոցներում, որոնք միմյանցից երբեմն մինչև 100 վերստ հեռավորության վրա և մինչև անգամ տարբեր գավառներում են գտնվում: Այսպես, սոֆուլի ցեղը ապրում է 19 գյուղերում, որոնցից 5-ը Սիսիանում է, 10-ը Ղափանում, իսկ մնացածները Ջերբայիլի գավառում: Խոջա-Մուսաղլի ցեղը ապրում է 3 ձմեռանոցներում, որոնցից մեկը Սիսիանի, իսկ երկուսը՝ Ղափանի ոստիկանական շրջանում են: Այս բոլոր թաթարները մեծ մասամբ չիաներ են. սյուննիներ շատ քիչ կան:

Թաթարները վայրենական բարքեր ունեն, անասնաձիլի, քաջ և ճարպիկ են: Քաղաքավարությունը, արտաքին բարեպաշտությունը, մեծերին պատվելը կազմում են նրանց բնավորության առանձնահատկությունները. նրանք ատում են ոչ-մահմեդական մարդկանց, սակայն ոչ մի բանով, նույնիսկ ակնարկով չեն ցույց տալիս իրենց ատելությունը: Նրանք ատրուկ են իշխանության առաջ, բայց շատ դառը են իրենցից ստորի վերաբերմամբ: Նախապաշարմունքը, հետաքրքրությունը, կասկածոտությունը, վրեժխնդրությունը նրանց բոլորի հատուկ գծերն են:

---

[48] Զելինսկի, անդ:

Թափառական կյանքը նրանց սովորեցրել է անհոգություն, պարապություն և ծուլություն, և այս հատկությունները այնպես խիստ են արմատացել նրանց մեջ, որ նրանք պատրաստ են մի քանի օր չարունակ քաղցած մնալ՝ քան թե աշխատել: Սրանից էլ առաջանում է մշտական չքավորությունը, որի հետևանքը լինում է գողություն և ավազակություն, որ շատ սովորական երևույթ է այս կողմի թաթարների մեջ:

Մահմեդական կրոնը մահացու մեղք է համարում չպաշտպանել մահմեդականին ոչ մահմեդականի առաջ. հասարակական կարծիքը սաստիկ դատապարտում է այն մահմեդականին, որ ոչ մահմեդական իշխանության կմատնի մահմեդական հանցավորին, այս պատճառով էլ այս թաթարները չարունակ թաքցնում են թուրք ավազակներին ու մարդասպաններին, ի նպաստ նրանց սուտ երդում են տալիս և առհասարակ ամեն կերպ օգնում են նրանց: Այս է պատճառը, որ Զանդեզուրի գավառը լի է ավազակություններով: Սակայն վերջին տարիս, երբ գավառապետ նշանակվեց մի թուրք՝ կարճ միջոցում ավազակությունը բավական պակասեց, որովհետև կրոնական համոզմունքը այլևս չի արգելում՝ հանցավորին սրա ձեռը մատնելու:

Մալականները, որ բնակվում են միմիայն Բազարքենտ գյուղում և ընդամենը 81 տուն են՝ գաղթել են Շուշու Պոլուճա գյուղից 1877 թ.: Սրանք խաղող, աշխատասեր և կրոնամոլ ժողովուրդ են: Թեև երկրի ցուրտ լինելու պատճառով երկրագործությամբ շատ չեն պարապում, սակայն ընդարձակ արոտատեղիներ ունենալով՝ բազմաթիվ անասուններ են պահում և բավական հարուստ են:

ԲՆԱԿԱՐԱՆ

Գյուղերում տները սովորաբար չինում են իրենք՝ տնատերերը, շատ քիչ անգամ մի կամ երկու վարպետ վարձելով: Բարեկամները, մանավանդ փեսանները, ժամանակ առ ժամանակ գալիս են օգնելու: Տղաները ատաղձն են բերում՝ պատրաստում, աղջիկներն ու հարսները ջուր կրում և թեթև դործերը կատարում, իսկ հայրը՝ պատերն է դնում և կարգադրում աշխատությանց կարգը: Տները սովորաբար չինում են կամ գարնանը՝ վարուցանքից հետո, և կամ աշնանը՝ կալն ավարտելիս:

Սիսիանում գրեթե բոլոր տները ցեխից են շինված: Քար շատ տեղերում չկա. իսկ եղած տեղերումն էլ նրան շինության չեն դործածում, մի անգամ ընդունված սովորությամբ: Ցեխից շինված տունը դիմանում է մինչև 50 տարի, սակայն երբեմն հորդ և հարատև անձրևներից սաստիկ վնասվում է. սաստիկ անձրևից էլ ճեղքճեղքվում է:

Շինության համար ցեխը այսպես են պատրաստում. գետինը փորում են և հետո որևէ առվից ջուր են կապում փորված հողի վրա: Ապա թիով խառ-

նում ու ձի, կով, եզ բերում, վրան ման են ածում, այնպես որ սրանց ոտների տակ հողն ու ջուրը չաղախվում ցեխ են կազմում: Հետևյալ օրը բահերով խառնում են կավացած ցեխը, եթե բավականաչափ պինդ չի լինում՝ կրկին կենդանիներ են բերում և ման ածում: Սրանցից հետո իրենք տղամարդիկ են կոխկռտում և ապա կանանց ու հարաններին բոլիկ ոտներով կոխկռտել տալիս: Երբ ցեխը արդեն այնքան պնդանում է, որ կանայք, առանց մեջը խրվելու, կարողանում են կանգնել վրան՝ ցեխը պատրաստ է համարվում: Ոմանք ցեխը ավելի պինդ անելու նպատակով հետը մոխիր են խառնում: Հետո բահով նրան կտրատելով՝ սկսում են պատ շարել: Մինչ այս՝ շինության հիմքը փորած են լինում 0,75-1 մ խոր և 1 մ ավելի լայն: Երբ պատը 1 մ բարձրանում է՝ երեք օր սպասում են, որ չորանա: Հետո նորից ցեխ են պատրաստում և այդ պատի վրա նոր, դարձյալ նույն բարձրության, միայն փոքր-ինչ նեղ, պատ դնում: Այսպես շարունակում են՝ մինչև որ հասնում են ցանկացած բարձրության: Շենքը ծածկելուց հետո, Արտաշի հողից, որ կրային է և գտնվում է առավելապես Բռնակոթի արևելյան և արևմտյան բլուրներում՝ փոքր քանակությամբ ցեխ են պատրաստում, հետը դարման խառնելով և այս անգամ անշուշտ կանանց կոխկռտել տալով: Հետո այս ցեխով ծեփում են պատերի ներքին, երբեմն էլ՝ արտաքին երեսները և լցնում են ճեղքված տեղերը: Ապա այս միևնույն հողից ջրալի շաղախ (չարբաթ) են պատրաստում, հետը մղեղ (հարդի մանրուք) խառնելով, և ավելով և կամ հին գուլպայով քսում պատին, որ սպիտակի:

Բնակարանները բաղկանում են էյվան, տուն, տան-օթաղ և ղոնաղ-օթաղ մասերից. սրանց սովորաբար կլից, բայց երբեմն էլ հեռու է լինում կյոմը (գոմ):

Որովհետև Սիսիանը դաշտային է՝ այդ պատճառով էլ մի տան կտուրը մյուսի համար որպես բակ չի ծառայում, այլ յուրաքանչյուր տուն մի բակ ունի, շրջապատած ցեխի պարսպով: Էյվանը չինվում է բակում, կամ տանը կից, կամ առանձնացած: Սա իսկապես մի պատշգամբ է, որ սովորաբար բակի մակերևույթից փոքր-ինչ բարձր է չինվում: Շատ անգամ այս պատշգամբը ճաղեր էլ չի ունենում: Սրա մի անկյունում օջախ և կամ թոնիր է լինում, որովհետև ամառը այստեղ են պատրաստում կերակուր: Էյվանում քցած են լինում թաղիքներ (քեչաններ), որոնց վրա նստում են ծալապատիկ և գիշերները քնում: Հարուստները ունենում են և մի փայտե հասարակ մահճակալ, որի վրա քնում են տան մեծերը: Պատվավոր հյուր գալիս՝ այս տեղը նրան են զիջում: Մի քանի տներ էլ հասարակ վարագույրներ են անում էյվանի առաջ, որպեսզի արևի ճառագայթներից պաշտպանվեն: Այսպես ուրեմն՝ տաք եղանակներին բոլոր գերդաստանը այս էյվանումն է անց կացնում ամբողջ օրը, ցերեկ և գիշեր: Բակում են դիշերում և անասունները:

Տունը սովորաբար քառակուսի է լինում, չորս սյուներով, որոնց վրա հենվում են երկու դերաններ: Այս երկու դերանների վրա, երկու ծայրերին ձգվում են երկ-երկու դերան՝ «ջուխտակ»-ներ (երկվորյակ), որոնց ծայրերին, դերանների ուղղությամբ մի-մի «դերան-ախպերներ», իսկ սրանց վրա՝ մի-մի «գյադա-ջուխտակ» (ծառա-երկվորյակ): Սրանց վրա ձգվում են երկու ուրիշ բարակ դերաններ, որ կոչվում են «աթմա»: Պատից դերանների և ջուխտակների, սրանցից դերան-ախպերների և գյադա-ջուխտակների վրա ձգվում են երկ-երկու բարակ ձողեր՝ աթմա, միմյանցից մոտ 1/3 մ հեռավորությամբ, որոնց վրա չարված են տախտակներ: Գյադա-ջուխտակների վրա հենած աթմաների վրա ևս երկու կողմից տախտակներ են չարված և մեջտեղը մի փոքրիկ քառակուսի բացվածք թողնված (յուրաքանչյուր կողմը 0,35-0,70 մ) որ կոչվում է հերթ (երդիկ): Սա է տան միակ պատուհանը, որ ձմեռ-դարուն բաց է լինում: Գողերից զգուշության համար երբեմն երդիկի վրա մի խաչաձև երկաթ են ձգում, որ կոչվում է խաչերթ:

Տան հատակը ծեփած է ցեխով, որի հետ խառնած է հարդի մանրուք և մազ, որպեսզի ավելի կպչուն լինի: Տան դռան մոտ անկյունում թաղված է մի փոքրիկ թոնիր, որ կոչվում է օջախ և ծառայում է առձեռն թեթև բաներ պատրաստելու, այնինչ բուն թոնիրը, որի մեջ թխում են հացը և եփում կերակուրները՝ գտնվում է տան միջավայրում, բայց ոչ անմիջապես կենտրոնում, հերթի տակ, որպեսզի անձրևի ժամանակ թոնիրը չհանգչի: Ձմեռը թոնրի վրա քուրսի են դնում և շուրջը բոլորված նստում: Քուրսին քառակուսի ձևով, կարճ ոտներով սեղան է, որ դնում են թոնրի վրա, երեսին վերմակներ և կամ կապերտներ ձգում, որոնք ամբողջ սեղանը և թոնիրը ծածկում են և արգելում տաքությունը դուրս գալու: Նստելիս բարձրացնում են չորի ծայրը, ոտները կախում թոնրի մեջ և ապա նույն չորով իրենց կողքերը ծածկում: Ոտները սկսում են տաքանալ, բայց մեջքը տան ցրտությունից մրսում է:

Տան խորքում դրված է լինում ալյուրի ամբարը: Տան մեջ ոչ մի կահավորություն չկա: Հատակին փռում են թաղիքներ և երբ հյուր է գալիս՝ ներքնակ ձգում և մի բարձ դնում, որ վրան հենվի:

Մի քանի տներում դռան կողքից մինչև տան կեսը հասարակ տախտակով կտրված է, որպեսզի դուռը բանալիս քամին սաստկությամբ չփչի:

Տան-օթախը տանը կից, նրա երկարությամբ, բայց նրանից շատ նեղ մի սենյակ է, տափարակ ծածկով, որի մեջտեղում մի հերթ է թողնված: Այս սենյակը հարսանիքների ժամանակ ծառայում է որպես հարսի առանձնասենյակ, իսկ ուրիշ ժամանակ առավելապես որպես մառան:

Ղոնաղ-օթախին, որ միայն հարուստներն ունեն՝ տափակ ծածկով մի սենյակ է, որի լուսամուտները պատի մեջն են և ոչ կտրին: Շատ անգամ հատակը տախտակած է լինում և շատ քիչ անգամ՝ նաև առաստաղը: Պա-

տուհաններին ապակու փոխարեն չատ անգամ ձիթած թուղթ է կպցրած: Այսպիսի սենյակներում գտնվում են մի կամ երկու աթոռ և մի սեղան:

Բոլոր սենյակների դռներն էլ մի փեղկանի են, բավական հատ փայտից շինված, սաստիկ ծխից չատերի երեսները սևացած են:

Վերջին տարիներս սովորություն է դարձած, որ հարուստները փոխանակ մեր նկարագրած ձևի բնակարաններ շինելու՝ շինում են երկհարկանի տներ, յուրաքանչյուր հարկը մեծ մասամբ մի մեծ և մի փոքր և կամ միայն մի սենյակից բաղկացած, և աշխատում են նրանց եվրոպական ձևով կահավորելու: Գնում են աթոռներ, սակայն չատ քիչ են գործ ածում, ավելի գերադասելով ծալապատիկ նստել: Առհասարակ նոր բնակարանների վրա զգալի կերպով նկատվում է Բաքվի ազդեցությունը:

ԶԳԵՍՏ ԵՎ ԶԱՐԴ

Ընդհանրապես բոլոր փոքրիչատե ունևոր կանայք երկու ձեռք շոր են ունենում, մեկը սովորական, լիավուր, մյուսը՝ տոնական, դռնավուր: Աղջիկների, հարսների և նորատի կանանց հանդերձները կարմիր են լինում, իսկ պառավներինը՝ մթնագույն: Աղջիկների հանդերձները բոլորովին նույնն են, միայն սրանք գլխի հարդարանք կրելու իրավունք չունեն, այլ միայն մի կարմիր կամ սպիտակ «չայլուխ» են կապում:

Լիավուր շորերը բավական կեղտոտ և շատ տեղերից կարկատած են լինում, իսկ դռնավուրները բավական մաքուր և լավ:

Մի քանի ձեռք զգեստ միաժամանակ ունենալու սովորությունը համարյա թե բոլորովին չկա: Մինչև որ մեկը չմաշվի՝ մյուսը երբեք չեն կարում: Մինչև անգամ չապիկ երկու, կամ առ առավելը՝ երեք հատ են ունենում, և փոխում են երկու շաբաթը մի անգամ:

Կանանց զգեստները ընդհանրապես կարում են իրենք կանայք, սակայն այժմ գյուղերում, մանավանդ Բաքվի ազդեցության ավելի ենթարկված տեղերում, լույս են ընկել կանանց զգեստ կարող տղամարդ դերձակներ: Սակայն պետք է ասել, որ Սիսիանում սրանց թիվը շատ փոքր է, որովհետև Բաքվի ազդեցությունը այստեղ համեմատաբար թույլ է, մինչդեռ Գորիսի շրջանում անհամեմատ մեծ է. միմիայն Խնձորեսկ գյուղում, որ 800 տուն բնակիչ ունի՝ կանանց զգեստների 35 դերձակ կա:

Կանանց զգեստը բաղկանում է հետևյալ մասերից.

Շապիկ. Կարում են առավելապես ալըշի և կարմիր մահուդվարի կտորներից, երբեմն էլ կարմիր մահուդվարուց և կարմիր չթից: Երկար է և իջնում է մինչև ոտները: Կուրծքը ամբողջապես և առաջի երևացող մասերը կարում են ալըշից կամ կարմիր մահուդվարուց, իսկ մեջքը և հետևի չերևացող մասը կարմիր մահուդվարուց կամ չթից: Կուրծքը բացվում է մինչև գոտկատեղին և կրծքի երկու կողմը, բացվածքի եզրերին կարված է լինում

արծաթի այուրմա և ապա կլապիտոն, «զար պալթա», արծաթե ոլորած թել, դայթանի վրա փաթաթած: Օձիքը 16 սմ լայն է լինում և առաջից ունենում է երկու կոճակ: Թևերը կարմիր մահուդվարուց և կամ չթից են լինում, նեղ են և ծայրերին կանաչ ղանավուզ կարած, զառ դայթանով եզրափակած և թելերով ասեղնագործած: Սովորական չապիկը այս զարդարանքները չի ունենում:

Շապկընկեր. կարում են կարմիր խամ չխլից, սպիտակ կամ կապույտ խամ կտավից: Փողերը նեղ են և երկար: Վերին ծայրը դարձված, «խոնջանադարձ» է կարված, որի միջով անց է կացրած խոնջանը՝ բամբակյա կամ բրդյա մի կապ, որը հանգուստում են մի կողմում:

Արխալուղ. Հագնում են չապկի վրա: Տոնականը դեռահասները կարում են ալըշուց, կարմիր մահուդվարի աստառով, իսկ հասակավորները՝ մարինոսից, բամբակյա աստառով: Սովորականը գյուլի մախմուրից (որի արշ. արժե 50-75 կ.) կամ կարմիր չխլայից (թուխը արժե 60 կ.) է լինում: Միայն մեջքը, որ չի երևում՝ կարմիր մահուդվարից է: Մեջքում բյուզմայով սեղմվելով՝ հասնում է մինչև ծնկից չորս մատ ցած: Կուրծքը եռանկյունաձև բացված է: Ամբողջ արխալուղի եզրերին կանաչ ղանավուզից մի մատ լայնուքյան քոպա (ժապավեն) է կարած: Պորտի մոտ մի կոճակ է ամրացրած, որ լինում է մի հատ արծաթյա 15 կամ 20 կոպեկանոց, «միջեն կանթած», այսինքն ներքին երեսում մի կանթ լեհեմած, իսկ «մերը» (boutonniere) դայթանից է շինած: Թևքերը նեղ են լինում և բավական երկար, այնպես որ մոտ 17 սմ կախ են ընկնում և վերջանում են եռանկյունաձև: Այս թևի կախ ընկած մասի չուրջը կարած է լինում զար պալթա. եզրերին արծաթի, 4-5 սմ երկար երեքական այուրմաներ միմյանց մոտ եռանկյունիներ են կազմում, միայն թևքի եռանկյունաձև մասում եռանկյունիների գագաթները դեպի ներս, իսկ մյուս մասերում դեպի դուրս են ուղղված: Այս եռանկյունիները կոչվում են «ճիտ»-եր: Թևքի բացվածքի արմատին կարած են լինում վեց կոճակ արծաթի դրամներից: Հարուստներն այսպիսի կոճակներ կարում են ավելի շատ, մինչև արմունկը: Իսկ այստեղից, երբեմն էլ դեռ շատ բարձրից մի դայթանի վրայով կարած է լինում արծաթի «դյուզմա»-նշաձև և նշաձև անամեջ արծաթ:

Այս տեսակ արխալուղը կոչվում է թևքավոր, որովհետև թևը արդեն կարված, ամրացրած է, մինչդեռ «կռնադիր» կոչված արխալուղների թևքերի վերին մասը կարված է լինում հասարակ կտորից, և սրանց վրայից, միայն հարկավոր դեպքերում, անց են կացնում «կռնամաններ»՝ նկարագրված ձևով կարված առանձին թևեր, որ ուսերի մոտ երկու կոճակներով կապվում են արխալուղին:

Արխալուղի վրայից, մեջքին կապում են գոտին, որ լինում է դարայի կտորից, 0,70 մ լայն, որ մի քանի ծալ են անում և 3-3,75 մ երկարության, որ փաթաթում են մի քանի անգամ:

Արխալուղի կրծքի երկու կողմում, հարկավոր դեպքերում կոճակներով ամրացնում են «յախան»: Սա բաղկացած է երկու շարանից, որոնցից յուրաքանչյուրը մի դայթանի վրա շարած և հետո մի նեղ շորի վրա կարած 20-30 արծաթյա քսանկոպեկանոցներ և կամ հին ղրամներ են:

Քյուրք. *Արխալուղի վրայից, տոնական օրերին, միշտ, ամառ, ձմեռ, հագնում են քյուրք, որ Ղարաբաղից է մտել և մինչև այն տարազով է կարվում: Ունի արխալուղի ձևը, միայն թևքերը կարճ, մինչև արմունկները են հասնում և ուղիղ են ձևած: Կարում են առավելապես կարմիր թավիշից և շուրջը, ինչպես և թևերի ծայրերին և օձիքին, կարում չորս մատ լայնության ադվեսի մորթի:*

	Հանդերձի արժեքը	
	լիավուր	*դռնավուր*
Շապիկ	*ռուբ1,30-2 ռ.*	*3-5 ռ.*
Շապկընկեր	*0,40-0,70*	*0,40-0,70.*
Արխալուղ	*3-3,50*	*4-6*
Գոտի	*0,50-1*	*1,20-2*
Յախա, սուրմա և դուլմա	*10-15*	
Քուրք	*25-30*	
Ընդամենը՝	*40,20-52,20*	*43,60-56,70*

Ոտնաման. *Սովորաբար բոլոր կանայք, հարսներն ու աղջիկները տարվա մեծագույն մասը բոպիկ են ման գալիս: Եվ եթե մեկը հագնում է՝ ծաղրում են, ասելով թե կամենում է ցույց տալ իր հարստությունը: Երբ մի հետու տեղ ուխտ են գնում՝ վերցնում են իրենց չմոչկները, բայց ճանապարհին չեն հագնում, այլ միայն ուխտատեղիում: Սրա պատճառը մասամբ էլ այն է, որ չմոչկով սաստիկ դժվար է քայլել: Ոտի հիվանդություններ անպակաս են սրանց մեջ: Միայն ձմեռը հագնում են կարճ դուլպա և չմոչկ:*

Գլխի հարդարանք. *Նախ մազերը սանրում, երկուսի են բաժանում և առջևից կախ ձգում: Ապա մի սպիտակ, քառակուսի կտոր, որ սովորաբար սպիտակ մահուդվարից է լինում և կոչվում է տակալաչակ՝ եռանկյունաձև ծալում ձգում են գլխին, անց կացնում բկի տակով և հանգուցում ծոծրակի մոտ: Այսպիսի մի կամ երկու տակալաչակներ նույն կերպ միմյանց վրա կապելուց հետո՝ սրանց վրայից, գագաթին գնում են պոլին: Սրան պատրաստում են այսպես. մի երկար, բայց համեմատաբար նեղ շորի վրա խմոր են քսում և 2 սմ լայնությամբ ծալում, ապա մի թասի վրա անց կացնելով՝ ծայրը միացնում ու կարում: Հետո վերի եզրերը փոքր-ինչ ետ են բանում: Մեծությունը լինում է կրողի գագաթի համեմատ: Սրա վրայից մի մահուդվարի լաչակ են ձգում գլխին, որ բկի տակով անց կացնելով՝ ծոծրակի մոտ հանգուցում են: Հետո մի «ճակատկապի»՝ կարմիր քառակուսի կտոր եռանկյունաձև ծալած, ձգում են գլխին և ծածկելով ճակատի կեսը՝*

ծայրերը ուղղակի ականջի վերևով տանում և ծոծրակի վրա հանգուցում են: Ճակատակապի վրա կապում են «ղազման», որ ժապավենի վրա կարված երբեմն քսան կոպեկանոց, երբեմն էլ հին դրամներ են, մոտավորապես 20-30 հատ: Երբեմն սա երկար է լինում: Ղազմի քուղերը (թելերը) անցկացնելով ծոծրակի վրայով՝ բերում են բկի տակ և ապա տանում ծոծրակի մոտ հանգուցում: Այժմ սովորություն է եղել, որ երկուսի բաժանած ծամերը առանձին-առանձին ոլորում են և այտի վրայով տանում, ղազմի քուղից (ծնոտի տակ) անց կացնում ու նորից բարձրացնում, ոլորում նույն մազի վրա, որպեսզի ծամը ավելի հաստանա: Հետո դնում են կլորակը՝ մի եռանկյունաձև ծալված չորի մեջ, երկու տեղ, միմյանցից ծնոտի լայնության չափ հեռու. դնում են բուրդ, բամբակ կամ չորի կտորներ, հետո ոլորում և դնչի վրայով տանում ծոծրակի տակ կապում, որպեսզի երեսը քառանկյունի ձև ստանա: Ապա կապում են «չանաբանդ»-ը: Սա բաղկացած է երկու եռանկյունաձև կտորներից, որ սովորաբար կանաչ ղանավուզից և կամ կարմիր թավիշից է լինում, որի երեք կողմերն էլ լայն ժապավեն է լինում կարած. մեջն էլ թելով ասեղնագործած ու աստառած: Յուրաքանչյուր եռանկյունու ներքնագծի երկարությամբ մի ղայթանով չարած են լինում արծաթի թոփեր: Երկու եռանկյունիների ներքնակները ժապավեններով միացած են, դագաթինանկյուններից ղայթաններ են ձգած: Այս չանաբանդը այնպես են ձգում, որ թոփերը գալիս են այտերի վրայով անցնող մազի հյուսերի վրա, ժապավեններից մեկը ընկնում է գագաթին, մյուսը՝ ծնոտի տակ, իսկ երկու ղայթանները կապվում են ծոծրակի վրա: Հետո արդեն կապում են քիթկալը, հարսները՝ կարմիր, սպիտակ կամ կանաչ, իսկ պառավները՝ թուխ կամ սև: Սա քառանկյունի կտոր է, եռանկյունաձև ծալված, որ բերանի վրայով անց կացնելով՝ կապում են ծոծրակի մոտ, այնպես որ բերանը ծածկված է լինում: Պառավները քիթկալի ներքին, եռանկյունաձև մասը կրծքի վրա բաց են թողնում, իսկ հարսները փաթաթում են բկի տակ: Այս բոլորի վրա ձգում են մի քառանկյունի, եռանկյունաձև ծալված «յայլուղ»՝ պոլու գլխի յայլուղ, որը բերում անց են կացնում ծնոտի տակով և ապա կապում ծոծրակի մոտ:

Սրա վրա արդեն ձգում են հարսները մի չարղաթ, տոնականը՝ կարմիր դարայից, իսկ սովորականը՝ մանրապուճա կարմիր չթից:

Սա քառանկյունի է, 2 մ երկարության և 1,5 մ լայնության, որը մի ծայրով ձգում են գլխին, իսկ մյուս ծայրը հասնում է մինչև մեջքը: Օտար մարդու պատահելիս՝ չարղաթը քաշում են վայր և երեսը նրանով ծածկում: Ոմանք չարղաթի երկու, վերին և ներքին ծոպավոր եզրերին ուլունքներ են չարում: Երեք կամ չորս տարվա հարսներն ու պառավները գլխներին լաչակ են ձգում: Սա կարմիր, բայց առավելապես սպիտակ զոնից, կամ փաթուխից և կամ չթից մոտ 2 մ երկարության կտոր է, վոքր-ինչ եռանկյունաձև ծալված:

Գլխներն այսպես փաթաթած պահում են ամբողջ օրերով, գիշեր և ցերեկ, և միայն շաբաթը մի անգամ հետ են անում և գլխները լվանում: Ընդհանրապես այս զարդերը բավական կեղտոտ են լինում, ծխից դրամները սևացած: Շաբաթը միայն մի անգամ ետ անելու պատճառն այն է, որ կապելը բավական չարչարանք և ժամանակ է խլում: Բայց այսպես միշտ կապված պահելու պատճառով շատերի մազերը թափվում են և շատ քչերը երկար մազեր ունեն: Ծնոտն ու բուկը ամբողջապես թոռմշում են: Ականջների մոտ վերքեր են դոյանում:

Տղամարդկանց հանդերձները նույնն են՝ ինչ որ բոլոր զանդեզուբցիներինը՝ մոխրագույն չալից կարած չուխա և վարտիք, իսկ չուխայի տակ սև կտավից արխալուղ:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ

ԱՄՈՒՍՆՈՒԹՑՈՒՆ ԵՎ ՀԱՐՍԱՆՑԱՑ

ՍՈՎՈՐՈՒԹՑՈՒՆՆԵՐ, ՆՇԱՆԱԴՐՈՒԹՑՈՒՆ

Հասակ. Սիսիանում աղջիկ երիտասարդությունն չկա, որովհետև շատ մատաղ հասակում են ամուսնանում: Ութ կամ ինը տարեկան ժամանակ նրան արդեն նշանում են և տասը կամ տասնմեկին՝ պսակում: Առաջները տղաներին էլ էին այսպես փոքրահասակ պսակում, բայց զինվորագրությունը հայերիս մեջ մտնելուց հետո՝ շատ շատերը սպասում են մինչև վիճակ հանելը: Սակայն անդրանիկ որդիները, զինվորական ծառայությունից ազատվելու արտոնությունն ուննալով՝ շարունակում են նախկին կարգով վարվել:

Ընդհանրապես այսպես փոքր հասակում նշանելու և պսակելու պատճառով է, որ Սիսիանում սիրահարություն, աղջիկների հետևից ման գալ, աղջիկ փախցնել չի պատահում:[49]

Ամուսնացնելիս հաս են համարում արյունակցության վեց և խնամության հինգ աստիճանները: Սակայն պատահում է, որ ավելի մոտ աստիճաններում էլ են ամուսնանում, երբ չեն կարողանում որևէ հնարքով ստանալ օրինավոր ամուսնության թույլտվություն՝ դիմում են թոնրի պսակին և կամ ապօրինի կնապահության: Թոնրի վրա պսակվելիս՝ թոնրի շուրթը մոմեր են վառում, հարս ու թագավորին կանգնեցնում նրա երկու կողմում, և քահանան կատարում է պսակի խորհուրդը: Ապա նորապսակները չոքում, համբուրում են թոնրի շուրթը և հետ-հետ գնալով՝ հեռանում, մեջքերը թոնրին չդարձնելով, որով թոնիրը անպատված կլիներին:[50]

Այժմ այսպիսի պսակներ շատ հազիվ են պատահում, սակայն այսպես պսակվածներ կան, որոնք հենց այժմ էլ պնդում են, թե «թոնիրը եկեղեցուց

---

[49] Սրա անմիջական հետևանքն էլ այն է, որ Սիսիանում ժողովրդական սիրային երգեր չափից դուրս քիչ կան: Ես միայն Լորաձորում կարողացա հավաքել վիճակի երգեր, որոնց մեծագույն մասը Խնձորեսկից և ուրիշ տեղերից բերված հարսներն են ասել:

[50] Նույն սովորությունը եղել է և Վարանդայում: Տե՛ս Ազգ. հանդես, գ. Բ, եր. 116:

բարձր է, քանի որ,- ասում են նրանք,- նա մեզ կերակրում, տաքացնում և մաքրում է»:

Աղջիկ ուզել. Առաջներում աղջկա ընտրության հոգսը միանգամայն երիտասարդի մոր վրա էր թողնված: Նա էր ընտրում, առավելապես ուշադրություն դարձնելով աղջկա մոր և բարեկամների բարի հատկություններին վրա: Այժմ թեև վերջնական որոշումը դարձյալ նրանից և ամուսնուց է կախված՝ բայց և այնպես հարցվում է տղայի հոժարությունը: Բայց այս հոժարությունը չատ փոքր նշանակություն ունի, այնպես որ պատահում են դեպքեր, երբ տղային նշանում են նրա բացակայության ժամանակ, առանց նրան իմաց տալու: Երբ մի գեղեցիկ օր տղան պանդխտությունից վերադառնում է՝ մայրը պատմում է նրան նրա նշանածի մասին, գովում է նրան և այլն, և «ապուռն երեսին», «հալալ կաթնակեր» տղային մնում է՝ միայն համբուրել մոր ձեռքը և չնորհակալ լինել նրա անչափ հոգատարության համար:

Երբ հարսնացուն ընտրված է՝ նրան նշանում են:

Նշանադրություն. Նախապես աղջկա ծնողների համաձայնությունը առնելուց հետո՝ երիտասարդի մայրը կամ մի մոտիկ ազգական Ծաղկազարդի օրը, երբ գյուղի բոլոր աղջիկները եկեղեցի են գալիս՝ մի մոմ է տալիս ուզած աղջկա ձեռքը և մի չարղաթ ձգում գլխին: Այնուհետև նա նշանված է համարվում:

Եվ կամ տղայի մայրը մի ծերունու և կամ մի կնոջ խնամախոս է ուղարկում աղջկա մոր մոտ: Երբ խնամախոսը ներս է մտնում՝ աղջկա մայրը աչքով է անում աղջկան, և սա ամենայն եռանդով ավելում է արդեն իսկ ավլած տունը, մի կապերտ և մի ներքնակ ձգում, մի բարձ դնում և սպասում՝ որ մայրը հրավիրի խնամախոսին նստելու: Ապա ջրի ամանը վերցնելով՝ արագությամբ աղբյուրն է սլանում, չուտով դառնում, ջուրը վայր դնում, օջախը վառում: Այս միջոցին խնամախոսը խոսելով նրա մոր հետ՝ աչքի տակով չարունակ աղջկան է դիտում: Վերջապես բուն հարցին անցնելով՝ ասում է. «Եկել եմ ճրագիդդ ճրագ վառեմ»:

Աղջկա մայրը անմիջապես խոսք չի տալիս, այլ խնդրում է թույլ տալ մի քանի օր խորհրդածելու: Անմիջապես կանչվում է աղջկա մորեղբայրը և ծնողների հետ խորհրդածում տալու կամ չտալու մասին: Եթե ուրիշ, ավելի բարձր տեղից աչք ունեն այդ աղջկա վրա՝ սրա ծնողները անմիջապես մի կին են ուղարկում նրանց մոտ ասելու. «Եթե ուզելու եք՝ չտապեցեք, ապա թե ոչ՝ այսինչն արդեն ուզել է, կտանք նրան»: Մի քանի օրից տալիս են իրենց համաձայնությունը. այն ժամանակ միջնորդ կինը նորից է գալիս և ասում. «Ե՞րբ գանք ձեր բարի օջախին մին ճրագ կպցնենք»:

Աղջկա մայրը խոստանում է չուտով պատասխանել:

Պետք է ասել, որ միջնորդ կինը կամ ծերունին ամեն մի գնալիս մի չիշ օղի նվեր է տանում, իսկ աղջկա ծնողները նրան պատվելու համար հաց են տալիս:

Բարգյահ. Հարսնացուի ծնողաց նշանակած երեկոյին փեսացուի հայրը կամ ավագ եղբայրը, մի-երկու բարեկամի հետ գնում է հարսնացուի տուն, տանելով մի խնձոր՝ մեջը մի արծաթ ռուբլանոց և մի մատանի խրած, ինչպես նաև մի կուլա գինի և մի չիչ օղի: Հարսնացուի հայրն էլ մի-երկու մոտիկ բարեկամ է հրավիրած լինում, որոնց հետ խոսակցելով՝ ժամանակ են անց կացնում և վերջիվերջո ընթրում: Ընթրիքի ավարտին փեսացուի հայրը կամ եղբայրը, մի խոսքով՝ տերը,[51] հանում է մատանեկիր խնձորը և տալիս հարսնացուի տիրոջը՝ ասելով. «Համեցիր, Աստված չնորհավոր անի»: Սա ընդունում է և չնորհավորության մի բաժակ գինի խմում: Բոլորը հետևում են նրան: Ապա աղջկա տերը, ուղղելով իր խոսքը տղայի տիրոջը՝ ասում է. «Մի ոչխար կամ խոյ, մի գլուխ չաքար, մի փունջ թեյ, քանի փարչ գինի, հինգ փարչ օղի պիտի բերես, որ մեր բարեկամությունը հաստատվի, քո բարեկամներն էլ, մերն էլ դան իմանան»:

Տղայի տերն այս պահանջների դեմ ոչինչ չի ասում և սիրով պատրաստակամություն է ցույց տալիս. սակայն շատ հազիվ է պատահում, որ լիովին կատարի. միշտ մի քանի բան պակաս է ուղարկում: Պատահում էլ է, որ աղջկա տերը դժգոհ մնալով ուղարկվածից՝ հետ է դարձնում և պահանջում է լրացնել:

Բուն նշանդրեք. *Մի քանի օր հետո փեսացուի տերը կեսօրին մոտ իր տնեցիներից մեկի ձեռքով ուղարկում է հարսնացուի տուն՝ ինչ որ հարսնացուի տերը բարգյահի երեկոյին պահանջել էր: Հետո հրավիրում է իր բարեկամ տղամարդկանց և կանանց: Եվ մինչդեռ թեյ են խմում, հարսնացուի տանից մեկը գալիս է և սրանց բոլորին հրավիրում տուն: Բոլորը վեր են կենում ու գնում: Փեսացուն կամ բոլորովին չի գնում կամ մյուսներից քիչ հետո է գնում և մի առանձին սենյակում մնում:*

Հարսնացուի տերը դիմավորում է փեսացուի հորը և ասում. Ձեր ոտնամուտը բարի լինի:

— Աստված տա միմյանցից ամոթալի չմնանք,- պատասխանում է փեսացուի տերը: Ապա մտնելով տուն՝ ավագության կարգով նստում են. առաջին տեղը պատկանում է քահանային, որ գալիս է փեսացուի կողմից: Անմիջապես մի-մի բաժակ օղի են հրամցնում, որ խմում են երկար բարեմաղթություններ անելով: Ապա մատուցանում են թեյ[52] և հետո էլի օղի: Վերջապես նստում են հաց ուտելու: Այս ժամանակ անչուշտ առաջարկում են «ջուխտ օջախի» կենացը: Ընթրիքից հետո առաջ են բերում փեսացուի տնից ուղարկված մատանին: Քահանան օրհնում է նշանը և տալիս, որ տանեն, տան աղջկան:

---

[51] *Հարսնացուի կամ փեսացուի հայրը, կամ նրա վերջինս մեռած է՝ նրան փոխարինող ավագ որդին, որ տան մեծն է համարվում՝ ժողովրդի կոչումով անվանվում են տեր, այսպես օր. Հարսնացուի տեր, փեսացուի տեր: Երբ մեկը բոլորովին միայնակ է՝ ամուսնանալիս մեկին խնդրում է, որ իրեն «տեր լինի, պսակի»:*

[52] *Թեյի գործածությունը վերջին ժամանակներս է մտել:*

Երբ պատրաստվում են գնալու, խնդրում են «հարսնացուն վեր բերել»: Իսկույն մի հարսի առաջնորդությամբ, երեսը չարղաթով ծածկած, առաջ է գալիս հարսնացուն և հետևելով առաջնորդ հարսին՝ համբուրում է բոլորի ձեռները, ավագության կարգով: Սրանք էլ հարսի բուռը գնում են 20-30 կոպեկ: Այս գումարից մինչև մի ռուբլի տալիս են քահանային, մի քանի կոպեկ էլ առաջ բերող հարսին, իսկ մնացածը՝ հարսնացուի բաժինն է:[53] Սրանից հետո բոլորը չուռտով ցրվում են:

Խոնչաներ. *Նշանադրությունից մինչև պսակը տղայի տնեցիները հարսնացուի տնեցիներին նշանավոր տոներին նվերներ են ուղարկում և փոխադարձաբար նրանցից էլ ստանում: Գարնանը, մայիսին, փեսացուի քույրերը և հարսները տանում են իրենց հետ հարսին զբոսեցնելու:*

Գլխավորապես խոնչաներ ուղարկում են Միջինքին, Զատկին, Նավասարդին, Համբարձմանը և այլն:

Միջինքին *ուղարկված խոնչան լինում է ձվթով պատրաստած մի քանի դույզ գաթա, մեջը ոսպ լցրած պռուզ, կարտոֆիլ, սոխ, մի կուլա գինի և մի չիշ օղի: Բերողին, որ սովորաբար տան փոքրիկներից մեկն է լինում՝ մի դույզ գուլպա են նվեր տալիս և հյուրասիրում են: Ապա փեսայի համար զանազան աղանձներ և հալվա ուղարկելով՝ ճաշի են հրավիրում փեսայի տնեցիներին, բայց ոչ փեսային: Բոլորը գալիս են, տանը մնում է միայն փեսան, որ գնում է բաժանելու իր բաժին աղանձը յուր ընկերների հետ:*

Մի քանի ժամանակից, երբ խոնչային դարձ են ուղարկում՝ հարսնացուն զարդարում է չչի պարանոցը ուլունքներով և չորից մի դեղեցիկ խցան, «բերանկալի» չինում:

Զատկին *փեսացուի տնից մի գառ, մի կարմիր չարղաթ վզին կապած, մի քանի կարմիր ձվերով, մրգերով ու մի չիշ օղիով ուղարկում են հարսնացուի տուն: Վերջինիս հայրը, եթե կամենում է հրավիրել խնամիներին՝ ընդունում է և հրամայում մորթել գառը, իսկ եթե ոչ՝ չնորհակալ լինելով վերադարձնում է գառը. բայց ձվերը, միրգը, օղին և գառի վզին փաթաթած չարղաթը՝ վերջինս հատկապես հարսնացուի համար է ուղարկվում, միշտ պահում են, հետ չեն դարձնում:*

Նավասարդին *փեսացուի տնից հարսնացուին ուղարկում են ընկույզ, մրգեր և մի չարղաթ:*

ՊՍԱԿ

Տուր և առ կամ բաշլըղ-կտրեք. *Հարսանիքից մի քանի շաբաթ առաջ փեսայի տնից իմացնում են հարսնացուի տնեցիներին, թե այսինչ օրը գալու են **բաշլըղը կտրելու**: Սրանք էլ պատրաստություն են տեսնում:*

---

[53] *Այս դրամները հարսը իր «յախին» է կարում (տե՛ս «Զգեստ և զարդ»):*

Որոշյալ օրը փեսայի տերը մի քանի բարեկամներով, 8-10 փարչ գինի, 3 փարչ օղի առած՝ գնում են հարսնացուի տուն, ուր հաց են ուտում և փեսայի տնից բերված գինին ու օղին խմում: Հացից հետո երկու կողմն էլ ընտրում են մոտիկ ազգականներից մի-մի մարդ, որ կոչվում են վաքիլ (հավատարմատար): Ապա սրանք որոշում են, որ տղայի տերը տա աղջկա տիրոջը 10-20 ռուբլի: Այս գումարը կոչվում է ծծագին, այսինքն հարսնացուի մոր, աղջկան տված ծծի (կաթի) գինը, որ փեսացուն վճարում է:[54] Հետո նայելով, թե հարսանիքը «կանչով» պիտի լինի, թե «առանց կանչի»՝ որոշում են, որ եթե կանչով է՝ փեսայի տերը տա հարսի տիրոջը 60-70 փարչ գինի, 12-14 փարչ օղի, 10-20 ֆունտ չաքար, 0,5-1 ֆ. թեյ, մի մսացու եզ: Միևնույն ժամանակ որոշում են հարսնևորների մոտավոր թիվը: Իսկ եթե առանց «կանչի» է՝ պարտավորություն է դրվում փեսայի տիրոջ վրա՝ տալու 15-25 փարչ գինի, 6-7 փարչ օղի, 3-4 փութ միս, 10 ֆ. չաքար, 0,5 ֆ. թեյ:

Պատահում է, որ հավատարմատարները զանազան կետերում չեն համաձայնում, այն ժամանակ մյուս հրավիրյալները միջամտում են: Սակարկությունը երկար տևում է, մինչև որ մի կողմը զիջում է:

Աղջկան օժիտ տալու սովորություն Սիսիանում չկա,[55] այս պատճառով էլ այդ մասին ոչ մի խոսք չի լինում: Ապա որոշելով հարսանիքի օրը՝ հրավիրյալները ցրվում են:

Հարսանիքի չաբթին աղջկա և տղայի տները լավ մաքրում են և այուններ ճակատները ալյուրով խաչաձև նախշում: Ապա հաց են թխում, միայն այստեղ ոչ մի առանձին ծես չեն կատարում, ոչ ալյուրը մաղելիս և ոչ հացը եփելիս, ինչպես լինում է Ջավախքում և Վարանդայում: Միայն այս մի սովորությունն է մնացել, որ հացթուխին նախքան հաց թխելը մի քանի կոպեկ նվեր են տալիս: Չկա նաև հանդիսավոր կերպով հարսին ու փեսային լողացնելու սովորությունը: Սրանք այս օրերում իրենք իրենց են լողանում:

***Խաչեղբայր** կամ **քավոր**. Սիսիանում ևս սովորություն է, որ յուրաքանչյուր գերդաստան ունենում է իր տոհմական քավորը, որ միշտ միևնույն գերդաստանից է լինում, թեև կարող են անձնավորությունները տարբեր լինել:[56] Շատ հազիվ է պատահում և շատ մեծ ամոթ էլ է, որ քավորին փոխեն: Այսպես՝ Բռնակոթում Մելիք-Թանդյանները երկու հարյուր տարի չարունակ քավոր են եղել Տեր-Հովհաննիսյաններին և դեռ այժմ էլ շարունակում են: Քավորը շատ մեծ հարգանք է վայելում ոչ միայն հարսանիքի ժամանակ, այլև ուրիշ դեպքերում: Սանամայրը պատկառելով նրանից՝ երբեք հետը չի խոսում, ոչ էլ նրանց դռնից անց կենում:*

---

[54] Այս սովորությունը մնացորդ է գնմամբ ամուսնության:
[55] Բացի տաթևցիներից:
[56] Խաչեղբայրը լինում է նաև կնքահայր:

Հարսանիքի պատրաստվելիս՝ նախ և առաջ քավորին են հրավիրում, տանելով նրան մի չիշ օղի, մի եփած հավ և երբեմն, եթե նա սգավոր է՝ մի որևէ ընծա: Բացի քավորից՝ պսակի ժամանակ թագավորը իր ընկեր երիտասարդներից մի փեսաղբեր և մի քանի մակարներ է ընտրում, առաջինը միշտ իր կողքից գնալու, իսկ մյուսները իրեն ուղեկցելու և իր հետ ուրախություն անելու նպատակով:

Գինեթափեք. *Հինգշաբթի օրը փեսայի տերը, բոլոր պատրաստությունները տեսնելուց հետո, հրավիրում է իր և հարսի տղամարդ բարեկամներին և թեյով ու ընթրիքով հյուրասիրում նրանց: Ընթրիքին առատությամբ բաշխում են գինի: Այս հրավերը այժմ էլ կոչվում է «գինեթափեք», որովհետև սա մնացորդ է այն սովորության, որ հնում բարեկամները հավաքվում էին գինին տակերից փարչերի մեջ ածելու: Ինչպիսի՞ գովասանքներով բաց էին անում տակերի բերանը և ինչպիսի՞ բարեմաղթություններով կոնծում: Նույն երեկոյին փեսայի տերը քահանային հոգոց է ասել տալիս իրենց բոլոր հին և նոր ննջեցյալների համար: Քահանան հոգոցը ավարտելուց հետո դառնում է ժամավորներին ու ասում. «Այս-ինչը հարսանիք է անելու. ասացեք Աստված հոգիքը լուսավորե սրա հին և նոր ննջեցելոց և չնորհավոր անե այս ուրախությունը»: Հետո դառնալով տղատիրոջն՝ ասում է. «Աչքդ լուս լինի, Աստված արժանացնի թագ ու պսակին»:*

Հանդերձօրհնեք. *Ուրբաթ օրը առավոտյան փեսայի տերը հրավիրում է քահանային և իր բարեկամներին, մի-մի բաժակ օղի է տալիս և ափսեի մեջ ածած քիշմիշ ու մրգեղեն հրամցնում: Ապա թագվորը քահանայի և քավորի հետ գնում է նոր ննջեցյալ ունեցող բարեկամների տները, հոգոց է ասել տալիս, և մի-մի չիշ օղի տալով յուրաքանչյուր տան՝ հրավիրում հարսանիքի: Սգավորներն էլ սրանց օղի են խմեցնում, ոմանք էլ՝ հաց ուտեցնում:*

Երբ բոլոր սգավոր բարեկամներին հրավիրելուց հետո թագվորը վերադառնում է տուն՝ անմիջապես կանչում են ղավալներին՝ տեղական երաժիշտներին և 4-10 երիտասարդների, որոնք մատուռակի պաշտոն պիտի կատարեն ճաշի ժամանակ: Սրանք թուրքերեն բառով կոչվում են «սաղի»: Երաժիշտներին հաց են ուտեցնում և գինի խմեցնում, ապա տանում նրանց մի բարձր կտուրի վրա կանգնեցնում և հրամայում, որ «Քյորօղլի» եղանակը ածեն: Սրանով տղայի տերը բոլոր գյուղացիներին հարսանիք է հրավիրում: Բացի սրանից, նա առանձին երիտասարդներ ու երեխաներ է ուղարկում գյուղի մեջ շրջելու և բոլորին, առանց խտրության, հրավիրելու: Գյուղացի տղամարդիկ հետզհետե հավաքվում են և մի քանի շարքերով նստում տան մեջ: Ամեն մի եկողի անմիջապես մի գինու բաժակով օղի են տալիս, որ բարեմաղթություններ անելով խմում է: Երբ բոլորը հավաքված են լինում՝ ղավալները գալիս են տուն և այստեղ են չարունակում ածել: Կեսօրին մոտ սաղիները սփռոցներ են ձգում և հաց դնում: Ամեն մի մարդ 2-4 հաց վերցնում՝ դնում է առաջը: Հետո սաղիները բերում են ափսեների մեջ

դրած բողկ, բակլա, կողքին մի քիչ կարտոֆիլ: Անմիջապես քահանան, որ ամենապատվավոր տեղն է լինում նստած՝ օրհնում է սեղանը և ընդունելով սաղիի ձեռից մի գինու բաժակ օղի՝ «Աստված բոլոր ննջեցյալների հոգիքը լուսավորացնի» ասում և խմում: Նրան հետևում են բոլոր հարանեորները: Սաղիները մի ձեռքին փարչով գինի, մյուսին երկու բաժակ՝ օղի կամ գինի են տալիս: Մի քիչ ուտելուց հետո ընտրում են մի սեղանապետ (թամադա), որի հրամաններին պարտավոր են անպայման բոլորը հնազանդվել: Եվ առաջին բաժակը նրա կենացն են խմում, «բարով կառավարես» մաղթելով:

Ընտրվածը, ընդունելով սեղանապետության պաշտոնը՝ բարձրացնում է բաժակը և առաջարկում. «Ջուխտ օջաղին կենացը, Աստված էն օջաղն էս օջաղին խեր տա» (բարի տա). բոլորը բաժակները բարձրացնելով միևնույնը կրկնում են և խմում: Այս միջոցին զավալներն ամենայն եռանդով ածում են: Հազիվ բոլորը բաժակները դատարկած են լինում՝ երբ սեղանապետի ձայնը կրկին որոտում է. «Թագավորացուի ու հարանացուի կենացը. Աստված արժանացնի թագ ու պսակին»: Չորրորդ բաժակը դատարկվում է բոլոր հասարակության կենացը: Այս միջոցին մատուցվում է ոսպով չորվա: Հետո առաջարկվում են հետևյալ երեք կենացները. կաթուղիկոսի և ս. Էջմիածնի, կայսեր և հայ գինվորների[57] և ի վերջո հայ օտարականների: Այս յոթ կենացները պարտադիր են և առաջարկելու կարգն էլ խստությամբ պահպանվում է: Սրանցից հետո արդեն եթե կամենում են՝ առաջարկում են զանազան կենացներ:

Ճաշն ավարտելիս քահանան նորից օրհնում է սեղանը. իսկույն բոլորը սեղմում են ոչ միայն տանտիրոջ, այլև բոլոր հրավիրյալների ձեռքերը[58] և միմյանց չնորհակալություն հայտնում: Իսկույն զավալները դուրս են գալիս և դռան առաջ կանգնած՝ սկսում են ածել: Հրավիրյալները ցրվում են, ոմանք իրենց տները, ոմանք էլ մի մտերիմ բարեկամի մոտ, միասին թեյ խմելու: Հրավիրյալների ցրվելուց հետո սաղիներն ու երիտասարդներն են հացի նստում: Աղջիկներն ու հարսները ներկա են լինում սրանց ուրախությանը: Պարը և ուրախությունը գնալով սաստկանում է:

Երեկոյան դեմ հարսնացուի տնից 2-4 մարդ գալիս են փեսացուի տուն և խնդրում «հարկը», այսինքն այն՝ ինչ որ որոշել են «տուրևառի» ժամանակ: Շատ անգամ պատահում է, որ փեսացուի տերը լիովին չի տալիս, ինչ որ այն օրն որոշվել է, և կամ վատը, հասարակն է ուղարկում: Այսպիսի դեպքերում պատահում է, որ հարսնացուի տերն առանց դժգոհության ընդունում է. բայց նույնպես պատահում է, որ ոչ միայն իր դժգոհությունն է հայտնում, այլև իրերը հետ է ուղարկում՝ պահանջելով լավն ուղարկել կամ լրացնել:

---

[57] Հայ զինվորների կենացը սկսել են խմել վերջին ժամանակներում, երբ զինվորագրությունը մուտք գործեց հայերի մեջ, իսկ կայսեր կենացը խմում են ավելի վաղ ժամանակից:
[58] Այս սովորությունը նորամուտ է:

Հարկը տանելուց հետո երիտասարդները քավորի և թագավորի հետ զավալների առաջնորդությամբ մի մսացու եզ են տանում հարսնացուի տունը: Եզի հետևից դնում է մսագործը, դանակը ձեռին բռնած: Պատահում է, որ եզի վիզը զարդարում են մի չարոց խնձորներով: Հարսնացուի դռանը բավականաչափ ածելուց հետո՝ մսագործը վայր է գլորում եզը և քավորից մի ռուբլի նվեր ստանալով՝ մորթում է: Կողպեք կողպելու և կամ թիկ հանդուստելու սովորությունը, որ ընդհանրացած է Վարանդայում և Ջավախքում՝ այստեղ չկա: Այս եզի կեսը տարվում է փեսացուի տուն:

Երեկոյան ժամերգությունից հետո քահանան փեսացուի բարեկամների հետ նորից գալիս է տղայի տուն: Այստեղ հարսի հանդերձը, որ քթեթ է կոչվում, մի սկուտեղի վրա դրած առաջ են բերում: Այս հանդերձը, որ փեսացուի տերն է պատրաստել տալիս և ընծայում հարսնացուին՝ բաղկանում է հետևյալ կտորներից. մի քուրք, մի շապիկ, մի գոտի, մի չարղաթ և մի գույդ կոշիկ: Սկուտեղի վրա դրած է լինում նաև մի գլուխ շաքար և մի ֆունտ թեյ: Երբ սկուտեղը դնում են քահանայի առաջ՝ թագվորը վերցնում է իր գլխարկը և դնում վրան, քավորն էլ իր թուրը պատյանով երկարացնում է դդակի կողքին: Ապա թագվորը, քավորը և փեսաղբերը չոքում են սկուտեղի առաջ և այսպես սպասում, մինչև որ քահանան օրհնում է հանդերձը: Ապա թագվորը վերցնում է իր գլխարկը, ծածկում, իսկ քավորը առնում է իր սուրը և ձեռքում բռնում: Ափսեն էլ վերցնում է քավորի մի ազգականուհին (հարսը կամ քույրը):

Սափրելու ծես. Հանդերձօրհնեքից հետո գալիս է սափրիչը թագվորի մորուքը սափրելու: Թագվորը հանդիսավոր կերպով բազմում է մի աթոռի վրա, տան մեջտեղը. մակարները մոմեր վառած շրջապատում են նրան: Քավորը մի մոմ ձեռին՝ կանգնում է թագվորի կողքին և ալ բուի մեջ դինի ածում: Սափրիչը մատը թաթախելով այս դինու մեջ՝ քսում է թագվորի մորուքին և ապա, նախ քավորից և հետո մակարներից մի քանի կոպեկներ առնելով՝ սկսում է սափրել: Յուրաքանչյուր նվեր տվող հրամայում է իր տված նվերի համեմատ սափրել և սա էլ, եթե նվերը մեծ է՝ շատ տեղ է սափրում, իսկ եթե փոքր՝ քիչ:

Սափրելու ծեսը կատարելուց հետո մակարները վառում են երեք ջահ (մաշալա), հարսի հանդերձի սկուտեղը դնում քավորի, հարսի կամ քրոջ գլխին և զավալների առաջնորդությամբ, պարելով ու երգելով, ահագին աղմուկով գնում են հարսի տուն: Առաջները հինա էլ էին տանում, մի հարսի կամ աղջկա գլխի դնելով, բայց այժմ այս սովորությունը վերացել է: Հարսնացուի տնեցիները ընդառաջ են ելնում սրանց, մի գույդ դուլպա կամ մի յայլուխ նվեր տալիս սկուտեղը բերողին և վերցնում սկուտեղը: Ապա բոլորին ներս հրավիրում:

Պսակ գնալ. Ուրբաթ երեկոյան թագվորի և հարսի բոլոր բարեկամները նորից ժողովվում են հարսի տունը և ուրախություն են անում մինչև լույս,

թեյ խմում, ընթրում, պարում, երգում: Լուսաբացին հրավիրում են քահանային պսակ գնալու: Սա գալիս է և այստեղ կրկին օրհնում տղայի տանը օրհնած հարսի հանդերձը և հետո մաշտոցը դնում սկուտեղի վրա, որ հարսնևորները համբուրեն և խաչհամբույր ձգեն: Ապա երկու հարս վերցնում են հանդերձը և տանում տան-օթաղը հարսին հագցնում: Երբ ավարտում են՝ ներս են հրավիրում քավորին, որ հարսի դռտին կապի: Սա նվեր տալով հարսի չորերը հագցնող հարսներին՝ վերցնում է դռտին, փաթաթում և երեք անգամ հարսի գլխովը ձգում ու ապա դեռնից վերցնում ասելով. «Աստուած տայ տղաբեր սնամեր իննես, ոտակալուքը խէր ընի» և հետո կապում:

Ապա մի տղամարդ, որի կինը չերեր չէ, բռնում է հարսի ձեռից և տան օթաղից բերում տուն: Իսկույն քահանան կանգնեցնում է նրան թագվորի մոտ և սկսում է պսակի կարգը կատարել: Երբ որոշյալ մասն ավարտում է՝ բոլորը չարժվում են դեպի եկեղեցի. հարս ու թագվոր բռնում են իրար ձեռք, թագվորի աջ կողմից գնում է քավորը, իսկ ձախից՝ փեսաղբերը. հարսի աջ կողմից հարսնաքույրը, իսկ ձախից՝ հարսնաղբերը.[59] Մակարնները շրջապատում են սրանց, զինված հրացաններով և ատրճանակներով: Ճանապարհին սրանք երգում, պարում, խմում և հրացան ու ատրճանակ են արձակում: Ղավալները հանդիսավոր գնացքի առաջն ընկած ածում են: Բոլոր գյուղացիները միանում են գնացքին: Վերջապես հասնում են եկեղեցի. քավորը փող է տալիս ժամկոչին, որ եկեղեցու դուռը բանա: Բազմութեան մեծ մասը մտնում է ներս, իսկ փոքրագույն մասը, ղավալների հետ մնում դրսում: Քահանան խոստովանեցնում է հարս ու թագվորին, հարցնում է նրանց փոխադարձ համաձայնութեունը, ապա սկսում է խորհուրդը կատարել: Թագավորը և թագուհին գլուխ գլխի տված կանգնում են, քավորը մի ձեռով թուրը պատյանում, մյուսով՝ խաչն ու ավետարանը, մի թաշկինակի մեջ փաթաթած՝ բռնում կամ ուղղակի դնում է նրանց գլխներին: Եվ երբ քահանան չոքեցնում է պսակվող զույգին ու իր շուրջառը նրանց վրա է ձգում՝ թագվորը ծածուկ մի քանի արծաթեա դրամներ է տալիս թագուհուն: Երբ ավարտվում է պսակի խորհուրդը՝ քահանան վրայից շուրջառը հետ առնում՝ թագվորի վրա է ձգում և ավետարանը տալիս է ձեռքը, հարսին էլ կանգնեցնում նրա կողքին, խաչը ձեռքը տալիս և հրավիրում է հարսնևորներին, որ գան խաչն ու ավետարանը համբուրեն և խաչհամբույր ձգեն: Այստեղ նա ամեն միջոց գործ է դնում, որ բոլորն էլ խաչհամբույր ձգեն: Վերջապես չարժվում են դեպի տուն. ղավալները դարձյալ առաջ են գնում, մակարնները պարելով, երգելով և հրացաններ արձակելով ուղեկցում են թագվորին, որի փեչից բռնած՝ ծանր քայլերով հետևում է նրան հարսը: Այս նշանակում է, որ նա այլևս թագվորին հավասար չէ, այլ նրան ստորադրված և պարտավորված հետևելու նրան: Վերադարձին բարե-

[59] Հարսին ընկերակցում են հարսի քույրը և եղբայրը և կամ սրանց փոխարեն՝ ուրիշ մոտիկ ազգականներ, որոնք կոչվում են հարսնաքուր և հարսնաղբեր:

կամ տների առջևից անցնելիս՝ տնեցիները «սեղան են դուրս բերում». եղ ու մեղր, եղաձու, հալվա, գինի, օղի են բերում, մի երկու պատառ հրամցնում թագվորին, իսկ մնացածը բաժանում հարսնևորներին:

Գնացքը ծանր քայլերով գալիս հասցնում է դարձյալ նորահարսի տուն: Այստեղ էլ սեղան են դուրս բերում, գինի, օղի խմեցնում հարսնևորներին և ներս հրավիրում: Հարսը էլի գնում է տան-օթախը, իսկ թագվորը կամ խառնվում հարսնևորներին և կամ սաղինների հետ միասին ծառայում սեղանին, որ չուտով ձգվում է: Մատուցանում են բուղլամա[60] և բոզբաչ: Ճաշը կառավարում է թագվորի տանը հանդերձօրհնեքի ժամանակ ընտրված թամադան, որ առաջարկում է վերև հիշած յոթ կենացները: Երբ ճաշը ավարտվում է, սեղանապետի կարգադրությամբ քահանային մի «օրհնանքաթաս» են տալիս: Քահանան խմում է այս գինու բաժակն էլ և օրհնում սեղանը, որից հետո հարսնևորները ցրվում են իրենց տները կամ գնում են մոտիկ բարեկամի մոտ քեֆը շարունակելու: Հետո հացի են նստում սաղինները փեսայի հետ միասին, ինչպես և հարսը առանձին իր մի քանի ընկերուհիների հետ: Հաց են ուտում նաև հրավիրյալ կանայք, առանձին նստած:

Հացից հետո մակարները դուրս են գալիս, ղավալները ածել տալիս և պարում, դոռեմարտում, երգում: Սա տևում է մինչև երեկո, երբ թագվորը մտերիմներն առած դառնում է հարսի տուն, թեյ խմում և հաց ուտում: Ուշ գիշեր մակարները ցրվում են, թողնելով թագվորին իր քավորի և մի քանի մտերիմների հետ միայնակ: Այս ժամանակ զոքանչը փլավ է բերում իր փեսային, որ բոլորովին ազատ ուտում է իր քավորի և մտերիմների հետ: Այս փլավը կոչվում է «չնթռնահաց»:

Հարսը տանել. Կիրակի առավոտյան վաղ բոլոր հարսնևորները նորից հավաքվում են հարսի հոր տունը, նախաճաշիկ անում և ապա պատրաստվում հարսին տանելու թագվորի տուն: Երբ հարսին տան-օթախից տուն են բերում՝ հայրը բռնում է նրա ձեռից և տալով թագվորի հորը, ասում. «Ցվա քու որդուտ, Աստված խեր տա, բարով վայելվին. միայն թե ամանաթս լավ պահպանես, պատվով պահես, ընդունես»:

— Շեն մնաս,- պատասխանում է թագվորի հայրը,- հարկ է, այսուհետև մեր որդին է, աչքի լուսի պես կը պահպանենք:

Հարսը խոնարհվում, համբուրում է իր հոր ու մոր ձեռքը և ապա իրենց թոնրի շուրթը: Այս ժամանակ թագվորը համբուրելով բոլոր ծերունի հարսնևորների ձեռները և մյուսների հետ ձեռք տալով՝ գալիս է և հարսի մոտ կանգնում: Ղավալներն ու մակարները ձայները ձգում են և պարով, երգով, հրացանի թնդյունով տանում հարս ու թագվորին վերջինիս տուն: Ճանապարհին պատահող տներից «սեղաններ» են դուրս բերվում:

---

[60] Մանր կտրատած միսը կոտորած սոխի, ալուչայի, կարմիր պղպեղի և դդմի հետ չերտ-չերտ դարսում են մի կաթսայում, մի քիչ ջուր ածում և հետո կաթսայի բերանը ծածկում ու խմորով փակում, դոլորշին դուրս գալու համար միայն մի փոքրիկ բացվածք թողնելով: Ապա կաթսան իջեցնում են թոնիրը, ուր կամաց-կամաց եփվում է:

Երբ հասնում են թագվորի տանը՝ մեկը կտուրն է բարձրանում և այնտեղից ընկուզ, կաղին (տկողին), չագանակ, երբեմն էլ գազար շաղ տալիս: Հարսնևորները իրար են խառնվում և միմյանցից խլխլում: Դուրս է գալիս սկեսուրը, երեք պտույտ անում հարս ու թագվորի շուրջը, ապա համբուրում թագվորին ու թագուհուն և ներս հրավիրում: Եվ երբ տեսնում է, որ հարսը չի ուզում ներս մտնել՝ մի ընծա է տալիս և տանում նրան տանօթախում առանձնացնում: Մինչդեռ հարսնևորները ներս են մտնում և տանը ծալապատիկ նստոտում, սկեսուրը մի տղա դրկած՝ տանում է և հարսի գլուխը տալիս, որպեսզի սա տղա (արու) բերի:

Անմիջապես սփռոցները ձգում են և բոլոր տղամարդ հարսնևորներին հաց տալիս: Միևնույն թամադայի առաջարկությամբ խմում են միևնույն յոթը կենացները: Տղամարդկանցից հետո հաց են տալիս կանանց և ծառայող երիտասարդներին: Ապա բոլորը ցրվում են տները:

Կանչ. *Երկուշաբթի առավոտ ղավալները նորից հնչում են գյուղի մի բարձր տան կտրից և հրավիրում գյուղացիներին հարսնքատուն: Բոլորն շտապում են գալու, որպեսզի պատվական խաչն[61] ուտեն: Խաչը ուտելուց հետո հարսնևորները ցրվում են և դրամի պատրաստություն տեսնում: Կեսօրին մոտ նորից հավաքվում են և ճաշի նստում: Մատուցում են բուղլամա և յայնի: Նույն կերպ, նույն յոթը կենացները դարձյալ խմում են:*

Ճաշից հետո սկսվում է կանչը. թմբկահարը դնում է թմբուկը թագվորի հոր (կամ տիրոջ) առաջ և մոտը կանգնում: Ապա մոտի մարդիկ հարցնում են թագվորի հորը, թե ո՞վ է նրա առաջին բարեկամը: Սա էլ անվանում է մեկին. այն ժամանակ այս վերջինս մի քանի ռուբլի տալիս է թմբկահարին: Մոտ նստողները նայում են, և եթե քիչ է լինում՝ ստիպում են, որ ավելացնի: Թմբկահարը ստանալով փողը՝ բարձրացնում է վերև, ցույց տալիս բոլորին և դնելով թմբուկի վրա՝ բարձր ձայնով գոչում է. «Լսեցե՞ք, ա՛յ ջամահատ (ժողովուրդ), թագվորի այսինչ բարեկամը կանչեց թագվորի սերին այսքա՞ն (20 կ.–1 մանեթ) իրեն ազատին (ոչ ամուսնացած) էլ փոխ իրի տունը չե՞ն, չեն կենա»:

Բոլորը կրկնում են. «Շե՞ն կենա»: Ապա թագվորի հայրը անվանում է իր երկրորդ բարեկամին, որ և տալիս է իր նվերը: Այսպես շարունակվում է՝ մինչև որ բոլոր ներկա եղողները (և մինչև անգամ բացակաները՝ մի որևէ մարդու միջոցով) նվերներ են տալիս: Երբ ավարտում են՝ թմբուկի վրայից վերցնում են բոլոր դրամը, հաշվում և տալիս թագվորի հորը: Այս կանչից գոյանում է 100-300 ռուբլի, որ փոխարինում է նրա արած գրեթե բոլոր ծախսերը: Միայն թե պարտավորություն է դրված, որ այս գերդաստանն էլ

---

[61] *Սա պատրաստում են եղան ոտներից և լավ մաքրած ստամոքսից ու աղիքներից, մի ամբողջ դիշեր եփելով, այնպես, որ ոսկրահան է լինում: Սա շատ համեղ է և բոլոր գյուղացիների ախորժած կերակուրը:*

ժամանակի ընթացքում հետզհետե վերադարձնի այդ գումարը ավողներին, մասնակցելով նրանց կանչերին:

Կանչից հետո սեղանին ծառայող մարդիկն էլ հաց են ուտում և բոլորը ցրվում են, բացի մակարներից: Այս ժամանակ մոտիկ բարեկամները մակարներին «բաղ» են բերում: «Բաղը» լինում է մի ափսեի մեջ լցրած չամիչ, փչատ, մրգեղեն, խնձոր՝ վրան մոմ վառած, գաթա, եփած հավ, զանազան գույնի ներկած հավկիթներ, մարդու և այլ ձևի յուղի հացեր և այլն: Մակարները մի առ մի բոլորին այս բաղերը ցույց տալով՝ բարձր կանչում են, թե ով բերից, և իրենց շնորհակալությունը հայտնում «չէ՞ն կենայ, չէ՞ն» բղավելով: Մինչև կեսգիշեր և երբեմն ավելի ուշ այս մակարները զավալների ներդաշնակությամբ պարում են, երգում, հանաքներ անում, «բաղերը» ուտում: Վերջապես երբ կամենում են ցրվել՝ ավելացած «բաղերը» բաժանում են իրենց մեջ, մինչդեռ առաջները մինը վերցնում էր և ցրիվ տալիս սրանց մեջ: Սրանք էլ ահագին աղմուկով, միմյանց հրելով, խփելով հավաքում և միմյանց ձեռքից խլելում էին:

Հետևյալ օրը, եթե թագվորի հայրը գոհ է կանչից դույացած գումարից՝ հրավիրում է կանչին մասնակցողներին և ճաշ տալիս, իսկ եթե դժգոհ է՝ «տէրը չէ լինում», անուշադիր է դառնում:

Թագվերացում. Երեքշաբթի օրը, երբ հարսնևորները կրկին հավաքվում են հաց ուտելու՝ հրավիրվում է նաև քահանան, որպեսզի թագը վերցնի: Ախալթյան գյուղում նախքան թագի վերացումը հարսը «փսորի է կանգնում»՝ վերցնում է ավելը, տան մեջ մի քիչ ավլում և ապա մի ափսե ձեռին՝ աղբի կույտի մոտ կանգնում: Տնեցիները և բարեկամները դրամներ են ձգում ափսեի մեջ:

Թագ վերցնելիս զգուշանում են, որ չորեքշաբթի, ուրբաթ կամ կիրակի չլինի: Մինչդեռ քահանան կատարում է արարողությունը՝ քավորը սուրն ու պատյանը խաչաձև բռնում է հարս ու թագվորի գլխին: Առաջները սովորություն է եղել, որ հարս ու փեսին մեջք-մեջքի տված չոքեցրել են, բայց այժմ այդ սովորությունը վերացել է:

Նույն երեկոյին առագաստ են մտնում: Անկողինը ձգում են տան օթախում և մոտը դնում մեղր, հավ, դինի: Սովորաբար սավան ձգում են. սակայն ապացույց չեն պահանջում:

Հաջորդ, չորեքշաբթի օրը, հարսը վաղ վեր է կենում, ջուր տաքացնում և տնեցիների ոտները լվանում, զգուշանալով նախ ձախը չլվանալու, որպեսզի ձախորդությունը չպատի: 5-10 կոպեկ նվերներ են ձգվում տաշտի մեջ:

Մի քանի օրից հետո հարսի տանից ուղարկում են նրա հին չորերը, որ նա ստանում է՝ նախապես մի զույգ գուլպա նվեր տալով բերողին:

ՏԱՒՍԸ

Սովորաբար աղջկա կողմից շատ քիչ ծախս է լինում, իսկ միջակ դրության տղայի կողմից մոտավորապես այսչափ.

ա) Նշանդրեքին

Մի թոխլի[62]	*2-3 ռ.*
Մի խոյ	*5-6 ռ.*
Գինի և օղի	*3-6 ռ.*
Դարձյալ գինի	*5-6 ռ.*
Դարձյալ օղի	*4-5 ռ.*
Մի գլուխ շաքար	*4-5 ռ.*
Մի ֆունտ թեյ	*1 ռ.*
Ջամիչ և չոր մրգեղեն	*2-3 ռ.*
Մատանի	*5-10 ռ.*
Երկու յախա[63]	*6-8 ռ.*
Մի դոշլուղ[64]	*10-15 ռ.*
Մի արծաթ մանեթ	*1 ռ.*
Քահանային	*1 ռ.*
	49-70 ռ.

բ) Տարվա ընթացքում

Հարսնացուին նվիրներ	*10-15 ռ.*

գ) Հարսանիքին

Գինի	*30-60 ռ.*[65]
Օղի	*20-50 ռ.*
Երեք եզ	*40-45 ռ.*
Քահանային	*2-3 ռ.*
Եկեղեցուն	*1 ռ.*
Աթոռահաս	*5-8 ռ.*
Շաքար, թեյ	*5-7 ռ.*
Մի մոթալ պանիր	*4-6 ռ.*
Հարսին զգեստ	*30-70 ռ.*
Ծծագին	*10-20 ռ.*
Դափ ու զուռնու	*5-7 ռ.*
Հացի	*10-15 ռ.*
Մանր ծախսեր	*10-15 ռ.172-322 ռ.*
Ընդամենը	*231-392 ռ.*

---

[62] *Կես տարեկան գառ:*

[63] *Տե՛ս «Զգեստ և զարդ»:*

[64] *Տե՛ս «Զգեստ և զարդ»:*

[65] *Կախված է հարսնեւորների թվից:*

Այս է ամուսնության բոլոր ծախսը միջակ կարողություն ունեցող գերդաստանի համար: Թեև գումարը մեծ է երևում՝ բայց «կանչի» միջոցով հարևանները վճարում են գրեթե բոլորը:

ՏՂԱԲԵՐՔ ԵՎ ԿՆՈՒՆՔ

Առանց որևէ նախապդուշության և կամ առանց ազատվելու աշխատանքի ծանր լծից՝ անցնում են սիսիանցի կնոջ հղիության օրերը: Գալիս են երկունքի ժամերը. կանչվում է տատմերը (մանկաբարձուհի), որ մի աթոռ է դնում, վրան չոր ճգում, ինքը վրան բազմում ու ծննդկանին նստեցնում իր ծնկների վրա: Ապա ամենայն ուժով սեղմում է ծննդկանի հետույքը, և երբ երեխան ծնվում է՝ ինքը բարձրանում է տեղից, ծննդկանին նստեցնում իր տեղը և առանց մոռանալու որևէ նվեր ստանալ տնեցիներից՝ կտրում է երեխայի պորտը: Անմիջապես մի փոքրիկ թաղիք են ճգում, որի առաջ տաք մոխիր ցանում և ծննդկանին վրան պառկեցնում են այնպես, որ ներքին մասերը մոխիրի վրա դան. չուտ-չուտ էլ մոխիրը նորոգում են: Զեն մոռանում նաև ծննդկանի շուրջը չամփուրով գիծ քաշել, որպեսզի չարերը չմոտենան:

Եթե ծննդկանը ուշաթափվում է՝ հրացան են արձակում, «Մայրամ, Մայրամ» են գոչում, երեսին ջուր սրսկում: Երբ ուշքի է գալիս՝ ղազիլ (այծի մազից գործած պարան) են տալիս ձեռքը, որ քանդի:

Եթե տղաբերքը դժվար է լինում՝ կանչում են մեկին, որ Արաքսը անց է կացել, որպեսզի սա իր փեչով ջուր տա ծննդկանին: Եվ կամ այծի մազ են եփում և քիչ հովացնելուց հետո քաշում ծննդկանի փորին:

Եթե երեխան չնչասպառ է ծնվում՝ նրան դնում են տաք ջրի մեջ և պորտը ոլորում, որ կենդանանա:

Նորածնին անմիջապես լողացնում են, վրան աղ ցանում և ապա փաթաթած՝ տատմերը տանում կտրովը պտույտ է տալիս, դարձնում դեպի արևելք, աղոթում և բերում ներս: Ապա մորն է լողացնում, պառկեցնում և երեխան դնում նրա աջ կողմը:

Այս ծանր գործից ազատվելուց հետո տատմերը վերցնում է պորտը և տանում՝ եթե նորածինը արու է՝ պորտը գոմն է ճգում, որպեսզի երեխան անասնասիրահ լինի, իսկ եթե աղջիկ՝ տան անկյունը, որպեսզի ամոթխած և տնտես դառնա: Ապա վազում է տնեցիներին և բարեկամներին «աչքալուսանք», որոնցից ստանում է 10-20 կոպեկ նվեր: Արու զավակ լինելիս ուրախությունը անհամեմատ մեծ է լինում. մինչդեռ աղջիկը, մանավանդ երբ արդեն մի քանիսը կան՝ բավական տխրություն է պատճառում:

Սանամայրը, ազգականները, մոտիկ հարևանները, աչքալուսանքն ընդունելով՝ չտապում են գալ տեսնելու ծննդկանին և իրենց հետ բերում են «ծննդկագավաթ», որ բաղկանում է կամ ձվաձեղից և կամ չիրթից:[66]

Ծննդկագավաթ բերողն ասում է. «Աչքդ լիս, Աստված մեջքդ կանանչ պահի, համաչա (միշտ) տղա բերես»: Իսկ եթե աղջիկ է՝ «Աստված գլխին էլ տղա տա»:

Ծննդկանին առաջին օրը տալիս են դանճաֆիլով (կինամոն) կամ սև պղպեղով թեյ և ձվածեղ, իսկ նորածնին ոմանք այդ օրը բոլորովին չեն կերակրում, որպեսզի համբերող լինի: Եվ որովհետև ծննդկանին անսուրբ են համարում՝ ուստի նրա բաժակը, ամանը և դգալը որոշում և առանձին են պահում և չեն թույլ տալիս, որ ինքը իր ձեռով որևէ բան վերցնի: Նա ինքն էլ երբեք ոչինչ չի վերցնի և երկար քաղցած կմնա, մինչև որ մեկը նրան բան տա: Տունը սրբելու համար քահանային կանչում են, որ «փարատեհ», իսկ ամանները առանձին պահում, որ մեռոնաջրով լվանան, սրբեն: Ծննդկանի գլխի տակ էլ Նարեկ, Սաղմոս, սուբ, դաշույն, չամփուր են դնում, որպեսզի չարերը սրանցից երկյուղ կրելով՝ չմոտենան ծննդկանին:

Երեխային տատմերը ամեն օր լողացնում է: Դնելով մի ձեռը երեխայի գլխին, իսկ մյուսի ցուցամատը նրա բերանը՝ երեք անգամ կոխում է երեխային ջուրը և ասում.

Երկընավըղիկ,
Թափ տա ջրիկ,
Վերցա մսիկ:

Երեք օրից հետո էլ, մի երեքշաբթի, հինգշաբթի և կամ չաբաթ օր, տատմերը գալիս և ծննդկանին է լողացնում:

Մկրտությունը կատարվում է երեք կամ չորս օրից հետո: Նախընթաց օրը տատմերը գնում հրավիրում է քավորին, տանելով մի երկու հաց, մի ղույդ գաթա, կես շիշ օղի, երբեմն էլ մի խաշած հավ: Սա էլ հինգ ֆունտաչափ աղ կամ ալյուր, ձավար, բրինձ և կամ բուրդ է տալիս տատմերին նվեր: Հետո բերում է կես արշին կտավ, որ կոչվում է կնկուղ, և անց է կացնում երեխայի գլուխը, մի սավան, այսինքն մի արշին կարմիր չիթ, որ երեխայի վրան ձգեն եկեղեցուց տուն բերելիս, և նշանակյալ ժամանակին գնում է եկեղեցի: Տատմերն էլ մի քանի մոտիկ ազգականների հետ երեխան է բերում: Հորը արգիլվում է այս միջոցին եկեղեցի գալ: Քահանան տասը րոպեում մկրտում է երեխային և «լույս ի լուսո» չարականն ասելով՝ բերում տուն:Քահանաների կարգադրությամբ ծննդկանը վեր է կենում իր տեղից, կանգնում, կռանում համբուրում քավորի ոտը և ապա առնում երեխային ու նստում: Այստեղ հրավիրված են լինում տղամարդ և կին ազգա-

---

[66] Այս կերակուրը պատրաստում են այսպես. տաք ջրի մեջ ալյուր են լցնում և կրակի վրա դրած խառնում, մինչև որ պնդանում և կարմրում է. հետո ածում են մի ափսեի մեջ, մի փոս անում մեջտեղում և յուղ ածում. շուրջն էլ շաքարի մանրուք ցանում:

կաններ, որոնք չուտով ճաշի են նստում: Նախ ճաշում են տղամարդիկ, հետո կանայք, նույնպես առանձին: Ճաշին մատուցանում են 2-3 տեսակ պատահական կերակուրներ, որովհետև կնունքի հատուկ կերակուրներ որոշված չեն:

Երեք օրից հետո տատմերը նորից է գալիս և երեխային մեռոնից հանում: Այս անգամ երեխային լվանում են մի մաքուր ամանի մեջ, սրբում են մոր ստինքները, լվանում կնկուղը և ջուրը ածում են կամ թոնրի և կամ գետի մեջ:

Հինգ-վեց օրից հետո ծննդկանը վեր է կենում, առնում է ձեռքը մի թոնրի շիշ (երկաթի ձող) և «Հիսուս Քրիստոս» ասելով դուրս գալիս:

Այնուհետև մայրը ինքն է խնամում և լողացնում երեխային, ուստի և ճանապարհ են ձգում տատմերին, տալով՝ հնգական ֆունտ աղ և ալյուր, 1-2 ֆ. ձավար, 0,5 ֆ. բրինձ և դուցե մի քանի կոպեկ. այս բոլորը նախապես պատրաստում են ծննդկանի գլխով:

Եթե երեխան կոխվում է, այսինքն լղարում և նվազում է՝ առողջացնելու նպատակով տատմերը յոթը հավից մի-մի փետուր է փետում և յոթը դույնի թել առնելով՝ երեխան գրկած բարձրանում է կտուրը և հերթիկից կանչում. «Ըստրա քառասունքը կտրե՞մ»: Տնից պատասխանում են. «Կտրիր»: Այս հարցը երեք անգամ տալուց հետո՝ փետուրները և թելը դնում է երեխայի ոտի տակ և կոտորում:

Նույն նպատակով մի չորեքշաբթի, ուրբաթ և կամ կիրակի երեկո երեխայի բարձի տակ դնում են շիլ (Alemencrudum), որը հետո ձգում են թոնիր: Ասում են, թե այս շիլը ստանում է այն կենդանու պատկերը, որից առաջացել է կոխը: Հետո հանում են այդ շիլը, դնում տաշտի մեջ և երեխային վրան լողացնում: Եվ կամ հավի առաջին ձուն դատարկում, նրանով քառասուն ջուր են չափում, տաքացնում և լցնում ծննդկանի գլխին:

Լուսնով ընկածի համար դնում են Բռնակոթ, Մելքոնց օջախը և տանելով մի արծաթ դրամ՝ խնդրում «լիսին» կտրել: Այս գերդաստանի անդամներից մեկն ու մեկը վերցնում է դրամը, մի կողքից կտրում է, մնացածի վրա կանթ չինում և վերադարձնում, որ երեխայի վրայից կարեն:

Եթե երեխան շատ է լաց լինում՝ մայրը պատառում է նրա չորերը և դեն ձգում, ասելով. «Էս ա քու փայըդ» (բաժինդ): Ապա թոնրի շիշով (ձող) գծում է օրորոցի շուրջը և զազիլով կապում օրորոցի լուծը:

Զանազան հուլունքներ են կապում բալուլի վրա, որ երեխային աչք չտան:

Առաջին տատմները հանելիս՝ «կեղքահատիկ» են անում: Խաչած ցորենի հետ խառնում են քիշմիշ, շաքարի մանրուք, լապլապու և ածում մանկան գլխին: Այս միջոցին երեխայի առաջ դնում են մի դանակ և մի սանր: Եթե առաջ նա դանակը վերցնի՝ դրանից դուշակում են, որ մի եղբայր է ունենալու, իսկ եթե սանրը՝ մի քույր:

Սիսիանում այժմ այլևս չկան նախկին բազմանդամ գերդաստանները, այժմյան ամենաբազմանդամ ընտանիքը, որ յուրաքանչյուր դյուղում հազիվ երկու կամ երեք հատ է պատահում՝ բաղկանում է 20-25 հոգուց: Այս երևույթը բացատրվում է ոչ թե հայի բնավորությունով, ինչպես այս նկատվում է թուրքերի և ռուսների մեջ, այլ այժմյան տնտեսական պատճառներով: Առաջները հողը շատ էր և նրան մշակելու համար անհրաժեշտ էին շատ բանվորներ, ուստի և այն գերդաստաններն էին ավելի հարուստ, որոնք ունեին ավելի բանվորներ, և այս էր պատճառը, որ մոտիկ ազգականները, ունենալով մի ընդհանուր գործ՝ չէին կամենում բաժանվել և շարունակում էին միասին ապրել: Մինչդեռ այժմ, երբ հողը սաստիկ քչացել է և երկրի մշակության ձևը մնալով նույն նահապետական դրության մեջ, քիչ հողից բավականաչափ արդյունք չի ստացվում՝ գերդաստանի անդամները, որոնց կարիքը օրեցօր ավելանում է՝ ստիպված են ուրիշ պարապմունքներ որոնել պանդխտության մեջ: Այսպիսով ծագում է նրանց վաստակների անհամաչափություն, իսկ աշխատանքի և վաստակի տարբերությունը առիթ է լինում բաժանման:

Մյուս կողմից էլ հետզհետե տարածվող քաղաքակրթությունը քայքայում է նահապետական գերդաստանը, տալով անհատներին ավելի անկախ, անհատական կյանք:

Քայքայվող նահապետական գերդաստանի մեջ տան իրավունքը պատկանում է հորը, որ սակայն չի օգտվում նախկին անսահման իշխանությունով: (Նրա բռնություն գործ դնելու դեպքում՝ որդին սպառնում է թողնել հայրական տունը և դնալ Բաքու, անկախ գործ սկսելու): Նրան է հանձնվում որդիների աշխատանքը, նա է տնօրինում և ծախսում բոլոր եկամուտները. սակայն օտարության դիմած որդին իր վաստակի շատ փոքր մասն է ուղարկում միացնելու այդ ընդհանուր սեփականության: Հոր մահից հետո ավագությունը անցնում է ավագ որդուն, սակայն սրա իրավունքները ավելի ևս կրճատվում են. նա պարտավորվում է փոքրիշատե ծանրակշիռ հարցերում անշուշտ խորհրդակցել եղբայրների հետ և նրանց համաձայնությամբ գործել:

Տան ներքին կառավարությունը գտնվում է մոր ձեռքում. նրա անմիջական տնօրինության տակ է գտնվում տան ամբողջ բարիքը. առանց նրա թույլտվության ոչ հարսները և ոչ իսկ որդիներն իրավունք ունեն մի բան վերցնելու: Նրան լիովին հնազանդում են հարսներն ու աղջիկները և սրանց աշխատանքը նա է միշտ բաժանում:

Սկեսրոջ անձնափոխանորդ համարվում է մեծ հարսը, որին սկեսուրը հետզհետե վարժեցնում է իր պաշտոնը ստանձնելու: Այսպես՝ նրան սովորեցնում է պանիր չինել, կերակուր եփել, հսկել մյուս հարսների վրա: Եվ

երբ փոքր հարսներից մեկը մի զանցառություն է անում՝ սկեսուրը բարկանում է մեծ հարսի վրա, որ լավ չի հսկել նրա դործի վրա:

Հարսները պարտավոր են կատարելապես հպատակել սկեսրոջը և մեծ հարսին. նրանք իրավունք չունեն նրանց հետ խոսելու, այլ պետք է «Հարսնություն անեն», երկու և ավելի տարիներ: Սրանք հարսնություն պիտի անեն նաև սկեսրայրի առաջ իրենց ամբողջ կյանքում: Տեգրերի առաջ էլ հարսնություն են անում, սակայն ոչ այնքան երկար, եթե նրանք ամուսնացած չեն՝ մինչև մի տարի, իսկ եթե ամուսնացած են՝ մինչև որ իրենք մի քանի որդոց կամ հարսների տեր կլինեն: Միակ անձնավորությունը, որի հետ հարսնությունը միայն մի քանի օր է տևում՝ տալն է, որ միևնույն ժամանակ միջնորդի դեր է կատարում: Երբ մի բան հարցնում են հարսին՝ սա ցած ձայնով պատասխանում է տալին, իսկ սա բարձր ձայնով կրկնում է: Իսկ եթե տալ չի լինում՝ հարսը միմիկայով է պատասխանում, կամ բարձր ձայնով ասում փոքրիկ երեխաներին, թեպետ սրանք ոչինչ էլ չհասկանան: Շատ անգամ պատահում է, որ հարսը կամենալով սկեսրոջ կամ սկեսրայրի մեղադրանքներից իրեն արդարացնել՝ խոսքը ուղղում է իր մանկանը և մի առ մի առաջ բերում արդարացնող փաստերը: Սկեսուրը լսում է նրան և հերքում, որի պատասխանը հարսը նորից ուղղում է մանկանը: Հարսի ձայնը աստիճանաբար բարձրանում է, և երբ սկեսուրը ծայրահեղության է հասցնում՝ հարսը ուղղակի դառնում է նրան: Այս դեպքում սկեսուրը կամ ինքը խփում է նրան և կամ գանգատվում նրա ամուսնուն:

Նահապետական հայացքների ազդեցության տակ՝ ամոթ է համարվում, որ ամուսինների փոխադարձ հարաբերությունները մեղմ և սիրային լինեն: Ամուսինը դեպի կինը ավելի պակաս հարգանք պետք է ցույց տա, քան դեպի մյուս հարսները. կինը նույնպես ավելի հարգանք է ցույց տալիս դեպի տեգրերը, քան թե դեպի ամուսինը: Երկուսն էլ, տան մեծերի ներկայությամբ, չեն զրկում կամ խաղում իրենց երեխայի հետ, մեծ ամոթ համարելով այդ:

Երբ տան մեջ խռովություններ են պատահում, երբ սկեսուրը կամ մյուս հարսները գանգատվում են կնոջ մասին՝ ամուսինը ամոթ է համարում պաշտպանել նրան և մի կողմից էլ ինքն է հարձակվում նրա վրա, չնայելով որ համոզված է նրա անմեղության մեջ: Կնոջ հետ կռվիտ վարվելը, նրան տեղի-անտեղի հայհոյելը՝ մի տեսակ «տղամարդություն» է համարվում:

Ամուսինը կնոջ մասին խոսելիս՝ ամոթ է համարում նրան ուղղակի իր կինը կամ ամուսինը կոչել, այլ զանազան կերպով է կոչում նրան. իր ծնողների առաջ՝ «Հարսը», «Հարությունի աղջիկը», աներոջ առաջ՝ «աղջիկդ», օտարների առաջ՝ «մեր հարսը», «մեր Հարությունի աղջիկը», կնոջ հետ խոսելիս՝ «այ Հարությունի աղջիկ», «այ կնիկ»:

Կինը ամուսնու մասին խոսելիս նույնպես այլ և այլ կերպով է անվանում նրան. սկեսրոջ առաջ՝ «տղեդ», տալի առաջ՝ «ախպերդ», տեգեր կնոջը՝ «տեգրդ», իր ծնողների՝ «փեսեդ», ուրիշների՝ «մեր հայը», «Առաքելի

(որդու) ապերը», «Տեր Գեորգին տղեն»: Իրեն հետ խոսելիս՝ ասում է «էյ, կամ այ հայ»:

Առհասարակ ոչ միայն երկու սեռը միմյանցից հեռու են մնում, այլև միևնույն ընդհանուր երկու սեռի անդամներն էլ միմյանցից զատված, միմյանցից առանձնացած են ապրում: Կանայք իրավունք չունենալով տան մեծերի հետ կամ նրանց ներկայությամբ խոսելու՝ միշտ առանձնանում են՝ իրենք իրենց ժամանակ անց կացնելու, և կամ լուռ լսում են տղամարդկանց խոսակցությունը. նրանք միասին հաց անգամ չեն ուտում:

Հաց ուտելիս տղամարդիկ և երեք տարեկանից բարձր տղաները միասին են ճաշում, իսկ կանայք նրանցից հետո՝ առանձին: Երբեմն պատահում է, որ մայրն էլ տղաների և ամուսնու հետ սեղան է նստում, սակայն միշտ մի կողմն է թեքվում, իբր թե առանձին է ճաշում: Սովորաբար նա ճաշում է հարսների և աղջիկների հետ, բայց այս անգամ էլ փոքր հարսն է առանձին հաց ուտում՝ չհամարձակվելով սկեսրոջ հետ միասին նստել: Իսկ երբ սկեսուրը չի լինում՝ փոքր հարսը թեև մեծ հարսների հետ նստում է, բայց և այնպես մի կողմ է թեքվում և երեսը չարղաթով ծածկած՝ հաց ուտում:

Երբ երեկոյան բոլոր անդամները հավաքվում են տան մեջ՝ հայրը ծալապատիկ նստում է թոնրի գլուխը, այսինքն դռան հանդիպակաց կողմը, ուր դուռը բաց անելիս քամին չի փչում. նրա կողքին նստում են կրտսեր եղբայրը և ապա որդիներն ավագության կարգով: Տան փոքրերը և ծառան նստում են թոնրի ական կողմը, դռան կողմը դռնվող մասում: Ծառան, որ միայն հարուստ տներումն է լինում և առավելապես վարձվում է անասունները հոգալու և դաշտում աշխատելու նպատակով՝ տան անդամ է համարվում: Նա տղամարդկանց հետ է հաց ուտում, նրանց խոսակցություններին առանց քաշվելու մասնակցում: Սա էս աներկյուղ հրամայում է փոքր հարսին. այսպես, օրինակ, եթե կամենա ջուր խմել, նույնիսկ այն մեջոցին, երբ բոլոր տղամարդկանց հետ հացի է նստած՝ հրամայում է փոքր հարսին, որ ջուր տա, և սա առանց տրտնջալու կատարում է հրամանը:

Երբ քնելու ժամն է հասնում, իսկ սա շատ ուշ չի լինում, առաջ տան մեծը բոլորի ներկայությամբ, աղոթք չշնջալով, հանում է չորերը և պառկում: Նրանից մի քիչ հետո պառկում են մյուս տղամարդիկ, միշտ աշխատելով, որ կրտսերը ավագից առաջ չպառկի: Ապա հանվում են տատը և ավագ հարսները, յուրաքանչյուրը տեղավորվում է իր ամուսնու կողքին, գավակը մոտն առած: Ամենից վերջը մնում է փոքր հարսը, որ զգուշությամբ հանգցնում է ճրագը, հանվում և գնում ամուսնու մոտ: Սովորաբար ամբողջ դերդաստանը ամառը էյվանում, իսկ ձմեռը տանն է քնում, մեկի անկողինը մյուսին մոտ: Միայն փոքր հարսինը սկզբներում առժամանակ «տան-օթախումն» են ձգում:

Ինչ վերաբերում է աշխատանքի բաժանման՝ պետք է ասել, որ տղամարդիկ պարապում են գլխավորապես դաշտային աշխատանքներով ու ար-

հետաններով և տնային աշխատանքներին գրեթե բոլորովին չեն խառնվում. մինչդեռ կինը ոչ միայն կատարում է տնային աշխատանքները, այլև օգնում է ամուսնուն դաշտային աշխատանքների մեջ: Եվ երբ ձմեռը տղամարդը պանդխտության չի դիմում, այլ տանն է մնում՝ նա անգործ անց է կացնում օրերը, մինչդեռ կինը շարունակում է աշխատել:

Տղամարդկանց աշխատանքը սովորաբար հայրն է բաժանում, հետևելով դարավոր սովորություններին: Մի քանի գործեր էլ, օրինակ սերմ ցանել, նա ինքն է կատարում, որպես մի առանձին արտոնություն: Իսկ կանանց աշխատանքը մայրն է կարգադրում, դարձյալ իրեն և իր անձնափոխանորդին վերապահելով մի քանի աշխատանքներ, ինչպես ջահրա մանել, պանիր մերել, որպես մի առանձին արտոնություն: Սակայն դարավոր սովորությունները արդեն իսկ բաժանել են հարսների աշխատանքները, այնպես որ շատ անգամ սկեսուրը դժվարանում է խախտել այն: Այսպես՝ սկեսրոջ պարտականությունն է կերակուր եփել և հաց թխել, առաջին հարսինը՝ խնոցի հարել, պանիր շինել, կով կթել: Երկրորդ հարսինը՝ ալյուր մաղել, խմոր հունցել, հաց բաց անել: Երրորդինը՝ տունն ավլել, հաց դնել, ժողովել, ոտ լվանալ, ջուր տալ լվացվելու, հանդը հաց տանել և քակոր շինել:

ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Մեծ հորը ասում են	*պապ*
Մեծ մորը՝	*մամ*
Հորը՝	*ամի, ապեր*
Հորեղբորը՝	*ամի, ապեր*
Հորեղբոր կնոջը՝	*հարսը, զիզի, մեծ զիզի, կուճի զիզի*
Մորեղբորը՝	*դայի*
Մորեղբոր կնոջը՝	*քռակին*
Հորաքրոջը՝	*բիբի*
Մորաքրոջը՝	*բիբի*
Քրոջը՝	*պաճի (թուրք), աֆուր*
Եղբորը՝	*ապեր*
Կնքահորը՝	*պելի, խաչաղբեր*
Կնքամորը՝	*անամեր*

Խնամոնք

Ամուսնու հորը՝	*պատրոն*
Ամուսնու մորը՝	*սկեսուր*
եղբորը՝	*տեգր*

Ամուսնու քրոջը՝	*տալ*
Ամուսնու եղբոր կնոջը՝	*տեգրակին*
Կնոջ հորը՝	*աներ*
Կնոջ մորը՝	*ղոնքաչ, իսկ հետը խոսելիս՝ ղիզի*
Կնոջ եղբորը՝	*Հանոր տղա*
Կնոջ քրոջը՝	*քենի*
Կնոջ քրոջ ամուսնուն՝	*բաջանաղ*

ՀԻՎԱՆԴՈՒԹՑՈՒՆ ԵՎ ԲԺՇԿՈՒԹՑՈՒՆ

Ամբողջ Սիսիանը զուրկ է բժշկական որևէ օգնությունից: Միայն Գորիսում կա մի բժշկական ապաստանարան և երկու բժիշկ, որոնք կոչված են բժշկելու ամբողջ գավառի բազմաթիվ բնակիչներին: Թողնելով իր տեղում մանրամասն տեղեկություն տալու այդ ապաստանարանի և գավառում տիրող հիվանդությունների մասին՝ այժմ կասեմ, որ սիսիանցին դիմում է գլխավորապես ժողովրդական բժիշկներին, այսինքն սափրիչներին, հեքիմկանանց, անղչիներին (ոսկրաբույժ) և ժողովրդական դեղերին, որոնք գլխավորապես հետևյալներն են:[67]

Ականջացավ. *Ձեթի (ձիթապտղի յուղի) մեջ եփում են անգլիական պղպեղ, մեխակ (гвоздика), փոքր-ինչ քյափուրի (камфора), մի պճեղ սխտոր և մի ոչխարի լեղի, և հովացնելուց հետո կաթեցնում են ականջի մեջ:*

Ականջի խշխշոց. *Նոր եփած ձվի կեսը տաք-տաք դնում են ականջին: Գլխին տաք ջուր են ածում:*

Ամորձիքի ուռուցք *(опухоль яиц). Վեց մսխալ շիրը, կես մսխալ ձեթով շաղվում և քաթանի վրա քաշած, դնում ամորձակալի վրա: Եգիպտացորենի մազմզուկ (ниточки кукурузы, filamentae sfyqmatae) սպիրտի մեջ են կախում և քաթանը այս բաղադրության մեջ թաթախելով՝ փաթաթում ամորձակալին:*

Այրվածք. *Թանաք, մածուն, ցեխ և կամ խլինք են քսում:*

Աչքացավ. *Ցավող աչքի մեջ կաթեցնում են աղջիկ երեխա ունեցող կնոջ կաթը. կամ բամբակը թաթախում են նուշնպուխի մոր կաթի մեջ և դնում ցավող աչքի վրա:*

---

[67] Պ. Չելինսկին թարգմանելով Ազգ. հանդեսի Ա և Բ գրքերի մեջ տպված ժողովրդական դեղերը՝ միացրեց նաև այս դեղերը, ստանալով մեզանից ձեռագիրը: Այդ աշխատությունը տպվեց Ռուսաց Կայսերական աշխարհագրական ընկերության Կովկասյան բաժնի «Известия Отдела»- XII հատորի առաջին պրակում և արտատպվեց առանձին գրքույկով, «Материалы по народной медицине у армян некоторых местностей Закавказья» խորագրով:

Խունկը մաքուր ամանում վառում են փոշին խառնելով եղեգնաշաքարի (тростниковый сахарь) փոշու հետ, ձգում աչքը: Կոծախուրի (барбарис, berberis vulgaris) արմատը եփում են և ջուրը բորբոքված աչքը ձգում: Երբ աչքի կոպերը կոշտացած են լինում՝ սոխի ջուր են կաթեցնում աչքի մեջ, մեղով լվանում են աչքը. ոչխարի տաք թոք են դնում վրան:

Ատամնացավ. *Մանրած չաքարը բուվում են, հետո բամբակը թաթախում այդ չաքարի և ապա ծիծակի (стручковый перец) մեջ և դնում ցաված ատամին: Բերանը օղիով ողողում են: Ցավող ատամի վրա մի կտոր սխտոր են դնում և մյուս ծնոտի համապատասխան ատամով սեղմում:*

Բարակացավ. *Թոքախտ (чахотка). Առավոտները հիվանդին խմացնում են մի բաժակ տաք կաթ, հետը մի պուտ պտած և ծեծած սամիթի (укроп) սերմ խառնելով: Լողացնում են տաք ջրում: Շան մսից պատրաստված արգանակ (բուլյոն) են ուտեցնում: Օրը մի անգամ թեյի գդալով չան գանգից թոնրի վրա չորացնելով պատրաստած փոշի են տալիս, հետը փոքր-ինչ կինամոն (корица) և մեխակ խառնելով: Մեղր են տալիս:*

Բլիթին, մաշկի կոշտ, մազոլ. *Հինան չաղվում են եղան լեղիով և դնում մազոլի վրա: Ընկույզի միջուկը վառում են և դնում մազոլի վրա:*

Բկացավ. *Կտավատը կաթով եփում և չորով կապում են բկին: Բերանը ջրախառն քացախով ողողում են: Ուտում են թթու, բայց դյուրամարս կերակուրներ: Դիֆտերիտի ժամանակ հիվանդին տալիս են խմելու նռա-չարաբի (նռան հյութը եփած մինչև թանձրանալը): Սպիտակ հացի միջուկը կաթի մեջ թաթախում և բկին են կապում: Գագաթից արյուն են առնում կամ տզրուկ կպցնում:*

Գլխացավ. *Մազերը խուզում և ձվի սպիտակուցը չիպով (квасцы, alumen crudum) տրորելով քաթան շորի վրա քսած կապում են գլխին: Ոտները տաք ջուրն են դնում: Ճակատից արյուն են առնում: Բողկի կտորները քացախի մեջ թաթախելով՝ դնում են գլխին և շորով կապում: Սպանած ագռավը ճեղքում են և դնում գլխին ու շորով կապում:*

Գլխի ճաքոց *(трещина головы). Մի քիչ խունկ, թարմ կարագ, անասնի դեք և ձեթ խառնում, եփ տալիս, փոքր-ինչ հովացնում և դնում ճաքածի վրա:*

Գորտնուկ *(бородавка). Աբեթից կոնուսաձև, գորտնուկի մեծության համեմատ, կտրատում են և դնում գորտնուկի վրա ու վառում: Տաքությունից գորտնուկը չորանում և պայթում է. ապա երեք-չորս օրից ոչնչանում:*

Թանչք, թուքք, մայասիլ *(геморрой). Կտրում են ծծիկները և կովի նոր կարագի հետ մի քիչ սուլումանն (сулема, hydrargyrum bichloratum corrosivum) խառնած բամբակով քսում վրան: Զգուշանում են կաթնեղինից:*

Լուծ, կանիճ, փորհարինք *(понос): Մածուն են ուտում և թան խմում:*

Խիարուկ, էլունդն *(бобон в пах). Եփում են տզկահատի (клещевина, դերչակ) մի քանի ծեծած սերմ և մի քիչ ծեծած կտավատ կովի մի բաժակ կաթի մեջ և բոլորը խառնում եփած փիփերթի (мальва) հետ և նորից եփում, մինչև որ թանձրանում է. ապա կապում են ուռուցքի վրա, որից նա տաքանում և ծակվում է: Թարախից մաքրելու համար ձվի դեղնուցը տզկահատի ձեթով և գարու ալյուրով շաղում և քաշում են վերքի վրա:*

Կողքացավ *(боль в боку). Կողքին մի կտոր տաքացրած աղ, կամ մի քսակով տաքացրած կորեկ են դնում:*

Հազ. *Եղեգնաշաքար, ունաբ, սերկևիլի և մանուշակի ծաղիկ միասին եփում են և ջուրը քիչ-քիչ խմում: Ջորացրած թուղը թրջում են օղիում, դիշերով դնում ազատ օդում և առավոտները անոթի ժամանակ մեկ-մեկ հատ ուտում:*

Հարբուխ. *Սառը ջրով լվանում են վիզը, և քիթը սառը ջուր քաշում: Քեափիրին և չիբը (квасцы) ծեծում, լցնում են օղու կամ սպիրտի մեջ և քիթը քաշում. քրտնելուց հետո եռացրած դինի են խմում:*

Մատնաշուրթ, մատնաշունչ. *Երբ մատնաշունչի պատճառով ձեռքը ուռչում է՝ փիփերթը (мальва, malva rotundifolia L.) եփում են, մեջը հացի միջուկ ձգում և հանում, տաք-տաք ուռուցքի վրա կապում: Երբ ուռուցքը վափկում է՝ եղունդի տակը ծակում են, որ չարավը թափի, և վրան դնում թոկի քրքրած թելերը, նոր կարագ և լվացքի հասարակ, ծեծած սապոն խառնած: Երբեմն էլ այս վերջին դեղին ձվի դեղնուց էլ են խառնում:*

Մոլոքոր *(часотка). Ընկույզի միջուկը ծեծում, վրան թունդ գինու քացախ են ածում, մի օր պահում և ապա քսում են մոլոքոր դուրս տված տեղերը:*

Ոսկրացավ *(боль в костях). Հողաճիճուները ձեթի մեջ եփում են, մինչև որ նրանք չորանում և այրվում են, և ապա այդ յուղով արորում ցաված տեղերը: Մի մեծ չչի մեջ ածում են 2 ֆ. չմարած կիր, 0,5 ֆ. անուշադր (нашатыр, ammonium chloratum), 2 մսխալ քափուր (камфора, camphora), ապա ավելացնում երկու ֆունտ ջուր, մեղմուխյամբ ցնցում, հետո քիչ հովացնում, 0,5 ֆ. վուշի ձեթ (льняное масло) խառնում և քսում ցաված տեղերին: Մաքուր բևեկնախեժով (скипидар, oleum terebinthinae) օծում են ցաված տեղերը: Խինտեղն (бузина) կոչված բույսի ծաղիկները ալյուրի թեփի հետ եփում են, լցնում տաք լոգարանի (ванна) մեջ և հիվանդին նստեցնում մինչև քրտնելը:*

Ջերմ. *Ջմերուկի, վարունգի, դդմի և տզկահատի (դերչակ, клещевина) սերմերը ծեծում և հյուսքը խմեցնում են: Հիվանդին կապերտի մեջ դրած ընկղմում են դետի մեջ և ապա պառկեցնում ու տաք ծածկում, որ քրտնի:*

Սուսանակ (трипер). Մի չիչ 86° սպիրտի մեջ ածում են 8 մսխալ կոպայի բալասան (копайский бальзам) և 5 մսխալ բորակ (селитра), և օրը երեք անգամ մի-մի օղու բաժակով ընդունում:

***Վավաշախտ, Տերամոր վերք, Ֆրանկի յարա** (сифилис). Գլխի մազերը ածելում են, կարագ յուղով տրորում են սուլեյմանը (сулема) և բամբակով դնում ախտացած տեղի վրա: Վարդաջրի (розовая вода, aqua rosarum) մեջ լուծում են մի քիչ հինա և հալվե (сабур, aloe) և սրանով տրորում են գլուխը և քաթանով կապում. առավոտները չաքարով թեյի կես գդալ ծծումբ (сера) են ընդունում: Սնդիկը հինայի հետ շաղվում են վարդաջրով և փոքրիկ գնդակներով չորացնում. հետո այս գնդակներից մի-մի հատ դնում են անծուխ կրակի վրա և հիվանդին սավանի մեջ փաթաթած, կանգնեցնում այդ կրակի վրա և ծուխ տալիս: Ընկույզի տերևներ ձգելով լոգարանի (ванна) մեջ՝ մանում են մեջը: Հինգ մսխալ չիր (квасцы), մի ֆունտ կաղնու տերև, մի մսխալ նռան կեղև միասին եփում են ջրով և բերանը ողողում:*

***Փայծաղի աճում** (увеличение селезенки). Շան թիոսկրին մեղր են քսում և նրանով խփում փայծաղի եղած տեղին: Վախեցնում են հիվանդին, սրով վրան հարձակվելով:*

***Փորացավ** (боль в животе). Մի բաժակ օղու մեջ փոքր-ինչ պղպեղ են ձգում և խմեցնում, և կամ դարչինով, կինամոնով (гвоздика, корица) և պղպեղով պատրաստած թեյ տալիս:*

***Փորի ճիճու, երիզորդ** (солитер). Ուտում են մեղրով ճատվար (цытварное семья, semen sautonica) և կամ դդմի կուտ:*

***Քարկիչ.** Բոկոտն մանգալուց ոտքի վրա առաջանում է կոշտացած մաս, որ սաստիկ ցավ է պատճառում: Նախ խմոր են դնում վրան, որ փափկանա, հետո նավթի ճրագի մեջ մնացած և թանձրացած մասը, «ճրագի տակը», քսում են շորի վրա և դնում վրան: Երկու-երեք օրից հետո ասեղով ծակում են, որ շարավը հոսի և առողջանա:*

***Օճի կծած.** կծած տեղին մածուն են քսում: Հայտնի կանայք կան, որ ծծում, դուրս են քաշում թույնը:*

ՄԱՀ, ԹԱՂՈՒՄ ԵՎ ՄԵՌԵԼՈՑ

Երբ հիվանդը մերձիմահ է լինում՝ չտապում են կանչել քահանային, որ հաղորդություն տա: Հոդեվարքի ժամանակ հիվանդին տեղափոխում են մի ուրիշ անկողին, բարձերը ցածացնում են, ջուր խմեցնում, որպեսզի հեշտությամբ հոգին ավանդի:

Մեռնելիս՝ աչքերը փակում են, ծնոտը բռնում, որ բերանը բաց չմնա, ոտի բութ մատները կապում միմյանց, որ ոտները ուղիղ մնան: Հետո բաց են անում դուռը, որպեսզի հրեշտակը «փակ չմնա» և կարողանա ազատ չրջել հոգու հետ միասին:

Անմիջապես հրավիրվում է քահանան, որ օրհնում է լողացնելու ջուրը: Ջմեռը ննջեցյալին սենյակում են լողացնում, իսկ ամառը դրսում, կապերտներով մի անկյուն չրջափակելով: Լողացնելու համար հարևանները գալիս մի տախտակ են դնում, ննջեցյալին երեսը արևելք դարձրած պառկեցնում տախտակի վրա, ոտների մոտ մի փոս փորում, որ ջուրն այնտեղ թափվի, և «Աստված հոգին լուսավորե» ասելով՝ լվանում են նախ գլուխը, հետո կուրծքը, մեջքը և ապա աջ և ձախ ոտները: Ավելացած ջուրը տանում տնեցիների և գյուղի հիվանդների ոտներն ու ձեռներն են լվանում, որպեսզի տնեցիների վախն անցնի, իսկ հիվանդներն ստանան ննջեցյալի կյանքի արևը: Այնուհետև ութ օր չարունակ այս տեղում մոմ կամ ձեթի ճրագ են վառում:

Հետո կտավով պատանքում են, ոտներից մինչև կուրծքը կարում և մնացած մասը բաց թողնում: Եթե ննջեցյալը կին է՝ գլխին մի «աղլուխ» են կապում, իսկ ծնոտին մի ուրիչ կտոր, որ կանաչ կամ կարմիր է լինում՝ եթե ննջեցյալը երիտասարդ էր, և սև կամ կապույտ՝ եթե պառավ: Ապա փաթաթում են կապերտով և դնում նաչի մեջ, նախապես գլխի տակ մի բարձ դնելով: Շատ հարուստները ննջեցյալին չորեր են հագցնում, իսկ պատանքը գլխի տակ դնում, որովհետև առանց պատանքի չի կարելի ներկայանալ Քրիստոսին:

Այսպիսի (հարուստ) ննջեցյալին դագաղի մեջ են դնում, որի երեսին կարմիր կամ կանաչ չոր է քաշած լինում՝ եթե ննջեցյալը երիտասարդ է լինում, և կապույտ կամ սև՝ եթե չափահաս է կամ ծեր:

Հարուստները իրենց սիրելի ննջեցյալին մի կամ երկու օր պահում են տանը, իսկ աղքատները նույն օրը կարգը կատարել են տալիս և տանում եկեղեցի: Թաղումն ևս աղքատներինը տեղի է ունենում հետևյալ օրը, մինչդեռ հարուստներինը տևում է մի քանի օր և նույնիսկ մի շաբաթ:

Ամբողջ ժամանակ լացն ու կոծը անպակաս է լինում: Կանայք, իրենց գլուխ ունենալով մի «լալկան մեր», որ գյուղի մեջ հայտնի է լինում որպես լավ ողբեր ասող՝ լալիս են և կոծում: Նրանց ձայնը շատ հեռվից լսելի է լինում: Լալկան մերը գովասանք է ասում լալագին ձայնով, որը մյուսները կրկնում են:

Մինչև թաղումը ննջեցյալի տնեցիք՝ տղամարդիկ, կանայք, տարին լրացած հարսները, առավոտ և երեկո եկեղեցի են գնում ու ժամասացությունից հետո լաց լինում, վերադառնում:

Եթե ուզում են ննջեցյալին պատարագով թաղել՝ նախընթաց երեկոյին հրավիրում են քահանային և մի քանի մոտիկ բարեկամների, թեյ և ընթրիք

տալիս: Գիշերն էլ քահանային ուղարկում են մի չիշ գինի, մի քանի մոմ և նշխարի ալյուր:

Պատարագին ներկա են լինում ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք, որ լուռ մնում են մինչև ավարտը: Երբ սկսում են ննջեցյալի կարգը կատարել՝ մեկը մի ափսեի մեջ խունկ, նշխար, բամբակ և մի քառակուսի ութածալ կտավի կտոր դրած, բերում է և ներկայացնում պատարագիչ քահանային: Սա վերցնում է կտավը և նրա միջից դեպի ծայրը դանակով կտրում, բաց անում և տալիս բերողին: Կտրելուց ձևանում է մի խաչ: Սա կոչվում է վարշամակ: Բերողը այն հանձնում է պատան կարողին: Եվ սա նշխարը մի քիչ խնկի հետ դնում է ննջեցյալի բերանին, խունկը փաթաթում բամբակի մեջ և դնում նրա պնչերն ու ականջները, ապա վարշամակը ձգում երեսին և պատանքի բաց մասը կարում:

Երեխաներին վարշամակ չեն ձգում, այլ միայն երկու մոմ երեք անգամ միմյանցից վառելուց և հանգցնելուց հետո դնում են երեխայի ձեռին, և այս այն հուսով, որ նա մյուս աշխարհում մոմով դիմավորի ծնողներին և նրանց առաջնորդի դեպի արքայություն: Երեխա ննջեցյալին զոհ են համարում Աստծուն և այդպիսի ննջեցյալ չունեցողը չի կարող հուսալ արքայություն գնալու:

Կարգը վերջանալուց հետո սկսվում է կանանց հանդիսավոր ողբը, որին մինչև այդ ժամանակ քահանայի աղոթքը մասամբ խանգարում էր: «Լալկան մերը» նստում է ննջեցյալի սնարի մոտ, իսկ մյուս կանայք չրջապատում են դագաղը, որ գետնին է դրած լինում: «Լալկան մերն» երգելով ասում, մյուսները կրկնում են և լալիս: Ահա մի նմուշ այդ ողբից.

Ռախատած երեսիտ մատաղ,
Սարը (դեղին) պոչերիտ (ծամ) մատաղ,
Սոնքսըզ (անվախճան) ջանիդ (կյանք) մատաղ,
Կորած ունումիտ (հույս) մատաղ:
Կակծալի ջանս քե մատաղ,
Մրմնջալի ջանս քե մատաղ,
Բալա (որդի)...

Դագաղը կանանց դրկախառնություններից ազատելով՝ դուրս են բերում և դնում եկեղեցու բակը: Այստեղ էլ քահանան և տիրացուներն են ձայները ձգում և գանձ ասում: Ննջեցյալի վրա դնում են մի ափսե, և բոլորը գալիս դրամ են ձգում, որ երեցփոխը վերցնում է քահանային հանձնելու: Երբ ննջեցյալին մոտիկ բարեկամները դագաղը վերցնում են դերեզմանատուն տանելու՝ կանայք չեն հետևում, այլ մնում են, մի քիչ էլ լաց են լինում և ապա գնում տուն, բերում են ննջեցյալի շորերը, միմյանց մեջ անց կացրած, դնում իրենց առաջ և լաց լինում ու երգում:

Հուղարկավորության կես ճանապարհին նորից են գանձ ասում և փող հավաքում: Վերջապես հասնում են դերեզմանատուն:

Գերեզմանը փորում են գյուղի աղքատ մարդիկ, որոնց իրը վարձ տալիս են ննջեցյալի հին չորքը: Թե տղամարդկանց և թե կանանց համար միասփի, մոտ 1,4 մ (2 արշ.) խորության է լինում գերեզմանը, բահը և թին խաչաձև դրած վրան: Դագաղը դնում են գերեզմանի աջ կողմը և կարգը կատարում: Քահանան հող է օրհնում մի ուրիշ քահանայի և կամ տիրացուի բուի մեջ և ձգում գերեզմանի մեջ: Այս ժամանակ թոկերով իջեցնում են դագաղը գերեզմանի մեջ. իսկ եթե նաչ է՝ մեկը մտնում է գերեզմանի մեջ, վերցնում կապերտի մեջ դրված կտավե բարձը և դնում գերեզմանի մեջ. ապա մյուսները կապերտից հանում են ննջեցյալը և տալիս նրան, որ գրկում և պառկեցնում է գերեզմանի մեջ: Այս ժամանակ քահանան մոտիկ անձնավորության բուռ հող է օրհնում, որի ընթացքում մյուս ազգականներն էլ բուերը հող են առնում, և երբ օրհնությունը վերջանում է՝ բոլորը ածում են այդ հողը ննջեցյալի վրա: Ապա ծածկում են դագաղի խուփը, և մինչդեռ քահանան «Փառք ի բարձունս» է ասում՝ գերեզմանահատներն ու հուղարկավորողները հողով լցնում են գերեզմանը: Երբ կարգը վերջանում է՝ բոլորը ձեռք են տալիս մոտիկ ազգականներին և ասում. «Սուրբ հոգով մխիթարվեք»: Ապա բոլոր հուղարկավորողները գալիս են ննջեցյալի տունը «ժամահաց» ուտելու: Մինչդեռ հիվանդ ժամանակ խնայում են մի հավ անգամ մորթել, նրան ուտեցնելու՝ մեռնելուց հետո մի եզ են մորթում հոգու հաց տալու: Սրանից պատրաստում են բոզբաշ, հարուստները նաև փլավ: Իսկ եթե պաս է՝ լոբիաջուր և փլավ: Նախ ճաշում են տղամարդիկ և ապա կանայք: Տղամարդիկ հացից հետո անմիջապես ցրվում են, իսկ կանայք նորից առաջ են բերում ննջեցյալի չորքերը, լալիս, գովում և ապա ջուր ման ածում, աչքերն ու ձեռները լվանում ու ցրվում:

Հետևյալ օրը վաղ՝ կանայք գնում են գերեզմանատուն, նստում գերեզմանի չուրջը, լալիս, սուգ ասում, ջուր ածում վախեցողների վրա, որ վախն անցնի, և վերադառնում են տուն: Նրանցից հետո տղամարդիկ են գնում, տանելով իրենց հետ քահանային, որ օրհնում է գերեզմանը և կատարում «այգը», ապա վերադառնում են տուն և հաց ուտում:

Հարուստները յոթ օր չարունակ «ամբիծք» են կատարել տալիս, այսինքն երեկոյան ժամերգության ժամանակ տղամարդիկ գալիս են եկեղեցի, քահանային «ամբիծք» կատարել տալիս և նրան, մի քանի մոտ բարեկամների հետ միասին տանում տուն, թեյով և ընթրիքով հյուրասիրում: Երբեմն էլ մոտիկ ազգականները ննջեցյալի տղամարդկանց և տան պառավներին, քահանայի հետ միասին իրենց տունն են տանում պատվելու:

Այս յոթ օրվա ընթացքում հետու տեղ գտնվող բարեկամներն էլ, եթե կարողանում են՝ գալիս են և քահանայի հետ՝ գնում ննջեցյալի գերեզմանը օրհնել տալիս:

«Յոթը» լրանալիս՝ կանայք և տղամարդիկ, մոտ և հետու ազգականների հետ միասին գնում են գերեզմանատուն, ուր երկար լաց լինելուց և սուգ

անելուց հետո՝ քահանային կատարել են տալիս «յոթի» կարգը: Ապա ուրիշ գյուղից եկած բարեկամները, եթե ուզում են չուտով վերադառնալ՝ օրհնել են տալիս գերեզմանը. հետո բոլորը վերադառնում են ննջեցյալի տուն, հաց ուտում և հեռավոր բարեկամները ցրվում են, իսկ մոտիկները մնում՝ սափրվելու: Անմիջապես կանչվում է սափրիչը, որ սկսում է նախ ամենամոտիկ ազգականի մորուքը սափրել և հետո հետզհետե բոլորինը. որովհետև այդ ութ օրվա ընթացքում ոչ մեկը, ի նշան սգի, չի սափրվում:

Նույն օրը, ճաշից հետո, կանայք լվանում են ննջեցյալի և սրա տանեցիների չորերը և ապա լրենց գլուխները, որովհետև սրանք էլ սգի համար գլուխները չեն լվացել:

Այնուհետև մինչև մի տարի սուգ են պահում, ուրախություններին չեն մասնակցում, հյուր, հարսանիք, ուխտ չեն գնում: Նշանավոր տոներին ուրիշ գյուղ բնակող բարեկամները սեսուրյան են գալիս և բերում են մի գառ կամ ոչխար «խաշլամա արած». քահանային էլ օրհնել են տալիս գերեզմանը: Մեծ պասի առաջին օրը բոլոր գյուղացիները գնում են եկեղեցու գավիթը, տանելով խմիչքներ և կերակուրներ: Այստեղ քահանան բոլոր ննջեցյալների համար մի ընդհանուր հոգոց է ասում, որից հետո բոլորը խառը նստում, բերածներն ուտում են և ապա գնում, յուրաքանչյուրն իր ննջեցյալը օրհնել տալիս:

Թաղման ծախսեր

Պատանքի		0,50-1 ռ.
Լուսագին եկեղեցուն		0,50-1 ռ.
Քահանային	Մինչև 21 տար. համար	0,60-1 ռ.
	Ավելի հասակավորի	1,20-3 ռ.
Ամբիծքին		0,60-1 ռ.
Խաչահամբույր գանձ ասելիս		0,50.-1 ռ.
Ժամաճաշի և յոթինից հացի		30-40 ռ.
Եկեղեցուն ամանների վարձ[68]		0,40.-1 ռ.
Գերեզմանահատաններին՝ հին չորեր արժողությամբ		0,40.-1 ռ.
Գումար		34,70-50 ռ.

ՆՇԱՆԱՎՈՐ ՏՈՆԵՐ

Նոր տարի. Սիսիանում նոր տարին չատ անչուք է անցնում, որովհետև սրանք տոնում են հայկական նոր տարին, Նավասարդի մեկը, որ գալիս է օգոստոսին: Ոչ մի չնորհավորություն չի լինում. երբեմն միայն մոտիկ

[68] Ջանազան մարդիկ եկեղեցուն նվիրում են ամաններ և գդալներ, որը տանում՝ գործածում են ննջեցյալ կամ հարսանիք ունեցողները և սրա համար մի բան են վճարում եկեղեցուն:

անձնավորություններ միմյանց մոտ հավաքվելով՝ ուտում, խմում, ուրախանում են:

Ծնունդ և Զրօրհնեք. Հունվարի չորսին չինում են «կրկենի»՝ մի բաղարջ հաց, մեջը մի դրամ դրած և երեսը քիշմիշով, ընկույզով և անիսոնով զարդարած: Նույն երեկոյին բոլոր ընտանիքը հավաքվելով՝ հանդիսավոր կերպով կտրտում են բաղարջը՝ տան անդամների թվի համեմատ կտորների բաժանելով: Երբեմն անասունների համար էլ են բաժին հանում: Հետո զգուշությամբ և լարված հետաքրքրությամբ ուտում են, մինչև որ մեկը ուրախության աղաղակով հայտնում է, թե դրամը իր բաժնի միջից դուրս եկավ: Այն ժամանակ բոլորը նրան չնորհավորում են, ասելով, որ «տարին նրանն է», նա պիտի բախտավոր լինի:

Ծննդյան ճրագալույցին գրեթե բոլորը եկեղեցի են գնում, իսկ ժամերգությունից հետո փոքրիկ երեխաները ավետիս են ման գալիս և ալյուր կամ մի քանի կոպեկ հավաքում:

Հետևյալ օրը ներկա լինելով Զրօրհնյաց տոնին՝ միմյանցից խլում են օրհնած ջուրը, խմում են, վերքերին քսում, տուն տանում: Ոմանք էլ այդ ջրով մի քիչ խմոր են հունցում, մի փոքրիկ բլիթ չինում և թելի անց կացրած պահում են: Երբ մի որևէ ոման պղծվի, այսինքն եթե մուկ, կամ անասուրբ համարված կենդանի, կամ մի կեղտոտ բան ընկնի մեջը՝ այդ խմորը ձգում են ոմանի մեջ և ջուր ածում լվանում. հետո խմորը նորից հանում, չորացնում և պահում:

Ս. Սարգիս. Առաջավորաց պասը կոչում են ս. Սարգսի պաս, որովհետև սրա տոնը գալիս է անմիջապես պասը վերջանալիս: Ժողովրդի մեծ մասը ոչ միայն սիրով պաս է պահում, այլև «միաժուռ է բռնում», այսինքն օրը միայն մի անգամ, կեսօրին է հաց ուտում: Ս. Սարգսի տոնին նախընթաց, ուրբաթ երեկոյին բոլոր տներում «կլոնդրակ» են պատրաստում՝ փոխինդը չաղում են շաքարաջրով, բաքմազով և կամ դոշապով, հետո կլորակ, մանր կտորներ անում և բաժանում տնեցիներին:

Նույն երեկոյին երեխաները չրջում են տների կտուրները, հերթիկներից դուլպաներ և կամ քսակներ քաշ անում և երգում.

Խըդըր[69] խըդըր դիարլար
ասում են,
Խըդըրա չէօրակ գօհալլար
Հաց կը դնեն.
Մէհան խըդըրըն ղուլի եամ,
Ես ծառան եմ,
Աեաղընէն նալի եամ,
Ոտի պայտն եմ,
Բաչընըն թորբասի եամ,

[69] Խըդըր Նաթի թուրքերը կոչում են ս. Սարգսին:

Գլխի տոպրակն եմ,

Խըղըր դետուի հայինան.

գնաց

Պիր բալաճա թաինան,

Մի փոքրիկ քուռակով,

Թայի փալչխայ բաթթի,

Քուռակը ցեխըն խրուեց,

Ջխարդի հայհայինան.

Հանեց աղմուկով:

Տնեցիները դուլպի կամ քսակի մեջ ածում են փոխինդ, կլոնդրակ և կամ մի քանի կոպեկ:

Քնելու միջոցին պառավները դռան հետևը դնում են մի մեծ սինի, վրան փոխինդ մաղում և շուրջը մոմեր վառում և այնպես թողնում, որպեսզի մյուս օրը նրա փոխինդի վրա ձիու պայտի հետք նկատեն՝ դրանից հասկանան, թե ս. Սարգիսը, որ այդ երեկո ման է գալու՝ իրենց տունն էլ է այցելել: Շաբաթ առավոտյան, փոխինդը լավ զննելուց հետո, նույն փոխինդով խաշիլ են եփում:

Հետո, երբ սկսում են ուտել՝ երիտասարդ տղաներն ու աղջիկները իրենց առաջին պատառները տանում դնում են կտուրը և դիտում, թե թռչունները վերցնում, ուր են տանում, դնում ուտելու, որովհետև հավատում են, թե այն տեղից, այն տնից պիտի գա սպասելի հարսնացուն կամ փեսացուն:

Բարեկենդան. Ս. Սարգսի տոնից սկսած մինչև մեծ պասը գյուղացիների համար ուրախության օրեր են: Ամենքը աշխատում են որքան կարելի է լավ անցկացնել այս օրերը, ուտել, խմել, ուրախանալ: Այս միջոցներում ամեն տուն աշխատում է միս ձեռք բերել. հարուստները մորթում են գառ, ոչխար, կով և բարեկամների հետ ուտում: Ուրախությունը զգալի կերպով ավելանում է բարեկենդանի շաբաթվա հինգշաբթի օրից և գագաթնակետին է հասնում կիրակի օրը, բուն բարեկենդանին: Այս երեք օրվա ընթացքում ոչ ոք գործի չի գնում, երեխաներից սկսած մինչև ծերունիները ուրախանում են: Երեխաները վեգի են տալիս, ձնծոփ և այլ զանազան խաղեր խաղում, երիտասարդները կամ գոտեմարտում են, կամ ձիարշավ կազմում, կամ լախտի և այլ խաղեր խաղում. հարսներն ու աղջիկներն էլ «չինչի» են տալիս (ճլորդի են խաղում) և կամ պարում են:

Երիտասարդներից մի խումբ իրենց միջից ընտրում են մեկին, որ ավելի ծաղրածուի համբավ ունի, հագցնում են կարմիր շորեր, կապում են թուր, կրծքին կախում նշաններ և «փաշա» անունը տալիս նրան: Ապա մի քանիսին էլ ծառաների շորեր են հագցնում, փաշին էշ են հեծցնում և զուռնա-դավալի առաջնորդությամբ պտտեցնում գյուղը: Խումն բազմությունը հետևում է նրանց: Ճանապարհին փաշան զանազան մարդկանց կանգնեցնում է, հարցեր տալիս, զանազան միմոսություններ անում և վերջիվերջո

նրանցից տուգանք պահանջում: Մառանները սոխում են և առնում: Տուգանքները լինում են փողով և զանազան արմտիքներով: Երբեմն պատահում է, որ միևնույն գյուղում երկու խմբեր ցանկանում են այդ խաղը խաղալ: Այս դեպքում, երբ նրանք հանդիպում են միմյանց՝ փաշաները միմյանց երգիծական և վիրավորիչ խոսքեր են ուղղում, հետո կատակով միմյանց խփում: Բանը մեծանում է, ծառաները միմյանց են առնում և տուր ու դմփոցը սաստկանալով՝ «հանաքը չանաք» է դառնում, քիթ ու բերան արյունում: Վրա են հասնում տանուտերն ու գղիրը, մարակի հարվածներով ցրում կռվողներին:

Կիրակի կամ երկուշաբթի օրը փաշան յուր ծառաներով և ընկերներով «քեֆի են նստում» և հավաքած փողով և ուտելիքներով քեֆ անում: Ջուռնա-զավալն ածում է, բաժակները պարպվում, գլուխները տաքանում և կենտ պարը սաստկանում: Ամենքը պարում են՝ ձեռքերին հրացան, սարճանակ, դաշույն բռնած: Ցանկանալով իրենց ճարտարությունը ցույց տալ՝ պարած միջոցին արձակում են հրացան կամ սարճանակ: Ոմանք էլ երկու դաշույն ձեռներին բռնած են պարում, դաշույնները արագությամբ ոտների միջով անց կացնում, վար ձգում և կրկին երախակալից բռնում, ծայրը բերանն առնում և պարում: Պատահել է, որ մարդիկ են վիրավորվել և նույնիսկ մեռել, որովհետև սարճանակն արձակելիս՝ սխալվել են և դեպի վերև չեն ուղղել: Պարը իսկապես հետաքրքիր է դառնում՝ երբ կենտ պարից տաքացած՝ սկսում են բոլոր-պարը պարել: Պարողները, որ բացառապես տղամարդիկ են լինում՝ ընտրում են մի «պարբաշի» (պարի առաջնորդ), ապա միմյանց ձեռք բռնելով՝ շրջան կազմում: Առաջնորդը հրամայում է ջուռնա-զավալին մտնել շրջանի մեջ և ածել, ապա ձեռն առնելով մի ճիպոտ՝ սկսում է պարը: Սկզբում պարում են շատ կամաց, հետո հետզհետե արագացնում են և վերջացնում թռչկոտելով: Պարի ժամանակ առաջնորդը զանազան ձևեր է անում, օրինակ ծափ է տալիս, պլպղում է, իր կամ մեկ ուրիշի ականջը քաշում, իր տրեխը հանում, զանազան կենդանիների ձայներ հանում և այլն: Պարողները նույնությամբ կրկնում են նրա արածները, իսկ պարի առաջնորդը խստությամբ հսկում է նրանց վրա և ճիպոտով խփում՝ եթե սխալ կամ ուշ են կատարում:

Տեառնընդառաջ. Այս բառը ժողովրդի բերանում աղավաղվելով դարձել է «Դըրդառաչ»: Երևկոյան ժամերգության միջոցին ջահը վառում են, ժամվորներից շատերը և բոլոր նորապսակները մոմեր են առնում և վառում: Առաջները նորապսակները ցրտնի էին բերում, եկեղեցու գավթում դարսում, քահանան ժամերգության միջոցին դուրս էր գալիս, նորապսակների ձեռքի մոմերով վառել տալիս ցրտնիի կույտը և ժամերգության չարունակությունը կատարում կրակի շուրջը: Այժմ այս սովորությունն արդեն վերացել է: Միայն ժամերգությունից հետո ժամավորները հարձակվում են ջահի վրա, խլխլում մոմերը և վառած տանում իրենց տները և կտուրների

վրա դարսված խոտը, կղմակը[70] վառում և դիտում, թե ո՞ր կողմը կերթա ծուխը, որովհետև այդ նշան է, որ այն կողմի արտերը լավ են լինելու:

Հետո տղամարդիկ, մանավանդ երիտասարդներն ու երեխաները, թռչկոտում են բոցերի վրայից: Երբ հանգչում է կրակը՝ մոխիրը խլխլում և քսում սրա-նրա երեսին, տանում լցնում հավաբունը՝ որ հավերը թուխս ընկնին, հերթից ներս՝ որ տունը «բյարաքյաթով լինի» և այլն: Ամուլ կանանց պարաններով քաշում-հանում տան հերթիկից, որպեսզի երեխա ունենան: Նույնը անում են և մանր երեխաներին, որ շուտով ոտք ելնեն:

Մեծ պաս. Առավոտ վաղ նորահարսները երբ գնում են ջուր բերելու, բերում են իրենց հետ և յոթնական քար կամ չոփ: Քարերը լցնում են տան մի անկյունում, իսկ չոփերը վառում: «Աթար պատրաստող» հարսն էլ յոթը աթար է շինում և բերում գոմի պատի ներքին երեսին խփում: Պառավ տատն էլ «ակլատիզ» կամ «մեծ պաս» է շինում (մի սոխի վրա յոթ գույնզգույն փետուրներ խրեցնում) և կախում է տան հերթիկից: Երբ երեխաները զարթնում են, տատը ցույց տալով նրանց ակլատիզը՝ խրատում է պաս չուտել, ապա թե ոչ՝ ակլատիզը կպատժի: Սա ծառայում է գյուղացիներին և որպես «մեծ պասի օրացույց», որովհետև ամեն կիրակի երեխաները մեծ ուրախությունով պոկում են ակլատիզից մի փետուր: Այնուհետև բոլոր հարսները սկսում են մաքրել տունը, լվանալ բոլոր ամանները, արդեն դատարկված կարասներն ու պուտուկները և բերանքսիվայր շարել: Ավելի մոլեռանդները լվանում են նաև թոնրի շուրթը:

Ապա ննջեցյալների տերերը սեղաններ են պատրաստում՝ քյուրսիների վրա դնում են բաղարջ, բակլա, փլավ, բոխի, ավելուկով աղցան, օղի և այլն: Բարեկամներն ու հարևանները քահանայի առաջնորդությամբ գալիս են տները, հոգոց ասում, օղի խմում, մի քիչ էլ հաց ուտում:

Հետո ամեն տնից տղամարդիկ օղի և ուտելիքներ առած գնում են եկեղեցու գավիթը, ուր քահանան մի հոգոց է ասում բոլոր ննջեցյալների համար, և ապա բոլորը խումբ-խումբ կամ խառը նստած ուտում են բերածները և հետո գնում իրենց ննջեցյալների գերեզմանները առանձին-առանձին օրհնել տալիս: Բայց այս սովորությունը վերանալու վրա է:

Միջինքին մի առանձին ծես չի կատարվում. միայն նշանած երիտասարդների տնից հարսնացուի տունը նվեր (խոնչա) է ուղարկվում ձեթով պատրաստած մի քանի գույգ գաթա, մի կուլա գինի և մի չիչ օղի:

Ծաղկազարդ. Ծաղկազարդին ասում են «Զրիզարդար»: Այդ օրը ուռենու ճյուղեր են օրհնում եկեղեցում, որ հետո կոտրատում և ահագին աղմուկով բաժանում են իրենց մեջ, տանում տուն, կապում այանը, որպեսզի մնա մինչև զատիկ, երբ վառում են զատկական կերակուրը պատրաստելիս:

---

[70] Խոտը պոբելով չինում են կապ, կեմ, իսկ սա մանրացնելով՝ դարձնում կղմակ:

Նույն օրը եկեղեցում նշանած աղջիկներին «զրդարած մոմ» են տալիս, չարշաթ գցում գլխին, միրգ լցնում գրպանը, «յախա» նվիրում: «Զրդարած» (զարդարած) մոմը պատրաստում են այսպես. մի եղեգ ճղճղում են և ճղճղված տեղերում մոմերը ամրացնում և կանաչ-կարմիր թելերով կապում:

Նույն օրը թե եկեղեցում և թե դուրսը երեխաները «ճռռան և ճչանակ» են ածում:

Զարչարանաց շաբաթ. Ավագ երեքշաբթի երեկոյան, ժամերգության մի-ջոցին, տասն կուսանաց ավետարանը կարդալիս՝ տասը երեխայի ձեռք մո-մեր են տալիս և կանգնեցնում ավետարան կարդացողի շուրջը: Ապա մի ափսեի մեջ ածում են տասը կլորած թղթեր, որոնցից հնդի մեջ «հիմար», իսկ մյուս հնդի մեջ «իմաստուն» է գրված, և առաջարկում են այս երեխա-ներին վերցնելու, որպեսզի գուշակեն, թե ո՞վ հիմար և ո՞վ իմաստուն է դառնալու: Հետո հիմարների մոմերը հանդցնում են, նախատում, ծեծում և եկեղեցուց դուրս անում: Իսկ իմաստուններին գովում են:

Ջորեքշաբթի օրը տները մաքրում են: Մկնատամ ունեցողը ուխտ է գնում Որոտնա վանքը և սեղանի մոտից մի քիչ հող վերցնում, կանթեղի ձեթով շաղախում և քսում մարմնին, որ մկնատամն անցնի:

Հինգշաբթի օրը ամեն մի տնից մի փունտաչափ կարագ են տանում եկե-ղեցի և տալիս քահանային, որից նա մի փոքրիկ մասը պահում է օրհնելու, իսկ մնացած մասը ուղարկում է իր տուն: Ոտնլվային քահանան բոլոր ծե-րերի ոտները և երիտասարդների ձեռները լվանում է և յուղ դնում: Սա-կայն բոլորը հերթի չեն սպասում, այլ թափվում են վրա և խլխլում յուղը, եկեղեցուց դուրս վազում, և քսում աչքերին, ականջներին, ճակատին: Ոմանք էլ տանում են տուն և քցում խնոցու մեջ, որպեսզի կարագը առատ լինի:

Ուրբաթ օրը ամեն մայր իր մինչև տասը տարեկան երեխայի մեջքին, չուխայի կամ արխալուղի վրա, կարմիր, սպիտակ կամ կապույտ կտորից խաչ է կարում, որ կոչվում է «ուրբաթարուր» և կամ աղ ուսին «չախմախ» ամրացնում, որ նույն օրը դարբիննները չինում են պողպատից: Սրանց նպատակն այն է, որ երեխային կայծակ չխփի:

Նույն տարին ննջեցյալ ունեցողները ուրբաթ առավոտ վաղ ոսպով չոր-վա (սպաս, ապուր) են եփում և բաժանում հարևաններին, որպես հոգեբա-ժին: Իսկ երեկոյան քահանան գնում է դրանց տները հոդոց ասելու:

Շաբաթ օրը չատ-չատերը ծոմ են պահում և քաղցած փորով գնում են եկեղեցի, իրենց հետ մի-մի ձու վերցնելով, որպեսզի հենց որ «Աւետ կե-ցէք»-ը ասեն՝ անմիջապես ձուն ուտեն, նույնիսկ եկեղեցում: Նույն միջո-ցին գրեթե բոլորն էլ ցրվում են տները, «պասը բանում են» ձվով և ուտում ձուկ, փլավ և բազկաթան: Ուտելուց հետո անմիջապես դուրս են գալիս և նայում արևին, որպեսզի «արևով կերած լինեն»:

Նշանած աղջիկները իրենց կնոքանց տներից ձու, չաքարեղեն, հայելի, դանակ և այլ մանր բաներ նվեր են ստանում:

Զատիկ. Կիրակի օրը շատ վաղ եկեղեցու դռանը բաժանում են մատաղները, որ անում են հետևյալ կերպով: Նախապես ընտրում են մի քանի մարդ, որոնք շրջում են բոլոր տները և «մատաղ» հավաքում: Ոմանք մինչև 50 կ. փող են տալիս, ուրիշները ալյուր, ձու և այլ մթերքներ: Հետո այս մթերքները ծախում են և գոյացած ամբողջ գումարով եղներ առնում: Մատաղացու եղները զարդարելու սովորություն չկա: Գիշերը մորթում են և պատրաստում: Առաջները մատաղի արյունից քսում էին եկեղեցու պատին, բայց այժմ այլևս չեն անում: Միայն հավկուր ունեցողները, որոնք արևի մայր մտնելուց հետո այլևս չեն տեսնում՝ քսում են այս արյունից իրենց աչքերին, որ առողջանան:

Նշանած երիտասարդների տնից այս օրը մի դառ, կարմիր չարղաթը վզից կապած, մի քանի կարմիր ձվերով, մրգերով ու մի չիշ օղիով ուղարկում են հարսնացուի տուն:

Այս օրը տների ձեռներին և գրպաններում կարմիր ձվեր են լինում: Սրա մասին պատմում են, թե Քրիստոսի չարչարանքի ժամանակ մանրավաճառները փչացած ձվեր էին տալիս երեխաների ձեռքերը, որ խփեն Քրիստոսին. սակայն ձվերը առանց Քրիստոսին դիպչելու հետ էին դառնում, թարմացած և կարմիր գույն ստացած: Ի հիշատակ այս անցքի, ասում են, տնօրինել են զատկին ձվեր ներկել:

Երեխաներից սկսած մինչև ծերերը այդ օրը անց են կացնում ձու կռվացնելով. ձվի ծայրերը առամներին խփելով՝ ձայնից գուշակում են, թե որն է ավելի պինդ, ապա մեկը բռնում է իր ձուն, սուր ծայրը վերև ուղղած, իսկ մյուսը իր ձվի սուր ծայրով խփում այս ձվի ծայրին: Երբ կոտրվում է մեկի ծայրը՝ դարձնում են մյուսը: Եվ երբ մի ձվի երկու ծայրն էլ կոտրվում է՝ արդեն խաղը տարված է համարվում և տանողն ստանում է ձուն: Ոմանք էլ «ըստում ըստումի» են տալիս. հողի երնեք կույտերից մեկում մի ձու են թաքցնում, հետո «ըստումի տվողը» գալիս և

Ըստում, ըստում,
Քարի տընտում

ասելով՝ մատով ցույց է տալիս երնեք կույտն էլ և հետո դնում մեկի վրա: Անմիջապես կույտը հետ են տալիս, և եթե ձուն դրա մեջն է լինում թաղված՝ տանում են, եթե ոչ՝ տարվում, տալիս են մի ձու:

Շատերն էլ ուխտ են գնում զանազան ուխտատեղիներ, մանավանդ Բռնակոթի Կրով ավերակ եկեղեցին:

Երկուշաբթի, մեռելոցին, զանազան կերակուրներ, գինի, օղի վերցրած գնում են գերեզմանատուն: Այստեղ մի կողմից լալիս են, մյուս կողմից ննջեցյալների «հոգու փրկության համար» կոնծում: Քահանան էլ ամեն մի

ննջեցյալի գլխին մի հատ «թապլիկով» օրհնում է: Գինի սիրող ննջեցյալներին էլ մատ են հանում՝ գինին ուղղակի ածելով նրանց գերեզմանի վրա:

Համբարձում. Համբարձման նախորդ երեքշաբթի առավոտյան աղջիկները խումբ-խումբ, երգելով և հազար ու մի հանաքներ անելով գնում են դաշտերը ծաղիկներ հավաքելու: Նրանց հետևում են երիտասարդների խմբերը, որոնք աշխատում են գրավել նրանց սրտերը քաղցը երգելով, գոռեմարանելով, վազելով, միմյանց հետ սրախոսություններ անելով:

Հետևյալ օրը, չորեքշաբթի, նույն խմբերը սկսում են փնջեր կապել: Երգը և սրախոսությունը միշտ ընկերակցում է այս ախորժելի աշխատանքին:

Հինգշաբթի առավոտյան, շատ վաղ, գնում են և յոթ աղբյուրից ջուր և յոթնական քար լցնում մի օշնակի (քիլա, փարչ) մեջ, բերանին մի մեծ փունջ գնում, շուրջն էլ ծաղիկներով զարդարում: Ապա վրան մի չարղաթ ձգում և տանում գնում մի ընկերուհու տանը:

Ապա ծաղիկների փնջերը տանում են աղբյուրը, ջուր են սրսկում վրան ու հետո մի փոքրիկ սալայի մեջ ածելով գնում են գլխներին ու շրջում գյուղը: Ամեն մի տան առաջ կանգ առնելով՝ խմբով երգում են մի քանի «ջան գյուլում» ու ծաղկի փնջեր տալիս տանեցիներին: Սրանք էլ զանազան նշաններ՝ բանալի, կոճակ, մատանի և այլն, տալիս են աղջիկներին, որ տանեն ձգեն վիճակի օշնակի մեջ: Վերցրած ծաղիկները կապում են այուններին, և այդպես երկար պահում: Աղջիկներին էլ տալիս են կաթ, ձու, յուղ, բրինձ և այլն:

Բավական նվերներ հավաքելուց հետո՝ խմբերը առանձնանում են գյուղից դուրս, դաշտերում, կերակուրներ եփում ու խմբով նստում՝ ուտում: Ապա սկսում են վիճակ հանել: Շուրջանակի բոլորվելով՝ մի փոքրիկ երեխայի նստեցնում են իրենց մեջտեղը, վիճակի օշնակը դնում են գլխիկը և մի չարղաթ ձգում երեխայի գլխին, այնպես որ նա օշնակի հետ միասին բոլորովին ծածկվում է: Ապա վիճակի երգեր են երգում և յուրաքանչյուր երգից հետո ասում երեխային, որ հանի օշնակից մի նշան: Վիճակի նշաններ տվողներն էլ նկած խմբված են լինում սրանց շուրջը և վրա ընկնելով նայում են, թե ում տվածն է: Երգված վիճակի երգից դուշակություններ են անում, որին խիստ հավատում են: Վիճակի երգերը սովորաբար աղջիկներն են երգում, բայց շատ անգամ էլ տղաների խմբերը գալիս են սրանց հետ մրցելու: Մի տուն սրանք են ասում, մնկը նրանք, և երբ մի խումբը այլևս նոր վիճակի երգ չի գտնում ասելու՝ հաղթված է համարվում, և ենթարկվում է գրեթե բոլորի ծաղրին:

Նույն օրը առանց բացառության ամեն տուն «կաթնով» է եփում. տաքացնում են կաթը, մեջը բրինձ ածում և եփում: Շատ ընտանիքներ էլ կաթ են բաժանում որպես ողորմություն:

Գառնարածն էլ ծաղիկներով զարդարում է մի գառ և նրան ածելով այն տները, որոնց գառները արածեցնում է՝ ձու և այլուր է հավաքում:

Նավասարդ. Նավասարդի մեկը սիսիանցիների համար այժմ էլ համարվում է տարեմուտ: Բարեկամները միմյանց մոտ են գնում և շնորհավորում նոր տարին: Ամեն տուն անպատճառ «հարիսա» է դնում, այս օրվա հատուկ կերակուրն այդ է: Նշանած աղջկան սկեսրանքը ընկույզ, մրգեր և չարղաթ են ուղարկում:

Մելիքների ժամանակ յուրաքանչյուր տան մեծը մի խնճորի մեջ 15-30 կոպեկ խրած տանում էր մելիքին տալիս, ձեռքը համբուրում և նոր տարին շնորհավորում: Նա էլ մի երկու եզ էր մորթել տալիս և դաշտում բոլորին ճաշ տալիս: Այժմ այս սովորությունը թեև վերացել է, սակայն տեղ-տեղ մնացել է դեռ նվերներ տանելու ավանդությունը. սակայն նվերները տանում են ոչ թե մելիքին, որ այլևս չկա, այլ գյուղի տանուտերին:

Ս. Աստվածածին. Մինչև ս. Աստվածածնի վերափոխման տոնը, խաղողը պատ համարելով, չեն ուտում: Այդ օրը մյայն, երբ եկեղեցում օրհնում են և բաժանում ժամվորներին, որ ահագին աղմուկով միմյանց ձեռից խլելում և ուտում են՝ ժողովուրդը սկսում է գործ ածել խաղող:

Ս. Խաչ. Նույն տարում ննջեցյալ ունևոդների ս. Խաչի ուրբաթ օրը ոսպով չորվա են անում և իբր հոգեբաժին բաժանում ու գերեզմանները օրհնել տալիս:

Նույն օրը ուխտ են գնում գանազան ուխտատեղիներ և մանավանդ Լոր գյուղի մոտ գտնված «Ծառու ս. Յոհաննես»:

Ս. Գեորգ. Ուխտ են գնում Շաղատի ս. Գեորգ եկեղեցին:

Կարմիր խառա քիսացու,
Սիպտակ կովը մսացու,
Տիւ էս իմ հօր հարանացու,
Ես քու հօրը վինսացու:

Գետին էն ղոլը[71] քարքարոտ,
Ռաթան չալը ծըլծալոտ,
Աղջիկ կայնի մէկ պաչեմ
Ձեր որթերը[72] տանեմ արօտ:

Մին ջաղաց էրկու դռնի,
Պէարց[73] ըրէք ետրս թիւկնի,
Ես դուն մին բաղում պիտինք,
Ես չինարի, դու նունի:

Արեւը կամար, կամար,
Կապել ես ոսկա քամար,
Յիթսուն օր պատ էմ պահէ
Իմ հարի ճամփի համար:

Մտալ եմ դետը խոր ա,
Վոսկայ[74] հալաւնին[75] նոր ա,
Ա՜յ նանի, մին ալ[76]կարի,
Վոսկի կոճակնի[77]չարի:

Ճաղացի սիւռնը տարթ ա,
Կտորը լիքը մարթ ա,
Ետրս պաղան ա[78] կէալի,
Եայլուխը լիքը վարդ ա:

Ճաղացին սիւռնը տաշած ա,
Եայլուխը դիւլ քաշած ա,
Մեռնիմ թոխ թոխ ունքերիտ,
Հէնց ղալամաւ քաշած ա:

Գետ ա գալի լոք տալաւ,
Կարմիր խնձոր ծափ տալաւ,
Հրէս եկաւ իմ հարը,
Գէօդ ձին տակին լոք տալաւ:

Ռինացել էս, եկալ էս,
Վոններդ ցեխումը պուհալ էս,
Խելքիտ ղուրպան այ տղայ,
Դէօսա[79] ու պիւշման[80] ջոկալ էս:

Հալիս կարին ցիլ[81]ունիմ,
Ջալ ապրիշում[82]թիլ ունիմ,
Ջահիլ ճիվան[83]սըրկաւագ
Ես քեզանից մէյլ[84] ունիմ:

Սարին խոտը ծեղ, ծեղ,
Ախպէր գնանք մին տեղ.
Վոր կէօղները վրայ տան,
Գլուխս դնեմ գլխիտ տեղ:

Էկ քինանք էն օխը,
Գիւղպատառվին կկլսխը,
Ամէն ծառան[85]մին փշատ
Իմ հարին էօմրը[86] շատ:

---

[71] Կողմը:
[72] Հորթերը:
[73] Բարձը:
[74] Ոսկե:
[75] Հանդերձ:
[76] Կարմրավուն շոր:
[77] Կոճակներ:
[78] Այդուց:
[79] Բարեկամ:
[80] Թշնամի:
[81] վարած արտ:
[82] Մեհտաքս:
[83] Նորատի:
[84] Հույս:
[85] Մատից:
[86] Կյանքը:

Էն սարին քեզ ա բուսալ,
Իմ հարին բախ ա բուսալ.
Խապար տայրէք իմ նանուն,
Դիլակը տեղ ա հասալ:[87]

Ճաղացիս մէջը մարդ ա,
Կառւրը լիքը տարթ ա,
Հրէս էկաւ իմ հարը,
Գէօտիկը լիքը վարդ ա:

Մեր տանը տակը նուշ էր,
Իմ հարը թառլան ղուշ էր,
Ապէր խատրըտ չմնայ՝
Եարս քանց քեզ անուշ էր:

Վոչխարն էլալ ա դիւզը,
Ջոկեցէք ալագեօզը,
Իմ հէր քեզ աղջիկ չի տայ,
Սրբի էրեսիտ թողը:

Այ հար արա, հար արա,
Ոսկե քեանքիւլտ եր արա,
Իմ հէր քեզ աղջիկ չի տալ՝
Գլխիտ վախտին ճար արա:

Շողքը ընկլից մեր պատին,
Արքայութիւն իմ տատին,
Վոդիտ[88] էրվի ա՛յ տատի,
Ինձ խի տվար չոլախի:

Կանգնել ես կանչըմ ա չես,
Պօյիցտ ամաչըմ ա չես,
Եկայ կչտովտ անց կացայ,
Տէր էս ճնաչըմ ալ չես:

[87] Ուխտը կատարվել է:
[88] Հոգիդ:

Իմ գիւղումը[89] քաղած ա,
Պանձր սարին կէաղած[90] ա
Հով[91] վեր[92] իմ գիւղումիս տեղն ասլ
Հէրը, ախպէրը թաղած ա:

Քաղքի քարը քէահրըպար,
Իմ բոյ քու բոյ բարաբար,
Խնձոր քցեմ ել տար,
Դու ալ դառար բէհդըբար:[93]

Ախպէր ունիմ սարմն ա,
Շլին կէօտկի ծալմն ա,
Ախպեր քու չվիտ ածա,
Քիւրըտ Լորուայ քոլումն ա:

Ես մին կանանչ խիար էմ,
Իմ հարին ըխտիարին էմ,
Կաղնալ էս մին ետ հչի,
Տես հինչ մազալլու եար էմ:

Էյվանս ցան էմ ածալ,
Պոյաւս մին էմ ածալ.
Եար ասացի, եար չըեցի[94]
Եաւնճի ման էմ ածալ:

Ղուշը ծկըլտայ բաղումը,
Կանանչ խիարը[95] թաղումը,
Ես մին սարքած սուրաո[96] պտի:
Իմ հարին օթախումը:[97]

[89] Փունջ:
[90] Թագցրած, կեղած:
[91] Ով:
[92] Որ:
[93] Դրժող:
[94] Ճարեցի:
[95] Վարունգ:
[96] Պատկեր՝ թուրքերեն:
[97] Սենյակում:

Սըհէնց նիւր[98] հանդերը,
Թաղա արծաթի բէանդերը,[99]
Դանակ պտի սիրտս ճղենք,
Բուղում բուղում[100]դէարտերը[101]:

Թխպալ ա թոր չի կէալի,
Մթնել ա տուն չի կէալի,
Տեղ էմ ցկալ պէարց դրալ,
Աչքերս քուն չի կէալի:

Քոլը քոլին թուշումը,[102]
Ծեռնը[103] պիժան[104] կիւշումը[105]
Իմ եարին ըշտեղ տեսար,
Շուշուայ ղալին թուշումը:

Ծրաւալ էմ ճիւր[106] պիրէք.
Ըսպահանու հուն պիրէք,
Կը մեռնիմ էս ղարիպ տեղը,
Ղարիպ ղուշս տիւս պիրէք:

Տանս տակը աղ մոշի,
Օխտը տարի եար եշի,[107]
Ա ջամհատ ըստհենց պան կըլնի՝
Եարն ալ կը տա՞ն ուրիշի:

Քամին կանի բոքին[108]տանի,
Վոչխարը թոքին կանի,[109]
Սիրի սիրան հանողը,
Հոդին ստանան տանի:

Ջրի վրան սաղ պըտի,
Իմ էօրդակս ղազ պտի,
Հընչիս ա պէտքը բէակի տղան,
Իմ եարս նախշուն պըտի:

Տանս տակը շլորի,
Ճղնկրը նա հլորի,[110]
Հըրեննակ[111] էն քըւորը,
Օխտն ախպօր թագ կը հլորի:

Հոռի ծառին բար չըլիլ,
Առանց քէօլկայ նար չըլիլ,
Ա հէր, ա՜ մէր խօսալ մի՛ք,
Խառնուած սրտին ճար չըլիլ:

Կտրաւս քէօչ ա քինում,
Քէօչ քիօչի մէջ ա քինում,
Հըրեննակ էն քըւորը՝
Օխտն ախպօր մէջ ա քինում:

Սարերին թռխպլը պըտի,
Որևրին[112] կոխպլը[113] պըտի,
Կիր[114] կիրող[115] ղալամ[116] ածող
Ծնկանտ թռխտը պտի:

Թամքը թամքին վրայ,
Իւղունիկը (աղաւնին) վանքին վրայ,
Իմ ախպօր ըշտե տեսար
Թաղաւորին թախտին վրայ:

---

98 Այսպես ընկած:
99 Օղակ:
100 Շարք-շարք:
101 Վշտերը:
102 Անկյունում:
103 Ձեռքը:
104 Գլուխ քանու մածուն:
105 Դուչ:
106 Ջուր:
107 Նայիր:
108 Պնխի:
109 Հեռում է:
110 Ոլորի:
111 Երանի:
112 Հոր:
113 Հորի պատերը կալնող ծղոտ, որ պաշտպանում է ցորենը:
114 Գիր:
115 Գրող:
116 Գրիչ:

Ես էն եարին եար պիտի,
Կռակուսը խիար պիտի,
Էն եարի չոքած տեղը՝
Մին չինարի ծառ պիտի:

Աղչի քնանք մեր բաղը,
Պոկենք չամամի թաղը,
Քու էրէսիտ վարագը՝
Հանել ա սրտիս դաղը:

Ոչխարն էլաւ էն դիւզը,
Եր ելաւ վոննի թոզը,
Եար քու քթակտ վերկալ,
Թալի տամ քեանքիւլիտ թոզը:

Մթնալ ա մթնաճանաճնչ,
Ջեւինջի քոլը կանանչ,
Հրէս եկը իմ եարը,
Բեղերը առնակալած:

Ծուն դինեմ վիրան խաչեմ,
Նիհ իլեմ կտորը եչեմ.
Տեսնամ եարս գալիս ա,
Կուանամ չաքմէքը քաչեմ:

Այ հաւան էմ հաւան էմ,
Մեծ կարպետին խաւան[117] էմ,
Էլ[118] դիտայ, ալամ[119] դիտայ,
Ես էն եարին հաւան էմ:

Աղչիկ աղչիկ համ օնիս,
Ջորս աւանի ծամ օնիս,
Քո հէր, քո մէր չատ ապրի,
Ինձ գալի դու կամ օնիս:

Ա՜յ սար պտի, եար պտի,
Սարին վրայ որթ[120] պտի,
Իմ եարին բերանըմը
Մին կուտոր շաքար պտի:

Խնճոր օնիմ կծած ա,
Մաջը օսկով լցած ա,
Ախպէրս օզնց տուի ոչ,
Էազիզ եարիս պաղչած ա:

Տանս տակին կայ նռնի,
Պէարց պերաք եարս կռնի,
Ես տիւ մին պէաղում պտինք
Ես չինարի, տիւ նռնի:

Աղչի անըմըտ խանի,
Լեչակտ քամին տանի,
Ես տիւ մին պաղում պտինք,
Իմ հէր քիւ հէր խնամի:

Քնացել էս օրաւ եկ,
Եաղլաղտ խիարաւ եկ.
Մեր տիւռնը դալմաղալ ա,
Շօռ տօ աղբըրաւ եկ:

Ախպեր հանաքիտ դուրբան,
Ճուխտ ճուխտ դանակիտ դուրբան,
Փափախտ հան[121] ես տիրալ,
Արած դիւանիտ[122] դուրբան:

Վարթաւորը գալիս ա,
Շաղիկս հնձելիս ա,
Վարթեւորայ սու[123] աղչիկ,
Սէաստ ծլվըլալիս ա:

---

[117] Խավից:
[118] Օտար:
[119] Բոլորը:
[120] Հորթ:
[121] Կողքի:
[122] Դատաստան:
[123] Ջուր:

Աղէի աղէի դէտ քնայ,
Առաջքաւտ ետ քնայ.
Խուռահատին[124] քամին փչի,
Գիւլգազ[125] չալտ ետ քնայ:

Եարս նստած է գերանին,
Հարչու չուին բերանին,
Օսկի դայթան եմ գործում,
Դնեմ ջիբին բերանին:

Հաց կը թխեմ կէարի[126] ա,
Եարս ալ սափարի[127]ա,
Սափար քինալիտ մատաղ,
Խօսքերըտ շաքարի ա:

Իրիկունս մթին ա,
Տաւարը չոր թրքին ա,
Հրէս եկն էն եարը,
Ջեռքը պիւլիւր[128] մրքին ա:

Ճղացիս տիւռնը տաշած,
Եաղլըխիս եօլը քաշած,
Կեռ կեռ ունքերիտ մատաղ,
Ղասիտ ղլամաւ քաշած:

Սարին էն ղոլը ձիւն է,
Էս ղոլս հաւքի բուն է,
Հրէս եկն իմ եարը՝
Շեյակը թաւ թաւ հիւն է:

Հովտը սարին նման ա,
Տեսնանք իմ եարը տանն ա,
Իմ եարին մին քեանքիւլ ունի
Օսկի թելին նման ա:

Ախալէր անուսդ Ուռուշան,
Սեպտակ կօլիտ թոխ նշան,
Եաղլախտ զարկի անեմ,
Պահեմ քո եարիտ նշան:

Թոռ կը գայ արեւ կանի,
Նիշանպահ տերեւ կանի,
Քուրն ախալօրը մատաղ,
Շըղաթաթաղ վար կանի:

Զարտախին թան եմ ածալ,
Բոյաւըտ մըն եմ ածալ,
Խափալ եմ թա քե եմ գալու
Եաղլախըտ փոլ եմ ածալ:

Հաց կը թխեմ եուխայ ա,
Եարիս կէցը[129] չուխայ ա,
Իմ եարը ինձ հունց կը թակի:
Ինքը մին մեծ խոխայ ա:

Ես մին կանանչ խիար եմ,
Քու արտիտ իխտիար եմ,
Գնա գնա ետ եչի,
Ես մին ամանաթ եար եմ:

Մին եար օնիմ օվչի է,
Մէչքը բարակ դամչի է,
Ջեռնաւը բան չի եր գալ,
Լեզուաւը թալանչի է:

Սարերի թարթանջուկ թէազա,[130]
Ճաւուզ,[131] մեխակ քեզ մէազա,[132]
Ինձ պէս նազանի աղջիկ,
Քեզ պէս տղին հունց սազայ:

---

[124] Ուխտատեղի, Խնձորեսկ գյուղի մոտ:
[125] Մահուդե:
[126] Գարի:
[127] Ճանապարհորդ:
[128] Շուրջ:
[129] Հագին:
[130] Նոր:
[131] Ընկույզ:
[132] Ադանդեր:

Ա՜յ աչ կռան ձախ կռան,
Կաքաւը սրռան թռան,
Ա՜յ քեաքլիկ պոչիկ տղայ,
Ես խի՞ էմ մտիդ թռալ:

Սանդ կը թակեմ հախ ա,
Ջմոշկը վռանիս լախ ա,
Ա տղայ շատ մի խօսայ,
Ջալ մուկը ուչխատ կախ ա:

Ա տղայ քինա կալը տես,
Ցորտ աղբրի սալը տես,
Կատոն քեօչկա[133] էմ քթալ,
Խփէն վեր կալ համը տես:

Կաղնալ էս կորիս միջին,
Քաքուլտ թաքնիս միջին,
Թէ ինձ օգես ետ վազես,
Գիւլլան[134] տայ սրտիտ միջին:

Գլօխս թռւթռւն դէմ կը տամ,
Թռւթռւն չէվերը եր կը տամ,
Հով վէր սէրը սիրածան Հանի
Սրտին քարփաթռւն[135] եր կը տամ:

Ա՜յ հատար հատար իննես,
Վրցակի[136]կատար իննես,
Թե ինձ օգես ետ վազես,
Ինքտ ճուճ ու պատառ իննես:

Այ տղայ տվարած տղայ,
Կոճակնէին չարած տղայ,
Իմ հէր քեզ աղջիկ չի տալ
Սիրտը խշարած տղայ:

Խաղ կասեմ խաղիս գլխին,
Իմ հէրանց պէտղին[137] գլխին,
Քաչալն[138]իրան տեղ կանի,
Վողը[139] տամ կաղին գլխին:

Աղջի աղջի համ օնես,
Ճրիկ ճրիկ[140] ծամ օնես,
Քո մօր աչքերը վեր դառնայ,
Թէ ինձ կեալի կամ օնես:

Բոստանս բաղ ա դառալ,
Խըեարս թաղ ա դառալ,
Իմ եարը մին խօսք ա ասալ,
Սրտումս տաղ ա տառալ:

Սարերին թերթիփ ձունը,
Բաղերին ավլան հունը,
Իմ եարս մին խօսք ասեց,
Կոտրեց սրտիս սիւնը:

Հանդեր ա հա՜ հանդեր ա,
Ջիմ արծաթի բանտեր ա,
Դանակ բերէք սիրտ ճղէնք,
Էս ինչ բղում դարդեր ա:

Գետնը եր[141] կարմինջ եմ քցալ,
Մըզը մէջ վարթեր եմ լցալ,
Խաբար տարէք իմ եարին,
Ջիմ[142]իրան դարտէրն եմ լցալ:

Մեր տան տակը վար կանեմ,
Ջալ քչեղակին քար կանեմ,
Վեր իմ սիրածին ինձ տան,
Պելուխիւնս[143] թարգ կանեմ:

---

133 Կերակուր:
134 Գնդակ:
135 Աքցան:
136 Աքաղաղ:
137 Այդի:
138 Ճաղատ:
139 Հողը:
140 Ջրոտ:
141 Վրա:
142 Բոլոր:

Ճղացին տիւռնը կանանչ,
Տիւս կուգամ համանչ ամանչ,
Խորասան եսիր պտի,
Իմ սիրածի նշանած:

Եշըմ եմ երեւում չի,
Ծառերտ տերեւում չի,
Աչքերս ման եմ ածում,
Էն եարը երեւում չի:

Մթնել ա տօն չի գալիս,
Թխպել ա թոռ չի գալիս,
Տեղ եմ ցկալ, պէարճ դրալ՝
Աչքերիս քիւն չի գալիս:

Իմ ծաղիկս քաղած ա,
Բարձր սարին կէաղած ա,
Ծաղկիս երան մին լիւս կէայ
Դիւշմանին աչքը տիւս կէայ:

Գնացի ճուրը[144] ճրագով,
Մէջքիս տվին ուրաքով,
Իմ հօր իմ մօր ինչ ասեմ,
Ինձ խե տուին կրակով:

Հինչ անեմ հնչիս դարտայ,
Կտրան սազիս փարդայ,
Աչղ չի աչղ դառայ,
Եարալու եարիս դարդայ:

Շողքը տուաւ էն պատին,
Մէջքը կոտրի իմ տատին,
Հարուստ տեղը տեղ թողեց՝
Ինձ տուեց էս աղքատին:

Բոխչայ բահար էմ կապալ,
Աղ ու զհար էմ կապալ,
Ես էն եարին հաւան չեմ,
Օժաւ վրայ էն կապալ:

Ա տղայ տվարած տղայ,
Կճուկնէն[145] շարած տղայ,
Իմ հար քե աղջիկ չի տալ
Սիրտը խշարած[146] տղայ:

Սիպտակ ձիին ջուր կը տամ,
Ղալեանին թուխթուն կը տամ,
Ամէն մի եարս միտս կեալայ,
Սրտիս քեալփաթուն կուտամ:

Զափարի պատմա կոխիլ մի,
Շահին ղալպ ա, վոխիլ մի,
Իմ հար քեզ աղջիկ չի տայ,
Քեօնկիլն[147] իմ ա, վախիլ մի:

Սարերը ձիւն կալալ ա,
Արեւ արալ հալալ ա,
Զալում Գեանջեցի աղջիկ,
Դարդերն ինձ կալալ ա:

Բոստանը ջրած տեղը,
Ասեղը թելած տեղը,
Խաբար տարէք իմ եարին,
Հէն էմ իրան դրած տեղը:

Արեւը կծացալ ա,
Ղումերը քուշտացալ ա,
Խաբար տարէք իմ եարին,
Մուշտարիս չատացալ ա:

---

143 Գժութիւն:
144 Ջուրը:
145 Կոճակները:
146 Մաշված:
147 Իրավունք:

Իմ եարը հոր ա իլալ,
Սարերին քոն ա իլալ,
Թող ա եկել թըրչալ չի,
Եափունչին չող ա իլալ:

Ես կէօրիսի ձօրան եմ,
Մեծ բաղին խնձորան եմ,
Խաբար տարէք իմ եարին
Օլքայ օլքայ կորալ եմ:

Կը կաղնեմ կէտին քարին,
Գիր կը գրեմ Նազլու եարին,
Համ կը գրեմ, համ կը ճնչեմ
Աղու կարի ըսաէնց տարին:

Կը կաղնեմ ոնա քարին,
Կը եչեմ Բաքվայ սարին,
Ա՞յ Բաքվայ խազայիններ,
Ողարկեցէք Թէլլու եարին:

Գեան էմ դրալ կաչի,
Աչքս բազար կը եչի,
Ջերան[148] իմ եարի կէալը,
Հալալ կէսս կը մաչի:

Ես կէօրիսի ձորան էմ,
Մեծ պաղի խնձորան էմ,
Խապար ըրաք էն եարին
Էօլքա էօլքա կորալ էմ:

Մեծ արտումը ղուշ կընի
Ցորտ աղբուրին թուշ կընի,
Եարը եարին տեսնալով,
Գիւլը աչըլմիչ կընի:

Կաքավը սուլուլ կը տայ,
Կնճիթը տիւրուր կը տայ,
Հուր վոր մին եար չի ունի,
Օնքերը իւրուր կը տայ:

Նալն ու մեխը կրակումը,
Աւլան ճոթը մկրատումը,
Սէրը սիրածան հանողին,
Թաքը թխոցի գլասումը:

Քարին երայ[149] ղուշ պտի,
Ցուրտ աղբրին թուշ[150] պտի:
Եար քի եարը կը տեսնայ,
Գիւլն[151] աչըլմիչ[152] կընի:

Արեւը սարին երան,
Մըմուռնը քարին երան,
Մին թեւաւոր ղուշ պտի,
Իմ սիրած եարին երան:

Քնացել ես եկալ ես,
Տրեխներտ կոկալ ես,
Ջեռիտ ճպատին մատաղ,
Գառնը մօրան ճօկալ ես:

Կաղնել էս բախայ բախայ,
Վոններիտ չմոշկը լախ[153] ա,
Սեւ տղայ կարմիր աղչիկ,
Բըռնել էն ուրուր եախայ:[154]

[148] Մինչև:

[149] Վրա:
[150] Հակառակ:
[151] Վարդը:
[152] Բացված:
[153] Թույլ, լայն:
[154] Օձիք:

Կայնալ ըս բախա, բախա,
Լեչակիտ տոտը կախ ա,
Սեւ գիւլգաղ[155] աղջիկ
Բռնալ ըն իւրուր եախայ:

Աղջիկը քնաց կալաւը,
Պապղի տուաւ հալաւը,
Օզեց որ յետ եչի,
Նշանածն ընկավ կոլաւը:[156]

Գիւլմ գիւլմ գիւլաասար,[157]
Բուրդ կը մանեմ հովասար,[158]
Էս չէնումը էրկու հարս կայ,
Մինը քանց մինը եաս ա:

Էն եարը հո՞ր ա, տան չի,
Վարած արտը կնանչի,
Էն եարը մին քիւր ունի,
Կընկնի սարերը կը կանչի:

[155] Գույնզգույն:
[156] Կռնով:
[157] Միծաղում ես:
[158] Հավասար:

ԱՎԱՆԴՈՒԹՑՈՒՆՆԵՐ ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԵԾԻ ՄԱՍԻՆ

Ա

Աղեքսանդր Մեծի մայրը սիրահարվել է իրենց մոտ գերի բռնված մի թագավորի վրա, որ նշանավոր կախարդ է եղել: Սա միշտ վիշապի կերպարանք է ընդունել և այնպես եկել թագուհու մոտ, որպեսզի ոչ ոք չկասկածի նրանց սիրո մասին: Այս վիշապ կախարդից եղել է Աղեքսանդրը: Սակայն վերջիվերջո թագավորը սկսել է կասկածել, ուստի և կախարդը փախել է Հայաստան և այստեղ, Մասիսի ստորոտում, առանձին ապրել: Կարճ միջոցում նրա կախարդության համբավը տարածվել է շատ տեղեր և երբ Աղեքսանդր Մեծը եկել է Հայաստան, լսել է այս կախարդի համբավը և ցանկացել դուշակել տալ նրան, թե իր արշավանքները ինչ ելք պիտի ունենան: Բայց նախքան այդ, կամեցել է փորձել նրան և հարցրել է, թե ո՞ւմ ձեռքից պիտի մեռնի նա:

— Ես իմ որդու սրից պիտի մեռնիմ,- պատասխանում է կախարդը շատ հաստատուն կերպով:

Աղեքսանդրը նրա այսպես հաստատուն կերպով խոսելու վրա զայրացած՝ քաշում է սուրը և սպանում նրան: Սա դեռ չմեռած հայտնում է, որ իր դուշակությունը սրտին կատարվեց, քանի որ Աղեքսանդրը իր որդին էր:

Բ

Աղեքսանդր Մեծը գլխի վրա մի եղջյուր է ունեցել: Կամենալով գաղտնի պահել այս, նա իրեն գլուխը խուզող սափրիչներին անմիջապես գլխատել է տվել: Սակայն մի սափրիչ երդումներ տալով, որ ոչ ոքի չի ասիլ այս գաղտնիքը, ազատվում է մահից: Բայց այս սափրիչը չի կարողանում գաղտնիքը պահել, նրա փորը սկսում է ցավել և ուռչել: Ճարահատված գնում է մի դաշտ, կռանում մի ջրհորի վրա և շշնջում. «Իսկանդարի գլխին եղջյուր կա»: Իսկույն փորի ցավը կորում է և ուռուցքը իջնում: Սակայն շուտով ջրհորի միջից մի եղեգ է դուրս գալիս և բավական բարձրանում: Մի հովիվ կտրում է այդ եղեգը, մի շվի շինում և հենց որ սկսում է ածել, շվին պարզ և որոշ կրկնում է. «Իսկանդարի գլխին մի եղջյուր կա»: Պատահում է, որ Աղեքսանդր Մեծը որսի գնալիս անցնում է այդ տեղից և լսում այդ սրնդի ասածը: Անմիջապես կանչում է երդմնազանց սափրիչին և բարկանում է վրան, ասելով թե ինչո՞ւ գաղտնիքը այնպես տարածել է, որ մինչև անգամ հովիվները երգ են շինել:

Սափրիչը երդվում է նրան, որ միայն ջրհորին է ասել, սակայն Աղեքսանդրը չի հավատում և հրամայում է նրան գլխատել:

ՁԱՆԳԵԶՈՒՐ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Զանգեզուրի ոստիկանական շրջանը ընկնում է համանուն գավառի արևելահյուսիսային կողմը և ամբողջովին բռնում է նախկին Հաբանդ գավառը, որ ստորաբաժանվում էր երեք մասի. Ջոր Բարկուշատա, Ջագեձոր և Աղահեճք: Բարկուշատա ձորը այժմյան Շնհերի ձորն է, Ջագեձորը՝ այժմյան Գորիսն իր շրջակայքով, իսկ Աղահեճքը՝ այժմյան Մաղավուզը. վերջին անունը այնքան էլ գործածական չէ: Առհասարակ այս հին անուններն այլևս չեն գործածում, և Զանգեզուր անունը գործ է ածվում ինչպես ամբողջ գավառի, այնպես և այս երկրորդ ոստիկանական շրջանի համար:

Զանգեզուր անունն, ըստ Հայր Ալիշանի, ծագել է Ջագեձոր անվան աղավաղումից, իսկ սա՝ Ջագ նահապետի անունից:[159] Համանական համաբելով առաջին ենթադրությունը՝ կարծում ենք, որ Ջագեձոր խոսքն առաջացել է ոչ թե Ջագ նահապետի, այլ «Ծակերի ձոր» անունից, որովհետև հենց այժմ էլ, Գորիսից փոքր-ինչ բարձր գտնվող ձորը, ուր եղել է ամենահին բնակությունը, կոչվում է «Ծակերի-ձոր», այդտեղ գտնվող բազմաթիվ «Ծակեր»՝ արհեստական քարայրի պատճառով:

Մի ավանդություն էլ ասում է, թե Նոր Գորիսից մի վերստ դեպի հյուսիս գտնվող վանքում երբեմն մի այնպիսի մեծ զանգ է եղել, որի ձայնը շատ հեռուն լսվելիս է եղել, ուստի և ժողովուրդը սովորել է ասել. «Զանգը-զօռ», այսինքն զանգը զորավոր, և իբր թե դրանից էլ առաջացել է Զանգեզուր անունը:

Զանգեզուրի շրջանը սաստիկ լեռնոտ լինելով և հաղորդակցության ճանապարհներ չունենալով՝ ինչպես այժմ, նույնպես և անցյալում շատ անծանոթ է մնացել, այնպես որ միայն հատուկտոր տեղեկություններ կարելի է գտնել մատենագիրների մեջ, որոնք ոչ մի ամփոփ գաղափար չեն տալիս այս գավառի պատմական զարգացման մասին:

Նորագույն պատմությունից էլ հայտնի են Մելիք-Հյուսեինյանների, Մելիք-Բարխուդարյանների, Մելիք Հայկազի և Մելիք Փարամազի տիրապետությունը, որոնք որպես մելիքներ կառավարել են, առաջին տոհմը՝ Գորիսը, երկրորդը՝ Տեղը և Խնձորեսկը, երրորդը՝ Խնածախը և չորրորդը՝ Խնձորեսկը իրենց շրջակայքով:

---

[159] *Սիսական, եր. 261:*

ՄԵԼԻՔ ՀՑՈՒՍԵԻՆՑԱՆՆԵՐ

Մելիք-Հյուսեինյանների[160] *տոհմը առաջացել է հին դորիսեցի խոջա Լապարի որդի Լալայից, որի ավագ եղբայր Պարոնից սերել են այժմյան Պարոնյանները, իսկ կրտսեր եղբայր Ավագից՝ Ավագյանները: Պարոնյանները նշանավոր են դարձել առևտրական ասպարեզում և այժմ էլ Գորիսի հարուստ տներից մինն են համարվում, իսկ Ավագյանները մնացել են աննշան դյուղացիներ: Այս եղբայրները ապրելիս են եղել Հին Գորիսում, ուր հողի պակասությունը բավական նեղել է նրանց, ուստի և Պարոնը վերցնելով մի բուռ հաճար՝ (рожь, չավդար), գնում է շահի մոտ, ցույց է տալիս նրան և ասում, թե իրենց հողի վատության և սակավության պատճառով ստիպված են հաճար ուտել: Շահը մեղքանում է և նվիրում նրան հողեր Նոր Գորիսի մոտերքը:*

Կարճ միջոցից հետո թարաքյամա թափառականները հարձակվում են Հին Գորիսի վրա, բնակիչներին կոտորում, թալանում և ցրվում: Այս միջոցին Լալի որդի Բաղրը մնում է, թողնելով Յոհան և Ամիր անունով որդիներ: Իսկ սրանք, որպեսզի ազատվեն այս թափառականների հալածանքներից, փախչում են Ջանախչի դյուղը, մելիք Շահնազարի մոտ: Այստեղ Յոհանը հայանի է դառնում իր քաջությամբ և ամուսնանում է շոշևցի մի մեծատուն աղջկա հետ: Այս ժամանակ դորիսեցիք գնում խնդրում են Յոհանին, որ դա իրենց մելիք դառնա. սա էլ, երբ նույն խնդիրը կրկնում են մելիք Շահնազարին՝ հանձն է առնում և Փանահ խանից Գորիս, Խոտ, Շնհեր, Հալիձոր, Քարահունջ, Ալիղուլիքենդ, Տաշքենդ, Մաղանջուղ, Կորու դյուղերի վրա մելիք հաստատվելով, գալիս է կառավարելու: Մելիք Յոհանը բնակություն է հաստատում նախ «Ծակերի ձորում», բայց հետո հիմնարկում է Նոր Գորիս դյուղը և այնտեղ տեղափոխվում:

Նա շատ քաջ մարդ է եղել և շատ անդամ հալածել է թափառական թաբաքյամաներին, որոնք ժամանակ-անժամանակ հարձակումներ են գործելիս եղել Նոր Գորիսի վրա:

Մելիք Յոհանին հաջորդել է նրա ավագ որդին՝ մելիք Հոսեփը: Սա շատ թույլ մարդ է եղել, այնինչ սրա եղբայր Սեին կամ Հուսեյնը աչքի է ընկել իր քաջությամբ, առատաձեռնությամբ և խելքով: Այնպես որ մելիք Հոսեփը միշտ սրան է եղել խորհրդի դիմելիս և գործերի մեծ մասը սրան է հանձնել կատարելու: Այսպիսով Հուսեյնը մեծ ժողովրդականություն է ձեռք բերել և երբ ժողովուրդը խնդրել է մելիք Հոսեփին, որ մելիքության

---

[160] Այս տոհմից այժմ կենդանի է Մանուչար բեկը, վերջին մելիք Հարությունի որդին, ամենից սիրված ու հարգված անձնավորություն, որ սիրով պատմեց ինձ իր տոհմի պատմությունը և ցույց տվից մելիքներից մնացած դրություններ: Նրա տված տեղեկությունները ևս լրացրի Քարահունջի Տեր Հովսեփ քահանայի և այլ ծերունիների հիշողություններով:

տիտղոսն էլ եղբորը հանձնի, քանի որ ամբողջ կառավարությունը նրա ձեռին է՝ մելիք Հոսեփը համաձայնում է: Սակայն այս ծանր է թվում Հուսեյնի ավագ եղբայրներին, որոնք ընդդիմանում են և մի կռվում դաշույնի հարվածով Հուսեյնի երկու մատը կտրում են և մի աչքն էլ կուրացնում, բայց և այնպես Հուսեյնը հաղթող է հանդիսանում և մելիք դառնում: Եղբայրները չեն դադարում և խոտ, Շնհեր և Հալիճոր գյուղերը զրդում են իրենց եղբոր դեմ: Այս պատճառով և Մեհտի խանը 1805 թ. մի հրովարտակով հիշեցնում է վերոհիշյալ գյուղերին, որ նրանց մելիքը Հուսեյնն է:

Սրա ժամանակ Նախիջևանի խանի զինվորները երկու խմբի բաժանված հարձակվում են մինը Քարաչենի, մյուսը՝ Քարահունջի վրա: Քարաչենը շուտով անձնատուր է լինում, որը ասպատակողները թալանում են և երիտասարդներին գերի տանում, իսկ Քարահունջը պաշտպանվում է: Գյուղացիները ապաստանում են եկեղեցում և սեղանի վեմ քարով ծածկում դուռը: Զինվորները կամենում են քանդել եկեղեցին, բայց չեն կարողանում: Այս ժամանակ բերում են դաշտում բռնած երկու եղբայրներ, որոնց հայրը նույնպես եկեղեցում է ապաստանած լինում: Զինվորներն ստիպում են այս եղբայրներին աղաչել իրենց հորը, որ դուռը բանա, խոստանալով, որ այս դեպքում կխնայեն ինչպես այս երկու եղբոր, այնպես և նրանց հոր կյանքը, այնինչ հակառակ դեպքում կսպանեն եղբայրներին: Սրանք թուրքերեն աղաչում են հորը, որ բաց անի դուռը, բայց և հայերեն խնդրում են, որ իրենց երկուսի կյանքի համար չզոհն բոլոր գյուղացիների կյանքը: Վերջապես թուրքերը տեսնելով, որ հայրը չի լսում որդոց աղաչանքին, սուրը դնում են եղբայրների վզին և կանչում հորը, որ ազատի նրանց: Սակայն հայրը աղի արցունք թափելով՝ զոհում է որդիներին: Սրանք երկուսն էլ թաղված են նույն եկեղեցու դռան մոտ և ամբողջ ժողովրդից սիրված են ու հարգված:

Այս միջոցին մելիք Հուսեյնը օգնություն է գալիս քարահունջցիներին, սակայն թուրքերն ավարն առած դեպի Նախիջևան են չտապելիս եղել: Մելիք Հուսեյնը հարձակվում է նրանց վրա Բազարչայի մոտ, որտեղից Սիսիանի ճանապարհը տանում է դեպի Նախիջևան: Թուրքերի առաջնորդ Քալբին մելիք Հուսեյնին նկատելով, հրացան է պարպում վրան, սակայն գնդակը ծակում է միայն մելիքի գոնը (վերարկու): Իսկույն սրա ծառա Խուրշուդը, որ Պարոնի ցեղից է եղել և շատ քաջ՝ գնդակով տալիս, սպանում է Քալբուն: Զորքը տեսնելով իրենց առաջնորդի սպանվելը՝ ավարը թողնում, փախչում է:

Մի առավոտ էլ մելիք Հուսեյնը նկատում է, որ էլի Նախիջևանի խանի մարդիկ իջնում են դեպի իրենց գյուղը, Նոր Գորիս: Անմիջապես իմացնում է Խուրշուդին. սա անցնում է դետը, տանում իր բարձր դղակը մի քանի ուրիշ դղակների հետ քարերի վրա դնում և ինքը հակառակ կողմում պահ

մտնում: Թուրքերի առաջնորդն ուղղվում է դեպի դղակները, կարծելով թե հայերը եկել՝ կտրել են իր ճանապարհը և սկսում այդ ուղղությամբ հրացան արձակել: Այս միջոցին Խուբչուղը հետևի կողմից խլում է դնդակով և վայր գլորում նրան: Անմիջապես նրան հետևող մարդիկ թողնում են և փախչում:

Մելիք Հուսեյնը առատաձեռն է եղել և դեպի հոգևորականները, այնպես որ, երբ 1814 թ. Եփրեմ կաթողիկոսի նվիրակը գալիս է Գորիս, սա չատ սիրով ընդունում է նրան և մեծ նվերներ տալիս: Այս պատճառով էլ Եփրեմ կաթողիկոսը մի կոնդակով օրհնում է նրան:

1815 թ. մելիք Հուսեյնը մեռնում է և նրան հաջորդում է որդին՝ մելիք Ռուստամը,[161] որ միայն երեք տարի է մելիքություն անում և անորդի մեռնում: Նրան հաջորդում է եղբայրը՝ մելիք Հարությունը կամ մելիք Թյունին: Սա առաջին անգամ մտցնում է Զանգեզուրում կարտոֆիլի մշակությունը, որի համար և 1846 թ. Վորոնցովից Աննայի ժապավենով արծաթեա մեդալ ստանում և խաղաղությամբ կառավարում ժողովուրդը մինչև ռուսաց տիրապետությունը (1827 թ.), երբ նա մինպաշի է դառնում, այսինքն Զանգեզուրի կառավարիչ:

Երբ կառավարությունը այս գավառում ևս մտցրեց ընտրողական տանուտերությունը, մելիք Հարությունն իր համար այդ անպատվություն համարելով՝ հրաժարվեց տանուտեր լինելուց, և հասարակական գործերից հետ քաշված՝ մեռավ 1880 թ., թողնելով մի որդի՝ Մանուչար բեկին, որ այժմ էլ կենդանի է:

ՄԵԼԻՔ ԲԱՐԽՈՒԴԱՐՑԱՆՆԵՐ

Մելիք-Բարխուդարյանների նախահայր մելիք Բարխուդար Ա գաղթել է Լոռուց, Զանգեզուրի նախ կոռնձոր և ապա Տեղ գյուղը, բայց որովհետև Տեղն ամրոց չի ունեցել, ուստի և կարճ միջոցից տեղափոխվել է Խնձորեսկ գյուղը՝ միանգամայն իշխելով ինչպես Տեղի, Խնձորեսկի՝ այնպես և սրա շրջակա գյուղերի վրա:

Մելիք-Բարխուդար Ա չատ քաջ մարդ է եղել և իր քաջերի գլուխն անցած՝ չատ անգամ հալածել է Նախիջևանի խանի ասպատակ զինվորներին:

Մի անգամ էլ Նախիջևանի խանը երեք մարդ է ուղարկում Տեղ գյուղը՝ գինի բերելու, պարզ է, որ առանց վարձատրության: Մելիք Բարխուդարը բռնում է այդ երեք մարդկանց, սպանում, քթերն ու շրթունքները կտրում, անցկացնում թելի վրա և տալով չորսպանին, որի ականջները նույնպես կտրում է և անցկացնում թելին՝ հետ է ուղարկում, պատվիրելով ասել խա-

[161] Մինդլի-խանի նրան տված հաստատության հրովարտակը դեռևս պահվում է նրանց ընտանիքում:

նին, թե Տեղն այժմ իր մելիքն ունի՝ Շահ Բարխուդար, որ ոչ մի խանի հարկ չի ուզում տալ:

Նախիջևանի խանը զայրանալով, զորք է ուղարկում, պատվիրելով կենդանի բերել այդ անճնավստահ մելիքին: Կռիվն սկսվում է Սատու-զալի մոտ և տևում վեց օր չարունակ: Վերջին օրը մելիքի վառոդն ու դնդակը վերջանում են: Այս ժամանակ քելբաջարցի մի թուրք, մելիքի զինվորներից մեկը, հայտնում է մելիքին, թուրքերեն լեզվով, թե «վառոդը» վերջացած է, այդ բառի փոխարեն հայերեն «սլավոզը» (սևահող) խոսքը գործածելով, որպեսզի խանի զինվորները չհասկանան: Սակայն մեկը հասկանում է և հայտնում իրենց մեծին: Եվ սա, որ հոգնած ուզում էր դադար տալ՝ կրկին հարձակվում է մելիքի վրա: Կռիվը նորից տաքանում է, և մելիքը ստիպվում է սրով կռվել: Կարճ միջոցում մելիքի բոլոր զինվորները, մոտ 600 հոգի, ընկնում են և մնում են միայն մելիք Բարխուդարը և եղբայրը՝ Ղարա բեյը: Սրանք հերոսաբար չարունակում են կռվել, սակայն չուտով վիրավորվում է Ղարա բեյի ձին: Իսկույն մելիք Բարխուդարն առնում է Ղարա բեյին իր գավակը և չարունակում է կռվել: Շուտով մութ գիշերը վրա է հասնում և կռիվը դադարում է: Մյուս օրը, վաղ, խանի զինվորները նորից ընկնում են կարիճ մելիք Բարխուդարի վրա, որը Ղարա բեյին գավակն առած՝ սկսում է թուր խաղացնել: Սակայն դնդակը վայր է գլորում և սրա ձին: Երկու քաջերը մի քիչ էլ կռվելուց հետո ուժասպառ անճնաստուր են լինում և նստելով երկու քարի վրա, որ մինչև այժմ էլ «Մելիք Բարխուդարի քարեր» են կոչվում, առաջարկում են թուրքերին վերցնել մելիքական սուրը և նրանով կարել իրենց գլուխները, որովհետև, պատճառաբանում են նրանք, մենք այնպիսի հուռութեներ ունենք, որ ուրիշ սուր չի կարող մեր պարանոցը կտրի: Այնինչ նրանց ցանկությունն այն էր, որ անօրենի սրով չընկնեն: Թուրքերը հավատում են. վերցնում են մելիքական սուրը և կտրում երկուսի էլ պարանոցները և գլուխներն առած՝ վերադառնում Նախիջևան: Երբ ներկայացնում են գլուխները խանին՝ սա բարկանում է, որ իր հրամանը չեն կատարել՝ մելիքին կենդանի բերել, և հրամայում է բերողներին գլխատել:

Մի քանի օրից հայերը խանից խնդրում են մելիքի և Ղարա բեյի գլուխները և ստանալով՝ Ղարա բեյինը տանում, թաղում են Երևանի ս. Հռիփսիմյանց եկեղեցում, իսկ մելիք Բարխուդարինը՝ ս. Էջմիածին: Իսկ սրանց մարմինը խնճորեսկցիները տանում են Խնճորեսկ և թաղում անապատում,[162] ուր մինչև այժմ մնում է գերեզմանաքարը հետևյալ տապանագրով.

---

[162] Այս կռվի ժամանակ խնճորեսկցի մի հարս, լսելով որ ամուսինն սպանվել է, վախչում է տնից և գալով կռվի դաշտը, որտեղում՝ գտնում է իր ամուսնու գլուխը և չալակած՝ գիշերները տանում է գնալի գյուղ, ցերեկները թաղ կենալով զանազան տեղեր: Մինչև այժմ էլ խնճորեսկցիները ցույց են տալիս այդ անվնհիր հարսի և նրա ամուսնու միմյանց կից գերեզմանները:

Այս է տապան ի հանդստեան
Իջեալ մարմնով ի գերեզման
Մելիք Բարխուդար և մեծ իշխան
Նահատակեալ օրն Համբարձման,
Որ է ի դեղջէն Տիզոյ այն.
Ով ոք առնէ զսա յիշման,
Արքայութեան լինի արժան.
Թվ. ՌՃՂԷ (1748): [163]

Հոր, մելիք Բարխուդարի աղետալի մահվան վրեժխնդիրը, պատանի Դավիթ բեկը 300 ձիավորներով հարձակվում է Նախիջևանի վրա և անակնկալ կերպով ընկնելով խանի վրա՝ սպանում է նրան և փախչում: Խանի ժառանգները հետամուտ են լինում նրան, և նա ստիպված է լինում տեղից տեղ փոխվել, գլուխն ազատելու համար:

Այս միջոցին գալիս է նրա մոտ ջառչի Փանահը և համոզում՝ մի առ ժամանակ իրեն հանձնել երկրի կառավարությունը, մինչև որ խանի մարդիկ դադարին նրան հալածելուց և ինքն էլ չափահաս դառնա: Դավիթ բեկը համաձայնում է, խրկել է տալիս իր հոր վրանը Խնձորեսկի մոտ, Հարամի ծառի տակ, Փանահին նստեցնում թախտի վրա, մելիք Բարխուդարի տեղը, գլղլակը (գայլանը) տալիս է նրա ձեռը և ապա մելիքի սուրը իր ձեռին բռնած, «խան ես ու խան» խոսքերը երեք անգամ կրկնելով՝ երեք քայլ է անում և սուրը հանձնում Փանահին: Սա համբուրում է Դավիթ բեկի ճակատը և ընդունում սուրը: Այնուհետև մի առ ժամանակ Փանահ խանը կառավարում է Խնձորեսկն իր շրջականերով և հետո անցնում գնում Ղարաբաղ՝ մելիք Շահնազարի մոտ:

Փանահ խանի հեռանալուց հետո Դավիթ բեկը վերստին ստանձնում է երկրի կառավարությունը, և կամենալով մելիք տիրողոսը կրել՝ գնում է Թիհրան, շահից հրովարտակ ստանալու: Սակայն այստեղ էլ Նախիջևանի խանի մարդիկ հետամուտ են լինում և կամենում են սպանել, այնպես որ ստիպվում է վերադառնալ՝ առանց հրովարտակ ստանալու: Այնուհետև պարապում է շինություններով, շինում է իր համար մի գեղեցիկ ապարանք, բաղկացած մի քանի բարձր և գեղեցիկ դարպասմներից, որոնցից առաջինի դռան վրա մինչև այժմ էլ մնում է հետևյալ արձանագրությունը.

Թվ. ՌՄԼՔ (1783) ի վայելումն Մելիք Բարխուդարի որդի Դավիթ բեկս շինեցի այս ամարաթս Իբրայիմ խանի ժամանակ:[164]

Այս ժամանակներում արդեն, ինչպես տեսնում ենք, Փանահ խանին հաջորդած էր Իբրահիմ խանը, որի հետ Դավիթ բեկի հարաբերությունները

---

[163] *Տե՛ս ԴՀՎ. II, էջ 64:*
[164] *Տե՛ս ԴՀՎ. II, էջ 70:*

հետզհետե լարվում են: Այնպես որ, երբ վերջինի ծառա Ղասումը մելիք Բարխուդարի ստացած հրովարտակը և այլ թղթեր դողանալով փախչում է Իբրահիմ խանի մոտ՝ սա սիրով ընդունում է և Տեղ դյուղը նրան նվիրում: Այս բանի վրա զայրացած՝ Դավիթ բեկի որդին, Մելիք Բարխուդար Բ, գնում է Թեհրան, թե մելիքության մեջ հաստատվելու և թե Իբրահիմ խանի անիրավության դեմ բողոքելու, սակայն այնտեղ վախճանվում է, թողնելով իշխանությունը որդուն, Միրզա բեկին, որի ժամանակ արդեն վերջանում է մելիքությունը:

Մելիք Հայկազ. Մյուս մելիքներից նշանավոր է մելիք Հայկազը, որ իշխել է Խնածախ դյուղում: Սրա մասին պատմում են, թե չատ խիստ և չարասիրտ մարդ է եղել: Հանցավորներին դնելիս է եղել կողովի մեջ, բերանը փակել և գլորել տալիս մոտակա մի բարձր լեռան գագաթից, որ մինչև այժմ էլ կոչվում է Դատ Մալիք: Ժողովուրդը բացատրում է, թե այդ անունը՝ Դատ Մալիք (վայ Մելիք) առաջացել է քթոցով գլորվող հանցավորի բացականչությունից:

Սրա բռնությունից չի ազատվել նույնիսկ որդին, որ կամենալով հոր մելիքությունը հենց նրա կենդանության ժամանակ ստանձնել՝ գնացել է շահի մոտ, մահմեդականություն ընդունել և Ալահվերդի անունով և շահի զորքով եկել հոր դեմ: Սակայն այս միջոցին մելիք Հայկազը վախճանված է եղել: Որդին սկսում է մելիքություն անել և չինում է մի մզկիթ, որ մինչև այժմ էլ կա: Նա անժառանգ մեռնելով՝ նրանով Խնածախի մելիքությունն էլ վերջանում է:

Մելիք Փարամազը իշխել է Խնձորեսկ դյուղում: Սրա մասին ոչինչ չի պատմվում, բացի հետևյալ աննկատային դեպքից:

Մի կիրակի օր դյուղացիները հավաքվում են մելիք Փարամազի դռան առաջ և խնդրում են մելիքին, որ դուրս գա իրենց դատերը կարելու: Մելիքը չի կամենում դուրս գալ և պատվիրում է մյուս կիրակի գալ: Երբ դյուղացիները չատ թախանձում են՝ մելիքը մերկ դուրս է գալիս և բարկանում, թե՝ «Հալալս (չապիկ) լվացալ են, հալա չորացալ չի, հի՞նչ ըք գահլա տանըմ»:

Մելիքների տունը. Զանգեզուրի բոլոր մելիքների տները միմյանց նման են, բոլորն էլ բաղկացած են մի քանի թաղակապ, մեծ դարադամներից, որոնց երևացող առաջի մասերը սրբատաշ քարից են շինված:

Մելիքները հագնում էին պարսկական ճաշակով. կարմիր ալըշի (մեսաքսի) անդրավարտիք, բայց կրծքով արխալուղ և վրայից՝ դոն:

Գլխներին ծածկում էին բուխարայի երկար փափաղ: Ոտներին գուլպա, որի բկի մեջ դնելով վարտիքի ծայրերը՝ տոլաղով ամրացնում էին: Սա մոտ 71 սմ (1 արշ.) երկարության և 4,5 սմ (1 վերշոկ) լայնության կտոր է, մի ծայրին դայթան կապած, որ փաթաթում են գուլպայի բկին և դայթանով

ամրացնում և ապա հագնում չմուշկ, իսկ ձի հնծնելիս՝ կարմիր չաքմա: Մելիքները ձգում էին ուսից մի կեռ թուր, իսկ հրացանը կրում էր նրանց հետևող հրացանակիրը:

Մելիքների սովորական կյանքը մոտավորապես այսպես էր ընթանում: Առավոտները շատ վաղ վեր էին կենում, մի բաժակ օղի խմում, մի քիչ նախաճաշիկ անում, հետո դուրս գալիս իրենց տների առաջ զբոսնում և գանգատավորների գատը կտրում: Կեսօրին մի քանի հյուրերով վերադառնալով տուն՝ ճաշում էին, ուտելով սովորաբար երկու տեսակ կերակուր և խմելով առատությամբ գինի: Շատ հաճախ սեղանակից էր լինում նրանց ծխական քահանան: Ճաշից հետո մի քիչ քնում էին և ապա նորից դուրս գնելով՝ գատ կտրում, կամ չինամիջում նստած դյուղի առաջավորների հետ զրույց անում: Երեկոյան եկեղեցի էին գնում, ուր իրենց պատվավոր տեղն ունեին: Եկեղեցուց դուրս գալով՝ մելիքներն իրենց սիրելիների հետ գալիս էին տուն ընթրելու: Ընթրիքը ավելի ճոխ էր լինում և ավելի երկար տևում: Ընթրիքից հետո նարդի և այլ խաղեր էին խաղում և շատ կանուխ քնում:

Վիրահիշյալ մելիքներն հնթարկված են եղել սկզբներում Նախիջևանի և հետո Շուշու խաներին: Եղել են մելիքներ էլ, ինչպես մելիք Հայկազը, որ բոլորովին ինքնագլուխ են իշխել:

Մելիքների պարտականությունը դեպի խանները եղել է. 1. Շահի կամ խանի պատերազմ գնացած միջոցին օգնության գնալ, գինելով իրենց վճակի յուրաքանչյուր տնից մի մարդ: 2. Յուրաքանչյուր տնից մի ոսկի (3 ռ.) առնելով՝ ուղարկել խանին, որպես շահին հասանելի հարկ:

Մելիքները իրենց վիճակների յուրաքանչյուր դյուղում տանուտեր էին նշանակում, որ օգներ իրենց հարկ հավաքելիս և կատարեր իրենց հրամանները: Դյուղացիների փոքրիկ վեճերը այս տանուտերների մոտ էին վերջանում, իսկ փոքրիշատե լուրջ գործի ժամանակ դիմում էին մելիքին, գալով նրա մոտ առավելապես կիրակի օրերը: Մելիքը մեղավորին թաղում էր, իր դռան մոտ առավելապես կիրակի օրերը: Մելիքը մեղավորին թաղում էր, իր դռան մոտ բանտարկում, իր օգտին տուգանք առնում:

Դյուղացիները պարտավոր էին մելիքին վճարել, բացի տունը մի ոսկուց, որ խանին էր ուղարկվում, նաև մի մի սոմար ցորեն՝ իրեն մելիքի համար նաև տանտնորդ հացահատիկներից և խոտից:

Բացի սրանցից բոլոր դուքհաններից մելիքի համար մի օր վար պիտի անեին, անից մի մարդ գալով՝ արտերը պիտի հնձեին, խոտերը հարեին, ամհռվա համար վառելիք բերեին: Դյուղի հաշվով էլ մի ռանջպար, մի ձմե

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՐՈՒՇԱՆ ԵՎ ԶՈՆԳԻ ԳԻՔԻ

Սաղսաղան լեռան գագաթին երկու ահագին, միմյանց կից ժայռ են բարձրանում, որոնց վերի մասերը միացած են մի արհեստական պատով, այնպես որ կազմել են մի փոքրիկ սենյակ: Շատ դժվար և նույնիսկ անհնարին է այդտեղ բարձրանալ: Ավանդաբար պատմվում է, թե այդտեղ բնակելիս է եղել Հրուշան անունով մի հսկա, որին ժողովուրդը վիշապ է անվանել:

Սա չբավականանալով իր այդ բնակարանով՝ նրա հանդեպ, Գարահող լեռնաշղթայի վրա, մի փոքրիկ տափարակ տեղում, բնական ժայռ քարերի վրա իր համար մի ուրիշ բնակարան է շինել, մոտ 5 քառ. մ մեծությամբ երեք քար ձգելով և սրանց վրա մի ուրիշը կանգնեցնելով:[165] Երբեմն այստեղ և երբեմն Սաղսաղանի գլխին ապրելով՝ սա մեծ վնասներ է հասցրել շրջապատող ժողովրդին, սպանելով և թալանելով ամեն մի անցորդի: Քաջության հետ նա ունեցել է և հնարագիտություն: Այսպես, մի անգամ մի մեծ կարավան հեռվից նրան նկատելով, վախից հետ է դառել: Իսկույն Հրուշանը իշի մի համետ է գլորել ժայռից ներքև և մի կաթսա մածուն վայր թափել և ինքն անմիջապես թաք կացել: Կարավանը այս տեսնելով՝ կարծել է, թե առաջվա երևացողը ոչ թե ինքը Հրուշանն է եղել, այլ մի թռչուն (ղուզղուն), որ իսկույն թռիլ և նույնիսկ ծրտել է: Սիրտ առած՝ կարավանը առաջ է գնում, բայց հանկարծ Հրուշանը, երկար և ծանր նիզակը ձեռին՝ կտրում է առաջները, մոտ 200 մարդ սպանում և ամբողջ կարավանը թալանում: Բայց Հրուշանի ավերածությունները սրանով չեն վերջանում: Ահ ու սարսափը տիրում է ամբողջ շրջակայքի վրա, և ոչ ոք չի համարձակվում դուրս գալ իր դյուղից: Վերջապես՝ Հրուշանի քրոջ որդին, ղարաղշլաղցի Թաղունց Գիքին, որ հետո Զոնգի (վիթխարի) Գիքի է մականվանվել՝ վճռում է Հրուշանի կյանքին վերջ դնել: Այս նպատակով 12 հատ մեծ բիչի (յուղի մեջ թխված հաց) է պատրաստել տալիս և չալական տանում Հրուշանին: Հասնելով այն ձորը, որ մինչև այժմ էլ Հրուշանի անունով կոչվում է Հրուշանի ձոր, Զոնգի Գիքին բղավում է մորեղբորը, որ իջնի ժայռից և քրոջ ուղարկած բիչիները ուտի: Հրուշանը հաճույքով իջնում է ժայռից, գալիս նստում ձորում, նիզակը դնում մի կողքին և վերցնելով 12 բիչին՝ մի բզդուճ է անում, և հենց որ մի անգամ կծում է՝ բիչու ծայրերն են մնում ձեռին: Իսկ Զոնգի Գիքին ուժ ու կող արած բարձրացնում է նիզակը և ասում.

- Ամի, ի՛նչ ծանր է, ինչպե՞ս ես բարձրացնում:

- Քիչ սպասիր, կտեսնես,- պատասխանում է Հրուշանը:

---

[165] *Սա իսկապես հին դարերից մնացած մի դոլմեն է:*

Սակայն այս միջոցին Զոնդի Գիքին ձգում է նիզակը մորեղբոր ծնկներին և ուզում է փախչել: Հրուշանը իսկույն երկարացնում է իր ձեռքը և նրա քղանցքից բռնում: Խնդճ Զոնդին քանի կատր սլիտի լիներ, եթե իսկույն դաշույնը չհաններ, չկտրեր իր քղանցքը և չփախչեր: Հրուշանը տեսնելով, որ ոտները արդեն կոտրվել են և չի կարող վազել ու նրան բռնել՝ աղաչում է, որ գոնե դա և իրեն սպանի, քանի որ առանց ոտի ապրել չպիտի կարողանա: Զոնդին համաձայնում է, միայն պահանջում է, որ մի կերպ հեռանա նիզակից: Հրուշանն էլ քաշքշվելով հեռանում է նիզակից և սպասում մահվան: Զոնդին մոտենում, ահագին դժվարությամբ վերցնում է նիզակը և ձգում Հրուշանի գլխին ու փախչում: Մահամերձ՝ Հրուշանը սկսում է գոռալ, նրա ձայնից թնդում են լեռներն ու ձորերը, գազանները մոնում են իրենց որջերը, մարդիկ ապաստանում իրենց տները: Եվ երբ նա մեռնում է՝ երկիրը խաղաղում է, սար ու ձոր հանգստանում:

ԲՈԼ

Մի ուրիշ հսկա էլ եղել է Շնհեր գյուղում, Բոլ անունով: Սա միշտ մի քառակուսի մետրից ավելի մեծության քար գրպանումն է պահելիս եղել, որպեսզի, եթե մեկը բարկացնի՝ գլխովը տա: Շատ անգամ պատահել է, որ ահագին մեծության քարեր վերցրել և Որոտան գետն է շպրտել: Կամենալով իր համար մի կալ շինել՝ նա գնացել՝ հեռու տեղերից ահագին մեծության քարեր է բերել, ձգել ձորի լանջին, հող ածել և այսպիսով տեղը հարթել է ու կալը շինել: Դեռ մինչև այժմ էլ մնում է այդ կալը և կոչվում է Բոլին կալը:

ԾԻՇԵՌՆԱՎԱՆՔ

Հոչաս գյուղի մելիք Թումանը շարունակ նեղացնելիս է եղել նույն գյուղի քահանային, այնպես որ վերջինս, նրանից ազատվելու համար մի անեծքաթուղթ է գրել, գցել նրա սենյակն ու ինքը փախել, գլուխն ազատել: Անեծքաթղթի զորությամբ, մելիքը շուտով կորցրել է որդիները, կինը և ամբողջ հարստությունը: Վերջապես, հասկանալով, որ այդ բոլոր թշվառությունները քահանայի անեծքից են առաջացել, գնում է նրան որոնելու, որպեսզի թողություն խնդրի: Անցնում է շատ քաղաքներ, գալիս հասնում Հռոմ, որտեղ իմանում է, որ քահանան վախճանվել է: Հուսահատված մնում է նա Հռոմի մի վանքում իբր լուսարար և միշտ ապրում է իր հոգու փրկության համար: Երեք տարվա ճգնությունից հետո ձգում է իր վրա տասներկու շղթա և ասում. «Եթե ազատուած եմ անէծքից՝ թող այս շղթաները իրենք իրենց արձակուին»: Նույն գիշերը երազում երևում են նրան

անիծող քահանան Քրիստոսի հետ և ասում. «Մելիք, հրամանաւն Քրիստոսի արձակեմ զքեզ», և իսկույն չղթաներն արձակվում են:

Մի ժամանակ անցնելուց հետո, մի օր այս մելիքը կծում է Պետրոս առաքյալի ճկույթի (ծիծեռնը) մատից և պահում բերանում: Իսկույն սրբերի բոլոր պատկերները վայր են ընկնում: Գալիս են քահանաները և նկատելով մելիքի զողությունը՝ կամենում են մասունքը հանել նրա բերանից և իրեն էլ սպանել, սակայն սեղանից մի ձայն է լսվում, որ ասում է, թե՝ մի մերձենաք մելիքին: Ուստի և քահանաները ոչ մի վնաս չեն հասցնում մելիքին, և սա անվտանգ գալիս հասնում է այժմյան Միծեռնավանքի տեղը: Այստեղ վաղ ժամանակներից մի շլորի ծառ է լինում, որ շրջապատող բոլոր ժողովուրդներից պաշտվելիս է եղել, մինչև անգամ եղջերուները իրենք իրենց գալիս և զոհվելիս են եղել նրան: Ահա այս ծառի մոտ մելիքը չինել է այժմյան տաճարը և ս. Պետրոսի ճկույթը (ծիծեռնը) նրա մեջ ամփոփել. այս պատճառով էլ վանքը կոչվել է Միծեռնավանք, այսինքն ճկույթի վանք:

Ասում են, թե այս մասունքը այժմ էլ մնում է ձախ ավանդատան դռան առաջ գտնված գերեզմանում:

ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԲՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սահմանները. *Զանգեզուր գավառամասի սահմաններն են. հյուսիսից՝ Ջիվանչիրի գավառը, Մուխաոջյան, Գելլիխ, Ջիլգյազ, Ալաղայա լեռներով, արևելքից՝ Շուշու գավառը, Ղըրխ-ղըզ (40 աղջիկ) լեռնաշղթայով, Սարիբաբա, Քիրս և Ջիարատ լեռներով, հարավից՝ Մեղրիի ոստիկանական շրջանը, Քյուչուկ չայով և Գյումրեզ լեռով, արևմուտքից՝ Սիսիանի ոստիկանական շրջանը, Քարահունջի և Շնհերի ձորերով, Ալլա-գյոլ լճով և Խմայդատ գագաթով:*

Ընդհանուր տեսքը. *Զանգեզուրի գավառը ներկայացնում է Նախիջևանի և Ղարաբաղի լեռնաշղթաների մեջ ընկած մի հովիտ, որի բարձրությունը հասնում է 3,950 ֆ. (1,200 մ) և որը, Սևանի պես, մի ժամանակ լիճ է եղել, որ Բարկուշատ և Հաքարի գետերի միջոցով դատարկվել է: Այս ջրամբարի կենտրոնում բարձրանում է Իշղլու կամ Քաչալ-դաղ կոնաձև լեռը, որ հասնում է 11695 ոտնաչափ բարձրության. շրջակա հրաբուխներից ժայթքած և նախկին լճի հատակին մի քանի հարյուր ֆուտ բարձրության շերտերով նստած մոխիրը և խանձողները գետերի միջոցով տարվելով՝ խոր ձորեր են առաջացրել: Ջեչաքարի դարաստափերը (տերրաս), որ ծածկված են հացահատիկների արտերով, ցցվում են կանաչ հովիտների մեջ մոխրագույն, կանաչ, կապույտ և մինչև անգամ ալ կարմիր քարաժայռերով, որոնց անձրևը չաքարի գլխի և կոթողների ձև է տվել. սրանք տեղ-տեղ*

կազմում են քարախառն հողակույտեր, որոնցից մի քանիսը կրում են իրենց ծայրերին վեմի խոշոր կտորներ. սրանք նույնպիսի «գլխածածկ սյուներ» են, որպիսիները պատահում են Շվեյցարիայում: Տեղացիները օգտվում են դրանցից, չինելով դրանց մեջ իրենց մառաններըը, գոմերը և մինչև անգամ բնակարանները:[166]

Լեռներ. Զանգեզուրը սառիկ լեռնոտ է: Բազմաթիվ, մեծ և փոքր լեռներ զանազան ուղղություններով միմյանց կարատում և առաջացնում են մեծ ու փոքր ձորեր ու հովիտներ, որոնց միջով հոսում են վտակներ ու գետակներ:

Ամենամեծ գագաթը Իշղուն է, որ բարձրանում է գավառի արևմտյան սահմանում: Սա մի լերկ լեռ է, բաղկացած երկու բարձր գագաթներից, որոնցից մեծը հասնում է 11625 ոտ. բարձրության: Սրա մոտ գտնվում է Թարփանմազ (фарман, այսինքն չչարժվող, վրայի ձյունը չհալվող) գագաթը, և փոքր-ինչ հյուսիս՝ Ջան-Ղուրդարան (9219, կյանք-ազատող, այսինքն ավազակներից հալածվելիս, եթե այդ լեռը հասնեն՝ կյանքները կազատվի): Իշղուց հարավ ձգվում են Ուչ-Թափալարի լեռները, որ միմյանցից բավականաչափ հեռու և բոլորովին առանձին կանգնած երեք գագաթներ են: Սրանց մոտ գտնվում են նաև Յան-Թափա (7519), Տաշ-Թափա, Շիշ-Թափա (7327) և Ուլու-Թափա (6698) գագաթները: Հարավային սահմանին մտնիկ գտնվող լեռներն են Ղուրբան-Թափա, մինը Մաղանջուղի մոտ (4557), մյուսը՝ Մազմազակ (3353) լեռան մոտ (3340), Ամբզըղ-դաղ (4131), Բաշարեա (4547): Արևելյան կողմում՝ Տեյդաղ լեռնաշղթան, Ելլիջա (7066), Սաղսաղան (7083), Սարի-բաբա (7574), Ֆինդյահ (7903). Զիլյազ, Դալի-դաղ, Սարի յոխուշ, Ղըրխ-ղըզ լեռնաշղթան (9324), Ղըդ-ղարս գագաթով, Դալիկ-տաշ, Դյուբու-տաղ (6916), և Ալաղայա (7672), Հյուսիսային կողմում՝ Զիչիկլի, Զիլգյաս (7777), Գելլիխ, Մխիտուքյան լեռնաշղթան (11651), Դալի-դաղ (11907), և Գյալին-ղայա (11002):

Ներքին լեռներից նշանավոր են, հյուսիսից դեպի հարավ՝ Քեչիչ Թափա (7560), Ջուղալար, Քյադիր-դաշ (10492), Լյուլապար, Ղազան-կյադըղ (7016), Ղուրյան բաբա (6124), Արտաշավի (4456), Վյակիլ (6006), Պիրջան (4594), Զիրախլի բաշի (6099), Էկանատ Թափասի (6364), Յաղրթափա (6298), Տեղ (5180), Ղըզըլ-բողաս-դարի (11059), Հոչաս (6342), Լաչին (6328), Յալդուզ-դաղ (5410), Ջամեն-դյոմ (5294), Դատ-մելիք (6761), Բիդովչի-դարի (8448) (Ղարադյոլի մոտ), Քեչալ-դաղ (10648), Ջալբրուն (6287), Ղաղի դյուլան բաշի (7450), Ղամյուր-Թափա (4449), Տորխան-յալի (4490), Դաշ-քենտ յալ (6824), Մազմազակ (3843), Բեզմին դաղ (3656), Քարահունջ-Թափա (5535):

---

[166] Реклю. Земля и люди. т. 4, ст. 185.

Լճեր. Զանգեզուրում մեծ լճեր չկան, բոլորն էլ փոքրիկ լճակներ են, լեռներում գոյացած գոգավորությունների մեջ: Ամենամեծ լճակը Ղարագյոլն է, որ գտնվում է Իշղլի, Բիզովչիդաբի և Քեչալ դաղ գագաթների ընդհարման կենտրոնում, 8930 ոտ. բարձրության վրա: Սրա մոտ գտնվում է Ղալնի-գյոլ փոքրիկ լճակը:

Ղարա-գյոլից դեպի արևելք, Ջալբրուն լեռան մոտ, գտնվում է Ղազի-գյոլ փոքրիկ լճակը, ամբողջովին ծածկված եղեգով: Ամառը ջուրը սաստիկ նվազում է և երբեմն էլ բոլորովին չորանում:

Արևմտյան սահմանին մոտ գտնվում են Օլոուլյար, Ալագյոլյար և Ղարա-գյոլ փոքրիկ լճակները, իսկ հյուսիսային կողմում Զիֆտլիկ լճակը: Հարավային կողմում էլ, Ուչթ-փալարի մոտ՝ Շնհեր և Ուչթափա լճակները: Այս բոլոր լճերը գոյանում են գարնան հալվող ձյուններից և ամառը եթե ոչ բոլորովին չորանում, գոնե սաստիկ փոքրանում են:

Գետեր. Զանգեզուրի ամենանշանավոր գետը Հաքարու գետն է, որ սկիզբ է առնում Գելլըղ սարերից: Նրա մեջ թափվում են աջ կողմից՝ 1. Շալվա-վտակը, որ բխում է Գելլըղ լեռից, 2. Հոչասը, որ սկիզբ առնելով Միխտուբյան լեռնաշղթայից՝ ընդունում է իր մեջ Իլղըրըմ-սու վտակը, 3. Աղ-օղլան կամ Ծիծեռնավանքի ջուրը, որ սկիզբ է առնում Լկանատ-թափասուց և ընդունում է Մինքենտ-չայը, Ղարասուն, Մերիկ, Խնածախի վտակները: Աղ-օղլանը Զարուխ Թրքաբնակ գյուղի մոտ վերակոչվում է Զաբուխ-գետ և այստեղ թափվում է Հաքարուի մեջ:

Ձախ կողմից՝ 1. Ալակչին, որ սկիզբ է առնում Զիչխկի լեռից, միանում է Զիլգյաս լեռից բխող Կաբերի-չայի հետ և ապա միանալով Ղըրխ-ղըզ լեռնաշղթայից բխող վտակների հետ, թափվում է Հաքարուի մեջ: 2. Յաղլի-դարա վտակը, որ սկիզբ է առնում Սաղսաղանի մոտերքից, հոսում է Յաղլի դարա անտառապատ ձորակի միջով և Տատարասի մոտ թափվում է Հաքարուի մեջ: Յաղլի-դարա անունը ծագում է այն հանգամանքից, որ այս ձորակն ամենալավ արոտներ ունենալով՝ առատ է յուղով: 3. Միլխալեվ, որ բխում է Քիրսից, միանում է Սաղսաղանից բխող Շոռ-սուի հետ և թափվում Հաքարուի մեջ:

Հաքարու գետը հոսելով չարունակ դեպի արևելահյուսիս՝ անցնում է ամբողջ Զանգեզուրի ոստիկանական շրջանով և ապա միանում Բազար-չայի հետ և գնում, թափվում Արաքսը:

Հաքարուի, ինչպես և Բարկուշատի մեջ պատահում են բավական մեծ օրագուլներ և ջրշուններ (выдра).

Մյուս գետերից նշանավոր են. Գերուսի-չայը, որ սկիզբ է առնում Ուչթափալար լեռնաշղթայից: Այստեղ երեք լեռներ միմյանց ընդհարվելով՝ մի փոքրիկ ձորակ են ձևացնում, որտեղից բխում է մի սառը, վարար աղբյուր, որ կոչվում է Վարարակ. սրան խառնվում է Շոռ-ջուր վտակը, որ անցնում

է Ջազեձորի միջով: Ասպա Քարահունջի մոտ Գորիսի գետին միանում է Շաքարլու գետը, որ սկիզբ է առնում Ուչ-Թափալարի աղբյուրներից և անցնում համանուն ձորով: Հասնելով մինչև Դաուդլու գյուղի մոտերքը, Գորիսի գետը թափվում է Բազարչայ գետը: Այս գետի հովիտը ամբողջովին ծածկված է այգիներով, ուր բուսնում են բացի խաղողի որթից, նաև թթենի, կեռասենի, խնձորենի և այլն:

Ջրվեժ. Զանգեզուրում կա միայն մի ջրվեժ, որ գտնվում է Քարահունջ գյուղի հյուսիսային կողմում, բարձր ժայռերի ծերպին: Առվակը սկիզբ է առնում Ուչ-Թափալարի ստորոտի Յոթն-աղբյուր ու Գյոյ-բուլախ աղբյուրներից և մոտ 16 սաժեն բարձրությունից վայր գլորվելով՝ գեղեցիկ տեսարան ընծայում: Ժողովուրդը ջրվեժի ձայնը ի նկատի ունենալով՝ Շուռան է կոչում նրան:

Հանքեր. Զանգեզուրի ստորկրյա բաժնում չկան մշակվող հանքեր, սակայն տեղ-տեղ երևացել և երևում են հանքեր, որոնք թերևս մի ժամանակ ուշադրության առնվեն և շահագործվեն: Սրանցից նշանավոր են.

1. Քարահունջ գյուղում երկաթի և կավճի հանքերը:
2. Դաուդլուում պղնձի հանքը, որ, ինչպես երևում է՝ հին ժամանակներում մշակվելիս է եղել:
3. Խնձորեսկում ալի և պղնձի հանքեր:
4. Հաճի Սամլիում հանքային ձյութի (горный воск), ազբեստի (Asbeste) և պղնձի հանքեր:

Հանքային ջրեր. Հանքային ջրերով բավական հարուստ է Զանգեզուրի չրջանը, սակայն ոչ մեկն էլ կանոնավոր կերպով չի շահագործվում: Այս ջրերից նշանավոր են սելտերյան ջրերը, որ գտնվում են. 1. Գորիսից փոքր-ինչ արևելահյուսիս, Զագեձորում, 2. Քարաչեն գյուղի մոտ, 3. Հերիկ գյուղում, 4. Բայանդուր գյուղում, 5. Մինքենդի մոտ, տաք ջրից փոքր-ինչ բարձր:

Ծծմբային տաք ջրի երկու ավազան կա Մինքենտի մոտ, Հերիկի և Մինքենդի ճանապարհի գրեթե կեսին, մեկն էլ կա Քարահունջում:

Կլիման. Գավառում օդերևութաբանական կայարան չլինելով՝ կլիմայի վերաբերությամբ պակասում են հաստատ տեղեկություններ: Միայն հայտնի է, որ ընդհանրապես կլիման առողջարար է և փոփոխվում է՝ նայելով տեղի բարձրության. մինչդեռ բարձրավանդակների վրա ցուրտ է՝ Հաքարի և Բարկուշատի հովիտներում սաստիկ տաք է: Բարձրավանդակների վրա ձմեռը տևում է ամբողջ 6 ամիս և թեպետ շատ խիստ չէ, բայց սաստիկ ձյուն է գալիս և հաճախ բուք բարձրանում: Ուչ-Թափալարի բարձրավանդակում այնպես խիստ են լինում այս բքերը, որ Գորիսի և Սիսիանի մեջ հաղորդակցությունն ընդհատվում է մի քանի ամսով: Դեռ հին ժամանակներից այս տեղերում բարձր քարեր են ցցված և մի մեծ ծառ թողած ճանա-

պարհի կողքին՝ որպեսզի բքից բռնված ուղևորը կարողանա ճանապարհը գտնել, սակայն և այնպես՝ գրեթե ամեն տարի պատահում են զոհեր: Գարունը և աշունը անձրևային են, ամպամած և թխպապատ օրերով: Հաճախ տեղացող անձրևները թեև նպաստում են բուսականության աճման, սակայն ցորենի վրա վատ ազդեցություն են անում, որովհետև աճեցնում են ցողունը և թույլ չեն տալիս լավ հասկ բռնելու: Օդի խոնավությունից բնակիչների մեջ շատ տարածված է ոսկրացավը: Մի քանի տեղեր ճահճային լինելով՝ տարածված է մալարիա հիվանդությունը:

Հաքարի և Բարկուշատի հովիտներում կլիման ատաք է, և ամառը այնպես տոթ է լինում, որ շունչ քաշել անգամ չի կարելի:[167]

Բուսականություն. Այս գավառամասի, առավելապես Հաջիսամլուի կողմը ծածկված է խիտ անտառով, ուր գտնվում են գլխավորապես՝ կաղնի, բոխի (Carpinus Betulus). հաճարկի (Fagus silvaticus, бук). հացի (ясень), ղարաղաճ (Ulmus campestris), ցրտնի (Juniperus, можжевельник), ազնի (боярышник), նարնջափայտ (Rhus cotinus) և այլն: Պաղատու ծառերից, թե անտառներում և թե այգիներում, գտնվում են խնձորենի, տանձենի, սալորենի, կեռասենի, թթենի և այլն:

Դալարաբույսերից նշանավոր են՝ պոխի (prangos), դեղնածաղիկ (genista tinctoris), ուրց (thunus), վայրի անիսոն և այլն, ինչպես և գետնամորի և ելակ:

Արտերում ցանում են՝ զանազան տեսակի ցորեն, գարի, հաճար:

Կենդանիներ. Ընտանի կենդանիներից առավելապես պահում են՝ ոչխար, այծ, կով, էշ, ջորի, ձի: Վայրենի կենդանիներից անտառներում և դաշտերում գտնվում են՝ նապաստակ, եղնիկ, այծյամ, աղվես, գայլ և երբեմն՝ արջ:

Թռչուններ. Ընտանի թռչուններից պահում են գլխավորապես՝ հավ, տեղ-տեղ էլ հնդկահավ, սագ և բադ. վայրի թռչուններից գտնվում են՝ աղավնի, կաքավ, տատրակ, փասիան, կտցահար, լոր, սև մշահավ (Tiddus merula), բադե, բվեճ (փառու), չահեն, արծիվ և այլն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍ

Գորիս. Զանգեզուրի ոստիկանական շրջանը այժմ բաժանվում է չորս մասի. Հաջիսամլու, Ալիանլի, Բարկուշատ և Հաքարու: Հաջիսամլիի մասը բռնում է Շալվա-չայի, Ալաքչու և Հոչասի ջրաբաշխները. Ալիանլունը՝ Հա-

---

[167] Օգտվել եմ պ. Զևինակու հիշյալ աշխատությունից, Գեղեվանովի հետազոտությունից և Լեոյի «իմ հիշատակարանը» ճանապարհորդությունից:

քարի գետի ձախ կողմը, որ տարածվում է Շուշի-Գորիս խճուղուց հարավ: Բարկուշատի և Հաքարու մասերը ընդում են Բարկուշատ և Հաքարի գետերի ստորին և միջին ընթացքների ափերը:[168] Այս գավառամասի գրեթե միջտեղում գտնվում է Գորիս ավանը, որ բաժանվում է Հին և Նոր մասերի: Այս վերջինը կազմում է Զանգեզուրի գավառի կենտրոնը: Այստեղ են գտնվում բոլոր վարչական հաստատությունները, այստեղ են խմբված այս գավառամասի ինտելիգենտ և առևտրական ուժերը:

Գորիսի արևելյան կողմում ձգվում են Տեղի, իսկ արևմտյան կողմում՝ Ուչ-թափալարի բարձրավանդակները. սրանք դեպի հարավ մոտենում են միմյանց, իսկ հյուսիսային կողմում հեռանում են միմյանցից, կազմելով մի փոքրիկ հովիտ, որի միջով հոսում է Գորիսի գետակը:

Տեղի բարձրավանդակը կտրվում է մի ուրիշ ձորակով, որ արևելքից իջնում է դեպի արևմտահյուսիս: Ձորակի մոտ բարձրանում է Լաստ գագաթը, իսկ սրա մոտ՝ մի ապառաժ, բարձր ժայռ, որի վրա հնում բերդ է եղել: Այժմ նրա բնականից վորված, տեղ-տեղ նոր պատով կարկատած պարսպի հետքերն են մնում: Բերդի ժայռն իր չարունակության վրա ունի զանազան մեծության կոնաձև գագաթներ, որոնք կազմված են ջրի աղդեցությամբ: Նույնպիսի կոնաձև ժայռեր չարված են մոտակա ձորակի երկու կողմին էս: Սրանք ընդհանրապես կարմիր ավազի չերտերից են բաղկացած, տեղ-տեղ ժայռ քարերի խառնուրդով: Կան, որպես բացառություն սպիտակներ էլ: Նույնպիսի կազմություն և կարմիր կամ սպիտակ գույն ունի և բարձրավանդակի բերդի հանդեպ գտնվող լանջը, որ ուղղահայաց զայրիվայր ունի: Այս լանջի, ինչպես և ձորակի և բերդի քերծի մեջ կան բազմաթիվ, մեծ և փոքր արհեստական քարայրեր, որոնք երբեմն ծառայել են որպես բնակարաններ, իսկ այժմ առավելապես որպես խոտանոցներ են գործածվում: Ահա այս արհեստական քարայրներն են կազմել մելիքանիստ Գորիս գյուղը, որի աղքատ դասակարգը դարձյալ չարունակում է այդպիսի բնակարաններ կտրել իր համար: Իսկ հարուստներն սկսել են շինել կանոնավոր տներ: Գյուղի կենտրոնում գտնվում է հին հասարակ եկեղեցին, իսկ սրա մոտ՝ Մելիք-Հյուսեինյանների նախկին ապարանքը, որ այժմ ավեր է:

Գյուղն ընդհանրապես կեղտոտ է, անկանոն և միմյանց վրա դիզված տներով ու նեղ, ծուռ ու մուռ փողոցներով:

Սրա հակապատկերն է ներկայացնում Նոր Գորիսը, որ հնից բաժանվում է Գորիսի գետով: Սա հիմնված է 1870 թ. Ստարացկի գավառապետի ձեռքով և Մանուչար բեկ Մելիք-Հյուսեինյանի խորհրդով: Սրա տեղը հարթ է, նեղ, բայց բավական երկար: Հինգ կանոնավոր և շատ լայն փողոցներ ձգվում են հարավից հյուսիս, հետզհետե հյուսիսային կողմից ավելի և

---

[168] Зелинский, Исслед. экон. быта гос. крестьян в Зангезурском уезде, ст. 9.

ավելի երկարելով: Ուրիշ հինդ փողոցներ էլ խաչաձև կտրում են այս փողոցները: Գրեթե կենտրոնում գտնվում է մի մեծ հրապարակ, որից ներքև կան մի շարք խանութներ, իսկ սրանց առաջ նոր տնկած քաղաքային ընդարձակ պարտեզը, հասարակ, փայտե ցանկապատով: Այս պարտեզը մի փողոցով բաժանվում է վերին և ներքին մասերի, իսկ այս փողոցի եղբին կանգնած է Գ. Միրումյանի աղբյուրը, որի ջուրը չորս խողովակներից դուրս է թափվում դեների մեջ:

Տներն ընդհանրապես գեղեցիկ են, մեծ մասամբ երկհարկանի, տաշած քարից շինած, փայտե կտուրներով ծածկված: Գրեթե բոլոր տներն իրենց առջև պարտեզներ ունեն, մի քանի պտղատու ծառերով:

Եկեղեցին, որ այժմ է միայն շինվում սասուիկ դանդաղությամբ՝ բավական փոքր է և առանց համաչափության. դռները անհամեմատ մեծ են, իսկ պատուհանները չափազանց նեղ: Միակ, պետական, երկդասյան տղայոց դպրոցի շենքը շատ հասարակ և անհարմար է:

Բնակիչները հայ լուսավորչականներ են, ընդամենը 460 տուն, 1697 ար., 1449 իգ., մեսաին՝ 3146 հոգի:

Պարապում են երկրագործությամբ, այգեպանությամբ և առևտրով: Շուկան կենդանություն է ստանում, երբ սար գնացող թուրքերը լցվում են ավանը:

Նոր Գորիսից դեպի հյուսիս, հազիվ մի վերստ հեռավորությամբ միևնույն հովտում գտնվում է մի քարաշեն, գեղեցիկ վանքի ավերակ, քանդված պարսպով ու մի քանի խցերով: Մի քիչ ներքև վազելիս է եղել մի սառնորակ աղբյուր, որ այժմ Գ. Միրումյանի ծախսով տարված է Նոր Գորիս: Ոչ մի արձանագրություն չկա բոլոր ավերակների վրա, միայն ավանդությունը պատմում է, թե սա երբեմն շատ հարուստ վանք է եղել, ունեցել է բազմաթիվ հոտեր, որոնց տված կաթը խողովակներով հոսել է սարից մինչև վանքը: Այստեղ է եղել և այն գորավոր (ղոռ) ղանդը, որ իր անունը տվել է գավառին:

Ջագեձոր. Այս վանքից դեպի արևելահյուսիս ձգվում է մի բավական խոր ձոր, որի մեջով հոսում է Գորիս գետի օժանդակ Շոռ-ջուր վտակը, որի անունով և կոչվում է ձորը: Իսկ այն մասը, որ երկու կողմից պատած է բարձր ժայռերով, և որոնց մեջ կան բավական թվով քարայրեր՝ կոչվում է Ջագեձոր կամ Ծակերի ձոր: Այս «ծակերը» կամ «քրատակերը» հնչտությամբ փորված են ձորի լանջերին, որովհետև Ջանդեղուրը մի ժամանակ ջրի տակ լինելով՝ այս բարձրությունները դուրս են ավազախառն հողի շերտերից: Այս ծակերը զանազան մեծության են, և նրանցից մի քանիսը միմյանց հետ միացած են նեղ անցքերով: Ծակերից շատերը շատ բարձր են գտնվում, և այն էլ այնպիսի ուղղահայաց տեղերում, ուր ոչ մի մարդկային ոտք չէր կարող բարձրանալ: Ծերունիները պատմում են, թե լսել են իրենց

պապերից, որ այդ ծակերում բնակվողները թոկեր էին քաշ տալիս և բռնած բարձրանում: Մինչև անգամ այժմ էլ մի ծակի վերև մի գերան է ձգված, որից հավանականորեն կապելիս են եղել թոկը: Մերունիները նկարագրում են, թե ինչպես կանայք, երեխան մեջքերին կապած, ճարպկությամբ բարձրանալիս են եղել այդ թոկերով: Դրանց խոսքերը հաստատվում են Աբրահամ Կրետացու վկայությամբ, որ ասում է Խնձորեսկի մասին. «Ի բարձրաբերձ տեղիս յայսկոյս և յանկոյս դէմ յանդիման միմեանց՝ փորեալ ապառաժ վէմս քարայր, որ են մաղարայք, իւրաքանչիւր ոք վասն իւրեանց տուն բնակութեան շինեալ բնակէին. և այն էր զարմանք, որ կաշէ փոկովք ելանէին և իջանէին կանայք՝ զտոնդևայ տղայս կապեալ ի վերայ ողին իւրեանց, նոյնպէս և զաւփորն ջրոյ և հարկաւոր իրաց, այնպէս փոկով ելանէին ի վեր և մտանէին ի բարձրագոյն որջս վիմաց, և քարշէին զփոկէ առաւտանն ի վեր. մարդ ոչ կարէր ելանել»:

Բարայրներից նշանավոր է «Կարմիր եկեղեցի» կոչվածը, ուր մինչև այժմ էլ Կարմիր կիրակիի օրը բազմաթիվ ուխտավորներ են գնում, զլխավորապես Հին և Նոր Գորիանցից: Սա գտնվում է ձորի աջ կողմում, գրեթե գագաթին: Դաշտի վրա կա մի փոքրիկ գերեզմանատուն, որտեղից մի նեղ կածան քարձի լանջերի վրայով իջեցնում է դեպի ձորը, ուր բացվում է մի փոքրիկ քարաշեն դուռ: Անցնելով այս դռնից, մտնում ես 9,23 մ (4 ս. և 1 արշ.) երկարության, 4,97 մ (2 ս. և 1 արշ.) լայնության և 2,84 մ (4 արշ.) բարձրության մի այրի մեջ, որի միայն ձորահայաց կողմը քարե պատ է քաշած:

Հյուսիսային կողմում շինված է սեղանը, որի վրա դեռևս կանգուն է մնում վեմ քարը: Ինչպես երևում է՝ սեղը անհարմար լինելով՝ հյուսիսային կողմում են դնում սեղանը: Արևմտյան կողմում, հողի մեջ փորված է ավազանը: Սեղանի վրա կան բավական թվով կավե կանթեղներ:

Կարմիր եկեղեցուց փոքր-ինչ վեր, նույն ձորակում, վտակի անմիջապես ափին գտնվում է մի քարաշեն փոքրիկ եկեղեցու ավերակ, որի դռան կամարակալ քարի վրա գրված է.

Ձիշատակ է սբ. եկեղեցիս Մելիք Օհանին եւ իւր ծնողացն Մելիք Բաղուն թվ. ՌՄԺԴ (1765):

Սույն եկեղեցու հանդևում գտնվող ժայռի գագաթին նկատելի են փորվածքներ: Ասում են, թե այս տեղը ծառայելիս է եղել որպես բերդ:

Սինդարա. Ձագեձորից փոքր-ինչ բարձր ձգվում է մի ուրիշ հովիտ, որ կոչվում է Սինդարա: Այստեղ կա մի քարաշեն, կամարակապ եկեղեցու ավերակ և բավականաչափ «քարատակ»-ներ, մի քանիսը քերծերի, մյուսները՝ հողի մեջ փորված: Մերունիների ասելով՝ սա «Վերի շենի», այսինքն Հին Գորիսի ամառանոցն է եղել:

Հին Գորիս կամ Վերի Շեն. *Գորիս գետի ուղղությամբ, գեղի հյուսիս ձգվում է բլրակների մի շարք, որոնց մեջ կա մի բարձր, կարմիր ժայռ. տեղացիները սրան կոչում են «Պղնձաքար» և սրա անվամբ էլ ամբողջ բլրակների շարքը՝ Պղնձաքարի սարեր: Այս Պղնձաքարի ժայռի մեջ կա մի բնական՝ 10,65 մ (5 ս.) երկարության, 8,52 մ (4 ս.) լայնության և մոտ 6,39 մ (3 ս.) բարձրության այր, ուր այժմ ոչխարներ են մակաղում: Այս ժայռից փոքր-ինչ հյուսիս, նույնանուն բլրակների լանջին, գտնվում է Վերի Շեն կամ Հին Գորիս գյուղը: Այստեղ էլ տների մեծագույն մասը, մանավանդ հները, «քարատակ»-ներ են, միայն ոչ թե քերծերի, այլ ուղղակի բլրի լանջին փորված: Սրանցից շատերը հենց այժմ էլ ծառայում են որպես բնակարաններ, և բացի բոլոր մյուս անհարմարություններից, ունեն նաև այն անտանելի պակասությունը, որ գարնանը նրանց մեջ սաստիկ կաթում է: Գյուղում կա մի փոքրիկ, կիսով չափ քերծի մեջ փորված եկեղեցի, Նարակնունք (Նորակնունք) անունով, որի դռան կամարակալ քարի վրա կա հետևյալ արձանագրությունը.*

Թ. ՌՀԷ (1628) ես Նասիպ կանգնեցի սբ. եկեղեցիս ի փրկութիւն հոգւոյս:

Այս եկեղեցին այժմ էլ իբր աղոթատեղի է ծառայում: Բացի սրանից կա նաև մի ուրիշ եկեղեցու ավերակ:

Այս գյուղում այժմ բնակվում են 40 տուն հայեր, 219 ար., 193 իգ., 412 հոգի ընդամենը: Գյուղացիների պարապմունքը երկրագործությունն ու անասնապահությունն է: Մելիք-Հյուսեինյան Մանուչար բեկը պատմում էր, թե այս գյուղում եղել է երկու բրգաձև, բարձր շինություն: Իր հայրը, մելիք Հարությունը, հրամայել է քանդել դրանցից մեկի գլուխը, և երբ մի անցք է բացվել՝ մի մարդ են կախել ներքև. սա իջել է բավական ցած և գետնի մեջ տեսել է ահագին ժայռ քարերով ծածկված, երկու սենյակ, որոնցից մեկի մեջ դտել է ձիու բրոնզե սանձ: Այն ահագին սանձը այժմ էլ մնում է Մանուչար բեկի մոտ: Վերջին ժամանակներս այդ հինավուրց շինությունները քանդվել են:

Վերի Շենից գեղի հյուսիս, մոտ 2 վերստ հեռու, մի ձորակի մեջ բխում է մի սառնորակ աղբյուր: Սրա մոտ կան ահանգին քերծեր, որոնցից ամենամեծի մեջ կա երեք մեծ «քարատակ». սրանցից երկուսը միմյանց հետ հաղորդակցում են արհեստական կերպով բացված մի կլոր ծակով: Սրանց մոտ կա և մի ուրիշ, փոքրիկ քարատակ, որ երկու նեղ անցք ունի: Սա սրբատեղի է համարվում, և թեպետ ոչ մի խաչ, ոչ մի պատկեր չկա, բայց և այնպես՝ ձեթի հին կանթեղներ են վայր ածած մեծ թվով, և ամբողջ քարատակը սևացած է վառված ձեթի ճրագների և մոմերի ծխից: Դեռ այժմ էլ Գորիսից շատ ուխտավորներ են գալիս այստեղ: Այս ժայռերի դիմաց մի ուրիշ ժայռ ևս կա, երկու, միմյանց հետ հաղորդակցություն ունեցող, բնա-

կան այրերով: Սրանցից մեկի անկյունում մի օջախ կա, որ ցույց է տալիս, թե սրանք մի ժամանակ իբր բնակարան են ծառայել:

Սրանցից էլ մոտ 40 մ հեռու, վարարակի ափին, դարձյալ գոնվում են քերծեր, որոնց մեջ կա մի ահագին այր, որ հաղորդակցում է ուրիշ երկու, փոքրիկ այրերի հետ: Քիչ էլ հեռու, նույն վարարակի մոտ, կա մի ուրիշ, բոլորովին կարմիր քերծ, որի մեջ ևս կան բավականաչափ քարատակեր:

Գորիս գետի հովիտը շարունակվում է նաև Գորիսից ներքև, դեպի արևելահարավ, և գնալով լայնանում ու խորանում է: Ձորի երկու լանջին կան բավական թվով քարայրեր, որոնցից մի քանիսը շատ մեծ են և շատ բարձր տեղ են գտնվում: Սրանք մի տեղում չեն իմբված, այլ ցրված են: Նկատելի է, որ այս այրերից շատերն արհեստական են եղել և հավանորեն չինված են պաշտպանության համար: Կան նաև այնպիսիները, որոնց մասին կարելի է կարծել, թե ջրի աղբեցությամբ են կազմվել: Այս ձորն այժմ էլ ամբողջովին պատած է այգիներով, ուր բացի խաղողի որթից, կան նաև թթենիներ, կեռասենիներ, խնձորենիներ և այլն: Ինչպես երևում է, հին ժամանակներում էլ այս ձորն առատ է եղել խաղողի որթերով, որովհետև ժայռերի մեջ հնձաններ են փորված:

Նշանավոր է նաև այն, որ հնձաններին մոտ չինված են ձի կապելու տեղեր, ուր ձին միշտ կապած պատրաստ է եղել՝ ավազակների հարձակման դեպքում, տիրոջը փախցնելու: Ժողովուրդը դեռ այսօր էլ հիշում է, թե պարսից տիրապետության ժամանակ որքան վտանգավոր էր այդ ձորով անցնելը: Այս ձորի աջ ափին Գորիսից հազիվ երկու կիլոմետր հեռավորության վրա, բարձրանում է Օլիավոր բերդը: Սա ձորի դագաթին բարձրացող մի ահագին ժայռի վրա է գտնվում, որի մեջ երևում են բավական թվով քարայրեր: Պարիսպը նույնիսկ ժայռից է փորված, իսկ տեղ-տեղ՝ արհեստական պատ է քաշած:

Մեկ կիլոմետր էլ հեռու, դարձյալ գետի աջ ափին, բայց փոքր-ինչ հեռու և բարձր՝ գտնվում է Քարահունջ գյուղը, որտեղ է Շուռան ջրվեժը: Այս գյուղի տները միմյանց վրա կիտված, մի քանիսը քարատակ, մի քանիսը ղարադամ, մի քանիսն էլ կանոնավոր, փայտե կտուրներով գեղեցիկ սենյակներ են: Հին եկեղեցին այժմ ավերակ է, իսկ նոր եկեղեցին չինված է հին գերեզմանատան մեջ: Գյուղի արևելյան մասը 1889 և 1896 թվերի երկրաշարժից պատուվել և նոսել է (փոս է ընկել), ուստի բնակիչները տեղափոխվել են մյուս մասը: Այս գյուղում, ինչպես ասել ենք՝ կան երկաթի և կավճի անմշակ հանքեր և ծծմբային տաք ջուր:

Բնակիչները բնիկներ են, 105 տուն, 543 ար., 437 իգ., ընդամենը 980 հոգի: Պարապում են երկրագործությամբ, անասնապահությամբ և այգեպանությամբ: Կան նաև նշանավոր հյուսներ, որ աշխատում են գլխավորապես Բաքվում:

Ժողովրդի մտավոր վիճակը, մյուս դյուղերի հետ համեմատելով՝ բավական բարձր է: Դեռ 1893 թ. բացվել է Հայոց ծխական երկսեռ դպրոց, որ շուտով նույն գյուղացի հայտնի բարեգործ Առաքել Ծատուրյանն առել է իր հովանավորության ներքո և պահել մինչև դպրոցների փակվելը՝ 1896 թ.: Բացի այս դպրոցից՝ շատերն էլ ուսել են քաղաքներում, և այժմ այս գյուղից կան 3 համալսարանական և 10 հոգի միջնակարգ դպրոցներ ավարտողներ:

Քարահունջից էլ մոտ վեց կիլոմետր հարավ, նույն ձորի աջ կողմում, բարձրանում են երեք առանձին, ահագին ժայռեր, որոնցից մեկի վրա կա մի հինավուրց ամրոց: Այժմ ոչ մի ճանապարհ չկա նրա գլուխը բարձրանալու, միայն հեռվից երևում են բնականից թողնված պարիսպ և այրեր: Ոմանք սրան Ղըզ-ղալա են կոչում, ուրիշներն էլ՝ Գյավուր-ղալա:

Խնձորեսկ. *Գորիսից մոտ ութ կիլոմետր հեռավորությամբ դեպի արևելք, քերծերի մի խումբ կղզիանում է Բյուլբյուլաձոր, Բըմբըխտաձոր, Ջըռչըռոտ, Ճալաչավլուկ, Սըռնոցի ձոր և Պըռչնոտ ձորերով, իսկ քերծերի բոլոր լանջերին էլ բնակության համար «քարատակ»-ներ են փորված և այժմ էլ փորվում են: Քերծերի ամենաբարձր գագաթին հնում մի փոքրիկ ամրոց է եղել, որի միայն հետքերն են այժմ մնացել: Գյուղի մեջ բաժանված 16 տղբյուրների ջուրը մի փոքրիկ առվակ կազմելով՝ հոսում է գյուղի միջով: Բնակարանների մեծագույն մասը քարատակներ են, որոնցից հնագույննները շատ բարձր դիրք ունեն, այնպես որ ներկայումս բնակության համար անհարմար լինելով՝ ծառայում են որպես խոտանոցներ: Շատ դժվարությամբ, թոկեր կապելով կարողանում են բարձրանալ այդ այրերը և խոտ դարսել: Այժմյան բնակիչների բնակարանները նույնպիսի քարատակներ են, միայն ավելի ցած, մատչելի տեղերում փորված: Ոչ մի կանոնավոր և նույնիսկ անկանոն փողոց չկա, այլ նեղ անցքեր տանում են մի բնակարանից մյուսը, որոնք մեկը մյուսի վրա, մեկը մյուսից փոքր-ինչ բարձր փորված քարատակներ են: Սրանցից լավագույննները դռների վերև մի-մի ծակ ունեն, որտեղից արևի լույսը աղոտաբար ներս է թափանցում, մյուսները միայն մի դռնով են հաղորդակցվում լույս աշխարհի հետ:*

Նորագույն բնակարանների կեսը քերծի տակ, իսկ կեսը դուրսն են, կազմելով մի փոքրիկ զարադամ: Քարատակների մեջ բնականից կտրված են պահարաններ և նստարաններ: Այժմ շինվում են նաև երկհարկանի կանոնավոր տներ:

Ձորի մեջ, որտեղով հոսում է փոքրիկ առվակը՝ կան դեղեցիկ, կամարակապ և առջևը բաց արհեստական այրեր, բավական բարձր և լայն բնական թախտերով, որտեղ երևի նստելիս, զվարճանալիս են եղել նախկին բնակիչները բռնությունից չունչ քաշելու համար:

Գյուղի դրեթե կենտրոնում, նույնպես քերծի մեջ, փորված է եղել մի փոքրիկ եկեղեցի, որ այժմ բոլորովին քանդված է: Բայց մի այսպիսի գետնափոր եկեղեցի դեռևս կանգուն մնացել է գյուղից դուրս, դեպի արևելք, մի քերծի մեջ, ուր կան նաև գերեզմաններ, առանց տապանագրերի:

Այժմ գյուղն ունի երկու եկեղեցի, որոնցից հինը, որ բավական գեղեցիկ և կամարակապ է՝ գտնվում է գյուղի կենտրոնում, իսկ մյուսը, որ նոր է՝ գյուղի նոր, հյուսիսային մասում: Առաջին եկեղեցու դռան կամարակալ քարի վրա գրված է.

Թվ. ՌՃԺԵ+ԲԷԹ. Ցիշատակ է սուրբ Հռիփսիմայ եկեղեցիս, ես Գիչու որդի Թուխակս չինել տուի սուրբ եկեղեցիս ի հալալ արդեանց իմոց յիշեցէք զիս ի Քս:[169]

Գյուղի հարավ-արևելյան կողմում, քերծից մի լեզվակ է ձգվում, որի երեք կողմից հոսում է Խնձորեսկի առվակը: Այս լեզվակի հարթ մասի վրա կա մի փոքրիկ եկեղեցու ավերակ, մոտը խցերի հետքեր, իսկ լեզվակի շուրջը՝ պարիսպ: Եկեղեցու հյուսիսային կողմում գտնվում է Մխիթար սպարապետի գերեզմանը այս տապանագրով.

Այս է տապան ի հանգիստեան
Իջեալ մարմնով ի գերեզման,
Սայ Մխիթար մեծ անուանեալ,
Սորա օնէր իշխանութիւն,
Սա բեմուրատ գնաց ջիվան,
Որ է երկրեն սայ կեանճուվ էր:
Նահատակուեցաւ ՌՃՀԶ (1727):[170]

Եկեղեցու հարավային որմին կից է մնացել Բարխուդարի գերեզմանը, որ Տեղ գյուղի մելիքն է եղել: Մինչև 1896 թ. այս եկեղեցին բոլորովին կանգուն էր, միայն այդ թվին գյուղացիները քանդեցին և նրա սրբատաշ քարերով նրա դավթում երկու մեծ սենյակներից բաղկացած Հայոց եկեղեցական ծխական դպրոցի շենք կառուցեցին, ուր այժմ գետեղված է պետական երկդասյան դպրոցը:

Գյուղում կան նաև ս. Մինաս և ս. Նահատակ անունով փոքրիկ, հասարակ մատուռներ, որ ուխտատեղիներ են համարվում:

Գյուղի բնակիչները բոլորն էլ հայ լուսավորչականներ են, ընդամենը 613 տուն, 2344 արս., 1875 իգ., միասին՝ 4219: Պարապում են երկրագործությամբ, այգեպանությամբ, անասնապահությամբ և մասամբ օղեհանությամբ: Գյուղացիների մեծ մասը գնում է Բաքու մշակություն անելու:

---

[169] Տե՛ս ԴՀՎ II, էջ 63:

[170] Տե՛ս ԴՀՎ II, էջ 64: Ե. Լալայանը ևս մեկ անգամ անդրադառնում է սպարապետի տապանագրին (էջ 214), որտեղ, թերևս տպագրական վրիպակի պատճառով, նշված է ՌՃՀԹ (1730):

Այստեղ ամենից ավելի զգալի է Բաքվի կնդ լուսավորության ազդեցությունը. կան կանանց զգեստների 35 դերձակ, որոնցից չատերը ունեն կարի մեքենաներ, թեև աշխատում են այրերի մեջ: Կա նաև կտորեղենի 4 խանութ, ուր երևում են նաև թանկագին, արշինը 1-2 ռ. արժողության կտորներ, 7 մանրածախի խանութ, ուր քաղցրեղենն ու մրգեղենը առաջին տեղն են բռնում: Երեք էլ ներկարարի (բոյաճի) գործարան կա: Գյուղի բարոյական վիճակը բավական ողբալի է. ինչ որ պակաս է թողնում Բաքվում վչացած երիտասարդությունը՝ այն լրացնում են հինգ տգետ քահանաներ, միմյանց դեմ լարած մեքենայություններով: Մինչդեռ հին սերունդը չատ պեղեցիկ և բարձրահասակ է՝ նորը հիվանդոտ է և փոքրահասակ:

Այս գյուղում կան բավական աչուղներ, որոնցից նշանավոր են աչղ Մարտիրոսը, որի աչակերտն է դարաղչլաղեցի՝աչղ Հադամը, և Յուսուփ օղլին, որ գրել է «Հղարի քնարը»: Նշանավոր է նաև աչղ Ներսես Սազանդարյան՝ Թառույնի մականվանյալը, որ մոտ օրերս հրատարակեց իր «Նոր երգարանը»:

Կոռնիձոր. *Խնձորեսկից դեպի արևելահարավ, հազիվ հինգ կիլոմետր հեռավորությամբ մի խոր ձորի լանջին, գտնվում է Կոռնիձոր գյուղը: Այստեղ կան բավական թվով հին քարատակներ և մի քարատակ եկեղեցի: Նշանավոր են նաև այն կոնաձև ժայռերը, որ ցցվում են ձորակի մեջ: Այժմյան բնակիչները տեղավորված են մասամբ այդ հին, մասամբ էլ նոր կտրված քարատակների և մանավանդ հասարակ զարադամների մեջ: Միակ քարաշեն եկեղեցին բավական հին և քայքայվելու վրա է: Գյուղի միջով անցնում է համանուն վտակը: Բնակիչները բոլորն էլ հայ լուսավորչականներ են, 219 տուն, 761 ար., 573 իգ., միասին՝ 1334 հոգի: Պարապմունքը նույնն է, գլորց երբեք չեն ունեցել:*

Խնածախ. *Այս գյուղը գտնվում է Գորիսից դեպի հյուսիս, մոտ 25 կիլոմետր հեռավորությամբ: Իսկ սրա մոտ, հազիվ 2 կիլոմետր հեռու ձգվում է մի խոր ձոր, որի միջով հոսում է մի փոքրիկ առվակ: Այս ձորի երկու կողմում կան կարմիր և սպիտակ ավազախառն հողից կազմված քերծեր, որոնք ջրի ազդեցությամբ զանազան ձևեր են ստացել, մանավանդ նշանավոր են մի քանիսը, կոնուսի ձևով: Այս քերծերի մեջ ևս կան բազմաթիվ մեծ ու փոքր քարատակներ, նախկին բնակարաններ: Ձորի բերանում, ուր երեք կողմից բոլորվում են լեռներ՝ քարե պարիսպ է քաշված և մի մեծ դարպաս թողնված: Նույնպիսի մի պարիսպ էլ ձգվում է փոքր-ինչ բարձր, լեռների ընդհարման կետում, չրջափակելով մի փոքրիկ տարածություն, որ ձորից բավական բարձր է: Այստեղ գտնվում է մի մեծ, 32 մ (15 ս.) երկարության, 21,3 մ (10 ս.) լայնության և մոտ 27,7 մ (13 ս.) բարձրության քարայր, որի ձորահայաց կողմը բոլորովին բաց է: Սա կարծես մի բնական սրահ լինի, որից դեպի բոլոր երեք կողմերը բացվում են մեծ և փոքր ար-*

հետաքրքրական քարտաշներ: Սրան կից է նաև մի ուրիշ մեծ այր, որ ծառայելիս է եղել որպես եկեղեցի: Սրա երկարությունն է 14,2 մ (6 ս. 2 արշ.), լայնությունը 9,2 մ (4 ս. 1 արշ.) և բարձրությունը՝ մոտ 12,8 մ (6 սաժեն): Սա ամբողջովին քերծի մեջ է և այն ձորահայաց կողմից քարե պատ է շինված: Եկեղեցին ունի մի սեղան, երկու փոքրիկ սրբատեղով, և երկու ավանդատուն, որոնցից հարավայինի մեջ փորված է ավազան, իսկ մյուսը ծառայում է որպես գավիթ: Եկեղեցուց բարձր կան ուրիշ քարտաշներ ևս, որոնք հավանորեն միմյանց հետ հաղորդակցվում են, որովհետև դրսից չատ բարձր և բոլորովին անմատչելի են: Եկեղեցու հանդեպ և վերև, հարթության վրա, կան դերեզմանաքարեր, որոնց վրա միայն խաչեր կան քանդակված:

Գյուղը ընկած է ըլրակների լանջերին, որոնք միմյանց ընդհարվելով՝ մի փոքրիկ ձորակ են կազմում: Այստեղ բխում է մի վարար աղբյուր, որի ջուրը հոսելով ձորի միջով, հնարավորություն է տվել պարտեզներ անկելու, որոնց մեջ մշակվում են առավելապես կեռասենիներ:

Գյուղի կենտրոնում գտնվում է մի հնաշեն, հասարակ եկեղեցի, իսկ նրանից բարձր՝ երկու փոքրիկ մատուռ և մի հին դերեզմանատուն, ուր նշանավոր է մելիք Հայկազի դերեզմանը: Տները ղարաղամներ են, սակայն կան նաև քարտաշներ, որոնցից մի քանիսը հին են, իսկ մյուսները նոր են փորված: Հին քարտաշները գլխավորապես ծառայում են որպես խոտանոց և գոմ:

Բնակիչներն առավելապես Սուլթան-քենդից գաղթած հայ լուսավորչականներ և շիա քրդեր են. հայերը 188 տուն են, 834 ար., 631 իգ., ընդամենը՝ 1465 հոգի: Քրդերը՝ 50 տուն՝ 135 ար., 117 իգ., ընդամենը՝ 252 հոգի: Պարապմունքը նույնն է: Գյուղում կա չորս խանութ:

Տեղ. Այս պատմական գյուղը գտնվում է Գորիսից դեպի արևելահյուսիս, մոտ 18 կիլոմետր հեռավորության վրա: Գյուղի հարավային և հյուսիսային կողմերից ձգվում են մի-մի ձոր, որոնք գյուղի արևելյան կողմում միանալով՝ տարածվում են մինչև Հաքարի գետը, Քուչուղի ձոր անունով: Հյուսիսային ձորից հոսում է մի առվակ, որ Տնղի ջուր է կոչվում, իսկ հարավային ձորում կան երկու աղբյուր, որ սուրբ են համարվում և պաշտվում: Գյուղում փողոցներ չկան. տների կտուրները ծառայում են որպես բակ և փողոց: Տներից չատերը ղարաղամներ են, որոնց առաջը կան համարակապ բավական ընդարձակ բակեր, իսկ հետի մասում մյուս տների տակ մտած քարտաշներ, որոնք ծառայում են որպես ախոռ կամ մառան:

Գյուղի դրեթե կենտրոնում գտնվում է կարմիր սրբատաշ քարից շինված մի անխորան եկեղեցի, որի երկարությունն է 11,36 մ (5 ս. և 1 արշ.), լայնությունը՝ 4,26 մ (2 ս.) և բարձրությունը՝ 7,81 մ (3 ս. և 2 արշ.): Ձեղունը համարակապ է և առանց գմբեթի: Երկու նեղ և կարճ պատուհաններ

լուսավորում են եկեղեցին: Միակ դուռը այժմ փակված է, իսկ արևմտյան պատը քանդելով՝ եկեղեցին 6 մ երկարությամբ մեծացրած է անտաշ քարերով և մի դուռն չինված, որի կամարակալ քարի վրա կա հետևյալ արձանագրությունը.

Ձիշատակ է սուրբ տաճարիս վէմս, նորոգեցան Բարխուդարն իւր կողակից Թաճուհն Ռ... իսկ նորոքելն Թ. ՌՃՀՀ (1737)...:[171]

Դռան ձախ կողմում. Ձիշատակ է սուրբ տաճարիս խորհրդանոցն Շահնազարի կողակից Վառուն իւր որդի Պատալին:[172]

Եկեղեցին պատած է պարսպով, որի մեջ բացի են թողնված ծակեր՝ հրացան արձակելու համար: Պարսպված գավթում կան մի քանի գերեզմաններ և նկատելի են սենյակների հետքեր: Թե եկեղեցու և թե պարսպի մեջ կան շատ գեղեցիկ խաչքարեր, գլխավորապես գերեզմանների վրայից վերցված:

Եկեղեցուց փոքր-ինչ հեռու գտնվում է Մելիք-Բարխուդարյանների ապարանքը՝ բաղկացած մի քանի դարադամներից, որոնց առաջը կան թաղակապ բակեր (դալան):

Այս ապարանքից փոքր-ինչ հեռու գտնվում է հին գերեզմանատունը, ուր կան բազմաթիվ հին և դեղեցիկ տապանաքարեր: Հետաքրքիր են մեծատուններն գերեզմանաքարերը. սրանք 2 մ ավելի երկարության, 71 սմ բարձրության և մոտ 36 սմ լայն քառանկյունի քարեր են, որոնց երկու երեսների վրա, դեղեցիկ նախշերի մեջ գանազան տեսարաններ են քանդակված, օրինակ, մի առյուծ խեղդում է մի դառ, կամ մի իշխան գինի է ընդունում մի ծառայից, մի աշուղ էլ ածում է: Այս տապանաքարերի ներքին մասում դեպի ոտների կողմը, կանգնեցրած են 2,25 արշ. բարձրության միակուռ քարեր, որոնց արևմտյան երեսին խաչ է քանդակված, իսկ արևելյան կողմի ներքին մասում բարձրաքանդակ «օջախ» դուրս բերված: Այս վերջինը նշանակում է, որ ննջեցյալը մեծ օջախից է եղել:

Բնակիչները բոլորն էլ հայ լուսավորչականներ են, 472 տուն. 1871 ար., 1288 իգ., ընդամենը՝ 3159 հոգի: Պարապում են երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեպանությամբ և օղհանությամբ:

Գյուղի մատչող վիճակը նախանձելի չէ. միմիայն անցյալ 1897 թ. բացվեց պետական միջոցյան դպրոց: Գյուղացիների վարկն էլ բավական ընկած է. սրանք հայտնի են որպես կռվարար, անհյուրասեր, խաբեբա և գող մարդիկ:

Գյուղը այժմ պատկանում է Դոլուխանյանին, Աթաբեկյանին և Թուրք Ռուստամբեկովին, մինչդեռ առաջները պատկանելիս է եղել Տաթևի վանքին, որովհետև Շահանդուխտ դշխոյի դաստակերտն է եղել, և սա յուր

---

[171] Տե՛ս ԴՀՎ. II, էջ 70:
[172] Տե՛ս ԴՀՎ. II, էջ 69:

ամուսին Սմբատի, Սյունյաց առաջին թագավորի հոգու փրկության համար 938 թվին նվիրել է Տաթևի վանքին:[173]

Տեղից սկսած մինչև Ջաբուխ կայարանը շարված են փոքրիկ կուրգաններ, որոնցից մի քանիսը այս տարի (1898 թ.) ամառը պեղեց Ռյոսլեր գերմանացին: Գտնվեցին բրոնզե մի դանակ, հուլունքներ և կավե ամաններ:

ԲԱՐԿՈՒՇԱՏԻ ՁՈՐ

Բարկուշատի կամ Շնհերի ձորը կոչվում է Բարկուշատ գետի ձախ ափը սկսած Սատանի կամուրջից՝ մինչև Դաուտլու գյուղը, որտեղ խառնվում են Բարկուշատի և Գորիսի գետերը: Այս ձորը Շնհեր և Խոտ գյուղերի մոտ բավական ընդարձակվելով՝ կազմում է մի գեղեցիկ հովիտ: Ձորի աջ ափն ընդհանրապես շատ զառիվայր է և դժվարամատչելի. տեղ-տեղ ծածկված է ծառերով և թփերով, տեղ-տեղ էլ ահագին ապառաժներով: Ձախ ափը, ընդհակառակը, բավական թեք է և տեղ-տեղ ունի առաջ ցցված փոքրիկ սարահարթեր: Այս կողմումն են Հալիձոր, Շնհեր և Խոտ գյուղերը: Բարկուշատ գետի ափերը ծածկված են խաղողի այգիներով: Ձորի մեջ նկատվում են պղնձի հանքեր: Կլիման շատ տաք է և խեղդիչ:

Հալիձոր. Գտնվում է Բարկուշատի ձախ ափին, ձորի լանջին: Արևմտահյուսիսային կողմում բարձրանում է Գյալին-պայան, որի առաջ ձգվում է Շահանդուխտի ձորը, իսկ հարավային կողմում, գետի դարձյալ աջ ափին, երևում է Հարանց անապատը, որ երկրաշարժի ժամանակ բարձրից իջել է ներքև: Տները քարաշեն են, միմյանց վրա կլիտված, որոնց մեկի կտուրը ծառայում է մյուսին որպես բակ և ճանապարհ: Կան մի երկու փողոց, որ շատ անկանոն և քարքարոտ են: Գյուղի կենտրոնում գտնվում է եկեղեցին, որ պարսպապատ է, գեղեցիկ և զմբեթավոր:

Ձորը լի է խաղողի այգիներով, որի գինին շատ գովված է: Բնակիչները բնիկ հայ լուսավորչականներ են, 66 տուն, 283 արս., 252 իգ., ընդամենը՝ 535 հոգի:

Պարապում են այգեգործությամբ, երկրագործությամբ և անասնապահությամբ:

Գյուղը պատկանում է Տաթևի վանքին, որին նվիրել է Ժ դարում Բարկեն իշխանի Համատպրուհի դուստրը:[174]

Ժողովրդի մատավոր դրությունը շատ աննախանձելի է, գալրոց երբեք չեն ունեցել և հազիվ թե 15 հոգի գրագետ լինեն, բացի սրանից էլ, անհյուրասեր են:

---

[173] Սիսական, եր. 263:
[174] Տե՛ս Սիսական:

Հալիձորից վոքր-ինչ հյուսիս՝ դեպի Շնհեր՝ դեպի ձախ ափին՝ մի բլրի վրա, կա մի փոքրիկ եկեղեցու ավերակ և սրա մոտ երկու խաչարձան տապանաքար, որոնցից մեկի վրա գրված է.

Անուն Այ ես Տարսայիճս որդի Լիպարտի զՀալիձորոյ Թ. Կոպարս վնասրովն ոյ տարտանդովն սրանէս քարգործին հերենիք ավի որդիք թոռն եւթ... քարգործն եկեղեցի չինեցան վարձն որ այվանս ես զայն նրայ դատմտան փոխարէն քար արի որ նրայ հայրենիք յազգէ յազգ. ով այս գիրս խափաններոյ ջանայ յիմոց կամ աւտարաց, յժը հայրապետացն նզովեալ եղիցի:

Մյուս կողմում. Ես տր Հայր վկայեմ. ես տր Սարգիս վկայ եմք:[175]

Մյուսի տապանագիրն անընթեռնելի է:

Այս բլրակից ներքև, դեպի անմիջապես ափին կան նույնպես տապանաքարեր, որոնցից մեկի վրա գրված է.

Ի թվիս ՉԺԳ (1264) ես Գրիգորիկ բազում աչխատութեամբ եւի զառ ց աճ տնկեցի զբուխթելոաց կեսս իգիս վայելուչ այ իշխանութեան ածասէր պարոնացն Սմպատայ եւ հարազատին իւրոյ Տարսաիճին. ես Տարսաիճս գիր ավի հայրենեացս... Թէ ոք ի Հայոց... ի Տաճկաց խլեսցէ, ԼՄԸ հայրապետաց նզովեալ եղիցի:[176]

Շնհեր. Հալիձորից հազիվ երկու վերստ հեռավորությամբ, դեպի հյուսիս՝ Բարկուշատի ձախ ափին, տարածվում է Շնհեր գյուղը՝ բռնելով ձորի վերին լանջը: Այս գյուղը, սույն ձորի գյուղերից ամենից մեծը լինելով, գուցե հենց այս պատճառով էլ կոչվել է Շինահայր կամ Շինուհայր, որ ոմանք էլ բառերի տեղափոխությամբ՝ Հայրաշեն են դրել: Ձորի վերին մասը, գյուղի արևմտյան կողմը, պատած է ահագին ժայռերով, որոնցից մեկը մի փոքրիկ քարախորշ է կազմում, որ պաշտվում է և վառված մոմերից բոլորովին սևացել է, ժայռի գագաթին էլ մի փոքրիկ, անմատչելի մատուռ կա: Սրանից փոքր-ինչ արևելք ժայռերը վերջանում են, և մի փոքրիկ ձորակի մեջ բացվում են բավական թվով մեծ և փոքր քարատակներ, որոնց մոտից հոսում է մի բարակ աղբյուր, որ նույնպես սուրբ է համարվում: Այս աղբյուրի մոտ բլուր է և մի ուրիշ աղբյուր, շատ վարար, որ անցնելով ձորը՝ թափվում է Բարկուշատի մեջ: Գյուղի արևելյան կողմում էս կան քարայր-բնակարաններ, որոնց տեղացիք Հալիձորի ծակեր են կոչում: Սրանցից մի քանիսի մեջ կան թոնիրներ:

Գյուղի գրեթե կենտրոնում գտնվում է ս. Ստեփանոս եկեղեցին, որ բավական մեծ ու գեղեցիկ է, չորս սյուների վրա հաստատված, կամարակապ ձեղունով: Հարավային դռան առաջ չորս սյուների վրա բարձրանում է մի գեղեցիկ գմբեթ, որ ծառայում է որպես զանգակատուն: Եկեղեցու պատու-

---

[175] Տե՛ս ԴՀՎ. II, էջ 52:
[176] Տե՛ս ԴՀՎ. II, էջ 52:

հանները փոքր են և նեղ, ներքուստ զարդարված է խաչկալով և հինգ ջահերով: Եկեղեցու չուրջը կան հին և նոր գերեզմաններ: Մի ուրիշ գերեզմանատուն էլ կա գյուղի արևելյան կողմում, ուր կան խաչքարեր ԺԴ դարից:

Գյուղի արևմտահարավային կողմում, ձորի մեջ ցցված մի քերծի գագաթին տեղավորված է ս. Աստվածածնի անունով կուսանոց անապատը, որ շինել են 1676 թ. Ագուլիսից գաղթած կույսերը և վերանորոգել են մահտեսի Ագաբեան և նրա որդի Բենիամինը: Կուսանոցը պարսպապատ է և երեք աշտարակներով պաշտպանված: Վերին մասում գտնվում է մենաստանը, որ 17,4 մ (8 ս. և 0,5 արշ.) երկարություն, 10,65 մ (5 ս.) լայնություն և 9,6 մ (4,5 ս.) բարձրություն ունի և շինված է կոփածո անտաշ քարերով: Ջեղուն կամարակապ է և ունի մի փոքրիկ դռնեք: Պատուհանները փոքր են և նեղ, միակ դուռը բացվում է հարավային կողմում մի գավթի մեջ, ուր կան մի քանի գերեզմաններ: Եկեղեցու արևելյան կողմում, ղրսից, մի խաչ կա, որի մասին ասում են, թե բժշկություն է տալիս օձից խայթվածներին, եթե միայն նրանք խայթող օձից առաջ կարողանում են գալ և խաչը համբուրել:

Տաճարի վրա կան հետևյալ արձանագրությունները. Արևմտյան կողմը, մի խաչի վրա.

Ես Հոգեմեղս կանգնեցի զխաչս հօրն իմոյ Ատէսայ. Թվին Հայոց ՁԼ (1281):[177]

Սեղանի որմի վրա.

Շնորհօք սուրբ Հոգւոյն շինեցաւ տունս ապաւէն. Թվին Հայոց ՌՃԻԵ (1676): Ի հայրապետութեան Սրբազան տեառն Յակոբայ:

Սեղանի մոտի առաջին սյան վրա.

Շնորհօք սուրբ Հոգւոյն շինեցաւ տունս ապաւէն. Թվին Հայոց ՌՃԻԵ (1676): Ի հայրապետութեան Սրբազան տեառն Յակոբայ. եւ ի թագաւորութեան Պարսից Շահ Սուլէյմանին, յԱրքեպիսկոպոսութեան երկրիս տէր Յոհաննիսի:[178]

Մյուս կողմում, կամարի վրա.

...Ազդմամբ սուրբ Հոգւոյն ես ամենամեղս մահտեսի Ազրիս, որ եւ տեղեաւ Ագուլեաց դաշտէն, եկի ի ժողովարանն կանանց, եւ ետու շինել զեկեղեցիս շրջապատօք եւ սուրբ տաճարք լ· օր տաք էր, որ էր յամի ծննդեան ինձ Թվին ՌՃՂ (1741): Եւ աղաչեմ զամենեսեան, որ աստ կայք յաղօթս ի մէջ տաճարիս յիշել զմեզ եւ ծնօղս մեր, զհայրն իմ մահտեսի Եարդուլին եւ

---

[177] Տե՛ս ԴՀՎ II, էջ 57:
[178] Տե՛ս ԴՀՎ II, էջ 58:

զմայրն իմ Հռիփսիմէն, եւ զկենակիցն իմ զՈսկին, եւ զորդիքն իմ զՊետրոսն եւ զԲենիամինն:[179]

Սրա ներքև.

...Ես անարժան մահտեսի Բենիամին, որ եմ յերկրէն Գողթնեաց դաշտէն, եւ իմ որդի մահտեսի Ազարին, որ ետ չինել Տաճարս եւս նորոգել սալն յիշատակ հոգւոյս կենակից Մարգարտին, հանգուցեալ եղբայր մահտեսի Պետրոսին իւր որդւոյն Նիկողայոսին, Հայրապետին, որդիքն իմ Յօհաննէսին, Մկրտչին, Կարապետին. թվին Հայոց ՌՃԿԹ (1720) ին, յիշեցէք ուստայ Մուրատ յերկրէն Քրդստանու:[180]

Դռան ճակատին.

Ի թվին տեառն մերոյ Ցիսուսի Քրիստոսի. ռըՀզ ին, իսկ Հայոց ՌՃԻԵ (1676) ին, եղեւ չինուԹիւն եկեղեցւոյս եւ արդեամբք աղաչենաց, որք ժողովեալ կայաք աստ յԱնապատս՝ Թուով անճինս ուԹսուն, զկնի ամաց չինուԹեան տանս չարժեալ գնացաք ոմանքս յԱգուլեաց երկիրն եւ եկեալ աստէն եւ բազում աչխատուԹեամբ եւ Հալալ վաստակոց իւրոց չինեաց զեկեղեցիս, ապրելի դ ին, սկիզբն արարեալ սեպտեմբերի ը ին կատարեաց, վասն որոյ աղաչեմ զկնի մեր եկեալ քերցդ եւ կուսանացդ զերախտիք եղբօր մերոյ...:[181]

Տաճարից վոքր-ինչ ներքև գտնվում է մի բավական մնծ, Թաղակապ սենեակաուն, որի դռան կամարակալ քարի վրա գրված է.

Շինեցաւ Թե ՌՃԿԹ (1720) յիշատակ է սեղանատունս որ ի երկրէն Գողթնեեաց ի գեղջէն Ցղնայ ի Դլանի որդի Ոհանէսին եւ իւր որդի Ծատուրին:[182]

Սեղանատնից էլ վոքր-ինչ ներքև գտնվում է մի վոքրիկ եկեղեցու ավերակ:

Պարսպին կից կան մոտ 40 խուց և մի բաղնիք: Նույն պարսպի մնջ, եկեղեցու մոտ 1891 թ. Պալիյանց քահանայի ջանքով շինված է չորս սենյակներից բաղկացած մի դիզեցիկ շենք, հայոց եկեղեցական-ծխական դպրոցի համար: Մի աղբյուր էս բերված է այդտեղ:

Այժմ անապատը բոլորովին անխնամ է Թողնված, իսկ դպրոցական շենքում շուտով բացվելու է պետական դպրոց:

Գյուղը, շնորհիվ տանուտեր Շերինյանի, ունի բավական լավ ճանապարհներ, որոնք գյուղի բարձրագույն կետից սկսվելով՝ իջնում են մինչև Բազարչայի ափը, որտեղ ձգված են գյուղացիների խաղողի այգինները:

---

[179] Տե՛ս ԴՀՎ II, էջ 58:
[180] Տե՛ս ԴՀՎ II, էջ 59:
[181] Տե՛ս ԴՀՎ II, էջ 57:
[182] Տե՛ս ԴՀՎ II, էջ 59:

Բնակիչները բնիկներ են, հայ լուսավորչական. ընդամենը 186 տուն, 804 ար. և 705 իգ., միասին՝ 1509 հոգի: Պարապում են գլխավորապես երկրագործությամբ և այգեպանությամբ:

Մատակարարվում են այս գյուղացիները բավական բարձր են նույն ձորի գյուղացիներից, որովհետև բավական ժամանակ ունեցել են դպրոց և տասնյակ երեխաներ սովորում են Շուշու Հայոց թեմական և պետական դպրոցներում:

Խոտ. Շնհերից հազիվ մի վերստ հեռու, դեպի արևելահյուսիս, նույն ձորի ձախ լանջին տեղավորված է Խոտ գյուղը: Այստեղ հովիտը ավելի գեղեցիկ տեսք է ստանում, որովհետև այս լանջը, գլխին ունենալով ահագին ժայռեր՝ ներքևի մասում լեզվաձև տարածվում է և մի փոքրիկ հարթություն կազմում: Թթենիներն ու խնձորենիները, որ ծածկում են այս հարթությունը և թանձր ստվեր արձակում ցրված տների վրա՝ մի գեղեցիկ տեսք են ընծայում գյուղին: Ոչ պակաս գեղեցիկ է նաև այն խոր ձորը, որ ձգվում է Շնհերի և Խոտի մեջ, հյուսիսից հարավ: Այստեղ կոնաձև ժայռերը դիզված են մեկը մյուսից բարձր, որոնց միջով հոսում է մի փոքրիկ, հստակ աղբյուր: Սա կոչվում է «Օխնած ջուր», որովհետև, ասում են, թե հին ժամանակներում Քրիստոսի մկրտության խորհուրդը կատարելիս, այստեղ էին խաչը ջուրը ձգում: Ժայռերի մեջ կան բավական թվով արհեստական և մի քանի բնական քարայրներ: Այսպիսի քարայրներ կան նաև ձորի գլխին ցցված ժայռերի մեջ, որոնցից մեկի մոտ չինված է ս. Գևորգ անունով մի փոքրիկ մատուռ:

Տները, գյուղի վերի մասում, կուտակված են միմյանց վրա, իսկ հարթ մասում՝ ցրված են այգիների մեջ: Միակ եկեղեցին Թաղակապ է, անսյուն, առանց գմբեթի և ավանդատների և թեպետ շատ հին է, բայց ոչ մի արձանագրություն չունի:

Գյուղի արևմտյան կողմում, պաշտվող դարավոր ծառերի տակ, կա մի եկեղեցու ավերակ և դերեզմանաքարեր ԺԲ դարից:

Գյուղի ճանապարհը սաստիկ քարքարոտ և շատ վատ է: Բնակիչները լուսավորչական հայեր են, ընդամենը 134 տուն, 482 ար., 427 իգ, միասին՝ 909 հոգի: Պարապում են երկրագործությամբ և այգեպանությամբ: Հողը պատկանում է Տաթևի վանքին, որին նվիրել է Դլեն իշխանը ԺԱ դարի առաջին կեսում (1045 թ.): Եվ վերջերը՝ Տարսայիճ իշխանն էլ նորից վերադարձրել է նույն վանքին իր ձեռագրունք այգու հետ միասին:[183]

[183] *Սիսական, եր. 260:*

ՆՇԱՆԱՎՈՐ ՎԱՆՔԵՐ

ՄԻՄԵՌՆԱՎԱՆՔ

Գտնվում է Գորիսից դեպի հյուսիս, մոտ 20 կիլոմետր (20 վերստ) հեռավորությամբ, Աղ-օղլան գետի աջ ափին, մի փոքրիկ բլրի տափարակ գագաթին: Շուրջը կան մեծ և փոքր բլրակներ, որոնք, միմյանց ընդհարվելով՝ մի գեղեցիկ տեսարան են ներկայացնում: Վանքը պարսպապատ է և ունի մի դարպաս, իսկ գավթում՝ խցերի ավերակներ:

Եկեղեցին սրբատաշ քարով շինված, հռոմեական ճարտարապետության չենք է: Երկարությունն է 21,3 մ (10 ս.), լայնությունը՝ 7,81 մ (3 ս. 2 արշ.) և բարձրությունը՝ 18,46 մ (6 ս. 2 արշ.). երկու կարգ վեցական սյուներով եկեղեցին բաժանվում է երեք մասի (nef), միջինը ավելի լայն՝ քան կողքերինը: Հյուսիսային պատի վրա էլ կան նույնչափ կեղծ սյուներ, որոնց վրա, պատին կից, բոլորում են կեղծ կամարներ: Այս սյուները քառանկյունի են, ծաղկավոր խարիսխներով, որոնց վրա բոլորում են ռոմանական կամարներ, իսկ սրանց վրա գետեղված են կամարակապ ձեղունները: Միջին մասի ձեղունը ավելի բարձր է և կողքերից երկ-երկու պատուհան ունի, որոնց միջով ներքևից նայողին երևում են կողքի ձեղունների վրա շինված սենյակները: Մի սենյակ էլ սեղանի վերև կա: Այստեղ մի փոքրիկ, կլոր ծակ ևս կա, որի վրա բարձրանում է մի փոքրիկ կաթողիկե: Եկեղեցին ունի երկու ավանդատուն, որոնցից հյուսիսայինի առաջ կա մի գերեզման, ուր ավանդության ասելով, ամփոփված է Պետրոս առաքյալի ճկույթ մասը (ծիծեռնը): Յոթ երկար և փոքր-ինչ նեղ պատուհաններ առատությամբ լույս են սփռում: Երեք դռնից երկուսը այժմ ծածկված են, բայց դռան կամարակապ քարի վրա կա հետևյալ արձանագրությունը.

Նորոգեցաւ գաւիթս եւ զանգակատունս ի ժամանակին Իբրայիմ խանին... թվ. ՌՄԻԲ (1773): *Սակայն այս հիշված գավթի և զանգակատան միայն ավերակներն են մնում նույն դռան կողքին: Եկեղեցու արևմտյան կողմում կա մի մեծ քար, որ կոչվում է Ագռավախաչ:*[184]

---

[184] *Այս խաչի մասին ավանդությունը պատմում է հետևյալը. Միծեռնավանքը չիննելիս ահագին կաթսան տանում են գետը, ջրով լցնում և բերում կերակուր եփում բանվորների համար: Այս ժամանակ ջրի հետ մի օձ էլ է ընկնում կաթսան և մնում աննկատելի: Երբ կերակուրը եփվում է և հանում է ճաշի ժամը՝ մի ագռավ պատվում է կաթսայի վերև և չարունակ կռկռում: Բանվորները ուշադրություն չեն դարձնում և նստում են ճաշելու, երբ ագռավը ահագին կռկռոցով ընկնում է կաթսայի մեջ: Բանվորները կերակուրը պղծված համարելով՝ թափում են, և որքա՜ն մեծ է լինում նրանց դեպի ագռավն զգացած հիացումը, երբ կերակրի մեջ տեսնում են օձի մարմնի մասերը: Իսկույն հասկանում են, որ ագռավը փրկել է իրենց բոլորի կյանքը, ուստի և պատանքում են նրան և մեծ հանդիսով թաղում վանքի արևմտյան պատի մոտ, մի մեծ քարի տակ, իսկ օձի պատկերը նկարում են վանքի սյուներից մեկի վրա: Մինչև այժմ էլ այդ ագռավը պաշտվում է, և երբ երեխաները չուտ չեն սկսում քայլել, չեն «ոտնըվրվում», տանում են այս քարի մոտ, առաջը մոմ վառում, մի մեխ կամ մի ձու դնում քարի տակ և երեխայի ոտներին ջուր ածում, հավատալով, որ այսպիսով նա չուտով կսկսի քայլել:*

Հաստատապես հայտնի չէ, թե այս եկեղեցին երբ և ում ձեռքով է շինված, միայն Ստ. Օրբելյանը կարդում է նրան Սյունյաց անվանի վանքերի շարքում և հիշում նրա վանահայր Ստեփաննոսին Թ դարի կեսին (844 թ.): Օրբելյանից հետո այս վանքի մասին աննշան հիշատակություններ են լինում, որոնք ցույց են տալիս, որ սա կանգուն է եղել ԺԵ, ԺԶ և ԺԷ դարերում:[185] Այժմ մեծ ուխտատեղի է համարվում և Համբարձման ու Ս. Խաչի օրը Զանգեզուրի բոլոր կողմերից հազարավոր ուխտավորներ են գալիս այստեղ ու 1200-1400 ոչխար մորթում: Վանքի մոտ գյուղ չկա, ուստի և առանձին ոչ մի պահպանություն չունի վանքը. բայց որովհետև Թուրքերն էլ այդ վանքը զորավոր ուխտատեղի են համարում, կոչելով Աղ-օղլան, և շատ անգամ ուխտ գալիս, այս պատճառով էլ վանքը անվնաս և մաքուր է պահվում:

Մինչև 1894 թ. վանապահ քահանաները յուրացնում էին ուխտավորներից ստացված նվերները, բայց այս թվից սկսած՝ չնորհիվ գործակալ Հայր Խոսրով վարդապետի, որ ս. Խաչի տոնին գնում է անձամբ հսկելու արդյունքի վրա, հավաքվում է և պահվում վանքի նորոգության վրա ծախսելու նպատակով: Մինչև այժմ հավաքված է 250 ռ.: Այժմ վանապահ կարգված է Խնածախ գյուղի քահանա, արժ. Տեր Արսեն-Աստվածատրյանը, որ միայն ուխտի օրերն է այնտեղ լինում:

ՊԱՆՏԱԼԵՈՆ ԲԺՇԿԻ ՄԱՏՈՒՌԸ

Ղարաղշլաղ հայաբնակ գյուղի արևելյան կողմում բարձրացող բլրակի վրա գտնվում է Պանտալեոն բժշկի մատուռը, որ նույնպես մեծ ուխտատեղի է: Սա մի հասարակ, բավական մեծ մատուռ է, որի մեջ գտնվում է Պանտալեոն բժշկի գերեզմանը: Նրա տապանաքարը սկզբում մի հասարակ կոճղ է եղել, բայց հետո չուշեցի Թ. Թամիրյանի ծախքով քար է ձգված: Այս մատուռի մոտ գտնվում է մի ուրիշ, շատ փոքրիկ մատուռ ևս, որի մեջ նույնպես մի գերեզման կա: Ոչ մի արձանագրություն չկա, միայն ժողովուրդն ասում է, թե այդ գերեզմանը «Շահզադինն» է: Ժողովուրդը Պանտալեոն բժշկին պարոն Պիժ է կոչում և մեծ հավատով վերաբերվում:

ՀԱՑԿԱԿԱՆ ԱՎԵՐԱԿ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Զանգեզուր գավառամասի այն գյուղերում, ուր այժմ թուրքեր են վերաբնակված՝ կան բավական թվով հայոց հին, ավերակ եկեղեցիներ: Սրանք ընդհանրապես ճարտարապետական տեսակետից մի առանձին նշանակություն չունեն: Սրանցից շատերը դեռևս կանգուն են, մյուսները կիսով կամ

[185] Սիսական, եր. 268:

բոլորովին քանդված: Մահմեդականները նթե հիմնովին չեն ավերել այս եկեղեցիները և քարերը տարել գործ ածել՝ նրանց չահագործել են՝ դարձնելով առավելապես խոտանոց, գոմ կամ ոչխարի փարախ: Այսպես՝ Ջիջիմլի գյուղի սրբատաշ, հրաշալի եկեղեցին քանդված է և նրա քարերով մզկիթ չինված: Հերիկի, Մերիկի, Բայանդուրի, Հոչասի, Փչանիսի, Զրախլուի եկեղեցիները խոտանոցներ են դարձված, Կատոսի, Սունասարի, Ղորդղաճիի եկեղեցիները իրը փարախ կամ գոմ են ծառայում: Նույն դրության մեջ է նաև Ալիղուլի-ուշաղի թրքաբնակ գյուղի ժայռի մեջ փորված փոքրիկ եկեղեցին, որից փոքր-ինչ բարձր կան քարայրներ և հնձաններ ու դիպլիճաղ (կարաս):[186]

ԲՆԱԿԻՉՆԵՐ

Զանգեզուրի շրջանում բնակվում են հայեր, թաթարներ և նստակյաց քրդեր:

Հայերի մեծագույն մասը բնիկներ են համարվում, իսկ փոքրագույնը՝ Պարսկաստանից 1828 թ. եկած գաղթականներ են: Բայց բնիկ համարվածներն էլ, ինչպես երևում է, հին ժամանակներում տարբեր տեղերից եկած վերաբնակված են այստեղ, որովհետև բարբառներով տարբերվում են: Այսպես, օրինակ, առանձին բարբառներով են խոսում.

ա. Գորիս և Քարահունջ,

բ. Խնձորեսկ և Մինքենտ,

գ. Տեղ, Կոռնիձոր և Արավուզ,

դ. Ղարաղշլաղ, Հարար և Մաղավուզի Ղարաղշլաղ,

ե. Խոզնավար, Զեյվա և Խնածախ,

զ. Շնհեր և Խոտ,

է. Հալիձոր:

Իսկ Կորի, Ալիգուլի, Մաղանջուղ և Քարաչեն գյուղերի հայ բնակիչները Պարսկաստանից գաղթականներ են: Թե մարդաբանական և թե ազգագրական տեսակետից սրանց մեջ կան տարբերություններ, սակայն չատ աննշան: Ընդհանրապես կարելի է ասել, որ սրանք միջահասակ են (1632 մլլիմետր),[187] ավելի բարձր, քան Նախիջևանի (1616), Շարուր-Դարալագյազի (1626) և Օրդուբադի (1629) գավառների հայերը, բայց ավելի ցած, քան Շամախու (1634), Ջիրդայելի (1640 մ), Ջիվանշիրի (1650), Գանձակի (1657),

---

[186] Զանց ենք առնում նկարագրելու քրդարնակ և թաթարաբնակ գյուղերը, որովհետև դրանց մեջ ոչ պատմական և ոչ էլ ճարտարապետական տեսակետից նշանավոր մի որևէ բան կա: Դրանք հայկական գյուղերից տարբերվում են միայն նրանով, որ ավելի կեղտոտ են և տներն էլ ավելի հասարակ:

[187] Пантюхов. К статистике кавказской паталогии, ст. 3.

Թիֆլիսի (1652) և Բաքվի (1690) հայերը: Կուրծքերը Կովկասի բոլոր հայերի կուրծքերից լայն են՝ 851 միլիմետր. 36 միլիմետրով ավելի բարձրության կնսից և սաստիկ մազոտ:

Վզերը կարճ են, ոտները և ձեռքերը՝ հասակի համեմատությամբ՝ երկար են և հաստ, ոսկրային սիստեմը լավ է զարգացած, այնինչ մկանայինը՝ միջակ:

Սրանք թեև բրախիկեֆալ (կարճակատափին) են, սակայն գլխի հետևի, ծոծրակային մասը հարթ է և չեղվում է բոլորակ ձևից: Ճակատը լայն է, հոնքերը մեծ մասամբ սև ու հաստ. արտևանունքը սև, աչքերը նշաձև, երկարավուն և սև: Բիթը մեծ է և նրա մեջքը հարթ. կողքերը տափակ և կախ ընկած չեն: Այտոսկրերը փոքր-ինչ դուրս են ընկած, որ հետևանք է մկանային սիստեմի լավ զարգացած չլինելուն: Բերանը մեծ է, շրթունքները հաստ և կարմիր, ատամները սաստիկ սպիտակ, ծնոտը բավական զարգացած և սուր: Ականջները մեծ են և դեպի առաջ ցցված, փափախի ազդեցությամբ: Մազերը սև են և կոշտ:

Բնավորությամբ զանդեզուրցին կոպիտ է, կասկածոտ, ծածկամիտ և խրամանկ: Մի քանի դյուղեր էլ, ինչպես Տեղ (որքան լսել ենք), կռվարար են և բանսարկու:

Կրթությունը միանգամայն բացակայում է, նոր սերնդից չատ քչերն են դպրոց հաճախում, որովհետև այս ամբողջ ոստիկանական շրջանում չորս տարրական պետական դպրոց կա, իսկ հին սերունդից հազիվ 2,4% դրագետ լինի:[188]

Բարոյականությունը բավական ընկած է և չարունակում է զգալի կերպով ընկնել: Գորիս գյուղը գոհ է գնում Նոր Գորիսին, մյուս գյուղերը ապականվում են Բաքվից վերադարձած ախտավորված և բարոյապես ապականված երիտասարդների միջոցով: Խնձորեսկ գյուղը փոքր Փարիզ է դարձած, ուր նույնիսկ անծանոթ այցելուին նախկին նահապետական ամոթխած կինը կուրծքը բաց է դիմավորում՝ հրապուրելու:

Այո, մեծ և կործանիչ է Բաքվի ազդեցությունը այս գավառի վրա: Ամեն տարի հազարավոր, մարմնով և հոգով առողջ երիտասարդներ, տնտեսական պատճառներից ստիպված, դուցե մասամբ էլ Բաքվի հարստության և վայելքների հրապուրիչից դրավված, դիմում են Բաքու: Այստեղ առաջին իսկ վայրկյանում չատանալով այն երազած վարձատրությունը, նրանք միատժամանակ, քանի դեռ փող ունեն, մնում են անգործ և ժամանակը անց են կացնում վայելքների մեջ, իսկ երբ գյուղից բերած դրամները հատնում են՝ այն ժամանակ նրանք ճարահատ բավականանում են ամսական 10-15 ռ.

---

[188] Թվերը 0,1, բրդերը նույնպես 0,1, համմ. «Сборник стат. данных по Елис. губ., изд. 1886 г.» Այստեղից են վերցրած նաև բնակիչների թվերը:

ռոճիկով, որով ամենահամեստ կյանքն անգամ չեն կարողանում վարել: Այնուհետև խոնավ և մութ բնակարանը մի կողմից, կանոնավոր, թարմ սննդի պակասությունը մյուս կողմից, չարունակ և միատեսակ աշխատանքը երրորդ կողմից՝ օրեցօր խլում են նրա երկաթի առողջությունը և կամաց-կամաց կմախք դարձնում: Կարճ միջոցից արդեն նրանք սկսում են տանջվել վեներական, ոսկրացավի, ատամոքսի հիվանդություններով: Պատահական փորձանքներն էլ մյուս կողմից գալիս են խլելու մեկից ձեռքը, մյուսից ոտը, երրորդից ամբողջ կյանքը՝ ձգելով մազութի ամբարը կամ գլորելով «վիշկայի» բարձրությունից: Մի քանի տարիներից հետո, արդեն ֆիզիկապես և հոգեպես մաշված, վեներական ախտերով ապականված, վերադառնում են նրանք տուն, տանելով մի քանի չռայլության նյութեր՝ օրինակ թավշյա մուշտակ, ապարանջան, թանկագին կտորեղեններ, իբր ընծա իրենց դերդաստանին կամ ամուսնուն: Այստեղ այժմ նրանք իրենց շատ բարձր են զգում մնացածներից. սրանք չգիտեն ռուսերեն, սրանք գաղափար չունեն բորդոյի և պատվական գինիների, խավիարի և այլնի մասին. սրանք կոպիտ են իրենց չարժուձևի մեջ, կանայք հրապուրող և կանչող չեն: Ուստի Բաքվից վերադարձած, լուսավորվածներն սկսում են բարձրից նայել նրանց վրա, որքան կարելի է լավ հագնվել, խոսելիս որքան կարելի է շատ ռուսերեն բառեր (համարյա բոլորն էլ աղավաղված) գործածել, լավ խմելիքներից և կերակուրներից խոսել և ընկնել հարսների հետևից: Պետք է ասել, որ հարսներն էլ չլանում են դրանցից, և նրանց համարձակ, արդեն վարժված քայլը շատ շուտ թակարդի մեջ է ձգում նրանց և մի-մի սոսկալի ախտ պարզևում: Իսկ սրանց դժբախտ կանայք, որ նրանց բացակայության միջոցին առաքինությամբ համբերել էին՝ նկատելով նրանց այդ վարմունքը՝ լցվում են նրանց դեմ վրեժխնդրության ոգով, և երբ նրանք կրկին Բաքու են դիմում և երկար ժամանակ չեն վերադառնում, իրենք էլ հետևում են իրենց ամուսիններին ընթացքին... Կրկին վերադառնում է ամուսինը, կնոջ մասին չշունչներն ու ակնարկները հասնում են ականջին, նա իրեն վիրավորված է զգում հասարակության առաջ, նա ստոր դավաճանություն է համարում կնոջ վարմունքը, բոլորովին մոռանալով իր արածները: Սկսվում են կռիվներ, ծեծ և կնաթողություն...

«Պարկեշաններ»-ի ամուսինները խրատվում են այդպիսի դեպքերից, օր առաջ վերցնում են իրենց կանանց և տանում Բաքու, այնտեղ՝ Բալախանում՝ մի հետ ընկած, փոքր և խոնավ սենյակում, տեղավորում: Բայց, տես որ, խեղճ կինը չի կարողանում այստեղ ապատ մանդալ՝ նրա տարտղը ամենքի ուշադրությունն է հրավիրում, շատերը ծաղրում են: Եվ ահա մի քանի ամսից նա թողնում է իր տեղական հանդերձը և վրացական հագնվում: Կտրված ազգականներից և բարեկամներից, զրկված դյուղական անդորը կյանքի վայելքներից, զրկված այն ընդարձակ, լայն հորիզոնից, պայ-

ծառ երկինքից ու մաքուր օդից՝ խեղճ կինը ստիպված է ամբողջ ժամանակը միայնակ տանը անցկացնել, սպասելով որ ուշ երեկոյին գա իր ամուսինը: Չկան այստեղ բարեկամներ, ծնողներ, և եթե կան համագյուղացիները՝ նրանք էլ ցրված են, հեռու են կենում, և դժվար է ամեն անգամ գնալ նրանց մոտ, իսկ տեղացիների հետ ոչ մի հարաբերություն չունի, նրանք օտար են իր համար: Եվ ահա խեղճ կինը ստիպված է ամբողջ օրն անցկացնել տան մեջ, զուրկ նույնիսկ մի վոքրիկ բակից, որ հիշեցներ նրան իր հայրենի դաշտերն ու այգիները: Երբեմն էլ դատապարտված է մնալ խանութի տախտակով կտրված հետի մասում, ուր արեգակի լույսը երբեք չի թափանցում: Ստիպված է դիտել միշտ ծխապատ և ամպամած երկինքը, կարոտել արեգակին և նեղչնչել ապականված, վատառողջ օդը:

Ահա այսպես թառամում է օտար երկրում գանգզուրցի կինը, կտրված իր ծննդավայրից, ուր երբեմն վերադառնում է նորից՝ երբ ամուսինը ֆիզիկապես քայքայված և հաշմացած՝ այլևս անկարող է լինում բանվորական կյանքին դիմանալ:

Այսպես՝ օրեցօր դատարկվում է Ջանգիզուրի դավառը՝ բազմաթիվ դաղթականներ տալով Բալախանուն և Սև քաղաքին: Եվ այդտեղի փչացած, հաշմացած, ֆիզիկապես և հոգեպես մաշված խմբերը վերադառնում են հայրենիք, իրենց ախտերը տարածելու և նոր, ժառանգական հիվանդություններով օժտված սերունդ առաջացնելու:

Քրդերը գլխավորապես բնակվում են Հաքարի դետի ջրաբաշխում: Սրանց մասին տիրող ամենահավանական կարծիքն այն է, թե 1589 թ. պարսկա-տաճկական պատերազմի միջոցին սրանք տաճկաց զորքի մեջ են եղել և որպես տիրապետող՝ մնացել են այստեղ: Հետո, երբ այս կողմերը կրկին պարսից ձեռքն են անցել՝ պարսկական քաղաքակրթությունը ահագին ազդեցություն է ունեցել սրանց վրա: Սրանք բոլորն էլ շիա են: Խոսում են աղավաղված թուրքերեն լեզվով. չատերը մոռացել են իրենց մայրենի, քրդերեն լեզուն, և միայն քչերը գիտեն: Իրենց կյանքի եղանակով, պարապմունքով, ընտանեկան և հասարակական նիստ ու կացով այստեղի քրդերը թաթարներից չեն տարբերվում, չկա տարբերություն նույնիսկ նրանց դեմքի և հագուստի մեջ: Քուրդն էլ հագնվում է թաթարների սովորական տարազով և հինա է դնում մազերն ու եղունգները: Քրդուհին էլ չի դանազանվում թաթարուհուց. նա ևս հագնում է Ատրպատականի թաթարուհու հանդերձ և նույնպես կենդանի և խորամանկ է՝ ինչպես և ամեն Թրքուհի: Քրդերը վայրենական բարքեր ունեն, քաջ և ճարպիկ են: Սրանց մեջ սաստիկ տարածված է արյան վրեժխնդրությունը, գողությունը և ավազակությունը: Սրանք կիսանստակյաց կյանք են վարում. ամառները քոչում են դեպի յայլանները, ձմեռները վերադառնում իրենց գյուղերը: Քոչելու սովորությունը այնքան մեծ արմատ է ձգել, որ քոչում են մինչև ան-

գամ ոչ մի գլուխ անասուն, նույնիսկ վրան չունեցողները: Եվ դեռ սա բավական չէ՝ մեկ էլ տեսաք մի քանի ընտանիք, որոնց դուր չի գալիս իրենց գյուղը, թողնում են այն և գնում 20-30 կիլոմետր հեռու մի նոր գաղութ հիմնում և սկսում այնտեղ ապրել: Եվ երբ այդպիսի գաղութների բնակիչներին հարցնում եք, թե որտեղացի են, նրանք երբեք իրենց նոր գաղթատեղի անունը չեն տալիս, այլ այն հիմնական գյուղի, որտեղից գաղթել են: Իսկ մի որոշ ցեղի կամ տոհմի պատկանողները միևնույն հարցին միշտ պատասխանում են. «Ես այսինչ ցեղից եմ»: Օրինակ, սոֆուլին երբեք չի ասի, թե ինքը այս կամ այն գյուղից է, այլ միշտ՝ «ես սոֆուլի եմ», թեև այս անունով ոչ մի բնակավայր չկա:

Միևնույն ժամանակ քրդերը շատ ագեհ և աստիճ նախապաշարված են:[189] Զանգեզուրի գավառամասի թաթարները նույնն են, ինչ որ Սիսիանինը:[190]

ԲՆԱԿԱՐԱՆ

Զանգեզուր գավառամասի տիպական բնակարանները արհեստական քարայրներն են, որոնք տեղական բարբառով քրատակ (քարի տակ) են կոչվում: Հին ժամանակներում այս գավառամասի դրեթե բոլոր բնակարանները այդպիսի այրեր են եղել, իսկ այժմ բացի նրանցից չինվում են **ղարադամներ** և կանոնավոր տներ: Հետզհետե ժողովուրդը դուրս է գալիս այդ հին և նոր քարատակներից, շինում է կանոնավոր, երկհարկանի տներ, իսկ քարատակները գործ է ածում կամ որպես գոմ և կամ որպես խոտանոց:

Քարատակները փորված են և փորվում են ձորերի լանջերին, քիրծերի մեջ: Ընդհանրապես դռան վերևը մի ծակ է թողնվում, երբ լուսամուտ, թեև կան և այնպիսիները, որոնք բոլորովին պատուհան չունեն: Նրանք բաղկացած են միայն մի մեծ սենյակից, թեև կան և երկու սենյակ ունեցողներ: Դռան մոտ, անկյունում չինված է մի օջախ, որի վերևում մի փոքրիկ անցք է բաց արած՝ իբր ծխնելույզ: Մի քանիսի մեջ էլ, մանավանդ հների, թոնիր կա թաղված: Պատերի մեջ բնականից պահարաններ, դարակներ և նստարաններ են փորված: Բոլոր պատերը սևացած են ծխից, որովհետև օջախը կամ թոնիրը վառելիս՝ սարսափելի ծուխ է տիրում: Բոլոր քարատակները խոնավ են, մի քանիսն էլ գարնան հորդ անձրևների ժամանակ կաթում են, այնպես որ բնակիչները դրեթե առանց բացառության ռևմատիզմ ունեն:

---

[189] Քրդերի վերաբերությամբ օգտվել եմ պ. Զևինակու «Исследование экономического быта гос. крестьян в Зангезурском уезде».

[190] Տե՛ս «Սիսիան»:

Այսպիսի բնակարաններում կահ-կարասիք չկան: Մի երկու կարպետ և դուցե մի դորգ. ահա նրանց ամբողջ կահավորանքը: Քնում են գետնի վրա, անկողինները թաղիքների վրա ձգելով: Հյուր եկած միջոցին միայն փռում են դորգը, վրան մի ներքնակ ձգում և մի բարձ դնում, որ հյուրը նստի և բարձին կռթնի:

Մի պղնձե գյուգում կամ կուժ, մի քանի կաթսա, մի սինի, մի քանի պղնձե ափսե, մի թաս, մի մեծ դանակ, մի քանի փայտե գդալ, մի կասկարա՝ ահա խոհանոցի բոլոր պիտույքը:

Նոր չինվող կանոնավոր տները ընդհանրապես երկհարկանի են, յուրաքանչյուր հարկը առավելապես մի նրբանցքից և մի մեծ սենյակից և կամ միայն երկու սենյակից բաղկացած, առանց նրբանցքի: Ներքին հարկի հատակը սովորաբար չեն տախտակում, այլ միայն վերի հարկինը: Շատ հազիվ է պատահում, որ առաստաղը տախտակեն: Պատուհանները մեծ են լինում և ապակի ձգված: Պատշգամբի ձողերը սովորաբար բավական գեղեցիկ են լինում, բայց ներկված չեն, ինչպես և ոչ պատուհանները, ոչ դռները և ոչ հատակը:

Այսպիսի բնակարաններում նկատվում են մի քանի եվրոպական աթոռներ, սեղան, երբեմն պատի ժամացույց, բայց ընդհանրապես հատակին թաղիքներ են լինում փռված, պատին կից ներքնակներ ձգած, կարպետով ծածկած, և կողքին բարձեր դրած: Տեղացիք սիրում են ծալապատիկ նստել և աթոռներ շատ քիչ են գործ ածում:

Սենյակները տաքացնում են թրթեղյա վառարանով, թեև յուրաքանչյուր սենյակի մեջ չինում են նաև «բուխարի»:

Իբր խոհանոց գործ են ածում կամ ներքին հարկի սենյակներից մեկը կամ հին տունը, իսկ ամառը՝ պատշգամբի ծայրերից մեկում, սենյակի պատի չարունակության մեջ չինված «օջախը», որ մի կիսաբոլոր բացվածք է և ունի ծխնելույզ:

Նոր Գորիսի գրեթե բոլոր տները մի հատակագծով են չինված: Միևնույն ուղղությամբ ձգվում է մի երկար դահլիճ, ծայրերին մի-մի փոքրիկ սենյակ, որոնցից մեկի հանդեպ գտնվում է խոհանոցը, մյուսի՝ նույն մեծության մի սենյակ, իսկ վերջինիս և խոհանոցի մեջ տարածվում է միևնույն լայնության պատշգամբ: Երկհարկանի տներում մի փոքրիկ պատշգամբ էլ դահլիճից փողոցի վրա է նայում: Տան առաջ տարածվում է մի փոքրիկ պարտեզ, խնձորի, կեռասի և այլ ծառերով: Շատերի պարտեզներում կան ջրհորներ: Մուտքը միշտ դարպասից է, որ շատ մեծ է և բացվում է փողոցի վրա, պարտեզի և տան մեջ թողնված բաց տարածության առջև: Տների կտուրները տախտակներով եռանկյունաձև ծածկված են:

Պատուհանները մեծ են, մի քանիսը երկաթե վանդակապատով, մյուսները առանց նրան: Դռները երկփեղկանի են: Առանց բացառության, բոլորի

Հատակներն էլ տախտակած են, իսկ առաստաղները տախտակած են լինում միայն հարուստներինը, միջակ կարողություն ունեցողները առաստաղին սպիտակ կտոր են մեխում, որը 2-3 տարին մեկ անգամ պոկում և լվանում են: Դռներն ու պատուհանները ընդհանրապես սպիտակ գույնով ներկված են: Սենյակները տաքացնում են առավելապես թիթեղյա վառարաններով, թեպետ «բուխարիներ» այստեղ էլ կան: Կահավորությունը եվրոպականի և ասիականի խառնուրդ է ներկայացնում:

ԿԱՆԱՆՑ ՋԳԵՍՏ

Կանայք սովորաբար երկու ձեռք չոր են ունենում, մինը՝ տնամիջի, որ ամեն օր հագնում են, իսկ մյուսը՝ մարդամիջի, որ միայն տոն օրերը և հյուր գնալիս են գործ ածում: Այս երկու տեսակ չորերի տարբերությունը շատ մեծ է. որքան հասարակ, կեղտոտ և պատառոտուն է առաջինը՝ նույնքան թանկագին, մաքուր և նոր է երկրորդը: Նույնիսկ ամենահարուստ մարդու կինը տան մեջ երբեք մաքուր և վայելուչ չի հագնվում: Նույնն են և տղամարդիկ. Խնձորեսկի առաջին հարուստը, որ 50.000 ռ. ավելի կարողություն ունի՝ այնպես զգեստ է հագնում սովորական օրերը, որ տասնյակ տեղերից կարկատված է և, ինչպես ասում են՝ «չուլը չլին բարև է տալիս», իսկ նրա կինը ոտաբոբիկ է գնում ջուր բերելու, մինչդեռ նրանց տանը կան թանկագին մահուդից կարած հանդերձներ մարդու համար և թավշյա մուշտակ՝ կնոջ համար: Տնամեջ այսպես հասարակ և վատ հագնվելը ոչ թե ժլատության հետևանք է, այլ սովորության: Եթե հարուստի կինը ամառը ոտնաման է հագնում, դյուղի կանայք բամբասում են նրան, թե տեսեք զարմացնել է ուզում, որ ինքը հարուստի կին է: Եթե կինը աշխատում է ամեն օր ճաշակով և մաքուր հագնվել, ոչ միայն դրացիներն են բամբասում, թե կամենում է մարդկանց դուր գալ, այլև ամուսինը կասկածում է և խանդում, կռվում է նրա հետ: Սակայն Բաքվի ազդեցությամբ այս սովորությունը հետզհետե վերանում է: Բաքվից վերադարձած երիտասարդն աշխատում է ամեն օր մաքուր և լավ հագնվել, շատ անգամ էլ փոխում է տեղական տարազը և եվրոպական չորեր հագնում: Նրա ընտանիքն էլ նրան հետևելով ավելի լավ է հագնվում: Կանայք զգեստի վերաբերությամբ ավելի պահպանողական են, քան տղամարդիկ, և միայն ծայրահեղ դեպքում են համաձայնում տեղական տարազը փոխել: Այսպիսի ծայրահեղ դեպքեր առաջ են գալիս միայն այն ժամանակ, երբ երկար ժամանակով տեղափոխվում են Բաքու և կամ ուրիշ քաղաք: Այսպիսի դեպքերում նրանք միշտ դերադասում են Թիֆլիսի վրացական տարազը և համարյա ոչ մի զանգվուրցի կին տեղական զգեստից չի անցել եվրոպական գլխարկի: Նույնիսկ երբ ուրիշ քաղաքից եկած, եվրոպական գլխարկ ծածկող աղջիկները դորիսեցիների հարս պետք է դառնան, նրանցից միշտ պահանջում են, որ գոնե վրացական ձևի փոխեն իրենց հարդարանքը, և միայն կրթված երիտասարդների խիստ ընդդիմությունը մի՛ կերպ կարողանում է նրանց եվրոպական տարազով մտցնել իրենց նահապետական ընտանիքի մեջ:

Կանանց զգեստները սովորաբար իրենք՝ կանայք են կարում, սակայն Բաքվի ազդեցությամբ լույս են ընկել կանանց զգեստ կարող տղամարդ դերձակներ. միմիայն Խնձորեսկում 35 դերձակ կա, որոնց կարի մեքենանե-

ըի ձայնը, որ գալիս է քարտաշներից՝ մի տեսակ հակադիպութեյան տպավորութեյուն է թողնում:

Ընդհանրապես կանանց չորերը կարմիր են, միայն պառավների արխալուղը կանաչագույն է լինում: Աղջիկների զգեստներն էլ բոլորովին նույնն են, միայն սրանք իրավունք չունեն գլխին հարդարանք կրելու, այլ մի կարմիր կամ սպիտակ «նայլուխ» են կապում: Կանանց զգեստը բաղկանում է հետևյալ մասերից.

Շապիկ. Կարում են առավելապես ալըշի և կարմիր մահուդվարի կտորներից, երբեմն էլ կարմիր ալըշից: Երկար է լինում և իջնում է մինչև ոտները: Կուրծքը ամբողջապես և առաջի երևացող մասերը կարում են ալըշից կամ կարմիր մահուդվարուց, իսկ մեջքը և հետևի չերևացող մասը՝ չիլից: Կուրծքը բացվում է մինչև գոտկատեղին և երբեմն դայթանի կոճակներով կոճկվում:

Շապկընկեր. Կարում են խամ չիլից, սպիտակ կամ կապույտ խամ կտավից, փողերը նեղ են և երկար: Վերին ծայրը դարձված է և «խոնջանադարձ» կարված, որի միջով անց է կացրած բամբակյա կամ բրդյա մի կապ՝ խոնջան, որը մեջքին կապելով՝ մի կողմում հանդուսառում են: Շապկընկերի ծայրերը դնում են փողկափողի մեջ, սա թավշյա կտորից երկու վերշոկ լայնութեյան և ոտի հաստութեյան համեմատ մի կտոր է, երկու ծայրը միմյանց հետ կարած:

Արխալուղ. Կարում են մեծ մասամբ կարմիր չալից, չիթ աստառով. հարուստները մետաքսից կամ ուրիշ կարմիր կտորից, միևնույն գույնի չիթի աստառով, իսկ պառավները մարինոսի կտորից, մուգ գունավոր չիթի աստառով: Տնամիջի արխալուղը սովորաբար կարվում է կարմիր չիթից, ավելի հասարակ չիթի աստառով: Արխալուղը բաղկանում է երեք կտորից՝ մեջք և երկու վեշ: Փեշերից յուրաքանչյուրը լինում է մեջքի կես մեծութեյան և կարված է նրա հետ վերևից մինչև գոտկատեղին, իսկ այստեղից ներքև բաց է: Գոտկատեղի մոտ, երկու կողքերին կարված են մի-մի գրպան: Մեջքը բյուզմա չունի, որով և գլխավորապես տարբերվում է սիսխանցու արխալուղից: Փեշերն իջնում են ծնկներից մի քիչ ներքև: Կուրծքը եռանկյունաձև բացված է և գոտկատեղում կոճկվում է 2-6 արծաթի ռուբլիանոցներով: Այս ռուբլիանոցները իրրև կոճակ են ծառայում, որոնց համար կան թեր են չինել տալիս և երկ-երկու կամ երեք-երեք միմյանց կպցնում:

Թևքերը հասնում են մինչև մատների ծայրերը՝ միայն արմունկի մոտից եռանկյունաձև կտրված են, կանաչ դանավուղից աստառ ձգած, և եզրերին եռանկյունաձև դասավորված արծաթի այուրմա կարած: Այուրման արծաթի թելի անամեջ ոլորվածք է, 4-5 սմ երկարութեյամբ: Արմունկից բարձր էլ կարում են արծաթե գնդաձև կոճակներ (թիվթիվչի) կամ նշաձև և նշաչափ անամեջ արծաթ (դյուկմա): Արխալուղի բոլոր եզրերին կարում են կանաչ

զանավուզի կամ կարմիր մահուդվարի կտորից մի մատնաչափ լայնության քյոպա (ժապավեն):

Հարսանեկան արխալուղները, որ հագնում են մի ուրիշ արխալուղի վրայից՝ կարում են թավշից, զանավուզ աստառով: Սրանց թևքերը կարճ են լինում, մինչև արմունկը, և կոճակներ չեն ունենում: Արխալուղը հագնում են չադկի վրայից:

Գոտի. Դեռահասներինը լինում է մետաքսից, իսկ պառավներինը՝ շալից: Սա 65 սմ լայն և 3-3,5 մ երկար մի կտոր է, որ կապում են մեջքին արխալուղի վրայից:

Կրծքին կարում կամ դցում են յախա: Սա բաղկանում է երկու չարանից, այսինքն երկու չարք արծաթյա 20 կոպեկանոցներ կամ հին դրամներ, յուրաքանչյուր չարքում 12 հատ, որոնք չարված են մի գայթանի վրա և հետո կարված են մի նեղ շորի վրա:

Քյուրք. Կարում են կարմիր թավշից և շուրջը, ինչպես և թևերի ծայրերին ու օձիքին՝ 5 սմ լայնության ադվեսի կամ այլ մորթի կարում: Այս զգեստը հագնում են արխալուղի վրայից և միայն տոն օրերին, ամառ լինի, թե ձմեռ: Քուրքի դործածությունը Ղարաբաղից է մտել և միայն փոքրիշատե ունևորներին է մատչելի:[191]

ԶԳԵՍՏԻ ԱՐԺԵՔԸ

Շապիկ ռուբլի	*1,50-2*	*3-5*
Շապկընկեր	*0,40-0.70*	*0,40-0,70*
Արխալուղ	*3-3,50*	*10-20*
Գոտի	*0,50-1,00*	*1,20-2*
Յախա, այուրմա և դյուկմա.	*8-12*	
Քյուրք	*20-30*	
Ընդամենը՝	*33,40-49,20*	*56,60-69,70*

Ոտնաման. Աղջիկներն ու կանայք տարվա մեծագույն մասը սովորաբար բոբիկ են անցկացնում և միայն ձմեռը, նույնպես տոն օրերին և ուխտ գնալիս հագնում են դուլպա և չմուշկ: Բաքվի աղդեցությամբ կիսակոշիկները (ботинки) կամաց-կամաց մտնում են նորահարսերի օժիտները, իբրև պարզարանք:

---

[191] *Գլխի հարդարանքը միանդամայն նման լինելով Սիսիանի կանանց գլխի հարդարանքին, մենք դանց առանք նկարագրելու, տե՛ս «Սիսիան»:*

Շապիկ. *Կարում են դունավոր չթից կամ սպիտակ մահուդվարուց: Շատ երկար չի լինում: Կուրծքը բացվում է աջ կողմից և անթակի մոտ կոճկվում, թևերին կոճակ չունի, այլ բաց կախ են ընկնում:*

Փոխան. *Կարում են կապույտ ներկած կտավից, փողկերը կես արշին լայնության: Հագնում են շապիկի տակից և խոնջանով կապում: Սա անց է կացրած փոխանի վերի եզրին արած դարձվածքի մեջ և կապիչիս ոչ մի բացվածք չի մնում:*

Շալվար. *Հագնում են գլխավորապես փոքրիշատե քաղաքակրթված և հարուստ մարդիկ: Կարում են շալից, միանգամայն փոխանի ձևով: Այժմ հետզհետե տարածվում է եվրոպական ձևի շալվարը:*

Զիսկի *կամ* ***տոլաղ.*** *Բրդից կամ մետաքսից գործված 10-13 սմ (2,5-3 վերշոկ) լայնության և 54 սմ (0,75 արշ.) երկարության մի կապ է, որի ծայրին մի թել՝ քող է ամրացրած: Սրանով կապում են փոխանի ծայրերը:*

Արխալուղ. *Կարում են կապտադույն մահուդվարուց, քլիմիրից, չթից և այլն: Ներքինը իջնում է մինչև ծնկները, իսկ երիտասարդներինը մի քիչ կարճ է լինում: Մեջքը սեղմված է բյուզմայով, կուրծքը եռանկյունաձև բացված է, թեև այժմ երիտասարդներինը այլևս բաց չէ լինում, այլ ամբողջովին կոճկած: Բաց կուրծքով արխալուղները միայն դռտկատեղում են կոճկվում երկու կամ երեք զայթանի կոճկով: Արխալուղը ունի երկու դրպան:*

Մեջքին կապում են կամ գոտի, որ մահուդվարու 2,84 մ (4 արշ.) երկարության և 71 սմ (1 արշ.) լայնության կտոր է, և կամ քյամար:

Զուխա. *Կարվում է բրդից գործած չալից. դռտկատեղում բյուզմա ունի և փեշերն իջնում են ծնկներից փոքր-ինչ ներքև: Կուրծքը եռանկյունաձև բացված է և դռտկատեղում զայթանի 3 կոճկով կոճկվում է: Ամբողջ չուխայի շուրջը եզրերին զայթան է կարած: Գլխներին ծածկում են ոչխարի մորթուց կարած փափախ: Ոտներին հագնում են գուլպա և սրեխ:*

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐՍԱՆՑԱՑ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՆՇԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հասակ. Զանգեզուրի դավառամասում էլ, ինչպես և Սիսիանում, աղջիկներին շատ փոքր հասակում են ամուսնացնում: Ութ կամ ինը տարեկան աղջկան արդեն նշանադրում են և հազիվ 11 կամ 12 տարեկան դարձած՝ ամուսնացնում: Տասնութ տարեկան աղջիկը արդեն տանը մնացած է համարվում, նա սովորաբար այրի մարդու է դնում: Տղաներն էլ, մանավանդ առաջ, շատ վաղ էին ամուսնանում, սակայն չնորհիվ զինվորագրության, այժմ միայն քսանմեկ տարեկան անցած են այդ քայլն անում: Սակայն անդրանիկ որդիները զինվորական ծառայությունից ազատվելու արտոնություն ունենալով, դարձյալ 14–15 տարեկան հասակում են ամուսնանում:

Գաղթականության դիմած երիտասարդները, որոնց թիվը արդեն իսկ մեծ է և օրեցօր ավելի է մեծանում, շատ ուշ են ամուսնանում, շատ անգամ այն միջոցին, երբ պանդխտական կյանքը արդեն քամել է նրանց կենսական ուժերը: Մի քանի ծնողներ էլ, ցանկանալով իրենց զավակների «ոտը կապել»՝ աշխատում են նրանց կարելվույն չափ վաղ ամուսնացնել, որպեսզի նրանք պանդխտությունից չուտ վերադառնան և կամ չխաբվեն և քաղաքի աղջիկ չուզեն:

Ամուսնացող զույգի տարիքների տարբերությունը քանի գնում մեծանում է: Շատ հաճախ է պատահում, որ 25–30 տարեկան մարդը ամուսնանում է 12–15 տարեկան աղջկա հետ: Քիչ չեն նաև 40–45 տարեկան այրի մարդիկ, որ երկրորդ անգամ ամուսնանում են 15–18 տարեկան աղջիկների հետ: Մեր այս ասածները չի կարելի հաստատել պաշտոնական թվերով, որովհետև քահանաները աղջիկների իսկական տարիքը կեղծելով, օրենքի պահանջածի համեմատ տարիք են գրում:

Խնամության աստիճանները. *Սովորաբար թուլյատրվում է ամուսնանալ արյունակցության վեց և խնամության հինգ աստիճաններում, սակայն բացառություններ շատ են պատահում: Երբ կաշառքի և կամ ազդեցիկ մարդկանց խնդիրքով ամուսնությունը գլուխ չի գալիս, դիմում են թոնրի պսակին: Այսպես՝ խնձորեսկ գյուղում, երեք քահանա միասին 300 ռուբլի առնելով Գրիգոր Համբարձումյանից, աշխատում են օրինավոր կերպով պսակել, խաբելով Հոգևոր իշխանությանը, բայց երբ այս չի հաջողվում, թոնրի վրա են պսակում՝ թոնրի շուրջին մոմեր վառելով:*

Առաջները թույլ չէր տրվում որդեգրին՝ որդեգրողի զավակի հետ ամուսնանալ, բայց այժմ թույլ է տրվում: Նաև առաջները կնքահայրությունը չհաս աստիճան էր համարվում, իսկ այժմ՝ ոչ:

Աղջիկ ուզել. Մինչև այժմ էլ աղջկա ընտրությունը գլխավորապես կախված է տղայի մորից, քիչ-քիչ սովորում են տղայի կամքին նշանակություն տալ և թողնել, որ նա ինքն ընտրի հարսնացու: Աղջկա համաձայնությանը համարյա ոչ մի նշանակություն չեն տալիս, որովհետև նրան ամուսնացնում են այն հասակում, երբ կամքը նրա մեջ բոլորովին կազմակերպված չէ: Սիրահարությունն, աղջիկ վախցնել համարյա չի պատահում:

Երբ հասունանում է աղջիկը և սեր զգում, նա վաղուց ամուսնացած է լինում, և եթե ամուսինը սրտովը չէ՝ շատ շուտով գանվում է մի սիրահար, ուստի և կարելի է ասել, թե մինչդեռ նշանադրվող աղջիկները բոլորն էլ կույս են լինում, հարսների հավատարմության վրա կարելի է կասկածել:

Աղջիկներն ու երիտասարդները միմյանցից համարյա բոլորովին առանձնացած են: «Պարկեշտ» աղջիկը երիտասարդ տեսնելիս անշուշտ փախչում, հեռանում է, և շատ հազիվ է պատահում, որ մարդկանց ներկայությամբ մի աղջիկ խոսեր մի երիտասարդի հետ: Սրանք սովորաբար մոտենում են միմյանց, երբ մարդկային աչքերից հեռու, առանձին են մնում, իսկ երբ մարդիկ են լինում, աղջիկը երեսը դարձնում է դեպի հակառակ կողմը և անշարժ սպասում, որ երիտասարդը անցնի: Առհասարակ երիտասարդներն ու աղջիկները միմյանց տեսնում են՝

1. **Աղբյուրի** մոտ, ուր առաջինները տանում են անասուններն ջրելու, իսկ աղջիկները գնում են ջուր բերելու:

2. **Հարսնեւտանը**, ուր հավաքվում են գյուղի գրեթե բոլոր երիտասարդներն ու աղջիկները:

3. **Այգիներում**, թութ թափելիս:

4. **Արտերում**, քաղհան անելիս:

5. **Ուխտատեղիներում**, ուր աղջիկները «ճինճի են տալիս»՝ ճլորթի են խաղում: Այստեղ աղջիկները այնքան ճոճում են ճլորթի նստած աղջկան, մինչև որ նա ստիպված տալիս է իր սիրած երիտասարդի անունը:

6. **Անտառներում**, ուր աղջիկները գնում են պտուղներ հավաքելու, և երիտասարդները գյուղացիներից ծածուկ հետևում են նրանց:

7. **Եկեղեցում**, Ծաղկազարդին և Զատկին բոլոր աղջիկներն ու հարսներն անշուշտ եկեղեցի են գնում, և երիտասարդները եկեղեցու դռանը խմբված դիտում են նրանց:

Աղջիկ ընտրելուց հետո՝ մի օր երիտասարդի մայրը մի մոտիկ ազգականի հետ միասին, վերցնելով փորը բրնձով և համեմունքներով լցրած մի հավ և մի շիշ գինի՝ գնում է աղջկա տուն: Վերջինիս մայրը ընդունում է նրանց և հրամայում աղջկան մի ներքնակ ձգելու, որ հյուրերը հանգիստ

նաանն: Աղջիկն իսկույն ներքնակներ է ձգում, սենյակն ավլում, թեկուզ մաքուր էլ լինի, շտապով դնում է աղբյուր, թարմ ջուր բերում և օջախը վառում, դիտենալով, որ մի բան պիտի եփեն: Հարսնախոսները աղջկա մոր հետ խոսելիս՝ աչքի տակով չարունակ դիտում են աղջկան: Վերջապես տղայի մայրը, խոսքը բանալով դիմում է աղջկա մորը և ասում. «Եկել եմ ճրաքիցդ մին ճրաք վառեմ»:

— Դե մին հափուռ (բուռ) մոխիր է հավուռում ենք (բռում ենք), ավելացնում է տղայի կողմից եկող մյուս կինը... Թե մեր երախի բախտում կա՝ ոսկի է դառնալու, թե չէ, լհա մոխիր է, որ մոխիր է:

Աղջկա մայրը 1-2 օր ժամանակ է խնդրում ամուսնու և տնեցիների հետ խորհելու և պատասխանելու: Սրանից հետո հյուրերին հաց են տալիս և ճանապարհ ձգում:

Մի քանի օրից, տղայի տերը, առնելով աղջկա տիրոջ համաձայնությունը և հրավիրելով իր մոտիկ ազգականներին, երեկոյան գնում է աղջկա տուն: Ամենքը «բարի լույս» ասելով բարևում են և նստում: Պետք է ասել, որ թե նշանադրության և թե հարսանիքի ընթացքում երբեք «բարի իրիկուն» չեն ասում, այլ միշտ՝ «բարի լույս»:

Անմիջապես աղջկա տերը, որ իր մոտիկ ազգականներին էլ հրավիրած է լինում, հյուրասիրում է բոլորին մի-մի բաժակ օղիով և հետո թեյով: Սրանից հետո երկու երիտասարդ, մեկի ձեռին մի կուլա գինի և մի չիշ օղի, մյուսի գլխին մի պղնձյա սկուտեղ՝ մեջը մրգեղեն՝ խնձոր, տանձ, նուռ, քիշմիշ, կաղին և այլն ածած, սկուտեղի շուրջը մոմեր վառած, մի խնձորի մեջ մի արծաթ ռուբլիանոց խրած, որին արծաթեն չղթա է կպցրած, մի «յախա»՝ մի արխալուղացու կտոր, երբեմն էլ մի մատանի, բերում են ներս: Սա կոչվում է «նշան», որ տղի տերը բերում է աղջկան: Բոլոր հյուրերը վերցնում, նայում են նշանը, «Աստված չնորհավոր անի» ասում և հետո դնում քահանայի առաջ, որ օրհնի: Առաջները բոլորովին, այժմ էլ շատ անգամ աղջկան և երիտասարդին առաջ չեն բերում, այլ քահանան օրհնում է նշանը և տալիս, որ տանեն աղջկան տան: Գորիսում և ուրիշ մի քանի, համեմատաբար ավելի քաղաքակրթված դյուղերում, նշանվող երիտասարդին էլ են հրավիրում, և աղջկա հետ առաջ բերում և նրանց փոխադարձ համաձայնությունը հարցնում:

Հնում սովորություն է եղել նշանի հետ բերել և մի ափսե հալվա, որ նշանը օրհնելուց հետո տալիս են եղել դյուղի տանուտերին՝ որ հյուրերին բաժանի: Սա էլ կկատարեր, նախապես տղայի տիրոջից մի քանի կոպեկ նվեր առանալով:

Վերջապես բոլոր հրավիրյալներն ընթրում են և ցրվում: Նահապետականն տներում, ինչպես երիտասարդը, որ հրավիրված չի լինում՝ հյուրերի ցրվելուց հետո, աղջկա տան երդիկից դիտում է, և երբ տեսնում է, որ աննե-

ըը քնեց՝ կամացուկ իջնում է բակը: Զոքանչը տանում է նրան մի առանձին սենյակ, ուր հյուրասիրում է ոչ միայն հյուրերի համար պատրաստված կերակուրներով, այլև ձվածեղով ու եղ ու մեղրի խառնվածքով:

Այրիների նշանադրությունը, մանավանդ անցյալում, շատ պարզ և հապարակ է կատարվում: Սրանից մի քանի տարի առաջ նշանադրվողները բավականանում էին միայն իրենց դռտինները փոխելով:

Առաջները պատահում էր նաև փոքրիկ երեխաներին նշանադրել: Մայրերը իբրև նշան խաղում էին օրորոցները և աղջկա կրծքից մի արծաթ դրամ կախում:

Եթե պատահի, որ նշանադրվածներից մեկը մեռնի՝ աշխատում են մյուսին ամուսնացնել միևնույն կամ մոտիկ ընտանիքի մի ուրիշ անդամի հետ:

Խոնչաներ. *Նշանադրությունից մինչև պսակը տևում է երեք ամսից մինչև մի տարի, երբեմն նույնիսկ մի քանի տարիներ՝ եթե փեսացուն պանդխտության է գնացել: Այս միջոցում նշանվածների գերդաստանները միմյանց հետ խնամություն են անում, միմյանց մոտ գնում-գալիս, նշանավոր տոներին միմյանց նվերներ ուղարկում: Այս նվերները սովորաբար աղայի տնից են ուղարկվում և կոչվում են խոնչա: Աղջկա տանից էլ դրանց փոխարեն դարձ են ուղարկում, սովորաբար խմորեղեններ, ինչպես նաև հարսի ձեռագործներից, օրինակ դրամի քսակ, չչի համար՝ կտորից և ուլունքներից պատրաստած խցան-բերանկալ, դուլպաներ, հեսկի (տոլախ) և այլն: Խոնչաները մեծ մասամբ պարտադիր են և հետևյալ տոներին են ուղարկվում:*

Բարեկենդանին. *Գինի, օղի, միս, մրգեղեն և այլն:*

Մեծ պասի առաջին օրը. *Գինի, օղի, խնձոր և այլն: Նույն օրը երեկոյան փեսան ծածուկ մտնում է աներանց տուն և հյուրասիրվում:*

Միջինքին. *Ձեթով փլավ, գաթա, հալվա, գինի և օղի: Առաջ ուղարկում էին նաև տակ, որ եփում էին, կոտորում և վրան ծեծած ընկույզ ցանում:*

Ծաղկազարդին. *Եկեղեցու մեջ մի զույգ մոմ են տալիս հարսնացուի ձեռքը և մի չարղաթ ձգում երեսին:*

Զատկին. *Մի քանի կարմիր հավկիթ և մի գառ, որի ճակատը ներկում են կարմիր և վիզը կարմիր թաշկինակ կամ թել կապում. սա կոչվում է ախար: Շատ անգամ էլ հարսի համար մի զույգ չմոշկներ են ուղարկում:*

Նավասարդին. *Մի գավ գինի, մի չիչ օղի, մրգեր, տանձ, խնձոր, ընկույզ և այլն, հարսնացուի համար մի չարղաթ: Խոնչայի չուրջը ոսկեպատ մոմեր են վառում:*

Խոնչաները ուղարկելիս շատ անգամ պատահում է, որ փեսացուի ծնողները հրավիրվում են աղջկա տուն հյուրասիրվելու, սակայն փեսացուն երբեք չի լինում այս հրավերներին: Ընդհակառակը՝ սա աներոջը տեսնելիս շատ անգամ ամաչելով թաք է կենում և հեռանում է, ցերեկով բոլորովին

չի անցնում աներանց տան դռան մոտով և եթե անցնի՝ թաղի երեխաները կհալածեն նրան: Նա էլ երեկոներն է գնում. գաղտագողի բարձրանալով աներանց տան կտուրը՝ նա երդիկից ծկլատում է, թե արդյոք աները քնել է, և երբ համաստիանում է՝ մի փոքրիկ քար երդիկից վայր է ձգում: Զոքանչը իսկույն հասկանում է, որ փեսան այցելության է եկել, դուրս է գալիս և նրան ընդունում, տանում մի ուրիշ սենյակ: Այստեղ հյուրասիրում է նրան և բերած չալակը՝ մրգեղենը վերցնում հարսնացուին տալու: Մի-մի անգամ էլ թույլ է տալիս, որ նշանված զույգը մի քանի րոպե առանձին անցկացնի:

ՀԱՐՍԱՆԻՔ

Ճընապայ կտրիլ. Երբ գալիս է ամեռը, մոտենում բարեկենդանը՝ նշանածների տերերը սկսում են հարսանիքի մասին մտածել: Մի օր փեսացուի հայրը մի չիշ օղի վերցրած գնում է հարսնացուի տուն և նրա հոր հետ որոշում, թե որ օրը դա «ճընապայ կտրելու»:

Որոշյալ երեկոյին, տղայի հայրը մի քանի մոտիկ բարեկամների հետ, մի դավ գինի, մի չիշ օղի առած՝ գնում է աղջկա տուն: Այստեղ երբեմն ուղղակի երկու խնամիները, երբեմն էլ նրանց լիազորները, երկար սակարկությունից հետո, որոշում են, թե տղայի հայրը ինչ պիտի տա աղջկա հորը և թե վերջինս ինչ օժիտ պիտի տա իր աղջկան: Որոշում են նաև հարսանիքի օրը:

Սովորաբար տղայի հայրը տալիս է աղջկա հորը 15-120 ռ. առաեռն դրամ, որ կոչվում է «ծծագին» կամ «ճընապայ» (ճանապարհ): Սակայն այս գումարը հետզհետե զգալի կերպով փոքրանում է. մի քանի գյուղերում բոլորովին վերացել է դա. նույնիսկ պատահում է, որ երիտասարդները, առավելապես Բաքու գնացածները, իրենք են աղջկա հորից փող պահանջում, բայց շատ քչերն են համաձայնում տալ:

Բացի ծծագնից, տղայի հայրը պարտավորվում է աղջկա հորն ուղարկելու մի եզ կամ երկու ոչխար, 5-6 կուժ գինի, կես կուժ օղի, թոփ ու կես դարայի կտոր: Աղջկա հայրն էլ հանձն է առնում իր աղջկան օժիտ տալ, փեսին էլ նվեր տալ, մի դաշույն, կամ մի արծաթապատ քյամար, կամ մի լավ դդակ և այլն:

Աղջկա հոր հետ սակարկությունը վերջացնելուց հետո տղայի հայրը գնում է դործակալի մոտ, պսակի հրաման ստանալու: Այստեղ էլ երկար սակարկում է, աղքատ է ձևանում և վերջիվերջո 6-8 ռ. տալով՝ հրամանն ստանում է: Ապա, եթե աղջիկը համագյուղացի չէ, գնում է նրա գյուղի տանուտիրոջ մոտ, 40 կոպ.-1 ռուբլի նվիրում նրան և թույլտվություն խնդրում նրա գյուղից մի աղջիկ տանելու: Տանուտերն էլ հայտնելով իր համաձայնությունը՝ տալիս է նրան իր տերողորմյան (ձեռքի համբիչը), որ

պահվի միջոցին ներկայացնի քահանային: Առանց այս նշանի քահանան չի պահում:

Տըշտըմաղ. Հարսանյաց շաբաթի երեքշաբթի օրը տղայի տունը մաքրում են, դրսի դուռը և տան այուները ալյուրով խաչաձև և խնկի ծառի նման նախշում: Հետևյալ օրը երկու կին շրջում են գյուղը և հրավիրում բարեկամ կանանց՝ հարսանիքի հացի խմորը չնորհավորելու: Երբ կանայք գալիս, հավաքվում են՝ բերում են խմորի տաշտը և այլուրը: Այս ժամանակ ամենքը մի-մի բաժակ օղի են խմում՝ օրհնելով տան ննջեցյալներին և բարեմաղթություններ անելով պահակվողների համար: Վերջին խոսքը միշտ լինում է «Աստված չնորհավոր անե»: Ապա այդ դերդաստանի ամենածեր կինը վերցնում է մաղը և մի քիչ այլուր մաղում. նրան հետևում է քավորկինը: Հետո հացթուխը, դրեթե բոլոր կանանցից նվերներ առանալով, սկսում է մաղել: Երբ գալիս է աղ ձգելու ժամանակը, կանայք նորից շրջապատում են տաշտը և նույն, ամենածեր պառավը հանդիսավոր կերպով վերցնում է և մի-մի բուռ աղ ձգելով տաշտի մեջ ասում է. «Էս՝ այսինչ մեռելի հոգուն», «էս՝ այսինչ», «էս՝ բոլոր մեռելների օրհնությունը ընի էս տանս վրա»: Այնուհետև կանայք հեռանում են տաշտի մոտից, թողնելով տան մոտիկներին հաց թխելու հոգսը, իսկ իրենք զվարճանում, պարում, հաց են ուտում և ցրվում: Հաջորդ օրը, հինգշաբթի, հասնացուի տանն են հաց թխում, համարյա միևնույն ձևով:

Թե թագվորի և թե հարսնացուի տանը հրավիրյալների հաց ուտելուց առաջ դերձակը բերում է հարսանեկան հանդերձները, որ «սեսննն»: Հրավիրյալները նայում են և «Աստված չնորհավոր անե» ասելով՝ մի քանի կոպեկ նվեր են տալիս դերձակին, որից գոյանում է 2-15 ռուբլի:

Գիննեթափեք. Հինգշաբթի օրը տղայի տերը հրավիրում է մոտիկ ազգական տղամարդկանց և նրանց հյուրասիրում ճաշով: Այս օրը կոչվում է գիննեթափեք, որովհետև այդ ազգականների օգնությամբ կարասներից քաշում են գինին և լցնում շշերն ու գավերը: Երեկոյան ժամերգության միջոցին տղայի տերը հրավիրյալներից մի քանիսի հետ գնում է եկեղեցի և քահանային «հոգոց» ասել տալիս իր դերդաստանի բոլոր ննջեցյալների համար: Հետո քահանային առած՝ գնում է մոտիկ, ազավոր ազգականների մոտ և այնտեղ հոգոց ասել տալիս նրանց ննջեցյալների համար:

Մկռակոչի. Ուրբաթ օրը, առավոտյան, դավալները տղայի կտուրին կանգնած ածում են սահարի եղանակը, որով բոլոր գյուղացիներին հարսանիքի են հրավիրում: Մի քանի հոգի էլ շրջում են գյուղը և բոլոր պատահողներին հրավիրում: Փեսացուի հայրը կամ տան մեծերից մեկը, մի չիշ օղի, մի ափսե փլավ, վրան մի եփած և փորը թթվով լցրած հավ դրած տանում է քավորին և հրավիրում հարսանիքի: Եթե քավորը ազավոր է՝ հիշյալ

ընծաների վրա ավելացնում են նաև մի արխալուղացու կամ մի զույգ չմոչկ:

Զանգեզուրում ևս քավորը գերդաստանական է և առանց շատ մեծ պատճառի չեն փոխում: Հարկավոր չէ, որ միշտ միևնույն անձը լինի քավոր, այլ որ միշտ միևնույն գերդաստանից լինեն նրանք: Հարսը շատ հարգում է քավորին, նրա դռան մոտով երբեք չի անցնում, նրա հետ երբեք չի խոսում:

Քավորին հրավիրելուց հետո թագվորացուն էլ, մի երկու ընկերի հետ, չրջում է մոտիկ ազգականների տները և իր հոր կողմից հրավիրում հարսանիքի:

Հրավիրյալները քիչ ժամանակից գալիս հավաքվում են փեսացուի տունը և անմիջապես հյուրասիրվում մի-մի բաժակ օղիով, որ խմում են «Աստված չնորհավոր անե» բարեմաղթությունով: Մի քանի ժամից հաց են տալիս և մատուցում պասխա կերակուրներ՝ կարտոֆիլ, ձիթով փլավ, սոխ ու բողկ: Առատությամբ խմում են գինի և երկար բարեմաղթություններ անում:

Ճաշից հետո թագվորացուն ընտրում է երիտասարդներից մի փեսաղբեր, որ պսակի մինչոցին իր կողքին կանգնած պիտի լինի և միշտ իրեն հետևի, և մի քանի մակարներ, որոնց պարտականությունն է միշտ ուղեկցել թագվորին և հոգ տանել, որ հարսանիքը որքան կարելի է ուրախ անցնի:

Երեկոյան մոտ թագվորը, քավորի և փեսաղբոր հետ մակարներով չրջապատված, գնում է հարսնացուի տան դուռը՝ տաննելով մի եզ: Շատ անգամ եզի վիզը զարդարված է լինում մի չարոց խնձորներով: Եզի հետևից գնում է մորթողը, դանակը ձեռին: Բոլորի առջևից գնում է զուռնա-զավալը: Հարսնացուի դռանը բավական ածելուց հետո՝ մսագործը վայր է դլորում եզը, իսկույն թագվորացուն և քավորը աչ ոտերը դնում են եզի վրա, քավորը մի քանի կոպեկ նվեր է տալիս մսագործին, և նա մորթում է եզը: Երբ ցայտում են արյան առաջին կաթիլները՝ քավորն իսկույն թաթախում է մատը այդ արյան մեջ և խաչաձև քսում թագվորի ճակատին: Այս միջոցին ազգական մի կին մի թել է հանգուստում, որպեսզի քաչքերը հանգուստված, կապված մնան: Այս հանգուստը բաց են անում թագի վերացումից հետո: Եզի կեսը տալիս են հարսնացուի տեղացիներին, իսկ մյուս կեսը բերում են թագվորի տուն:

Միևնույն օրը թագվորի տնից հարսնացուի տունն է ուղարկվում հարկը, այն բոլորը, ինչ որոշվել է ճընապայ կտրելիս:

Նույն երեկոյին բարեկամները նորից հավաքվում են փեսացուի տանը, ուր քիչ ժամանակ անցկացնելուց հետո՝ առաջ են բերում քթեթը, այսինքն հարսնացուին ընծայելի զգեստները՝ սկուտեղի վրա դրված: Քահանան

օրհնում է քթեթը, որի ժամանակ թագվորացուն իր դդակը, իսկ քավորը իր սուրը դնում են հանդերձների մոտ, որ նույնպես օրհնվեն:

Սափրելու ծես. *Նույն երեկոյին թագվորը նստում է մի աթոռի վրա, քավորը մի մոմ ձեռին կանգնում է նրա աջ կողմը, մակարները, ձեռներին մոմ, շրջապատում նրան: Սափրիչը հանդիսավոր կերպով սափրում է թագվորի մորուքի կեսը և հետո կանգնում և ասում.*

— Մկրատը կտրում չի, մի բան ա օգում:

— Հի՞նչ ա օգում,- հարցնում են մակարները:

— Մին ծեծ (20 կոպեկանոց),- ասում է սափրիչը և հայելին տալիս թագվորի ձեռքը:

Անմիջապես թե մակարները և թե բոլոր հրավիրյալները համբուրում են թագվորի ճակատը, մի քանիսը չորացրած թութ, խնձոր, չամիչ, միրգ տալիս թագվորին և մի քանի կոպեկ դնում հայելու վրա՝ իբր նվեր սափրիչին: Վերջինս բարձր բղավում է.

— Շեն կենա, քու տղին ա փոխ ընի, հուբ (ոմ) ունի Աստված պինդ ձեռոք պահի, հուբ օնի ոչ՝ Աստված տա: Էս էլ քու բաժինդ,- ասում է սափրիչը և տված դրամի համեմատ մի քիչ էլի սափրում:

Գորիսում և մի քանի այլ գյուղերում սափրիչը ավարտում է սափրելը և ապա նվերներ խնդրում: Երբ այլևս նվերներ ստանալու հույսը կտրում է, ապա սափրիչը դնում է ձեռը թագվորի վրա և օրհնում նրան՝ ասելով. «Գրիգոր Տաթևացու, Օհան Որոտնեցու, երեք հարյուր վաթսունվեց հայրապետի, տասներկու առաքյալի և մեր երկնային տեր Հիսուս Քրիստոսի օրհնությունը ըլի թագավորին ու թագուհու գլխին»: Բոլորը պատասխանում են. «Ամե՛ն, Աստված չնորհավոր անե»: Այնուհետև սափրիչը վերջացնում է. երբ թագվորը վեր է կենում, նրան չնորհավորում են, ասելով՝ թրաշդ (սափրվել) անու՛չ:

Թագվորի հանդիսավոր կերպով լողանալը, որ դեռ պահպանվում է Ջավախքում՝ այստեղ վերացել է: Միայն մնացել է հարսնացուին լողացնելու սովորությունը: Հարսանիքից մի քանի օր առաջ ազգական կանայք տաննելով իրենց հետ եղաճու, իրար հետ խառնված մեղր ու կարագ՝ գնում են հարսնացուի մոտ և լողացնում նրան:

Հարսնառ. *Թագվորին սափրելուց հետո մի քիչ պարում են և ապա գնում հարսնառ: Մի սկուտեղի մեջ գնում են հարսնացուին տաննելու ղեկտանները՝ քթեթը, որ սովորաբար լինում են մի մթանա (մուչտակ), մի չարղաթ, մի շապիկ, մի գոտի և մի զույգ չմոշկ, մեջը չամիչ ածած: Սկուտեղը դնում են մի երիտասարդի գլխին: Բոլոր հարսնևորները վառած մեղրամոմեր են ունենում ձեռներին. մի երկու հատ էլ մաշալա են վերցնում (կուպրի մեջ թաթախված և մի երկար ճողի ծայրին կապած ցնցոտիներ են, որ վառում են իբրև ջահ):*

Զուռնա-դավալի առաջնորդությամբ բոլորը դուրս են գալիս և ուղևորվում դեպի հարսնացուի տուն: Թագվորը, աջ կողմից քավորը, ձախից փեսաղբերը, շրջապատված մակարներով՝ առաջ է գնում. նրա առաջ քթեթ տանող երիտասարդը, քթեթը գլխին դրած պարում է: Տեղ-տեղ կանգնում է հանդիսավոր գնացքը, թոյալաչին՝ պարի կարգադրիչը, ձեռի երկար ճիպոտով հետ է քշում հարսնևորներին և մի կլոր տեղ բաց անում. ապա հրավիրում է լավ պարողներին պարել թագվորի առջև, ուռա՛ կանչել: Վերջապես հասնում են հարսնացուի տուն: Զուռնա-դավալչին կտրում է դռան առաջը և չէ թույլ տալիս ներս մտնել՝ մինչև որ քավորից մի քանի կոպեկ նվեր չի ստանում:

Բացվում է դուռը, բոլորը խուժում են ներս: Թագվորը համբուրում է հարսնացուի հոր և մյուս բարեկամների ձեռքերը և քավորի ու փեսեղբոր հետ միասին կանգնում փյարդայի մոտ:[192] Իսկույն տան մեծը մոտենում է նրան և, մի նվեր տալով, խնդրում է նստել: Թագվորը նստում է, իսկ մակարները պարում են և պար ածում քթեթ բերողին: Վերջապես մի ընծա էլ տալիս են քթեթ բերողին և առնում քթեթը նրա ձեռքից: Ապա բոլորն ընթրում են և ցրվում: Մնում են միայն թագվորը, քավորը, փեսաղբերը և մի քանի մոտիկ մակարներ: Այս միջոցին զոքանչը նորից հյուրասիրում է թագվորին փլավով և հավով, և այս կոչվում է «չնթռկաճաչ» կամ «թաքուն պատառ»:

Քըթեթօրհնանք. Շաբաթ առավոտ մակարները նորից խմբվում են հարսնացուի տանը: Քահանան օրհնում է թագվորի տնից բերված քթեթը, որի առաջ կանգնած է լինում թագվորը իր քավորով և փեսաղբերով: Քթեթի վրա դնում են նաև հարսնացուի հոր կողմից թագվորին ընծայվելու գոտին և գլխարկը: Երբ օրհնությունը ավարտվում է և քահանան խաչհամբույր է հավաքում՝ քավորը մի քանի կոպեկ նվիրում է հարսնացուին չորեր հագցնող կնոջը, որպեսզի վերջինս պատուի հարսնացուին նվեր բերված շապկի օձիքը: Երբ հարսնացուին հագցնում են՝ հրավիրում են սկեսրայրին, գոտին կապի: Սա էլ մի քանի կոպեկ ընծայելով չորեր հագցնող կնոջը, երեք անգամ ձգում է գոտին հարսի գլխով և ոտների մոտից վերցնում և ապա նրա մեջքը կապում, կամացուկ խրելով մեջքին և ասելով. «Աստված մի ղոչ տղա տա»:

Ապա որդոց տեր մի մարդ, բռնելով հարսնացուի ձեռքից՝ «փյարդից» հանում է նրան և բերում, կանգնեցնում է տան մեջտեղը, թագվորի մոտ: Սրանք երկուսը չոքում համբուրում են օջախը,[193] ապա բոլորը ուղղվում են

---

[192] Սենյակի մի անկյունը վարագույրով (փյարդա) կտրում են հարսին առանձնացնելու համար:
[193] Առաջները սույն օրը թագվորը չրջում էր իր ազգականների տները և համբուրում նրանց օջախները: Տնեցիներն էլ նվերներ էին տալիս նրան:

դեպի եկեղեցի: Առջևից գնում է քավորը, մի հատ մոմ ձեռին, նրան հետևում է թագվորը, հարսի ձեռը բռնած, իսկ սրա մոտից՝ հարսնաքույրը:

Ջուռնա-զավալը մի կողմից, մակարնները մյուս կողմից՝ ահագին աղմուկ բարձրացնելով առաջ են գնում: Ամբողջ գյուղը հավաքվում է դիտելու: Երբ հասնում են եկեղեցի՝ քավորը մի քանի կոպեկ է ընծայում ժամակոչին, որ բաց անի դուռը: Մակարներից մի քանիսը մտնում են դռանը, մյուսները մտնում եկեղեցի:

Երբ քահանան կատարում է պսակի խորհուրդը և թագվորի ու թագուհու ձեռքերը միմյանց տալիս՝ թագվորը հայտնի կերպով մի քանի քսան կոպեկանոցներ է դնում թագուհու բուռը: Եվ երբ քահանան դինին տալիս է թագվորին խմելու՝ առաջ է գալիս հարսնաքույրը, առնում է դինու բաժակը և մնացածը խմեցնում է հարսին:

Պսակի խորհուրդը կատարվելուց հետո՝ քահանան խաչը տալիս է թագվորի ձեռքը, իսկ Ավետարանը՝ հարսի, և հրավիրում է հարսնևորներին խաչհամբույր դնել Ավետարանի վրա:

Վերջապես հարսնևորները ետ են դառնում, այս անգամ ուրիշ ճանապարհով անցնելով: Հարսն ու փեսան դարձյալ միմյանց ձեռք բռնած, մի-հավասար առաջ են գնում: Ազգական կանայք, հարս ու փեսան իրենց դռնովն անցնելիս՝ օղի, դինի, ձվածեղ, եղ ու մեղր են դուրս բերում և նրանց հյուրասիրում:

Բոլորը նորից վերադառնում են հարսի դուռը, ուր հարսին կրկին փարդի հետևն են ուղարկում, իսկ իրենք նստում հաց ուտելու: Սովորաբար մատուցում են բոզբաշ, բուղլամա և յախնի: Ճաշից հետո հարսնևորները ցրվում են, մնում են միայն մոտիկ ազգականները: Այս միջոցին ցույց են տալիս օժիտը: Գորիսում և մի քանի գյուղերում օժիտը ցույց են տալիս միայն փեսայի տանը, երբ արդեն բերված է լինում:

Թմբկահարը իրերը հատ-հատ վերցնելով՝ բոլորին ցույց է տալիս և բղավում.

– Թագվորը, թագվորի մկրներ:

– Հրամմա,- պատասխանում են մակարները:

– Ասում հրամանք, ձեզ հրամանք, խնամին թագվորին ու հարսին սիրին (սիրուն) տվավ մին գյաբա, որ եժի պակասը-պակասը 10 մանեթ: Տոնը չե՛ն, չեն կենա:

«Շե՛ն կենա, չե՛ն կենա», կանչում են մյուսները:

Սովորաբար իրը օժիտ տալիս են.

Մի ձեռք հանդերձ, երկու ձեռք սպիտակեղեն, մի ներքնակ, մի վերմակ, երկու բրդե բարձ, ղազմա-այսինքն ճակատին կապելու դրամներ, մոտավորապես 4 ռ. արժողությամբ, մի փրդաքող (չթի վարագույր), վեց զույգ ամպետան (տոպրակի բերան կապելու թել), մի տաշտի մեզար (սփռոց), մի

ապաքսակ, մի սուվրա, մի բակեղաթ (խուրջին), մի կարպետ, մի գորգ, նաև մի պղնձյա կուժ, մի կոնք, մուշուրբա և այլ պղնձե անոթներ, որոնց ամենալավերը ներկայացնում է հետևյալ պատկերը:

Օժիտը տեսնելուց հետո բարձում են մի ձիու, հարսնեղբորը նստեցնում վրան և պատրաստվում թագվորի տունը դնալու: Հարսի հայրը, բռնելով իր աղջկա աջ ձեռքից՝ տալիս է թագվորի հոր ձեռքը և ասում. «Տար ամանաթդ (ավանդ) խերը տես»: Հարսը խնկուն խոնարհվում է և համբուրում սկեսրոջ ձեռքը: Վերջինս չնորհակալություն է հայտնում խնամուն և հարսին տանում, կանգնեցնում թագվորի մոտ: Հետո հարս ու թագվոր խոնարհվում, համբուրում են տան օջախը, և ուղղվում դեպի թագվորի տունը: Առաջից դնում է քավորը, նրանից հետո թագվորն ու վեհապղեները, որոնց հետևում են հարսն ու հարսնքուրը: Այս վերջինս բռնում է թագվորի վեշից, որպեսզի հարսի և թագվորի միջով ոչ ոք չանցնի, ապա թե ոչ՝ նրանք կը «կոխվին» (կը կորցնեն այրականությունը):

Ճանապարհին աղգականները սեղան են դուրս բերում՝ դինի, օղի, եղաձու, մեղր և կարագ են հրամցնում, չարղաթ, մահրամա են ձգում հարսի գլխին, պարում են և երգում: Երբ հասնում են տան դուռը՝ կտուրից ընկուզ են չաղ տալիս. ահագին իրարանցում է ընկնում մակարների և երեխաների մեջ, որոնք աշխատում են միմյանց ձեռքից խլելով:

Հարսը կանգնում է տան դռան առաջ, որ զարդարված է լինում կարմիր չարղաթով. սկեսուրը դուրս է գալիս, յուղի պուլիկը ձեռին. հարսը մի քանի կոպեկանոց է ձգում յուղի մեջ, մի քիչ յուղ հանում և քսում սկեսրոջ ծամերին: Այս ժամանակ սկեսուրը համբուրում է նրան, օրհնում և ներս հրավիրում. հարսը նազ է անում, և սկեսուրը մի նվեր է տալիս և կամ խոստանում: Ապա հարսը կոտրում է չեմքի առաջ դրված կավե գավաթը և այնպես ներս մտնում՝ հարս ու թագվոր խոնարհվում, համբուրում են օջախը և ապա հարսին տանում են նրա համար պատրաստված փարդի կամ կյարտակի հետևը, ուր նա չի նստում՝ մինչև որ սկեսուրը մի ընծա չտա: Նրա դիրկը տալիս են մի արու երեխա, որպեսզի նա շուտով երեխա ունենա: Հարսի խելոքությունը փորձելու համար կարպետի տակ չմոշկ կամ իշու համեմի կտոր են դնում, և եթե հարսը հասկանում և վերցնում է՝ նշանակում է, որ խելացի է: Նրան չրջապատում են տան փոքրիկները, որոնց նա չամիչ, քսակներ և գուլպաներ է ընծայում:

Այս ժամանակ հարսնեղբայրը օժիտի վրա նստած սպասում է, մինչև որ մի նվեր են տալիս նրան և ձիուց իջեցնում:

Մի քիչ հետո բոլորը ցրվում են: Նույն գիշերը հարսը քնում է հարսնաքրոջ հետ:

Հետևյալ օրը, կիրակի նորից հրավիրում են տան մեծերին, որոնց համար ճոխ սեղան են պատրաստում: Ճաշին ընտրում են թամադա՝ սեղանապետ,

որին անպայման բոլորը հպատակում են: Սրա առաջարկությամբ խմում են հետևյալ պարտադիր կենացները. ա. բոլոր ննջեցյալների և մասնավորապես նորապսակների ննջեցյալների ողորմածաը, բ. ջուխտ օջախի՝ երկու խնամիների կենացը. «Աստված էն օջախեն էս օջախին խէր տայ», գ. թագվորի և թագուհու կենացը:

Կանչ. Ճաշից հետո սկսվում է կանչը: Թմբկահարը թմբուկը դնում է տանուտիրոջ առաջ և կանչում. «Քավորը գա»: Նախ քավորը մի քանի ռուբլի դնում է թմբուկի վրա: Թմբկահարը իսկույն բղավում է.

— Տոնը չե՛ն, չեն կենա, քավոր Թյունին (Հարություն) կանչեց (այսքան) մանեթ: Իրան որդուն փոխ ինի:

— Շեն կենա, չեն,- ձայնում են ամեն կողմից:

Երբ բոլոր հարսնևորները տալիս են իրենց նվերները՝ գյուղի տանուտերը հավաքում է բոլոր փողը, հաշվում, թմբկահարի միջոցով հայտնում բոլորին և հանձնում թագվորի հորը: Կանչից գոյանում է 50-200 ռուբլի գումար:

Հետևյալ օրը թագվորի հայրը, եթե գոհ է կանչի արդյունքից՝ հրավիրում է կանչին մասնակցողներին և հյուրասիրում հացկերույթով: Ճաշից հետո քահանան կատարում է **թագվերացումը**, որի միջոցին քավորը բռնում է թագվորի ու հարսի գլխին իր թուրն ու պատյանը՝ խաչաձև:

Նույն երեկոյին նորապսակները առագաստ են մտնում: Հարսնաքույրը պատրաստում է անկողինը և մոտը մեղր ու գինի դնում: Իբրև կուսության ապացույց՝ սավանը խստությամբ չի պահանջվում, որովհետև աղջկան շատ փոքրահասակ ամուսնացնելով բոլորովին վստահ են:[194]

Երեքշաբթի օրը քյալլափաչա են եփում և առանձնապես կանանց հրավիրում: Ճաշից առաջ հարսը մեկի առաջնորդությամբ առաջ է գալիս և համբուրում բոլոր կանանց ձեռքերը, և սրանք գովում են նրան, որ կույս է մնացել և օրհնում են: Հետո հարսի չմոչկը դնում են մեջտեղ և բոլոր հրավիրյալները դրամներ են ձգում նրա մեջ, որը տալիս են հարսին: Մի քանի տեղեր էլ մի խնձորի վրա են շարում դրամները և այնպես տալիս: Նույն երեկոյան նորահարսը ջուր է տաքացնում և բոլոր տնեցիների ոտները լվանում, սկսելով սկեսուրից և վերջացնելով ամենափոքր տեղով: Նախ լվանում է աջ ոտը և ապա ձախը: Ամեն մինը մի քանի կոպեկ են ձգում տաշտի մեջ՝ իբր նվեր հարսին:

Չորեքշաբթի առավոտ հարսը վաղ վեր է կենում, բակը ավլում, աղբը մի անկյունում հավաքում և չմոչկի մինը վրան դնում: Երբ սկեսուրը վեր է կենում՝ գովում է հարսի չանասիրությունը և մի քանի կոպեկ ձգում չմոչկի մեջ, որ հարսը վերցնի և աղբը տանի թափի: Այնուհետև սկսվում է սո-

---

[194] Հարսի կույս լինելիս մի արխալուղացու են նվիրում հարսնեղբորը, իսկ եթե կույս չէ, չեն տալիս և հանդիմանում են:

վորական կյանքը: Մի երկու շաբաթից հետո հարսի մայրը, առնելով մի քանի փունջ օճառ, մի սանր, մի հայելի, ուսապոր, թել, ասեղ, ճաղեր, մի քանի գամփա, մի երկու խաչած հավ և հարսի հին շորերը՝ գալիս է խնամոնց տուն «գըլխըլըվա»: Այստեղ նա առաջին անգամ լվանում է հարսի գլուխը, մազերը սանրում և օրհնում:

ԾԱԽՍԸ

Սովորաբար աղջկա կողմից չատ քիչ ծախս է լինում, իսկ տղայի կողմից ծախսը մոտավորապես այսքան է լինում:

ա. Նշանդրեքին

Մի ոչխար	3-5 ռ.
Մի գլուխ շաքար	5-6 ռ.
Մի փունջ թեյ	1-2 ռ.
Մրգեղեն	2-3 ռ.
Օղի և գինի	11-16 ռ.
Ցախա	

բ. Տարվա ընթացքում

Հարսնացուին նվերներ	10-15 ռ.

գ. Հարսանիքին

Մի եզ կամ մի ոչխար	3-15 ռ.
Գինի	25-60 ռ.
Օղի	10-30 ռ.
Մի մոթալ պանիր	4-6 ռ.
Հաց	10-15 ռ.
Թեյ և շաքար	5-7 ռ.
Ճրնապահ	20-120 ռ.
Հարսին զգեստ	30-75 ռ.
Աթոռահաս	6-8 ռ.
Եկեղեցուն	1-2 ռ.
Քահանային	5-8 ռ.
Մանր ծախսեր	15-20 ռ.
Ընդամենը	155-397 ռ.

Զանգեզուրի շրջանի հայ կանանց դաշտանն ընդհանրապես սկսվում է 14-15 տարեկան հասակում, և արյունահոսությունը տևում 3-8 օր: Այս միջոցին միայն հարուստներն են շոր կապում, մինչդեռ աղքատները ոչինչ չեն անում: Առաջինները օրական մի կամ երկու անգամ էլ լվացվում են և շորը փոխում:

Կերակրի և կենցաղավարության մեջ մի առանձին փոփոխություն չի լինում այս ժամանակ: Աշխատանքն էլ նույնն է մնում, միայն մի քանի բաներ, ինչպես խմոր հունցել, հաց թխել, խնոցի հարել, չեն թույլ տալիս անելու, մեղք համարելով, որովհետև այդ միջոցին նա անսուրբ է համարվում և հաղորդություն առնելու էլ իրավունք չունի:

Եթե դաշտանն ուշանում է՝ սովորաբար ոչ մի միջոցի չեն դիմում, քանի որ օրն էլ միտները չի լինում: Բայց պատահում էլ է, որ լողանում են:

Ամլությունը աստվածային պատիժ է համարվում, ուստի և ամուլ կինը համարվում է մեղավոր, որի պատճառով էլ դատապարտվել է այդ պատժին: Ամուլ կանայք էլ ոչ միայն որդի ունենալու ցանկությամբ, այլև այդ նախատինքից ազատվելու տենչով դիմում են սրբերի միջնորդությանը՝ ուխտ գնալով առավելապես Ծիծեռնավանք, Տաթև, Լաստ, Պարոն-Պիժ և այլն: Շատերը պնդում են, թե սրբերը կատարել են իրենց խնդիրը՝ տալով որդիներ, որոնց վրա միշտ մի նշան է լինում: Բայց երբ ուխտագնացությունը չի օգնում՝ այն ժամանակ դիմում են հետևյալ միջոցներին:

1. Սպանած գայլի ծնոտներից թել են կապում և միջից երեք անգամ անցնում:

2. Նոր փորած և դեռ ննջեցյալը մեջը չդրած դերեզմանի վրայով երեք անգամ ցատկում են:

3. Սպանված մարդու գերեզմանի վրա կանգնած՝ իրենց ձեռներին ու ոտներին ջուր են ածում և միզում:

4. Առաջին անգամ տղաբեր կնոջ տան կտուրին ծածուկ միզում են:

5. Երկու ուրբաթ և մի չորեքշաբաթ, կամ երկու չորեքշաբաթ և մի ուրբաթ օր, յոթ քար դնելով իրենց տակը՝ լողանում են:

Երբ առաջին անգամ զգում են իրենց հղի լինելը՝ սաստիկ ուրախանում են, և մինչև անգամ ուխտում են, որ եթե որդի ունենան՝ «օխտը չեն ման կյան, դռներան մատաղ հըվաքելավ»:

Սկզբում ամաչելով՝ հղիությունը թաքցնում են տան ավելի հեռու անդամներից և կենցաղավարության մեջ ոչ մի փոփոխություն չեն մտցնում, բայց հետո, երբ արդեն հայտնի է լինում՝ սկսում են թուլթուլիկ (արձակ) շորեր հագնել, թթու կերակուրներ, մրգեղեն պահանջել, աշխատանքից խուսափել, սակայն շատ քիչ կնոջ են հարսների նազերը տա-

նում են: Շատերը ստիպված են լինում սովորական կարգով աշխատել նույնիսկ մինչև ծննդյան օրը և սահմանափակել իրենց ցանկությունը:

Երբ մոտենում են երկունքի օրերը՝ հղի կանայք շտապում են հաղորդվել, որովհետև «համբուրելու են մահվան դռնից», և ո՞վ գիտե, կենդանի են մնալու, թե ոչ:

Երկունքի ժամանակ հղի կնոջը առանձնացնում են մի սենյակում, այան հետևը, և տան կանայք, տատմերի հետ միասին, շրջապատում նրան: Սովորաբար հրավիրում են նաև ծննդկանի մորը, եթե միայն նա ևս հղի չէ:

Եթե ծնունդը դժվար է լինում, կանայք և մանավանդ տատմայրն աշխատում են թեթևացնել՝ ստիպելով ծննդկանին փչել մի շշի մեջ, մի քիչ ման գալ: Երբ ուշադնաց է լինում, ահագին աղմուկ բարձրացնելով, հրացան արձակելով և երեսին ջուր սրսկելով՝ աշխատում են ուշքի բերել: Քավորին էլ հրավիրում են, որ փչով ջուր տա:

Եթե այս միջոցները չեն օգնում, հասկանում են, որ տատանաները հավաքվել են և կամենում են ծննդկանի լյարդը հանել, տանել: Ուստի և աշխատում են տատանաներին խաբել՝ վերցնում են այծի լյարդ և երդիկից դուրս նետում: Տատանաներն էլ խաբվելով՝ առնում են լյարդը և հետևնում:

Երբ հասնում է ծնելու ժամը, ծննդկանին չոքեցնում են գետնին, մի քիչ չոր խոտ ձգելով, և այս դրության մեջ ծնվում է երեխան: Նորածնին առնում, դնում են մի մաղի վրա, ընկերքը դանակով կտրում, և տանում շեմքի տակ, կամ մի ուրիշ տեղ խորը թաղում, որ մի գուցե շները հանեն և ուտեն: Հետո մինչ ծննդկանը դեռ մնում է խոտի վրա պառկած՝ տատմերը լողացնում է երեխային, վրան աղ ցանում, բարուրում և դիրկն առած տանում կտուրով պտույտ տալիս, դարձնում է գետի արեգակը, աղոթում և ապա իջնում, երեխային կրկին մաղի վրա դնում: Ապա ծննդկանին մեջքից նեբքև լվանում է, անկողնում պառկեցնում և երեխային նրա աջ կողմը դնում: Այս անելուց հետո՝ տատմերը վազում է մոտիկ ազգականներին «աչքիլուսանք», ավետում է նրանց երեխայի ծնունդը և մի քանի կոպեկ կամ ձու նվեր ստանում:

Ընդհանուր և մեծ ուրախություն է տիրում, երբ նորածինը արու է լինում. մինչդեռ աղջիկ լինելիս՝ եթե ոչ տխրում՝ գոնե չեն էլ ուրախանում, և բոլորն էլ ասում են. «Աստված գլխին էլ մի տղա տա»: Լուրն առնելով՝ ազգականներն ու հարևանները շտապում են ծննդկանին տեսության, բերելով իրենց հետ «ծննդկագավաթ», որ բաղկանում է եղածվից, եղ ու մեղրից և այլն:

Այս միջոցին ծննդկանը, նրա հետ և ամբողջ տունը անսուրբ են համարվում, ուստի և գաոում են ծննդկանի բաժակը, ափսեն, գդալը և այլն, թույլ չեն տալիս, որ սա որևէ բանի դիպչի: Քահանային հրավիրում են, որ

գա տունը փարատի: Եվ որովհետև կինը անուրբ է և չարերը հեշտությամբ կարող են նրան խփել՝ ուստի պահպանության համար նրա բարձի տակ դնում են Նարեկ, սուր, դաշույն և այլն, իսկ կրծքին և տեղաշորին ասեղ են չուլալում:

Առաջին օրը ծննդկանին տալիս են կինամոնով պատրաստված թեյ և եղաճու, իսկ նորածնին չատ անգամ կաթ չեն տալիս, որպեսզի համբերող լինի:

Երկրորդ օրը տատմերը լողացնում է երեխային, աղից հանում, բալուլում և կրկին դնում մոր աջ կողմը, որովհետև աջ կողմում գտնվում է բարի հրեշտակը, մինչդեռ ձախում չար հրեշտակը: Այնուհետև միայն երկու օրը մի անգամ են լողացնում երեխային, և օրը երկու անգամ բալուլը փոխում:

Մկրտությունը կատարվում է ծննդյան 3-7 օրը: Տատմերը, տանելով քավորին մի ափսե փլավ, վրան մի խաչած հավ դրած, հրավիրում է գալ երեխան կնքելու: Նա էլ մի քանի կոպեկ և կամ ձու, աղ է տալիս տատմորը նվեր: Որոշյալ ժամին քավորը վերցնելով կես արշին կտավ (որ անց են կացնում երեխայի գլուխը և կոչվում է կնկուղ), ինչպես և մի արշին չիթ, կամ թավշյա կտոր և կամ մի «յայլուխ»՝ գնում է եկեղեցի: Տատմերն էլ երեխային, երբեմն մի քանի բարեկամ կանանց հետ, տանում է եկեղեցի, ուր քահանան կատարում է մկրտության խորհուրդը: Սովորաբար քահանան ինքն է ընտրում երեխայի անունը և չատ քիչ դեպքերում իրենք ծնողներն են որոշում:

Երեխային տալով քավորի գիրկը՝ քահանան, շուրջառը ձգած, չարականասելով, բերում է տուն, ուր հավաքված են լինում բարեկամ տղամարդիկ և կանայք: Այստեղ, ծննդկանի կողքին գնում են մի մաղ, վրան մի հայց ձգում և երեխան դնում վրան: Երբ քահանան աղոթքը վերջացնում է՝ քավորը վերցնում է երեխային և տալիս ծննդկանին: Սա էլ խոնարհվում, համբուրում է քավորի ոտը, հետո բալուլը և վերցնում երեխան, դնում իր աջ կողմում: Իսկ քահանան առաջարկում է Ավետարանը համբուրել և խաչհամբույր ձգել: (Այս միջոցին հանդիսականներից մի քանիսը հեռանում են, որ խաչհամբույր չտան):

Անմիջապես տղամարդիկ առանձին հայի են նստում: Մատուցում են 2-3 տեսակ կերակուր: Հատուկ այս դեպքերի համար որոշված կերակուրներ չկան: Հայից հետո տղամարդիկ, բարեմաղթելով նորածնին և նրա ծնողաց երկար կյանք և երջանկություն, ցրվում են: Այնուհետև կանայք են նստում հայ ուտելու:

Եթե նորածինը առաջնեկ է՝ քավորին մի արխալուղացու ընծա են տալիս, սա էլ ծննդկանին է մի բան նվիրում:

Չորս օրից հետո նորից գալիս է տատմերը և երեխային մեռոնջրից հանում, լողացնում է նրան մի մաքուր ամանի մեջ և ջուրն ածում օջախը

կամ թոնիրը, իսկ եթե չատ է՝ նաև գետը: Լողացնում է նույնպես ծննդկանին՝ մեռոնջրից խառնելով նրան լողացնելու համար տաքացրած ջրի հետ: Հետո իրը վարձ ստանում է հնգական փունտ աղ ու ալյուր, 2-3 ֆ. ձավար, մի փունտ բրինձ, և դուրս մի քանի կոպեկ, շնորհակալ է լինում տնեցիներից և գնում: Տատմերին ավածները նախապես պատեցնում են ծննդկանի գլխով:

Մեռոնջրից հանելուց հետո առաջին անգամ գնում են օրորոցում, որի կամարից կապում են զանազան ուլունքներ, երեխային չարերից և չար աչքից ազատ պահելու հույսով, և մի քանի վեդեր ու խաղալիքներ, երեխային զբաղեցնելու նպատակով:

Այնուհետև ծննդկանը մի քանի օր ևս պառկած է մնում, ապա վեր է կենում և սկսում է զբաղվել տնային գործերով, սակայն զգուշանում է արև տեսնելուց, որ տևում է 3 շաբաթ՝ եթե նորածինը աղջիկ է, և 4 շաբաթ՝ եթե տղա: Այս ժամանակամիջոցն անցնելուց հետո, ծննդկանը լողանում է՝ այդ նպատակով պահած մի սրվակ մեռոնաջուր խառնելով ջրի հետ և ապա թե դուրս է գալիս, նայում է արեգակին և խաչակնքվում:

Երբ ծննելուց հետո առաջին անգամ նա գնում է աղբյուրից ջուր բերելու՝ մի չամիուր է ձեռն առնում, և ցորեն ու բրինձ ածում աղբյուրի ակը:

Երեխայի խնամատարությունը ամբողջովին մոր վրա է թողած: Նա է կերակրում իր ստինքով 2-3 տարի: Իսկ եթե նա կաթ չի ունենում՝ գործ է ածում կովի կաթը՝ հետը փոքր-ինչ շաքար խառնելով: Ոմանք էլ ոչխարի կաթ են գործ ածում՝ հետը մի քիչ ջուր խառնելով:

Երբ ուզում են երեխային ծծից կտրել՝ ցեխ կամ կուպր են քսում ստինքին, որպեսզի երեխան զզվի և այս ժամանակ շարունակ մրգեղեն են տալիս նրան:

Առաջին ատամները հանելիս «կեղքահատիկ» են անում: Խաշած ցորենի հետ խառնում են շաքարեղեններ և ածում երեխայի գլխին: Այս միջոցին երեխայի առաջ մի դանակ և մի սանր են դնում դուշակության համար, ինչպես Սիսիանում, եթե երեխան առաջ դանակը վերցնի՝ դուշակում են, որ եղբայր է ունենալու, իսկ եթե սանրը՝ քույր:

Որպեսզի երեխան չուտով ոտքի ելնի, մի փայտ են տնկում և վրան մի ուրիշ փայտ անցկացնում, այնպես որ պտույտ գա, հետո երեխային բռնել են տալիս այդ փայտից և պտույտ ածում: Բայց եթե այդ չի օգնում և երեխան երկար ժամանակ ոտքի չի ելնում՝ նրան տանում են Մխծեռնավանք, Ագռավի քարի առաջ մոմ վառում, մի մեխ կամ մի ձու դնում քարի տակ և երեխայի ոտներին ջուր ածում:

Լուսնոտ երեխային տանում են բոյաճու (կտորեղեն ներկող) խանութը, մի վառած մոմ տալիս ձեռքը և ստիպում նայել ներկի կարասի մեջ: Այս միջոցին բոյաճին էլ աղոթում է, և երեխան, ասում են, լավանում է:

Երբ երեխան կոխվում է, այսինքն լղարում և նվազում է, նրան անց են կացնում սպանած գայլի ծնոտներից կապած կաշու միջով:

Նույն նպատակով չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը երեխային տանում են անճաշակ մեռնողի գերեզմանի մոտ, բռնում են նրան այն տեղերում, որտեղ ննջեցյալի ոտները, գլուխը և սիրտն են ընկնում, և երեքական անգամ ջուր են ածում երեխայի գլխին: Եվ կամ երեխային բռնում են սատկած շան կամ կատվի վրա և գլխին ջուր ածում:

Երեխայի փորը ցավելիս՝ տրեխի քողը նրա սրտի մոտ բռնած երեք անգամ կապում են և արձակում: Սա կոչվում է «գոլինջ»:

Եթե երեխան լալկան է՝ կրծքին սատկած իշի կաշի են դնում:

Եթե երեխան քուն չի լինում՝ օձի շապիկ են դնում նրա բարձի տակ:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔ

Զանգեզուրում ընտանեկան կյանքը շատ չի տարբերվում Սիսիանի ընտանեկան կյանքից. միայն այստեղ «նահապետական գերդաստանը» ավելի արագությամբ է քայքայվում՝ տեղի տալով «ընտանիքին»: Այս քայքայվող նահապետական գերդաստանի մեջ այլևս չի թագավորում նախնի սերն ու համերաշխությունը: Հայրը թեև համարվում է գերդաստանի մեծ, թեև նա կատարյալ իրավունք ունի գերդաստանի յուրաքանչյուր անդամի և բոլոր ստացվածքի վրա, բայց այժմ նա շատ դեպքերում ստիպված է գործ դնել իր այդ իրավունքները, կամավ կուրանալ և խլանալ, որովհետև գերդաստանի անդամները այլևս նախնի հնազանդությունը չեն ցույց տալիս. ինքնուրույն և ազատ լինելու ձգտումը այժմ շատ վաղ է զարգանում գերդաստանի փոքր անդամների մեջ, մանավանդ երբ սրանք մի քանի տարի պանդխտական կյանք են վարում:

Միևնույն բանն է և գերդաստանի մոր վերաբերությամբ: Թեև նրա մեջ է կենտրոնանում տան ներքին կառավարությունը, թեև նրա ձեռին են տան բոլոր բարիքների բանալիները, թեև նա է կոչված հրամայելու, գործի դնելու հարսներին ու աղջիկներին, բայց և այնպես շատ բաներում նա այժմ ստիպված է ղիջել հարսներին և նրանց խոսքով նստել, կանգնել:

Այսպիսի գերդաստանում կյանքը հետևյալ կերպով է ընթանում:

Առավոտը վաղ՝ արշալույսին, փոքր հարսը վեր է կենում և սափորն ուսին գնում է աղբյուրից ջուր բերում. ապա ավլում է բակը, անասուններին աղբը ձեռքով շաղախում «քյարմա» (քակոր) շինում և խփում պատերին: Հետո լվացվում է և գնում սկեսուրին արթնացնում, շորերը հագցնում, ձեռքին ջուր ածում, որ լվացվի, ապա մի ներքնակ է ձգում և ճախարակը մոտը գնում, որ նստի մանի: Պառավը երեսը լվանալուց հետո գառնում է դեպի արևելք և ցած ձայնով աղոթում, ապա մի քանի անգամ խաչակնքվում և նստում ճախարակ մանելու: Անմիջապես փոքր հարսը սկեսրայ-

ըի չորերն է տալիս և օգնում նրան հագնվելու. հետո նրա ձեռքին ջուր ածում, երեսսրբիչ մատուցում, և երբ նա սրբվում է, առնում է երեսսրբիչը՝ համբուրելով սկեսրայրի ձեռքը:

Այս միջոցում գերդաստանի մյուս անդամներն էլ վեր կացած են լինում, միշտ կանայք տղամարդկանցից առաջ: Իսկույն փոքր հարսը հավաքում է բոլորի անկողինները և ավլում սենյակը:

Տղամարդիկ, եթե ձմեռ լինի՝ անմիջապես գնում են դոմ, անասուններին դարմանելու, իսկ եթե ամառ՝ մի-մի բաժակ օղի են խմում, մի կտոր հաց ու պանիր դնում գրպանները և գնում հանդը աշխատելու:

Մի քիչ հետո սկեսուրը պատվիրում է մեծ հարսին՝ մի տեսակ կերակուր եփել, որ սովորաբար լինում է՝ կարտոֆիլ, մաշ (լոբի), քչովան (քաշովի փլավ), մսով բոզբաշ, փլավ, հելատ (թանով ապաս), կաթնաւ (կաթնով ապաս) և այլն:

Ժամը 8-9-ին կերակուրը պատրաստ է լինում, և փոքր հարսը տղամարդկանց համար «հաց է դնում». գետնին փռում է մի սփռոց, հացեր, դդալներ շարում, մի չոր էլ մի անկյունը դնում՝ ձեռները սրբելու համար:

Նախ տան մեծը նստում է «հացի պլուխը», այսինքն սեղանի վերի, պատվավոր ծայրը, հետո տղամարդիկ և երևք տարեկանից բարձր արու երեխաները՝ ավագության կարգով: Երբեմն գերդաստանի մայրն էլ է նստում ամուսնու և որդիների հետ հաց ուտելու, սակայն նրանցից մի քիչ հեռու, և ուտելիս էլ չալը մի քիչ առաջ է քաշում և դեպի ետ դարձած ուտում՝ ամոթ համարելով ուղղակի նրանց ներկայությամբ հաց ուտելը. նա սովորաբար հարսների հետ է հաց ուտում: Տան ծառան էլ տղամարդկանց հետ միասին է նստում: Փոքր հարսը մատուցում է կերակուրը կամ մի մեծ ամանով, որի միջից բոլորն էլ ուտում են, և կամ յուրաքանչյուրին առանձին ափսեով: Ամառը տղամարդիկ սովորաբար հանդում են հաց ուտում, և միշտ փոքր հարսն է նրանց հաց տանողը:

Տղամարդկանցից հետո հաց են ուտում կանայք: Սովորաբար սկեսուրը նստում է ամենալավ տեղը, նրան չրջապատում են հարսները, իսկ փոքր հարսը նստում է փոքր-ինչ հեռու, մի անկյունում՝ կարմիր չարղաթով քողարկված: Հաց ուտելիս հարսները ձեռով բռնում են երեսի մոտ լաչակից և մի քիչ առաջ քաշում, որպեսզի սկեսուրը չտեսնի, թե ինչպես են նրանք պատառը բերանները տանում: Իսկ փոքր հարսը փոքր-ինչ բարձրացնում է չարղաթը և նրա տակից դդալը բերանը տանում:

Հացի ժամանակ փոքր հարսն է ծառայում, հացից հետո էլ նա է ամանները հավաքում, լվանում: Սկեսուրը դարձյալ նստում է ճախարակը մանելու. ավագ հարսը սանդերքով բուրդ է դղում և կամ ճախարակ մանում:[195] Երկրորդ հարսը, որ արդեն կովերը կթած է լինում, գրաղվում է կար ու

[195] Ճախարակ մանելը կազմում է սկեսուրի և ավագ հարսի արտոնությունը. մյուս հարսներն իրավունք չունեն մանելու:

կարկատանով: Մյուսները, եթե կան՝ կարպետ, գորգ, գուլպա են գործում և այլն: Առհասարակ կանայք կատարում են հետևյալ աշխատանքները. երեխաներին խնամել, կերակուր պատրաստել, հաց թխել, ճախարակ մանել, շալ, գուլպա, կարպետ, գորգ գործել, յուղ, պանիր շինել, կարել, կարկատել, ջուր բերել, կարտոֆիլ, լոբի ցանել, պտուղներ, նույնպես և կարտոֆիլ, լոբի, կանաչեղեն քաղել, քաղհանք անել, քակոր շինել, խուրձ կրել, կալը կալսել և այլն:

Իսկ տղամարդիկ՝ վար անել, հունձ անել, փայտ բերել, կոտրել, թրիք քցել, անասունները դարմանել, բեռնակրություն անել, տրեխ կարել: Կան և արհեստներով պարապողներ:

Պետք է ընդհանրապես ասել, որ թե տղամարդիկ և թե մանավանդ կանայք շատ աշխատասեր են: Հազիվ է պատահում, որ կինը պարապ մնա՝ թե փողոցում, թե մեկի մոտ հյուր եղած միջոցին՝ նա գուլպա է գործում և կամ կար անում:

Կեսօրին նորից հաց են ուտում, բայց այս անգամ կերակուր չի լինում, այլ պանիր ու հաց կամ հաց ու պեխի, ճըխթըխու (աղ դրած ճակնդեղ) և այլն:

Նույն աշխատանքները շարունակվում են մինչև երեկո: Երբ հնչում են եկեղեցու զանգակները՝ փոքր հարսը նորից ավլում է տունը և կրակ անում, մեծ հարսը սկեսուրի հրամանով մի, երբեմն էլ երկու տեսակ կերակուր է եփում:

Երբ տղամարդիկ վերադառնում են հանդից և կամ, եթե ձմեռ է, կերակրում են անասուններին՝ նույն կարգով նստում են հաց ուտում, և եթե ամառ է՝ անմիջապես պառկում են քնելու. իսկ ձմեռները բոլորվում են քուրսու շուրջը և մի քիչ զրույց անում: Տան մեծը նստում է ամենալավ տեղը, ուր, դուռը բաց անելիս քամի չի փչում, նրա մոտ նստում են որդիները՝ ավագության կարգով. կանայք՝ մի քիչ հեռու: Ճրագակալին դնում են քյուրսու վրա, որպեսզի ավելի բարձր լինի. իսկ ճրագակալի վրա վառվում է ճրագը սև նավթով: Հարուստները լամպ են ունենում, որ կախում են քյուրսու վերևից:

Խոսում են միայն տղամարդիկ, որովհետև կանայք տղամարդկանց ներկայությամբ իրավունք չունեն խոսելու: Բացի դրանից՝ հարսները հարսնություն են անում՝ չեն խոսում սկեսրայրի և մեծ տեգրերի հետ մինչև մահ, սկեսուրի հետ՝ առնվազը տասը տարի (բացի առաջին հարսից, որ նրա անձնափոխանորդն է համարվում, և հարսնություն է անում մինչև երկրորդ հարս բերելը): Փոքր տեգրերի և տալերի հետ՝ կես տարուց մինչև չորս տարի: Երբ հարկ է լինում խոսելու՝ դիմում են միմիկայի, կամ փոքր տալի միջնորդության և կամ ցածր, բայց լսելի ձայնով իրենց ասելիքն ուղղում են փոքր երեխաներին, որոնք երբեմն թոթովել անգամ չեն կարողանում: Բայց հարսները խոսում են միմյանց հետ, միայն ոչ սկեսուրի և կամ

մեծ հարսի ներկայությամբ, որովհետև բացի սկեսուրից մեծ հարսի առաջ էլ հարգանություն են անում:

Երբ հասնում է քննելու ժամը՝ փոքր հարսը ձգում է անկողինները դեպ նին՝ նախապես թաղիքներ ձգելով: Թոնրի մոտ՝ ամենալավ տեղը, ձգվում է տան մեծի և նրա կնոջ անկողինը, նրա մոտ ավագ որդունը և այլն, այնպես որ մինչև անգամ այստեղ էլ ավագության կարգը պահպանվում է:

Նախ հանվում է տան մեծը՝ երբեմն աղոթքներ շշնջալով. նրան օգնում է փոքր հարսը՝ հանելով չորերը և հետ անելով տրեխները: Նրանից հետո հանվում է ավագ որդին, հետո մյուսը և քանի որ ավագը չի պառկել՝ կրտսերը իրավունք չունի պառկելու: Երբ արական սեռի բոլոր անդամները պառկում են՝ նոր սկեսուրը փոքր հարսի օգնությամբ սկսում է հանվել և պառկել ամուսնու մոտ: Հետո մյուս հարսներն են պառկում դարձյալ ավագության կարգով: Առհասարակ կանայք պառկում են իրենց ամուսինների հետ միևնույն անկողնում, և եթե միայն մի երեխա ունեն՝ նրան էլ իրենց մոտ են առնում, իսկ եթե երեխաները շատ են՝ սրանց համար իրենց անկողնու մոտ մի հատուկ անկողին են ձգում և բոլորին միասին պառկեցնում: Բոլորից հետո փոքր հարսը հանդցնում է ճրագը և գգուշությամբ հանվելով՝ պառկում ամուսնու մոտ՝ տան ամենահեռու անկյունում:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՂԵՐ[196]

Ականջացավ. Մի քանի ձվի դեղնուց մի պղնձե ամանով թեք կերպով դնում են կրակի վրա: Դեղնուցից առաջանում է յուղ, որ ապակյա սրվակի մեջ ածած պահում են, և հարկավոր միջոցում 4–6 կաթիլ ածում են ցավող ականջի մեջ:

Նուռը տաք մոխրի մեջ խորովում, միջից կխտում և տաք-տաք դնում են ցավող ականջի վրա: Ծխախոտի ծուխը փչում են ականջի մեջ, որ ցավը դադարի:

Ականջի չարաչ. երբ ականջից չարաչ է հոսում՝ ասում են ականջը ծնել է: Հին ժամանակներում այդպիսի դեպքերում ականջների մեջ մեռոն էին կաթեցնում:

Ամուրուքյուն. Շիբը կոնաձև կտրելով դնում են նստատեղիում:

Այրվածք. Սպիտակ հողը ջրով շաղախում են և դնում են այրված տեղի վրա: Խորոված կարտոֆիլը մանրելով, դնում են այրված տեղի վրա:

Աչքացավ. Եթե աչքը կարմրել, արյունով լցվել է՝ ոչխարի սպիտակ թոքից մի կտոր դնում են աչքի վրա և մի քանի անգամ փոխում: Կապույտ քարը (медный купорос) այրելով և փոշիացնելով, լուծում են ջրի մեջ և կա-

---

196 Բացի իմ հավաքածից, օգտվել եմ նաև պ. Տեր Գևորգյանի իմ խնդրով հավաքած դեղերից և բժ. պ. Գեղեվանովի «Зангезурский уезд в медицинском отношений» աշխատությունից:

թեցնում ցավող աչքի մեջ: Կծու-խոտ բույսի արմատը եփում են և նրա ջրի մեջ բամբակ թաթախում և չորացնում են, ապա այդ բամբակը թրջում են կնոջ կաթի մեջ և դնում ցավող աչքի վրա: Խորոված ձուն երկու կտոր անելով՝ չիբի (квасцы) մանրուք են ցանում վրան և բամբակով դնում ցավող աչքի վրա:

Աոաամնացավ. Փայտե դդալի կոթը սաք մսխրի մեջ սաստիկ տաքացնում և դնում են ցավող ատամի վրա: Մեխակը ծեծում են, ցանում են բամբակի վրա և դնում ցավող ատամի վրա: Սխտորը ծեծում են, հետը աղ և խողի ճարպ խառնում և դնում ատամի վրա:

Եթե երեսն ուռչում է՝ դարու ալյուրից եփած խաշիլը տաք-տաք քաշում են մի շորի վրա և դնում այտին:

Արյունահոսությյան դեմ դործ են ածում վառած շորի մոխիր, կենդանիների աղը՝ ջրով կամ մեղով թրջված:

Բարակացավ. Մեծ քանակությամբ իշի կաթ են խմում:

Բերանի բորբոքում. Պղպեղի փոշուց մի թեյի դդալի չափ ածում են մի բաժակ ջրի մեջ և նրանով բերանը ողողում:

Բոր. Սխտորի գլխով տրորում են չորացած բորը:

Գլխացավ. Գինու թունդ քացախով տրորում են գլուխը: Սխտորը ծեծում են, աղ ցանում, վրան թունդ քացախ ածում և կապում ճակատին: Թթու դրած վարունգը կիսում, դնում են ճակատին:

Գորտնուկ. Օձի կաշու մի կտոր են տալիս ընդունելու:

Երեսի դեղին վերք. Առավելապես փոքր երեխաներին է պատահում. Նռան կճեպը կամ դեղին ներկած բրդի թելը այրում են, մոխիրը ձեթով շաղախում և դրանով օծում վերքը:

Խավարցք. Առավելապես երեխաներին է պատահում. կարմրում է գլխի կաշին և ջրակալում. 0,5 ֆ. լվացքի սապոն, 0,5 ֆ. սև նավթ, 2 գլուխ սոխ և փոքր-ինչ ոչխարի դմակ խառնում են միասին, եփում և կտավի վրա քսելով՝ կապում գլխին՝ նախապես գլուխը ածիլելով և լվալով:

Խիարուկ. Կտավատի փոշին կաթով եփում և տաք-տաք կապում են ուռուցքի վրա, և այս բանը կրկնում են՝ մինչև որ ուռուցքը հասնում է: Այս միջոցին ածելիով ծակում են ուռուցքը, որ շարավը հոսի: Հետո մեղրամոմի, այծի ճարպի և ձեթի հավասարաչափ խառնուրդ են պատրաստում, մեջը ավելացնում են երկու մսխալ քափուրու փոշի և ապա սրանից պատրույգներ շինելով՝ դնում վերքի մեջ, որպեսզի բոլոր շարավը ծծի:

Ծաղիկ. Ոչ մի դեղ չեն անում, այլ միայն աչխատում են սուրբ մնալ, առագաստ չմտնել, տուն հում միս չբերել, չկռվել, չհայհոյել և այլն:

Կարմրուկ. Ոչ մի դեղ չեն անում, միայն կոկորդի վրա ուռուցք նկատելիս՝ կտավատի փոշին կաթով եփում և դնում են վրան:

Կատաղած չան կծած. Մի չիշ գինու մեջ 0,25 ֆ. սխտոր եփելով՝ խմեցնում են:

Կարիճի կծած. Դոշաբը, որ պատրաստում են խաղողի հյութը եփելով, ջրի մեջ լուծում և տալիս են խմելու:

Կոկորդացավ. Խար-թուխը երկար եփում են, շորի վրա քաշում և կապում:

Կողքի ծակոց. Մի բաժակ գինու մեջ ածում են մի բուռ չորացած վարդ և մի թեյի դդալ աղ, որ երկար եփելով՝ քաշում են մի շորի վրա և դնում ցաված տեղի վրա:

Շիրի մանրունքը կաթի մեջ չաղվելով՝ դնում են վերքի վրա:

Հաղլացավ. Ջղային հիվանդին ձեռքից բռնած պար են ածում դավուլ-զուռնի ներդաշնակությամբ և այս այնքան երկար, մինչև որ հիվանդը բոլորովին անզգայացած վայր է ընկնում:

Մայասիլ. Սափրիչը ածելիով կտրում է դուրս եկած պտուկները և վերքի վրա սուլեյմանու (Folia Sonnae) ածում: Հիվանդներն զգուշանում են ոգելից խմիչքներից և թթու կերակուրներից:

Միզարգելություն. Ավելուկը խաչում են և տաք-տաք դնում որովայնի վրա:

Մոլոքոր. Հիվանդին փաթաթում են մետաքսե սպիտակ շորի մեջ և չուտ-չուտ վրան սառը ջուր են ածում:

Հոդացավ (ревматизм). Օղիի մեջ կարմիր պղպեղ (стручковый перец) են ձգում և դրանով տրորում են ցավող անդամները:

Շան կծածի դեմ. Բակլան կամ լոբին կիսում և դնում են վերքի մեջ: Կծող շան մազը վառում և մոխիրը ցանում են կծած տեղի վրա:

Շարավ. Շեխնի բույսի մոխիրը խառնում են գինու հետ և շորի վրա քաշելով դնում են շարավոտ վերքերի վրա: Վերքերի շարավը մաքրելու համար դարա-աղաջ (սև ծառ) կոչված ծառի արմատը երկար եփում են, ապա ջրի մեջ ալյուր խառնում և դնում վերքի վրա:

Ոսկրացավ. Մորենին արմատով հանում, ածում են տաք թոնրի մեջ, որի ափին պատկեցնում են հիվանդին, նախապես անկողին ձգելով: Ապա թոնիրը այնպես են ծածկում, որ մորենուց բարձրացած գոլորշին անցնի անկողնի մեջ և քրտնեցնի հիվանդին: Մորենին եփում են և ջրով լողացնում են հիվանդին: Ցավող մասերը արյի ճարպով օծում են: Նոր մորթած այծի մորթու մեջ փաթաթում են 2-3 օր:

Տաք աղյուս կամ տաքացրած աղ են կապում ցաված տեղերին:

Պղպեղը ածում են թունդ օղու մեջ և 2-3 օր պահելուց հետո դրանով տրորում են ցավող մասերը: Սպիտակ նավթ են քսում:

Ոսկորի կոտրված. Գյուղական ոսկրաբույժը ուղղում է կոտրված ոսկորը, հետո անվա կտավի մի կտորի վրա մի քանի ձվի դեղնուց և փոշիացրած խունկ քսում և նրանով փաթաթում է կոտրված տեղը: Ապա ուռենու

ծառից պատրաստած չորս փոքրիկ տախտակներ դնում է կոտրած ոսկրի շուրջը և թելով կապում: Այսպես մնում է 4–5 օր, ապա նորից քանդում են և նույն դեղը կրկնում: Հիվանդին լավ անում են և հաճախ ոչխարի ոտներից և գլխից պատրաստված խաշ ու գինի տալիս:

Ուռուցք ամորձիքի. Կտավատի փոշին կաթով եփում են և շորի վրա քսած՝ կապում ամորձիքին:

Ջարդված (ушиб). Նոր մորթած այծի մորթով փաթաթում են ջարդված տեղը: Թարմ մսով փաթաթում են: Գարու թիփը քացախի և ջրի հետ խառնելով քաշում են շորի վրա և կապում են ջարդված տեղը:

Ջերմ. Տանու փիփերթից (герань огородный) և բրնձից առանց աղի արգանակ են եփում և ուտեցնում հիվանդին: Մեծ քանակությամբ ձմերուկ են ուտեցնում, որպեսզի ջերմությունն իջնի և ծարավն անցնի:

Ջրդողություն. Ջորացրած վարդը եփելով, տալիս են խմելու:

Սրի կտրած. Մի թեյի դդալ պղպեղի փոշին խառնում են նույնչափ մեղրի և մի ձվի դեղնուցի հետ, շաղախում և կտավի վրա քսած կապում են վերքին: Սովորաբար վերքը չեն լվանում, որպեսզի «չուր չդողանա»:

Ստեպ միզելու դեմ. Ստեպ միզելու հիվանդություն ունեցողին ուտեցնում են խոզի եփած լյարդը կամ խորոված մուկ (ծածուկ խորովելով):

Վախ. Մոր մեզը տալիս են վախեցած երեխային ընդունելու:

Տենդ. Մի քանի փունտ շլոր եփում են ջրի մեջ, ապա մղում, կորիզները հանում և դրանով տրորում են հիվանդի մարմինը և աշխատում են դրանով քրտնեցնել: Ջամած մածուն են քսում մարմնին: Ուռենու կանաչ ճյուղերը ջրի մեջ եփում են և հիվանդին լողացնում այդ ջրով:

Տրիպերի ժամանակ մեծ քանակությամբ ձմերուկ են ուտում, որպեսզի միզեն:

Ցրտի տարած. Փսորած կաթը քացախի հետ խառնելով քսում են շորի վրա և դնում ցրտի տարած մասերի վրա: Ջարի խինան թրջելով դնում են ցրտի տարած տեղը:

Փորլուծություն. Սև թաղիքի կտորը թրջելով ղաթրանի (мазут) մեջ՝ դնում են նստատեղի անցքում և ժամը մի անգամ փոխում: Թերխորով ձուն կխտորի (черношьные орешки) փոշու հետ խառնելով ուտեցնում են: Պինդ եփած ձու են ուտում:

Փորացավ. Պղպեղը օղիի մեջ ածում, խմում են: Կինեմոնը, պղպեղը և դանճաֆիլը ջրով եփում են և խմում:

Քոս (парш). Կավը տափակեցնում են, վառարանում կարմրացնում և դնում գլխի քոսերի վրա:

Գոմեշի մածնի մեջ ծծումբի փոշի խառնելով՝ ուտեցնում են, հետո հինգ մաս խոզի ճարպի մեջ լուծում են մի մաս սնդիկ և սրանով օծում քոսոտի

մարմինը և անմիջապես տաք թոնրի մեջ իջեցնում և այնտեղ մի քիչ պահելուց հետո լողացնում:

Քրտինք բերել. Քրտինք բերելու համար գործ են ածում մանուշակի ծաղիկներից պատրաստված թեյ, կամ նրանից և բրնձից եփած արգանակ: Եվ կամ խունը բույսից պատրաստած թեյ:

Օձի կծած. Մեծ քանակությամբ կովի կաթ են խմեցնում: Վառած աբեթով այրում են կծած տեղը: Հրաշեկ երկաթով այրում (դաղում) են կծած տեղը:

ՄԱՀ, ԹԱՂՈՒՄ ԵՎ ՄԵՌԵԼՈՑ

Զանգեզուրի ժողովուրդն էլ խոր համոզված է, որ մարդու ճակատին դրված է նաև նրա մահվան օրը: Նա հավատում է, որ ոչ մի հանգամանք, ոչ մի միջոց չեն կարող փոխել այդ նշանակված ժամը, ուստի և մեծ մասամբ անխնամ, ճակատագրի բախտին է թողնում հիվանդին:

Երբ հոգեվարքի րոպեն հասնում է՝ ամենայն փութով կանչում են քահանային, որ հաղորդություն տա: Հետո վերցնում են բարձերը, որպեսզի հոգին հեշտությամբ ավանդի: Եվ մինչդեռ չրջապատողները լաց են լինում՝ ավելի սրտոտ մեկը փակում է մեռնողի աչքերը, իսկ եթե աչքերը բաց են մնում՝ ցեխ են քսում: Հետո ձեռքերը խաչաձև դնում են կրծքին և մի թաշկինակ կապում կզակով, որպեսզի բերանը չբացվի: Ոտների բթամատներն էլ բամբակի թելով կապում են: Ապա դարձնում են դեպի արևելք և մի շոր ձգում վրան:

Այս ժամանակ հավաքվում են ազգականները, լաց լինում և մխիթարում մոտիկներին: Հրավիրվում է քահանան, որ օրհնում է ջուրն ու պատանը: Ննջեցյալին լողացնում են հարևանները, եթե տղամարդ է՝ տղամարդիկ, իսկ եթե կին՝ կանայք, ձմեռը սենյակում, իսկ ամառը դուրսը՝ կապերտանեղով մի անկյուն շրջափակելով: Տաշտի երեսին մի տախտակ են դնում և սրա վրա երկարացնում ննջեցյալին, երեսը դեպի արևելք դարձրած: Երկու հոգի, ձեռներին քսակներ անցկացրած, «Աստված հոգին լուսավորե» առելով՝ լվանում են նախ գլուխը, հետո կուրծքը, մեջքը և ապա աջ և ձախ ոտները: Ավելացած ջուրը թափում են և ամանը կոտրում: Հետո, եթե ննջեցյալը երեխա է՝ ձեռին մոմ են տալիս, որովհետև «նա լուսի պես մաքուր է»: Եթե չափահաս և հարուստ է ննջեցյալը՝ շապիկ և վարտիք են հագցնում, շապկի վրայից դոտու տեղը բամբակի թել կապում և ապա պատանքում. իսկ եթե աղքատ է՝ ուղղակի հասարակ կտավից են պատանք կարում և պատանքում: Շատ հարուստները դագաղ են պատվիրում, իսկ մյուսներն ընդհանրապես բերել են տալիս եկեղեցու նաժը և ննջեցյալին կարպետի մեջ փաթաթած դնում նրա մեջ:

Զեյվացիները, իրենց գյուղում եկեղեցի չունենալով և դեպի Միծեռնավանք տանող ճանապարհը սաստիկ վատ լինելով նաժիշ փոխարեն երկու ձող են գործածում, որոնց մեջ մի թոկ է կապկպված և վրան մի կաթսիտ ձգված: Ննջեցյալը նույնպես կարպետի մեջ փաթաթած՝ դնում են այդ ձողերի մեջ և կապում, ապա ուսերին առնում և տանում Միծեռնավանք, մի ժամից ավելի քայլելով: Թե դագաղի և թե նաժիշ երեսին դիմազարդ (երեսքաշ) են ձգում, որ երիտասարդի համար կարմիր չթից է լինում, միջահասակինը՝ սպիտակախառն, ևւագուշն կտորից, իսկ ծերինը՝ սև կտորներից:

Հարուստ ննջեցյալին մի քանի օր տանը պահում են և ապա եկեղեցի տանում, իսկ աղքատին իսկույն ևեթ թաղում են առանց նույնիսկ եկեղեցի տանելու:

Ննջեցյալին տնից վերցնելիս, նրա տեղում մի քար են դնում, որպեսզի նրա հիշատակը հաստատուն մնա այդ տնում:

Գրեթե բոլոր գյուղերում կան հայտնի լալկան կանայք, որոնք հրավիրվում են ննջեցյալների վրա լաց լինելու: Սրանք թե տանը և թե եկեղեցում, շրջապատած ննջեցյալին, լալիս են և բարձրաձայն երգելով թվում նրա գործերը, գովում նրա վարք ու բարքը: Սովորաբար մոտիկներից մեկը «մայր ողբոց» է դառնում, նստում է ննջեցյալի սնարքի մոտ, լալիս և երգում, իսկ մյուսները կրկնում են նրա ասածները:

Կանայք ուղեկցում են ննջեցյալին մինչև եկեղեցի: Եթե ննջեցյալը նշանադրված երիտասարդ է եղել՝ եկեղեցի են բերում նաև նրա հարսնացուին՝ գլխին սև չարսավ գցած: Լալկան կանայք վերցնում են նշանի մատանին և նշանադրության ժամանակ տրված յախի ապասինները, որոնք մի սև թելի վրա են անցկացրած, լալով և երգելով՝ երիտասարդի կողմից մնաս բարով են ասում հարսնացուին:

Երբ քահանան սկսում է դանձ ասել և մի քանի կոպեկ հավաքել՝ այն ժամանակ կանայք փաթաթվում են ննջեցյալին և ավելի սաստիկ լալիս: Ննջեցյալի մայրը, քույրը պատառոտում են իրենց երեսները, քանդում, քաշում մազերը, թակում դլուխները, ուշագնաց լինում: Վերջապես դագաղը կանանց ձեռքից ազատելով, տանում են դեպի դերեզմանատուն, իսկ կանայք եկեղեցու դռանն էլ մի քիչ սուգ անելուց հետո վերադառնում են տուն: Այստեղ ննջեցյալի շորերը առած են բերում, հոտոտում, լալիս և սուգ ասում: Երբ արդեն հագնում են լացից՝ ապա լվացվում են, հայ ուտում և ցրվում, իսկ ամենամոտ ազգականները մնում են դիշերելու:

Ննջեցյալը տղամարդկանց հուղարկավորությամբ տարվում է դեպի դերեզմանատուն: Մարդիկ չուռ-չուռ փոխարինում են դագաղը կրողներին, ամեն անգամ «Աստված ննջեցելոց հոգիք լուսավորե» կրկնելով: Կես ճանապարհին վայր են դնում դագաղը, մի անգամ էլ դանձ ասում, մի քանի կոպեկ հօգուտ քահանայի հավաքում և ապա, «Աստված ողորմի ննջեցելոց

հոգուն» ասելով՝ երեք անգամ դագաղը փոքր-ինչ բարձրացնում, դնում են գետնին՝ և ապա վերցնում, տանում են գերեզմանատուն և դնում գերեզմանի աջ կողմը: Սովորաբար գերեզմանները փորում են ազգական կամ հարևան մարդիկ: Գերեզմանատունը լինում է գյուղից փոքր-ինչ հեռու, շատ անգամ մի բլրակի վրա: Գերեզմանի լայնությունը լինում է մի արշին, իսկ խորությունը՝ 2-3 արշին:

Ննջեցյալին հանում են նաժի միջից, փոքրիկ կտավի բարձը դնում գերեզմանի մեջ և ապա մեկը իջնելով գերեզմանի մեջ, գրկում է ննջեցյալին և պառկեցնում գերեզմանի մեջ: Այս ժամանակ քահանան օրհնում է մի քիչ հող՝ ազգականներից ամենամոտի բուռի մեջ և ձգում է դիակի վրա: Այս ժամանակ բոլոր հուղարկավորողներն էլ մի-մի բուռ հող են ձգում գերեզմանի մեջ, իսկ գերեզման փորողները լցնում են գերեզմանը հողով՝ վրան մի թումբ ձևացնելով:

Թազման ծեսը վերջանալուց հետո՝ հուղարկավորողները սկզմում են ննջեցյալի մոտիկ ազգականների ձեռքերը և «Սուրբ Հոգով մխիթարվեք» ասելով, ուղևորվում դեպի ննջեցյալի տունը՝ «ժմահաց» ուտելու: Այս սովորությունը ամենայն խստությամբ կատարվում է այս շրջանում դեռ մինչև այժմ էլ: Սովորաբար մի եզ, կամ մի քանի ոչխար են մորթում, որից պատրաստում են մսըշիլա, իսկ հարուստները՝ նաև փլավ: Պասին՝ ձիթով ճաշ (փլավ) և լոբի: Ճաշում են նախ տղամարդիկ և ապա կանայք լռելյայն և ճաշելուց հետո ցրվում են:

Հետևյալ օրը վաղ լուսաբացին ննջեցյալի ազգականներից մեկը դնում է գերեզմանատուն, համբուրում է գերեզմանը, երեք անգամ վայ բղավում և վերադառնում տուն: Այս միջոցին ազգական կանայք հավաքվում են ննջեցյալի տանը, բերելով իրենց հետ ձու, պանիր, բրինձ, կերակուրներ և այլն: Այս բոլոր բերածները թողնելով տանը՝ դնում են գերեզմանատուն, քահանային «այգը» կատարել տալիս, լալիս, օղի խմում, սուգ սուում: Երբ մեկի ուշքը դնում է՝ գերեզմանի հողից վերցնում, ածում են վրան: Վերջապես վերադառնալով տուն՝ հաց են ուտում և ցրվում:

Հյուրերի հեռանալուց հետո տնեցիները ննջեցյալի շորերը լվանում են, որպեսզի «հոգին մաքուր և անարատ գնա հասնի իր տեղը»:

Այնուհետև յոթ օր շարունակ սգավորները առավոտ և երեկո եկեղեցի են գնում, և ժամասացությունից հետո քահանային հոգոց ասել տալիս: Յոթերորդ օրը՝ «յոթին», ննջեցյալի տերը հրավիրում է «այգի» ժամանակ ուտելեղեններ բերող կանանց և նրանց հետ գնում գերեզմանատուն, «յոթը» կատարել տալիս և վերադառնում տուն, ճաշում: Մի կամ մի քանի օր անցած՝ նույն կանայք կրկին հավաքվում են սգավորի տանը, լվանում նախ սգավորի և ապա իրենց բոլորի գլուխները, ապա առաջ են բերում ննջեցյա-

լի շորերը, լաց են լինում և ի վերջո այդ շորերը բաժանում են իրենց մեջ և ցրվում:

Այնուհետև մի տարվա ընթացքում ագռավորի ազգականները, հարսանիք կամ նշանդրեք անելիս, «ագահան» են բերում նրան մի զույգ չմոշկ, մի քթոցակալ և այլն: Իսկ մեռելոց օրերին օրհնել տալիս գերեզմանը և տարին մի անգամ ամեն գերդաստան իր հին ու նոր ննջեցյալների հոգու փրկության համար ժամահաց են տալիս:

ԹԱՂՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Պատանքի	0,50-1 ռ.
Լուսապին եկեղեցուն	0,50-1 ռ.
Քահանային մինչև 21 տար.	0,20-1 ռ.
ավելի հասակավորի[197]	1-4 ռ.
Ամբիծքին	0,40-1 ռ.
Խաչահամբույր	0,50-1 ռ.
Ժամահացի և յոթնից հացի	30 ռ.-45 ռ.
Ընդամենը՝	33,10-54 ռ.

ՆՇԱՆԱՎՈՐ ՏՈՆԵՐ

Նոր տարի. Զանգեզուրում ևս, ինչպես և Սիսիանում, նոր տարին չի տոնվում: Միայն Նոր Գորիսում, առավելապես ծառայող տարրը պաշտոնական այցելություններ է անում և սրանով վերջանում է տոնը:

Ծնունդ և Զրօրհնեք. Հունվարի չորսին, երեկոյան ամբողջ գերդաստանը բոլորվում է խոնչի շուրջը, և տան մեծը կտրում և բաժանում է «կրկենի» կոչված բաղարջը: Սա ձեթով պատրաստած և ընկույզով երեսը զարդարած մի բաղարջ է, որի մեջ լոբի, կամ մի հոնի կորիզ է դրված, որ կոչվում է «դովլաթ»: Ում բաժնից որ դուրս է գալիս այս «դովլաթը», նա «օջախի դովլաթ» է համարվում, և այդ տարի նրանից են սպասում տան բախտավորությունը: Շատ անգամ կրկենուց անասուններին էլ են բաժին հանում, և եթե նրանց բաժնից է դուրս գալիս՝ կարծում են, որ բախտավորությունը, հարստությունը նրանցից պիտի գա: Եթե մի որևէ պատճառով չեն կարողանում կրկենի պատրաստել՝ լոբին կամ կորիզը ձգում են սպասի մեջ և նույն կերպ գուշակություններ անում:

Ծննդյան երեկոյին երեխաները խմբեր կազմած շրջում են տները «Ավետիս» ասելու: «Շուն թակողը» մահակը ձեռին առաջ է ընկնում. նրան հետ-

---

[197] Տալիս են նաև դիապարդը:

ևում են երկու կամ երեք երեխա, որ եկեղեցական շապիկի փոխարեն իրենց մայրերի շապիկներն են հագած լինում. ապա գնում են «ալյուր տանողը»՝ տոպրակը շալակած, և «ձու հավաքողը»՝ սալեն դլխին: Մտնելով մի տուն՝ նրանք ձախ ու ծուռ երգում են և մի բան առնելով դուրս գալիս՝ ուրիշ տուն մտնում:

Զրօրհնեաց օրը երիտասարդները ձի են հեծնում և իրենց չնորհքը ցույց են տալիս ձիարշավի մեջ: Խաչը ջուրը ձգելու ժամանակ այս բոլոր ձիավորները մտնում են դետի մեջ և հետո գալիս ճանապարհը կարում են ու հարուստներից նվերներ պահանջում, որ հետո այդ դրամով քեֆ անեն:

Օրհնված ջրից պահում են, որ դրանով ողողեն ու սրբեն պղծված ամանները, այսինքն որոնց չուն, կատու և առհասարակ որևէ անասուրթ կենդանի է դիպել:

Ս. Սարգիս. *Ուրբաթ երեկոյին մի սկուտեղի մեջ պառավները փոխինդ են մաղում և մեջտեղը մի մոմ կամ մի կանթեղ վառած՝ դնում դռան հետևը, հուսալով, որ ս. Սարգիսը իրենց այցելության գալիս, ձիու հետքը կվճողնի փոխինդի վրա: Առավոտյան նույն փոխինդով խաչիլ են եփում: Ոմանք էլ այդ փոխինդը դոշաբով կամ շաքարաջրով շաղում և փոքրիկ, դնդականման «պյուտ»-եր են չինում: Շատերն էլ այդ «պյուտերի» փոխինդի մեջ մի լոբի կամ հոնի կուտ են դնում, որով, ինչպես կրկենիով՝ «դովլաթ» են դուշակում:*

Բարեկենդան. *Ս. Սարգսի տոնից սկսած մինչև մեծ պասը ժողովուրդը բարեկենդան է համարում և աշխատում է, որքան կարելի է լավ ուտել-խմել և ժամանակը ուրախ անցկացնել: Վերջին երեք օրերն ամբողջովին նվիրվում են կերուխումի և ուրախության: Այստեղ ևս, ինչպես և Սիսիանում, կիրակի օրը երևան է գալիս «փաչան», մի ծաղրածու երիտասարդ, փաչայի հանդերձ հագած և իշի վրա նստած, որ իր ծառաների առաջնորդությամբ շրջում է գյուղը, հազարավոր ծաղրածություններ է անում, իբր տուգանք դրամ հավաքում, որով հետո ընկերների հետ միասին քեֆ են անում:*

Խնձորեսկում 20-30 կանայք տղամարդի չորեր են հագնում, փափախներ ծածկում, և ապա գյուղի ձորակում մի գուբիանի լծվելով՝ վար են անում: Բազմություն հավաքված զվարճանում է և խրախուսում:

Տեառնընդառաջ. *Խնձորեսկում երեկոյան ժամերգության ժամանակ եկեղեցու մեջտեղը մի մեծ աշտանակ են դնում, վրան 12 մոմ տնկած: Հետո քահանան քարոզ է տալիս և հրավիրում ժամավորներին որ մոմերը վառեն՝ նվեր տալով եկեղեցուն: Ապա սկսվում է սակարկություն, ցանկացողը բղավում է, թե ինքը ինչքան կտա: Ամենից շատ տվողին առաջ են հրավիրում և ձեռքը լուցկի տալիս: Սա էլ վճարում է խոստացածը և վառում 12 մոմն էլ: Սրանից հետո ժամավորները մոտենում են աշտանակին, փող ձգում*

դրված ափսեի մեջ, և սրա մոտ դրված մոմերից մի-մի հատ վերցնում, կպցնում են 12 մոմերից մեկից և աշխատում առանց հանգցնելու մինչև տուն հասցնել:

Մի քանի գյուղերում էլ նոր պսակված երիտասարդները ցրտնի են բերում և եկեղեցու բակում դարսում: Ժամասացությունից հետո ջահի մոմով վառում են և շրջան բռնած պտտում շուրջը, իսկ երբ բոցը մի քիչ իջնում է՝ թռչում են վրայից: Շատերը այդ ցրտնու ճյուղերից վերցնում և տանում են տուն և խրեցնում տան ճակատներին, որպեսզի «աչք չտան»:

Մեծ պաս. Առավոտ շատ վաղ պառավները «պասի պուլուլ» են շինում, մի սոխի վրա յոթ փետուր խրելով, և կախում են երդիկի խաչքից, որպեսզի երեխաները նրանից վախենալով, պասը չուտեն: Բայց միևնույն ժամանակ նա ծառայում է գյուղացիներին որպես մեծ պասի օրացույց, որովհետև մեծ պասի ամեն կիրակի օր երեխաները պուլուլից մի-մի փետուր պակում են:

Գյուղացիները մի-մի շիշ օղի, խնձոր, նուռ առած գնում են տանուտերի մոտ և չնորհավորում նոր տարին: Մի քանիսն էլ նույն կերպով քահանայի մոտ են գնում: Հետո ազգականները միմյանց տուն այցելության գնալով՝ չնորհավորում են միմյանց մեծ պասը:

Կեսօրից հետո նվագածուները գալիս ածում են տանուտիրոջ դռան առջև և մի ռուբլի տալով նրան՝ իրավունք են ստանում, որից հետո արդեն շրջում են գյուղը և ածում:

Գորիսում ժողովուրդը ուխտ է գնում է ս. Մարտիրոսի մատուռը, որ գտնվում է գյուղի հարավային ձորակի բարձր ժայռերից մեկի մեջ: Սրա միայն արևմտյան կողմը քարից պատ է շարված, մնացած մասը փորված է ժայռի մեջ:[198] Այստեղ կա մի դերեզման, որի հողը հիվանդները ջրի մեջ լուծելով խմում են իբր դեղ: Այս դեղը տեղացիներից կոչվում է «խնոթուն»:

Ուխտավորները նստոտում են ժայռի ստորոտում, սուրբ ծառերի ներքև, արևի տակ և սկսում են ուտել-խմել: Այստեղ էլ երբեմն երևում է բարեկենդանի «փաչան», որ գալիս է իր ընկերների հետ՝ կիրակի օրը հավաքած փողերով քեֆ անելու: Զուռնան ածում է, պարը բոլորում, ծիծաղն ու երգը թնդացնում ժայռերը:

Միջինքին մի առանձին բան չի կատարվում, բացի այն, որ նշանած երիտասարդի տնից հարսնացուին նվեր է ուղարկվում եփած տակ, խաչխաչով հաց, ձեթով գաթա, մի շիշ օղի և մի կուլա գինի:

---

198 Դռան կամարակալ քարի վրա կա հետևյալ արձանագրությունը. Ես զազանչեցի Մատուռս եւ ...չիննեցաք ս. մատուռս թվ. ՌՃՄՔ (1703):

Ծաղկազարդ (տեղական բարբառով՝ «զարդար»). Այդ օրը եկեղեցում «ճռուան» և «ճճանակ» են ածում: Եկեղեցու մեջտեղ կանգնեցնում են մի ուռենու ծառ և ճյուղերին մոմեր վառում:

Նշանած աղջիկների կնոքանքը, մի խաչաձև մոմ վառելով ծառի մոմերից, տալիս են իրենց հարսնացուի ձեռքը և մի կարմիր կամ կանաչ չարղաթ ձգում նրա գլխին:

Ժամասացության վերջը ժամավորները թափվում են ծառի վրա և ճյուղերը խլխլելով, տանում տուն, պահում են, որպեսզի դրանցով զատիկի նավակատիքին կերակուր եփեն:

Զարչարանաց շաբաթ. Ավագ երեքշաբթի օրը՝ իմաստուն և հիմար կուսանաց առնին, եկեղեցում տասը երեխայի ձեռները մի-մի մոմ են տալիս: Հետո, երբ կարդացվում է հիմար և իմաստուն կուսանաց ավետարանը՝ մի տիրացու առաջարկում է երեխաներին՝ վերցնել ափսեի մեջ ածած կլորած թղթերից մի-մի հատ, որոնցից հինգի վրա «իմաստուն», իսկ մյուս հինգի՝ «հիմար» է գրված: Անմիջապես վիճակով «հիմար» դուրս եկողների մոմերը հանգցնում են և ամեն կողմից նախատում նրան, որ հիմար է լինելու, իսկ «իմաստուններին» գովում են:

Ավագ չորեքշաբթի օրը կոչում են **չիք չորեքշաբթի**: Այդ օրը այգեպանները կացիններով ձեռին հարձակվում են պտուղ չտվող ծառերի վրա և սպառնում են կտրել, իսկ մի ուրիշ մարդ արգելում է նրանց՝ հորդորելով, որ մի տարի ևս սպասեն, այս տարի անշուշտ կբերի:

Ավագ հինգշաբթի. Ամեն տնից տանում են եկեղեցի մոտ 0,5 ֆունտ կաթսաղ, մի քանիսն էլ ոտները սրբելու և լվալու համար շոր՝ «վիլա»: Ժամերգության միջոցին քահանան լվանում է բոլոր ծերունիների աջ ոտները և կանանց ու փոքրերի աջ ձեռները և օրհնված յուղ քսում: Այս յուղից իրենք ժամավորները քսում են ճակատներին, աչքերին, մի քիչ էլ տանում են տուն և ձգում են յուղի կարասի մեջ, որ յուղը առատ և օրհնված լինի:

Սգի ուրբաթ. Այս օրը, իբրև սուգի նշան՝ երեսները չեն լվանում, եկեղեցում ծունր չեն դնում: Առավոտյան ժամերգությունից հետո դնում են գերեզմանատուն և գերեզմանների վրա մոմեր վառում: Մայրերը եկեղեցում իրենց արու երեխաների մեջքերին կարմիր ու կանաչ թելով «ուրբաթաուռ» են կարում, որ ունի հետևյալ ձևը.

Եվ այս նրա համար, որ երեխային կայծակ չխփի:

Իսկ փոքրիկ աղջիկներին նույն վտրձանքից ազատ պահելու համար պողպատի մատանի են դնում մատներին:

Ավագ շաբաթ օրը մի քանիսը ծոմ են պահում և երեկոյան ճրագալույցին եկեղեցի գալիս՝ ձու կամ ձուկ են տանում իրենց հետ, որ «ժամավ քաշեն» և հետո նրանով թաթախվեն: Լինում են մարդիկ, որ «Առնք կերնք» ասելիս՝ հենց եկեղեցու մեջ ուտում են ձուն:

Ժամերգությունից անմիջապես հետո բոլորը ընթրում են: Պասը բաց են անում լուսով: Ջուկը և թանով ճաշը (թանե սպասը), որ այդ օրը «տղոպաճ» է կոչվում՝ այդ օրվա հատուկ կերակուրներ են համարվում և գրեթե բոլորի տանն էլ պատրաստվում են:

Այդ երեկոյի պատարագը մեկը «առած» է լինում և պատարագից հետո նա քահանային և մի քանի ժամավորների հրավիրում է իր տանը ընթրելու:

Զատիկ. *Կիրակի լուսաբացին շատերը գնում են եկեղեցի: Մի քանիսն էլ մանուշակի խաչաձև փնջեր են տանում իրենց հետ և դնել տալիս սեղանի վրա: Համարյա բոլոր ժամավորները մոմ են առնում և վառում: Երբ «Այսօր յարեաւ ի մեռելոց» շարականն սկսում են երգել՝ երեխաները ճըռռան են ածում: «Փառք ի բարձունս» ասելիս՝ քահանաներից մեկը Ավետարանը տանում է երիտասարդների և երեխաների մոտ, որոնք համբուրում և մի-մի ներկած ձու են տալիս քահանային: Սա էլ այս ձվերից մի քանիսը տալիս է տիրացուներին և գյուղի մեծամեծներից մի քանիսին, որոնք եկեղեցու բակում ուտում են:*

Մի քանի գյուղերում նույն օրը հասարակական մատաղ են անում և եկեղեցու դռանը բոլորին բաժանում:

Ձու կռվեցնելու սովորությունը շատ ընդհանրացած է ոչ միայն երեխաների, այլև չափահասների մեջ: Ձվերը ներկում են առավելապես կարմիր գույնով, իսկ սգավորները՝ սև: Կան և դեղին գույնով ներկողներ:

Երկուշաբթի *օրը, մեռելոցին, կերակուր և մրգեղեն վերցնելով իրանց հետ՝ գնում են գերեզմանատուն, ուր գերեզմանները օրհնել տալուց հետո, ուտում են, իսկ մնացորդը բաժանում աղքատներին:*

Համբարձում. *Վիճակ հանելու սովորությունը վերացել է: Նախընթաց երեկոյին **իլիբխատրի** կոչված խոտը մի-մի թիզ չափում և երկու տեղից գունավոր թելերով կապում են և երեք հաջորդ (Համբարձման) օրը խոտը երկարացած լինի՝ գուշակում են, որ երկար են ապրելու: Տղաների և աղջիկների խմբերն առանձին-առանձին գնում են դաշտերը քեֆ անելու:*

Նավասարդ. *Զանգեզուրի գյուղերն էլ Սիսիանի պես նավասարդի մեկը տարեմուտ են համարում և միմյանց չնորհավորում են նոր տարին: Գյուղացիներից շատերը մի-մի խնձորի մեջ արծաթե դրամներ խրած, մի-մի չիչ*

էլ օղի առած՝ գնում են տանուտիրոջ մոտ և բերածները նրան նվիրելով՝ շնորհավորում նոր տարին: Նա էլ հյուրասիրում են դրանց:

Այդ օրը ամեն տուն «կորկոտ» է պատրաստում. միայն խնճորեակեցիք կորկոտի փոխարեն բոզբաշ են եփում:

Դիշերը գոմերը մաքրում են և անասուններին տակ գարի ցանում և նրանց ոտիներին կարմիր թել կապում, որպեսզի «տարին առատ և կարմիր օրերով»՝ երջանիկ լինի:

Վարդավառ. Տոնի նախորդ երեկոյին աղջիկները մրգեղեններ են ածում խոնչանների մեջ, ծաղիկներով զարդարում, և տանում են մի տան մեջ պահ տալիս: Ապա գյուղումներ երգելով պարում, ուրախանում են: Վարդավառի օրը այդ խոնչանները և ուտելեղենները առած գնում են հանդերը, կերա-կուրներ են եփում, ուտում, երգում և պարում:

Ս. Խաչ. Դրեթե բոլոր գյուղերից այս օրը ուխտ են գնում Միծեռնա-վանք, այնպես որ այնտեղ ահագին բազմություն է հավաքվում, և հազա-րավոր ոչխարներ մատաղ են անում:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Աղջիկն ասում է.

Մեր տիւռնը ճռճռում ա- ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր շունը հըչմաչում ա-ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր որճակը ծկկթում ա - ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր խօխերքը լցմացում են - ա տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր ճրագը տըզվըզում ա՛ - ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր կրակը թավսում ա - ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր պառավը մըրթմրթմում ա - ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր հալիւորը տընքտընքում ա - ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ:

Տղան պատասխանում է.

Ձեր տիւռնը ճռճռում ա - մին ջամ ջրով կեա՛մ-կեա՛մ.
Ձեր շունը հըչմաչում ա - մին ճօթ հացով կեա՛մ-կեա՛մ.
Ձեր որճակը ծկկթում ա - մին հափուռ կոտով կեա՛մ-կեա՛մ.
Ձեր խօխերքը լցմացում են - մին ջուր չամչով կեա՛մ-կեա՛մ.
Ձեր ճրագը տըզվըզում ա - մին բժուրիկ նօթով կեա՛մ-կեա՛մ.
Ձեր կրակը թավսում ա - մին բեռը փայտով կեա՛մ-կեա՛մ.
Ձեր պառավը մըրթմրթմում ա - մին հաց մեղրով կեա՛մ-կեա՛մ.
Ձեր հալիւորը տընքտընքում ա - մին կոլա դինով կեա՛մ-կեա՛մ:

Դարձյալ աղջիկը

Մեր ձիանքը խըրխընջում են – ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր եզինքը պռմռանչում են – ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր կովերը մըկմըկում են – ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր որթերը կըմկըմում են – ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր գումաչները դըռլընկում են – ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր իշերը զըռզըռում են – ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր նանին ճըղճղում ա – ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ.
Մեր աղբերը կռվռում ա – ա՛ տղայ դու մի կա՛լ-կա՛լ:

Տղան վերջը էլի ասում է, հաղթում և տուն մտնում.

Ձեր ձիանքը խրխընջում են – մին խուրում հօնջաւ, կեա՛մ-կեա՛մ.
Ձեր եզինքը պըռմռանչում են – մին ճուվարան տարմանով կեա՛մ-կեա՛մ.
Ձեր կովերը մըկմըկում են – մին խուրում խօտով կեա՛մ-կեա՛մ.
Ձեր որթերը կըմկըմում են – մի քթիչ կաթնով կեա՛մ-կեա՛մ.
Ձեր գումաչները տըռլընկում են – մին խուրցը փօքաւ կեա՛մ-կեա՛մ.
Ձեր իշերը զըռզըռում են – մին կուշ կարով կեա՛մ-կեա՛մ.
Ձեր նանին ճըղճըղում ա – մին չամախի քթիկալով կեա՛մ-կեա՛մ.
Ձեր աղբէրը կըռվըռում ա – մին մղայի փափաղով կեա՛մ-կեա՛մ:

ՎԻՃԱԿԻ ԵՐԳԵՐ

Անուշս հա անուշս,
Էս ի՞նչ դարտեր ա ջանուշս.
Ես իմ մեռնելի դարտս քաչում չեմ,
Կը մնայ մաղբուն անուշս:
Կիւթանը հանդին լարած,
Մըչըկնին միչին չարած,
Մըղավուն դուք ա մըչկընի,
Սև հողին գերի դառած:
Կալին հասիկը թի կըտամ,
Կեօկ ձիուն գարի կըտամ:
Հու որ ասի էն հարը կեամ ա,
Վորթը տակին մէր կըտամ:
Հալեմ, հալեմ հըրցընեմ,
Ճրաքն ածեմ զրցընեմ,
Բաքվից եկողներ, ձեզ մատաղ,
Կացէք իմ հարից հարցանեմ:

Դուբս կը կամ Լաստին կալը,
Կը երևայ Բաքվայ սարը,
Ջանս քեզ մատաղ խազէյին,
Ուղարկի իմ բալայ հարը:
Ջաղացին դուռնը տաշած,
Եաղլախին վարդը քաշած,
Աղբէր կէս ունքերիդ մատաղ,
Ղասիդ զալամով քաշած:
Ջաղացին դուռնը փոս ա,
Քար կը քցեմ կը խօսայ.
Ջանս քեզ մատաղ լինի,
Իմ նանուս ազիզ փեսայ:
Սարին խօսը հատալ ա,
Գիւմշինին նատռատալ ա.
Ջալում գեննգեցի աղջիկ,
Քաքուլդ թզօտալ ա:

Կիւլպայ կանիմ խաչար ա,
Թըխածս հարիս պաչար ա,
Փանահ խան քո մարը մեռնի,
Իմ հարը խէ՞ մաշել ա:
Վըրթիվերս թային ա,
Զորս ղօլը չոր փէյին ա,
Ճրագը ձեռին տղայ,
Սրտամէջդ խային ա:
Տեղ կը քցիմ փոթ կը կայ,
Մէջիցը անուշ հոտ կը կայ,
Մինչև էն հարին կալը՝
Աչքերիս հունց քօն կը կայ:
Այ՛ հասիը կաս, հասիը կաս,
Մեծ ղազանի քասիը կաս.
Թե ինձ օգնես՝ ետ վազես,
Ջիանը դուս տասիը կաս:
Աղջի անունըդ Խանի,
Լիչակդ քամին տանի,
Ես քեզ նշանած սիտի,
Շորերդ իմ ձեռքով հանի:
Սարիցը մարդ ա կալիս,
Սարերը կրակ ա տալիս,
Առաջիս հաղուստ բացավ,
Իմացայ թէ ինձ վարդ ա տալիս:
Սօնամս չարմազ ա քինում,
Դիլին զարմազ ա քինում,
Ջային մահանայ կալած՝
Եարին կէօրմազ (տես) ա քինում:
Էն հարին հարը ես եմ,
Բաղին բլբուլը ես եմ,
Էն հարը խէ տարտ անի,
Սրտին սիրած գիւլը ես եմ:
Ա՛յ տղայ, տաւարած տղայ,
Զօռավ ճարած տղայ,
Օթախ սրսիեմ չոր քցիմ,
Նստիր, բեզարած տղայ:
Կաքաւը սուլուլ կը տայ,
Գլուխը տուրուր կը տայ,
Հուր որ մին հար չունի՝
Ունքերը ուրուր կը տայ:
Արևը թըռվըռաւ ելաւ,
Իմ նանի կռիւաւ ելաւ,
Սապարին աչքը դուրս գայ,
Դուշմանի սրտաւ ելաւ:
Ա՛յ ուրմա, ուրմա հար,
Ֆհաքուլդ բուրմայ հար,
Ֆնացել ես արանը եկալ,
Աթակդ լիքը խուրմայ հար:
Ես Գօրիսին ձորան եմ,
Մեծ բաղին խնձորան եմ,
Խնձորը կծիմ թոլ անիմ,
Մէջին հարսը կոլ անիմ:
Կէտին տակին լուաց կանիմ,
Սիպտակ երես բաց կանիմ,
Սրտիս սիրած լաւ տղին՝
Աչքով ունքով իմաց կանիմ:
Եարայ, եարայ սիրաս:
Տանիցս ավարայ սիրաս,
Ճաքել չեմ, պատառել չեմ,
Քանց քարա պինտ ա սիրաս:
Շողկը տուաւ էն պատին,
Մէջքը կոտրի էն տատին,
Հարուստը ուզեց տուաւ ոչ,
Պահեց տուաւ աղքատին:
Օրաւ եկ հա օրաւ եկ,
Ջուրդ լիքը մօրաւ եկ.
Էս թաղս ղըլմըղալ ա,
Շուռ տուր էն ղօլաւ եկ:
Մաւ հալաւս փուխռում ա,
Սոված փորըս ղռղռում ա,
Տաշտը դարտակ, մաղը կախ,
Փորը սոված, թուրը կախ:
Ծարաւալ եմ ջուր չկայ,
Սարևրին ալբիւր չկայ,
Վախում եմ ղարիբ մեռնիմ՝
Քշտիս մէջ ու քուր չկայ:
Ծարաւալ եմ ջուր բերէք,
Երևանու բան բերէք

Վախում եմ ղարիբ մեռնիմ՝
Ղարիբ ղուշս տուն բերէք:
Աչըդին սազըն առայ,
Գիւլերինվասըն առայ,
Հինգաղբօր մէջիցը՝
Ջոկեցի խասն առայ:
Արէքակը մըրըմէր,
Հալալ ըրեք հըր ու մէր,
Եկալ ա որ տանում ա,
Ընկեր միջայ հանում ա:
Տանս տակին խօնկի ծառ,
Ոսկի կաքաւ վերան թառ,
Էս կիրակի մոհլաթ տուր,
Էն կիրակի հոգիս առ:
Դարուազին տակը սառալ ա,
Մատներս ղալամ դարալ ա:
Թոխ եախաւոր, բոզ չուխաւոր
Օշս խելքս տարալ ա:

Եկէք գնանք ծեր անենք,
Խնճոր կծենք թոլ անենք,
Հուր որ մին եար չունի՝
Գլխին թխենք դէն անենք:
Գեանջու քամին կալիս է,
Դըռները թըրըխկալիս է,
Հարիւր թիւման մըշտըլըղ,
Սիմօն եարը կալիս է:
Վըրթիվերիս վադան ա,
Միջի մարդին կադան ա,
Միջի մարդը հունց անի,
Խնճորկեցի կադան ա:
Վըրթիվերը եկաւ անցաւ,
Աղջկերքը ընկան ծաղկանցաւ,
Ոբլոը սև սպիտակ տղայ
Վըրթիվերըս առաւ անցաւ:

Երկու խոսք. Սկսելով Զանդեզուրի գավառի երրորդ, Ղափանի ոստիկանական շրջանի նկարագրությունը, ես ցանկացա նախ հիշել այստեղ պատահած քաղաքական անցքերը, այս պատճառով և սկսեցի թերթել հայ մատենագիրները, սակայն հետո նկատեցի, որ գրեթե ոչինչ չի վրիպել Հայր Ալիշանի շրջանկատ աչքից, հետևապես և ես ոչինչ չպիտի կարողանայի ավելացնել այն պատմական տեսության, որ նա արել է իր «Սիսական»-ի մեջ, ուստի և որոշեցի չկրկնել այդ միևնույնը, այլ ավելի մանրամասն նկարագրել մելիքների գործունեությունը, քաղելով բացառապես բանավոր աղբյուրներից: Հայտնի է, թե որքան սակավաթիվ են XVIII դարի առաջին քառորդում գործող հայ մելիքների և, մասնավորապես Դավիթ բեկի պատմության գրավոր աղբյուրները, հետևապես և ներկա գործը ոչ միայն նյութ կարող է ծառայել վերաստուգելու անհայտ «վարպապետի»[199] հաղորդած փաստերը, այլև որոշյալ չափով կարող է լուսաբանել և լրացնել նրանց, դեռ մի կողմը թողննենք այն, որ սա բավականաչափ կպարզի, թե որքան վառ են մնացել ժողովրդի հիշողության մեջ տեղական հայ մելիքներն ու ազատության հերոս Դավիթ բեկը:

Կարևոր եմ համարում հիշել ինձ տեղեկություններ տվող ծերունիներից գոնե մի քանիսին: Նախ վ. Ագուլիսի ծխատեր քահանա Տեր-Մովսես Մելիք-Ստեփանյանին, մի ուրախունամյա, առույգ, խելացի և վառ հիշողության տեր մարդ: Պատկանելով մելիքների ցեղին, նա պատանեկան հասակից չարունակ լսել է յուր և իրեն ազգակից մելիքական տոհմերի պատմությունը և նույնիսկ 1882 թ. փորձել է դրի անցկացնել այդ լսածները: Այս աշխատությունից մի փոքրիկ հատված տպվեց «Բանասեր»-ի 1902 թ. դեկտեմբերի համարում, իսկ ամբողջը Տեր Հոր խնդրով խմբագրությունն ինձ ուղարկեց, որպեսզի համեմատեմ, թե քանի տարուց հետո ոչինչ չէ՞ր մոռացվել և բոլո՞րն էր պատմել ինձ: Հինդ թերթի վրա արժանապատիվ հայրը ուրվագծել էր այն, ինչ երեք օրվա ընթացքում կարողացավ պատմել ինձ:

Երկրորդ ծերունին մեղրեցի Մատթեոս Շահյանն է, մի անձնավորություն, որ շատ լավ ծանոթ է Զանդեզուրի ամբողջ գավառին, որովհետև երկար տարիներ վարել է ուսուցչի, դյուղական գրագրի, ծաղկահատի և փաստաբանի պաշտոն: Պարոնը սիրով ուղեկցեց ինձ Մեղրիի շրջանը ճանապարհորդելիս և իմ խնդրով գնաց Առաջաձոր և հատկապես ինձ համար

---

[199] Հ. Ղուկաս Ստեփանեան Սերաստացու, ըստ հ. Ալիշանի (Սիսական, եր. 301):

հավաքեց մելիք Քարամյաններէ և Թորոս իշխանի մասին տեղեկություններ, ավելացնելով սրանց վրա իր զանազան ժամանակներում լսածները:

Երրորդը՝ Բեխ գյուղի Մելիք-Փարսադանյան, բոլոր ծերունիների մեջ իր խելացիությամբ աչքի ընկնող, Հարություն բեկն է, որ հաճեց նաև ուղեկցել ինձ Վահանա վանքն ու Հալիճաորի բերդը:

Չորրորդը՝ Արծվանիկ գյուղի քահանան է՝ Տեր Մեսրովբ Տեր-Հարությունյան, որ տարավ ցույց տվեց ինձ երիցվանքը, մելիք Փրանգյուլի գերեզմանը և այլն:

Հինգերորդը՝ Կալեր գյուղի մելիք Հովհաննջանյանը, վեցերորդը՝ Տաշտոնի քահանան և այլ շատ-շատեր:

Ի վերջո այս հատվածի սրբագրության թերթերը աչքի անցկացրին պ.պ. Մանուչար-բեկ Մելիք-Ստեփանյան (Գանձակում) և Սողոմոն-բեկ Մելիք-Փարսադանյան, որոնց նկատողությունները ես նշանակեցի առանձին ծանոթություններով:

Հայտնում եմ իմ խորին չնորհակալություն վերոհիշյալ բոլոր անձերին:

Շատ ցանկալի էր, որ կարող անձինք գրի առնեին ինձ չպատահած ավանդություններն էլ, որպեսզի ապագային հնարավորություն լիներ մելիքների վերաբերությամբ մի ամբողջացած տեսություն հրատարակել:

ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐ

Այժմյան Ղափանի ոստիկանական շրջանում նախանցյալ դարում իշխել են երկու նշանավոր մելիքական սերունդներ. մինը Մելիք-Փարսադանի, մյուսը՝ Թորոս-իշխանի: Մելիք-Փարսադանյան սերունդը բաժանվել է երկու տան՝ բուն Մելիք-Փարսադանյան և Մելիք-Ստեփանյան: Բացի սրանից, մելիք Փարսադանի մի դստեր սերունդը կազմել է մի ուրիշ, փոքրիկ մելիքություն՝ Մելիք-Նուբարյան անունով:

Թորոս-իշխանի սերունդը համարվում է այժմյան Մելիք-Քարամյաններըը, որոնք, ոմանց կարծիքով, սերել են Թորոս իշխանի Ծաղիկ դստեր և վրացի Քարամ իշխանից, իսկ իրենց, Մելիք-Քարամյանների ասելով, Թորոս իշխանի թոռ՝ Հեթումի որդի Քարամից, որ քաջ մարդ է եղել և լեզգիների դեմ վարած պատերազմների ժամանակ ցույց տված արտակարգ քաջությունների չնորհիվ, Մուստաֆա փաշից Քյուփարա գավառակի վրա մելիք կարգվել:[200]

Բացի այս երկու տոհմից, այստեղ եղել է նաև մի ուրիշ մելիքական տուն, մելիք Փրանգյուլի, որ թուրքացել է:

---

[200] Քյուփարա գավառակը բաղկացած է Սևաքար, Ջափնի, Ըրկենանց, Արծվանիկ, Զեյվա, Խզրանց և Ագարակ գյուղերից:

Մելիք-Փարսադանյանները բնակվել են գլխավորապես Հալիճոր և Բեխ գյուղերում, Մելիք-Ստեփանյաններն՝ Առաջաձորում, իսկ Մելիք-Նուբարյանները՝ Շիկահողում. Թորոս իշխանը՝ Եղվարդում, Մելիք-Բարամյաններ-ը՝ Ագարակում, իսկ այժմ Տանձթափ կամ Ղարաբաբա գյուղում, մելիք Փրանգյուլն էլ՝ Արծվանիկում:

Այս մելիքական տոհմերից ամենանշանավորը Մելիք-Փարսադանյանն է, որ սերել է ոմանց ասելով՝ Սյունյաց Զագիկ իշխանից, իսկ Բեխի ծերուներին ասելով՝ Շաոիկ (Աստվածատուր) իշխանից, որ Վրաստանի կողմերից եկել, վերաբնակվել է Ղափանում: Այս տոհմի առաջին, պատմական անձնավորությունը համարվում է մելիք Փարսադան Ա, որի անունով և կոչվում է այս տոհմի ամբ ճյուղը, և որի ճյուղագրությունը հետևյալն է.

Մելիք-Փարսադան Ա
/
Մելիք-Պալի
/

Մ. Փարսադան Բ	*Աստվածատուր իշխան*	*Շահում կամ Շիկո*
/	*/*	*/*
Սաֆրազ և Պալի	*Դավիթ-բեկ*	*Ստեփան իշխան*
/		*/*
Էյվազ-բեկ		*Օհան-յուզբաշի*
/		*/*
Մելիք-Փարսադան Գ		*Մելիք-Ղուկաս*
/		*/*
Մելիք-Հովհաննես		*Մելիք-Հովհաննջան*
/		*/*
Մելիք-Գալուստ		*Մելիք-Ստեփան*
/		*/*
Հովհաննես-բեկ		*Մելիք-Սողոմոն*
		/
		Տեր-Մովսես[201]

Ինչպես երևում է այս ճյուղագրությունից՝ մելիք Փարսադան Ա ունեցել է մի որդի՝ Պալի, իսկ սա երիքը՝ մելիք Փարսադան երկրորդ, Աստվա-

[201] *Մելիք-Փարսադանյաններից ոմանք ասում են, թե Մելիք-Ստեփանյանների նախահայր Շահումը իրենց նախահայր Մելիք Պալու որդին չէ, այլ եկատատան գյուղի մելիք: Գուցե այս ավելի ճիշտ լինի, թեպետ և իրենց, Մելիք-Ստեփանյանների ճյուղագրությունն այդպես է դուրս բերված, մանավանդ որ «Դավիթ-բեկի պատմության» մեջ Ստեփան իշխանը կոչվում է Վարդանիսյան, ի տուեն Շահումյան (Դաւիթ-բէգ, հրատ. Գուլամիրեանի, եր. 30):*

ծատուր իշխան, և Շահում կամ Շիկո: Մելիք Փարսադանը ունեցել է երկու ուսար, Սաֆրազ և Պալի և մի դուստր, որի անունը հայտնի չէ: Աստվածատուր իշխանը ունեցել է միայն մի որդի, Դավիթ բեկ, Ղարաբաղի ազատության հերոսը, որով և վերջացել է սրա սերունդը, որովհետև Դավիթ բեկը չի ամուսնացել: Շահում կամ Շիկոն էլ ունեցել է մի որդի՝ Սահիան իշխանը, Դավիթ բեկի պատանեկան ընկերը և հետո նրա զորավարը: Սրա սերունդը մինչև այժմ էլ շարունակվում է և նրա անունով կոչվում Մելիք-Սահիանյան:

Մելիք Փարսադան Բ իր դուստրը կնության է տվել շիկահոզյի Վարդիկի որդի Նուբարին: Վերջինս թեպետ ծագմամբ ռամիկ, բայց վիթխարի և ըստ երևույթին, քաջ մարդ է եղել, ուստի և մելիք Փարսադան Բ, տալով նրան իր դուստրը՝ սահմանել է նրան իր երկրի հյուսիսային սահմանի պաշտպանությունը և նվիրել նրան Բերդաքար ու Կռնատուր-բերդ ամրոցները: Սակայն մելիք Փարսադան Բ ավագ որդի Սափրազը սաստիկ բողոքել է հոր դեմ, կամենալով արդելել, որ իր քրոջը մի այդպիսի ռամիկի տա և երկու նշանավոր բերդեր Նուբարի պես մի թուլամորթի հանձնի: Եվ երբ հայրը նշանակություն չտալով սրա խոսքերին, հանձնել է աղջիկն ու բերդերը Նուբարին, Սափրազը կամեցել է զենքի զորությամբ հետ խլել դրան բերդերը, ուստի և իր զորքերն առած հարձակվել է մելիք Նուբարի վրա: Մելիք-Փարսադանը սաստիկ զայրացել է իր որդու այսպիսի հանդգնության վրա և օգնական զորք է ուղարկել Նուբարին, որ մի լավ դաս տա նրան: Սափրազը, չտանելով այս անպատվությունը, թողել հեռացել է Կ. Պոլիս և այնտեղ պալատական ծառայության մեջ մտել:[202]

Այս անցքը չափազանց ծանր տպավորություն է գործել նաև Դավիթ բեկի վրա, որ իր հայր Աստվածատրի մահից հետո մնացել էր մելիք Փարսադանի անմիջական իշխանության ներքո: Ուստի և սա թողնում հեռանում է Վրաստան և այնտեղ վրաց թագավորի մոտ ծառայության մտնում:

Մելիք Փարսադանը այս երկուսի հեռանալու պատճառով կանչում է խնձորեսկ գյուղից Մխիթարին և զորքի սպարապետ կարգում:

Այսպես անցնում են մի քանի տարի. մելիք Փարսադանը Մխիթարի և մելիք Նուբարի հետ պահպանում է յուր երկիրը, սակայն հանկարծ Ջալալյալլու թուրքերը հարձակվում են մելիք Նուբարի վրա և պաշարում Կռնատուր բերդը: Մելիք Նուբարն այս անակնկալ պաշարումից հուսահատված՝ վերցնում է իր երեխաներին, կնոջը և գիշերով փախչում է դեպի Թիֆլիս՝ բերդի պաշտպանությունը գյուղացիներին թողնելով: Անտեր բերդը չուտով առնվում է և շատ կանայք, չկամենալով թուրքերի ձեռքն ընկնել,

---

[202] Պատմում են նաև, որ Սաֆրազ բեկը Կ. Պոլսից անցել է Հնդկաստան, ուր ահագին կարողություն դիզելով, կտակել է իր ազգականներին:Ծան. Ս. Մելիք-Փարսադանյանի:

բերդի գագաթից վայր են գլորվում և իրենց արյունով ներկում քարերը, որի պատճառով և բերդը վերակոչվում է Կարմրաքար:

Այս ազետալի անցքի լուրը երբ հասնում է մելիք Փարսադանին, սա «ծնծում է ծնկները» ասելով. «Սաֆրազի խոսքերը ճշմարտացան, մելիք Նուբարը, հիրավի, բերդ պահող չէ եղել, ափսոս որ չլսեցի որդուս»:

Մի առ ժամանակից հետո, երբ Ջալալ-յալլուի թուրքերը թալանելով կռնատուն բերդի բնակիչներին հեռանում են, մելիք Նուբարը վերադառնում է իր երկիրը և սկսում է ավեր բերդը նորից շինել, շենացնել: Սակայն թուրքերի հետ ընդհարումը դարձյալ շարունակվում է. թուրքերը ամենաչնչին պատճառով անգամ սպանում, կողոպտում են խաղաղասեր հայերին: Այսպես մի օր մելիք Նուբարի կրտսեր եղբայր Հովհաննես բեկը երկու ձիավորով գնում է Ծովկը գյուղը (Շիկահողի մոտ) իր նշանածին տեսության: Սեխլար (այժմ Զինարլըղ) թրքաբնակ գյուղից անցնելիս Հովհաննես բեկը չի բարևում մի թուրքի, և սա առանց այլևայլության նրա հետևից արձակում է հրացանը և գետին գլորում:

Երկու ձիավորները փախչում են, գալիս Շիկահող և այս մասին հայտնում Մխիթար սպարապետին, որ այդ ժամանակ իր զորքով այդտեղ էր գտնվում. սա իսկույն մի հարյուր զինվոր Շահումի որդի Ստեփան իշխանի առաջնորդությամբ ուղարկում է Ռանջդարու ձորը՝ գյուղի ճանապարհը կտրելու, իսկ ինքը մնացած զորքով հարձակվում է Սեխլար գյուղի վրա, մոտ երեք հարյուր տուն բնակիչներին կոտորում, գյուղը կրակ տալիս և մեծ ավարով վերադառնում իր բանակը, որ գտնվում էր Պըռըվըթումբ գյուղի մոտ:

Պարզ է, որ Մխիթար սպարապետի այսպիսի խիստ վրեժխնդրությունը գրգռում է թուրքերին, որոնք առանց այս էլ շարունակ հալածում, կոտորում, կողոպտում էին հայերին: Այս բոլորի վրա ավելանում է նաև այն, որ լեզգիներն սկսում են ահագին խմբերով հարձակվել Ղարաբաղի վրա, ավերել ու կողոպտել: Այսքան թշնամիներին ընդդիմադրելու համար Ստեփանոս իշխանը խորհուրդ է տալիս մելիք Փարսադանին, որ հետ կանչի նոս իշխանը խորհուրդ է տալիս մելիք Փարսադանին, որ հետ կանչի Վրաստանից Դավիթ բեկին: Սակայն Մխիթար սպարապետը ընդդիմանում է, ասելով. «Լազգիները գալիս են՝ թող գան, ով տղամարդ է՝ թող անուն հանե: Կարիք չկա Դավիթ բեկին կանչելու»: Մելիք Փարսադանը ենթարկվում է Մխիթար սպարապետի ազդեցության և չի համաձայնում կանչելու: Ստեփանոս իշխանը տեսնելով, որ Մխիթար սպարապետը հետամուտ է միայն իր բազկի զորությունը ցույց տալու, և նրա պետքը չէ, որ երկիրն ավերվում է, քանի որ չեն միաբանում և ընդհանուր ուժով ընդդիմադրում թշնամուն, բազմաթիվ կեղծ կնիքներ է չինել տալիս Ղարաբաղի տանուտերների անուններով և դրանցով կնքելով մի խնդիր՝ ուղարկում վրաց վաղիին, որով խնդրում է, որ Դավիթ բեկին ուղարկի՝ լեզգիների հարձակման

առաջն առնելու: Այս նամակը տանում է Եղիա բեկ Մելիք-Փարսադանյանը Եկդաստա (այժմ Թխկուտ) գյուղացի Շահումի հետ:

Վրաց վալին տանալով խնդիրը՝ հարցնում է Դավիթ բեկին, թե կկամենա՞ր արդյոք գնալ: Սա ուրախությամբ հանձն է առնում, միայն խնդրում է, որ բացի իր վեց հայ զինվորից, թույլ տա իր հետ տանելու նաև վրացի Գեորգի իշխանին ու 34 հայ ու վրացի զինվորներ: Վալին թույլ է տալիս և Դավիթ բեկը Գեորգի իշխանի հետ, քառասուն զինվորով գալիս է դեպի Ղափան: Ուչթափի մոտ տեսնում է, որ զարաչորլու թուրքերն իրենց վրանները խփել են այս դաշտավայրում և անասուններն արածեցնում են Շնհերի և Խոտի արտերում: Երևկոյան դեմ Դավիթ բեկը իր քառասուն զինվորներով հարձակվում է սրանց վրա, չատերին կոտորում, և բոլոր ավարն առնում տանում Շնհեր գյուղը: Այս հաղթության լուրն իսկույն տարածվում է շրջակայքում և Ստեփանոս իշխանը Պըռըվաթումբում լսելով այս մասին՝ առաջարկում է Մխիթար սպարապետին գնալ, միանալ Դավիթ բեկի հետ: Բայց սա չի համաձայնում, ասելով, թե առանց մելիք Փարսադանի խորհրդի այդպիսի քայլ չի կարող անել: Հետևյալ օրը Մխիթար սպարապետը ուղևորվում է Հալիձոր՝ խորհրդակցելու մելիք Փարսադանի հետ, իսկ Ստեփանոս իշխանը 700 զինվորներից չորս հարյուրին իր հետ առած գալիս է Դավիթ բեկի մոտ:

Սա շատ սիրով ընդունում է նրան, որպես իր պատանեկության ընկեր, որի հետ միասին սովորել էին Տաթևի վանքում: Եվ երբ Ստեփանոսը հայտնում է, թե ինքն է կանչել նրան, տանուտերների կեղծ կնիքներ չինել տալով, Գեորգի իշխանը սաստիկ նեղանում է, թե ինչի՞ այդպիսի կեղծիք է գործել, իսկ Դավիթ բեկը հանդարտեցնում է, թե ի՞նչ անենք, արդեն կատարված է, «գուցե բարին այս էր»:

Մի քանի օր հետո թուրքաց Ջիվանշիր կոչված ցեղն ահագին բազմությամբ գալիս է Դավիթ բեկի վրա: Սա մոտ հինգ հարյուր զինվորներով հարձակվում է նրանց վրա և սաստիկ կոտորելով հաղթում ու ահագին ավար առած՝ կրկին իջնում Շնհեր:

Դավիթ բեկի հաղթությունից քաջալերված Տաթև գյուղի բնակիչները գալիս են սրա մոտ և դանդաղում իրենց մելիքի դեմ, ասելով որ նա սկզբներում շատ նեղել է իրենց և երբ իրենք ապստամբել են նրանից, նա փախել է Թավրիզ, ուր ընդունել է մահմեդական կրոնը, իր Դավիթ անունը փոխել Բաղրի, և վերահաստատվելով մելիքական կոչման մեջ, վերադարձել է և այժմ իրենց այն աստիճան նեղում է, որ պատրաստ են վառելու իրենց տները և կենդանի այրվելու:

Անմիջապես Դավիթ բեկը զորք է ուղարկում Տաթև, և սա ջարդում է Բաղր բեկի սակավաթիվ զորքը, նրան գերի է բռնում ու բերում Շնհեր՝ բեկի մոտ: Դավիթ բեկը նրան երեք օր ժամանակ է տալիս, որ ապաշխարի և

ապա Շնհերի անապատի դռան առջև կախել է տալիս: Ահագին բազմությունը չդիմապատելով այդ ուրացողին՝ չարունակ բղավում է. Լուսը Լուսավորչի հավատին, վայ ուրացող մարդին:

Այս դեպքից հետո Շնհեր, Խոտ, Յայճի, Սվարանց, Տանճատափ և Տաթև գյուղերը հնթարկվում են Դավիթ բեկին: Սակայն այսքան գյուղերի հպատակությունը բավական չհամարելով՝ Դավիթ բեկը մարդիկ է ուղարկում մելիք Փարսադանի և Մխիթար սպարապետի մոտ և խնդրում է, որ գան իր հետ միանան, ընդհանուր թշնամուն երկրից դուրս հանելու համար: Բայց մելիք Փարսադանը պատասխանում է, թե ես ինչի՞ պիտի գամ իմ եղբոր որդու մոտ, քանի որ երկիրն էլ, զորքն էլ իմն են: Դավիթ բեկը լսելով այս պատասխանը՝ անմիջապես հավաքում է Խոտի և Շնհերի բնակիչներից հարյուր հիսուն հոգի, և պատվիրում, որ մի պատրվակով գնան Հալիճոր և մելիք Փարսադանին ու Մխիթար սպարապետին բռնեն, բերեն իր մոտ: Սրանք գնում են և ձևացնելով, իբր թե գանգատվում են Դավիթ բեկից, բռնում են մելիք Փարսադանին, նրա փեսա Տեր Ավետիքին ու Մխիթար սպարապետին և բերում Տաթևի վանքը: Այստեղ է գալիս նաև Դավիթ բեկը, որ սրանց վրա սաստիկ բարկացած լինելով, առանց հետները մի բառ խոսելու՝ հրամայում է բանտարկել բոլորին: Ապա իր զորքերն առած անցնում է դեպի Քյուրալար գյուղը, որի պարսիկ բնակիչները նեղում էին տաթևացիներին: Դավիթ բեկը սրից անց է կացնում սրանց մի մասին, իսկ մյուս մասը գաղթեցնում է դեպի Պարսկաստան: Հետո իր բոլոր ուժերը հավաքելով գնում, պաշարում է Որոտնա բերդը:

Այս միջոցին մելիք Փարսադանը իր բանտարկության տեղից ծածկաբար մի նամակ է գրում իր խնամի Օհան Յուզբաշուն,[203] որ Նուխու Վարդաշեն գյուղի իշխանն էր, և խնդրում է, որ գա իրեն ազատի բանտից: Սա էլ 300 զինվորներով գալիս է Տաթևի վանքը, տեսնվում մելիք Փարսադանի հետ և երբ իմանում է բանտարկության պատճառը, նախատում է մելիքին, թե ինչի՞ չի միանում մի այդպիսի քաջ պաշտպանի հետ, ինչպիսին է Դավիթ բեկը: Ապա վեց զինվոր է դնում մելիքի հետ և ուղարկում է նրան Որոտնա վանքը, ուր այդ ժամանակ գտնվում էր Դավիթ բեկը, համոզելով որ հաշտվի նրա հետ և միացած ուժերով վանեն թշնամուն: Իսկ ինքը, Օհան Յուզբաշին, վանքի տավարը ավարելով՝ վերադառնում է Վարդաշեն:

Մելիք Փարսադանը վեց զինվորներով չդիմապատված մտնում է Որոտնա վանքը: Դավիթ բեկն այս անգամ էլ չի խոսում հետը և հրամայում է, որ տանեն մի սենյակի մեջ պահեն նրան: Նույն գիշերը հորդ անձրև է գալիս և Որոտնա բերդի պարսպի մի մասը քանդում: Դավիթ բեկն այստեղից ներս է մտնում, սպանում փաշին ու ջարդում օսմանցիների զորքը: Հաղթանա-

---

[203] Օհան Յուզբաշու մայրը մելիք Փարսադան Բ հորաքույրն է եղել:

կով վերադառնալով վանքը՝ Դավիթ բեկը մտնում է մելիք Փարսադանի սենյակը և ասում.

— Հորեղբայր, տեսնո՞ւմ ես, որքան օգտավետ է մեր հաշտությունը, ինչի՞ ավելի շուտ չեկար, չնորհակալ եմ Օհան Յուզբաշուց, որ թեպետ տավարս տարավ, բայց ձեզ այստեղ ուղարկեց, ձեր ոտը մեզ վրա եկավ և մենք հաղթեցինք:

Մելիք Փարսադանը փաթաթվում է նրա վզովը, համբուրում նրա ճակատը և օրհնում: Այսպիսով հաշտություն է կայանում հորեղբոր և եղբոր որդու մեջ, որոնք այնուհետև միասին և համերաշխ գործում են: Անմիջապես վերադառնում են Տաթևի վանքը և երեք օր շարունակ ուրախության հանդես կատարում: Ամեն կողմից հայ ղինվորներ գալիս են և մտնում սրանց դրոշակի տակ:

Դավիթ բեկը ավար առած ղենքերը բաժանում է հայ կամավորներին և սրանցից երեք հարյուրը հանձնում մելիք Փարսադանին, երեք հարյուրը Մխիթար սպարապետին, երեք հարյուր էլ՝ Տեր Ավետիքին, իսկ Ստեփանոսին թողնում է նրա արդեն ունեցած չորս հարյուր ղինվորը: Ապա սրանց բոլորի հետ արշավում է Զեյվի բերդի վրա, ուր իշխում էր Ասլամազ-դուլի խանը և որին պատկանում էին նաև Բաղաբերդը (Բաղակու-քար) և Ղալաարասին:

Մխիթար սպարապետը գնում է Գեղվա գետի ուղղությամբ, Ստեփան իշխանը Օխչա չայի ուղղությամբ, Տեր Ավետիքը Ղուրչուլու կողմից, իսկ ինքը, Դավիթ բեկը, գնում նստում է Թամաքեչու եկեղեցու դռանը: Պաշարումը տևում է երկու օր. խանի հարեմում լինում է մի հայ կին, որ դողանում է պարսպի դարպասի բանալին և մի հավատարիմ հայի ձեռքով պարսպից դուրս ձգում: Այս ժամանակ Մխիթար սպարապետը հարձակվում է վերին աշտարակի վրա և այն ալրում. հայ ղինվորներն էլ բաց են անում դարպասը և ներս խուժում, սկսում կոտորել պարսիկներին: Խանը ձի է նստում և սկսում է փախչել, սակայն Տեր Ավետիքը նկատում է նրան և հետևից ընկնում, բուզաճըղում բռնում է և հետ դարձնում: Ճանապարհին Ասլամազ-դուլի խանը հարցնում է Տեր Ավետիքին, թե ո՞ւր է տանում իրեն, և երբ իմանում է, որ Դավիթ բեկի մոտ է տանելու, ասում է. «Գնանք, Դավիթ բեկը ողորմած մարդ է. ինձ չի սպանիլ»: Այս որ լսում է Տեր Ավետիքը՝ այնպիսի ուժգնությամբ խփում է սուրը խանին, որ ձախ ուսից աջ կողքն է անցնում:

«Խան, քշիր ձիդ, Դավիթ բեկը ողորմած է»՝ հեգնում է Տեր Ավետիքը: Խանը, որ հարվածի սաստկությունից դեռևս ոչինչ չէր զգացել, քշում է ձին և «իսկույն նրա կեսը թըլմբալով վայր է գլորվում, ձին խրանում է և մյուս կեսն վրան փախչում, քարե քար տալիս»: Տեր Ավետիքը վերադառնում է Դավիթ բեկի մոտ և հայտնում նրան, որ խանին սպանել է:

— Ինչի՞ կինդանի չբերիր ինձ մոտ,- հարցնում է Դավիթ բեկը:

— Նրա համար որ բնավորությունդ գիտեի,- պատասխանում է Տեր Ավետիքը,- կնեղեիր, կերթար նորից զորք կհավաքեր և կգար մեզ վրա:

Այս ժամանակ բերդից վեց պատվավոր թուրքեր ներկայանում են Դավիթ բեկին և հայտնելով հպատակություն՝ խնդրում են չկոտորել իրենց: Դավիթ բեկն իսկույն ձի է նստում, գնում նայում է բերդը, և հրամայում, որ դադարեցնեն կոտորածը: Միևնույն ժամանակ խոստով պատվիրում է թուրքերին, որ երեք օրվա ընթացքում գաղթեն, ապա թե ոչ բոլորին էլ կկոտորեն:

Այս փառավոր հաղթությունից հետո Դավիթ բեկը գնում է Մեղրի, անցնում Օրդուբադ և ապա Ագուլիս: Ամեն տեղ հայերը ուրախությամբ սրա առաջն են գալիս և հայտնում իրենց հպատակությունը: Նույնիսկ Ագուլիսի բնակիչները, որ երկու կուսակցության էին բաժանված՝ պարսկական և տաճկական՝ դարձյալ հպատակում են Դավիթ բեկին: Բայց և այնպես՝ Դավիթ բեկը ցանկանում է գլխատել տալ տաճկական կուսակցության պարագլուխ մելիք Մուսուն, սակայն մելիք Փարսադանը միջնորդում է, հայ է, մեղք է, կարելի է խրատել նրան ու միշտ կուսակից պահել: Դավիթ բեկը հարգում է մելիքի խնդիրը:

Հենց այս ժամանակներում տաճիկ երեք փաշաները միացյալ զորքով գալիս են Դավիթ բեկի վրա և Վանանդ գյուղի դաշտում ճակատում: Դավիթ բեկը հանկարծակի հարձակվում է սրանց վրա, երկու փաշային սպանում, իսկ երրորդին փախցնում: Այս հաղթության լուրը որ հասնում է Թահմազ շահին, սա մի հրովարտակով Դավիթ բեկին այս կողմերի վրա թագավոր է հաստատում և դրամ կտրելու իրավունք տալիս: Դավիթը սիրով ընդունում է շահի հրովարտակը, հաստատվում Հալիճորի ամրոցում, և սկսում դրամ կտրել, որի մի երեսին դրոշմում է Թահմազ շահի անունը, իսկ մյուսում՝ իրենը՝ այսպես՝ «Քրիստոսի ծառա Դավիթ»:

Մի տարուց հետո մի քանի փաշաներ նորից գալիս են Դավթի վրա: Սա անմիջապես իմաց է տալիս Թահմազ շահին և վերջինս երեք խաների հրամայում է գնալ օգնելու Դավթին: Պատերազմը տեղի է ունենում դարձյալ Վանանդի ընդարձակ դաշտում: Օսմանցիների զորքը 8000 ավելի է լինում, սակայն Դավիթը հաղթում է սրանց և փախցնում: Պատերազմը հաջողությամբ վերջացնելուց հետո Դավիթ բեկը հրամայում է բռնել խաներին և սպանել, որովհետև նկատած է լինում, որ սրանք ուզում էին իրեն դավաճանել և օսմանցիներին օգնել: Խաներից երկուսին սպանում են, սակայն երրորդը փախչում է Պարսկաստան: Դավիթը գրում է Թահմազ շահին այս խաների դավաճանության մասին և հայտնում, որ ինքը երկուսին սպանել է տվել, իսկ մեկը փախել է: Շահն այդ իմանալով, անմիջապես բռնել է տալիս փախչող խանին և հրամայում գլխատել:

Դավիթը վերադառնում է Հալիճոր և մի առ ժամանակ պատրաստություն տեսնելուց հետո հարձակվում է Նախիջևանի խանի վրա, որովհետև վերջինս իմաց չէր տվել իրեն օսմանցիների արշավանքի մասին և թույլ էր տվել նրանց անցնելու իր երկրով: Պատերազմը բավական երկար է տևում և հայերից բավականաչափ մարդիկ կոտորվում են: Դավիթն ստիպված է լինում հետ քաշվել, նորից պատրաստվելու, սակայն երբ կամենում է վերանորոգել պատերազմը, մի քանի մարդիկ միջնորդում են և հաշտեցնում նրան խանի հետ այն պայմանով, որ Ապրակունիսի ս. Կարապետ վանքից արևմուտք ընկնող երկիրն ենթարկվի խանին, իսկ արևելյան կողմը տարածվողը՝ Դավթին: Ապրակունիսի սևռը ձգվում է դեպի Նորաշենի գլխի Սմբատաբերդը և այնտեղից բարձրանում Նախիջևանի հյուսիսային կողմի սարը, այնպես որ Դարալագյազն ընկնում էր Դավթին: Այստեղից սահմանն անցնում էր մինչև Ղարաղշլաղի հյուսիսային կողմը բարձրացող լեռը, անցնում Սաղսաղանի սարը և Դիպափայտը:

Երբ Դավթին հարցրել են, թե ինչի՞ Ղարաբաղին էլ չի տիրում, ասել է, թե ի՞նչ կարիք կա, չէ՞ որ նա հայ մելիքների իշխանության ներքո է գտնվում:

Այսպես Դավիթը մաքրելով երկիրն օսմանցիներից և մասամբ պարսիկներից՝ սկսում է խաղաղությամբ կառավարել, սակայն այս խաղաղությունը երկար չի տևում, որովհետև Դավթի վերադարձի վեցերորդ տարին օսմանցիների մի ահագին բանակ միացած Նախիջևանի խանի զորքերի հետ գալիս են Դավթի վրա: Այս ահագին բանակին, որ 200,000 զինվորներից ավելին է եղել, միացած է լինում նաև մի ահագին խաժամուժ՝ ավարառության օգտվելու հուսով: Երբ այս ահռելի բանակը հասնում է Ուղուրչայի մոտ, Դավիթը նոր է իմանում այդ մասին և անմիջապես խորհուրդ է կազմում: Խորհրդի ժամանակ Տեր Ավետիքն այն միաքն է հայտնում, թե եթե նույնիսկ խոնարհվեն ու հպատակություն հայտնելով հաշտություն խնդրեն, դարձյալ օսմանցիք գալու՝ կոտորելու ու ավերելու են, ուստի լավ է կռվել, կամ հաղթել և կամ պատվով մեռնել: Բոլորը համաձայնում են նրա հետ: Առավոտյան վաղ Տեր Ավետիքը պատարագ է մատուցանում, բոլոր զինվորներին հաղորդում. իսկ կույսերն անընդհատ աղոթում են, եկեղեցու դանգակները շարունակ խփելով Աստծուց օգնություն հայցում: Ապա մի քանի կտրիճներ գնում են և Հալիճորի առաջ, Ուղուրչայի վրա ձգված կամուրջը քանդում, որպեսզի թշնամիները չկարողանան անցնել: Սակայն օսմանցիների բանակի մեջ եղող նախիջևանցի հայերը գտնում են դեպից անցնելու ծանծաղ տեղ ու ցույց տալիս զորքին, որ անցնում է և պաշարում բերդը:

Օսմանցիների զորքը երեք մասի բաժանված, բաբաններով աշխատում էր քանդել բերդի ամուր պարիսպները, իսկ հայ քաջերը, որոնք թվով մի-

միայն 300 էին, ներսից Հրացան արձակելով վայր էին գլորում մոտեցողներին: Կռվի ամենատաք ժամանակ Մխիթարը դուրս է գալիս բերդի գաղտնի անցքից, հարձակվում առաջին խմբի վրա, չփոթություն ձգում նրա մեջ և սաստիկ կոտորած տալով փախցնում. ապա հարձակվում է երկրորդ խմբի վրա: Այս ժամանակ Տեր-Ավետիքը, Ստեփան իշխանը և մելիք Փարսադանը ևս իրենց 300 զինվորներով դուրս են գալիս բերդից և հարձակվում օսմանցիների վրա, չատերին կոտորում, չատերին էլ փախցնելով Օխչի-չայը ձգում՝ խեղդում: Զորքի մնացորդն ահագին խաժամուժի հետ սկսում է փախչել: Գիշերը վրա է հասնում և Դավթի զինվորները վերադառնում են Հալիճոր հանգստանալու: Դավթին ասում է Մխիթարին, թե բավական չէ, որ հաղթեցինք ու փախցրինք թշնամուն, պետք է նաև հետևել և կոտորել, որ չզորանան և նորից գան մեզ վրա: Մխիթարը պատասխանում է, թե բավական է, հոգնած եմ: Դու հոգնած ես, ես կերթամ, ասում է Տեր Ավետիքը: Բայց երբ առավոտյան դուրս է գալիս գնալու, տեսնում է, որ Մխիթար սպարապետն ու Ստեփան իշխանն էլ հետևում են իրեն՝ չկամենալով մենակ թողնել իրեն այս վտանգալից արշավանքում: Սրանք գնում տեսնում են, որ օսմանցոց զորքերը ցրված Մեղրի գետի ափերին հանգստանում են: Իսկույն Մխիթարի խորհրդով մի քանի տասնյակ հոգի գնում են Մեղրի, մեղրեցիների հագուստ հագնում և գալիս ճանապարհի մոտերքն սպասում: Օսմանցիք փոքրիկ խմբերով գալիս են Մեղրի, սրանք հարձակվում են նրանց վրա ու կոտորում: Վերջը մի քանի զինվոր կարողանում են փախչել և այդ մասին լուր տանել օսմանցոց զորքին, և սա փոխանակ մաս-մաս, բոլորը միասին գալիս անցնում է Մեղրու Փոքր թաղը: Այս ժամանակ Տեր-Ավետիքը կարճվան գյուղի մոտով գալիս, կտրում է Ուզունբանա կիրճը, իսկ մնացած հայերը Արաքսի ափերով գալիս շրջապատում են օսմանցիներին: Սկսվում է մի սոսկալի կոտորած, օսմանցիներից չատերը կոտորվում են, չատերն էլ Արաքսն ընկնում խեղդվում: Սրանց առաջնորդ փաշաներից մինը փախչում է մի թիփ տակ թաք է կենում: Տեր Ավետիքը հարձակվում է վերան ասելով. «Քո՞ւը քեզ պիտի պաշտպանի» ու խփում՝ սպանում է: Սակայն պատերազմը սրանով չի ավարտվում, որովհետև փաշան հավաքում է իր զորքերի մնացորդը և կրկին գալիս պաշարում Հալիճորի բերդը: Դավթին հրամայում է կես գիշերին մատակ ձիերի մի ահագին երամակ քշել դեպի օսմանցիների ձիերի կանգնած տեղը: Մի ահագին աղմուկ է բարձրանում, օսմանցիները կարծում են, թե հայերը հարձակվել են իրենց վրա՝ սկսում են մեջ միմյանց կոտորել, չատերն էլ զոհ են գնում կատաղած ձիերի աքացիներին և փաշան ստիպված է լինում հեռանալու:

Այնուհետև Դավթին սկսում է խաղաղ կերպով կառավարել իր երկիրը: Երկու տարի հետո նա վեց ձիավորով շրջում է իր երկիրը, մտնում Մեղրի, Օրդուբադ, Ագուլիս և մի քանի օր մնում ս. Թովմայի վանքում: Այստեղ

մի առավօտ մելիք Փարսադանը, որ Դավթի հետ է լինում, նկատում է, որ ագուլեցի մելիք Մուսին, նա, որի կյանքը ինքը ազատել էր բարեխոսութեյամբ, դարան է մտել և հրացանը ձեռին աչխատում է սպանել Դավթին: Մելիքն այս նկատելով բղավում է, թե Մուսի, չե՞ս ամաչում, միտդ չի՞, որ մենք կյանքդ բաչխեցինք, այդ ի՞նչ ես ուզում անել: Սակայն Մուսին, փոխանակ պատասխանելու, հրացանն արձակում է և գետին տապալում մելիք Փարսադանին, ինքն անմիջապես վախչում: Դավիթն ընկնում է նրա հետևից, բայց չի կարողանում դանել. Արմնի ձորում[204] տեսնում է Մուսու ահագին հոտն ու նախիրը և քչել է տալիս դեպի Հալիձոր: Ապա վերադառնում է Ագուլիս և մեծ պատվով թաղում է մելիք Փարսադանին ս. Թովմայի վանքից արևմուտք, Վերին-գետի գերեզմանատունում, ուր մինչև այժմ մնում է գերեզմանաքարը՝ կրելով հետևյալ տապանագիրը.

Այս է տապան Հալիձորեցի Մէլիք Փարսադանին որ է որդի Պալասանի: Թվին ՌՃՀԳ (1724 թ.):

Այս տխուր անցքից հետո Դավիթը վերադառնում է Հալիձոր: Կարճ ժամանակից իմացվում է, որ Մուսին փախել է Վարդաշեն, Օհան Յուզբաչու մոտ. իսկույն Դավթի պատվերով Ստեփան իշխանը նամակ է գրում Օհան Յուզբաչուն, որ կամ սպանի այդ դավաճանին և գլուխը ուղարկի իրեն և կամ կենդանի բռնի ու իրեն հանձնի, թե չէ, սպառնում է, որ Դավիթը, այնքան զորքով կգամ քո վրա, որ երկրիդ հողը ձիերիս ոտների տակ կերթա, մի կարծիր, թե խնամի լինելով կխնայեմ: Օհան Յուզբաչին էլ պատասխանում է, թե բռնեցի, ձգեցի Վարդաշենի լճակի մեջ: Այսպիսի վախճան է ունենում այդ դավաճանը, որ նույնիսկ ժառանգների ասելով, չափազանց խիստ և դաժան մարդ է եղել, այնպես, որ եթե մեկը նրա տան մոտով անցնելիս փոքր-ինչ աղմուկ բարձրացներ, նույնիսկ եթե փոքր-ինչ բարձր ձայնով հազար, նա դուրս էր գալիս և սաստիկ դանակոծում նրան: Նա թողել է միայն մի աղջիկ, Անթառամ անունով, որ ամուսնացել է Ագուլիսի իշխաններից մեկի՝ մելիք Ադամի որդի Ստեփանի հետ, որից մնացել են ժառանգներ:[205]

---

[204] Գտնվում է ս. Աստվածածին սրբավայրից մի երկու վերստ դեպի հյուսիս-արևելք:

[205] Մելիք Մուսու դավաճանության մասին պատմում են նաև այս կերպ. մելիք Մուսին, լսելով, որ Դավիթ բեկը գալիս է Ագուլիսին էլ տիրելու, ապաստանում է ս. Թովմայի վանքի պարսպի մեջ՝ նրան ընդդիմադրելու: Դավիթ բեկի հանճարարության մելիք Փարսադանը բարձրանում է պարսպի վրա և այտեղից սկսում համոզել մելիք Մուսուն՝ անձնատուր լինելու: Սակայն մելիք Մուսին նրան պատասխանում է հրացանի մի գնդակով, որ վայր է գլորում մելիքին: Այս տեսնելով՝ Դավիթ բեկը հրամայում է իր զորքին իսկույն քանդել վանքի պարիսպը և ներս մտնել: Պարիսպը քանդում են, բայց մելիք Մուսին յուրայիններով փակվում է ս. Թովմայի վանքում: Դավիթ բեկը, սաստիկ բարկացած լինելով, հրամայում է վանքի պատը ևս քանդել և սպանել մելիք Մուսուն: Իսկույն քանդում են հարավային պատի մի մասը, բռնում մելիք Մուսուն և դուրս հանում, սպանում: Ծան. Մանուչար-բեկ Մելիք-Ստեփանյանի:

Մի այսպիսի դավաճանի տխուր հիշատակը նույնպես պահպանվել է Ղարաբաղի հայերի մեջ, դա մելիք Փրանդյուլն է, Քյուփարա վիճակի մելիքը, որ իշխում էր Արծվանիկ, Ջաւինի, Ըրկենանց, Սևաքար գյուղերի վրա: Սա սաստիկ վավաշոտ մարդ է եղել և, չնայելով, որ հակառակ քրիստոնեական միակնութեան, արդեն երկու կին առած է եղել, կնութեան է խնդրել նաև Բարկուշատի մելիք Թորոս իշխանի Ծաղիկ անունով միակ աղջկան: Սակայն մերժում և նույնիսկ հանդիմանութիւն է ստացել, թե մի՞թե թուրք է, որ բազմակնութեան է դիմում:

Թորոս իշխանը պաղթած է եղել Սողանլուից և նախ հաստատվել է Թորոսաձոր ասված տեղում, որ գտնվում է Եմազլու գյուղի հանդիպ և ձգվում է Խդրանցից մինչև Բարկուշատի գետը: Ապա կռվելով եմազլուեցի Մամատ-աղայի հետ, սպանել է նրան և տեղափոխվել Ջավունդուրի Խոր-ձոր կոչված տեղը և հետո այստեղից Եղվարդ գյուղը, որտեղից իշխում էր Ագարակ, Խդրանց, Վժանից, Ջեյվա և այժմ ավերակ Գեղարքունի, Ղարաբաբա, Գըչըրխանա և այլ գյուղերի վրա:

Թորոս իշխանը բարեկամական հարաբերութիւն ուներ մելիք Փարսադան Բ հետ: Մի օր այս վերջինս ուղարկում է Թորոս իշխանին Քարամ անունով մի վրացի իշխան, որը փախել էր վրաց Թագավորից և եկել ապավինել իրեն: Մելիք Փարսադանը երկյուղ կրելով, թե դուցե վրաց Թագավորը լսի, թե ինքը ապաստան է տվել նրանից փախած մի իշխանի, և վրեժ լուծի՝ հալածելով իր մոտ ծառայութեան մտած Դավիթ բեկին (մելիք Փարսադանի եղբոր որդուն), չի կամենում իր մոտ պահել այս վախճատական վրացուն և ուղարկում է Թորոս իշխանի մոտ: Սա դրան հարկահանի պաշտոն է տալիս և, երբ վերջինս իր հավատարմութեամբ ու քաջութեամբ սիրելի է դառնում, իր միակ դուստր Ծաղիկը տալիս է նրան կնութեան:

Այս պատճառով մելիք Փրանդյուլը սաստիկ ոխակալում է, որ Թորոս իշխանը իրեն, հայ իշխանին թողած, մի վրացի փախստականի տվեց իր աղջկան, ուստի հրամայում է իր չորս գյուղերի բնակիչներին, որ Կապից (Քյուփարայի և Բարկուշատի սահմանը) ներքև աղջիկ չտան կամ առնեն: Միևնույն ժամանակ դրդռում է Բարկուշատի Խանլըխալար գյուղում նստող Ջաթալի խանին, որ հարձակվի Թորոս իշխանի վրա, խոստանալով, որ ինքը սկզբում կմիանա Թորոսի հետ, բայց հետո կդավաճանի նրան և կսպանի: Ջաթալի խանը համաձայնում է, սակայն սրա ժողովուրդը երկյուղ կրելով, որ սա կարող է հաղթվել, պատրաստվում է դաղթելու Պարսկաստան, որպեսզի ապահովված լինի Թորոս իշխանի սրից:

Սակայն Ջաթալի խանը կարողանում է համոզել ժողովրդին, որ գնան, սպասեն Խուդափերինի կամուրջի մոտ, եթե հաղթութիւնը ինքը տանի, այն ժամանակ կայրի Եղվարդի հարդով լի մարագները, նրանք կարող են տեսնել երկինք բարձրացող բոցերը և հետ դառնալ, իսկ եթե պարտութիւն

կրի՝ ժամանակ կուներևան մինչև Թորոս իշխանի հարձակվելը՝ սահմանն անցնելու:

Ապա Ցաթալի խանը ահագին զորքով գալիս է Թորոս իշխանի վրա և բանակ դնում եղվարդից ներքև՝ Թորսաձորում:

Մելիք Փրանգյուլը մարդ է ուղարկում Թորոս իշխանի մոտ և ասում թե, թեպետ դու աղջիկդ չտվիր ինձ, սակայն և այնպես՝ ես միանում եմ քեզ հետ մեր ընդհանուր թշնամուն վանելու, որպեսզի աղջկանիցդ զրկվելուցս հետո՝ երկրիցս էլ չզրկվեմ: Թորոս իշխանը սիրով ընդունում է նրա օգնությունը, միայն պահանջում է, որ նա առանձին կանգնած կռվի:

Թորոսի եղբայր Փանին, աստղաբաշխ լինելով, նայում է աստղերին և դուշակում, որ այդ օրը չար է, ուստի և խորհուրդ է տալիս եղբորը, որ դուրս չգա պատերազմի, սպասի մի քանի օր, սակայն Թորոս իշխանը չի լսում և գնում է:

Սկսվում է մի կատաղի կռիվ: Թորոս իշխանն իր փեսա մելիք Քարամի հետ հարձակվում է Ցաթալի խանի վրա, սաստիկ ջարդ տալիս և փախցնում, շարունակ հետևելով: Այս ժամանակ մելիք Փրանգյուլը մարդ է ուղարկում Ցաթալի խանի մոտ, թե հետ դարձիր, չրջապատենք Թորոսին և կոտորենք: Խանը հետ է դառնում, և սա առաջից՝ մելիք Փրանգյուլը հետևից սկսում են կոտորել Թորոս իշխանի զորքը: Թորոսը երկու կրակի մեջ ընկնելով դլուխը կորցնում է: Այս ժամանակ Ցաթալի խանը սրի մի հարված է տալիս նրա բերանին, որովհետև մելիք Փրանգյուլը նրան ասել էր, թե Թորոս իշխանը դրահ է հագնում, հետևապես և միայն բերանից կարելի է վիրավորել նրան:[206]

Թորոսը ձիուց վայր է գլորվում, և նրա դիակի շուրջը տեղի է ունենում մի կատաղի, արյունահեղ կռիվ: Թորոսի զինվորները վրեժխնդրության ոգով լցված քաջաբար կռվում են, վիրավորում Ցաթալի խանին ու սպանում նրա եղբայր Աղասի խանին: Ի վերջո վերահաս դիշերը վերջ է դնում կռվին: Երկու կողմն էլ սկսում են հավաքել վիրավորներին ու մեռածներին այդ կռվի վայրից, որ վերակոչվում է Նարդեսների դաշտ, որովհետև հայ քաջերի այդտեղ թափված արյան կաթիլներից սկսում են նարգեսներ ու շուշաններ ծլիլ ու ծաղկիլ:[207]

Նույն գիշերը Ցաթալի խանի զինվորներից մի խումբ հարձակվում է Եղվարդ գյուղի վրա և մարագները կրակ տալիս, որպեսզի Խուդափերինի կամուրջի մոտ պատերազմի ելքին սպասող Ցաթալի խանի թուրքերը կրա-

---

206 Մի ուրիշ ավանդություն ասում է, թե կռվի խառնակ ժամանակ Թորոսը լսում է մի ձայն, որ թուրքերեն ասում էր. «Թորոսին մի խփեք, Թորոսին մի խփեք»: Եվ երբ Թորոսը հետաքրքրվելով դարձրել է գլուխը դեպի այդ ձայնը՝ սրի մի ծանր հարված են տվել նրա վզին և հետո հարձակվել վրան, սպանել:

207 Րաֆֆի, Դաւիթ-բէկ, գ. Գ, եր. 536:

կի բոցերը տեսնեն և սրանով իմանան վերջինիս հաղթությունն ու վերադառնան իրենց տեղերը: Մի քանի ղինվորներ էլ հարձակվում են Թորոս իշխանի լաո վրա, սպանում մեծ որդուն և գերում կրտսերին:[208] Շշված հոր, Թորոս իշխանի մարմինը գյուղացիները բերում են Եղվարդ և եկեղեցու մոտ թաղում:

Դավաճան Փրանգյուլը[209] գրեթե գրկած բերում է Ջաթալի խանին Արծվանիկ, ամեն կերպ խնամում նրան և միանգամայն դուր գալու համար ընդունում է մահմեդականություն և ստիպում իր որդիներին նույնն անելու: Ավագ որդի Ռուստամը հետևում է հորը, բայց կրտսերը՝ ոչ: Մելիք Փրանգյուլը ասում է Ջաթալի խանին, թե քանի որ ես մահմեդական եմ, պետք է, որ իմ որդիս էլ մահմեդական լինի, այլապես նա իմ ժառանգը չի կարող համարվել: Ջաթալի խանը ինքն էլ սկսում է համոզել այդ կրտսեր որդի Դավթին, որ ընդունի մահմեդականություն, և մեծ պարգևներ է խոստանում: Բայց երբ վերջինս, այդ 18-19 տարեկան երիտասարդը, հաստատապես մերժում է նրա առաջարկը, Ջաթալի խանը սաստիկ բարկանում է վրան և հրամայում է բանտարկել և ամենայն կերպ ստիպել ուրացության, և եթե նա դարձյալ համառի՝ ձգել կրակի մեջ և կենդանի այրել:

---

[208] Թորոս իշխանի կրտսեր որդի Հեթումին իր խնամքի տակ է առնում Սոֆուլար գյուղացի սեյիդ Մահմեդը: Հեթումը մեծանում է և Սեյիդի ջրաղացպանը դառնում: Նրան թուրքերը մեյիդ Մահմեդը: Հեթումը մեծանում է և Սեյիդի ջրաղացպանը դառնում: Նրան թուրքերը մեծ ամուսնանում է Դատի գստեր՝ Մարջանի հետ և նույն գյուղի տանուտեր ընտրվում: Նա ունենում է հինգ որդի, որոնցից երկրորդը՝ Բարամը, անսովոր ուժի տեր է լինում, այնպես որ կարողանում է երկու ձեռով պայտը երկու կտոր անել: Ավելի սարսափելի է լինում նրա ձայնը, որ «յոթ սարից այն կողմը» լսվում է: Նա նաև չափազանց հմուտ որսորդ է լինում: Նրա մասին պատմում են, թե հարյուրից ավելի մարդ և 96 հատ գայլ է սպանել: Այս գայլերից մին

Խանի կանանցից մինը՝ Տաթևի մելիք Բաղրու (Դավթի) դուստր Սիրուն նանը (Սորուհան), լսելով այս որոշումը, իր երեսանց մահմեդականություն ընդունած հայ ներքինու ձեռքով հանել է տալիս Դավթին բանտից և ուխտ բիալ[210] տալով նրան, ասում, թե վաղը քեզ կրակի մեջ այրելու են, վեր կաց փախիր, ուր քրիստոնեություն կա: Սա էլ թողնում, փախչում է Ղարաբաղ:

Հետևյալ օրը Ջաթալի խանը իմանում է, որ Սիրուն նանն է փախցրել Դավթին, հարցնում է նրան թե ի՞նչ է արել: Սա էլ պատասխանում է, թե ուղարկել է այնտեղ, ուր ուրացության ստիպունք չկան: Ջաթալի խանը սաստիկ բարկանում է և ասում.

— Այդպես հանդուգն խոսում ես, որպեսզի ես քեզ սպանեմ, սակայն քո հայրը քեզ ինձ կին է տվել, պետք է ապրես, եթե սրտով թուրք լինես՝ կինս ես, եթե ոչ՝ գերիս:

Սիրուն նանը պատասխանում է, թե դու էլ որ ուզենաս, որ ես թուրք դառնամ, հայի դյուղում չես պահիլ ինձ, որ առավոտ երեկո կոչնակի ձայնը լսեմ:

Խանը մտածում է, որ իրավացի է Սիրուն նանի ասածը, բարձրանում է կարմիր վանքի մոտ վրան խփում, բնակվում, հետո էլ վանքը քանդում և նրա սրբատաշ քարերով իր համար ապարանք պատրաստում: Սակայն Սիրուն նանը այդ ասելով ցանկացել էր միայն Ջաթալի խանին հանել Արծվանիկ դյուղից, որպեսզի հայ դյուղացիներին չատ նեղություն չտա:

Թորոս իշխանի մահվան լուրը երբ հասնում է Դավթե բեկին, սա հրամայում է Մխիթար սպարապետին և Պալի զորավարին, որ գնան հարձակվեն Ջաթալի խանի վրա և Թորոս իշխանի արյան վրեժը լուծեն: Սրանք մոտենում են կարմիր վանքին և այտեղ գտնելով Ջաթալի խանի բազմաթիվ հոտերն ու նախիրները, քշում են դեպի Հալիձոր, սակայն Ջաթալի խանը ընկնում է նրանց հետևից և Խոտանան դյուղի մոտ կռվի բռնվում: Պալի զորավորը քաջությամբ կռվում է և վզի վրա սրի մի հարված ընդունելով՝ ձիուց վայր գլորվում: Ստեփան իշխանն էլ դերի է ընկնում: Մխիթարը փոքրաթիվ գնդով վերադառնում է Հալիձոր: Դավթեը սաստիկ բարկանում է սրա վրա և կամենում է գլխատել տալ նրան, որովհետև նա իրենից նեղացած լինելով անսիրտ է պատերազմել, սակայն մյուս իշխանները միջնորդում են և փոխել տալիս որոշումը: Բայց և այնպես՝ Դավթեը հրամայում է մի լավ թակել Մխիթար սպարապետին:

Պալի զորապետը կռվի դաշտում սաացած վերքից չի մեռնում, այլ երբ տեսնում է, որ դիշերը բոլորը հեռացան, հանում է թաշկինակը՝ կապում վզին, որ երկու մատ խորությամբ կտրված էր և երկու ձեռքով գլուխը

---

210 Յուրաքանչյուր բիալը արժե 35 կ.:

բռնած՝ գալիս հասնում է Հալիճոր երեք օրից հետո:[211] Բոլորը սաստիկ ուրախանում են և խնամք տանելով բժշկում: Սակայն կտրված տեղում փոս է մնում, ուր փոշին նստելով նեղություն էր պատճառում. ուստի և հաճախ Պալին, երբ եկեղեցու մոտ կամ շինամիջում նստած ղրույց էր անում, կանչում էր երեխաներին, որ հալի փետուրներով մաքրեն այդ կտրված տեղի փոշին:

Ստեփաննոս իշխանը, դերի տարվելով Բարիուշատ, մի թուրքի միջոցով ազատվում է և ծպտված, վեց հոգով գալիս Արծվանիկ, իջնում մի գյուղացու տուն: Մի քանի գյուղացիներ լսանում են նրա ով լինելը, հավաքվում են մոտը և մի լավ հյուրասիրում: Ստեփան իշխանը հարցնում է, թե ո՞ւր է մելիք Փրանգյուլը, ասում են Կարմիր վանքումն է, խանի մոտ: Հետո հարցնում է, թե այս երեկո վերադառնալո՞ւ է, պատասխանում են, թե այո: Հետո դուրս է գալիս գյուղից և բարձրանում դեպի Կարմիր վանքը, և նստում այն ծառի տակ, որ հենց հիմա էլ միայնակ կանգնած է ճանապարհի կողքին: Երախտագետ ժողովուրդը խնամքով պահպանում է դրան, որ իր հովանու տակ հանդիստ է տվել Ստեփան իշխանին:

Մի քիչ հետո մելիք Փրանգյուլը ջորին նստած իջնում է վանքից. Ստեփան իշխանը արձակում է հրացանը և սպանում դավաճան մելիքին: Ջորին խրտնում է և փախչում՝ բավական տեղ քաշ տալով վայր ընկած մելիքին, որի ոտը մնացել էր ասպանդակի մեջ: Հետո Ստեփան իշխանը հրամայում է իր ծառաներին, որ քաշ տան ձգեն մելիքի մարմինը ներքին ձորը և գնան ասեն գյուղացիներին, թե եկեք տարեք ձեր մելիքին, ձեր դատաստանը անե: Միևնույն ժամանակ Ստեփան իշխանի ծառաները բռնել էին Մելիք Փրանգյուլին հետևող դղրին, պառկեցրել, գլուխը դրել մի քարի վրա և մի ահագին քար ձգելով վրան ջախջախել էին:

Նույն պիչերը մելիք Փրանգյուլի Ռուստամ որդին տեսնելով որ հայրը չի վերադառնում՝ ասում է մորը. «Գյուղացիներից մինն ասաց, թե այսօր-վա եկողը Ստեփան իշխանն է, մի դուցե նա եկած լինի հորս սպանելու, նա առանց նպատակի չէր գա այստեղ»: Մայրը պատասխանում է, թե ինչ լավ արած կլինի, այս ի՞նչ է նրա արածը: Այս խոսքի վրա տեսնում են, որ ջորին միայնակ վերադարձավ: Առավոտյան վաղ գյուղացիները գնում որոնում են մելիք Փրանգյուլի մարմինը և գտնում բերում են գյուղ: Սրա ազգականներից մի քանիսը կամենում են հայոց դերեզմանատանը թաղել հայկական ծիսակատարությամբ, պատճառաբանելով, թե նա ծածուկ քրիստոնյա է մնացել, խնճորի մեջ դրած սրբություն է առել, սակայն նրա ավագ որդի Ռուստամը ընդդիմադրում է՝ ասելով, թե սուտ է, նա կատարե-

---

[211] Պալի ղորավարին Հալիճոր է բերում Ինժիվար գյուղացի Ռուստամ բեկը, որ թեպետ թուրքերի հետ էր միացած, սակայն Պալի ղորավարից երբեմն բարիք ստացած լինելով՝ երախտահատույց է լինում: Ման. Ս.Մ.Փ.:

լսելես ուրացել է Հայի Հավատը, մորս մի ամսից ավելի բանտարկել է, որպեսզի ստիպի ուրացության, եղբորս կորստյան պատճառ է եղել, իմ մոտ էլ միշտ յասաղուլ էր դնում, որ Հսկի վրաս՝ երեսս դեպի Հարավ դարձրած աղոթեմ, չէ, նա Հայ քրիստոնյա չի մնացել, նա խաչված գերեզմանի արժանի չէ: Ուստի և նրան թաղում են ընդհանուր գերեզմանատնից 0,5 վերստ հեռու, ճանապարհի կողքին: Եվ այնուհետև մինչև այժմ ամեն մի անցորդ մոտենում է այդ անարդ չիրխմին և թքում վրան:

Մի առ ժամանակից հետո մելիք Քարամը գալիս է Արծվանիկ գյուղը և կամենում է հանել մելիք Փրանդյուլի ոսկորները և շների առաջը ձգել, սակայն գյուղացիներն ասում են, թե գերեզմանատնից հեռու ենք գոռել, մեկ էլ չան հոտը վեր մի հանիր:

Ստեփան իշխանը, մելիք Փրանդյուլին սպանելուց հետո, վերադառնում է Հալիձոր, ուր շատ սիրով ընդունվում է Դավիթ բեկից: Կարճ միջոցից դուժիկան է հասնում, թե Օրդուբադի կողմից թուրքերը ահագին խմբով հարձակվել են կալերեցի Պապ զորավարի վրա և սա փոխանակ կռվելու, նրանց բազմությունից վախեցած՝ փախել է: Դավիթ բեկն իսկույն Ստեփան իշխանի հետ բավական մեծ զորքով գնում է Տաշտոն, մինչև ուր եկել հասել էին թուրքերի հրոսակախմբերը: Սրանք, լսելով Դավիթ բեկի գալը, անկանոն կերպով փախչում են այս ու այն կողմ: Դավիթն այստեղ սպասում է, որ Պապ զորավարը գա իր մոտ, սակայն սա չի համարձակվում ներկայանալու և մնում է Կալեր գյուղում: Դավիթն ինքն է գալիս Կալեր, հրամայում բռնել Պապին և գլխատել, որ փոխանակ քաջաբար կռվելու և նույնիսկ մեռնելու, կանացիաբար փախել էր և գլուխն ազատել: Ապա Պապի փոխարեն կարգում է Ստեփան իշխանին և ինքը վերադառնում Հալիձոր:

Մի առ ժամանակից հետո Դավիթ բեկը Հալիձորում հիվանդանում է և մեռնում, ընդամենը ինը տարի երկիրը կառավարելուց հետո: Նրա մահը շատ մեծ վիշտ է պատճառում բոլոր զարաբաղցիներին: Տաթևի վանքից Հովակիմ ծերունի եպիսկոպոսը, որ ժողովրդից պապ էր կոչվում, գալիս է և մեծ հանդիսով թաղում է Դավիթ բեկին Հալիձորի եկեղեցու գավթում: Գերեզմանաքարի վրա էլ միմիայն մի ծաղիկ են քանդակում, և այդ երեսն էլ հողի մեջ թաղում, որպեսզի ապագային թուրքերը չկարողանան ճանաչել և ոսկորները հանել:

Դավիթ բեկի մահից հետո իշխաններն ու Տաթևի եպիսկոպոսները հավաքվում են Հալիձոր խորհրդի, և Մխիթար սպարապետին ընտրում Դավթին հաջորդ, որովհետև վերջինս չէր ամուսնացել և ժառանգ չուներ: Հալիձորցի Եղին, նա, որ Ստեփան իշխանի կնքած նամակը տարել էր վրաց Թագավորին և Դավիթ բեկին առաջնորդել էր վերադառնալու Ղարաբաղ, շատ աշխատում է ինքն ընտրվել, և երբ չի կարողանում հաջողացնել, սաստիկ ոխակալում է և որոշում է վրեժ լուծել: Այս նպատակով մարդիկ է ուղար-

կում Ջաթալի խանի մոտ և համոզում նրան հարձակվելու Հալիճորի վրա, խոստանալով ամեն կերպ օգնել նրան: Ջաթալի խանն էլ, փորձով գիտենալով, որ երբ դողը տանիցն է, եզը երդիկից կարելի է հանել, միանում է Զալաբ-յանլուի խանի հետ և հարձակվում Հալիճորի վրա: Եղին անմիջապես միանում է թուրքերի հետ, պաշարում բերդը և կտրել տալիս բերդի միակ աղբյուրի գաղտնի պահված ակը: Մխիթար սպարապետը տեսնելով, որ Եղին է թուրքերին առաջնորդում, և որ աղբյուրի ակը արդեն կտրված է, և ժողովուրդը հուսահատության մեջ է ընկել, ծածուկ փախչում է Խնձորեսկ: Ժողովուրդը իմանալով սրա փախուստը՝ պատարագ է մատուցանել տալիս, հաղորդվում և անձնատուր լինում: Թուրքերը տիրում են բերդին, շատ շատերին կոտորում և Մխիթարի երկու որդուցն էլ գերում: Սակայն կարճ ժամից Մխիթարը 1500 մարդ վարձելով օգնության է հասնում, թուրքերից շատ-շատերին ջարդում, Զալաբ-յանլուի խանին սպանում և իր որդիներին էլ գերությունից ազատում: Եղին փախչում է Շնատեն գյուղը, սակայն ճանապարհին Մխիթարի զինվորները բռնում են նրան բերում Հալիճոր: Ժողովուրդը թափվում է սրա վրա և ասելով թե դու սուրբ մարդ ես, պետք է քո առաջը մոմ վառենք, մերկացնում են, և ուսերին, կրծքին, ոտներին մոմեր կպցնում ու վառում սատկեցնում նրան:[212]

Այս փառավոր հաղթությունից հետո Մխիթարն սպասում էր, որ իրեն կհնազանդեն հայերը և կհարգեն ինչպես հարգում էին Դավիթ բեկին, սակայն տեսնելով որ հալիճորցիներն իրեն չեն լսում, թողնում, հեռանում է Խնձորեսկ գյուղը: Սակայն այստեղ էլ ժողովուրդը սիրելով չի ընդունում Խնձորեսկ գյուղը: Սակայն այստեղ էլ ժողովուրդը սիրելով չի ընդունում Խնձորեսկ գյուղը: Սակայն այստեղ էլ ժողովուրդը սիրելով չի ընդունում նրան, որովհետև պետք է պաշտպաններ նրան պարսից հալածանքից: Պարսիկները շարունակ հետևում էին նրան, նույնիսկ պարսից շահը մեծ գումար է խոստանում այն մարդին, որ կներկայացներ իրեն Մխիթարի գլուխը:

Եվ հիրավի, հենց որ Մխիթարը գալիս է Խնձորեսկ, պարսից մի գունդ հետևում է նրան և պաշարում է այս գյուղը: Գյուղացիներն ապաստանում են քարաժայռերում, որ քերծի մեջ չինված փոքրիկ սենյակներ են, նախկին, անապատավոր ժամանակների բնակարաններ: Այս քարաժայռերի մեջ բարձրանալու կամ այդտեղից իջնելու համար հասա թոկեր էին կապում մեջքին, և կամաց-կամաց վեր էին քաշում կամ ներքև թողնում: Ահա այս քարաժայռերի մեջ ամրացած Մխիթար սպարապետը գյուղացիների հետ կռվում է թուրքերի դեմ: Մի գնդակ դիպչում է Սեյրանանց Մարգարիտի որդու կրծքին, որ հրացանը ձեռին կռվում էր թշնամու դեմ: Խեղճը վայր է գլորվում, սակայն նրա սրի մայր Մարգարիտը վերցնում է նրա հրացանը և ինքն է շարունակում արձակել: Ի վերջո Մխիթարը հաղթում է պարսիկներին և դուրս քշում Խնձորեսկից:

---

[212] Մինչև հիմա էլ այս կողմերում մատնիչներին եղի են անվանում:

Սակայն վեց անպիտան հայեր, գրավված Մխիթարի գլխի համար խոստացված վարձատրությունից, դավադրություն են կազմում, սպանում Մխիթարին և գլուխը կտրում, տանում մատուցանում են չահին: Սակայն սա տեսնելով այդ վիթխարի, գեղեցիկ գլուխը՝ զայրանում է սրանց վրա, թե ինչպես համարձակվեցին ձեռք բարձրացնել մի այսպիսի քաջ մարդու վրա և փոխանակ խոստացած գլխապինը տալու, հրամայում է բոլորին էլ գլխատել: Ապա Մխիթարի գլուխը հետ է ուղարկում Խնձորևսկ, որ մարմնի հետ միասին պատվով թաղեն:

Նրա անշուք գերեզմանն այժմ էլ գտնվում է գյուղի հարավարևելյան կողմում գտնված ավերակ անապատում, եկեղեցու հյուսիսային կողմում և կրում է հետևյալ տապանագիրը.

Այս է տապան ի հանգստեան.
Իջեալ մարմնով ի գերեզման,
Սայ Մխիթար մեծ անուանեալ,
Սորա օնէր իշխանութիւն,
Սա բեմուրատ դնաց ջիվան,
Որ է երկրէն սայ կեանճուվ էր
Նահատակուեցաւ ՌՃՀԹ (1730):

Մխիթարի մահից հետո Հալիճորի պաշտպանությունը իրենց վրա վերցրին մելիք Փարսադանի թոռ (Սաֆրազի որդի) Այվազ բեկը և Ստեփան իշխանի որդի մելիք Ղուկասը: Սրանց ժամանակ օսմանցիները միանալով Դյուզալուի[213] խանի և այլ պարսիկների հետ հարձակվում են Հալիճորի վրա, որպեսզի Դավիթ բեկի երկրները տիրապետեն: Մելիք Ղուկասն ու Այվազ բեկը տեսնելով, որ սրանց զորքը չափազանց շատ է, մարդիկ են ուղարկում շրջակա քաջարանց, Փուխրուտ, Փիր-Մազրա, Քրդիկանց ու Հանդ գյուղերը և հրավիրում բնակիչներին իրենց հետ միանալու և հետ մղելու թշնամիներին: Սրանք էլ, ի նկատ առնելով, որ իրենք էլ թուրքերին ավար են դառնալու, լավ են համարում ընդունել հրավերը և բոլորը, կին, տղա, աղջիկ զինվելով ինչով կարողանում են, նույնիսկ բահով ու կացնով, դալիս խմբվում են Գյոլճուկի դաշտը, կալեր գյուղի գլուխը: Այստեղ տեղի է ունենում մի արյունահեղ կռիվ, հայերը հաղթում են և քշում մահմեդականներին մինչև Խանազահի դաշտը, որ գտնվում է Վարդանաձորի մոտ և այստեղ Ալիղարու խան Մխրզա Սայիլին սպանում, իսկ մնացածներին փախցնում: Այս փառավոր հաղթությունից հետո երկրի մեջ մի առ ժամանակ խաղաղություն է ընկնում և մելիք Ղուկասն ու Այվազ բեկը խաղա-

---

[213] Կարճևան գյուղի հանդեպ, Արաքսի ալ ափին, մի քաղաք էր, Քյուրդաչտ քաղաքի մոտ:

զուրկ կառավարում են հայ ժողովրդին, որը չարունակում է ամեն կերպ աշխատել կամ կոտորել և կամ երկրից հեռացնել թուրքերին:

Հետաքրքրական և շատ բնորոշ է կարճևանցի Բաբայի պատմությունը, որի փառավոր թաղումը կատարել են մեր այս մելիք Ղուկասն ու Այվազ բեկը:

Բաբան Կարճևանում տանուտեր է եղել: Սա տեսնելով որ իրենց գյուղի նախրապան թուրքը բազմացել, չորս տուն է կազմել, վախեցել է, թե մի գուցե սրանք էլ արագությամբ բազմանալով՝ թուրքաստան դարձնեն Կարճևան գյուղն էլ, մի քանի անգամ պահանջել է, որ գաղթեն գյուղից, սակայն նրանք չեն համաձայնել: Այս պատճառով տանուտեր Բաբան որոշել է ուրիշ միջոցի դիմել. նա պատվիրել է գյուղացիներին, որ մեծ քանակությամբ ցախ բերեն և դարսեն իր տան մոտ: Երբ ցախը բերվում է, մի աշնանային գիշեր, երբ բոլոր թուրքերն իրենց անկերում քնած են եղել, տանուտեր Բաբան ցախը լցնել է տվել դրանց տների վրա և կրակ տվել, տներն էլ, նրանց էլ վառել, մոխիր դարձրել: Հետևյալ առավոտն էլ հրամայել է, որ դրանց տան տեղերն էլ վարին, պարտեզ դարձնեն: Դարնանը սրանց բարեկամ թուրքերը գալիս են սրանց տեսության: Նայում տեսնում են, որ սրանց տների տեղում պարտեզ է ձգած. հարց ու փորձ են անում, սրանց ասում են, թե գաղթել են: Սակայն սրանք մի կերպ իմանում են եղելությունը և գնում դանգատվում Դյուզալուի խանին: Սա անմիջապես կանչում է Բաբային և այս մասին հարց ու փորձ անում: Բաբան ուրանում է արածը, բայց Մանկեվ գյուղացի խոճա Սարգիսը մատնում է, թե հիրավի, նա վառել է թուրքերին: Խանը անմիջապես երկու պայման է դնում՝ կամ թուրքանալ կամ գրկվել գլխից: Տանուտեր Բաբան ընդունում է առաջին պայմանը և թուրքանում: Սակայն խանը չհավատալով նրա անկեղծության, երկու տարի պահում է նրան իր մոտ: Սա էլ այնպիսի հավատարմությամբ և եռանդով է ծառայում խանին, որ վերջինս երկու անգամ պատգամավոր է ուղարկում նրան շահի մոտ: Վերջապես խանը կամենալով վարձատրել նրան՝ հավատարիմ ծառայության համար՝ Մեղրու և նրա վարձատրել նրան՝ հավատարիմ ծառայության համար՝ Մեղրու և նրա շրջակայքի վրա մինպաշի է կարգում: Մի առ ժամանակից հետո Բաբան շրջակայքի վրա մինպաշի է կարգում: Մի առ ժամանակից հետո Բաբան գալիս է Լեհվազ, բռնում այդտեղի տասն և երկու պարսիկ իշխաններին և մեղադրելով նրանց իբր թե կամենում են դավաճանել պարսիկներին և անցնել օսմանցիների կողմը՝ բոլորին կախել է տալիս, գյուղը կրակում, և տավարն ու գույքը ուղարկում խանին:

Այս անցքից երկու տարի հետո էլ Բաբան գնում է Թաղամիր Թրքաբնակ գյուղը, և սրանց ևս մեղադրելով դավաճանության մեջ, այրում և տավարն ու գույքը ուղարկում խանին: Մի տարուց հետո էլ գնում է Մանկեվ, բռնում խոճա Սարգսին, որ իրեն մատնել էր, և գլխատել է տալիս: Նա կամենում էր նրա սերունդն էլ սրից անցկացնել, սակայն նրա կինը սրա ոտքերը ընկնելով, խնդրեց, որ նրա որդուն ողջ թողնի, որովհետև նա դեռ մանուկ է: Բաբան ականջ է դնում կնոջ խնդրանքին և որդին ողջ է թողնում:

ներն ընկած սաստիկ պաղատում է, և այսպիսով ազատում սերունդը կոտորածից:

Կյանքի վերջին օրերում Բաբան վերադառնում է Կարճևան, խոստովանում քահանային, թե թեպետ ընդունել է մահմեդականություն, սակայն սրտով հայ քրիստոնյա է մնացել. ապա պատարագ է մատուցանել տալիս և հաղորդվում: Մի չարաթից հետո զգալով մահվան մոտենալը, կրկին պատարագ է մատուցանել տալիս, կրկին հաղորդվում և խնդրելով իրեն թաղել քրիստոնեական ծեսով՝ մեռնում: Հայերն երկյուղ կրելով խանից՝ չեն համարձակվում կատարել ննջեցյալի վերջին խնդիրն, ուստի և այդ մասին իմացնում են խանին, մարմինը տանելով եկեղեցի: Խանը գալիս է Կարճևան, տեսնում դիակը և ասում, թե ինչի՞ եք ձեռքերը խաչել և դեպի արևելք դրել, սա մահմեդական է: Հետո ուղղում է ձեռքերը և դեպի հարավ դնում: Հետևյալ առավոտ տեսնում են, որ ձեռքերը կրկին խաչվել են և ինքը կրկին դեպի արևելք է դարձած: Խանը սաստիկ բարկանում է, կարծելով թե հայերն են արել, և երբ սրանք սկսում են արդարանալ, նա կրկին ուղղում է նրա ձեռքերը, փոխում դիրքը դեպի հարավ, և եկեղեցու դուռը կնքում ու պահապաններ դնում: Առավոտյան խանը անձամբ գալիս է բայց անում կնքված դուռը, տեսնում դիակը դարձյալ դեպի արևելք դարձած և ձեռքերը կրծքի վրա խաչված, ասում է, թե սա միայն երեսանց է թուրք եղել, իսկ սրտանց հայ. տարեք, թաղեցեք ձեր ծեսով, միայն այսուհետև սրան այլևս մի կոչեք Բաբա քեաաուահ (տանուտեր) այլ՝ Բաբա դաղլու (այրող): Ժողովուրդը ուրախացած հլուվիրում է Մելիք Ղուկասին և Այվազ բեկին և սրանց ներկայությամբ մեծ հանդիսով թաղում նրան:

Մի առ ժամանակից հետո պարսից Նադիր շահը եկել է Գյագանու դաշտը (Երասխի ափին): Մելիք Ղուկասը, Այվազ բեկը, մելիք Քարամը իրենց զորքերով ընդառաջ են գնացել նրան: Շահը սրանց շատ լավ է ընդունել, և վերահաստատել իրենց երկրների վրա, ճանաչելով նրանց մելիքական իրավունքները: Ապա շահը անցել է Մուղանու դաշտը, ուր գնացել է նաև Հայոց Աբրահամ կաթուղիկոսը: Երեք ամիս այստեղ մնալուց հետո, երբ Նադիր շահը վերադառնում է, վերոհիշյալ մելիքները կրկին ընդառաջ են գնում նրան և խնդրում են գալ իրենց մոտ հյուրասիրվելու: Շահն ընդունում է սրանց հրավերը, գալիս բանակում Ուղուր դաշտում, այնտեղ, ուր այժմ գտնվում է պ. Մելիք-Ազարյանի պղինձ հալելու գործարանը: Ամբողջ գիշերն ուրախություն են անում, հրացան, հրթիռ (փչանկ) արձակում: Մի խեղճ մարդ էլ ծառի վրա դարսած խոտն է վառում: Առավոտյան շահը կանչում է այդ բաղավերճեցի հային և հարցնում, թե ինչի՞ խոտը վառեց: Սա էլ պատասխանում է. «Ես աղքատ մարդ եմ, ոչ հրացան, ոչ էլ հրթիռ ունեի, որոնցով կարողանայի իմ ուրախությունս արտահայտել, իմ ունեցած-չունեցածս մի քանի խուրձ խոտն էր, որ շահին մատաղ արի»: Շահին

շատ դուր է գալիս սրա այս պատճառաբանությունը, ուստի և հրամայում է մի լավ խալաթ տալ:

Շահը մնում է այս դաշտում երեք օր շարունակ և հաճախ ձի նստած զբոսնում է չրջակայքում: Այս դաշտը նրան շատ դուր է գալիս և նա որոշում է այստեղ մի քաղաք հիմնել: Եվ երբ վերադառնում է՝ 400 պարսիկ ընտանիքներ մի քուրդ սուլթանի (իշխանի) առաջնորդությամբ ուղարկում է այստեղ քաղաք հիմնելու:

Քուրդ սուլթանը հրավիրում է իր մոտ հայ մելիքներին և խնդրում, որ իրեն օգնեն շահի հրամանը կատարելու, հիմնելու Ուղուր քաղաքը:

Մելիքներից միայն մինը՝ մելիք Ղուկասը չի գնում նրա մոտ, մտածելով, որ Դավիթ բեկն այնքան աշխատեց թուրքերին հեռացնելու մեր երկրից, հիմա դա եկել է և կամենում է այս տեղերը թուրքանոց դարձնել: Հետո տեսնելով, որ առանց իր ձեռնտվության էլ քաղաքի շինությունը արագությամբ առաջ է գնում, երեսուն կարիճներով ամրանում է այդ քաղաքի մոտ բարձրացող Ղըռղալայի բերդում և այդտեղից դիշերները հարձակվում Ուղուր քաղաքի վրա, ավերում, կողոպտում և կրկին ապաստանում բերդում: Քուրդ սուլթանն ամեն միջոց գործ է դնում նրան բռնելու, բայց չի կարողանում հաջողացնել: Վերջապես երկու տարուց հետո դիմում է մելիք Այվազի և Մելիք Քարամի միջնորդության և սրանց հետ միասին գնում է Ղըռղալայի բերդի դուռը, երդում տալիս, որ մելիք Ղուկասին ոչ մի վնաս չի հասցնի, և նախկին տարիներից մնացած հարկերն էլ չի պահանջի, միայն թե նա անցնի, գնա էճանանու թուրք վիճակի Առաջաձոր գյուղը և այնտեղ հանգիստ ապրի՝ կառավարելով այդ վիճակը:

Մելիք Ղուկասն ընդունում է նրա պայմանը, դուրս է գալիս Ղըռղալայից և գնում Առաջաձոր, միայն իր երեսուն կարիճներին թողնում է բերդում, որ համեմատելապես պաշտպան մնա:

Հազիվ անցնում է երեք օր, մելիք Ղուկասի որդի մելիք Հովհաննեսն ու մելիք Ոսկանը պիշերը նկատում են, որ երկու թուրք են եկել մտել իրենց տունը: Իսկույն վրա են հասնում, բռնում նրանց, կապկապում և ձգում մի սենյակ: Մելիք Ղուկասը հարց ու փորձ է անում սրանց և հաջողացնում է խոստովանեցնել, որ ուղարկված էին քուրդ սուլթանից իրեն, մելիք Ղուկասին, սպանելու: Այս բանի վրա մելիք Ղուկասը սաստիկ զայրանում է և իր 24 գյուղերից 500 հոգի հավաքում ու հարձակվում Ուղուր քաղաքի վրա, քուրդ սուլթանին, իր կնոջ և որդիների հետ գերի բռնում, քաղաքը կողոպտում, քանդում և կրակ տալիս: Երբ քուրդ սուլթանին բերում են մելիք Ղուկասի առաջը, մելիքն ասում է՝ տեսա՞ր:

— Տեսա,- պատասխանում է քուրդ սուլթանը,- իմ սուտ երդմանս հատուցումն է այս:

Սրա վրա մելիք Հովհաննեսը բարկանում է, թե դեռ խոսացնո՞ւմ էլ ես այդ շանը, և սրի հարվածով կոտորում քուրդ սուլթանին, կնոջը և երեխաներին: Այսպիսով քանդվում, ավերվում է այդ նորաշեն քաղաքը:

Սպասելի էր, որ Նադիր շահը զորք ուղարկեր և պատժեր մելիք Ղուկասին, սակայն նա սպանվում է և Պարսկաստանում առաջացած խռովությունները մոռացնել են տալիս այս դեպքերը:

Մելիք Ղուկասից հետո Հալիձորում մելիքություն է անում մելիք Բալու որդի Փարսադան Գ:

Սրա ժամանակ Զավնդուրի Աբիլբաս խանը կամենում է Բեխ գյուղի այժմյան հանգստարանի «Վերին-Հարթ» բարձրությանը վրա մի բերդ կառուցել, սակայն մելիք Փարսադան Գ արգելում է՝ ասելով. «Եթե կարող ես մարդկանց դիակներով պարիսպ քաշել, փորձիր չինել, թէ չէ քարով ու կրով թույլ չեմ տալ չինելու»: Խանը վախենում է նրանից և չի իրագործում իր մտադրությունը:

Այս միևնույն ժամանակներում Շուշու Իբրահիմ խանի սարվազները գալիս են Բաղավուրճ գյուղը և բռնությամբ տանում են Թումանենց աղջիկը՝ խանի հարեմի համար: Մելիք Փարսադանը այս որ լսում է՝ անմիջապես հարձակվում է այդ սարվազների վրա և Բաղավուրճ գյուղից ներքև, Ուղուր գետի ափին, Սուլթան բաղի մոտ սպանում երեք սարվազներին և խլում Թումանենց աղջկան, ասելով, որ քանի ինքը կենդանի է, թող ոչ մի խան չհամարձակվի իր հպատակներից մեկին տանելու: Երբ լուրը հասնում է Իբրահիմ խանին, սա անմիջապես հրամայում է պատրաստություն տեսնել՝ մելիք Փարսադանի վրա արշավելու: Սակայն նրա մտերիմները խորհուրդ են տալիս, որ այդպիսի վտանգավոր քայլ չանի, քանի որ սրա երկիրը սաստիկ լեռնոտ է և անմատչելի, զորքը իզուր կկոտորվի:

Միևնույն ժամանակ մելիք Փարսադանի հպատակներն էլ լսելով, որ Իբրահիմ խանն արշավելու է իրենց վրա, տասը մարդ են ընտրում և Տաթևի առաջնորդի հետ ուղարկում Իբրահիմ խանի մոտ, որպեսզի միջնորդեն և մելիքի հետ հաշտեցնեն, այլևս իզուր արյուն չթափվի: Եվ որովհետև պարսից մեջ սովորություն է, որ արյան վրեժը չեն լուծում, երբ մարդասպանը դնա սպանվածի տիրոջ դուռը, ուսի և Իբրահիմ խանը պահանջում է, որ մելիք Փարսադան Գ գա իրեն մոտ՝ որպեսզի այսպիսով լուծված համարվի նրա սպանած երեք սարվազների արյան վրեժը: Միևնույն ժամանակ ինքն էլ կրկին ու կրկին երդվում է, որ ոչ մի վնաս չի հասցնի մելիքին: Այս ինքնակոչ միջնորդները վերադառնում են մելիք Փարսադան Գ մոտ և այնքան թախանձում վերջինիս, որ սա, հակառակ իր ցանկության, վեր է կենում, գնում Իբրահիմ խանի մոտ: Սակայն վերջինս արհամարհելով իր տված խոստումներն ու երդումը՝ կուրացնել է տալիս Փարսադան Գ, խլում է նրանից նրա բոլոր գյուղերը, բացի Հալիձորից ու Բեխից, և արձակում:

Մելիք Փարսադան Գ վերադառնում է Հալիձոր, հրաժարվում է մելիքությունից, նշանակելով մելիք իր որդի Օվանեսին և ապա առանձնանում է Բիխում, ուր բավական երկար ապրում է:

Մելիք Օվանեսի ժամանակ Ղափանն էլ ընկնում է ռուսաց տիրապետության ներքո և սա, ինչպես և սրա որդի մելիք Գալուստը, կառավարում են իրենց ժողովուրդներին իբրև ռուսաց պաշտոնյա:

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻ ԳԱՎԱՌ

ԿԱՄ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

ԲՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սահմանները. *Նոր-Բայազետի գավառը կազմում է Երևանյան նահանգի հյուսիս-արևմտյան մասը և տարածվում է 39° 55'-40° 40' հյուսիսային լայնության և 62° 2'-63° 41' արևելյան երկարության աստիճանների միջև: Նրա սահմաններն են. հյուսիսից՝ Երևանյան նահանգի Ալեքսանդրապոլի գավառը և Գանձակի նահանգի Ղազախի և Գանձակի գավառները, արևելքից՝ նույն նահանգի Ջիվանշիրի գավառը, հարավից՝ Երևանյան նահանգի Շարուր-Դարալագյազի և Երևանի գավառները, և արևմուտքից նույն նահանգի Երևանի և Էջմիածնի գավառները:*

Նոր-Բայազետի գավառի տարածությունն է 577.585 դեսյատին, 710 քառ. սաժեն,[214] *որից՝*

Գյուղատեղի	*1842*	*դես. 359*	*ք. սաժեն*
(Այս հաշվում միայն տնատեղ)	*1581*	*դես. 1910*	*ք. սաժեն*
Գերեզմանատեղի	*45*	*դես. 2164*	*ք. սաժեն*
Ճանապարհներ	*2455*	*դես. 651*	*ք. սաժեն*
Վարելահող	*122235*	*դես. 1668*	*ք. սաժեն*
Այգիներ	*14*	*դես. 480*	*ք. սաժեն*
Անտառներ	*9823*	*դես. 1458*	*ք. սաժեն*
Մարգագետին	*14222*	*դես. 1069*	*ք. սաժեն*
Արոտատեղի	*288836*	*դես. 1950*	*ք. սաժեն*
Ջրի տակ, ընդամենը՝	*130822*	*դես. 1629*	*ք. սաժեն*
որից 1. Ջրանցքների տակ	*121*	*դես. 658*	*ք. սաժեն*
2. գետերի, վտակների և աղբյուրների տակ	*455*	*դես. 693*	*ք. սաժեն*
Ջարդյունաբերող հողեր	*43*	*դես. 1683*	*ք. սաժեն*

Իր ընդարձակությամբ Նոր-Բայազետի գավառը Երևանյան նահանգի գավառների մեջ բռնում է առաջին տեղը:

Նոր-Բայազետի գավառը բազկացած է Սևանա լճի գոգավորությունից, Սոզի կամ Մազրայի և կամ Գիլի դաշտավայրից և Զանգուլի կամ Դարաչիչակի հովտից:

Սևանա լճի գոգավորությունը *սահմանափակվում է հյուսիսից Փամբակի լեռնաշղթայի վերջավորությամբ և Շահ-դաղի լեռնաշղթայով, արևե-*

---

[214] *Труды Закавказского Статистического Комитета, Земельные дачи Эриванской губ., вып. II. Дачи Ново-баязетского уезда, Тифлис, 1905 г.*

մուտքից Էշակ-Մեյդանու և Ահմանկանի, հարավից՝ հարավային Գոգչայի լեռնաշղթաներով, և արևելքից՝ **Կոնգուրո-Ալանգյոզի** լեռնաշղթայի հյուսիսային մասով: Այս գոգավորությունը ուղղանկյուն եռանկյունու ձև ունի, որի հարավ-արևելյան անկյունը կտրված է, և ներկայացնում է ամեն կողմից վակված մի տարածություն, բայց այն մասից, որտեղից դուրս է գալիս Զանգու գետը: Այս գոգավորության ամենամեծ երկարությունն է 112 վերստ: Մակերևույթը հավասար է 4200 ք. վերստի, որից 1204,2 բռնում է լիճը:

Սոդքի կամ Մազրայի և կամ Գիլի դաշտավայրը տարածվում է Սևանա լճի հարավ-արևելյան անկյունում, որովհետև Սաոանախաչ գյուղից այն կողմը Շահ-դաղի լեռնաշղթան դեպի արևելք ուղղվելով, հեռանում է ծովի ափից: Այս դաշտավայրը սահմանափակվում է հյուսիսից Շահ-դաղի, արևելքից Կոնգուրո-Ալանգյոզի և հարավից Ալլափյոլու լեռնաշղթաներով: Սրա երկարությունը հասնում է մինչև 30 և լայնությունը մինչև 20 վերստի:

Դարաչիչակի հովիտը (որ Զընճըրլի լեռան ձորահովիտներից մեկն է), տարածվում է Սևանա լճի արևմտա-հյուսիսային մասում, մոտ 35 վերստ երկարությամբ. անտառապատ է և դեղեցիկ ամառանոցներ է կազմում:

Լեռները. Այստեղ տարածվում են գլխավորապես Փոքր-Կովկասի ճյուղերը, որոնք շրջապատում են Սևանա լճի գոգավորությունը: Ամբողջ հյուսիս-արևելյան սահմանագծում ձգվում է Շահ-դաղի լեռնաշղթան, որ միևնույն ժամանակ կոչվում է նաև **Արևիք, Գյունեյ կամ Հյուսիս-Արևելյան Գոգչայի լեռնաշղթա**: Սա սկիզբ է առնում Սեմյոնովկայի բարձրությունից (6972 ոտ.), և ձգվում է լճի անմիջապես ափի երկարությամբ և տեղ-տեղ ուղղահայաց իջնում նրա մեջ: Նագեժդինո գյուղին չհասած՝ ուղղվում է լճից փոքր-ինչ արևելք, տարածելով դեպի լիճը բարձր ճյուղեր, որոնցից **Աղ-Թափինը** (8550) մի մեծ թերակղզի է կազմում, լճի մեջ ցցված համանուն հրվանդանով:

Այս լեռնաշղթայի երկարությունը հասնում է 90 և լայնությունը մինչև 70 վերստի: Լեռնաշղթան հարուստ է հանքերով և պատած մացառով: Սրա գլխավոր գագաթներն են.

Մարալիջա-դաղ	8565 ոտ.
Շիշ-թաւիա	7749
Սոյուղ-բուլաղ	8722
Կիրկիպի-դաղ (Կոյուղ-Ալմաղ)	9020
Այրիջա	8731
Ադա-թաւիա	8105
Շահ-դաղ	9573
Ալլա-գյոլլար	9789
Ղարա-Արխաչ	10081
Գինալ-դաղ	11057

Բարձրությունները են (перевал) Սեմյոնովկայի (7124 ոտ.) Ախ-յոխուշի (9500 ոտ. ոչ պակաս) և Սատանախաչի (9000 ոտ. ոչ պակաս):

Արևելյան կողմից այս միևնույն Գինալ-դաղ կամ Կոնգուր-դաղից ձգվում է դեպի հարավ Կոնգուրո-Ալանդյողի լեռնաշղթան, որ սահմանապահելով այս գավառը՝ անցնում է Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի գավառները: Այս լեռնաշղթայից Նոր-Բայազետի գավառին կից դանվում են հետևյալ գագաթները. **Ինագդաղ** (18547), **Ուռումբասար** կամ հին Ռըմբասար (8828), **Ղզղալասի** (9910), **Կումուր-դաղ** (10000), **Քեթի-դաղ** (11284):

Այս Քեթի-դաղ և Սարի-ել-Սարչալի գագաթների միջև արևմուտքից մոտենում է Կոնգուրո-Ալանդյողի լեռնաշղթային **Հարավային Գոգչայի** լեռնաշղթան, որ այլապես կոչվում է **Գյոզալդարու** կամ **Ալլա-գյոլու**: Սևլիմի բարձրությամբ այս լեռնաշղթան բաժանվում է երկու մասի, որոնցից արևելյանը կազմված է երկու շարք հրաբխային լեռներից, որոնք միանում են Յանըղ կամ Ճանիկ գագաթում: Այս լեռնաշղթայի երկարությունն է 65 վերստ, լայնությունը 60-70 վերստ: Սրա հյուսիսային լանջերը ոռոգվում են մինչև Սևանա լիճը, իսկ հարավայինները մինչև Վայոց ձորի Արևելյան-Արփաչայի միջին հոսանքը: Այս լեռնաշղթայից Նոր Բայազետի գավառում գտնվում են հետևյալ նշանավոր գագաթները.

Քեթի դաղ	11284
Ալլա-գյոլլար պաշի	10031
Դիք-փիլաքան	11410
Գյուզալ-դարա	11606
Սողանլի	10926
Թուլուջա	11432
Ղարա-ղայա	11178
Յանըղ (Շահրուլաղ)	11178

Այս Հարավային Գոկչայի լեռնաշղթային Թուի-դաղ գագաթի մոտ միանում է Ամանկան լեռնաշղթան, վաղուց հանդած հրաբխային ձագարաձև գագաթներով, որոնցից մի քանիսի մեջ գոյացել են լարվ, լեռնային լճեր: Այս լեռնաշղթայի լանջերը ոռոգվում են հյուսիս՝ մինչև Զանգու գետի ակունքը, արևմուտք՝ մինչև Աստիամանի գետակը, և Սևանա լճի արևմտյան ափերը: Այս լեռնաշղթան հնում կոչվում էր **Գեղամա լեռներ**: Սրա նշանավոր գագաթներն են.

Թուի-դաղ	9546
Իքիչիլար	8885
Արխաշան	10139
Դավա-գյոզ	11344
Փոքր Աղ-Դաղ	10906
Մեծ Աղ-Դաղ	11500
Զիարետ	10388

Ահմանկան կամ Ղըզըլդաղ	11844
Ղարա-դաղ	11438
Զիարետ	10941
Ուչ Թափալար	10710
Ղարա-Չընգըլ	10115
Ղարա-դաղ	10623
Ուչ Թափալար	8281
Ջան-Թափա	8379
Ուչ Թափալար	8252
Բուղդա-Թափա	7734
Ինակ-դաղ	7817
Բողու-դաղ	7894

Այս լեռնաշղթային է պատկանում նաև Սևանա լճի հարավային կողմում բարձրացող Սըչանլու և Աղմաղան կամ Աբդըլլահ-սար գագաթները: Այս վերջինը իր անունն առացել է, ասում են, Աբդուլլահ անունով մի մահմեդական երիտասարդից, որ քրիստոնեությունն ընդունելու պատճառով նահատակվել է այդ լեռան գագաթին և որի գերեզմանն այժմ էլ ուխտատեղի է համարվում:

Գավառի հյուսիսարևմտյան մասում ձգվում է Փամբակի լեռնաշղթան, որի Թոփփ-յոլ գագաթից դեպի հարավ-արևելք ձգվում է **Կոչաչկոտ** կամ **Էչակ-Մեյդան** լեռնաշղթան, որ Բալըղչայի գետաբերանի և Յամաքաբերդի միջև ուղղակի լիճնում է Սևանա լճի մեջ: Այս լեռնաշղթայի երկարությունն է 20 վերստ, միջին բարձրությունը՝ 8000 ոտնաչափ:

Փամբակի լեռնաշղթայի Դավա-տաշ գագաթից էլ ձգվում է դեպի հարավ-արևելք **Զնճիրլի** կամ **Մխխանի** և կամ **Պղնձահանքի** լեռնաշղթան: Սրա երկարությունն է 35 վերստ, լայնությունը հասնում է մինչև 35 վերստի, միջին բարձրությունը՝ 8500 ոտնաչափի: Այս լեռներն անտառապատ են և կազմում են դեղեցիկ ամառանոցներ:

Լճեր. Նոր-Բայազետի գավառի կենսատուն համարվում է Սևանա լիճը, որ վերին աստիճանի գեղարվեստական տեսք ունի: Նրան առանց չափանցացության կարելի է նմանեցնել մի կապուտակ կարպետի, որ տարածված է պորփյուրյա դաշտի մեջ: Պորփյուրյա լեռներ, կարմիր և մանիշակային գույների ամենայն հնարավոր զանազանությամբ, սրանց նման և քարաժայռերը, անհեթեթ ձևերով, ամեն տեղ պորփյուր, նույնիսկ ամենաանշուք չինությունների մեջ (օրինակ, մի ախոռ՝ որի պատերը չինված էին այս գեղեցիկ քարի կոշկոռներով). թխորակ, բայց կարմրահատակ դյուրափուխր հողը կազմում է արտորայք, որոնց շուրջը պարփակում է մի թխականաչ երիզ, աքանչելի տեսարան:[215]

---

[215] Gilles, Lettre sur Caucase, 293: Ալիշան, Սիսական, եր. 26:

Այո, ավելի քան սքանչելի տեսարան, մանավանդ երբ մարդ դիտում է վերջալույսը՝ փողփողված այս լճի կապուտակ և վերին ասպիճանի հստակ ջրերի մեջ, երբ նկատում է բյուրավոր ձկների խայտալը և կամ ծովային հարուստ բուսականությունը լճի հատակում:

Այս լիճը Օրդակլուի և Քյոլանի-դաման (նույն գավառի) բևեռագիր արձանագրություններում կոչվում է «Suinia», որ ուրարտերեն «լիճ» կամ «ավազան» է նշանակում: Հավանորեն այս անունից ծագել է **Սյունիք** խոսքը, որ գործել է այս լճի և սրա վիճակի հատուկ անունը և **«Սեվանա»** կոչումը, որ կրում է այժմ այդ լիճն ու նրա միջի կղզին:

Հայ մատենագիրները, առնելով Մովսես Խորենացուց, կոչում են նրան **Գեղամա ծով**, իսկ շրջակայքը՝ **Գեղարքունի**՝ առաջացած համարելով Գեղամ նահապետի անունից, սակայն ավելի հավանական է, որ այն ծագել է Օրդակլուի բևեռագիր արձանագրության մեջ հիշված **կիեհունի** երկրի անունից, որ վերաբերում էր Սևանա լճի հյուսիս-արևմտյան մասին, այժմյան Օրդակլու գյուղի շրջակայքին:[216]

Թուրքերը այս լճին կոչում են **Գյոգ-չայ**՝ կապուտակ գետ, ինչպես և **Գյոգչա-դարիա**՝ կապուտակ լիճ՝ ի նկատի ունենալով նրա ջրի կապուտակ գույնը:

Պարսիկները կոչում են **Դարիաչիրին**, այսինքն քաղցր ծով, ի նկատի ունենալով ջրի բարեհամ հատկությունը:

Ռուսները կոչում են **Գոգչա և Սևանգա**, առաջինն առնելով թրքական Գյոգ-չայ կոչումից, իսկ երկրորդը՝ հայկական այն սխալ ստուգաբանությունից, թե Սևան անունը առաջացել է Սև վանք խոսքերից, որ վերաբերում են լճի մեջ գտնված կղզու վրա կառուցված Սև-վանքին:

Սևանա լիճը տարածվում է $40^{0}8'50''$ և $40^{0}38'8''$ հյուսիսային լայնության և $62^{0}35'58''$ և $63^{0}19'5''$ արևելյան երկարության ասպիճանների միջև: Սև ծովի մակերևույթից 6316 ֆ. բարձրություն ունենալով, նա ավելի բարձր է, քան նույնիսկ Կարնո և Վանանդի բարձրավանդակները:

Բռնելով 1204,2 ք. վերստ, կամ 24,88 ք. մղոն և կամ 125478 դեսյատին տարածություն, որ կազմում է այս գավառի մակերևույթի 23%, ծովն ավելի տակաձև է, քան ձվաձև, ու ձգվում է հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք: Նրա շրջապատն է 212 վերստ, երկարությունը Բալըդ-չայի բերանից մինչև Զաղալու գյուղը՝ 70 վերստ: Լայնությունը՝ ամենաընդարձակ մասում (արևելյան կողմում) հասնում է 31 վերստի, իսկ ամենանեղ մասում՝ մոտ 7,75 վերստի: Այս մասը գտնվում է Ադա-թափա թերակղզու (արևելյան կողմից) և Շոր-գյոլ հրվանդանի (արևմուտքից) միջև, որոնք այդ ասպիճան մոտենալով միմյանց, լիճը կարծես բաժանում են երկու անհավա-

---

[216] Никольский, Клинообразные надписи Закавказья.

սար մասերի. սրանցից փոքրը հյուսիս-արևմտյանն է, որ 340 ք.վ. տարածություն է բռնում և մտնում է ցամաքի մեջ հյուսիս-արևմտյան ուղղությամբ, երկու, անանուն ծոցերով, մեկը Ելենովկա, մյուսը Ջուբուխլու գյուղերի մոտ: Սրա երկարությունը հասնում է 25 վերստի, լայնությունը՝ 14 վ.: Այս մասի հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան ափերը փոքր-ինչ հարավ են քաշվում և նրան սեղանակերպ դարձնում, իսկ հյուսիս-արևմտյան կողմից ներս է ընկնում մի հրվանդան (Ցամաքաբերդ): Մյուս, հարավ-արևելյան ավազանը, որ բռնում է 860 ք. վերստ տարածություն, ձևով հիշեցնում է գագաթը կտրած մի ուղղանկյուն եռանկյունի, որի հիմնագիծը կազմում է հարավային ափը, հիպոտենուզան հյուսիս-արևելյանը և կատետը՝ արևմտյանը:

Սևանա լիճը իր արևելյան մասում մի ժամանակ ունեցել է մի ծոց, որից բաժանվել է մի չատ նեղ ջրանցքով: Դարերի ընթացքում այս ջրանցքը լայնացել է ու վերջ ի վերջո կազմել այժմյան կարճ ու նեղ նեղուցը, որով և նախկին ծոցը փոխվել է առանձին լճակի: Այս լճակը կոչվում է Գիլլի, ինչպես նաև Մազրի կամ Ջողի լճակ: Տարածվում է Մազրի գաշտավայրի ճահճոտ մասում: Նրա չրջապատն է 7 վերստ, իսկ ամենալայն մասը 3 վերստ: Այս լճակի մեջ թափվում են բավականաչափ գետակներ, տանելով իրենց հետ ահագին քանակություն անօրգանական մարմիններ, որոնք նստում են լճի հատակին և այն աստիճան լցնում նրան, որ չատ տեղերում փոխարկվում են ճահիճների:

Նկատված է, որ Սևանա լճի մակերևույթը տարիների ընթացքում բավական մեծ փոփոխություններ է ենթարկվում, այսպես միայն անցյալ դարի սկզբից մինչև 1830 թ. հետզհետե ցածրացել է մինչև 9 ոտնաչափ, ապա սկսել է բարձրանալ և հասել է նախկին դրության: 1843 թ. նորից նույն չափ ցածրացել է մինչև 1851 թ., ապա 9,5 ոտնաչափ բարձրացել է մինչև 1860 թ., երբ կրկին սկսել է ցածրանալ ավելի դանդաղ կերպով մինչև 1885 թ. 9 ոտնաչափ, երբ երեք տարի անփոփոխ մնալուց հետո կրկին սկսել է բարձրանալ, և այժմ էլ չարունակում է բարձրանալ:[217]

Թեպետ և կան մի քանի ենթադրություններ ջրի մակերևույթի այս փոփոխությունը բացատրելու, սակայն դրանցից և ոչ մեկը չի ընդունվել և այն ճշտորեն չի կարելի որոշել, մինչև որ տարիների ընթացքում լճի զանազան մասերում լիմնոգրաֆով չչափվի մակերևույթի փոփոխությունը և չկատարվեն երկրաչարժական դիտողություններ:

Սևանա լճի խորությունը ևս կատարելապես չափված չէ և եղած թվերը միմյանցից չատ են տարբերվում. օրինակ՝ գեներալ Կուտուզովը, որին 1839 թ. հանձնարարված է եղել չափել տալ լիճը, գտել է, որ մեջտեղի խորու-

---

[217] R. Siger, հիշված Իվանովսկու հոդվածի մեջ, Землеведение. 1895. N 3-4.

թյունը 1550 ֆուտից ավելի է, մինչդեռ նորագույն չափումները, որ նշանակված են Սևանա լճի մանրամասն քարտեզի վրա, ամենամեծ խորությունը հասցնում են 361 ֆ.: Այն, ինչ պարոն Իվանովսկու խնդրանքով ուսուցիչ Սարուխանյանը չափել է Նորադուզի և Աստ-Թափի հրվանդանի միջև և գտել է 455 ֆ. ավելի խորություն: Ընդհանրապես կարելի է ասել, որ մինչև այժմ կատարած դիտողությունները ցույց են տալիս, որ լճի հյուսիս-արևմտյան մասը շատ ավելի խորն է, քան հարավ-արևելյանը կամ հարավայինը:

Սևանա լճի ջուրը քաղցրահամ է և խմելու համար միանգամայն հարմար. նա այնքան մաքուր է և թափանցիկ, որ կարելի է խաղաղ ժամանակ նկատել 12-15 սաժեն խորության մեջ գտնված իրերը. ավելի հաստ շերտերում նա փողփողում է կապտավուն-կանաչ գույնով, որի պատճառով և լիճը կոչվել է Գյոկչայ (կապտավուն գետ): Լճի մշտական ցածր ջերմությունը հավասար է չորս աստիճանի: Սովորաբար միայն ափերի մոտ է սառչում, իսկ խիստ ձմեռներին՝ ամբողջովին, սակայն միայն երկու ամիս: Գարնանը և աշնանը նա շատ մրրկահույզ է, պարբերական քամիներից ավելի փչում է հյուսիս-արևելյանը:

Սաստիկ ցուրտ ձմեռները, երբ լիճը ամբողջովին սառչում է, հետաքրքրական երևույթ են ներկայացնում դիշերային չվվոցները: Սրանք առաջանում են սառցային ծածկոցի տակ ամբարված գազերի, սաստիկ ցրտից տրաքված սառցի ճեղքից մեծ ուժով դուրս ելնելիս:

Գետեր. Նոր-Բայազետի գավառը շատ հարուստ է լեռնային վտակներով և գետակներով, ինչպես նաև սառնորակ աղբյուրներով, որոնցից շատերը ամառը չորանում են: Սրանցից միայն մեկը՝ Հրազդանը, սկիզբ է առնում Սևանա լճից և թափվում Արաքսի մեջ, իսկ մյուսները, որոնց թիվը հասնում է 36-ի, բխում են շրջակա լեռներից և թափվում Սևանա լիճը:

Հրազդան կամ **Հուրաստանը** երբեմն կոչվում է նաև **Բջնիջուր**, Բջնի ավանի անունով, իսկ սովորաբար անվանվում է **Զանգու**: Այս անունը հավանորեն ստացել է արաբական տիրապետության ժամանակ այն Զենգի գաղթականներից, որոնք մահմեդականության առաջին դարում թողնելով իրենց հայրենիքը՝ Զանգեբար կամ Զանզիբարը (Աֆրիկայի արևելյան ափում), տեղափոխվել են Արաբիա, և այնտեղից, գուցե այս գետի ափը:[218] Այս անունը կարող է առաջացած լինել նաև այդ Զանդի ցեղի մի զորապետի անունից, որովհետև սրանք սովորություն ունեին իրենց անվանն ավելացնել Զենգի խոսքը:

Զանգուն սկիզբ է առնում Սևանա լճից, Ելենովկա գյուղի մոտ մի փոքրիկ վտակով, որ չուտով կորչում է ճահճային հովտում: Հետո Գոմաճոր

---

[218] Шопен, Ист. памятник состояния Армянской области, ст. 247:

գյուղի մոտ այս հովտի մեջ թափվում է մոտակա հորդ աղբյուրի ջուրը, և Ջանգուն նորից երևում է իբրև մի գետակ: Նրա ջրի քանակությունը այս մասում կախված է քամիներից, որոնք մղում են լճից ջուրը, ինչպես և լճի ջրի մակերևույթի փոփոխությունից:

Ուղղվելով դեպի արևմուտք, Ջանգուն կազմում է մի փոքրիկ ջրընկեց, իսկ Ռնդամալ գյուղի մոտ միանում է Միսխանա և կամ Պղնձահանքի ջրի հետ, որ իր վերին մասում կոչվում է Սոյուղ-բուլաղ: Այստեղից Ջանգուն հոսում է դեպի հարավ և Ներքին Ախտա գյուղի մոտ սկսում է խորանալ ահագին վոսկ մեջ, որ ինքը բացել է մարած խանձողի կույտի մեջ:

Ավելի և ավելի խորանալով այս վոսկ մեջ՝ նա կտրում է թուխ օբսիդիանի (վանակատ, սատանի եղունգ) կարծր շերտը: Այստեղ մոտ երկու վերստ տարածությամբ նա հոսում է ապակու նման ափերի միջով, որոնք տեղ-տեղ մինչև 700 ոտնաչափ բարձրություն ունեն, և որոնք ցոլացնելով իրենց վրա ընկած արևի ճառագայթները՝ խոտեցնում են նայողի աչքերը:

Ջանգուն թափվում է Արաքսի մեջ Սարաջալար գյուղի մոտ: Նրա երկարությունն է 97 վերստ, որից 40 վ. Նոր-Բայազետի գավառում է, 8 վերստը սրա և Էջմիածնի սահմանագծում, մնացածը Էջմիածնի և Երևանի գավառներում: Նրա թեքությունը յուրաքանչյուր վերստի վրա հասնում է վերին հոսանքում 32 ոտնաչափի, միջինում 54, իսկ ստորինում 10-ի: Խորությունը լինում է մի արշին և ավելի, լայնությունը մինչև 10 սաժեն:

Սևանա լիճը թափվող գետակներից նշանավոր են. հյուսիսային կողմում՝ Պալըղ-չայ կամ Ջուբռխլու, սկիզբ է առնում այն գոգավորությունից, որ կազմվում է Փամբակի լեռնաշղթայի և նրա ճյուղ Կեչաչկոտի միջև, բերանը գտնվում է Ջիբռխլու գյուղի հարավային կողմը: Երկարությունը 18 վերստ է: Հավանորեն սա հին Ճապուտիկ գետն է, և այժմյան Ջիբռխլու անունը՝ սրա աղավաղությունը: Արևմտյան և արևմտահարավային կողմերից. Քավառ-չայ կամ Գավառագետ, որի ակունքները գտնվում են Ահմանկանի լեռնաշղթայի Աղ-Դաղ և Ղըզըլ-Դաղ գագաթների միջև, բերանը Նորագյուղ գյուղի մոտ, Շորգյոլ հրվանդանի առաջ: Անցնում է Նոր-Բայազետի հին քաղաքամասի միջով, ուր կա մի քարե կամուրջ: Երկարությունն է 33 վերստ: Սրա մեջ թափվում են Ղուլալի և Դալի-ղարդաշ վտակները: Երանոսի-չայ կամ Ջագա գետակ, Ադամխանի-չայ, Վալի-Աղալուի կամ Շիրին-չայ կամ Շողագա գետակ, Մակ-քարի ջուր, Թազա-քենդի կամ Նորաշենի և կամ Կողա կամ Կողակա գետակ, որ իր անունն ստացել է համանուն ձկներից և որ իջնում է Աբդլլահ-սարից. Գյոլ-չայ կամ Եղնանիստ և կամ Եղնանիստ գետակ, որի լայնությունը ու հոսանքի հանդարտությունը նրան փոքրիկ լճակի տեսք են տալիս: Հարավային կողմից՝ Ատիամանի-չայ կամ Կոթա գետ կամ Իշխանագետ, որ կազմվում է Մեծ, Փոքր և Հյուսիսային Այրի-չայից, որոնցից առաջինը սկիզբ է առնում Ահմանկան լեռնաշղ-

թայի, Հարավային Գոգչայի լեռնաշղթայի միացման տեղում, երկրորդը այս վերջինից փոքր-ինչ արևելք, և երրորդը՝ Ահմանկան լեռնաշղթայի Արխաշան և Դալա-գյողի դագաթների միջից: Բերանը գտնվում է Ներքին Ախտման գյուղի մոտ: Երկարությունը 33 վերստ է. Ղարանլըղ կամ **Կզնուտների գետակ, Թուխտուլու կամ Վարդենոց գետակ, Գյոզալդարայիչայ կամ Գոլատակու գետակ, Ալիչալու-չայ կամ Կոթիկ գետակ և կամ Կթանոց,** որ հոսում է վանավանուց ձորակով, **Գյոտակ-բուլաղ կամ Կարճաղբյուր,** որ միայն մի սաժեն երկարություն ունի, **Ղըզըլ-վանք-չայ կամ Մաքինոցաց գետակ,** որ 35 վերստ երկարություն ունի և Սևանա լիճը թափվող գետերի մեջ ամենաերկարն է համարվում: Հարավ-արևելյան կողմից՝ **Սոդ կամ Զոդ և կամ Մազրա գետակը,** որ կազմվում է բավականաչափ վտակներից, ինչպես՝ **Զախըրլու կամ Ղըզըլ-բուլախ և կամ Կարմիր աղբյուր, Ղըրխ-բուլախ կամ Կալերու ջուր, Ղոչա-բուլախ կամ Վասակաշենի ջուր, Քեթի-չայ, Դամուր բուլախ կամ Արաշատի գետակ** և այլն: Սրանք բոլորն էլ սկիզբ են առնում Քեթի-դաղ լեռից և հոսելով Մազրի դաշտավայրով՝ թափվում են Գիլլի լճակի մեջ: Արևելյան և հյուսիս-արևելյան կողմից՝ **Շիշղայա, Շընփուր կամ Շամփուր** և կամ **Շնփոլատ, Ճիլ, Արտավուճ, Աղ-բուլախ կամ Գետիկ, Թոխլուճա կամ Դրախտիկ, Գյունեյ կամ Արեգունվո:**

Երկրաբանական տեսակետից այս դավառը դեռ լավ ուսումնասիրված չէ, սակայն միանգամայն պարզ է, որ սա հանգած հրաբուխների և քառասյին անկարգությամբ սփռված խանձոդի ահագին կույտերի մի երկիր է:[219]

Այստեղ, լճի հարավ-արևմտյան ափի երկարությամբ ձգվում են հրաբխային հանգած լեռներ, իսկ մի քիչ հեռու բարձրանում են Ահմանկան լեռնաշղթայի ամենաբարձր կոնաձև դագաթները, որոնցից գրեթե ամեն մեկն ունի հրաբխային բերան, դատարկ կամ ջրով լի, կազմելով մի փոքրիկ լճակ: Ենթադրվում է, որ Սևանա լիճն էլ հրաբխից է առաջացել, սակայն դեռևս պարզված չէ թե ինչպես:

ՀԱՆԴԵՐ

Արծաթա-արճճային հանք. Նկատելի է նախկին պղնձահանքի գործարանից 15 վերստ հարավ-արևմուտք:

Պղնձահանք. Բաշ-Ալպարան գյուղից 10 վերստ դեպի հյուսիս-արևելք, Միսխանա դեռը ձախ կողմից թափվող փոքրիկ վտակի ափին: Այստեղից 225 սաժեն դեպի հարավ-արևմուտք գտնվում էր պղնձահալական գործարանը:

---

[219] Մանավանդ Օրդակլուի շրջակայքում, Սևանա լճի արևմտա-հյուսիսային ափում:

Պղինձ գտնվում է նաև Մայմեղ լեռան (10.170) ստորոտում, Մահմուտլի-յուրտ կոչված տեղում, Դիլղաջի հովտում:

Երկաթահանք. Միխանա պղնձահալական գործարանից 2,5 վերստ հյուսիս-արևմուտք, դեպի Ապարանի դաշտը տանող ճանապարհի շուրջը:

Տորֆ. Աղդաղ լեռան հարավային լանջին, ինչպես նաև Միխանայի հովտում՝ Փաշաքենդ գյուղի մոտ և Նոր-Բայազետ քաղաքի շրջակայքում:

Մարմարիոն. Միխանայի պղնձահանքից փոքր-ինչ ներքև՝ Միխանա գետի աջ կողմի վտակի ձախ ափին:

Կրաքար. Կարավան-սարայ գյուղի մոտ (Ախտայից դեպի Դարաչիչակ տանող ճանապարհին), Միխանայի հովտում, Կոնստանտինովկա գյուղից 6 վերստ հեռու:

Դարաչիչակ ամառանոցից 2 վերստ հեռու՝ Մաքրավանք գյուղի մոտ:

Բազալտ. Սևանա լճի հյուսիս-արևմտյան ծայրի մոտ և Ելենովկայից հարավ՝ նույն լճի ափին:

Տրաքիտ և տրաքիտե խանձող և տուֆ (трахит и трахитовые лава и туф). Սևանա լճի արևմտյան ափին:

Վանակատ կամ օբսիդիաքար. Սիչաննի (Բոզ-դաղ) լեռան վրա, որ գտնվում է Սևանա լճից 10 վերստ դեպի արևմուտք՝ Դավագյոզ լեռան լանջերին:

Էյլար և Սուխոյ-Ջանտաան կայարանների միջև՝ Նովո-Նիկոլաևկա գյուղի մոտ:

Սուխոյ-Ջանտաանից 3-5 վերստ հարավ, Մեծ և Փոքր Քյոթանդաղ լեռների վրա:

Սուխոյ-Ջանտաանի մոտ՝ Զանգու գետի ափերում բավական հաստ:

Շախիոլ (8299) լեռան վրա, Սուխոյ-Ջանտաանից 20 վերստ հյուսիս-արևմուտք:

Օրթըլու լեռան վրա՝ 8-9 վերստ հյուսիս արևմուտք վերոհիշյալ լեռից:

ՀԱՆՔԱՑԻՆ ՋՐԵՐ

Կրային սառն աղբյուրներ կան. 1. Հրազդան գետի աջ ափին՝ Նոր-Բայազետ քաղաքից 46 վերստ հեռու, 40°3′ հյուսիսային լայնության և 62°40′ արևելյան երկարության տակ, 2. Միխանայի հովտում՝ Միխանա գետի մոտ, 3. փոքր-ինչ ներքև՝ Դարաչիչակ գետակի ափին, նախկին պղնձահալական գործարանի մոտ և 4. Նոր-Բայազետ քաղաքից 15 վերստ հարավ-արևմուտք և 11 վերստ նույն ուղղությամբ Դալի-Ղարդաշ գյուղից, Արփա-Գյոլից բխող մի գետակի վրա, որ հայտնի է Քեչի-գյադուկի Շոր-Բուլաղ անունով: Ջերմությունը՝ 8°-10° Ռ.:

Ածխաթթու-երկաթային *(углекисло-железистый) աղբյուրներ գտնվում են Հրազդանի ձախ ափին, Գյումուշ գյուղից փոքր-ինչ ցած և հայտնի է Ղոթուր անունով:*

Ծծմբային սառն աղբյուր *կա Ելենովկա գյուղից 2,5 վ. հեռու, Սևանա լճի ափին՝ Հրազդանի ակունքի մոտ, 40°31′ հյուսիսային լայնության և 62°42′ արևելյան երկարության տակ:*

ԿԼԻՄԱՆ

Նոր-Բայազետի ամբողջ դավառում միայն երկու տեղ հաստատված է օդերևութաբանական կայարան՝ Նոր-Բայազետ քաղաքում և Ելենովկա գյուղում: Ի նկատի առնելով, որ այս երկու կայարանների դիտողությունների արդյունքը միմյանցից չափազանց քիչ են տարբերվում, մենք չատանում ենք՝ առաջ բերելով միայն Նոր-Բայազետի կայարանի դիտողությունների աղյուսակները: Սրանցով մոտավորապես որոշվում է դավառի Հարավ-արևմտյան մասի կլիման, մինչդեռ հյուսիս-արևմտյան մասը, որ ներկայացնում է մի լեռնաշղթայի արևելահայաց լանջ և այս պատճառով միանգամայն տարբերվում է իր կլիմայով, մնում է բոլորովին անորոշ, որովհետև այս կողմերում դեռևս չկա և ոչ մի օդերևութաբանական կայարան: Այս պատճառով և կարող ենք միայն մոտավորապես ասել, որ այս կողմերում ձմեռը շատ կարճատև և տաք է լինում, ձյունը շուտով հալվում է, որի շնորհիվ և տավարը կարողանում է ամբողջ տարին արածել: Ամառը բավական չոգ է լինում և օդը չոր:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Սևանա լճի և գետերի մեջ լինում են, տեղացիների ասելով, 12 տեսակ ձկներ, որոնց գիտնականները բաժանում են հինգ տեսակի, որոնք էլ պատկանում են երկու ընտանիքի, երեքը՝ սաղմոնի (лососевых, salmonidae) և երկուսը՝ կիպրինակերպների (карповых, cyprinoidae): Առաջին ընտանիքին պատկանում են. բախտակը՝ արուն, էգը և իշխանը՝ այն, որ այդ տարին ձկնկիթ չի ածում և այն, որ դեռևս չի սկսել ընդունել ամուսնական երփն (salmo ischchan kess): Այս երեքն էլ կազմում են միևնույն տեսակը, թեպետև տարբերվում են միմյանցից թե արտաքին տեսքով և թե ներքին կազմությամբ, բոջակը (salmo species nova) և գեղարքունին (salmo gegarkuni

kessl), որի տեսակներն են նաև կեռակտուց, աղնջակ, ամար, ծվար, խայտաձուկ կամ չալաձուկ:[220]

Կիպրինակերպների ընտանիքին պատկանում են մյուս երկու տեսակը. կոպակ (храмуля, capoeta sevangi fil) և լեղլու (усач, barbus goktshaicus kessl), որ ավելի առատությամբ լինում է Ախտաման գետում:[221]

Օվերինը ասում է, թե Սևանա լճում կա նաև օձաձուկ (угорь, Anguilla fluviatillis Heckel) և ավելացնում է, թե սրան հայերը անվանում են ջրի օձ և չեն գործածում: Իսկ կեսլերի կարծիքով սա Կասպիական քարալեզ (миног, Petromyzon vagneri kessl) պիտի լինի, որը Զանգու գետով անցնում է Սևանա լիճը, և որը մի քանի տեղ օձաձուկ կամ ջրի օձ է կոչվում և չի ուտվում:

Սևանա լիճը պետությանն կողմից կապալով է տրվում զանազան անձերի, որոնք իրենց կողմից ավելի մանր մասերով կապալով են տալիս ծովափնյա գյուղերի բնակիչներին: Երեք տարին մի անգամ մի ամբողջ տարով արգելվում է ձուկ որսալ լճից ծախելու համար, որպեսզի սաստիկ չպակասի սրանց քանակը, թեպետև արդեն վաղուց անցել է այն ժամանակը, երբ կուժը ջուր լցնելիս էլ ձկները թափվում էին մեջը:

Այս սիստեմի անհարմարությունն էլ արդեն զգացված է, և սպասվում է, որ կառավարությունը փոխանակ այդ ձևով՝ ամեն տարի աճման ամիսներին որսալու արգելք դնի:

Բացի ձկներից լճի մեջ վխտում են փոքրիկ խեցգետիններ (gammaridae), որոնք կազմում եմ իշխանաձկի գլխավոր ուտեստը, գեթ սրա միայն երկու տեսակներն են գտնված G.pulex L. և G.sibiricus: Զանգու գետում պատահում են կարճագլխ խեցգետիններ (Thelphusa ibera guld), բայց գրանք լիճը չեն մտնում, երկարագլխ խեցգետիններ (Astacus) դեռևս չեն գտնվել ոչ Զանգու գետի, ոչ էլ լճի մեջ: Սարդանման կենդանիներից պատահում են կարիճներ, ինչպես սովորականները (Androctonus ornatus Nordm.), այնպես և սևերը (Androctonus bicolor Ehrenb.): Պատահում են նաև, քիչ քանակությամբ, փաղանգներ, որոնք կարծես պատկանում են միայն մի՝ Solpuga araneoides Latr. տեսակին և փաղիժներ (тарантулы, Lycosa singoriensis Laxm.): Սևանա լճում կան նաև մեծ քանակությամբ ջրային խխունջներ, որոնք պատկանում են Lymnaeus stagnalis L.L.Ovatus Drap. L.auricularius Drap. և Planorbis carinatus Mull տեսակներին:

---

[220] Մանրամասն նկարագրությունը լուսանկարներով կարելի է տեսնել Կովկասյան թանգարանի հրատարակած «Лососевые (Salmonidae) Кавказа О. Кавренского» աշխատության մեջ:

[221] Մանրամասն նկարագրությունը կարելի է տեսնել նույն թանգարանի հրատարակած «Карповые (Cyprinoidae) Кавказа С. Каменского. Тифлис. 1899 и 1901 гг.» աշխատությունների մեջ:

Տարիներ	Բարոմետր			Ջերմություն									Բացարձակ խոնավություն			Հարաբերական խոնավություն			Ամպամած		
	Միջին	Մաքսիմում	Մինիմում	7	1	9	Միջին	Մաքսիմում	Ամսաթիվ և ամիս	Բացարձակ մինիմում	Ամսաթիվ և ամիս	Միջին մինիմում	7	1	9	7	1	9	7	1	9
1901	603.6	611.2	501.4	3.6	11.5	4.6	6.6	29.3	24/VIII	30.0	23/1	0.0	5.0	4.9	5.2	76	48	75	4.6	4.8	3.6
1902	603.1	610.5	588.5	2.9	10.5	3.6	5.7	27.1	29/VII	-	-	-	5.1	5.0	5.3	78	50	78	5.1	5.7	4.5
1903	604.1	610.9	591.5	1.7	10.0	2.6	4.8	27.7	22/IX	22.5	1	2.4	-	-	-	-	-	-	4.6	5.3	3.8
1904	603.8	613.6	590.2	2.0	9.2	2.6	4.6	25.9	21/VI	27.2	20/1	1.8	5.2	6.2	5.3	82	64	81	5.9	5.9	5.0
1905	604.4	611.8	590.9	1.7	9.8	1.2	4.2	27.7	16/VII	31.3	28/1	2.3	5.2	6.5	4.8	81	63	81	5.3	5.5	4.6
Գումար.	190	-	-	11.9	51.0	14.6	25.9	-	-	-	-	6.5	20.5	22.6	20.6	317	225	315	25.5	27.2	21.5
Միջին թիվ	603.8	113.6	588.5	2.4	10.2	2.9	5.2	29.3	-	31.3	-	1.6	5.1	5.6	5.2	79	56	79	5.1	5.4	4.3

Տարիները	Քամու արագությունը			Քամիները								Հանգարտ.	Նստոյգք			Օրեր										
	7	1	9	N	NE	E	E'S	S	SW	W	NW		Գումար	Մաքսիմում	Ամսաթիվ և ամիս	Նստոյգք	Ջուր	Կարկուտ	Ամռան փոթորիկ	Հնուց փոթորիկ	Փայլատակում	Պայծառ օրեր	Ամպամած	Ցուրտ	Սառնամանիք	Մրրիկ
1901	0.8	1.8	0.6	29	77	33	20	33	25	190	17	751	-	-	-	-	-	0	2	1	0	78	50	5	172	8
1902	0.7	1.9	0.7	67	87	26	23	39	47	90	0	684	28.0	35.0	14/v	78	32	3	0	0	2	36	55	43	-	10
1903	0.5	1.4	0.3	22	86	21	14	15	32	67	27	793	183.8	29.5	19/VI	113	37	4	26	5	5	68	40	80	185	7
1904	0.7	1.4	0.4	70	30	10	16	28	43	43	21	824	642.4	48.5	25/X	*129	*43	2	13	2	4	39	70	61	185	4
1905	0.5	1.4	0.4	72	8	8	11	14	27	62	25	864	499.4	38.1	8/VIII	119	48	1	29	4	8	59	62	90	188	4
Գումար	3.2	7.9	2.4	260	288	98	84	129	171	372	110	916	195.6	-	-	439	160	10	70	12	19	280	286	369	730	33
Միջ. թիվ	0.6	1.6	0.5	52	58	20	17	26	35	71	22	783	488.4	48.5	-	110	40	2	14	2	4	56	57	62	182	7

Սրանց մեջ գերակշռում են L.stagnalis և Pl. carinatus տեսակները, որոնց պլոճք. կեսլերը հասնել է 100, իսկ պլոճք. Բրանդը մինչև անգամ 238 ոտնաչափ խորությունից: Սևանա լճի խխունջները նրանով են տարբերվում, որ նրանց խեցիները չափազանց բարակ են: Տզրուկների ընտանիքից գտնված են հինգ տեսակներ՝ այն է. Nephelis octoculata Bergm. Aulastoma gulo Braun (Haemopis vorax fil) և երեք տեսակ Clepsine – սեռից, այն է. Ch. Orientalis (երկաչյան տեսակը). ch. Goktshaica (վեցաչյան) և ch. Leuckarti (ութաչյան):

Զանազան մանրադիտական խեցգետիններով (рачек) և այլ ստորակարգ կենդանիներով ավելի հարուստ են լճի սակավաջուր ծոցերը, ինչպես օր.՝ Ելենովկայինը, և սրանք աճում են Myriophyllum spicatum L. և Potomogeton perfoliatus L. ջրային խոտերով և Enferomorpha intestinalis Link ջրիմուռով: Մեծ քանակությամբ պատահում են ջրային գորտեր (Rana esculenta L. և Rana axyrrhina steenstr.) և դոդոշներ (жаба, Bufo viridis Laur): Բազմաթիվ են նաև սովորական իժերը (ужь, Tropidonotus natrix) և սողունները (Vipera berus L.):

Կաթնասուններից Նոր-Բայազետի գավառում պատահում են արջեր (Ursus arctos), եղջերուներ (cervus elaphus L.), բազմաթիվ նապաստակներ (Lepus variabilis), գայլեր, աղվեսներ: Այս վերջինները պ. Բադդեի ասելով և պրոֆ. Բրանդի հաստատությամբ, բոլորն էլ պատկանում են vulpes melanotus Pall. տեսակին, իսկ իսկական, եվրոպական աղվեսներ, vulpes vulgaris gray բոլորովին չկան Անդրկովկասում: Սևանա լճի ափերին պատահում են ջրաղվեսի հետքեր: Սակայն այս բոլորից ամենաբազմաթիվն ու ամենավնասակարը դաշտամուկն է (Arvicola socialis), որ մեծ տարածության ցանքսեր է փչացնում:

Թռչուններից կան թե բարձրասլուններ, թե ջրայիններ, անհամեմատ ավելի Սևանա լճի հարավային կողմում, ուր շատ շամբեր և եղեգնուտներ կան, քան հյուսիսային ժայռոտ ափին: Այստեղ մեծ քանակությամբ գտնվում են սագեր, բադեր, մանավանդ ճախնային (Fuliga fusca L.) և խայտաբղետ (Casarca Rutila Pal.) տեսակները. ամբողջ խմբերով լողում են սև փարփարներ[222] (лысуха, Fulicula atra L.), բազմաթիվ ջրասույզ բադեր (Podiceps), ձկնկուլներ (чайка, Larus), որոնք բավական մեծ վնաս են պատճառում ձկնորսությանն, ուստի և Ելենովկայի ձկնորսներն անողորմաբար

---

[222] Տեղացիները չեն ուտում փարփարների միսը, ուստի և չեն որսում, այս պատճառով և այս թռչունները ամենայն վստահությամբ լողում են լճի ափերին մոտիկ, և նույնիսկ մոտենում նավակներին: Հետաքրքրական է տեսնել, թե ինչպես փարփարները, նկատելով մի որևէ նավակի մոտենալը, չոտպում են ծածկել իրենց բները ցախով ու խոտով, որպեսզի թաքցնեն ձվերը և հետո հանգիստ լողում են նույն նավակի մոտ:

փչացնում են նրանց բներն ու ձվերը: Քարքարոտ կղզյակների վրա և ծանծաղուտ տեղերում չարունակ նստում են հավալուսներ (Pelecanus crispus Bruch) և ջրագռավներ (Carbo cormaranus Meyer): Հավալուսները ձմեռնամուտին բոլորովին թողնում են Սևանա լիճը, մինչդեռ ջրագռավները մնում են այստեղ և ձմեռելու: Լճի հարթ ափերը կենդանանում են բազմաթիվ և բազմազան կտցարներով, որոնց մեջ նկատելի են՝ ծովային Aegialites cantianus Lath-ը (зуек), Aegialites hiaticula L. (галстушник), եղտյուրիկը (пигалица, vanellus cristatus Meyer), մեծ և կարմրաոտ Totanus glottis L. և T. calidris L. (улит), տրինգա, Tringa cinclus L. (пестрозобый песочник) կտցար (skolopax gallinago L.) և recurvirostra avocetta L. (шилоклюква): Ավազոտ տեղերում միշտ կարելի է տեսնել մոխրագույն արագիլ (ardea cinerea серая цапля), ճահճոտ տեղերում կան շատ լորամարգիններ (Coturnix communis Bonap. коростель): Լճի ափերին թռչկոտում են զանազան բազեներ (соколики-кончики), առավելապես՝ Falco tinnunculus և F. cenchris տեսակներից: (Saxicola rubetra L. луговой чеканчик, saxicola oenanthe L. чекань-плутчик), կարմրաուտուն (Lusciola phoenicurus L. горихвосатка), զանազան դախսարեկներ (Phyllopneuste пеночки), առավելապես Ph. Eversmanni Bonap (Ph. Icterina Eversm) և Ph. rufa lath. և Ph. Trochilus L. տեսակները Calamoherpe arundinacea Lath камышевка), չինական և ընտանի ծիծառ (ласточка-косатка и ласточка-стрижок, Hirundo rustica և H. urbica L.), սպիտակ խաղատնիկներ (белые трясогузки, Motatilla alba L.), զանազան արտույտներ, մանավանդ մարգերի արտույտներ (Alauda arvensis L.), ինչպես և կատարավորներ (A.cristata, хохлатый) և դաշտայիններ (A. calandra L. степной), կանեփակեր ճնճղուկ (Fringilla cannabina L.), սարյակների (Sturnus vulgaris L.) ահագին երամներ, ընտանի ճնճղուկներ (Passer domesticus L.), երբեմն պատահում են մոխրագույն ագռավներ (corvus cornix L. серая ворона) և կաչաղակներ (Pica caudata L.): Կռունկներ երևում են միայն անցնելիս: Նոր-Բայազետ քաղաքը գալիս են ամեն տարի բուն չինելու մի քանի զույգ սպիտակ արագիլներ (Ciconia alba L.): Դը-Ֆիլիպպին իր ճանապարհորդության ժամանակ Ելենովկայի շրջակայքում նկատել է նաև Pandion haliaetos L., Motacilla flava L. (melanocephala) և սև արագիլ (տառեխ) ciconia nigra:[223]

---

[223] *Ивановский, Озеро Гокча. Այս մասը կազմված է Բերբի, Կիսալերի, Դանիլևսկու և Բրանդտի ուսումնասիրությունների հիման վրա:*

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գարնանը՝ մայիսի սկզբին, լեռների հարավային լանջերին բուսնում են հետևյալ մանրիկ, միամյա բույսերը, որոնց կարելի է նկատել միայն գետնին կռանալով. գարնանային դրաբա (Драба верна - draba verna), խոպոպավոր խաճեն (крупка весенняя, Holesteum umbellatum), սուսամբար (Sisymbrium nudum), ծիրանագույն կղնճմայր (Lamium purpureum), եղջյուրախոտ (Cerathocepha-lus orthoceras), համեմատաբար ավելի մեծ կոտեմ (Lepidium perfoliatum), տակ (Alyssum desertorum), gagea, հետո վայրի տորոն (gallium vernum), սիբեխ (Scorzonera), fritillaria tulipoides, կակաչ (Tulipa Gessneriana) (ոչ ամեն տեղ) անանուխիկ (Poa bulbosa), կովկասյան շուշան (iris caucasica), Ajuga orientalis և ուրիշներ:

Տարվա շոգ ժամանակ լեռների հարավային լանջերին հատուկ այս բույսերն ավելի նոսր են լինում, այնպես, որ երբեք ճիմ չեն կազմում և մի առանձնահատուկ, խեժախառն հոտ ունեն՝ շրթնագույնների, մանավանդ ուրցի (Thymus serpyllum), օշինդրի և Pyrethrum-ի առատության պատճառով, և բուսական դաշտանկարը սառնում է մոխրագույն-սպիտակավուն երագ. սրանց ներկայացուցիչներն են. եղածաղիկ (Ranunculus illyricus), ճակնդեղ (Alyssum alpestre, campestre, linifolium), սխտորամայր (Erysimum ibericum), մեխակներ (Dianthus Liboschitzianus, D.capitatus, D.campestris), սուսամբարներ (Silene longiflora. S.repens), համասփյուռ (Melandryum pratense), Arenaria graminifolia, խնկածաղիկ (Hypericum hyssopifolium, H. repens), երնջակ կամ փուշխոտ (eringium campestre), սոխզդին (daucus pulcherrimus), առվույտ (Medicago sativa, Vicia persica), զանգածաղիկ (Campanula sibirica C. Steveni), սրա տեսակից՝ Centauea sessilis Willd, այծամորուք (tragopogon floccosus), օշինդր (Artemisia Absinthium), Pyrethrum achilleaefolium և սրա պարագիտ՝ Anoplanthus Biebersteinii, բերիկիկ (Veronica orientalis), Onosma sp. Onosma sericea, Echium rubrum, Cerinthe maculata, Cyphomttia lanata, ծեթրոն, Thymus serpyllum, Ziziphora vulgaris, օշինդր (Teucrium orientale, T. chamaedrys, polium), պառնադմակ (Ajuga chia), սղանդն (Scutte-laria orientalis шлемник), վայրի դաղձ (Nepeta Moussini, nuda), մոշա (Stachis recta) և այլն:

Ամառվա կեսին այստեղ բաց է անում իր հովանին Prangus ferulacea, այս բույսը շատ բնորոշ է այստեղի համար. գարնանը նրա նորաբողբոջ ընձյուղները, որոնք դուրս են ցցվում գետնից ջայլամի փետուրների նման, մի քանի տեղ ամբողջովին ծածկում են ժայռերի լերկ լանջերը: Այստեղ երբեմն նկատվում է քիչ քանակությամբ մասրենի և ասպիրակ (маволга).

Տեղ-տեղ լեռան լանջը ժայռոտ լինելով կամ քարակույտեր է կազմում կամ ուղղաձիգ կտրտվելով՝ երևան է հանում լեռան իսկական երկրաբանական կազմությունը, ինչպես օրինակ՝ Զանգու գետի բազալտային ափերը՝ Քախսի գյուղից ներքև: Այսպիսի տեղերում նկատվում է տեղական պայմանների հարմարված բուսական ինքնուրույն կազմություն, որի սակավաթիվ ներկայացուցիչները ապաստանում են ժայռերի ճեղքվածքների մեջ գտնված փափուկ հողում: Այսպիսի տեղերում գարնանը բուսնում են սպիտակաչուրթ կոտմնտուկ (arabis albida), մանուշակ (Viola persicifolia), խուռվ խոտ (Scrophularia chrysantha) և Scrophularia variegata, իսկ ամառը՝ դեղնցիկ փնջերով ծերպերից ժայթքած զանգակածաղիկներ (Campanula) և մեխակներ (Dianthus fragrans), գառնադմակիկներ կամ վերվեր տանեաց (Sedum album acre, pilosum, gracile):

Բացի դրանից այսպիսի ժայռոտ տեղերը շրջապատված են լինում թփուտներով, առավելապես վայրի վարդենու և ասպիրակի, որոնք բուսնում են նաև ժայռերի ծերպերում: Այս տեսակի թփերը, որոնք շրջապատում են ժայռերը, տարածված են և բնորոշ են Ահմանկանի լեռնաշղթայի լանջերին: Սրանցից ամենից բնորոշ է նրբատերև արուզանը (epilobium angustifolium), կատվախոտը (Valeriana alliariaefolia), Dictamnus Fraxinella, Rhynchocoris orientalis, Bupleurum falcatum, Astragalus cicer, Astragalus corniculatus և այլն:

Վերոհիշյալ բոլոր կազմությունները, այսինքն 1. լեռների հարավային լանջերի կավոտ դաշտավայրերի, 2. խազիրանի (ксирагаръ) փշոտ թփերի, և 3. ժայռերի և սրան ննջարկվող թփուտների կազմությունները տեղի ունեն նաև Գյունեի լճափում, միայն այստեղ, բացի այդ կազմությունների համարյա բոլոր ներկայացուցիչներից, նկատվում են նաև ուրիշ տեսակներ, որոնք դավառի մյուս մասերում չկան կամ շատ հազիվ են պատահում: Այսպես են օր. սխտորամայր, erysimum Szowitsianum Boiss, եղածաղիկ (ranunculus oxyspermus), Hyppomarathrum crispum Koch, aetionema (iberdella) sagittatum, լորասերմ (Stacnys lavandulaefolia նոր տեսակի), Bungea trifida, մկնամրգի (Hedysarum daghestanicum), Coluteocarpus reticulatus, Thesium ramosum Hayne, մարդմարոտ (Asperulum Alph.), Atraphaxis buxifolia, հոսի (Astrgalus sp. nova) և ուրիշներ: Այս տեսակները, խառնվելով վերոհիշյալ կազմությունների ներկայացուցիչների հետ, բնորոշ տեսք են տալիս Գյունեի լճափի բուսականությանը՝ տարբերելով նրան մյուսներից:

Անտառապատ ձորերին, որոնց մասին խոսելու ենք հետո, հետևում են մի շարք կուսաններ, այսինքն ընդարձակ, գետնափոր խուղերի խմբեր, որոնք ամառը բարձիթողի են արվում, իսկ ձմեռը իրր գիշերային ապաստան են ծառայում ոչխարների հոտերին, որ տարվա այդ ժամանակ բերում են այդտեղ արածացնելու:

Այս խուղերի չուրջը բուսնում են սովորական Asperugo procumbens, կոտեմ (Lepidium Draba) Gapsella Bursa Pastoris.

Գյունեի լեռնաշղթայի այն մասը, որ տեղ-տեղ համարյա ուղղաձիգ իջնում է լճի մեջ և մեծ մասամբ ծածկված է ժայռերով ու քարակույտերով, պատած է կարմիր-ժանգագույն և կանաչ-մոխրագույն մամռով: Այս քարափների կատարները զարդարված են բողկի տակով (Pyrethrum parthenium), իսկ նրա չուրջը և մեջմեջ սեղմվում են վայրի վարդենին, ասպիրակը, կծոխուրը և այլն: Կան նաև չիկատակ (Atraphaxis buxifolia), իսկ խոտային տեսակներից՝ ձարխոտ (Stipa Szovitziana), որ բուսնում է ժայռերի փոսիկների մեջ լցված սևահողի բարակ շերտերում, Silene saxatillis-ի և Pyrethrum achilleaefolium-ի հետ: Հետո Ephedra sp., որ սակայն, ավելի դերադասում է բուսնել ժայռերի կավոտ-ավազային լանջերի վրա, և վերջապես ցրտենին, որ ժայռերի ճեղքվածքների մեջ է ուղղում իր արմատները: Այս վերջինն ամենաբնորոշ բույսն է Գյունեի լեռնաշղթայի համար: Նրա ծառերը ցրված և տարածված են ամբողջ հյուսիս-արևելյան լճափին, և միայն Ադա-թափա մեծ թեքակղզու վրա այնքան խտանում են, որ կազմում են ցրտենու մի ամբողջ անտառ, մոտավորապես 25 վերստ տարածությամբ, Ջիլ և Սատանախաչ գյուղերի միջև: Այստեղ բուսնում են ցրտենիի երեք տեսակներ. Juniperus sp., որ փռվում է գետնին, ծառանման՝ J. oxycedrus J. excelsa. Այս վերջին տեսակն Ադա-թափա թեքակղզու վրա հասնում է 1-1,5 սաժեն բարձրության, իսկ Ջիլ գյուղից վերև՝ 2-3 սաժենի: Նրա հաստությունը ներքևում հասնում է 0,5 արշինի, իսկ վերևում արագությամբ բարականում է և ծառին տալիս պլրամիդի տեսք:

Այստեղի ցրտենու անտառի մեջ պատահում են նաև փշոտ խազիրանի տեսակներ (Astragalus Marschallianus, aureus, persicus, caucasicus,) էսպարսետ (Onobrychis, cornuta), չանկաթ (Acatholimon glumaceum) և այն բոլոր բույսերը, որոնք նկատվում են արևմտյան լճափին, միստային ճանապարհ մոտերքը:

Մնում է մեզ ուշադրություն դարձնել Սևանա լճափի դաշտային գոտու բուսականության վրա: Գյունեի լճափում, ավելի հյուսիսային կողմում, նա շատ նեղ շերտ է կազմում, որ միմիայն տեղ-տեղ ընդարձակվում է արևելյան կողմում, հետզհետե լայնանում և կազմում Զորի դաշտավայրը, իսկ հարավ-արևմտյան մասում նա շատ ավելի ընդարձակ է քան Գյունեի կողմում, և ընդհարվում է Ահմանկանի լեռնաշղթայի փեշերին, որից բարձր սկսվում են Ահմանկանի սառրին-ալպյան արոտատեղինները:

Այս լճափյա դաշտավայրը բուսաբանական տեսակետից կարելի է բաժանել երեք համակենտրոն գոտիների:

Լճի անմիջապես ափին նկատվում են փխրուն չեղջաքարի (կոնգլոմերատի) երիզներ, որոնց մասին արդեն խոսեցինք. սրանք ընդհատումներով

ձգվում են լճափին 2-50 սաժեն տարածությամբ ու ծածկված են ողորմելի և աղքատ բուսականության ներկայացուցիչներով, որոնք այն աստիճան ցածր և նոսր են բուսնում, որ կարծես թե պատահմամբ են ընկել այստեղ: Համարյա ճիշտ լճափին տեղ-տեղ պատահում է isatis brachycarpa, որ հատուկ է Սևանա լճափին, իսկ ամենից շատ՝ օշինդր (Artemisia austriaca), ուստի և այս շրջանը կարելի է կոչել օշինդրի դաշտ: Խառնիխուռն բուսնում են նաև պատուտակ (Convolvulus lineatus), ձիակորեկ կամ սև ցորեն (Polygonum sp.), մատնունի (Potentilla bifurca): Այս տեղերի համար շատ բնորոշ է կովկասյան կակաչը (Papaver caucasicus), խըոբընդաաը (Verbascum sp.): Դարձյալ պատահում են եղիսպակ, քարացուռնծ (Salvia verbascifolia), Arenaria serpyllifolia, վերջապես օշինդրից ոչ սակավ քանակությամբ ցրված Bromus tectorum և Carex sp.:

Շնորհիվ այն հանգամանքի, որ ավազը շատ է ընդունում ջերմություն, այս բույսերը շուտով չորանում են, և մայիսի վերջին անգամ այս շրջանը շատ տխուր և այրված տեսք է ստանում, մանավանդ երբ միացած է լինում լճափնյա բուսականության երկրորդ գոտու հետ, որ տարածվում է ճահիճների և լճակների շուրջը: Այս գոտին ևս մի անընդհատ տարածություն չի բռնում, այլ բոլորում է միմյանցից քիչ թե շատ հեռու գտնվող ճահիճների և լճակների շուրջը:

Միայն Զոդի դաշտավայրում, Գիլլի լճի և Համանուն, միմյանց կից, ճահիճների շուրջը այս գոտին բռնում է մի անընդմիջվող տարածություն: Այստեղ առավելապես բուսնում են եղեգներ, որոնց մեջ վխտում են ճահճային թռչուններ:

Գիլլի ջրային բուսականությունը միանգամայն նման է Սևանա լճի և լճափնյա ջրային բուսականությանը. գերիշխում են՝ հազարտերևուկը (Myriophyllum spicatum) և Lemna triscula, որոնց լճի կատազած ալիքները մեծ քանակությամբ շպրտում են ափը, ապա՝ շահագործ աղբերաց կամ հասկ ջուրց (Iotamogeton perfoliatus L.), Entheromorpha intestinalis, հետո Raunculus aquatilis, Hippuris vulgaris, մատիտեղն (Polygonum amphibium), սուսամբար (Alisma plantago), բերոնիկե կամ վերոնիկե (Veronica Anagallis). ճահիճների ափերին, թաց հողի մեջ հրանունգ (Ranungulus sceleratus), առվույտ (Trifolium repens), և ճահճային բույսերի մի փարթամ դորգ և հետո ջրասեր բույսերի մի ամբողջ կազմություն:

Մատնունի (Potentilla anserina). Trifolium fragiferum, գառնալեզու, ջաղխոտ (Plantago major) և այլն:

Ապա սկսվում է լճափյա դաշտավայրերի բուսականության երրորդ գոտին, որ ձգվում է առաջին երկուսի շուրջը, համեմատաբար ավելի լայն շերտով: Այս գոտին հաճախ ընդհարվում է լճափյա, օշինդրային գոտու հետ, այնպես որ վերոհիշյալ լճափյա ճահիճներն ու լճակներն ընկնում են

այս երկուսի մեջ, սակայն երբեմն նա անմիջապես միանում է լճափին: Այս երրորդ գոտու բուսականությունը նման է հարավային լեռների կավոտ լանջերի բուսականությանը, միայն նրանից ավելի աղքատ է, միատեսակ, սակայն այս միատեսակությունը կայանում է միաժամանակ մի քանի տեսակների գերիշխանության մեջ: Այդ տեսակներից են՝ վայրի դաղձ (Nepeta Moussini), գարնանածաղիկ կամ կովացնծուկ (Stachys recta), եղիսպակ, կենեղուտ (Salvia verticillata) և Sitvestris, հափրուկ (Reseda lutea), կաղանչան կամ երկաթնուկ (Euphorbia gerardiana) և Crambe orientalis: Վերջին երկուսը չատ տեղեր սաստիկ գերիշխում են և կազմում անընդհատ մարգեր՝ կաղանչանը կամ երկաթնուկը (Euphorbia Gerardiana), բարձմենակի (Achillea ciliata) և A. millefolium-ի հետ հարավ-արևմտյան ափին, իսկ Crambe Զոդի դաշտավայրի հյուսիսային կեսում, ուր նա տաղտակալի տեսք է տալիս բուսական դաշտանկարին՝ կազմելով սպիտակ խրձերի մի ընդարձակ դաշտ: Տեղ-տեղ միայն պատահում են ասպիրակ (Astragalus alopecuroides) և չորային մանր բույսեր, ինչպես՝ պատուտակ (Convolvulus lineatus) Nonnea pulla, բերոնիկե (Veronica orientalis), գառնալեզու (Plantago montana), սիբեխ (Scorzonera laciniata):

Ընդհանրապես դաշտավայրի բուսականությունը չատ աղքատ և նոսր է: Եվ քանի որ լեռների հարավային լանջերը ավելի հարուստ են դաշտային բուսականության ներկայացուցիչներով, չի՞ կարելի արդյոք այդ, բացի բույսերի կյանքի պայմանների տարբերությունից, բացատրել նաև նրանով, որ լեռները պատնեշ են հանդիսանում քամիների դեմ և այսպիսով պահում են նրանց տարած զանազան բույսերի սերմերը, մինչդեռ դաշտավայրում նրանց ոչինչ չի բռնում և քամին տանում է հեռու՝ մինչև լեռները:

Այժմ Զոդի դաշտավայրի մեծագույն մասը ծածկված է ջրարբի արտերով և համարվում է սաստիկ հացառատ: Նրան մինչև անդամ անվանում են Երևանյան նահանգի «չեհմարան»: Հունիսի սկզբին այս արտերի տարածությունը ներկված է լինում միապաղաղ դեղին գույնով՝ չնորհիվ ծաղկող մանանեխի (Sinapis arvensis var. orientalis), որ գերիշխում է այստեղ:

Այժմ անցնենք թփերի, անտառային և լեռնային արոտատեղերի բուսականության նկարագրությանը:

Թփերը բուսնում են նեղ ձորակներում. ինչպես օր.՝ Բալըղ-չայի ձորակում, լեռների հյուսիսային և հյուսիս-արևմտյան լանջերի երկարությամբ ձգվող ծալքերի մեջ, ինչպես օր՝ Զիբուխլու գյուղի հանդեպ, Ինակ-դաղ և Քյոթան-դաղ լեռների վրա, ինչպես և Ադա-թափա թերակղզու վրա: Այստեղ՝ Գյունեի չոր և տաք լճափին բուսնող թփերի տեսակներն են. Cotoneaster vulgaris, Lonicera Caucasica և Lonicera Xylosteum. գերամաստի (Viburnum Lantana), կոճախուրի (Berberis vulgaris), մասրի (Rosa rubiginosa L.), ցիրանցի (Spiraea crenifolia), վայրի կեռասենի (Prunus padus), սին

(Sorbus aucuparia S. Aria), սև հաղարջ (Ribes nigra, Ribes grossularia), Amelanchier vulgaris Mönch, սպնի (Crataegus orientalis) և ուրիշներ:

Այս թփերը խմբվելով՝ կազմում են անանցանելի մացառներ: Սրանց հովանու տակ աճում են մեծ մասամբ անտառային խոտեր, ինչպես՝ Linum hirsutum, վայրի դաղձ (Nepeta grandiflora), կատվախոտ (Valeriana alliariaefolia), երկաթնուկ (Euphorbia aspera), սանամաքի (Thalictrum foetidum), հրեշտակաց բույսի մի տեսակը՝ Chaerophyllum aureum, մոշա (geum urbanum L.), աղավնակտուց, խորդենի (geranium silvaticum), մղամուճճ (Vicia Ralansae), հոսի, մկնամրգի (Astragalus fruticosus), բողկի տակ (Pyrthrum carneum), սակավ, խուռվախոտ (Scorphularia orientalis), Cerastium dahuricum և այլն:

Վերոհիշյալ թփերի տեսակներին, ավելի հարավային կողմում՝ Սատանախաչ գյուղի մոտ, այնտեղ, ուր վերջանում է ցրտենու անտառը, ավելանում են նաև խնձորենի, տանձենի, Rhamnus arctostaphylos:

Անտառները գտնվում են գավառի հյուսիս-արևմտյան անկյունում, Դարաչիչակի կամ Ծաղկաձորի վիճակում և բռնում են 300 ք. վերստից ավելի տարածություն: Այս անտառի առաջացման գլխավոր պատճառներից մեկն էլ պիտի համարել և այն, որ նրա տեղը հիանալի կերպով պաշտպանված է բարձր լեռնաշղթաներով. հյուսիսից այն շրջապատված է Փամբակի լեռնաշղթայով (10000 ոտ.), իսկ հարավում՝ Սուդիգանի լեռնաշղթան պաշտպանում է նրան հարավային, այսպես կոչված «երևանյան քամու» չորացուցիչ ազդեցությունից:

Դարաչիչակի Ծաղկաձորի անտառի գլխավոր ներկայացուցիչը կաղնին է (Quercus pubescens), որ բոլոր տեսակներից բազմաթիվ է: Նա շատ խիտ է բուսնում, միայն շատ չի աճում, սովորաբար 3 սաժենից ավելի չի բարձրանում և հաղիվ 0,25 արշին տրամագիծ է ունենում:

Դարաչիչակի Ծաղկաձորի անտառում միակ փշատերև ծառը հանդիսանում է ցրտենին՝ ցրված անտառային շրջանի հարավ-արևելյան ծայրում, կախսի և Բջնի գյուղերի մեջ և փոքր-ինչ հեռու՝ լեռնաշղթայի հարավ-արևելյան թեք լանջին, որ ստորոտում ոռոգվում է Զանգի գետով: Այս փոքրիկ տարածության վրա այդ ցրտենին կազմում է մի փոքրիկ անտառ՝ լի գազի թփերով, ինչպես Գյուլնեի լճափին: Հնում ցրտենին այս անտառում շատ ավելի էր տարածված, սակայն հետզհետե պատրաստելով փայտուկ սևահող՝ տեղի է տվել կաղնուն: Այնպես որ Դարաչիչակի Ծաղկաձորի անտառը պետք է նկատել որպես կաղնու անտառ: Այդտեղ կան և ուրիշ տեսակ ծառեր. ներքին շերտերում ամբողջ հրապարակներ բռնված են վայրի խնձորենիներով և տանձենիներով: Նաև լորին (թմբի, ilma, tilia), ներքևում կազմում է մացառներ: Ուշագրավ է այստեղի մանրատերև լորին (Tilia parvifolia), որ ըստ Մեդվեդևի, լորի բոլոր տեսակներից ավելի քիչ է

տարածված Կովկասում և հատուկ է, համարյա բացառապես, լեռնային անտառների վերին շերտին:

Ներքևում սովորաբար պատահում են սևանի կամ ողկուզաբեր կիռաս (Prunus padus), խուրենի (Evonymus latifolius), սզնի (Crataegus orientalis), կոծախուրի (Berberis vulgaris), Lonicera caucasica, հրչակ (daphne Mezereum), գերամատի (Viburnum lantana) և այլն:

Դեպի վեր բարձրանալիս մի բան սաստիկ աչքի է ընկնում. ծառերը հետզհետե փոքրանում են, նոսրանում, ծուռումուռ բունով և խղճալի տեսք ընդունում:

Անտառի վերին սահմանն անցնում է մոտավորապես 7,5-8 հազար ոտնաչափ բարձրության վրայով և վերջանում է հետևյալ ծառերով. Ribes alpinum, սին (Sorbus aucuparia), գերամատի (Viburnum Lantana), կեչի (Betula alba) և մասրի (Rosa sp.), իսկ մի քանի տեղերում՝ ինչպես Միսխանի հովտում, անտառի վերին սահմանի ծառերը բացառապես կեչի են, նրա սովորական var. pubescens տեսակը և արտասվող ուռենի. ուշագրավ է, որ սրա բավական հաստ բունը ուղղահայաց չի բարձրանում, այլ փռվում է գետնի վրա, այնպես որ ծառի դագաթը ներքև է նայում: Այսպիսի սալիտակ բների չարքը, որ փռված է գետնի երեսին, ներքև ուղղված դագաթների ճյուղերով, մի ինքնատիպ պատկեր է ներկայացնում, որ հրապուրիչ գուրկ չէ և շատ լավ բացատրում է քամու ազդեցությունը, սևահողի աննշան հաստությունը և ընդհանրապես այն խիստ պայմանները, որ ծառը ստիպված է կրել այս բարձրության վրա:

Մնում է նկարագրել մեր անտառային շրջանի խոտային բուսականությունը:

Անտառի խորքում գետինը ծածկված է լինում չոր տերևներով և խոտ համարյա թե չկա: Սրա փոխարեն նրանք առատությամբ բուսնում են անտառի եզրերում և նեղլիկ ձորակների լանջերին:

Այս ձորակների հատակին (ինչպես օր՝ Ալիբեկ լեռան ձորակում), վտակների ափերին խիտ բուսնում են պտեր (Asplenium Felix mas.), մորենու թփեր, դամասկոսի խաղող (крыжовник), կարմիր և սև հաղարջենի և այլն: Ծառերի սաղարթները միանալով միմյանց կազմում են կամարներ, որոնց հովանու տակ պճնում են սովերասեր ասպրիկը (Asperula odorata), զդայուն հինածաղիկը (Impatiens noli tangere), Saxifraga orientalis, lathyrus roseus, ոլոռն (Vicia balansae), ագավնակատուց (Geranium robertianum), Actea spicata, մատնածաղիկ (Digitalis ferruginea), երկաթնուկ (Euphorbia aspera), Lysimachia punctata, կատվախոտ (Valeriana officinalis) և alliariaefolia և ուրիշներ. ջրի մոտ՝ սև վրացկոճի (Veratrum album) և խոլորձ (Orchis latifolia): Լեռնային բնորոշ խոտերի թվին պատկանում են նաև հարսնուկը (Anemone caucasica), ակոնիտոն (Aconitum nasutum), չամպդիտակ

(Delphinium ciliatum), կոճոճ (Agrimonia Euphatoria). աղավնակտուց (Geranium silvestris, G. pyrenaicum, G. ibericum)), Hesperis matronalis, կտավատ (Linum hirsutum), Astrautia helleborifolia, Ferulago silvatica Chaerophyilum aureum, երնջակ (Eringium giganteum), անիսոն (Pimpinella rhodanta), քիսամ ծծուկ (Orobus cyaneus), ոլոռն (Latyrus pratensis) Silene inflata, S.fimbriata, S. compacta), զանգակածաղիկ (Campanula latifolia, C.eriocarpa, C.glomerata), հոտախոտ (Clinopodium vulgare), քարահերձ (Brunella vulgaris), լուսաստերմ (Betonica officinalis), կովացնճուկ Stachys germanica և շատ ուրիշներ:

Անտառի վերին սահմանում շատ անգամ պատահում են Solidago virgaurea, որպես ստորին-ալպյան մարգագետինների բանբեր: Այս վերջին շրջանն սկսում է անտառների սահմանից հետո, 7,5-8 հազար ոտնաչափից բարձր:

Այս շրջանի ստորին մասում շատ լավ գարի է բուսնում, միայն շատ անգամ ցուրտը տանում է:

Որպես այս ստորին-ալպյան մարգագետինների բուսականության բանբեր կարելի է համարել macrotomia echiodes, որի դեղնավուն պսակի բերանը շուրջանակի ծածկված է սև բծերով, հետո բերենիկենի տեսակները (Veronica gentianoides, V. armena), ապա հրանունկի տեսակները (Ranunculus caucasicus, R. dissectus և R. oreophilus):

Մայիսի վերջին ստորին-ալպյան շրջանում գտնված դաշտերը, լեռների լանջերը և հարթությունները դեղին գույն ունեն չնորհիվ ծաղկած դրաբի (Draba brunniaefolia): Այս դեղնագույն ֆոնի վրա սփռված են գարնանային ուրիշ մանրիկ երփներանգ բույսեր, ինչպես Anemone albana, Androsace armeniaca, մատնունի (Potentilla sp.), կովացնծուկ (Primulla farinosa, P. macrocalyx Bge.) և Pallasii Lehm, վերոհիշյալ բերենիկեն (Veronica gentianoides և armena), գառնագմակ (Ajuga orientalis) և փոքրիկ բոգ (Gentiana verna L.):

Փոքր-ինչ ուշ, բարձրավանդակների վրա, ալպյան մկնականջը (Myosotis, незабудка) տեղ-տեղ կազմում է կապուտակ գորգ՝ կողքին ձգված բացշեփորագույն երիզներ՝ բերիկիկից (Veronica orientalis): Ընդհանրապես կարելի է նկատել, որ գարնանը ստորին-ալպյան մարգագետինները բույսերի քիչ տեսակներ են ունենում, որովհետև շատերն այս բարձրության հատուկ կլիմայի քմահաճույքներին չեն կարողանում դիմանալ: Եվ եթե ամբողջ տարածություններ բռնված են միայն մի քանի տեսակ բույսերով, սա ամենալավ ապացույցն է, որ նրանք հարմարվել են տեղական պայմաններին:

Բոլորովին այլ է ամառը, որ տևում է այստեղ երկուսուկես ամիս. հունիսի կեսից մինչև օգոստոս, երբ միաժամանակ բավականաչափ ջերմությունն ու խոնավությունը, առատ լույսի հետ թույլ են տալիս հարուստ

հողին արտահայտելու իր արդյունաբերող ուժի ամբողջ փարթամությունը: Այն ժամանակ այստեղ կանաչի գմբուխտային փոնի վրա վառ գույներով վառվում են միլիոնավոր երփներանգ պսակներ: Դժվար է նկարագրել ստորին-ալպյան բուսականության այս ժամանակի ծաղիկների պերճությունն ու երփը. ամեն տեղ սիռված են ծաղիկների ու կանաչի ահագին չերտեր, կարմիր խորդենի (Geranium, герань), ձյունափայլ և վարդագույն պտեր, հարսնուկ (Anemone narcissiflora), գեղեցիկ (Aetheopappus pulcherrimus), մեխակ, մատնունի, Potentilla (лапчатка), ընձախոտ (лютики), բազմազան երեքնուկները (Trifolium alpestre, T. thrichocephalum, T. canescens, T. ambiguum և այլն), լոռասերմ (Betonica grandiflora, астры), գանազան գույնի տերփուկ (Centaurea axillaris, горные васильки), մկնականջ, Astrantia helleborifolia, (звездочка), կակաչ (Papaver orieutalis), մատիտեղ (Poligonum alpinum), մանավանդ բազմաթիվ են եղերդակ (Crepis sibirica), առյուծատամ (Leontodon sp.), բազեաբույս (Hieracium sp.), ագռավյակ (Solidago virga aurea), հետո մատիտեղ (Poligonum bistorta), կնձմնձուկ (Thalictrum minus), առյուծաթաթ (Alchemilla vulgaris) և այլն:

Համարյա արշինաչափ բարձրության հասնող վերոհիշյալ խոտային ծածկոցի վրա տեղ-տեղ տարածում է իր փարթամ ծաղիկները կովկասյան շուշանը (Lilium monadelthum), սաժիննաչափ ոսկետունկը (Cephalaria tatarica), լայնատարած չամպդիտակը (Sympytum asperimum), վայրի արջամադիլը (Heracleum sp) և վերջապես սև վրացկոճի (Veratrum album). այս վերջինս ավելի լինում է աղբյուրների մոտ, որ թաքնվում են ոսկե ծաղիկների, Caltha polysepala խիտ կույտերի տակ, ուր տարածում է իր ահագին տերևները թրթնջուկը (Rumex alpinus). այստեղ ջրերի մոտ սովորական են Cardamine uliginosa և C.impatiens, Ceranium palustre և ուրիշները:

Այս ստորին-ալպյան մարգագետինները չատ հարուստ արոտատեղիներ ունեն, ուստի և ամառը բազմաթիվ քրդեր և թուրքեր են գալիս Երևանի, Գանձակի և մինչև անգամ Թիֆլիսի նահանգներից:

Ամենից ավելի գովված են Ահմանկանի արոտատեղինները, որ տարածվում են Ահմանկան լեռնաշղթայի բարձր լանջերում՝ մոտ 100 վերստ երկարությամբ: Այս ահագին տարածությունը պատկանում է պետական գանձարանին, որ մաս-մաս կապալով է տալիս ժողովրդին:

Ինը հազար ոտնաչափից բարձր բուսականությունը բոլորովին փոխվում է: Ճշմարիտ է, այստեղ դեռ պատահում են ստորին-ալպյան մարգագետինների մի քանի տեսակները՝ լուսասերմ (Betonica grandiflora), ոսկետունկ (Cephalaria tatarica), հիմա արդեն առավելը 0,25 արշին բարձրության, վերփուկ (Centaurea axillaris) և մի քանի ուրիշներ, բայց արդեն նրանք չեն կազմում բուսական գորգը, այլ նարգիզի (Nardus sfricta) փա-

փուկ սեղը և Sibbaldia procumbens, Alsine aizoides, Alsine recurva, մատնուկնի (Potentilla argaea Boiss և Bell), գառնադմակ (Sedum tenellum), զանգակածաղիկ (Campanulla tridentata) և ուրիշներ:

Սրանք, ըստ երևույթին, կազմում են անցողական շերտը ստորին-ալպիական սրոտատեղիներից դեպի տիպական ալպիական մարգագետինը: Սրանով էլ վերջանում է Ալիբեկ լեռան (9382 ոտ.) գագաթը, որ մեր անտառային շրջանում ամենաբարձրն է:

Լեռնային բուսականության տեսությունը լրացնելու համար հարկավոր է հիշել այն ինքնատիպ, քնքուշ, շուտ թառամող գարնանային բույսերը, որոնք երփներանդ շրջանակ են կազմում բարձր լեռների կատարներին ամառվա կեսին մնացած հալչող ձյան շերտերին:

Այսպիսի տեղերում լինում են. կմշտրուկ (Scilla cernua), մեջընդմեջ Pouschkinia scilloides, որոնց մեջ ծաղկում են Merendera caucasica, գագեա (gagea sp.) Muscari sp. վերջապես՝ հենց ձյան մոտ կարճատև հրանուռնգ (Renunculus edulis Boiss): Այստեղ՝ ձյան շերտի մոտ, Ալիբեկ լեռան վրա գտնվել է մի շատ հազվագյուտ տեսակ՝ Erysimum gelidum: Այս բույսերն ավելի և ավելի բարձրանալով՝ լեռան վերին շերտերում բաց են անում գարնանային հղանակ, մինչդեռ ներքևում՝ ստորին ալպյան մարգագետիններում սաստիկ ամառ է, իսկ հովիտներում արդեն ոսկեզօծվում են հացահատիկները:[224]

---

[224] *Ինդվածքն կազմել եմ «Сборник материалов для описания местностей и племень Кавказа XXVII» դրքում տպված պ. Խոյատովսկու «Обзор флоры окрестностей озера Гекча» հոդվածից:*

ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱՎԱՌԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

Նոր-Բայազետի գավառն այժմ բաժանված է չորս ոստիկանական շրջանների: Առաջին ոստիկանական շրջանը տարածվում է գավառի արևմտյան մասում, կենտրոնատեղին է Ներքին Ախտան և բռնում է 101,268 դ., 2120 ք.ս. տարածություն, ունի 6 գյուղական հասարակություն, բաղկացած 41 գյուղերից, 4529 ծխով:

Երկրորդ շրջանը տարածվում է Սևանա լճի արևմտյան ափին, կենտրոնատեղին է Նոր-Բայազետ քաղաքը և բռնում է 45,298 դ. 164 ք.ս. տարածություն, ունի 3 գյուղական հասարակություն, բաղկացած 21 գյուղերից, 3404 ծխով:

Երրորդ շրջանը տարածվում է նույն լճի արևմտահարավային ափերին, կենտրոնատեղին է Ներքին Ղարանլուղ գյուղը և բռնում է 50,570 դ. 1670 ք.ս. տարածություն, ունի 3 գյուղական հասարակություն, բաղկացած 24 գյուղերից, 3891 ծխով:

Չորրորդ շրջանը տարածվում է լճի արևելյան և արևելահյուսիսային ափերին, կենտրոնատեղին է Բասարգեչար գյուղը և բռնում է 84316 դ. 1844 ք.ս. տարածություն, ունի 4 գյուղական հասարակություն, բաղկացած 49 գյուղերից, 5395 ծխով:

Հետևապես և ամբողջ գավառը, որի կենտրոնատեղին է Նոր-Բայազետ քաղաքը, բռնում է 577,585 դ., 710 ք.ս. տարածություն, ունի մի քաղաք և 16 գյուղական հասարակություն, բաղկացած 135 գյուղերից՝17219 ծխով:

Հնում այս գավառը կազմում էր մեծ մասամբ Սյունյաց նահանգի Գեղարքունիք ու Սոդ կամ Սոթք, և Արարատյան նահանգի Վարաժնունիք, Արևելյան Նիգ և Մազազ գավառները: Գեղարքունիքը համարվում էր Սևանա լճի արևմտահարավային ափերը, որ ստորաբաժանվում էր Ծմակ-գավառ և Կոթ կամ Կռզաբակ գավառակների. առաջինը բռնում էր լճի արևմտյան, ծմակային մասը (որի հակառակ՝ արևելահայաց մասը կոչվել է Արեգունի, Գյուննեյ), իսկ երկրորդը՝ հարավային մասը: Սոթք գավառը բռնել է լճի արևելյան և հյուսիսային մասը և ստորաբաժանվել է՝ բուն Սոդի՝ որ բռնել է այժմյան Զոդի դաշտավայրը, Արտից-գավառի կամ Ծարի, այժմյան Մազրայի դաշտավայրը, Փորակի, որ հավանորեն ընկել է Սոդի և Արտից-գավառի միջև, այժմյան Գիլլի գետի և լճակի մասը, Երիշատի, որ հավանորեն այժմյան Ելլիջա Կարակոյունլու գյուղի և նրա շրջակայքն է բռնել և Ջաղացաձորի, որի տեղը նույնիսկ հավանորեն հայտնի չէ:

Լճի հյուսիս-արևելյան ափերը ևս, որ հայտնի է Արեգունի կամ այժմ Գյուննեյ անունով, հավանականորեն Սոթքի մի գավառակն են կազմել:

Արարատյան նահանգից Վարաժնունիքը բռնել է գավառի արևմտահյուսիսային մասը, այժմյան Դարաչիչակը կամ Ծաղկաձորը, Արևելյան Նիգը՝ նրա արևմտյան սահմանը՝ այժմյան Բջնի գյուղը և Մազազը՝ գավառի արևմտահարավային մասը՝ այժմյան Ջյանքյանի գյուղական հասարակությունը:

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏ ՔԱՂԱՔ

Գավառի կենտրոնը համարվում է Նոր-Բայազետ քաղաքը: Սա տեղավորված է ԵՒևանա լճի արևմտյան ափին (62°47'20"–40°21'25"), նրանից մոտ վեց կիլոմետր հեռու՝ մի դոգավորության մեջ: Բռնում է 96 դ. 2216 ք.ս. տարածություն, որից 82 դ. 1344 ք.ս. ծածկված է շինություններով: Քաղաքի հարավային կողմում հոսում է Գավառ գետը կամ Գավառագետը, որի վրա մի քարաշեն կամուրջ կա՝ 1867 թ. Գ. Գորոյանի ծախքով կառուցված: Գետի ձախ ափին և քաղաքի արևելահարավային կողմում բարձրանում է մի բլուր, որի վրա հնում եղել է մի ամրոց, իսկ հետո և այժմ՝ գերեզմանատուն: Դեռևս նկատելի են այդ հին ամրոցի հետքերը. կա նաև մի ստորերկրյա անցք, որ ավանդության ասելով, ամրոցի միջից իջել է մինչև գետը: Բլրի վրայ մնացել են հին շինության հետքեր, կա նաև մի փոքրիկ մատուռ ս. Ստեփանոսի անունով, որի արևելյան որմին կից մի խաչքարի պատվանդանի վրա արձանագրված է.

ի թուին ՌՃՂԱ (842).

Ես Ամիր Վասակ որդի Վասիլ իշ (խանի) չինեցի զեկեղեցիս, և զԳաւառայն առուն հանեցի կնի... ձորերէն և սարերէն: Բնակիչք գիւղիս խոստացան տարին Գ. ժամ. կատարողք աւրհնին յԱստուծոյ:[225]

Մի փոքրիկ, հատարակ մատուռ ևս բարձրանում է Մկրտիչ աղա Արծրունու, 1829 թ. գաղթականության առաջնորդի, գերեզմանի վրա:

Հին գերեզմանների վրա կան բավական գեղեցիկ և ուշագրավ խաչարձաններ՝ հետևյալ տապանագրերով.

Ա. խաչքարերի վրա.

ա. Սուրբ խաչս բարեխաւս Ստեփաննոս եպիսկոպոսին թվ. ՉԿԲ (1513):

բ. Այս է հանգիստ Լալային, որդի Մերզին, եղբայր Աստուածատուրին, որ փոխեցաւ ի Քրիստոս թվին ՉՀԱ (1532):

գ. Սուրբ խաչս բարեխաւս Ղարիպին և Բէկին և մասն Մամա խաթունին, թվին ՉՀՉ (1537):

դ. Շնորհիւն Աստուծոյ կանգնեցաւ խաչս փրկութեան հոգւոյն պարոն Հիկնին, թվին ՉՂԷ (1548):

---

[225] Տես Դիվան հայ վիմագրության, պ. IV, եր., 1973, էջ 52 (այսու՝ ԴՀՎ IV):

Նույն խաչի հարաւային կողմում. Սուրբ խաչն բարեխաւս պարոն Գուլաղին:

ե. Մի գեղեցկաքանդակ խաչարձանի վրա.

Թ. Ռ. (1551). Սուրբ խաչս բարեխաւս Յովհաննէս երիցու:

ը. Սուրբ խաչս բարեխաւս պարոն Կուլ Աղին, Թվին ՌԻԶ (1577) Տրդատ կազմողս Թերատաչ:

է. Սուրբ Նշանս տէրունական պահապան է պարոն Աստուածատուրին ՌԻԶ (1577). Ցխսուս Քրիստոս Տէր Աստուած:

ը. Սուրբ Նշանս բարեխաւս Հախնազարին. Թվին ՌԽԵ (1596). Քիրամ կազմող:

թ. Սուրբ խաչս բարեխաւվս Դաւլաթին. Թվին ՌԽԵ (1596):

ժ. Կանգնեցաւ խաչս փրկութեան Թուման աղային, որ է որդի Սարուր աղային. Թուին ՌԽԵ (1596):

ժա. Սուրբ խաչս բարեխաւս Գիւլ աղային. Թուին ՌԽԶ (1597):

Առանց Թվականի.

ժբ. Սուրբ խաչս բարեխաւս պարոն Ջահան Աղին:

ժգ. Սուրբ խաչս բարեխաւս պարոն Թաջումին. Առաքել և Մելքիսեթ կազմող:

Բ. Տապանաքարերի վրա.

ա. Մի դագաղաձև տապանաքարի վրա նկարված է մի թագակիր անձ, ներքևում արձանագրված.

Այս է հանգիստ Փիրի պէկին, որ է որդի Թուման աղին և պարոն Հեղինէին ՋԼԱ Հայոց Թվին (1482):

բ. Այս է հանգիստ Շաղուբաթ աղային, որ էր տանուտէր Գաւառին. փոխեցաւ առ Քրիստոս. սուրբ խաչս բարեխաւս Շաղուբաթ աղային. Թուին ՋԾԳ (1504):

գ. Այս է հանգիստ Աստուածատուր աղային, որդի Միրանչին ՋՀԳ (1524):

դ. Այս է հանգիստ Փիրի բէկին, որդի Թուման աղային ՋՂ (1541):

Քաղաքը բաժանվում է չորս թաղի. Բանտի, Կալերի, Տալիղի և Խաչերի: Առաջինը իր անունն ստացել է այն հանդամանքից, որ տարածվում է դետի այն մասում, ուր ձկներ որսալու համար բանտ՝ ջրի մեջ քարե պատնէշ է շինված: Սա քաղաքի ամենահին մասն է, և եթե առաջին գաղթականները Ելենովկայի կամ Նորադուզի պես հրաշալի, լճափնյա տեղերը թողել են ու եկել այստեղ բնակութիւն հաստատել, դրա պատճառն այն է եղել, որ ավելի հեշտութեամբ են կարողացել այս դետի մեջ ձուկ որսալ, քան լճի և մեկ էլ հիանալի դեղարքունին դլխավորապես այս գետում է լինում: Այս թաղում կա ս. Կարապետ անունով մի հասարակ եկեղեցի և մի փոքրիկ մա-

տուն: Վերջինիս մոտից բխում է երկաթաջուր, որին ժողովուրդը «կաթնաղբյուր» է անվանում և սուրբ, բուժիչ համարում:

Քաղաքի այս թաղը, ամենահինը լինելով, զուրկ է կանոնավոր, լայն փողոցներից, տների մեծագույն մասն էլ շատ հասարակ և գյուղական է: Նոր-նոր շինվում են եվրոպական ձևի տներ: Բավական հաճելի է գետի երկու ափը, ուր բարձրանում են ուռենիներ ու բարդիներ, որոնց հովանու տակ հաճախ թեյ խմելու են դալիս քաղաքացիները:

Կալերի թաղը նոր մասն է, և այսպես է կոչվում, որովհետև մոտիկ անցյալում այդտեղ կալեր են եղել: Սրա գրեթե կենտրոնում գտնվում է քաղաքային այգին, պարսպապատ, բայց ոչ ծառազարդ, որովհետև կոպիտ ամբոխը ներկա գավառապետի տնկել տված 300 ծառերը կոտրատել, տարել էր: Այգու միակ զարդը մի հորդ աղբյուր է: Այս այգուն կից է ռուսաց փոքրիկ, միմիայն մի զանգակատնով զարդարված, անգմբեթ եկեղեցին, որ շինել է քաղաքը իր հաշվով, հավատալով, որ այսպիսով թույլ չի տա իր փոխարեն Ելենովկա գյուղը քաղաք դարձնելու:

Ներկա 1908 թ. այս այգու մեջ սկսեցին շինել հայոց եկեղեցական ծխական օրիորդաց և տղայոց դպրոցների շենքեր և քաղաքային տուն, իսկ հասարակական այգու համար հատկացրին մի այլ տեղ՝ քաղաքի արևմտյան կողմում:

Այգու շուրջը կան մի քանի լավ, թիթեղապատ կտուրներով տներ, մինչդեռ մյուս բոլոր տները հողածածկ են, տափարակ կտուրներով, մեծագույն մասը մի հարկանի:

Այգուց փոքր-ինչ հեռու գտնվում է հայոց ս. Աստվածածին նորակառույց եկեղեցին, որ իսկապես քաղաքի զարդը կարող է համարվել, շինված է արժ. Խորեն վարդապետ Մուրադբեկյանի նախաձեռնությամբ և ճարտարապետ Միրզոյանի կազմած հատակագծով ու վերահսկողությամբ:

Եկեղեցու առջև բխում է մի աղբյուր. հյուսիսային կողմում բարձրանում է հայոց եկեղեցական-ծխական երկսեռ դպրոցների հին հասարակ շենքը:

Եկեղեցու հանդեպ բացվում է շուկան, ուր կա հասարակական կշիռ և բավականաչափ խանութներ: Կիրակի և տոն օրերը հասարակությունը այստեղ է խռնվում:

Տալիզի թաղը տարածվում է քաղաքի հարավ-արևմտյան մասում: Սա այսպես կոչվել է Տալիզա վրացի պաշտոնյայի անունով, որ իբր գավառապետ[226] կառավարել է 1835-1840 թթ. և բաց արել այս թաղը: Այստեղ է գտնվում ոստիկանատունը՝ մի ընդարձակ հրապարակով, քաղաքային մի-

---

[226] Նոր-Բայազետը Երևանյան գավառի մաս էր կազմում, այստեղի կառավարիչները Երևանի գավառապետի օգնական էին կոչվում:

ակ բուժարանը, քաղաքային պետական հոդասյան դպրոցը և փոքրիկ, նորաշեն բաղնիսը, երկու հյուրանոց և այլն:

Խաչերի թաղը, որ իր անունն ստացել է այդտեղ գտնված խաչարձաններից, ընկնում է քաղաքի արևմտահյուսիսային մասում և առատ է սառնորակ աղբյուրներով: Այստեղից են տարված քաղաքի բոլոր աղբյուրները և այստեղ են տարածվում քաղաքի մի քանի պարտեզները, ուր առավելապես համբարձման ուրբաթ օրը և սովորաբար ամեն կիրակի, զբոսնում է քաղաքի ժողովուրդը և «գառ ուտելու» դալիս: Օդի կողմից այս թաղն ամենալավն է: Նոր-նոր չինվում են դեղեցիկ, երկհարկանի տներ:

Քաղաքն ընդարձակվում է երեք ուղղությամբ, մեկ այս խաչերի կողմից դեպի Փաշաքենդ գյուղը, որ և շատ շուտով կարող է նրան միանալ. երկրորդ՝ Բանտի թաղի հանդեպ, դարի գլխից դեպի Ղուլալի գյուղը: Արդեն դեպի այս աջ ափին, բարձրավանդակի վրա բավականաչափ տներ են կառուցվել: Եվ երրորդ՝ դեպի արևելք, ս. Հովհաննեսի ուխտատեղին, որ մի հինավուրց, կռապաշտական սրբատեղի է:

Սրա մոտ, մի ահագին ժայռ քարի վրա արձանագրված է.

ի թվին ՋՂԱ (1542) Թոմայս ծառայ Աստուծոյ եկի ի Գաւառէն ի ծառայութիւն սուրբ Յովհաննէսին. շատ աշխատեցայ. յիշեցէք ի Քրիստոս:

Քաղաքի փողոցները, որոնցից նորերը բավական լայն են, այս տարի են անուն ստացել:

Ոչ մի փողոց քարած չէ, այս պատճառով և կուրացուցիչ, սարսափելի փոշին և նոյան ցեխը անպակաս են: Մայթեր երևում են մի քանի գլխավոր փողոցներում: Լապտերներ կան... ընդամենը՝ 40 հատ, այնպես որ գիշերները միրում է ադամամութը:

Բնակիչները Հին-Բայազետ քաղաքից 1830 թ. գաղթած հայեր են, ընդամենը 1328 տուն, 4978 ար., 4855 իգ., միասին՝ 9833 հոգի: Բացի սրանցից կան նաև այլազգիներ՝ 1 տուն, 2 ար., 3 իգ., միասին 5 հոգի: Այնպես որ քաղաքի ամբողջ ազգաբնակչությունը բաղկացած է 1329 տնից. 4980 ար., 4858 իգ., միասին՝ 9838 հոգի:

Բնակիչների մեծագույն մասը պարապում է երկրագործությամբ և անասնապահությամբ, իսկ փոքրագույնը՝ վաճառականությամբ, արհեստներով և ձկնորսությամբ:

Բավական մեծ թվով էլ պանդխտում են Թիֆլիս՝ բաղնիսներում ծառայելու իբրև քիսաճի, և կամ պարապում են առավելապես հին և ընդհանրապես հասարակ հանդերձեղենի առևտրով:

Քաղաքը ունի 6160 դ. 1697 ք.ս. վարելահող, 2 դ. 2112 ք.ս. պարտեզ, 1545 դ. 480 ք.ս. խոտատեղի և 3075 դ. 2200 ք.ս. արոտատեղի:

Կրպակների թիվը հասնում է հարյուրի: Նույնքան կարելի է հաշվել և արհեստավորների կրպակները:

Քաղաքի բյուջեն տատանվում է 9-11 հազար ռուբլու միջև: Ունի քաղաքային ինքնավարություն, քաղաքային ավագ, սրա օգնական և 15 իրավասուններ:

Քաղաքում կան պետական քաղաքային նոդասյան և միդասյան, ինչպես և հայոց եկեղեցական-ծխական երկդասյան երկսեռ ուսումնարաններ:

Այստեղ ճյուղեր ունեն Հայոց ազգագրական, Կովկասի Հայոց բարեգործական, Բաքվի կուլտուրական և Երևանի նահանգում պիտանի գիտելիքներ տարածող ընկերությունները: Հայոց ազգագրական ընկերությունը ունի մի գրադարան-ընթերցարան, որ նվեր է ստացել պ. Ստեփան Բադիկյանից: Գրադարանը չուտով տեղավորվելու է տղաների դպրոցին կից կառուցվող երկու սենյակների մեջ, ուր հավաքվելու են նաև հնագիտական իրեր:

Բարեգործական և կուլտուրական ընկերությունների ճյուղերը իրենց կենտրոնների միջոցներով և հաջորդ՝ Խորեն վարդապետ Մուրադբեկյանի եռանդուն միջամտությամբ, բացել են գավառի գյուղերում յոթ ծխական-եկեղեցական միդասյան դպրոցներ:

Երևանյան նահանգում պիտանի գիտելիքներ տարածող ընկերությունը բացել է մի քանի գյուղերում գրադարաններ և կազմակերպում է հանրամատչելի դասախոսություններ:

Բ. ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ[227]

ԱՂՋԻԲԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Նորադուզ *(62°50'30"–40°22'40"). Նոր-Բայազետ քաղաքից դեպի արևելահյուսիս, մոտ երեք կիլոմետր հեռու, մի դեղաձիծաղ դաշտավայրի վրա փռված է Նորադուզ գյուղը, որ հնում* **Նորադուս** *կամ* **Նորատուաց** *գյուղ է կոչվել: Հազիվ մեկ կիլոմետր հեռու տարածվում է Սևանա լիճը՝ աքանչելի տեսք ընծայելով գյուղին: Ոչ միայն այստեղի քրիստոնեական հիշատակարանները, այլև ամենահին դամբանները վկայում են, որ այստեղ չարունակ բնակավայր է եղել և այսօր էլ կարելի է միայն ցավել, որ այս գավառի կենտրոնական քաղաքն այստեղ չէ հաստատված, մանավանդ որ նավագնացության էլ չատ հարմար է: Գյուղի արևմտյան կողմից անցնում է Գավառագետը՝ ոչ միայն հիանալի դեղարքունիներ պարգևելով բնակիչներին, այլև ոռոգելով սրանց արտերն ու արոտատեղիները:*

---

[227] *Որովհետև գավառի կենտրոնը, բուն Գեղարքունիքը, այս ոստիկանական չրջանում է գտնվում, և բացի դրանից Բայազետի հայ գաղթականները, որոնց ազգագրական ուսումնասիրությունը մեր այս աշխատության նպատակն է կազմում, գլխավորապես այս չրջանում են տեղավորված, ուստի և մենք հարմար համարեցինք նախ այս ոստիկանական չրջանը նկարագրել:*

Գյուղի չորս կողմում, փոքրիկ բլրակների վրա, իբր պաշտպան հին դարերից ի վեր, հսկում են չորս ցասման խաչեր, որոնց տակ, այժմյան ավանդությամբ, հանգչում են չորս նահատակ եղբայրների աճյունները: Այս խաչերից հյուսիսայինի պատվանդանի վրա դրված է.

Անուամբն Աստուծոյ ՈՀԵ (1226) թուիս, յիշխանութեան Աթաբէկին Իվանայ, Աւագին, Շահանշահին ... Խոչաքին անուցածս Նորատուս, կացուցողիս, յորժամ Աստուծոյ բարկութիւնն չարժեցաւ, Սուլթանն Խորասանայ կոտորածս բազումս արար:[228]

Գյուղի արևմտյան կողմում բարձրանում է այստեղի քրիստոնեական հիշատակարաններից ամենահինը՝ ս. Աստվածածին կիսակործան եկեղեցին, որ կառուցված է Թ դարի վերջին, Սյունյաց տեր Գրիգոր Սուփանի եղբայր Սահակի ջանքով, որը և Հովհաննես Ջ կաթողիկոսի ասելով, թաղված պիտի լինի այս եկեղեցու արևմտյան դռան մոտ (915 թ.): Եկեղեցին շինված է սրբատաշ քարից, խաչաձև է, կամարակապ և անսյուն. երկարությունն է 10, լայնությունը՝ 8 և բարձրությունն է 9 մ: Զեղունը քանդված է. ավանդության ասելով՝ հրձիգությամբ, լեզգիների ձեռքով, երբ ժողովուրդը նրանց բռնությունից ապաստանել է դրա մեջ: Այժմ փայտածածկ է: Հարավային պատի վրա կա արեգակնային մի ժամացույց: Շինության արձանագրությունը չի երևում, կան միայն հետևյալները.

Հարավային պատի վրա, դռան վերև.

Թվին ՉԽ (1258) յիշխանութեան աստուածափառ տերանց մերոց Խոչաքին և Աթաբակ Սաթունին մեք Նորատուաց մեծ և փոքր...:[229]

Նույն պատին, մի քիչ հեռու.

Ծանուն Աստուծոյ այս իմ գիր է Նորատուաց...Աստուծով ի վեր կալայ Գաւառին համար ՈՉԳ ջրին տան՝ այգւոջ գիւղին...վկաներս Աստուած է...:[230]

Արևմտյան պատին, մի խաչքարի վրա.

Ի թուականութեան Հայոց Նոե (996) ի թագաւորութեան Գագկայ և իշխանութեան...

Չնայած իր քայքայված դրությանը՝ այս հազարամյա շենքը այսօր էլ իբր գյուղի եկեղեցի է ծառայում: Եկեղեցու շուրջը կային մի քանի շինություններ, մի մեծ սեղանատուն, որ վերջերս հասարակական հացի չեմբրանի էր փոխարկված, մի քանի խցեր, սակայն մեծ մասն այժմ արդեն քանդված է և տեղում դպրոցական շենք կառուցված: Եկեղեցին պարսպապատ է, որի մեջ և շուրջը կան բավականաչափ խաչարձաններ և հասարակ տապանաքարեր: Ամենից ավելի ուշադրավ է մի տապանաքար, 3 մ եր-

---

[228] Տե՛ս ԴՀՎ IV, էջ 22:
[229] Տե՛ս ԴՀՎ IV, էջ 13:
[230] Տե՛ս ԴՀՎ IV, էջ 13:

կարուբյամբ, 76 սմ լայնուբյամբ և 1,08 մ հաստուբյամբ: Սրա երեսին նկարված է մի գավազան, որի երկու կողմը գրված է.

Ես մելիք Ոհկէս տապանս չինեցի հօր իմում մելիք պար (էքին):

Այս արձանագրուբյան վերև քանդակված է մի ռնգեղջյուր, որ կռվում է յուր վրա ցատկած վագրի հետ, իսկ ներքևում՝ մի եղջերու՝ ոտների տակ մի վիշապ:

Այս տապանաքարի արևմտյան կողմը կանգնեցրած է մի խաչքար, որի ճակատին գրված է.

Կամաւն Այ ես Մելիք Բարէքս կանգնեցի զխաչս վասն փրկուբեան հոգւոյ իմոյ: Մելիքսէթ կազմող. Բարէքին է խաչս:

Իսկ խաչքարի թիկունքին գրված է.

Կամաւն Աստուծոյ ես Մելիք Բարէքս, եղբայրն իմ Ստեփաննոս քահանէն, որդին իմ Գունկէյայ բէկն, հա(յ)րն իմ Գունդուզ աղէն, եկինք Գանձակայ, չինեցինք կարմունճս, չինեցինք չրջապատս, կանգնեցինք զխաչերս, որք երկրպագէք, յիշեցէք ի Քրիստոս:

Գյուղի արևելյան կողմը ձգվում է մի բլուր, որի վրա տարածվում է մի ընդարձակ գերեզմանատուն՝ բազմաթիվ զեղաքանդակ խաչքարերով զարդարված: Այստեղ կան նաև երկու փոքրիկ մատուռներ, որոնցից մեկի, հյուսիսայինի, միակ դռան աջ կողմը արձանագրված է.

Ես Սարգսի թոռ Միրզատի որդի Ալէքսանս չինեցի սուրբ եկեղեցիս. Թվ. ՌՃԿԳ էր (1714). Ես Սարգիս գրեցի անարժանս:

Ձախ կողմին.

Ես Ալէքսանս, որ եկեղեցիս չինեցի, խիստ դառն ծանր ժամանակ էր:

Մյուս մատուռի հյուսիսային պատի վրա.

...Թագաւորուբեան...որդի Մխիթարս որ եղէ առաջնորդ մեծահռչակ գիւղիս Նորատուաց, կամ եղև ինձ և կանգնեցի զխորանս, և զնշանքս տէրունական յիշատակ հոգւոյ իմոյ և Զուզային և հաւր իմո Մխիթարա և համաւրէն ննջեցելոց իմոց, որք երկիր պագէք սմա, զմեզ յաղաւթս յիշեցէք:[231]

Այս մատուռի հյուսիսային կողմում կանգնած մի խաչարձանի պատվանդանի վրա գրված է.

Ի ՈԿ թվ. (1211), ի ժամանակս բարեպաշտ իշխանաց մերոց Զաքարէի և Իվանէի ես Մխիթար Փէճարենց Դաւթի որդի, չնորհիւն Աստուծոյ և հրամանաւ մեծին Իվանէի եղէ առաջնորդ մեծահռչակ գեօղիս Նորատուաց. կամ եղև ինձ կանգնել զխաչս ի փրկուբիւն ննջեցելոց իմոց. որք երկրպագէք, յիշեցէք ի Տէր:[232]

---

[231] Տե՛ս ԴՀՎ IV, էջ 25:

[232] Տե՛ս ԴՀՎ IV, էջ 25:

Գյուղից հազիվ կես կիլոմետր դեպի արևելահարավ բարձրանում է սրբատաշ սև քարերով շինված մի եկեղեցի, խարխուլ գմբեթով, որին Սիմեոն կաթողիկոսը Դափուց վանք է անվանում, և որը կուսանաց անապատ է եղել: Արևմտյան պատի վրայի հետևյալ արձանագրությունը ցույց է տալիս եկեղեցու հիմնարկության ժամանակը և շինողների անունները.

Ի պարոնութեան Իվանէի և Շահնշահի[233] ես Տէր Պետրոս վարդապետ հանդերձ եղբարբ ընչիւք և ստացուածովք շինեցի զեկեղեցիս:

Ըստ երևույթին եկեղեցին չուտով ավերվել է, որովհետև հարավային պատի վրայի հետևյալ արձանագրությունը խոսում է վերանորոգության մասին.

Ի թագաւորութեան վրաց...և ինքնակալ տէրութեան Իվանէի և Շահնշահի, հայրապետութեան տեառն Վրթանիսի...ես Տրուպ...վարդապետս...զաւերեալ եկեղեցիս վանացս Նորատվաց...ի հալալ ընչից և ստացուածոց իմոց սակաւ և հաստատեցի հոգւոյ ... անչինչ և կարգեցի ինձ եղբարբս հանդերձ ի տարին է պատարագ զՅարութեան շաբաթի, որ առնեն աւրհնին յԱյ և որ խափանէ...:[234]

1344 թվին էլ գրված մի արձանագրությունից երևում է, որ այս եկեղեցին կոչվել է ս. Գրիգոր.

Թվին ՉՂԳ (1344) . Շնորհիւն Աստուծոյ և պարոնութեան իշխանաց իշխանին Հայոց Բուրթելին և Աստուածատուր զաւակաց իւրոց՝ իշխանաց Բէլքենայ, Իվանիկայ և Սամեղայ. ես ծառայ Աստուծոյ Աւագս վանս երկարութեան կենաց պարոնաց մերոց, կամակից եղէ շինութեան վանիցս, և ետու իմ հալալ ընչիւք գնած Նորատվաց ջրոյ վերայ մէկ ջրաղաց ի սուրբ Գրիգորս. միաբանք սահմանեցին ի տարին Գ. պատարագ ինձ Աւագիս. կատարիչք աւրհնին յԱստուծոյ:[235]

Ներքուստ ևս, արևմտյան պատին արձանագրված է.

Ես Մխիթար Նորատուաց առաջնորդ որ կամակից և օգնական եղէ ... վարդապետին և շինութեան սբ. Լուսաւորչիս և նա սահմանեց ինձ տարին երկու ժամ, սուրբ խաչի տոնին. կատարիչք հրամանացս աւրհնին յԱստուծոյ:

Այս եկեղեցին անխնամ է թողնված, մի դյուղացի վիականք է դրել դռներին և երբեմն մաքրում է՝ օգտվելով ուխտավորների խաչհամբույրներից: Լուսավորչի տոներին թե Նորադուզից և թե շրջակա դյուղերից բավականաչափ ուխտավորներ են գալիս:

Այս եկեղեցուց փոքր-ինչ հեռու, մի խաչքարի պատվանդանի վրա արձանագրված է.

---

233 ԺԳ դարի սկզբին:

234 Տե՛ս ԴՀՎ IV, էջ 19:

235 Տե՛ս ԴՀՎ IV, էջ 21:

Ի թվին Հայոց ՈԿ (1211) ի թագավորութեան Աղին. ի պարոնութեան Իվանէին ես Քաջազաւրս չինեցի զկամուրջս և կանգնեցի զխաչս:

Հին կամուջը, որի մասին խոսվում է այստեղ, այժմ քանդված է, միայն նրա տեղում այժմ մի հասարակ կամուրջ է ձգված:

Գյուղի արևելահյուսիսային կողմում ևս կա մի փոքրիկ, հասարակ մատուռ, պարսպապատ, որի դռան մոտի մի խաչքարի վրա արձանագրված է.

Ես անարժան Աթանէս երէցս կանգնեցի խաչս փրկութեան հոգւոյ իմոյ թվ. ՌԹ (1560):

Այս մատուռի հանդեպ, լճափին, կա մի հրաբխային բլուր՝ ճապարաձև գագաթով, որի վրա նկատելի են մի քանի չինության հետքեր: Մի բնական մեծ այր ևս համարվում է իբր վաղեմի ճգնարան:

Այս ու այն կողմ կանգնեցրած բազմաթիվ խաչքարերի մեջ առանձին ուշադրության է արժանի գյուղի արևմտյան կողմում կանգնեցրածը, որ հայտնի է խաղախաչ՝ այսինքն հազը բժշկող անունով, և որի տակ ավանդաբար պատմվում է, թե հանգչում է երկու դժբախտ սիրահարների աճյունը:

Այժմյան գյուղը բռնում է 36 դ. և 480 ք.ս. տարածություն, ունի մի քանի լայն փողոցներ, մյուսները ծուռումուռ են և նեղ: Տների մեծագույն մասը հին գլխատներ են, փոքրագույնը, նոր՝ եվրոպական ձևի, մի և երկու հարկանի: Ահագին ընդարձակության դավիթներում ոչ մի ծառ չի տնկված:

Բնակիչները գաղթել են Արծափից և Ալաշկերտից. ընդամենը՝ 450 տուն են, 1683 ար., 1598 իգ., միասին՝ 3281 հոգի:

Մյուս գյուղերի հետ համեմատելով՝ սրանք մոտավորապես ավելի բարձր են, սակայն բարոյապես ավելի ընկած, քնքշացած և ծույլ: Սիրահար են հարբեցության և խումարի: Գյուղում կան մի քանի գինետներ, ուր ամբողջ օրը գյուղացիները խմբված՝ վեգերով խումար են խաղում: Ներկա 1908 թ. բացվել է հայոց եկեղեցական-ծխական միդասյան դպրոց: Պարապում են գլխավորապես երկրագործությամբ. ունեն 2151 դ. և 1948 ք.ս. վարելահող, մասամբ էլ անասնապահությամբ, որովհետև 23 դես. 2012 ք.ս. խոտաւտեղի և 851 դ. 350 ք.ս. արոտատեղի ունեն: Զկնորսությունը նույնպես այս գյուղում շատ տարածված է, ինչպես և նավակներ չինելն ու նրանց գործածելը:

***Փաշաքենտ կամ Մահմատ Աղալու** (62°46'40"–40°20'25"). Տարածված է Նոր-Բայազետից արևմտահարավ, և գրեթե նրա հետ միացած է: Բռնում է 42 դ. 176 ք.ս. տարածություն, որից 37 դ. 1056 ք.ս. ծածկված է չինութիւններով: Գյուղի արևելահյուսիսային կողմում բարձրանում է մի մեծ բլուր, որի վրա նկատելի են ամրոցի հետքեր: Մի քանի հորդ և սառնորակ աղբյուրներ առատությամբ բխում են այս գյուղում և խառնվելով Ղուլալուի աղբյուրների հետ՝ կազմում են Գյոդչա գետակը, որ թափվում է Սևանա լիճը՝ Նորադուզի մոտ:*

Փաշաքենտը հնում կոչվել է Առնեղ և այդ միջոցի եկեղեցին էլ այժմ բավական խնամքով պահվում է: Սա սրբատաշ քարերով շինված անույշ, խաչաձև, գմբեթազարդ մի փոքրիկ շենք է: Երբ 1862 թ. կլուսաքանդ կաթուղիկեն վերանորոգել են, դռել են մի բավական մաշված արձանագրություն կրող քար, ուր հիշատակված է եղել, որ եկեղեցին շինել է Առնեղ գյուղի Շաղուբաթ իշխանը 898 թվին: Այս արձանագրությունը նորից նույնությամբ փորագրել են ավել եկեղեցու արևելյան պատի վրա.

Ես Շաղուբաթ իշխան Առնեղի կառուցի այս սուրբ Աստուածածին եկեղեցիս ի հիմանէ. թվին Փրկչին ՊՂԸ (898) և Հայոց թվին ՅԽԷ (347):[236]

Այս Աստվածածնի եկեղեցուն կից եղել է նաև մի ուրիշ եկեղեցի, ս. Գրիգոր անունով, նրա պես փոքր, միայն նրանից շատ ավելի խարխուլ: Գյուղացիները քանդել են այս վերջինը և նորը կառուցել, դարձյալ կից առաջինին, այնպես որ նրա միակ դուռը բացվում է սրա մեջ: Այս նոր շինված եկեղեցու պատի մեջ հին քարերից ընկել է նաև մեկը, որ կրում է հետևյալ արձանագրությունը.

Կամաւն Այ Տատուղանս դուստր պարոն Դավթին՝ կենաց կից Փիրհամզայ Աղին՝ որ նորոգեցի շրջապատ սուրբ Գրիգորս յիշատակ հոգւոյ իմոյ. թվ. ՋՂԸ (1549):

Բացի այս եկեղեցիներից՝ աղբյուրի գլխին կա մի փոքրիկ մատուռ, իսկ գյուղից դուրս՝ մի ավերակ եկեղեցի, որի մոտ մի քանի տապանաքարերից մեկի վրա գրված է.

Այս է հանգիստ տէր Գասպարին. թվ. ՌՃՆ (1691):

Գյուղի ստորին մասը ծածկված է ուռենիներով: Հետզհետե չինվում են կանոնավոր տներ, մինչդեռ հները բոլորն էլ գլխատներ են: Բնակիչները հայեր են Հին-Բայազետի զանազան գյուղերից գաղթած 1830 թ., ընդամենը 378 տուն, 1530 ար., 1341 իգ., միասին՝ 2871 հոգի:

Գյուղը բարօյապես բավական ընկած է, գյուղացիները՝ ծույլ և հարբեցող: Պարապում են երկրագործությամբ և մասամբ՝ անասնապահությամբ: Ունեն 2197 դ. 1174 ք.ս. վարելահող, 149 դ. 1440 ք.ս. խոտատեղի և 921 դ. 332 ք.ս. արոտատեղի:

Քյոսամահմատ (62°46'50"–40°19'37"). Սփռված է մի հարթ տարածության վրա, բռնելով 51 դ. 840 ք.ս. տեղ, որից միայն 25 դ. 1440 ք.ս. ծածկված է շինություններով: Հնում սա կոչվել է Գանձակ կամ Գանձազանտառ, և ունի մի հինավուրց եկեղեցի, միանգամայն նման Նորադուզի եկեղեցուն: Սա այժմ փոքր-ինչ վերանորոգված է, վայտով ծածկված և իբր գյուղական եկեղեցի է ծառայում: Սրա վրա կան հետևյալ արձանագրությունները: Արևմտյան պատի վրա.

---

[236] *Տե՛ս ԴՀՎ IV, էջ 93:*

Ես Կունտուզ և իմ որդիքն և Գանձակայ մեծ և փոքր տուաւ վախմ զկալերն չրջապատ եկեղեցւոյս:

Ես Մարտիրոս երէցս զորմն չինեցի յիշատակ ծնողաց իմոց:

Հյուսիսային որմի վրայ.

Այս է մասն Հոռոմին թվ. ՌԽԴ (1595):

Մի քիչ ներքև.

Կամաւն Աստուծոյ ես Ստեփաննոս քահանայ որդի Կունտուզ աղին չինեցի զչրջապատ եկեղեցւոյս յիշատակ ինձ և մաւրն իմոյ Արզունին եւ եղբարց իմոց:

Եկեղեցու մնջ, հարավային կողմում կա մի մեծ տապանաքար՝ հետևյալ տապանագրով.

Թվ. ՉԿԲ (1513). Այս է հանգիստ Ազարիային, որ էր առաջնորդ Գանձակիս. յիշեցէք ի Քրիստոս: Ես Գունտուզ աղէս կանգնեցի զտապանս:

Բնակիչները հայեր են, գաղթած Ալաշկերտի Դիզա գյուղից, ընդամենը 242 տուն են, 989 ար., 870 իգ., միասին՝ 1859 հոգի: Պարապմունքը նույնն է՝ երկրագործություն և անասնապահություն: Ունեն 1587 դ. 1440 ք.ս. վարելահող, 967 դ. 1470 ք.ս. արոտատեղի:

Քյարիմ-Քյանդ (62°43'1"–40°18'25"). Տեղավորված է Ղարաուլ-Թափա լեռան լանջին, բռնում է 8 դ. 1680 ք.ս. տարածություն: Հնում սա կոչվել է Քիրամաշեն և գյուղից դուրս, արևմտյան կողմը կա մի հին եկեղեցի, ս. Հովհաննես անունով, որի վրա ոչ մի արձանագրություն չկա:

Բնակիչները Ալաշկերտի Դիզա գյուղացի հայեր են, որ նախ գաղթել են Քյոսամահմատ գյուղը և ապա՝ այստեղ վերաբնակվել: Ընդամենը 72 տուն են, 301 ար., 285 իգ., միասին՝ 586 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ. ունեն 590 դ. վարելահող և 325 դ. 1180 ք.ս. արոտատեղի:

Հաջի-Մուխան կամ Հաջի-Ավդի և կամ Աճամ-խան (62°43'10"–40°28'35"). Այս գյուղը Հաճի-Մուխան է կոչվում այն պատճառով, որ 1700 թ. տաճկաց Հաճի Մուխան զորապետը այստեղ բանակ է դրել, և երբ նրան հալածելով կանգ է առել այստեղ Հաճի Ավդի պարսից զորապետը՝ վերակոչվել է Հաջի-Ավդի կամ Աճամ (պարսից) խան (զորապետ):

Հնում հայկական գյուղ է եղել, թեև անունը հայտնի չէ, որովհետև կան մի ավեր եկեղեցի և մի քանի խաչքարեր: Եկեղեցու վրա եղել են հետևյալ արձանագրությունները, որ այժմ բոլորովին ոչնչացրել են.

Աստուած ողորմի Սարգսի և Ալէքսոյի և Յակոբայ ծնողացն իւր. Ստաթէ:

Խաչքարերի վրա.

Ես Ովաննէսս կանգնեցի սուրբ խաչս ի փրկութիւն հոգւոյն իմոյ. յիշեցէք ի Քս.

Սուրբ խաչս բարեխոս Պէկնազարին:

Գերեզմանաքարերի վրա.

Այս է հանգիստ Գրիգորի. թվ. ՌՃԾ (1701 թ. Ք.).

Այս է հանգիստ Մկրտչին. ՌՃ (1651).

Այս է հանգիստ Էնգզարին թվ. ՌՃԾ (1701).

Այս է հանգիստ Աճապին:

Այս է հանգիստ Գասպարին:[237]

Այժմյան դյուղն իր ծուռումուռ, կեղտոտ փողոցներով, հասարակ, անառողջապահիկ խուղերով տեղավորված է Սևանա լճի ափին, մի տափարակի վրա, և բռնում է 20 դ. 1536 ք.ս. տարածություն, ամբողջովին պատած չինություններով: Սրա միջով է անցնում դեպի Երևան տանող ճանապարհը, և այստեղ է գտնվում փոստային կայարանը՝ մի անպիտան չենքով: Գյուղում կա երկու խանութ, որ հայերին է պատկանում: Այժմյան բնակիչները թուրքեր են, 130 տուն, 530 ար., 504 իգ., միասին՝ 1034 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Ունեն 1010 դ., 1806 ք.ս. վարելահող, 1070 դ., 352 ք.ս. արոտատեղի:

Աղգիբիր *(62°44'20'–40°27'25"). Տեղավորված է խճուղու կողքին՝ մի տափարակի վրա, բռնում է 17 դ. տարածություն: Գյուղում ուշադրության արժանի ոչինչ չկա, բացի այն, որ այստեղ է գտնվում այս գյուղական հասարակության դատարանը: Գյուղից փոքր-ինչ հեռու ընկած է մի կոտրված խաչքար, որի վրա գրված է.*

Ի թուին ՋԻԳ (1274). Ես Աբուսալմայս կանգնեցի զխաչս. որք երկրպագէք Աստուած ողորմի ասացէք ինձ և ծնողաց իմոց:

Գյուղի այժմյան բնակիչները թուրքեր են, 116 տուն. 413 ար., 342 իգ., միասին՝ 755 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Ունեն 833 դ. 1800 ք.ս. վարելահող, 161 դ. 480 ք.ս. խոտատեղի և 744 դ. 1920 ք.ս. արոտատեղի:

Աղ-Ղալա *(62°46'50"–40°26'40"). Սեղմված է մի փոքրիկ թերակղզու վրա, ուր դեռ մնում են հին ամրոցի կարմիր, սրբատաշ քարից շինված կիսակործան պարիսպն ու բուրդերը: Թե ամրոցի մեջ, և թե դուրսը նկատելի են տների հիմնապատեր, սակայն եկեղեցի կամ խաչքար բոլորովին չեն երևում: Գյուղը բռնում է 3 դ. 1232 ք.ս. տարածություն. բնակիչները թուրքեր են, 62 տուն. 218 ար., 206 իգ., միասին՝ 424 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Ունեն 335 դ. 366 ք.ս. վարելահող, 376 դ. 1414 ք.ս. արոտատեղի:*

Այրի վանք *(62°45'55"–40°26'20"). Գետեղված է Սևանա լճի ափին՝ մի տափարակի վրա և շատ գեղեցիկ տեսք ունի: Գյուղի հարավային կողմում,*

---

[237] *Տե՛ս Սմբատեան, Գեղարքունիք, եր. 430:*

մի փոքրիկ հրվանդանի վրա բարձրանում է Հայր Հովհաննավանքը կամ Հայրավանքը և կամ Այրիվանքը,[238] որի անունն էլ այժմ գյուղն է կրում:

Գյուղը բռնում է 7 դ. 964 ք.ս. տարածություն, և ոչ մի ուշագրավ բան չունի, բացի մի հին մատուռից, որի շուրջը կան մի քանի խաչքարեր: Վերջիններիս վրա տապանագրեր չկան, իսկ մատուռի դռան ճակատին գրված է.

ՈԳ (1154) խաչս կանգնեցաւ:

Այժմյան բնակիչները թուրքեր են, 96 տուն. 380 ար., 328 իգ., միասին՝ 708 հոգի: Պարապում են երկրագործությամբ: Ունեն 596 դ. 1292 ք.ս. վարելահող, և 730 դ. 672 ք.ս. արոտատեղի:

Էֆենտի-քենտ կամ Ռախման-քենտ (62°41'15"–40°30'20"). Մի փոքրիկ, աննշան գյուղ է, ծովի ափին, 1 դ. 2208 ք.ս. տարածությամբ: Բնակիչները չիա թուրքեր են. 72 տուն. 253 ար., 226 իգ., միասին՝ 479 հոգի. պարապմունքը նույնն է. ունեն 333 դ. 364 ք.ս. վարելահող և 781 դ. 828 ք.ս. արոտատեղի:

Բուղդու-Հուսեին-Սարաջլու (62°37'30"–40°30'45"). Տեղավորված է Սևանա լճի ափին, խճուղու ճանապարհի վրա. բռնում է 2 դ. 960 ք.ս. տարածություն: Գյուղում կան հայկական մի եկեղեցու և մի ձիթահանքի հիմնապատեր, ինչպես և մի քանի դերեզմանաքարեր, որոնց վրա կարդացվում են.

Այս է հանգիստ մելիք Ռափայէլի որդի Ռուստամ բէկին. թվին ՌՃԲ (1653):

Այս է հանգիստ Գիւլնազար խաթուն Օվսաննին. թվ. ՌՃՒ (1691):

Այս է հանգիստ Շամիրին. թվին ՌՃԾԷ (1708):

Այժմյան բնակիչները թուրքեր են. 112 տուն. 338 ար., 320 իգ., միասին՝ 658 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Ունեն 551 դ. 1200 ք.ս. վարելահող, 691 դ. 540 ք.ս. արոտատեղի:

ԵԼԵՆՈՎԿԱՑԻ ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՑՈՒՆ

Ելենովկա (62°36'10"–40°33"). Տեղավորված է Սևանա լճի արևմտահյուսիսային ափին, մի տափարակի վրա և աքանչելի տեսք ունի: Բռնում է 26 դ. 1530 ք.ս. տարածություն: Ունի կանոնավոր, լայն փողոցներ, դեղեցիկ, քարաշեն տներ և բավականաչափ խանութներ ու արհեստանոցներ: Գտնվելով Երևանից, ինչպես և Ղարաքիլիսայից (Ալեքսանդրապոլի դավառ) Նոր-Բայազետ տանող խճուղու վրա՝ ունի փոստային կայարան, փոստ և հեռագրատուն: Միևնույն ժամանակ համանուն գյուղական հասարակության կենտրոնը լինելով, ունի գյուղական դատարան և տարրական դպրոց: Այստեղ է բնակվում այս ոստիկանական շրջանի ոստիկանը:

---

[238] Տե՛ս նշանավոր վանքերի բաժնում:

Երկու եկեղեցու հիմնապատեր և երկու դերեզմանատուն, որոնց խաչքարերն ու տապանաքարերն արդեն գործ են ածված շինությունների վրա՝ ցույց են տալիս, որ հնում ևս այստեղ մեծ բնակություն է եղել:

Բնակիչները ռուս աղանդավորներ են՝ մեծ մասամբ սուբբոտնիկ, կան և պրիգուններ ու ստարավերներ: Ընդամենը 220 տուն են, 816 ար.,790 իգ., միասին՝ 1606 հոգի: Խանութպանների և արհեստավորների մեծ մասը այստեղ ժամանակավոր ապրող հայեր են:

Պարապում են երկրագործությամբ, անասնապահությամբ, բեռնակրությամբ և ձկնորսությամբ: Ունեն 2259 դ. 2030 ք.ս. վարելահող, 1690 դ. 2020 ք.ս. արոտատեղի. 11 դ. 1240 ք.ս. էլ բռնված է ջրով, որից 7 դ. 1340 ք.ս. լճի, 3 դ. 2300 ք.ս. դետակների տակ:

Սեմյոնովկա (62°33'45"–40°39'40"). Տեղավորված է համանուն բարձրավանդակի (перевал) վրա, որ ծովի մակերևույթից 6972 ոտնաչափ բարձրություն ունի, մի փոքրիկ գոգավորության վրա, սառնորակ, բազմաթիվ աղբյուրների մոտ, Ղարաքիլիսից դեպի Նոր-Բայազետ տանող փոստային ճանապարհի երկու կողքին: Բռնում է 14 դ. 1040 ք.ս. տարածություն, որից միայն 2 դ. 1040 ք.ս. ծածկված է շինություններով: Տները մեծ մասամբ փայտաշեն են, կղմինդրով ծածկված, մի հարկանի. կան և մի քանի երկհարկաններ: Բնակիչները Տամբովի նահանգի Բերսխլեևսկի գավառի Ուվարովո գյուղից 1848 թ. աքսորված սուբբոտնիկ և մալական ռուս աղանդավորներ են: Ընդամենը 61 տուն, 257 ար., 239 իգ., միասին՝ 496 հոգի: Գրեթե բոլորն էլ գիտեն հայերեն, որովհետև շրջապատված են հայերով: Ունեն մի պետական, միդասյան դպրոց:

Տեղի բարձրության պատճառով կլիման շատ ցուրտ է, ուստի և բնակիչները գլխավորապես պարապում են անասնապահությամբ և բեռնակրությամբ, մասամբ և երկրագործությամբ. իրենց գյուղի սահմանում ցանում են կարտոֆիլ, իսկ Սուխոյ-Ֆանտանի մոտ ունեցած հողերում՝ ցորեն և գարի: Ունեն 250 դ. 1200 ք.ս. վարելահող, 431 դ. 1148 ք.ս. խոտատեղի և 1409 դ. 512 ք.ս. արոտատեղի:

Ալեքսանդրովկա, հնում՝ Ջեյնալ-Աբդին (62°38'30"–40°30'38"). Տեղավորված է Սևանա լճի ափին, խճուղու վրա. բաղկացած է միայն մի փողոցից և բռնում է 3 դ. 800 ք.ս. տարածություն, որից միայն 1 դ. 1200 ք.ս. է գտնվում շինությունների տակ:

Այժմյան բնակիչները ռուս աղանդավորներ են, մալական, որ գաղթել են այստեղ 1851 թ., սրանցից առաջ եղել են թուրքեր, իսկ հին ժամանակներում հայեր, որովհետև պատահում են խաչքարեր, հայերեն աղավաղված արձանագրություններով: Ընդամենը 38 տուն են. 140 ար., 159 իգ., միասին՝ 299 հոգի: Պարապում են երկրագործությամբ, անասնապահությամբ,

ձկնորսությամբ և բեռնակրությամբ: Ունեն 107 դ. 1200 ք.ս. վարելահող, 986 դ. 592 ք.ս. արոտատեղի:

Ջըրչըր, հնում՝ **Վարսեր** (62°34'20"–40°33'20"). Տեղավորված է Զանգի գետի ափերին, ուր գետը զեղեցիկ ջրընկեցներ կազմելով դարձնում է չորս ջրաղաց: Այս ջրընկեցներից էլ, «չըրչըր»՝ գյուղը ստացել է իր անունը: Բռնում է 30 դ. 1276 ք.ս. տարածություն, որից 28 դ. 1920 ք.ս. ծածկված է չինություններով:

Ջըրչըրում կա մի հասարակ եկեղեցի և մի մատուռ: Բնակիչները գաղթել են Հին-Բայազետից, Մշից և Խոյից, բոլորն էլ հայեր. 112 տուն. 654 ար., 597 իգ., միասին՝ 1251 հոգի: Ջըրչըրից հազիվ երկու կիլոմետր հեռու, նույն հովտում գտնվում է **Շահրիզ** գյուղը (63°33'10"–40°33'50"), ուր կան մի ավեր և մի հասարակ եկեղեցի: Բնակիչները հայեր են, գաղթած 1829 թ. Մակուի Անձուկ գյուղից: Ընդամենը 180 տուն. 896 ար., 672 իգ., միասին՝1568 հոգի:

Թե Ջըրչըր և թե այս գյուղի բնակիչները պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Երկու գյուղը միասին ունեն 1903 դ. 674 ք.ս. վարելահող, 2 դ. 1840 ք.ս. խոտատեղի և 994 դ. արոտատեղի:

Դմմաչեն (Томмашен կամ Тутмашен) (62°32'20"–40°34'20"). Երբեմնապես կոչվում է նաև **Ղարաքեչիչ**: Տեղավորված է Ալափափախ սարի ստորոտում, Հրազդանի ափին, 23 դ. 1470 ք.ս. տարածության վրա, որից 21 դ. 1440 ք.ս. բռնում են չինությունները: Ունի մի եկեղեցի ս. Թադեոս առաքյալի անունով և երիք մատուռներ: Մերունիների ասելով գյուղը Դմմաչեն է կոչվել այն պատճառով, որ այստեղ մի ժամանակ շատ լավ դդում են մշակել:

Բնակիչները հայեր են 1830 թ. Խոյի և Մակուի գյուղերից գաղթած: Ընդամենը 295 տուն են. 1192 ար., 1072 իգ., միասին՝ 2264 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Ունեն 1549 դ. 1170 ք.ս. վարելահող, 681 դ. 1560 ք.ս. արոտատեղի:

Ծաղկունք (62°32'30"–40°34'50"). Թուրքերը կոչում են **Չիչակլի**, որ նույն բառի թարգմանությունն է. այսպես է կոչվում այն բազմաթիվ և բազմատան ծաղիկների շնորհիվ, որ առատությամբ բուսնում են այստեղ և այս գավառակում, որ նույնպես Ծաղկունք կամ Ծաղկաձոր է կոչվում: Տարածվում է Զանգու գետի աջ կողմը, զեղեցիկ հարթության վրա և բռնում է 21 դ. 220 ք.ս. տարածություն, որից 29 դ. 1540 ք.ս. գտնվում է չինությունների տակ: Գյուղում ուշադրության արժանի ոչինչ չկա, նույնիսկ եկեղեցին շատ հասարակ է: Այստեղ է գտնվում այս գյուղական հասարակության դատարանը: Բնակիչները հայեր են, Մակուից գաղթած, մի մասն էլ եկել է Ղազախի գավառի գյուղերից: Այստեղից է եղել Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանը: Բնակիչների թիվն է 202 տուն. 996 ար., 828 իգ., միասին՝

1824 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Ունեն 1075 դ. 920 ք.ս. վարելահող, 167 դ. 600 ք.ս. խոտատեղի և 1572 դ. 510 ք.ս. արոտատեղի:

Ջիբուխլու, հնում՝ **Ճապոտիկ** (62°37′28″–40°38′10″). Տեղադրված է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին, շրջապատված՝ Բարաթու, Յաղլիտաչ և Մարալիջա լեռներով: Շատ դեղեցիկ տեսարաններ ունի: Բռնում է 23 դ. 330 ք.ս. տարածություն, գրեթե ամբողջովին ծածկված չինություններով: Գյուղի միջով անցնում է Ղարաքիլիսայից (Ալեքսանդրապոլի գ.) Նոր-Բայազետ տանող վոստային ճանապարհը: Գյուղում կան մի քանի աննշան ավերակ մատուռներ և մի հասարակ եկեղեցի: Ուշագրավ է միայն Աստվածընկալ մատուռը գյուղի արևմտյան կողմում, Բալըղ-չայ գետակի ափին, և այն ոչ թե իր շինությամբ, այլ այն ավանդությամբ, որ այդ տեղը «ընդունել է Աստծուն» Գոչ Մխիթարի հետ խոսելու:[239]

Ջիբուխլուի բնակիչները հայեր են, Հին-Բայազետի Արծաւի գյուղից գաղթած 1830 թ.: Սրանց բարբառը վոքր-ինչ տարբերվում է Նոր-Բայազետցիների բարբառից: Ընդամենը 212 տուն են. 1038 ար., 967 իգ., միասին՝ 2005 հոգի: Պարապում են երկրագործությամբ, անասնապահությամբ և ձկնորսությամբ: Ունեն 1077 դ. 614 ք.ս. վարելահող, 151 դ. 1156 ք.ս. խոտատեղի, 1549 դ. 256 ք.ս. արոտատեղի, 40 դ. 566 ք.ս. տարածություն էլ ծածկված է ջրով, որից 21 դ. 1616 ք.ս. ջրանցքների և 18 դ. 1350 ք.ս. վտակի և աղբյուրների տակ:

Պ. Տ. Աֆրիկյանի նպաստով գյուղում պահվում է մի եկեղեցական-ծխական միդասյան դպրոց:

Ջիբուխլուից դեպի հյուսիս, Սևանա լճի ափին գտնվում է Թառատափ գյուղատեղին, որի առջև տարածված ընդարձակ տափարակը կոչվում է Մեծ տափ: Կիսավեր դրությամբ մնում է եկեղեցին, շրջապատված խաչքարերով, առանց մի որևէ արձանագրության: Պատմությունից հայտնի է, որ Աշոտ Թագավորը ուրիշ գյուղերի հետ այս էլ նվիրել է Սևանա կղզուն:

Օրդակլու, հնում՝ **Պորտակ** (62° 35′ 50″–40° 30′ 55″). Տարածվում է Սևանա լճի արևմտահյուսիսային ափին, մի հարթության վրա և բռնում է 26 դ. 480 ք.ս. տարածություն: Պորտակը նշանավոր է նախ և առաջ նրանով, որ այստեղ, լճի ափին գտնվում է 9 տողից բաղկացած մի արձանագրություն, որի մեջ պատմվում է, որ Արգիշտին նվաճել է Կիւհունի երկիրը և Իշտիխունի քաղաքը: Այս վերջինը հավանական է, որ լինի այն ամրոցը, որի պարսպի հետքերը դեռևս մնում են Պորտակի հարավային կողմը, լճի

---

[239] Սևանա Հայսմավուրք՝ արտագրված Սմբատյանի Գեղարքունիքում, նրես 380-387: Ժողովրդի մեջ այս ավանդությունը չկա:

ափին բարձրացող բլուրների վրա: Այս ամրոցի մեջ նկատելի են նաև մի եկեղեցու և մի ձիթհանքի հիմնապատեր:

Օրդակլուում կան չորս հին եկեղեցիներ, որոնցից մեկը գյուղի կենտրոնում գտնվելով, այժմ վերանորոգվելով իբր ծխական եկեղեցի է ծառայում: Մյուս երեքը կիսավեր լինելով, ուխտատեղիներ են համարվում: Մի զորավոր ուխտատեղի էլ համարվում է սեպաձև արձանագրության հարավային կողմը, լճի ափին գտնվող մատուռը, ուր կան մի քանի խաչքարեր առանց արձանագրության: Մատուռի շուրջը ևս կան գետնափոր, բոլորաձև շինության հիմնապատեր: Հավանական է, որ այստեղ հնում մեհյան եղած լինի: Այժմ այս մատուռը, որ փայտով ծածկված է, կոչվում է ս. Գևորգ: Ավելի ուշագրավ է գյուղի հարավային կողմում, «Կարմիր վանք» կոչված կիսավեր եկեղեցու մոտ բարձրացող քարաժայռը, որ այժմ «Թուխ-մանուկ» է կոչվում: Ամենայն հավանականությամբ սա ֆալլոսի պաշտման տեղ է եղել: Օրդակլուի շրջակայքում կան բազմաթիվ հրաբխային քարակույտեր:

Գյուղը ունի մի քանի փողոցներ, մի և երկու հարկանի դեղեցիկ տներ, մի քանի խանութ:

Այժմյան բնակիչները հայեր են, 1830 թ. Մակուի Բազրկյան գյուղից գաղթած, ուր վերաբնակված են եղել Հին-Բայազետից: Պետք է ասել նաև, որ գաղթելիս մի առ ժամանակ հաստատվել են Մաքրավանքում, և հետո միայն տեղափոխվել այստեղ: Ընդամենը 210 տուն են. 1112 ար., 1062 իգ., միասին՝ 2174 հոգի: Ունեն եկեղեցական-ծխական միդասյան դպրոց: Պարապում են երկրագործությամբ, անասնապահությամբ և ձկնորսությամբ: Ունեն 1371 դ. 1320 ք.ս. վարելահող և 1532 դ. 1220 ք.ս. արոտատեղի:

Ցամաքաբերդ. Գտնվում է Սևանա վանքի հանդեպ, դեպի արևմուտք: Այստեղ մի փոքրիկ հրվանդան ձգվում է լճի մեջ. երբեմն այստեղ մի բերդ է եղել, որի պատճառով և գյուղը այժմ կոչվում է Ցամաքաբերդ: Այստեղ կա սրբատաշ քարից շինված մի կիսավեր մատուռ, Գոշ Մխիթարի անունով: Սրա մեջ կա մի խաչքար, որի մասին ավանդաբար պատմվում է, թե կանգնեցրած է ի հիշատակ այն «սրբուհիան համբոյրին», որ տվեց Մխիթար Գոշը երուսաղեմից վերադառնալիս իրեն ընդառաջ եկած Գետիկա վանքի միաբաններին (1200 թ.):

Մատուռից փոքր-ինչ ներքև գտնվում է «Դրսի տունը»՝ Սևանա վանքի հյուրատունը, չոմարանը և ընդարձակ գոմը:

Հրվանդանին կից գտնվում է գյուղը, որի խարխուլ եկեղեցին այժմ վերաշինում են: Բնակիչները բոլորն էլ հայեր են, Հին-Բայազետի Ավաջուղ գյուղից գաղթած, ընդամենը 62 տուն են. 264 ար., 252 իգ., միասին՝ 516 հոգի:

Պարապում են երկրագործությամբ, անասնապահությամբ և ձկնորսությամբ: Շատ գովված է այստեղի իշխան ձուկը, լճի մյուս կողմերի նույն

ձկների համեմատությամբ: Գյուղն ունի 776 դ. պլուտանի հող, որ ամբողջովին պատկանում է Սևանա վանքին: Պատմությունից հայտնի է, որ Աշոտ Ա Թագավորն է նվիրել այս գյուղը վանքին:

Գոմաձոր. Տեղավորված է Արջանոց լեռան (7846) ստորոտում, մի ձորակի մեջ, ուր երբեմն գտնվել են Սևանա վանքի անասուննների գոմերը, որից և ստացել է այս գյուղը իր անունը: Պատկանում է Սևանա վանքին: Ուշադրության արժանի ոչինչ չկա գյուղում. լեռան վրա կա մի ուխտատեղի ս. Խաչ անունով: Բնակիչները հայեր են, Մակուի Զանգեզոր և Տանալուա գյուղերից գաղթած 1830 թ.: Ընդամենը 82 տուն, 308 ար., 267 իգ., միասին՝ 575 հոգի: Պարապմունքը նույնն է: Հողը դեռևս կանոնավոր կերպով չափված և ցուցակագրված չէ. համարվում է ընդամենը 1018 դ.:

Գ. ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ԴԱԼԻ-ՂԱՐԴԱՇԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ղըշլաղ (62°49'40"–40°21'5"). Գտնվում է Նոր-Բայազետից դեպի արևելք, հազիվ երեք կիլոմետր հեռու, և բռնում է 20 դ. 1500 ք.ս. տարածություն: Երեք կողմից պատած է փոքրիկ բարձրություններով, իսկ արևմտյան կողմում տարածվում է մի դաշտավայր, որի միջով ոլորապտույտ հոսում է Գավառագետը՝ մի հիանալի տեսարան ընծայելով գյուղին: Արևմտյան բարձրության վրա նկատելի են մի հինավուրց ամրոցի հետքեր, որի մասին ոչ մի ավանդություն կամ հիշատակություն չկա. տեղացիները Քաբաբերդ են կոչում նրան: Այստեղ, ժայռի կրծքին կա մի արձանագրություն, սակայն բոլորովին եղծված է: Շատ նշանավոր է գետի ձախ ափին, հին կամրջի մոտ կանգնած խաչքարերից մեկի արձանագրությունը, որից երևում է, որ այս տեղում հնում եղել է Արծիվաքար գյուղը: Ահա այդ արձանագրությունը.

Կամաւն Աստուծոյ ես Տիլիջան որդի տէր Մաթէոսին՝ թոռն Ովանէսին, և որդիքս իմ Աբրիհամն, Լուսմաքոսն և հանգուցեալ որդիքս իմ Սարգիսն և Փիրհամզէն, և կողակիցն իմ Սիրմայ խաթուն, մեք եկինք Գաւառէն, չինեցինք Արծիւաքարս, կապեցինք կարմունջս, կանգնեցինք խաչս. թվ. ՋՂԳ (1544):

Ով առիւծ մահ առեր դու զիս
Գերեալ եղեր ներքոյ վիմիս,
Զարչարեցայ ես Գաւառիս
Փող մին չունիմ, պահեմ առ իս:

Այս խաչքարի մոտ կանգնած մի ուրիշ խաչքարի վրա.

Կամաւն Այ. ես Տիլիճան չինեցի Արծիւաքարս, գնեցի Գ. ըստակ մուլքս պարոն Շահղուլէն որդի Սաղաթելին Էլառայ Ջաղացաճորու Զ. ըստակ մուլքն պարոն Ղամայ Սուլթանէն դուստր պարոն պապին:

Գյուղի մէջ առանձին ուշադրութեան արժանի ոչինչ չկա, միակ եկեղեցին չափազանց անշուք է, փողոցները ծուռումուռ, տները մեծ մասամբ հին ձևի, թեև կան մի քանի գեղեցիկ և նոյնիսկ երկհարկանի տներ: Նոյնիսկ աղբյուրներ բավականաչափ չկան, այլ միայն մեկը, այն էլ գյուղի արևելյան ծայրում:

Բնակիչները գաղթել են Բայազետի Բարաքյաթի, Կարմիր-կոնտ, Գյուլասար, Նորաշեն, Արծափ գյուղերից, 4 տուն էլ Մշու կողմից: Ընդամենը 207 տուն են, 935 ար., 799 իգ., միասին՝ 1734 հոգի: Այս գյուղացիները հռչակված են որպես լավ մշակներ և շարունակ մշակութեան են անում Նոր-Բայազետ քաղաքում: Շատերն էլ նույն նպատակով պանդխտում են: Գլխավորապես պարապում են երկրագործութեամբ. ունեն 1325 դ. 1824 ք.ս. համայնական վարելահող: Անասնապահութիւնն այնքան էլ զարգացած չէ, որովհետև թեպետ 680 դ. 200 ք.ս. արոտատեղի ունեն, սակայն խոտատեղին չատ քիչ է, ընդամենը 17 դ. 696 քս: Այս գյուղացիներն էլ նավակներ են բանեցնում և ձկնորսութեամբ պարապում:

Ղըշլաղի վարելահողերը մեծ մասամբ տարածվում են նրա արևելյան կողմում, ուր ձգվում է Մանիչար հովիտը, տարածվելով մինչև լճափը: Սա մի ընդարձակ հովիտ է, որ ձգվում է մինչև Դալի-Ղարդաշ գյուղը. չատ էլ պարարտ է: Այստեղ կատարված պեղումները վկայում են, որ ամենահին ժամանակներում էլ այս հովիտը բռնված է եղել մարդկանց բնակութեամբ: Տեղական մի ավանդութեան ասում է, թե այս հովիտը իր անունն ստացել է Մելիք Մանուչարից, որը այն ատենները հարուստ է եղել, որ կարողացել է շահի զորքերին մի քանի օր կերակրել: Նրա պեղեզմանը ցույց են տալիս այս հովտում, մի բլրակի վրա, որի մոտ ես պեղումներ եմ կատարել: Սա մի ահագին քար է, 3 մ երկարութեան, 1,5 մ լայնութեան և 70 սմ հաստութեան: Քարը շրջած էր և դերեզմանը փորված՝ դանձ գտնելու նպատակով: Մշակները ինձ ասում էին, թե քարի առաջին երեսում գրված է, թե՝ ես արտերս ձեթով լրեցի ու կնոջս արծաթե պայտով քոչ հագցրի, դարձյալ աշխարհի համը չտեսա, դուք ինչ սիտի տեսնեք: Ես շրջել տվի քարը, սակայն ոչ մի տառ չնկատեցի վրան:

Այս պեղեցիկ հովտում կան չորս գյուղատեղիներ: Սրանցից հյուսիսայինը կոչվում է Մանիչարի Դոլակները, այսինքն ձմեռը ոչխարներ պահելու տեղ: Այստեղ, լճի անմիջապես ափին կա սրբատաշ քարով շինված փոքրիկ մատուռ, որի արևելյան պատի վրա արձանագրված է.

Ի թուականութեանս Հայոց ՈՁ (1231) յիշխանութեան Իւանէի և Աւագի, ես Մինայս գնեցի զագարակս և չինեցի զեկեղեցիս և Մագսուտ ամուսին իմ, յիշատակ մեզ և ծնաւղաց մերոց: Զատկին երկու աւր ժամ...:[240]

Մատուռի շուրջը կան մի քանի խաչքարեր, որոնցից մի քանիսի վրա արձանագրված է.

Ես Քիշմիրս կանգնեցի սուրբ խաչս բարեխոս Գեօքչուին, թվին ՌՃԾ (1701):

Այս է հանգիստ Սահակին թվ. ՌՃԾԴ (1705):

Մի խաչքարի վրա էլ կար ՋՁԱ (1532) թ.:

Այս գյուղատեղում նկատելի է մի եկեղեցու, յոթ ճիթահանքի և բավականաչափ տների հետքեր:

Երկրորդ կամ հարավային գյուղատեղում էլ կա նույնպիսի մի փոքրիկ մատուռ, որի վրայի արձանագրությունը եղծված է: Գյուղացիները այս մատուռին Արծվաթռիչ են կոչում:

Երրորդ գյուղատեղին կոչվում է ս. Գևորգ, որովհետև այս անվամբ մի ավերակ եկեղեցի կա այստեղ: Կան տնատեղեր և խաչարձաններ, առանց տապանագրերի:

Չորրորդ գյուղատեղին այժմ կոչվում է Ղուռու-խարապա, այսինքն Ցամաք-ավերակ: Այսպես կոչվելու պատճառն այն է, որ Բաշքենտ գյուղից իջնող առվակը, որ երբեմն խմելու ջուր է մատակարարել, այժմ չորացել է: Գյուղը տեղավորված է եղել լճի ափին, և բավական զեղեցիկ դիրք է ունեցել: Այժմ մնում են սրբատաշ քարով շինված մի եկեղեցու կիսակործան պատերը և նրա շուրջը տարածվող գերեզմանատան մեջ կանգնած բավական խաչքարեր, որոնցից մի քանիսի վրա կան հետևյալ տապանագրերը.

Հանգիստ Իգնատիոսին, որ փոխեցաւ ի Քրիստոս թվ. ՋՉԴ (1535):

Այս է հանգիստ Սարգիս աղին, որ է որդի Ամիր աղին. թվին Ռ (1551).

Այս է հանգիստ Աղազարին,

Որ է որդի Ամիր աղին:

Ամաց էր սա երեսունին,

Հանգեաւ ի Քրիստոս կուսի տարին

Ջ հայոց թվին

Ղե. աւելորդին (1546)[241]*:*

Սուրբ խաչս բարեխաւս է Ամիր աղին. թվին ՌԽԴ (1595).

Սուրբ խաչս բարեխաւս է համամչի Զաղին. թվին ՌԽԴ (1595).

Ես Աւանէս կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգոյ հաւրն իմոյ Թադէոսին և մաւրն իմոյ Նարին Գիւլին թվ. Ռ (1551):

---

[240] *Տե՛ս ԴՀՎ IV, էջ 109:*

[241] *Այսինքն երբ տարվա տանուտերը կույան էր:*

Եկեղեցու վրա ոչ մի արձանագրություն չկա, միայն նրա մեջ կանգնած մի գեղեցիկ խաչքարի վրա նկատելի է ՉՉՉ (1337) թվականը:

Ղուլալի (62° 48'30"–40° 19'37"). Տեղավորված է համանուն առվակի ձախ ափին, բռնում է 27 դ. 600 ք.ս. տեղ, որից 24 դ. շինությունների տակ է: Գտնվելով Նոր-Բայազետ քաղաքին մոտ, կարող է մոտիկ ապագայում միանալ նրա հետ: Գյուղում կան մի երկու լայն փողոցներ. տների մեծագույն մասը պլխատուն է, նոր-նոր շինվում են սենյակներ, սրանց առաջ՝ պարտեզներ: Գյուղում կա մի անշուք եկեղեցի, որի կամարակապ սեղանը հին է, մնացածը հետո վերանորոգված: Նվիրված է ս. Աստվածածնի անվան, ուստի և սրա տոնին ահագին բազմություն, մանավանդ Նոր-Բայազետից, ուխտ է գալիս: Եկեղեցու այս կամարի հիման վրա արձանագրված է.

Շնորհօքն Քրիստոսի շինեցաւ սուրբ տաճարս թվին ՌՃԻԳ (1674), ես տանուտէր Գասպարս և քահանայքս և ժողովուրդս միաբան շինեցաք սուրբ տաճարս. յիշատակ հոգւոց մերոց:

Գյուղի հյուսիսային կողմում էլ կա մի կիսավեր եկեղեցի, որի շուրջը կան խաչքարեր, սրանցից երկուսի վրա արձանագրված է.

Այս գայիսոն և նիշակ է ներկեալ արեամբն կենարարին Քիսուսի, որ կանգնեցաւ ձեռամբ Արաբշահ Աղային, ի փրկութիւն հոգւոյ Գրիգոր եպիսկոպոսին:[242]

Սուրբ խաչս բարեխաւս Մելիք Աղային և իւր ծնողացն. թվ. ՉՂԸ (1549). Մէլիքսէթ կազմող:

Տապանաքարերի վրա.

Այս է հանգիստ Յովսեփին. թվ. ՉՀԲ (1523).

Այս է հանգիստ Ոսկանին թվ. ՌՃԾ (1701):

Գյուղում կան նաև մի քանի մատուռներ, այսպես՝ հարավային կողմում ս. Վահան անունով, որի արևմտյան պատի վրա գրված է.

Ի թվ. ՉԾԴ (1505), ես Մաթոս քահանայս կանգնեցի զխաչս բարեխոս. յիշեցէք ի Քրիստոս:

Մյուս մատուռներն են՝ ս. Վարվառեի, Բըղտեի և Թուխ մանուկի:

Թե եկեղեցիների, թե մատուռների և թե գյուղի չորս կողմը կան բավականաչափ խաչքարեր և քառանկյունի տապանաքարեր, որոնց տապանագրերից մի քանիսը հետևյալներն են.

ս. Վահանի մատուռի մոտի մի խաչքարի վրա.

Սուրբ խաչս բարեխաւս Յակոբի որդի Պալին թվ. ՉԹ (1460).

Սրա մոտ՝ մի ուրիշ փոքրիկ խաչի վրա.

Ի թվ. ՉԾԴ (1505) ես Փիրհամզէի եղբայր Յոսապէչս կանգնեցի զխաչս բարեխաւս իչխանին:

---

[242] Տե՛ս ԴՀՎ IV, էջ 99:

Ավերակ եկեղեցու մոտ. Սուրբ խաչս բարեխաւս Մէլիք Աղային և իւր ծնողացն թվ. ՋՂԸ (1549). Մէլիքսէթ կազմող:

Հարավային գերեզմանատան մոտ.

Ես Աւանէս կանգնեցի զխաչս հոգւոյն Ղասուրին. թվ. ՌԴ (1555):

Սրա մոտ. Սուրբ խաչս բարեխաւս է Ուղուրին. Քիրամ կազմող թվ. ՌՃԸ (1609):

Եկեղեցու մոտի գերեզմանատան մի քի խաչքարերի վրա.

ՌՃԴ (1605) Փիրհամզէս տանուտէր գոլով...տանս Գեղամայ եւոս կազմել տապանս և նկարել զխաչս, որք կարդայք, յիշեցէք: Ես Գրիգոր եպիսկոպոս նկարեցի զխաչս ի խնդրոյ Փիրհամզին ի փրկութիւն հոգւո որդոյ իւրոյ Զաւրհապին:

Բնակիչները Հին-Բայազետից են, 270 տուն, 1116 ար., 1032 իգ., միասին՝ 2148 հոգի: Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունեն 1519 դ. վարելահող և 1368 դ. 700 ք.ս. արոտատեղի:

Դալի-Ղարդաչ (62°47'45''–40°17'30"). Փռված է մի մեծ դաշտավայրի վրա և հարուստ է սառնորակ աղբյուրներով, որոնք միանալով խառնվում են Ղուլալուի աղբյուրների ջրին և կազմում Գյոքչայ գետակը: Շնորհիվ այն հանգամանքի, որ գյուղը բռնում է 63 դ. 1440 ք.ս. տեղ և միայն 50 դ. 960 ք.ս. է շինութիւնների տակ, տները միմյանց վրա կուտակված չեն. կան բավական լայն փողոցներ, ընդարձակ բակեր և նույնիսկ մի քանի պարտեզներ՝ տների առաջ: Այս պատճառով և բավական լավ տպավորութիւն է թողնում: Գյուղը բաժանվում է երկու թաղի՝ Զանգեզուրցոց և Սուրբ Օհանցոց, յուրաքանչյուր թաղում կա մի եկեղեցի, երկուսի մեջտեղում՝ պետական միդասյան դպրոց և շինական դատարան: Գյուղի արևելյան կողմում, մի բլրակի վրա կա մի գյուղատեղի և մի փոքրիկ մատուռ «Մաղկավանք» անունով, որովհետև ծաղիկ հիվանդութիւնից բժշկվելու համար այդտեղ են ուխտ գնում: Արևմտյան կողմում էլ կա մի ուրիշ գյուղատեղի՝ մի մատուռով, որ հայտնի է «Քիմոյի սուրբ» անունով: Թուխ-Մանուկ անունով մի ուրիշ մատուռ էլ լրացնում է այստեղի քրիստոնեական հիշատակարանների թիվը: Ընդարձակ գերեզմանատանը, որ բռնում է 1 դ. 1200 ք.ս., կան նաև բավականաչափ հին խաչքարեր՝ որոնց վրա եղած տապանագրերից ուշագրավ են հետևյալները.

Սուրբ խաչս բարեխոս է Մէլիք Մալխասին թվ. ՌՃԽԸ (1699).

Սուրբ խաչս բարեխոս է Մէլիք Մանուչարին թվ. ՌՃԿԲ (1713).

Բնակիչները Հին-Բայազետի Զանգեզուր և Սուրբ Օհան գյուղերից են, առանձին թաղերում հաստատված: Ընդամենը 404 տուն են. 1896 ար., 1752 իգ., միասին՝ 3648 հոգի: Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունեն 2268 դ. 720 ք.ս. վարելահող և 1752 դ. 1880 ք.ս. արոտատեղի: Գյուղացիների մեջ շատ տարածված է ներկարարութեան արհես-

տը, և 70-ից ավելի այսպիսի արհեստավորներ գնում են Թիֆլիս և այլ տեղեր՝ իրենց արհեստով պարապելու:

Քյուզաճըղ (62°48'20"–40°16'20"). Սեղմված է մի գոգավորության մեջ և բռնում է 22 դ. 830 ք.ս. տարածություն: Արևելյան կողմում բարձրացող լեռան վրա կա մի հինավուրց ամրոց: Սարի արևելահայաց երեսը, որ բավական թեք է և մատչելի՝ երեք շարք համակենտրոն պարիսպներով պատած է, իսկ արևմտյան կողմը, որ ուղղահայաց է՝ պաշտպանված է միայն մի պարսպով: Այս կողմում կա մի բավական երկար ստորերկրյա անցք: Արևելյան կողմը, ամրոցից դուրս, կան արհեստական քարայրներ:

Ամրոցից փոքր-ինչ արևմուտք՝ նույն լեռան լանջին, կա մի փոքրիկ վանք, սրբատաշ քարով շինված, անսյուն, գմբեթազարդ: Սա **Պառավի** կամ **Իլկա** և կամ **Ջահրա** վանք է կոչվում, որովհետև, ավանդության ասելով, մի պառավ է շինել՝ Իլկին և Ջահրի վաստակով: Ոչ մի արձանագրություն չկա: Ավանդությունը մատնանիշ է անում նաև այդ պառավի գերեզմանը՝ իր վանքի հարավային կողմում:

Գյուղի հարավարևմտյան կողմում էլ կա մի գյուղատեղի, ուր դեռևս մնում են մի եկեղեցու ավերակները և շուրջը՝ գերեզմանաքարեր:

Գյուղի մեջ կան մի նոր և մի հին եկեղեցի, ինչպես և մի ուխտատեղի՝ **Թուխ-Մանուկ** անունով: Գյուղի ստորոտով հոսում է մի առվակ, որ ամառները շատ անգամ ցամաքում է, և որովհետև գյուղում աղբյուրներ չկան, գյուղացիները մեծ նեղություններ են կրում, մոտակա Դալիղարդաշ գյուղից ջուր կրելով:

Բնակիչները Հին-Բայազետի Զանգեզոր գյուղից են. 152 տուն. 685 ար., 622 իգ., միասին՝ 1307 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Ունեն 1320 դ. 2392 ք.ս. վարելահող և 765 դ. 1558 ք.ս. արոտատեղի: Այս գյուղից դեպի Բաթում և Բաքու պանդխտողների թիվը բավական մեծ է:

Բաշ-Քյանտ (62°48'50"–40°15'25"). Տեղավորված է համանուն լեռան լանջին և բռնում է 13 դ. 240 ք.ս. տարածություն, որից 9 դ. 1200 ք.ս. ծածկված է շինություններով: Ուղղված լինելով դեպի լիճը, շատ գեղեցիկ տեսարան ունի: Բաժանված է երկու թաղի, հայկական և թրքական: Հայկականում կա մի հին եկեղեցի՝ ս. Գևորգ անունով և մի փոքրիկ մատուռ՝ ս. Ստեփանոս անունով:

Հայերը գաղթել են Ալաշկերտի գյուղերից, ընդամենը 82 տուն են, 304 ար., 272 իգ., միասին՝ 576 հոգի: Թուրքերը 54 տուն են, 173 ար., 166 իգ., միասին՝ 339 հոգի. 4 տուն էլ քրդեր կան. 20 ար., 14 իգ.: Ընդամենը՝ 140 տուն, 497 ար., 452 իգ., միասին՝ 949 հոգի:

Թե հայերը և թե թուրքերը պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Ունեն 1207 դ. 1344 ք.ս. վարելահող, և 1399 դ. 1330 ք.ս. արոտատեղի: Գոլված է այստեղի յուղը:

ԳՑՈԼԻ ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՑՈՒՆ

Երանոս (62°51'–40°12'25"). Փռված է մի փոքրիկ զառիվայրի վրա՝ համանուն առվակի եզրին՝ իր առաջ ունենալով գեղածիծաղ Սևանա լիճը: Բռնում է 42 դ. 576 ք.ս. տարածություն, որից միայն 34 դ. 1344 ք.ս. է շինություններով ծածկված: Հնում այս գյուղը կոչվել է Ջագ, այդ ժամանակներից մնացել են մի երկու խաչքար, որոնց վրա կան հետևյալ տապանագրերը.

Աստվածածին եկեղեցու բեմի վրա գործադրված խաչքարի.

Թվին ՈԿԴ (1215) ի հայրապետութեան Տեառն Սարգսի Սիւնեաց եպիսկոպոսի ես Ցակոբս կանգնեցի զխաչս ծնողի իմոյ Խաչիկին. յիշեցէք:

Գյուղի վերևի հանգստարանի մի խաչքարի վրա.

Սուրբ խաչս բարեխաւս Ամիրաղին Թվ. ՋՁե (1536).

Նույն տեղի մի ուրիշ խաչքարի վրա.

Ես Սարգիս կանգնեցի զխաչս հաւրն իմ Բէգլարին, յիշեցէք ի Քրիստոս. Թվ. ՌԼ (1581):

Ս. Աստվածածին եկեղեցու գավթի խաչարձանի վրա.

Ասլան աղէս կանգնեցի խաչս. Թվ. ՌԻԴ (1575):

*Գյուղի արևմտյան կողմը, լեռան զագաթին գտնվում է **Սալկուտի** անապատը, որ այժմ **ս. Հովհաննես** անունով մեծ ուխտատեղի է համարվում: Սրանից փոքր-ինչ բարձր կա **ս. Սուփիա** անունով մի ուրիշ մատուռ էլ: Ժողովուրդը հավատում է, թե այս երկու մատուռներում քուլը ու եղբայը նահատակներ են ամփոփված:*

Բնակիչները Ալաչկերտի գյուղերից են, 239 տուն, 1185 ար., 1032 իգ., միասին՝ 2217 հոգի:

Պարապում են երկրագործությամբ, անասնապահությամբ և ձկնորսությամբ: Ունեն 1452 դ. 848 ք.ս. վարելահող, և 1671 դ. 864 ք.ս. արոտատեղի: Գյուղի լճափում ձկնորսությամբ պարապելու իրավունքը գյուղացիներին է պատկանում:

*Գյուղի հանդեպ, հազիվ երկու կիլոմետր հեռու՝ լճափին, մի փոքրիկ բլրակի վրա, կան մի եկեղեցու և տների ավերակներ: Շատ հավանական է, որ սա Սիմեոն կաթուղիկոսի հիշած **Փոքր Ջագը** եղած լինի: Այժմ սրա մոտ, Նոր-Բայազետից դեպի Բասարգեչար տանող ճանապարհի վրա չինված են երկու կարավանատուն:*

Ադամ-խան (62°51'25"–40°11'25"). Ընկած է ծառազարդ ձորակի մեջ, մի առվակի ափին և բռնում է 11 դ. 1200 ք.ս. տարածություն: Ունի մի հին եկեղեցի, ս. Աստվածածնի անունով, որի հարավային պատին կից մի խաչքարի վրա արձանագրված է.

Ես Մխրզայ Մկրտիչ կանգնեցի զխաչս հաւրն մեր Աթանասին. թվին ՋՂԳ (1544):

Եկեղեցու չուրջը կան մի քանի տապանաքարեր, որոնցից մեկի վրա գրված է.

Թվ. ՌԻԵ (1576) Այս է հանգիստ Զաւհրապին, որ մարտիրոսացաւ ի սէրն Քրիստոսի:

Ս. Սարգիս անունով մի ավերակ եկեղեցի էլ կա գյուղի արևմտահյուսիսային կողմում: Սակայն այս գյուղը նշանավոր է այն սեպագիր արձանագրությամբ, որ գտնվում էր լճափին և որ 1866 թ. փոխադրված է Կովկասյան թանգարան:

Բնակիչները Ալաչկերտի գյուղերից են, 147 տուն, 612 ար., 597 իգ., միասին՝ 1209 հոգի: Պարապմունքը նույնն է. երկրագործություն, անասնապահություն և ձկնորսություն. ունեն 757 դ. 1728 ք.ս. վարելահող և 647 դ. 960 ք.ս. արոտատեղի:

***Վալի-աղալու կամ Զորագեղ** (62°49'55"–40°10'29"). Չետեղված է մի ձորակի լանջին, որի մոտ բարձրանում է մի լեզվաձև բլուր: Սրա երկու կողմից հոսում են առվակներ և միանում գյուղի ներքին մասում: Տեղի անհարմարության պատճառով տները կուտակված են միմյանց վրա և ամբողջ գյուղը բռնում է միայն 3 դ. 864 ք.ս. և գրեթե ամբողջովին ծածկված է չինություններով: Բլրի հարթ գագաթին դեռևս մնում են Շողագա վանքի մի քանի պատերը և նրա ու Սևանա վանքի հիմնադրի, Սյունյաց Գաբուռն Վասակ իշխանի կին՝ Մարիամ տիկնոջ հանգստյան մատուռը:[243] Շողագա վանքից դեպի արևմուտք, հազիվ 50 մ հեռու, կա մի ընդարձակ գերեզմանատուն, ուր միմյանց կից կանգնեցրած երկու խաչքարերի պատվանդանների վրա շարունակաբար գրված է.*

Ի թվ. ՈՀԳ (1234) յիշխանութեան Սեւադի և ի հայրապետութեան Տր Ցովանիսի ես սուտ անուն երեց Ցովասափս որդի երջանիկ քահանային Խորդինոյ կանգնեցի զխաչս ծնողաց իմոց. յաղաւթս յիշեցէք:[244]

Այս խաչքարի մոտ կա մի ուրիշ խաչքար՝ հետևյալ տապանագրով.

Թվ. ՋԺ (1261). Ես Ոսկևան կանգնեցի զխաչս ինձ և ամուսնոյ իմոյ և որդւոյ Շարոյին. յաղաւթս յիշեցէք:

Մի ուրիշ խաչքարի վրա.

---

[243] Տե՛ս «Նշանավոր վանքեր» բաժում:

[244] Տե՛ս ԴՀՎ. IV. էջ 243:

Սուրբ խաչս բարեխաւս Բարաթ աղին. թվին ՋՁԹ (1540):

Այս գերեզմանատան մնջ նկատելի են և մի փոքրիկ, խաչաձև մատուռի հիմնապատեր:

Գյուղից բարձր, հարավային կողմում, հարթության վրա, կա մի գյուղատեղի և մի ավեր եկեղեցի, որին ժողովուրդը Պողոս-Պետրոս կամ ս. Խաչ է կոչում: Այստեղից փոքր-ինչ արևմուտք՝ ձորակի մեջ, գտնվում են մի քանի բնական փոքրիկ քարայրեր և մի անցք, որ առաջացել է երկու մեծ քարեր միմյանց կռթնելուց: Հին դարերի այս կտեխը այժմ էլ պաշտվում է քրիստոնեական չպարի տակ. կանդնեցրած են երկու, առանց որևէ գրության հատարակ խաչքարեր և ս. Հակոբի ճգնարան անվանել: Դեռ այժմ էլ այստեղ ուխտ են գալիս առավելապես ամուլ կանայք՝ որդի հայցելու: Այս կտեխի մոտ կա սառը ջրի մի աղբյուր, որ նույնպես սուրբ է համարվում:

Գյուղի արևմտյան կողմում, ուր սկսվում է ձորակը, կան 10-15 արհեստական այրեր, որ երբեմն ծառայել են իբր բնակարան: Սրանցից փոքր-ինչ վերև, բարձրավանդակի վրա կա մի հինավուրց ամրոցի ավերակ, իսկ հարավարևմտյան կողմում՝ Ծակ-քար գյուղի մոտ, գտնվում է Մասրուց անապատը:[245]

Գյուղում կա մի հատարակ եկեղեցի, որ թեպետ անցյալ տարի գրեթե հիմնովին վերանորոգեցին, սակայն դռան վերևում ամրացրին հին կամարակալ քարը, որի վրա արձանագրված է.

Կամաւն Աստուծոյ նորոգեցաւ սուրբ Աստուածածին եկեղեցիս ի ժամանակս Ռուսաց կայսրութեան Աղէքսանդր Նիկոլայևիչին ի հայրապետութեան Տեառն Մատթէոսի և ի վերատեսչութեան աղայ Բարսեղի է Արծրունեան, որոյ հրամանաւ և արդեամբ բոլոր ժողովրդեանն նորոգել ետու ես Գրիգոր քահանայս Յօհան Վարդապետեան 1858 թուին ՌՃէ.

Բնակիչներն Ալաչկերտի Զլկանի, Համոկան, Քոչի-գեղ, Դուդաղ, Բալն և Տոմա գյուղերից են, ընդամենը 190 տուն, 887 ար., 886 իգ., միասին՝ 1773 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Ունեն 2022 դ, 672 ք.ս. վարելահող և 805 դ. 2000 ք.ս. արոտատեղի:

Գյուղի հարավային կողմում, մոտ հինգ կիլոմետր հեռու, գտնվում է մի ավերակ գյուղատեղի, որ այժմ կոչվում է Սըչանլու: Այստեղ կա մի ավեր եկեղեցի և մի քանի խաչքար՝առանց տապանագրի:

Ծակ-քար կամ Դալիկ տաշ (62°52'48"–40°10'10"). Չհետեված է համանուն գետակի ափին, որ ծակելով մի մեծ քարաժայռ, իր համար ճանապարհ է բացել, իսկ ժայռը այժմ ծառայում է իբր կամուրջ: Բունում է 10 դ. 1248 ք.ս. տարածություն և զարդարված է ուռենիներով. գեղեցիկ է մանավանդ գետակի վերին մասը, ուր նա ոլորվելով մի փոքրիկ հարթության վրա,

---

[245] Տե՛ս «Նշանավոր վանքեր» բաժում:

անցնում է Ծակ-քարի միջով: Գյուղում կա մի նոր, հասարակ, իսկ վոքր-ինչ հեռու՝ ս. Պողոս անունով մի հին, կիսավեր եկեղեցի:

Գյուղում թեպետ հնություններ չեն մնացել, սակայն հայտնի է, որ բավական հին է եղել և կոչվել է **Կռակածն** կամ **Կռակիծ**, և Աշոտ Ա նախքան թագավորելը՝ այս գետի մեջ ձուկ որսալու արտոնությունը չնորհել է Սևանա վանքի միաբանությանը, որովհետև լճից այս գետակն են բարձրանում կողակ, աղինճան, կռակտուց և չալա կոչված ձկները:

Բնակիչները Ալաչկերտի զանազան գյուղերից են, ընդամենը 88 տուն, 477 ար., 444 իգ., միասին 921 հոգի: Պարապում են երկրագործությամբ, անասնապահությամբ և ձկնորսությամբ: Ունեն 965 դ. 88 ք.ս. վարելահող և 303 դ. 648 ք.ս. արոտատեղի:

Թազա գյուղ կամ **Թազաքենտ** (63°52'20"–40°9'2"). Տեղավորված է Ղարա-Թափա լեռան լանջին, և բռնում է 13 դ. 1056 ք.ս. տարածություն: Թեպետ անունը Նորագյուղ է, վերջին ժամանակներս վերաբնակված լինելու պատճառով, սակայն բավական հին է եղել և կոչվել է Միրաթաթ: Հնություններից նշանավոր է ս. Գրիգոր Լուսավորչի վանքը, գյուղի արևմտյան կողմում: Սա անտաշ քարով շինված մի հասարակ դմբեթավոր շենք է, որի արևելյան պատի հարավային կողմում կա հետևյալ արձանագրությունը.

Ի թվիս ՉԼԵ (1286) գրեցաւ յիշատակ. ես Վարդան չահ միաբանեցայ անարժան մեղուցեալս և նորոգեցի զեկեղեցիս իմ հալալ արդեանց...:[246]

Վանքի շուրջը կան բավականաչափ խաչքարեր և տապանաքարեր, որոնց վրայի տապանագրերից ուշադրավ են հետևյալ երկուսը.

Ի թվիս ՋԽԲ (1293). Այս խաչս կանգնեցի բարեխաւս...

Սուրբ խաչս բարեխաւս Ոսկանին թվ. ՋՂԹ (1550):

Վանքի արևմտյան կողմում, մոտ երկու կիլոմետր տարածության վրա նկատված են ջրի խողովակներ, որոնցով երբեմն ջուր է եկել վանքը:

Գյուղում կան մի կանգուն և մի ավերակ եկեղեցի ևս:

Բնակիչները Ալաչկերտի զանազան գյուղերից են, ընդամենը 147 տուն, 615 ար., 581 իգ., միասին՝ 1196 հոգի: Պարապմունքը նույնն է՝ երկրագործություն, անասնապահություն և ձկնորսություն: Ունեն 1239 դ. 566 ք.ս. վարելահող, 678 դ. 647 ք.ս. արոտատեղի:

Գյոլ (62°53'50"–40°9'38"). Տեղավորված է դրեթե լճի ափին, բռնում է 23 դ. 2320 ք.ս. տարածություն: Հնում կոչվել է **Լճատեղ** կամ **Եղեգնագյուղ**: Թե հին և թե այժմյան թյուրքական նույնանիշ անունը բնորոշում է տեղի դրությունը: Գյուղում կա մի հասարակ եկեղեցի և մի նույնպիսի մատուռ, այժմ Մաղկավանք կոչված, որի մեջ եղած խաչքարերից միմյանց կից կանգնած երկուսի վրա արձանագրված է.

---

[246] Տե'ս ԴՀՎ IV, էջ 198:

Ի թվ. ՉԼԳ (1284) ի հապ. Տր. Գրիգորի մեք եղբայր Աբրհ. քահան... անարժան Հայրաձայն և այլքս կանգնեցինք զխչ հաւր եղբաւր մերոյ Հպին կուսակրաւն քահ. բազմաչարչար սնուցողին և ծնողաց մերոց Հայրումին և Խաթունին և քվեր մեր. յաղ. յիշց.

Եւ էր մեր Բ ականի ղղեքար ի նխնեաց չինաց եւ մեք պահող էաք դարպասիս գանձուց արքունեաց:[247]

Այս Ծաղկավանքի թե մեջը և թե մանավանդ շուրջը կան բավականաչափ խաչքարեր, որոնցից մի քանիսն ավելի մոտ ժամանակի են. այսպես մեկի վրա կա հետևյալ տապանագիրը.

Այս է հանգիստ Ավաքին թվին ՌՃԻԱ (1672).

Գյուղի մեջ ևս կա մի ավեր մատուռ, մոտը մի հին խաչքար առանց տապանագրի. գյուղի արևելյան և արևմտյան կողմերում ևս, բլուրների վրա կանգնած են մի-մի մեծ խաչքար, առանց գրության:

Գյուղը համանուն գյուղական հասարակության կենտրոնատեղին լինելով՝ ունի բավական զեղեցիկ շինական դատարան:

Գյուղից դեպի արևմտահարավ գտնվում է Պողոսի դեղ անունով մի գյուղատեղի, ուր դեռևս կանգուն է ս. Հռիփսիմե անունով մի փոքրիկ մատուռ, որի մեջ մի խաչքար կրում է հետևյալ արձանագիրը.

Ցանուն Աստուծոյ մեք Գոթ քաղաքի քահանայքս...որ փոխեցաւ ի Քրիստոս ի ճանապարհին. յիշեցէք յաղաւթս թվ. ՉԿՌ (1313):[248]

Նույն խաչքարի պատվանդանի վրա.

Սուրբ խաչս Տիրացու քահանային է, որ ի Տէր յուսալով կանգնեաց զայս խաչ: Հայր մեր Աբրահամ քահանայ, որոց հանգիստն է աստ:

Այս գյուղատեղում կա երկաթաջրի մի աղբյուր, որ պաշտվում է իբր բուրոտուբյան սրբիչ:

Գյուղի բնակիչները Ալաչկերտի Թութրաղ զալա գյուղից են, մի քանի տուն էլ՝ Մշից: Ընդամենը 217 տուն. 821 ար., 817 իգ., միասին՝ 1638 հոգի: Պարապում են երկրագործությամբ, անասնապահությամբ և ձկնորսությամբ: Ունեն 1873 դ. 222 ք.ս. վարելահող և 533 դ. 960 ք.ս. արոտատեղի:

***Ներքին-Ադիաման** (62°55'50"–40°8'35"). Տեղավորված է համանուն գետի առավելապես ձախ ափին և շատ զեղեցիկ տեսք ունի, որովհետև բացի գետից կան նաև բավականաչափ հորդահոս աղբյուրներ, որոնց ջուրը կազմում է ոլորապտույտ առվակներ, որոնք խոխոջում են բազմաթիվ ուռենիների տակերի տակ:*

Այստեղ գտնված բազմաթիվ կռապաշտական դամբանները և քրիստոնեական հիշատակարանները վկայում են, որ այս աքանչելի լճափը ոչ միայն նախապատմական ժամանակներում բավական խիտ բնակություն է

---

[247] *Տե՛ս ԴՀՎ IV, էջ 135:*

[248] *Տե՛ս ԴՀՎ IV, էջ 135-136:*

ունեցել, այլև քրիստոնեական ժամանակներում Սյունյաց իշխանների բնակավայրն է եղել և կոչվել է Կոթ:

Գյուղը բռնում է 22 դ. 190 ք.ա. տարածություն: Նրա արևմտյան կողմում մի բարձրավանդակի վրա կանգնած է ***Կոթա ս. Աստուածածնին*** *վանքը, որ չինել է Գրիգոր Սուփան Բ Սյունյաց իշխանը ժ դարի սկզբին:[249] Թերևս այս նշանավոր իշխանը ամփոփված լինի այն մատուռի մեջ, որ այժմ կոչվում է* ***Ամենափրկիչ*** *և գտնվում է գյուղի արևելյան ծայրում: Այս մատուռի արևելյան կողմը կա կամարակապ, գեղեցիկ քանդակներով շրջապատված մի մեծ խաչքար՝ 2,16 մ բարձրության և 1,32 մ լայնության, որի առաջ[250] դրված է մի քառանկյունի գերեզմանաքար՝ 2,16 մ երկարության, 0,90 մ լայնության և 0,20 մ հաստության: Խաչքարի չուրջը եղած քարերից երևում է, որ մի ժամանակ մատուռը սրբատաշ քարով է ծածկված եղել, սակայն այժմ անտաշ քարերով հասարակ պատեր են քաշված: Ոչ խաչքարի և ոչ էլ տապանաքարի վրա գիր չկա, ավանդությունը ևս լռում է, միայն գյուղացիները սուրբ համարելով խնոթուն են տանում գերեզմանից և հաճախ ուխտ գալիս այստեղ:*

Գրիգորի անունը կրող մի չատ գեղեցիկ խաչքար էլ կանգնած է գյուղի կենտրոնում, մի ժայռի վրա, սակայն թվականը չի համապատասխանում Սուփան Գրիգորի մահվան տարուն: Արձանագրությունը հետևյալն է.

Թվ. ՉԽԴ (1295) կանգնեցաւ խաչս ի բարեխաւսութիւն Գրիգորոյ:

Գյուղի արևմտյան ծայրում էլ գտնվում է սրբատաշ քարերով չինված մի փոքրիկ, կիսավեր եկեղեցի, որ այժմ վերանորոգել են: Եկեղեցու վրա արձանագրություն չկա. գյուղացիները նրան ս. Վարդան են կոչում: Շուրջը կան բավականաչափ խաչքարեր:

Գյուղում կա երկու հինավուրց մեծ գերեզմանատուն, մեկը Կոթա ս. Աստվածածին եկեղեցու գավթում, մյուսը՝ սրանից հարավ, մի բլրի գագաթին: Մի փոքրիկ գերեզմանատուն էլ գտնվում է հարավարևմտյան բլրակի վրա, ուր կա նաև մի փոքրիկ կիսավեր մատուռ, որի արևելյան պատի ճակատին դրված է.

Թվ. ՉԻԴ (1275) յաչխարհակալութեան Ապաղանին և Խարնոխին, և պարոն Տարսայիճին, ես Շմաւոն զայս թողի...եզ, մշակ, գործիք Ց...եզ և կով Մ. գլուխ:[251]

Գերեզմանաքարերի մեծագույն մասը խաչարձաններ են, կան և քառանկյունի և օրորոցաձև քարեր: Շատ քչերի վրա կան տապանագրեր, և

---

[249] Տե՛ս «Նշանավոր վանքեր» բաժնում:

[250] Ոչ ուղիղ մեջտեղը, այնպես, որ կարծել է տալիս, թե մոտն էլ մի ուրիշ գերեզմանաքար դրված է եղել:

[251] Տե՛ս ԴՀՎ IV. էջ 267:

սրանցից շատերն էլ մամռակալել և կամ հղծվել են: Կարդացված են միայն հետևյալները.[252]

Կոթա ս. Աստվածածնի գավթի գերեզմանատանը.

Ես Մաթէոս վրդպ. կանգնեցի զխաչս հգյ փկի հաւրն իմոյ Ջհանչիրին. յիշեցէք ի Քս. Թվ. ՋԿԶ (1517).

Վանքի դռան առջև կանգնած ս. խաչքարի վրա.

Ես Շաղուբատս սուրբ խաչս կանգնեցի դստեր իմոյ...Թվ. ՋՀԷ (1528).

Բ. խաչքարի վրա. **Ես Յակոբ քահանայ կանգնեցի խաչս ամուսնոյ իմոյ Սմպուկսին Թվ. ՋՀԸ (1529):**

Ես Մանուէլս կանգնեցի խաչս բարեխաւս Եղկանին. Թվ. ՋՂ (1541). Յակոբ նկարող.

Ես Գրիգոր կանգնեցի զխաչս. Յակոբ նկարող.

Սբ. խաչս բարեխաւս Խաչում աղին Թվ. Ռ (1551).

Սբ. խաչս բարեխաւս Գրիգոր աղին. Ես Քիրամ սուրբ խաչս կազմեցի. Թվ. ՌԻԴ (1575).

Սբ. խաչս բարեխաւս Մէլիք խանին Թվ. Ռճ (1651).

Սբ. խաչս բարեխաւս Բարսեղ քահանային Թվ. ՌՃՋ (1657). Ես Ուանէս կազմեցի:

Հարավային կողմի գերեզմանատանը, մի վայր ընկած խաչքարի երեսին.

Սբ. Նշանս Մարկոսին աւգնական:

Մելիքսէդէկ զտողս. Թվ. ԿԲ (613).[253]

Նույն խաչքարի կողքին.

Ես Մարկոս...կանգնեցի խաչս յիշատակ մեր և ծնողաց մերոց. յով կարդայ՝ Ած ողո...

Մի տափարակ գերեզմանաքարի վրա.

Թվ. ՋՉ (1257). Այս է հանգիստ Յոհանիսի դրան երեցոյ Ջալալին. Ած ողորմի ասացէք:

Հարավ-արևմտյան կողմում, մատուռին կից մի խաչքարի վրա.

Թվ. ՋԾՉ 1507). կանգնեցաւ սբ խաչս Յովանէսի հիւսան. որք երկրպագանեք ասացէք Ած ողորմայ Յոհանէսիս:

Մի հին խաչքար էլ դրված է իբր դյուղի այժմյան, շատ հասարակ և խարխուլ, եկեղեցու դռան կողմնակալ, որի վրա կարդացվում է.

Ի Արհի եպիսկոպոսութեան Տեառն...Սիւնեաց եպիսկոպոսի, ես Ովհաննէս քահանայ կանգնեցի զսբ խաչս ի վերկութիւն հոգւոյ իմոյ:

---

[252] Առանձնապես ես որոնեցի այն խաչքարերը, որոնց վրա Անտոն վրդ. Տեր Ստեփանոսյանը կարդացել է «Կնիկ քաղաքի» կամ «կնիկցի» բառերը (Մասեաց Ագաւնի Դ. 60. յիշ. Ալիշան, Սիսական 57), սակայն չգտա: Ես էլ դեր. Սմբատեանի նման կարծում եմ, որ «կնկցի», «կնկեցի» կրճատումները փոխանակ կանգնեցի կարդալու, հ. Տեր Ստեփանոսյանը կնիքեցի է կարդացել:

[253] Տե'ս ԴՀվ. IV. էջ 283:

Այժմյան Ադիաման գյուղում չկան կանոնավոր փողոցներ և ոչ էլ վայելուչ տներ, բացի երկուսից, բոլորն էլ գլխատներ են, միայն նորագույններ, այլևս գետնի մեջ չեն շինված, այլ ամբողջովին գետնի վրա, թեպետ նույն ձևի, երդիկով:

Բնակիչները Ալաչկերտի Թուխրադ-ղալայից և Խասթուրից են, ընդամենը՝ 233 տուն, 970 ար., 898 իգ., միասին՝ 1868 հոգի: Պարապում են երկրագործությամբ, անասնապահությամբ և ձկնորսությամբ: Ունեն 906 դ. 1250 ք.ս. վարելահող, 110 դ. 1150 ք.ս. արոտատեղի: Հողի սակավության պատճառով գյուղացիների տնտեսական դրությունը շատ աննախանձելի է, շատ-շատերը գնում են Թիֆլիս և Բաքու մշակության անելու:

Վերին-Ադիաման (62°55'50"–40°8'35"). Տարածվում է մի դաշտավայրի վրա, որից փոքր-ինչ հեռու, ձորի միջով հոսում է Իշխանագետը: Բռնում է 13 դ. 1248 ք.ս. տարածություն: Գյուղում կա մի հասարակ եկեղեցի, մի աննշան մատուռ, և մի քանի հին խաչքարեր: Վ. Ադիաման գյուղի բնակիչները գաղթել են Ալաչկերտի Խասթուր գյուղից, ընդամենը 148 տուն են, 651 ար., 596 իգ., միասին՝ 1247 հոգի: Պարապմունքը նույնն է. ունեն 1306 դ. 8 ք.ս. վարելահող և 374 դ. 960 ք.ս. արոտատեղի:

Իշխանագյուղ. Մի ավերակ գյուղատեղի է Ներքին և Վերին Ադիամանների միջև ձգվող ձորում, որի միջով հոսում է Ադիաման գետը, որ այստեղ Իշխանագետ է կոչվում: Ձորի լանջին, գետի աջ կողմը, գտնվում է մի գյուղատեղի, մի ավեր եկեղեցով և խաչքարերով, երևի սա Իշխանագյուղն է եղել, իսկ ձորի մեջ, գետի անմիջապես աջ ափին մի վանք՝ Իշխանավանքը և մի գերեզման, որ այժմ էլ կոչվում է Իշխանի գերեզման և ուխտատեղի է: Այս բոլորին անվանատու Իշխանի հիշատակը դեռ մնացել է ժողովրդի հիշողության մեջ: Այժմ էլ գյուղացիները պատմում են, որ մի ժամանակ այստեղի գետը ձկի վոխարեն ոսկեր է դուրս ձգել, և երբ բնակիչները սարսափած կամեցել են փախչել, սրանց Իշխանը աղոթքով դիմել է Աստծուն և խնդրել վերադարձնել ոսկերը գետը և դարձյալ ձուկ տալ իրենց: Աստված կատարել է սրա խնդրվածքը, ոսկերը թափվել են գետը և համեղ ձկի վոխարկվել: Իշխանը տեսնելով այս հրաշքը, թողել է աշխարհային կյանքը, նույն գետի ափին այժմյան ավերակ վանքը կառուցել և ճգնել: Երախտապարտ ժողովուրդը ի հիշատակ այդ հրաշքի՝ այդ ձուկը կոչել է Իշխանաձուկ, և Իշխանի մահից հետո ուխտատեղի դարձրել նրա դամբարանը:

Իշխանի վանքը շինված է հասարակ, անտաշ քարից. ճեղունը ամբողջովին քանդված է, պատերի էլ կեսն է մնացել: Միակ, արևմտյան դռան վերև պահպանված է մի հին, դեղեցիկ խաչքար:

Վանքից արևմուտք, փոքր-ինչ հեռու գտնվում է Իշխանի գերեզմանը՝ հասարակ, անտաշ քարերով չրջապատված և հինգ հատ 2,5 մետրանոց սալքարերով թաղ կապած: Ունի մի դուռ, այնքան ցածր և նեղ, որ մարդ միայն

չոքած կարող է մտնել: Դամբարանի մեջտեղում նկատելի է մի դերեզման, թեև սրա արևելյան ծայրին կանգնեցրած են երեք խաչքար: Թե այս և թե դրսում, դռան մոտ կանգնեցրած խաչքարի վրա տապանագիր չկա:

Իշխանի դերեզմանի և վանքի մոտ՝ ձորի քարաժայռերի մեջ կան մի քանի արհեստական քարայրեր և դեպի սրանց տանող դժվարելանելի արահետներ: Այս ու այն կողմում կան խաչքարեր, որոնցից միմիայն մեկի, մի օրորոցաձև վոքրիկ դերեզմանաքարի վրա քանդակված է մի մարդ՝ թախտի վրա նստած, մոտը մուրճ, դավ, հաց և արձանագրված է.

Սբ խաչս բարեխաւս է Մկրտչին թվ. ՌԽՒ (1593). Քիրամ կազմող:

Այս Իշխանաձորում կա նաև մի ավեր ձիթհանք: Մի սառնորակ աղբյուր էլ բխում է դեպի ձախ ափին:

ՂԱՐԱՆԼԸՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներքին-Ղարանլըղ *(62°58'15"–40°8'31"). Փռված է լճափի հարթ տարածության վրա և բավական գեղեցիկ տեսք ունի, որովհետև ծածկված է ծառերով: Բռնում է 20 դ. 1650 ք.ս. տարածություն, ունի մի քանի կանոնավոր փողոցներ, որոնցից մեկի կողքով հոսում է ջրաղացի մի առու: Կան մի քանի գեղեցիկ տներ, գեղեցիկ է մանավանդ պետական դպրոցական շենքը. վատ չէ և գյուղական դատարանը: Գյուղի եկեղեցին թեպետ հին է, սակայն վերանորոգված է և բավական լավ: Մի հին ավեր եկեղեցի էլ գյուղի հարավային ծայրում կա, որի հյուսիսային դռան մոտ կանգնացրած մի խաչքարի վրա մնում է հետևյալ արձանագրությունը.*

Ի Արհի եպիսկոպոսութեան Տեառն Շմաւոնի Սիւնեաց եպիսկոպոսի, ես Գրիգորս կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգւոյ եղբաւրն իմոյ Սամանգիւլին:

Այս գյուղը հնում կոչվել է ***Ներքին Կղնուտ****: Այժմ բնակավայր է այս ոստիկանական շրջանի ոստիկանի: Բնակիչները զաղթել են Ալաչկերտի Մանկասար գյուղից: Ընդամենը 215 տուն են, 895 ար., 859 իգ., մլասին՝ 1754 հոգի: Պարապմունքը նույնն է: Ունեն 999 դ. 858 ք.ս. վարելահող և 1923 դ. 2017 ք.ս. արոտատեղի: Գյուղի լճափին ձկնորսություն անելու իրավունքը գյուղացիներին է պատկանում: Պետք է ասել, որ գյուղի տնտեսական դրությունը ուրիշ գյուղերի համեմատությամբ լավ է: Կան մի քանի բավական հարուստ խանութներ, նավթի շտեմարան և շաքարի պահեստ: Կան նաև մի քանի հարուստներ, որոնց յուրաքանչյուրի կարողությունը կարող է հասնել 30-40000 ռուբլու:*

Ավդալ-Աղալու *(62°59'30"–40°8'16"). Փռված է մի ընդարձակ դաշտի վրա՝ ծովից կես կիլոմետր հեռու և բռնում է 13 դ. 1200 ք.ս. տարածություն: Գյուղում ուշադրության արժանի առանձին ոչինչ չկա, միայն գյուղի հարավային կողմում, մոտ երկու կիլոմետր հեռու, կա մի գյուղատեղի,*

որի ավեր եկեղեցին հայտնի է Ջորի սուրբ Աստվածածին անունով, և որի մեջ ապաստանելով Մանուշակ անունով մի հայ աղջիկ՝ ազատվել է այս դյուղը ասպատակող լեզգիներից:

Գյուղացիները Ալաշկերտի զանազան գյուղերից են. ընդամենը 79 տուն, 416 ար., 403 իգ., միասին՝ 819 հոգի: Պարապմունքը նույնն է: Ունեն 715 դ. վարելահող և 350 դ. 2038 ք.ս. արոտատեղի: Գյուղի լճափին ձուկ որսալու իրավունքը պատկանում է գյուղին:

Ալիղըռըխ, հնում՝ Խաչաձոր (63°1'15"–40°7'28"). Տեղավորված է միմյանց ընդհարվող լեռների լանջերին և բռնում է 21 դ. 1200 ք.ս. տարածություն: Իր նեղ և ծուռումուռ փողոցներով, գլխատներով, քակորի «ամրոցներով» միանգամայն նման է այս գավառի մյուս գյուղերին, կարող ենք միայն ասել, որ Պողոս-Պետրոս կոչված միակ հասարակ եկեղեցու սեղանի աջ կողմում մի խաչքարի վրա արձանագրված է.

Ի ժամանակս Շմաւոն արհեպիսկ. Սիւնեաց՝ ես Ներսէս քհնյս կանգնեցի զխաչս հաւր իմոյՍտեփաննոս քհնյի թվ. ՉԿԱ (1512):

Նույն եկեղեցու պատի մեջ ղրված է նաև մի ուրիշ գերեզմանաքար, որի վրա քանդակված է մի ձի, մոտը՝ մի մարդ, ձեռին՝ մի գավ, մի քիչ վերև՝ կլոր հացեր: Փոքր-ինչ հեռու՝ մի ուրիշ մարդ, մոտը մի մահակ և ոչխար խուզելու մի մկրատ: Այս նկարի ներքևում արձանագրված է.

Այս է հանգիստ Տրունին, որ է որդի Գալուստ քահանային:

Գյուղի արևմտյան կողմում բարձրացող լեռան գագաթին նկատելի են մի ամրոցի հետքեր, փոքր-ինչ ներքև՝ մի ավեր վանք, որ այժմ հայտնի է ս. Հռիփսիմեի անունով և ուխտատեղի է: Այս տեղից ներքև, ձորակի մեջ կա մի հին ձիթահանք, և սրա հանդեպ, ժայռի կրծքին մի արձանագրություն.

Թվ. ՉԻ (1471) Ծանուն Այ. ես Տիրոտս կանգնեցի զխաչս յիշատակ հոգւոյ իմոյ. Ճ տարի ապրեցա զինաւոր. ով կարդէք յաղաւթս յիշեցէք:[254]

Սրանից ներքև կան մի քանի գերեզմանաքարեր: Փոքր-ինչ էլ արևմտահյուսիս կա մի ավեր եկեղեցի և շուրջը՝ գերեզմաններ, ուր մի խաչքարի վրա կարդացվում է.

Թվ. ՉՂՉ (1547) խաչս բարեխաւս է Դաւթին:

Իսկ գյուղի արևելյան կողմում, ճանապարհի կողքին կանգնած մի խաչքարի ճակատին գրված է.

Ի թվին Հայոց ՉԺԹ (1470) ես Շայնշայ որդի Ջոցէ կանգնեցի զխաչս յիշատակ հոգւոյ իմոյ ով կարդէք ողորմի յիշեցէք:[255]

Պատվանդանի վրա.

Ես Շահնշահ և իմ որդի Աւաք զՈրբոյծն Թողաք...

---

[254] Տե՛ս ԴՀՎ IV. էջ 169:

[255] Տե՛ս ԴՀՎ IV. էջ 169:

Ավելի ուշագրավ է արևմտյան ձորում կանգնած «Զորավոր խաչը», որին ուխտ են գնում գլխավորապես ամուլ կանայք: Սա մի գեղեցիկ խաչքար է, որ վերջին ժամանակներս քահանայի կարգադրությամբ բերել, կանգնեցրել են կռապաշտական ժամանակներից մնացած մի ժայռի գագաթին, որի մեջը փորված է և երկու կողմից անցք բաց արած: Ամուլ կանայք երեխա ունենալու տենչով ուխտ են գալիս այս ժայռին և երեք անգամ անցնում այդ ծակի միջով:

Ալիղըռըխի բնակիչները գաղթել են Ալաչկերտի Ուչ-Քիլիսա գյուղից. ընդամենը 174 տուն են. 845 ար., 736 իգ., միասին՝ 1581 հոգի: Պարապմունքը նույնն է: Ունեն 1575 դ. 2120 ք.ս. վարելահող և 560 դ. արոտատեղի:

Զորախաչ կամ Զոլախաչ, հնում՝ Ակնախառ (62°2'25"–40°7'35"). Տեղավորված է Ալիղըռըխից մեկ կիլոմետր դեպի արևելահյուսիս, մի բարձրավանդակի վրա, և շատ գեղեցիկ տեսք ունի, որովհետև ծածկված է ծառերով և առաջում բացվում է լիճը իր բոլոր հրապույրով: Գյուղը փոքր է և բռնում է միայն 7 դ. 2100 ք.ս. տարածություն: Գյուղի այժմյան անունը՝ Զոլա՝ մեծ կամ Զորա՝ զորավոր խաչ, առաջացել է այն, հիրավի, մեծ խաչից, որ կանգնած է գրեթե գյուղի կենտրոնում: Սա 5 մ բարձրության և 1 մ լայնության միատարր մի սև խաչքար է, ուշագրավ՝ ոչ թե քանդակի նրբությամբ, այլ միայն քարի մեծությամբ: Սա հավանականորեն մեկի գերեզմանի վրա է կանգնեցրած: Վրան ոչ մի արձանագրություն չի եղել, այժմ միայն գյուղի քահանան այս խաչի հետևում շատ անգրագետ ձևով արձանագրել է տվել մի քանի տարի առաջ պատահած թանկության մասին: Այս խաչքարի մոտ կան մի քանի ուրիշ խաչքարեր և տապանաքարեր: Վերջիններիցս մեկի վրա, որ մոտ է վերոհիշյալ մեծ խաչքարին՝ արձանագրված է.

Այս է չիրիմ հանգստեան իմոյ Հասան Տաւղաչինիս, թոռին Իւանոյ և որդւոյ Որդորին թերակատար ի Քս փոխեցայ, և Ած զիւր ողորմութեան լոյսն ի հանգիստս իմ ծագեաց. ով կարդէք, ողորմի յիշէք. թվ. ՉԾԳ (1304):[256]

Այս մեծ խաչքարից զատ՝ կարելի է հիշատակել նաև մի հասարակ եկեղեցի, մի խարխուլ մատուռ և բավականաչափ հին խաչքարեր և գերեզմանաքարեր՝ գյուղի գանգատն մասերում ցրված, որոնցից մի քանիսի վրա կարդացված է.

Ցանուն Այ ես Դաւիթ երէցս կանգնեցի զխաչս հոգւոյ իմ, ծնողաց իմ թվ. ՉՂԱ (1342):

Ես Շմաւոն եպիսկոպոս իմով ձեռամբս կազմեցի զխաչս. թվ. Ջ (1451):

---

[256] *Տե՛ս ԴՀՎ IV. էջ 189:*

Ես Լիպարիտս կանգնեցի զխաչս հոգոյ փրկութեան Տիրատրին թվ. ՋԺԸ (1469):

Բնակիչները Ալաչկերտի Նահին գավառի Զիրոյի, Խամուր, Գալասար և Մանկասար գյուղերից են, ընդամենը 321 տուն. 1298 ար., 1243 իգ., միասին՝ 2541 հոգի: Պարապում են երկրագործությամբ, անասնապահությամբ և ձկնորսությամբ: Ունեն 2228 դ. 650 ք.ս. վարելահող և 1280 ք.ս. արոտատեղի:

Վերին-Ղարանլըղ *(62°56'55"–40°6'5"). Հնում կոչվում էր Վերին Կզնուտ: Ջեռնվված է բլուրների գոգավորության մեջ և բունում է 26 դ. տարածություն: Գյուղի արևմտյան կողմում ձգվում է մի ձոր, որի միջով հոսում է համանուն գետը: Գյուղն այժմ տարածվում է դեպի այդ կողմը, որովհետև այս մասը հետզհետե լայնանում է, և բնակության հարմարություններ ներկայացնում:*

Այս ձորի հարավային կողմում նկատելի են մի հին ամրոցի պարսպի հիմնապատերը, որին տեղացիները ավանդաբար Ալ բերդ են անվանում: Սա այն ամրոցն է եղել, որի մասին Ասողիկը (Բ. Ջ.), Թեոփիլոս կայսեր (829 թ.) մասին պատմելիս ասում է. «Սա ի խաղալն իւր յարևելս կոյս ի սահմանս Հայոց առնու զԾմուրերդն Հայոց, զԱսաղին և զՄիծկերտ և զԱլբերդ ի գաւառին Գեղամայ»:

Այս ամրոցի հարավային կողմը կա մի կիսավեր մատուռ՝ ս. Մամաս անունով, որի մասին պատմվում է, թե Ներսես Մեծի հետ Կեսարիա գնացած Սյունյաց իշխանները վերադարձին բերել են Մամաս ճգնավորի մասունքը և այս մատուռի տեղում հանգիստ տալով՝ Վայոց ձորի Քարապլուխ գյուղի մոտ ամփոփել և վրան վանք կառուցել:[257]

Ղարանլըղի բարձրում կա մի հին, հասարակ եկեղեցի, որի գավթում կանգնած են բավականաչափ խաչարձաններ և մի քանի խոյաձև տապանաքարեր: Սրանց վրայի տապանագրերից ուշագրավ են.

Այս է հանգիստ Սուքիաս աղին առաջնորդ գիւղիս թ. ՉԿԸ (1519):[258]

Այս է հանգիստ Մովսէսին, որ է քաջ մշակ. թ. ՋՀԱ (1522):

Մի խոյաձև գերեզմանաքարի վրա.

Սբ խաչս բարեխաւս Ջաքարին և կենակցին թվ. ՌՃԻԳ (1674).

Գյուղի հարավային կողմում ևս կա մի ավեր եկեղեցի, որի հյուսիսային դռան մոտ կանգնեցրած խաչի վրա կարդացվում է.

Ի Արհի եպիսկոպոսութեան Տեառն Շմաւոնի Սիւնեաց եպիսկոպոսի, ես Գրիգորս կանգնեցի զխաչս՝ ի փրկութիւն հոգւոյ եղբաւրն իմոյ Սամանգիւլին:

---

[257] *Սմբատեան, Գեղարքունիք, եր. 539:*

[258] *Տե՛ս ԴՀՎ. IV. էջ 217:*

Գյուղի արևելյան կողմում էլ կա մի հին ձիթահանք, որի հարավային պատի մեջ դրված խաչքարի վրա դրված է.

Կամաւն Աստուծոյ Ղուկաս և եղբայրն իմ Աւանէս որդի Ներսէսին շինեցաք սրանոցս՝ և վերի ճաղացն Ածսեւ քարի մօտ, յիշատակ որդւոյ մերոյ թվին ՌՃ (1651):[259]

Վերին Ղարանլուղի բնակիչները ևս հայեր են, Ալաշկերտի Մանկասար, Քուպղրան, Ջանգեղուր գյուղերից և Ղլաթ ու Արճեշ գավառակներից 1830 թ. գաղթած, ընդամենը 269 տուն են, 963 ար., 951 իգ., միասին՝ 1914 հոգի: Պարապմունքը նույնն է: Ունեն 1241 դ. 1200 ք.ս. վարելահող, 1662 դ. 1200 ք.ս. արոտատեղի:

Վերին Ղարանլուղից մոտ երեք կիլոմետր դեպի արևմուտք, գետակի ափին կա մի հին գյուղատեղի, ուր այժմ ոչ թե Վերին, այլ Ներքին ղարանլուղցիների անասունների դոմերն են դանվում: Այստեղ կա մի կիսավեր մատուռ, ու մի խաչքարի վրա արձանագրված է.

Թ. ՈԿԹ (1220) Եւ ի թագաւորութիւնն Լաչին և ի պատրոնութիւնն մեծի...և զարգանալն Շահնշահի և Աւագին և ի յիշխանութիւնն Վասակայ և որդոյ իւրոյ Բաբաքին. ես Գաջան Լաւռեցի կանգնեցի զխաչս վասն հոգո իմո փրկութեան եւ ամուսնոյ իմոյ ով կադաք յիշեցէք ի Քս Տր Ած ողորմի յիրում գալստեանն, ամէն. Եւ զԱբրեհամ կրաւնաւորս զկազմողս յիշեցէք ի Քս Տր Ած ողորմի ամէն:

Այս արձանագրությունը կրող խաչքարի մոտ կանգնած են երեք խաչքար, որոնց վրա ձգված են ուրիշ երեք խաչքար և այսպիսով կազմել մի նեղ անցք, որ տանում է դեպի մատուռը:

Մատինա (62°54'50"–40°4'40"). Այս գյուղը, հետևյալ ինը գյուղերի հետ գտնվում է Այրիջայի բարձրավանդակի վրա, ուր գարնանը Երևանի, Շարուր-Դարալագյազի և Նոր-Բայազետի գավառներից տասնյակ հազարներով քուրդ և թուրք, մասամբ և հայ սարվորներ բարձրանում են իրենց բազմաթիվ նախիրներով և հոտերով, ամբողջ ամառը անցկացնելու: Աքանչելի օդը, ալպյան հարուստ բուսականությունը, բազմաթիվ սառնորակ և նույնիսկ հանքային աղբյուրները թովիչ ազդեցություն են գործում: Եռում է կյանքը, սիրային արկածները, մանր և խոշոր գողությունները, անասունների և մանավանդ արոտատեղիների սահմանների առիթով ծագած անվերջ ազմուկներն ու կռիվները ստիպում են կառավարությանը այստեղ այդ միջոցին հատուկ ոստիկան և պահակատուն պահելու:

Մատինան բազկացած է երկու մասից՝ ստորին և վերին, միմյանցից հազիվ մեկ կիլոմետր հեռու: Տեղավորված են Աբդըլասարի դրեթե լանջին, Ատիաման գետի ձախ ափին: Վերին Մատինան հիմնվել է մի տասնյակ

---

[259] Տե'ս ԴՀՎ IV, էջ 225:

տարի առաջ Ստորին Մատինայի բնակիչներից: Այս վերջին գյուղը բավական հին է ղել, որովհետև այստեղ կան մի հայկական եկեղեցու հիմնապատեր և մի քանի խաչքարեր: Երկուսի բնակիչներն էլ չիա թուրքեր են, Երևանի Ջրղի շրջանից, մոտ 60 տարի առաջ այստեղ գաղթած, ընդամենը 56 տուն են, 218 ար., 211 իգ., միասին՝ 429 հոգի: Պարապում են գլխավորապես անասնապահությամբ և երկրագործությամբ:

Քասիկ-բաշ (62°20'20"–40°11'40"). Գտնվում է Մատինա գյուղից փոքրինչ հարավ, Ախտաման գետի ալ ափին: Գյուղի անունը թուրքերեն է և նշանակում է կառափնատեղի, պատմվում է, թե լեզգիների արշավանքի ժամանակ այստեղ գլխատել են գերվածներին: Մի ավեր եկեղեցի և մի քանի խաչքար ցույց են տալիս, որ այստեղ հնում ևս գյուղ է եղել: Այժմյան բնակիչները վերաբնակել են այստեղ 1900 թ. Վերին Ղարանլուղ գյուղից, երբ հունադավանություն ընդունեցին, բոլորն էլ հայեր են, 13 տուն. 78 ար., 75 իգ., միասին՝ 153 հոգի: Պարապում են անասնապահությամբ և երկրագործությամբ:

Քարվանսարա (62°54'40"–40°2'24"). Չեռեղված է Ախտաման գետի ալ ափին, այս գավառից դեպի Վայոց ձոր տանող ճանապարհի վրա: Գյուղն այսպես է կոչվում, որովհետև հնում այստեղ եղել է մի կարավանատուն, որը այժմ ձիթահանքի է փոխված: Սրանից մոտ 110 կիլոմետր հեռու գտնվում է նույն ճանապարհի հյուսիսակողմը Սելիմի կարավանատունը: Բնակիչները չիա թուրքեր են, մոտ 40 տարի առաջ Երևանի գավառի Փոքր Գիլանլար գյուղից գաղթած: Ընդամենը 33 տուն են. 173 ար., 168 իգ., միասին՝ 341 հոգի: Պարապում են անասնապահությամբ և երկրագործությամբ:

Ծանըղ (62°54'42"–40°20'). Փռված է մի բլրի լանջին, առջևից հոսում է մի վտակ և բացվում մի հիանալի տեսարան: Հնում ևս գյուղատեղի է եղել, որովհետև կա մի ավեր եկեղեցի և մի քանի խաչքար, առանց տապանագրերի: Գյուղի բարձրում նկատելի են մի քանի դամբան, որոնցից մեկը, բնակիչների ասելով, բացվել էր և միջից երկաթե ապարանջաններ գտնվել: Բնակիչները չիա թուրքեր են և նույնպիսի քրդեր. թուրքերը գաղթել են մոտ 33 տարի առաջ Երևանի գավառի Սատարակ գյուղից, իսկ քրդերը մոտ 30 տարի առաջ նույն գավառի Սուրմուքյուլան գյուղից: Ընդամենը 52 տուն են. 192 ար., 168 իգ., միասին՝ 360 հոգի: Պարապմունքը նույնն է:

Խարթլըղ (62°54'40"–39°58'50"). Մի փոքրիկ գյուղ է նեղ հովտի մեջ ընկած և ունի մի հիանալի, սառնորակ աղբյուր: Գյուղի անունը առաջացել է այն հանգամանքից, որ այստեղ մեծ քանակությամբ գտնվում է խարթ՝ սրոցի քար, որը սակայն չի շահագործվում: Այստեղ ևս հին բնակության հետքեր են նկատելի, և փոքր-ինչ ներքև, մի քարաժայռի գլխին դեռևս մնում են մի հին պարսպի հիմնապատեր, երևի պահականոց կամ ապաստարան է եղել: Գյուղի տները՝ Այրիջիի դրեթե բոլոր թրքաբնակ գյուղերի

տների նման, շատ ողորմելի են, բաղկացած մի տանից և գոմից. շատ քչերը ունեն նաև գոմի օդա: Ամբողջ գյուղում կա միայն մի հատ սենյակ՝ փոքրիկ պատուհաններով և մի բակով: Եվ այս մեկ հատիկ սենյակում ապատանում է ամառվա ընթացքում սարվորների վրա վերահսկող ոստիկանը: Խարթլըղի բնակիչները չիա թուրքեր են 30 տարի առաջ Վայոց ձորի Աղքենդ գյուղից գաղթած: Ընդամենը 38 տուն են. 139 ար., 121 իգ., միասին՝ 260 հոգի: Պարապմունքը նույնն է:

Աթ-տաչ. Տեղավորված է Այրիջայի ամենագեղեցիկ և հարթ բարձրավանդակի վրա, առջևից հոսում է Այրիջա գետը: Հնում այստեղ, ինչպես երևում է շինությունների հիմքերից, մի մեծ գյուղ, կամ գյուղաքաղաք է եղել, երևի եկեղեցահարկ ցուցակի մեջ հիշված Ալպիճի կամ Սիմեոն կաթուղիկոսի հիշած էրքեճի գյուղը: Կան մի բավական մեծ եկեղեցու հիմնապատեր, աղյուսաշեն սենյակների շարքի հետքեր, տների վլվածքային կարկառներ և բավականաչափ գերեզմաններ:

Բացի սրանցից, արևելյան կողմը բարձրացող բլրի վրա նկատելի են պարսպի հիմնապատեր, հետևապես և փոքրիկ ամրոց կամ մարակոց պիտի եղած լինի: Գյուղի շուրջը կան գերեզմաններ, որոնցից շատերը, և ըստ երևույթին, հները, փոքրիկ քարերի մինչև 2 մ տրամագծով համակենտրոն երկու շրջան ունեն:

Կան նաև օրորոցաձև գերեզմանաքարեր, արևելքից արևմուտք ուղղված, ինչպես նաև մի քարե ձի, նույնպես արևելքից արևմուտք, որի պատճառով և այս տեղը կոչվում է Աթ-տաչ՝ քարե ձի: Այս քարե ձիու և օրորոցաձև գերեզմաններից մի քանիսի վրա կան արաբական տառերով տապանագրեր, միայն սաստիկ մաշված են: Հազիվ երեք կիլոմետր այստեղից հեռու, նույն հարթության վրա կա մի երկաթածծմբային սառն աղբյուր, որից օգտվում են սարվորները՝ լոզանալով կամ խմելով: Սրա մոտ գտնվում է մի պահակատուն:

Առավելապես այս հարթության վրա ամառները հավաքվում են 10-15 հազար սարվորներ Երևանի, Շարուր-Դարալագյազի և Հին Նախիջևանի գավառի թուրքեր և քրդեր, ինչպես և Երևանի գավառի Դավալու գյուղի հայեր:

Վերջին տասնամյակում զանազան կողմերից եկած 32 տուն քրդեր բնակություն են հաստատել Աթ-տաչի մոտ, ավերակ եկեղեցու շուրջը, գետի ափին, և խնդրել են կառավարությունից՝ իրենց բնակավայրը գյուղ համարել՝ Աթ-տաչ անունով, սակայն դեռևս կառավարությունը չի հաստատել, այս քրդերը բոլորն էլ հայերեն գիտեն, որովհետև մեծ մասամբ Նոր-Բայազետի գավառի զանազան գյուղերում նախորդություն անողներն են: Սրանց բնակավայրում նոր-բայազետցիները հիմնել են հինգ խանութ՝ ամառվա ընթացքում սարվորների հետ առևտուր անելու:

Աղսաղ-Թոյուղ. Մի հին գյուղատեղի է Այրիջա գետի ձախ ափին, ուր կա երկաթածծմբային սառն աղբյուր: Այս գյուղատեղում էլ նկատելի է մի ավեր եկեղեցի: Այս գյուղատեղից վոքր-ինչ արևելահարավ գտնվում է մի ժայռ, որ կոչվում է Նաղարախանա: Առջևից հոսում է մի վտակ, որ նույն անունն է կրում և թափվում է Այրիջա գետի մեջ: Այս ժայռի մեջ կա մի մեծ, բնական քարայր, և ներքևում մի հին, ավեր եկեղեցի, որ հայտնի է ս. Վարդան անունով:

Քյուլլիճա. Մի հին գյուղատեղի է Իքիջիլար լեռան ստորոտում, ուր նկատելի են մի եկեղեցու, ջրաղացի և տների հետքեր: Այժմ Երևանի գավառի Քյուլ-Թափա գյուղի Փիր-Իքի քրդերը եկել, բնակություն են հաստատել այստեղ և խնդրել են պետությունից իրը գյուղ ճանաչել, սակայն դեռևս չի հաստատվել:

Ղըզըլ-Խարապա (62°48'35"–40°3'50"). Մի վոքրիկ գյուղ է, 1 դ. 1200 ք.ա. տարածությամբ, տեղավորված մի քարաժայռի գագաթին, որի միջից բխում են մի քանի սառնորակ աղբյուրներ և միանալով դարձնում 2-3 ջրաղաց: Այստեղից մի նեղ ճանապարհ տանում է մինչև Երևան քաղաքը: Այստեղի հողը չափազանց արգավանդ է, այս պատճառով էլ Ղըզըլ-խարապա՝ ոսկի գյուղատեղի է կոչվել: Սա ևս հայկական հին գյուղ է եղել, որովհետև կա մի կիսավեր եկեղեցի, դերեզմանատուն, սակայն առանց տապանագրերի:

Գյուղի բնակիչները չիա թուրքեր են. ընդամենը 25 տուն, 112 ար., 103 իգ., միասին՝ 215 հոգի: Պարապմունքը նույնն է: Ունեն 269 դ. 1870 ք.ա. վարելահող, 170 դ. խոտատեղի և 614 դ. 760 ք.ա. արոտատեղի:

Սըչանլու կամ Ահմետալի. Չեռեղված է համանուն լեռան լանջին: Գյուղի հարավային և հյուսիսային կողմերից հոսում են մի-մի վտակ, որոնք գյուղի ստորոտում միանալով, կազմում են Սըչանլու գետակը: Գյուղում կա մի ավեր եկեղեցի: Բնակիչները չիա քրդեր են: Ընդամենը 47 տուն. 251 ար., 248 իգ., միասին՝ 499 հոգի: Պարապում են անասնապահությամբ և երկրագործությամբ:

Դ. ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՂԱԼԴԱՐԱՑԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Գյոզալդարա հնում՝ Ագնվաձոր (63°6'15"-40°8'6"). Տարածվում է համանուն գետակի ափին, մի սքանչելի ձորակի մեջ: Բռնում է 49 դ. 2080 ք.ա. տարածություն և զարդարված է ծառերով: Գրեթե կենտրոնում բարձրանում է մի հինավուրց, բայց վերանորոգված եկեղեցի, ս. Աստվածածին անունով: Մի քանի կանոնավոր փողոցներ և գեղեցիկ, երկհարկանի տներ ավելացնում են տեղի գեղեցկության տպավորությունը: Գյուղում և շրջա-

կայքում կան յոթ գերեզմանատներ, բավականաչափ խաչարձաններով և տապանաքարերով: Գետակի աջ ափին գտնվում է «Իշխանա վանքը», սա սրբատաշ քարից շինված եկեղեցի է, որի միմիայն կիսավեր պատերն են մնում: Վանքի շուրջը նկատելի են բնակարանների հետքեր: Շուրջը եղած խաչքարերից մեկի վրա արձանագրված է.

Ի թվ. ՉԼԹ (1290) կանգնող Յովասաբս յիշէք. կամաւն Այ կանգնեցաւ սուրբ խաչս իշխանութեան բարեպաշտ արքային Ամիր Հասանայ, բարեխաւս Շահանայ և Միրայ՝ մաւրն և զաւակաց իւրոց. ով որ կարդէք Ած ողորմի ասէք:[260]

Երկու խաչքարի վրա էլ տեղացիները հասարակ քարով մատուռ են կանգնեցրել և թալկացող երեխաներին բերում են այստեղ՝ բժշկություն հայցելու, այս պատճառով էլ մատուռները Թալալոց են կոչվում:

Մի մատուռ էլ գյուղի բարձրումն է կանգնած, մի սառնորակ աղբյուրի մոտ և կոչվում է Թուխ-մանուկ:

*Գյուղից մոտ երկու կիլոմետր հեռու դեպի արևելք ընկած է այժմ «Քաջ նահատակ» կոչվող ուխտատեղին, ուր մնում են **Սրնձից սուրբ Մինասա** անապատի ավերակները: Սևանա վանքի ձեռագրերից № 8-ի հիշատակարանից երևում է, որ 1669 թ. Վարդենից ժողովուրդը այդ ավետարանը նվիրել է այս անապատին:*

Անապատի շուրջը կան բավական խաչքարեր, որոնցից մեկը կանգնած է Ստեփանոս եպիսկոպոսի վրա՝ ՉԽ (1291) թվականով:

Այստեղից 2,5 կիլոմետր հեռու կա մի գյուղատեղի, մի ավեր եկեղեցով, որի շուրջը եղած խաչքարերի արձանագրություններից ամենահինը կրում է ՉԾԳ (1304) և ամենանորը՝ ՌՃԿԵ (1716) թվականը: Տեղացիք այս գյուղատեղը «Բերդի խարապա» են կոչում:

Գյոզալդարայի բնակիչները հայեր են, Ալաչկերտի Գյոլասար, Յոնճալու, Ղումլուճա, Դիդամ, Խամուր, Մըչըլու և Ղըզըլ-գայա գյուղերից գաղթած. ընդամենը 453 տուն են, 1847 ար., 1707 իգ., միասին՝ 3554 հոգի: Գյուղի մտավոր զարգացումը բավական բարձր է, որովհետև թե հնում և թե այժմ կա դպրոց:

Պարապմունքը երկրագործությունը և անասնապահությունն է: Ունեն 2615 դ. 1440 ք.ս. վարելահող և 1959 դ. 2320 ք.ս. արոտատեղի:

***Վերին Գյոզալդարա.** Գտնվում է Ներքին Գյոզալդարայից փոքր-ինչ վերև, նույն դետի ձախ ափին: Հիմնված է 1878 թ. Ալաչկերտի Քոռուն և Մուսուն գյուղերի հայ գաղթականներից: Գյուղում ուշադրության արժանի առանձին բան չկա: Բնակիչները 44 տուն են, 178 ար., 177 իգ. և միասին՝ 355 հոգի: Պարապմունքը նույնն է:*

---

[260] *Տե՛ս ԴՀՎ IV, էջ 150:*

Քյոլաղռան (62°7'55"–40°9'40"). Տեղավորված է լճից հազիվ 0,5 կիլոմետր հեռու, բլրակների ստորոտում, բռնում է 23 դ. 2020 ք.ս. տարածություն, որից միայն 18 դ. է շինություններով ծածկված: Զարդարված է ուռենիներով և ունի մի քանի կանոնավոր փողոցներ, մի նորաշեն եկեղեցի, հինգ խանութ: Այստեղ է նաև գյուղական հասարակական դատարանը:

Գյուղի հին անունը հայտնի չէ, այժմյանը՝ Քյոլանը-ղռան (քյոլանինների ջարդատեղի) առաջացել է այն հանգամանքից, որ լեզգիներն այս կողմերը ասպատակելիս այս տեղում կոտորել են Քոլանի կոչված թուրքերին, որոնցից մի քանի հոգի ազատվել են և փախել, էջմիածնի գավառում հիմնել Քոլանլու գյուղը:[261]

Քյոլաղռանից մոտ 2 կիլոմետր հեռու դեպի արևելք, մի սարի գագաթին նկատելի է ամրոցի հետքեր՝ պարսպի և տների հիմքեր, և մի ստորերկրյա անցք: Այս ամրոցի ստորոտում, լճի մեջ ցցված քարաժայռի կրծքին գտնվում է 19 տողից բաղկացած բևեռագիր արձանագրություն, որը պատմում է, թե Սարդուրի որդի Ռուսան տիրել է այս կողմերին և հարկատու դարձրել 23 թագավորներ, շինել է պալատներ և նորոգել Տեիշբա աստծու տաճարը:

Քյոլաղռանի բնակիչները հայեր են՝ 1829 թ. Ալաշկերտի Կուի, Յոնճալու, Շեյխ աղուբ գյուղերից գաղթած. ընդամենը 195 տուն, 824 ար., 759 իգ., միասին՝ 1583 հոգի: Պարապմունքը նույնն է. ունեն 1386 դ. 1200 ք.ս. վարելահող և 935 դ. 1080 ք.ս. արոտատեղի:

Վերին-Քյոլաղռան կամ Կարմիր Խարապա. *Գտնվում է Քյոլաղռան գյուղից 2 կիլոմետր հեռու, դեպի հարավ-արևելք, մի հին գյուղատեղում, ուր կա մի կիսավեր եկեղեցի և բավականաչափ կարմիր խաչքարեր, որոնցից մեկի վրա արձանագրված է եղել, ըստ Սմբատյանի. «Իմ որդի (Տաճատի) հարսանիքին գործադրվեց երեք խալվար ալյուր, մի խալվար աղ. հինգ եզ և տաս ոչխար, երեք կարաս դինի և մի կարաս օղի. Սօթից մինչև Գաւառայ Գեղարքունին (Նորատուզն) հրաւիրուած էին հարսանիք. ով մեզանից քաջ է, թող այսպէս հարսանիք անի որդւոյն. Միր Ամիր»:[262]*

Վերոհիշյալ արձանագրությունը ևս չկարողացա գտնել, իմ տեսած խաչքարերից ամենից ուշագրավը գտնվում է եկեղեցու մեջ, ծածկված է գեղեցիկ քանդակներով և թիկունքին կրում է հետևյալ արձանագրությունը.

Ածով մեք Դաւիթ էրէցս և որդիքս Սոլթան ղուլի եղիշին թոռն Ղալամին որ ենք ծնունդս Սարու Ամիրճանին, որ բազում ջանիւ և հնարիւ բերել

---

[261] *Սմբատյան, Գեղարքունի, եր. 552:*
[262] *Գեղարքունի, եր. 553:*

սարնդահանայ արևի սարին ջուրն Դախձն գթայ չինոյ չինեաց բ. ջաղաց. եթող հօրն իմ, քերցն ընդունց:[263]

Մի ուրիշ խաչքարի վրա էլ գրված է.

Ած ողորմի Սուլթան Ղիւլիին:

Հավանական է, որ այս գյուղատեղին հին Վաղավեր գյուղը եղած լինի: Բնակիչները 1890 թ. Քյոլաղուանից գաղթած հայեր են, ընդամենը 22 տուն, 101 ար., 98 իգ., միասին՝ 199 հոգի:

Ներքին Ալուջալու, հնում՝ Ստորին Կթանոց *(63° 10' 20–40° 9"). Գտնվում է Քյոլաղուան գյուղից 3 կիլոմետր դեպի արևելք, այնպես որ վերոհիշյալ սեպաձև արձանագրությունը երբեմն և սրա անունով է հիշվում, թեպետև ավելի մոտ է Քյոլաղուանին: Փորված է լճափին, լճից հազիվ մեկ կիլոմետր հեռու և բռնում է 23 դ., 404 ք.ս. տարածություն, որից 17 դ., 670 ք. սաժենն է շինություններով ծածկված: Գյուղի մեջ առանձին ուշագրավ բան չկա, միայն նրա արևելյան կողմը փոքրիկ ձորակի մեջ գտնվում է Վանեվանից վանքը:*[264]

Բնակիչները Ալաչկերտի գանագան գյուղերից 1830 թ. գաղթած հայեր են. ընդամենը 183 տուն, 756 ար., 714 իգ. և միասին՝ 1470 հոգի: Պարապմունքը նույնն է: Ունեն 1452 դ., 2050 ք.ս. վարելահող, 926 դ., 280 ք.ս. արոտատեղի:

Վերին Ալուջալու, հնում՝ Հոսպակ *(63°10'50"–40°6'15"). Այս թուրքաբնակ գյուղը կոչվում է նաև Մոլլալու, որովհետև գավառում մոլլայության պատրաստվողները գալիս են այստեղ սովորելու: Գյուղը տեղավորված է Գյումբետ լեռան լանջին, միջով անցնում է մի գետակ, որ սկիզբ է առնում Գյոզալդարա լեռից, բռնում է 16 դ. 1200 ք.ս. տարածություն:*

Արևմտյան կողմում կա մի կիսավեր եկեղեցի և շուրջը բավականաչափ խաչքարեր և քառանկյունի տապանաքարեր, որոնց վրայի տապանագրերից նշանավոր են հետևյալները, մանավանդ այս առաջինը՝ ուր հայտնված է գյուղի հին անունը.

Հանգիստ Միր Աղին, իւր կողակից Շաբային. հաւրն Բարսեղ քահանային. եղբաւրն Ղայիբ խանին, գիւղն Հոսպակ:

Ես Մուրատ կանգնեցի սուրբ խաչս բարեխաւս Միրզիս թվ. ՋԹ (1460):

Այս է հանգիստ Հախնազարի որդի Ամիրխանին թվ. ՋՂ (1541):

Այս է հանգիստ Մկրտչին. ողորմի ասացէք թվ. Ռ (1551):

Սուրբ խաչս բարեխաւս Մարենին կողակից Փաշային թ. ՌՃԽԲ (1693):

Սուրբ խաչս բարեխաւս Պապի որդի Փասաբային:

---

[263] *Տե՛ս ԴՀՎ. IV, էջ 299::*

[264] *Տե՛ս նշանավոր վանքերի նկարագրության մեջ:*

Բնակիչները՝ չիա թուրքիր են՝ 96 տուն են. 482 ար., 356 իգ., միասին՝ 838 հոգի: պարապմունքը նույնն է: Ունեն 1376 դ. 970 ք.ս. վարելահող և 133 դ. 2070 ք.ս. խոտատեղի, 863 դ. 1715 ք.ս. արոտատեղի:

Ղըզըլ-վանք *(63°16'50"–40°7'37"). Թրքաբնակ մի աննշան գյուղ է լեռան լանջին, իր առաջ ունենալով մի սքանչելի տեսարան: Գյուղի ծայրին բարձրանում է Մաքինյաց հռչակավոր վանքը,[265] կիսակործան և անխնամ: Վանքի մոտից հոսում է մի հատակ, լեռնային գետակ, որ կրում է գյուղի անունը և գնում թափվում Սևանա լիճը: Բնակիչները, չիա թուրքեր, 99 տուն են, 387 ար., 346 իգ., միասին՝ 733 հոգի: Պարապմունքը նույնն է:*

Գյոդակ-բուլաղ *(63°14'40"–40°10"). Գյուղը իր անունը՝ կարճաղբյուր, ստացել է այն հանգամանքից, որ սրա մոտից մի սաստիկ հորդ աղբյուր է բխում և միայն 3 մ տարածություն անցնելով թափվում է Սևանա լիճը: Գյուղը տեղավորված է լճից փոքր-ինչ բարձր, ձորակի լանջին, որի միջով հոսում է մի գետակ: Գյուղում կա մի հին եկեղեցի, երկու հասարակ մատուռ և մի քանի հին խաչքար:*

Բնակիչները հայեր են, 1830 թ. Ալաչկերտի Լաթար, Կոփ և այլ գյուղերից գաղթած. ընդամենը 121 տուն, 589 ար., 528 իգ., միասին՝ 1117 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Այս և Բասարգեչարի հասարակության վերին Ջաղալու, Ներքին Ջաղալու, Ղանլի-Ալլահվերդի, Կյարկիբաշ, Սուբատան, Տյուսկուլու և Գյոզալդարայի հասարակության Ղըզըլ-վանք, Ջամուրլու և Յարփուղլու գյուղերի, ինչպես և Կիր կոչված տեղի հողերը միասին են չափված և ցուցակագրված. ընդամենը 69 դ. 1344 ք.ս. գյուղատեղի է, 8202 դ. 2120 ք.ս. վարելահող, 1427 դ. 1792 ք.ս. խոտատեղի, 2149 դ. 1224 ք.ս. արոտատեղի: 18 դեսյատին 480 ք.ս. էլ բռնված է ջրով, որից 9 դ. 720 ք.ս. ջրանցքների, 6 դ. 1200 ք.ս. գետակի և 2 դ. 960 ք.ս. լճի տակ:

Գյոդակ-բուլաղ գյուղի հարավային կողմում, չորս կիլոմետր հեռու, գտնվում է մի գյուղատեղի, որ տեղացիներից կոչվում է Կարմիր խարապա: Այստեղ էս կա մի հայկական ավեր եկեղեցի և մի քանի խաչքար:

Գյոդակ-բուլաղից դեպի արևելք, մի ընդարձակ դաշտավայրի վրա գտնվում է մի հին քաղաքի հիմնատեսատեր: Տեղացիները այս տեղը կոչում են «Տաշ-գափու» և ահա թե ինչու: Այստեղ կա մի մատուռ՝ 2 մ երկարության, 1,50 մ բարձրության, մի ժամանակ մեծ-մեծ սալաքարերով ծածկված: Սրա մեջ, միայն հարավային կողմում, կա երկու խաչքար, որոնցից մեկի վրա կարդացվում է թվ. ՇԳ (604 թ.), իսկ մյուսի վրա՝ թվին ՂՔ (650 թ.): Այս մատուռից մի նրբանցք տանում է մի ուրիշ մատուռ: Նրբանցքի դուռը քարից է, որից և առաջացել է այս ավերակի անունը՝ Տաշգափու՝ Քարա-

---

[265] *Տե՛ս նշանավոր վանքերի նկարագրության մեջ:*

դուռն: Այս քարի դռան բարձրությունն է 1,10 մ, լայնությունը՝ 0,36 մ և հաստությունը՝ 0,18 մ: Մյուս մատուռի արևելյան կողմը կան երեք խաչքար, առջևներում՝ մի-մի տապանաքար: Այս խաչքարերից մեկի վրա գրված է. Թվին Նխ (991 թ.): Այս մատուռը ևս ունեցել է մի նույնպիսի քարե դուռ, սակայն այժմ կոտրտված, վայր է ընկած:

Բազմաթիվ տների և 2 ձիթահանքի հիմնապատեր և քարակառկառներ նկատելի են այս ու այն կողմում:

Այստեղից փոքր-ինչ հեռու, բարձր բլրի գագաթին կա մի հինավուրց ամրոց, պարսպապատ. արևմտյան կողմից հոսում է Յարփուզլու գետը, հյուսիսային կողմը տարածվում Սևանա լիճը, մյուս երկու կողմերում էլ ձգվում են ձորակներ: Ամրոցի մեջ կա հայ երկու կխսավեր եկեղեցի, շուրջը գերեզմանատուն:

Յարփուզլու, հնում՝ **Դաղձանոց** (63°16'35"–40°9'6"). Մի փոքրիկ գյուղ է, այժմ թրքաբնակ: Այստեղ կա մի ավեր եկեղեցի, շուրջը խաչքարեր՝ առանց տապանագրերի: Բնակիչները չիա թուրքեր են 98 տուն. 372 ար., 347 իգ., միասին՝ 719 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Սրանց հողը հաշված է Գյոդակ-բուլաղի հասարակության հողերի հետ:

Ջամուրլու (63°15'15"–40°6'52"). Մի աննշան, թրքաբնակ գյուղ է, 62 տուն բնակչով, 261 ար., 230 իգ., միասին՝ 491 հոգի:

Հորգլու. Մի աննշան, փոքրիկ գյուղ է, Ներքին Ալուչալուից 5-6 կիլոմետր դեպի հարավ: Այստեղ կա մի կխսավեր եկեղեցի և մի մատուռ: Բնակիչները քրդեր են, 34 տուն, 176 ար., 172 իգ., միասին՝ 348 հոգի: Պարապում են անասնապահությամբ և երկրագործությամբ:

Կիզիլ-խարապա երկրորդ. Թրքաբնակ մի աննշան գյուղ է, 130 տուն բնակչով, 461 ար., 456 իգ., միասին՝ 917 հոգի:

ԲԱՍԱՐԳԵՉԱՐԻ ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՑՈՒՆ

Ջորրորդ ոստիկանական շրջանի կենտրոնը համարվում է **Բասարգեչար** գյուղը, որը հնում կոչվել է **Վասակաշեն** (63° 23' 30"–40°11'-15"): Գյուղը զգալի կերպով առաջանում է և նմանվում քաղաքի: Տեղավորված է մի տափարակի վրա, համանուն գետակի ափերին. բռնում է 41 դ. 880 ք.ս. տարածություն, որից 41 դ. գրաված է շինություններով: Կան մի քանի կանոնավոր փողոցներ, բավական լավ տներ, մոտ 20 խանութներ և արհեստանոցներ: Գյուղի կենտրոնում գտնվում է հայոց եկեղեցին, որ նոր են կառուցել, քանդելով հինը: Սա բավական գեղեցիկ է, սրբատաշ քարից, գմբեթազարդ:

Հին եկեղեցու բեմի առջև եղել են գերեզմանաքարեր՝ հետևյալ տապանագրերով.

Աստ հանգչի մարմին Սարգիս վարդապետի թվ. Ռ (1551):

Այս է հանգիստ Յովհաննէս վարդապետին ՌԼԲ (1583):

Այս երկու վարդապետներին հիշում է Առաքել Դավրիժեցին, ասելով որ սրանցից Հովհաննէսը Ծարա երկրից էր, Թադեոս առաքյալի վանքից, Հաղբատեցի Ղուկաս մեծ վարդապետի աշակերտը. սրբասեր ու գրասեր, որ շատ գրքեր էր գրել տվել, և եկեղեցու սպասներ և զարդեր չինել տվել. և որ «ՌԼԲ թուականիս մերոյ Հանգեաւ ի Քրիստոս և մարմին նորա եղեալ կայ ի յերկիրն Գեղամայ ի գիւղն Վաստակաչէն, հուպ դամբարանի վարդապետին Սարգսի»:[266]

ԺԴ–ԺԵ դարերի թվականները կրող բազմաթիվ խաչերի մեծագույն մասը արդեն կոտրատված և չինուԹյուններվի վրա է գործածված. մի քանիսը միայն այժմ կանդնեցրած են եկեղեցու շուրջը: Այս խաչքարերից մեկի վրա վորագրված է.

Այս է նշան սուրբ Արարչին. ճրագ հոգոյն քալ Զաւհրապին, կանգնեցաւ ձեռամբ իւր հաւրն Ովանննէսին և իւր ծնողին Փաշախաթունին. յիշեցէք ի Քրիստոս: Աստուած ողորմի Յովհաննէս աղին, Աստուած ողորմի Փաշախաթունին ՉԵ (1456): [267]

Նույն խաչքարի ալ կողմին.

Աստուած ողորմի քալ Զաւհրապին:

Ձախ կողմին.

Աստուծով մեք Ովհաննէս և եղբայրն իմ Դաւիթ կանգնեցաք զխաչերս բարեխաւս ծնողաց մերոց. ի թվ. ՌԼ. ՌԺ. (1559. 1561):

Երևում է, որ հարյուր տարուց հետո այս խաչքարը վերցրած է իր տեղից և դրված մի ուրիշ ննջեցյալի վրա, և առանց ջնջելու առաջին տապանագիրը, երկրորդը գրված:

Բասարգեչարից դեպի արևելք, աղբյուրի «Ակներ» կոչված տեղում կա մի գյուղատեղի, ուր նկատելի են մի եկեղեցու հիմնապատեր և մի քանի խաչքար, սակայն առանց գրուԹյան: Այստեղից էլ փոքր-ինչ արևելք, Քռերում նույնպես կա մի գյուղատեղի, եկեղեցով ու խաչքարերով, բայց առանց գրուԹյան:

Բասարգեչարի այժմյան բնակիչները հայեր են՝ Տաճկաստանի Դիադին գավառի Թավլի, Աղբազար և Սորանչի գյուղերից 1830 թ. գաղթած: Ընդամենը 330 տուն, 1189 ար., 1183 իգ., միասին՝ 2372 հոգի: Ունեն պետական տարրական դպրոց:

Պարապում են երկրագործուԹյամբ և անասնապահուԹյամբ, առևտրով և արհեստներով: Ունեն 1894 թ. 2150 ք.ս. վարելահող, 435 դ. 860 ք.ս. խոտա-

---

[266] *Առաքել պատմագիր. ԺԴ, եր. 472, յիշ. Սմբատեանի Գեղարքունիքում, եր. 603:*

[267] *Տե՛ս ԴՀՎ IV, էջ 365:*

տեղի, 73 դ. 1360 ք.ս. արուտատեղի: 34 դ. 200 ք.ս. տարածություն էլ բռնված է ջրով, որից 21 դ. 1400 ք.ս. դառնում է ճահճի, 2 դ. ջրանցքների և 10 դ. 1200 ք.ս. գետակի տակ:

Թյուքջյուլլու. Մի աննշան, փոքրիկ գյուղ է, Զախրլու գյուղից մեկ կիլոմետր դեպի հյուսիս: Գյուղում կա մի հին եկեղեցի, որի շուրջը կան ժե-ժէ դարերի տապանաքարեր: Բնակիչները հայեր են, Մշո Գանձասար գյուղից, 57 տուն. 224 ար., 216 իգ., միասին՝ 440 հոգի: Պարապմունքը նույնն է:

Զաղալու (63°17'20"–40°11'12"). Տեղավորված է Սևանա լճի հարավարևմտյան ափին, հարթության վրա: Մի քիչ հեռու ձգվում է բլրակների մի շարք, ամբողջովին պատած քարաժայռերով: Գյուղը իր այժմյան անունը ստացել է այն զաղաններից՝ քարայրերից, որ գտնվում են թե վերոհիշյալ ժայռերի և թե հարթության վրա: Այստեղ է գտնվում Սարդուրի արքայի գրած սեպաձև արձանագրությունը:[268]

Բացի կռապաշտական դամբաններից, որոնցով շատ հարուստ է Զաղալուն, այստեղ կա նաև քրիստոնեական ընդարձակ գերեզմանատուն և մի եկեղեցու հիմնապատեր:

Խաչքարերից մեկի վրա կարդացվում է.

Սուրբ խաչս բարեխաւս Մխրզահիր կողակից...որդի տէր Աւ...Մխրզա կազմող. թվին ՌՀԷ (1628):

Գյուղը զուրկ է կանոնավոր փողոցներից և լավ տներից: Գյուղի միջով անցնում է Նոր-Բայազետից դեպի Բասարգեչար տանող ճանապարհը, որ այս մասում շատ քարքարոտ է:

Գյուղից մոտ կես կիլոմետր հեռու գտնվում է մի հինավուրց, հրաշալի աղբյուր, սակայն գյուղացիները շատ չեն օգտվում, չմիաբանելով բնելու գյուղ, և խմում են լճի ջուրը, որ թեպետ մաքուր է, սակայն ձկի համ ունի:

Բնակիչները Ալաչկերտի Լաթար և այլ գյուղերից են, բարոյապես շատ ընկած: Առանց ամաչելու տղամարդիկ և կանայք միմյանցից 3-4 մ հեռավորությամբ լճում լողանում են: Ընդամենը 131 տուն են, 488 ար., 496 իգ., միասին՝ 984 հոգի: Պարապում են գլխավորապես ձկնորսությամբ, երկրագործությամբ և անասնապահությամբ: Սրանց հողերը Գյոդակ-բուլաղի հողերի հետ է ցուցակագրված:

Զաղալուից դեպի արևելահարավ, մոտ երեք կիլոմետր հեռու կա մի գյուղատեղի երեք կողմից բլրակներով պատած: Երկու հայկական եկեղեցիների հիմնապատեր և մի քանի խաչքարեր դեռևս մնում են: Մի տապանաքարի վրա էլ քանդակված է մի թագակիր մարդ՝ շուրջը գրված. ***Այս է հանգիստ:***

---

[268] Տե՛ս պատմական տեսության մեջ:

Ղըրխ-բուլաղ, հնում՝ Վարդաշեն կամ Վարդանաբակ[269] *(63°23'30"–40°9'32"). Այժմյան անունը՝ «Ղըրխ-բուլաղ», որ նշանակում է քառասուն աղբյուր, առաջացել է այն հանգամանքից, որ գյուղում բխում են բազմաթիվ աղբյուրներ, որոնք սառնորակ են և գեղատեսիլ: Գյուղը տեղավորված է մի քարքարոտ բլրի ստորոտում, միայն առջևում տարածվում է մի ընդարձակ, գեղեցիկ դաշտավայր, որի միջով ծավալվում է աղբյուրներից գոյացած գետակը: Բռնում է 22 դ. 90 ք.ս. տարածություն, գրեթե ամբողջովին պատած չինություններով: Գյուղում կա մի եկեղեցի ս. Մեսրովբի անունով. նկատելի են հին եկեղեցու, տների հետքեր: Բնակիչները հայեր են, Հին Բայազետի Ղարաքանդ գյուղից 1830 թ. գաղթած, ընդամենը 130 տուն. 627 ար., 578 իգ., միասին՝ 1205 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ. նաև հավաբուծությամբ: Ունեն 1232 դ. 2030 ք.ս. վարելահող, 344 դ. 1440 ք.ս. արոտատեղի, 5 դ. 40 ք.ս. էլ բռնված է ջրով, որից 3դ. 20 ք.ս. լճի, 1 դես. ջրանցքների և 1 դ. 20 ք.ս. գետակի տակ:*

Ղըրխ-բուլաղ գյուղից հազիվ երկու կիլոմետր հեռու, բլրակների գոգավորության մեջ կա մի գյուղատեղի, ուր դեռևս մնում են մի ավեր, փոքրիկ եկեղեցի, բավականաչափ կարմիր, մեծ խաչքարեր, քառանկյունի տապանաքարեր և մի մոխրակույտ: Գյուղում կա երեք աղբյուր, որոնցից մեկը խողովակներով բերված է հեռվից: Ուշագրավ է, որ դաշտերում փոքրիկ ավազաններ են չինված եղել, ուր հավաքվել է այս աղբյուրների և անձրևի ջուրը՝ արտերը ջրելու համար գործադրելու:

Խաչքարերի տապանադրերից ուշագրավ են.

ՉԽԶ թուին (1297) Ինա Այ. իշխնին Գրիգորոյ ես Տաշուրակա որդի բազում ճահի տր կանգնեցի զխաչս ինձ և ամուսնուն իմոյ Թամաթոյ ի փրկութեան հոգոց մերոց զի էաք անզաւակ. որք երկիրպագէք յաղաւթս յիշեցէք:[270]

Մի ուրիշ խաչքարի վրա.

Թվին ՉՂՐ (1543) կամաւքն Այ մեք որդիքս Ոսկանայ Տր Գրիգորս Սուլթանս Աղէս կանգնեցաք սբ խաչս տր Վարդանիսին իւր կողակից Արէվին. Ած ողորմի ամէն:

Մի ուրիշ խաչքարի վրա.

Ես Սարգիս էրէց կանգնեցի զխաչս հոգւոյ իմ և կողակցին իմոյ Մէլիք Խաթունին: Դ. որդիքն իմ փոխեցան ի Քս. Աւետարանի հրամանք է. ամէն

---

[269] *Ըստ Ստ. Օրբելյանի:*

[270] *Տե՛ս ԴՀՎ IV, էջ 355:*

ցաւէ փախացէ պիտի. մահովն տեսանք փախաց ապրէց. մնածն մեռաւ: Աս բաւ է իմաստնոց. ի թուին Հայոց ՌԱ (1552):[271]

Մի տապանաքարի վրա.

Ես Ղամարս հանգուցի տապանս կենայայքցին իմոյ Պրատիրին հայր իւր Քիրիգորին. թվ. ՌԾԵ (1606):

Մի ուրիշ դերեզմանաքարի մեջտեղում քանդակված է մի քահանայական գավազան և գրված է.

Այս է հանգիստ տր. Սահակին. թվ. ՌՃԿԲ (1713):

Նոր Ղըրխ-բուլաղի և այս գյուղատեղի միջև գտնվում է ուրիշ գյուղատեղի ևս, Աղբրի Խարապա անունով, ուր նույնպես կա մի ավեր եկեղեցի և մի քանի խաչքար, որոնցից երկուսի վրա կան հետևյալ տապանագրերը.

Կամաւքն Այ ես Աղաբէկ կանգնեցի զխաչս. թվ. Ջ (1451).

Ես սարկաւագ Դաւիթս Աղաջան որդ զեղս կանգնեցի խչս հոգոյ իմոյ:

Կըզըլ-Բուլաղ կամ Ջախըլու (63° 21' 30"–40° 10' 7"). Փռված է դեղնցիկ հարթության վրա և բռնում է 14 դ. 1392 ք.ս. տարածություն: Գյուղը իր առաջին անունն ստացել է այն հանգամանքից, որ ունի մի հորդ և հաստակ աղբյուր: Սա անցնում է մի կիսավեր, Բեթղեհեմ անունով եկեղեցու ավազանի տակով, այնպես որ ժամանակին մկրտությունը հենց այս ջրի մեջ է կատարվել: Մի քիչ անցնելով՝ այս աղբյուրը դարձնում է ջրաղացներ: Բնակիչները չիա թուրքեր են, 192 տուն, 685 ար., 664 իգ., միասին՝ 1349 հոգի: Պարապմունքը նույնն է: Ունեն 174 դ. 1684 ք.ս. վարելահող, 717 դ. 2136 ք.ս. արոտատեղի:

Քյարքի-բաշ (63°20'20"–40°11'40"): Մի փոքրիկ, աննշան գյուղ է, Գիլլի լճակի մոտ, բնակիչները չիա թուրքեր են, 36 տուն, 167 ար., 139 իգ., միասին՝ 306 հոգի: Պարապմունքը նույնն է:

Կանլի-Ալլահվերդի. Գտնվում է Սևանա լճի արևմտյան կողմը և տեղավորված է մի անանուն սարի լանջին: Այստեղ կա մի ավեր եկեղեցի և մի ընդարձակ դերեզմանատուն, ուր դեռևս մնում են մի քանի խաչքարեր և բավականաչափ քառանկյունի և օրորոցաձև դերեզմանաքարեր: Տապանագրերից կարդացվում են հետևյալները.

Մի օրորոցաձև դերեզմանի վրա.

Թվին ՋՂԹ (1550). Այս է հանգիստ մէլիք Թոնին, որ է որդի Ա...սքին որ ՂԱ հասակի փոխեցաւ ի Քս:

Մի խաչքարի վրա.

Սբ խաչս բարեխաւս Սմբաթ... որդի է վալին. թվին ՌՃԽ (1691):

Այս է հանգիստ Շահումին կողակից Մկրտչին, թվին ՌՃԽԵ (1696)

Մի ուրիշ դերեզմանաքարի վրա.

---

[271] Տե՛ս ԴՀՎ. IV, էջ 358:

Այս է հանգիստ Ատիսին որ է տարի առաջնորդ է կացեալ գեղոյս:

Գյուղի այժմյան բնակիչները չիա թուրքեր են. 64 տուն, 226 ար., 219 իգ., միասին՝ 445 հոգի: Պարապմունքը նույնն է:

Սուբքոտան (63°20'50"–40°7'2"). Մի աննշան գյուղ է, թրքաբնակ, 58 տուն, 193 ար., 175 իգ. և միասին՝ 368 հոգի, պարապմունքն էլ նույնն է: Հողերն առանձնապես չափված չեն, այլ հաշված են Գյոդակ-բուլաղի հողերի հետ:

Քեֆլու. Բլրակների մի երկար շղթա ձգվում է Ղըռբուլաղից դեպի արևելահարավ և գնում հասնում է Ալա-գյոլլար լճին: Այս բլրակները Տաշքենդ գյուղի մոտերքում մի կիսաշրջան կազմելով՝ առնում են Զողի քամու առաջը. հենց այստեղ հիմնված է Քեֆլու գյուղը: Առջևում տարածվում է մի ընդարձակ դաշտավայր, որի միջով հոսում է մի վտակ, որ ձմեռը կտրվում է. գյուղացիները ստիպված են լինում ձյունը հալել և գործածել: Գյուղը իր անունը ստացել է այն հանգամանքից, որ գեղեցիկ դիրք և տեսարան ունենալով՝ քեֆ անելու տեղ է եղել: Բնակիչները չիա-քրդեր են. 27 տուն, 96 ար., 82 իգ., միասին 178 հոգի: Պարապմունքը նույնն է:

Տաշքենտ (63°27'23"–40°7'26"). Տեղավորված է մի քարքարոտ բլրի գագաթին, որի առջևից հոսում է մի գետակ: Բլրի գագաթին նկատելի են մի ամրոցի հետքեր, իսկ ստորոտում կան 15-20 բնական և արհեստական քարայրեր, որոնցից մինն այնքան մեծ է, որ իբրև ձիթհանք է ծառայել, ինչպես երևում է մինչև այժմ էլ նրա մեջ մնացած ձիթհանքի ահագին քարից: Մյուս քարայրերը հավանականորեն բնակարան են եղել, որովհետև նրանց մեջ կան թոնիրներ:

Հնում այս գյուղը կոչվել է Բրդի-այրք, և այստեղ դեռևս մնում են երկու հայկական եկեղեցիներ: Սրանցից մեկը, որ փոքր է և ունեցել է դավիթ, գտնվում է գյուղի մեջ. սագաչեն է, սև, տաշած, մասամբ և անտաշ քարով շինված: Անսյուն է, անխորան և միակ դռան կամարակալ քարի վրա երկաթագրով արձանագրված է.

Կամաւն Աստուծոյ, յշխարհակալութեան Աբաղայ խանին և յիշխանութեան մեծին Հասանայ՝ մեք որդիք հայր Անանիայ՝ անարժան քահանայ Ստեփաննոս և երեք եղբարք մեր Զունիաթ, Սասուն և Վահրամ շինեցաք զեկեղեցիս սուրբ Աստուածածնայ և զժամատունս ի հալալ արդեանց, ի փրկութիւն հոգւոց մերոց. և ի վայելումն զաւակաց մերոց: Աղաչեմ, ժառանգաւորք, և սպասաւորք եկեղեցւոյս յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր:[272]

Նույն դռան աջ կողմին.

Ծանուն Աստուծոյ ես Մամքան Գրիգորոյ՝ զՁորի ջաղացն, զձալի հողն, Ստեփաննոսի ջրաղացադրան խոտատեղն, սուրբ Աստուածածնիս տուաք.

---

[272] Տե'ս ԴՀՎ. IV. էջ 317:

Ստեփաննոս սահմանեաց ճրագալուցի յայտնութեան Գ. ժամն պարոն Հասանայ, որ խափանէ դատի ի Տեառնէ:[273]

Այս եկեղեցու առջև կանգնած է մի խաչքար, որի վրա գրված է.

Թվ. ՆՂԵ (1046) ես Գրիգորս Քարամի[274] *որդի կանգնեցի զխաչս:*

Եկեղեցու աջ կողմում, փոքր-ինչ հեռու, միմյանց կից կանգնած են մի մեծ և երկու փոքր սև խաչքար, մեծի վրա գրված է.

Սբ խչս բարեխաւս Ատիպէկին. Անանիայ կազմող խաչիս. Թվ. ՌՂԸ (1649):

Այս խաչքարի հետևում.

Կմէն Այ ես Պալիս կանգնեցի խաչերս յիշատակ հաւրն իմ Գոկին որդոյն Ատիպէկին. Թվին ՌՂԸ (1649):

Ձախ կողմի փոքր խաչի վրա.

Սբ խաչս բարեխաւս Գոկին. Թվին ՌՂԸ(1649):

Նույն խաչի հետևում.

Սբ խչս բարեխօս Հօրն իմոյ Պալին եւ մաւրն իմոյ Հուռումսիկնին յիշեցէք ի Քս. ի Թվին Հայոց ՌՃԺԵ (1666).

Եկեղեցու աջ կողմի պատին կից կանգնած է 2 մետրանոց մի սև խաչքար, որի վրա գրված է.

Ած ողորմի պր Ղասումճանին. ՌԺԶ Թվ. (1567):

Սրա մոտ կա մի փոքր խաչքար.

Ած ողորմի պր Խանպէկին ամէն Թվ. ՌՃԶ (1607):

Այս երկու խաչքարի հետևում կա մի օրորոցաձև խաչքար, որի արևելյան ճակատին քանդակված է մի արծիվ՝ ճանկերի մեջ մի գառ բռնած: Տապանաքարի հյուսիսային երեսին քանդակված է մի զինված մարդ՝ ձիու մոտ կանգնած. մի մարդ էլ զինու գավը ձեռին, մի քիչ հեռու՝ թռչուններ և եղջերուներ: Հարավային երեսին՝ մի խաչ, մի մարդ, թառ ածելիս, մոտն էլ հաց և մի ուրիշ մարդ՝ ձեռին գավ բռնած: Վերևում գրված է.

Այս է հանգիստ Գուլապին Թվ. Ռ (1551).

Եկեղեցու առջև կանգնած մի ուրիշ խաչքարի վրա կարդացվում է.

Ած ողորմի Մաղաքին: Ավ. ես Ամիրպարս կանգնեցաք խչերս բարեխաւս եղբարցն իմոց Մաղաքին Անտիպարին:

Մի ուրիշ խաչքարի վրա.

Ավ ես Տէր Զագարէս կանկնեցի զխաչս բարէխաւս հաւրն Տր Մէլքյսէթ քհնին եւ մաւր իմ Շահնապին եւ որդոցս:

Մի ուրիշ, օրորոցաձև տապանաքարի վրա գրված է.

Այս է հանգիստ Աւաքին, որ է որդի Բարսեղ քհնին:

---

273 Տե՛ս ԴՀՎ. IV, էջ 317-318::

274 Քարամ կամ առավելապես Քերիմ անունը Սենեքերիմ անվան կրճատումն է, որ այժմ էլ շատ գործածական է:

Մյուս եկեղեցին գտնվում է գյուղի արևելյան ծայրում: Սա ևս սազաչեն է, սև քարով չինված, անսյուն և անխորան, միայն հյուսիսային պատի մեջ բացվում է մի դուռ, որ տարիով չինված և այժմ կործանված խորանը: Ունի միայն մի դուռ, որի կամարակապ քարի վրա արձանագրված է.

Կամաւն Աստուծոյ ի հայրապետութեան տէր Գրիգորոյ, յիշխանութեանս Հասանայ և Մամքանայ և Գրիգորոյ և Ասփէնի մեք միաբան եղբարքս Ուհան, Սարգիս և Ոհանէս և ամուսինք մեր չինեցաք զկաթուղիկէս ի փրկութիւն հոգւոց մերոց:[275]

Նույն եկեղեցու պատի մեջ ամրացրած է մի խաչքար՝ հետևյալ արձանագրությամբ.

Թվ. ՆԿ (1011) ես Ցոհաննէս կանգնեցի զխաչս:

Մի ընդարձակ գերեզմանատուն ընկած է գյուղից դուրս. խաչքարերի մեծագույն մասը կոտրված է. տապանաքարերը տարված են շինություններ-ի վրա գործադրելու: Այժմյան գյուղի տների մեծագույն մասը կիսագետնափոր գլխատներ են, նոր-նոր շինվում են կանոնավոր սենյակներ, և գյուղը բլրի գագաթից իջնում է դեպի ստորոտը, հարթ, գեղեցիկ տեղը: Բնակիչները չիա Թուրքեր են Ղազախի Ալի-բակլի և Գըզըլ Հաճըլը գյուղերից գաղթած: Ընդամենը 221 տուն են, 426 ար., 370 իգ., միասին՝ 796 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Սրանց ունեցած հողը ցուցակագրված է Հուսեյին-ղուլի աղալուի հողերի հետ: Հողը սևահող լինելով, անձրևային տարիներին հացահատիկների ցողունը սաստիկ բարձրանում է՝ ի վնաս հասկի, իսկ երաշտ ժամանակ այրվում: Սաստիկ քամի փչելու պատճառով ցուրտը շատ անգամ տանում է բերքը, կարկուտը խփում, մուկը կտրում, այնպես, որ գյուղացիների դրությունը այնքան էլ նախանձելի չէ: Այստեղի կանայք շատ լավ գորգեր ու կարպետներ են գործում:

Շորջալու կամ Նոր-Քեթի (63°30'25"–40°6'47"). Թրքաբնակ մի աննշան գյուղ է, ուր նույնպես կա մի ավեր եկեղեցի, որի խորանի մոտ մի խաչքարի վրա գրված է.

Սուրբ նշանս Շահում աղին է:

Մի ուրիշ խաչքարի վրա էլ՝

Սուրբ խաչս բարեխաւս Մաթոսին և կողակցին:

Դրսում մի խաչքարի վրա.

Այս է հանգիստ Փիրիմին:

Շորջալու գյուղի միջով անցնում է Գիլլի գետը: Բնակիչները թուրքեր են 86 տուն. 372 ար., 349 իգ., միասին՝ 721 հոգի: Պարապմունքը նույնն է. սրանց հողերն էլ հաշված են Հուսեյին-ղուլի-աղալուի հողերի հետ:

---

[275] *Տե՛ս ԴՀՎ IV, էջ 315:*

Սարի-Ցաղուր *(63°28'15"–40°10'2"). Տեղավորված է մի բլրի լանջին, առջևից, ձորի միջով հոսում է մի գետակ, որ սկիզբ է առնում Քեթի սարից և անցնելով Կայա-Բաշի գյուղի առջևով՝ թափվում Մաղրա գետի մեջ:*

Գյուղը ուշադրության արժանի ոչինչ չունի:

Բնակիչները չիա թուրքեր են. 84 տուն, 315 ար., 270 իգ., ընդամենը՝ 585 հոգի: Պարապմունքը նույն է:

Ջախըրլու կամ Ղըզըլ-բուլաղ *(63°21'30"–40°10'7"). Վերջին անունը՝ Ղըզըլ-բուլաղ (ոսկի աղբյուր) գյուղն ստացել է այն սառնորակ աղբյուրից, որ բխելով Բեգդեհեմ կոչված այժմ կիսավեր եկեղեցու մոտից՝ անցնում է նրա ավազանի տակով, այնպես որ մկրտությունը հենց այդ ջրի մեջ են կատարել: Աղբյուրը շատ հորդ է և մի քանի ջրաղացներ է դարձնում: Գյուղը բռնում է 14 դ. 1392 ք.ս. տարածություն, որից 12 դ. 720 ք.ս. գոնվում է շինությունների տակ: Բնակիչները չիա թուրքեր են. 192 տուն. 685 ար., 664 իգ և միասին՝ 1349 հոգի: Պարապմունքը երկրագործությունն ու անասնապահությունն է: Ունեն 1741 դ. 1684 ք.ս. վարելահող և 717 դ. 2136 ք.ս. արոտատեղի:*

Կայա-պաշի *(62°14'35"–40°35'10"). Հրաշալի դաշտավայրի վրա բարձրանում է մի ընդարձակ քարաժայռ, որի հարթ գագաթին զետեղված է Կայա-պաշի գյուղը: Դաշտի միջով, գյուղի առջևից ոլորապտույտ հոսում է Քեթի գետը, որ այս գյուղին ևս ջուր է մատակարարում, որովհետև գյուղում ոչ մի աղբյուր չկա:*

Գյուղի տները կիսագետնափոր են և միայն այժմ շինում են կանոնավոր սենյակներ: Բնակիչները չիա այրումներ են, Փամբակի Հալլավար գյուղից գաղթած: Ընդամենը 38 տուն են, 109 ար., 110 իգ., միասին՝ 219 հոգի: Պարապմունքը նույնն է:

Հուսեին-ղուլի-Աղալու *(63°29'10"–40°11'5"). Զետեղված է մի դաշտավայրի վրա, որի միջով հոսում են Քեթի և Ղարաղոյլի գետակները: Մի հայկական եկեղեցու հիմնապատեր և մի քանի խաչքարեր, որոնց մեծագույն մասը կտրված է, ցույց են տալիս, որ հնում հայոց գյուղ է եղել, թեպետև անունը հայտնի չէ:*

Այժմյան բնակիչները չիա թուրքեր են՝ 105 տուն, 408 ար., 370 իգ. և միասին՝ 778 հոգի: Պարապմունքը նույնն է:

Կոշա-բուլաղ *(63°27'20"–40°10"). Մի փոքրիկ, աննշան գյուղ է, որն իր անունն ստացել է երկու (ղոշա) աղբյուրի մոտ լինելու պատճառով: Բռնում է 4 դ. 1920 ք.ս. տարածություն: Բնակիչները չիա քրդեր են, 26 տուն, 130 ար., 132 իգ. և միասին՝ 262 հոգի: Պարապում են անասնապահությամբ և երկրագործությամբ: Ունեին 731 դ. 1632 ք.ս. 5 դ. 672 ք.ս. խոտատեղի և 68 դ. 880 ք.ս. արոտատեղի:*

Մեծ Ղարաղոյընլու (63°31'25"–40°9'24"). Թրքաբնակ մի աննշան գյուղ է, որի մեջ կա մի ավեր եկեղեցի, իսկ մոտի բլրի վրա մի գերեզմանատուն, ուր կան մի քանի խաչքարեր հետևյալ տապանագրերով.

Այս է հանգիստ Խուդանի որդի պարոն Իւանին. թվ. ՌՃԻԷ (1678)

Շնորհիւն Աստուծոյ ես տէր Մովսէս. բէյ և աղա գիւղիս. միաբան կանգնեցի սուրբ խաչս բարեխաւս տէր Սահակին, հաւրն իւրոյ Մեր Հաւրայրին, թոռն Իսրայէլին. յիշեցէք ի Քրիստոս:

Միևնույն խաչի արևմտյան երեսին.

Սուրբ խաչս բարեխաւս Սահակ կազմողին. թվին ՌՃՒԷ (1698):

Այժմյան բնակիչները թուրքեր են. 71 տուն, 248 ար., 258 իգ., միասին՝ 506 հոգի: Պարապմունքը նույնն է:

Ղարաղոյընլու Փոքր. (63°30'15"–40°9'10"). Մի փոքրիկ աննշան գյուղ է, 28 տուն թուրք բնակչով, 140 ար., 113 իգ. և միասին՝ 253 հոգի:

ՄԱԶՐԱՑԻ ԳԵՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵՈՒՆ

Մեծ-Մազրա (63°25'45"–40°13'10"). Տեղավորված է դեղեցիկ հարթության վրա, համանուն գետի ափին: Բռնում է 15 դ. 864 ք.մ. տարածություն: Այժմ համանուն համայնքի կենտրոնական գյուղն է. կան մի երկու կանոնավոր տուն, մնացածները չատ հասարակ են:

Հնում Մազրան եղել է մելիքանիստ, այստեղ 1601 թ. մելիք Շահնազարը հյուրընկալել է Շահ-Աբասին, և նրանից մելիքության պաշտոնի մեջ վերահաստատվել:

Նախկին շինություններից մնացել են մատուռի և մի եկեղեցու հիմնապատեր, հարյուրից ավելի խաչարձաններ՝ մասամբ ցրված, մասամբ էլ խմբված մի ընդարձակ գերեզմանատան մեջ:

Գյուղի արևելյան ծայրում, ուր երբեմն բարձրացել է մի փոքրիկ մատուռ, դեռևս կանգուն է մի հազարամյա սև խաչքար՝ 3 մ բարձրության և 1,25 մ լայնության, կլորով հետևյալ արձանագրությունը.

ՅԼ (881) թուականութեանս տանս Հայոց ես Գրիգոր Ամիր Ներսեհ և տանս Սիւնեաց և Աղուանից իշխան կանգնեցի սուրբ Նշանս աւգնականութիւն հաւատացելոց, որք երկրպագէք սուրբ խաչին Քրիստոսի զիս յաղաւթս յիշեցէք:[276]

*Այս խաչքարի մոտ կա մի ուրիշ, հասարակ խաչքար՝ վայր ընկած, որի մեջքին գրված է. **Ես Ամիրդատս կանգնեցի տապանս հաւր իմոյ Գօրգայ, մաւր իմոյ Մամշահի: Ով կարդէք յաղաւթս յիշեցէք:***

---

[276] *Տե՛ս ԴՀՎ IV, էջ 334:*

Եկեղեցին գտնվում է գյուղի հարավային կողմում, այժմ կիսավեր՝ իբր հարդանոց է ծառայում: Այնտեղ մնում են միայն հետևյալ երկու արձանագրությունները.

Արևմտյան պատի մեջ ամրացրած մի խաչքարի վրա.

Որդիք Փիրհամզին կանգնեցաք խաչերս բարեխաւս ծնողաց մերոց. Աստուածով. եղբարքս Սատիս, Եղիշայ քահանայս, Կոստանդ, Աղաբէկ. Թվ ՋՁԸ (1539):

Հարավային պատի մեջ ներքուստ ամրացրած մի խաչքարի վրա.

Կամաւն Աստուծոյ ես Միրզաճան կանգնեցի սուրբ խաչս բարեխաւս Տէրունի քահանային, որ էր սա տէր տանս Գեղամայ:

Այս եկեղեցու մոտ կան մի քանի խաչքարեր, որոնցից մեկի վրա կարդացվում է.

Կանգնեցաւ սուրբ խաչս բարեխոս մեծ իշխան Մէլիք-Բէգին. հարազատի հանգուցեալ Հախնազարին. յամի նեղութեան Շահթահմազին: Սա փոխեցաւ առ Քրիստոս արհի եպիսկոպոս Տէր-Մէլիքսէթին ձեռամբ:

Գերեզմանատունը տարածվում է գյուղի հյուսիս-արևմտյան կողմը: Տապանաքարերը մեծ մասամբ խաչքարեր են, կանգնեցրած քառանկյունի մեծ քարերի արևմտյան կողմը: Տապանագրերից ուշագրավ են այստեղի մելիքական տան անդամներինը.

Մի մեծ, գեղեցիկ խաչքարի վրա.

Ի թվին Հայոց ՌԻԷ (1578) կամաւն Աստուծոյ մեք հինգ եղբարքս, ես, պարոն Մէլիք-Շահնազարս, Մայիլ պկս, Տաթլու պկս, Միրզայ պկս, Մելքում պկս և մայր մեր Խանում Աղէս կանգնեցաք զխաչս բարեխոս հաւրն մերոյ Մէլիք Էլիկ[277] պկին:[278]

Սրա մոտ կա մի խաչքարի պատվանդան, իսկ խաչքարը չկա: Գեր. Սմբատյանի ասելով, սա եղել է մելիք Շահնազարինը, գյուղացիները վերցրել, ով գիտե ինչ բանի վրա իրը քար գործածել են. ես շատ հարց ու փորձ արի, շատ որոնեցի, բայց չգտա: Գեր. Սմբատյանի ասելով սա կրել է հետևյալ տապանագիրը.

Այս է հանգիստ պարոն Մէլիք Շահնազարին. որ էր սա տէր և իշխան երկրիս Գեղամայ. մեծաշուք և աստուածասէր իշխան էր սա. բարւոք ծերութեամբ փոխեցաւ առ Քրիստոս ի թագաւորութեան Շահապասին. Թվին ՌՃԷ (1608):

Սրա մոտ մի ուրիշ գերեզմանաքար կա՝ որ հայտնում է.

Այս է հանգիստ պարոն Եաւրի պէկին որդի պարոն Մէլիք Շահնազարին, որ անողորմ մահուամբ փոխեցաւ առ Քս. և եթող դառն սուգ:

---

[277] *Նկատելի է, որ անունը ջնջված է, և նրա տեղը էլիկ փորագրված:*

[278] *Տե՛ս ԴՀՎ. IV. էջ 339:*

Սրա մոտ.

Այս է հանգիստ մէլիք Քամալ պկին, որդի մէլ. Շահանգարին. թվ. ՌՀ (1621):

Սրան կից կա մի ուրիշ գերեզմանաքար՝ հետևյալ տապանագրով.

Այս է հանգիստ Գիլխիանին, կողակից Աւրի պկին, հարս մէլիք Շահնազարին ՌՀ թվին (1621 թ.):

Մեծ Մազրայի այժմյան բնակիչները չիա և սյունի թուրքեր են, մոտ հարյուր տարի առաջ Ղազախի և Ղարաբաղի գյուղերից գաղթած. ընդամենը՝ 205 տուն, 938 ար., 904 իգ. միասին՝ 1842 հոգի: Այստեղ է բնակվում այս գավառի չիանների ղազին, որի ջանքերով այժմ չինվում է մզկիթ: Ութ տարուց ի վեր էլ այստեղ բացված է պետական միդասյան դպրոց: Բնակիչները պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Գովված է այստեղի ցորենը: Ունեն 2365 դ. 536 ք.ս. վարելահող, 199 դ. 795 ք.ս. խոտատեղի և 827 դ. 1460 ք.ս. արոտատեղի:

Այստեղի կանայք ևս գործում են կարպետներ և գորգեր:

Փոքր Մազրա (63° 25' 8"–40° 15' 40"). Տեղավորված է մի հարթության վրա, որի միջով անցնում է Գյոգ-սու (կապույտ ջուր) գետակը: Բռնում է 29 դ. 400 ք. սաժեն տարածություն: Գյուղում կա մի կիսավեր, անսյուն եկեղեցի առանց մի որևէ արձանագրության: Այժմյան բնակիչները չիա թուրքեր են, Բորչալուից եկած, 147 տուն, 947 ար., 711 իգ., միասին՝ 1658 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Ունեն 1366 դ. 1372 ք.ս. վարելահող, 310 դ. 480 ք.ս. խոտատեղի և 1161 դ. 1368 ք.ս. արոտատեղի: 3 դ. 2140 ք. սաժեն էլ բռնում են ջրանցքները:

Սուլթան-Ալի-Ղըշլաղի կամ Ղըշլաղ (63°30'5"–40°16'23"). Մի աննշան, թրքաբնակ գյուղ է, որ բռնում է 4 դ. 1740 ք.ս. տարածություն: Ունի 77 տուն բնակիչ, 213 ար., 209 իգ. և միասին՝ 422 հոգի: Պարապմունքը նույնն է: Ունեն 1026 դ. 1400 ք. վարելահող և 779 դ. 1240 ք.ս. արոտատեղի: Զարգացած է, մանավանդ անասնապահությունը:

Շիշ-Կայա. Ղարա-Դաղ, Շիշ-Կայա, Մառալ-Դաղի և Ղոճա-Դաղ սարերը կիսաշրջան են կազմում և ընդգրկում Շիշ-Կայա գյուղը, որի միջով հոսում է մի գետակ, սկիզբ առնելով Շիշ-Կայա սարից: Գյուղում կա նաև մի հորդ աղբյուր: Գյուղն իր անունն ստացել է մոտակա սարից, իսկ սա այսպես է կոչվել, որովհետև գագաթին բարձրանում է մի սուր, շշի նմանությամբ ժայռ: Գյուղի մեջ կա մի մեծ բլուր, որի վրա նկատելի են շինության հետքեր, տեղացիները դրան «ղարաուլ-երի»՝ պահակատուն են կոչում: Գյուղի առջև, մոտ երեք կիլոմետր տարածությամբ, մինչև լճափը ձգվում է մի գեղեցիկ դաշտավայր, ուր կա մի կիսավեր փոքրիկ եկեղեցի: Սրա մեջ կա մի մեծ խաչքար եղծված տապանագրով, որից որոշեցի միայն Ջ (1251) թվակա-

նը: Մի մեծ եկեղեցու հիմնապատերը էլ մնացել են գյուղի մեջ, սրա չուրջը դեռևս կանգնած են մի քանի խաչքարեր՝ ԺԶ դարից:

Գյուղի գրեթե կենտրոնում, հրապարակի մեջտեղում բարձրանում է մի այուն, որի վրա գտնվում է երկու դաստակ, մեկը դեպի հարավ՝ մյուսը դեպի հյուսիս դարձրած, սրանց ներքև ծածանվում է մի դրոշակ: Սա Ալիի ձեռքի նշանակն է համարվում և այստեղ են խմբվում գյուղացիները միասին աղոթելու, որովհետև մզկիթ չունին: Բնակիչները չիա այրում են, հայտնի չէ թե երբ են գաղթել այստեղ. ընդամենը 140 տուն են, 520 ար., 521 իգ., միասին՝ 1041 հոգի: Պարապում են անասնապահությամբ և երկրագործությամբ:

Քյասաման (63°23'50"–40°17'25"). Ընկած է Գյոյ-սու լեռան ստորոտում, համանուն գետի ափին: Մի փոքրիկ, աննշան գյուղ է, որ բռնում է 11 դ. 1250 ք.ս. տարածություն: Բնակիչները չիա թուրքեր են Ղազախի համանուն գյուղից գաղթած. ընդամենը 85 տուն, 359 ար., 354 իգ. և միասին՝ 713 հոգի: Պարապմունքը նույնն է: Ունեն 680 դ. 1450 ք.ս. վարելահող և 471 դ. 1150 ք.ս. արոտատեղի:

Գյոյ-սու. Քրդաբնակ մի փոքրիկ գյուղ է Շիշ-Կայա լեռան ստորոտում, համանուն գետակի ափին, հիմնված է մոտավորապես 15 տարի առաջ: Բնակիչները գաղթել են Երևանի գավառի Ղարա-սու գյուղից. ընդամենը 23 տուն են, 121 ար., 112 իգ., միասին՝ 233 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ:

Օղրուջա (63°26'40"–40°17'10"). Տեղավորված է համանուն լեռան ստորոտում, որից և ստացել է իր անունը. իսկ վերջինս այդպես է կոչվում, որովհետև նրա վրա չատ «օղրի»՝ դողեր են ապաստանում: Գյուղի միջով անցնում է մի գետակ՝ Օղրուջա լեռից սկիզբ առնելով: Գյուղը բռնում է 7 դ. 1632 ք.ս. տարածություն: Գյուղում դեռևս մնում են հայկական մի եկեղեցու հիմնապատեր և մի քանի խաչարձաններ: Բնակիչները չիա թուրքեր են. 134 տուն, 522 ար., 511 իգ. և միասին՝ 1033 հոգի: Պարապմունքը նույնն է: Ունեն 1594 դ. 123 ք.ս. վարելահող և 221 դ. 211 ք.ս. արոտատեղի:

Ինակ (63°31'–40°14'25"). Տեղավորված է համանուն լեռան լանջին և բռնում է 6 դ. 256 ք.ս. տարածություն: Գյուղն այսպես է կոչվել, որովհետև այդ լեռան վրա ինակ մառալ, էգ (կով) եղջերու չատ է եղել: Գյուղի միջով անցնում է մի փոքրիկ վտակ: Գյուղում կա մի ավեր, հայկական եկեղեցի: Բնակիչները չիա թուրքեր են, 84 տուն, 261 ար., 259 իգ., միասին՝ 520 հոգի: Պարապմունքը նույնն է: Ունեն 1249 դ. 1472 ք.ս. վարելահող և 1369 դ. 1510 ք.ս. արոտատեղի:

Զոդ (63°31'40"–40°12'5"). Հնում կոչվում էր Սոտ կամ Սոթք, հավանորեն «սակս հանապազորդեան բքոց և դառնաշունչ օդոցն», ըստ Օրբելյանի: Սա այս վիճակի գլխավոր և անվանատու ավանն է եղել և մինչև ան-

գամ ԺԶ դարի (1578 թ.) մի հիշատակարանում «մայրաքաղաք» կոչվել: Այստեղ բնակող Սոդացի տոհմը ազգային բանակին միայն 50 մարդ է տվել, հետևապես և փոքր տոհմ է եղել: Վիճակը այս տոհմի անվամբ Սոդնից դավառ է կոչվել, ինչպես նաև «Արտից գավառ», գուցե բազմաթիվ արտեր ունենալու պատճառով, որովհետև մի ընդարձակ, գեղեցիկ դաշտավայր է ներկայացնում:

Զոդ գյուղը, 20 դ. 1179 ք.ս. տարածությամբ, փռված է մի դաշտավայրի վրա և երեք կողմից շրջապատված է լեռներով, որոնցից չարունակ փչում է քամի: Գյուղի միջով հոսում է մի գետակ, որ սկիզբ է առնում Ռմբատաբ լեռից: Գյուղի մեջ կա մի բլուր, հարթ գագաթով, որի վրա այժմ կանգնած է միայն մի խաչքար, հետևյալ տապանագրով.

Ես Ազիբս կանգնեցի զխաչս յիշատակ ինձ և ամուսնուս Աղաւնիս. ԹՎին ՉԻԳ (1274):

Գյուղի կենտրոնում գտնվում է մի հայկական կիսավեր եկեղեցի և սրանից փոքր-ինչ արևմուտք՝ մի ընդարձակ գերեզմանատուն:

Եկեղեցին սրբատաշ քարով շինված օրորոցաձև մի շինք է, չորս սյուներով և ռոմանական կամարներով: Ունի երկու խորան: Շինված է 1276 թ., վկայում է հարավային պատի վրայի արձանագիրը.

Ի թագաւորութեան Ապաղին, կաթողիկոսութեան Տէր Ստեփաննոսի, և պարոնութեան Հասանայ, աւգնականութեամբ ամուսնոյն իմոյ Մամքանայ, ես անարժան Առաքելս շինեցի զեկեղեցիս յիշատակ ինձ և ամուսնոյն իմոյ և զաւակաց մերոց և ծնողաց մերոց:[279]

Եկեղեցու մեջ, հյուսիսային պատում, ավազանի մոտ կա մի կամարակապ, բոլորաձև ներսանկվածք, ուր դրված մի քառանկյունի գերեզմանի վրա կարդացվում է.

Այս է հանգիստ Ղուկաս վրդպետին. Գանձասարու առաջնորդ ԹՎին ՌՂԶ. (1647):

Այս գերեզմանի մոտ, պատին կից կանգնեցրած են երեք խաչքարեր, որոնց վրա գրված է.

Ա.-ի վրա. **Աստուած ողորմի Տէր Սահակին:**

Բ.-ի վրա. **Աստուած ողորմի Ամիր Սուլթանին:**

Գ.-ի վրա. **Աստուած ողորմի Ռատակէսին:**

Եկեղեցու հարավային պատին կից դրված են մի քանի հին խաչքարեր՝ որոնցից երկուսի վրա կան հետևյալ տապանագրերը.

---

[279] Տե՛ս ԴՀՎ IV, էջ 328-329:

Աստուած ողորմի Թէոդորոսին: Կամաւն Աստուծոյ մեք Տէրունս եղբարքս իմ Վարդանէսն վաստակեցաք խաչերս բարեխաւս ծնողաց մերոց Թվ. ՋՂԶ (1547):[280]

Աստուած ողորմի Շահզադին Թվ. ՋՂԹ (1550):

Գերեզմանատունը եղած տապանաքարերից ուշագրավ են երեք կոթողները՝ իրենց զեղեցիկ չենքով և երկու խաչքար՝ իրենց մեծութեամբ:

Այս երեք կոթողներից երկուսը այժմ տեղափոխված են Կովկասյան Թանգարան, իսկ մեկը այդ տեղափոխման միջոցին կոտրվել է:

Սրանցից առաջին խաչքարի վրա գրված է.

Կամաւն Աստծոյ ես ծակոբս կնկցի զսրբ խաչս բրխս ծնողացն իմ Իպաչին Անհային. Թվ. ՌՁԷ (1638).

Բ. խաչքարի վրա.

Շնորհօքն Աստուծոյ ես այտին Պալասանս Դաւլաթ բէկս ածպաւս ծառայք Աստուծոյ կնկցուցաք սրբ խաչս բարեխաւս ծնողաց մերց Քամալին եւ Փարին, Սոլտանին, Մանպուբին. Թվին ՌՃՒ (1653).

Գ. խաչքարի վրա.

Ցանուն Աստուծոյ ես Ուլուխանս, ես Սալքուտս, ես Գասպարս որդի տր Մելիքսէթին կանկնեցուցաք սրբ խաչս բարեխս տր Մելիքսէթին, կողակցին Իլբումին Պապին Ղասումին Թվ. ՌՃՒ (1653).

Դ. խաչքարի վրա.

Ես մեղապարտս չարագործ Զոհրապս կանգնեցի զխաչերս. ով կարդէք մեզ ողորմած լերուք. եւ հարսներուն իւրեան Եփրոյսիմին և Խասլարինդին:

Զորս արշին բարձրութեյան և երկու արշին լայնութեյան մի խաչքարի վրա.

Կամաւն ամենակալին Աստուծոյ ես Միրաննէս (?) կանգնեցի զխաչս իշատակ հաւր իմոյ Աննաւորին. իշցէք ի Քրստ. Թվին ՌՃԼԳ (1684).

Մի վայր ընկած խաչքարի վրա.

Հայոց Թուին ՌԺԷ (1568). ՓաթշահուԹեան ՇահԹահմազին կանգնեցաք խաչերս փրկուԹեան Հոգւոյն Ուլուբէկին իւր աւրհնեալ ննջեցելոցն ձեռամբ պարոն տր Գրիգորէս եպիսկոպոսին եղբաւր որդի Մէլիք Աղայ բէկին:

Մի ուրիշ վայր ընկած խաչքարի թիկունքին.

Շնորհօքն Աստուծոյ ես Պետրոս վարդապետ, Գրիգոր եպիսկոպոս, Մելիք Միրզախանս որդիք պարոն Մէլիք բէկին, Թոռն Մէլիք Պալասանին կանգնեցաք սուրբ խաչս փրկուԹեան Հոգւոյ Ստեփաննոս Արհի եպիսկոպոսին Հօր եղբօր հաւուն մերոյ, ով ընԹեռնոյք յաղաւԹս յիշեցէք. Թվ. ՌՃՄ (1701):

---

[280] *Տե՛ս ԴՀՎ IV, էջ 329:*

Գյուղի արևելյան կողմը ձգվող ձորակում ևս նկատելի է մի ընդարձակ դերեզմանատուն, միայն այժմ մնում են մի քանի դերեզմանաքարեր՝ արտերի մեջ ընկած:

Ջոդի ամմյան բնակիչները չիա և այուննի թուրքեր են, ընդամենը 199 տուն, 863 ար., 854 իգ., միասին՝ 1717 հոգի:

Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Ունեն 2049 դ. 388 ք.ս. վարելահող, 1370 դ. 1627 ք.ս. արոտատեղի:

Ջարզիբիր (63°33'45"–40°11"). Տեղավորված է Մեծ Գյունեյ լեռան լանջին՝ Գյուլլի գետի վտակներից մեկի ափին, որի վրա մի լավ կամուրջ է ձգված նույն գյուղացի մի թուրքի ծախսով, սակայն այժմ քանդված է: Գյուղը բռնում է 9 դ. 1200 ք.ս. տարածություն, որից 8 դ. 1200 ք.ս. պտնվում է շինությունների տակ: Գյուղում եղել է մի հայկական եկեղեցի, որ այժմ քանդել են և տեղը կալ դարձրել. սրա մոտ կան 3 խաչքար, որոնցից մեկի վրա գրված է.

Կանգնեցաւ սուրբ խաչս Աւանէսին. թվին ՉԿԳ (1514):

Ուրիշ ուշադրավ բան չկա գյուղում: Այժմյան բնակիչները չիա թուրքեր են Նոր-Բայազետի Ղուլալի գյուղից գաղթած. 96 տուն. 487 ար., 476 իգ. միասին՝ 963 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Ունեն 596 դ. 1492 ք.ս. վարելահող, 300 դ. 1088 ք.ս. արոտատեղի: Եվ որովհետև ցրտի պատճառով այստեղի հացահատիկները չատ չեն բարձրանում, և չատ տեղեր էլ քարքարոտ լինելով առավելապես ոչ թե գերանդիով են հնձում՝ այլ մանգաղով քաղում, այս պատճառով էլ տղամարդիկ չեն կարողանում հասցնել և կանանց էլ են քաղել տալիս: Մեծ մասամբ գարի են ցանում: Բնակիչներից չատերը գնում են զանազան կողմեր մշակութիյուն անելու:

Աղ-քիլիսա (63°32'5"–40°10'51"). Տեղավորված է մի դաշտի մեջ, ունի միայն մեկ աղբյուր. գարնանը և աշնանը մի բարակ վտակ հոսում է Քարվանսարա կոչված բլրից, մի ջրանցք էլ Ջարզիբիր գյուղից ջուր էր բերում, սակայն այժմ գարզիբիրցիները թույլ չեն տալիս, այնպես որ գյուղացիները ջրի մեծ նեղություն են կրում:

Գյուղն իր անունն ստացել է մի սպիտակավուն հայկական հին եկեղեցուց, որ գտնվում է նրա արևելյան կողմում: Եկեղեցին սակաչեն է, անսյուն, երեք արաբական կամարներով, թաղակապ: Խորաններ չունի: Արևմտյան պատը և այս կողմից մինչև առաջին կամարն ամբողջովին քանդված են: Եկեղեցու հարավային դռան կամարակալ քարի վրա արձանագրված է.

Ի թագաւորութեան Աբազ շահին՝ ի պարոնութեան Ամիրխան սուլթանին ի կաթուղիկոսութեան յովնից տէր Յոհաննիսի. կամաւն Աստուծոյ եսն

Յոհաննէս նուաստ վրդպտս չինեցի գեկեղեցիս ի փրկութիւն հգյ իմոյ և կրկնակի ծնողաց իմոց որք երկրպագէք յղթս յիշեցէք առ Քրիստոս:[281]

Դռնից փոքր-ինչ արևելք, բարձրում, եղել են երկք քար, արձանագրութեամբ ծածկված, որ այժմ պոկվել, ընկել են վայր, մի քիչ ժամանակ ևս, և սրանք էլ կգործածվին դյուղացիների շինութիւնների մեջ: Արձանագրությունը թվական չունի և հետևյալն է.

Կամաւք և ողորմութեամբ Հաւր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, արդ ես Յոհաննէս վարդապետ որդի Մելքոնին՝ որդւոյ Միրզաջանին որդւոյ Ջանշահի, յորդւոյ Պռոշոյ՝ յորդւոյ Հասանայ որդւոյ մեծ Շահնշահի՝ որդւոյ Սարգսի, թոռնեայն Դոփայ, քոյը մեծին Իւանէի և սպասալար Զաքարէի. հանդերձ հարազատ եղբաւր որդւովք իմովք Աթանաս եպիսկոպոսիւ և Գրիգոր եպիսկոպոսիւ յոյժ ջանիւ և մեծ յուսով և բազում փափագանաւք շինեցաք զսուրբ Աստուածածինս բարեխաւս և փրկութիւն հոգւոց մերոց և ծնողաց իմոց Մելքոնին և Փիանդին և բազմերախտ ուսուցանողին իմոյ Յոհաննէս րաբունապետին, որոց ողորմի ասացէք. որք հանդիպէք աղաչեմ. Աստուած ողորմի ամենայն հաւատացելոց և մեզ և ծնողաց մերոց. Ամէն:

Եկեղեցու կտուրին մի մեծ գերեզմանաքար է ձգված, վրան մի մարդու պատկեր քանդակված. այս քարի վրա մի ծակ է արած և վրան մի մեծ, 2 մետրանոց սև, քառանկյունի խաչքար ամրացրած, գեղեցիկ խաչերով զարդարված և շուրջը գրված.

Թվ. ՌՂԲ (1643). Սրբ. Նշանս բարեխաւս Յաթանաս եպսին և Գրիգոր եպսին:

Եկեղեցու արևելյան կողմը, փոքր ինչ հեռու կա մի ընդարձակ գերեզմանատուն, ուր կանգնած խաչքարերի վրա կարդացվում են.

2,5 մ բարձրության և 1 մ լայնության մի խաչքարի վրա.

Կամաւն Աստուծոյ. ես Յուսէն կանգնեցի սուրբ Նշանս ի փրկութիւն հոգւոյ եղբաւր իմ Հասիկա և այլոցն...ծնողաց իմոց. որք երկիրպագէք խաչիս ի սուրբ յաղաւթս յիշեցէք. ի թվ. ՉԽԴ (1295):

Մի օրորոցաձև տապանաքարի մի երեսին քանդակված է մի ձիավոր, մի քիչ հեռու մի եղջերու՝ կանգնած մի վիշապի վրա, ինչպես նաև մի մարդ՝ կանգնած մի ուրիշ վիշապի վրա: Երկրորդ երեսի վրա մի մարդ՝ թառ ածելիս, կողքերին հացեր և գավ: Շուրջը գրված է.

Այս է հանգիստ Քասպարին որդի պարոն Ամիրջէճանին, թոռն մեծին Գրճհանչին. թվ. ՋՉԳ (1534) էր փխց Ք. որք հանդիպիք յիշեցէք ի Քս:

Այս արձան ներկեալ յարեամբ փրկչական վասն Ռըստակէս քհնին հոգւոյն փրկութեան.

Յանարժան Բաղդասար Մէլիկպէկ կազմող:

---

[281] *Տե՛ս ԴՀՎ IV. էջ 369:*

Այս խաչքարի մոտի վրա.

Սուրբ խաչս բարեխաւս Ղզըլին. կանգնեցաւ Ռստակէս քհնին եւ դստերց Խոբնին եւ Խնաորմին (՞) թվին ՌՃԷ ին (1658)

Մի խաչքարի վրա.

Թվին ՌՃԷ (1658) էր. ի կամակցութեամբ Աստուծոյ և հոգեբարձուքին Գրիգորի. քաջ բարեունոյ հօր եղբօր մերոյ ես նուաստ Ներսէս էրեցս և եղբայրս իմ Պաղի որդիք Արիստակէս քհնին որդոյ Թումա քհնյին որդոյ պրն Մելքոնին թոռին մեծին Ջահնչին յուսով մեծաւ կանգնեցաք զսրբ խաչս ի փրկութիւն հոգոյ հօրն մերոյ:[282]

Գյուղի հարավային կողմում էս կա մի գերեզմանատուն, որտեղի խաչքարերը և տապանաքարերն արդեն գյուղացիները տարել չինուբյուննների վրա գործածել են:

Գյուղի այժմյան բնակիչները չիա թուրքեր են, մի մասը Նոր-Բայազետի Բաշքյանտ, մյուսը Գոմաճորից 1830 թուին գաղթած: Ընդամենը 69 տուն են, 89 ար., 84 իգ. և միասին՝ 173 հոգի:

ՋԻԼԻ ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՑՈՒՆ

Ջիլ (62°7'–40°27'17"). Տեղավորված է Շահ-դաղ լեռան և սրա ճյուղ Տանա և Հաճի-Մալիք կոչված սարերով կազմված հովտում, լճից մոտ երեք կիլոմետր հեռու: Գյուղի միջով հոսում է մի գետակ՝ Աղ-սու անունով, որ բխում է Շահ-դաղ լեռան ստորոտից: Գյուղում կա հայկական չորս ավեր եկեղեցի, որոնցից մեկը բավական մեծ է, և միայն պատերի կեսն է մնացել. ունի մի, աջակողմյան խորան. սեղանի երկու կողմը կան մի-մի մեծ, սև խաչքար, որոնցից մեկի վրա դեռևս կարդացվում է.

Կանգնեցաւ սուրբ խաչս յիշատակ պարոն Շահէ-որդի:

Այս եկեղեցին այժմ ծառայում է իբր ոչխարանոց: Մյուս երկու եկեղեցին հիմնովին ավերել են, իսկ երրորդի քարերի կեսն են տարել՝ որովհետև իբր խոտատեղի կարողանում են գործածել: Տները գետնափոր, շատ ողորմելի են, բնակիչները չիա թուրքեր են Ղազախի Ինճա գյուղից գաղթած նախ Նորադուզ և ապա՝ հայոց 1830 թ. գաղթականության ժամանակ՝ այստեղ:

Պարապմունքը նույն է. այստեղ ևս գործում են գորգ ու կարպետ:

Ջիլից փոքր-ինչ հեռու, Հաճի Մալիք լեռան լանջին կա մի ընդարձակ գերեզմանատուն, որի գրեթե բոլոր տապանաքարերը հասարակ, մեծ, ժայռ քարեր են, առանց տապանագիր և նույնիսկ առանց խաչի:

Արտանիչ (62°1'30"–40°31'4"). Շահ-դաղի ճյուղերից երկուսը դեպի ծովն ուղղվելով, եռանկյունաձև կտրում են միմյանց՝ մի դեղեցիկ հովիտ կազմե-

---

[282] Տե՛ս ԴՀՎ IV, էջ 370-371:

լով, որի առջև, լճափին, ձգվում է Ադա-Թափա Թհրակղղին: Լճափը, որ մինչև այստեղ չափազանց նեղ է, փոքր-ինչ լայնանում է և գեղեցիկ գյուղատեղի կազմում:

Գյուղի միջով հոսում է Աղ-սու գետակը՝ Շահ-դաղից սկիզբ առնելով: Գյուղի մեջ, ինչպես և նրա արևելյան կողմում ձգվող բլուրներից մեկի վրա, կա մի եկեղեցի և մի քանի տապանաքարեր, առանց գրության:

Արտանիշի բնակիչները Ղազախի և Ղարաբաղի զանազան գյուղերից են, նախ Նորադուզ և Ծակքար գաղթած և ապա՝ հայերի 1830 թ. գաղթած միջոցին՝ այստեղ վերաբնակված: Ընդամենը 156 տուն են, 528 ար., 472 իգ., միասին՝ 1000 հոգի: Պարապմունքը նույնն է: Սրանք ևս ձկնորսությամբ չեն պարապում: Մալականներից սովորել են ձիեր լծել կամին: Դաշտային աշխատանքներին՝ հնձելուն, փոցխելուն կանայք էլ են մասնակցում:

Կարավանսարայ. Սատանախաչ և Ղուշչի-դարասի գյուղերի միջև 1488 դ. 1800 ք.ս. տեղ պատկանում է զոդեցի մի Թուրքի (Սամանդ-աղա Քհասամանսկուն), որ իր համար բնակարան և անասունների համար գոմեր է կառուցել և պարապում է անասնապահությամբ: Ահա այս տեղը կոչվում է Կարավանսարայ և համարվում է լավ ձմեռանոց, որովհետև ձմեռն այստեղի լեռների արևելահայաց լանջերը կապալով են տրվում շրջակա գյուղացիներին՝ հոտերն արածացնելու: Ղուշչի-դարասու բնակիչները չատ անգամ դանգատվել են, որ վերոհիշյալ կալվածատերը խլել է իրենց արոտատեղից և վարելահողից, սակայն միշտ էլ սրանց դանգատը անհետևանք է մնացել:

Ղուշչի-դարասի (62°11'40"–40°23'5"). Տեղավորված է կըսըր կոչված լերկ դագաթների ստորոտում, Սևանա լճի անմիջապես ափին: Գյուղի միջով հոսում է մի գետակ, որ բխում է Կըսըր լեռներից: Տները չափազանց ողորմելի են, բոլորն էլ գետնափոր, գրեթե որջեր: Կան մի քանի պարտեզ, ուր նոր-նոր սկսել են կարտոֆիլ ցանել, մի քանի էլ ուռի ծառեր են տնկել: Բնակիչները շիա այրումներ են, 1850 թ. Աղեքսանդրապոլի գավառի Փամբակի շրջանի Վարդանլու գյուղից գաղթած: Ընդամենը 66 տուն են, 188 ար., 164 իգ., միասին՝ 352 հոգի: Պարապմունքը նույնն է:

Ղուշչի-Դարասուց փոքր-ինչ բարձր, Խաթաբալա կոչված մի բլրակի վրա, կա հայկական մի ընդարձակ գերեզմանատուն, ուր ձգված են մեծ-մեծ հասարակ գերեզմանաքարեր, մեծ մասը առանց տապանագրի: Մի քառանկյունի տապանաքարի վրա գրված է.

Այս է հանգիստ Ոհաննիսին. Թվին ՌՃԱ. ին (1652):

Գերեզմանատնից փոքր-ինչ հեռու, ձորակի մեջ մնում են հայկական մի մեծ եկեղեցու հիմնապատեր:

Բաբաջան-դարասի (63°8'25"–40°24'47"). Տեղավորված է Շահ-դաղ լեռնաշղթայի ճյուղերից կազմված մի ձորակում, որի միջից հոսում է մի գետակ, սկիզբ առնելով Շահ-դաղ լեռնաշղթայից:

Գյուղը զարդարված է մի քանի ուռենիներով: Գյուղի մեջ կան մի հայկական ավեր եկեղեցի և մի քանի խաչքար, առանց գրության: Տները գետնափոր, խղճալի շինություններ են: Բնակիչները չիա այրումներ են, կես դար առաջ Շիշ-Կայա գյուղից գաղթած՝ Բաբաջանի առաջնորդությամբ, որի անունով էլ գյուղն է կոչվել: Ընդամենը 51 տուն են. 131 ար., 128 իգ., միասին՝ 259 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ:

Բնակիչների տնտեսական դրությունը չատ վատ է, որովհետև վարելահողն ընդհանրապես քարքարոտ է, և բացի դրանից՝ մեծ մասամբ լեռների լանջերին լինելով՝ անձրևային տարիներում ցանքսը սահում՝ թափվում է լիճը, իսկ երաշտ ժամանակ հասկն այրվում է, որովհետև չատ չոգ է լինում: Բացի ցորենից և գարուց այս տարի միայն սկսել են նաև կարտոֆիլ ցանել, այն էլ մոտակա մալական ռուսների ազդեցությամբ: Անասնապահությունն էլ չատ չի զարգացած, որովհետև չատ աղքատ են. ամենահարուստը միայն 26 ոչխար ունի: Ձկնորսությամբ չեն պարապում, որովհետև ոչ նրանց նյութական դրությունը և ոչ ունեցած չնորհքը այդ թույլ է տալիս:

Ամբողջ երկարատև ձմեռն անգործ մնում են տներում և միայն չատ քչերը գնում են Գանձակի գավառի Գետաբեկի պղնձի հանքում մշակություն անելու: Կանայք գործում են գոլգեր և կարպետներ:

***Սատանախաչ կամ Սեդանախաչ և կամ Հաճի Գարիբ** (63°16'25"–40°20'25"). Քարքի բաշ, Կոճա-դաղ և Գյունեյ սարերը մի փոքրիկ, բայց հարթ հովիտ են կազմում, որի մեջ տեղավորված է Սատանախաչ, բայց ավելի ճիշտ՝ Սեդանախաչ գյուղը, որ այդպես է կոչվում, որովհետև այստեղ եղել է սէդ (քրդերեն՝ երեք խաչ): Կոչվում է նաև Հաճի-Գարիբ այն մարդու անունով, որ 1868 թ. այժմյան բնակիչներին բերել է այստեղ Գանձի Ալլահվերդի գյուղից: Գեղածիծաղ լիճը տարածվելով գյուղի առաջ՝ սքանչելի տեսարան է ընծայում, ինքն էլ զարդարված է ուռենիներով և ունի մի կարկաչուն վտակ, որ իջնում է Մառալ-բուլաղից:*

Գյուղի արևմտյան կողմում եղել է մի եկեղեցի, որ այժմ քանդել են և տեղը պարտեզ դարձրել, քարերն էլ պատնեշի համար գործածել. մոտի երեք խաչքարերը, որոնք առանց գրության են, ձգված են մոտակա գյուղացիների տների առջև՝ ոչխարներին աղ տալու համար գործածելու նպատակով:

Եվ որովհետև այս կողմերում ավազակությունը սաստիկ տարածված է, այս պատճառով էլ 15 տարուց ի վեր այստեղ պահակատուն կա: Բնակիչները չիա թուրքեր են. 52 տուն, 181 ար., 162 իգ. և միասին՝ 343 հոգի: Պարապմունքը նույնն է:

Նադեժդինո կամ Շորժա (62°56'14"–40°30'50"). Գետեղված է լճի անմիջապես ափին, երեք կողմից շրջապատված բլուրներով, որոնք պաշտպանում են նրան սաստիկ հողմերից: Գյուղի առջև բացվում է լճի չափազանց գեղեցիկ տեսարանը. արևելյան կողմում ձգվում է Ադա-Թափա թերակղզին, որի գագաթից տեսարանը ավելի ևս սքանչելի է: Գյուղի արևելյան կողմը, բլրի լանջին կա հայկական մի սագաչեն, փոքրիկ եկեղեցի, շուրջը գերեզմանատուն, ուր մի տապանաքարի վրա կարդացվում է.

Աստուած ողորմի Աւետիս աղին:

Փոքր-ինչ բարձր, նույն բլրի գագաթին ևս կա մի ուրիշ, փոքրիկ սագաչեն եկեղեցի, պարսպապատ: Բլրի շուրջն էլ նկատելի են պարսպի հետքեր: Այս բլրից փոքր-ինչ արևելք ձգվում է Ադա-Թափա թերակղզին, որի գագաթին դեռևս մնում են մի հին ամրոցի պարիսպները: Մի նեղ չավիղ՝ ժայռապատ գագաթից իջնում է արևելյան սաստիկ նեղ ափը, ուր կանգնած է մի փոքրիկ, հասարակ եկեղեցի, դեպի հարավ՝ հարթ տեղում՝ մի քանի տների ավերակներ, որ հայտնի են Ալթի-սարայ անունով:

Նադեժնինո գյուղը ունի կանոնավոր, լայն փողոցներ և քարե տներ՝ հարթ, հողածածկ կտուրներով: Բնակիչները ռուս աղանդավորներ են՝ մալական, պրիգուն և սուբբոտնիկ: Գաղթել են այստեղ 1851 թ. Սամարայի նահանգի համանուն գավառի Կաբիլնա և այլ գյուղերից. ընդամենը 59 տուն են. 211 ար., 218 իգ., միասին՝ 429 հոգի: Պարապում են ինչպես երկրագործությամբ և անասնապահությամբ, այնպես և ձկնորսությամբ:

***Աղբուլաղ** (61°56'40"–40°31'55"). Թրքաբնակ մի մեծ գյուղ է, զուրկ որևէ ուշագրավ բանից: Բնակիչները 148 տուն են, 481 ար., 459 իգ. միասին՝ 940 հոգի: Պարապմունքը նույնն է: Հողերը չափված և ցուցակագրված են Ջիլի հողերի հետ:*

***Թոխլուլա, հնում՝ Դրախտիկ** (62°54'57"–40°33'55"). Տեղավորված լինելով Սևանա լճի հյուսիսային ափին, համանուն գետակի շուրջը՝ շատ գեղեցիկ տեսք ունի: Բունում է 9 դ. 1800 ք.ս. տարածություն: Գյուղում կան մի հին եկեղեցու հիմնապատեր և մի քանի խաչարձաններ՝ առանց դրության: Բնակիչները չիա թուրքեր են, 155 տուն, 609 ար., 561 իգ., միասին՝ 1170 հոգի: Պարապմունքը նույնն է. ունեն 400 դ. 1800 ք.ս. վարելահող, 355 դ. 1200 ք.ս. խոտատեղի, 1647 դ. 720 ք.ս. արոտատեղի:*

Ա. ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ՀԱՑՈՑ ՆԵՐՔԻՆ ԱԽՏԱՑԻ ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՑՈՒՆ

ՏԵՂԱԳՐՈՒԹՑՈՒՆ

Ներքին Ախտա հայոց (62°25'55"–40°29'25") և ռուսաց (62°25'25"–40°92'45"). Ներքին Ախտան բաղկացած է երկու մասից, հայոց և ռուսաց: Հայկականը գտնվում է վերին, արևելյան մասում, հիմնված է 1829 թ. և բռնում է 17 դ. 1970 ք.ա. տարածություն, իսկ ռուսականը՝ ներքևում, հիմնված է 1860 թ. և բռնում է 8 դ. 930 ք.ա. տեղ: Թե վողոցների կանոնավորությամբ և թե տների դեղեցկությամբ ռուսականը բարձր է հայկականից, թեպետ և վերջինում էլ կան ռուսականի նման դեղեցիկ, երկհարկանի տներ: Հայկական մասի զարդը ս. Խաչ եկեղեցին է, որ որպես գյուղական մի աղոթատուն, բավական դեղեցիկ է՝ ունենալով սրբատաշ քարով շինված մի զանգակատուն: Կան նաև երկու հին մատուռներ ս. Աստվածածին և ս. Խաչ անուններով: Ռուսական մասը բաղկացած է երեք կանոնավոր և երկար վողոցներից, բավական դեղեցիկ, երկհարկանի տներով, ուր առավելապես բնակվում են այս ոստիկանական շրջանի պաշտոնյաները, ինչպես՝ ոստիկանը, հաշտարար դատավորը և միջնորդը, բուժարանի բժիշկը, անտառապետը, փոստային դրասենյակի վերակացուն և այլն: Երկու մասում կա 19 խանութ, որոնք բացառապես հայերին են պատկանում:

Հայերը գաղթել են 1829 թ. Մակուի խանության Մառան և Ղըրխբուլաղ գյուղերից, հետո մի քանի տուն էլ եկել են Վանի Հայկաձորի գյուղերից: Ռուսները, որ մալական աղանդավորներ են, եկած են 1866 թ. Տամբովի նահանգից: Թե հայերը և թե ռուսները ունեն առանձին-առանձին տարրական դպրոց, հայկականը եկեղեցական է, երկսեռ և միդասյան, այժմ շինվում է դպրոցական դեղեցիկ շենք:

Հայերը և մալականները միմյանց հետ շատ չեն չփվում, միմյանց հարսանիքի կամ ուրախության չեն մասնակցում, ուստի և այնքան մեծ ազդեցություն չունեն միմյանց վրա: Հայերից քչերը սովորել են ռուսներից ռուսերեն, իսկ նրանցից միայն մի քանիսը հասկանում են հայերեն: Հայերը նրանցից սովորել են փուրգոններ պահել, նրանց ձևի սայլեր գործածել, նրանց նման ձի լծել կամին և գութանին, հնձի մեքենաներ առնել: Մալականներն էլ հայերից սովորել են պանիր, յուղ պատրաստել, մի քանի կանաչեղենից բռնվածքներ դնել: Պետք է ասել նաև, որ մալականները հայերից պակաս ողջախոհ լինելով, վատ ազդեցություն են ունեցել վերջիններիս վրա:

Հայերի թիվն է՝ 269 տուն, 1143 ար., 968 իգ., միասին՝ 2111 հոգի, ռուսներինը՝ 74 տուն, 341 ար. 341 իգ., միասին՝ 682 հոգի: Թե՛ հայերը և թե՛ ռուսները պարապում են գլխավորապես երկրագործությամբ, անասնապա-

հությամբ և մասամբ բեռնակրությամբ ու առևտրով: Հայերը ունեն 1676 դ. 2040 ք.ս. վարելահող. 7 դ. 1630 ք.ս. խոտաառեղի, 1379 դ. 2130 ք.ս. արոտաառեղի, իսկ ռուսները՝ 661 դ. 2070 ք.ս. վարելահող, 360 դ. 1100 ք.ս. խոտաառեղի, 475 դ. 360 ք.ս. արոտաառեղի:

Ռուսները գյուղից փոքր-ինչ հեռու ունեն եվրոպական ձևով չինված ջրաղացներ, որոնցից մի քանիսը այժմ հայերի ձեռքն են անցել:

Ներքին Ախտայից երեք կիլոմետր հեռու, դեպի հարավ գտնվում է **Ջամանդյուլ** անունով մի գյուղատեղի:

Վերին Ախտա (62°24'–40°30'35"). Տեղավորված է Ջամանդյուլ և Պետրոսի դար բլուրների ստորոտում, մի փոքրիկ հովտի մեջ և բռնում է 11 դ. 1930 ք.ս. տարածություն, որից 9 դ. 580 ք.ս. շինությունների տակ է: Գյուղում կա սրբատաշ քարով շինված մի եկեղեցի ս. Աստվածածին անունով, և երեք մատուռներ, որոնցից մեկը շինված է սուրբ համարվող մի աղբյուրի վրա:

Գյուղի շրջակայքում կան երեք հորդ աղբյուրներ, երկու եկեղեցու հիմնապատեր և բավականաչափ խաչքարեր ու տների հիմքեր: Երևում է, որ հնում այստեղ բավական մեծ բնակություն է եղել. ավանդությունն էլ ավելացնում է, որ Պուռ իշխանին է պատկանել: Բնակիչները հայեր են, 1829 թ. Պարսկաստանի Ալբուլաղ գյուղից գաղթած. ընդամենը 221 տուն են. 965 ար., 861 իգ., միասին՝ 1826 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ, մասնավորապես՝ խաշնարածությամբ: Ունեն 1426 դ. 240 ք.ս. վարելահող, 1399 դ. 1350 ք.ս. արոտաառեղի:

Կոստանտինովկա կամ **Դարաչիչակ**, հնում՝ **Ծաղկաձոր** (62°23'23"–40°32'9"). Ընկած է մի թեք տարածության վրա, որի երեք կողմը պատած է անտառապատ լեռներով, իսկ արևելյանը բաց է և իր առջև ունի մի գեղեցիկ տեսարան՝ Ռնդամալի հարթությունը՝ ոլորապտույտ Զանգուով: Պատմական Ծաղկոցաձոր կամ Դարաչիչակ անունն արդեն ցույց է տալիս, որ այս վայրը փթթում է բյուրավոր ծաղիկներով, որոնց մոտ խոխոջում են բազմաթիվ աղբյուրներ: Սրանցից կաթնաղբյուրն ու Թթու աղբյուրը անընդհատ հյուրընկալում են ամառանոց եկած զվարճասեր խմբերին: Այս թեք տարածության ստորին մասում գետեղված է մալականների գյուղը, Կոստանտինովկան, միջին մասում գտնվում է Դարաչիչակ ամառանոցը, իսկ վերինում՝ Կեչառիսի հռչակավոր մենաստանը:

Կոստանտինովկա գյուղը հիմնված է 1830 թ., բռնում է 16 դ. 1910 ք.ս. տարածություն, որից 4 դ. 1340 ք.ս. գտնվում է շինությունների տակ: Ունի մի քանի կանոնավոր փողոցներ, կղմինդրածածկ քարաշեն տներ՝ ընդարձակ բակերով և մի պետական միդասյան դպրոց: Բնակիչները ռուս մալական աղանդավորներ են, ընդամենը 65 տուն են՝ 252 ար., 247 իգ., միասին՝ 499 հոգի: Պարապում են երկրագործությամբ, անասնապահությամբ և բեռ-

նակրութիյամբ: Ունի 138 դ. 1060 ք.ս. վարիլահող 705 դ. 2180 ք.ս. արոտատեղի և 705 դ. 1460 ք.ս. տարածութիյան անտառ:

Դարաչիչակ ամառանոցը հիմնված է 1832 թ. իչխան Բարսեղ Բեհբութիյանի՝ այդ միջոցներին նվաճված Հայկական նահանգի կառավարչի կարգադրութիյամբ, ուր այդ ժամանակից մինչև այժմ ամառները տեղափոխվում են Երևանի կառավարչական սայաններբը և տեղական զորքը, վերջերս նաև Երևանի բնակիչներից ունևորները: Ամառանոցը բռնում է 7 դ. 2010 ք.ս. տարածութիյուն, որից ամբողջ 7 դ. գտնվում է շինութիյունների տակ: Ունի միայն երեք՝ արևելքից արևմուտք ձգվող փողոցներ, որոնք կտրվում են առչեղ ուրիշ փողոցներով, որոնցից մեկը բավական լայն է և ուղիղ, կոչվում է Միլիոնյան, ծառազարդ է և իբր ճեմելի է ծառայում, որովհետև սրա մոտ, նահանգապետի տան առջև, օրումեջ նվագում է զինվորական նվագախումբը: Տներն ընդհանրապես բավական դեղեցիկ են, ու հարմարավոր, փոքրիկ պարտեզներով: Հարավային կողմը, անտառապարտ բլրակի լանջին շինված է մի փոքրիկ զբոսավայր, երկու ծառուղիներով և մի, բավականին մեծ ռոտոնդայով: Հիշատակելի է նաև միակ, փայտաշեն հյուրանոցը, որ կարող է պարծենալ ոչ թե մի որևէ, ամենաչնչին հարմարութիյունով, այլ սարսափելի թանկութիյամբ: Սրա մոտ է փոստատունը, դեղատունը և բավականաչափ խանութիններ: Ամառանոցը գետակից զուրկ է, Կեչառիսի վանքի հյուսիսային կողմում հոսող առվակը բավական հեռու է, և միայն զբոսասեր երիտասարդներն են գնում, նրա մեջ փոքր-ինչ հարմարեցրած ավազաններում լողանում: Գյուղի մասում կան ռուսական ձևի բաղնիքներ:

Այս ամառանոցը Երևանից հեռու է 54 վերստ տարածութիյամբ, նույն չափ և Նոր-Բայազետ քաղաքից: Ամառները միայն Երևանից դեպի Նոր-Բայազետ ձգվող ճանապարհի Ներքին Ախտա կայարանից փոստային հաղորդակցութիյուն է բացվում դեպի այս ամառանոցը, որ միայն 5 վերստ հեռու է գտնվում:

Կեչառիսի վանքը հիմնված է 1033 թ. Գրիգոր Մագիստրոսի ձեռքով,[283] բաղկացած է չորս եկեղեցիներից և դրավում է ամենալավ տեղը՝ մի փոքրիկ հարթութիյուն, որի հյուսիսային կողմում տարածվում է մի ձոր, փոքրիկ առվակով, որի եզրից անմիջապես սկսվում է Ալիբեկ անտառապատ լեռը:

Այս եկեղեցիներից մեկը ծառայում է ամառանոց եկած հայերին իբրև աղոթատեղի: Սրանցից փոքր-ինչ ներքև գտնվում է ռուսաց փայտաշեն եկեղեցին, և նահանգապետի գեղեցիկ բնակարանը, որի առջև դեռ մինչև այժմ կանգուն մնացել է սրբատաշ քարերից շինած մի բարձրադիր աթոռ, որի վրայից, ավանդութիյան ասելով, Գրիգոր Մագիստրոսը և հետո տեղի մեծամեծները խոսել են ժողովրդի հետ:

---

[283] Մանրամասն նկարագրութիյունը տե՛ս նշանավոր վանքերի բաժնում:

Սուխոյ-Ֆանտան (62°25'55"-40°23'20"). Այս անունը գյուղը կրում է այն հանգամանքից, որ այստեղի միակ աղբյուրը կաթ-կաթ էր բխում և հաճախ չորանում, հայերը կաթ-կաթ բխելը ի նկատի առնելով կաթ-կաթ էին կոչում, ռուսները նրա չորանալը ի նկատի առնելով՝ Չոր աղբյուր (սուխոյ Ֆանտան) անվանում: Պարսիկներն էլ Տամջլու էին կոչում, որ նույն նշանակությունն ունի:

Բավական ժամանակ, երեք վերստ հեռու Ալափարս գյուղի աղբյուրից ջուր կրելուց հետո, վերջապես գյուղացիները համայնական ուժերով նույն աղբյուրը վերանորոգեցին և առջևում մի ավազան չինեցին, որպեսզի այլևս ջրի պակասություն չզգան: Գյուղը բաղկացած է միայն մի, երկար լայն փողոցից, որի երկու կողմում չինված են քարե կղմինդրածածկ տներ՝ ընդարձակ գավիթներով, այնպես որ ընդամենը բռնում է 6 դ. 1440 ք.ս. տարածություն: Գյուղում կա մի քանի խանութ, որ հայերին է պատկանում: Այստեղ է նաև Երևանից Նոր-Բայազետ տանող խճուղու փոստային կայարանը:

Բնակիչները ռուս ազանդավոր մալականներ են, 1851 թ. այստեղ գաղթած, ընդամենը 36 տուն, 110 ար., 96 իգ. միասին՝ 206 հոգի: Սրանցից 2 տունը՝ 17 ար. և 3 իգ., հայեր են: Պարապում են երկրագործությամբ, անասնապահությամբ և բեռնակրությամբ: Ունեն 224 դ. 1144 ք.ս. վարելահող, 383 դ. 960 ք.ս. խոտատեղի և 8 դ. 1920 ք.ս. արոտատեղի:

Քաղսի կամ Քաղցի (62°23'55"-40°28'55"). Չետեղված է Ալիբեկ լեռան Թիք-Թափա գագաթի հարավային կողմում, մի ձորակի մեջ, Հրազդանի ձախ ափին, և բռնում է 19 դ. 470 ք.ս. տարածություն, որից 17 դ. 90 ք.ս. շինություններով տակ է: Գյուղում կա մի բավական գեղեցիկ, նորաշեն եկեղեցի ս. Աստվածածին անունով: Գյուղի արևմտյան կողմում գտնվում է մի գյուղի ավերակ, «Աղվիբիր» անունով, ուր դեռևս մնում են մի քանի խաչքարեր և մի եկեղեցու հիմնապատեր: Մի այսպիսի գյուղատեղի ևս գտնվում է գյուղի հյուսիսային կողմում: Մի փոքրիկ մատուռ էլ, Թուխ-Մանուկ անունով, բարձրանում է գյուղի արևելյան կողմում: Բնակիչները 1830 թ. գաղթել են Մակուի Օղակ գյուղից, ընդամենը 220 տուն են՝ 910 ար., 910 իգ., միասին՝ 1820 հոգի: 1886 թ. այս գյուղից 30 տուն բաժանվելով՝ փոքրինչ բարձր, փոստային ճանապարհի վրա չինել են մի նոր գյուղ՝ Փոքր Քաղսի անունով: Երկու Քաղսին էլ պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ և միասին ունեին 1017 դ. 2390 ք.ս. վարելահող, 185 դ. 2060 ք.ս. խոտատեղի և 1430 դ. 996 ք.ս. արոտատեղի, 48 դ. 910 ք.ս. էլ անտառ:

Սոլակ (62°22'10"-40°28'). Ազատորեն փռված է Հրազդան գետի ձախ ափի տափարակում և բռնում է 41 դ. 470 ք.ս. տարածություն, մինչդեռ շինությունները գրավում են միայն 23 դ. 672 ք.ս. տեղ: Գյուղում կա մի եկե-

ղեցի ս. Հովհաննես անունով: Գետի անմիջապես ափին կան հին տների ավերակները, իսկ դիմացի լեռան դոզավորության մեջ բարձրանում է Մայրավանքը, այն վանքը, որ չինել է Հովհան Փիլիսոփան 636 թ., և որը Եզր կաթողիկոսից Մայրագոմ է կոչվել:[284]

Սոլակի այժմյան բնակիչները հայեր են, 1830 թ. Արճեշից և Վանա վիլայեթից գաղթած. ընդամենը 179 տուն, 742 ար., 710 իգ, միասին՝ 1452 հոգի: Ունեն եկեղեցական-ծխական դպրոց: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Ունեն 1125 դ. 162 ք.ս. պետական վարելահող, 689 դ. 2244 ք.ս. խոտատեղի, 1564 դ. 2168 ք.ս. արոտատեղի, 103 դ. 768 ք.ս. էլ անտառ:

Աղ-փարա (62°24'-40°30'35"). Դուրս է նայում անտառի միջից՝ փուվելով մի գառիվայրի վրա և բռնելով 8 դ. 730 ք.ս. տարածություն: Տեղական ավանդությունն ասում է, թե գյուղը իբր անունն ստացել է այն հանգամանքից, որ առաջին բնակիչներն այդ տեղում մեծ քանակությամբ աղ (սպիտակ) փարա (դրամ) են դտել: Գյուղում կա մի եկեղեցի ս. Ստեփանոսի անվամբ, մի մատուռ և մի քանի խաչարձաններ՝ մի հին եկեղեցու հիմնապատերի չուրջը: Մոտ երեք վերստ դեպի արևմուտք, անտառի խորքում, ձորակի մեջ կիսավեր կանգնած է տեղացիներից Սուրբ Աչ անվանված մի վանք, որի արևելյան պատի վրա դեռևս մնում է արձանագրության հետևյալ երեք բառը՝ **Ես Արեւշահ վաճառական...:**

Գյուղի բնակիչները հայեր են, 1829 թ. Մակուից գաղթած. ընդամենը 78 տուն. 426 ար., 352 իգ. միասին՝ 778 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Ունեն 311 դ. 2080 ք.ս. վարելահող, 54 դ. 1490 ք.ս. խոտատեղի 420 դ. 2100 ք.ս. արոտատեղի և 525 դ. 1930 ք.ս. տարածությամբ անտառ:

Այս գյուղից մոտ 5-6 տուն բնակչություն են հաստատել գյուղից մոտ 1,5 կիլոմետր հեռու՝ Ն. Ախտայից դեպի Դարաչիչակ տանող ճանապարհի վրա, Զանգու գետի ափին և այստեղ խանութներ բանալով՝ առևտրով են զբաղվում: Այս փոքրիկ գաղութն **Աղ-փարա** է կոչվում:

Մաքրավանք (62°23'57"-40°31'35"). Գետեղված է մի բլրի լանջին, Դարաչիչակ ամառանոցից մոտ երկու կիլոմետր հեռու: Բռնում է 4 դ. 2010 ք.ս. տարածություն, որից ամբողջ 4 դ. 1370 ք.ս. գտնվում է շինությունների տակ: Գյուղի ծայրում բարձրանում է Մաքրավանքը,[285] որ այժմ իբր գյուղական եկեղեցի է ծառայում: Բնակիչները հայեր են, Հին Բայազետից և Ալաշկերտից գաղթած. ընդամենը՝ 74 տուն. 470 ար., 320 իգ., միասին՝ 790 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապա-

---

[284] Տե՛ս նշանավոր վանքերի նկարագրության բաժնում:
[285] Տե՛ս նշանավոր վանքերի նկարագրության բաժնում:

հությամբ: Ունեն 430 դ. 1022 ք.ս. վարելահող, 19 դ. 1065 ք.ս. խոտատեղի և 254 դ. 606 ք.ս. արոտատեղի: Շուրջը կա 208 դ. 314 ք.ս. տարածութեամբ անտառ:

ՌՆԴԱՄԱԼԻ ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՑՈՒՆ

Ռնդամալ *(62°25'25"-40°32'55"). Տեղավորված է Զանգի և Միսխանա գետերի միախառնման տեղից փոքր-ինչ արևելք, մի ընդարձակ հարթութեան վրա: Բռնում է 13 դ. 1804 ք.ս. տարածութիւն, որից 10 դ. 866 ք.ս. գտնվում է չինութիւնների տակ: Ռնդամալը կոչվում է նաև* ***Մելիքի-գյուղ****, Մելիք Շեկոյի անունով, որ 1830 թ. առաջնորդել է բնակիչներին Ալաշկերտից այստեղ գաղթելու: Գյուղը երևի չատ հին է, որովհետև կան երեք եկեղեցու և երկու մատուռի հիմնապատեր:*

Գյուղում կա մի փայտածածկ եկեղեցի: Բնակիչները հայեր են, մի մասը Ալաշկերտից, մյուսը՝ Մակուից, Խոյից և Հին-Բայազետից գաղթած: Ընդամենը 310 տուն. 1914 ար., 1855 իգ. միասին՝ 3769 հոգի: Ունեն եկեղեցական-ծխական միդասյան դպրոց: Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունեն 1589 դ. 1735 ք.ս. վարելահող, 52 դ. 1580 ք.ս. խոտատեղի, և 787 դ. 526 ք.ս. արոտատեղի: Գյուղի սահմանում կա 352 դ. 470 ք.ս. տարածութեամբ անտառ:

Քյարվանսարա *(62°25'54"-40°31'52"). Տեղավորված է Սուդայան կոչված լեռան ստորոտում, մի դեղեցիկ հարթութեան վրա, Հրազդանի ձախ ափին: Բռնում է 14 դ. 96 ք.ս. տարածութիւն, որից 9 դ. ծածկված է չինութիւններով: Գյուղի հին անունը, ծերունիների ասելով, եղել է «Գառնեղի», միայն հետո չնորհիվ այստեղ չինված և այժմ էլ կիսավեր դրութեամբ մնացած կարավանատան (քարվանսարա) վերակոչվել է Քյարվանսարա: Գյուղը, ինչպես երևում է երեք ավեր եկեղեցիներից և հինգ հին գերեզմանատներից, բավական հին է: Ուշադրութեան արժանին բավական դեղեցիկ եկեղեցին է: Բնակիչները հայեր են Հին Բայազետից, Ավաջուղից և Խոյից գաղթած. ընդամենը 240 տուն, 904 ար., 780 իգ. միասին՝ 1684 հոգի: Պարապում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Ունեն 1211 դ. 531 ք.ս. վարելահող, որից 270 դ. 600 ք.ս. իրենց գյուղացիներին է պատկանում, իսկ 11 դ. 783 ք.ս. կալվածատիրական է, 6 դ. 816 ք.ս. խոտատեղի և 553 դ. 726 ք.ս. արոտատեղի, որից 69 դ. գյուղացիներին է պատկանում, 1 դ. 192 ք.ս. կալվածատիրական է: Այստեղ կա հայոց եկեղեցական-ծխական միդասյան դպրոց:*

Ֆարուխ *(62°24'54"–40°35'22"). Մի փոքրիկ գյուղ է անտառապատ ձորակի մեջ սեղմված, 13 դ. 400 ք.ս. տարածութեամբ՝ որ ամբողջովին*

բռնված է չինուԹյուններով: Բացի մի եկեղեցուց, ուրիշ ուշադրուԹյան արժանի բան չկա: Բնակիչները հայեր են՝ ընդամենը 126 տուն, 451 ար., 466 իգ., միասին՝ 917 հոգի:

Յայճի (62°54'42"–40°34'15"). Նույնպես բացի մի եկեղեցուց և մի մատուռից ուրիշ նշանավոր բան չկա. բնակիչները հայեր են Հին Բայազեթից, Վանից, Մակուից և Խոյից գաղթած: Ընդամենը 136 տուն. 619 ար. 567 իգ., միասին՝ 1186 հոգի:

Սրա մոտ է **Մաման** անունով հին գյուղատեղին, ուր կան չորս կիսավեր եկեղեցիներ և շատ խաչքարեր:

Թե Ցարուխի և թե Յայճիի բնակիչները պարապում են երկրագործուԹյամբ և անասնապահուԹյամբ: Երկու գյուղի և Մամանի հողերը միասին են չափված ու ցուցակագրված, ուստի և չենք կարող որոշել: Միասին ունեն 1190 դ. 960 ք.ս. վարելահող, 1653 դ. արոտատեղի: 241 դ. 220 ք.ս. անտառ, որ ճգվում է սրանց չուրջը:

Բաբաքիչի (62°21'35"-40°35'10"). Փռված է Միսխանայի գետի վտակներից մեկի ափերին, շրջապատված բազմաթիվ բանջարանոցներով, այս պատճառով էլ բռնում է 48 դես. 2304 ք.ս. տարածուԹյուն, որից միայն 10 դ. 1344 ք.ս. գտնվում է շինուԹյունների տակ:

Գյուղում ուշադրուԹյան արժանի գրեթե ոչինչ չկա՝ մի հին եկեղեցու ավերակ, մի քանի խաչքարերով և մի նոր եկեղեցի՝ բոլորովին հասարակ, ահա բոլորը: Բնակիչները հայեր են Ալաշկերտից. ընդամենը 94 տուն, 771 ար., 747 իգ., միասին՝ 1518 հոգի: Պարապում են երկրագործուԹյամբ և անասնապահուԹյամբ: Ունեն 558 դ. 1280 ք.ս. վարելահող, 175 դ. 1632 ք.ս. խոտատեղի և 747 դ. 224 ք.ս. արոտատեղի: Գյուղի սահմանում կա նաև 398 դ. 960 ք.ս. տարածուԹյամբ անտառ:

ԹԱՑՋԱՐՈՒԽԻ ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՑՈՒՆ

Թայչարուխ (62°18'55"-40°36'44"). Համանուն համայնքի կենտրոնական գյուղն է, մի փոքրիկ հովտում զետեղված: Գյուղում ուշագրավ ոչինչ չկա, բնակիչները հայեր են Հին-Բայազետի Արծափ գյուղից գաղթած: Ընդամենը 94 տուն, 771 ար., 777 իգ., միասին՝ 1548 հոգի: Պարապում են երկրագործուԹյամբ և անասնապահուԹյամբ: Հողային վեճեր լինելու պատճառով այս գյուղական հասարակուԹյան բոլոր գյուղերի հողերը միասին են ցուցակագրված և ոչ յուրաքանչյուր գյուղինն առանձին: Համայնքի մեջ մտնում են Թայչարուխ, Դալի վիշա (այլապես կոչվում է Փաշաքենտ), Դադաղըշլաղ, Ղաբախլու, Ղարաղալա, Ղորուխգյունեյ (այլապես կոչվում է Ալլահվերդի), Ղորչուլու (այլապես կոչվում է Նույնպես Ալլահվերդի), Միսխանա (այլապես կոչվում է Նովո-Միխայլովկա), Սոյուղ-Բուլաղ, Թա-

քալու (այլապես կոչվում է Մոլլա-Ալի-քենտ), Ուլաշիկ գյուղերը և Միխխանայի անտառային շրջանը, Օջախ-դարա և Շոր-աղ-դարա հողային հարկի ենթարկված ձորակներով: Սրանց բոլորի հողն է՝ գյուղատեղի 68 դ., որից 58 դ. 1200 ք.ս. բնակավայր, 4378 դ. վարելահող, 4319 դ. անտառ, 801 դ. խոտատեղի, 7984 դ. արոտատեղի, ջրի տակ 70 դ. չարդյունաբերող հողեր՝ 83 դ. 360 քս, ընդամենը 17725 դ.:

Թայչարուխ գյուղից դեպի հարավ, հազիվ երկու կիլոմետր հեռու, մի անտառապատ բլրի տափարակի գագաթին բարձրանում է մի հին՝ վրացական վանք:[286]

Թաքալու (62°12'11"-40°37'49"). Թրքաբնակ մի աննշան գյուղ է, 83 տուն բնակչով, 343 ար., 298 իգ. միասին՝ 641 հոգի: Պարապմունքը նույնն է՝ երկրագործություն և անասնապահություն: Թաքալու գյուղից մեկ կիլոմետր դեպի արևմուտք, Միխխանա գետի ափին բարձրանում է այժմ ավեր Արտավազդա վանքը:[287]

Միխխանա կամ Նոր Միխայլովկա (62°9"-40°39'10"). Գտնվում է այն ձորակի մեջ, որ հնում Աբասաձոր էր կոչվում, միջով անցնում է համանուն գետակը, որ միանում է Ջանգուին: Ունի կանոնավոր փողոցներ, գեղեցիկ, կղմինդրածածկ տներ: Բնակիչները գյումուշխանեցի հույներ են, 23 տուն, 98 ար., 83 իգ. միասին՝ 181 հոգի: Պարապմունքը նույնն է, երբեմն աշխատում էին նաև պղնձահանքում:

Կարակալա (62°13'10"-40°37'50"). Թրքաբնակ մի աննշան գյուղ է, 50 տուն բնակչով, 144 ար., 146 իգ., միասին՝ 290 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Գյուղի հանդեպ կա մի քարաժայռ, որի վրա նկատելի են ամրոցի հետքեր, ժայռը մութ գույն ունի, որի պատճառով և ինչպես բերդը, այնպես և գյուղը կոչվել են սև բերդ՝ Կարա-Կալա:

Ղորուխ-գյունեյ (62°11'30"-40°37'57"). Անտառապատ մի փոքրիկ գյուղ է, բնակիչները չիա թուրքեր են. 32 տուն, 131 ար., 128 իգ., միասին՝ 259 հոգի: Պարապում են անասնապահությամբ և երկրագործությամբ:

Ուլաշիկ (62°12'10"-40°38'25"). Անտառապատ մի փոքրիկ գյուղ է, բազմաթիվ աղբյուրներով, որոնք միանալով թափվում են Ջանգուի մեջ: Բնակիչները չիա թուրքեր են, 90 տուն, 240 ար., 185 իգ., միասին՝ 425 հոգի: Պարապում են անասնապահությամբ և երկրագործությամբ:

Կաբախլու (62°14'35"-40°35'10"). Անտառի մեջ գետեղված մի փոքրիկ, աննշան գյուղ է: Բնակիչները չիա թուրքեր են, 23 տուն, 98 ար., 83 իգ., միասին՝ 181 հոգի: Պարապում են անասնապահությամբ և երկրագործությամբ:

---

[286] Տե՛ս նշանավոր վանքերի նկարագրության բաժնում:

[287] Տե՛ս նշանավոր վանքերի նկարագրության բաժնում:

Դադա-կիշլաղ (62°15'20"-40°36'50"). Զանգուի աջ ափին մի փոքրիկ բլրակի վրա զետեղված աննշան գյուղ է, չիա թուրք բնակիչներով, 56 տուն՝ 248 ար., 180 իգ. միասին՝ 428 հոգի: Պարապում են անասնապահությամբ և երկրագործությամբ:

Կորչուլու (62°16'20"-40°36'5"). Զանգու գետի ձախ ափին, փոքրիկ հարթության վրա, անտառապատ մի փոքրիկ գյուղ է, 47 տուն չիա թուրք բնակիչներով, 170 ար., 130 իգ. միասին՝ 300 հոգի: Պարապում են անասնապահությամբ և երկրագործությամբ:

Սոյուղ-բուլաղ (62°20'50"-40°7'2"). Մի սառնորակ, հորդ աղբյուրի եզրին, Ալիբեկ լեռան լանջին զետեղված, անտառապատ փոքրիկ գյուղ է, ուր դեռևս մնում են հայկական մի կիսավեր եկեղեցի է և մի քանի հինավուրց խաչքարեր: Բնակիչները եզդիներ են, 35 տուն, 153 ար., 143 իգ., միասին՝ 296 հոգի: Պարապում են անասնապահությամբ և երկրագործությամբ:

Դալի փաշա կամ Փաշաքյանդ (62°20'7"-40°34'55"). Զանգուի ձախ ափին, մի փոքրիկ հարթության վրա, անտառապատ գյուղ է, չիա թուրք բնակիչներով. 90 տուն, 353 ար., 320 իգ., միասին՝ 673 հոգի: Պարապում են անասնապահությամբ և երկրագործությամբ, նաև մեղվաբուծությամբ: Գյուղում կա հայկական մի եկեղեցու ավերակ:

ԱՐՋԱՓԵՆՅԻ ԳԱՒՈՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ալափարս (62°17'54"-40°25'22"). 23 դես. տարածությամբ փուված է մի հարթության վրա, որի հարավային կողմում բարձրանում է մի բլուր, կրեկով մի հին ամրոցի որմնապատեր: Արևելյան կողմում էլ բխում է մի հորդ սառնորակ աղբյուր՝ ջուր մատակարարելով ամբողջ գյուղին:

Ուշադրավ է նախ Միրանավոր անվամբ մի ուխտատեղի, մի սրբատաշ եկեղեցու կիսակործան պատեր, որոնցից մեկի վրա կարդացվում է.

Եւ յորժամ եղեւ Թուականիս Թորգոմեան ՅՄ (901թ.) կամաւքն Աստուծոյ խորանս...Գրիգոր իշխան...

Սրա մոտ է մի անշուք, հին եկեղեցի ս. Վարդան անունով, ուր պահվում է 1830 թ. Մակուի համանուն եկեղեցուց բերված մի կլոր քար, ավանդության ասելով, ներկված ս. Վարդանի արյունով: Ամեն տարի Գյուտ խաչի տոնին ահագին բազմություն է գալիս այստեղ ուխտի:

Մի սրբատաշ եկեղեցի էլ շինված է 1893 թ. ս. Աստվածածնի անունով:

Բնակիչները բոլորը հայեր են՝ Խոյից, Մակուից, Վեդիայից և Ավաջուղից 1830 թ. գաղթած, ընդամենը 396 տուն. 1384 ար., 1305 իգ., միասին՝ 2689 հոգի: Այս գյուղացիների մեջ գաղթականությունը շատ տարածված է, միայն Երևանում 60 տնից ավելի առևտրով պարապողներ կան: Գաղթակա-

նուիթյան չնորհիվ մտավոր զարգացումն էլ համեմատաբար բարձր է. ունեն մի եկեղեցական-ծխական դպրոց:

Պարապում են երկրագործությամբ, այգեպանությամբ, անասնապահությամբ և առևտրով: Ունեն 10 դ. 768 ք.ս. տարածության այգիներ, 2309 դ. 1888 ք.ս. վարելահող և 693 դ. 2228 ք.ս. արոտատեղի: Հռչակված է այստեղի ցորենը:

Գյուղացիներից շատերը պարապում են նաև ոչխարի մորթուց մուշտակ կարելով, որ ծախվում է մինչև 20 ռուբլով:

Ամառները Երևանից հայեր այստեղ ևս գալիս են ամառանոց:

Բջնի (62°18'50"-40°27'45"). Տեղավորված է մի քարքարոտ ձորակում, որի միջով ոլորապտույտ հոսում է Զանգու գետը: Ահագին քարաժայռեր պատում են գյուղի արևելյան և հարավային կողմերը, և մերկ, սրածայր բլրակներ ձգվում հյուսիսային կողմում: Ձորակն արևելքից դեպի արևմուտք հետզհետե լայնանում է և շատ դեղեցիկ տեսք ստանում: Զանգուի եզրերը պատած են մեծ մասամբ վանակատի և հասարակ դեղին մարմարիոնի հանքերով, որոնք արևի ճառագայթների տակ փողփողում են: Գյուղի արևելյան կողմը բարձրանում է մի հինավուրց ամրոցից, իսկ հյուսիսային կողմում, բլրակի լանջին՝ հռչակավոր ս. Աստվածածնի վանքը:[288] Գյուղական անշուք տները բռնելով հյուսիսային բլրակի և արևելյան քառաժայռի լանջերը՝ այժմ կառուցվում են արևմտյան կողմում բացվող հովտի մեջ:

Գյուղը բռնում է 32 դ. 960 ք.ս. տարածություն, որից 20 դ. 1920 ք.ս. գտնվում է շինությունների տակ:

Ամրոցը շինված է գյուղի արևելյան կողմը բարձրացող բլրի գագաթին: Սա երեք կողմից էլ շրջապատված է Զանգու գետով: Ջորրորդ, հյուսիսային կողմում եղել են աշտարակներ և միակ դուռը: Պահլավունյաց տոհմի այս «ամրակուռ» ամրոցը պատած է եղել հաստ պարսպով, որի մի մասը գյուղացիները քանդել են, քարերը իրենց շինություննների վրա գործածելու: Ամրոցի մեջ կա մի ավեր եկեղեցի, որ ավանդաբար ս. Խաչ է կոչվում, ջրի մի ավազան և մի ստորերկրյա անցք, որ իջնում է մինչև Զանգու գետը: Նկատելի են տների հիմնապատեր:

Բջնի գյուղը հիշատակվում է դեռ հինգերորդ դարի երրորդ քառորդում Ղազար Փարպեցուց իբրև «երեւելի գիւղ»: Հայտնի չէ, թե երբ է այս գյուղը դարձել Պահլավունի տան սեփականություն, միայն ժ դարի առաջին կեսում առաջին անգամ հիշատակվում է, որ Բջնիի տեր Վասակ Պահլավունին՝ Հոլում մականվանված, Դևմըրկաց հարձակման միջոցին քաջաբար

[288] Տե՛ս նշանավոր վանքերի նկարագրության մեջ:

պատերազմել է նրանց դեմ, միայն հետո մի դարանակալից սպանվել է Սերկևիլի լեռան վրա, քնած ժամանակ:[289]

Մի կարճ միջոցից հետո Վասակ Պահլավունու որդի Գրիգոր Մագիստրոսը նույնպես 1043 թ. թուրքաց ասպատակությունների ժամանակ իր զորքով բանակ է դրել այս Բջնու մոտ՝ Հրազդանի ափին, և սաստիկ պատերազմելով հաղթել է, շատ իշխանների ձերբակալել, իսկ զորքը փախցրել Պարսկաստան:[290]

Այս միջոցներին Բջնին դառնվել է բավական բարգավաճ դրության մեջ և քաղաք կամ բերդաքաղաք կոչվել:

Սակայն Բագրատունյաց հարստության անկման ժամանակ այս քաղաքն ընկել է, որովհետև 1045 թ. նրա տեր Գրիգոր Մագիստրոսը հանձնել է հունաց կայսեր և նրա փոխարեն ստացել Միջագետքում գյուղեր և քաղաքներ: Այնուհետև մինչև ԺԳ դարը Բջնիի մասին ոչ մի առանձին հիշատակություն չկա, միայն պարզ է, որ չրջակա գավառների հետ միասին սա ևս ընկել է պարսից տիրապետության ներքո, որից 1201 թ. խլել են Զաքարե և Իվանե սպասալարները, որոնց տոհմը այնուհետև տիրապետել է սրան: 1358 թ. այս տոհմից՝ Աթաբակ Շահնշահի որդի Աթաբակ Զազան պատերազմել է պարսից մելիք Աչրաֆի հետ, որ «Բջնի քաղաքը խլել էր, քաղաքը հիմանց քակել, շատ անուանի մարդ սրի քաշել և եկեղեցիները տապալել», և ետ է խլել Բջնին, ժողովրդին հարկից և ծառայությունից ազատ կացուցել և նորոգել եկեղեցին:[291]

Այս վերանորոգությունից գրեթե երեսուն տարի հետո, 1387 թ., Բջնին ևս ենթարկվել է Լանկթամուրի ավերածության, Յաղմուր անուն մի զորապետ «խոսրեալ զամուրն Բջնոյ էառ զնա, և սպան զեպիսկոպոս աշխարհին զՏէր Վանական, որ էր այր իմաստուն և գիտնական և ողորմած և գթած ամենայն աղքատաց»:[292]

120 տարուց հետո Բջնին հիշվում է այս՝ «աստուածաբնակ և անառիկ դղեակ Բջնու» երկնանման աթոռ ս. Աստուածածնի եպիսկոպոս Գրիգորի 17 տարվա և 6 ամսվա ընթացքում արտագրած ավետարանի հիշատակարանում 1478 թ., որից հետո դարձյալ մոռացության է տրվում մինչև ԺԷ դարի սկիզբը, Ճելալեանց ասպատակությունների միջոցը, երբ սրանց ավերածությունների պատճառով այնպիսի սոսկալի սով էր ընկել այս կողմերում, որ մինչև անգամ մի քանի կանայք մարդիկ էին դավում, սպանում և եփում՝ ուտում:[293]

---

289 Արիստակէս Լաստիվերտցի Ժ., Վարդան, Մե:
290 Մատթեոս Ուռհայեցի:
291 Եկեղեցու վրայի արձանագրությունից:
292 Թովմա Մեծոփեցի, Ալիշան, Սիսական, եր. 274:
293 Առաքել պատմ., գլ. Է:

Այնուհետև կրկին պատմությունը լռում է այս մասին մինչև ԺԹ դարի երեսնական թվականները, երբ տաճկահայ գաղթականության միջոցին Վանի վիլայեթի Արծափ և Քոռամուսուն գյուղերից հայեր գաղթեցին այստեղ և շենացրին: Հայտնի չէ, թե ինչ հանգամանքներով այս գյուղը դեռ պարսից տիրապետության միջոցին պատկանելիս է եղել երևանցի Գեղամյան տոհմին, որից Աբսեն Սուլթանը 1876 թ. Գևորգ Դ կաթողիկոսի օրոք վաճառեց ս. Էջմիածնին 75,000 ռուբլով:

Բջնիի այժմյան բնակիչները հայեր և թուրքեր են, ընդամենը 290 տուն. 828 ար., 815 իգ., միասին՝ 1643 հոգի. սրանցից հայեր են 150 տուն, 412 ար., 405 իգ., միասին՝ 817 հոգի, թուրքեր՝ 140 տուն, 416 ար., 410 իգ., միասին՝ 826 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Ունեն ամբողջովին էջմիածնապատկան 1540 դ. 174 ք.ս. վարելահող, 16 դ. անտառ, 565 դ. 600 ք.ս. խոտատեղի և 2788 դ. 1740 ք.ս. արոտատեղի:

Արզաքենտ, հնում Արտազական (62°15'55"-40°27'7"). Կալվածատիրական մի փոքրիկ գյուղ է. 11 դ. տարածությամբ, երկու ձորակների միջավայրում: Գյուղում ուշադրության արժանի առանձին բան չկա, բացի մի հասարակ եկեղեցուց և ս. Գևորգ անվամբ մի մատուռից: Ավելի ուշագրավ է 1,5 կիլոմետր հեռավորությամբ, արևմտյան կողմի երկու ձորակներով մեկուսացած, անտառապատ բլրի վրայի **Նեղուսի ս. Աստվածածին** վանքը[294] շրջապատված տների հիմնապատերով ու խաչքարերով:

Վանքի արևմտյան կողմը կա մի կիսավեր մատուռ:

Արզաքենտի բնակիչները բնիկ հայեր են. 170 տուն, 666 ար., 662 իգ., միասին՝ 1328 հոգի: Պարապում են երկրագործությամբ, անասնապահությամբ և մասամբ՝ այգեպանությամբ: Ունեն 927 դ. 1199 ք.ս. վարելահող, 1308 դ. 1439 ք.ս. արոտատեղի, միայն մի դեսյատին այգի: Գյուղի շուրջը պատած է 586 դ. 2398 ք.ս. տարածությամբ անտառ:

Դալլեար (62°15'30"-40°29'24"). Կալվածատիրական մի փոքրիկ գյուղ է, որ թեպետ 12 դ. 1440 ք.ս. տեղ է բռնում, սակայն տները կուտակված են միայն 6 դ. վրա: Շրջապատված 1264 դ. 1472 ք.ս. տարածության հիանալի անտառով և բազմաթիվ ծաղիկներով, զերծ չէ մնացել մեր սուրբ հայրերի աչքերից, որոնք մի վանք են կառուցել այստեղ: Միայն մի քանի կցկտուր արձանագրություններ դեռևս պահում են այդ վաղեմի սրբավայրի հիշատակը.

Տաճարի վրա.

Կամաւն Աստուծոյ մեղաւորս Սարգիս վարդապետ, որ առաջնորդ եղէ եւ չինեցի զսուրբ Աստուածածինս եւ եռու զդրած այգին եւ հնձան ի

---

[294] Տե՛ս նշանավոր վանքերի նկարագրության բաժնում:

Շէնգաւիթ եւ զիմ բաժին այգին ի Զիթենիա... Հայրս եւ եղբարքս հաստատեցին ի տարին Ժ. աւր ժամ. ով խափանէ...

Սրանից բարձր.

Կամաւն Աստուծոյ ես Քահանայապետ եւ դասապետս միաբանեցաք սուրբ ուխտիս...Աչտարակայ այգւոյ զհնծանս չինեցաք եւ այլ ինչս տվաք եւ միաբանքս հաստատեցին...Ք. պատարագ ի թվիս ՈՃԶ (1207):

Սրանից էլ բարձր.

Կամաւն Աստուծոյ ես Մեսրովբ երէց գնեցի զՇատլոյսենց այգոյն չարէքն... Իմ. դահեկան, եւ ետու սուրբ Աստուածածինս, եւ սպասաւորքս ետուն Ք. պատարագ ի տարոջն, ով խափանէ, իմ մեղացն պարտական...

Դալլեար գյուղի այժմյան բնակիչները թուրքեր են, 65 տուն, 196 ար., 189 իգ., միասին՝ 385 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Ունեն 149 դ. 2080 ք.ս. վարելահող, 160 դ. 950 ք.ս. խոտատեղի և 2521 դ. 1462 ք.ս. արոտատեղի:

Ախվերան (62°10'40"-40°30'57"). Տեղավորված է Ալիբեկ լեռան լանջին, մի ձորակի մեջ, որի միջով հոսում է մի գետակ, սկիզբ առնելով Ալիբեկ լեռից: Բռնում է 2 դ. 960 ք.ս. տարածություն: Բնակիչները չիա թուրքեր են, 71 տուն, 212 ար., 204 իգ., միասին՝ 416 հոգի: Պարապմունքը նույնն է. ունեն 190 դ. 1689 ք.ս. վարելահող և 1024 դ. 2067 ք.ս. արոտատեղի, գյուղի չուրջը կա 616 դ. 1600 ք.ս. տարածությամբ արքունական անտառ:

Օզանլար (62°15'10"-40°24'28"). Տեղավորված է Զանգի գետի ձախ ափին և բավական գեղեցիկ տեսք ունի, բռնում է 2 դ. 1920 ք.ս. տարածություն: Գյուղում կա ծծմբային ջրի մի աղբյուր, որ բոլորովին անխնամ է թողնված: Բնակիչները չիա թուրքեր են, 66 տուն, 181 ար, 176 իգ, միասին՝ 357 հոգի: Պարապմունքը նույնն է: Ունեն 288 դ. 1920 ք.ս. վարելահող և 221 դ. 211 ք.ս. արոտատեղի:

Գյումուշ, հնում՝ Կարենիս (62°16'8"-40°23'28"). Մի փոքրիկ գյուղ է 3 դ. 480 ք.ս. տարածությամբ, որի մեջ կա մի հայկական հինավուրց եկեղեցու ավերակ: Այստեղից փոքր-ինչ հեռու ձորակի մեջ բարձրանում է կաթնավանքը, որ այժմ բոլորովին անխնամ է թողնված:[295] Գյումուշ գյուղի այժմյան բնակիչները չիա թուրքեր են՝ Պարսկաստանից, 71 տուն. 224 ար., 215 իգ., միասին՝ 439 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Ունեն 353 դ. 960 ք.ս. վարելահող և 483 դ. 2016 ք.ս. արոտատեղի:

---

[295] *Տե՛ս վանքերի նկարագրության բաժնում:*

Քյանքյանի գյուղական համայնքը, որ բռնում է նախկին Մազազ գավառի մի մասը, ներկայացնում է մի բարձրավանդակ, կտրտված Ահմանկան լեռնաշղթայի ճյուղերով: Երկիրն ընդհանրապես քարքարոտ է, լեռները մերկ և ապառաժոտ, շատ տեղեր ծածկված ահագին կարկառներով: Տեղ-տեղ երևում են լեռնային գոգավորություններ՝ ծածկված աղքատ բուսականությամբ, ահա այսպիսի տեղերում զետեղված են փոքրիկ գյուղեր, որոնք հազիվհազ կարողանում են իրենց գոյությունը պահպանել: Լեռներից ամենանշանավորը Շամիրամա լեռն է, որ այժմ կոչվում է Հաղիս, այսինքն մեծ, առաջավոր, 8337 ոտնաչափ բարձրության: Լեռը լերկ է, անշուշտ հրաբխային, զուրկ բուսականությունից, գագաթին կա մի հինավուրց փոքրիկ ամրոցի հետք և մի քարայր:

Երկրորդ նշանավոր լեռը Քոթան-դաղն է, որ այսպես է կոչվել, որովհետև բոլոր լանջերին քոթանը, այսինքն՝ դուբանը բանում է, մշակելի է: Բարձրությունն է 7581 ոտնաչափ:

Այս ամբողջ բաձրավանդակի վրա ոչ մի գետ կամ գետակ չկա և նույնիսկ աղբյուրները չափազանց սակավաթիվ են, գարնան սկզբին, երբ հալչում է ձյունը՝ հազարավոր վտակներ վազում են լեռների գագաթներից դեպի ներքև, գոգավորությունները և բնական լճակներ կազմում, ինչպես Օճախլուն՝ Քյանքյանի մոտ: Տեղացիներն էլ ամռան համար ջուր տնտեսելու նպատակով բոլոր գյուղերի մոտ՝ առանց բացառության՝ մի կամ մի քանի մեծ ավազաններ են շինել 20-50 մ լայն և 1-3 մ խոր, ուր ամբարվում է այդ վտակների ջուրը՝ առավելապես կենդանիներ ջրելու: Սակայն աշնանը և ձմռանը, երբ սաստիկ ցրտից ամեն ինչ սառչում է և մոտ 1,5 մ բարձրության ձյուն նստում ու սաստիկ քամին ահագին բուք բարձրացնելով կտրում ամեն տեսակ հաղորդակցություն, խեղճ տեղացիները ձյունը լցնում են կաթսաները, դնում կրակին հալում և այդ ջուրը գործածում, իսկ կենդանիները ջրելու համար պատրաստում են «կարըխ»՝ ձյունանոց. սա 2 մ տրամագծով և նույնքան բարձրության գլանաձև շենք է գոմի մի անկյունում, ծածկված և մի փոքրիկ երդիկ բաց թողած: Մի դռնակի մեծության բացվածք էլ դեպի գոմն է թողնված: Այս գլանաձև շենքի մեջ, կեսից բարձր, առչեղ թաղթ է կապված փայտե ձողերով և ճիպոտներով. երդիկից ձյունն ածում են այս թաղթի վրա և անմիջապես երդիկը ծածկում: Դեպի գոմը թողնված բացվածքից գոմի տաքությունն անցնում է այստեղ և հալում ձյունը, լցնում գլանաձև շենքի ներքին մասը, որ սալահատակած է լինում: Այսպես հավաքված ջրից խմում են կենդանիները՝ հենց այդ միևնույն բացվածքից ներս կոխելով գլխները: Միևնույն ջուրը գործ են ածում նաև լվացքի և այլ պետքերի համար:

***Քյանքյան** (62°23'45"-40°20'5"). Համանուն գյուղական համայնքի կենտրոնական գյուղն է համարվում, և տեղավորված է մի ընդարձակ լեռնա-*

դաշտի վրա՝ շրջապատված մեծ և փոքր լեռներով, որոնցից նշանավոր են՝ հարավային կողմում, Հաղիս լեռը, որի հարթ գագաթին նկատելի են պարսպի հետքեր, իսկ փոքր-ինչ ներքև կան մի քանի բնական և արհեստական քարայրներ: Արևմտյան կողմում բարձրանում է Կալաչա սարը, որի գագաթին ևս կա մի կիսավեր ամրոց: Սրա մասին պատմում են, իբր թե Քյոռօղլին է չինել և շատ անգամ այդտեղ ապաստանել: Գյուղը բռնում է 19 դ. 800 ք.ս. տարածություն, որից 19 դ. 480 ք.ս. դռնվում է շինությունների տակ: Գյուղի գրեթե կենտրոնում կա մի բարակ աղբյուր, որ միայն երկու տարի առաջ են հանել, իսկ մինչ այդ օգտվում էին ջրհորներից՝ քյանքյան, որի պատճառով և գյուղը այդպես է կոչվել: Այժմ ևս գյուղացիները ջրի մեծ պակասություն են կրում: Գյուղի մեջ եղել է հայկական մի եկեղեցի, որի տեղը միայն այժմ ցույց են տալիս, և երկու ընդարձակ դերեզմանատուն, ուր դեռևս մնում են մի քանի խաչքար և օրորոցաձև տապանաքար, որոնց վրա քանդակված են ձիավոր մարդիկ, հաց, գավ և այլն: Սրանցից երկուսի վրա կան հետևյալ տապանագրերը.

Այս է տապան Մաթէոսի, որ փոխեցաւ ի Քրիստոս թ. ՌՃՃԱ (1702):

Այս է հանգիստ Ամիրխանին, թվն ՌՃՃԱ (1702):

Գյուղի տների մեծագույն մասը գետնափոր է, այժմ հետզհետե չինում են սենյակներ գետնի երեսին: Նույնիսկ համայնքի դատարանի համար չկա փոքրիշատե հարմարավուն շենք:

Բնակիչները այս գավառի Թոխլուճա գյուղից գաղթած չիա թուրքեր են. 130 տուն. 487 ար., 452 իգ., միասին՝ 939 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Ունեն 1223 դ. վարելահող, 1098 դ. 1410 ք.ս. արոտատեղի: Աղքատ դասակարգը դնում է Երևան մշակության, կանայք էլ գորգ և կապերտ են գործում:

Թեղխարապից դեպի Քյանքյան երկիրը հետզհետե բարձրանում է և քարքարոտ սարերով կտրատվում, տեղ-տեղ էլ ահագին կարկառներ կազմում: Այս քարքարոտ բլուրների միջև ընկած է մի բավական մեծ դոգավորություն, ուր գարնան սկզբին հալվող ձյան ջուրը հավաքվելով մի լճակ է գոյացնում, որ տևում է մինչև ամառ: Այս լճակի մեջ կանգնած է մի ծառ, որ սուրբ է համարվում թե բոլոր թուրքերից և թե Թեղխարապի հայերից, այս պատճառով և լիճը Օճախլու՝ սրբատեղի է կոչվում:

Կարա-կալա *(62°27'55"-40°16'32").* Տարածվում է մի բլրի գագաթին ու ստորոտում, բռնում է 12 դ. 1152 ք.ս. տարածություն: Գյուղի արևելահարավային կողմում ձգվում է Աղմաղան լեռնաշղթան, արևմտահարավային կողմում բարձրանում է մի հինավուրց ամրոց: Գյուղում կան մի եկեղեցու հիմնապատեր, մի ավեր մատուռ և մի քանի խաչքար: Այստեղից երկու

խաչքար մոտակա Զառ գյուղացիները տարել են իրենց գերեզմանատունը. սրանց վրա եղել է հետևյալ տապանագիրը:[296]

Թվ. ՉԼԵ (1286) ես Մամքոս կանգնեցի զխաչս յիշեցէք:

Թվ. ՉՇԵ (1306) Կամաւն Աստուծոյ մեք ճայճնայս և Սարգիս կանգնեցաք զխաչս ի Քրիստոս. ամեն:

Գյուղում կա երեք ջրհոր և երկու ջրի ավազան. տները ողորմելի են, բոլորն էլ գետնափոր: Ձմեռն այստեղ 1,5 մ հաստությամբ ձյուն է նստում և կապում բոլոր ճանապարհները, սաստիկ բուք բարձրանում և խեղդում ճանապարհորդներին:

Բնակիչները չիա թուրքեր են, Բորչալուի և Ղազախի զանազան գյուղերից եկած: Ընդամենը 91 տուն են, 405 ար., 354 իգ., միասին՝ 759 հոգի: Պարապում են երկրագործությամբ և խաչնարածությամբ: Ունեն 679 դ. 780 ք.ս. վարելահող և 407 դ. 1496 ք.ս. արոտատեղի:

Այս գյուղի արևմտահարավային կողմում բարձրանում է մի բլուր, պատած ահագին կարկառներով, այնպես որ վերև բարձրանալը շատ դժվար է: Ահա այս բլրի գագաթին գտնվում է մի հինավուրց ամրոց, որ սև քարով շինված լինելու պատճառով այժմ կոչվում է Կարա-կալա (սև ամրոց) և որ իր անունը տվել է իր մոտի գյուղին:

Կարծվում է թե այս ամրոցը **Գեղայու բերդը** *պիտի լինի: Ամրոցը կրկնապարիսպ է, մեկը մյուսից մոտ 7 մ հեռու, 2-3 մ բարձրության և մոտ 3 մ լայնության: Ամրացած է չորս աշտարակներով և ունի նույնքան դուռ: Ներքին պարսպի միջի տարածությունը կլինի մոտավորապես 40 մ երկար և 25 մ լայն: Ամրոցը կիսավեր է և մոտը կան տների հիմնապատեր:*

Դավա-խարապա (62°27'-40°22'16"). Մի փոքրիկ, աննշան գյուղ է, 2 դ. 980 ք.ս. տարածությամբ ուղտանման կարկառների միջև:

Հնության ոչ մի հետք չկա: Այժմյան բնակիչները 1868 թ. գաղթել են Սուրմալուի գավառից, չիա քրդեր են, 47 տուն, 178 ար., 228 իգ. միասին՝ 406 հոգի: Պարապմունքը նույնն է՝ երկրագործություն և անասնապահություն: Ունեն 80 դ. վարելահող և 767 դ. 2020 ք.ս. արոտատեղի:

Կըզ-կալա (62°25'5"-40°22'30"). Տեղավորված է դարձյալ լեռների գոգավորության մեջ և բռնում է 4 դ. 1920 ք.ս. տարածություն: Գյուղի արևելյան կողմում ձգվում է Աղմաղանի լեռնաշղթան, իսկ ավելի մոտ՝ անանուն բլուրների մի շարք. արևմտյան կողմում բարձրանում է կարկառներով պատած մի լեռ, որի գագաթին գտնվում է մի հինավուրց, ավերակ ամրոց, Կըզ-կալա, աղջկա բերդ, անունով: Գյուղի մեջ կա ջրի մի մեծ ավազան, մոտավորապես 50 մ երկար, 30 մ լայն և ամենաշատը՝ 1,5-2 մ խոր. չուրջը քարերով պատած է, իսկ հատակը հենց այնպես թողած, առանց սալահա-

---

[296] *Մեսրովբ եպ. Սմբատեան, Գեղարքունի:*

տակելու: Այստեղ հավաքվում է գարնան հալչող ձյան ջուրը, որ մնում է մինչև աշուն և բավականություն է տալիս տավարին: Երբ այս ջուրը սառչում է կամ վերջանում, սկսում են ջուր ստանալ՝ հալելով ձյունը՝ հատկապես այս նպատակով դոմերում շինված «կարլըզ»-ներում: Խմելու համար գործ են ածում այն միակ աղբյուրի ջուրը, որ բխում է Կըզկալա ամրոցի կարկառներից, որ ձյան և անձրևի ջրերից գոյանալով՝ ձմեռը դադարում է հոսելուց, և այս ժամանակ գյուղացիները կաթսաների մեջ հալեցնում են մաքուր ձյուն և այն գործածում:

Գյուղի մեջ կա մի ավեր հայկական եկեղեցի և սրա չուրջը՝ գերեզմանատուն, սակայն խաչքարեր չկան, այլ տափարակ գերեզմանաքարեր են, որոնց վրա մարդ է գծագրած: Մի մատուռ էլ ջրի ավազանի մոտ կա, որի տեղը հարթելիս գտնվել է մի պղնձե խաչ, որ այժմ Արզաքենդ գյուղի քահանայի մոտ է:

Բնակիչները չիա թուրքեր են, Ղազախի Կըզըլ-Հաճի գյուղից 1868 թ. գաղթած. ընդամենը 35 տուն, 164 ար., 133 իգ., միասին՝ 297 հոգի: Պարապմունքը նույնն է: Ունեն 282 դ. 770 ք.ս. վարելահող և 713 դ. 380 ք.ս. արոտատեղի:

Ելիջա ագարակ (62°25'35"-29°45", 40°17'47"-19'50"). Մի հին գյուղատեղի է, ուր կան մի ավեր եկեղեցի և մի քանի խաչքար: Սրանցից երկուսի վրա դեռևս կարելի է որոշել հետևյալ բառերը.

Թվիս ՉԵ (1256) ես ծառայս Աստուծոյ Ամիր Զասուբայս որ վասն հաւ...զիս աչաւք եւ ձեռաւք:

Մեղուցեալ ծ. Վուշս որդիս իմոյ չարչարեցին...եւ ես անմեղ էի եւ անպարտ:

Այս ագարակը Ելիջա (քամոտ) կամ Ելլի յուրտ (քամոտ ամառանոց) է կոչվում այն պատճառով, որ այստեղ շարունակ քամի (էլ) է փչում Աղմաղանից: Երբեմն կոչվել է նաև Պալլիճա (Մեղրանոց) երևի շատ լավ մեղր՝ պալ, լինելու պատճառով: Հենց այժմ էլ այստեղի մեղրը շատ գովված է: Ագարակում կա մի լճակ, չուրջը մի քանի ուռենիներ. աղբյուր չկա, Զառ գյուղից են ջուր բերում: Այս ագարակը պատկանում է երևանցի Մուշեղյաններին և Մակաչյաններին, որոնք այստեղ ունեն բնակարաններ և մի քանի դոմեր, որ բռնում են 2 դ. 300 ք.ս. տարածություն. իսկ շրջակայքում կան 439 դ. 1440 ք.ս. վարելահող, 485 դ. 890 ք.ս. խոտատեղի, 128 դ. 570 ք.ս. արոտատեղի: 2 դ. 1280 ք.ս. էլ գտնվում է ջրի տակ, որից 1 դ. 1500 ք.ս. կազմում է մի փոքրիկ լճակ: Այս հողերը տրվում են շրջակա գյուղացիներին կապալով թե մշակելու և թե տավար պահելու: Այստեղ կա նաև ձիաբուծարան:

Թեզ-խարապա (62°22'50"-40°22'27"). Տեղավորված է Քոթան լեռան արևելյան կողմում, բլուրների դոգավորության մեջ: Նրա արևելյան կողմում կա

մի մեծ ավազան, ուր թափվում է մի փոքրիկ աղբյուրի և ձյան, անձրևի ջուրը, որ տալիս են անասուններին, և իրենք գործ են ածում լվացքի համար. խմելու ջուրը վերցնում են կամ վերոհիշյալ փոքրիկ աղբյուրից և կամ 1 կիլոմետր հեռու, Քոթման լեռան ստորոտում նոր շինած աղբյուրից: Գյուղը բռնում է 9 դ. 2268 ք.ս. տարածություն, որից միմիայն 1308 ք.ս. է ազատ շինություններից: Գյուղն ըստ երևույթին բավական հին է, որովհետև կա մի հինավուրց, սակայն հասարակ եկեղեցի, որի շուրջը եղած հին դերեզմանաքարերից մեկի վրա քանդակված է ձեռները կրծքին դրած մի մարդ և եղծված տապանագրից կարդացվում է միայն Ռիե (1576 թ.): Բնակիչները հայեր են և թուրքեր. հայերը գաղթել են այստեղ Մակուի Օղակ գյուղից՝ միառժամանակ Աղ-փարայում բնակվելուց հետո, ընդամենը 92 տուն են, 333 ար., 331 իգ., միասին՝ 664 հոգի, որից 3 տուն, 23 ար., 22 իգ., միասին՝ 45 հոգի, չիա թուրքեր են, որ հայ-թուրքական ընդհարումի ժամանակ (1905 թ.) փախել՝ գնացել են, սակայն կապալով են տալիս իրենց հողերը: Պարապմունքը երկրագործություն ու անասնապահություն է: Ունեն 598 դ. 400 ք.ս. վարելահող և 762 դ. արոտատեղի:

Դալլակլու (62°24'35"-40°18'40"). Ընկած է Հաղիս լեռան լանջին և բռնում է 4 դ. 1066 ք. սաժեն տարածություն, որից միայն 2 դ. 1248 ք.ս. շինություններն տակ: Գյուղի մեջ ոչ միայն գետ, այլև աղբյուր չկա, այնպես որ գյուղացիները ջրի համար շատ մեծ նեղություն են կրում, բերելով 0,5 կիլոմետր հեռու գտնվող աղբյուրից: Տավարը ջրելու համար կա մի ավազան այն ջրանցքի մոտ, որ գալիս է Աղմաղան լեռնաշղթայից, սակայն ամառը, երբ այս ջրանցքի ջուրը ցամաքում է, ավազանն էլ չորանում է:

Բնակիչները չիա թուրքեր են, որոնց մեծագույն մասը Երևանի գավառի Զառ գյուղից են գաղթել, իսկ մի մասը, մոտ 15 տուն, առաջացել է այն ծաղկունքցի հայից, որ գողության մեջ մեղադրվելով հանդիսավոր կերպով երդվել է իր անմեղության մասին՝ հանդցնելով ավետարանի առաջ դրված մոմը, սակայն էլի չեն հավատացել և գողացված գումարը դարձյալ պահանջել: Այս հանգամանքից նեղացած նա հեռացել է Դալլակլու և մահմեդականություն ընդունել: Ընդամենը 42 տուն են, 178 ար., 228 իգ., միասին՝ 406 հոգի: Պարապմունքը նույնն է: Ունեն 448 դ. 1260 ք.ս. վարելահող 199 դ. 720 ք.ս. արոտատեղի:

Կուլլի (62°25'30"-40°19'37"). Տեղավորված է մի բարձրավանդակի վրա՝ շրջապատված բլուրներով, բռնում է 5 դ. 390 ք.ս. տարածություն:

Գյուղում կա երկու ջրհոր՝ կուլի, որի պատճառով և գյուղը կոչվում է Կուլլի: Բացի սրանից կա նաև մի ավազան, ուր հավաքվում է Աղմաղանից եկող ջրանցքի ջուրը: Գյուղում եղել է հայկական մի եկեղեցի, որ քանդել են և նրա տեղում մզկիթ կառուցել. սրա շուրջը և մանավանդ հանդիպակաց բլրի վրա կան բավականաչափ դերեզմանաքարեր, սակայն առանց

գրության. գյուղի եզրին կա պահակատուն: Բնակիչները չիա թուրքեր են, Երևան քաղաքից, որ 1828 թ. փախել են Կարսի չրջանի Սոսգորտ գյուղը և այդտեղից 1850 թ. գաղթել այստեղ: Ընդամենը 49 տուն են, 183 արս., 151 իգ., միասին՝ 334 հոգի: Պարապմունքը նույնն է: Ունեն 513 դ. 1440 ք.ս. վարելահող, 642 դ. 2300 ք.ս. արոտատեղի:

Զորան-գյորուկմազ (62°27'37"-40°15'37"). Մի փոքրիկ աննչան գյուղ է Կարա-կալայի հարավային կողմը, մոտ 3 կիլոմետր հեռու:

Գյուղում կա մի եկեղեցու հիմնապատեր, բռնում է 8 դ. 1400 ք.ս. տարածություն. բնակիչները չիա թուրքեր են՝ Կարա-կալայից գաղթած 9 տուն. 45 արս., 43 իգ., միասին՝ 88 հոգի: Պարապում են խաչնարածությամբ և մասամբ երկրագործությամբ. ունեն 206 դ. 636 ք.ս. արոտատեղի և միայն 11 դ. 1000 ք.ս. վարելահող:

ԳԱՎԱՌԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՑԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Նոր-Բայազետի գավառը կառքի ճանապարհով հաղորդակցում է Երևան քաղաքի, Ալեքսանդրապոլի գավառի Ղարաքիլիսայի երկաթուղու կայարանի և Շարուր-Դարալագյազի գավառի Բաշ-Նորաշեն գյուղի հետ: Դեպի Երևան և դեպի Ղարաքիլիսա կան փոստային կառքեր և կայարաններ, թեև ճանապարհը ոչ ամբողջովին խճուղի է: Նոր-Բայազետից Բաշ-Նորաշեն տանող ճանապարհը, որ մեծ մասամբ չինված է նրա չրջակայքում գտնված գյուղերի ձրիաբար տված բանվորների ձեռքով, դեռևս չունի փոստային հաղորդակցություն: Գավառի կենտրոնական քաղաք Նոր-Բայազետը հեռու է Երևանից 116,25, Ղարաքիլիսայից՝ 130,5 և Բաշ-Նորաշենից՝ 130 վերստով: Գյուղերի միջև ձգվում են նեղ կածաններ, տեղ-տեղ էլ՝ սայլի հասարակ ճանապարհ: Քաղաքում և Դարաչիչակում կան ֆայտոններ և սահնակներ, ինչպես նաև ֆուրգոններ: Ելենովկում, Ալեքսանդրովկում, Օրդակլուում և Դարաչիչակի գյուղերում, Բասարգեչարում, Նադեժդինում կան ֆուրգոններ, իսկ սայլեր՝ բոլոր գյուղերում՝ բացի Քյանքյանի գյուղական հասարակությունից: Բեռնակրության համար գործ են ածվում նաև ձի, էշ, ջորի և մասամբ՝ եզ:

Պետական պաշտոնյաների համար յուրաքանչյուր գյուղ պարտավոր է ձի տալ՝ սահնակով յուրաքանչյուր վերստի համար երեք կոպեկ: Այս պարտադիր կոռը թեև պիտի կատարվի ձիատերերի կողմից հերթով, սակայն տանուտերերի աչառության պատճառով մեծ մասամբ ծանրանում է աղքատ և անազդեցիկ ձիատերերի վրա: Շատ անգամ տանուտերը կաշառքներ առնելով ազատում է հարուստ և ազդեցիկ ձիատերերին այս կոռից և բռնությամբ խեղճի և կամ իր հակառակորդի ձին քաշում, տալիս պաշտոնյային: Այս պատճառով և ճանապարհորդները սոխված են լինում բա-

վական երկար սպասել, իզուր ժամանակ կորցնել, մանավանդ որ ամեն մի գյուղ պարտավոր է ձի տալ միայն մինչև իր մերձակա գյուղը և ոչ ավելի հեռուն: Մի քանի գյուղերում հասարակությունը այսպիսի անարդարությունների վերջ դնելու նպատակով հանձնարարում է մի ձիապանի կամ կառապանի կատարելու այդ կոռը, խոստանալով իր կողմից էս վճարելու նույնչափ, որովհետև բացի այն, որ պաշտոնյանները երբեմն բոլորովին չեն վճարում, նաև վճարը համապատասխան չէ չարչարանքին. այսպես մի գյուղացի իր մի ձիով 5-10 վերստ անցնելու համար նախ իր դանդաղկոտությամբ անցկացնում է դրեթե մի ամբողջ օր, որովհետև պահանջած միջոցին եթե ձին հանդումն է, պետք է դնա բռնի բերի, եթե տանն է, մի քիչ դարի պիտի տա, հետո սրան-նրան պիտի դիմի թամբ, սանձ գտնելու, ապա ինքը ոտով պիտի գնա պաշտոնյայի հետևից, որպեսզի իր ձին ետ բերի, այնտեղ էլ մի քիչ պետք է սպասի որ ինքը և թե ձին հանգստանան, և այս բոլորի համար նա ստանալու է պաշտոնյայից ընդամենը 15-30 կոպ.: Այս բոլորի վրա պետք է ավելացնել, որ շատ անգամ ձին պահանջում են գործի, կալի, քաղի ժամանակ, երբ մշակը միայն օրական ստանում է 50-80 կոպ.:

Քաղաքում կա երկու հյուրանոց և մի քանի խան. կենտրոնական գյուղերումն էլ, ուր գտնվում է գյուղական դատարանը, սրա մի սենյակը կահավորված է և հատկացրած ճանապարհորդ պաշտոնյաներին իբր իջևան:

Փոստ և հեռագրատուն ամբողջ գավառի մեջ կա միայն Նոր-Բայազետում և Ելենովկում, իսկ ամառները՝ նաև Դարաչիչակում: Սոսկ փոստային բաժանմունք բացված է միայն Ներքին Ախտայում: Ամբողջ Բասարդեչարի և Ղարանլուղի ոստիկանական շրջանները զուրկ են փոստից, պաշտոնական թղթերի համար ոստիկանները պահակներ են ուղարկում Նոր-Բայազետ: Մի պատվիրած նամակ և կամ մի քանի ռուբլի ստանալու համար գյուղացիները 40-50 վերստ են անցնում ու վերադառնում:

Փոստն էլ ամեն օր չի գործում. շաբաթը երեք անգամ ստացվում է, երեք անգամ ուղարկվում դեպի Երևան և դեպի Ղարաքիլիսա: Դրամական գործողությունները կատարվում են շաբաթը միայն մի անգամ: Հեռագիրը խփվում է առավոտվա ժամը 8-ից մինչև երեկոյան ժամը 9-ը և ոչ ամբողջ օրը: Արտասահման հեռագրեր չեն խփում, որովհետև պաշտոնյանները օտար լեզուներ չգիտեն:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ

ԱՄՈՒՍՆՈՒԹՑՈՒՆ ԵՎ ՀԱՐՍԱՆԻՔԻ ՍՈՎՈՐՈՒԹՑՈՒՆՆԵՐ[297]

Հասակ. Այս գավառում, հավանորեն բնության ազդեցությամբ, մյուս, համեմատաբար ավելի տաք, գավառներից ավելի մեծ հասակում են ամուսնացնում թե աղջիկներին և թե տղաներին: Հնում աղջկան՝ 14-18, տղային՝ 18-25, այժմ աղջկան՝ 16-18, տղային՝ 21-30 տարեկանում են ամուսնացնում, եթե աղջկա տարիքը քսանից անցնում է՝ ասում են «դախացած է» (պնդացած):

Զինվորագրության չենթարկվելու արտոնություն ունեցողները չատ անգամ 18 տարեկան հասակում են ամուսնանում:

Ամուսնացողների հասակների համեմատությունը. *Ընդհանրապես ամուսինը կնոջից 2-10 տարով մեծ է լինում. մեծ մասամբ կույսը կույսի հետ է ամուսնանում, և միայն «տունը մնացած» աղջիկներն են այրի տղամարդկանց գնում: Շատ հազիվ է պատահում, որ երիտասարդը այրի կնոջ հետ ամուսնանա:*

Ամուսնացողներն ըստ ազգության. *Օտարազգիների հետ ոչ անցյալում, ոչ էլ այժմ ամուսնություն տեղի չի ունեցել: Նույնիսկ օտար գավառացիների հետ էլ հազիվ է պատահում: Շատ սովորական երևույթ է օտարությունից վերադառնալ հատկապես ամուսին ընտրելու համար:*

Օրորոցախազ կամ բեչքյարթմա. *Հնում հաճախ, իսկ այժմ երբեմն պատահում է, որ երկու գերդաստան, ցանկանալով բարեկամանալ միմյանց հետ, ուխտում են, որ եթե իրենց տարբեր սեռի երեխաներ ծնվեն՝ միմյանց հետ ամուսնացնեն: Եվ եթե ծնվում են՝ այս ուխտը սրբությամբ կատարում են, հավատալով, որ այդ ուխտի չնորհիվ է Աստված իրենց որդի պարգևել: Երբեմն էլ արդեն ծնված երեխաներին միմյանց հետ նշանում են՝ նրանց օրորոցների վրա խազ քաշելով:*

Ամուսնության զանազան դեպքեր. *Պատահում է, որ երկու ընտանիքներ, իրենց միջի արյան թշնամությանը վերջ տալու համար խնամություն են հաստատում: Այսպես՝ Խ. Հակոբը սպանել էր Կ. որդուն, և որպեսզի արյան վրեժխնդրություն տեղի չունենա, Հակոբը իր աղջկան տվել է սպանվածի եղբորը:*

Հաճախ պատահում է, որ երբ նշանադրվածներից մեկը մեռնում է, նրա քույրը (կամ եղբայրը) ամուսնանում է մյուսի հետ, որպեսզի նշանադրության ժամանակ կատարված ծախսերն իզուր չանցնեն: Այսպես՝ Հակոբ Շիկոյանի մեծ աղջիկը մեռավ, կրտսերը ամուսնացրին նույն փեսացուի հետ:

---

[297] *Բացի իմ հավաքածից, հատուկ իմ խնդրանքով նյութեր են հավաքել ինձ համար արժ. Եղիազար քահանա Տեր-Միքայելյանը և պ. Վ. Պետրոսյանը: Նկատի եմ ունեցել նաև Ս. Փիլոյանի «Կորած Մարգարիտը»:*

Պատահում է նաև, որ հոտաղը (մշակ) երկար ժամանակ հավատարմությամբ ծառայելով մեկի տանը՝ ամուսնանում է իր տիրոջ աղջկա հետ: Այս պատահում է երբեմն որպես գնահատություն և վարձատրություն նրա հավատարիմ ծառայության, երբեմն էլ որպես հետևանք զաղտնի սիրահարության:

Խնամության ատիճան. *Թեպետ պահանջվում է արյունակցության յոթ, իսկ ազգակցության հինգ ատիճան հեռավորություն ամուսնական զույգ կազմելու համար, սակայն զանազան միջոցներով մոտիկներն էլ են հատցնում: Իսկ եթե ոչ մի կերպ չեն կարողանում պսակի թույլտվություն ստանալ, ոմանք կատարում են հարսանիքի հանդես, և պսակի փոխարեն հարս ու փեսին դհոլ-զուռնի առաջնորդությամբ տանում եկեղեցի և նրա դուռը համբուրել տալիս ու դարձյալ նույն հանդիսավորությամբ վերադառնում: Ժողովրդական կարծիքը այժմ ներողամտությամբ է վերաբերվում դեպի սրանց: Այսպես է վարվել, օրինակ, Նորատուզում Միսաք Ստեփանյանը:*

Աղջկատես և «աղջիկ ճարել». *Հարսնացուի ընտրությունը՝ «աղջիկ ճարելը» հնում միանգամայն թողնված էր երիտասարդի ծնողներին, առավելապես մորը. «ամօթ ունեցող տղան» նույնիսկ թաքնվում էր, երբ նրա ամուսնության մասին խոսք էր լինում: Ամուսնացողի մայրը և եղբոր կանայք դերիներում, եկեղեցում և հարսնատներում ընտրում էին աղջիկ և որպեսզի կարողանան մոտից զննել նրան, մի որևէ պատրվակով դնում էին նրա տուն՝ աղջկատես: Վերջինիս ծնողները, իհարկե, հասկանում էին սրանց գալու բուն նպատակը, սակայն բոլորովին ցույց չէին տալիս, միանգամայն թվելով իրենց աղջկա բարեմասնությունները: Եկողները դիտմամբ խմելու ջուր էին ուզում, որպեսզի աղջիկը առիթ ունենա ներկայանալու, խոսեցնում էին նրան, ասեղը թելել տալիս, որ տեսնեն թե աչքերի արատ չունի՞ և այլն: Աղջիկատեսից հետո դերդաստանական խորհուրդ էր կատարվում, ուր հրավիրվում էր անչուշտ և նշանադրվողի մորեղբայրը: Աղջկան քննադատելիս առավելապես ուշադրություն էին դարձնում նրա մոր բարեմասնությունների վրա:*

Այժմ թեև որոշյալ չափով նույնը կատարվում է, սակայն նշանադրվող երիտասարդն այլևս այդպիսի չեզոք դեր չի կատարում. նա կամ ինքն է աղջկա հետ ծանոթանալով սիրում, ընտրում և կամ գոնե մոր ընտրածին իր հավանությունը տալիս:

Խոսք առնեք. *Հարսնացուի ընտրությունից հետո հանձնարարում են մի բարեկամի, որ խոսք բաց անի հարսնացուի ծնողների մոտ իրենց մտադրության մասին և իմանա, թե արդյոք կտա՞ն աղջիկը, եթե ուզեն: Այսպես էին վարվում և վարվում էլ են, որովհետև մերժումը տղայի վարքը ձգում է, և շատ ծնողներ էլ անպատվություն են համարում իրենց, որ այս կամ այն հարևանից մերժված երիտասարդին իրենք աղջիկ տան, մի՞թե իրենք*

այդ հարևաններից ստոր են, կամ իրենց աղջիկը նրանց աղջկանից պակաս դեղեցիկ է:

Աղջիկ ուզել. Սովորաբար տղայի հորեղբայրը կամ մորեղբայրը, երբեմն էլ փեսան, մի ուրիշ ազգական և կամ քահանան, ինչպես նաև հայրը, գնում են աղջկա տուն «խնամախոս»: Շատ անգամ երբ խնամախոսը մոտենում էր աղջկա տան դռանը՝ կանգնում էր և ասում. «Էկա հա, աչ ոտքս եմ քցում»:[298]

«Բարով ես եկեր, Աստված խերլի (չահավետ) անա»,- պատասխանում էին աղջկա ծնողները՝ ներս հրավիրելով, որովհետև արդեն հայտնի էր լինում իրենց նրա գալու նպատակը:

Խնամախոսը հետզհետե խոսքը կենտրոնացնում է նշանվող տղայի դերպատանի և իր բարեմասնությունների վրա. «Գիտեք իմալ տղա է, պիանություն (հարբեցողություն, ռուսերեն ПЬЯНСТВО բառից) չի գինա, բոշ-բողազ (քաղցած) ման գալ չի գինա, գիշեր-ցերեկ իրա բանին, իրա տան հոգսը կը հոգա, չյուրմի (մինչև) իրկուն արուն քրտինք կը թափա»:

Որքան էլ տրամադիր լինեն աղջիկը տալու, այնուամենայնիվ առաջին անգամին մերժում են, պատճառաբանելով թե՝ «ժամանակ չունինն», միջոցները չեն ներում: Բայց երբ խնամախոսը կրկին պնդում է՝ ժամանակ են խնդրում մտածելու, այս արդեն նշան է համարվում, որ տրամադիր են տալու, որովհետև հակառակ դեպքում կտրուկ կերպով ասում են, թե աղջիկը դեռևս փոքր է, «քնում ա՝ չի զարթնում»:

Մեկ էլ, եթե մտադիր են տալու՝ խնամախոսին հյուրասիրում են, իսկ եթե մերժելու են, չեն հյուրասիրում: Երբ խնամախոսը կրկին անգամ դիմում է վերջնական պատասխան ստանալու, սրանք պատասխանում են: «Գալում են՝ թող դան, բարով գան»:

Եթե չեն կարողանում անմիջապես նշան տանել, նշանադրվողների հայրերը մի որևէ խանութում կամ գինետնում, այդում, մի քանի մարդկանց ներկայությամբ մի երկու շիշ օղի են դատարկում, միմյանց խնամի անվանելով և բարեմաղթելով, որ «Աստված խեր տա», «Աստված ամոթալի չթողա»: Ի վերջո տղայի հայրը մի մատանի է տալիս աղջկա հորը՝ իբր ժամանակավոր առհավատչյա: Հաճախ այս կերուխումին քահանա էլ է ներկա լինում:

Վերջին ժամանակներս սկսել են կանանց խնամախոս ուղարկել, որոնք և հանձնում են մատանին աղջկա մորը:

Նշանդրեք. Մի քանի օր կամ շաբաթ հետո տղայի հայրը իր տղամարդ և կին բարեկամների հետ, միայն առանց փեսացուի, գնում էին հարսնացուի տուն՝ տանելով «սեղան»՝ այսինքն մի սկուտեղի մեջ ածած չոր

---

[298] Դռան շեմքից անցնելիս նախ աջ ոտքն եմ դնում, որպեսզի բարեբեր լինի գալուստը:

մրգեր, մի գլուխ շաքար, լիմոններ, կոնֆետներ: Սրանց վրա դրված էր լինում հարսնացուի համար ոսկիներ և մի մատանի: Հարսնացուի տանը մի երկու բաժակ օղի խմելուց հետո[299] փեսացուի հայրը հայտնում էր իրենց գալու նպատակը և վերցնելով «սեղանի» վրայից մատանին՝ տալիս էր հարսնացուի հորը: Սա էլ վերցնում, ուղարկում էր հարսնացուին, որ մյուս սենյակում կանանց մոտ էր լինում: Ապա հարսնացուի քահանան, որ անշուշտ հրավիրված էր լինում, և կամ, եթե սա բացակա էր, քավորը, առաջարկում էր փեսացուի տղամարդ բարեկամներին հարսնացուին «խալաթ» (նվեր) տալ: Նախ քավորը և ապա մյուսները տալիս էին կամ ոսկի և կամ արծաթե դրամ: Հավաքողը բարձրաձայն հայտարարում էր բոլորին՝ յուրաքանչյուրի տված նվերը՝ ասելով. «Շէն կենայ այսինչ բարեկամը, հարսին խալաթ տուեց այսքան դրամ»:

Այս ժամանակ «սեղանը» տանում էին կանանց բաժինը, և մինչդեռ մեկը օղի էր մատուցում, տան տիկինը «սեղանի» և իրենց մրգեղենից մի-մի ափսե լցնելով բաժանում էր օղի ընդունողներին: Սրանք էլ երկար բարեմաղթություններ անելուց հետո վերադարձնում էին բաժակը, մի քիչ ուտում մրգեղենից և մնացածն ածում իրենց թաշկինակի մեջ և ամրացնում գոտկում, որ տանեն տուն, ուր քնհատ երեխաներն անհամբերությամբ սպասում էին մրգեղենին: Սրանից հետո նախ տղամարդկանց և ապա կանանց ընթրիք էին տալիս, գեվնդ (կլոր պար) պարում և առավոտյան ցրվում:

Կես դար առաջ համեմատաբար ավելի ազատամիտները մի քանի երիտասարդներ ուղարկելով, բերել էին տալիս փեսացուին, որ լուռ ու մունջ նստում էր մի անկյունում: Ընթրիքի ժամանակ նրա գլխին մի թաշկինակ ձգելով՝ երեսը ծածկում էին, որպեսզի աները նրա հաց ուտելը չտեսներ: Անպարկեշտություն էր համարվում նաև աներոջ և սրա չափահաս բարեկամների հետ ընթրիքի ժամանակ խոսելը:

Այժմ նշանդրիքին, անշուշտ, փեսացուն ներկա է դառնում. «սեղանը» այժմ էլ տանում են, որի վրա բացի մատանուց և ոսկիներից՝ շատ անգամ դրված են լինում նաև ոսկե ապարանջաններ, գինդեր, ժամացույց և այլն: Հարսնացուի քահանան առաջ է բերել տալիս հարսնացուին, որի երեսը բաղդադիայով ծածկված է լինում: Քահանան փեսացուի ձեռքից բռնած տանում՝ կանդնեցնում է հարսնացուի հանդեպ, սրա երեսից բարձրացնում է բաղդադիան՝ որ փեսացուն տեսնի նրա երեսը՝ ասելով. «Մենք անպարտ, դուք պարտական, լավ տեսեք իրար, որ ձեր համաձայնությունը տաք»: Հետո հարցնում է փեսացուի համաձայնությունը՝ հարսնացուի հետ հոժարակամ նշանադրվելու մասին: Փեսացուն բարձրաձայն հայտնում է իր համա-

[299] Օղին անպատճառ ուղարկվում է փեսացուի տնից, բայց ցույց չի տրվում հրավիրյալներին:

ձայնությունը: Բայց, երբ քահանան նույն հարցը տալիս է հարսնացուին՝ սա լուռ է մնում: Բարեկամուհիները հրում են հարսնացուի գլուխը, որ խոնարհացնի ու սրանով հայտնի իր համաձայնությունը, սակայն հարսնացուն համառում է: Այդ ժամանակ քահանան առաջարկում է. «Դեհ լավ, եթե համաձայն ես, իմ ավետարանս համբուրիր»: Այս անգամ հարսնացուն համբուրում է ավետարանը: Քահանան անմիջապես խնդրում է մատանին, և մի ափսեի մեջ դրած տալիս է քավորի ձեռքը: Ապա օրհնում է նշանը և վերցնելով մատանին տալիս է փեսացուին, որ դնի հարսնացուի աջ ձեռքի մատը: Հետո գլուխ գլխի է դնում, Մաշտոցը գլխների վրա դրած՝ «պահպանիչ» ասում: Երբ ավարտում է՝ ձայն է տալիս. «Աստված չնորհավոր անե, աչքներդ լուս լինի»: Նույնը կրկնում են բոլոր բարեկամները: Հետո քահանան մի ափսե է ուղում և առաջարկում է փեսացուի տղամարդ բարեկամներին հարսնացուին խալաթ տալ: Այս գումարը հետո հանձնում են փեսացուի հորը՝ որ ոսկիներ կամ ուրիշ զարդեր դնի և բերի հարսնացուին: Հետզհետե այս խալաթ տալը վերջանում է: Հին ժամանակի նման այժմ էլ «սեղանը» բաժանում են կանանց մեջ, ընթրում, պարում և ցրվում: Զոքանչը փեսացուին ճանապարհ ձգելով՝ նրա ընկերներից մեկին հանձնում է մի «բողչա», որի մեջ լինում են եփած հավեր, թխվածքներ, հալվա և այլն, իսկ հարուստները սրա փոխարեն ուղարկում են գառ, որպեսզի հետևյալ օրը փեսացուն իր ընկերների հետ քեֆ անի: Նաղարա-զուռնի առաջնորդությամբ վերադառնում են փեսացուի տուն, ուր թեյ խմելուց հետո նույն նաղարա-զուռնով փեսացուն ընկերներով ճանապարհ է ձգում իր քավորին: Վերջին ժամանակիս ազատամիտները փեսացուին պահում են իրենց մոտ և հենց այդ գիշեր հարսնացուի հետ միևնույն անկողնում քնեցնում:

Հարսնատես. Հնում նշանադրությունից երկու-երեք շաբաթ հետո փեսացուն մի գիշեր մի քիչ չոր մերդ և մի որևէ ընծա կամ դրամ առած գնում էր աներանց տուն իր հարսնացուին տեսնելու: Զոքանչը ընդունում էր նրան և ցույց տալով, որ աներն այդ մասին ոչինչ չգիտի, ապա թե ոչ կբարկանա և դուրս կանի տանից փեսային, հյուրասիրում էր նրան ձվածեղով, որի վրա մի քանի կաթ յուր մեզից էր սրսկում, որպեսզի փեսայի սերը դեպի իր հարսնացուն սաստկանա: Հետևյալ ժողովրդական երգն այդ նախապաշարումն է ակնարկում.

Փեսեն էկավ տեղ արեք,
Շռով ձվածեղ արեք:

Ձվածեղը ուտելուց հետո հարս ու փեսան, հաճախ փոքրիկ քեռիներից մեկի հետ, առանձնանում էին մի որևէ սենյակ, ուր մինչև լույս քչփչում էին (սիրախոսում), սակայն հարսնացուն մինչև մի նվեր չառանար, չէր սկսի փեսացուի հետ խոսել: Այս ընծան կոչվում էր «խօսալեհ»:

Այժմ գրեթե ամեն շաբաթ երեկո փեսացուն առանց քաշվելու աներոջից՝ գնում է իր հարսնացուի հետ դիշերելու և նույնիսկ քնում է նրա հետ միասին: Այս ծայրահեղությունը թուլյատրվում է՝ մինչդեռ ամոթ է համարվում ցերեկով աներանց տունը մտնելը կամ աներանց ներկայությամբ հարսնացուի հետ խոսելը:

Ջխոսկանությունը այս գավառում ևս հարսնացուի առաքինությունն է կազմում, և նա փեսացուի ոչ մի բարեկամի հետ, բացի մանր երեխաներից, իրավունք չունի խոսելու:

Փեսախում. *Երբեմն հարսնացուի ծնողները և նրա ազգականները հրավիրում են փեսացուին իր ընկերներով իրենց մոտ ընթրելու, զվարճանալու: Այս հրավերքը **փեսախում** է կոչվում: Հաճախ փեսային էլ մի որևէ ընծա են տալիս:*

Հարսահանեք. *Մայիսի մեկին, Համբարձմանը, Վարդավառին, Աստվածածնին, ս. Խաչին փեսացուի մայրը մի որևէ բացօթյա տեղ հրավերք է սարքում և հրավիրում է հարսնացուին և նրա ու իր ազգականուհիներին: Այսպիսի հրավերքները կոչվում են **հարսահանեք**, այսինքն հարսին դուրս, զբոսանքի հանելու հրավերք և միշտ բացօթյա տեղ են կատարվում, որովհետև մինչև պսակը հարսնացուն փեսացուի տունը չի մտնի: Այս հրավերքներին փեսացուն, ինչպես և ոչ մի տղամարդ, չի մասնակցում: Փեսացուն իր մի քանի ընկերներով մի քիչ հեռու ման է գալիս և այնտեղից դիտում իր հարսնացուին: Զոքանչը մեղքանալով՝ մի չիշ օղի, մի քիչ էլ ուտելեղեն ուղարկում է նրան, որ նա էլ իր ընկերների հետ զվարճանա:*

Փայեր. *Բարեկենդանին, Մաղկազարդին, Լուսավորչին, Համբարձմանը, Աստվածածնին և ս. Խաչին փեսացուի տանից հարսնացուին «փայ» (բաժին), ընծաներ են ուղարկվում՝ մի սկուտեղ չոր մրգեր, թխվածքներ, գլխի շալ, կոշիկներ, զարդարանք և այլն: Հարսնացուի մայրն էլ այս առիթով հրավիրում է փեսացուի և իր ազգականուհիներին և հյուրասիրում ընթրիքով: Երբեմն էլ հարսնացուի մայրը մի չաբաթ երեկո մի դառ, մի քանի չիշ օղի, բրինձ, յուղ և թխվածքներ է ուղարկում փեսացուին, որ հաջորդ կիրակի օրը իր ընկերների հետ գնա դաշտը քեֆի: Առանձին ուշադրության արժանի է Մաղկազարդի փայը, որովհետև հանձնվում է եկեղեցում: Այդ երեկո բոլոր նշանադրված աղջիկներն իրենց մայրերի ուղեկցությամբ գալիս են եկեղեցի. գալիս են նաև փեսացուների մայրերը՝ բերելով իրենց հետ հարսնացուի համար բազդատի, չիքիլա, կոշիկ, գլխարկ և այլն, որոնք և հենց եկեղեցու մեջ հանձնում են հարսնացուի մորը: Հարսնացուի ձեռքը խաչաձև մոմ տալու սովորությունն այս գավառացիների մեջ չկա: Փեսացուի այն ազգականուհիները, որոնց ամուսինները հարսնացուի նշանադրության ժամանակ խալաթ (ընծա) չէին տվել, այս երեկո են բերում և*

հկեղեցում հանձնում նրա մորը: Հարսնացուի մայրը փայ և խալաթ տվողներին հաճախ հրավիրում է իր մոտ թեյի և ընթրիքի:

Նշանադրության ընթացքում եթե հարսենց կամ փեսայենց տանը որդեծնություն պատահի, մյուս կողմն անշուշտ մի գլուխ շաքար ընծա է ուղարկում: Այս սովորությունը շատ հին է և ընծան յազդանդ է կոչվում:

Երբ ննջեցյալ էր լինում, դարձյալ մյուս խնամիները շաքար, գլխի աղլուխ, «բոխչա»՝ այսինքն գաթաներ, կերակրեղեն և այլն էին ուղարկում: Երբ օտարությունից մեկը վերադառնում էր՝ խնամիները մի գլուխ շաքար էին ուղարկում իբր «գալ-բարի»:

Տուն կանչել. Երբ հարսանիքի օրերը մոտենում են, հարսնացուի բարեկամներն սկսում են հարսնացուին «տուն կանչել»՝ հրավիրել իրենց մոտ մի երկու օր մնալու, և մի որևէ ընծա են տալիս:

Ղալան կտրել. Հարսանիքից 2-3 շաբաթ առաջ փեսացուի հայրը քավորի և մի քանի բարեկամների հետ գնում է հարսնացուի տուն՝ տանելով իր հետ մի գլուխ շաքար, մի փարչ օղի, մի չալ կամ մի մինթանացու՝ հարսնացուի մորը իբր կաթնագին կամ **մարամանդիլ**, մի չուխացու մահուդ հորը՝ իբրև **«ամակ հախի»** (երախտիքի վարձ): Երբ իրենց տնից դուրս էին ելնում, հաճախ փեսացուի հայրն ասում էր. «Եա Տէր Աստուած, դու բարի սհաթի ռաստ բերես, խնամուն կալես կապես, աւելի բան չուզի»: Եվ երբ մտնում են հարսնացուի տունը՝ խնամին ընդառաջ գալով ասում է.

—Բարով էկաք, լավ լիքը գաք:

—Փառք Աստծու, լիքն ենք,- պատասխանում է քավորը:

Քիչ նստելուց և մի քանի բաժակ օղի խմելուց հետո քավորը ասում է. «Ուզում ենք մեր հարկն սկսենք... ինչ որ բերել ենք պիտմա ընդունես, մէկ կծած խնձոր ա պիտմա դապուլ աննես»:

Հետո ցույց են տալիս բերած ընծաները և հարցնում, կամ ուղղակի առաջարկում 30-50 ռ. իբր **բաշլղ** (գլխագին): Առաջներում այս գումարի վերաբերությամբ երկար սակարկություն էր տեղի ունենում, որ հաճախ անբավականությունների տեղիք էր տալիս: Այժմ կամ բոլորովին և կամ շատ չնչին գումար են տալիս: Վերջապես որոշում են նաև **«խորակը»**, այսինքն թե հարսանիքի ժամանակ փեսացուի հայրն ինչ պիտի ուղարկի խնամուն՝ հյուրերին հյուրասիրելու համար: Թե առաջները և թե այժմ ուղարկում են 12 նուկի[300] օղի, 7 լիտր[301] միս, 5 լիտր բրինձ, 1 լիտր յուղ, 2 լիտր չարազ (չոր միրգ). այս բոլոր հաչիվները վերջացնելուց հետո որոշում են հարսանիքի օրը:

Քավորի թամբեհ. Հարսանիքից երեք օր առաջ փեսացուի հայրը մի բարեկամի ձեռքով ուղարկում է քավորին մի գլուխ (25-30 փունտ) շաքար,

---

[300] Նուկի՝ 12 փունտ:
[301] Լիտր՝ 3 փունտ:

մի չիշ օղի կամ ռոմ, չաուերը նաև 8-10 ռ. դրամ, և խնդրում, որ պատրաստվի իր տղի «խաչը բռնելու»: Քավորը հյուրասիրում է բերողին:

Բոյ չափեք. Հարսնացուի հարսանեկան շորերը կեսրանքն են պատրաստում,[302] ուստի և մի օր հավաքվում են բարեկամ կանայք շորերը ձևելու և կարելու: Մինչդեռ սրանք հյուրասիրվում են փեսացուի մոր կողմից, մեկ կամ երկու կին մի թաշկինակով չոր մրգեր առած դնում են հարսնացուի տուն, այստեղ այս բերած քաղցրեղենը տալիս են հարսնացուին,[303] որպեսզի հարս ու փեսա իրար հետ միշտ քաղցր ապրեն, և հարսնացուի չափը առնում, վերադառնում են ու հանդերձը ձևում: Ձևող կինը մկրատը դնում է կտորին և ասում. «Մկրատը չի կտրում»: Փեսացուի մայրը մի նվեր է տալիս նրան, որից հետո ձևում են և բարեկամ կանանց մեջ բաժանում կարելու:

Տաշտադրեք. Հարսանիքից երկու օր առաջ, սովորաբար հինդշաբթի օրը, փեսացուի տանը «տաշտադրեք» է լինում, պատրաստելու հարսանիքի համար հաց: Հավաքվում են հարս, աղջիկ ու չամուսնացած երիտասարդներ: Մի պառավ կին, հացթուխը, դնում է տաշտը հացատան մեջտեղը, չորս մոմ վառում տաշտի չուրջը, մի-մի մոմ էլ բաժանում այդտեղ հավաքված այդ հարս, աղջկան ու երիտասարդներին[304] և մաղը ձեռքն առնելով, բարեմաղթում, որ ուրախության, բախտավորության հաց լինի, և ապա հրավիրում իրեն նվերներ տալ, որպեսզի սկսի ալյուրը մաղել: Նախ փեսացուի մայրը, քավորկինը, փեսացուն և ապա այդ հրավիրյալները դրամ են ձգում մաղի կամ տաշտի մեջ: Ապա նա սկսում է մաղել և հետո հունցել, իսկ հրավիրված երիտասարդ-երիտասարդուհիները տաշտի չուրջ պար բռնած, վառած մոմերը ձեռներին «յայլի»-ներ երգելով պարում են: Խմորը հունցելուց հետո մի թեթև ընթրիք է մատուցվում բոլորին, որից հետո ցրվում են: Մնում են միայն մի քանի մոտիկ ազգականուհիներ՝ հաց թխելուն օգնելու: Հարսնացուի տանը տաշտադրեք տեղի չի ունենում:

Եզ մորթեք. Հացի պատրաստությունից հետո, հետևյալ օրը, ուրբաթ, առավոտյան, մսի պատրաստությունն են տեսնում: Փեսացուի հայրը իր բարեկամներին հավաքելով բերել էր տալիս իր դռանը մի եզ կամ կով, որի ոտքերը կապում էին և պառկեցնում, երեսը դեպի արևելք դարձրած: Նաղարա զուռնան սկսում էր ածել. մսագործը դանակը ձեռքին կանգնում էր և չէր մորթում՝ մինչև որ փեսացուն չէր գալիս մի «խալաթ» տալիս նրան և ոտքը չէր դնում եզի վրա: Եվ երբ մսագործը «Աստված չնորհավոր անե» ասելով, դանակով խաչ էր քաշում եզան կոկորդին և մորթում, փեսացուի

---

[302] Մի քանի գյուղերում կեսրանք՝ ստացած բայլղի դրամով:

[303] Հարսնացուն մրգեղենը անմիջապես մորն է հանձնում, որովհետև օտարների ներկայությամբ կեսրանց տնից բերված բաներից ամոթ է համարվում ուտել:

[304] Այժմ այլևս հանդիսականներին մոմեր չեն բաժանում, այլ միայն տաշտի և մաղի չուրջն են վառում, այն էլ երբ ալյուրը արդեն մաղում վերջացնում են:

մայրը մի կողպեք և քավորը մի դանակ բերում, թաթախում էին արյան մեջ և փակում էին: Կողպեքը փեսացուի մայրը պահում էր իր մոտ և բաց անում հարս ու փեսի թագվերացից հետո, իսկ դանակը փեսացուն դնում էր իր գրպանը և բաց անում առաջաստի դիշերը: Եթե այսպես չանեին, փեսացուի թշնամին կարող էր եկեղեցի գալ, կամ պսակ գնալու մեջոցին մի կողպեք կամ դանակ փակել և այսպիսով նորափեսային «կապ» դցել՝ զրկել առնականությունից:

Քաղաքում փեսացուի մայրը թաթախում է ձեռքը նույն եզան արյան մեջ և խաչաձև քսում տան դռան ճակատին, որպեսզի չար աչք չդիպչի օջախին:

Մինչդեռ մսագործը քերթում է, կարատում եզը, հարս-աղջիկ երիտասարդների հետ պար բռնած պարում են, իսկ փեսացուն մի քանի երիտասարդների հետ՝ օղի են հրամցնում սրան-նրան: Եզ մորթելի սովորությունը քաղաքում արդեն վերացել է, գյուղերում էլ վերանում է:

Խնդրանք. Եզմորթելի մեջոցին փեսացուի տանից մարդիկ են ուղարկվում՝ բարեկամներին և ծանոթներին այդ երեկո հարսանիք հրավիրելու:

Հրավիրելու գնացողները կոչվում են խնդրակ: Սրանք լինում են կամ երկու երիտասարդներ, կամ մի պառավ կին և մի փոքր տղա: Երիտասարդները հրավիրվում են փեսացուի հոր, իսկ պառավը՝ փեսացուի մոր կողմից: Տղամարդ խնդրակներն իրենց հետ փարչով օղի էին վերցնում, և եթե հրավիրյալը համաձայնում էր հրավերն ընդունելու՝ իր համաձայնությունը հայտնում էր մեկ կամ երկու բաժակ օղի խմելով և բարեմաղթություններ անելով: Եվ որպեսզի կարողանային հաշվել, թե հրավիրյալներից քանիսը խոստացան գալ, որպեսզի ըստ այնմ պատրաստություն տեսնեն, նախապես հաշված փայտե դդալներից կամ լուցկու արկղիկներից մի-մի հատ նվիրում էին հրավերն ընդունողներին: Քաղաքում հրավիրյալների անունները գրում էին մի թերթի վրա, և հրավիրյալն իր ձեռքով իր անվան դիմաց գրում էր՝ եթե գնալու էր՝ «բարի է», իսկ եթե չէր ուզում գնալ՝ «չնորհակալ եմ»: Խնդրակներին չոր միրգ կամ սև փող են նվիրում:

Վերջին ժամանակներս քաղաքում ձեռագիր կամ տպված հրավիրագրեր են ուղարկում, կես գրաբար, կես աշխարհաբար գրված՝ միայն փեսացուի հոր անունից, այսպես...(այսինչը) խնդրում է Ձեզ հանդերձ ընտանյոք գալ և վայելել ուրախություն հարսանյաց որդվո իմո (այսինչի) ընդ օրիորդին (այսինչ), այսինչ ժամանակ:

Նույն խնդրակներն երեկոյան դեմ, երբ արդեն հարսնացուի հորը խոստացված «խորակը», միսը, բրինձը և այլն, ուղարկված է լինում, մի գլուխ չաքար առած, գնում են հարսնացուի տուն և հայտնում, որ այդ պիշեր գալու են նրանց մոտ հյուր: Հարսնացուենք մի ուրիշ գլուխ կամ նույն գլուխ (25-30 ֆ.) չաքարը նույն խնդրակի միջոցով ուղարկում են թագվորենց,

ասելով, թե բարի գան, մեր գլխի վրա գան, մեր աչքն էլ լուս լինի, իրենց աչքն էլ:

Պետք է ասել նաև, որ ընդհանրապես շատ մարդ հրավիրելու պատճառն այն է, որ ամեն մի հրավիրյալ «ծաղին» մասնակցելով, «խալաթ» տալով լիուլի վճարում է այն ծախսը, որ նրա համար արվում է, այս պատճառով էլ շատ նեղանում են, երբ մինը մերժում է գնալ:

Գերեզման օրհնեք. *Երևկոյան մոտ փեսացուն մի քանի երիտասարդ ընկերների հետ մի շիշ օղի և մի քանի դաթա առած՝ քահանայի առաջնորդությամբ գնում են գերեզմանատուն, ուր իրենց հին և նոր ննջեցյալների գերեզմաններն օրհնել տալուց հետո լսում են օղին՝ ննջեցյալների հոգուն արքայություն բարեմաղթելով և վերադառնում:*

Թագավոր նստել. *Երևկոյան դեմ նաղարա-զուռնան նախ փեսացուի և հետո հարսնացուի դռանը՝ մի բարձր տեղ կանգնած նավոզա է տալիս՝ ազդարարում է հարսանիքն սկսելու մասին՝ ածելով «սահարի» եղանակը:*

Նավոզա տալուց հետո հարսնևորներն սկսում են հավաքվել. գյուղերում շատ անգամ նաղարա-զուռնան փողոցի-փողոց անցնելով, հավաքում է հարսնևորներին և բերում հարսանքատուն՝ փեսայի տուն: Այստեղ, բակում վառվում է մի մեծ չամալ՝ ձիթհուտած կամ նավթհուտած ցնցոտիներից պատրաստած ճրագ, որ վառվում է մի բարձր ձողի ծայրին: Սրահում, մի սեղանի վրա չարված էին լինում չոր մրգեղեններով լի ափսեներ, օղու և գինու շշեր, մոտն էլ մի դատարկ ափսե: Սեղանի մոտ մի կին և մի տղամարդ կանգնած ընդունում էին հարսնևորներին և մի-մի բաժակ օղիով հյուրասիրում տան գլխավորներին: Սրանք էլ 1-3 ռ. «խալաթ» էին ձգում ափսեի մեջ,[305] և ապա տղամարդը գնում էր դոմ, որտեղից անասուններին հեռացրել էին, ավլել և փսխաթներով ու կարպետներով զարդարել. կինը՝ հացատուն, իսկ երեխաները՝ դոմի սաքուն: Երբ գալիս էր քահանան, բոլորը ոտի էին կանգնում և հրավիրում նրան վերև, մեծ եզան կանգնած տեղը, ուր նաև մի ներքնակ էր ձգած լինում:

Երկու սաղիներ (մատուռակ) հարսնևորներին չարունակ օղի էին հրամցնում. սրանցից մեկը օղու ահագին կուժը կողքին կանգնում էր դոմի մեջտեղում, մյուսը՝ ձեռներին մի-մի ափսե, մեկի վրա մի քանի բաժակ, մյուսի վրա չոր մրգեղեն՝ գալիս կանգնում էր առաջին սաղիի առաջ, օղիով լցնում բաժակները և գնում, բաժանում հարսնևորներին: Ամեն մեկը վերցնում էր բաժակը և ասում՝ դառնալով դեպի քահանան. «Օրհնյա տեր», դեպի հարսնևորները՝ «Կենդանություն, Աստված չնորհավոր անի», փեսացուի հորը՝ (այսինչ) «Ջան, աչքներտ լուս ըլնի, Աստված միասին ծերացնի», փեսացուին՝ (այսինչ) «Ջան, բարով վայելես». ապա կրկին բոլոր

---

[305] *Այժմ հետզհետե վերանում է:*

հարսնևորներին՝ «էս ուրախութիւնը ամեն հայ քրիստոնեի տանը կամենա Աստված»: Ասելով այս բարեմաղթութիւնը՝ խմում էր և դնելով բաժակն ափսեի մեջ, մյուս ափսեից փոքր-ինչ «չարազ» (չոր մրգեղեն) էր վերցնում, ուտում:

Երբ հարսնևորների մեծագույն մասը եկած է լինում, քահանայի առաջարկով գնում են քավորին բերելու: Մի ծերունի և բավականաչափ երիտասարդներ, մի-մի վառած մեղրամոմ ձեռներին բռնած, նաղարա-զուռնի և մի երկու չամալի առաջնորդութեամբ գնում են քավորի տուն, շատ անգամ մի պլուխ շաքար և մի չիչ օղի ևս տանելով: Այստեղ օղիով և երբեմն նաև բողբաչով հյուրասիրվելուց հետո վերադառնում էին հարսանքատուն, տանելով իրենց հետ ոչ միայն քավորի ամբողջ ընտանիքը, այլև մի քանի փեսա և ամուսնացած աղջիկ՝ իրենց բարեկամներով, որոնց քավորը ինքն իր կողմից էր հրավիրում, և որոնք կոչվում էին «**քավորի պըլընգ**»: Առաջից գնում էին նաղարա-զուռնան, սրանից հետո մի ծառա՝ գլխին դրած քավորի խալաթը, որ մի մեծ սկուտեղի մեջ երկու-երեք լիտր չամիչ ու խուրմա էր, չորս հատ մանրագլուխ շաքար՝ ամեն մեկի գլխին մի-մի վառած մեղրամոմ, երկու հատ էլ կես ֆունտանոց կերոններ:[306]

Խալաթի ետևից գնում էին խնդրակները՝ վառած մոմեր և չամալներ ձեռներին, շատերը պարելով. ամենից վերջը գնում էր քավոր աղան իր ընտանիքով:

Սրահի սեղանը ի պատիվ քավորին ավելի ճոխացած էր լինում, և քավորը, մանավանդ քավորկինը, բոլոր հարսնևորներից ավելի հյուրասիրվում էին:

Երբ քավորը նաղարի դղրդոցով ներս էր մտնում, բոլորը, բացի քահանայից, ոտի էին կանգնում և նրան վերև, քահանայի մոտ էին հրավիրում: Եվ երբ կրկին նստում էին, մեկ-մեկ ձայն էին տալիս. «Քավոր աղա, բարով, քավոր աղա, բարով»:

Խալաթի սկուտեղը դրվում էր քահանայի առաջ, որը մի երկու բուռ միրգ էր վերցնում «Աստված օրհնի քավոր աղին» ասելով, և հրամայում էր ման ածել և ցույց տալ բոլորին. ամենքը «Շեն կենա քավոր աղեն» էին ասում: Վերջում քահանան վերցնում էր երկու կերոնները և սկուտեղն ուղարկում կանանց բաժինը ցույց տալու, որից հետո արդեն հանձնվում էր քիլարչուն՝ հարսանիքի կառավարչին:

Քահանան կերոններից մեկը պահում է քավորին հանձնելու, իսկ մյուսը մի թրի հետ կապում է և առաջարկում չամուսնացած երիտասարդներին դնել և այսպիսով դառնալ **աղապ-պաչի** (չամուսնացածների սեթ): Քահանան ասում է. Օրհնեալ ժողովուրդ, եկեղեցու (այժմ քահանայի) օգուտն է, մի խնայեք, թաղավորին սիրողը Թող առաջ դա:

---

[306] Այժմ չաքարի փոխարեն դնում են կամ թեյի արծաթ գդալներ, կամ մի ուրիշ ընծա: Մոմերը վառում են սկուտեղի եզրերին:

Աճուրդը սկսվում է 20 կոպեկից և բարձրանում՝ հնում մինչև 70 կ., այժմ 2 ռ.: Գնողը վճարում է դրամը քահանային, համբուրում է նրա աջը և վերցնում թուրն ու մոմը:

Հինա-տանեք. *Ագապ-պաշու թուրը ծախելուց հետո տեղի էր ունենում հինատանեքը, որ այժմ բոլորովին վերացել է: Մի առաջամատուցյի կամ սկուտեղի մեջ ածում էին չարագներ և վրան դնում մի փունտ հինա, հարսնացուի համար գլխի շորեր և ոտնաման ու բոլորը կապում մի շալի մեջ: Փեսացուի մոտիկ նորահարսներից մեկը դնում էր այդ հինան իր գլխին այնպես, որ առանց բռնելու վայր չընկնի և մի ձեռքին մի վառած մեղրամոմ, մյուսին մի թաչկինակ առած՝ պարում՝ հինան խաղացնում, նրա շուրջն էլ հարս ու աղջիկ պարում էին: Մոտ կես ժամ փեսացուի դուռը այսպես պարելուց հետո «հինան» հանձնում էին մի երկու երիտասարդի, և դավուլ-զուռնի առաջնորդությամբ հարս ու աղջիկ դնում էին հարսնացուի տուն: Պետք է նկատել, որ տղամարդիկ չէին դնում: Հարսնացուի դռանը դարձյալ նույն հարսը «հինան» վերցնում, դնում էր իր գլխին և խաղացնում: Ուղեկցողները միանալով հարսնացուի տնից դուրս եկած հարս ու աղջկա հետ՝ պար էին բռնում նրա շուրջը: Կես ժամաչափ այստեղ ևս պարելուց հետո ներս էին դնում, և հինա խաղացնողն այստեղ ևս պար գալուց հետո մի ընծա էր ստանում և հինան հանձնում հարսնացուի մորը: Անմիջապես շաղախում էին հինան և հարսնացուի ձեռներին դնում:*

Հինա բերողներին պատվում էին մի-մի թեյի գդալ մեղր ուտեցնելով և մի-մի ափսե քիշմիշ, թխիլ և նոխուտ միասին խառնած լցնելով նրանց թաչկինակները, որ իրենց հետ տանեն:

Ապա հարսնացուենք պատրաստում էին «չապիկ փոխան» կոչվող խալաթը՝ չոր մրգեղենով մի առաջամատուցյի վրա դնում էին փեսացուի համար մի չապիկ, մի անդրավարտիք, մի թաչկինակ և մի զույգ գուլպա և կապելով մի շալի մեջ, դնում էին մի ուրիշ հարսի գլխի, պար ածում, և միևնույն ձևով ուղարկում փեսացուի տուն:

Շորօրհնեք. *Հնում հինա տանելուց, իսկ այժմ ագապպաշու թուրը ծախելուց հետո տեղի է ունենում փեսացուի շորօրհնէքը: Փեսացուի այն հանդերձները, որ հագնելու է պսակ գնալիս՝ բերում դնում են քահանայի առաջ, փեսացուն՝ ունենալով իր աջ կողքին քավորին, ձախին՝ ագապպաշին, չոքում էր (այժմ կանգնում է): Մի բաժակ գինի էլ դնում են հանդերձների մոտ: Քահանան օրհնում է հանդերձը և գինին տալիս փեսացուին՝ որ կեսը խմելուց հետո տալիս է քավորին խմելու: Երբեմն ագապպաշուն էլ են բաժին հանում: Հանդերձ օրհնէքից հետո հարսնևորները համբուրում էին մաշտոցը և քահանային խաչհամբույր տալիս: Ապա տղամարդկանց մատուցվում էր ընթրիք՝ բողբաչ, տոլմա և փլավ:*

Մինչդեռ տղամարդիկ ընթրում էին, կանանց բաժնում երեք կանայք չարազ են բաժանում. մեկը՝ մի բաժակ օղի կամ գինի է տալիս, վերցնողը օրհնելով հարս ու փեսին՝ խմում է. անմիջապես երկրորդ կինը «անուշ ըլի» ասելով մի թեյի գդալ մեղրի վրա երկու նուշ դնելով հրամցնում է, որ ուտի՝ բերանն անուշեցնի: Ապա երրորդ կինը մեծ սկուտեղից մի ափսեի մեջ քիշմիշ, թխիլ, նոխուտ և մի քանի կոնֆետ ածելով հրամցնում է: Սա հանում է թաշկինակը, փռում գոգը, ափսեն ամբողջովին դատարկում և թաշկինակը հանգույց ձգելով՝ ամրացնում գոտիից, որ տանի տուն: Մինչև մազան բաժանում էին, տղամարդիկ ավարտում էին ընթրիքը, ուստի և ամանեղենը հավաքում՝ կանանցն էին ընթրիք մատուցում:

Սափրելու ծես. *Ընթրիքից հետո փեսացուն «թագավոր էր նստում»՝ բազմում էր բերանքսվայր դրված մի կողովի (քթոց) վրա, որի տակ վառվում էր մի ձեթի ճրագ: Քավորը և ազապպաշին վառած կերոնները ձեռներին կանգնում էին նրա աջ և ձախ կողմը, իսկ երիտասարդները մի-մի վառած մոմ առած, շրջապատում էին նրան: Սափրիչը «Աստված չնորհավոր անե» ասելով սկսում էր ածիլել, և չերտ-չերտ մազեր թողնելով, կհարցներ. «Տղերք ջան, ով ա ուզում էս ածուն (կամ քյաս տունը) վեկալել»: Մեկը պատասխանում էր. «Ուստա ջան, ես եմ ուզում, լավ չաղկամ կըլի բուսած, առ մի չահի»: Եվ այսպես զանազան բանջարեղենի անուններ տալով և 5-20 կ. նվիրելով սափրել էին տալիս բոլորը: Երբ սափրիչն ավարտում էր՝ բոլորը միասին բղավում էին. «Աստված չնորհավոր անի»: Երբեմնապես էլ մեկը բղավում էր. թագավորը «թառն է»: Այս ժամանակ բոլորը միասին պատասխանում էին. «Աստծու գառն է»:*

Սափրելուց հետո ազապպաշին կամ մեկնույն սափրիչն սկսում է փեսացուի չորերը հագցնել, նախապես ցույց տալով և ամեն մի կտորը նրա գլխի վրայով երեք անգամ պտույտ տալով և գովելով: Այս միջոցին երիտասարդ մակարները պար բռնած յայլի ասելով պարում էին: Այժմ քաղաքում թե սափրելու և թե չոր հագցնելու սովորությունները վերացել են:

Ուսկապ. *Թագվորի չորերը հագցնելուց հետո՝ նաղարա-զուռնան կենտ պար էր ածում, և մի հարս ձեռին վարդաջրի[307] շիշը (գլխապ) կաքավում էր և մեջընդմեջ մոտենում՝ փեսացուի գլխին ու վրան վարդաջուր սրսկում, որպեսզի նրանից անուշահոտություն բուրի: Երբեմն այդ վարդաջրից սրսկում էին նաև քավորի, ազապպաշու և մազարների վրա:*

*Դեռ առաջին հարսը չդադարած կաքավելուց, մի ուրիշ հարս ձեռին մի կանաչ թաշկինակ (որ **ուսկապ** է կոչվում), սկսում է պարել և բերում ամ-*

---

[307] Վարդաջուրը այսպես էին պատրաստում. երկու չաբաթ առաջ ջրով լի չշի մեջ վարդ, երբեմն էլ մեխակ ու դարչին էին ածում, խցանով փակում պահում. վարդաջուրը խաղացնելիս՝ խցանի փոխարեն մի թափանցիկ չոր էին կապում բերնին, որպեսզի նրա միջից հոտավետ ջուրը սրսկվի:

բացնում է թագվորի կրծքին՝ աջ ուսից մինչև ձախ կռան տակ: Հնում շատ անգամ մի ուրիշ հարս էլ կաքավում էր ուսկապ կապողի հանդեպ մի փունտանոց շաքարի դլուխ ձեռքին բռնած, որպեսզի թագվորի «կանաչ կարմիրը»՝ ամուսնությունը, անուշ, բախտավոր լինի:

Հարսնահանեք. Ուսկապից հետո թագվորը քավորի և ազապպաշու, ինչպես և իր ծնողների ու բոլոր կին ու տղամարդ հարսնևորների հետ, գհոլդունի և չամալների առաջնորդությամբ և վառված մեղրամոմեր չատերի ձեռին, գնում են հարսնացուի տուն՝ **հարսնահանեք:**

Այստեղ, երբ փեսացուն մտնում է տղամարդկանց բաժինը, ուր խմբված էին լինում հարսնացուի բարեկամները, երեք անգամ խոր գլուխ էր տալիս: Իսկույն նրան պատասխանում էին՝ բարո՞վ, բարո՞վ թագավոր, ոտդ խեր ըլնի, վաճառդ շնորհավոր լինի, բարով վայելես:

Այս միջոցին մեկ էլ հարսնացուի եղբայրը վրա էր պրծնում և թագավորի քրոջը կամ եղբոր կնոջը համբուրում: Ապրի՞ս, ապրի՞ս, գոչում էին այս ու այն կողմից, «**խնամապաչ առավ**»:

Հետո նստում են, սկսում օղի խմել: Ապա հարսնացուի քահանան օրհնում է հարսնացուի հարսանեկան շորերը, որոնց մոտ գնում է նաև նշանի մատանին՝ մի բաժակ գինու մեջ ձգած:

Անմիջապես հանդերձները տանում են կանանց բաժինը, ուր հարսնացուի վարպետը, նա որ կար ու ձև է սովորեցրել, սենյակի վարագույրով առանձնացրած անկյունում՝ «փարտի ետևը», հագցնում է հարսնացուին՝ նախապես մի ընծա առնելով քավորից: Հետո կանչվում է հարսնացուի եղբայրը՝ դռտին կապելու, որ կապում է ասելով. «Գնա, քուրս, Աստված քեզ հաց տա»:

Մինչդեռ հարսնացուն հագնվում էր՝ փեսացուն իր մակարներով մտնում էր կանանց բաժին, իսկույն զոքանչն ու քեռիները գալիս համբուրում էին սրա երեսը: Մի տղա մատուցարանի մեջ չոր մրգեղեն, մի ուրիշը մի չիշ շարքաթ (մեղրաջուր կամ շաքարաջուր) և մի բաժակ բռնած առաջ էին գալիս[308] և իրենց ձեռքով խմեցնում և ուտեցնում թե թագվորին և թե նրա քավորին ու ազապպաշուն, իսկ հանդիսատես կանայք բղավում էին. «Նո՛ւշ, նո՛ւշ, նո՛ւշ (անուշ)»: Մի կին էլ նշախառն մեղր էր դդալով խրում թագվորի և նոր խնամիների բերաններըը:

Երբ այս հյուրասիրությունն ավարտվում էր, նաղարա-զուռնան սկսում էր կենա պար ածել: Հարսնացուի ազգականներից երկու հարս սկսում են պարել, մեկի ձեռքին վարդաջուր, մյուսին՝ կարմիր ուսկապ: Բավական պարելուց հետո նախ առաջինը վարդաջուր է սրսկում փեսացուի գլխին, հետո երկրորդը կարմիր ուսկապը կապում է նրա կրծքին՝ կանաչ ուսկապի

---

[308] Այս հյուրասիրության փոխարեն այժմ մրգեղենի սեղան են բաց անում և հյուրասիրում նոր խնամիներին:

վրա՝ խաչաձև: Այսպիսով կատարվում է պառավների օրհնանքը՝ «բարով կանաչ-կարմիրդ կապենք», այն է՝ բարով ամուսնանաս:

Ի վերջո քահանան գնում, բռնում է հարսնացուի կռնից, մյուսից էլ հարսնեղբայրը և բերում, կանգնեցնում թագվորի դիմաց՝ ձեռք-ձեռքի տալիս և սկսում պսակի խորհուրդը կատարել: Երբ ավարտում է՝ զուռնաչին «Տանում են, ադն ջան, տանում են»-ի տխուր եղանակն է սկսումածել: Հարսնացուի հայրն ու մայրը և մյուս մոտիկ ազգականները մոտենում են մնաս բարև ասելու, և սկսում են լաց լինել: Փեսացուի կողմի բարեկամները մխիթարում են. «Ինչ եք լալիս, աղջիկ եք տվեր եք, տղա եք առեր եք»:

Ի վերջո ուղևորվում են դեպի եկեղեցի. արշալույսը արդեն ծագելիս է լինում. առաջից գնում է զհոլ-զուռնան, եւսից պարող երիտասարդները, ապա հարսնևորները՝ շրջապատած թագվորին, որի ձախ կողմից գնում է թագուհին, հետո հարսնեղբայրը և հետո քավորը, իսկ աջ կողքից՝ ազապ-պաշին: Թագուհու եւսից նրա քղանցքները բռնած գնում էր հարսնաքույրը: Ավելի հին ժամանակներում թագվորը, որին աջ կողմից ուղեկցում էր քավորը, ձախից՝ ազապպաշին, բռնում էր մի թաչկինակի ծայրից, որի մյուս ծայրից բռնում էր նրան հետևող թագուհին՝ աջ կողմը հարսնեղբայրը, ձախ կողմը հարսնաքույրը: Թագուհու հայրն ու մայրը չեն գնում եկեղեցի: Թագվորի հայրը փոքր-ինչ մնում է սրանց մոտ մխիթարելու և ապա գնում է ուղղակի իրենց տուն:

Հարսնացուի ծառան փակում է հարսնացուի տան դարպասը և չի թողնում հարսնացուին տանելու՝ մինչև որ քավորը մի ընծա չի տալիս:

Մակարներից մի քանիսը հարսնացուի տանից խուփ, շերեփ, գդալ և գաթա են գողանում, որպեսզի նորահարսը խփի պես բերան խուփ՝ անխոս լինի, շերեփի պես բաժանարար՝ տնտես և գաթայի պես՝ դամաթով:

Կաքավելով ու կեցցեները բղավելով, երբ հասնում են եկեղեցի, ազապ-պաշին ձեռի թուրն երբեմն մերկացնելով, երբեմն էլ ոչ՝ հպում է դռան կամարակալ քարին, և այսպես բռնում, մինչև որ հարս ու թագվոր անցնում են նրա տակից և մտնում եկեղեցի: Այսպիսով նա «արգելում է չարքերին՝ վնասելու սրանց»: Միևնույն կերպ վարվում է նաև վերադարձին՝ ամեն մի դռնից մտնելիս:

Մինչդեռ եկեղեցում քահանան կատարում է պսակի խորհուրդը՝ հարս ու աղջիկ երիտասարդների հետ զավթում պարում են: Եվ երբ քահանան ավարտում է՝ հարս ու թագավոր ձեռք-ձեռքի բռնած կանգնում են եկեղեցու սեղանի առաջ. քահանան մի «չուշպահ» (թաչկինակ) է կապում թագավորի կրծքին և Ավետարանը դնելով վրան՝ տակից աջ ձեռքով բռնել է տալիս: Ապա հարսնևորները մոտենում, համբուրում են Ավետարանը, թագվորի և թագուհու գլուխները և մի քանի կոպեկ ձգում տիրացուի բռնած ափսեի մեջ հօգուտ քահանայի:

Եկեղեցուց դուրս գալուն պես՝ սկսում են հրացաններ արձակել, բղավել, գոռոմարտել, կաքավել և կամաց-կամաց գնալ դեպի թագվորի տուն, միայն ոչ եկած փողոցով: Երբ աղգականների տան մոտից անցնում են, իսկույն «սեղան» են դուրս բերում՝ խմիչք, չոր մրգեղեն, ուտելիքներ են առաջ բերում և հյուրասիրում թագավորին և հարսնևորներին: Մոտիկները գառ են բերում և թագավորի առաջ ուզում են մորթել, քավորը մի նվեր տալով թույլ չի տալիս: Ուրիշներն էլ հաց, խորոված, սուրճ են առաջ բերում, և եթե բերողները հեռավոր, աղքատ մարդիկ են լինում՝ քավորը մի քանի կոպեկ ընծա է տալիս: Ուրախությունը իր գագաթնակետին է հասնում, երբ մոտենում են թագավորի տան դռանը, ուր ճոխ «սեղան» է բացված լինում: Մակարները սկսում են երգել.

Թագվորամեր դուրս արի,
Տես քե ինչեր եմ բերե.
Թունաքեր վառոդ եմ բերե,
Տախտ ավլող եմ բերե.
Կովեր կթող եմ բերե,
Գլոխատ դմփող եմ բերե:

Թագվորամերը, թագվորահոր չալակն ելած, դուրս է գալիս տնից, երկուսն էլ պարելով առաջանում և ապա իջնում, միմյանց դեմ կաքավում են. այս կաքավի ժամանակ հայրը աշխատում էր մորը համբուրել, իսկույն վերջինս վազում էր դեպի թագվորը և համբուրում նրան ու հարսին և ներս հրավիրում: Շեմքի առաջ կատուրից չոր մրգեղեն, մանավանդ չամիչ էին շաղ տալիս հարս ու թագվորի վրա, մի լավաշ հաց ձգում հարսի գլխին, որ նա զամաթով լինի, մի կճուճ էլ դնում թագվորի ոտի տակ, որ կոտրի և այսպիսով չարը խափանի:

Ապա թագվորը գնում էր տղամարդկանց բաժինը, ձեռն առնելով ազատպաշու թուրը՝ իբր գավազան, իսկ հարսին տանում էին կանանց բաժինը և կանգնեցնում փարատի եռև: Սկեսուրը գալիս է և խնդրում, որ նստի, սակայն նա չի նստում, մինչև որ մի ընծա չի ստանում: Եվ երբ նստում է, իսկույն մի արու երեխա բերում՝ դնում են նրա գիրկը, որպեսզի նրա առաջնեկը արու լինի: Սա էլ գրպանից հանում է բերած մանկական մի զույգ գուլպա և նվիրում երեխային: Եվ երբ առաջին անգամ ճաշ են տալիս հարսին՝ ամենից առաջ մածուն են ուտեցնում, որպեսզի նա պարզ երես դուրս գա: Երբ հարսի մոտ կնսրանց կողմից մեկը մանում էր, հարսը անշուշտ ոտի էր կանգնում ի նշան հարգանքի:

Հետո ճաշ են տալիս նախ տղամարդկանց և հետո կանանց, առանձին խնդրակով հրավիրելով նաև հարսի ծնողներին: Ճաշին այժմ ընտրվում է «թամատա»՝ սեղանապետ և առաջարկում կենացներ թագավորի ու թագու-

հու, սրանց ծնողների, քավորի, ազապլաչու և այլն, վերջում սպասավորների և ապա՝ սեղանավորները առաջարկում են թամատի կենացը:

Ճաշից հետո մեծ մարդիկ և կանայք ցրվում են, մնում են միայն մակարները, որոնք դուրս են գալիս գավիթը որձի (որսի):

Որձի. Հարսի տանից մի ոչխար կամ գառ և կամ մի սագ, իսկ մակարների տնից մի-մի հավ բերում, հավաքում են թագվորի տան գավթում կամ կտուրին: Դուրս է գալիս թագվորը դհոլ-զուռնի առաջնորդությամբ, չրջապատված մակարներով և ձեռքի թուրը մերկացնելով խփում մի հարվածով ոչխարի գլուխը թռցնում է: Եթե չի հաջողացնում, խայտառակ է լինում, բոլորը վրան ծիծաղում են: Ապա թուրը կիսով չափ դնում են պատյանի մեջ և երկու մակար բռնում են մեկը երախակալից, մյուսը ծայրից, բերանը դեպի վեր ուղղած. մակարները մեկ-մեկ վերցնում են մի-մի հավ կամ աքաղաղ, ոտներից բռնում և վիզը խփում թրին՝ կորում և հավը դեպի վեր ձգում: Եթե չեն կարողանում մի հարվածով կտրել, ծաղրի առարկա են դառնում և հաճախ մի աքաղաղ իրը տուգանք վճարում: Այդ հավերը հավաքում են և այդ երեկոյի համար հավով փլավ պատրաստում, այս պատճառով էլ այդ երեկոն «որձի իրիկուն» է կոչվում:

Ծաղ. Որձի իրիկունը թագավորի դռանը կրկին տալիս է նավոդտը. հարսնևորները կրկին հավաքվում են. խնամոնց և քավորին դնում դհոլ զուռնի առաջնորդությամբ պատվով բերում են: Տեղավորում են դարձյալ առանձին-առանձին, տղամարդիկ գոմում, կանայք հացատանը:

Տղամարդկանց մասում չուռով սկսվում է «Ծաղը». թագվորը մի երիտասարդի հետ կանգնում է հարսնևորների մեջտեղը: Երիտասարդը առնում է ձեռքը մի ափսե և դիմում է նախ հարսնացուի հորը՝ թագվորին մի խալաթ (ընծա) տալու: Սա էլ 20-30 ռ. դնում է ափսեի մեջ. անմիջապես երիտասարդը բարձր ձայնով բղավում է.

— Շեն կենա խնամին, այսքան մանեթ թագավորին խալաթ տվավ, փոխն իր տղին ըլնի, չեն կենա՞, չե՞ն:

- Շեն կենա՞, չե՞ն,- կոչում են այս ու այն կողմից:

Խնամուց հետո խալաթ տալիս է քավորը, հետո մյուս հարսնևորները: Ամենի խալաթն էլ բարձր ձայնով հայտարարվում է. վերջում ամբողջ գումարը հաչվվում է և կրկին հայտարարվում. հասնում է 100-300 ռ.:

Այժմ քաղաքում այս սովորությունը վերացել է, մնացել է միայն ընթրիքը, որ տեղի է ունենում ծաղից հետո: Երբեմն ծաղը ընթրիքից հետո են անում, լավ հյուրասիրում, որպեսզի առատությամբ խալաթ տան:

Տղամարդիկ ընթրելուց հետո ցրվում են. մնում են միայն մակարները: Այս միջոցին ընթրիք են տալիս նաև կանանց, որի ավարտին «ջհեզը» բաց են անում: Հարսի օժիտը, որ այդ օրը բերած են լինում, դնում են հարսնևոր կանանց մեջտեղը, մի հարս նստում է մոտը և մի ընծա ստանալով թագվո-

րի մորից[309] *բաց է անում, ամեն բան մեկ-մեկ ցույց տալիս և գովաբանում: Հարսի օժիտը կազմում էր.*

Մի ձեռք անկողին.
Մի գորգ.
Մի ջեջիմ.
Մի արկղ (սնտուկ).
1-2 ձեռք հանդերձ.
Գուլպաներ և այլն:

Նաև խալաթներ (ընծաներ) սկեսայրին, մեծ տեգրը, մեծ փեսին, քավորին և այլոց՝ որևէ հանդերձեղեն, երեսսրբիչ, փողի քսակ և այլն:

Բաղաքում չհհեզ բաց անելու սովորությունն արդեն վերջացել է:

Օժիտը ցույց տալուց հետո կանայք ևս դնում են, այնպես, որ մնում էին միայն մակարները: Այս ժամանակ սրանցից ճարպիկը գողանում՝ պահում էր թագվորի թուրը և նրա երեսսրբիչը: Թագվորն իսկույն թաղթ էր նստում, ընտրում մի քանի թվանքչիներ, որոնք այս կամ այն մակարին բռնում էին և մեղադրում այս թրի կամ մի ուրիշ բանի գողության մեջ: Իսկույն թագվորը մի տուգանք՝ մի հավ, մի գառ էր նշանակում, և սրանք չարչարում էին մեղադրվածին, երբեմն փալախկա խփելով, երբեմն մի սյան կապելով, մինչև որ տուգանքը կվճարեր: Այս տուգանքներով հետևյալ օրը այդ միևնույն մակարները մի առանձին տեղ քեֆ էին սարքում: Այս սովորությունն էլ այժմ վերացած է:

Թագ կտրել կամ թագվերք. *Հետևյալ օրը, անշուշտ արևը մայր մտնելուց հետո, կատարում են թագվերացի ծեսը, քավորի, ազապաշու և մոտ բարեկամների ներկայությամբ: Այս միջոցին թագվորը վայր է դնում թուրը, որ միշտ ձեռքին բռնած էր ունենում և դիշերը հարսի մոտ քնած միջոցին իր և նրա միջև դրած էր լինում, որպեսզի չկարողանա մոտենալ նրան:*

Նույն գիշեր առագաստ են մտնում. անկողինը պատրաստում է թագվորի ամուսնացած քույրը կամ մորաքույրը, մոտը դնելով գինի, մրգեղեն և ցուրտ ջուր: Առավոտյան նույն անձը գալիս է վերցնելու սավանը և խմբելով իր շուրջը տան մեծ անդամներին՝ ցույց է տալիս կուսության նշանը: Այդ օրը հարսին խավիծ են ուտեցնում և օշարակ խմեցնում:

Պսակից երեք-չորս օր անցնելուց հետո հարսը ջուր է տաքացնում և լվանում սկեսրայրի և տեգրների գլուխները ու ոտները: Նվերներ հարսին չեն տալիս:

Գլուխ լվացնք. *Առագաստի գիշերից ութ օր անց՝ հարսի մայրը մի գլուխ շաքար առած մի քանի բարեկամուհիների հետ գալիս է հարսի գլուխը լվալու: Հրավիրվում են նաև թագավորի մոտիկ բարեկամուհիները: Հանդի-*

---

309 Նոր-Բայազետում չհհեզ բաց անողը հարսի գերդաստանից է լինում և ստանում է մի ոսկի ընծա, որը, սակայն, վերադարձնում են, երբ հարսին դարձ են բերում:

սավոր կերպով լվանում են հարսի գլուխը, նրան օշարակ խմեցնում և հետո իրենք ուտում, խմում են և մինչև երեկո զվարճանում:

Սար հանեք. Հարսը պսակից հետո երկու շաբաթ շարունակ իրավունք չունի տանից դուրս գալու: Երբ այդ ժամանակամիջոցը անցնում է, հավաքվում են նրա ընկերուհիները և նրան «սար հանում»՝ տանում զբոսնելու. կերուխումը, զվարճությունը, երբեմն միացած ուխտագնացության հետ, հաճախ տևում էր երեք օր:

ՏՂԱԲԵՐՔ ԵՎ ԿՆՈՒՆՔ[310]

Դաշտան. Նորբայազետցիների մեջ դաշտանն սկսվում է 15-16 և շատ հազվադեպ 13-14 տարեկան հասակում: Տևում է 3-8 օր: Քաղաքացիները գործ են ածում մեջը բամբակ դրած շորեր, իսկ գեղջկուհիները մի որևէ շոր: Դաշտանին նորբայազետցիք ասում են ամսական:

Եթե դաշտանը սաստիկ է լինում, ձեռներին կիր են քսում. դավախոտ կոչված բույսը եփում են և ջուրը խմեցնում, իսկ եթե.շատ սաստիկ է լինում՝ նստեցնում են որձ ձիու եփ տված թրիքի վրա կամ մեջքին յախու են գցում:

Ամլություն. Այս գավառում ևս ամլությունն անբախտություն և մեղքի պատիժ է համարվում: Գևրգաստանի մեջ ամուլ կինը հալածվում է գրեթե բոլորից, մանավանդ սկեսուրից: «Աստծու անեծքն ա վրեն», «Աստծու պատիժն ա քաշում», «Զոր կոճ ա», «Անբար ծառ ա», ասում են բոլորը: «Փարչի բերանը պաչում ես, գիտում ես էրեխա՞ ա» հեգնում են տեգեր-կնիկները: «Լավ հլնիր (լինելիր) մեկն էլ քե(զ) կհլներ», «էրեխա չունիս՝ ջիգար (խիղճ, դութ) չունիս» հանդիմանում են կռվող կանայք: Նույնիսկ ամուսինն ամուլ կնոջ հետ լավ չի վարվում:

Ամլությունը բացատրում են այսպես. իբր թե չարքերը զավակատան (արգանդի) մեջ պտուղը (ձուն) խեղդում, արյուն են դարձնում: Ով որ տանճու ունի՝ նա «չարոցի» է: Չարոցը պատահում է քառասունքի ժամանակ և այնուհետև կինն այլևս չի հղիանում:

«Չարը խափանելու»՝ չար ոգիներին հալածելու համար «թուղթ են անել տալիս» և կարում՝ մեկը գլխին, մեկը վզին և մեկը՝ թիկունքին և կամ մի տասը կոպեկանոց տալիս են պատարագիչ քահանային, որ պատարագի միջոցին հիշելով չարոցից տանջվողին՝ կխսալուսնաձև կտրի դրամը, որի մեջ մի թել անցկացնելով, կինը կրում է իր վզին հավատալով, որ դա թույլ չի տա չար ոգիներին իրեն մոտենալու:

---

[310] Բացի ինձանից, իմ խնդրանքով նյութեր հավաքեցին նաև պ. Վաղարշակ Պետրոսյանը և արժ. Իգնատիոս սարկ. Տեր Մովսիսյանը:

Եվ եթե թուղթ անելու չնորհիվ կինը հղիանում է, անմիջապես մի կտոր բամբակ են օրհնել տալիս քահանային պատարագի ժամանակ, և պահում, երկունքի ժամանակ թիլիսմի թղթերի հետ ծննդկանի ոտների մոտ այրում, որպեսզի երկունքը խնդույն տեղի ունենա, այլապես տասը օր կքաշի:

Ամլությունից ազատվելու համար բացի ժողովրդական դեղերից[311] դիմում են նաև հետևյալ միջոցների.

ա. «Ծակ-քար»-երի միջից երեք անգամ անցնում են. ոմանք էլ այս կամ մի ուրիշ ուխտատեղում քանդում են իրենց դռտին և դնում ներքև, սպասելով, որ մի աղամարդ գա վերցնի այդ դռտին և նորից կապի իրենց մեջքին: Երբ այս ուխտից հետո երեխա են ունենում, այդ դռտին կապողն անշուշտ կնքահայր է դառնում: Ծակ-քարերից նշանավոր են Օրտակլու գյուղի «Թուխ մանուկ» կոչված քարաժայռը, Ալիղըռըխ գյուղինը, և Նոր-Բայազետից դեպի Ղուլալի տանող ճանապարհի վրա գտնվածը:

բ. Տեառնընդառաջին ամուլ կնոջը պարանով տան երդիկից հանում են կտուրը, և այս կրկնում երեք անգամ:

գ. Համբարձման գիշերը գետի ափին քառասուն թաս ջուր են ածում ամուլ կնոջ գլխին:

դ. Ուխտում են, որ եթե երեխա ունենան, նախապես շորեր չպատրաստեն. և երբ հղիանում են՝ մայրը իր դոգնոցը թոնրի ակն է խրում, որպես ակնկալ (թոնրի ակը կալնող շոր) և երբ ծնում է՝ այդ դոգնոցի մեջ են փաթաթում նորածնին, մինչև որ նա վեր է կենում և հարևաններից կտորներ խնդրելով՝ շոր կարում: Այսպիսի կտորներ հավաքողը կոչվում է «դիլակչի»:

ե. Ամուլ կնոջն ուտեցնում են նորածին երեխայի ընկերքից մի կտոր խորոված, միայն այնպես, որ ոչ դա, և ոչ նորածնի մայրը այդ մասին ոչինչ չգիտենան. այլապես ոչ միայն ամլության առաջը չի առնվիլ, այլև նորածնի մայրը կամլանա:

զ. Դիմում են զանազան ուխտատեղիներ, մանավանդ Սևան, ուր մի որևէ բան, օր. մոմ, ափսե, մասունքի վրայից մի մատանի և այլն, գողանում են և տանում իրենց հետ, և երբ երեխա են ունենում, գողացված իրի նման մի օրինակ էլ ձեռք բերելով՝ վերադարձնում են՝ կրկին ուխտ գալով:

Ուխտագնացությունից հետո ծնված երեխան կոչվում է **տվածուրիկ**, այսինքն սրբի տված: Նրան մկրտում են այդ միևնույն ուխտատեղում և կոչում են նույն սրբի անունով: Հաճախ այսպիսի երեխայի մազերը չեն խուզում մինչև 7-8 տարեկան հասակը, երբ տանում են նրան այդ խնդրակատար ուխտատեղին, մատաղ անում և երեխայի մազերը խուզել տալիս սրբի գերեզմանի վրա և ապա այդ մազերի կշռով մոմ առնում, այդ սրբի առաջ վառում: Եթե երեխան Մշո սուլթան ս. Կարապետի տվածն է լինում,

---

[311] Տե՛ս «Ժողովրդական դեղեր» գլխում:

նրա պարանոցը անց են կացնում հարուստները՝ արծաթեայ, իսկ աղքատները՝ պղնձե մի մանյակ (օղակ), որ կարմրագույն ակ է ունենում: Այս օղակը, որով երեխան սրբի գերին է դառնում, հանվում է միայն այն ժամանակ, երբ ս. Կարապետ ուխտ է գնում:

Օրինական ամուսնության մեջ մեծ մեղք են համարում բեղմնավորության առաջն առնել, և հազիվ է պատահում, որ աշխատեն վիժել, որովհետև հավատում են, թե «հոգի են կորցնում», «մեղքի մեջ պիտի կորչին»: Սակայն և այնպես՝ ցանկանալով դռնե ուշ-ուշ երեխա ծնել՝ ծննդկանը չարունակ համրում է առաստաղի գերաններից մինչև յոթը և երեք օր անընդհատ աչ կողքի վրա պառկում, որպեսզի յոթ տարին մի անգամ ծնի:

Ապօրինի կենակցության միջոցին անպայման աշխատում են վիժել, կամ, եթե ծնվում է, խեղդել և ծածուկ թաղել և կամ ծածկաբար տանել և եկեղեցու դռանը ձգել, որովհետև հասարակական կարծիքը սաստիկ դատապարտում է ապօրինի կեցությունը և նույնիսկ ապօրինի զավակին: Վիժելու համար երկանք են դնում փորին և աղում, բարձր տեղից թռչում են, փորը գրտնակում են, ճմրտում, ծանր բաներ վերցնում:

Հղիության միջոցին կնոջ աշխատանքի և կենցաղի մեջ առանձին փոփոխություններ տեղի չեն ունենում. մեկը արտ փոցխելիս, մի ուրիշը դաշտում բանջար քաղելիս, երրորդը Նոր-Բայազետից Ղուլալի ուխտ գնալիս չոքել՝ ծնել են: Ուտեստի վերաբերությամբ ևս մեծ փոփոխություններ չեն լինում, միայն չաուերը մաքափոխ են լինում, զանազան ուտելիքներ, մանավանդ թթու բաներ են ուզում: Սովորաբար այսպիսի կանանց բոլոր քմահաճույքները կատարում են, վախենալով որ հակառակ դեպքում կարող է «անցուսկ անել»՝ վիժել:

Նախքան ծնունդը երեխայի սեռը որոշելու համար դիմում են հետևյալ միջոցների:

ա. Ջննում են հղի կնոջ փորը, եթե կլոր է լինում և փոքր, բացի սրանից դեմքը առույգ, և սիրում է ձեռքերը կրծքին դնել, ասել է՝ արգանդինը տղա է. իսկ եթե փորը անճոռնի է՝ մեծ, դեմքը գալկացած և սիրում է ձեռքերը կախ պահել՝ աղջիկ: Եթե լողանալուց հետո փորը մեծանում է՝ տղա է, եթե փոքրանում է՝ աղջիկ:

բ. Տղան աչ կողմում է լինում, աղջիկը ձախ:

գ. Վարպետ կանայք չոշափում են, եթե ձկան ձև ունի՝ տղա է, թե գորտի՝ աղջկա:

դ. Եթե չորրորդ ամսին է խաղում՝ աղջիկ է, իսկ եթե հինգերորդին՝ տղա:

ե. Եթե սրտի տակ է խաղում և արագ՝ աղջիկ է, եթե ավելի ներքև և հանդարտ, ձկան նման՝ տղա:

ղ. Գուշակում են նաև երազներից. եթե մարգարիտ, ոսկի մատանի, քորոց են տեսնում՝ նշանակում է տղա է լինելու, իսկ եթե լաչիկ, հանդերձ, ասեղ՝ աղջիկ:

է. Եթե դանակ, թել, քորոց են գտնում, գուշակում են՝ որ տղա է լինելու, իսկ եթե ասեղ, կոճակ, ուլունք՝ աղջիկ:

ը. Հաց թխելիս խմորի մի գունդ ձգում են թոնիր, կրակի վրա, եթե առանց ճաքելու թխվում է՝ ասում են տղա է լինելու, իսկ եթե ճաքվում է՝ նշանակում է աղջիկ է լինելու:

թ. Մատնոցի մեջ ջուր են ածում և վրան սունքից մի կաթիլ կթում են. եթե կաթը իջնում է ջրի հատակը՝ նշանակում է, որ սպասվող երեխան աղջիկ է, իսկ եթե կանգնում է երեսին՝ տղա:

ժ. Եթե հղի կնոջ ծծի պտուկը սև է՝ արգանդի պտուղը աղջիկ է լինում, իսկ եթե կարմիր՝ տղա:

ժա. Եթե հղի կնոջ պորտը դուրս ընկած է՝ ծնվելիք երեխան տղա է լինելու, իսկ եթե ներս ընկած՝ աղջիկ:

ժբ. Եթե հղի կնոջ հատատեղին լայն է լինում, ծնվելիք երեխան տղա է լինելու, իսկ եթե նեղ՝ աղջիկ:

Հղիության ընթացքում կանայք աշխատում են զգեցիկ և լավ մարդկանցով իրենց շրջապատել, որպեսզի սրանց մեկի դեմ արգանդի երեխան խաղալով, նրա բնությունը և զգեցկությունը ստանա: Նաև երկարավիզ փարչից են ջուր խմում, որ ծնվելիք երեխան երկարավիզ լինի: Ջու են գողանում՝ ուտում, որպեսզի երեխայի այտը պուճ (փոսիկ) ունենա: Ուխտատեղիներում ուխնեթեն (սրբի դերեզմանի հող) են ձգում բերանները, խաչալվա ջրից խմում և համբուրելով ուխտատեղին՝ ձեռքը դնում են իրենց մարմնի այն տեղում, ուր կկամենային որ ծնվելիք երեխան խալ ունենար:

*Երբ մոտենում են **երկունքի** օրերը՝ կանայք սկսում են առատաձեռն դառնալ, ողորմություն բաժանել, ամենի հետ շատ լավ վարվել, նրանց օրհնանքին՝ «բարով էտ նեղ տեղից ազատվես»՝ արժանանալ, նրանք դնում են հացը իրենց փորի վրա և խաչվակ (խաչաձև) կտրում տալիս շանը, որ կուշտ ուտի և իրենց օրհնի: Եվ որովհետև նրանց «մէ ոտը էս հանդէն ա, մէկէլը էն», նախապատրաստվում են մահվան և հաղորդվում են:*

***Երկունքն** սկսվելիս կանչում են տատմորը, ծննդկանի մորը և մի քանի բարեկամուհիների: Տատմայրը նախ և առաջ սկսում է աղոթել. «Ս. Աստվածածին, քո ծնունդի, քո անարատ ծնունդի սատատեն (ի սեր) դու բարի ազատություն տաս իմ աղոցկանին, կալած կապած բողչեն բանաս՝ որդին մորից բաժանես»: Ապա մեջքի կողմից չալակում է աղոցկանին և թափ տալիս՝ որպեսզի «երակները բացվին և ծնունդը շուտ տեղի ունենա»:*

Այնուհետև աշխատում են երկունքը հնչեցնել և դիմում են հետևյալ միջոցների: Տղոցկանի դռտին, կոճակները, մազերն արձակում են և վերցնում նրա գինդերը, մատանիները, ապարանջանները: Միաժամանակ արձակում են նաև նրան շրջապատողների և նրա ամուսնու դռտինները: Նույն սենյակում եղած բոլոր խփած պահարանները, արկղերը և ամանները բաց են անում, որպեսզի «տղոցկանի արդանդն էլ բացվի»: Ամուսինը դրսից իր չուխայի փեշով ջուր է բերում և խմեցնում նրան: Ջուր են ուղարկում քահանային՝ որ օրհնի՝ նախապես մի խճճված թել արձակելով և այդ ջուրը բերում՝ խմեցնում են: Նոր-Բայազետում Կարապետենց տանից բերում են սուրբ Աստվածածնի ձեռքը (փայտից չինած), ձգում ջրի մեջ և խմեցնում: Ընդհանրապես մի որևէ, բայց առավելապես Շաղկուլենց Նարեկը բերում, դնում են հացի չռեմարանի վրա, նախապես մի հաց դնելով և չուրջը մոմեր վառելով և հետո հրավիրում են քահանային, որ գա այդ Նարեկից մի քանի գլուխ կարդա ծննդկանի վրա: Համայիլներ են բերում և կապում ծննդկանի վզից, նրա չուրջը պողպատ, շիշ, դանակ, դաշույն, սուր են հավաքում, որ չարերը չկարողանան մերձենալ: Ծննդկանին մի քանի անգամ պտույտ են ածում թոնրի չուրջը և ապա կանգնեցնում նրա մոտ. թոնրի մեջ մի քիչ կրակ են անում և ծննդկանին կանգնեցնում նրա վրա մի ոտը թոնրի մի չրթին, մյուսը՝ մյուս չրթին: Այս միջոցին մեկը ներս է գալիս դիտմամբ: Ասում են՝ ինչի՞ եկար, ոտդ ծանր է: Իսկ նա պատասխանում է՝ չէ ոտս չատ թեթև է:

Արու երեխան 2-3 օր ավելի ուշ է ծնվում քան աղջիկը, իսկ վերջինս՝ երբ լրանում է 9 ամիս, 9 օր, 9 ժամ և 9 րոպեն: Սովորաբար տղան ծնվում է լուսնի նորին, իսկ աղջիկը՝ լուսնի խավար միջոցին:

Հավատում են, որ երեխան մոր արգանդում չնչավոր է, միայն հոգի չունի, հոգի է առնում ծնված րոպեին Գաբրիել հրեշտակապետից, որը և գրում է նրա ճակատագիրը:

Ծննդկանը ծունր է դնում մի չորի կամ ներքնակի վրա՝ երեսը դեպի արևելք դարձրած: Երկու կին, որ տեղական բարբառով կոչվում են մանկաբարձ, բռնում են նրա կռնակից, տատմայրը չոքում է նրա հետևում և երկու ձեռքով հուժ տալիս հետույքը: Երբ ծնվում է երեխան, պորտը կապում են և դնելով ցանի (աթարի) վրա՝ դանակով կտրում են, նախապես մի ընծա՝ պորտ կտրելե առնելով: Դանակը պղծված համարելով, չեն գործածում, մինչև որ մեռոնաջրի մեջ լվանալով չեն սրբում:

Պորտի արյունից տատմերը քսում է աղջիկ նորածնի երեսին, որպեսզի նա գեղեցիկ լինի. իսկ եթե տղա է, զանց է առնում այդ ասելով՝ «Ծուճն երեսին կարկատան ա» (եթե տգեղ էլ լինի՝ ոչինչ, տղա է): Մինչև պորտի ընկնելը տանից կրակ դուրս չեն տալիս:

Տղայի պորտը ձգում են շուկան, եկեղեցու, ուսումնարանի դավթի կտուրը, որպեսզի երեխան մարդամիջի, եկեղեցասեր, ուսումնասեր, առևտրասեր լինի, իսկ աղջկանը թաղում են մի մութ անկյունում՝ որպեսզի համեստ, ամոթխած լինի: Այս նախապաշարմունքից առաջացել է հետևյալ անեծքը. «Պորտ կտրողիդ հէրն անիծած, տես ուր է քցել պորտդ»:

Պորտը կտրելուց անմիջապես հետո մի կապերտի վրա տաք մոխիր են լցնում և ծննդկանին վրան պառկեցնում 4–5 ժամ, մինչև որ արյունը քամվում է, միանգամայն դոտիով կամ փեշոմալով փորը կապում են, ապա տեղափոխում իր անկողնի մեջ:

Ազատվելուց, տեղական բարբառով՝ «սպառկելուց» անմիջապես հետո, լավաշ հացով սոխ են վաթաթում և տալիս ծննդկանին, որ ծամի թափի և մնացածը իր գլխի վրայով երեք անգամ պտույտ տա և դուրս ձգի, որպեսզի չար ոգիները եթե ներկա են, հեռանան և ծննդկանի լյարդը (ջիգյարը) չհանեն տանեն: Ապա մեխակով ու կինամոնով թեյ են խմացնում, կլոր պղպեղ (բիբար), տաք կոճ (ամբարս), ղոլնջան, կինամոն (դարչին) ծեծում են, մեղրով շաղախում և ուտեցնում ծննդկանին, որ ուժ ստանա:

Եթե ծննդկանի ընկերքը շուտով չի ընկնում, մի շիշ են տալիս նրա ձեռքը՝ որ մեջը փչի: Եվ երբ ընկնում է՝ եթե առաջնեկի է՝ թաղում են ծնված տեղում, եթե ոչ՝ շեմքի մոտ կամ դրսում մի առանձին տեղ, որպեսզի շունը չգտնի ուտի, ապա թե ոչ կինը կզրկվի ծննդաբերության ընդունակությունից:

Ծննդաբերության ներկա եղողները խնդրում են նոր ապատված ծննդկանին, որ իրենց օրհնի: Նա էլ ձեռքը դնում է սրանց գլուխներին և օրհնում: Հավատում են, որ այդտեղ ներկա է լինում հրեշտակը և արձանագրում է ինչպես ծննդկանի դոհունակությունը կամ դժգոհությունը, այնպես և նրա օրհնությունը:

Ծննդաբերությունից հետո տնեցիները հսկում են, որ ծննդկանը ուշագնաց չլինի, և այս նպատակով խոսեցնում են նրան, ձեռքը մի կծիկ են տալիս որ կծկի, բայց եթե ուշագնաց է լինում՝ ականջներից քաշում են, թևերի տակը տրորում, երեսին ջուր սրսկում: Կարծելով որ ուշագնացությունը պատահել է նրանից, որ չարքերը նրան բռնել են՝ հրացան են արձակում, որ փախցնեն սրանց, կամ փուխրա են ծածկում ծննդկանի գլխին, որ չար ոգիները խաբվեն, կարծեն թե ծննդկանը դա չէ, այլ սա մի տղամարդ է և հեռանան. նրա անկողնի վրա դարի են ածում և մի ձի բերում. որ այդ դարին ուտի: Ձին խրխնջում է և նրա ձայնից ծննդկանը սթափվում: Նաև մի հավ են մորթում և գլուխը տան երդիկից կտուրը ձգում, հավատալով որ չար ոգիներն էլ նրա հետևից դուրս կգնան:

Ծննդկանին պառկեցնելուց հետո տատմայրը լողացնում է նորածնին. նախ աղ է քսում բերանի առաստաղին, թևերի տակ, և տաք աղաջրի մեջ լողացնում առանց սապոնի, միայն գլխին քսում է ձվի դեղնուցը, որ խոշ-

րուկ հիվանդություն չստանա, և հետույքին՝ աղ և մուր՝ որ տեռատեսություն չունենա: Տաշտի մեջ մի որևէ պողպատե կամ երկաթե իր են դնում, որպեսզի չար ոգիները չմերձենան: Լողացնելիս տատմայրը շարունակ աղոթում և բարեմաղթություններ է անում. «Քրիստոսի ական ջուրն հլնի, դրախտի ջուրն հլնի, ջրի ղայտի լի ապրես, աջողակ հլնես, ջանով հլնես»:

Լողացնելուց հետո խանձարուրում է՝ «ղոնդաղում ա», եթե առաջնեկ է՝ տատի բերած բալուլոցով, իսկ եթե մի քանի երրորդը՝ մոր նախապես պատրաստած չորերով:

Սրանից հետո տատմայրը պրկում է խանձարուրը (ղոնդախը), վրան երկու հաց դնում, ձեռքին ծայրը մի սոխ ցցած չամփուր առած չեմքն ու պատը խազելով դուրս գալիս տնից, բարձրանում կտուրը և դեպի արևելք դառնալով, աղոթում. «Լուս արեգակ, դու էս էրեխին ղամաթ տաս», «Հորն ու մորը սաղ ջան տաս», հետո ձեռի չամփուրով խաչաձև գիծ է քաշում գետնին, խաչակնքվում և վերադառնում, թևթևությամբ նստում է ծննդկանի անկողնու վրա և երեք անգամ հարցնում.

— Մարիամ (ինչ էլ որ լինի ծննդկանի անունը), ե՞ս եմ թևթև, թե դու:

Սա պատասխանում է.

— Ես եմ թևթև:

— Թևթևությունով անցնի,-պատասխանում է տատմայրը և տալով նրան երեխան՝ ասում,- աչքդ լուս հլնի, Մարիամ, ավետիք որդի առեր ենք, մնացական որդի հլնի:

*Սրանից հետո տան փոքրերը վազում են բարեկամների տները և «աչքի լուս» տալիս՝ հաղորդելով երեխայի ծննդյան մասին: Մի որևէ բան նվիրելով սրանց՝ բարեկամուհիները **ծննդգավաթ** են պատրաստում և գալիս ծննդկանին տեսության: Ծննդգավաթը բաղկանում է խավիծից, հալվայից, եփած հավից, խմորեղեններից, ձվածեղից, մեղրից, շաքարից և այլն:*

Եթե նորածինը տղա է, սաստիկ ուրախանում են թե ծնողները և թե բարեկամները, իսկ աղջիկ՝ ծնողներն այնքան տխրում են, որ բարեկամներն ստիպված են լինում մխիթարել նրանց, հուսադրելով, որ տղա էլ կունենան: Մեծ ուրախություն է պատճառում մանավանդ երբ առաջնեկն (առաջին որդին) է տղա, որովհետև «առջինեկը առավոտ է, կը հլնի կիսանի խոր քամակին», մինչդեռ «աղջիկը ղըսի պատ ա»՝ այսօր կա՝ վաղը կգնա, «աղջկա ոտներն ավազան՝ գլոխը դերեզման» պիտի լինի: Տղան կոչվում է վարդաշալակ, աղջիկը՝ քաքաշալակ:

Ահա այն մի քանի նախապաշարմունքները, որոնց դիմում են արու որդի ունենալու. հարսանեկան չորերը ձևելիս՝ դիտմամբ դրսից մի տղա են ներս բերում, հարսը կեսրանց տուն առաջին անգամ մտնելիս՝ մի արու երեխա են գիրկը դնում:

Առաջին անգամ երեխային լողացնելիս՝ տատմայրը երեխան պտուկ է՝ կաթսայի մեջ մի քանի թաս ջուր է թողնում, որպեսզի սրա հաջորդը ևս տաք լինի, իսկ եթե աղջիկ՝ բոլոր ջուրը ածում է, որպեսզի «ինչպես ջուրը կտրվում է, այնպես էլ աղջկա «քոքը» (արմատը) կտրվի՝ այլևս աղջիկ չծնի: Միևնույն տրամաբանությամբ տղայի պորտը կտրելիս մի քիչ երկար են թողնում, իսկ աղջկանը՝ հենց արմատից են կտրում:

Կնունք. *Մննդաբերությունից մինչև կնունքը թե ծննդկանը, թե նորածինը և թե տատմերն ու մանկաբարձները (տատմորը օգնող կանայք), անսուրբ են համարվում. մարդիկ նրանց հետ շատ չեն շփվում, նրանց հետ հաց չեն ուտում, նրանց ձեռքից բան չեն վերցնում, և նույնիսկ այն իրերը և ուտելիքները, որոնց նրանք ձեռք են տվել՝ պղծված են համարում և չեն գործածվում, ուստի և սրանց համար առանձին ամաններ են պահում, որոնք հետո մեռոնաջրով սրբում են: Մննդկանը սրբվում է միայն այն ժամանակ, երբ «մեռոն է գալիս տուն», այնպես որ եթե երեխան մեռած ծնվի կամ՝ առանց մկրտվելու մեռնի՝ նա (ծննդկանը) անսուրբ կհամարվի, մինչև որ նոր որդի ծնի և մկրտել տա: Ջմկրտված երեխան ևս անսուրբ համարվելով եկեղեցական թաղման ծիսակատարության չի արժանանում. նրան թաղում է տատմայրը բակի մի անկյունում:*

Մկրտությունը տեղի է ունենում ծննդաբերությունից 3-8 օր հետո, շատ հազիվ՝ ավելի ուշ: Մկրտության առավոտը ծննդկանը կեսից վայր լվացվում է, սրբվում, տատմայրը լողացնում է երեխային և ապա մի գլուխ շաքար կամ մի եփած հավ տանում քավորին ու հրավիրում նրան եկեղեցի՝ մկրտելու երեխային:

Այս գավառում ևս քավորը տոհմական է լինում, որին փոխում են միմիայն այն դեպքում, երբ «նրա ձեռքը տան վրա չի գալիս», այսինքն երբ նրա մկրտած երեխաները չեն ապրում և կամ տանտայրը շարունակ աղջիկներ է ծնում:

Քավորը մեծ հարգանք է վայելում, տանտայրը նրա հետ չի խոսում, նրանց դռնով չի անցնում, նշանավոր տոներին նրան «բողչա» կամ «սեղան» է ուղարկում, երբեմն փոխադարձաբար մի ընծա ստանալով:

Տատմերը երեխային գրկած, տնեցիներից մի քանիսի հետ գնում է եկեղեցի. պետք է ասել, որ երեխայի հորը արգելվում է ներկա լինել մկրտության խորհրդին: Մկրտությունը կատարելուց հետո երեխան քավորի գրկում, ձեռքներին մի-մի մոմ, քահանայի առաջնորդությամբ գալիս են ծննդկանի տուն: Երբ քավորը երեխային տալիս է ծննդկանին, սա անկողնու մեջ նստած տեղից փոքր-ինչ խոնարհում է, համբուրում երեխայի խանձարուրը և վերցնում նրան, ապա երկու մոմը առնում ձեռքը: Ավետարանի ընթերցումից հետո ծննդկանը երեխային պառկեցնում է իր աջ կողմում

Հատկապես դրված բարձի վրա, որի երկու կողմում մի-մի հաց է դրված լինում, «որպէսզի երեխան դովլըթուր լինի»:

Սրանից հետո կընընք ճաշ է տեղի ունենում. հրավիրված են լինում 20-30 տղամարդ և կին՝ ճաշելու: Ճաշի ժամանակ բարեմաղթություններ են անում երեխայի և ծնողների համար՝ «Աստված հորով մորով պահի»: Նախ ճաշում են տղամարդիկ առանձին և ապա կանայք առանձին: Քաղաքում այժմ տղամարդիկ և կանայք թեև միասին մի սեղան են նստում, սակայն տղամարդիկ առանձին, վերևը, իսկ կանայք առանձին՝ ներքևում:

Քավորը չատ անգամ մի որևէ ընծա է բերում սանամորը և սա էլ նրա փոխարեն մի բան է նվիրում:

Այժմ հետզհետե ընդհանրանում է սանիկի համար քավորի կողմից մի արծաթե կամ ոսկե խաչ տանելու ռուսական սովորությունը:

Անուններըի ընտրությունը վերապահված է դերդաստանի հորը. շատ քիչ դեպքերում ուշադրություն են դարձնում մոր ցանկությանը: Ընդհանրապես դնում են այն սրբի անունը, որին նվիրված է նրա ծննդյան օրը, այս պատճառով և սրբերի անուններ ամենից ավելի են պատահում: Սովորական է նաև դերդաստանի մեռած անդամների անունները տալ նորածիններին, որպեսզի այսպիսով վերականգնեն նրանց հիշատակը: Այժմյան ծերունիների անունների մեջ գերակշռում են սրբերի և թրքական անուններ, նոր սերնդի մեջ՝ հայկական և մասամբ ռուսական:

Ահա մի քանի անուններ՝ իրենց կրճատումներով:

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԱՆՈՒՆՆԵՐ

I Սրբերի

Եղիա, Եղո
Ենովք, Ենոք
Հակոբ, Հակո
Հաբեթ
Աբրահամ, Աբրո
Թադեոս, Թադո
Սարգիս, Սերգո
Խաչատուր, Խաչո, Խաչիկ
Համբարձում, Համբո
Ավետիս, Ավո, Ավետ
Հարություն, Հարո, Հարթին
Բարեղամ, Բաղո

III Հայկական

Հայկ-Արամ, Հայկարամ
Տիգրան
Գեղամ
Խոռեն
Մուշեղ
Վաղարշակ, Վազո
Արևշատ
Նավասարդ, Նավո
Մնացական, Մնե
Աստվածատուր, Աստատուր, Աստուր, Աստ
Սիրական, Սիրո
Կիրակոս, Կիկո
Պատվական

Հովազ
Մանուկ, Մնո
Հայրապետ, Հայրո

II Թրքական

Ասլան
Ջիվան
Զոհրաբ, Զորաբ
Ջիվանշիր
Մաջնուա
Սայեաթ
Արզման
Օրդուխան
Բեջան

IV Ռուսական

Իվան
Կնյազ
Ջեմիզով
Սերգեյ, Սերգո

ԿԱՆԱՆՑ ԱՆՈՒՆՆԵՐ

I Սրբերի

Մարիամ, Մարո, Մարգուշ
Ովսաննա, Օսան
Գայանե, Գարան
Նունե
Սանդուխտ
Հռիփսիմե, Հռեփ, Խոռոմ
Շողակաթ, Շողո

III Հայկական

Թագուհի, Թագո
Ծաղիկ, Ծաղո
Տիրուհի, Տիրուն
Աչխեն, Աչխո
Զանազան, Զանո
Իսկուհի, Սկուն
Աստղիկ
Սրբուհի, Սրբո
Արեգնազան, Արեգ
Վարսենիկ, Վարսո
Արուսյակ, Արուս
Վարդուհի, Վարդո
Նազե
Նազլու
Սաթենիկ, Սաթո
Հայկանուշ, Անուշ
Շուշանիկ, Շուշան
Մարգարիտ, Մարքրիտ
Լուսիկ, Լուսո
Ծովինար, Ծովիկ, Ծովո

II Թրքական	*IV Ռուսական*
Նարդիզ	*Կատինկա, Կատո*
Զումրուխտ	*Սոնիչկա, Սոֆո*
Զեյնալ	
Ղատիֆա, Ղատո	
Ջավահիր, Ջավո	
Սանամ	
Մարալ	
Նունուֆար	
Սալվի, Սալբի	
Սուսանբար	
Խանում	
Ջանան	
Ազիզ	
Ալմազ	
Գյուլնազ, Գյուլո	

Մեռոնհանձնք. *Մկրտությունից հետո երեք օր չարունակ չեն լողացնում և միևնույն մեռոն չորի մեջ են պահում, որպեսզի «մեռոնը քաչա չան, ցած չգա», թե չէ անմեռոն (անպատկառ) կլինի: Երեք օրից հետո «մեռոնից հանում են». գալիս են քահանան, տատմերը և մանկաբարձները: Քահանան մի մաքուր ամանի մեջ լվանում է երեխայի այն մասերը, ուր մեռոն է քսված. այս ջուրը լցնում են ջրհորը, կամ աղբյուրի ակը, թոնիրը և կամ հողե գնդեր են չաղախում, ու պահում, որ երբ մուկը կամ չունը մի ամանի դիպչելով պղծեն, այդ գունդը ջրի մեջ լուծելով, լվանան դրանց և այսպիսով սրբեն: Այս միևնույն ջրով լվացվում են նաև տատմայրն ու մանկաբարձները, որ սրբվեն: Սրանից հետո տատմայրն ամբողջովին լողացնում է երեխային:*

Այժմ հետզհետե վերանում է մեռոնից հանելու համար քահանային հրավիրելու սովորությունը: Նրա կատարելիքը տատմայրն է անում:

Քառասունք. *Ծննդկանը քառասունք է պահում թե «գողնքից» (անկողնուց, առագաստից) և թե «արևից», այսինքն ծննդյան օրից սկսած քառասուն օր չարունակ ոչ առագաստ է մտնում և ոչ էլ արևին երևում: Նա տանից դուրս է գալիս միայն արևի մայր մտնելուց հետո և դիշերները, և այն էլ ձեռին մի չամփուր կամ դաշույն բռնած, որպեսզի չար ոգիները նրան չմերձենան:*

Երեխային ևս այս քառասունքի ընթացքում արևին չեն ցույց տալիս, դիշերները տանից դուրս հանելիս կրծքին մի կտոր հաց են դնում և չեմքից անցնելիս «Հիսուս Քրիստոս» են ասում, որպեսզի «չարերը հալածվին»:

Նաև ամբողջ քառասունքի ընթացքում ծննդկանի մոտ դիշեր-ցերեկ անշուշտ ճրագ են վառում, որպեսզի «չարերը չմոտենան»:

Քառասունքի ընթացքում, եթե մի մարդ է ներս մտնում, կամ ննջեցյալ են անցկացնում տան մոտից, կամ միս են բերում տուն, պետք է անպատճառ երեխային իր տեղից բարձրացնեն, այլապես նա քառասունքակոխ կամ «կոխ» կլինի, այսինքն կակսի հետզհետե նիհարել և հետո, եթե միջոցների չդիմեն, կմեռնի:

Քառասունքակոխ երեխային բժշկելու համար «կայծակի հետ երկնքից լջած երկաթից» չինված «քավկիրը» չորեքշաբթամտի, ուրբաթմտի և կիրակմտի երեկոներին բռնում են երեխայի գլխին և ջուր ածում:

Նույն նպատակով երեխային դնում են մի մաղի մեջ և փողոցներում ման ածում:

Նաև գողանում են մի լավաշ հաց այն տանից, որի բնակիչներից կոխվել է երեխան, ծակում այդ լավաշը և երեխային միջից անցկացնում:

Կոխված երեխային երեք օր հաջորդաբար ցանի (աթարի) հետ կշռում են, եթե երեխայի քաշն ավելանում է, գուշակում են, որ ապրելու է, իսկ եթե պակասում է՝ ասել է՝ մեռնելու է:

Քառասունքը լրանալիս ծննդկանը լողանում է, լողացնում երեխային և մկրտության կերոններն ու մի քանի մոմ առած դնում է եկեղեցի:

Գուշակություններ երեխաների մասին. Առաջնեկ տղան ընդհանրապես շնորհալի և մի քանի առանձնահատկությունների տեր է համարվում. այսպես ղոլինջ (փորացավ) և կարկուտ կտրող է լինում: Երեք անգամ խփում է փորացավ ունեցող մարդու կամ անասունի փորին՝ ասելով. «Ես տեսա շունը շանը միսը կերավ», «իմ ձեռը ղոլինջին դեղ ա» և փորացավը կտրվում է: Կարկուտ եկած միջոցին նա վերցնում է մի հատ կարկուտ և դնելով տան չեմի վրա՝ դանակով կտրում է, և «կարկուտն էլ այդպէս կտրվում է», դադարում է:

Եթե երեխան «չապկով» (ձվի թաղանթով) է ծնվում, ասում են, քաջերի սերնդից է, շատ քաջ և բախտավոր սիրտ լինի:

Եթե ընկերքի աղիքը մի քանի անգամ փաթաթված է լինում նորածնի վզին, ասում են, թե այդքան անգամ նույն այդ սեռից երեխա սիրտ ծնի նրա մայրը:

Ծննդյան և Զատկի դիշերը ծնված տղաները «եղունգ աշող» են լինում: Եթե ծնողները չեն կամենում այդ՝ նրանց եղունգներին հինա են դնում, իսկ եթե կամենում են՝ մի դառն են մատղում և սրա թիակը երեխայի հետ մկրտության օրը տանում են եկեղեցի և ապա պահում, որ մեծանալիս նրա վրա ևս նայի ու գուշակություններ անի:

Մանկատածություն. Սովորաբար նորածնին առաջին անգամ դիշերը ծիծ չեն տալիս, այլ միշտ լուսաբացին: Շատ անգամ էլ դիտմամբ ուշ են տալիս,

որպեսզի նա քնկոտ լինի: Նախ մայրը կթում է ծիծը, որ վատ մասերը, դալը, անցնի, և այս անշուշտ ոչ տղամարդկանց ներկայությամբ, որովհետև այլապես ծիծը կծակծկվի: Հետո տատմայրը ոսկի է քսում նորածնի բերանին, որ հարուստ լինի, կամ հաց դնում բերնին, որ ղամաթով լինի, և կամ մեղր, չաքար քսում շրթունքներին՝որ քաղցրախոս դառնա:

Սովորաբար ծիծ են տալիս մինչև կրկին հղիանալը կամ 1-3 տարի:

Կաթը ավելացնելու համար ուխտ են դնում Փաշաքենդ գյուղի «Կաթնաղբյուրը» և նրա ջրով լվանում ծծերը: Նաև հատիկ են անում ուտում, այսինքն ցորենը բովում են և քիչմիչի հետ խառնելով ուտում: Շատերն այդ հատիկը տանում են Փաշաքենդ և կաթնաղբյուրի ջրից վրան սրսկում և ապա ուտում:

Կաթը շատ եղած միջոցին կթում են մոխրի վրա և լցնում թոնրի ակը:

Կաթը իրրև դեղ ևս դործ են ածում. այսպես աղջիկ երեխա ունեցողի կաթը կթում են չչող (ձայն տվող) ականջի մեջ. աջ ծծինը ձախ ականջը, ձախինը՝ աջ, ասելով. «Ցավ քաղա, ցավ քաղա»: Նաև բամբակի վրա կթելով դնում են ցավող աչքի վրա:

Ծծից կտրելիս, ծծին քսում են «ավզա» (դառը դեղ է) կամ ծերտ, ցեխ: Նաև բուրդ կամ ձկան գլուխ են դնում ծծի վրա և վախեցնում երեխային ասելով. «վա՜յ, վա՜յ, բորոն մտի ծոցս, բորոն ծիծը տարեր ա»: Մի հատ էլ ձու եփում են և տաք-տաք դնում սառը ջրով լի կժի կանթին, որ հովանա, և երեխային ասում են, որ դնա վերցնի, որպեսզի «ինչպես որ տաք ձուն է հովանում կժից, այնպես և նա հովանա ծծից»:

Երբ երեխան լալիս է և ծիծ ուզում՝ ասում են.

կթոց կոտրե
կաթը թափե:

Այսինքն կովկիթը կոտրվել է և կաթը թափվել է:

Եթե ծծից կտրած երեխան մի առժամանակից հետո կրկին սկսի ծիծ ուտել, մեծանալիս նրա «աչքից սար ու քար կպատռի» (սաստիկ չար աչք կունենա):

Սակավակաթ մայրերը իրենց երեխաներին կերակրում են կովի կաթով, հետը խառնելով մի քիչ թեյ և նաբաթ՝ կամ չաքար: Իբր պտուկ (сосокъ) դործ էին դնում եզան եղջյուր՝ վրան կովի պտուկ անցկացրած: Երեխային ղրաղեցնելու համար մի շորի մեջ մի քանի մանր կտոր չաքար և հաց են փաթաթում և դնում նրա բերանը՝ որ ծծի:

Երեխային լողացնում են մինչև քառասունքը՝ օրը միայն մեկ, երբեմն նաև երկու անգամ, իսկ քառասունքից հետո՝ օրումեջ.[312] Նախքան քառա-

[312] Ոմանք ծնված շաբաթի չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը չեն լողացնում՝ մեղք համարելով:

սունքը լողացնում են հավկիթով, այսինքն հավկիթը ջարդում են մի ամանի մեջ, մի քիչ ջուր ավելացնում և լցնում երեխայի գլխին ու մարմնին և ապա տաք ջրով լողացնում: Քառասունքից հետո հավկիթի փոխարեն սապոն են գործածում: Մինչև քառասունքը լողացնելիս տաշտի մեջ երկաթե կամ պողպատե մի իր են գցում, որպեսզի չար ոգիները չկարողանան մոտենալ: Լողացնելիս հաճախ բռնում են երեխայի գլխից և բարձրացնում, նորից իջեցնում, որպեսզի վիզը երկարի՝ միաժամանակ երգելով.

Երկնավզիկ,
Թափ տու ջրիկ,
Շալկա մսիկ,
Ջաղամաթի[313] քունը քզիկ:

Երեխային խանձարուրելիս նրա տակ տաքացրած հող են դնում, որպեսզի թե տաքացնի երեխային և թե քաշի միզելուց առաջացած թացությունը:

Նորածնին մոտավորապես մի շաբաթից հետո օրորոց են դնում: Առաջին անգամ տատմայրն է դնում և երեք անգամ չան պես հաչում, «հա՞ֆ, հա՞ֆ, հա՞ֆ» և այս այն նպատակով, որ երեխան մնծանալիս որքան էլ հաչեն վրան՝ չկարողանան կծել:

Եվ այս նախազգուշության համար տատմայրը ընծա է ստանում:

Երեխայի եղունգները երկարելիս թաթախում են ալյուրի մեջ, որ իրենք իրենց կտրվեն:

Որպեսզի տատմները հեշտությամբ դուրս գան և լնդերի քորը դադարի՝ երեխայի ճեռքը կանաչ սոխ են տալիս՝ որ շարունակ ծամի, նաև ամեն օր լողացնում են:

Երբ երևում են առաջին տատմները, «տատմախատիկ» են անում. եփում են ցորեն, կանեփ, ոսպ և սիսեռ, ապա սրանց հետ խառնում չամիչ և պնդուկ (կաղին):

Հրավիրելով բարեկամ կանանց իրենց երեխաներով, օրվա հերոսի գլուխը ծածկում են մի թաշկինակով և տատմահատիկը լցնում գլխին ասելով.

Ուրախությունով տատմահատիկ հլնի.
Ուրախությունով տատմ խանես.
Բաղդավոր հլնես, հորով մորով հլնես:

Այս միջոցին երեխայի առջև դնում են մի դանակ և մի սանր: Երբ վերցնում են երեխայի գլխից թաշկինակը՝ դիտում են, թե նա նախ դանա՞կն է վերցնում, թե սանրը: Եթե դանակը վերցնի՝ դուշակում են, որ մոր հաջորդ որդին տղա է լինելու, իսկ եթե սանրը՝ աղջիկ:

Եթե տատմները շատ շուտ հանեն, ասում են. «Աստված խեր անա, մեկի գլուխը տան մեջ կուտա», տնեցիներից մեկը կմեռնի:

---

[313] Աչխարհի:

Երբ առաջին անգամ գցում են աստամները, վերցնում, գցում են թոնրի ակն ասելով.

Առ քե չան աստամ,
Տու ընձի գառի աստամ:

Երեխայի մազերը առաջին տարվա ընթացքում չեն խուզում, հավատալով, որ կհիվանդանա: Առաջին անգամ խուզելիս խուզողին նախ մի նվեր են տալիս, ապա խուզված մազերը հավաքում են և մի պատի ծակ խրում, որ երեխայի գլուխը չցավի:

Եթե երեխան չի կարողանում քնել, դնում են նրան մի մաղի մեջ և տանում նախրի առաջ բռնում ասելով. «Ձորեն ես գալում, քուն բեր իմ տղին»:

Եթե երեխայի բերանից ջուր է գնում՝ կանչում են քավորին, որ ճկույթը դնի նրա բերանը, ջուրը դադարի գնալ: Եթե երեխայի քթից խլինք է գալիս, ասում են. «Խլինքն էկե խելք ա բերե»:

***Վախեցած** երեխային բժշկելու համար օրորոցի կամարի և երեխայի գլխի, սրտի և ոտների վրա խաչաձև բամբակ են դնում. միառժամանակ մնալուց հետո հավաքում են այդ բամբակը միասին և լուցկիով վառում. եթե մի անգամից վառվեց բոլորը՝ այդ նշանակում է՝ որ այս միջոցը կօգնի և վախը չուտով կանցնի, իսկ եթե բոլորը չվառվեց՝ այդ նշանակում է, որ վախն ամբողջովին չի անցնելու. այս պատճառով միևնույնը կրկնում են երեք անգամ: Մի անգամ ևս միևնույն տեղերում բամբակ դնելով՝ կրկին հավաքում են և ջրի մեջ թաթախելով դնում երեխայի գլխի տակ, և այդ ջրից մի քանի կաթ նրա բերանը կաթեցնում:*

Որպեսզի երեխային չունը չկծի, տատմերն ու երեխայի մայրը նստում են օրորոցի երկու կողմը, տատմայրը օրորոցի կամարի տակով տալիս է երեխային՝ մորը և կամարի վրայով կրկին վերցնում: Կրկնելով այս երեք անգամ՝ տատմայրը հաչում է, և ասում. «Հա՞ֆ, հա՞ֆ, ես քեզ կծեմ, չները չկծեն»:

*Որպեսզի երեխան ուշագնաց չլինի, «**չթալեցնի**», ծնողները տոն են պահում Թալիլիա բժշկի հունիս ամսին պատահող տոնը, որը և կոչվում է «**Թալալոց**»:*

Երեխան ուշ լեզու ելնելիս՝ յոթ եկեղեցու բանալիներ են քսում բերանին: Նաև տանում են տավարի մսուրի առաջ կապում, և խոտ դեմ անում ասելով. «Թե մարդ ես՝ խոտա, թե տավար ես՝ խոտ կե»:

Երեխային չար աչքից պահելու համար կապույտ ուլունքներ, «օրօճիկ» (խխունջներ) և նարոտը կապում են օրորոցից:

Աչքով տվողի շորից կտրում են և օրորոցի տակ վառում, ապա երեխային աղոթել տալիս այդ չնորհը ունեցող պառավներին:

Ջար ոգիներից ազատելու համար բարձի տակ հրահատ, հացի կտոր են դնում, գիշերը մոտը ճրագը չարունակ վառ են թողնում:

Երեխային վախեցնելիս ասում են. «Սուս արջամօրօզ (արջամուրուք) էկավ, Բոբոն էկավ, Բուղդալավաշ, արի՝ էս տղին տար, Տէրտէրն էկավ՝ հանկաջդ կը կտրա»:

Երեխային ոտի վրայ կանգնեցնելիս ասում են. Ա՞թ, տոտի (ոտի) տակը վա՞րդ կամ՝ Մնի, մնի՝ տա՞ն, տա՞ն:

Կամ՝ Մնի, մնի մաստանայ,

Քո մէրն ուտա քաստանայ:

Երեխային զբաղեցնելու համար օրորոցի կամարից կախ են անում *չղլիկ*՝ մի թելի անցկացրած խխունջներ (օրոճիկ) և վեգեր: Երբեմն այս թելի վրա ավելացնում են նաև ուլունքներ, որոնք պահպանում են երեխային զանազան հիվանդություններից:

Եթե երեխան մի որևէ մարմնական պակասություն է ունենում, վերագրում են ծնողների մեղքին, իսկ եթե չար է լինում, վատ և անհանգիստ՝ համարում են չորեքմուտի, ուրբաթմուտի կամ կիրակնամուտի մերձեցման արգասիք, որովհետև այդ օրերը մեղք է համարվում առագաստ մտնել:

Եթե երեխան *դեղնում է*, ասել է՝ նրա մոտ եկել է մեկը՝ որ դեղին ուլունք է ունեցել մոտը, ուստի և բժշկելու համար նույնպիսի դեղին ուլունքներ են կախում երեխայի վրայից:

Երեխան ճմրուկ (ломота) հիվանդությունը ունենալիս մի բոքոն (կլոր բազարջ) են անխոս տանում չառաջի առաջ դնում, և սա հասկանալով սրա նպատակը՝ վերցնում է մի կտոր կաշի, խաչաձև կտրում և տալիս բոքոն բերողին, որը և բերում կապում է երեխայի բազկին:

Երբ երեխան սկսում է նիհարել, լողացնելիս ջրի մեջ մի կտոր միս են ձգում, որ «երեխին միս բերի»: Եվ կամ նույն նպատակով մի չաղ կնոջ խնդրում են երեխայի գլխին ջուր ածել:

Երբ երեխան ստեպ-ստեպ հիվանդանում է, ասում են, թե «նորուց է առել», այսինքն լուսնի (նորի) ազդեցության է ենթարկվել: Բժշկելու համար երեխային տանում են ներկարարի խանութը, ուր ներկարարը երեխայի հետ բերած մոմերը խփում է լեղակի կարասի բերանին, վառում և ապա՝ երեխային բռնելով լեղակի կարասի վրա՝ մատը թաթախում է լեղակի մեջ և քսում ճակատին, քթին, աչքերին: Այս աշխատության համար նրան մի հավ են ընծայում:

Եթե մի մոր երեխաները չեն ապրում, այլ հետզհետե նիհարում են և մեռնում, այդպիսին կոչում են «*թըղպոտ*», և նրան բժշկելու նպատակով դիմում են հետևյալ միջոցների.

ա. Նորածնի ականջի դմակից փոքր-ինչ կտրելով խորովում են և լավաշ հացի մեջ փաթաթած ուտեցնում են ծննդկանին, խաբելով, թե գառան խորոված է:

բ. Հատկապես չրջում են գետի ափը, որպեսզի տեսնեն գորտ որսած օձ: Եվ երբ տեսնում են գորտը օձի բերանում՝ ասում են. «Գորտն այսինչ թղպոտի դեղն ա»: Հետո խփում են օձին և խլում նրանից գորտը, բերում տուն՝ չորացնում, յոթ բանեցրած ասեղ խրում վրան և յոթ գույնի մետաքսե թելերով կապոտում և կապում թղպոտի թևատակից: Ծննդաբերությունից հետո արձակում են այս և յոթ ճանապարհի մեջտեղում թաղում:

գ. Յոթ գույնի անբանեցնել մետաքսե թել, խայտի, ձգում են մի կողպեքի կանթի վրա և տալիս պատարագիչ քահանային, որ «աչխարհ գալիս», կողպեքը և թելը հանգուստ»: Թղպոտ կինը պահում է այս կողպեքը իր մոտ մինչև ծնելը, երբ բաց են անում և թելերը այրում:

դ. Նորածնի ընկերքը թաղում են նրա ծնված տեղում հետևյալ ձևակերպությունով.

ա. Ոմանք վրան անբանեցրած երեք ասեղ են խփում և մի պայտ դնում, ասելով. «Աչքտ ետանց կտրես, էս ա քունը»:

բ. Ոմանք յոթ գույնի թելերով թելած յոթ անբանեցրած ասեղ են խրում և դնում մի անբանեցրած կճուճի մեջ, կարմիր խփով ծածկում և ապա թաղում:

գ. Ոմանք էլ մի տաքացրած ասեղով դաղում են նորածնի ոտները, մեջքը, ճակատը և ապա այդ ասեղը մի անբանեցնել մեխի և ընկերքի հետ դնում կճուճի մեջ և թաղում:

դ. Նույն նպատակով նորածնի մայրը կամ մի ուրիշ մոտիկ անձնավորությունն վերցնում է երկու ափսե, մեկի մեջ իրենց տանից մի քիչ ալյուր, մյուսի մեջ մի քիչ յուղ ածում և անխոս գնում յոթ տնից «ալյուր ու յուղ մուրալու»: Ապա այդ յուղ ու ալյուրով մի մարդակերպ հաց են թխում, որին կոչում են «կուկու». երեք օր՝ չորեքշաբթին, ուրբաթ-շաբաթին և կիրակնամտին դնում են երեխայի բարձի տակ, որից հետո անխոսել տանում են թաղում գերեզմանատունում:

Թղպոտ կանանց ազատվելուց հետո չեն թույլ տալիս քնելու, թե չէ սատանաները կգան և նրա փայծաղը կգողանան կատնեն և այն ժամանակ ծննդկանն ուշագնաց կլինի, և երբ սատանաները այդ փայծաղը գետնի ջրի մեջ թաթախեն՝ ծննդկանը կմեռնի: Այս պատճառով էլ երբ ծննդկանը ուշագնաց է լինում՝ հրացաններ են արձակում՝ ուղղելով դեպի գետը, հավատալով, որ սատանաներն այդ ուղղությամբ գնալիս կլինեն, հետևապես և կարող են վախեցնել և ստիպել ետ բերել փայծաղը:

Ծննդկանի սանճուն (փորացավ) կտրելու համար մկրատով ջուրը մկըրտում են: Նույն նպատակով մի բապուճ կամ տրեխ և մի գդալ դնում են մի

ամանի մեջ և ծածկած տանում, առաջարկում ծննդկանին ասելով. «Ել չուտով գդլա» (գդալով կեր) իսա (այս) խավիծ»:

Ծննդկան եղած միջոցին եթե տանը չունը կամ կատուն ցկնին, ծննդկանը իր երեխան վերցնում և գնում նրանց ճագերի վրայով անցնում է, որպեսզի իր երեխայի «ցավը այդ ճագերը տանին», թե չէ չունը կամ կատուն կգան դնալի իրեն, և այսպիսով սրանց ճագերի «ցավը յուր երեխան կը տանի»՝ կմեռնի:

Նաև եթե մի հղի կին գա ծննդկանի մոտ սրա երկունքի ժամանակ, նրա երկունքի ցավն էլ կփոխանցվի սրան:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՂԵՐ

Նոր-Բայազետի գավառում ևս գյուղացիների թե առողջապահիկ դրությունը և թե նրանց հայացքը բժշկության վրա միանգամայն նման լինելով մյուս գավառների հայ գյուղացիների դրության ու հայացքին, ես ավելորդ եմ համարում կրկնել այստեղ ևս այն բոլորը, ինչ-որ ասել եմ Գանձակի և Բորչալուի գավառների ուսումնասիրության մեջ: Այս միայն կավելացնեմ, որ գավառը իր քաղաքով ունի միմիայն երկու բժիշկ, որոնցից մեկի բնակավայրն է Նոր-Բայազետ քաղաքը, մյուսինը՝ Ներքին Ախտան: Երկուսն էլ չափազանց ծանրաբեռնված են: Քաղաքում կա մի բուժարան, ներկա գավառապետ պ. Ս. Ղորդանյանի և գավառական բժիշկ պ. Զաքարյանի նախաձեռնությամբ բացված: Մի բուժարան էլ Ն. Ախտայում է: Պարզ է ուրեմն, որ ահագին ասպարեզ է թողած սափրիչներին, հեքիմ կանանց, անղչիներին, մանավանդ բանիմաց պառավներին, որոնց բժշկական գիտությունից առաջ ենք բերում հետևյալ դեղերը:[314]

Ականջացավ. ա. Կաթեցնում են ականջի մեջ օղի, նավթ, ձիթենու տաքացրած յուղ, աղջիկ երեխա ունեցողի ծծի կաթը՝ եռացնելուց և փոքր-ինչ հովացնելուց հետո, եփած նռան հյութ:

բ. Դնում են ականջի մեջ սոխի ծիլը՝ ձեթի մեջ տապակելուց և փոքր-ինչ հովացնելուց հետո, մեղրամոմից, հավի յուղից և կտավատի ձեթից պատրաստած պատրույգ:

գ. Կապում են ականջին. խորոված խնձորը՝ նախապես կիսելով, բողկը և դդումը միասին եփելուց և փոքր-ինչ հովացնելուց հետո:

դ. Եթե ականջը սանճու է տալիս՝ մեղր են լցնում ականջի մեջ և աղաջրի մեջ եռացրած վսիաթի կտորը վրան դնելով՝ թաչկինակով կապում են, մինչև որ մեղրը բերանից և պնչերից դա թափվի:

---

314 Գանձակի գավառ, հ. 2, եր. 84-88, Բորչալուի գավառ, հ. 10, եր. 151-157:

ե. Որդնոտած ականջի մեջ կաթեցնում են այծի լեղի, նախապես ծիրանի դառն և ծեծած կորիզ խառնելով, ծխամորճի կեղտ:

Ամլության դեմ. *Որոշելու համար, թե կինը պահպանե՞լ է «պտղելու» (հղիանալու) հատկությունը՝ երկու օր շարունակ մի սիսեռ են պահում սեռական անդամի մեջ, եթե այս ժամանակի ընթացքում սիսեռը ծլում է՝ այդ ապացույց է, որ կինը պահպանել է հղիանալու հատկությունը: Եվ որպեսզի նա պտղի, վերցնում են երեք մսխալ չոր գերչակ, մեկ մսխալ տաք և նուշնքան դեղին կոճ, մանրացնում, ոչխարի դմակով չաղախում և բամբակը սրա մեջ թաթախելով դնում կնոջ սեռական անդամի մեջ, և ութ օր շարունակ օրական մի անգամ փոխում, հուսալով, որ այսպիսով կբացվի արգանդի բերանը:*

Եթե այս միջոցը չի օգնում, մի ամիս շարունակ օրական մի անգամ մի չոր, անծեծել գխտոր են դնում կնոջ անդամի մեջ, որպեսզի վատ հյութերը ծծե: Առողջացած է համարվում՝ երբ գխտորն այլևս չի փափկում, ուռչում:

7-8 տարվա ամուլ կնոջը բժշկելու համար «բուղ են տալիս», այսինքն մի կճուճի մեջ լցնում են ոչխարի բչկուլ (կտտուր, դեք) և մի բաժակ ջուր, և բերանը խփով ծածկելուց և չուրջը խմորով պատելուց հետո իջեցնում են թոնիրը: Եվ երբ եփ է գալիս՝ հանում են, բերանը բաց անում, և կնոջը նստեցնում վրան:

17-18 տարվա ամուլ կնոջը բժշկելու համար դարձյալ բուղ են տալիս, միայն քիշմիշով. երեք ֆունտ քիշմիշ և մի բաժակ ջուր ածում են մի կճուճի մեջ, բերանը խփով փակում, խմորով պատում և երկու օր շարունակ թողնում հով թոնրի մեջ: Ապա հանում են, բաց անում և անմիջապես կնոջը մերկ նստեցնում վրան: Գոլորշու ազդեցությամբ արգանդը մաքրվում է: Այս փորձը կատարվում է միայն մի անգամ:

Մռված արգանդն ուղղելու համար վերցնում են երկու ֆունտ անհալ մեղր, կես ֆունտ տաք և նուշնքան դեղին կոճ, կրիայի երկու ձու, միասին չաղախում, և ութ օրվա ընթացքում, օրական երկու անգամ մի քիչ բամբակով դնում անդամի մեջ: Ասում են, թե այդ բաղադրությունը ձգողական զորություն ունի և ծռված արգանդը ձգում, իր տեղն է գցում:

Որոշելու համար թե ամլությունը ամուսնուց է, թե կնոջից՝ մի հավկիթ են դնում կնոջ սեռական անդամի մեջ, և երկու օրից հետո հանում, կոտրում են և ջննում. եթե արյուն է քաշում իր մեջ՝ ամլությունն ամուսնուց է, իսկ եթե անարատ է մնացել՝ կնոջից:

Ամրության դեմ. *ա. խմեցնում են կովի հալած յուղ, սինամաքի կոչված բույսից պատրաստած թեյ, գոմեշի կաթ՝ ավելուկի սերմ խառնած, էրնջուկ բույսի ծեծած արմատից պատրաստած թեյ, բ. լողացնում են, գ. մի կաթսայի մեջ գարի են եփում, բերանին չոր քաշում և տկարին մերկ նստեցնում վրան:*

Այրված. ա. քսում են թանաք, խլինք, կժի տակի ցեխ, ձեթի փրփուր, բ. կաթի սեր, ալյուր և հավկիթի դեղնուց չաղախում են, հացի նման թխում, չորացնում և հետո փոշիացնում և ածում այրվածի վրա՝ նախապես սեր քսելով, դ. լոբին այրում են և փոշիացնելով, ցանում վերքի վրա, դ. փտած փայտը տրորում են և վրան ցանում:

Աչքացավ. ա. ուռած աչքին դնում են սպիտակ թոք, որ արյունը քաշի, բ. ծխի մեջ են նստում, որովհետև արտասվելը առողջարար է, դ. օղի են կաթեցնում աչքի մեջ, դ. ձմեռ, այսինքն ձյան աղդեցությունից ցավող աչքերի վրա տրեխի կտոր են դնում՝ նախապես ջրի մեջ փափկացնելով:

Ատամնացավ. ա. ատամի վրա դնում են աղ, մեխակ, բամբակ՝ օղիում թաթախած, այրած սպիտակ չիբի փոշի, ձեթով չաղախած և եփ տված ալյուր (մուրթուշա), բ. դաղում են դուլպայի տաքացրած ճաղով, դ. խնկի մուխ են տալիս, դ. խունկը օդու մեջ կակղացնելով, դնում են ատամին, ե. ապակու կտորը կրակի մեջ ձգելով ասստիկ եռացնում են, ապա ձգում քացախի մեջ և այսպիսով հալեցնում, ապա բամբակը թրջում են սրա մեջ և դնում ցավող ատամի վրա, զ. կարմիր պղպեղն եփում են, ջուրը քամում և բամբակը թրջելով նրա մեջ՝ դնում ատամի վրա, է. ուրցից պատրաստած օղիով ողողում են բերանը:

Արբեցողության դեմ. Արբեցողի կինը յուր մեզից խմեցնում է ամուսնուն առանց նրա գիտության:

Արյուն կտրել (վերքից հոսող արյունը՝ դադարեցնել). ա. վերքի վրա դնում են բամբակ, սարդի ոստայն, ծեծած շաքար, այրած բուրդ, բ. դաղում են երակը, դ. կտրված տեղին դնում են իշի թրիք, մանրացրած չիլ և հաբեթ:

Բկացավ. ա. բերանը քացախով ողողում են, բ. լիմոնի աղ են քսում բկին՝ ներքուստ, գ. վիվերթ կամ հաց ու պանիր կոչված բույսը կաթով եփում են և կապում բկին, դ. կտավատը ծեծում են և ձեթով ու կաթով եփում, չինում «տլա», քաշում բկին:

Գլխացավ. ա. տաքացրած աղ են դնում գլխին, բ. գլուխ սոխը կխսում են և կապում ճակատին, գ. կաթ, յուղ և փոքր-ինչ շաքար միասին եփ են տալիս և ապա հովացնելով խմում են, դ. տաք կոճը տրորում են օդու մեջ և գլխին քսում, ե. հավասարաչափ յուղ և մեղր հալելով միասին՝ տաք-տաք խմում են, զ. նավթով հունցում են ալյուրը և երկու ժամ պահում դադաթին, է. տավարի ուղեղը օղիով չաղախում են և կապում գլխին, ը. մանածը (թել) փաթաթում են գլխի բոլորը և չորս տեղից ամրացնում, թ. մեխակ, մեղր, հինա, տաք կոճ, կինամոն, պղպեղ միասին չաղախում են և կապում նախապես ածելած գլխին և այսպես պահում երեք օր շարունակ:

Գորտնուկ. ա. լուսնի նորին մատը դնում են գորտնուկի վրա և յոթ անգամ ասում.

Թաղա նորը նորեր ա,

Նորի կտոր կորեր ա,
Իմ աղբերը գթեր ա,
Պատի տակը տաւիեր ա:

բ. Վառվառուն կուսի կամ մի այլ սրբի մատուռի տակ մի ձու են թաղում ասելով.

Ջուն էս տեղ վչչի,
Գորտնուկն էլ էս տեղ վչչի:

Այս միևնույն անեծքը կրկնելով, միայն ձվի փոխարեն թաղված իրի անունը տալով մսի կտոր են թաղում դեսի ափին, յոթ գարի են թաղում թոնրի չրթի մոտ, դ. օձի չապկից մի կտոր դնում են հացի մեջ և ուտեցնում գորտնուկ ունեցողին, առանց նրա գիտութեան:

Դող. *ա. մի ծեծած սխտոր կապում են թևին, մի քանի օրից կապված տեղը ուռչում է և ջրակալվում, ծակում են և ջուրը թափում, բ. ուտեցնում են քացախով սխտոր, չեն տնից խնդրած հաց ու պանիր, թանե սպաս, հում ձու՝ հարելով օղու մեջ, գ. վախեցնում են՝ վատ լուր հաղորդելով կամ սարսեցնում՝ սառը ջուր ածելով վրան կամ հանդերձի քղանցքը վառելով, դ. ծանը քար են չալակել տալիս և ման ածում:*

Թոքախտ. *Խմում են եփված ավելուկի ջուրը, կովի նոր կթած կաթ, առանց թուլլ տալու, որ կթելուց հետո դեսին դրվի:*

Թուլլի դեմ. *Խմում են կաթ, մածուն:*

Թոքերի բորբոքում *(սաթլջամ). ա. արյուն են առնում և լողացնում, արդելելով կծու և թթու բաներ ուտել, բ. բոքո կոչված ծաղիկը եռացնում են և թեյի պես խմում:*

Լուծելու դեմ. *ա. քամած մածնի մեջ ծեծած չիր են ձգում և կապում փորին 2-3 ժամ, կրկնելով 3-4 անգամ, բ. ուտում են եփած ավելուկ, փչաած, աղանձ (տապակած ցորեն), գ. նստում են թոնրի կամ տաքացրած աղյուսի վրա, դ. լողացնում են երեխային՝ նախապես ջրի մեջ նոր հասած վարունգ ձգելով:*

Խարբուխ. *ա. մոր փոխանը փաթաթում են գլխին և այդպես քնում, բ. խնչում են մի կտոր չորի մեջ և ձգում ճանապարհի վրա, որ մի ուրիշը վերցնի և այսպիսով ցավը փոխանցվի նրան: Նույն տրամաբանութեամբ մոտենում են մեկին ծածկաբար և հանկարծ նրա գլուխը կծում՝ ասելով. **Օդս վրեդ:** Իսկ սա, եթե գիտակ է՝ պատասխանում է. «Ջաղցից եմ գալում՝ գլոխս ալրոտ է», այսպիսով թուլլ չի տալիս, որ հարբուխը իրեն անցնի, գ. կապույտ կտորը այրում են և ծուխը քթին տալիս:*

Խումբա. *ա. երբ երեսը կապատում և ուռչում է՝ խումբա է լինում, իշի ականջի արյուն են քսում, բ. կենդանի գորտ են կապում երեսի վրա:*

Կողքացավ. *ա. կողքին դնում են չորերի մեջ փաթաթված տաքացրած աղյուս, խուփ, աղ, բ. յախու են կապում, պատրաստելով այսպես. խունկն*

ու քաֆրին (камфора) օղու մեջ լուծում են և սրա մեջ կապույտ թուղթը թրջելով կապում կողքին: Կամ եզան լեղի, խունկ, մեղր և քաֆրի միասին եփում են և սրա մեջ թրջում կապույտ թուղթը:

Կոտրված ոսկոր. ա. յախուռ են կապում պատրաստելով այսպես. տուխտը, ձվի դեղնուցը, աղը, օղին միասին խառնելով շաղախում են և շորի վրա քսելով, կապում կոտրված տեղի վրա: Ութ օր շարունակ օրը մեկ անգամ փոխում են:

Հազի դեմ. ա. ունաբը կաթով եփում են և խմում, բ. դինի են եռացնում, խմում, գ. խնձորի մեջ խունկ լցնում, խորովում, ուտում են, դ. յուղով տապակած սխտոր են ուտում, ե. գլուխ սոխը կրակի մեջ թաղելով, եփում են և ուտում, զ. հում հավկիթ են խմում, է. տաք ջրով լողանալիս սառույցի կտորներ են կուլ տալիս, ը. մեղր են ուտում, թ. ձիու, իշի կաթ են խմում՝ անոթի, ժ. ոռները սառը ջրի մեջ են դնում, ժա. կրծքին այծի կամ խոզի ճարպ են քսում, ժբ. «Հաւախոռ» կոչված բույսով, կամ սև պղպեղով թեյ են պատրաստում, խմում:

Ձայնը կտրվելու դեմ. ա. խունկ են ծամում, բ. հում հավկիթ են ուտում, գ. խորոված սոխ են ուտում, դ. տաք կաթ են խմում, ե. բուրդ են դնում կրծքին և թիկունքին:

Ձեռքի ճակճքոց. ա. ձիթապտղի յուղը և այծի ճրագուն միասին խառնելով, քսում են ձեռքերին, բ. ոչխարի դմակ, նավթ են քսում, գ. մեղրամոմը ձեթով եփում են և քսում ձեռքերին:

Մազերը երկարացնելու համար. ա. յավշան կոչված բույսը կաթով եփում են և մազերին քսում, հետևյալ օրը լվանում, բ. չողանով լվանում են, գ. մսի ճիլ են ուտում, դ. գարնանը՝ կենդանիների կուն (թրիք) են քսում մազերին:

Մաղձի դեմ (жольч). իշի կաթնուկ կոչված բույսի հյութը քամում են և մի մատնոցաչափ ածում մի բաժակ կաթի մեջ՝ խմում:

Մատնաշունչ. Մատի ծայրն ուռչում է և ցավում: ա. կապում են ծեծած սխտոր, բ. կապույտ թել են անցկացնում ուռած տեղի միջով, գ. ծեծած խուրմա, շաքարով հունցած խմոր, միասին շաղախած հավկիթ, ալյուր և շաքար ձեթով եփած սոխ են դնում մատին, դ. այծի լեղու մեջ են դնում մատը 3-4 ժամ, ե. կովի պնչի մեջ են կոխում մատը:

Մեջքացավ. ա. մեջքին պուլիկ (банка) են դցում, այսինքն մի կտոր թուղթ են վառում պուլիկի մեջ՝ և բերանքսիվայր ամրացնում մեջքին, բ. յախուռ են դցում: Յախուռն լինում է կամ ձեթով եփ ուված ծամոն, կամ օղի, քաֆրի և մանրած խունկ: Յախուռն դնում են թղթի վրա քսած և անփոխել պահում են ութ օր, գ. մեջքը մերսում են (մասաժ են անում):

Մկնատամ. ա. ալաքլունգ կոչված միջատը չորացնում են, փոշիացնում, կաթի սերով չաղախում և քսում մկնատամի վրա, բ. բրնձից յուղ են հանում ու քսում, գ. ուռենու ճյուղերի հյութն են քսում, դ. շաքարի թուղթը վառում են, բաժակը բռնում ծխի վրա և ստացված մուրը քսում մկնատամին, ե. առավոտը ատամի կեղտ են քսում:

Մոլոքոր. ա. սառը ջրով լողացնում են և մազոտ չալիկ հագնում, բ. փաթաթվում են ջեջիմի մեջ և մի չորեքմուտ, ուրբաթմուտ և կիրակմուտ գիշեր ծածկաբար դնում, թավալվում մի այնպիսի տան կտուրին, որի տերը երեք անգամ է ամուսնացել:

Մրսածի. ա. տաք ջրով լողացնում են և տաք անկողնում պառկեցնելով՝ քրտնեցնում, բ. պղպեղով և կինամոնով պատրաստած թեյ կամ պղպեղով օղի են խմեցնում, գ. լուծողական են տալիս, դ. մրսելուց կամ տենդից ուռած փորը բժշկելու համար իշի կաթնուկ բույսի հյութից մի քիչ ածում են կաթի մեջ և խմեցնում:

Մրսկոտության դեմ. Ուռի կամ կաղամբի տերևներով ծածկում են մերկ մարմինն ամբողջապես՝ տաք անկողնի մեջ պառկեցնելով: Հիվանդը նախ սոսկում է և ապա սաստիկ քրտնում:

Հոդացավի դեմ. Այս հիվանդությունը գալառում չափազանց տարածված է՝ բնակարանների խոնավության պատճառով և կոչվում է քամի. ա. Ճահճային որդեր ածելով համաչափ օղու մեջ 40 օր պահում են, մինչև որ որդերը լուծվում են. ապա սրանով չփում են քամոտ տեղերը, բ. կարմիր պղպեղը չորացնում, մանրում են և օղու մեջ ածելով քսում են մարմնին և կախվում հով թոնիրը, գ. գարնանը եղինջով ծեծում են մերկ մարմինը, դ. քամոտ տեղի մի կետի վրա սնկան ծաղիկ են դնում, որ վերք գոյացնի և շարավ քաշի: Վերքը փակելու համար քսում են կաթի սեր և անալի կարագ:

Շան կծածի. ա. լոբին կիսում և դնում են կծած տեղի վրա, բ. նավթով հունցում են ալյուրը և կապում վերքի վրա և կամ ուղղակի նավթ քսում, գ. սպիտակ չիրը կաթով եռացնում են և քսում վերքին, դ. կծող շան մազը իր տիրոջ խմորի հետ չաղախելով դնում են վերքի վրա:

Շփանց լինել (угагрь). ա. օշարակ են խմում, բ. գլխին տաք ջուր են ածում, գ. ճակատին սոխ են կապում:

Կատաղած շան կծածի դեմ. ա. շանը սպանում են, մեջտեղից կիսում և կծվածին բերում դիակի մեջտեղով անցկացնում, բ. կեմով (ջով, խոտե թոկ) կապում են մեջքը և տանում Էջմիածնի գավառի Փարպի գյուղը՝ ուխտ, գ. չեն թույլ տալիս կծված օրը մինչև լույս քնի, դ. վայրի մեղուն սպանում են, տրորում, գարու ալյուրի մեջ չաղախում, մի գնդակ շինում և կուլ տալիս, ե. եթե նկատում են, որ ազատվելու չէ՝ տանջանքը կարճելու նպատակով երդիկից մոխիր են մաղում վրան, որ շուտով խեղդվի:

Օձի կծածի դեմ. *ա. կծած տեղից փոքր-ինչ բարձր կապում են, որ թույնը չտարածվի: Հետո կենդանի հավի հետույքը դնում են կծած տեղին: Հավը սատկում է, ուրիշն են դնում, մինչև որ այևս չեն սատկում, բ. կծված տեղին թթու մածուն են քսում, գ. գետինը փորում են և կծված տեղը 5-6 ժամ թաղում այդտեղ, դ. ածելիով կծված տեղը կտրատում են (չրատում), արյուն է գալիս, ապա թանով կամ մածունով լվանում են:*

Շիլ աչքը ուղղելու *համար ջրաղացի պատող քարի վրա դնում են յոթ ճյուղ ունեցող մի վառված ճրագ և շիլ աչք ունեցողին աչքերը կապած մոտեցնելուց հետո՝ հանկարծ բաց են անում:*

Ուռած ծծին. *ա. տզրուկ են կպցնում, բ. հաց ու պանիրը եփում են կաթով և ծծի վրա կապում, գ. սառն ավազ են դնում ծծի վրա:*

Ուռուցվոր *(водяика, ջրդողություն). Խմեցնում են եզան լեզու կոչվող բույսից պատրաստած թեյ, կաթ՝ կաթեցնելով մեջը իշի կաշնուկ կոչված բույսի հյութից ինը կաթիլ՝ յուրաքանչյուր բաժակին:*

Ջարդված *(ушиб). ա. վնասված տեղի վրա կապում են մի նոր մորթած հավ, նախապես ջախջախելով, բ. նոր մորթած ոչխարի մորթին տաք-տաք փաթաթում են ջարդված տեղին, գ. խնկով, օղիով և քաֆրով յախուռ են պատրաստում, մեսին շաղախում և կապում ջարդված տեղի վրա:*

Սրտացավ. *Ուրցից պատրաստած օղի են խմում անոթի:*

Վախեցածին. *ա. վախենալուն պես մեղում են և մի ափ խմում, բ. դեռևս լույսը չբացված, լուռ մի ամանով ջուր են տանում դռնեղուռ ման ածում և յոթ տան դուռթանի չղթա մեջը թրջում, գ. մի չորեքմտի, կամ ուրբաթմտի և կամ կիրակմտի երեկո վախեցածին լռելյայն տանում են ոչ բնական մահով մեռած կամ մի թուրքի գերեզմանի վրա, ձեռքերն ու ոտները իրենց հետ վերցրած ջրով լվանում և ջրի ամանը, որ սովորաբար խեցի է լինում, կոտրում են նույն գերեզմանի վրա և ետ դառնում, դ. վախ բռնող կանանց վախը բռնել են տալիս:*

Տեռատեսության *դեմ. Ուղտի մեզ են խմում:*

Ցրտի տարածի. *ա. գետինը փորում են, ձեռքերն ու ոտները մեջը դնում, հողով ծածկում և ձեթ ածում վրան, բ. պառկեցնում են դոմեչի տաք թրիքի մեջ, գ. հինա են քսում ցրտի տարած տեղին, դ. բողկը փորում են, ձեթ լցնում, եփում և կապում ցրտի տարած տեղին:*

Ցրտից ուռած վերք. *ա. կտավատը կաթով չաղախում են, թխում և տաք-տաք կապում վերքի վրա, բ. վիլխերքը և սոխը միասին եփում են և կապում վերքի վրա, գ. նույն կերպ դնում են կաթով եփած ավելուկ, որ «սլիլիմասա» է կոչվում:*

Փորացավ. *ա. հաց ու պանիր կոչված բույսը կաթով ու սոխով եփում են և տաք-տաք կապում փորին, բ. նույն կերպ դործադրում են կտավատը՝*

կաթով եփելով, գ. նուռեցնում են տաք սալի, աղյուսի կամ թոնրի շրթի վրա, դ. ավելուկը եփում են և ջուրը խմում:

Քարի խփելուց առաջացած վերք. *Խանձուր են անում, այսինքն մի կապույտ կտոր խանձում են, լցնում ձեթի մեջ և մի շորի վրա քսելով, կապում վերքին:*

ՄԱՀ, ԹԱՂՈՒՄ ԵՎ ՄԵՌԵԼՈՑ[315]

Նոր-Բայազետի ժողովուրդն էլ խոր հավատում է ճակատագրին, այս պատճառով և ոչ այնքան բժշկության, որքան սրբերի միջամտության և կախարդության են դիմում՝ օրհասը փոքր-ինչ հետաձգելու: Այսպես՝ խնդրում են քահանային, որ Հազարափրկչի կամ մի այլ մասունք բերի հիվանդին համբուրել տալու կամ բժշկության ավետարան կարդա նրա գլխին և կամ եկեղեցում, ժամասացությունից հետո ծանուցում անի՝ նրա ծանր հիվանդության մասին և խնդրի ժամավորներին «Տէր ողորմեա» ասել, նրա համար բժշկություն հայցել: Երբ այս միջոցները չեն օգնում, պառկեցնում են հիվանդին մի սայլի վրա և մի ոչխար առած գնում մոտակա զորավոր սրբերից մեկի դուռը, մատաղ անելու և բժշկություն հայցելու, նրա հանդերձից մի կտոր կտրում են և կապում սուրբ համարված ծառի ճյուղերից, որպեսզի նրա հիվանդությունը այդտեղ կապված մնա և կամ նրա չապիկը հանում՝ տալիս են մի աղքատի, որպեսզի այսպիսով նրա հիվանդությունը սրան փոխադրվի:

Թե քաղաքում և թե գյուղերում կան մի քանի տիրացուներ ու քահանաներ, որոնք «գիր են անում», «անճար» հիվանդներին առողջացնելու:

Հիվանդության ժամանակ թե հիվանդը և թե նրա շրջապատողները շատ անուսիալաչա են դառնում, և աշխատում են ամեն մի բանից զուշակություն անել. այսպես՝ եթե բուն բվա կամ ագռավը կռռա հիվանդի տան մոտ, հավն աքաղաղի պես կանչի, այս նշան է, որ հիվանդը մեռնելու է. եթե նա, հիվանդը, հաճախ տեղը փոխի՝ նշանակում է, որ մահվան հրեշտակը նրան երևում է, եթե երազում աննջեցյալներից տեսնի, կամ զառանցանքի մեջ աննջեցյալի անուն տա՝ նշանակում է, որ աննջեցյալները նրան կանչում են: Եթե չարունակ նա պճխում է քիթը՝ այդ նշանակում է, որ հոգին դուրս է գալու:

Զուշակելու համար, թե հիվանդն առողջանալու է թե ոչ, մի ամանով ջուր են տալիս նրան խմելու և մնացած ջուրը սրսկում մի որևէ կենդանու, հաճախ շան վրա. եթե սա սոսկում է, դողում, այդ նշանակում է, որ հիվանդը մեռնելու է:

---

[315] *Բացի ինձնից, իմ խնդրով նյութեր հավաքեց այս մասին նաև պ. Ռ. Ազատյանը:*

Երբ հիվանդը ցանկություն է հայտնում տեսնելու մի որևէ սիրելի անձնավորության, նրան անմիջապես կանչում են, և եթե նա հեռու լինելով, չի կարող հասնել՝ նրա հագուստից մի որևէ բան բերում, ձգում են սրա երեսին, որպեսզի «կարոտը առնե» և հանգիստ մեռնի:

Երբ մոտենում է հոգեվարքը՝ հրավիրում են քահանային, որ նրան սրբություն տա, որպեսզի նա «անօրենք չմեռնի»:

Երբեմն, կամենալով հետաձգել մահվան րոպեն, սաստիկ աղմուկ են բարձրացնում, հրացան արձակում, որպեսզի «հոգեդարձ» լինի: Այսպիսին երեք կամ յոթ օր դարձյալ ապրում է:

Եթե հիվանդը հեշտությամբ է հոգին ավանդում, ասում են արդար է եղել, իսկ եթե երկար չարչարվելուց հետո՝ մեղավոր:

Արդար մարդու հոգին առնում է Գաբրիել հրեշտակը, հրեղեն սուրը ձեռքին բռնած և մի վարդ տալով հիվանդին, իսկ մեղավոր մարդու հոգին առնում է չար հրեշտակը՝ «գրողի գղրի» ուղեկցությամբ: «Գրողի գղիրը» մի չար պառավ է լինում, որ ուղեկցում է «գրողին», այդ չար հրեշտակին, և ցույց տալիս հիվանդների տները: Մոտենալով հիվանդին՝ չար հրեշտակը երկաթե տաքացած չչի մի հարվածով հանում է հիվանդի արյունաթաթախ հոգին և վարդի փոխարեն փուշ տալով նրա ձեռքը՝ հեռանում:

Մի 86 տարեկան պառավ կին պատմում էր, թե ինքը տեսել է իր ամուսնու հոգեառ հրեշտակին, բարձրահասակ ու արեգակնափայլ. նրա ճառագայթներն ուղիղ իր աչքերին են ընկել, ուստի և չի կարողացել երկար նայել. ծածկել է աչքերը և երբ մի քանի րոպեից հետո բացել՝ ամուսնուն արդեն մեռած է գտել: Նույն պառավը տեսել է նաև իր սկեսրոջ հոգեառ հրեշտակին, սակայն սա մարդակերպ չի եղել, այլ մի գունդ վառ կրակ:

Հոգին ավանդելուց հետո մոտիկները թափիվում են վրան, համբուրում և բարձրաձայն լալիս:

Եթե մեռնողի աչքերը բաց են մնացել, ասում են թե աչխարհից դեռ չէ կշտացել, և աշխատում են փակել: Ձեռքերը խաչաձև դնում են կրծքին և վերմակով ծածկում, անմիջապես խունկ ծխում:

Եթե մահը գիշերն է պատահում, տնեցիները այլևս չեն քնում և նույնիսկ քնածներին էլ վեր են հանում, որպեսզի «հրեշտակակոխ» չլինեն:

Կարելվույն չափ վաղ հրավիրվում է քահանան ննջեցյալի վրա հոգոց ասելու. որից հետո հանում են ննջեցյալի չորերը, ոտները ուղղում, մի թելով նրա հասակը չափում, որ նրա համեմատ դագաղ պատվիրեն, որովհետև հավատում են, որ եթե դագաղը փոքր-ինչ մեծ լինի՝ տնեցիներից չուտով մի ուրիշն էլ կմեռնի:

Ընդհանրապես զգուշանում են կենդանի մարդկանց հասակը մի որևէ չափով և մանավանդ՝ թելով չափել, որովհետև սովորաբար միայն դագաղ պատվիրելու ժամանակ են չափում:

Սրահում կամ մի սենյակում, որի հատակը տախտակած չէ, մի փոս են փորում, կողքերին երկու քար դնում և սրանց վրա մի լայն տախտակ ձգում: Ապա առանց մի որևէ ձևականության, որ ընդունված է ուրիշ գավառներում, մի կաթսա մաքուր սառը ջուր բերում, դնում են փոսի մոտ և հրավիրում քահանային՝ օրհնելու: Այս ծեսը կատարելուց հետո՝ ննջեցյալին, եթե տղամարդ է՝ ժամհարը կամ ուրիշ տղամարդ, իսկ եթե կին՝ պառավ կանայք, լողացնում են: Ավելացած ջրով լվանում են իրենց ձեռքերն այդ տան մեջ գտնվող բոլոր կանայք, որպեսզի աշխարհի «ցավ ու չոռից» ազատվեն: Միևնույնն անում են նաև «հրեշտակակոխ» եղածները, այսինքն հանգուցյալի հոգին ավանդած միջոցին քնած եղողները, որպեսզի ազատվեն հիվանդությունից:

Փոսը՝ որի մեջ թափվում էր ննջեցյալի վրան ածած ջուրը՝ հողով լցնում են, և վրան յոթ օր շարունակ ձեթի ճրագ վառում, որովհետև հավատում են, որ հրեշտակը յոթ օր շարունակ այդ փոսի վրա կանգնած՝ պահապանի դեր է կատարելու:

Լողացնելուց հետո ննջեցյալին տանում են մի առանձին սենյակ և հասարակ կտավով պատանում. մի պարկ կարում՝ անցնում վրան և միայն երեսի տեղը բաց թողնում: Քահանան պատանքի ավելացած կտորից՝ որ «ըլչըկ» է կոչվում, մի գոտի և մի խաչաձև վարշամակ է պատրաստում և իր ձեռքով գոտին կապում ննջեցյալի մեջքին ու վարշամակը դնում երեսին:

Պատանքի ավելացած կտորը մի քանի օր հացատան սյուներից մեկի վրա քաշ անելուց հետո տալիս են ննջեցյալին լողացողներին:

Պատանքած ննջեցյալին գյուղերում փաթաթում են մի կտորի մեջ և դնում հասարակաց նաժիշտ մեջ, իսկ քաղաքում, դագաղի մեջ և «երեսքաշով», «վառով» ծածկում: Երեխայի երեսքաշը լինում է մի գունավոր թաշկինակ, աղքատ մարդկանցը՝ մի քանի արշին չիթ, իսկ հարուստներինը՝ մետաքսե կամ թավիշի գունավոր կտոր: Այս երեսքաշը թաղելիս վերցնում են և ուղարկում քահանային՝ իբրև նվեր, որից շատ անգամ նա չուրջառ է կարել տալիս իր համար:

Դագաղը շինում են հասարակ տախտակներից և ներքուստ սպիտակ միտկալով պատում, իսկ արտաքուստ, եթե երեխայի կամ երիտասարդի համար է՝ կանաչագույն, եթե միջահասակի՝ կարմիր, իսկ եթե ծերի՝ սև գույնի կտորով ծածկում ու նեղ ժապավեններով զարդարում:

Թարմ ծաղիկներով դագաղը զարդարելը կա թե քաղաքում և թե գյուղերում:

Քաղաքում հարուստները ննջեցյալին հանդերձ են հագցնում, ընտրելով նրա հանդերձներից ամենալավը, մնացած հանդերձները երեք օրից հետո լվանում են ու տալիս՝ փոխանն ու շապիկը ժամհարին կամ ննջեցյալին

լողացնող կնոջը, իսկ մյուսները՝ քահանային: Այս տուրքը կոչվում է «կողպուտ»:

Հետզհետե բարեկամ և ազգական կանայք խմբվում են ննջեցյալի տանը, և երբ դագաղը դնում են սենյակի մեջտեղում, երեսը դեպի արևելք դարձրած ու ոտների ու գլխի մոտ կերոններ կամ մոմեր վառում, տնեցիները շրջապատում են ու սկսում ողբալ:

Թե դյուղերում և թե քաղաքում կան հայտնի «գովք» ասող կանայք, որոնք նստում են ննջեցյալի սնարի մոտ, լալիս և բարձրաձայն ողբեր կամ «գովք» ասում:

Մյուս կանայք կատարյալ լռությամբ լսում են ողբը, և երբ մի տունը ավարտվում է՝ խմբովին «վա՜յ, վա՜յ» են անում և լալիս:

Ահա մի քանի «գովքեր»:

Ամուսնու վրա

Ախ իմ գլխաւոր ջան,
Մենծ տանուտէր ջան,
Մանտր բալէքի տէր ջան,
Տուն հարի տուն, արևիդ ղուրբան:
Զարսու-բազարիդ ղուրբան,
Գալած ճամբէքիդ ղուրբան,
Մեռնիմ էդ չինարի բոյիդ,
Որ հիմա դարցել ա մէյիդ (դիակ):
Գրողի լուսը քոռնար,
Աչխարքն էլ հուրիչ մարդ չկա՞ր,
Քոռցած լուսը համա քե՞ տեսաւ,
Վայ ումուտ (յոյս) ապաւա (ապաւէն) ջան, ջան, ջան:
Շատ իր ապրել աչխարիս վրէն,
Մանր բալէքիդ ուրախութէնը տէսէ.
Որ նրանց վիզն էլ իմնու խետ գանիր,
Ձեռքներս ծոցներս անօթի թողիր:
Տուն արի, մարդ ջան, ջան, ջան,
Նամուսիդ ղուրբան, ջան, ջան,
Թասիբիդ մատաղ, ջան, ջան,
Ղէյրաթիդ մեռնիմ, ջան, ջան:
Ճժերն անօթի են՝ հայ կուզեն,
Հո՞ւսա տամ, ձէն արա, քա-ջան,
Հնչի մեղի թողիր խլղի մուխտէլի,
Վզներս ծուռը, փորներս անօթի:

Որդու վրա

Այ իմ նխչուն գառ ջան,
Իմ չինըրի ծառ ջան,
Քեզ էլ մեռնիմ, քո բոյին էլ,
Քեզ էլ ղուրբան, քո յըշկէրին[316] էլ:
Քո պստի բէրնին ղուրբան,
Վայ իմ եղնիկ բալա ջան,
Վայ իմ ըլհէլ ջիվան ջան,
Իմ թազա թաքաւոր ջան:
Ախչիկ ի ջոկում որ քե պսակի,
Նշանի մաննիկը քաղքից ի բերում,
Կանաչ կարմիր կօսպանտ ի[317] կապում,
Բը հո՞ւր ա նաղարի զուռնի ձէն չեմ լսում:
Յաշկէրդ բաց, բալա ջան,
Ժամ են տանում, ոտներիդ ղուրբան,
Էն ճարտար լիզուիդ ղալադին ղուրբան,
Հնչի լռուեցիր, հնչի չես խօսում:
Ել վեր տես՝ ղոնախ են էկէ,
Խինա ենք դրէ, նաբօխտ են տալում,
Ել չորերդ խաքի, գիլաբդ (վարդենջուր) ցանենք
Տաննենք ժամը պսակենք բերենք:
Ախ խնամի ջան, հարի տես բալիս,
Պսակի չորերը խաքցըրեր եմ,
Անդուռ անակոչկա (անպատուհան) հորի մէջ դրէ,
Տես բալէս ինչ քաֆը մօր ա ռաստ էկէ:
Եարաբ խանից էլ արսըդ բան գլնի,
Հէքուց մէկէլ օր էս համենը պտի հնցնի,
Վայ ես իմա՞լ մոռնամ իմ ապիդ բալին,
Վայ խողը գլխիս, փոշին արևիս...

Սովորաբար ննջեցյալին մի օրից ավելի տանը չեն պահում, այլ տանում են եկեղեցի և դնում կամ եկեղեցում և կամ սրա մոտ, և հատուկ այս նպատակով չինված մի սենյակում, որ կոչվում է «մեռելատուն»:

Այս գավառում կանայք չեն ուղեկցում ննջեցյալին ոչ միայն եկեղեցուց մինչև գերեզմանատուն, այլև տանից մինչև եկեղեցի: Դիակառք ոչ քաղաքում և ոչ գյուղերում չկա. դագաղը տանում են տղամարդիկ կամ ուսերին դրած և կամ ձեռներին բռնած: Սովորաբար դագաղի երեսը բաց է լինում, և դագաղի խուփը մի մարդ գլխին դրած՝ տանում է ամենից առաջ:

---

316 *Աչքերին:*
317 *Էի:*

Սրան հետևում են տիրացուները և քահանաները, ապա չորս մարդ՝ դագաղը բռնած և ի վերջո տղամարդ հուղարկավորողներ՝ չրջապատած սգավորներին:

Ընդհանրապես չափահաս ննջեցյալի համար պատարագ են մատուցել տալիս և ապա թաղում: Պատարագի ժամանակ ննջեցյալը դրված է լինում եկեղեցում, կամ հատակին և կամ սև ծածկոցով ծածկված մի սեղանի վրա, երեսը դեպի արևելք ուղղած: Գլխի և ոտքերի մոտ վառվում են կերոններ: Հարուստները վառել են տալիս եկեղեցու ջահի մոմերը ևս: Պատարագի միջոցին բաժանում են «պաշտոնեքը». ննջեցյալի բարեկամներից մեկը, ձեռքին մոմեր ու դրամ դարսած մի մատուցարան, ծխատեր քահանայի առաջնորդությամբ բաժանում է քահանաներին մի-մի մոմ և 20-50-ական կոպեկ, պատարագիչ քահանային՝ մի ռուբլի և տիրացուներին 5-10-ական կոպեկ: Պատարագի ավարտին պատարագիչ քահանան մոտենում է դագաղին և «Հոգվոց» ասում: Եվ դառնալով դեպի ննջեցյալի մոտիկ ազգականները՝ մխիթարում ասելով. Սուրբ Հոգով մխիթարուէք: Միևնույնը ասում են նաև հուղարկավորողները:

Պատարագի ավարտին, որ տեղի է ունենում ժամը 9-10-ին, որովհետև միշտ առավոտյան ժամասացության կից են անում, հուղարկավորողները ցրվում են, իսկ մի քանիսը տան քահանայի հետ սգավորներին տանում են տուն:

Ճաշից հետո սգատուն հավաքված կանայք սգավոր կանանց տանում են եկեղեցի՝ հրաժեշտ տալու ննջեցյալին: Այստեղ կրկին սկսվում է սարսափելի կոծը և «գովքը», որից հետո բոլորը վերադառնում են սգատուն:

Ժամը 3,5-4-ին սկսում են զանգ տալ հատիկ-հատիկ, մյայն մեծ զանգը խփում են մի անգամ, սպասում մինչև ձայնը կտրվի, հետո կրկին խփում, այսպես չարունակում են 5-10 րոպե: Այս եղանակից բոլորը հասկանում են, որ «մեռելի զանգ են տալիս»: Հուղարկավորողները հավաքվում են եկեղեցի, գալիս են սգավոր տղամարդիկ քահանայի և մոտիկների ուղեկցությամբ: Սկսում են կատարել թաղման կարգ, որի ժամանակ բոլոր ներկա եղողներին մոմեր են բաժանում և սրանք վառած բռնում են: Ապա միևնույն կարգով տանում են գերեզմանատուն: Ճանապարհի վրա գտնվող տներից մարդիկ դուրս են թափվում, որ իրենց «ցավն ու չոռը» մեռելը հետը տանի: Մանավանդ հիվանդները աշխատում են մի կերպ դուրս պրծնել: Շատ անգամ սրանք թելով չափում են իրենց հասակը ու թելը ուղարկում դագաղի մեջ դնելու, որպեսզի իրենց «ցավն ու չոռն» էլ թելի միջոցով փոխանցվի մեռելին:

Գերեզմանը փորում են ազգական ննջեցյալների մոտ, 2-3 արշին խորությամբ: Գերեզմանահատները, որ սովորաբար ժամհարը կամ աղքատ մար-

դիկ են լինում, վարձատրվում են ննջեցյալի մի քանի հնոտիներով և երկու անգամ ճաշի են հրավիրվում:

Թաղման եկեղեցական կարգը կատարելուց հետո հուղարկավորողները մոտենում են սգավորներին և նրանց ձեռքը սեղմելով ասում. «Սուրբ հոգով մխիթարվեք»: Սրանք էլ հրավիրում են սրանց հենց գերեզմանի մոտ պատրաստած սեղանից մի բաժակ օղի խմել և մի քիչ չոր միրգ ուտել: Բոլորը գրեթե միատեսակ բարեմաղթում են. «Աստված հոգին մխիթարե, հետի դատաստանը քաղցր անա»:

Սրանից հետո կամ վերադառնում են եկեղեցի և երեկոյան ժամասացությունից հետո, կամ ուղղակի, գնում սգատուն՝ **հոգուհաց** ուտելու: Մատուցում են բոզբաշ և փլավ, երբեմն նաև թարմ ձուկ և խաշլամա (յուղի մեջ կարմրացրած միս): Հոգուհաց ուտողների թիվը չափազանց մեծ է լինում, որովհետև բացի հուղարկավորողներից գալիս են նաև գրեթե բոլոր աղքատները: Եվ եթե մի որևէ բարեկամ կամ հարևան չի գալիս հոգուհաց ուտելու, նրա տունն են ուղարկում մի ման բոզբաշ և 2-3 հատ հաց: Ոչ մի բարեկամի չեն մոռանում, մանավանդ որ սրանք էլ մինչև այդ հոգու հացը **սըգա-սեղան** են ուղարկում իրենց, որովհետև մինչև այդ ժամանակ սգավորները սիրտ չեն ունենում իրենց համար մի որևէ բան պատրաստելու: Սգասեղանը բաղկացած է լինում փլավից, ձկից, խաշլամից, իսկ պաս օրերին՝ լոբիից, սիսեռից, բոխուց և մի քանի չիշ օղի ու գինուց:

Թաղման երկրորդ օրը քահանան գալիս է ննջեցյալի տնեցիներին «**սգից հանելու**», այսինքն մինչև այդ օրը տանը նստած սգավոր տղամարդկանց չուկա տանելու: Միանում են նաև մոտիկ բարեկամները և մտնելով մի գինետուն, գինի և օղի են պահանջում ամեն մի բարեկամի հաշվին, խմում, ննջեցյալի համար բարեմաղթություններ անելով և երբեմն բոլորովին հարբած դուրս գալիս: Վերջին ժամանակներս քաղաքում քահանան դադարել է այս ծեսին մասնակցելուց: Այս ծեսից հետո միայն տղամարդիկ դուրս են գալիս տնից և գնում իրենց գործին:

Ննջեցյալի մոտիկ ազգական կանայք եկած են լինում սգատուն և այստեղ մնում են 3-4 օր, մինչև որ իրենց տեգրակիները կամ սկեսուրները չեն գալիս սգատուն, մխիթարում սգավորներին և տուն տանում իրենց: Հետզհետե գրեթե բոլոր բարեկամ և նույնիսկ հարևան կանայք գալիս են սգատուն՝ մխիթարելու:

Թաղման յոթերորդ օրը կատարում են «**այք եւ օխտեք**» («այգ և յոթը»): Հավաքվում են բարեկամ տղամարդիկ և կանայք, և քահանայի հետ գնում են գերեզմանատուն, ուր գերեզմանի վրա եկեղեցական կարգը կատարելուց ու «լաց ու կոծից» հետո խմում են մի-մի բաժակ օղի՝ բարեմաղթություններ անելով և վերադառնում սգատուն՝ ճաշելու:

Մի քանի օրից հետո կանայք վերցնելով իրենց հետ մի քանի կտոր սապոն, մի քանի փունջ չաքար և մի գլխի սև շալ՝ սգավոր կնոջ համար, գալիս են սգատուն, լվանում ննջեցյալի չորերը, որպեսզի կարողանան բաժանել և սգավորների գլուխները՝ որպեսզի սգից ելնեն: Սրանից հետո միայն սգավորները սկսում են տանից դուրս գալ և իրենց գործով զբաղվել:

Երբ օտարուհյունից մի որևէ ազգական վերադառնում է, վերցնում է իր հետ մի քահանա և նրա հետ միասին այցելելով սգավորներին՝ «հոգոց» է ասել տալիս:

Տարվա ընթացքում առավելապես հետևյալ «մեռելոց» օրերին օրհնել են տալիս ինչպես նոր, այնպես և հին ննջեցյալների գերեզմանները. Համբարձման չորեքշաբթի օրը, Բարեկենդանի հինգշաբթի օրը՝ ջրօրհնէքի երկուշաբթի օրվա փոխարեն, ի հիշատակ Վարդանանց նահատակների, Աստվածածնի վերափոխման և ս. Խաչի երկուշաբթի օրերը:

Սովորաբար ամեն շաբաթ օր, ճաշից հետո կանայք գնում են գերեզմանատուն, իրենց սիրելիների գերեզմանների վրա ողբալու և օրհնել տալու, այս պատճառով էլ քաղաքում՝ քահանաները հերթով սպասում են գերեզմանատանը:

Առաջին տարվա նշանավոր տոների նախօրյակներին բարեկամ կանայք և տղամարդիկ գնում են մխիթարելու սգավորներին:

Գերեզմանատները բոլորովին անխնամ են թողնված, գերեզմանները խումբ-խումբ և անկանոն կերպով կուտակված են միմյանց մոտ: Ընդհանրապես շատ քչերի վրա կան գեղեցիկ գերեզմանաքարեր: Սրանց մեծ մասը դագաղաձև է՝ եռաստիճան պատվանդանով:[318]

---

[318] *Այս գավառի բնակարանները, բնակիչների զգեստները և ընտանեկան կյանքը միանգամայն նման լինելով Վայոց ձորի, Բորչալուի գավառի և այլ հայաբնակ գավառներին, որ արդեն մի քանի անգամ նկարագրել ենք, ավելորդ համարեցինք այստեղ ևս կրկնել:*

Ամբողջ աշխատությունը նվիրվում է
Մեծ. պ. Աղեքսանդր Մելիք-Ազարյանին

ՀԱՎԱՏ[319]

ԼԵՌՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Գեղարքունիքի գրեթե բոլոր նշանավոր լեռների վրա կան ուխտատեղիներ, որոնցից մի քանիսը պաշտվում են անխտիր ամբողջ ազգաբնակչության: Այսպիսի ուխտատեղիներից ամենանշանավորը Աբդըլլասար կամ Աղմաղան լեռան (9332′) գագաթին գտնված փոքրիկ մատուռն է, ուր քրիստոնեական ոչ մի նշույլ չկա, ոչ էլ մի այլ կրոնի վերաբերյալ մի որևէ նշան: Շատ ու շատ հավանական է, որ հրաբխային այս լեռը իր ձագարաձև բերնի փոքրիկ լճակով երկար դարերի ընթացքում պաշտվելով՝ նվիրական է մնացել և այժմյան ազգաբնակչության: Գլխավորապես Վարդավառին և ընդհանրապես տոն օրերին թե հայ, թե թուրք և թե քուրդ խաչնարածներ իրենց խաչներով բարձրանում են այս լեռան գագաթը, լողանում և լողացնում են իրենց անասուններին այս լճակի մեջ, մատաղներ մորթում և աղոթում մի փոքրիկ մատուռի մեջ, որ վերջին դարիս մի հասարակ շինք է, կառուցված իբր Աբդըլլահ անուն մի տաճկի գերեզմանի վրա, որի մասին թուրքերը պատմում են, թե քրիստոնյաներից նահատակված մի բարեպաշտ մահմեդական է եղել, իսկ հայերը ասում են. թե մի թուրք տղա է եղել, որ հայ խաչնարածների հորդորմամբ կամեցել է քրիստոնեություն ընդունել և քահանա չգտնելով այդ խաչնարածներից, մկրտվել է լեռան գագաթի լճակում: Բայց երբ ծնողները իմացել են, խփել, սպանել են նրան նույն լեռան գագաթին, ուր այժմ իբր թաղված է:

ՋՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Նախկին ջրապաշտության հետքերից այս գավառում նկատելի են հետևյալները.

Նոր-Բայազետի մոտի ս. Հովհաննես կոչված կռապաշտական ուխտատեղից ներքև գտնվող երկաթա-ալկալիական աղբյուրը ևս սուրբ է համարվում: Սա սաստիկ բարակ է, և բնականաբար, խկույն ծծվում է գետնից, սակայն ժողովուրդը բացատրում է, թե ջուրը ծորակից գետին ընկնելուն պես՝ «համբառնում է երկինք»: Այս աղբյուրի մոտ խնկով ու մոմով, շատ անգամ էլ աքաղաղով ուխտ են գալիս. ա) բորոտներն ու կաշվի այլ հիվանդություններ ունեցողները, որոնք սափորով ածում են այդ ջրից իրենց

---

[319] *Տե՛ս Ազգագրական հանդես, XIII-XVI գրքեր: Իմ խնդրով նյութեր հավաքել են նաև պ.պ. Վ. և Վ. Պետրոսյանները:*

վրա, և կամ լողանում այդ աղբրի տակ շինված ավազանում, ոմանք էլ լոկ խմում են այդ ջրից: բ) Սակավակաթ կանայք մոմեր վառելով աղբրի առջև՝ քսում են այդ ջրից իրենց ստինքներին: գ) Երբ արտերին վնասում են մկները կամ մորեխները, տանում են այս ջրից և սրսկում արտերի վրա: դ) Հիվանդ անասուններին ևս բերում այս ջրից խմացնում են, որ առողջանան. նաև սակավաթիվ կովերի ծծերն այս ջրով լվանում են՝ որ կաթն առատանա: ե) Շատերն էլ այս ջրից տանում, ածում են խնոցու մեջ, որպեսզի ավելի մեծ քանակությամբ կարագ ստանան:

Պատմում են, թե այս ջրի մեջ թքողը կուրացել է, սրան հայհոյողի բերանը ծռվել է:

Նոր-Բայազետ քաղաքի մեջ հայտնի է Փոստոյի աղբյուրը (ծծմբային ջուր է), որ այսպես է կոչվում Փոստոյենց տան հանդեպ գտնվելու պատճառով: Սրա վրա նույնիսկ մի փոքրիկ մատուռ է շինված: Սրա կատարած հրաշագործություններից ուշագրավ է այն, որ սրանից 10-12 տարի առաջ Քոթե Դատեի Գեվոյի տղան, որ վեց ամսից ի վեր պապանձված էր, երբ գալիս է այս աղբրի ջրից խմում՝ անմիջապես լեզուն բացվում է:

Ոչ պակաս զորավոր է համարվում նաև Փաչաքենտ գյուղի կաթնաղբյուրը, որը մասնավորապես օգնում է սակավաթիվ կանանց: Այսպիսի կանայք թխում են ալնի (անալի) կլոճ (բաղարջ) և երկու մոմ վերցրած գալիս այս աղբյուրը՝ ուխտ: Վառելով մոմերն աղբյուրի առջև, նրանք վեցական պատառ կլոճ են ուտում, յոթերորդը դնում աղբրի գլխին և յոթական ափ այդ ջրից խմում:

Նշանավոր է նաև Քյուսաճըղ գյուղից երկու կիլոմետր հեռու գտնվող «Կանանչ աղբյուրը», որը երբ քիսաճղցիները ջուր չունենալու պատճառով կամեցան իրենց գյուղը բերել՝ «չընդունեց» և կտրվեց, բայց երբ սրանք հետ կանգնեցին իրենց այդ մտադրությունից և «զղջացին ու աղոթեցին», նորից սկսեց բխել:

Ուխտավորներ պակաս չեն նաև Դալիղարդաշի մոտ, Գռի ձորում գտնված սուրբ աղբյուրից:

ՔԱՐԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Քարերի պաշտման վերաբերյալ շատ քիչ բան կա Գեղարքունիքում, մանավանդ որ հսկայական քարաժայռեր, մեծ քարեր քիչ են պատահում: Ղուլալի գյուղի արևելյան կողմում գտնվում է մի քարաժայռ, որի մեջ կա մի փոքրիկ անցք: Շատ հաճախ գալիս են այս ժայռի առջև մոմ վառում, աղոթում. հազող երեխաներին էլ բերում վերոհիշյալ անցքից անց են կացնում, իսկ եթե փոքր-ինչ մեծ լինելով չեն մտնում, նրանց շորերն են անցկացնում, որպեսզի հազից բժշկվեն: Այս պատճառով և այս անցքը կոչվում

է խազախաչէ, հազի խաչ, թեև վրան ոչ մի խաչ չկա: Ժողովուրդը խաչ բառը շատ անգամ ուխտատեղի, սրբություն, սրբի իմաստով էլ է գործածում, ինչպես և այստեղ:

Խազախաչից հարավ, մոտ կես կիլոմետր հեռու ևս կա մի մեծ քար, որ քարաժայռից պոկվել, ընկել է ձորակի մեջ: Սա կոչվում է Տիկնաքար և ձորը, սրա անվամբ՝ Տիկնաձոր: Սրա վրա վերջին ժամանակներս բարեպաշտ մարդիկ մի երկու խաչ են կերտել, որովհետև երկար ժամանակից ի վեր նա պաշտվում է: Ոչ մի ավանդություն չկա սրա մասին:

Նոր-Բայազետի մոտի ս. Հովհաննես ուխտատեղում ևս մի մեծ քար կա ընկած, որի մեջ բազմաթիվ մեխեր են ցցված: Մոմի բոցից մրոտված կողերը ցույց են տալիս, որ սա ևս մի ժամանակ պաշտման առարկա է եղել, իսկ վրան խփված բազմաթիվ մեխերը վկայում են, որ շատ շատերը փորձել են իմանալ, թե իրենց ուխտը կատարվելու է թե ոչ, որովհետև խփված մեխը եթե առանց ծռվելու մտել է քարի մեջ, այս նշան է համարվել, որ մտադրությունը կատարվելու է, իսկ եթե ծռվել է և չի մտել, ասել է, որ չի կատարվելու:

Ալիղըռըխ գյուղում «Ջորավոր խաչ» և Օրտակլուի «Թուխ մանուկ» կոչված քարաժայռերը կտեխի և ֆալլոսի պաշտման մնացորդներն են:

Գյոզալդարա գյուղի ձորում կա կոնաձև մի մեծ քար, որ պաշտվում է: Գյուղացիները պատմում են, թե այդ մի ժամանակ քակորի ամրոց է եղել, որ պատկանել է մի շատ հարուստ մարդու: Մի օր մի աղքատ եկել է այդ տեղից մի երկու կտոր քակոր տանելու, բայց ագահ հարուստը չի թողել: Այն ժամանակ աղքատն անիծել է և բոլոր քակորը դարձել է քար:

ԿՐԱԿԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Այս գավառում ևս կրակի պաշտման վերաբերությամբ մնացել են գրեթե այն բոլոր հետքերը, որ նկատել եմ Վարանդայի և Բորչալուի գավառներում, ուստի չկամենալով կրկնել, կավելացնեմ միայն հետևյալները.

Համբարձման չորեքշաբթի օրը կանայք «ֆել» են անում, այսինքն իրենց հարևանների տներից կրակ են գողանում, որպեսզի իրենց կովերի կաթը ավելանա:

Տեառնընդառաջին վառված «տերնդեզի» մոխիրը տանում են կտուրը շաղ տալիս՝ որպեսզի «չարը խափանվի», ածում են հավաբունը՝ որ հավերը շատ ձու ածեն, ցանում են անասունների վրա՝ որ չոռից, ցավից ազատվեն. ամուլ կանայք իրենց ուչխուրի ծայրը վառում են այդ կրակի վրա՝ որ որդի ունենան:

Կրակի անշեջ պահելու հավատը մնացել է անթեզի սովորության մեջ. երեկոյան, երբ թոնիրը հետզհետե հանդչում է՝ մի քակոր են դնում այդ

հանգչող կրակի մեջ, որ կամաց-կամաց վառվելով մինչև մյուս օրը՝ թոնրի կրկին վառելու ժամանակը տևի:

Գուցե ավելի որոշ լինելու համար հարկավոր լինի չեշտել, որ օջախի և թոնրի սուրբ համարվելը, սրանց վրա կնունք և պսակ կատարելը, սրանց անունով երդվելը այստեղ ևս դեռ մնացել է:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Կատու. *Այս գավառում ևս կատու սպանելը մեծ մեղք է համարվում, և սպանողը եկեղեցական ապաշխարանքի է ենթարկվում: Այստեղ ևս, ինչպես Ջավախքում,[320] պատմվում է, որ կատուն Քրիստոսի ճեռքի թաչկինակից է առաջացել՝ ամոթահար Մահմետի քթից ընկած երկու անիծած մկները բռնելու:*

Կատուն «մուրտառ» չէ, այլ «հալալ»՝ չեն զարշում, երբ նա մերձենում է կերակուրներին, լիզում ամաններըը, մինչդեռ մկից, շնից գարշում են:

Շուն. *Սև շունը տան համար լավ է համարվում, որովհետև հալածում է չարերին:*

Նա ախրում է, երբ տեսնում է մահվան հրեշտակը իրեն ալրոջ տանը մոտենալիս, ուստի և ոռնում է: Ոչ մի շնատեր իր շանը ինքը չի սպանում, որովհետև նա իր վրա երախտիք ունի: Եվ երբ իր բնական մահով սատկելու է լինում, տերը, կամենալով թեթևացնել նրա տանջանքները, գնում է մոտը և ասում. «Մեր աղ ու հացը քե խալալ էլնի» (Մեր աղ ու հացը քեզ հալալ լինի):

Հոպոպ. *Ժամանակով մի հարս տանը լողանալիս՝ սկեսրայրը ներս է մտնում: Հարսը սաստիկ ամոթխածությունից թռչուն է դառնում և տանը գլխին հերթիկից դուրս թռչում:*

Արորիկ. *Մեղք է համարվում այս թռչնին սպանել, որովհետև սրանից ամեն մեկը ունի մի ընկեր, որը սաստիկ վշտանալով՝ չի կարողանում տանել այս կորուստը և սատկում է: Արորիկ սպանողը «իլանջուղ» կոչված ցավն է ստանում:*

Արագիլ. *Սրան կոչում են լակակ, երբեմն էլ «հաճի-լակլակ», հավանականորեն թուրքերի ազդեցությամբ, որովհետև նրանք էլ են նույն մակդիրը տալիս սրանց, կարծելով, թե Մեկկայից են գալիս: Մեղք են համարում սրանց սպանել կամ վնասել, որովհետև սրանք ևս արօրիկների պես զրկվելով իրենց ընկերոջից՝ ուրիշը չեն ուզում դառնել և վշից սատկում են:*

Գարնանը՝ երբ սրանք առաջին անգամ երևում են, գյուղացիները մեծ ուշադրությամբ դիտում են, թե ի՞նչ կա նրանց կտուցներում և սրանից

---

320 Տե՛ս իմ «Ջավախքի բուրմունք», եր. 68:

գուշակություն անում, այսպես՝ եթե հացի կտոր լինի՝ առատություն է լինելու, եթե չոփ է (ծղոտ)՝ անտարբերություն, եթե կտավ՝ մահ: Եթե արարիչը մեկի տան կտուրին բույն չինի՝ այդ տնեցիներին բախտավորություն է սպասում:

ՇԵՄՔԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Նոր-բայազետցիները տանը, գերդաստանին պատահած բարեբախտություններն ու դժբախտությունները վերագրում են տան շեմքի ազդեցության: Այսպես, օրինակ, եթե «շեմը բերում ա», նրանից անցած և ներս մտած անասունը, նորահարսը սկսում են դիրանալ, օգուտ տալ, երկար ապրել, իսկ եթե «շեմը չի բերում», լղարում են, օգուտ չեն տալիս և չուտով մեռնում են:

«Բերող շեմը» հարգվում, սիրվում է ոչ միայն իր տնեցիներից, այլև դրկիցներից, որոնք նրա կտուրին մատաղ են անում. գառ մորթում են այնպես՝ որ արյունը ներքև հոսելով ներկում է դռան ճակատը և շեմը:

Ջերող շեմի տակ հուռութներ են թաղում, դռան վերև չորացրած փուշ են աստղաձև կապում, և եթե այս միջոցները չեն օգնում «բերող» դարձնելու, պատ են քաշում և մի ուրիշ տեղից են դուռ բաց անում:

Երբ նորապսակները եկեղեցուց տուն են վերադառնում, շեմի առաջ երկու ափսե են դնում, որ կոտրեն, զոհեն և ապա անցնեն: Նաև քավորը իր թուրը խրում է դռան ճակատին և այդպես բռնում, որ նորապսակներն անցնեն: Տղոցկանը, ինչպես և՛ տատմերը, առաջին անգամ շեմից անցնելիս ծայրին սոխ անցկացրած չիշ են առնում ձեռին, և անցնելիս Հիսուս Քրիստոս ասում:

Երբ մի երեխա աչքերը խաղացնում է, Ավետարան ունեցող տան շեմի երկու մեխ են խփում, որ դադարի խաղացնելուց, առողջանա:

Շեմի վրայից միմյանց ձեռք չեն տալիս և բարևում, այլապես կկռվեն միմյանց հետ:

Տղաբերքի ժամանակ երեխայի ընկերքը թաղում են շեմքի մոտ:

Երբ շունը սատկում է՝ նրա գլուխը կտրում են և շեմքի տակ թաղում, դա հուռութ է համարվում «չարոցի» դեմ:

ՏԱՐԲԵՐԻ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Երկիր. Սրա ձևը տափարակ է, անծայր և անվերջ: Ցամաքը շրջապատված է ջրով, որ Մեռյալ ծով կամ Օվկիանոս է կոչվում, ուր մշտական խավար է տիրում և որի մեջ ոչ մի կենդանի չկա, բացի մի մեծ ձկից: Այս ձու-

կը փաթաթվել է ցամաքին և մի թիզ է մնացել, որ գլուխը պոչին հասնի, երբ հասավ՝ աշխարհը պիտի կործանվի:

Երկիրը կանգնած է եղան պոզերի վրա, երբ նա Աստծու հրամանով ցնցում է գլուխը՝ երկրաշարժ է առաջանում:

Երկիրը երկու աշխարհներից է բաղկացած՝ լույս և մութ: Լույս աշխարհը երկրի վրա է գտնվում, իսկ մութը՝ երկրի մեջ: Պատահում է, որ մարդիկ ընկնում են մութ աշխարհը, այստեղ երկու «պոչ» (խոյ) կա՝ սև և սպիտակ, որոնք գալիս միմյանց հետ կռվում են. եթե մութ աշխարհ ընկածը կարողանա «իրեն ցկել» (հեծնել) սև պոչի վրա՝ սա նրան կտա սպիտակին և վերջինս նրան կհանի լույս աշխարհ: Իսկ եթե հենց սկզբից սպիտակի վրա հեծնի՝ սա կնեամ նրան սևի վրա և վերջինս կլիջեցնի նրան մութ աշխարհի խորքերը:

Լույս աշխարհում միշտ էլ, Ադամից առաջ էլ, մարդիկ են եղել: Սրանք թեև մարդակերպ են եղել, սակայն անասունի պես անլեզու և անխելք: Սրանց միջից Աստված ընտրել է Ադամին, խոսելու շնորհ և խելք տվել ու դրախտում բնակեցրել:

Ադամը 50 դույգ արու և էգ զավակ է ունեցել, և կրտսերներին ամուսնացրել է ավագների հետ՝ ասելով. «Սա սուրբ սերմնացանություն է, մեղք, անառակություն չէ»:

Երբ Ադամը մեղանչել է աստծու դեմ, նրան մի մորթի է տվել իր մերկությունը ծածկելու, այդտեղից էլ նա սովորել է շոր հագնել՝ կարելով անասունների մորթիներից:

Մի անգամ «չարը» ագռավի ձևով վերցրել է մի սատանի եղունգ (վանակատ) և մորթել մի ուրիշ ագռավ: Կայենը այս տեսնելով ինքն էլ վերցրել է մի այդպիսի եղունգ և մորթել Աբելին: Միայն մորթելիս եղունգը փշրվել է: Այնուհետև Կայենը հետամուտ է եղել, որ մի ավելի կարծր բան գտնի, որ կտրելիս չփշրվի, և երբ ինքը չի կարողացել գտնել՝ ավանդ է թողել իր որդիներին, որ նրանք գտնեն, և սրանք երկար որոնելուց հետո գտել են երկաթը: Այսպես ուրեմն դարբինները Կայենի սերնդի մեջ են սկիզբ առել:

Սպանված Աբելի դիակը հողը չի ընդունել, որքան որ փորել են և թաղել, հողը դուրս է ձգել գետնի երեսը: Այս ժամանակ Աստված հրամայել է ընդունել և միևնույն ժամանակ օրհնել է հողը՝ ասելով. «Ամեն բան քեզնից կստեղծեմ, պտուղներ, աղբյուրներ, ոսկի և այլն. ամեն ինչ քեզնից ծնունդ կառնե և քեզ կը վերադառնա»: Այն ժամանակ հողն ընդունել է Աբելի դիակը:

Կայենի սերնդի մեջ բազմացել են աղջիկները, իսկ Սեթի սերնդի մեջ՝ տղաները: Աղջիկները հնարել են թմբուկն ու քնարը, և նվագածությամբ, երգով ու պարով որսացել Սեթի տղաներին: Եվ երբ չարությունը սրանց

մեջ տարածվել է՝ Աստված բարկացել է և ջրհեղեղ արել: Ջրհեղեղից ազատվել է միայն Նոյը, և երբ սա տնկել է խաղողի որթը, նրա տակ երեք տեսակ կաթ է լցրել, մարդու, առյուծի և շան: Այս պատճառով և գինի խմողը այս երեքից մեկի՝ առյուծի, մարդու կամ շան բնավորություն է ստանում. կամ կատաղում, կամ լուռ նստում և կամ չարունակ հաչում:

Աշխարհը իր գոյությունը պիտի չարունակի մինչև որ Ղուժի՝ աղի արձան դարձած կինը որդի ծնի, որը և կոչվելու է Նեռ: Այդ տարին «աղեղնակ» (ծիածան) չի կապվելու: Նեռը պետք է հրաշքներ գործի, մարդկանց հավատից հանի, և իր հավատացյալների ճակատներին իր կնիքը խփի, որպեսզի վերջին դատաստանի միջոցին որոշվեն: Նեռին պաշտպանելու է աղուջ-մաղուջների թագավորությունը, սակայն չուտով Քրիստոս նորից դալու է աշխարհ, կռվելու է Նեռի հետ, նրան հաղթելու և վերջ դնելու աշխարհի գոյությանը: Այն ժամանակ արդեն լինելու է վերջին դատաստանը: Ս. Գրիգոր Լուսավորչի խնդիրքով Նեռի երևալուց առաջ Հայոց ազգը վերջացած պիտի լինի, որպեսզի չենթարկվի նրա փորձանքներին:

Բացի մարդկանցից, աշխարհում բնակվում են նաև **կեսը շուն, կեսը մարդ արարածներ**, որոնց գլուխը շան գլխի նման է, իսկ մյուս մասերը՝ մարդու: Սրանք խոսելու փոխարեն հաչում են: Սրանք էլ մարդկանց պես վարում են, ցանում, առնում, ծախում, ունեն քաղաքներ, իշխան, թագավոր:

Հեռավոր կղզիներում ապրում են **աղուջ-մաղուջները** (**Գոգ ու Magog**). որոնք ութ տարեկան երեխայի մեծության են, միայն շատ երկար մորուք ունեն, այնպես որ քսվում է գետնին: Նեռի ծնվելիս սրանց թագավորությունը մի առ ժամանակ պետք է շատ զորեղանա:

Լեռներում, քարանձավներում և մանավանդ Մասիսի կողերին ապրում են **յոթ գլխանի հրեշներ**, որոնք չափազանց հաղթանդամ են, ծանրաքայլ և անխելք: Հաճախ սրանք հափշտակում են մարդկային ցեղից սիրուն աղջիկներ և կանայք և նրանց հետ ապրում:

Այսպիսի հրեշների մեջ կան և այնպիսինները, որոնք միայն մի աչք ունեն ճակատի մեջտեղում: Սրանք կոչվում են **թափագյոզ** կամ **քալլագյոզ**: Պատմում են, թե այսպիսի մի թափագյոզի մոտ մի անգամ մի մարդ է գնացել, որին նա այրի մեջ փակել է, որպեսզի քնի, վեր կենա և հետո նրան ուտի: Սա երկաթե չամփուրը տաքացրել է, և խրել այս թափագյոզի աչքը՝ կուրացրել: Հետո իր վրա է առել մի ոչխարի մորթի և խառնվելով ոչխարների հետ՝ մի կերպ դուրս է պրծել այրից, որի դռան առաջ թափագյոզը նստած՝ մեկ-մեկ շոշափում էր դուրս ելնողներին, որ բռնի իր կուրացնողին:

Ծով. Ծովերը անհատակ են և լի ձկներով, ծովային աղջիկներով, սատանաներով, ձիերով և գոմեշներով: Ծովային աղջիկները «խուրնիկ հրեղեն» են կոչվում, սրանք չափազանց գեղեցիկ են, և հաճախ սրանք կիսով չափ

դուրս գալով ջրի միջից հրապուրում են նավորդներին և մի որևէ վնաս պատճառում:

Ծովային գոմեշները սպիտակ են լինում: Սրանցից չատ են նկատված Սևանա լճում: Սրանք ևս հաճախ դուրս են գալիս ծովից և մերձենում երկրի մատակների հետ՝ տալով մազանգաստաններ, որոնց ոտները, ագին և ճակատը չալ է լինում: Պատմում են, թե մի անգամ մի նորադուզգու մատակ մի ամբողջ ամիս անհետք կորչելուց հետո հանկարծ գտնվում է ծովի ափին: Ինն ամսից հետո այս մատակը մի սպիտակ ձագ է ծնում, որին կենդանի պահելու համար ստիպված են լինում չարունակ ջրով լի տաշտի մեջ դնել: Յոթ օրից հետո, երբ հանել են տաշտից, այլևս չի կարողացել ապրել և սատկել է:

Երկնակամարը մի անսկիզբ և անծայր ծով է, որ կազմվել է, երբ երկրիս վրա Աստված ջրերը բաժանել է: Նա յոթը «ղաթ» (շերտ) է, և յուրաքանչյուր ղաթը ավելի հաստ է, քան այն տարածությունը, որ գտնվում է երկրիս և արևացող երկնակամարի միջև: Երկնակամարից վերև գտնվում է Աստծու ոսկե թախտը (գահը), բարձրում յոթ ափ ջուր, որից Աստծու բարկացած մեղոցին մի-մի կաթիլ թափվում է նրա գլխին՝ բարկությունը իջեցնելու:

Արև և լուսին. Սրանք քույր և եղբայր են, քույր արևը սաստիկ ամաչկոտ է և վախկոտ, այս պատճառով էլ երկու պահապան հրեշտակ ունի, որոնք նրան ցերեկը երկրի երեսով, իսկ գիշերը՝ տակով ման են ածում:

Արեգակն ու լուսինը մի մայր ունեն, որը ապրում է երկնքում, աստղատունը: Սա մի անգամ իր խմորոտ ձեռքով մի լավ ապտակ է տվել լուսնի երեսին,[321] որի վրա այժմ էլ նկատելի են խմորի տեղերը: Գիշերն արեգակը «մեր է մտնում», գնում հանգստանալու իր մոր ծոցում:

Այժմ էլ պառավները առավոտները աղոթելիս, սրբերին դիմելուց հետո, դառնում են արեգակին. «Ով մերը մեր արեգակ, դու հասնիս օգնության» և այլն:

Հաճախ լուսնին «քեռի» են կանչում, ուրեմն և կանչողը իրեն արևաորդի է համարում:

Լուսնի նորին ծնվողը չուտ, իսկ հնացած ժամանակը՝ ուշ կսպիտակի:

Լուսնի նորը տեսնելիս փողի վրա են անմիջապես նայում, որ մինչև մյուս նորը չարունակ փող ստանան, և կամ բախտավոր համարված մարդու երես են նայում, որպեսզի իրենք էլ բախտավոր լինեն:

Երբ լուսնի շուրջը բակ է բռնում՝ ասում են, որ եղանակը խառնվելու է:

Աստղեր. Սրանցից ամեն մեկը մի մարդու է պատկանում: Եթե վերջինս արդար է լինում՝ աստղը պայծառ է փայլում, իսկ եթե մեղավոր՝ խավար:

---

321 *Սրանց մասին պատմված ավանդությունները նույնն են, ինչ որ պատմվում են Լոռիում (տե՛ս Ազգ. Հանդ., գ. X, եր. 198-199):*

Աստղերը պետք է իրար բռնեն, իրար դուր գան, որպեսզի սրանց մարդիկն էլ միմյանց բռնեն, միմյանց դուր գան:

Բարի աստղի տակ ծնվածը բարի է լինում, չարի տակ ծնվածը՝ չար: Միևնույն աստղի տակ ծնվածները միմյանց նման և միմյանց սիրող են լինում, այստեղից էլ առաջացել է «Մի աստղի տակ են ծնվել» դարձվածքը, որը նշանակում է միմյանց նման են և միմյանց սիրում են:

Երբ մարդը մեռնում է, նրա աստղը երկնքից վայր է ընկնում, իսկ երբ ծնվում է՝ Աստված նրա համար նոր աստղ է ստեղծում:

Ոմանք էլ ասում են, թե աստղերը բլոճներ (բողոճ) են: Երբ երկնքից թափվում են երկիր՝ «պէծել» են կոչվում, և չարունակում երկրի վրա էլ լույս տալ: Սրանց սպանելը մեղք է համարվում:

Քարվան-ղռան *աստղն այսպես է կոչվում, որովհետև շատ անգամ նրան լուսո աստղի տեղ ընդունելով քարավանը ճանապարհ է ընկնում և առավոտյան ցրտից սառչում կամ մթությունից մոլորվում:*

Հարդ-գողի ճանապարհին *սանամոր գարմանի ճանապարհ են կոչում, և պատմում են, որ սանամայրը քավորի գարմանից գողացել է և տանելիս ծակ փեչից թափվելով հետք թողել երկնքի վրա:*

Գիսավոր աստղին *կոչում են «պատժատու կամ պոչով աստղ» և հավատում են, որ սա երևալիս համաճարակ, սով, սրածություն է լինելու:*

Միածանը *երևալիս ասում են «աղեղնակ է կապել»: Սա Աստծու գոտին է, որի տակից անցնողը սեռը կփոխի, տղան աղջիկ, աղջիկը՝ տղա կդառնա:*

Երբ միածանը կրկնակի է լինում, ասում են՝ պայծառը հայինն է, խավարը՝ թուրքինը:

Միածանը տեսնելիս խաչակնքվում են և ուրախանում, հավատալով, որ այդ նշան է, որ Աստծու սիրտը մարդկանց վրա քաղցրացել է, նրա ողորմությունը հասել, ուստի և ասում են՝ օրհնեալ ես Աստված և կամ ինչպես Լոռում՝

Կանաչ ու կարմիրը իմ ախպոր գլխին,
Սևն ու սպիտակը՝ թուրքի գլխին:

Ամպերը *սունկերի նման բաներ են, կամ բամբակի քիլաներ (քուլաներ): Սրանք իջնում են ծովի վրա՝ ջուր խմում և ապա բարձրանում և անձրևում: Ամպը առաջին անգամին գոռալիս սխտորը փչանում է:*

Եթե ամպի առաջին գոռոցը փետրվարին լինի՝ այդ տարին բերքը շատ սակավ է լինելու, իսկ եթե մարտին՝ շատ առատ:

Եղիականին, այսինքն Եղիա մարգարեի տոնին եկած անձրևի ամեն մի կաթիլը մի-մի մարգարիտ է. ծովերի երեսին փոքրիկ արկղիկներ կան, դրանք բացվում են և լցվում այդ մարգարիտ անձրևի կաթիլներով և խառնաուռվում ծովի մեջ: Ձկնորսները հանում են և առանց բաց անելու վաճառում: Եթե Եղիականին հորդ անձրև գա՝ բերքը շատ առատ կլինի:

Երաշտը աստվածային պատիժ են համարում, իրենց մեղքերի համար տրված, ուստի և հասարակական մատաղ են անում, Սևանի կամ Նորադուզի ս. Նշանը բերելով, թափոր են կատարում, եկեղեցիներում հսկում անում: Բացի սրանից երեխաները խուշկուրուրիկ են շինում, այսինքն մի ցախավելի վրա շորեր են գցում, ծայրին մի փափախ ծածկում, մի փայտ էլ գլխի մոտից հորիզոնական ձևով անց կացնում, որ թևեր ձևացնի և ապա այս թևերից բռնած ման են ածում դռնեդուռ և երգում.

Խուշկուրուրիկն էկեր ա,
Շալե չապիկ խագեր ա,
Ջովե գոտիկ կապեր ա,
Երկնքուց ցող ա ուզում,
Գետնից պտուղ ա ուզում,
Եղ բերեք՝ պորտին քսենք,
Ջու բերեք՝ թաթին դնենք:

Տանեցիները դուրս են բերում մի ամանով ջուր և խուշկուրուրիկի գլխին, մասամբ էլ նրան ման ածող երեխաների վրա են ածում: Ապա երեխաներին ձու և յուղ են տալիս, որ տանեն ձվածեղ անեն՝ ուտեն, զվարճանան:

Նաև չորս կամ հինգ որբ և այրի կամ ամուլ կանայք լծվում են արորին, ու տղամարդու չորեր հագած մի ուրիշ կին մաճկալի առաջնորդությամբ գրեթե չորացած գետակը վարում է:

Ավելի հաճախ մի «անհավատի», այսինքն ոչ քրիստոնյայի հին կամ նոր գերեզմանը գիշերով ծածկարար բաց են անում, գանգը վերցնում, տանում գետում յոթ անգամ լվանում, և ապա բերում կրկին իր տեղը դնում:

Գյուղացիները սկզբում նպաստում էին ինձ՝ պեղումներ կատարելու, որովհետև հավատում էին, որ կռապաշտի գերեզմաններ բանալով՝ անձրև էի տեղացնում:

Ոմանք էլ էշ են լողացնում գետի մեջ, որ անձրև գա:

Երբեմն էլ երաշտը առաջանում է նրանից, որ հացատեր մարդիկ կամենալով իրենց հացը թանկ գնով վաճառել՝ երկինքը կապել են տալիս, որ բերքը ոչնչանա:

Սրանք գրբացներին «գիր» են անել տալիս, որը էդ օձի արյունով գրում է որձ օձի գլխին: Կամ խմորից երեխա են շինում և խանձարուրում, դնում օրորոցի մեջ և մի անգիտակ մարդ վարձում, որ ամբողջ օրը անդադար օրորի: Եթե սա մինչև երեկո օրորում է՝ երկինքը կապվում է, իսկ եթե հետաքրքրվում է, թե ինչո՞ւ են լաց չլինող երեխային այսքան երկար օրորել տալիս և բաց է անում խանձարուրը երեխային տեսնելու՝ դյուրը քանդվում է:

Երկինք կապողներից ճարտարագույնները մի անտեսանելի էշ են շինում, որը զռալով սար ու ձոր շրջում է: Սա քանի զռում է՝ երկինքը կապ-

վում է: Մարդիկ լսում են սրա զռոցը, բայց իրեն չեն տեսնում: Սակայն նա, ով երկանոց (սիրի-սիրի բույսի տերևը) ունի ձեռքում, տեսնում է էշին, նրան ջարդ ու փշուր անում և այսպիսով բաց անում երկինքը:

Կարկուտ. Կարկտի պատճառած վնասներից ազատ մնալու համար ոչ թե ուրիշ գավառների նման Զատկից մինչև Վարդավառ ամեն երկուշաբթի, այլ միայն մի օր, ս. Թադեոս առաքյալի տոնին, կարկտի կերակի են պահում: Իսկ կարկուտ եկած միջոցին դիմում են հետևյալ միջոցների՝ կարկուտը կտրելու:

1. Ճրագներ են վառում:
2. Խաչերկաթը[322] դուրս են ձգում:
3. Եկեղեցու զանգակները զարնում են:
4. Առաջնեկ տղաները կարկուտի մի հատիկ դնում են տան չեմքի վրա և դանակով կտրում:

ՈԳԻՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

ԲԱՐԻ ՈԳԻՆԵՐ

Տան դելվաթ. Սա մի ոգի է, որ անտեսանելի կերպով ապրում է տան մի որևէ անկյունում, երբեմն էլ երևում տան տերին օձի, մկան, մարդու, էշի և այլ կերպարանքով:

Ամեն օր տղամարդու (տան գլխավորի) անկողինը ճգելիս վերմակի մի ծայրը հետ են ծալում, որպեսզի դելվաթը դա նրա վրա նստի:

Ամեն մի կիրակնամտի, դեռ եկեղեցու զանգերը չտված, տանտիկիններները հետ են անում ծալքի (անկողինները դարսելու տեղ) վրա ճգված ջեջիմը՝ որպեսզի տան դելվաթը բարձրանա նստի այդ փափուկ տեղում:

Երբ գիշերը ստիպված են լինում թախտը ավելու՝ նախ ավելի ծայրը փոքր-ինչ վառում են ճրագի վրա և ապա ավլում. աղբն էլ մի անկյունում կլիտում և միայն ցերեկը դուրս թափում, ապա թե ոչ դելվաթը կբարկանա և տանից կփախչի:

Նաև ճրագ վառած միջոցին մազերը չեն սանրում, որովհետև թախկուչի (սանրի ատամներում մնացած մազեր) հետ դելվաթն էլ դուրս կերթա:

Կանայք զգուշանում են տան մեջ իրար հետ կռվելուց, ապա թե ոչ՝ դելվաթը կխառնվի, կերթա:

Դելվաթի վերաբերմամբ պատմում էին հետևյալը. մի գյուղացի մի գիշեր դաշտով անցնելիս հեռու նկատում է երկու ճրագ. երբ մոտենում է, տեսնում է մի էշ՝ ականջներին երկու վառած մոմ կպցրած: Էշն ասում է.

— Բարաջողում:

---

[322] Թոնրի վրա դրվող խաչաձև երկաթ:

Սա վախենալով՝ չի պատասխանում: Էշը կրկնում է բարևը և ավելացնում.

– Բարև եմ տալում, հնչի՞ չես առնում:

Այս անգամ դյուղացին սիրտ է առնում և պատասխանում.

– Բարով, էշ ախպեր, էդ ո՞ւր ես էթում:

– Ընձի տար ձեր տուն,– ասում է էշը:

–Քեռ տանեմ մեր տուն ի՞նչ անեմ, դուր վի՞ր էշն ես,– պատասխանում է դյուղացին:

– Ես էշ չեմ,– բարկանում է էշը,– ես Օհաննից դելվաթն եմ, համա հիմի խռովել եմ, ուրիշ տեղ եմ էթում եմ: Էթամ Սուքիասի տուն,– ասում է էշը և անհայտանում:

Հետևյալ առավոտը տեսնում են, որ Սուքիասի շտեմարանները ցորենով լցվել են:

Մի ժամանակ էլ մի կարավանատան սենյակներից մեկում դիշերները պատի միջից մի ձայն էր լսվում, որ սպառնական ձևով ասում էր՝ էկա հա՛: Այդտեղ դիշերողները լեղապատառ թողնում փախչում էին: Մի անգամ էլ սրտոտի մեկը միևնույն սպառնալիքը լսելով, փայտով խփում է պատին և ասում՝ դեհ արի: Անմիջապես պատը բացվում է և այնտեղ պահված դելվաթը իրրև ոսկի թափվում է ցած:

Ղամաթ. Նոր-բայազետցիները ևս հավատում են, որ եթե մի որևէ բարիք Աստվածանից նշանակված չէ մեկի համար, իրենց խոսքով՝ ղամաթ չէ, ոչ մի դեպքում չի կարող օգտվել նրանից. մինչդեռ ղամաթը ինքն իրեն կդա: Սրա վերաբերությամբ պատմում են, որ մի անգամ Մովսես մարգարեն բարձրանում էր սարը Աստծու հետ խոսելու, պատահում է մի աղքատ մարդու, որ արյուն-քրտինքը մտած մի չալակ ցախ էր տանում քաղաք ծախելու: Մովսես մարգարեն խղճահարվելով՝ ցանկանում է մի ողորմություն տալ, սակայն մոռը փող չի լինում: Այս պատճառով էլ հանում է իր մատանին և տալով նրան՝ պատվիրում, որ հետևյալ օրը այդ մատանիով գա իր մոտ՝ իրենից ողորմություն առանալու: Աղքատը ուրախացած վերցնում է մատանին և ավելի ապահովության համար բերնի մեջ պահում: Սակայն, երբ բարակ դերանի վրայով կամենում էր գետն անցնել, հանկարծ սայթաքում է, ընկնում ջուրը և մատանին էլ կորցնում: Մովսես մարգարեն իմաստուն լինելով իմանում է այս, ինչպես և այն, որ մատանին ձկներից մեկը կուլ է տալիս: Ծերունին հետևյալ օրը տխուր-տրտում կրկին գնում է ցախի, պատահում է Մովսես մարգարեին, որ հատկապես սպասում էր նրան: Ծերունին վշտացած պատմում է մատանու կորստյան մասին: Մովսես մարգարեն մխիթարում է նրան և մի թաշկինակ լիքը արծաթ փող նվիրում: Ծերունին վերցնում է թաշկինակով փողը, չնորհակալ լինում և անմիջապես վերադառնում տուն, որպեսզի մի նոր փորձանք չպատահի: Սակայն այս անգամ էլ, երբ սաստիկ հոգնած նստում է փոքր-ինչ հանգստանալու և

թաշկինակով փողը դնում է կողքին, հանկարծ մի թռչուն է իջնում և դրամը փախցնում: Մովսես մարգարեն այս ևս իմանալով՝ դիմում է Աստծուն և հարցնում, թե ի՞նչ է պատճառը, որ այդ խեղճ ծերունին չկարողացավ օգտվել իրեն արված բարիքից: Աստված տալիս է Մովսես մարգարեին մի փարա և ասում. «Տար տուր նրան այս փարան, քո տվածից չկարողացավ օգտվել՝ գուցե իմ տվածից օգտվի»: Մովսես մարգարեն կատարում է Աստծու պատվերը: Ծերունին դժկամությամբ վերցնում է այդ մի փարա ողորմությունը և տուն վերադառնալիս դրանով մի ձուկ գնում: Եվ երբ նրա կինը ճղում է ձկան փորը՝ մաքրելու, գտնում է Մովսես մարգարեի՝ իր ամուսնուն տված մատանին: Զարմանքը ավելի մեծ է լինում, երբ ձկան փորոտիքը դուրս թափելիս՝ մի թռչուն մի թաշկինակով լիքը արծաթ կտուցից վայր է դնում ու ձկան փորոտիքը առնելով թռչում: Ծերունին անմիջապես մատանին և դրամն առած ուրախ-ուրախ գալիս է Մովսես մարգարեի մոտ և պատմում իրեն պատահածը: Սա վերցնում է իր մատանին, իսկ դրամը նրան նվիրում, ասելով. «Տար, էս էլ քո զամաթն է, առանց զամաթի ոչ մի բարիքից չի կարելի օգտվել»:

ՍՐԲԵՐ

Ս. Հովհաննես. Նոր-Բայազետից դեպի արևելք, մոտ երկու վերստ հեռու գտնվում է ս. Հովհաննեսի ուխտատեղին: Հանդիպակաց ժայռից ահագին քարեր գլորվելով թափվել են իրար վրա և կազմել մի քարայր՝ երեք փոքրիկ բաժանմունքներով: Լույսը քարերի ճեղքվածքներից ներս թափանցելով հազիվ աղոտ կերպով լուսավորում է: Դեպի այս քարայրը բարձրանալու համար չինված են սադուղներ, և սրանց կողքերին կանգնեցրած են բավականաչափ խաչքարեր, որոնցից չատերը առանց մի որևէ արձանագրության են: Ուխտատեղի քարայրի մեջ ևս կա մի խաչքար, որի վրա կարդացվում է. *«Սուրբ խաչս բարեխաւս Ծատուրին. թվ. ՌՒԹ (1595). Քիրամ կազմող»:* Փոքր-ինչ ներքև և կողքին՝ *Ծատուրս եդի ի խաչի ոտն[323] զապրանացս տասն. ով ինչ մարդ որ հանէ ի սրբոյն՝ խռով կենայ սուրբն. ՌՄԽ (1791):*

Քարայրից փոքր-ինչ հեռու ընկած մի մեծ քարի երեսին գրված է.

ի թվին ՋՂԸ (1549) Թոմաս ծառայ Աստուծոյ եկի ի Գաւառէն ի ծառայութիւն սուրբ Յովհաննէսին. չատ աշխատեցայ. յիշեցէք ի Քրիստոս:

Ավանդաբար պատմվում է, թե այս արձանագրության մեջ հիշված Թոմա ճգնավորը ճգնել է այս ուխտատեղի հանդեպ գտնված քարաժայռի մի ծերպի մեջ, որ այժմ էլ ուխտատեղի է սուրբ Գևորգ անունով:

---

[323] Այսինքն՝ նվիրեցի սրբին:

Քարայրից հազիվ 100 քայլ հեռու գտնվում է երկաթա-ալկանյան մի հանքային աղբյուր, որը սուրբ է համարվում:[324]

Քարայրի առջև տարածվում է մի ընդարձակ, ծաղկալից դաշտ, ուր Համբարձման տոնին ահագին բազմություն ծալապատիկ նստած վայելում է հասարակական մատաղը:

Ուխտավորները մեխեր են խփում քարայրի և նրա մոտի մեծ քարի վրա. եթե առանց ծռվելու ամբողջովին մտնում է քարի մեջ, այս նշանակում է, որ սուրբ Հովհաննեսը կատարելու է նրանց ուխտը, իսկ եթե չի մտնում՝ չի կատարելու: Չափազանց մեծ է թե խփված և թե ծռված մեխերի թիվը:

Շատ հավանական է, որ ս. Հովհաննեսի քարայրը կռապաշտական ժամանակներից մնացած սրբատեղի լինի, ուր, ավանդության ասելով, ճգնել է ս. Հովհաննես անունով մի ճգնավոր, որի գերեզմանը գտնվում է Երանոս գյուղի համանուն ս. Հովհաննես ուխտատեղում: Ս. Հովհաննեսի ուխտատեղի մասին կան բազմաթիվ ավանդություններ, որոնցից հիշենք մի քանիսը:

Մի պառավ պատմում է, թե երբ նոր էին գաղթել այս կողմերը, և ինքը դեռևս տասնչորս տարեկան էր, մի օր իր քրոջ հետ եկել է այստեղ ուխտ, սակայն մոռացմամբ լուցկի չի բերել, որ մոմերը վառի: Անհնձելով իր մոռացկոտությունը՝ նա դրել է մոմերը սրբի առաջ և վերադարձել. բայց երբ ետ է նայել, տեսել է, որ մոմերը վառվում են:[325]

Մի քուրդ էլ, նոր տրեխներ հագած, ս. Հովհաննեսի մոտով անցնելիս ասել է.

— Տես, ս. Հովհաննէս, իմ այս տրեխներս այնքան չմաշեն, որ մի տարի հետո նրանցով գամ քեզ մոտ ուխտ, թե չէ... սկսում է հայհոյել: Իսկույն սրա ոտները թուլանում են, և նա ընկնում է վայր: Շալակում են, տանում տուն: Մի ամբողջ տարի նա անդամալույծ է մնում, իսկ այդ օրվա տարեմտին հանկարծ լավանում է, և նույն տրեխները, որոնք բոլորովին նոր էին մնացել, որովհետև չէր կարողացել գործածել, հագնում է և գալիս ս. Հովհաննես ուխտ՝ բերելով մի ոչխար մատաղ:

Խազախաչ. Նոր-Բայազետից դեպի Նորադուզ տանող ճանապարհին կա մի խաչքար, առանց տապանագրի, միայն մի հասարակ խաչ կերտված: Սա կոչվում է Խազախաչ: Սրա մոտ ուխտ են գալիս նրանք, որոնք հազում են, և կամենում են բժշկվել: Ավանդության ասելով այդ խաչի տակ թաղված են մի տղա և մի աղջիկ, որոնց մասին դեռ այժմ էլ պատմվում է հետևյալը: Մի գեղեցիկ, քաջ տղա սիրահարվել է մի քահանայի աղջկա վրա և նրանից սիրվել: Բայց որովհետև այդ տղան աղքատ է եղել, քահանան չի կամեցել

---

[324] Տե՛ս ջրի պաշտամունք:

[325] Федоров, Пещера св. Оганеса, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, т. XIII.

տալ: Տղան պատրաստվել է մի քանի թուրքերի հետ գալ՝ աղջկան փախցնել: Այս մտադրությունը իմանալով՝ քահանան մտածել է մի հնարքով ազատվել նրանից և կանչել հետևյալ առաջարկն է արել. Աղջիկս կտամ, եթէ մի օրում դու մենակ կարողանաս իմ «Թափի գլխի» արտը քաղել, պրծնել: Իսկ այդ արտը չափազանց մեծ է եղել: Տղան ուրախությամբ համաձայնում է, դիշերը գերանդին սրում և լուսածեգին սկսում խաղ կանչելով քաղել: Երեկոյան դեմ, երբ չատ քիչ է մնում, որ տղան բոլորը քաղեր, վերջացներ, քահանան նոր խորամանկության է դիմում, ուղարկում է մի պառավի, որ գալիս ասում է աղին, թե ի՞նչ ես իզուր տանջվում, քահանան իմացավ, որ պետք է վերջացնես՝ խփեց աղջկան սպանեց, որ քեզ չտա:

Արյան ու քրտինքի մեջ չաղախված տղան երբ լսում է այս՝ անմիջապես հանկարծամահ է լինում, ընկնում հենց այս խաչքարի կանգնած տեղը:

Գույժը հասնում է աղջկան, թե տղան չկարողանալով արտը հնձել, վերջացնել, ուժասպառ եղավ, մեռավ: Այս լսելուն պես աղջիկը գնում, իրեն ձգում է լիճը, խեղդվում: Նոր ստրջացած հայրը հանում է նրան լճից և բերում, տղայի հետ թաղում և այս խաչն էլ նրանց վրա կանգնեցնում:

Նույն գիշերը բոլոր գյուղացիներին երևում է ս. Նշանը մի ծերունու կերպարանքով և ասում, թե ով հազի ցավ ունենա, թող գնա այդ երկու ջիվանի գերեզմանը համբուրի, նրանց ողորմի տա, հազը կկտրվի:[326]

Կույս Վառվառ և Ծաղկավանք. Այս երկու մատուռները գտնվում են Ղուլալի գյուղում. սրանք քույրեր են համարվում և միմյանց հետ պայմանավորվել են, որ առաջինը կոծիծներ (бородавка) և այլ կաշվի հիվանդություններ բուժի, իսկ Ծաղկավանքը ծաղկից կուրացած աչքը:

Կույս Վառվառ գնացող ուխտավորը տանում է մոմ և մի հավկիթ: Մոմերը սրբի առաջ վառելուց և աղոթելուց հետո՝ ձուն տալիս են ուխտատեղի պահապան պառավին, որը աղոթելով թաղում է սրբի առջև:

Գորտնուկ ունեցող ուխտավորներն էլ այդ ուխտատեղի ավելով չփում են իրենց ձեռքի գորտնուկները և սրանց թվի համեմատ գարի թաղում մատուռի չեմքի տակ, ասելով.

Դու էտե փչի
Էսի էտե փչի:

Ծաղկավանք գնացող ուխտավորը, որի աչքերը ծաղիկ հիվանդության պատճառով թաղանթով պատված են լինում, տանում է մոմ և մի սև հավ: Մոմերը սրբի առաջ վառելուց հետո հավը մորթում են, մատաղում և արյունը փետրով աչքին քսում, աղոթելով. «Ո՛վ խաթուն Ծաղկամէր, քո թոռն եմ հնկէ, դու աչքերիս լուս տաս»: Կատարելապես առողջանալու համար այս ուխտագնացությունը կրկնում են յոթ անգամ:

---

326 Պատմված է նաև «Անբախտ Մարգարտի մեջ», եր. 21:

Նույն Ղուլալիի ս. Ստեփաննոս ուխտատեղին ուխտ են գնում հատակ առած և «տանը մնացած» աղջիկները, յոթ անգամ, առավոտները շատ վաղ, ավլում, մաքրում ուխտատեղին և խնդրում, որ իրենց փակ բախտը բաց անի, մի լավ փեսացու տա:

Կորուսախան սուրբ Մինաս. *Երբ մի որևէ բան են կորցնում, գտնելու համար աղոթում են հատկապես կորուսախան (կորուստը հանող, գտնող) սուրբ Մինասին, և ի սեր այս սրբի, քանի դեռ կորուստը չի գտնվել՝ դիչերները մինչև լույս ճրագը վառ են պահում:*

Թալալոց. *Գյոդալդարա գյուղում, գերեզմանատան դլխին կա մի խարխուլ մատուռ, որ «Թալալոց» է կոչվում: Այստեղ ուխտ են բերում «թալցնող»՝ ուշադնաց լինող երեխաներին, ուր նրանց հագի շապիկը ճղում են, երկու կտոր անում, և այնտեղ, ուխտատեղիում թողնում, որպեսզի երեխայի այդ հիվանդությունն էլ շապկի հետ միասին այնտեղ մնա:*

Պառավի վանք. *Բյուսաճըղ գյուղից փոքր-ինչ բարձր, լեռան լանջին կա մի փոքրիկ, դմբեթազարդ եկեղեցի, որի մոտ՝ մի հատարակ գերեզման: Ավանդաբար պատմվում է, թե այդտեղ թաղված է այն բարեպաշտ պառավը, որը իլիկ մանելով փող է վաստակել և այս վանքը կառուցել, որի պատճառով էլ կոչվում է Պառավի կամ Իլիկի վանք: Վանքը այժմ կիսավեր է, սակայն բազմաթիվ ուխտավորներ ունի, մանավանդ ջերմ հիվանդությամբ տառապողներ, որոնց անմիջապես բժշկում է:*

ՋԱՐ ՈԳԻՆԵՐ

Ջաջ. *Այսպես կոչվում են այն ոգիները՝ որոնք գալիս են նորածին երեխաներին հափշտակելու: Սրանք միշտ լավ հագնված կանանց կերպարանքով են երևում:*

Գաբուզ. *Սրանք ախոռի (թավլի) ոգիներ են, որոնք միշտ ախոռումն են մնում և երբեք դուրս չեն գալիս: Երևում են սև գոմշուկի կերպարանքով, միայն անմարմին են, սոսկ սովեր և չեն բռնվում:*

Սատանաներ. *Նոր-բայազետցիները երևակայում են, որ սատանաները մարդակերպ են, միայն յոթ եղջյուր և յոթ պոչ ունեն, ոտների կրունկներն էլ առաջն են գտնվում, ճիշտ մերի հակառակը: Նրանք երկու սեռի են և բազմանում են ծննդաբերությամբ, միայն անմահ են, ծնվողը չի մեռնում: Նրանք ապրում են կամ առանձին-առանձին, կամ ամբողջ խմբով՝ «եղնաղով», առավելապես այրերում, քարափներում, ջրաղացներում, ձիթհանքերում, ճահիճներում, աղբրի ակի մեջ: Նրանք կազմում են երեք թագավորություն՝ Սատայել, Սանդարամեր և Բելիար թագավորներով:*

Նրանք մարդկանց շատ անգամ երևում են, սակայն միշտ ոչ իրենց իսկական կերպարանքով, այլ մարդու, այն էլ ծանոթ կամ ազգականի, այս

պատճառով էլ տանում՝ հագնում են մարդկանց այն նոր հանդերձները, որոնց վրա ասեղ չի չուլալած կամ նշխարք դրած: Երբեմն էլ կատվի, շան, էշի, թռչնի և այլ կերպարանք են մտնում:

Սատանաները մարդկային ցեղին թշնամի են և աշխատում են մոլորեցնել, մեղքի մեջ գցել, վախեցնել մարդկանց: Այս նպատակով շատ անգամ նրանք աներևութաբար մտնում են մարդկանց բնակարանները, կանգնում չեմքի վրա, պահ մտնում մութ անկյուններում, նստում կտուրին, մտնում գոմը և հեծնելով ձիերը՝ երկար արշավում գոմի մեջ, նրանց արյան, քրտինքի մեջ կոխում, վերջն էլ բաշն ու պոչը հյուսում և հեռանում:

Մարդիկ սրանցից խուսափելու համար երկու միջոց ունեն, խաչակնքվել և Հիսուս Քրիստոս ասել, երկրորդ՝ իրեն մոտ ասեղ պահել կամ այս ասեղը, եթե կարող են, նրանց մարմնի մեջ չուլալել: Վերջին դեպքում նրանք այլևս չեն կարողանում հեռանալ այդպես անողից և նրա հլու հպատակն են դառնում. միայն ինչ որ նա ասում է՝ նրա հակառակն են կատարում: Էհ, խելացի բռնողն էլ ցանկացածի հակառակն է հրամայում:

Այժմ թվենք այն տեղերը, որ հայտնի են իբր սատանաների բնակարաններ և առաջ բերենք նրանց մասին եղած ավանդությունները:

Ղուլալի գյուղի մոտ՝ Տիկնաձորում, մի քարափի մեջ մի ծակ կա, որի միջից, ասում են, մի անցք ձգվում է մինչև Ղըշլաղ գյուղը, մոտ երեք կիլոմետր երկարությամբ: Այս անցքն ամբողջովին բռնված է սատանաներով: Երբ մարդիկ դիշերներն անցնում են Տիկնաձորով, լսում են աղմուկ, իրարանցում, դհոլ-զուռնի, ծափի և խաղի ձայներ: Մի անգամ մի գյուղացի իր չան հետ այս ձորով անցնելիս չունը մտել է այս անցքը, և թեպետ տերը չատ կանչել է նրան, սակայն նա չի վերադարձել: Մի քանի օրից չան տերը գտնում է նրա դիակը Ղըշլաղ գյուղի դաշտում, առանց գլխի:

Նույն Ղուլալի գյուղի մոտ, Խազնի ձորում, որ նույնպես սատանաների բնակավայր է համարվում, Զգմաչոնց Զեյրաբը տավար է արածեցնում, հանկարծ Մանուչարի հովտի կողմից հարսանքի աղմուկի ձայն է լսում: Մտածում է, որ գնա տեսնի թե ի՞նչ է: Դեռ չհասած՝ հանդիպում է իր քրոջը, որ հայտնում է, թե իրենց հարսանիքն է, ինքն էլ եկել է նրան տանելու: Գնում են. սա տեսնում է, որ հիրավի, մի մեծ հարսանիք է, ուտում են, խմում, պարում, հարսն ու փեսան էլ մեջտեղում կանգնած են: Սրան լավ ընդունում են և սկսում հյուրասիրել: Մեկ էլ մեկը վեր է կենում ասում, թե նախ այս եկած մարդը պիտի քնի մեր հարսի մոտ, որ հողածին սերունդ ունենանք: Այդ խոսքի վրա Զեյրաբը սաստիկ զարմանում է, որովհետև հարսանքավորները բոլորն էլ իր ծանոթներն են թվում, բոլորն էլ իր համագյուղացիները, մինչդեռ իրենց սովորությունների մեջ չկա, որ փեսայի փոխարեն մի ուրիշը քնի հարսի մոտ: Այս միջոցին այն կինը, որ Զեյրաբին բերել էր, ընդդիմանում է այդ առաջարկությանը և ասում.

«Դուք ասիք գնա աղբորդ բեր՝ ես էլ գնացի բերի, ինչպես որ բերի, այնպես էլ կը տանեմ, և թույլ չեմ տալ, որ ձեռք տաք», և սկսում է իր մարմնով պաշտպանել նրան և ասել. «Աղբեր ջան, առաջ ինձ կսպանեն, հետո քեզ»: Զեյրաբը վախից ուշագնաց է լինում: Երբ ուշքի է գալիս և աչքը բաց անում, նայում տեսնում է, որ ոչ հարս կա և ոչ հարսնեւորներ, միայն այդ կինն է նստած իր մոտ: Նա ասում է. «Դեհ վեր կաց գնա, միայն հետ մի նայիր, ապա թե որ բերանդ ու աչքերդ կը ծուվեն»: Այստեղ Զեյրաբը մտաբերում է դիշերվա պատահածը և կռանում է, որ իր ազատչի ոտները համբուրի՝ տեսնում է, որ սրա ոտները ծուռ են, այսինքն կրունկը առջևումն է, մատները հետևում. սարսափած Զեյրաբը ճչում է, իսկ կինն ասում է. «Ձեն մի հանիր, թե չէ կը հավաքվեն», ու ինքն էլ անհետանում է: Զեյրաբը վերադառնում է տուն, ընկնում անկողին. երկու ամիս շարունակ էլ սուրբ, էլ կախարդ չեն թողնում, մինչև կարողանում են առողջացնել:

Երանոս գյուղի մոտ է «Դևի դարը», որ սատանաների կենտրոնատեղին է համարվում: Սրա մոտով նույնիսկ ցերեկները վախենում են անցնել, որովհետև սատանաները բռնում են տանում և այնքան ծամածռություններ անում, նրա աղոթելուն, խաչակնքվելուն տնազ տալիս, որ սրտաճաք են լինում:

Ջաղալու գյուղում կրակապաշտական դամբաններից չատերը «սատանի տանիս» (տուն) են կոչվում, և լի են սատանաներով:

Նորադուզ գյուղի մոտ, ծովափին, մի կլոր բլուր է բարձրանում, որ «Սարա ղայա» է կոչվում, այստեղ ևս սատանաներ են բնակվում:

Նուբադուզ գյուղում մի ժամանակ Սաղաթելենց տունը կար: Այս դերդաստանի մորը հաջողվել է սատանա բռնել: Մի քանի օր չարունակ նկատում են, որ դիշերները ձին գոմում այս ու այն կողմ է վազում, արյուն քրտինք մանում: Բաշն ու պոչն էլ լուսադեմին իրենք իրենց հյուսվում են: Իսկույն հասկանում են, որ անշուշտ սատանան է գալիս՝ նստում ձին, իրեն համար ման գալիս և վերջն էլ բաշն ու պոչը հյուսում, հեռանում: Բերում ձիու մեջքին կուլը են քսում ու իրենք էլ թաք կենում: Կես դիշերին մեկ էլ տեսնում են, որ մի սատանա եկավ, նստեց ձիու վրա և էլ չկարողացավ պոկ գալ: Իսկույն տատը վրա է հասնում և մի ասեղ չուլալում նրա հագուստի մեջ: Հետո բռնում են նրան ու պոկում ձիու մեջքից: Տեսնում են, որ սա՝ մի գեղեցիկ, քողը երեսին հարս է: Սա այլևս չի հեռանում սրանց տնից և յոթ տարի շարունակ ծառայում է: Միայն ինչ որ հրամայում են՝ սա հակառակն է անում, այս պատճառով էլ նրանք իրենց ցանկացածի հակառակն են հրամայում: Յոթ տարին լրանալուց հետո սա սատիկ ազաչում է, որ ասեղը հանեն իր վրայից և թողնեն իրեն ազատ: Սրանք համաձայնում են, նախապես խոսք առնելով, որ իրենց «օխտը պորտին» վնաս չտա: Եվ երբ ասեղը հանում են, նա անմիջապես անհայտանում է:

Ներքին Ատիաման գյուղում էլ, մի կին գնում է գոմը գլուխը լվանալու, մեկ էլ տեսնում է՝ մի աղջիկ եկավ և առաջարկեց գլուխը ջրհորի մեջ լվանալ: Պառավն իսկույն հասկանում է, որ սա սատանա է, ասեղը չուլալում է նրա հանդերձի մեջ: Յոթ տարի սրան բաներցնում են և ապա ասեղը հանելով՝ արձակում: Սա անիծում է, որ սրանց տնից աղբն անպակաս լինի: Եվ մինչև այժմ էլ սրանց տնից աղբն անպակաս է, չնայած որ շատ հաճախ ավլում են:

Մի սատանա էլ Գյոզալդարայում են բռնել, որը ազատվելիս անիծել է, որ այս գերդաստանի մեջ որքան նոր աման գնեն, իսկույն չուրթը կոտրվի: Եվ մինչև այժմ էլ այդպես է լինում:

Նոր-Բայազետցի Սև Ղազոն մի գիշեր ջրաղացում մենակ քնում է. առավոտյան, երբ տուն է գալիս նկատում են, որ երեսի և գլխի մի կողմն ածիլած է: Հետևյալ գիշերը Մինասենց Հովեն է գնում նույն ջրաղացը և տեսնում է, որ թեև դուռը դրսից փակած է, միայն ներսից դհոլ-զուռնի ձայն է լսվում: Սատանաներից վախենալով՝ սիրտ չի անում ներս մտնելու, թողնում փախչում է:

Կայծակի ժամանակ սատանաները գլուխները կորցրած աշխատում են մարդկանց հետևում թաք կենալ, որովհետև այդ կայծակով Քրիստոսը կամենում է խփել, ոչնչացնել իրենց. մարդկանց հետևը թաքնվելով նրանք հույս ունեն, որ Քրիստոսը, մեղքանալով մարդկանց, չի խփի և նրանց էլ իրենց հետ սպանի: Սակայն Քրիստոսն էլ միշտ չի խնայում, այս պատճառով էլ մարդիկ կայծակի ժամանակ չարունակ խաչակնքվում են և Հիսուս Քրիստոս ասում, որպեսզի սատանաները իրենց մոտից հեռանան և իրենց վտանգի չենթարկեն: Սատանաները գնում, մտնում են քարերի տակ, այս պատճառով և զգուշանում են նաև կայծակի ժամանակ քարերի, ժայռերի մոտենալ:

Պատահել է, որ այսպիսի որոտի ժամանակ սատանաները գնացել կանգնել են Սևանա լճի վրա, կարծելով որ այդտեղ միանգամայն ապահով կարող են լինել: Սակայն Քրիստոսն ուղարկել է մի քանի հրեշտակներ՝ որոնք չղթայել են սատանաներին և երկինք բարձրացրել: Շատերը տեսել են այդ, նույնիսկ լսել չղթաների զնգզնգոցը: Ասում էին, թե վիշապի նման էր, երկար պոչով, որը ինչի որ դիպչում էր՝ փշուր-փշուր էր անում:

Խոսակցության ժամանակ գործ են ածում հետևյալ դարձվածքները՝ նկատի առնելով սատանաների հատկությունները.

«Սատանից օխտ օր հառեջ ա հելե»,

«Սատանա նալող (պայտող) ա»,

«Փորը լիքը սատանա ա», այսինքն սաստիկ խորամանկ է:

«Սատանեն բանից խանեց», այսինքն նա այն աստիճան անբարոյական չէր այդ անելու, սակայն սատանան ներշնչեց:

«Սատանի հանկաճը խուլ», ասում են այն դեպքում, երբ չեն կամենում, որ իրենց ասելիքը սատանան լսի և կատարի: Այսպես օրինակ, սատանի յանկաճը խուլ՝ էս տարի կարկուտ չեկաւ կամ սատանի հանկաճը խուլ՝ երեխան կարող է օրորոցից վայր ընկնել:

Երբ բարկանում են՝ ասում են. «Նալլաթ» (անեծք) չար սատանին», կամ «սատանեն ասում ա զան (խփիր)»: Իսկ երբ ուզում են ասել, թե խանգարում են, ասում են՝ սատանա՞ ես:

Շվոռ. *Սրանք բարձր և բարակ ոգիներ են, սպիտակ չապիկ հագած: Սրանք սատանաներից շատ բաներով տարբերվում են. նախ նրանց պես անմահ չեն, թեև նրանց պես ծնվում են և բազմանում: Նրանց պես Աստծուն հակառակ չեն, այլ պաշտում են նրան, նրանց պես չար չեն և չատանում են մարդկանց խաբելով և մանավանդ հրապուրելով: Ձմեռը բնակվում են մարդկանց բնակարաններում, իսկ գարնանը դնում են հանդերը: Փետրվարը նրանց ամիսն է կոչվում, որովհետև այդ ամսին նրանց «արյունը տաքանում է», և նրանք էրոտիկ երազներով հրապուրում են մարդկանց: Նրանց այս ամսին շարունակ դուրս ու ներս անելը ստիպում է կատուներին մլավել, որովհետև տեսնում են սրանց:*

Փետրվարի վերջին մարդիկ աշխատում են նրանց տանից դուրս անել, այս պատճառով էլ հորթի գեղմով (փոստ) խփում են պատերին և ասում.

Շվոռը դուս,
Մարդը ներս:

Եվ որովհետև գոմերի շվոռներն ավելի աներես են, տակճորի մեջ մանր քարեր են լցնում և նրանով խփում տավարին ու գոմի պատերին՝ վերոհիշյալ դարձվածքը կրկնելով:

Գրողի գզիր. *Սաստիկ պառաված կանանցից ոմանք դառնում են «գրողի գզիր», մեն են գալիս գրողի, հոգեառ հրեշտակի հետ, ցույց են տալիս մեռնելու դատապարտվածների տները և օգնում հոգի առնելիս: Գիշերները Գրողը գալիս վեր է կացնում այսպիսի կանանց և հետը տանում, և թեպետ այս նկատում են տնեցիք, սակայն զգուշանում են հայտնելու:*

Գոռնադաք. *Առանց եկեղեցական ծիսակատարության թաղված հայ մեռելը մասնավորապես և անհավատ, թուրքերի մեռելներն ընդհանրապես, նոր թաղված միջոցին գիշերները չան կամ այլ կերպարանքով հարություն են առնում և շրջում գերեզմանատունը, լուսադեմին կրկին մտնում գերեզման և անշնչանում: Մի անգամ մեկն անցնելով թուրքի գոռներով (գերեզմանատան մոտով), տեսնում է երկու շուն և հետը տանում տուն: Առավոտյան այդ շների փոխարեն տեսնում է երկու մեռել հատակի վրա պառկած: Իմանալով, որ «գոռնադաք» է՝ տանում են կրկին թաղում և կրծքին մի մեծ մեխ խփում, որ այլևս չվերկենա:*

Ղուռի-խարաբի մոտ էլ մի վարդապետ է «գոռնադաք» լինում և այդ կերպարանքով երևում մարդկանց: Մի անգամ Մաթոսի Գևոն էր տեսել նրան ավերակ եկեղեցու մոտ, խեղճը այնպես էր վախեցել, որ բերանը ծռվել էր: Գյուղացիները չատ որոնել էին, որ գերեզմանը գտնեն, բանան և մի մեխ խփեն կրծքին, որ էլ գոռնադաք չլինի, բայց չէին գտել:

ԿԱԽԱՐԴՈՒԹԻՒՆ

Ա. Հավահմայություն. Այս գավառում ևս ծիծեռնակը, աղավնին և կաչաղակն ընդհանրապես համարվում են բարեգուշակ, իսկ բուն և ագռավը՝ չարագուշակ: Բացի սրանից՝ գուշակություններ են անում նայելով թռչունների գտնված տեղին, հանած ձայնին և կատարած գործողությանը:

Տեղը. Երբ աքաղաղը երդիկի վրա կանգնի՝ հյուր է գալու:

Երբ հավը թառի վրայից է կանչում, գուշակում են, որ մի արտասովոր բան է պատահելու:

Երբ արագիլը մեկի կտուրին բուն է չինում, գուշակում են, որ այդ տանը բախտավորություն է սպասում:

Ձայնը. Երբ բուն բվա՝ մի դժբախտություն, մահ է պատահելու:

Գործողություն. Արագիլը մարտի 9-ին առաջին անգամ երևալիս՝ եթե կացում հացի կտոր բերի՝ առատություն է լինելու, եթե չոփ (ծղոտ)՝ անբերրություն և եթե կտավ՝ մահ:

Բ. Կենդանիների միջոցով գուշակություն. Երբ կատուն երեսը լվանում է՝ գուշակում են, որ հյուր է գալու: Երբ շունը ոռնում է՝ գուշակում են, որ հիվանդը մեռնելու է:

Երբ կատուն երդիկից նայում է, հարցնում են՝ կատու խուրը (հյուրը) ո՞ր եանից (կողմից) է գալում, և որ կողմը որ նայեց՝ գուշակում են, այն կողմից հյուր է գալու:

Գ. Մարդկանց միջոցով գուշակություն. Որոշ անձնավորություններ «նավս» կամ «խեր» (չար կամ բարի) են համարվում, և մարդիկ մի գործ սկսելիս, երբ առաջին անգամ սրանց են հանդիպում, սրանց համեմատ գուշակում են գործի հաջողության մասին: Այս գավառում ևս ընդհանրապես քահանային պատահելը չարագուշակ են համարում, և կամ հրաժարվում են մտադրված գործից կամ ձեռքը ամորձիքին քսում, որ «չարը խափանի»:

Դ. Մարդու բնազդական չարժումների միջոցով գուշակություն. Երբ ալ աչքը խաղում է՝ գուշակում են, որ ուրախանալու բան է պատահելու, իսկ եթե ձախը՝ տխրելու: Երբ աչքերը պաղում են (սառում) հյուր է գալու, իսկ երբ բեռ է վերցնում, կոպին չոփ է նստում, ասում են. «Ով ա գալում բեռ ու բարձով» և գուշակում են, որ մի բան են ստանալու:

Երբ ականջը կանչում է՝ սկսում են տալ իրենց ծանոթների անունները, և որի անվան վրա որ դադարեց ձայնը՝ գուշակում են, որ նա էր իրենց մասին բամբասողը:

Երբ երեսը այրվում է՝ ասել է իրեն բամբասում են:

Երբ քիթը քոր է գալիս՝ հյուր է գալու:

Երբ փռշտում են կենտ թվով, ասում են «Սաբր արա» (սպասիր) և չարագուշակ համարելով՝ գործը հետաձգում են, իսկ երբ զույգ թվով են փռշտում, ուրախանում են և ասում՝ խեր ա: Ճրագի դեմ կենտ թվով փռշտալն էլ խեր է համարվում:

Երբ բուռը քոր է գալիս՝ փող պետք է ստանան կամ տան. առանձնապես փորձում են, թե աջ ու ձախ բռից ո՞րը ստանալ և որը տալ է նշանակում:

Երբ երեխան անընդհատ լաց է լինում, գուշակում են, որ մի դժբախտություն է պատահելու, ուստի մայրը խփում է նրա գլխին ասելով՝ ուտա քո գլուխ:

*Ե. **Անչունչ առարկաների միջոցով գուշակություն.** Իմանալու համար, թե գերդաստանին դժբախտություն է գալու թե ոչ՝ խմորից մարդ են շինում և ձգում թոնիրը, եթե եփվելիս ձեռքը կամ ոտը ուռեց՝ ասել է գալու է, իսկ եթե չուռեց՝ ոչինչ չի գալու:*

Ուխտատեղիներում մեխ են խփում քարերի մեջ, եթե մեխը քարը ծակում, ներս է մտնում, ասել է՝ ուխտը կատարվելու է:

Նույն նպատակով փոքրիկ քարեր են քսում ուխտատեղի պատերին, մանավանդ խաչքարերին, եթե կպչում է և մնում՝ ասել է ուխտը կատարվելու է:

Երբ մի գործի են գնում, եթե դատարկ կժի կամ դատարկ ամանի են պատահում, գուշակում են, որ անհաջող է լինելու, իսկ եթե լիքը կժի, լիքը ամանի, բեռի, հացի են պատահում՝ հաջողակ է լինելու:

*Զ. **Կախարդություն.** Գորտի ուսոսկրը (թիակ) պահում են իրենց մոտ և աննկատելի կերպով քսում այն կանանց, որոնց սերը կամենում են գրավել:*

Էգ գայլի սեռական անդամը կտրում են և իրենց մոտ պահում, որ հաջողակ լինեն:

Հավատում են, որ եթե մեռելի ուղեղը սև կատվի ականջով շաղախեն և ուտեն՝ աներևույթ կդառնան, միայն ջրի մոտ տեսանելի կլինեն:

Համբարձման չորեքշաբթի օրը շեմքին խփում են քոռ մեխ (պայտի մեխ), որպեսզի չարը խափանվի: Նույն նպատակով Համբարձման գիշերը գութանի խոփը գցում են շեմքի առաջ:

Գարնանամուտին երդիկի շուրջը չշով գծում են, որպեսզի չարը չկարողանա այդ գծից անցնել և ներս մտնել:

*Է. **Կովի կաթը ավելացնելու հույսով** դիմում են հետևյալ կախարդական միջոցների.*

1. Տանտիկինները իրենց դրպաններում պահում են օձի գլուխ կամ գայլի վիզ:

2. Մեծ պասին թխում են յոթ փթիլը (գաթի ձևով քակոր) և պահում, որ համբարձման օրը վառեն կաթի կաթսայի տակ:

3. Գարնանը, երբ առաջին անգամ արեգակի շողը երդիկից ներս է մտնում, նրա ընկած տեղը յուղ և ալյուր են քսում, որպեսզի վերջիններս առատ լինեն:

4. Աշխատում են մինչև Համբարձում հարևանից մերան կամ կաթ ստանալ, որպեսզի նրա կաթի «բարեբաստիկն» էլ մերանի կամ կաթի հետ գա իրենց:

5. Համբարձման օրը աշխատում են սիրի-սիրի բույսից երկու տերև ունեցող գտնել և ձգել խնոցու մեջ:

6. Նույն օրը յոթ բակից լռելյայն և ծածկաբար չոփ են հավաքում և վառում կաթի կաթսայի տակ:

7. Համբարձման գիշերը տանտիկինները ձմռումից կապում են մեխ կամ փուշ, հետո փոխանները հանում, կապում ձմռումի բերնին և հեծնում:

8. Նույն գիշերը ծածկաբար տանտիկինները հեծնում են հարևանի կովը կամ մատակը և ասում՝ հղդ ընծի, թանդ քեզի, որպեսզի հարևանի յուղն էլ իրենց գա:

9. Նույն նպատակով և նույն գիշերը գնում հարևանի հերթիկի չուրջը չշով գիծ են քաշում:

10. Նաև նույն գիշերը երկու եփած ձվի միջից անց են կացնում կապույտ թել և հարևանի բակում թաղում:

11. Եվ կամ հարևանից երկու կտոր ցան (աթար) են գողանում և իրենց կաթի կաթսայի տակ վառում:

Վերոհիշյալ կախարդության պատճառով, երբ հարևանի կաթի յուղային մասը պակասում է, լավ չի հարվում, մի ձու են տալիս աղոթելու, և տան առաստաղում պահում: Աղոթելիս աղոթող կինը «չար աչքի» աղոթք է ասում ձվի վրա:

Երբ չար աչքից կաթը կարմրագույն է դառնում, առանց խոսելու կթում են, և կաթը թոնրի կամ աղբրի ակը, կամ փշի վրա են ածում, որ չուտով այդ չար աչքի ազդեցությունն անցնի, և կամ մի կտոր հացի վրա աղ են ածում, «չար աչքի» դեմ աղոթող կնոջը տալիս աղոթելու և կեսը չան, կեսն էլ կովին են տալիս ուտելու:

Ը. **Գուշակողներ.** Սրանք լինում են թե կանանցից և թե տղամարդկանցից. գուշակում են մարդկանց ապագան, պատմում են նրանց անցյալը, իմանում են թե կորած իրը որտեղ է գտնվում, պանդուխտը երբ կվերադառնա, կկատարվե՞ն արդյոք մարդկանց մտադրությունները, հիվանդությունները ո՞ր սրբերի տված են, կամ ի՞նչ է հիվանդության պատճառը:

Գուշակողների այս չնորհքը «տվածուրիկ» է՝ աստվածային մի պարգև, ուստի և սրանք մեծ հարգանք են վայելում ժողովրդից: Այս չնորհքը նրանք ստացել են կամ ծննդյամբ կամ երազով: Ծննդյամբ ստացողները ծնվել են Քրիստոսի ծննդյան կամ Զատկի հրաշագործ գիշերը, այսպիսով և՛ արժանացել են աստվածային այդ չնորհին: Ոմանք էլ իրենց ծնողների տվածուրիկ չնորհը ժառանգել են և շարունակում են գործադրել:

Երազով չնորհք ստացողներն առաքինի գործով հաճելի են լինում մի որևէ սրբի, և սա երևում է սրանց երազում և հայտնում, որ պարգևում է այս կամ այն կերպ գուշակութիւններ անելու չնորհք:

Ի ծնե գուշակողները եղնգի են նայում և մոմ թափում: Երազով չնորհք ստացողները դարի են դցում, թիզ չափում, մաղ պտտեցնում, մոմ թափում, յայլուղ նայում (հիշկում):

Եղունգ հիշկել. Միանգամայն այն է, ինչ որ տեղի է ունենում Զավախքում, որ արդեն մանրամասն նկարագրել եմ:[327]

Մոմ թափել. Այս տարածված է նաև Վարանդայում, և արդեն նկարագրել ենք:[328] Այստեղ կարևոր ենք համարում ավելացնել, որ Նոր-Բայազետում իբր մոմ թափող հայտնի է եղել Մոմճոնց Ասլիկ պառավը, որ ստացել էր այդ չնորհը Սուրբ Կարապետից և մոմ թափելիս այսպես էր աղոթում.[329] «Ով օխտը անուան տէր Սըպկարապետ, ով Հազարանփրկիչ, ով սրբոց գլոխ սուրբ Աստուածածին, դու քո ստեղծած հոգին չկորցնես, ով Արար սըպնիչան, Դարալագեազու սուրբ խաչ, Բաղչու կարմրակ, Փուտկու սուրբ Գէորգ, դու հասնես, ով ազատարար սրբեր, դուք հասնէք, դուք ազատէք ցաւից չոռից, չար աչքից, չար լեզուից, ղազից, ղազաբալից, իլլաքի (մանաւանդ) անզգամի նհաղ չառից (զրպարտութիւն) ազատէք ամեն հայ քրիստոնին: Ով աղա սուլթան Սըպկարապետ, քո ձեռն ա, իմ ձեռը չէ, դու պիտի էս ցաւին փարատութիւն տաս»:

Այն ևս պիտի ավելացնեմ, որ այս գավառում հաճախ «իւղաբերի» մոմ են գործածում, այսինքն եկեղեցում վառված մոմերի մնացորդը, որ ավելի զորավոր լինի:

Հետաքրքրական են նաև «հրեշտակակոխ», «սատանակոխ» բառերը, որ մոմ թափողները ասում են, երբ կամենում են հայտնել, թե հիվանդը հրեշտակներից կամ սատանաներից է վախեցել:

Գարի քցել. Կատարվում է նաև Զավախքում[330] և Լոռում,[331] ուր և մանրամասն նկարագրել եմ: Այս գավառում գցելիս, գլխավորապես դիմում են «կորուսեալհան սըբ Մինաս»-ին:

---

[327] Տե՛ս իմ «Զավախք», եր. 242:
[328] Տե՛ս իմ «Վարանդա», եր. 234:
[329] Փիլոյեան, Կորած Մարդարիտ, եր. 142:
[330] Տե՛ս իմ «Զավախքը»:
[331] Իմ Բորչալուի գավառ, Ազգ. Հանդ, գ. X:

Թիզ չափել. Վարանդայում այսպիսի գուշակությանն ասում են «կեղ չափել», իսկ Լոռում՝ «կուռ չափել»: Այս բոլոր տեղերում էլ միատեսակ է կատարվում:[332]

Մաղ պտտեցնել կամ նետ դնել. Նույնն է ինչ որ Ջավախքում[333] և Լոռում:[334]

Լայլուղ հիշկել. Այսպիսի գուշակություն չի կատարվում վերոհիշյալ գավառներում: Գուշակել տվողը «խոխրտում» է լայլուղի վրա, այսինքն թաշկինակը ծալծլում է՝ մտքում կրկնելով այն, ինչի մասին որ կամենում է խորհուրդ հարցնել և տալիս յիշկողին: Սա բաց է անում թաշկինակը և գուշակում, թե նրա «խոխուրդը» (մտադրությունը) կատարվելո՞ւ է թե ոչ, բարի՞ է, թե չար:

Խաչի ղուլ. Գուշակողների թվում պետք է հաշվել նաև խաչի-ղուլներին, որոնք գավառում ևս բավականաչափ եղել են, և որը մանրամասն նկարագրել եմ արդեն իմ «Գանձակի գավառ» աշխատության մեջ:[335] Այս գավառում նշանավոր է եղել ս. Հովհաննեսի ղուլը:

Ծնվելիք զավակի և ճագի սեռը գուշակողներ. Տվածուրիկ չնորհք է համարվում և այն, որ որոշ մարդիկ կարողանում են ծնվելիք զավակի կամ ճագի սեռը գուշակել: Այսպիսիներից նշանավոր է գյուզալդարեցի Վարդանը: Սա մի անգամ գնացել է ս. Գևորգի սարը և այդտեղ, մի կիսավեր վանքի մոտ քնել. երազում երևում է նրան սուրբը և ասում, թե չնորք է տալիս նրան գուշակելու, թե ծնվելիք զավակը կամ ճագը ինչ սեռի է: Սրա համար, պատվիրում է սուրբը, տանել հղիին ջրի, գետի մոտ, կամ ջուրը բերել հղիի մոտ և իսկույն կտեսնես՝ որ նրանից ծնվողը մերկ կհետևի նրան:

Վարդանը նստում էր գետի ափին, և երբ կովերը գալիս էին ջուր խմելու, նա տեսնում էր նրանցից ծնվելիք հորթերին աներևութաբար նրանց հետևելիս և գուշակում էր սեռը: Շատ ու շատ անգամ հղի կանանց ջրի մոտ էր տանում և տեսնում էր, որ ծնվելիք երեխան մերկ հետևում էր մորը, ուստի և գուշակում էր, թե ինչ սեռի է լինելու:

Բանալի դնել. Մի ընդհանուր ձև ևս կա գուշակություններ անելու, որի համար անհրաժեշտ չէ ոչ որոշ օր ծնվել, ոչ էլ որևէ սրբի չնորհին արժանանալ: Այս բանալի դնելն է: Ով կամենում է գուշակել հիվանդի վիճակը, կորցված իրի տեղը, իր մտադրության հաջող կամ անհաջող ելքի մասին՝ մի բանալի է դնում ոտքի տակ, կանգնում չորս փողոցների կտրված տեղում և անխոս լսում անց ու դարձ անողների խոսակցությունները և դրանցից մի եզրակացություն հանում:

---

[332] Տե՛ս իմ «Վարանդա» և «Բորչալուի գավառ», Ազգ. Հանդ., գ. X:
[333] Ջավախք:
[334] Բորչալուի գավառ:
[335] Իմ «Գանձակի գավառ», հ. Բ:

Թ. Աղոթքներ. Աղոթքների միջոցով թե տղամարդիկ և թե մանավանդ պառավ կանայք որոշ հիվանդություններ են բժշկում, և այս պատճառով էլ հասարակության մեջ առանձին հարգանք են վայելում: Աղոթողները իրենց այդ շնորհքը սրբերից չեն ստացել, այլ մի ուրիշից սովորել են, և իրենք էլ ուրիշներին սովորեցնում են, միայն միշտ տղամարդը կնոջ, կինը տղամարդի է սովորեցնում, այլապես աղոթքը «չի կըտրե»՝ զորություն չի ունենա:

Աղոթելու կերպը և աղոթքների մեծագույն մասը նման լինելով նրանց, որ արդեն նկարագրել եմ «Բորչալուի գավառ» աշխատության մեջ, ես չեմ ուզում կրկնել այստեղ, իսկ փոքր ի շատե տարբերվող աղոթքները զետեղում եմ բանահյուսության բաժնում:

Ժ. Կախարդներ. Գեղարքունիքում ևս կան տղամարդ կախարդներ, զրբացներ, գլխավորապես տիրացուներից և քահանաներից: Սրանք գործում են Սողոմոնի, Ախտարի, Վեց Վազարյան, Հավախոս կախարդական գրքերի ցուցմունքներով: Առավելապես դիր են անում ամլության, զանազան հիվանդությունների դեմ, գրավում են երիտասարդի կամ աղջկա սերը, «բթիկ» անելով հրապուրում են կանանց և ցանկացածը անել տալիս մարդկանց, «կապում երկինքը», որ անձրև չգա և նորից բաց անում, գտնում գանձեր և ամեն բան գուշակում: Իսկ սրանցից «դավոտ» կամ «չլա» մտածները՝ հալածում են դևերին, ծովեր անցնում, մարդկանց աներևութացնում, կերպարանափոխում և հայելու մեջ նայելով իմանում աշխարհի բոլոր գաղտնիքները: Բացատրենք այս մի առ մի:

Դավոտ կամ չլա մտնել. Խիզախ կախարդը գլխից ձեռք վերցնելով, հանդգնում է դևերի, սատանաների հետ մրցման դուրս գալ և, հավաքելով իր կախարդական գրքերը, փակվում է մի այրի մեջ և այդտեղ քառասուն օր մնալով ոչ մի ադամորդու երես չի տեսնում և կանչելով դևերին ու սատանաներին, նրանց հետ կռվում է և հրամայում, որ իրեն հնազանդվեն: Դևերն ու սատանաները զենք են խաղացնում նրա աչքի դեմ, սպառնում են այրել, կտոր-կտոր անել, եռացրած ջրի մեջ ձգել և այլն: Եթե կախարդը այս սպառնալիքներից վախենում է՝ դիվահար է լինում, դևերի հլու հպատակը դառնում, իսկ եթե ոչ՝ ենթարկվում է սրանց վերջին փորձաքարին: Գալիս են գեղեցիկ հուրի-փերիներ և բյուրավոր հեչտանքներով աշխատում հրապուրել, երևում են սատանաներ և դանձ, փառք, մեծություն խոստանալով աշխատում իրենց հնազանդեցնել, և երբ այս բոլոր փորձանքներից կախարդը հաղթող է դուրս գալիս՝ նվաճում է դևերի գլխավորին՝ «Դամշելին» կամ «Թևդաս»-ին և իրեն օգնական դարձնում: Այնուհետև նա ամեն ինչ հրամայում է այս գլխավորին, և նա անմիջապես կատարում է:

Դև կապել. Դավոտ մտած կախարդի գլխավոր գործը դև կապելն է, որ կատարում է այսպես. դիվոտ մարդուն նստեցնում է մի կիսամութ սենյա-

կում և հրամայում հառած մի քանի ժամ չարունակ նայել իր առաջը դրված թասով ջրին: Ինքն էլ զանազան անհասկանալի աղոթքներ չշնջալով՝ ասում է. «Տես, իսկույն դևերը կըգան կանցնեն թասի միջով, գտիր քո մեջ մտած դևին և իմ ձեռը տուր»: Եթե դիվոտը չի տեսնում, սա բարկանում է և նույնիսկ ճիպոտով թակում, մինչև որ նա բռնելու և իրեն հանձնելու չարժումներ է անում: Այն ժամանակ սա այս դևին խոսեցնում է և երդում առնում («կապում է») որ այլևս այս հիվանդին չմոտենա:

Ծով անցնել. Դավոտ մտած կախարդը, երբ կամենում է մի որևէ ծովից անցնել, վերցնում է երկու տաշտ, մեկի մեջ կաթ ածում, որ ներկայացնի սպիտակ ծովը, մյուսի մեջ ջուր՝ սև ծովը: Եվ երբ «չէմքելով» անցնում է սրանց վրայից՝ արդեն գտնվում է անցնելիք ծովի այն կողմը:

Մարդկանց և իրերը անտեսանելի դարձնել. Դավոտ մտած կախարդը եթե կամենում է մարդկանց, կամ իր, կամ գանձ անտեսանելի դարձնել՝ տեղավորում է նրանց երկու տաշտերի միջև, որոնց մեկի մեջ կաթ, իսկ մյուսի մեջ ջուր ածելով ներկայացնում է սպիտակ և սև ծովերը: Երեք օր այդ դրության պահելուց հետո՝ մարդն էլ, իրն էլ անտեսանելի են դառնում, և նույնիսկ, երբ հասարակ կախարդներն աշխատում են գուշակել նրանց տեղը՝ նրանց երևում է սպիտակ և սև ծովերի միջում:

Նույնպիսի կախարդը Համբարձման հրաշագործ գիշերը, այն վայրկյանին, երբ երկինք ու գետին, սարեր ու ձորեր, աստղեր ու լուսին, քարեր ու թփեր սկսում են միմյանց ողջունել, նա **«խիպիլիկի քոլոզ»** է խնդրում և ստանում: Այս քոլոզը (գլխարկ) թե ինքը և թե ուրիշները ծածկելիս անեըևութեանում են, ու արձակ-համարձակ շրջում մարդկանց մեջ՝ առանց նրանցից նկատվելու:

Կերպարանափոխություն. Կախարդները իրենց ձեռքի կախարդական գավազանով խփում են մարդկանց և նրանց կերպարանափոխում՝ զանազան կենդանիների, շան, կատվի, էշի, ջորու կերպարանք տալիս: Մի առ ժամանակ նրանց այսպես թողնելուց և շատ անգամ աշխատեցնելուց հետո նրանք նույն գավազանով կրկին խփում են և մարդ դարձնում: Շատ անգամ պատահել է, որ կախարդը մի գյուղից մյուսն անցնելիս հավանած հարսին գավազանով խփել է՝ էշ դարձրել, հեծել գնացել է մյուս գյուղը, գիշերը կրկին մարդ դարձրել, իր մոտ պահել և առավոտյան արձակել:

Բթիկ անել. Կախարդը ինչ որ կամենում է՝ կարող է ներշնչել, որ կատարեն: Սրա համար հարկավոր է, որ նա այդ ցանկությունը գրի իր բութ մատի եղունգի վրա: Պատահել է, որ նա դրել է՝ թե կանայք մերկանան իր առաջ: Անմիջապես այդ խեղճերին թվացել է, թե կանգնած են մի գետի ափին և ստիպված են չորերը հանել ու անցնել. սկսում են հանվել: Բայց հենց որ կախարդը ջնջում է բթի եղունգի վրայի գիրը՝ կանայք սթափվում են, և նկատելով իրենց մերկ կանգնած կախարդի առաջ, զարհուրում են:

Հայելու մեջ նայել. *Կախարդը Համբարձման դիշերը նստում է աստղերի տակ և իր կախարդական ճիպոտով երեք անգամ խփելով գետնին՝ նայում ձեռքում բռնած հայելու մեջ: Աչխարհի բոլոր չարն ու բարին, բոլոր անհայտներն ու գաղտնիքները գալիս անցնում են հայելու միջով և երևում կախարդին:*

Կախարդական կծիկ, գորգ և սուփրա. *Նշանավոր կախարդները կախարդական կծիկ, գորգ և սուփրա ունեն: Սրանցից առաջինը գործ են ածում այն ժամանակ, երբ կամենում են դեպի երկինք թռչել, կամ մի հեռու տեղ գնալ. բռնում են կծիկի թելի ծայրից և կծիկը դեպի գնալու կողմը ձգում: Կծիկը հետզհետե քանդվելով գլորվում է օդի մեջ և նրանից կախ ընկած կախարդը աներևութաբար անցնում հազարավոր վերստեր:*

Գորգը գործ են ածում մեկին, գլխավորապես աղջկան, փախցնելիս: Հրավիրելով սրան նստել այս գորգի վրա, որ իր տեսքով բոլորովին չի տարբերվում սովորական գորգերից, կախարդը իր ձեռքի ճիպոտով խփում է գետնին և իսկույն գորգը վրայի մարդկանցով թռչում անցնում է հազարավոր վերստեր և գալիս իջնում է կախարդի ցանկացած տեղը:

Երբ կախարդը բաց է անում սուփրան և զանազան ուտելիքների անուն տալիս, անմիջապես երևում են սուփրի վրա:

Կախարդների ազդեցությունից ազատվելու համար, մանավանդ կանայք, կրում են պողպատե մատանի կամ մանյակ, որ շինում են դարբինները Հուդի (Ավագ) ուրբաթ օրը՝ առանց մի խոսք արտասանելու: Սա կոչվում է ուրբաթարուր և ընդհանրապես ամեն տեսակի չարոցի դեմ է:

Չախմախ թափող կամ չախմախ զանող. *Երբ կայծակը խփում է մի տան կամ մի մարդու, այս տան մեծը կամ կայծակնահարը կամ վերջինիս որդին, եթե հայրը կայծակի հարվածից մեռնում է, ստանում են դեմքի և գլխի վրա առաջացած վերքեր բուժելու չնորհ և կոչվում են չախմախ թափող կամ չախմախ զանող: Սրանք ուրբաթմտին, կիրակնամտին և չորեքմտին չախմախով խփելով կայծքարին՝ կայծեր են տեղացնում այդպիսի հիվանդների գլխներին և այսպիսով բժշկում:*

Ձաուկ հեծնող պառավ. *Սիրային հարաբերությունների մեջ բավական մեծ դեր են խաղում ձաուկ հեծնող պառավները: Սրանք այսպես են կոչվում, որովհետև մի տեղ գնալիս, կամ ծովից անցնելիս հեծնում են ձաուկը (կավե խնոցի), շահմար օձը իբր մտրակ ձեռքն առնում և երկնքի վրայով սավառնում, մի վայրկյանում հարյուրավոր վերստեր անցնում: Սրանք գլխավորապես գործում են տղի կամ աղջկա սերը գրավելու. գնում են սրանց մոտ՝ խոսում, գովում մեկի մոտ մյուսին և խոսելիս մատների մեջ պահած յոթ գույնի մետաքսե թելերը հանգուստում (խանգուրձում), ու այսպիսով տղա և աղջիկ իրար հետ կապում:*

Մարդագել. Պատահում է, որ պառավ կանայք լուսնկա գիշերն անկողնուց վեր կենալով՝ տկլոր դուրս են գալիս: Սրանց այս անպատկառությունը Աստծուն այնքան անդուր է լինում, որ անմիջապես երկնքից գայլի մորթի է ընկնում սրանց վրա: Այնուհետև սրանք գիշերները հագնում են այս գայլի մորթին, մարդագել դառնում և գնում, թափառում գյուղում, և եթե բաց դուռ են գտնում, մտնում են ներս ու հափշտակում երեխաներին, ուտում: Առավոտյան շատ վաղ, սրանք հանում են մորթիները, զգուշությամբ, շատ ծածուկ տեղում պահում, կրկին մարդու կերպարանք առնում և գալիս տուն, պառկում իրենց անկողիններում:

Եթե մեկը հաջողացնի գտնել դրանց այդ գայլի մորթին և կրակը ձգելով ոչնչացնի, դրանով նրա տեր պառավին անվերջ տանջանքի կենթարկի, որովհետև նա մինչև մեռնելը կտանջվի մորթին որոնելով: Իսկ եթե թողնեն յոթը տարի մարդագել մնա, ինչպես տնօրինված է լինում, մորթին կրկին կվերանա երկինք, և այնուհետև նա այլևս մարդագայլ չի դառնա: Այնուհետև կմնա նրան ապաշխարել իր մեղքերը:

Տիեզերք. Այս գավառում ևս կանայք հավատում են, որ կարող են մարմնով երկրի վրա մնալ, իսկ հոգով բարձրանալ երկինք, անցնել դժոխքի և դրախտի միջով և տեսնել իրենց «ախրը»:

Նոր-բայազետցի Դիվոտի Ալմո պառավն էլ մի այսպիսի փափագ է ունեցել, որի համար և շատ անգամ դիմել է սրբերին: Մի անգամ, երբ սրա որդին՝ Ասլանը սաստիկ հիվանդ է լինում, Ալմոն մի քանի անքուն գիշերներ անցկացնելուց հետո գլուխը դնում է որդու բարձին, որ մի քիչ հանգստանա: Մեկ էլ հանկարծ տեսնում է Գաբրիել հրեշտակին, որ մի երեխայի գլխի մազերից բռնած, կանգնեց իր առջև և ասաց.

— Ահա եկել եմ, որ կատարեմ խնդիրդ՝ քեզ տանեմ «էն հանդեն», որ «ախրդ» տեսնես, շուտ արա գնանք:

— Այդ երեխան ո՞վ է,- հարցնում է Ալմոն:

— Սա մի կնոջ հոգի է,- պատասխանում է Գաբրիել հրեշտակապետը,- որ քիչ առաջ առա, տանում եմ երկինք: Արի դու էլ ինձ հետ:

Եվ այս ասելով Գաբրիել հրեշտակապետը մյուս ձեռն էլ ձգեց Ալմոյին և սկսեց բարձրանալ: Գնում են, գնում են գնում, մեկ էլ պատահում են մի կանգնած մարդու, որին ոտից մինչև գլուխ կպել են անթիվ, անհամար գորտեր, այնպես որ բաց տեղ չէր երևում: Ալմոն զարմացած հարցնում է, թե սա ո՞վ է: Գաբրիել հրեշտակապետը պատասխանում է, թե սա իր փողերի շահով ապրող մարդ է, այսպես կանգնած պիտի տանջվի, մինչև Քրիստոսը գա դատաստան:

Գնում են առաջ, տեսնում են մի ուրիշ մարդ, որի մի ականջից մյուսը խրել են մի չիկացած հաստ երկաթ, որի բոցը ցայտում է նրա բերանից:

– Սա էլ չլսող, չկատարող, իր ասածի, վատահոգի մարդ է եղել, այսպես պիտի տանջվի՝ մինչև Քրիստոս գա դատաստան:

Մի քիչ էլ առաջ են գնում, պատահում են մի մարդու ևս, որի քթից միլ են անցկացրել և 10 փթանոց մի կշեռք կախ տվել:

– Սա էլ կշեռքի մեջ «հարամուԹյուն» (խարդախուԹյուն) անողն է, բացատրում է Գաբրիել հրեշտակապետը:

Էլի առաջ են գնում. տեսնում են մի նստած կին, առջևում արյունախառն կարագով լի տաշտ: Մի հրեշտակ, սուրը ձեռին ստիպում է այդ կնոջը ուտել կարագից: Սա վերցնում է, դնում բերանը, բայց չի կարողանում կուլ տալ, հրեշտակի ծանր հարվածը կուլ տալ է տալիս:

– Սա ո՞վ է եղել,– հարցնում է Ալմոն:

– Սա փեսբազ կին է եղել, որ փեսով իր կարագը չատացրել է, ուրիշինը կտրել: Հիմա պիտի քաշի, մինչև Քրիստոս գա դատաստան:

Գնում են առաջ, բավական բարձրանում, տեսնում են մի սիզավետ, անուշաբույր դաշտ, առվակների եզրերին խմբված հոգիներ ուրախ զվարԹ ճովողում են:

– Սրանք էլ անմեղ հոգիներ են, որ սպասում են Քրիստոսի գալստյան:

– Իսկ դաշտի մեջի այն ոսկե սինին (սկուտեղ) ի՞նչ է, լի ամեն տեսակ բարիքներով և մեջտեղը չորս ոսկե խնձոր,– հարցնում է Ալմոն:

– Այդ սինին մուխսի Մուքոյի համար է պատրաստված,– բացատրում է Գաբրիել հրեշտակապետը,– նա շատ արդար մարդ է, երբ որ մեռնի, պիտի գա վայելելու սինու բարիքներից: Այդ չորս ոսկե խնձորներն էլ նշան են նրա չորս անգամ Երուսաղեմ ուխտ գնալուն, և սրանց վրա էլ նստելու է նրա հոգին:

Քիչ էլ անցնում են, տեսնում են մի մեծ լիճ, տիղմով ու ցեխով լցված. բավականաչափ հոգիներ, ցեխոտված ու ապականված, Թավալվում՝ են ափին, մի ահագին բազմուԹյուն էլ լճի մեջ ոքնում են դուրս գալ, սակայն հրեշտակները սրերով խփում են սրանց գլխին և կրկին լիճը ձգում:

– Ափին գտնվողները,–բացատրում է Գաբրիել հրեշտակապետը,– քիչ մեղավորներ են, սրանք արդեն քավել են իրենց մեղքը և լճից դուրս եկել, սպասում են Քրիստոսին, իսկ լճի մեջ գտնվողները շատ մեղավորներ են և երկար պիտի տանջվեն, մինչև որ իրենց մեղքերը քավեն և դուրս գան լճից:

Այստեղից բարձրանում են Աստվածածնի մոտ, որին և Գաբրիել հրեշտակապետը հանձնում է իր բերած հոգին:

Աստվածածինը նստած է լինում ոսկե գահի վրա, գլխին ադամանդյա ակներով զարդարված Թագ, որ կուրացուցիչ ճառագայԹներ է սփռում իր չորս կողմը: Գահը փայլում է հազարավոր ակների կրակներով: Հրեշտակների մի ահագին խումբ, գահի աջ ու ձախ կողմում կանգնած են, խոնարհ և ձեռները կրծքերի վրա խաչաձև ծալած: Այս ժամանակ երևում է հրեղեն

ձիու վրա նստած լուսեղեն մի ձիավոր, որ արագությամբ առաջանում է դեպի Աստվածածնի առջև և սպասում:

Աստվածածինը հարցնում է.

— Կատարեցի՞ր:

— Այո, կատարեցի,- պատասխանում է ձիավորը,- քառասուն գազ հոր փորեցի, և մեջը ձգելով քարկոծեցի, հոգով, մարմնով կորավ, ոչ հոգին եկավ առ Աստված, ոչ մարմինն իջավ դերեզման:

— Այս ի՞նչ բան է,- հարցնում է Ալմոն:

— Այդ արդեն քո գիտենալու բանը չէ,- պատասխանում է Գաբրիել հրեշտակապետը:

Մեկ էլ լսում է. «Ադե, ադե, վեր կաց»: Վեր է կենում, բայց անում աչքերը, տեսնում, որ հիվանդ որդին իրեն ձայն է տալիս, բարկանում է, թե ինչի՞ ձայն տվեց և թույլ չտվեց տեսնելու իր «ախրը»:

ՍՆՈՏԻԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երբ թոնիրը լավ չի վառվում, տանտիկինները ակից չորով քամի են տալիս, «բորբում են», ասելով.

Զը՛խ, չը՛խ, չը՛խ,
Մուխը բռնեք,
Աղ բարձեք,
Զը՛խ, չը՛խ, չը՛խ:

Խմոր չաղախելիս, երբ ջուր են լցնում, ասում են. «Հիսուս Քրիստոս Աստծու բարաքեն մեջն հլնի»:

Երբ հացառը (ռաֆաթեն, բաթաթը) առաջին անգամ խփում են թոնրին, այսինքն առաջին հացը կպցնում են թոնրի կողին, որ թխվի՝ ասում են. «Թազա-խաց-խացի հրեշտակներ, դուք իմդադ (օգնական) հլնեք, չարը բարին դարձնեք»:

Երբ հացը թոնրի մեջ ժժժում է, հացթուխը ասում է.

Խեր, խեր,
Խացին հեժնութեն,
Մահին թանգութեն,
Իմ խորն ու մորն
Արքայութեն:

Հաց թխելու ավարտին դրտնակողը դրտնակը համբուրում, դնում է գլխին, իսկ հացթուխը խաչակնքում է հացառն ու թոնիրը՝ ասելով.

Խաց խացի խրիշտակներ,
Պաղ սուփրա, տաք թունդիր,
Արդար եզան վաստակ,

Բարեխոս հլնեք Աստծուն.
Աչխարքին խեր խաղաղութեն տաք,
Աղքատ խոքուս օղորմանաք:

Հաց թխելիս առաջին հացը հացթուխը խաչակնքում է և տալիս, որ տանեն փողոց, առաջին հանդիպողին տան, որովհետև հավատում են, որ այս բարերարությունը «օխտը թաբախա հլնում ա երկնքի երեսը, Աստծու մոտ բարեխոս ա հլնում, չարը բարին ա դարձնում»:

«Առջնաթուխ»[336] յոթ հացը տնեցիները չեն ուտում, որովհետև ուտողի ամուսինը կմեռնի:

Թոնրից հանած հացը տաք-տաք չեն ուտում, այլապես կկատաղեն:

Այրված հացը ուտում են, որպեսզի փող գտնեն:

Ով հացի մեջտեղն ուտի և կողքերը թողնի, այդ կողքերը այն կյանքում օղ կանեն և նրա վիզը կճպեն:

Հարևանից փոխ բերած հացը պետք է վերադարձնել, որովհետև երկու քույր մի փոխ բերած հացի համար դժոխք են գնացել:

Հացը դանակով չեն կտրում, մեղք է:

Հացը «չռչոնք» (չուռ տված, հակառակ կողմ), չեն դնում, սեղանի վրա, մեղք է:

Եթե հացի պատառը ձեռքից վայր ընկնի՝ հյուր կգա:

Ճանապարհին հացի կտոր տեսնելիս «ղսմաթ» են համարում, վերցնում են ուտում, կամ չանը տալիս և կամ մի մաքուր տեղ դնում:

Լվացք անելիս թքում են սապնի վրա և ասում.

Թու, թու, թու,
Թաքնի (տաշտի) որքը մաշի,
Սապոնինը չմաշի,- որպեսզի քիչ սապոն դործածվի:

Երբ գլուխները լվանում են և սկսում սանրել՝ խճճված մազերը չուտով հարթելու համար ասում են.

Օղորմի անհիշատակ պառվին,
Օխտը դան (անգամ) դնաց Երուսաղեմ:
Ջուզեց հիրան արքայութեն,
Ուզեց հիրան խառնուկ ծամին հիսակութեն (մաքրություն):
Եվ կամ.
Օղորմի անհիշատակ պառվին,
Գացե նատե օխտը ճամբա բաժին,
Քարը քաղե, ավազը մաղե,
Ջուզե իր մեղաց թողութեն,
Ուզեր ա խառնած կաժին,
Թախկած մազին հիսակութեն:

---

[336] *Առաջին թխած:*

Եթե կար անելիս ձեռքերը քրտնում են, բոշա կնոջ հետույքը կամթում են, որ այլևս չքրտնի: Նույնն անում են նաև այն մարդով, որ ձեռքի դանակը սուր լինի: Նույն նպատակներով նաև ձեռքերը բռնում են ածան հավի պոչի տակ, որ ձուն ընկնի ձեռքերի մեջ:

Թուխս դնելիս տանտիկինները երեք անգամ պտտում են տաշտի շուրջը և խաչաձև անցնում վրայից, ապա չարում ձվանները հարդի վրա և իրենց գլխի ծածկոցը ծոծրակի և շորերը մեջքի կողմից բարձրացնում, որպեսզի վառեկները գեղեցիկ լինեն: Եվ երբ վառեկների դուրս գալու ժամանակը մոտենում է, մի բուռ այլուր են խփում պատին, այնպես որ պատի վրա գոյանում են մեծ ու փոքր խալեր, որոնք, իբր ներկայացնում են թուխսն իր ձագերով: Այսպիսով նպաստում են վառեկների շուտ դուրս գալուն:

Կանանց արգելված է հավ մորթելը, ինչպես նաև նրանց, որոնք քավոր չեն եղած:

Նոր գնած հավերի ոտները լվանում են տան թոնրի ակի վրա, որպեսզի սրանք կապվեն տան հետ և չգնան, կորչեն:

Կանայք չորեքմուտի, ուրբաթամտի և կիրակնամտի գիշերները առաջաստ չեն մանում, մեղք համարելով:

Գիշերով տախտը չեն ավլում, որպեսզի տան խերն ու բարաքեն դուրս չգնա, ոչ էլ ավելը ուրիշին են տալիս:

Գիշերով չեն լվացվում, որպեսզի պատուհաս չպատահի: Գիշերով ծամոն ծամելը «մեռելի միս ա, կենդնի թիս ա»:

Գիշերները գործածական ամանները բերանքսիվայր են դնում, որ սատանաները չտանեն գործածեն:

Զկրտալիս ասում են՝ «մեղա՛ Աստծու», որպեսզի հանկարծամահ լինելով մեղավոր չգնան երկինք:

Աղը չեն թափում, որպեսզի մյուս կյանքում աչքի թարթափով հավաքել չտան:

Կերակրի ամանները չեն լիզում, որպեսզի իրենց հարսանիքին բուք չլինի:

Բուք է լինում նաև պառաված աղջկա հարսանիքին:

Եթե պատահմամբ իրար մեջ ընկած հողաթափերը միասին հագնեն՝ երկու անգամ կամուսնանան:

Եթե կարողանան իրենց արմունկը համբուրել, բոլոր ցանկությունները կկատարվեն:

Ցավը-չոռը սրբի դուռը թողնելու նպատակով հիվանդները իրենց հանդերձներից կարում են սրբի քարերի, ծառի ճյուղերի վրա կապում:

Եթե հիվանդը մի ուրիշ մարդու վրայով չեմքե անցնի, իր ցավն ու չոռը վերջինիս կանցնի:

Եթե մայրը հոր հին շորերը «թաթաչոր» (խանձարուրի շոր) չինի երեխայի համար, սա «խորշուկ» հիվանդությամբ կհիվանդանա:

Եթե հիվանդը եղունգները կարի, հիվանդությունը կվերանորոգվի:

Եթե դատարկ օրորոցը օրորեն՝ երեխան կմեռնի:

Եթե առաջին անգամ եկած ձյունից մարդ ուտի՝ մայրը կմեռնի:

Եթե ննջեցյալը անցկացնելիս մեծ ու փոքր տնից դուրս չգան՝ հրեշտակակոխ կլինեն:

Եթե շերեփը թողնեն կճուճի մեջ՝ մեռելի աչքը աչխարհքից չի կարի:

Եթե մեռելը քիչ է լինում, տերտերները հրամայում են ժամկոչին դագաղը ծեծել:

Եթե քահանա մեռնի, աչխարհը կխաղաղվի, ցավը, չոռը կվերանա:

Եթե մեկի աչքերը ձյունից ձմեռ է լինում, առանց նրա գիտության աղ են ածում դլխին, որ անցնի:

Եթե սխտորի կճեպը կրակը ձգեն՝ դարձվորի վերքը կմրմռա:

Խանութպանը խանութը բանալիս նախ խաչակնքվում է և ապա կողպեքը բանում: Առաջին անգամ բան ծախելիս՝ (սիփտին) ապառիկ չի տալիս, որ մինչև երեկո չարունակ ապառիկ չվաճառի: Նաև ուշադրություն է դարձնում, թե առաջին գնորդի ձեռքը խե՞ր է թե չառ: Եթե խեր է՝ մինչև երեկո լավ առևտուր կունենա, իսկ եթե չառ՝ վատ:

Շաբաթ երեկոներին խանութպանները խանութներում խունկ են ծխում, որպեսզի լավ և օգտավետ առևտուր ունենան:

Կշեռքի նժարին ոտք դնելը մեղք է համարվում:

Արհեստավորի դազգահի, սալի վրա նստելը մեղք է համարվում, «խերն ու բարաքեն» կպակասի:

Բոյախչու կարասի ներկերը փչանալիս՝ մի մեծ սուտ են խոսում, որպեսզի ներկերը կրկին լավանան, այս պատճառով էլ մի անհավատալի, սուտ բան լսելիս ասում են. «Կարաս ա ավլերի»:

Վախեցածին բժշկելու համար անխոս տանում են մի նոր թաղվածի կամ սպանվածի գերեզմանի վրա ոտներն ու ձեռները լվանում և ջրի տանը կոտրում գերեզմանի վրա: Վերադարձին կարող են խոսել, իսկ դնալիս՝ ոչ:

ԿԱՄԱՎՈՐ ՊԱՍԵՐ ԵՎ ՏՈՆԵՐ

Նոր-Բայազետի հին սերունդը մեծ ջերմեռանդությամբ պահում էր ոչ միայն չաբաթապասերը, այլև չորեքշաբթի և ուրբաթ օրերը: Այժմյան սերունդը այնքան մեծ կարևորություն չի տալիս, թեև խեղճը սաստիկ աղքատության պատճառով ուտիս օրերն էլ է պաս պահում, որովհետև կերածը ցամաք հաց է միայն: Պասերից Ծննդյանը, ս. Սարգսինը (Առաջավորաց), Մեծ պասի առաջին և վերջին չաբաթները, Համբարձմանը, Վարդավառինը և Աստվածածնինը այնուամենայնիվ պահվում են:

Բացի այս օրինական պասերից, գլխավորապես պառավ կանայք կամավոր պասեր ևս պահում են, սակայն ոչ բոլորը, այլ ով կամենա, որովհետև «պահող պահողաց ա»: Այսպիսի կամավոր պասերից նշանավոր են.

Ս. Կարապետի պաս. *Տևում է Համբարձումից մինչև Վարդավառ, միայն չաբաթ և կիրակի օրերը ուտում են ուտիսի կերակուրներ, բայց ոչ մսեղեն: Այս պահեցողության ընթացքում նաև ծամոն չեն ծամում, մեղք համարելով:*

Վարդավառի «Աթոռքի» պաս. *Պահում են Վարդավառի պասի նախընթաց չաբաթը, հետևապես և Վարդավառի պասի մի չաբաթվա փոխարեն՝ երկու չաբաթ:*

Ս. Աստվածածնի պաս. *Պահում են նույն պասի նախընթաց չաբաթը ևս:*

Ս. Վարդանի պաս. *Պահում են Բարիկենդանի վերջին չաբաթի հինգ օրը և չաբաթ օրը ուխտ գնում Ալափարսի ս. Վարդանի վանքը: Այս պասը գլխավորապես պահում են հոդացավ (քամի) ունեցողները՝ ս. Վարդանի վանքից բժշկություն հայցելու հույսով: Նաև չատերը ուխտ գնալուց առաջ մի չաբաթ պաս են բռնում:*

Բացի կամավոր պասերից՝ կան և կամավոր տոներ, և սրանք ոչ թե բացառապես կանայք, այլ նաև տղամարդիկ են պահում:

Այսպիսի տոներին ևս ժողովուրդը «կիրակի» է անվանում: Սրանցից նշանավոր են.

Կարկտի կիրակի. *Պահում են, որպեսզի կարկուտը չխփի արտերին: Ընկնում է ս. Թադեոս առաքյալի տոնի օրը:*

Թալալոցի կիրակի. *Պահում են որպեսզի ուշագնաց չլինեն, ընկնում է մեծ պասի առաջին չաբաթվա չաբաթ օրը:*

Օձի կիրակի. *մի որևէ օր հատկապես օձի համար կիրակի են պահում, որպեսզի օձերը չկծեն: Նույն նպատակով էլ Մեծ պասի Ավագ չորեքշաբթի օրը ուտում են թթու մախոխ, որ կոչվում է **օձի թթու:***

Հավկուրի կիրակի. *Չորեքշաբթի և ուրբաթ երեկոները՝ լույս հինգշաբթի և չաբաթ գործ չեն անում, որպեսզի հավկուր չլինեն, երեկոյան դեմ և գիշերը տեսնելու կարողությունից չզրկվեն:*

ՆՇԱՆԱՎՈՐ ՎԱՆՔԵՐ

ԿԵՋԱՌԻՍ

Տեղադրություն. *Կեչառիսի հռչակավոր և ճարտարապետական տեսակետից չափազանց նշանավոր վանքը գտնվում է Նոր-Բայազետի գավառի այժմյան Ծաղկաձոր կամ Դարաչիչակ գյուղում, ամառանոցի արևմտյան կողմում, հարթության վրա (162°233'23"-40°32'9"): Վանքը բաղկացած է չորս եկեղեցիներից, չորսն էլ տեղավորված անտառապատ լեռների գոգավորության մեջ: Եկեղեցիներից երեքը խմբված են մի տեղ, իսկ մինը*

գտնվում է սրանցից մոտ 70 մ դեպի արևմուտք: Առաջինների տեղը ներկայացնում է մի փոքրիկ հարթություն, որի վեհերը, փոքր-ինչ ներքևում, տալիս է մի հստակ առվակ:

Հարթության հյուսիսային մասում տեղավորված է ամենամեծ եկեղեցին, որ **սուրբ Գրիգոր** է կոչվում, յուր արևմտյան կողմում ունենալով մի գավիթ: Հարավային կողմում գտնվում են **ս. Նշան** և **ս. Կաթուղիկե** եկեղեցիները:

Բավականաչափ խաչքարեր, գեղեցիկ դամբարաններ, հասարակ տապանաքարեր շրջապատում են այս երեք եկեղեցիներն էլ, իսկ սրանց հյուսիսային կողմն արդեն ընդարձակ գերեզմանատուն է:

Հիմնապատերից երևում է, որ այս երեք եկեղեցիները շրջապատված են եղել պարսպով:

Պատմական տեսություն. Կեչառուքի կամ Կեչառուսի սքանչելի վանքի մասին Վարդան Բարձրբերդցին յուր պատմության մեջ խոսելով Պահլավունի Հասանի որդի Ապիրատ իշխանի մասին, ասում է, որ ԺԲ դարի սկզբին «Շինեաց զսուրբ ուխտս Կեչառուս»: Սակայն այժմյան եկեղեցիների շարքում Ապիրատից շինված տաճար հայտնի չէ: Գլխավոր եկեղեցին՝ ս. Գրիգորի անվան նվիրված, ինչպես կարելի է ենթադրել նրա վրայի երկու արձանագրություններից, շինված է 1033-1051 թվականների ընթացքում Հասանա որդի Գրիգոր Մագիստրոսից, այնպես որ հավանական է թվում, որ Վարդանի վերոհիշյալ Հասանի որդի Ապիրատ իշխանը նույն ինքը Գրիգոր Մագիստրոսը լինի, որ իր ժամանակի սովորության համեմատ, կարող էր երկու անուն ունեցած լինել:

Ս. Գրիգոր եկեղեցին Գրիգոր Մագիստրոսից շինված լինելը հաստատվում է ոչ միայն նրա վրա եղած երկու արձանագրություններից, այլև Մագիստրոսի ինքնագիր մի հիշատակագրությունից 1051 թվականով, որ գտնվել է Հռոմի Հավատաստիյուռ ժողովի դիվանի մեջ, հայտնի չէ, թե ումից և երբ թարգմանված իտալերենի: Սեն Մարտեն հայագետը այդ հիշատակարանը հրատարակել է յուր Memoires historiques et geographiques sur l'Armenie (հատոր բ, եր. 287) մեջ, հայր Ալիշանը վերստին թարգմանել է հայերեն այսպես. «ի Շ (1051) թուականիս ի ժամանակս Կոստանդեայ Մոնոմախի թագաւորի Հայոց (Յունաց) դուքս Վասպուրականի (և տէր) գաւառիս Ծաղկնոց, ես Գրիգոր Մագիստրոս, որդի Վասակայ հրովարտակաւ և հրամանաւ վերոասացեալ թագաւորիս՝ հիմնադրեալ շինեցի զեկեղեցիս ի տեղւոջս, որ կոչի Կեչառուս, ի նախասացեալ գաւառի Ծաղկնոց հանդերձ մատրամբս. և նուիրեցի զտաճարս և զեկեղեցիս՝ յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ, և զարդարեցի զսա սպասուք արծաթեղինօք և ոսկեղինօք, գրովք և այլովք պիտոյիւք, որպէս վայել էր տաճարիս: Դարձեալ եւս եկեղեցւոյս գիտացս երկուս և այդի մի: (Եւ) մեք չնորհիւն Աստուծոյ եպիս-

կոպոսունքս Բջնոյ Վանական և Համավար, սահմանեցաք և հաստատեցաք ի թեմ և կալուած վերոգրեալ եկեղեցւոյս՝ գեօղս քսան և հինգ և քաղաք մի, որք են, Բուժան,[337] Շոկաթն և այլն:[338] Եվ հաստատեցաք զվճիռս մերով ձեռնագրովս և կնքովս: Արդ եթէ ոք յետ մեր կամ յեկեղեցականաց կամ յաշխարհականաց, իշխեսցէ հակառակ կալ վճռոյս մերոյ, նզովս առցէ ի սրբոյն Գրիգորէ մերոյ Լուսաւորչէ և ՅԺԸ հայրապետացն Նիկիոյ ժողովոյն, և մասն և բաժին նորա ընդ Յուդայի մատնչի և ընդ խաչահանուացն Քրիստոսի եղիցի, իսկ որ հաստատուն պահէ՝ օրհնեալ եղիցի ի Տեառնէ Աստուծոյ»:[339]

Ս. Գրիգորի հարավային կողմի փոքրիկ եկեղեցին, որ հավանականորեն ս.Նշան է կոչվել, չի պահել յուր հիմնադրի անունը և հիմնարկութեան տարին, միայն դռան վրայի արձանագրությունը վկայում է, որ 1223 թվին «աստուածասէր պատրոն Վաչէն նորոգեաց վերստին զեկեղեցիս»:

Երրորդ՝ ս. Կաթուղիկե եկեղեցին չինել է ԺԳ դարի առաջին քառորդում Պռոշ իշխանի հայր՝ Խաղբակա որդի Վասակը, ինչպես երևում է արևմտյան դռան վերև գտնված արձանագրությունից:

Չորրորդ՝ ս. Հարությունն եկեղեցին չինվել է 1220 թվին «առ ի յիշատակ համաւբէն ննջեցելոց ի Քրիստոս»: Այս շինության մասին վկայող արձանագրությունը չի հիշատակում հիմնադրին, այլ միայն տալիս է նրա ծնողների՝ Հասանի և Ռուզուքանի անուննները:

Այս հրաշակերտ վանքի մասին պատմական տեղեկություններ շատ քիչ կան: Նրա վրայի արձանագրությունները միայն հետևյալն են պատմում:

Ամենահին արձանագրությունը վերաբերում է 1116 թվին, որ պատմում է թե Գրիգորիսի (Գ) կաթողիկոսության և «ի թագաւորութեան վրաց Գէորգէ և մեր իշխանին», հայր Պետրոսը յուր տեր Հովսեփ և Սարգիս կրոնավոր եղբայրների և ուխտի միաբանների հետ, հաստատել են Աղվանից կաթողիկոս Ստեփաննոս Գ համար պատարագել ամեն տարի Առաքելոց տոնին:

1204 թվին Վարդըմբելը նվիրել է այս ուխտին յուր Երևանում ունեցած Մեղիտինո այգու չարեքը:

1213 թվին Սարգսի որդի Վաչեն, Վաչուտի թոռը, յուր ամուսին Մամախաթունի և Քուրդ ու Վաչուտ որդիների հետ, միաբանել է այս ուխտին և տվել նրան «ի գանձագին գեղն Շէնգաւիթ»:

1244 թվին Կախայբերի որդի Քուրդը եկել է այս ուխտը և կրոնավորել Յոհաննես անունով:

---

337 Թևրևս Բուժկան, Բջնի:

338 Ցավալի է, որ իտալացի թարգմանիչը կամ Սեն Մարտենը բաց են թողել այստեղ հիշատակված գյուղերի անուննները:

339 Ալիշան, եր. 260, ուր կա նաև իտալական թարգմանությունը:

1248 թվին Խաչենի Խոյախան բերդի տեր Մեծին Հասանա թոռ և Վախթանգի որդի Հասանը յուր ամուսին՝ Բաղաց (Սյունեաց) թագավորի դուստր Մամքանի հետ, միաբանել է «մեծ և հռչակաւոր սուրբ ուխտիս» և յավերման նեստողաց (թաթարաց), «բազում դանձիւք» նորոգել է այս վանքը Մխիթար վարդապետի առաջնորդության միջոցին:

1272 թվին Վերապշահը Աթանասի առաջնորդության միջոցին միաբանել է «սրբոյ Նշանիս» և տվել «ի հալալ արդեանց»:

Երեք անթվակիր արձանագրություններից առաջինը կարելի է ԺԳ դարի առաջին կեսին վերագրել, եթե միայն այս արձանագրության մեջ հիշված ուխտի առաջնորդ Մխիթար վարդապետը համարենք Խոյախան բերդի տեր Հասանի արձանագրության մեջ հիշված համանուն վարդապետը: Այս ենթադրությունը համապատասխանում է և արձանագրության իմաստին, որ վկայում է թե Մարասա (թերևս Ղարաբաղի Ամարասի) տեր Սարգիս և տեր Վրթանես եպիսկոպոսները միաբանել են Կեչառուաց ուխտին և նվիրել 200 դահեկան «յառաջնորդութեան Մխիթար վարդապետի», իսկ վերոհիշյալ Մխիթար վարդապետը եղել «յաւերման նեստողաց», ուստի և հավանական է, որ վերոհիշյալ եպիսկոպոսները այս թաթարների ավերումներից ստիպված թողել են իրենց վանքը և ապավինել այս ուխտին:

Մյուս երկու արձանագրությունները պատմում են, որ «Պարոն Վարդ Երևանո» և «Մխիթարիչ որդի Գրիգորս» մի-մի այգի են նվիրել այս ուխտին:

Եկեղեցիների շուրջը եղած գերեզմանների տապանագրերի մեծագույն մասը եղծված է. կարդացված տապանագրերից ամենահինը վերաբերում է Ջ (1251) թվականին: Պատմական աղբյուրներից երևում է, որ այս մենաստանը Պահլավունիների դամբարանն է եղած, և այս պատճառով էլ ԺԱ դարի վերջերը Վասակի որդի և Ալիրատի թոռ Գրիգորին, որ նահատակվել էր Կաղզվանում, բերել, այստեղ են թաղել:[340]

Կեչառուաց վանքի վանահայրերը, որքան որ կարելի եղավ քաղել արձանագրություններից և պատմական հիշատակարաններից, եղել են.

Նախ հայր Բարսեղ, որ հիշատակված է ս. Գրիգոր եկեղեցու վրայի 1051 թվականի արձանագրության մեջ:

Ապա՝ Պետրոս Ա, որի մասին 1184 թվին գրված «Մեկնութիւն Ղուկայ և Յովհաննու ի Կունդ Սարգիս վարդապետէ» վենետիկյան ձեռագրի հիշատակարանում ասված է. «ի վանս հռչակաւոր և հրաշազան հանդիսարանիս Կեչառուս, ընդ հովանեաւ սուրբ Լուսաւորչիս Գրիգորի, որ և պայծառապէս ճոխացեալ ի սկզբանն՝ և դարձեալ խրթնացեալ՝ ըստ յաճախելոյ մեղացը քրիստոնէից, զոր նորոգեաց սուրբ Հայրս Պետրոս հանդերձ հարազատաւան իւրով Տեառն Յովսեփաւ: Բայց զերանաւէտ անձին Հօր Պետրոսի

[340] Վարդան Բարձրաբերդցի:

օրինակ բարեաց եղեալ՝ ով ոք բաւականաւոցի պատմել զառաքինութիւնս. զի որպէս ճշմարիտ է ասել, վայել իսկ է խնամոցն Աստուծոյ այսպիսում քաւարանի լինել այսպիսի նորոգիչ...»:

Այնուհետև գովաբանելով հայր Պետրոսի առաքինությունը, ճգնակյաց կյանքը, որ դաժան ձմռան մի ասվով էր մնում, անաչառությունը, անարծաթասիրությունը, հյուրասիրությունը՝ ավելացնում է. «Աղօթիւք՝ անչէջ ջահիւց նմանեալ էր, օտարասիրութեամբ և հիւրընկալութեամբ յաւէտ գերազանց էր... ըստ Յոբայն՝ հայր որբոց և հանդուցիչ պանտխտացելոց. ըստ Մովսէսի՝ հեզ, ըստ Դաւթի՝ ողորմած, ըստ Սողոմոնի՝ հանճարեղ քան զամենայն նմանիսն, ըստ Երեմիայի՝ գթած, և ամենեցուն փարելի. և ըստ Պաւղոսի՝ ընդ ամենայնի ամենայն, մինչև զամենեսին չահել. ըստ Հիսուսի՝ վասն ամենեցուն չարչարեալ և բնաւից հանդուցիչ»:

3) Հայր Պետրոսից հետո, ԺԳ դարի սկզբում, հիշվում է Գրիգոր Մոնոնիկը, որ 1205 թվին ներկա է եղել Զաքարիա Սպասալարի հրամանով գումարված Լոռվա ժողովին, «որ և աստ զանհաւանն իւր զ Գրիգոր եպիսկոպոս Հաղբատայ ըմբռնեաց ի կեչառուս և ետ զնա ի բանտի»:[341]

4) Ներսես վարդապետ, առաքինի և ողջախոհ հոգևորականը, որին Զաքարիա Սպասալարից Անիում հավաքված ժողովականները պատգամավոր ընտրեցին Մխիթար Գոշին ընդառաջ գնալու և հրավիրելու նրան, որ նախքան Զաքարիա Սպասալարի մոտ գնալը, գա իրենց ժողովը: Սա բավական կարճ միջոց է վանահայրությունն արել, որովհետև արդեն 1223 թվին հիշվում է:

5) Պետրոս (Բ), որ ըստ արձանագրության՝ որդեգրվել է Պատրոն Վարդից և նրանից ստացած այգին նվիրել այս վանքին:

6) 1248 թվին հիշվում է Մխիթար:

7) 1272 թվին՝ Աթանաս, իսկ սրանից առաջ գուցե Մխիթարչի արձանագրության մեջ հիշատակված հայր Համազասպը:

8) Ամբողջ մի դար ոչ մի հիշատակություն չլինելուց հետո՝ 1364 թվականին հիշվում է Տեր Հովհաննես:

9) Ապա կրկին մի դարուց հետո՝ 1491 թվին հիշվում է այս վանքի առաջնորդը, որի անունը եղծված է, արտագրել է մի ավետարան: Նույն թվին մի ոմն Գալուստ աբեղա նույնպես արտագրել է մի ավետարան այս «գերահռչակ» վանքում, «ի բռնակալութեան Յաղուբ բեկի»:

Մի դար ևս անց՝ 1578 թվին, հիշվում է Փիլիպպոս եպիսկոպոսը վերադիտող Կեչառուաց և քաջ փիլիսոփա, որի աշակերտ Առաքել Սարկավագը 1576 թվին նույն ուխտում արտագրել է մի ավետարան:[342]

---

[341] Ալիշան, Այրարատ, եր. 267:
[342] Գտնվում է Նոր Բայազետում:

Այնուհետև, դժբախտաբար, դարձյալ տեղեկություններ պակասում են, միայն Ոսկան վարդապետի եպիսկոպոսական թեմերի ցուցակից երևում է, որ ժէ դարի կեսին այստեղ ևս եպիսկոպոս է նստել, բայց թե ինչպես է վանքը ամայացել՝ ոչինչ հայտնի չէ:

ԺԹ դարի երեսնական թվականների կեչառիսը միանգամայն ամայացած է լինում և ռուս կառավարությունը բնակեցնում է այստեղ ռուս մալական աղանդավորներ, սակայն երբ իշխան Բարսեղ Բեհբությանը, նոր նվաճված Հայկական նահանգի կառավարիչը, Ծաղկաձորը դարձնում է Երևանի պետական հիմնարկությունների ամառանոց, Երևանի հայերն էլ սկսում են այստեղ գալ ամառանոց, ուստի և ս. Գրիգոր եկեղեցու գավիթը փոքր-ինչ վերանորոգելով, դարձնում են աղոթատուն: 1862 թ. այս վանքի կառավարիչ կարգվում է Մկրտիչ ծայրագույն վարդապետ տեր Թադևոսյանը, որի անհոգության շնորհիվ վանքը չի կարողանում ձեռք բերել յուր նախկին հողերից գոնե այնչափ, որ հնար լիներ հոգալ մի վանահոր ապրուստը:

Մոտ տասնհինգ տարի առաջ մի երևանցի կտակել է վանքի վերանորոգության համար 5000 ռ., սակայն մինչև այժմ էլ ոչինչ չի արված, չնայելով որ մի առանձին հանձնաժողով էլ կազմված է երևանցիներից:

Վանքի նկարագրությունը. Ս. Գրիգոր եկեղեցին. Ս. Գրիգոր Լուսավորչի անվան նվիրված եկեղեցին ամբողջովին շինված է սև, սրբատաշ քարից: Նրա երկարությունն է 13,70 մ, լայնությունը՝ 10 մ և բարձրությունը՝ մինչև կամուղիկեն, մոտ 15 մ:

Եկեղեցին ներքուստ անույն է: Զորս որմնասյուներ կրում են իրենց վրա կիսաբոլոր երեքական, միմյանց կից կամարներ, որոնց վրա բարձրանալիս է եղել գմբեթը:

Եկեղեցու արևմտյան պատի մեջ ևս կան երկու նեղ որմնասյուն, որոնց վրա բոլորում են միմյանց կից, պայտաձև կամարներ՝ հանգչելով մեջտեղի որմնասյուների վրա, որով և փոքրիկ խորշեր են կազմվում 4 մ երկարության և 1,10 մ լայնության, որոնք փոխարինում են բազիլիկայի խորաններին: Երկու խորան էլ արևելյան կողմը, սեղանի կողքերին կան:

Կեչառիսի ս. Գրիգոր (յուր գավթով), ս. Նշան և Կաթուղիկե եկեղեցիները:

Որմնասյուները բաղկացած են երեքական կիսաբոլոր և նույնչափ քառանկյունի, միացած կիսասյուներից, քառանկյունի խարիսխի վրա հանգած մի խոյակով պսակված, որի երկու երեսը կիսաբոլոր է, երկուսը՝ քառանկյունի. կիսաբոլոր երեսի վրա կան երեքական կիսաշրջաններ, որոնք կապ են ձևացնում, իսկ քառանկյունի երեսների վրա կան երեքական վարդաձարդեր՝ պարզ, երեքական համակենտրոն շրջաններից բաղկացած:

Կողակը կիսաբոլոր է և, բացի որմնասյուների վրա բոլորող կամարից, ունի նաև մի ուրիշ կամար՝ միայն առանց որմնասյուների: Այս երկու կա-

մարների միջև, սեղանի երկու կողքերին, կան 1,5 մ բարձրության և 0,5 մ լայնության դռնակներ, սեղանից մոտ 4 մ բարձր, որոնք տանում են խորաններին վերև չինված փոքրիկ սենյակները: Այստեղից էլ քարե սանդուխտներ բարձրանում են եկեղեցու կտուրը: Այս դռնակներից աջակողմյանը քարով պատած է. միայն բախտախնդիրները մի քարը հանել և դանձ են որոնել:

Սեղանը եկեղեցու հատակից 1,5 մ բարձր է և կողքերի փոխարեն, միայն մեջտեղից ունի մի սանդուխտ, այժմ քանդված աստիճաններով:

Սեղանի ճակատին կա տասը կամարակապ ներսանկված, ուր երևի դրված են եղել առաքյալների պատկերները: Այս ներսանկվածներից յուրաքանչյուրի տակ կա մի առանձին տեսակի օրնամենտ:

Կոզակի մեջ կա մի կամարակապ ավանդատուն և մի փոքրիկ, քառանկյունի խորշ՝ արևելյան կողմում:

Վեմ քարն երկու մեծ սալերից է, միմյանց վրա դրված և երեք քարե ոտների վրա հաստատված. վերևի սալքարը շատ մեծ է, 2 մ երկարության, 1 մ լայնության և 35 հարյուրամետր հաստության:

Խորանները թաղակապ են և բոլորաձև. մի-մի փոքրիկ պատուհանով. 4 մ երկարության, 1,20 մ լայնության և մոտ 5 մ բարձրության:

Եկեղեցու հատակը սալահատված է:

Եկեղեցին ունի երկու դուռ, որոնցից մինը՝ արևմտյանը բացվում է գավթի մեջ, իսկ մյուսը՝ հարավայինը՝ դեպի հրապարակը:

Եկեղեցին արտաքուստ հետևյալ տեսքն ունի.

Արևելյան պատի մեջ կան երկու եռանկյունաձև ներսանկվածներ՝ մոտ 5 մ բարձրության և 1 մ խորության: Սրանց վրայով բոլորում են երեք կամարներ՝ գեղեցիկ օրնամենտներով զարդարված: Մեջտեղի կամարի մեջ բացվում է մի փոքրիկ նեղ պատուհան. նույնպիսի մի-մի պատուհան էլ բացվում են ներսանկվածների մեջ՝ դեպի սեղանը: Փոքր-ինչ ներքև, պատի երկու կողքերին ևս բացվում են մի-մի կամարակապ, փոքրիկ պատուհան՝ դեպի խորանը:

Հարավային պատը շատ պարզ է. գրեթե մեջտեղում 2 մ բարձրությամբ և 1,30 մ լայնությամբ բացվում է մի դուռ՝ հինգ կիսաբոլոր սյուներով եզրափակված և երեք համակենտրոն կամարով պսակված: Սրա կամարակալ քարը կրում է իր վրա հիմնադրի՝ Գրիգոր Մագիստրոսի արձանագրությունը՝ եկեղեցու շինության մասին: Դռան վերև, միմյանց կից բացվում են երեք պատուհան, մոտ 1,20 մ բարձրության, և 30 հարյուրամետր լայնության: Սրանց վերև բոլորում են միմյանց կպած երեք կամարներ:

Արևմտյան պատն ունի մի կամարակապ դուռ, որ միանգամայն նման է հարավային դռան, և որի կամարակալ քարի վրա նկարված է Հիսուսի մկրտությունը: Դռան վերև կա երեք հատ երկար ու նեղ պատուհան, իսկ

սրանցից միջինի դլխին՝ պատի եռանկյունաձև գագաթին մի քերուբաքանդակ, դեղեցիկ խաչքար, կողքին գրված Ես բարի ծառայ Քսի. և ուրիշ ոչինչ, երևի չեն կարողացել ավարտել արձանագրությունը:

Այս պատի դուռն այժմ քարով ծածկված է և միայն մի փոքրիկ պատուհան է թողնված, որովհետև սրա առջև գտնված գավիթն այժմ իբր աղոթատուն է ծառայում այստեղ ամառանոց եկողներին:

Հյուսիսային պատը թեև նման է հարավայինին, սակայն նրանից ավելի պարզ է. այստեղ ևս կան երեք հատ, միմյանց կից, կամարակապ, փոքրիկ և նեղ պատուհան, իսկ դուռ՝ ոչ:

Գմբեթը ամբողջովին թափված է 1827 թվի երկրաշարժի ժամանակ:

Գավիթ. Ս. Գրիգոր եկեղեցու արևմտյան կողմը գտնվում է գավիթ, որ ինչպես երևում է նույն իսկ շինքից, միաժամանակ շինված չէ և նրանից փոքր-ինչ լայն է: Սրա երկարությունն է 14,20 մ, իսկ լայնությունը՝ 16 մ, բարձրությունը կհասնի մինչև 15 մ: Շինված է սև, սրբատաշ քարից: Չորս հակայական սյուների վրա բոլորում են արաբական կամարներ, որոնց վրա բարձրանում է ութանկյունի և հետզհետե նեղացող գմբեթանման մի ճեղուն՝ թողնելով իր մեջտեղում մի ութանկյունի բացվածք, որի վրա հանդում է մի խաչաձև երկաթ, կրելով երբեմն եկեղեցու զանգերը: Այս գմբեթանման ճեղունի բարձրությունը ընդհանուր ճեղունից կլինի մոտ 3 մ, և սրա յուրաքանչյուր կողմի լայնությունը՝ հիմքում 2 մ, իսկ ծայրում՝ 40 հարյուրամետր:

Կենտրոնական կամարներից զատ, այս միևնույն չորս սյունների և տասներկու որմնասյունների վրա բոլորում են նույնպիսի կամարներ, ուրը սյուներից դեպի որմնասյուները և տասներկուսը՝ որմնասյունից՝ որմնասյուն, այնպես որ յուրաքանչյուր պատի վրա ճգվում են երեք կամար:

Չորս սյուներն էլ միատեսակ են. նախ ութանկյունի և ապա բոլորակ պատվանդանի վրա բարձրանում է 2 մ բարձրության և 3,10 մ շրջապատով միակտուր մի կլոր սյուն, կրելով նախ բոլորակ և ապա քառանկյունի մի խոյակ:

Որմնասյուներն էլ միևնույն ձևի և միևնույն բարձրության են, միակտուր քարերից շինված. 1,80 մ շրջապատի կլոր կիսասյան երկու կողքերին բարձրանում են մի-մի ուրիշ, 40 հարյուրամետր շրջապատ ունեցող կիսասյուներ՝ սների խարիսխների նման խարիսխներով և նույնպիսի խոյակներով:

Գավթի մեջ բացվում են 7 հատ փոքր, 0,5 մ բարձրության և 20 հարյուրամետր լայնության պատուհաններ, որոնք արտաքուստ զարդարված են կամարներով: Արևմտյան պատի մեջտեղի պատուհանի կամարի վրա քանդակված է երկու սավորիկ և մի վարդապարդ, ինչպես և հարավային պատի մեջտեղի պատուհանի կամարի վրա՝ երկու վարդապարդ և փոքր-ինչ բարձր՝ արևի ժամացույց:

Ձեղունը թաղակապ է, միայն չատ ուշագրավ է արևմտյան դռան աջ և ձախ կողմերում կամարակապ տարածութիւնների ծածկը. ութանկիւն, դրվագավոր չրջանակի մեջ բոլորում է մի նուլնպիսի չրջանակ, իր մեջ ունենալով միմյանց խաչաձև կտրող երկու քար, որոնց ընդհարման տեղում քանդակված է մի վարդազարդ, իսկ խաչի թևերի միջի տարածութիւնները ծածկված են միայն մի-մի կտոր մեծ սալքարերով:

Միակ, արևմտյան դուռը եզրափակված է երկուական կիսաբոլոր որմնասյուներով, որոնց վրա բոլորում են պայտաձև երկու, համակենտրոն կամարներ, և այս բոլորը պարփակված է մի քառանկյունի չրջանակի մեջ:

Այժմ այս գավիթը, համեմատաբար չատ քիչ վնասված լինելու պատճառով, աղոթատուն են դարձրել այստեղ ամառանոց եկողների համար, ուստի չինված է մի սեղան, մի խորան և մի ավազան:

Այժմ ավազանի մոտ դրված է մի քար, որի վրա քանդակված է մի արծիվ՝ մագիլներում մի խոյ բռնած: Արծվի գլուխը կոտրված է: Հայտնի չէ, թե այս քարը որտեղ է դրված եղել:

Ս. Կաթուղիկե. ս. Կաթուղիկե եկեղեցին ևս չինված է սև, սրբատաչ քարով. երկարութիւնն է 19 մ, լայնութիւնը 13,5 մ և բարձրութիւնը՝ մոտ 13 մ:

Եկեղեցին ներքուստ անսյուն է, չորս կրկնահարկ խորաններով:

Չորս որմնասյուներ կրում են իրենց վրա պայտաձև կամարներ, որոնց վրա բոլորում է մանեկաձև մի չրջանակ, կրելու գմբեթը, որ այժմ քանդված է: Որմնասյուները միանգամայն նման են ս. Գրիգորի եկեղեցու որմնասյուներին:

Յուրաքանչյուր պատի մեջ կա մի հատ 1,5 մ բարձրութեյան և 35 հարյուրամետր լայնութեյան պատուհան:

Կոզակը բոլորաձև է և կամարակապ. սեղանի վրայից մի-մի դռնակ բացվում է վերին խորանների մեջ: Սեղանը հատակից բարձր է մոտ 1 մ և երկու կողքից ունի սանդուխտներ: Սեղանի ճակատը զարդարված է 10 կամարակապ ներսանկվածներով, որոնցից երկուսի մեջ կան մի-մի չատ գեղեցիկ վարդազարդ: Այս ներսանկվածների մեջ երևի դրված են եղել առաքյալների պատկերներ:

Խորանները բոլորաձև են և թաղակապ, 2,5 մ երկարութեյան, և 1,30 մ լայնութեյան: Դռների վերև կա մի-մի գեղեցիկ խաչքար:

Ինչպես տեսանք, արևելյան կողմի խորանների վերին հարկի դռները սեղանի վրայից էին, իսկ արևմտյան կողմի խորաններինը՝ ներքին խորանների դռների վերև, ուր կարելի է բարձրանալ ներքին դռների կողքից ձգվող քարե սանդուխտով: Եկեղեցու հարավային պատի մեջ կա մի խորշ՝ շղթայաձև գեղեցիկ օրնամենտով եզրափակված: Հավանական է, որ սա բուրվառներ կախելու տեղ լինի:

Եկեղեցու հատակը սալահատակած է եղել:

Եկեղեցին արտաքուստ չատ գեղեցիկ է: Արևելյան պատի մեջ կան երկու եռանկյունաձև ներսանկված՝ ճաճանչավոր արեգակներով պսակված: Այս ներսանկվածները եզրափակված են կրկնակ կիսասյուներով, որոնց վրա բոլորում են մի-մի ռոմանական կրկնակ կամարներ: Ներսանկվածների միջև, միայն փոքր-ինչ բարձր, բացվում է մի երկար և նեղ պատուհան, որ բացի մի փոքրիկ կամարից, ունի նաև կրկնակ բոլորաձև երիզից բաղկացած մի շրջանակ, որ հանգում է ներսանկվածների ներքին սյուների վրա:

Հարավային պատը միանգամայն նման է արևելյանին, միայն այստեղի պատուհանն ավելի լայն է և երկար և չատ գեղեցիկ օրնամենտներով պատած:

Արևմտյան պատի մեջ բացվում է մի դուռ, եզրափակված երեքական կիսաբոլոր որսնասյուներով և պսակված երեք համակենտրոն պայտաձև կամարով, որոնցից փոքր-ինչ վերև կա մի գեղեցիկ վարդազարդ, իսկ ավելի բարձր՝ բացվում է 1,5 մ բարձրության և 30 հարյուրամետր լայնության պատուհան, շրջապատված մի քառանկյունի գեղեցիկ շրջանակով: Այս պատուհանը դռան հետ միասին պարփակված են կրկնակ կիսասյուների վրա հանգող պայտաձև մի կամարի մեջ, որի տակ կան նաև երկու գեղեցիկ վարդազարդ, իսկ վերև շղթայաձև դրվագներից բաղկացած մի մեծ, գեղեցիկ խաչքար:

Պատը, որ վերջանում է եռանկյունաձև, եզրափակված է կիսաբոլոր կարնեզով և գագաթին ունի մի սրտաձև զարդ:

Հյուսիսային պատը նման է հարավայինին, միայն չունի ներսանկվածներ: Այստեղ կա մի դուռ, որ նույնպես նման է արևմտյան դռանը:

Եկեղեցու գմբեթն այժմ քանդված է:

Ս. Նշան. Հավանորեն ս. Նշան անունը կրող եկեղեցին շինված է սև, սրբատաշ քարից, 7 մ երկարության, 5 մ լայնության և 13 մ բարձրության:

Եկեղեցին ներքուստ անույշն է, չորս որմնասյուների վրա բոլորում են ռոմանական կամարներ, որոնց վրա հանգած է կաթուղիկեն: Կողակը բոլորաձև է, և ունի մի փոքրիկ պատուհան: Խորաններ չկան, միայն արևմտյան կողմում, որմնասյան և արևմտյան պատի մեջ կամարակապ, 90 հարյուրամետր լայնության, 30 հարյուրամետր խորության և մոտ 4 մ բարձրության մի-մի ներսանկված կամ խորշ կա, որ հիշեցնում է նախնական բազիլիկային խորաններըը:

Միակ դուռը բացվում է արևմտյան պատի մեջ: Դուռը արտաքուստ շրջապատված է երեք կիսաբոլոր կիսասյուներով և սրանց վրա բոլորող համակենտրոն երեք ռոմանական կամարներով: Դռնից վերև բացվում է մի նեղ և երկար, կամարակապ պատուհան:

Մյուս երեք պատերը բոլորովին պարզ են:

Գմբեթը գլանաձև է, կոնաձև կաթուղիկեով: Գլանի վրա կան վեց ռոմանական կամար, կրկնակ որմնասյուների վրա հանգած: Այս կամարներից արևելյանի և արևմտյանի մեջ բացվում են մի-մի կլոր պատուհան: Կոնաձև կաթուղիկեն մի քիչ քանդված է:

Ս. Հարություն եկեղեցին, որ կանգնած է երեք եկեղեցիներից դեպի արևմուտք, գերեզմանատան մեջ, բաղկացած է մի տաճարից և մի գավթից: Երկուսն էլ շինված են սև տաշած քարից: Եկեղեցու երկարությունն է 7 մ, լայնությունը 4,60 մ և բարձրությունը մոտ 15 մ: Եկեղեցին ներքուստ միանգամայն նման է ս. Նշան եկեղեցուն: Սա ևս անսյուն է, այստեղ ևս չորս որմնասյուների վրա բոլորում են պայտաձև կամարներ՝ կրելով գմբեթը: Խորաններ բոլորովին չունի, միայն արևմտյան կողմում, որմնասյուների և հարավային պատի միջև բոլորում են կամարներ՝ խորաններ հիշեցնող խորշեր գոյացնելով: Կողակը բոլորաձև է, կամարակապ և ունի մի երկար ու նեղ պատուհան:

Եկեղեցին արտաքուստ շատ պարզ է. կիսաբոլոր գեղեցիկ կարնեզներ եզրափակում են հռանկյունի ձևով վերջացած պատերը՝ պարփակելով յուրաքանչյուր կողմում մի փոքրիկ, նեղ և երկար, կամարակապ պատուհան:

Գմբեթը գլանաձև է, բավական բարձր, ունի երկու նեղ և երկար պատուհան և պսակված է կոնաձև կաթուղիկեով:

Եկեղեցին ունի միայն մի դուռ, եզրափակված երկուական կիսաբոլոր և մի քառանկյունի որմնասյուներով, որոնց վրա բոլորում են պայտաձև, համակենտրոն երեք կամարներ: Այս դռան առջև բացվում է գավիթը, որ սակաշեն է, և արևմտյան կողմը մի սյունով և երկու որմնասյունով երկու կամարակապ բացվածք ունի: Սյունը կլոր է, միակտուր քարից, իսկ որմնասյուները երեքական բոլորակաձև կիսասյուներ են, միակտուր քարից, գեղեցիկ խոյակով:

Գավթի հարավային և հյուսիսային կողմերում կան մի-մի փոքրիկ պատուհան՝ շղթայաձև օրնամենտներով շրջապատված: Գավթի երկարությունն է 4 մ, լայնությունը 4, 25 մ և բարձրությունը՝ 4 մ:

Եկեղեցու շուրջը եղել են բավականաչափ գերեզմաններ, սակայն այժմ բոլոր տապանաքարերը տարված են, և նույնիսկ եկեղեցու բակը հատկացված է շինություններ շինելու:

Ս. Գրիգորի եկեղեցու հարավային կողմում 3,5 մ երկարության, 2,5 մ լայնության և մոտ 4 մ բարձրության կա մի քանդված մատուռ, որի բոլորաձև սեղանն է միայն կանգուն: Միանգամայն սրան նման և միաչափ մի մատուռ էլ 4 մ հեռու է շինված, որ նույնպես կիսավեր է: Այս երկու մատուռները միացած են մի պատով, արևելյան կողմից, որի մեջ 1 մ բարձրության վրա կանգնած են չորս գեղեցիկ խաչքար, 1,70 մ բարձրության: Սրանցից երկու միջինը կարմիր քարից են, յուրաքանչյուրը 1 մ լայ-

նութեան, շատ գեղեցիկ կերտված, միայն ստորին մասում եղած տապանագիրը դիտամամբ եղծած է: Այս երկու խաչքարի երկու կողմերին էլ մի-մի սև խաչքար կա, աջակողմյանի վրա ոչ մի տառ չկա և ոչ էլ եղծածի հետքեր, իսկ ձախակողմյանի գլխին դրված է մի ուրիշ, կարմիր խաչքար, որի վրա անմշակ ձևով դրված է. Ած ողորմի Սարգսի եւ իւր ծնողացն: Պարզ երևում է, որ այս խաչքարը հետո է դրված, մանավանդ որ մյուս խաչքարերից մի քիչ բարձր է և իր տակի խաչքարից 5 սմ լայն:

Այս խաչքարերի առջև, բայց փոքր-ինչ հեռու ընկած կիսաբոլոր կամարակալ և 2 մ բարձրութեան կողմնակալ քարերը ցույց են տալիս՝ որ այս ևս մի ծածկված մատուռ է եղել:

Ոչ այս խաչքարի առջև, և ոչ էլ խորաններրի մեջ չեն նկատվում տապանաքարեր:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՑՈՒՆՆԵՐ

Ս. Գրիգոր եկեղեցու հարավային դռան վերև:[343]

ՆՁՔ Թ. Հա (յոց) (1033) ի թագաւորութեան Գագկայ և ի հայրապետութեան Տն. Սարգսի ես Գրիգոր Մագիստռոս որդի Հասանա չինեցի զեկեղեցիս ինձ ի բարեխաւսութն և իմ պատրոնին և իմ որդեացն. որք ընթեռնոյք զիս յաղաւթս յիշեցէք ի Քս աղաչեմ:

Նույն եկեղեցու հարավային և մասամբ արևելյան պատերի վրա.

Ի հինգհարիւրերրորդի ամի թուականութեանս Թորգոմեան ի թագաւորութեան սբ և ինքնակալ թագաւորին Կոստանդեա Մաւնումախին բերաւոսկի* մատանիս, զոր հզաւրին եւ առաքինոյն բարեպաշտին Գրիգորո Մագիստռոսին կիտաւնտին և Դուկին Վասպուրականի և Տարաւնո Արշակունոյն և Հայկազնոյն, մեծաւ աշխատութբ ազատեալ էր զ մեծ եւ զհռչակաւոր եկեղեցիքս իւր. և ոչ այլ ինչ հայցէ բայց միայն աղաւթս առնել սբ և ինքնակալ թագաւորին Կոստանդեայ, ընդ նմին և ծռային Քի Գրիգորոյ և որդոց իւրոց. եւ յիշատակ կարգեալ յեկեղեցիքս յառաջնորդաց ոք իցէ կամ յիշխանեաց կամ ի քահանաից, այնպիսին ց և ԺԸ հայրապետացն նզովեալ եղիցի և բաժինն ընդ ցուդայի եղիցի և ընդ տիրասպան քահանայիցն: Եւ այս գիր մեր է ցովանիսի չնորհիւն Աստուծոյ Բջնո եպիսկոպոսիս և սբ և մեծի Հաւրս Բարսղիս է. Թե ոք այս գրոյս խափանել չանա. այնպիսին նզովս չարաչարս ընկալցի ի Սբ Լուսաւորչէն Գրիգորոյ և յամենայն սրբոց եւ ի մէնջ. Կատարիչք գրոյս աւրհնեալ եղիցի (ն)...

---

343 Տե՛ս Գ. Հովսեփյան, Խաղրակիանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Նյու-Յորք, 1942-43 (խմբ.)

* Ընդգծվածները արևելյան պատի վրա են:

Նույն եկեղեցու հյուսիսային պատի վրա.

Ն...թուականութեանս Հայոց ի հայրապետութեան Տն Գրիգորիսի և ի թագաւորութեանն Վրաց Գէորգէ և մերո իշխանս Հայր Պետրոս և եղբայր իմ Տր Յուսէփ և Սարգիս կրաւնաւոր և միաբան ուխտս հաստատեցաք Տր Ստեփանոսի Աղուանից կաթողիկոսի ի տարին զ Քրիստոս ի տաւնի առաքելոյն Դաւթի, Պետրոսի, Յոհաննու ամէն եկեղեցիքս. Եթէ ոք խափանէ ՅԺԸ իցն նզովեալ եղիցի:

Այս արձանագրութեան ներքև.

Ես Սիմէոն քահանա գնեցի յեկեղեցիս որ առնէն ինձ ի տարին Բ. աւր ժամ. որ խափանէ դատի յԱյ... աչ աւուր և միաբան եղբարքս վերստին նորոգեցաք զեկեղեցիս և սահմանեցաք զ տաւնին սրբո խաչին որ ամենայն եկեղեցիքս ժամ Գիշուկին առնեն միջնորդութբ Ամի իր բուբային:

Ս. Գրիգոր եկեղեցու հարաւային պատի վրա, արևի ժամացույցի մոտ:

Ի ՈԿԲ (1213) թու. Կամաւն Այ ես Վաչէ որդի Սարգսի որդո Վաչուտի և ամուսին իմ Մամախաթուն և որդիք իմ Քուրդս և Վաչուտ միաբանեցաք ի սբ ուխտս կեչառուս եւ տուաք ի գանձագին գեղն մեր Շէնգաւիթ այգի սպասք եկեղեցո. եւ Տր Գրիգորիս եւ Գրիգոր վարդապետս. զ Մառգարդարն պատարագն ինձ Վաչէի և զ Ղազարոյն Մամախաթունին և զ Նոր կիրակէն Քրդին ամէն եկեղեցիքս. եւ ով առաջնորդ լինի զսէրն առնէ Նոր կիրակէին անխափան:

Ս. Գրիգորի հարաւային պատին.

Թուիս մերոյ ՉԻԱ (1272) Կամաւն Այ ես Վիրապչահ միաբանեցայ սրբոյ Նշանիս յառաջն որդութե Տն Աթանասի, եւ տվի իմ հալ ալ արդեանց իմոց. եւ ետո ւն ինձ Դ աւր ժամ ի տաւնի Ատոմեանց. կատարիչք աւրհնին ի Քէ:

Գավթի արևմտյան դռան վերև.

Կամաւն Այ ես Քուրդս որդի Կախայբերին մտաւ ածի սէրն Այ եւ եկի սբ ուխտս ի կեչառուս եւ կրաւնաւորեցայ ի դրան սբ Լուսաւ որչիս եւ անուանեցայ Յոհաննէս, և արարի պահարան սբ Յոհանի անիս, որք ընթեռնոյք յիշեցէք յաղաւթս...:

Նույն դռան կամարի շուրջը և նրա միջև.

Աւգնութեամբն Այ մեք Մարասայի եպսկոպոսերս Տր Սարգիս եւ Տր Վրթանէս միաբանեցաք կեչառուսայ Սբ Լուսաւորչիս և տվաք ի մեր հալալ արդեաց Մդահեկան յառաջնորդութե: Վդ. Վդերս և միաբանքս ընկալաք. Ճ ջաղացն անցուցաք. Ճ ժամատուն. սահմանեցաք ամէն ամի Զ աւր պատարագ ի տաւնի Ռըստա կիսի եւ Վթի (Վրթանիսի): Գագգ (?) Վթ (?) որ խափանէ նոցա մեղացն պարտական է. կատարիչքն աւրհին յ Այ:

Գավթի ներքին կամարի վրա.

Աւգնութեամբն ամենասուրբ Երրորդութեան...(ես) Հասան որդի Վախթանգայ որդւոյ մեծին Հասանայ տէր Խոյախան բերդոյ Խաչենոյ և ամու-

սին իմ Մամքան դուստր Բաղաց Թագաւորին, միաբանեցաք մեծ և հռչակաւոր սբ ուխտիս Կեչառուաց եւ...յաւերման Նետողաց բազում գանձիւք...նորոգեցաք...Թվին ՈՂԷ (1248) յառաջնորդութեան Մխիթար վրդ. Գէ. վարդապետերս և այլ միաբանքս ընկալան եւ սահմանեցին մեզ Բ. աւր պատարագ ամէն եկեղեցիքս. զաւագ Զատիկն ինձ և Գ չաբաթ աւրն Մամաքանայ. Կատարիչք գրոյս աւրհնին յԱյ. իսկ որ խափանէ ի մեղաց մեր կամ յաւտարաց կամ յիշխանաց և յառաջնորդաց՝ մեր մեղացս պարտական է եւ ՅԺԸ հայրապետացն նզոված է. Կատարիչքն աւրհ:

Կաթողիկէ եկեղեցու հյուսիսային դռան վերև.

Ես Վասակ որդի Խաղբակա չինեցի զսբ Կաթողիկէս յաւգնութիւն... եւ յերկարութիւն կենաց իմ պատրոնացն Իւանէ Աթաբակի և արեան հարազատի իւրոյ Շահանշահի եւ Աւագին եւ իւր մաւրն պատրոն Խոլաքին և իմ եղբայրացն եւ որդեացն յարևշատութիւն, ինձ եւ ամուսնոյ իմո Մամային մեղաց թողութիւն: Որք երկրպագէք յիշեսջիք ի Քս աղաչեմ. Գրիս ընծայ Ա լաւ չինակ(ան) Ա տուն ի Նորաշէնքն երետ եւ Ա ի Կարենիսն:

Ս. Նշան եկեղեցու հյուսիսային պատի վրա.

Ի ՈՄԳ (1204) Կամաւ բարերարին Այ ես Վարդըմբել որ նորոգեցի ի յերևան զՄեղիտոնոյ էգոյն չարեքն եւ ետու ի սբ Գրիգորս. սպասաւորք սորա աւանդեցին տարին Բ ժամ. Որ խափանէ իմ մեղացս տէր է առաջի Այ. ամէն:

Ս. Նշան եկեղեցու դռան վերև.

Ցիշեսջիք յաղաւթս զաստուածասէր Պարոն զՎաչէ որ նորոգեաց վերստին զեկեղեցիս. Թիւն ՈՀԲ էր (1223):

Նույն եկեղեցու հյուսիսային պատի վրա.

Կամաւն Այ ես Պատրոն Վարդ երևանոյ ետու զիմ հայրենի այգին որ Զմշկա կոչի ի հայր Պետրոս, և արարի ինձ որդի, եւ ես հայր Պետրոս ետու ի սուրբ Լուսաւորիչս, որ առնեն ի տարին Ը ժամ. Դ. Վարդին, Դ. Անիաբրին. Որ հակառ կայ կամ այգոյն կամ ժամին ՅԺԸ լցն և յայս սրբոց նզովեալ եղիցի:

Ս. Նշան եկեղեցու արևմտյան պատի վրա.

Կամաւն Այ ես Մխիթարիչ որդի Գրիգորի ետու զիմ Ախբին այգին յերանլի սբ ուխտս Կեչառուս. հրամանաւ Տն Գրիգորիսի եւ Գրիգոր վարդապետացն:

ԵՎ յառաջնորդութի Համազասպա գրեցաւ ժամ Ե. ինձ Մխիթարչիս, Գ. Տիկնաց Տիկնակոկորին մաւրն, Դ. Գրիգորոյ Մամկա: Հաստատ է գիրս կամաւն Այ. Ով խափանէ՝ մեր մեղացատէր առաջի Քի:

Ս. Հարություն եկեղեցու արևմտյան դռան վերև.

Թիւ ՈԿԹ (1120) Շինեցաւ Սբ Ցարուխիւնս առ ի յիշատակ համաւրէն ննջեցելոց ի Քս, եւ ծնողաց իւրոց Հասանայ և Րուզուքանայ եւ զաւակաց...Արձանս աւրհնութեան սիրոյն որ առ Ած և առ սբս նորա ամէն:

Տապանագրեր.

Ս. Գրիգոր եկեղեցու արևելյան կողմում մի բարձր պատվանդանի վրա բարձրանում է մի գեղեցիկ խաչքար, որի վրա կա հետևյալ տապանագիրը.

Ա երես. Զվեցիկ վարդապետ յաղաւթս յիշեսջիք ի Քս աղաչեմք:

Բ. երես. Ցիշեսջիք յաղաւթս զ ծառայն Այ զվեցիկ քարագործ, որ շինեաց զնոր եկեղեցիս եւ ի կատարման սորին փոխեցաւ առ Քս կիսաւէր ամաց: Ես Ցովհաննէս եւ եղբարքս իմ հարազատս սորին որ կանգնեցաք զսբ Նշանս ի վերայ հանգստարանիս սորին ի բարեխաւսութիւն ինձ և իմ զաւակացն եւ ամ հաւատացելոց եւ յիշողացն զսա:

Վեցիկ վարդապետի դամբարանի մոտի խաչքարի վրա.

Թվ. ՉԱ (1252) Քս Ած ողորմեա Ցաղագարա ի գալըստեն քում:

Ս. Գրիգոր եկեղեցու արևելահյուսիսային կողմում կանգնած խաչքարի հետևում. Ես Ցո...կանգնեցի զ խաչս ի բարեխաւսութի Աբրահամա Ցովասափին, ինձ եւ ծնողաց իմոց ի թողուբեն մեղաց յիշողք յիշեալ եղիցիք ի Քս. Թվ. Զ (1251):

Այս է հանգիստ շնորհաց Աբրեհամ քահանայի, որ կիսամեայ փոխեցաւ Թվ. ՉԻԲ (1273):

Այս է հանգիստ Վասակայ որդոյ առն Խաչենեցւոյ յիշեսջիք աղաչեմք:

Այս է հանգիստ էլբէքին, որդոյ Արտաւազայ յիշեսջիք յաղաւթս աղաչեմք.

Ս. Գրիգոր եկեղեցու առջև եղած մի տապանաքարի վրա.

Այսմ տապանակիս հանգչի Սարգիս, որ կիսամեայ վախճանեցաւ ի ձեռս այլազգի արեամբ...:

ՄԱՔՐԱՎԱՆՔ

Գտնվում է համանուն գյուղում (62°23'57"–40°31'35"), Դարաչիչակ ամառանոցից դեպի արևելահարավ, հաղիվ չորս կիլոմետր հեռու: Կառքի մի հասարակ ճանապարհ միացնում է այս գյուղը Դարաչիչակի հետ, որ ամառային ամիսներում փոստային հաղորդակցություն ունի Երևան և Նոր-Բայազետ քաղաքների հետ:

Պատմական տեսություն. Այս վանքի մասին պատմական ոչ մի տեղեկություն հայտնի չէ: Մի ավանդություն ասում է, թե մի շահ կամեցել է քանդել այս եկեղեցին և նրա քարերով կամուրջ կառուցել Հրազդանի վրա, սակայն վանքի գորությունից կատաղել է, այս պատճառով էլ այս տեղը

կոչվել է Շահ-ղուտուրան (շահի կատաղած տեղ), որ հետո պարսիկները փոխել են էչեկ ղուտուրանի (էշի կատաղած տեղ):

Վանքի նկարագիրը. Եկեղեցին տեղավորված է դյուղի մեջ, ձորակի լանջին: Շինված է սև, սրբատաշ քարից: Վանքը բաղկացած է մի եկեղեցուց, մի գավթից և մի փոքրիկ մատուռից:

Եկեղեցին անսյուն է, վեց որմնասյուների վրա բոլորում են պատաճև կամարներ, որոնցից չորսի վրա բարձրանում է կաթողիկեն: Որմնասյուները երեքական կիսաբոլոր և նույնչափ քառանկյունի կիսասյուներից են բաղկացած, կլոր և քառանկյունի խոյակով զարդարված:

Եկեղեցու արևելյան կողմը կա մի բոլորաճև, կամարակապ և թաղակապ կոզակ, կողքերին մի-մի երկհարկանի ավանդատուն: Սեղանի ճակատը զարդարված է մանր, կարմիր քարերով կերտված խաչերով: Երկու սանդուխտ բարձրանում են սեղանի կողքերից:

Արևմտյան կողմում, նախնական ավանդատների փոխարեն խորշեր են բացվում որմնասյուների միջև:

Արտաքուստ՝ արևելյան պատն ունի երկու ներսանկված, ճաճանչներով պսակված: Պատի մեջ տեղում բացվում է մի նեղ և երկար պատուհան, որի շուրջը բոլորում է մի շրջանակ, անցնելով ներսանկվածների և երկրորդ հարկի ավանդատների փոքրիկ պատուհանների վրայով: Ներքին հարկի ավանդատների պատուհաններն էլ զարդարված են մի-մի կամարով:

Հարավային և հյուսիսային պատերը միմյանց նման են, պարզ և շրջանակով պատած մի-մի պատուհանով:

Արևմտյան պատի մեջ բացվում է միակ դուռը, շրջանակով պատած: Սրանից բարձր կա մի պատուհան, պարզ շրջանակով և նրանից վերև մի գեղեցիկ խաչ:

Գմբեթը գլանաձև է, հիմքում երկու կիսաբոլոր շրջանակներով պատած: Գմբեթի կաթողիկեն այժմ քանդված է և տախտակով ծածկված:

Գավիթը, որ շինված է եղել եկեղեցու արևմտյան կողմը՝ այժմ բոլորովին քանդված է:

Փոքրիկ մատուռը բարձրանում է եկեղեցու հարավային կողմում, պատին կից, սագաչեն է և անսյուն: Միակ, արևմտյան դռան երկու կողքին կանգնած են մի-մի գեղեցիկ խաչքար:

ԱՐՏԱՎԱԶԴԱ ՎԱՆՔ

Թաքալու կամ Մոլլա Ալի քենտ (61°12'11"–40°37'49") գյուղից մոտ մեկ կիլոմետր դեպի արևմուտք, Միսխանա գետի ափին, բարձրանում է այժմ ավեր Արտավազդա վանքը, որ սրբատաշ քարից է շինված եղել, և որի միայն կիսավեր պատերն են մնացել:

Այս վանքի մասին պատմական տեղեկություններ պակասում են, հայտնի է միայն, որ Մաշտոցը Մաքենոցաց վանքում հոգևոր կոչում ստանալուց հետո եկել է այս վանքը և ապա այստեղից անցել Սևան կղզին, ուր և չինել է Սևանա վանքը,[344] ուրեմն այս վանքը գոյություն է ունեցել Թ դարում: Պատերի վրա դեռևս մնում են մի քանի արձանագրություններ ԺԳ դարից: Սրանք են.

Եկեղեցու դռան կամարակալ քարի վրա.

Կամաւն Աստուծոյ մեք ծառայք Աստուծոյ Թամամս և Պանտունտս եկաք ի վանքս Արտավազա և զմեր հայրենի այգին որ ի յԱւան է, տուաք ի սուրբ Աստուածածինս վասն փրկութեան հոգւոյ մերոյ. հայր Սարգիս և այլ միաբանք ետուն մեզ Ե. պատարագ ի տաւնի սուրբ Առաքելոցն Յովհաննու և Յակոբա...:

Արևելյան պատի վրա.

Ի ՈԾ թ. (1201) կամաւ Ամենակալին Աստուծոյ ես Մխիթարս տվի զիմ հալալ արդիւնս ի սուրբ Աստուածածինս. միաբանքս ետուն զՋրաւհնեայք աւուրն պատարագել զամէն եկեղեցիքս կէս ինձ և կէս ամուսին իմոյ Անայտին: Որ խափանէ ՅԺԼ հայրապետացն նզովս առցէ...

Եւ զիս զմեղապարտ գրիչս զՍարգիս յաղաւթս յիշեցէք:

Հարավային պատի վրա.

Ի թ. ՈԾ (1201) ես Վահրամ միաբանեցայ սուրբ ուխտիս և զիմ հոգս արդիւնս ի սուրբ Աստուածածինս տվի. եղբարքս տվին և առաջնորդք սուրբ ուխտիս տարին Ա. պատարագ ի Համբարձման: Ով խափանէ իմ մեղացս տէր է:

Հյուսիսային դռան կամարակալ քարի վրա.

Ի հրամանէ հզաւրին Աստուծոյ ես Զնդանչահ և ամուսին իմ Մարթա եկաք ի վանքս ի յԱրտավազա և եղաք զմեր հոգւոյ արդիւնս առաստս սուրբ Աստուածածինս յաջորդութեան հաւր Սարգսի քեռո իմո և սպասաւորք սորա ետուն ի տարին Բ. աւր ժամ, ի տաւնի սուրբ Աստուածածնին, մին ինձ և մին ամուսնո իմո. որ խափանէ բարձցէ առաջի Աստուծոյ զմեղս մեր. ի թ. ՈՀԳ (1224):

ԿԱՐԵՆԱՎԱՆՔ

Գյումուշ, հնում Կարենիս. Գյուղի ձորակի մեջ բարձրանում է Կարենավանքը, որ այժմ բոլորովին անխնամ է թողնված: Վանքի տաճարը չինված է սրբատաշ, իսկ գավիթը՝ հասարակ քարից: Գավթի պատի վրա կա միայն հետևյալ արձանագրությունը.

---

[344] *Ստ. Օրբելեան, էջ. ԼԷ:*

Սուրբ Նշանս տէրունական, Տէր եպիսկոպոսին մեղացն քաւիչ. Թվ. ՌԺԶ (1567):

Այստեղ եղիլ է նաև մի ուրիշ խաչքար հետևյալ արձանագրությամբ, որ Սմբատյան եպիսկոպոսի ասելով տարվել է Ալափարս գյուղը և հին մատուռի մեջ հարմարացվել.[345]

Կամաւն Աստուծոյ մեք Աւաքս, Յովհաննէս և Շահերս չինեցաք զնավ ջրիս և կանգնեցաք զխաչս բարեխաւսութեան հոգոց մերոց:

Տաճարի մեջ կա մի գերեզմանաքար, որի վրա նկարված է մի մերկ մարդ, երևի ճգնավոր, չուրջը գրված.

Այս է տապան Մելքոնին Թվին ՌՃԻԶ (1677):

Առաքել Դավրիժեցու ասելով՝ Շահաբաս մեծի արշավանքներից և ավերածություններից հետո ֆրանկ մի քանի պատրիկներ եկել են այս վանքը, ուր ավանդության ասելով, պիտի գտնվեին Մատթեոս ավետարանչի և Անդրե առաքյալի գերեզմանները և, պեղելով սեղանի տակ, գտել են Անդրե առաքյալի գլուխը և կամեցել են իրենց հետ տանել, սակայն տեղի եպիսկոպոսը թույլ չի տվել:[346]

Այժմ ս. Անդրե առաքյալի գլուխը և Մատթեոս ավետարանչի աջը մի արծաթապատ պահարանի մեջ ամփոփված գտնվում է ս. Էջմիածնի Մատանց թանգարանում:

ՆԵՂՈՒՑԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ

Արզաքենտ, հնում Արտազական գյուղից 1,5 կիլոմետր հեռու, արևմտյան կողմը, երկու ձորակներով մեկուսացած, անտառապատ բլրի վրա գտնվում է Նեղուցի ս. Աստվածածին վանքը, չրջապատված տների հիմնապատերով և խաչքարերով: Վանքը, որ բաղկացած է մի անույշն, գմբեթազարդ տաճարից և մի այնուազարդ գավթից, այժմ կիսավեր է և անխնամ թողնված: Բազմաթիվ արձանագրություններից ընթեռնելի են հետևյալները.

Տաճարի դռան վրա.

Ծուսովն Աստուծոյ ես Հայրապետ միաբանեցայ սուրբ ուխտիս և եռու ճ. կարմիր...գինն, սոքա չնորհեցին ի. աւր ժամ, Ա. ինճ...Թվ. ՉԻ (1271):

Տաճարի պատի վրա, ներքուստ.

Կամաւն անմահին Աստուծոյ ես Ծոհնիկ որդի Մեթորին և ամուսին իմ Նուրսաթ. և որդիք իմ Միր և Հնդու, միաբանեցաք սուրբ Աստուածածնիս, և տուաք ՃԻ. դեկան սուրբ ուխտիս, և սպասաւորք խոստացան ի տարին Դ. պատարագ Ծոհկանն:

Գավթի պատի վրա, արտաքուստ.

---

[345] Սմբատեան, Գեղարքունի, եր. 307:
[346] Առաքել Դավրիժեցի, ԺԶ:

Ցուսովն Աստուծոյ ես Տիրատուրս, Գրիգորս և Աստուածատուրս միաբանեցաք սուրբ Աստուածածնիս. և սպասաւորքն չնորհեցին մեզ Ջ. աւր պատարագ. Բ. Տիրատրոյ, Բ. Աստուածատրոյ, և Բ. Գրիգորոյ:

Մի քիչ հեռու, դռան աջակողմյան քարի վրա. թվ. ՌՃ (1451):

Վանքի արևմտյան կողմը կա մի կիսավեր մատուռ, որի շուրջը գտնվող խաչքարերից մեկի վրա կարդացվում է.

Կամակցութեամբ սուրբ և արժանաւոր վարդապետին Մարգարէի կանգնեցի զխաչս...:

ՀԱՑՐ ՀՈՎՀԱՆՆԱՎԱՆՔ ԿԱՄ ԱՑՐԻ ՎԱՆՔ

Այրի-վանք գյուղի (62°45'55"–40°26'20") հարավային կողմում ձգվող մի փոքրիկ հրվանդանի վրա կիսավեր դրությամբ բարձրանում է ***Հայր Հովհաննու վանքը*** *կամ* ***Հայրավանքը*** *կամ* ***Այրի վանքը:***

Վանքի հիմնարկության մասին պատմական տեղեկություններ պակասում են, միայն տաճարի վրայի արձանագրությունը ցույց է տալիս, որ վերանորոգված է 1211 թվին, Հովասափի առաջնորդության ժամանակ: Ղազար Ջահկեցին էլ պատմում է, թե 1381 թվին, Լանկթամուրի արշավանքի ժամանակ, այս վանքի վանահայր Տեր Հովհանը կապում է իր մեջքին այս վանքում պահվող խաչը, այն, որ Կոթա և կամ Սևանա Ս. Նշան է կոչվում և այժմ գտնվում է Սևանի վանքում, և ոտքով վազում Սևանա ծովի երեսով: Լանկթամուրը զարմանալով այս հրաշքի վրա՝ խնդրում է վանահորը ետ դառնալ՝ խոստանալով կատարել նրա ամեն մի խնդիր և երբեք չվնասել նրան ու նրա վանքին: Հայր Հովհանը ետ է դառնում և ցույց տալով իր մեջքին կապած խաչը՝ խնդրում է ազատել քրիստոնյա գերիներից այնքան, որքան կտեղավորվեն իր փոքրիկ վանքում: Լանկթամուրը համաձայնում է, սակայն նրա զարմանքը ավելի ևս սաստկանում է, երբ նկատում է, որ բյուրավոր գերիներ կարողանում են տեղավորվել այս վանքում: Կամենալով բացատրել այս հրաշքի պատճառը՝ ինքը մտնում է եկեղեցին, և տեսնում, որ ներս մտած գերիներն աղավնի են դառնում և թռչում դեպի Սևան:

Այս ավանդությունը հիմա էլ պատմվում է տեղական հայ ժողովրդի մեջ, և վանքն էլ այս հրաշքի պատճառով ***Մարդաղավնյաց*** *կոչվում:*

Մինչև ԺԸ դարի կեսը այս վանքը չեն է եղել, ինչպես երևում է Սևանա վանքում պահվող կոնդակներից. սրանց մեջ ասված է, որ Աբրահամ Գ կաթողիկոսը 1834 թվին և Մինաս կաթողիկոսը 1752 թվին Հովհաննու վանքի առաջնորդ են կարգել Հովհաննես և Աբրահամ վարդապետներին:[347]

---

[347] *Ամրատեան, Գեղարքունի, եր. 439:*

Վանքը բաղկացած է մի տաճարից և մի գավթից, երկուսն էլ շինված տաշած քարից: Տաճարը խաչաձև է, անսյուն և պսակված կաթուղիկեով: Ունի երկու դուռ, մեկը հարավային կողմը, իսկ մյուսը՝ արևմտյան:

Գավիթը կառուցված է երկու ամբողջական և վեց կիսասյուների վրա, ըստ երևույթին գավիթը տաճարի հետ միաժամանակ չէ շինված: Գավթի ճեղունը թափված է և քարակույտերի մեջ նկատելի են տապանաքարեր, որոնցից մեկի վրա կարդացվում է.

Թվ. ՉԳ (1254) Աստված ողորմեա Աւագին:

Գավթի միջից մի ստորերկրյա անցք լինում է մինչև լիճը: Հավանական է, որ այս անցքը շինված լինի այն նպատակով, որ հարձակումների ժամանակ, երբ ժողովուրդը կապաստաններ եկեղեցում, կարելի լիներ այդ անցքով իջնել և ջուր վերցնել:

Տաճարի և գավթի վրա կան բազմաթիվ արձանագրություններ, սակայն մեծ մասը եղծված է, կարդացվում են միայն հետևյալները.

Տաճարի հարավային պատի վրա.

Թվին ՈԿ (1211) նորոգեցաւ եկեղեցիս յառաջնորդութեան Յովասափին և մեծ սպարապետ Բուբայն տէր երկրիս ետ յԱռ ինչք զայգին Ոսկեբակա եւ Քանաքեռու Բ. ակն ջրաղացին. Տէր Վանական ետ զխաժլի ձագն բերդաժողովուրդն վանիցս կարգեցաք զյայտնութեան ճրագալոյցն տարի Խ. աւր ժամ: Զատկի ժամին կամ տաւնին տան. ով խափանէ կամ յեկեղեցոյս հանէ դատի ի Տեառնէ և մասնակից Յուդայի և սատանայի լիցի. ամէն:[348]

Տաճարի հյուսիսային պատի վրա.

Ես Աջահարս եւ Մուժկանց Գրիգորս, Աբէլս եւ Առաքելս միաբանեցաք եւ տվաք զՍապռանց այգին երեւան մօտ ի Պապան, եկեղեցւոյս, Հայր Ոհան, եւ առաջնորդք սորա արասցեն Ժ. ժամ, ով խափանէ դատի ի Տեառնէ:

Տաճարի հարավային դռան կամարակալ քարի վրա.

Ես Սարդուք եւ Բահր չինեցաք երկու խորանս:

Ես Վահրամ, Ստեփաննոս, Խաչատուր, Մխիթար տուաք այգին ի ժամանակս Յովասափ առաջնորդի:

ԲՋՆԻԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ

Տեղադրություն. *Բջնիի ս. Աստվածածնի վանքը գտնվում է Բջնի գյուղում (62°18'50"–40°27'45"): Բարձրանում է Հրազդան գետի աջ ափին, լեռան լանջին, իր արևելահարավային կողմում ունենալով Բջնիի հին ամրոցը: Արևմտահյուսիսային կողմում բացվում է Հրազդանի սքանչելի հովիտ-*

---

[348] *Տե՛ս ԴՀՎ IV. էջ 69:*

տը: Վանքը պարսպապատ է և չորս աշտարակներով ամրապնդված: Կառքի մի չատ վատ ճանապարհ վանքը միացնում է Երևանից Նոր-Բայազետ տանող ճանապարհի Սուխոյ-Ջանտան փոստային կայարանին, ձգվելով մոտ 12 վերստ:

Պատմական տեղեկություն. *Բջնիի ս. Աստվածածնի եկեղեցին կառուցել է Գրիգոր Մագիստրոսը 1031 թ.: Պետրոս Գետադարձ կաթողիկոսը Սմբատ Շահնշահի հրամանով դարձրել է այս վանքը եպիսկոպոսարան, որի թեմը սկզբում տարածվել է արևելքից Գեղամա ծովից մինչև Ախուրյան գետը, և հյուսիսից Գուգարքի սահմաններից մինչև բնիկ Բջնիի վիճակի հարավային ծայրը, բայց հետո այս կողմից ավելի է տարածվել դեպի Այրարատյան նահանգը:*

1114 թվին Պահլավունի Գրիգոր Գ կաթողիկոսի ժամանակ Սև լեռան Բ ժողովը որոշել է, որ Բջնիի վանքի արքեպիսկոպոսը մասնակցի կաթողիկոսական ընտրությանը Թադեոս առաքյալի, Տաթևի և Հաղպատի արքեպիսկոպոսների հետ:

Երբ 1631 թվին, Փիլիպպոս եպիսկոպոսը Մովսես կաթուղիկոսից առաջնորդ է կարգվել այս վիճակին, վանքը սկսել է նորից բարգավաճել, երեսունի չափ միաբաններ են հավաքվել, եկեղեցու տանիքը նորոգել են ղուղայեցի Խոջա Պետրոսի ծախքով, չինել մի ձիթահանք և մի ջրաղաց, իսկ սրա՝ Փիլիպպոսի հաջորդ Մովսես վարդապետի ժամանակ վանքը շրջապատվել է պարսպով և ամրացել բուրգերով (1666 թ.):

Այս ժամանակներում, այն է 1673 թվին ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենն այցելել է այս վանքը և նկարագրել իր ճանապարհորդության մեջ:

Այս վանքին այցելության է եկել նաև Տուրնըֆորը 1700 թվին, որ ի նկատի առնելով տեղի բազմաթիվ ավերակները, ենթադրել է, որ հնում մի մեծ քաղաք է եղել:

Մինչև ԺԸ դարի կեսը հիշվում են վանքի առաջնորդներ, որովհետև հին եպիսկոպոսարանը վանքի էին փոխել: Սիմեոն կաթողիկոսը իր «Ջամբռ» աշխատությեան մեջ հիշում է մոտ հիսուն գյուղ Կոտայք և Վարաժնունիք գավառների մեջ, որոնք ենթարկվել են այս վանքին: Նաև հիշում է քսանից ավելի նվիրատուներ՝ որոնք 1688 թ. մինչև 1744 թիվը զանազան կայքեր են նվիրել այս վանքին: Այս ժամանակից հետո վանքը հետզհետե անշքացել է, և կառավարվել մի-մի վանահայրով:

Բջնու Ս. Աստվածածին վանքի եպիսկոպոսներն ու առաջնորդները, որոնք հիշված են գրքերի կամ արձանագրությունների մեջ հետևյալներն են.

*1030-50 - **Եփրեմ** եպիսկոպոս, որին Գրիգոր Մագիստրոսը գրեց մի գեղեցիկ թուղթ, բանասիրելով նռան մասին:*

*1051. **Հովհաննես**, հիշատակված Կեչառիսի արձանագրության մեջ:*

*1205-9. **Վրթանես**, որ գտնվել է Լոռվա և Անիի ժողովներում:*

1246. Գրիգոր եպիսկոպոս:

1246-67. Վանական:

1299. Հովհաննես:

1306. Սարգիս:

1358. Վանական, որի մասին Թևրևս ասում է Թովմա Մեծոփեցին, Թե սպանվեց «յառնուլ Բըջնոյ ի թագաւորէն Ազախու Թաթարաց»:

1387. Վանակ կամ Վանական, որ սպանվել է Լանկթեմուրի արշավանքի ժամանակ Բջնին առնվելիս:

1441. Հովհաննես եպիսկոպոս, որ գտնվել է Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսի ընտրության ժամանակ Էջմիածնում:

1610-24. Մանուել արքեպիսկոպոս, երաժիշտ:[349]

1631. Փիլիպպոս (հետո կաթուղիկոս):

1643. Փիլիպպոս մյուս:

1646-77. Մովսես րաբունապետ, և արհի եպիսկոպոս, «որ փայլէ իբրև զարեգակն ի միջի տանս Աբրահամեան նահանգի» որին Նահապետ կաթողիկոսը առաջնորդ կարգելով, նվիրել է յուր հրամանով 1645 թվին արտագրված մի ձեռագիր Հայսմավուրք, որ այժմ պահվում է Էջմիածնի մատենադարանում (№ 1493/17):

1688. Սիմոն:

1690-1701 Մեսրոպ:

1702-1716. Հովհաննես, Ռնդամալցի:

1716-1733. Դավիթ, Աղեքսանդր Ա կաթողիկոսից ձեռնադրված:

1741. Կարապետ:

Վանքի նկարագիրը. *ս. Աստվածածնի վանքը բաղկացած է միայն մի եկեղեցուց և մի փոքրիկ մատուռից: Թե եկեղեցին և թե մատուռը չինված են սև, սրբատաշ քարով: Եկեղեցու երկարությունն է 22 մ, լայնությունը 14 մ և բարձրությունը մոտ 15 մ:*

Եկեղեցին ներքուստ անույշն է. չորս ահագին և չատ դեղեցիկ որմնասյուների վրա բոլորում են բարձր, պայտաձև կամարներ, կրելով իրենց վրա մի գմբեթ: Արևմտյան պատին կից ևս բարձրանում են երկու փոքր որմնասյուներ՝ որոնք կամարներ տալով դեպի մեջտեղի որմնասյուները կազմում են կամարակապ խորշեր, և սրանք փոխարինում են նախնական ավանդատներին: Չորս գլխավոր որմնասյուները բաղկացած են երեքական կիսաբոլոր և նույնչափ քառանկյունի կիսասյուների միացումից, նախ քառանկյունի և ապա կիսաբոլոր խարսխի վրա և պսակված նախ կիսաբոլոր և ապա քառանկյունի խոյակով: Սրանցից երկու, միջին սյուների խոյակները զարդարված են դեղեցիկ վարդազարդերով:

---

[349] *Էջմիածնի № 238 ձեռագիր ավետարանից:*

Ուշագրավ է, որ որմնասյուների քարերն երկուական մետր բարձրության են, և ամենամեծ կլիսաբոլոր որմնասյան կլիսաշրջանը 1,5 մ է: Արևելյան կողմում բացվում է բոլորաձև, կամարակապ և թաղակապ կողակը մի պատուհանով: Կողակի երկու կողմից բարձրանում են մի-մի որմնասյուն, որի կողքին բացվում է ավանդատան դուռը: Սեղանը լայն է, բոլորաձև և բարձր՝ ունենալով երկու կողքից սանդուխտներ: Սեղանի ճակատը չղթայաձև օրնամենտներով եզրափակված է, և կարմիր ու սև քարերով խաչեր ձևակերպած: Ավանդատները թաղակապ են, մի-մի փոքրիկ սեղանով և մի-մի փոքրիկ պատուհանով: Ըստ երևույթին այս ավանդատների վերև լինելու են ուրիշ ավանդատներ կամ ավելի ճիշտ՝ գաղտնի պահարաններ, մանավանդ որ դրսից յուրաքանչյուր ավանդատան վերև բացվում է մի փոքրիկ և նեղ պատուհան, որ եկեղեցու միջից նկատելի չէ:

Եկեղեցին արտաքուստ չատ պարզ է. արևելյան պատի մեջ կան երկու ներսընկվածներ, ճաճանչով և կամարով պսակված: Սրանց միջև բացվում է մի պատուհան, երկուական կիսասյուներով և գեղեցիկ կամարով եզրափակված: Հարավային պատի մեջ կա մի դուռ մի պարզ չրջանակով, սրա վերև՝ մի պատուհան, նույնպես պարզ չրջանակով և փոքր-ինչ բարձր մի ռոզաս: Արևմտյան միապաղաղ պատի մեջ բացվում է մի հասարակ դուռ և պատուհան, իսկ հյուսիսայինի մեջ՝ միայն մի պատուհան: Եկեղեցու գմբեթը գլանաձև է, չորս փոքրիկ պատուհաններով և կոնաձև կաթուղիկեով: Խաչը այժմ վայր է ընկած:

Մատուռը դանվում է եկեղեցու հարավային պատին կից և սագաչեն է: Սրա վրա վերջին ժամանակներս մի փոքրիկ գմբեթ բարձրացնելով՝ քաշ են արել եկեղեցու դանգակները: Մատուռի արևմտյան ճակատին կանգնեցրած է մի նրբաքանդակ խաչքար:

Մատուռն ունի մի դուռ, մի ռոզաս և մի փոքրիկ պատուհան:

Եկեղեցու արևելյան կողմը կան մի չարք գերեզմաններ գեղեցիկ խաչքարերով:

Ս. Սարգսի մատուռ. Բլնի բերդի արևելյան կողմը, մի առանձին քարաժայռի գագաթին բարձրանում է մի փոքրիկ մատուռ՝ ս. Սարգսի անունով: Ժայռի ստորոտով հոսում է Հրազդան գետը՝ ոլորապտույտ, մի սքանչելի տեսարան ընծայելով մատուռից դիտողին: Մատուռը շինված է սև, տաշած քարից և արտաքուստ խաչաձև է, 6,5 մ երկարութեան, 6 մ լայնութեան և մոտ 5 մ բարձրութեան: Մատուռը ներքուստ անույն է, ռոմանական չորս կամարներով և մի ութանկյունի գմբեթով, որ վերջանում է կոնաձև կաթողիկեով: Կողակը բոլորակաձև է և թաղակապ, մի սեղանով և առանց խորանների:

Մատուռն ունի միայն մի դուռ և երեք փոքրիկ պատուհան, մեկն էլ գմբեթի վրա:

Մատուռի շուրջը կա մի քանի հին խաչքար:

Բացի այս մատուռից՝ գյուղում կան նաև ուրիշ չատ մատուռներ՝ արդեն ավեր կամ կիսավեր, որոնցից հիշատակության արժանի են ս. Գևորգ և ս. Հովհաննես մատուռները: Վերջինիս մոտ կա մի «կաթնաղբյուր», որի առաջ սակավակաթ կանայք մատաղ են անում և ջրից քսում իրենց ծծերին, որ կաթն ավելանա: Տավարի ցավ տարածված ժամանակ տավարը բերում շրջեցնում են այս աղբյուրի և մատուռի շուրջը և այս ջրից սրսկում վրան:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եկեղեցու դռան աջ կողմի վրա:[350]

Թ. ՆՉ (1031) Շնորհիւն Աստուծոյ այս հրամանք է իմ տեառն Պետրոսի Հայոց կաթուղիկոսի և Սմբատա Շահանշահի որ հաստատեաց եպիսկոպոսարան ի Բջնի քաղաքս զսուրբ Աստուածածինս. հիմնարկեալ կատարեաց Գրիգոր իշխանաց իշխան որդի Վասակայ և տուաւ վիճակ ի սուրբ Աստուածածինս ի Փոչէհանից մինչև ի Նիգ և Դիւա(տ)ուն...և յԱղստև. տվաք գաւազան և սուրբ նշան և աթոռ: Արդ՝ եթէ ոք խափանել չանա զաթոռս կամ յայլ տեղիս փոխել կամ զհողն յապշտակել, կամ զաւանդ եկեղեցոյս գողանալ, թէ յեպիսկոպոսաց կամ յիշխանաց կամ ով որ հակառակի նզովեսցի յԱստուծոյ և ի մէնջ և ի ԹԺԸ հայրապետաց. արմատաքի չննջեսցի յիշատակ նորա յերկրէ և անլոյծ կապեսցի: Եւ արդ այս է բնական և առաջին սահմանահատ վիճակ և աթ (ոռ զոր) հաստատեցաք արձանագրով և շրջաբերականով զսահմանահատ վիճակի սորա. որ է. յարևելից ի Ծար գետոյ մինչև ի գետն Ախուրեան, յԱնւոյ և ի հիւսիսայինս յԱղստև...և որ հատանել չանա յայսմանէ ի միջոյ կամ յեզերաց աւելի կամ մասն ինչ, զվերասացեալ զանէծս և զպատիժս կրեսցէ և ի հանդերձելումն. ամէն:

Հարավային դռան կամարակալ քարի վրա.

Թվ. ՈՄԸ (1209) Ցաչխարհակալութեան քաջաց և յաղթողաց մեծ չահնշահաց Զաքարէի և Իւանէի որդւոց Սարգսի, յեպիսկոպոսութեան Վրթանիսի, ես մեղուցեալ ծառայ Աստուծոյ Վահանս...չինեցի զիշխանավանից մեծ եկեղեցին յանուն սուրբ Աստուածածնին. և զայս Աստուածածինս նորոգեցի սալով, որ ի բնէ չէր սալած. և հաստատեցին ի տարին Ե աւր ժամ ի տաւնի սուրբ Ծննդեանն վասն փրկութեան հոգւոյ իմոյ, ով խափանէ զպատարագն՝ իմ մեղաց պարտական է առաջի Քրիստոսի:

Նույն դռան վերև.

Թվիս Հայոց Զ (1251) ազդմամբ և հրամանաւ Հոգւոյն սրբոյ և կամաւ Կոստանդեայ կաթուղիկոսի հաստատեցաք զխախտեալ կանոնքս և եղաք

---

[350] *Այս արձանագրության մի մասը, որ մնացել է եկեղեցուն կից չինած մատուռի պատի վրա, վերատին փորագրված է մատուռի արևմտյան պատի վրա:*

աստ ծառայքս Քրիստոսի Տէր Վանական եւ Տէր Գրիգոր ողորմութեամբ նորա եպիսկոպոսք Բջնոյ...յիշխանութիւն մեծին Շահնշահի. զի յայսմ հետէ մինչև ի կատարած չունի ոք առնել կաշառաւք ձեռնադրութիւն...ու երէց, կատարիչք հրամանացս աւրհնին յԱյ:

Նուէն հարաւային պատի վրա, ներքուստ.

ՋԾԲ (1303) Կամաւն ամենակալին Այ ես Գրիգոր իշխան որդի...թոռն Դուփին...:

Եկեղեցու հարաւային պատի վրա, ներքուստ.

Շնորհաւք նախախնամող սուրբ Հոգւոյն ես Քոչաքչեր եւ ամուսին իմ Խորիշահ միաբանեցաք սբ Աստուածածնիս եւ տուաք արդիւնք հալալ յընչից մերոց եւ սպասաւորք սորա տէր Յովհաննէս տէր Սարգիս կարգեցին ի տարին Դ. աւր պատարագել զՔրիստոս ի տաւնի ծննդեան Բ. Քոչաքչերիս առնեն եւ Բ. Խորիշահին. ամէն. ՋԾե (1306):

Հարաւային պատի վրա, պատուհանի տակ.

Թվ. ՊԷ (1358) ի գարմէ երկուց հայրապատաց քաջաց և յաղթողաց Ամիր սպասալար Զաքարիայի և Աթապակ Իվանէի, ես Աթապակ Շահնշահ որդի Աթապակ Զազայի ի ժամանակս բռնակալութե Մէլիք Աշրափին, զմեր հայրենիքս զԲջնի քաղաք յիսնէ հուքմով խլել էր, զիր ճորտերին եսիր կացուցեր. Հաճի բէկ նեղեցաւ ու զքաղաքս ի հիմանց քակեց ու շատ յանուանի մարդ ի սուր քաշեց ու զեկեղեցիքս տապալեց ու զերկիրս ի չորս դիաց անբնակ արար ու զ քրիստոնէք անխնայ կոտորեաց. Մեք յԱծ ապաւինելով զմեր Սալահրի...հեծելին գլուխ կացուցաք որ ի վերանստաւ բազում աշխատութե. զիր ապրանքն նախ նայ բաշխէր. որ Ած խղճաց մեզ ու մեր հայրենիքս զԲջնու բերդս ի մեր ձեռս բերեաց. վասն փրկութե հոգւոյ և յերկար կենդանութե մերոյ կրկին նորոգեցաք զեկեղեցիս եւ զԲունիաթ արճանս վերստին հաստատեցաք, զվիճակ, զվանք, զգեօղ, զսաբրի, զդաշտի հայրենիք...ու չինական ու գործաւոր զինչ են... Ածածնա ծառաութե ազատ և Թարխան արարին ի հարկէ և ի ծառայութենէ. Տէր Վանական և սպասաւորքս խոստացան մեզ Յակոբայ տաւնին գիշերապաշտաւն առնեն. Ով ոք զմեր հաստատած արճանս խափանել ջանա դատի յԱյ եւ մեր մեղացն պարտական եղիցի:

Եկեղեցու հարաւային պատի բարձրում.

Յուսովն անմահին Այ ես Զաքարէ որդի Սահիպ-դիվանին եւ պարոն Խոշաքին, թոռն Աթաբակ Ավագին որդոյ Աթաբակ Իվանէի վասն մեր յերկար կենդանութեան եւ փրկութեան հոգւոյ իմոյ ի վեր կալայ որ ի Բջնի այլ մարդոյ տէրութիւն չէլնի, եւ թողի զամէն հարկ զամիրայհարկն, զհարսանէհարկն զկովայ համարն, զկալաթաղարն, զսայլահարկն, զմահկանէն, աւտարականն քան զդաղմէն այլ իրք չտա. յաղման չառնեն որ յայսմ հետև մինչև յաւիտեան հաստատուն կայցէ արճանս իմ. եթէ ոք խափանել

Ջանայ յիմոց կամ յիմ զաւակաց կամ յաւտարաց իմ մեղացն պարտական է առաջի Այ:

Մի մեծ խաչքարի պատվանդանի վրա.

Ի թուիս ՈԿԸ (1219) մեք Աւշիրա...յիշեսջիք ի Քրիստոս:

ՎԱՆԵՎԱՆՈՒ ՎԱՆՔ

Տեղագրություն. Վանեվանու վանքը տեղավորված է Ներքին Ալուչալու գյուղի (63°10'20''-40°9') արևելահյուսիսային կողմը, մի գեղեցիկ հովտում, որի միջով հոսում է մի առվակ, որտեղով բազմաթիվ ուռենիներ: Ձորի արևելյան լանջը պատած է ժայռերով, որոնց մեջ կան արհեստական քարայրեր: Սրանցից մեկը շատ ընդարձակ է, և մի բացվածք ունի դեպի վեր. նկատելի է, որ սա հարդանոց է եղել և սրա վերևում կալ են կալսել ու հարդը բացվածքից լցրել սրա մեջ: Մի քարայրի դռան մոտ մի խաչ է քանդակված և կողքին փորագրված.

Ած ողոր Ածատուրոյ, որ Այ ողորմութեամբ այս խաչս գործեալ է:

Այս փոքրիկ ձորակը պատկանում է վանքին, որի արդյունքով ապրում է մի ծերունի վանահայր: Համբարձման տոնին շրջակա գյուղերից ուխտ են գալիս այստեղ:

Նոր-Բայազետից դեպի Վայոց ձոր ձգվող վոստային ճանապարհից մի ուղի Ալուչալու գյուղի միջով ուխտավորին բերում է այս վանքը, ուր ապաստանելու համար կան երկու հասարակ սենյակ:

Վանքի նկարագրությունը. Վանեվանու վանքը բաղկացած է մի եկեղեցուց՝ ս. Գրիգոր Լուսավորչի անունով, մի գավթից և չորս փոքրիկ մատուռներից: Շինված է սրբատաշ քարերից: Եկեղեցին խաչաձև է, անսյուն և ունի միայն երկու ավանդատուն. երկարությունն է 58,5, լայնությունը 7 և բարձրությունը 15 մ, պայտաձև կամարների վրա բոլորում է գլանաձև դմբեթը՝ կոնաձև կաթուղիկեով: Փոքրիկ, նեղ պատուհաններից չորսը բացվում են դմբեթի վրա, և երեքը՝ եկեղեցու պատերի մեջ, աղոտ լույս սփռելով:

Գավիթը գտնվում է եկեղեցու հարավային կողմը, թաղակապ է և կիսավեր. սրա արևելյան պատին կից կա մի մեծ խաչքար, որի վրա արձանագրված է.

Թվ. ՉՇԱ (1502) Կանգնեցաւ սբ խաչս յիշատակ Մելիքսէթէք եպիսկոպոսին, որդի Միրզին Գեղարքունեաց իշխանին:

Գավթի հատակում կան բավականաչափ դերեզմաններ առանց տապանագրի:

Գավթի հարավային կողմում մի դուռ բացվում է փոքրիկ մատուռի մեջ, որ 5 մ երկարություն և 2,5 մ լայնություն ունի, չորս որմնասյուներով ու

ռոմանական կամարներով: Ջեղունը ամբողջովին խոնարհված է: Խորաններ չկան, միայն հարավային կողմում մի ներսանկված կա, որ հավանորեն իբր խորան է ծառայել: Գավթի արևելյան կողմում բացվում է մի դուռ երեք միմյանց կից մատուռների մեջ:

Պատմական տեսություն. Վանեվանու ս. Գրիգոր Լուսավորչի վանքը, ինչպես երևում է կաթուղիկեի վրա եղած արձանագրությունից, չինել է Շապուհ Բագրատունի Հայոց սպարապետը, Աշոտ Թագավորի որդին, Քս-ի 903 թվին, իր եղբայրը Սմբատի թագավորության միջոցին և ապահովելով չորս պյուղի տուրքերով, վանահայր է կարգել հայր Աբրահամին: Տեր Սողոմոնը, Տեր Աթանասը և Սմբատ թագավորը ջուր են բերել այստեղ Ոնճոռից մի ոմն Դավթի ձեռքով:

Մյուս սակավաթիվ արձանագրություններից էլ երևում է, որ 1320 թվին մի ոմն Հեճուպ, իսկ 1329 թ. Սարգիս, իրենց ամուսիններով հետ միաբանել են այս վանքին, արդյունք տալով, ուստի և միաբանությունը սահմանել է նրանց համար պատարագ մատուցանել:

Այս հազարամյա վանքի մասին ուրիշ ոչ մի տեղեկություն հայտնի չէ:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՑՈՒՆՆԵՐ

Վանեվանի ս. Լուսավորիչ եկեղեցու դմբեթի վրա.

Ցանուն Այ ես Շապուհ Բագրատունի Հայոց սպարապետ տէրանց տէր, որդի Աշոտոյ Հայոց թագաւորի ի ժամանակաս Հայոց թագաւորի մեծին Սմբատայ հարազատ եղբաւր իմոյ վերադիտողի Հայոց հայրապետի Տն Յոհաննիսի իմացայ և ծանեայ թէ ամ փառք եւ մեծութիւն սպառելոց են վաղիւն և կորնչելոց, մեծափափագ տենչանովք վերակացու եւ տեսուչ առնելով զքոյր իմ Մարիամ Սիւնեաց տիկին յիմում իշխանութեան Վանավանի վանս տուն Այ կանգնել վիմատաչս կոփածովք չատածախ գանձիւք եւ մեծաջան վաստակովք կատարել. թերևս լիցին ինձ ողորմութիւն յայնմ աւուր յորժամ բանք սպառին եւ գործք թագաւորեն: Եւ տուաք ի քեզ Վանավանու վանական հայր Աբրահամ աղաւթել եւ վայելել եւ որ այլք յետ քո յաջորդեն եւ պաշտաւնայք խորանիդ յորժամ ժողովիք միաբան յաղաւթս. եւ կերակրիք յանմահական կերակրոյն յիշեսջիք զիս եւ զիմսն, զի արասցե ողորմութիւն ողորմածն Ած:

Եւ ետու Դ. գեղոյս սահման Կոթայ քարն, Շաւառնահողն, Գէտամէջն, կթանոցն, Գետավանաց ծովն, Մկ դրամ ի Կոթայ քարէն, ՇԼ ի Բոտելեաց Ոկ յԱղիբողանաց, ՋՂ ի Կարբին գետերէն եւ նաւերէն. Տր Սողոմոն, Տր Աթանաս, Սմբատ թագ. աստ Ածով բերեալ ջուրս յՈնճոռաց Դաւթի ձեռօք...զոր յառաջ բերած էր Ած ողորմի. Թվ Հայոց ՅԾԲ (903):

Լուսավորիչ եկեղեցու աջակողմյան խորանի վերև.

Կամաւն ամենակալին Այ ես Հեճուպս եւ ամուսին իմ Անիփինուայ միաբանեցաք ս. Լուսաւորչիս. արարք արդիւնս. միաբանք սահմանեցին ի տարին Բ. պատարագ Ի.-ից տաւնին. Ա ինձ Հեճուպիս, Ա. Անիփին: Կատարիչք աւրհնին Այ. խափանիչք դատին ի Տունէ: Թվ. ՉԿԹ (1320).

Սրա ներքև. Կամաւն Այ ես Դաւիթ միաբանեցայ սուրբ ուխտիս. միաբանքն խոստացան Ա. պատարագ ծառազարդին ինձ Դաւթիս.

Լուսավորիչ եկեղեցու ձախակողմյան խորանի վրա. Շնորհիւն Այ ես Սարգիս եւ ամուսին իմ Ամէկն միաբանեցաք սբ. Լուսաւորչիս արարաք արդիւնս. միաբանք սահմանեցին ի տարին Բ. պտրգ Ա. ի տաւնին սրբոյն Սարգսի. Ա. ծառազարդի. Ա. ինձ Ա. ամուսնոյն իմոյ. կատարիչք աւրհնին Այ: Թվ. ՉՀԸ (1329).

ՄԱՔԻՆՑԱՑ ՎԱՆՔ

Տեղադրութիւն. Մաքինյաց վանքը գտնվում է Ղըղըլ-վանք թրքաբնակ գյուղում (63°16'50''-40°7'37'') ձորակի լանջին: Առջևից հոսում է համանուն գետակը, բարձրից՝ մի արխ: Այս բարձրությունից բացվում է մի սքանչելի տեսարան: Վանքը պարսպապատ է, թեպետ շատ տեղեր այժմ քանդված: Ունի ընդարձակ բակ, ուր կան նաև խցեր, մի մեծ սեղանատուն և մի քանի սենյակներ: Վանքն այժմ կիսավեր է և բոլորովին անխնամ ձգված: Մի թուրք ընտանիք բնակվում է վանքի սենյակների մեջ, բանջարանոց է դարձրել վանքի դավիթը և չտեմարան՝ մատուռը: Նոր-Բայազետից դեպի Վայոց ձոր ձգվող ճանապարհից մի կածան Գյոդակ-Բուլաղի մոտից բարձրանում է մինչև այս վանքը:

*Պատմական տեսութիւն. Գեղարքունիքի վանքերի մեջ այս հնագույն վանքը կոչվել է **Մաքենոց** կամ **Մաքենեաց** կամ **Մաքենոցաց** և կամ **Մաքեստենից**, և այս «ասի սակս մտքենի կամ օդենի նիւթոյ զգեստուց միանձանցն»,[351] սակայն շատ ավելի հավանական է, որ այս անունը առաջացած լինի այն հանգամանքից, որ այստեղ նաև հնում, ինչպես և այժմ, մեծ քանակութեամբ մաքիներ են պահվել, որովհետև լեռան լանջը և հով կլիման շատ նպաստավոր են խաչնարածության:*

Վանքի գլխավոր եկեղեցին կոչվում է ս. Աստվածածին Գեղամա: Մաքինյաց վանքի սկզբնավորության մասին Ստեփանոս Օրբելյանը պատմում է թե Թ դարի կեսին Սյունյաց Գրիգոր Սուփան Բ իշխանը Կոթայ եկեղեցին շինելուց հետո «Շինէ և (զայս) զերկնաճեմ խմբարան՝ ի հրաշազան մենաբանին ի փառաբանակ ուխտն Մաքենոցաց, զգմբէթայարկ եկեղեցին յանուն սրբոյ Աստուածածնին, և պարսպէ վիմօք. և այլ բազում շինուածս յօրի-

[351] *Ալիշան, Սիսական, եր. 66.*

նեալ զարդարէ զնա անխնայ գանձիւք և փարթամացուցանէ բազում ընչիւք, նաև գեղօք և ագարակօք և այգեստանօք՝ ի Գառնի և յԵրևան և յայլ տեղիս. և կարգէ ի նմա արձան յիշատակի հարստայոյս արդեանցն իւրոց, ըստ այսմ օրինակի»: Սակայն Օրբելյանը, առաջ բերելով մի երկար արձանագրություն, ավելացնում է. «Ահա այս էր արձան Մաքենոցաց, բայց վասն հնութեանն և խախտելոյ քարանցն՝ ոչ կարացաք զբովանդակն իմանալ. այլ բազում բանք և տուրք իշխանացն պակասին. զայս փոքր ի շատէ եդաք, զի մի բնավ չնչեալ կորիցէ յիշատակ նոցա»:

Այժմ այս արձանագրության հետքն անգամ չկա, միայն ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատի վրա ժէ դարում վերանորոգողը, երևի նույն Օրբելյանի պատմությունից առնելով, արձանագրել է.

«Կամաւն Աստուծոյ, որ Սիւնեաց Սուփան իշխան չինեաց Մաքենուց եկեղեցիս ի Գձ (851) թվին, ես առաջնորդ սուրբ ուխտիս Ջուղայեցի Խաչատուր վարդապետս... վերստին նորոգեցի և պայծառացուցի»:

Վանքի նկարագրությունը. Մաքինյաց վանքը բաղկացած է մի մեծ եկեղեցուց, մի գավթից և մի մատուռից, որոնք գտնվում են պարսպի մեջ, իսկ սրանից դուրս, փոքր-ինչ հեռու կան նաև երկու փոքրիկ սագաչեն եկեղեցի: Այս բոլոր շինություններն էլ շինված են առավելապես կարմրավուն քարով, որից և առաջացել է թուրքական Ղըզըլ-վանք (կարմիր վանք) անունը, որ այժմ կրում է թե վանքը և թե սրան շրջապատող թուրքաբնակ գյուղը:

Գլխավոր եկեղեցին, որ կոչվել է ս. Աստվածածին Գեղամա, շինված է սրբատաշ քարից, խաչաձև է, չորս խորաններով, անսյուն, ռոմանական կամարներով և ութանկյունի գմբեթով, կոնաձև կաթուղիկեով պսակված: Արտաքուստ զուրկ է քանդակներից, պատերի մեջ ունի ներսանկվածներ: Պատուհանները փոքր են և նեղ:

Հարավային կողմում կա մի դուռ, որի երկու կողմում, ներքուստ, կան մի ձիու և մի էշի ռելյեֆ քանդակ:

Եկեղեցու երկարությունն է 28 մ, լայնությունը՝ 24 մ և բարձրությունը՝ մոտ 15 մ:

Եկեղեցու մեջ, հյուսիսային կողմում կա մի ավազան, որ հետո է շինված: Գավիթը, որ գտնվում է եկեղեցու հարավային կողմը, շինված է հասարակ, անտաչ քարից և ճարտարապետական տեսակետից մի առանձին նշանակություն չունի: Սրա արևելյան կողմը բարձրանում է սագաչեն, անսյուն մատուռը, որ այժմ կիսավեր է: Սրա պատի վրա կա արևի ժամացույց:

Պարսպից դուրս գտնված երկու փոքրիկ եկեղեցիները կիսավեր են և ճարտարապետական տեսակետից առանձին նշանակություն չունեն:

Արձանագրություններ. Մաքինյաց վանքի հարավային պատի վրա.

Կամաւն Այ Սիւնեաց Սուփան իշխան շինեաց Մաքենեաց եկեղեցին ի ԳՃ (851):

ՌՃԺԵ (1666) թվին. Ես առաջնորդ սբ ուխտիս Ղուղայեցի Խաչատուր վարդապետս, որդի գոլով Յակոբայ՝ վերստին նորոգեցի եւ պայծառացուցի ի ժամանակս սրբազան Հայրապետին Յակոբայ և միաբանք սբ. վանուցս զտէր Պարսամն, զտէր Գրիգորն եւ զսարկաւագունս Գրիգորն, Ղազարն և Ստեփաննոսն, տնտես Սարուխանն. յիշեցէք ի Քս Ած և որք յիշատակեն զմեզ յիշատակն նոցա խաղաղութեյամբ մնասցէ. ամէն:[352]

Վանքի դռան առջև եղած մի տապանաքարի վրա.

Ես Աւետիս վրդպտս առաջնորդ սբ Ածածանիս Հանգուցի տապանս Հօրն իմ պարոն Նիազին որդի Իսայպէկին, Թոռն պարոն Մէլիք Շահինազարին. Թ. ՌՃԽԲ (1693).

Մի գերեզմանաքարի վրա. Այս է Հանգիստ Եղիին, որդի Պապախանին որ ի անաւրինաց սպանեցաւ. Թ. ՌՃԺԸ (1669):

---

[352] *Տե'ս ԴՀՎ IV. էջ 292:*

Այս վանքը գտնվում է այժմ Վալի Աղալու կամ Զորագեղ կոչված գյուղում (62°49'55''-40°10'29''), մի լեզվաձև բլրակի վրա: Հնում կոչվել է Շողագայ կամ Շողուագայ, «յաղագս ծագման իրիք լուսոյ աստուածայնոյ», ըստ Ասողիկ պատմիչի,[353] իսկ ավելի ուշ՝ Շողավանք:

Վանքը կառուցել է Սյունաց իշխան Գաբուռն Վասակի կին և Բագրատունի Աշոտ Ա Թագավորի դուստր Մարիամ տիկինը, Սևանի վանքի հիմնադրուհին, 877-886 թվականներին և ինքն էլ թաղվել է սրա մոտ:[354]

Պատմական տեղեկությունները պակասում են, հայտնի է միայն, որ 1606 թվին այստեղի առաջնորդ է եղել Դավիթ եպիսկոպոսը, որ ոտանավոր գրվածքով ողբացել է Շահաբասի հրամանով կատարված գերեվարությունը և այդ ժամանակ տեղի ունեցած սոսկալի սովը:[355]

Նաև 1670 թվին այս վանքի առաջնորդ եղել է Մկրտիչ եպիսկոպոսը, որի արտագրած ավետարանը այժմ գտնվում է Սևանի վանքում:

Շողագա եկեղեցին կոչվել է ս. Պետրոս առաքյալի անունով: Շինված է կարմրավուն, սրբատաշ քարից, խաչաձև է և ունեցել է չորս խորան. այժմ կանգուն է միայն հյուսիսային պատը, որ արտաքուստ ունի երկու ներսանկված և մեջտեղում մի երկար պատուհան: Արևելյան պատը, որ կանգուն էր մինչև 1910 թ., գյուղացիները գիտմամբ քանդել են՝ քարերը իրենց նոր եկեղեցու վրա գործադրելու, որով անհետացրել են եկեղեցու չուրջը պատող երկար արձանագրության և այս մասի մնացորդները:

Այս կարևոր արձանագրությունից արտագրված են միայն հետևյալ տողերը.[356]

... Ի թագաւորութեան...կանգնեցի զեկեղեցիս...Հաստատ է սա յանուն գլխաւոր առաքելոյն Պետրոսի...վասն յիշատակի ծնողաց իմոց. գնեցի զգիւղս:

Եկեղեցու մեջ և չուրջը կան բավականին նոր գերեզմաններ:

Եկեղեցու արևմտյան կողմում կա մի փոքրիկ մատուռ, որ ամենայն հավանականությամբ, լինելու է Մարիամ տիկնոջ դամբարանը: Սա չինված է սև և կարմիր սրբատաշ քարերով, 8,5 մ երկարությամբ, 5 մ լայնությամբ և 4,5 մ բարձրությամբ: Արևելյան կողմում ունի մի կիսաբոլոր կոզակ, սեղանով և առանց խորաններին: Այժմ մնում են միայն հյուսիսային և արևմտյան պատերը, մասամբ էլ արևելյան պատի կոզակը: Հյուսիսային պատի մեջ, ներքուստ, կան երեք որմնասյուն, որոնց վրա բոլորում են երկու

---

353 Ս. Ասողիկ, գլ. ԼԲ:
354 Ալիշան, Սիսական:
355 Մա. Օրբելեան:
356 Ալիշան, Սիսական, եր. 51:

կիսաբոլոր, պատին կից կամարներ: Այս հյուսիսային պատի մեջ բացվում է մի դուռ, որի կամարակալ քարի վրա եղել է արձանագրություն, սակայն ջնջված է, այնպես որ դրերի տեղը հինգ սանտիմետրաչափ փոս է ընկած, կողքերին նկատելի են տառերի հետքեր:

Ռշժե (1666) թվին. Ես առաջնորդ սբ ուխտիս Ջուղայեցի Խաչատուր վարդապետս, որդի գոլով Յակոբայ՝ վերստին նորոգեցի եւ պայծառացուցի ի ժամանակս սրբազան հայրապետին Յակոբայ և միաբանք սբ. վանուցս զտէր Պարսամն, զտէր Գրիգորն եւ զսարկաւագունս Գրիգորն, Ղազարն և Ստեփաննոսն, տնտես Սարուխանն. յիշեցէք ի Քս Ած և որք յիշատակեն զմեզ յիշատակն նոցա խաղաղութեամբ մնասցէ. ամէն:[357]

Այս մատուռի մեջ, դռան մոտ, կա մի խաչքար, հետևյալ տապանագրով.

Սբ. Խաչս բարեխաւս Տր Վրդանիսին. թվ ՋՂ (1541):

Այս մատուռի մեջ ևս այժմյան դյուղացիները թաղել են իրենց մեռելները, այնպես որ, հակառակ ցանկությանս, հնարավոր չեղավ այստեղ պեղում կատարել:

Մատուռի արևմտյան պատին կից, դրսից կանգնած են երեք մեծ խաչքար, որոնցից մեկի տապանագիրը բոլորովին եղծված է, իսկ երկուսինը հետևյալներն են.

Սբ. Խաչս բարեխաւս Փանոս աղին. թվ. ՌԻԷ (1578):

Սբ. Խաչս բարեխաւս Բէրամին Գուշանին. թվ. ՌԾԱ (1602):

Նաև նույն մատուռի հարավ-արևելյան պատին կից, դրսից, կանգնած են զարձյալ երկու խաչքար, որոնց վրա կարդացվում է.

Սբ. Խաչս բարեխաւս Հալսասուր աղին. թվ. ՋԿԵ (1516):

Սբ. Խաչս բարեխաւս Աղաբին, Ջանհաին թվ. ՋԿԷ (1518):

ՄԱՍՐՈՒՑ ԱՆԱՊԱՏ

Այս, ճարտարապետական տեսակետից առանձին արժեք չներկայացնող վանքը գտնվում է Վալի-Աղալու և Ծակքար գյուղերի միջև, մի հարթության վրա: Եկեղեցին չինված է հասարակ քարով: Միանգամայն անհայտ է վանքի հիմնարկության թվականը և հիմնադրի անունը, միայն կաթուղիկեի վրա եղած արձանագրությունից երևում է, որ վերանորոգվել է 1611 թվին՝ նույն վանքի առաջնորդ՝ Դավիթ եպիսկոպոսի ձեռքով, որի գերեզմանը գտնվում է արևելյան պատի մոտ:

Վանքը շրջապատված է պարսպով, որի թե՛ ներսում և թե՛ դրսում նկատելի են շինության հետքեր, կան նաև խաչքարեր ԺԶ դարից: Ըստ երևույ-

---

357 Տե՛ս ԴՀՎ IV, էջ 292:

թին վանքը բավական հին պիտի լինի, որովհետև սեղանի վրա մնացել է մի արձանագրության մաս՝ 1219 թվից, որ հետևյալն է.

Ի թագաւորութեան Աւշնի...ի խանութեան թաթարին...ի հայրապետութեան Աւանէսին...ի թվին ՈԿԸ (1219). ...Եւ միաբան...Լուսաւորչի վանաց:

Եկեղեցու գմբեթի վրա արձանագրված է.

Կամաւն Աստուծոյ նորոգեցաւ եկեղեցիս ի թվ ՌԿ (1611). ի կաթողիկոսութեան Տէր Մէլքիսէթին, ի թագաւորութեան Շահապասին, ի ղանութեան Ամիր Գիւնայ խանին և մէլիքութեան Տէր Վարդանին ես Դաւիթ առաջնորդ վանիցս նորոգել ետու:

Մի խաչքարի վրա.

Կենաց խաչս Ղուկաս եպիսկոպոսին է թվ. ՋԾ (1501):

Մի ուրիշ խաչքարի վրա.

Սբ խաչս բարեխաւս Բարաթ աղին թվ. ՋՁԹ (1540):

Վանքի արևելյան պատի մոտ կանգնած խաչքարի վրա.

Աւծեալ արեամբ Քրիստոս սուրբ խաչս բարեխաւս Դաւիթ եպիսկոպոսին հոգոյն. թվ. ՌԿ (1611) յիշեցէք ի Քրիստոս զ Դաւիթ եպիսկոպոս, որ նորոգեաց զեկեղեցիս:

ԿՈԹԱ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ

Ստորին Ատիաման գյուղում, որ հնում եղել է Սյունաց Հայկազուն իշխանների աթոռանիստը և կոչվել է Կոթ, մնում են ս. Աստվածածին եկեղեցու ավերակները: Այս եկեղեցին, Ստեփան Օրբելյանի ասելով, չինել է Սյունաց Գրիգոր Սուփան իշխանը ժ դարի սկզբին: Այստեղ պահվել է այն հռչակավոր ս. Նշանը, որ այժմ գտնվում է Սևանա վանքում:[358]

Եկեղեցին գտնվում է այժմյան գյուղի արևմտյան կողմում, մի բարձր սարավանդի վրա, որտեղից մի հիանալի տեսարան է բացվում: Շինված է կարմրավուն, տաշած քարով. քառանկյունի է և ունի մի կոզակ և չորս ավանդատուն: Այժմ թե ճեղունը և թե պատերի մեծագույն մասը քանդված մի շեղջակույտ են ներկայացնում, և այս ու այն քարակույտի մեջ ընկած են Գրիգոր Սուփանի այս եկեղեցու հիմնադրման մասին գրած այն ընդարձակ արձանագրության բեկորները, որ ընդօրինակել է Ստեփանոս Օրբելյանը:[359]

Եկեղեցու չուրջ կան բազմաթիվ խաչքարեր և խցերի հիմնապատեր:[360]

---

358 Տե՛ս Սևանի վանքի նկարագրության մեջ:

359 Տե՛ս Ստ. Օրբելեան:

360 Տե՛ս Ն. Ատիաման գյուղի նկարագրությունը:

ԳԱՆՁԱՎԱՆՔ ԿԱՄ ԱՆԳԻՐ ՎԱՆՔ

Օրդակլուի և Բեղլու Հուսեին Սարաչլու գյուղերի միջև, մի բարձր քարափի վրա ավեր դրությամբ մնում է **Գանձավանքը**, *որին այժմ Անգիր վանք են կոչում, որովհետև վրան ոչ մի գիր չկա, և որի մասին պատմական տեղեկություններն էլ պակասում են:*

ԹԱՑԶԱՐՈՒԽԻ ՎԱՆՔ

Դարաչիչակի Թայչարուխ գյուղից դեպի հարավ, հազիվ երկու կիլոմետր հեռու, մի անտառապատ բլրի տափարակ գագաթին բարձրանում է մի հին, վրացական տաճար՝ սև, տաշած քարից շինված: Տաճարը օրորոցաձև է, անգմբեթ և ունի հարավային և արևմտյան կողմերում մի-մի դավիթ, իսկ հյուսիսայինում՝ մի մատուռ, որ բացվում է տաճարի մեջ:

Տաճարի երկարությունը 13,60 մ է, լայնությունը՝ 7,65 մ, իսկ բարձրությունը՝ 11 մ: Արևելյան ճակատին կա մի երկար և նեղ պատուհան, որի վերևում երկու բարձրաքանդակ աղավնի, կողքերին մի-մի ռոզաս, փոքրինչ ներքև, վրաց խուցուրի տառերով մի եղծված արձանագրություն:

Տաճարը ներքուստ անսյուն է, պատերին կից բարձրանում են չորսական, հասարակ, քառանկյունի որմնասյուներ, որոնց վրա բոլորում են ռոմանական կամարներ: Ջեղունը ներքուստ բոլորակաձև է, արտաքուստ եռանկյունի: Սեղանը բոլորակաձև է, շատ ցածր, առանց խորաններիի: Երկու կողքերին ունի քառանկյունի փոքրիկ բացվածքներ, որոնք բացվում են գաղտնի պահարաններիի մեջ:

Տաճարի հյուսիսային պատին կից, կարծես հետո, չինված է մի մատուռ, որ թերևս իբր խորան է ծառայել: Սա մի փոքրիկ, կամարակապ շենք է, երկու նեղ պատուհաններով արևելյան և արևմտյան պատերին և մի դռնով, որ բացվում է տաճարի մեջ: Արևելյան կողմում կա մի ցածրադիր սեղան:

Հարավային կողմի դավիթը մի հասարակ շենք է, միայն միակ դռան վերևում կա մի բարձրաքանդակ աղավնի, աջ կողքին արևի մի ժամացույց:

Տաճարի մեջ կան մի քանի գերեզմանաքարեր, որոնցից երկուսի վրա կան վրաց խուցուրի տառերով տապանագրեր:

Տաճարի հանդեպ կա մի մացառուտ, որի ծառերն այնպես կարգին դասավորված են, որ իսկույն նկատվում է երբեմն ծառուղի կազմելը:[361]

---

[361] Իմ այս վանքը այցկած միջոցին սաստիկ մշուշը թույլ չտվեց լավ լուսանկարելու:

ՍԵՎԱՆ

Սևանի կղզին. պատմական տեսություն.
վանքի պատմական էվոլյուցիան.
միաբանների կյանքը. վանքի նկարագրությունը.
վանքի սրբությունները.
եկեղեցական զարդերն ու անոթները. վանքի ձեռագրերը.
վանքի կալվածները. արձանագրությունները. տապանագրերը

ՍԵՎԱՆԻ ԿՂԶԻՆ

Սևանի հոգեպարար վանքը հավերժական անդորրությամբ հանգչում է համանուն կղզու կատարին, իբրև արտահայտություն մարդկային հոգու դեպի բնության անհուն գեղեցկությունը տածած խոր զգացմունքի:

Կղզին փայլում է Գեղամա գեղածիծաղ լճում որպես մի գոհար՝ կապտագույն, հստակ կոհակների մեջ, հրապուրելով աչխարհային հույզերից ուժասպառ՝ խաղաղության կարոտ հոգիները:

Կղզին գտնվում է լճի արևմտյան ափից մոտ երկու կիլոմետր հեռու, 63°40'30"–40°34'38" աստիճանների տակ, հրաբխային ծագում ունի և ներկայացնում է մի լայնանիստ բլուր՝ լճի մակերևույթից 450 ոտնաչափ բարձր, ձգված արևմուտքից դեպի արևելք, մոտավորապես մեկ կիլոմետր երկարությամբ և կես կիլոմետր լայնությամբ: Սրա ամբողջ մակերևույթը հավասար է 19 դ. 1630 քս: Բլրի գագաթը հարթ է, հյուսիսային և արևելյան կողերը պատած են չիկագույն որձաքարի ուղղահայաց լերկ քարաժայռերով, հարավային կողը, որ նույնպես նավակների համար անմատչելի է, շատ գեղեցիկ է, որովհետև տուփի (tuf) ահագին կոչկոռները ջրի ազդեցությամբ բազմազան, գեղեցիկ ձևեր են ստացել: Հարավ-արևմտյան կողմը ցածրադիր մի տափարակ է տարածվում, լճի մակերևույթից հազիվ 2 մ բարձրությամբ և մոտավորապես մեկ դեսյատին տարածությամբ: Բլրի գագաթը ծածկված է մեծ մասամբ չեչաքարով և բազալտով, այս պատճառով և բուսականությունը շատ աղքատ է. մինչդեռ ստորին, տափարակ մասում աճում են ուռենիներ և բարդիներ, որոնք գեղեցիկ ճեմելիներ են կազմում, ինչպես նաև մի քանի խնձորենիներ ու թթենիներ, բլրի վրա ոչ մի ծառ չկա. պատահում են միայն մասրենի, ասպիրակ, գանազան ծաղիկներ, ինչպես մեխակ, գանգակածաղիկ և այլն, իսկ ապառաժոտ կողերն ու նրանց ծերպերը պատած են գաղտնասերմ բույսերով:

Ամառը Սևանա կղզին իր մեղմ, հովաշունչ կլիմայով սքանչելի է, մինչդեռ վեց ամիս տևող ձմեռը՝ անտանելի, մանավանդ, երբ փչում է արևելյան քամին, որ «սոթ» է կոչվում, Սոթք գավառի անունով: Այս ժամանակ լիճը սաստիկ ալեկոծվում է, նավագնացությունը դժվարանում և նույնիսկ անկարելի դառնում: Հյուսիսային կողմից էլ երբեմն փչում է «քոլի» քա-

մին, խիստ խոնավություն բերելով: Իսկ ամբողջ աշնան ընթացքում փչում է արևմտյան քամին, որ Արարատյան դաշտից գալով կոչվում է «դաշտի քամի», և չոր է ու ցուրտ:

Պատմական տեսություն. աղբյուրներ. Սևանի վանքի վերաբերմամբ պատմական տեղեկություններ գտնում ենք Հովհաննես կաթողիկոսի, Ասողիկի, Ստեփանոս Օրբելյանի, Առաքել Դավրիժեցու և այլ մատենագիրների մեջ անցողաբար հիշատակված: Մի ամբողջական, ամփոփ պատմություն մինչև ԺԸ դարը չի երևում, այս ժամանակ միայն կազմվում է մի չատ համառոտ գրվածք՝ «Վէպ ծովակին Գեղամայ և երջանիկ կղզւոյն Սևանայ, որոյ և բնակչացն. ի Զաքարիա վարդապետէ Գուլասպեան Բէհբուդեան, յաշակերտէ տն. Պօղոսի Առաքինազարդ սրբոյ Արևի եպիսկոպոսի Պրուսայի և Նիկոմիդիոյ, յամի տեառն 1825 ի նոյն սուրբ և երջանիկ կղզւոջ»: Այս աշխատությունը դեռևս չի հրատարակված: Հազիվ հինգ տարի անցած երևում է համեմատաբար ավելի մանրամասն մի գրվածք. «Պատմութիւն անցից անցելոց Սէվանայ վանուց»: Այս աշխատությունը 1870 թ. Եղիա վարդապետ Ջալալյանի ձեռքով արտագրված է կապտագույն թղթից կազմած մի մեծ մատյանի մեջ, որ պահվում է Սևանի վանքում, և հաջորդ 1871 թ. տպված է Վաղարշապատում: Ինչպես երևում է, արտագրելով մի մեծ մատյանի մեջ վերոհիշյալ աշխատությունը՝ միաբանությունը ցանկացել է կազմել մի հիշատակարան հետզհետե նշանակելու հիշատակության արժանի դեպքերը:

Եվ հիրավի, Գյումուշխանեցու պատմությանը հետևում է Սևանի վանքի անշարժ կայքերի ցուցակագրությունը, հետո գալիս է Սևանի վանական գրադարանի դրացուցակը և ապա «Արժանաւոր պատմութիւն պատահմունաց ի մէջ Անապատիս, երթ և եկ միաբանից, թէ վախճանելոց օրական ժամանակագրութեամբ և թէ պայմանագրութիւնք»: Այստեղ, յոթ երեսների վրա գրված է թե 1830 և 31 թվականներին ինչ միաբաններ են ընդունվել վանքում և թե ինչպես 1851 և 1853 թվականներին մի-մի քուրդ Սևանի վանքում քրիստոնեություն են ընդունել: Սրանից հետո բավականաչափ բաց թերթեր են թողնված, երևի հիշատակարանը շարունակելու հույսով, որից հետո գրված է. «Պատմութիւն Սևանայ, աշխատասիրեաց Յակոբ վարդապետ Սիւնեաց ի միաբանութենէ ս. Էջմիածնի. ի հայրապետութեան Տ.Տ. Մատթէոսի և ի վանահայրութեան սուրբ անապատիս Յարութիւն բարեջան վարդապետի Մարջանեանց Շիրակացւոյ. 1862 թ. ի Սևան»: Այս, վաթսուն երեսների մեջ ամփոփված պատմությունը, որ դեռևս չի տպագրված, մի համառոտություն է Մանուել վարդապետի աշխատասիրության, մի կարևոր հավելվածով, այն է 1830-1862 թթ. եղած վանահայրերի գործունեությունը: Մատյանն ավարտվում է այս Հակոբ վարդապետի «Փերթուածք տխրունիք» խորագիրը կրող բանաստեղծություններով:

Ներկա վանահայր, սրբազան Սարգիս եպիսկոպոս Փիլոյանը ևս, օգտվելով գլխավորապես վերոհիշյալ աշխատությունները, կազմել է Սևանի վանքի պատմությունը՝ հասցնելով մինչև իր վանահայրության օրերը: Այս աշխատությունը տպվեց «Հովիվ» չաբաթաթերթի 1906 թ. համարներում:

Առավելապես Զաքարիա վարդապետ Գուլասպյան Բհհբությանի աշխատությունից քաղելով՝ Հովհաննես եպիսկ. Շահխաթունյանը իր «Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ» աշխատության մեջ տալիս է Սևանի պատմությունը (Հատոր. Բ, եր. 308-235):

Գյումուշխանեցու աշխատությունից էլ գլխավորապես օգտվելով՝ Հ. Ալիշանը իր «Սիսականում» տվել է Սևանի պատմությունը, շատ անցողաբար անցնելով Գյումուշխանեցու պատմության ավարտից՝ 1830 թ. մինչև իր ժամանակի՝ 1890 թ. պատմությունը:

Լրագրերի մեջ ևս կան զանազան ճանապարհորդական ակնարկներ ու տպավորություններ Սևանի վանքի մասին, որոնցից նշանավորը Մուրացանինն է, «Նոր-Դարի» 1891 թ. 130-139 համարներում տպված:

Մ. Սմբատյանի «Գեղարքունիք» գրքում էլ, բացի վերոհիշյալ աղբյուրներից արտագրված հատվածներից, կան նաև Սևանի միաբանությանն ուղղած մի քանի կոնդակների պատճենները:

ՍԵՎԱՆԱ ՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Սևանա վանքի նախնական պատմությունը միանգամայն ծածկված է թանձր մշուշով: Ավանդությունն ասում է, թե այստեղ բլրի գագաթին, եղել է մեհյան, որը կործանել է ս. Գրիգոր Լուսավորիչը Տրդատի հետ այստեղով անցնելիս, և նրա տեղը կանգնել ս. Հարության տաճարը 305 թ., կղզին էլ կոչել է «Սա է վան», որ հետո աղավաղվելով, դարձել է Սևան: Անվան մի այսպիսի անհեթեթ բացատրություն էլ տվել են ոմանք, վերլուծելով Սևան բառը «սև-վան» կամ «սև-վանք»-ի, որից և առաջացել է ռուսական կոչումը՝ Սեվանգ (Севангъ).

Ամենահավանական ենթադրությունը այս անվան ծագման վերաբերմամբ պ. Նիկոլսկունն է, որ հանում է Օրդակլուի և Քյոլան-ղռանի սեպագիր արձանագրությունների մեջ հիշատակված «Suinia» բառից, որ վերաբերում է այս լճին և որ ուրարտերեն նշանակում է «լիճ» կամ «ավազան»:[362]

Վերոհիշյալ ավանդությունից զատ Սևանա վանքի կամ կղզու մասին մինչև ութերորդ դարը ոչ մի հիշատակություն չկա: Միայն 703 թվին Հովհաննես կաթողիկոսի ասելով, արաբացվոց տիրապետության ժամանակ Մահմեդ ոստիկանը «մարտ ընդ բոլորից իսկ ամրոցաց Հայոց դնէր, և զորս

[362] Никольский, Клинообразные надписи Закавказья, եր. 127:

միանգամ չինքն գրաւէին, առհասարակ քանդեալ աւերեալ ի վայր կործանէին: Իսկ Սևան կղզի, որ ի ծովակին Գեղամայ, Թէպէտ և յիսկզբան նուազի անդ ոչ ըմբռնեցաւ ի ձեռս նորա, սակայն զկնի երկեամ մի ամաց մատնեցաւ ի ձեռս նորա. և որ միանգամ բնակեալ կային յամրոցի անդ՝ գերի առեալ տանէր, և զկապուտ կողոպուտն յաւարի առեալ՝ սպառոպուռ քանդէր աւերէր զամրոցն»:

Այս պատմութիւնից երևում է, որ Սևանա կղզին մի ժամանակ իբր ամրոց է ծառայել և հիրավի, նրա երեք կողմը ուղղահայաց ժայռերով պատած լինելով միանգամայն անմատչելի են, իսկ մեկ, ցածրադիր կողմը, այն է հարավ-արևմտյանը, պատած է եղել պարսպով, որի հիմնապատերն այժմ էլ նկատելի են լճափին:

Այս ավերածութիւնից հետո պատմութիւնը դարձյալ լռում է Սևանա կղզու և վանքի վերաբերմամբ դրեթե երկու դար չարունակ, մինչև 874 թվականը, երբ հիմնարկվում են այժմյան կանգուն եկեղեցիները Մաշտոց վարդապետի ձեռքով և Մարիամ թագուհու միջոցներով:

Մաշտոցը Եղվարդ գյուղից է եղել, ծնված 833-34 թվին: Նա ուսել է Մաքինացոց վանքում և այդ տեղի էլ միաբան դարձել, սակայն մի առ ժամանակից հետո գնացել է Արտավազդի ապարանք կոչված ավելի խստակրոն անապատը և այստեղից 862 թ. եկել է Սևանա կղզու հանդեպ, լճի արևմտյան ափին բարձրացող, այժմ «Մաշտոցներ» կոչվող սարի գագաթին, մի բնական սառն աղբյուրի մոտ մի փոքրիկ մատուռ չինել և այդտեղ ճգնել: Ապա անցել է Սևան կղզին, որի արևելահայաց ժայռերի մեջ, մի դժվար մատչելի տեղում այսօր էլ ցույց է տրվում երկու քարայր, որոնցից մեկում ճգնել է նա, և մյուսում ապրել: Այստեղ հետզհետե միաբանակից-ներ ժողովելով, Մաշտոցը տասը տարի չարունակ ճգնութեամբ և ուսուցմամբ է պարապել, անպես որ նրա աշակերտ Հովհաննես կաթողիկոսի ասելով՝ «փայլատակեալ պայծառանայր... որ զփառացն Աստուծոյ անչէջանելի ճառագայթումն չինքն նկարէր, աստուածային ծաւալմամբ և սրբափայլ կրօնիւք կենդանականօք. և հոգիախաղաց տեսութեամբք ի տեսականն անդ զանտեսն տեսանէր. սակս այնորիկ ամենեցուն աչք ի նա հայէին, յաղագս որոհել ճանաչել մարթելոյ նորա զհոգևորացն մասանց ընտրութիւնս ստուգագէտ»:

Ահա սա, Ստեփանոս Օրբելյանի ասելով, «հրաման առնու ի տեսլեան՝ չինել եկեղեցի յանուն **Երկոտասան Առաքելոց**, և սահմանել միաբանակեաց. յաղագս որոյ և գային առ նա Երկոտասանքն ի վերայ ծովուն. յանուրջս. և նշանէին զտեղի եկեղեցւոյն»: Այս միևնույն տեսիլը տեսնում է նաև Աչոտ Ա թագավորի դուստր և Սյունաց Գաբուռն Վասակ իշխանի ամուսին Մարիամը, որ ամուսնու մահից հետո այս միջոցներում ճգնում էր Սևանա կղզու հանդեպ գտնված Յամաքաբերդի կուսանաց անապատում,

այս պատճառով էլ «գայ առ սուրբն Մաշտոց և բազում թախանձանօք ի հաւանածեալ զնա ձեռն ի գործ արկեալ չինեն զգեղապաճոյճ եկեղեցիսն յանուն սուրբ Առաքելոց և զմիւսան յանուն Տիրուհւոյ Աստուածածնին. և պարգարեալ մեծամեծ սպասուք՝ կանգնեն զնա տուն Աստուծոյ և բնակարան աստուածազգեաց արանց յՅԻԳ թուականին Հայոց», որ է Քրիստական 874 թ.:

Վանքը շատ շուտով ապահովվել է նյութականապես՝ Մարիամ Թագուհու հոր՝ Աշոտ Ա առատաձեռնությամբ, որ այցելելով վանքին՝ նվիրում է «փրկական նշանն աստուածընկալ խաչին» և հետևյալ գյուղերը՝ Վարսեր (այժմ Զրուչըռ), Ցամաքաբերդ, Գոմաճոր, Բերդքն, Ուռյաց տափ, Որսն, Կաւակըծին (այժմ Ծակքար, Ղազախում), ինչպես և մի քանի այգիներ Գառնիում, Երևանում և այլ տեղեր:[363]

Այս առատ նվիրաբերությանն չնորհիվ Սևանա վանքը սկսել է բարգավաճել, ավելացել են միաբանները, շինվել են նորանոր խցեր, առաջ է գնացել վանական դպրությունը և սրա չնորհիվ բարձրացել է Մաշտոցի հեղինակությունը, այնպես որ Աբաս Սպարապետը՝ ցանկանալով խլել Թագավորական Թագը իր եղբորորդի Սմբատ Ա-ից, լարվել է նաև Գևորգ կաթողիկոսի դեմ՝ համարելով նրան Սմբատի կուսակից և առաջարկել է Մաշտոցին օգնել իրեն՝ Գևորգին կաթողիկոսությունից ձգելու՝ խոստանալով նրան կաթողիկոս ընտրել տալ: Սակայն Մաշտոցը հանդիմանական և խրատական մի թղթով համոզել է նրան ետ կանգնել իր չար դիտավորությունից և թողություն խնդրել կաթողիկոսից: Մի շատ դեղեցիկ մխիթարական թուղթ էլ ուղղել է նա Դվինի 893 թ. սոսկալի երկրաշարժից ազատվածներին:

Այսպես աճել է հեղինակությունը Մաշտոցի, որ «այն չափ տքնութեամբ հեղ էր և լաւակամ, և տեսական դուարթ և առատամիտ և ընտրող յոյժ, և վայելուչ հասակաւ մարմնոյն և մխիթարական բանիւ առ դանեալսն խորհրդով, և զօրաւոր և ահարկու առ հզօրս», այնպես որ Գևորգ Բ կաթողիկոսի մահից հետո, 897 թ., նա ընտրվել է կաթողիկոս: Սակայն յոթ ամսից հետո վախճանվել է և թաղվել Գառնիում: Նրան հաջորդել է նրա աշակերտ Հովհաննես Ջ Դրասխանակերտցին: Մաշտոցը բարեփոխել է Հայոց եկեղեցու ծիսարանը, որի պատճառով և այդ դիրքը այժմ էլ կոչվում է «Մաշտոց»:

Մի քանի խոսք էլ ասենք Մարիամ տիկնոջ մասին: Այս բարեպաշտ տիկինը ճգնավորական կյանք է վարել ինչպես Ցամաքաբերդի կուսանոցում, այնպես և իր կառուցած Սևանի վանքում: Եվ որովհետև արգելված է եղել կանանց ալոթել ճգնավորների հետ միասին, ուստի Առաքելոց եկեղեցու

---

[363] Ստ. Օրբելյան, պ. Լէ:

Հյուսիսային խորանի ներսի դռան վոխարեն միայն մի փոքրիկ բացված էին թողել՝ ձայնը հեշտությամբ անցնելու նպատակով: Դրսից մի դուռ ընդունել է Մարիամ տիկնոջը խորանի մեջ, որ առանց տեսնելու ճգնավորներին և կամ նրանցից տեսնվելու, հետևել է ժամասացությանը:

Մի անգամ էլ, երբ Մարիամ տիկինը իր Սահակ և Վասակ որդիների հետ, հալածվելով Յուսուֆ ոստիկանից, ապաստանել է այս կղզին, Յուսուֆը լաստեր պատրաստելով հարձակվել է կղզու վրա: Մարիամ տիկինը իր որդիներով կարողացել է փախչել Միափորի գավառը (Շամշադին), սակայն Յուսուֆը մտել է կղզին, կողոպտել, և ապա հետապնդել նրանց և հասել: Սահակ և Վասակ իշխանները ընդդիմադրել են նրան և նույնիսկ այնպիսի ջարդ տվել, որ զորքերը հարկադրվել են փախչել:

Այնուհետ այս իշխանները անցել են Արցախի կողմերը, ուր 911 թ. վախճանվել է Մարիամ տիկինը, որին բերել են Գեղարքունիք և թաղել նրա կառուցած Շողագա վանքում:[364]

Սակայն ավանդությունն ասում է, թե Մարիամ տիկինը թաղված է Սևանա կղզում, Առաքելոց եկեղեցու վերոհիշյալ հյուսիսային խորանում, ուր գալիս էր աղոթելու:

Այս «անմատչելի ամրոցում» ապաստանել է նաև Աշոտ Բ (Երկաթ) թագավորը 923 թ., որից ելնելով տասը նավակով, հարձակվել է Բիչիր ոստիկանի վրա, և արագ նետաձգությամբ փախցրել նրա զորքը:[365]

Մաշտոցին հաջորդող Սևանա վանքի վանահայրերից հայտնի է Ստեփանոս վանականը: Սա մասնակցել է այն ժողովին, որ գումարվել է Վահան կաթողիկոսին ընդդիմադրելու՝ նրա քաղկեդոնիկներին հաճության թուղթ գրելու մտադրության համար: Վահան կաթողիկոսն ստիպված փախել է Վասպուրական՝ Ապուսահ Թագավորի մոտ, իսկ ժողովը Աշոտ Գ Շահնշահի կամակցությամբ կաթողիկոս է ընտրել այս Ստեփանոս վանականին 970 թ.,[366] որ միայն երկու տարի կաթողիկոսության անցնելուց հետո վախճանվել է:

Սրան հաջորդել է Խաչիկ և ապա դարձյալ Սևանի վանքի վանահայր Սարգիս Ճգնակյացը, որ նախ Շողագա վանքի վանահայրն է եղել: Սարգիսը 27 տարի կաթողիկոսություն է արել՝ վարելով միանգամայն այնպիսի կրոնական կյանք, ինչպիսին վարել էր Սևանա վանքում: Սրա հրամանով է Ասողիկը գրել իր Տիեզերական պատմությունը: Սարգիս կաթողիկոսը 1019 թ. իր տեղը կաթողիկոս է ձեռնադրել Պետրոս Գետադարձին, և ինքը առանձնացել Հոռոմոսի վանքում, ուր և վախճանվել է 1021 թ.:

---

[364] Հովհաննես կաթողիկոս:
[365] Ասողիկ, Գլ. Ը:
[366] Անդ:

ԺԱ դարի առաջին կեսին Սևանի վանքում սկսել է փայլել վանահայր Սարգիս վարդապետ Իմաստասերը, Գրիգոր Մագիստրոսի արժանավոր թղթակից և Բագրատունյաց թագավորության բարձման ժամանակ հասած աղետների ողբողը: Սրանից հետո մինչև 1205 թ. պակասում են տեղեկություններ, իսկ այս ժամանակ հիշվում է Սարգիս «Սևանայ միայնակեացը»,[367] որ մասնակցել է Զաքարիա սպասալարի առաջարկով հրավիրված Լոռու ժողովին Մխիթար Գոշի և ուրիշների հետ:

Հավանականորեն այս Սարգիս վանականի ժամանակ, ԺԳ դարում, երբ լեզգիները հաճախ հարձակում են գործել Հայաստանի վրա կողոպտելու նպատակով, Սևանի շրջակա բնակիչներն էլ ապաստանել են այս կղզում: Այս միջոցին լեզգիների մի խումբ խորամանկությամբ աշխատել է մտնել կղզին և կողոպտել: Սրանցից երկուսը իբր վաճառականներ համոզել են Սևանի վերակացուին, որ թույլ տա կղզում մի առ ժամանակ պահել իրենց 40 արկղերի մեջ դարսած ապրանքը՝ մինչև որ երկիրն ավազակներից կխաղաղվի: Պատժված աշակերտներից մեկը առանձնանալով այս արկղերի մոտ՝ լսել է նրանց միջից մարդկային ձայն, և անմիջապես իմացրել ուսուցչին: Վանականները բացել են մի արկղ և տեսել նրա մեջ երկու զինված լեզգի: Բանալով դավադրությունը՝ վանականները ժողովրդի աջակցությամբ ղլորել են արկղերը լիճը՝ երգելով «Շնորհեա մեզ Տէր» շարականը, կրկնելով մարգարեի խոսքը. «Եւ զխորհուրդն՝ զոր խորհէք՝ խափանէ Տէր, զի Աստուած ընդ մեզ է»: Հետո այս շարականը եկեղեցական երգերի կարգն է անցել և մինչև հիմա էլ երգվում է: Այժմ էլ ավանդաբար ցույց է տրվում Առաքելոց եկեղեցու մոտ մի տեղ, ուր թաղված են այս դավադիր խմբի առաջնորդ երկու կեղծ վաճառականները.[368]

Սարգիս վանականից հետո դարձյալ պատմական տեղեկություններ պակասում են ամբողջ չորս հարյուր տարիների վերաբերմամբ: Միմիայն մի քանի արձանագրությունների մեջ հիշվում են 1-2 վանահայրերի անուն, ինչպես Առաքելոց եկեղեցու հարավային դռան վրա՝ Դանիել վարդապետ և Ներսես եպիսկոպոս (1522-1557 թթ.):

ԺԷ դարի սկզբին Ջալալիների ասպատակությունների պատճառով, շատ վանքերի հետ, Սևանի վանքն էլ ամայի է մնացել, մինչև որ Կարապետ եպիսկոպոսը 1620 թ. վերանորոգել է այն: Կարապետ եպիսկոպոսը 1620 թ. սկզբում էջմիածնի միաբան է եղել, հետո հալածվելով Մելիքսեդեկ կաթուղիկոսից՝ հեռացել է Սյունյաց անապատը, Սարգիս եպիսկոպոսի մոտ, որի մահից հետո եկել Սևան և վերակազմել այստեղի միաբանությունը Սարգսի կազմած կանոնների համեմատ:

---

[367] Կիրակոս Գանձակեցի:
[368] Մովսէս Երզնկացի, Դ. Ինճիճեան, Մանուել վրդ. Գյումյուշխանեցի:

Սրանից հետո հիշվում է Մխիթար եպիսկոպոսը, որ այս Գեղարքունիք գավառի Դալիղարդաշ գյուղի քահանան է եղել: Սա, նեղվելով գյուղի տանուտեր մելիք Փարսադանից, հեռացել է Սևան և կրոնավոր դարձել: Իր առաքինի վարքի պատճառով Փիլիպպոս կաթողիկոսից եպիսկոպոս է ձեռնադրվել և վանահայր կարգվել: Նա վախճանվել է 1662 թ. և ամփոփվել Առաքելոց վանքի գավթում:[369]

Այս Մխիթար եպիսկոպոսի վանահայրության միջոցին Թիֆլիսեցի Ջիթախյան Սուլխան, Ջալ և Ջորապ եղբայրները նորոգել են Առաքելոց տաճարը 1654 թ., իսկ հաջորդ, մյուս Մխիթարի ժամանակ, 1664 թ. ս. Աստվածածնի տաճարը: Առաջին Մխիթարի ժամանակ նրա օգնական Բարսեղ վարդապետը 1660 թ. գարնանամուտին մի աբեղայի, մի սարկավագի և երեք աշխարհականի հետ լաստի վրա նստած կամեցել են Սևանի սառած լճի սառույցները կոտորելով ճանապարհ բաց անել դեպի ափը, սակայն սաստիկ հողմ բարձրանալու պատճառով լաստը շրջվել է և խեղդել բոլորին, բացի սարկավագից և մի աշխարհականից:

1692 թ. Սևան է եկել Մխիթար Սեբաստացին՝ տասնվեց տարեկան հասակում, կրոնավորելու նպատակով: Այստեղ իր ցավոտ աչքերին բժշկություն գտնելով ս. Աստվածածնից՝ անցել գնացել և վերջիվերջո հիմնել է Վենետիկի Մխիթարյան ուխտը: Աստվածածնի այն պատկերը, որի առաջ ծնկաչոք աղոթել է Մխիթարը, աչքերին բժշկություն հայցելով, 1896 թ. Մկրտիչ Ա կաթողիկոսի հրամանով տարվել է ս. Էջմիածին և այժմ պահվում է Հայրիկյան թանգարանում: Այս պատկերը ներկայանում է Տիրամորը նստած ղիրքով, տխուր և գթոտ դեմքով, մորը Հիսուսը նստած և խաչափայտը գրկին: Զարչարանաց մյուս գործիքները, և սրանց հետ երեսուն արծաթը ցրված են նրա առաջ:[370]

Փոխանակ այս պատկերի, Հայր Ալիշանը ի հիշատակ Մխիթարի տեսլեան երկհարյուրակի, գետեղել է իր Սիսականում այն պատկերի պատճենը, որը նկարված է Մխիթար Սեբաստացու Սևան գալուց 100 տարի հետո, ինչպես երևում է նրա վրայի արձանագրությունից. «յիշատակ է Բիժանի որդի Աւաննէսին. ՌՄԾ թ. (1801)»: Այս պատկերը այժմ էլ պահվում է Սևանի վանքում:

Սևանի վանքի վանահայրերի հաջորդության կարգը Մխիթար Առաջինից հետո դարձյալ ընդհատվում է, հիշատակություններ չլինելու պատճառով, մինչև 1740 թ., երբ վանահայր է եղել Մարտիրոս եպիսկոպոս Չերքեզյանցը, Ծաղկունքի Շահրիզ գյուղից, որ վերանորոգել է ս. Աստվածածնի եկեղեցու օրորոցաձև տանիքը սրբատաշ քարով, ինչպես երևում է այս մասին եղած նույն եկեղեցու արևմտյան պատի վրայի արձանագրությունից:

---

369 Զաքարիա սարկավագ, Ա. հտ:
370 Փիլոյեան, Սևանա վանքը:

Սրա հաջորդ Հովհաննես վարդապետ Նորաւուզցու ժամանակ, 1747 թ., երբ Նադր-շահի սպանութիւնից հետո նրա զորքերը զանազան խմբերով ցրվել էին Հայաստանի զանազան կողմերը աւազակելու, մոտ տասը հազարից բաղկացած մի խումբ էլ Ազատ խանի առաջնորդութեամբ մտել է Սյունաց աշխարհը՝ կողոպտելու: Այս միջոցներին Գեղարքունիքի բնակիչները իրենց Մելիք-Սարգսյան և Ալլահվերդի Յուզբաշի երևելիներով ապաստանել են Սևան կղզում: Ասպատակողները գյուղերում բնակիչներ չգտնելով՝ մոտեցել են Սևանին հունվարի հինգին, երբ լիճը սառած լինելով կարելի էր վրայից անցնել: Հայերը նկատելով ասպատակողներին, կամեցել են հակառակ կողմից փախչել, սակայն Հովհաննես վարդապետը, որ այդ ճրագալուցի երեկոյին պատարագելիս է եղել, ձեռքն է առել Կոթա ս. Նշանը և պատվիրել է ժողովրդին հանդարտվել և աղոթել: Ապա շտապով հաղորդել է բոլորին՝ պատրաստելով կռվի և մահվան: Այս ժամանակ ասպատակողները փողեր հնչեցնելով դեպի կղզին են արշավել, և մինչդեռ զենք ունեցողներն առաջ են վազել, կանանց ու երեխաների լացն ու աղաղակը երկինք է բարձրացել, և հանկարծ սառույցը կոտրատվել է և ամբողջ ասպատակող խումբը լիճը խորասուզվել, անհետացել:

Այս Հովհաննես վարդապետի վանահայրութեան ժամանակ, 1748 թ., Երևանի խանի հրամանով Ղազար կաթողիկոսն աքսորվել է Սևան և նրա փոխարեն կաթողիկոս է ձեռնադրվել Այնթափցի Քյութթար անվանված Պետրոս եպիսկոպոսը: Սակայն հետո Ղազար կաթողիկոսը իր բարեկամների միջնորդութեամբ աքսորից ազատվել է և վերոհիշյալ Պետրոսին աքսորել Ջահուկ, ուր և մեռել է:[371]

Հովհաննես վարդապետից հետո, 1753 թ., վանահայր է դառել Սամուել վարդապետը, որ կարճ միջոցից հետո հրաժարվել է, և նրա փոխարեն Սիմեոն կաթողիկոսի կոնդակով վանահայր է կարգվել Հովհաննես վարդապետը, մի «ցուփաբարոյ և արբշիռ» մարդ: Սրա ժամանակ Սիմեոն կաթողիկոսը կամեցել է այցելել Սևանի կղզին: Հովհաննես վարդապետը տեսնելով, որ հնագույն մատյաններն անխնամ պահվելով փչացել են, որի համար դրասեր կաթողիկոսից նախատվելու է, բոլոր անկազմ հին գրքերը, տետրակները և հիշատակարանները հավաքել է տվել և գիշերը լիճը ածել:[372]

Հովհաննես վարդապետին հաջորդել են մի քանի վարդապետներ և եպիսկոպոսներ, որոնց գործունեութեան մասին ոչինչ հայտնի չէ:

Այսպես՝ 1771 թ. Աթանաս վարդապետ Մակվեցի, 5 տարի:

Ազարիա եպիսկոպոս Գանձակեցի, մի քանի ամիս:

Եղիազար եպիսկոպոս Գանձասարեցի, երեք տարի:

---

371 Ջամչեան, Պատմ. Հայոց, Գ., եր. 840:

372 Բանաներորդ դարումն էլ Տաթևի վանահայրը քարացած ձեռագրիները կրակն է ածել վանքը մաքրելիս:

Գրիգոր վարդապետ Գանձակեցի, որ ութ տարի բարեկարգ վիճակի մեջ է պահել վանքը: Սա Ցամաքաբերդում գերի է ընկել լեզգիների ձեռքը և տարվել Ղզլար՝ ուր տեղացի հայերի ձեռքով ազատվել է և ինքը երաշխավորելով ազատել իր հետ գերի ընկած մի քանի ընկերներին: Ապա Աստրախանի ու Ղզլարի կողմերում ժողովարարություն է արել, որ ազատվի երաշխավորությունից և չորս տարվա այսպիսի աստանդական կյանքից հետո վախճանվել է Ղզլար քաղաքում 1805 թ.:

1807 թ. վանահայր է կարգվել Սարգիս վարդապետ Ոսկանապատցին, որ Թիֆլիսում ժողովարարություն անելով, փոքր-ինչ բարեկարգել է վանքի դրությունը:

Սրա ժամանակ վանքում նշանավոր են եղել Ռափայել Գանձակեցին, որ կրոնավորների վարժապետ է եղել, Մակար վարդապետ Շամչատինեցին, լավ սաղմոսերգու, որ սառած լճի վրայով Ցամաքաբերդ գնալիս՝ խորասուզվել է լճի մեջ, և Մխիթար վարդապետ Շամքորեցին, որ բավականաչափ գրքեր է հավաքել վանքում և ընտիր մատյաններից օրինակել տվել:

Սարգսի ժամանակ վանքի միաբաններն եղել են յոթ վարդապետ, յոթ սարկավագ, երեք դպիր և չորս մահտեսի:

1813 թ. վանք է այցելել Մորիե անգլիացին, Պարսկաստանի դեսպանի ընկերը, որն իր ուղեգրության մեջ տվել է նաև կղզու պատկերը:

Մի քանի տարիներից հետո եկել է նրա հայրենակից Քեր-Բորտերը, որը զանազան տեղեկություններ է տվել Սևանա լճի մասին:

1825 թ. վանք է այցելել Զաքարիա վարդապետ (ապա եպիսկոպոս և Երևանի առաջնորդ) Գուլասպյան Բեհբությանց Տփխիսեցին, որ գրել է Սևանի համառոտ պատմությունը «Վէպ ծովակին Գեղամայ» խորագրով:

Հաջորդ, 1826 թ. վանք է այցելել Այխալալտ երկրաբան գերմանացին:

Սարգիս վարդապետը 19 տարի վանահայրություն անելուց հետո հրաժարվել է 1828 թ. և միաբանությունը նրա փոխարեն ընտրել է Հովհաննես վարդապետ Տեր-Մարտիրոսյանցին, որ Ղազախի գավառի Հաչաջուր գյուղից է եղել: Սրա խնդրով էջմիածնի Սինոդի անդամ Մանուել վարդապետ Գյումյուշխանեցին գրել է «Պատմութիւն անցից անցելոց Սէվանայ վանուց» աշխատությունը, քաղելով տեղեկություններ ինչպես գրավոր, այնպես և բանավոր աղբյուրներից և հասցնելով վանքի պատմությունը մինչև իր օրերը, 1830 թ.:

Հովհաննես վարդապետը վերանորոգել է ս. Աստվածածնի եկեղեցու տանիքը, որի ծախսը հայթայթելու համար Շաքիի կողմերը ժողովարարության համար ուղարկված Բայազետցի Կարապետ վարդապետն ավազակներից սպանվել է իր ծառայի հետ, ինչպես վկայում է Աստվածածին եկեղեցու արևմտյան դռան աջ կողմում դանված արձանագրությունը:

Հովհաննես վարդապետը չինել է նաև նոր խցեր, նորոգել է ս. Աստվածածին եկեղեցու գավիթը և մառանները լմնցի Ստեփանոս վարդապետի ծախսով:

Այսքան շինություններ անելուց հետո Հովհաննես վարդապետը հրաժարվել է առաջնորդությունից, գնացել Երուսաղեմ և վերադարձին Ալեքսանդրապոլում հիվանդացել և մեռել 1840 թ.:

Սրա առաջնորդության միջոցին, այն է երեսնական թվականներին, վանքի միաբանները եղել են 22 հոգի, որոնցից 10 վարդապետ, երկու սարկավագ և 10 մահտեսի:

Այս միջոցներին, 1836 թ., հայոց եկեղեցին ընդունել է Ռուսաց կառավարությունից Պոլոժենիան, որ վերափոխություն է ձգել նաև Սևանա վանքում: Մինչև այս՝ Գեղարքունիքի 24 գյուղերը կազմում էին Սևանի թեմը և Սևանի վանքի վանահայրը միաժամանակ և առաջնորդ է եղել այդ թեմի, սակայն Պոլոժենիայի զորությամբ Սևանա թեմը միացել է Երևանի թեմին, և Սևանի վանքը ընկել է կոնսիստորիայի իրավասության տակ, պարտավորվելով տարեկան ելևմտի հաշիվ ներկայացնել նույն տայանին, վերապահելով իրեն միայն այն արտոնությունը, որ երբ մուտքը ծախսից ավելանա՝ մնա վանքի սեփականություն, իսկ եթե պակասի՝ հոգևոր տայանը մի որևէ կարգադրություն անի լրացնելու:[373]

Այսպես ուրեմն՝ Սևանի վանահայրերը զրկվել են առաջնորդական թեմից և տիրոջոսից և մնացել լոկ վանահայրեր՝ ընտրվելով միաբանությունից և հաստատվելով հոգևոր բարձրագույն իշխանությունից:

Հովհաննես վարդապետ վերջին առաջնորդից հետո, առաջին վանահայր է կարգվել Մինաս վարդապետը, 1840 թ., որ հազիվ մի տարի պաշտոն է վարել. նրան հաջորդել է 1841 թ. Հարություն եպիսկոպոս Գանձակեցին, իսկ մի քանի ամսից հետո՝ Հովհաննես վարդապետ Անտոնյան Տփխիսեցին, որի ժամանակ Սևան է եկել Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանը: Սա գլխավորապես օգտվելով Զաքարիա վարդապետ Բեհբուդյանցի տետրակից՝ բավական մանրամասն տեղեկություն է գետեղել Սևանի մասին «Ստորագրություն կաթողիկէ ս. Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ» աշխատության մեջ:

Հովհաննես վարդապետը չուտով տեղափոխվել է Կարմիր վանք:

Սրան 1848 թ. հաջորդել է Մկրտիչ վարդապետը, որին երեխա ժամանակ Շիրակից փախցրել էին պարսիկ ավազակները և Երևանում ծախել վերոհիշյալ Հովհաննես վարդապետին, որ բերել էր Սևան, կրթել և վարդապետ ձեռնադրել: Սրա վանահայրության ժամանակ մի հայ գավառապետ իր ընտանիքով ցանկացել է այցելել Սևանա վանքը, սակայն միաբանությունը

---

[373] Սարգիս եպիսկ., Սևանա վանքը, Հովիվ, 1906 թ., № 42:

թույլ չի տվել, որովհետև բացի Մարիամ տիկնոջից և արշավանքների ժամանակ Սևան ապաստանող ամբողջ ազգաբնակչության հետ եկած կանանցից, ոչ մի կին իրավունք չի ունեցել այս ճգնության վայրը մտնելու: Հայ գավառապետը վիրավորված դիմել է Ներսես Ե կաթողիկոսին և նրանից թույլտվություն ստանալով՝ եկել: Միաբանները սաստիկ վրդովվել են, և նույնիսկ Սարգիս վարդապետը, որ կին չտեսնելու նպատակով միշտ խուսափել է գյուղ մտնելու և այս պատճառով էլ «Քյանդա-գիրմազ» (Գյուղչմտնող) կոչվել, հրացան առած դուրս է եկել արգելելու, սակայն իզուր, գավառապետը իր կնոջ հետ մտել է կղզին և այսպիսով՝ Ներսես կաթուղիկոսի կոնդակի համեմատ՝ այս արգելքը վերացել է:

Այս Մկրտիչ վանահոր ժամանակ 1856 թ., Ներսես Ե կաթողիկոսը հաստատել է Սևանում ևս վանական կառավարություն՝ Հարություն, Կարապետ և Հովսեփ վարդապետներից՝ վանահոր նախագահության և Գեղարքունիքի գավառի «Հոգևոր գործոց տեսչի» (Բարսեղ աղա Արծրունու) վերահսկողությամբ,[374] սակայն այս բարեկարգությունը տևել է միայն մինչև Ներսես Ե մահը:

Մկրտիչ վարդապետը 10 տարի վանահայրություն անելուց հետո վախճանվել է 1858 թ., և նրան հաջորդել է Կարապետ վարդապետը, Ղազախի Քարվանսարա գյուղից: Սա ավելացրել է ուխտավորների սենյակները Բարսեղ աղա Արծրունու ձեռնավորությամբ: Վերջինս իր ծախսով չինել է նաև երկու սենյակ՝ բուժքրաստիճան հյուրերի համար:

Երեք տարուց հետո Կարապետ վարդապետը հրաժարվել է պաշտոնից և 1861 թ. նրա փոխարեն վանահայր է կարգվել Հարություն վարդապետ Մառջանյան Շիրակեցին: Սա չինել է վանքի մառանը և Ցամաքաբերդում նորոգել «դրսի տներ» կոչված հյուրատունն ու չոմարանը. միևնույն ժամանակ կղզու մեջ տնկել է ուռենիներ և բարդիներ, ու պարտեզներ չինել:

Մառջանյանի օրով թեյ գործածելու սովորությունը մտել է վանքը: Նախ միայն ուխտի օրերին են թեյ խմել, հետո ամեն օր: Այս թեյի և այլ մանր ծախսերի համար կարգադրվել է «ժամոց» բաժանել միաբաններին՝ տարեկան 36 ռ. վարդապետներին, 15 ռ. սարկավագներին, 9 ռ. դպիրներին և 6 ռ. մահտեսիներին:[375]

Մառջանյանի օրով, 1862 թ. մեռել է Մելքոն ճգնավոր Տփխիսեցին, որ 40 տարի չարունակ խիստ ճգնավորական կյանք էր վարել այս կղզում, բացել էր ս. Հարության եկեղեցու հիմնապատերը և չինել բավականաչափ խցեր:

Հարություն վարդապետը լինը տարի վանահայրություն անելուց հետո հրաժարվել է պաշտոնից, գնացել Երուսաղեմ, և ապա կրկին վերադարձել

---

[374] Կոնդակներ Ներսես կաթողիկոսի 1856 թ. սեպտ., № 157 և 305:

[375] Սարգիս եպիսկոպոս, Սևանա վանքը, Հովիվ, 1906 թ., № 48:

Սևան, ուր հոդացավից տառապել մինչև 1896 թ., երբ մեռավ և թաղվեց ս. Աստվածածին եկեղեցու մոտ՝ վանահայրերի հանգստարանում:

Հարուբյուն վարդապետի հրաժարվելուց հետո կրկին վանահայր է կարգվել Կարապետ վարդապետ Բյուլբյուլյանը 1869 թ.: Սա ևս գլխավորապես զբաղվել է շինություններով. նախ ծածկել է ս. Աստվածածնի տանիքը երկաթե թիթեղով, ապա ավելացրել է ուխտավորների սենյակները, Ելենովկա գյուղի մոտ շինել է երկու կարավանատուն, Զանգի գետի վրա՝ նոր սիստեմի երկու ջրաղաց. մի տուն է գնել Երևանում և մի ջրաղաց՝ Նոր-Բայազետում և վանքի վրա հաստատել ավել Ելենովկայի մոտ նոր բացված թերակղզին:

1871 թ. ամռանը Գևորգ Դ կաթողիկոսը այցելելով Սևան կղզին՝ շատ հավանել և որոշել է բլրի գագաթին հայրապետական ամառանոց կառուցել, սակայն բժիշկների խորհրդով փոխել է որոշումը, որովհետև լճի խոնավությունը կարող է վատ ազդել:

Տեսնելով միաբանության սաստիկ տգիտությունը, Գևորգ Դ կաթողիկոսը վերադարձին էջմիածնից ուսուցիչներ է ուղարկել՝ ուսուցանելու միաբաններին. նախ եկել է Հովակիմ սարկավագը, ապա Եղիա վարդապետ Ջալալյանը, որին հաջորդել է Հովակիմ վարդապետ Ղամենքյանը: Այս գեղեցիկ գործը տևել է մինչև 1880 թ.:

Բյուլբյուլյանի երկարատև վանահայրության միջոցին, 1890 թ., Իտալիայի թագաժառանգ (այժմ թագավոր) Վիկտոր Էմմանուելը այցելեց Սևանա վանք ևս, հիանալով լճի աքանչելի տեսքից:

1892 թ. Բյուլբյուլյան վանահայրը 25 տարի վանահայրություն անելուց հետո վախճանվեց, նրան հաջորդեց Գալուստ վարդապետը, որ միայն յոթ ամիս պաշտոն վարելուց հետո հրաժարվեց: Այս ժամանակ Սինոդի հրամանով Սևան եկավ Սահակ վարդապետ Ամատունին, և միաբանների ընդհանուր հավանությամբ, վանահայր ընտրեց Գրիգոր վարդապետ Ակուռեցուն, 1892 թ.: Սա ազդությամբ քուրդ էր, Ակռռիի կործանման ժամանակ հանդուժ գտնվելով՝ սարսափած փախել, ազատվել էր, ապա Դարաչիչակի Ալափարս գյուղի տանուտերի մոտ ծառայության էր մտել, քրիստոնեություն ընդունել, հետո եկել Սևան, ուսում առել և 20 տարի վանքին ջերմեռանդությամբ ծառայելուց հետո, 1872 թ., վարդապետ ձեռնադրվել: Սա համոզեց նաև իր հորեղբորը, որ քրիստոնեություն ընդունի:

Սահակ Ամատունին Գյումյուշխանեցու պես վանքի բոլոր կալվածների և իրեղենների ցուցակը[376] և եկամտից նախահաշիվը կազմեց և առաջարկեց Սինոդին հաստատության, և սա՝ վավերացնելով ու ժապավինելով, վերա-

[376] Ձեռագրերի ցուցակը, առանց հիշատակարանների, տպված է Սմբատյանի Գեղարքունիքում, եր. 128:

դարձրեց վանքին: Այս ցուցակով վանքն ուներ 112 կտոր ձեռագիր և 541 կտոր տպված գիրք:

Գրիգոր վարդապետը երեք տարի վանահայրությունն անելուց հետո, 1895 թ., հրաժարվեց և նրա փոխարեն ընտրվեց Սարգիս վարդապետը, այժմ եպիսկոպոս Փիլոյանը:

«Կորած Մագարիտ» վեպի հեղինակ և նույն հերոս, հեզահամբույր և ուսումնասեր նորակա վանահայրը 1897 թ. շուշեցի Ավետիք Բալայան Ղուկասյանի ծախսով շինեց դպրոցական մի գեղեցիկ շենք, սրբատաշ քարից, թիթեղածածկ, հինգ մեծ սենյակներից բաղկացած: Նաև Բաքվում ժողովարարություն անելով, կառուցեց միաբանների համար նոր, գեղեցիկ խցեր, 10 սենյակներից և հինգ նախասենյակներից բաղկացած՝ ընդարձակ պատշգամբով, ինչպես նաև Բուդաղյան եղբայրների ծախսով, վանահոր համար բնակարան՝ չորս սենյակներից և մի նախասենյակից բաղկացած: Բաքվեցի Լյուդվիգ Սարգսյանի և վանքի միաբան Հանգուցյալ Սողոմոն սարկավագի ծախսով էլ կառուցեց ս. Աստվածածին եկեղեցու սրբատաշ, գեղեցիկ զանգակատունը: Այժմ էլ շինում է ուխտավորների համար 15 սենյակներից բաղկացած ընդունարան:

ՍԵՎԱՆԻ ՎԱՆՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԷՎՈԼՑՈՒՑԻԱՆ

Գծելով Սևանի վանքի պատմությունը, որքան թույլ են տալիս նյութերը, տեսնում ենք, որ սա ունեցել է երեք դլխավոր շրջան: Առաջինում (305-874 թթ.) նա հին մեհյանից փոխվել է վանքի և հավանորեն առանձին հասարակական ոչ մի դեր չի խաղացել, մանավանդ որ ոչ մի հիշատակություն չկա: Երբեմն միայն, այն էլ կղզու չնորհիվ, ժողովրդին իբր ապաստան է ծառայել, որովհետև իր ժամանակի համեմատ մի «անմատչելի ամրոց» է համարվել: Այս ծառայությունը նա մատուցել է նաև հետագա երկու շրջաններում:

Երկրորդ շրջանում (874-1836 թթ.), երբ ճգնավորությունը Հայաստանում էլ արդեն որոշ զարգացման է հասել, Մաշտոցը և նրա նման ճգնավորներ խմբվել են այս մեկուսացած, մանավանդ ձմեռն աշխարհից կտրված վայրը և մոռանալով հասարակական կյանքը՝ ճգնել: Ահա այս թ և ժ դարերի ոգու ազդեցությամբ՝ շինվել են գեղեցիկ եկեղեցիներ, նվիրել ահագին կալվածքներ, կազմակերպվել բավական մեծ միաբանություն, որը տվել է նույնիսկ կաթողիկոսներ՝ ինչպես Մաշտոցը (897 թ.) Ստեփանոս վանականը (970 թ.), Սարգիս ճգնակյացը (992-1019 թթ.), որոնք սակայն, նշանավոր են եղել նույնիսկ հայրապետական աթոռի վրա իրենց ճգնավորական կյանքով և ոչ հասարակական գործունեությամբ:

Այս երկրորդ շրջանում վանքի վանահայրերը միաժամանակ և Սևանի թեմի առաջնորդներ են եղել, սակայն Գեղարքունիքում չկա մի շենք, մի արձանագրություն, որ վկայեր այս առաջնորդներից գոնե մեկի հասարակական մի նշանավոր գործի մասին: Միջին դարերի համար Սևանը ամենահարմար տեղն է եղել գիտությամբ և դպրությամբ պարապելու, ձեռագրեր արտագրելու, և թեպետ ժամանակ առ ժամանակ սա, հիրավի, փայլել է իր Սարգիս վարդապետ Իմաստասերով և իր գրատնով, սակայն վանահայր Հովհաննես վարդապետի ձեռագրերը լիճը ածելու դեպքն արդեն բավական սևացնում է ամբողջ միաբանությունը, որովհետև եթե լինեին նրանց մեջ լուսավոր անձեր՝ նախ ձեռագրերը այդ դրության չէին հասնի և ապա մի վանահայր չէր համարձակվի այդպիսի մի վանդալական գործ անելու:

Երրորդ շրջանում (1836-1908 թթ.) վանքը զրկվում է առաջնորդական իրավունքներից, դառնում է սոսկ մի ճգնարան և ապաշխարության դատապարտված հոգևորականների աքսորատեղի: Այս շրջանում, թեպետ ժամանակի ոգու ազդեցությամբ, վանքը սկսում է արտաքուստ վերանորոգվել, չինվում են նոր ձևի կանոնավոր բնակարաններ, դպրոցական գեղեցիկ շենք, գրատուն և այլն, սակայն ներքուստ ապականվում է և այլասերվում:

Միաբանների կյանքը. Զաքարիա վարդապետ Բեհբուդյանը անցյալ դարի սկզբում (1825 թ.) այսպես է նկարագրում վանականների կյանքը, որ արտագրել են Շահխաթունյան և Փիլոյան եպիսկոպոսները. ես էլ հետևում եմ սրանց օրինակին՝ ավելացնելով այժմյան կյանքի նկարագիրը, որքան որ ես կարողացա թափանցել:

Եկեղեցական պաշտամունք. Ամեն օր, դիշերվա մեջ զանգի ձայնը լսելուն պես, միաբանները խմբով չտապում են եկեղեցի. ինչպես թե փողի ձայնով ժողովվում են հոգևոր պատերազմի: Նախ ասում են մի կանոն սաղմոս, ապա դիշերային ժամերգությունը մինչև «Ջքեն գոհանամք»: Ապա երկու կանոն սաղմոս՝ կանոնագլխով: Ապա դիշերային ժամի մնացած մասը, առավոտյան և արևագալի ժամը, պաս օրերին նաև երգերը: Ժամերգությունից հետո գնում են յուրաքանչյուրը իր խուցը, ուր կատարում են առանձնական աղոթք, ըստ ցանկության:

Ճաշի ժամից հետո նախ ասում են մի կանոն սաղմոս, ապա երեք ողորմեա, պաս օրերին նաև մեծ քարոզ և աղոթքները, ապա ճաշու ժամը: Ժամից հետո գնում են սեղանատուն ճաշելու, ուր նրանցից մեկը կարդում է Հարանց վարքից, ի լուր միաբանների:

Երեկոյան ժամից առաջ ասում են մի կանոն սաղմոս պաս օրերին: Ապա հայամավուր, չարչական, աղոթք, ապա երեկոյան ժամ, նրան կից ասում են խաղաղության ժամը:

Քնելուց առաջ ժողովում են եկեղեցի և ասում են «եկեսցե»: Եկեսցեից հետո գնում են խցերը, ոմանք քնում են իսկույն, և ոմանք առանձին աղո-

թում են ձիգ ժամերով: Մեծ պասին շատ քիչ են քնում. գիշերվա մեծ մասը նվիրում են աղոթքներին: Ոմանք օրական ութ կանոն սաղմոս ամբողջապես ասում են: Պատարագիչը սարկավագների հետ ամբողջ գիշերը հսկում է սաղմոսերգությամբ, իսկ բոլոր միաբանները տարվա մեջ տասը գիշեր մինչև առավոտ եկեղեցում ժամասացությամբ են հսկում, հինգ նավակատեաց օրերին, Տեառնընդառաջին, Ծաղկազարդին, Ավագ ուրբաթին, Նորկյուրակեին և Հոգեգալստեան:

Միաբանների վարքն ու բարքը. Սովորաբար հեզ ու խոնարհ բարք ունեն ամենայն հլուժությամբ ու հպատակությամբ: Երբեք տգեղ խոսք նրանց բերանից չի լսվի: Եթե մեկից վշտանան, իրրև պատասխան «հայրդ օրհնեմ» կասեն, իսկ վշտացնողը չի քնիլ առանց «մեղա» ասելու վշտացածին: Նրանց այոն՝ այո է, և ոչն՝ ոչ: Վարքով մաքուր են արատից:

Հասարակաբար օրը մի անգամ են ուտում. նրանց կերակուրը կազմում է լոբին, ոսպն ու մյուս ընդեղենները: Շաբաթը պաս են համարյա ամբողջ տարին, բացի շաբաթ, կիրակի և տոն օրերից, իսկ ուխտի օրերին նավակատեաց կերակրով են բավականանում: Ոմանք տաք կերակուր չեն ուտում, այլ լոկ հացով ու սառը ջրով են շատանում: Ոմանք օրերով ծոմ են մնում, բայց որքան կարելի է ծածուկ:

Ձմեռը կրակ չեն վառում. նրանց զգեստը մազեղեն է, և միատեսակ՝ վանահորից սկած մինչև հետին կրոնավորը: Վանահայրը չի կարող առանձին իր համար կերակուր պատրաստել տալ, առանց միաբանների հաճության: Ամեն ինչ հասարակաց է. ոչ ոք առանձին դրամ չունի, եղածը հասարակաց արկղումն է, որ ծախսվում է բոլորի համար հավասարապես:

Այսպես է եղել անցյալ դարի սկզբին, իսկ այժմ, իմ կարծիքով, այս միաբանությունն արդեն գտնվում է անցողական շրջանի մեջ. նախկին կրոնամոլությունը, ճգնավորական խիստ կյանքն արդեն որոշ չափով տեղի են տվել ծիսակատարության, կյանքի վայելքների հետևից ընկնելուն և բուսական կյանքով: Կրոնի ուժը թուլանալով՝ այժմյան միաբաններն այլևս ներքին մղում չեն զգում ինքնազրկանքի, հանուն Աստծո, եկեղեցուն, հասարակության ծառայելու. դիտության լույսն էլ դեռևս չի թափանցել՝ այդ եսականներին այլասեռ դարձնելու, այս պատճառով և զրկված թե կրոնի և թե գիտության հզոր գարկից՝ գնայուն դիակներ են ներկայացնում, զուրկ թե կրոնական և թե հասարակական իդեալներից, և ապրում են միայն բուսական կյանքով. առավոտը շատ վաղ են վեր կենում, գնում եկեղեցի, ժամ ասում, առանց, սակայն մի առանձին ջերմեռանդության, ապա վերադառնում նորից քնում մինչև ժամը 10-ը: Հետո վեր են կենում, յուրաքանչյուրը իր համար առանձին թեյ պատրաստում, խմում, և կամ՝ ամեն մեկը իր խցում ծալապատիկ նստում է մեջքը և գլուխը առաջ թեքած, լուռ և անշարժ՝ ժամեր շարունակ, առանց սակայն աղոթելու: Ժամը 4-ին կրկին խմբ-

վում են եկեղեցի՝ երեկոյան ժամերգության, որից հետո ամեն մեկը առանձնապես թեյ է պատրաստում իր համար և անվերջ խոսում: Ժամը յոթին կրկին հավաքվում են եկեղեցի «եկեսցե» կատարելու և անմիջապես պառկում քնում են: Այս կյանքը գրեթե նույնությամբ կրկնվում է համարյա ամբողջ տարին: Ամառը էլի որոշ փոփոխություններ, մտքի չփում մեկ-մեկ տեղի են ունենում, գալիս են ուխտավորներ, Վարդավառին և Աստվածածնին մեծ բազմություն է հավաքվում, միաբանները մի քիչ կենդանանում են, իրար անցնում, անքուն մնում, մի քանիսը նույնիսկ խնամք, հոգս տանում ուխտավոր կանանց, մինչդեռ երկարատև, սոսկալի ձմռան ընթացքում խեղճերը փակված խցերում, տանջվելով հոդացավից՝ աշխատում են իրենց կենդանական ջերմությունը պահպանել, սակայն մեկ-մեկ էլ, լավ օրերին, այցելում են մոտակա Յամաքարերդ և Գոմաձոր գյուղերը, որոնց բարոյական վիճակը այնքան էլ լավ չէ:

Թեև միաբանների սենյակներն այլևս նախկին գեհենափոր խցերը չեն, սակայն նրանց մեջ տիրող կեղտոտությունը և գարշահոտությունը Պետրոս ճգնավորի ժամանակից կարող է համարվել: Վանքում թեև գրադարան կա, սակայն կարդացող չկա, թեև լրագիր ստացվում է, սակայն երբեք հատուկ սրա համար վանքի նավակը չի ուղարկվում մոտակա Ելենովկա գյուղը՝ որ 0,5-1 ժամվա ճանապարհ է՝ բերելու: Այս պատճառով էլ երբեմն օրագրերի մի ամբողջ ամսվա համարները միանգամից են ստացվում և բաժանվում միաբաններին՝ չաքար փաթաթելու:

Այս անկենդանությանը գուցե կենդանություն կարողանար ներշնչել ներկա վանահայրը՝ սակայն նա էլ խորտակված սիրո վերջին փայլփլումն է ներկայացնում՝ աշխատելով վանքի արտաքինը բարեփոխել:

ՎԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Առաքելոց եկեղեցի. Մարիամ Սյունյաց տիկնոջ չինած այս եկեղեցին բարձրանում է բլրի գագաթին: Շինված է սև, հասարակ քարից, իսկ կաթողիկեն՝ կարմիր, սրբատաշ քարից: Եկեղեցին խաչաձև է, 13,68 մ երկարության, 10,80 մ լայնության և մոտ 16 մ բարձրության: Զորս որմնասյուների վրա բոլորում են ռոմանական կամարներ, որոնց վրա հանգչում է հայկական ցածր կաթուղիկեն:

Ունի մի սեղան և երկու ավանդատուն, որոնցից հյուսիսայինի դուռը դրսից է, իսկ ներսում կա մի պատուհանաձև բացվածք: Ավանդության ասելով՝ Մարիամ տիկինը այսպես է չինել տվել, որ կարողանա ժամերգության ժամանակ ինքն այդտեղ առանձնացած աղոթել, որովհետև իբրև կին՝ իրավունք չի ունեցել ճգնավորների հետ միասին լինելու: Սեղանը զար-

դարված է խաչկալով, ուր բազմեցրած է խաչելության պատկերը: Եկեղեցին լուսավորվում է վեց փոքր և նեղ պատուհաններով, որոնցից երկուսը գտնվում են կաթուղիկեի վրա: Ունի երկու դուռ, հարավային և արևմտյան կողմերում: Հարավային դուռը չինված է ընկուզենուց, 1,71x0,81 մ մեծության: Թխագույն է, և ամբողջ երեսը ծածկված է սքանչելի քանդակներով: Դռան վերին մասում քանդակված է չորեքկերպյան աթոռը, վրան Հիսուսը բազմած: Սրա ներքևում մի ճաճանչավոր խաչի աջ կողմում կանգնած են Աստվածածինը և Հովհաննես Մկրտիչը, որոնց անունները նույնպես փորագրված են պատկերների մոտ: Սրանից ներքև երկու չարքով քանդակված են տասներկու առաքյալների պատկերները, որոնց մեջտեղից թևատարած իջնում է աղավնակերպ ս. Հոգին՝ լույսի ճառագայթներ սփռելով Լուսավորչի, Աշխեն տիկնոջ և Տրդատ թագավորի վրա: Մեջտեղում կանգնած է Աշխեն տիկինը՝ թագը գլխին, աջ կողմում՝ Լուսավորիչը, ձախում՝ Տրդատ, խոզի գլխով: Սրանց երկու կողքին առանձին փոքրիկ շրջանակների մեջ քանդակված են Վրթանես և Արիստակես՝ վեղարով և փիլոնով ծունկ չոքած: Այս պատկերների տակ կա գեղեցիկ ուռուցիկ շրջանակ, որի պատկերը տալիս ենք, առնելով նկարիչ պ. Ֆեթվաճյանի ժողովածուից: Դռան եզրերը պատած են նուրբ քանդակներով, որոնց միջև գրված է մի ընդարձակ արձանագրություն, որից երևում է, որ դուռը չինել է «անարժան Աբրահամը» 1521-1557 թթ., Դանիել վարդապետի հրամանով:

Առաքելոց եկեղեցու մյուս, արևմտյան դուռը ևս չինված է ընկուզենուց և սևագույն է: Դռան ամբողջ երեսի վրա քանդակված է մի մեծ խաչ՝ շրջապատված ծաղկանկար գեղեցիկ քանդակներով: Ինչպես երևում է վրայի արձանագրությունից՝ չինված է 1176 վրկ. թվին, Հովհաննես հյուսնի ձեռքով և Քյուրդ իշխանաց իշխանի հրամանով:

Եկեղեցու արևմտյան կողմում բարձրանում է մի դավիթ, որ այժմ փայտածածկ է, հենած փայտե սյուների վրա: Վերջիններիս խոյակները բավական գեղեցիկ են, որովհետև սրանց վրա քանդակված են թռչուններ, քնար, խաչ, տերևներ և այլն: Գավթի աջ կողմում գտնվում է խորանաձև մի շենք: Այս գավթում ուշագրավ են չորս մեծ տապանաքարեր, որոնցից այն, որ գտնվում է արևմտահյուսիսային անկյունում, կրում է հետևյալ տապանագիրը. «Այս է հանգիստ պարոն Քուրդայ»: Թերևս այս այն Քյուրդ իշխանի տապանն է, որի հրամանով 1176 թ. վերանորոգվել է Առաքելոց եկեղեցու՝ այս գավթում բացվող արևմտյան դուռը, ինչպես երևում է նրա վրայի արձանագրությունից:

Ս. Կարապետ եկեղեցի. *Բարձրանում է բլրի գագաթին, Առաքելոց եկեղեցուց փոքր-ինչ արևմուտք: Շինված է սև, անտաշ քարով, իսկ կաթուղիկեն կարմիր, սրբատաշ քարով, երկարությունն է 9,36 մ, լայնությունը 7,20 մ և բարձրությունը 10 մ: Եկեղեցին խաչաձև է, անսյուն, ռոմանական կա-*

մարններով և հայկական ցածր կամուղիկներով, որի մեջ բացվում են չորս փոքրիկ պատուհաններ: Փոքր են նաև մյուս երեք պատուհանները, որ բացվում են եկեղեցու պատերի մեջ: Եկեղեցում կա մի սեղան և միայն մի, ձախակողմյան ավանդատուն: Սեղանը զարդարված է դաստառակի և Քրիստոսի մկրտության պատկերներով: Միակ, հարավային դռան առջև եղել է փայտաշեն մի գավիթ,[377] որ այժմ քանդված է:

Կամուղիկի վրայի արձանագրությունից երևում է, որ եկեղեցին վերանորոգվել է 1714 թ.:

Ս. Աստվածածնի եկեղեցի. Սա կառուցված է կղզու հարավ-արևմտյան կողմում տարածվող տափարակի վրա և, ինչպես տեսանք, հիմնարկված է Մաշտոց վարդապետի ժամանակ Սյունյաց Մարիամ տիկնոջ ծախսով: Եկեղեցին չինված է սև, սրբատաշ քարից, բաղկացած է ժամատնից, մի նորակառույց զանգակատնից և մի փայտաշեն գավթից: Ժամատունը օրորոցաձև է, անգմբեթ, 10,40 մ երկարության, 10 մ լայնության և 9 մ բարձրության: Դրսից ճարտարապետական ոչ մի ուշագրավ բան չկա: Ներսից երկու հասարակ, ամբողջական և վեց որմնասյուների վրա բոլորում են ռոմանական կամարներ և նույնպիսի կամարակապ ձեղուն: Ունի մի սեղան և երկու ավանդատուն: Հինգ փոքրիկ և նեղ պատուհաններ աղոտ լույս են սփռում. սեղանը զարդարված է գեղեցիկ խաչկալով, և ս. Աստվածածնի պատկերով, որ Ալեքսանդրապոլի «Յօթը-վերք» կոչված պատկերի ընդօրինակությունն է: Խաչկալի առաջ կախված է մի վարագույր, որ վրա մանր կտորեղեններով պատկերներ են հյուսված, մեջտեղում Քրիստոսի հարության, չուրջը՝ առաքյալների: Այս վարագույրը բավական գեղեցիկ է և ինքնատիպ: Ձեղունից կախված են երկու ջահ և բավականաչափ կանթեղներ: Այս ժամատունը ունի երկու դուռ. արևմտյանի առաջ չորս սյուների վրա հաստատված է մի գեղեցիկ, զմբեթազարդ զանգակատուն, իսկ հարավայինի առաջ՝ մի հասարակ, փայտաշեն գավիթ: Ամենօրյա ժամասացությունը այժմ այստեղ է կատարվում:

ՇԵՆՔԵՐ

Սևանի վանքում բացի երեք եկեղեցիներից, կան նաև մի քանի այլ շենքեր, ինչպես 1. վանահոր բնակարանը, 2. միաբանների սենյակները կամ խցերը, 3. ուխտավորների համար սենյակներ, 4. մառան, խոհանոց, փայտատուն և 5. վանական դպրոց: Հիշատակված այս բոլոր շենքերն էլ տեղավորված են կղզու տափարակի վրա. բլրի վրա Առաքելոց և ս. Կարապետի

[377] Շահխաթունեան, եր. 217:

եկեղեցիների մոտ կան մի քանի խարխուլ խցեր, այժմ գործածությունից բոլորովին ընկած:

Վանահոր բնակարանը շինված է սրբատաշ քարից, և դետնի մակերևույթից մոտ 2 մ բարձր է՝ խոնավությունից փոքր-ինչ ազատ լինելու: Բաղկացած է մի նախասենյակից, երկար նրբանցքից և չորս փոքրիկ, մաքուր սենյակներից:

Միաբանների սենյակները շինված են մի շարքով, դարձյալ գետնից 2 մ բարձր, սրբատաշ քարով: Սենյակների թիվը տասն է, որոնցից յուրաքանչյուր երկուսը բացվում են մի փոքրիկ նախասենյակի մեջ: Սենյակների առջև տարածվում է մի ընդարձակ պատշգամբ:

Ուխտավորների ընդունելությանը հատկացրած սենյակները շատ խղճալի, հին շենքեր էին, որ այժմ քանդել են և նորն են կառուցում:

Դպրոցական շենքը կղզու բոլոր շենքերից գեղեցիկ է, միայն ափսոս, որ գետնից մի փոքր-ինչ բարձր չէ շինված, խոնավությունից փոքր-ինչ ավելի ազատ լինելու: Մի երկար նրբանցքի մեջ բացվում են չորս մեծ, լուսավոր սենյակներ, որոնցից մեկը ծառայում է իբր վանքի դրադարան-թանգարան:

Իբրև մառան, խոհանոց, փայտատուն ծառայում են հին սեղանատան և հին խցերի փոքր-ինչ վերանորոգված շենքերը:

ՎԱՆՔԻ ՍՐԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԶԱՐԴԵՐՆ ՈՒ ԱՆՈՒՆԵՐԸ

Վանքի ամենանշանավոր սրբությունը սուրբ Նշան կոչված խաչն է: Սա երկաթե մի մեծ խաչ է, կենտրոնում, ապակու տակ ամփոփված խաչափայտի մասից:

Ավանդության ասելով, այս խաչը շինված է այն կոնքի կտորից, որի մեջ Աստվածածինը լողացրել է Մանուկ Հիսուսին: Թադեոս առաքյալը այդ կոնքից «առանց գործիքի» երեք խաչ է պատրաստել, որոնցից մեկը սա է, երկրորդը գտնվում է Նախիջևանի գավառի Երնջակա ս. Կարապետի վանքում և կոչվում է Հազարափրկիչ, իսկ երրորդը՝ Խերսոնի նահանգի Գրիգորոպոլ քաղաքում, ուր տարել է Անիից գաղթող ժողովուրդը:

Սևանա վանքի այս սուրբ Նշանը կոչվում է նաև Կոթա սուրբ Նշան, միաժամանակ Գեղարքունիքի Կոթա վանքում պահված լինելու պատճառով: Այս խաչը միաժամանակ էլ պահվել է Հայր Հովհաննու կամ Մարդաղավնյաց վանքում, ուր նրա գործած հրաշքի նկարագրությունը կպատմենք նույն վանքի ստորագրության մեջ: Ոչ միայն բազմաթիվ ուխտավորներ են գալիս Սևան սուրբ Նշանը համբուրելու, այլև գրեթե ամեն տարի հասարակական մի դժբախտության, համաճարակների, երաշտի, կարկտի և

այլ ժամանակ ժողովուրդը գալիս, տանում է ս. Նշանը՝ գյուղերում անդաստան կատարելու:

Բացի այս հռչակված սուրբ Նշանից, Սևանում կան նաև հետևյալ խաչերը. արծաթե, ոսկեզօծ մի խաչ, որի մեջ կա կենաց փայտից մի մասն: Սրա մասին մի ավանդություն ասում է, թե Աչոտ Թագավորի Մաշտոց վարդապետին տված է, մի ուրիշ ավանդություն՝ Սյունյաց Բյուրեղ տիկնոջ, Հեղակլ Հունաց կայսրից ստացած խաչափայտի մի մասն է համարում: Նույն խաչափայտի մի ուրիշ մասը գտնվում է Տաթևում՝ «Ավագ սուրբ Նշան» անվամբ, մի մասն էլ Վայոց ձորում՝ «Արկազու սուրբ խաչ» անվամբ:

Մի արծաթե մեծ խաչ, որ հիշատակ է Զիլֆախյանց եղբայրների, 1656 թ. նվիրված:

45 արծաթե խաչեր, որոնցից վեցի մեջ ամփոփված են հետևյալ սրբերից մեկի մասունքը՝ Պողոս առաքյալի, Գևորգ զորավարի, Մինաս Զինավորի, Հակոբ առաքյալի, ս. Կարապետի, Հակոբ Մծբնա Հայրապետի:

Թուջե մի խաչ ևս կա, որի մեջ ամփոփված է Վարդան զորավարի ատամը:

Երկու հատ էլ փայտե խաչեր կան, նուրբ քանդակներով և եզերքը արծաթով պատած:

Ուշագրավ են նաև չորս հատ արծաթե ոսկեզօծ մասնատուփեր, տասը հատ նույնպիսի սկիհներ, երեք հատ արծաթե բուրվառներ, երկու հատ արծաթե խնկատուփ, մի հատ արծաթե մեռոնատուփ, մի ղույգ արծաթե քշոցք, մի հատ արծաթե ոսկեզօծ խաչվառք:

Բավականաչափ եկեղեցական զգեստների մեջ աչքի են ընկնում Դավիթ կաթողիկոսի եպիսկոպոսական թագը և եմիփորոնը, չորս արծաթապատ սաղավարտները, եպիսկոպոսական փղոսկրե գավազանը և այլն:

ՎԱՆՔԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Ղուկասյանի չինած գալրոցական չենքի սենյակներից մեկը դարձրած է գրադարան և այստեղ բավական խնամքով պահվում են մոտ ութ հարյուր կտոր տպագրված և 112 ձեռագրեր՝ մեծ մասամբ կրոնական բովանդակությամբ:

Ձեռագրերի ցուցակը նախ կազմել է Եղիա արեղա Ջալալյանը՝ 1870 թ., ապա Սահակ վարդապետ Ամատունին՝ 1892 թ.: Այս երկու ցուցակներն էլ շատ համառոտ են, նույնիսկ քաղվածքներ հիշատակարաններից չունեն: Ամատունու կազմածը տպված է Մեսրոպ-արքեպիսկոպոս Սմբատյանի «Տեղագիր Գեղարքունքի գաւառի» մեջ: Սրանից անհամեմատ մանրամասն և հիշատակարանների քաղվածքներով, թեպետև դարձյալ ոչ լիակատար, կազմել է պրոֆ. Ն. Մառը՝ 1890 թ., որ և տպվել է 1892 թ. ռուսերեն՝ Մոսկվայում և հայերեն թարգմանությամբ՝ Վիեննայի Մխիթարյանների

մոտ: Վերջերս Թովիչյանը ևս կրկին կատարել է այդ աշխատանքը, սակայն դեռևս չի հրատարակել:

Ի նկատի ունենալով, որ պրոֆ. Մառի կազմած ցուցակը արդեն բավական մանրամասն է՝ ես ավելորդ համարեցի կրկին կազմել:

Ձեռագրերից ամենահինը մի ավետարան է՝ հավանականորեն ժ դարից:

ՎԱՆՔԻ ԿԱԼՎԱԾՆԵՐԸ

Սևանա վանքն այժմ ունի հետևյալ կալվածները.

ա. Ցամաքաբերդ և Գոմաձոր գյուղերը, իրենց հողերով, որ հասնում է 2273 դես. և 140 քս: Աչոտ Թագավորի նվիրած վեց գյուղերից մնացել են միայն այս երկու գյուղը: Սրանից տարեկան եկամուտը առնվազն 1000 ռուբլուց ավելի է:

Մի թերակղզի Ելենովկա և Օրդակլու գյուղերի միջև, չահագործվում է իբր խոտատեղի և ձկնորսատեղի, կապալով է տրվում տարեկան 4-500 ռուբլիով:

Երևանում 2 տուն և չորս այգի:

Թիֆլիսում 5 խանութ և մի այգի:

Զանդի գետի վրա 3 ջրաղաց, որոնցից մեկի նոր ձևի, երկաթե:

Նոր-Բայազետում 2 ջրաղաց և այլն:

Այս կալվածները տարեկան տալիս են 5-6000 ռ. եկամուտ:

Բացի սրանցից վանքն ունի 5000 ռ. արքունի դանձարանում և մի կտակագիր՝ հետևյալ բովանդակությամբ. 1890 թ. Թիֆլիսեցի Ալեքսանդր Թայիրյանը իր որդի՝ Սևանում ճգնությյան ընդունված Ղազար վարդապետի հիշատակին 3,500 ռ. դրամ դրեց արքունի դանձարանում, որ 30 տարի չահեցնելուց հետո, այն է 1920 թ., այդ դումարով Սևանի վանքում ուսումնարան բացվի:[378]

---

[378] Հրամանագիր Երևանի կոնսիստորիայի 1890 թ., № 2889: Ծան. 1905 թ. կալվածները կառավարության ձեռքին էին:

ՎԱՆԴԻ ԵԼԵՎՄՈՒՏԸ ՎԵՐՋԻՆ ԵՐԵՔ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ
(Վանահոր ցուցմամբ)

Մուտք	1905թ.		1906թ.		1907թ.	
	Ռ	կ	Ռ	կ	Լ	կ
1. Առ 1 հունվ. մնացած դրած	32	14	23	58	1023	47
2.Ուսչ համբույր եկեղեցու	220	90	264	18	238	39
3. Արդյունք վերին վանքերից	31	44	30	7	50	25
4. Այլ համբույր ուխտավորներից	170	30	209	28	118	87
5. Մոմի վաճառումից	316	60	390	-	436	-
6. Գառների վաճառումից	236	10	121	70	151	90
7. Մորթիքի վաճառումից	108	87	131	82	114	95
8. Շուչպանների վաճառումից	11	20	15	20	7	60
9. Նվերներ ուխտավորներից	398	10	804	70	258	50
10. Ս. Նշանի արդյունք գյուղերից	1450	-	377	12	558	44
11. Անասնեղենի վաճառումից	65	70	51	50	62	-
12.Հացահատիկի վաճառումից	-	-	468	5	1554	-
13. Կալված. ստացած արդյունք	-	-	836	-	1268	-
Գումարը	3041	35	3823	20	5849	37

Ծախք	1905թ.		1906թ.		1907թ.	
	Ռ	կ	Ռ	կ	Լ	կ
1. Մնունդ միաբանութ. և հյուր	459	12	458	99	335	90
2.Հանդերձեղեն և անկողիններ	756	76	145	99	612	98
3. Վառելափայտ, ածուխ, ցան և նավթ	545	66	455	94	458	-
4. Ժամոցադրամ միաբանութ.	368	-	365	50	361	-
5. 5 նավավարի և 3 ծառայի վարձ	300	-	300	-	300	-
6. Ճան. ծախս. և բեռնավարձ	152	6	126	80	34	50
7. Աղքատներին նպաստ	56	57	75	55	28	50
8. Մոմ եկեղեցու համար	23	62	33	28	20	45
9. Գրքերի և լրագրերի	15	11	54	30	23	10
10. Շինության և նորոգության	56	29	195	90	3207	-
11. Մշակների վարձ	74	75	41	30	68	47
12. Կալվածների հարկ	-	-	178	33	148	88
13. Տնտեսական մանր ծախսեր	209	83	269	85	199	41
Գումարը	3017	77	2699	73	5797	61

Առաքելոց եկեղեցի. Արևմտյան դուռն վրա.

Ի թուին Հայոց ՈԻԸ (1176) նորոգեցաւ դուռն սուրբ եկեղեցւոյս Հրամանաւ իշխանաց իշխան Քրդին և ձեռամբ Յոհաննիսի Հիւսանն, որք ընթեռնույք յիշեսջիք:

Հարավային դուռն վրա.

ՋՀԱ (1522) թուականի
ԼԸ թիւ աւելի (1557)
Յաթոռակալութեան Տեառն Սարգսի
ի խանութեան Յաղուպ բէկի
Ծաղկեցաւ դուռն տաճարի
Առաքելոցն Քրիստոսի
Հրամանաւ սուրբ վարդապետի
Եռամեծիս Դանիէլի
եւ սիրելի որդւոյ սորին
եպիսկոպոս տէր Ներսէսի
Ջեռամբ սորին աշակերտի
Անարժանիս Աբրահամի
Նաեւ եղբաւր մեր սիրելի
Շնորհաւք ի լի Գրիգորիսի.
Ցոտս անկանիմ ամենայնի
Հայցել Տեառնէ պարգեւ ձրի
Րաբունապետիս համայն ազգի,
եւ ծնողացն իւրոց բարի
Կարապետ քահանայի
եւ մաւրն համօրի:

Եկեղեցու հարավային ավանդատան վրա՝ արտաքուստ.

Շնորհաւք և ողորմութեամբ ամենազօր էին Աստուծոյ մեք երեք հարազատ եղբարքս Սուլխան, Զալ և Զօրապ տվանք նորոգել սուրբ եկեղեցիս յիշատակ մեզ և մեր ննջեցելոցն. հօրն Թաղային և մօրն Բէկի Սուլթանին, հանգուցեալ եղբօրն Պապին և ամենայն ազգայնոց: Այլ և խոստացաք շահ ստացուածոց մերոց ընդ սմա տասանորդել. և միաբանք սուրբ ուխտիս խոստացան յետ ուխտէիցն աւուր տօնի սուրբ Կարապետին պատարագ մատուցանել վասն մեր: Նորոգեցաւ ի թուականիս Հայոց ՌՃԳ (1654) ի հայրապետութեան Տեառն Փիլիպոսի, և յառաջնորդութեան Մխիթար վարդապետի:

Ս. Կարապետի եկեղեցի. Հարավային պատի վրա.

Թվ. ՌՃԿԳ (1714) նորոգեցաւ սուրբ Կարապետ:

Գմբեթի վրա.

Ի այնուն Այ ես մէլիք Պապէս մէք (մէլիք) Ծատուր ճանս Մաթիոս էրէցս Հանէս Պապէս քեղուպաթս Ըստէփնոսս Ծաղկունուց ձորի մեծ ու փորք տանուտրէքս էկինք ի դուռնս սբ Առաքելոց դիր տվինք ճնի աղին որ չպէլխուին խրճն վեր կալանք ինչ մէլիք կամ տանուտր որ էլ խարճ չդցի չպուխլուին:

Ս. Աստվածածնի եկեղեցի. Արևմտյան ճակատի, հարավային սյան վրա կա հետևյալ արձանագրությունը, որ այժմ սվաղի տակ է մնացել.

Ցամի Ռ-երորդի ՃԺԳ աներորդի (1664) չնորհօք Աստուծոյ մեք հարազատ եղբարք խոճայ Սուլխանս և Զալս ի քաղաքէն Տփխեաց ասքէն Զիթաղենց որդիք Թաղայի եկեալ ի սուրբ անապատս ի Սևան ծովապատ զոր ի բազում ժամանակաց մեր կամաւ խոստացանք մեր ապրանաց չահն Ժ անորդ տանք Սէվանայ, ամէն. զոր չինեցաք սուրբ Աստուածածնի եկեղեցիս և տուաք յիշատակ մի արածքի կանթեղ, խաչ, բուրվառ, սկի, հոգոյն հօր մերոյ Թաղային մօր Բէկի Սուլթանին, եղբօր Պապին, Զորապին և քվէրանց որդոց բաժինին. նաև միաբանքս խոստացանք տարին Գ. ժամ մատուցանել: Կատարողք վարձս առցեն: Ի հայրապետութեան Տեառն Ցակոբայ:

Արևմտյան լուսամուտի ներքև, դրսից.

Ցամի ՌՃԺԳ-աներորդի (1664): Շնորհօք Աստուծոյ մեք հարազատ եղբարքս Սուլխան, Զալս ի քաղաքէն Տփխեաց ասքէն Զթաղենց, որդիք Թաղայի, որդոյ Մխրվէլոյ, եկեալ ի սուրբ անապատս Սէվան տեսեալ զսուրբ Աստուածածնի եկեղեցիս, զոր չինեալ յիշատակ. մեր ապրանաց չահի Ժ անորդն տալ զտեղի բնակողաց և միաբանքս խոստացած տարէն Գ. ժամ մատուցանել. սուրբ Զատկին, Վարդավառին, Ջրօրհնեաց տոնից: Այս եղև ի Հայրապետութեան Տեառն Ցակոբայ, առաջնորդ Մխիթար եպիսկոպոս. Բարսեղ վարդապետ հանգուցելոյ:

Այս արձանագրության ներքևում.

Շնորհօք և ողորմութեամբ Աստուծոյ նորոգեցաւ եկեղեցիս իւր կնածովն ի թուին ՌՃՀԹ (1740) ի Հայրապետութեան Տեառն Ղազարի և առաջնորդ Մարտիրոս վարդապետի: Աստուած ողորմի ասացէք տուրք և ողորմութիւն տուողացն սուրբ տանս և աշխատողաց ևս Մարտիրոս վարդապետի որդի Աթապէկին, որ տուաւ Բ. թուման ողորմութիւն: Ողորմեսցի ձեզ Աստուած:

Նույն եկեղեցու արևմտյան դռան աջ կողմում, դրսից.

Շնորհօքն Աստուծոյ նորոգեցաւ տանիք սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ ի հայրապետութեան տեառն Եփրեմի և նորաօծ Յովհաննու կաթուղիկոսի, յառաջնորդութեան տեղւոյս Յովհաննես վարդապետին և աշխատանօք բոլոր միաբանից մանաւանդ Կարապետ վարդապետին, որ ի չինութեան մասին սպանաւ յայլազգեաց ի ժողովարարութեան, որ եկից

վան սգով, որք ընթեռնոյք, ողորմի ասացէք: Ցամի Տեառն 1832 և ի թուականութեան ՌՄՁԱ:

Ս. Աստուածածնի այժմ քանդված գավթի փայտե սյան վրա եղել են հետևյալ երկու արձանագրությունները.

Ցամի Տեառն 1836. Նորոգեցան ի հիմանէ գաւիթս սուրբ Աստուածածնի և մէկ մեծ մառան...չորս օդայ մէկ երկար քուչայիւ, արդեամբ և ծախիւք Լմեցի ծերունազարդ ի Քրիստոս հանգուցեալ Ստեփանոս ճգնազգեաց վարդապետին, որ նախքան զվաղճան իւր կտակաւ աւանդեաց գծախսն այսոցիկ միում միաբանից անապատիս Նիկողայոս վարդապետին, գիտութեամբ առաջնորդի տեղւոյս Յոհաննէս վարդապետին և բոլոր միաբանից, որ և աւանդեցաւ օգնականութեամբն Աստուծոյ և ձեռնտուութեամբ բոլոր միաբանից:

Այս արձանագրության ներքև. Կայսրն Ռուսաց Նիկոլայ Պաւլովիչն եկն յաշխարհս մեր ի Հայաստան, յամի Տեառն 1837 և եմուտ ի սուրբ Էջմիածին ի հոկտեմբերի 4 և 5 սոյն ամսոյս յԵրևան. և ի 6 ի մուտս արեգական յաւուր չորեքշաբթի էանց հանդէպ նաւահանգստի անապատիս օթևանս արարեալ ի գիւղն Ջիբուխլու մէկ գիշեր, և աստի ի Տփխիս քաղաք. և անտի ևս էանց գնաց խաղաղութեամբ յաթոռն իւր ի Ս.Պ. բուրգ:

Սենյակների վրա. Ս. Աստուածածնի եկեղեցու հանդեպ շինված հին սենյակների վրա եղած արձանագրության քարը այժմ պահվում է վանքում, որովհետև այդ սենյակները քանդված և նորերն են շինված: Այս քարի վրա արձանագրված է.

Շնորհիւն Աստուծոյ շինեցան սենեակքս արդեամբք Տփխիսայ Հայոց ժողովրդոց՝ ձեռնտուութեամբ Տեառն Յովհաննու կաթուղիկոսին, յառաջնորդութեան բնիկ միաբանի տեղւոյս Յոհաննէս վարդապետին Ղազախեցւոյ, աշխատութեամբ միաբանից տեղւոյս. ՌՄՁԴ (1835):

Երկու կից սենյակներից մեկի վրա.

Ցիշատակ է այս զոյգ սենեակք հիւրանոց բարեպաշտ Արծրունեան աղա Բարսեղ Նոր-Պայազիդ քաղաքացւոյ. 1860 ամի. ապրիլի 10:

Դպրոցական շենքի վրա.

Շնորհօքն Աստուծոյ կառուցաւ դպրոցս ի հայրապետութեան Տռ Տռ սբ. կաթողիկոսի ամ. Հայոց արդեամբ բարեպաշտօն Աւետիս Բալայեան Ղուկասեանց Շուշեցւոյ 1897-ՌՑՆՁ:

ՏԱՊԱՆԱԳՐԵՐ

Կղզու արևմտյան ծայրում կանգնած մի խաչքարի վրա.

Ի ՈՀՁ թվ. (1227) կանգնեցաւ խաչս բարեխոսութիւն Աբլ Հասանայ. Քրիստոս ողորմեա:

Ս. Աստվածածին եկեղեցու դռան մոտ կանգնած խաչքարի վրա, որի մեջտեղում քանդակված են խաչելության և շուրջը՝ Քրիստի տնօրինության պատկերները. Սուրբ խաչս բարեխաւս Հայրապետի և Բեպեկայի. յիշեցէք զՔրիստոս. Թվ. ՌՃՒ (1653). Տրդատ կազմող:

Բլրի գագաթին մի գերեզմանաքարի վրա.

ԵՆԿԻՃեցի Մարտիրոս. Թվ. ՌՃՆԲ (1693):

Ս.Աստվածածնի եկեղեցու մոտ մի գեղեցիկ գերեզմանաքարի վրա.

Թայիրեանց Ղուլի,
Հին տոհմ մեծ ազգի,
Ի Շամքոր ծնեալ
Ի Վիրս պանդխտեալ:
Թողի զՏփխիս,
զ կին զորդիս,
Ցանճնեալ Տեառն գիս,
Մտի յայս կղզիս:
Ջերթ Սողոս՝ Պողոս՝
Ղուլիս՝ Ղազարոս
Փոխեալ ես եղայ
Միանձն աբեղայ:
Երսուն ամ ճգնեալ՝
Յերկինս փոխեցայ,
Տեսանել զնա
Ում զինուորեցայ:
զԱղէքսանդր որդիս,
Կանգնող արձանիս
Օրհնեա, Տէր Աստուած,
Մինչ ցկատարած:
Մահ իմ ի 1855 ամի
80 ամաց հասակի:

Բջնիի մոտերքից բերված մի մարմարյա տապանաքարի վրա.

Ընդ այս տապանաւ յուսով նորոգչին
Յաւերժ պարծանօք ի խաղաղ հանգչին
Ոսկերք իշխանին Բարսղի Արծրունեւոյ
Որ տանս Հայկազանց էր ճրագ լուսոյ.
Որ եհեղ զքրտունս փոխանակ արեան
Ժառանգեաց զանուն իբր զվարդան.
Թողլով զյիշատակ անհամար բարեաց
Փոխեցաւ աստի ի կեանս անանց.
Ծնաւ ի օրն յունիսի 1805 ամի վախճանեցաւ ի օրն յունիսի 1875 ամի:

Նոր խցերի հանդիպ գտնված մի գերեզմանաքարի վրա.

Այս է տապան 60 ամ աչխատակրօն Տփխիսեցւոյ առաքինի Մելքոն ճգնաւորի 78 ամեայ փոխեցաւ առ Տէր ի 15 ապրիլի 1862 ամի. ով հանդիպողք տուք ողորմի:

*Առանց թվականի տապանագրեր. Առաքելոց եկեղեցու գավթի գերեզմանաքարի վրա. **Այս է հանգիստ պարոն Քուրդոյ:***

Կղզու բլրի մի օրորոցաձև տապանաքարի վրա.

Այս տապան է հանգստի Ամիր Հասանայ:

ՇԱՐՈՒՐ-ԴԱՐԱԼԱԳԵԱԶԻ ԳԱՎԱՌ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

*Ճանապարհորդությանս միջոցին իբր ուղեցույց ունեցել եմ «Փորձ» և «Արարատ» ամսագրերի մեջ տպված պ. Քաջբերունու «Ճանապարհորդական նկատողութիւնք» խորագիրը կրող ընդարձակ հոդվածի՝ Շարուր-Դարալագյազի գավառին վերաբերող մասը: Պետք է ասել, որ հարգելի հոդվածագիրը ծառայելով իբր գավառական բժիշկ այս գավառում, միջոց և ժամանակ է ունեցել ամենայն մանրամասնությամբ և ճշտորեն նկարագրելու **տեղագրությունը**, իսկ ազգագրությունից գրի է առել միայն այն, ինչ իրեն պատահել է ճանապարհորդության միջոցին: Այս բարեխիղճ աշխատության ամենամեծ թերությունը արձանագրությունների մեջ սպրտած սխալներն են, որ հիրավի, անխուսափելի են, երբ ընդօրինակում են հասարակ աչքով և ոչ թե տելեննեգատիվ լուսանկարչական օբյեկտիվով, որով ընդօրինակեցի ես: Սակայն իմ այս տաժանելի աշխատանքս էլ զուր անցավ, որովհետև վերադարձիս մի ավազակային խումբ տարավ ինձանից ճանապարհորդական իրերիս հետ և այդ, մոտ 300 նեգատիվները: Սակայն ոչինչ, ամառս կրկին կերթամ լուսանկարելու:*

Պատմական տեղեկությունների համար իբր աղբյուր ծառայեցին ինձ Սեբէոսյանս Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսական» աշխատությունը և հայր Ինճիճյանի «Ստորագրութիւն հին Հայաստանի» ու հայր Ալիշանի «Սիսական» երկերը:

Բացի սրանցից ի նկատի ունեցա նաև հետևյալ աշխատությունները:

Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, Ս. եպ. Ջալալյանի, հատոր. Բ, Թիֆլիս, 1856 թ.:

Три магала. Нахичеванский, Ордубадский и Даралагезский, Зелинского, Сборник сведений о Кавказе, т. VII., 1880 г.

Экономический быт государственных крестьян в западной части Шаруро- Даралагезского уезда Эриванской губернии, изс. А. Г. Деконского, В Материалах для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, т. 1, Тифлис, 1885.

Экономический быт государственных крестьян в северозападной части Шарура и восточной части Даралагеза Шаруро-Даралагезского уезда Эриванской губернии, изс. Парвицкого, վերոհիշյալ աշխատության IV հատորի մեջ:

Аракская равнина (в пределах Эриванской губернии), Коммерческое обследование Р. И. Даниловича, Издание Закавказской железной дороги, Тифлис, 1897 г.

Памятная книжка Эриванской губернии на 1902 и 1904 гг., издания Эриванского губернского стастического комитета, Эривань.

Известия Закавказского стастического комитета, Тифлис, 1903 г.

Դարալագյազ կամ Վայոց-ձոր, Մ. Տ-Ա, «Մուրճ» ամսագրի 1904 թ. №№ 9-12 մեջ տպված տեղագրությունը և միևնույն անձի «Նոր-Դար» և «Արձագանք» լրագիրների մեջ զետեղված նամակները: Հարգելի պարոնը տվեց նաև ինձ իր մի քանի անտիպ նկատողությունները՝ օգտվելու:

Գնդեվազի հասարակության գրադիր պ. Ալեքսիս Տեր-Աբրահամյանի հատկապես ինձ համար հավաքած տղաբերքի և հարսանիքի վերաբերյալ նյութերը:

Ի վերջո քաղցր պարտականություն եմ համարում իմ սրտաբուխ շնորհակալությունս հայտնելու Երևանի թեմի փոխանորդ գերապատիվ Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանին, որ ոչ միայն մի չքնաբերականով պատվիրեց իր թեմի քահանաներին աջակցելու ինձ, այլև իր թեմին այցելած միջոցին հաճեց ընդունելու իմ ուղեկցությունը և 15 օր չարունակ միջոց տվեց ինձ չփվելու բազմազբաղ դյուղացիների հետ, որոնք նրա պատճառով թողնում էին դաշտերը և խմբվում մեր շուրջը:

Խորին շնորհակալությունս եմ հայտնում նաև Շարուր-Դարալագյազի դավառապետ իշխան Ջերկեզովին և Դարալագյազի ոստիկան Պ. Դումբաձեին, Վայոց ձորի Ա. մասի գործակալ Տեր Գրիգոր Տեր-Ավագյանին և այն բոլոր քահանաներին ու պարոններին, որոնք շնորհապարտ առան ինձ իրենց սիրալիր աջակցությամբ:

Շարուր-Դարալագյազի գավառը կազմում է Երևանյան նահանգի հարավ-արևելյան մասը և տարածվում է 40° ու 30°20′ հյուսիսային լայնության և 62°35′ ու 63°30′ արևելյան երկարության աստիճանների միջև:

Նրա սահմաններն են հյուսիսից՝ նույն նահանգի Նոր-Բայազետի գավառը, արևելքից Գանձակի նահանգի Ջիվանշիրի և Զանգեզուրի գավառները, հարավից՝ Երևանյան նահանգի Նախիջևանի գավառը և արևմուտքից՝ Պարսկաստանը (Արաքս գետով) ու Երևանյան նահանգի Երևանի գավառը:

Թե դիրքով և թե կլիմայով Շարուր-Դարալագյազի գավառը բաժանվում է երկու մասի՝ լեռնային, որ կոչվում է Դարալագյազ կամ Վայոց ձոր և դաշտային՝ որ անվանվում է Շարուր: Լեռնային մասը դաշտայինից տասն անգամ ընդարձակ է, սակայն վերջինս առաջինից անհամեմատ ավելի արգավանդ: Քաղաքական բաժանմամբ ևս Շարուր-Դարալագյազի գավառը հայկական տիրապետության ժամանակ կազմել է երկու տարբեր գավառակներ, լեռնայինը՝ Վայոց ձոր, որ պատկանել է Սյունյաց աշխարհին, դաշտայինը՝ Շարուր, որ մասն է կազմել Այրարատյան աշխարհի: Պարսկական վերջին տիրապետության ժամանակ էլ Վայոց ձորը ընկնում էր Նախիջևանի, իսկ Շարուրը՝ Երևանի խանությունների մեջ. այսպես էլ Ռուսաց տիրապետության ժամանակ ընկան համանուն գավառների մեջ, մինչև որ 1877 թ. կազմեցին մի առանձին գավառ, բաժանված երկու ոստիկանական չրջանների՝ Դարալագյազի և Շարուրի:

Ամբողջ գավառը բռնում է 275.750 դես. 1498 ք. սաժեն տարածություն,[379] որից՝

1. Գյուղատեղի	*886 դես.*	*2062 ք. սաժեն*
(այս հաշվում միայն անատեղ)	*790 »*	*1498 »*
2. Գերեզմանատեղի	*35 »*	*53 »*
3. Ճանապարհներ	*1762 »*	*806 »*
4. Արտեր	*42903 դես*	*1454 ք. սաժեն*
5. Այգիներ	*1046 »*	*44 »*
6. Անտառներ	*2057 »*	*2039 »*
7. Մարգագետին	*1089 »*	*1295 »*
8. Արոտատեղի	*201966 »*	*685 »*
9. Ջրի տակ	*1314 »*	*1505 »*
Սրանից 1. ջրանցքների տակ	*216 դես.*	*562 »*

---

[379] Труды Закавказского стастического комитета, Земельные дачи. Шаруро-Дараларагезский уезд Эриванской губернии (դեռևս անտիպ):

2. դետերի, վտակների և
աղբյուրների տակ՝ 899 » 495 »
10. Ոչ-արդյունաբերող հողեր 13747 » 1805 »

Շարուր-Դարալագյազի ամբողջ գավառը չունի ոչ մի քաղաք, այլ միայն մի ավան, Բաշ-Նորաշեն, ուր կենտրոնացած են գավառական հիմնարկութիւնները և ուր ապրում են գավառապետը և այլ գավառական պաշտոնյաները:

Ամբողջ գավառը բաժանված է երկու ոստիկանական բաժնի և 11 գյուղական հասարակութիւնների, բաղկացած լինելով 162 գյուղերից, որոնցից միմյան 32 հայաբնակ են:

Բոլոր բնակիչները պաշտոնական վերջին տեղեկութեան համեմատ 1902 թ. եղել են 81499 հոգի, հետևապես և յուրաքանչյուր ք. վերստի վրա բնակնում է 31 հոգի:

Բնակիչները ըստ ազգութեան և կրոնի

	Արմատական		Ժամանակ.		Բոլորը		
	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Միասին
Հայ լուսավորչ.	12073	10400	108	69	12181	10469	22650
Ռուս. պրով.	-----	------	229	25	229	25	254
Վրացի	-----	------	10	4	10	4	14
Գերմ. լեհ.	----	----	23	1	23	1	24
Թուրք չիա ..այունի	30050 285	24706 251	605 3	429 3	30655 288	25135 254	55790 542
Քուրդ մահմեդ	724	567	358	295	1082	862	1944
Ասիական այլ և այլ քրիստ.	150	120	----	---	150	120	270
Հրեա մոյս.	-----	----	2	1	2	1	3
Կովկասյան լեռն. մահմ.	-----	-----	8	----	8	----	8
Միասին	43282	36044	1346	827	44628	36871	81499

ՏԵՂԱԳՐՈՒԹՑՈՒՆ

ԲՆԱԳՐՈՒԹՑՈՒՆ

Վայոց ձոր կամ Դարալագյազի ոստիկանական շրջանը կազմում է Շարուր-Դարալագյազի գավառի հյուսիսարևելյան մեծագույն, լեռնային մասը: Սա տարածվում է 40° և 39°30' հյուսիսային լայնության և 62°35' ու 63°30' արևելյան երկարության աստիճանների միջև: Նրա սահմաններն են. հյուսիսից՝ Երևանյան նահանգի Նոր-Բայազետի գավառը Սելիմի, Ղարադայա (11178) Սողանլուի (10286), Գյուզալ-դարա (11606) և Դիք-փալաքան լեռներով. արևելքից՝ Գանձակի նահանգի Ջիվանշիրի գավառը՝ Սարիերսըրչալի (11298) և Դալա-գյոզ լեռներով և նույն նահանգի Զանգեզուրի գավառը՝ Ղըսըր-դաղ (9854), Գյաբրլու (10,000), Քեչալ-դաղ (10278), Ֆյուքի-դաղ (10,282) լեռներով, հարավից՝ Երևանի նահանգի Նախիջևանի գավառը՝ Սիննեոր-դաղ, Համասուր-դաղ (8160) և Գյալին-ղայա (9152) լեռներով և Շարուրի ոստիկական շրջանը՝ Կարմիր-սախկա և Թանդրլու լեռներով, արևմուտքից՝ նախ Շարուրի ոստիկանական շրջանը և ապա՝ Երևանյան նահանգի Համանուն գավառը՝ Բաղարսըղ (6587), Թուի-դաղ (9546) լեռներով և Նոր Բայազետի գավառը՝ Սաչանլի (9660) և Ջան-ղուրթարան (9127) լեռներով:

Ամբողջ ոստիկական շրջանը բռնում է 204,533 դ. և 1712 ք. սաժեն տարածություն, որից 439 դ. 1361 ք.ս. գյուղատեղի է (սրանից էլ 361 դ. 1584 ք.ս. տնատեղի), 15դ. 45 ք.ս. դերեզմանատուն. 1010 դ. 386 ք.ս. ճանապարհներ. 23368 դ. 1736 ք.ս. արտեր. 390դ. 1291 ք.ս. այգիներ. 1277 դ. 200 ք.ս. անտառ. 324 դ. 1150 ք.ս. մարգագետին, 157025 դ. 2092 ք.ս. արոտատեղի. 501 դ. 765 ք.ս. էլ ծածկված է ջրով, որից 29 դ. 575 ք.ս. ջրանցքների, 352դ. 720 ք.ս. գետերի, գետակների և աղբյուրների տակ, 10559 դ. 2186 ք.ս. էլ ոչ արդյունաբերող հող է:[380]

Լեռներ. *Ամբողջ շրջանը ներկայացնում է մի բարձրավանդակ, որ հետզհետե բարձրանալով՝ հյուսիսարևելյան սահմանում հասնում է իր ամենաբարձր կետին: Երեք լեռնաշղթաներ տարածվելով ամբողջ շրջանում և մանավանդ սահմանագծերում, նրան բազմաթիվ, մեծ և փոքր հովիտների են բաժանում, այսպես՝ Կոնգուրթ-Ալանգեզի լեռնաշղթան շրջապատելով Դարալագյազը՝ ճյուղեր է արձակում նրա մեջ: Սրա անանուն դագաթից ձգվում է դեպի արևմուտք **Հարավային Դարալագյազի** լեռնաշղթան, որ բաժանում է Նախիջևան-գետի վտակները Արևելյան Արփաչայի ջրաբաշ-*

---

[380] *Труды Закавказского стастического комитета, Земельные дачи Эриванской губернии, по данным межевых планов утвержденных Тифлисского Судебного Палатою (դնեա անտիպ):*

խիլ: Սրա երկարությունը հասնում է 100 վերստի, լայնությունը 1-20 վերստի: Սրա գլխավոր գագաթներն են.

Քեչալ-դաղ (Ղանլի-դյոլ)	*10278 ոտ.*
Քյուքի դաղ	*10282*
Սաֆար-խան Սյանգարի	*10101*
Շըրեչ	*8414*
Գյալին-ղայա	*9152*
Քեչալ-չանա	*9053*
Ղարաղուշ	*8585*

*Քեռտի-դաղ և Սարիեր-Սըրչալի գագաթների միջև Կոնգուրո-Ալանգյոզի լեռնաշղթային արևմուտքից միանում է Հարավային Գյոդչայի կամ Գյոզալ-դարայի կամ այլապես Ալլահգյոլու կոչված լեռնաշղթան, որ Սելիմի բարձրությամբ բաժանվում է երկու մասի: Սրա Յար-Թափա գագաթից ձգվում է դեպի հարավ-արևմուտք **Հյուսիսային Դարալագյազի** լեռնաշղթան, որ սահմանագծվում է Արևելյան Արփաչայի և Ղոյթուլ կամ Ալագյազ դետի հոսանքով: Սրա գլխավոր գագաթներն են.*

Սարիեր-սըրչալի	*11298 ոտ.*
Յար-Թափա	*11145*
Քեչալ-Թափա	*10985*
Մուրատ-Թափա	*10587*
Գյոյ-դաղ	*8715*
Թեքե-դողտուրան կամ ավելի ճիշտ՝	
Թեքե-դոնդուրան	*9551*
Թափասի-դալիկ	*8537*
Աղ-դաղ	*6271*
Հաջի-մալ	*5516*

*Նույն հարավային Գյոդչայի լեռնաշղթայի Թոփ-դաղից դեպի հարավ, Արփաչայ և Ջանախչի-չայ գետերի միջև 36 վ. երկարությամբ ձգվում է **Արևմտյան Դարալագյազի** լեռնաշղթան՝ ուղղվելով՝ դեպի Արաքս: Սրա գլխավոր գագաթներն են.*

Սըչանլի	*9660 ոտ.*
Դիդ-վանք	*9324*
Ղարա-ղայա	*9240*
Թոխլու-աղըլ-գյադըղլի	*7140*
Քյոմուրլու-դաղ	*6930*
Յահար-գյադըկ	*6771*
Բաղարսըղ	*6587*
Արդիչ	*6720*
Ղաբաղ-դաղ	*5632*

Վայոց ձորի բոլոր լեռների մեջ առանձին ուշադրության արժանի է Դալիկ-Թափա կամ Թափասի դալիկ (Գագաթնածակ) կոչված գագաթը, որ հանդած հրաբխային բերան է: Սա կոնաձև է, միայնակ կանգնած բավական ընդարձակ լեռնադաշտի մեջ: Լանջերն այնքան ուղղահայաց են, որ անհնարին է ուղիղ գծով բարձրանալ, իսկ պտույտ անելով տևում է մինչև մի ժամ ձիով կամ երկուս՝ հետիոտն: Լանջերը պատած են մանր, հրաբխային, կարմիր և մանավանդ սև քարերով: Գագաթը ճադարաձև բացված է, միայն հյուսիսային կողմը փոքր-ինչ ավելի թեք է և բարձր, այնպես որ հյուսիսից հարավ ձգվող դիծը (մոտ 600 քայլ) մի փոքր-ինչ ավելի երկար կլինի, քան արևելքից արևմուտք ձգվողը: Արևելյան լանջը ամբողջովին և հարավայինը մասամբ պատած են առավելապես կարմիր, հրաբխային քարով, ուր խոտ բոլորովին չի բուսնում: Հատակում ավելի զգալի կերպով նկատելի է ճադարաձև բացվածքը, ուր հալված ձյունից գոյացած ջուրը բավական երկար ժամանակ կանգնած մնում է և միայն օգոստոսին չորանում: Այս մասում առավելապես կուտակված են կարմիր, սև և մոխրագույն հրաբխային խանձողներ, մի քանիսը չափազանց թեթև, ծակծակոտ, մի քանիսն էլ չափազանց ծանր և նշաձև:[381]

Հատակի հյուսիսային կողմում կա մի հասարակ եկեղեցի իր գավթով, որից բարձր մի քանի տների հիմնապատեր, երկու գերեզմանաքար, առանց տապանագրերի: Հայտնի չէ, թե ովքեր են կառուցել այդ եկեղեցին և տները: Հայտնի չէ նաև, թե ե՞րբ է ժայթքել այդ հրաբուխը, միայն դեպի Արգյալ, Նավլար, Քյոթանլի, Գյոդ-Աբաս, Հերհեր և մանավանդ դեպի Մալիշկա և Մոզ ձգված ու տեղ-տեղ կիտված խանձողները ցույց են տալիս, որ հրաբուխը ժայթքել է ոչ թե մի, այլ բոլոր կողմերի ուղղությամբ:

Գետերը. Վայոց ձորի ամենանշանավոր գետը Արփաչայն է, որ Ալեքսանդրապոլի մոտից հոսող Համանուն գետից տարբերվելու համար ստացել է Արևելյան մակդիրը: Սկիզբ է առնում գավառի հյուսիս-արևելյան մասում, Ալլահգյոլի բարձրավանդակի հարավային կողմից, Կոնգուրա-Ալանգյոզ և Հյուսիսային Դարալագյազի լեռնաշղթաների միջից: Գլխավոր ակը կոչվում է Տաշ-Քյոպրի-չայ, որ բխում է Յար-Թափա և Քիչալ-Թափա լեռներից: Արփաչայը անցնելով 106,5 վերստ տարածություն, Ղարա-Համամլու գյուղի հանդեպ թափվում է Արաքսի մեջ:

Արփաչայի վրա կան մի քանի կամուրջներ: Մի փայտե կամուրջ ձգվում է Իսալի-սու գյուղի մոտ, մի հին, քարե կամուրջ ձգվում է Քիչիշ-քյանտից 2 վերստ հարավ և կոչվում է Դադալի-քյորփի կամ Դալի-պերան: Մի քարե հին կամուրջ էլ կա Մոզ ավերակ քաղաքից մոտ 2 վերստ հեռու, Տաշալտի գյուղի մոտ, որ այժմ վերանորոգված է ոտիկան Դումբաձեի ջանքերով:

---

[381] Այս խանձողներից մի քանի հետաքրքրական նմուշներ ես բերի և հանձնեցի Կովկասյան թանգարանին:

Մի կամուրջ ևս Արփա գյուղի մոտ, փոստային ճանապարհի վրա: Հին, բայց այժմ բոլորովին ավեր կամուրջներից նշանավոր է Արփա գյուղի մոտինը, որ չինել է Նորավանքի Տեր Սարգիս եպիսկոպոսը Տարսայիճ իշխանի թուլլտվությամբ (XIII դ.):[382]

Արփաչայի վտակներն են.

1. **Ալագյազ կամ Ղոյթուլ-չայ և կամ Ջանի-չայ**, սկիզբ է առնում Գյուղալ-դարա լեռան մոտից, թափվում է Արփաչայի մեջ Կըզըլ-ղշլաղ գյուղի մոտ (էրթեճ և Ալեար գյուղերի մեջ), երկարությունն է 43 վերստ: Սրա մեջ թափվում են բազմաթիվ առվակներ: Մի քարե կամուրջ ձգվում է սրա վրա Ալիխան-փայասի գյուղից մի վերստ ներքև և կոչվում է Սաղիր-քյորփի: Ալագյազ-չայի վտակ Սելիմ-չայի վրա ևս, Ղաբախլու գյուղի մոտ, կա մի հին, քարաշեն կամուրջ:

2. **Հերհեր-չայ**. Սկիզբ է առնում հյուսիսային Դարալագյազի լեռնաշղթայից, թափվում է Արփաչայի մեջ Ղայալու գյուղից փոքր-ինչ վերև, երկարությունը 26 վերստ է:

3. **Էլփին-չայ**.

4. **Ջուլ-չայ, Թերփ-չայ վտակով**. մի կամուրջ ունի Ջուլ գյուղի մոտ:

5. **Ջիրակ-չայ կամ Ղուշչի-քիլակ-չայ**.

6. **Ախտա-չայ**.

7. **Մարտիրոս-չայ**.

8. **Կնիշիկ-չայ**:

Հանքեր. Արծաթի հանք գտնվում է Գյումուշլսանեն գյուղից 3 վերստ դեպի արևելք: Օրբելյանց տիրապետության ժամանակ սա մշակվում էր և հայտնի էր Փողահանք անունով: Այժմ անգլիական մի ընկերության ներկայացուցիչներ հետազոտություններ են կատարում հանքային չերտեր գտնելու և բացել են հիսունից ավելի հին հորեր, սակայն դեռևս ցանկալի հետևանքի չեն հասել: Բավականաչափ հին հորեր բացված են նաև փոքրինչ հեռու, Լեյլիկաչան գյուղի մոտ:

Կապարի փայլուկ (свинцовый блеск) նկատելի է Յայճի գյուղից երկու վերստ դեպի հյուսիս:

Մումիա (գորշ կարմիր ներկ) և **կավաքար** (мумия и охра) Արփա գյուղի մոտ:

Քարածուխ. Քեչիչ-քյանտի մոտ, Դայլախլու գյուղից փոքր-ինչ հեռու Սուլթան-քահասի տեղում:

Հանքային ջրեր. Վայոց ձորը բավական հարուստ է հանքային ջրերով, սակայն բոլորն էլ անխնամ են թողնված և շատ քչերն են օգտվում: Ամենից նշանավորը գտնվում է չրջանի հյուսիսարևելյան մասում, Ջիվանչիրի

---

[382] Ստ. Օրբելեան, հ. Բ., եր. 176:

և Զանգեզուրի գավառների մոտ, Իսիսու դյուղի հանդեպ: Սա ծծմբային տաք ջուր է, 29,5°-33° Ռ. բարեխառնության: Մոտ 200 սաժեն տարածության վրա բխում են հինգ աղբյուրներ, որոնցից չորսը գտնվում են Արփաչայի ձախ ափին, իսկ մյուսը՝ փոքր-ինչ բարձր՝ աջ ափին: Սրանցից վերջինիս վրա մի քարե ավազան և մի փոքրիկ, այժմ կիսավեր սենյակ է շինված կես դար առաջ, իսկ մյուսները գետնի մեջ փորված կիսաբաց այրեր են, կեղտոտությունով լի: Սրանց մոտ ոչ մի հարմարություն, ոչ մի շենք չկա: Եկողները կամ բացօթյա են անցկացնում, կամ վրան են խփում: Կլիման ընդհանրապես ցուրտ է և ձիշերները սաստիկ քամի է փչում: Աքանչելի է մանավանդ, այստեղի տեսարանները. հիանալի ջրընկեցը՝ որ մի ահագին ժայռից փրփրադեզ ժայթքում է դեպի Արփաչայը, նույնպես գեղեցիկ իր եղրափակող ահագին և բազմազան քարաժայռերով, բուսականությամբ հարուստ բարձրավանդակը և շրջակա լեռները:

Բացի այս հանքային ջրից կան նաև հետևյալները. ածխաթթու-երկաթային (углекисло-железный)՝ Սոյլան դյուղի մոտինը, Ենգիջա դյուղից 3 վերստ դեպի արևելք Ղոզլու-դարայում գտնվածը, այստեղ կա նաև ածխաթթու-ալկալյան ջուր (углекисло-щелочная), Հերհեր դյուղից դեպի արևելք Ղալա-դարասի ձորում, 2 աղբյուր, այստեղից 2 վերստ դեպի հյուսիս կա ածխաթթու-ալկալյան ջուր: Քեչիչքենդից դեպի արևելք Շոր-դարա ձորում:

Երկաթ-ալկալյան (железо-щелочный) և ածխաթթու-ալկալյան (углекисло-щелочный) ջուր գտնվում են՝ 1. Արփա դյուղից 3 վերստ ներքև, Արփաչայի երկու ափին, 2. Բուլախլարում, 3. Էրդափինից 2 վերստ դեպի հյուսիս՝ Գյումուշ-բուլախ վտակի երկու ափերին, 4. Վերին Տանձիկից մի վերստ դեպի արևելք՝ Արփաչայի երկու ափերին, 5. Ներքին Տանձիկից կես վերստ դեպի հարավ՝ Արփաչայի ձախ ափին, և 6. Մալիշկից 0,5 վերստ դեպի հյուսիս, Հովտում: Այս բոլորից շատ ավելի նշանավոր է Ենկիջայի և Ղուրդղուլաղի ճանապարհի վրա, ձորի մեջ գտնված աղբյուրը, որ հայտնի է Գռաւ կամ Քոսի-ջուր անունով:

Կլիման. Դարալագյազի ոչ մի գյուղում օդերևութաբանական կայարան դեռևս հաստատված չէ, ուստի և կլիմայի վերաբերությամբ գիտական ոչ մի որոշում կարելի չէ անել: Միայն գյուղացիների վկայությամբ կարելի է ասել, որ ձմեռն սկսվում է նոյեմբերի սկզբին և տևում մինչև ապրիլ, շատ անգամ սաստիկ ցրտեր և բքեր անելով: Ձմեռը հաճախ ձյուն է գալիս, երբեմն մինչև 1,5 արշին խորությամբ: Գարնանը հաճախ անձրև է տեղում, մի-մի անգամ կարկտախառն: Ամառը մեղմ է, աշունը՝ ցուրտ:

Մի քանի հովիտներում, ինչպես Արփաչայի արևմտյան մասում՝ Մոզ, Այար, Արփա, Էրթիչ, Ղոյթուլ գյուղերում կլիման միանգամայն տարբեր է,

այստեղ ամառը սաստիկ շոգ է, ձմեռը մեղմ, աշունը հիանալի, և գարունը՝ անձրևային:

Դատելով օդերևութաբանական քարտեզով, Վայոց ձորի տարեկան միջին բացարձակ նվազագույնը հասնում է 5,5° Ռ.:

Բուսականություն. *Դարալագյազի բուսականությունը շատ հարուստ է, սակայն մասնագիտորեն դեռևս ուսումնասիրված չէ: Ուստի և այստեղ մենք ոչինչ չենք կարող ասել, բացի այն, որ մեծ մասամբ տիրում է ստորին-ալպյան բուսականությունը՝ մանավանդ Արփաչայի ակունքների մոտ: Շատ հաճախ պատահում են այդ ստորին-ալպյան բուսականության երկու տիպական տեսակները՝ հարանձաղիկ (Anemone narcissiflora) և խաչափայտ (Betonica grandiflora), իսկ ստորին-ալպյան մարգագետինների զարդը՝ արևելյան խաշխաշը (Papaver orientale) առատությամբ հանդիպում է Գյոյդաղի հիանալի արոտատեղիներում:*

Դարալագյազը բավական հարուստ է անտառներով, որոնք սփռված են Արփաչայի ակունքների, Հերհեր, Մարտիրոս, Ջանի, Այասեխ, Ղավշուղ, Գյուլեյ-վանքի և Հորս գյուղերի մոտ: Կան նաև մացառներ Աղ-քիլիսա, Վարդանես, Ղարաղայա, Ղաբախլու, Հոստուն, Բուլբուլոլան և Էրդափին գյուղերի մոտ: Այս անտառները մեծ մասամբ նոր են, 30-40 տարվա ընթացքում առաջացած և մեծ մասամբ բաղկացած են կաղնի, դիհի, թեղի, կարմրան (гребунчук), ուռի և այլ ծառերից:

Ընդհանրապես ճանապարհներ չլինելու պատճառով այս անտառներից շատ չեն կարողանում օգտվել, և ազգաբնակչության վառելանյութը մեծ մասամբ քակորն է կազմում: Շատ գյուղեր, որոնք բավական հեռու են անտառներից, մեծ նեղություն են կրում ածուխ չունենալու պատճառով:

Ընտանի կենդանիներից *սակավաթիվ է միայն դոմեշը, որովհետև սայլեր չլինելու պատճառով չի հարկավորվում:*

Վայրի գազաններից մեծ քանակությամբ կան գայլեր և արջեր: Կնիշիկ գյուղում եղած միջոցիս՝ գայլերի ոհմակը մի գիշերում մոտ 200 ոչխար էր պատառոտել:

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Նախապատմական դար. *Որքան ինձ հայտնի է, Վայոց ձորում ինձանից առաջ ոչ ոք հնագիտական նպատակով պեղումներ չի կատարել, կամ եթե կատարել է, այս մասին ոչինչ չի հրատարակել, ուստի և ես ստիպված եմ բավականանալ այն տեսությամբ, որ թույլ են տալիս անել իմ կատարած պեղումները: Անցնելով Վայոց ձորի դրեթե բոլոր գյուղերը, ես բավականաչափ պեղումներ կատարեցի և գտա հղկած քարի (neolithique) և բրոնզի դարին վերաբերյալ շենքեր և իրեր:*

Հղկած քարի դարին վերաբերում են Սուլթան-քահասի կոչված դյուղի ավերակները, որոնք գտնվում են Վերին Դայլախլու գյուղից 1,5 վերստ հեռու, դեպի արևմտահարավ, մի հովտում: Այս հովտի հարավային կողմում ձգվող լեռնաշղթայի վերին մասը պատած է ծովային նստվածքով, որի մեջ ես գտա բավականաչափ ժժմակներ: Ժայռի ամենաբարձր մասում կա մի բնական մեծ քարայր, ուր վերջին ժամանակներս Սուլթան անունով մի թուրքի 500 ոչխարներ էին մակաղում, որի պատճառով և այրը, սրա հետ և այս տեղը կոչվել է Սուլթան քահասի՝ Սուլթանի այր: Բացի սրանից գյուղում կա նաև երեք ուրիշ համեմատաբար փոքր քարայր:

Ավերակների մեջ նկատվում են երկու պարսպի հետքեր, որ ձգվում են արևմուտքից արևելք, հովտի ուղղությամբ: Այս պարիսպների միջև կան բազմաթիվ տներ, որոնք կառուցված են գետնի մեջ այսպես՝ բոլորակաձև մանր քարեր են դարսված, մոտ 3-4 արշին բարձրության, որոնց վրա 3-4 ահագին, մոտ 4-5 արշին երկարության և 1-1,5 արշ. լայնության քարեր ձգած, իբր կտուր: Ամեն մի խրճիթ մի սենյակից է և ունի մի դուռ, մեծ մասինը դեպի արևելք բացվող: Կորի վրա էլ մի ծակ կա, որ իբր պատուհան է ծառայել: Տեղ-տեղ նկատելի են մանհիրներ, միայն չարդված են: Գյուղի արևմտահյուսիսային կողմում կան բավականաչափ գերեզմաններ, որոնք փոքրիկ թմբեր են, չուրջը քարերով պատած: Ես սրանցից չորսը պեղել տվի, 3-4 արշին խորության մեջ դուրս եկավ միայն մոխիր: Տների մեջ ես գտա մի քարե մուրճ, երկու քարե սղոց և մի քարե դանակ:

Բրոնզի դարին վերաբերյալ գերեզմաններից նշանավոր են Մոզ քաղաքի ավերակների սահմանում գտնվածները, որոնցից ես բաց անել տվի միայն ինը: Սրանք բոլորն էլ մի տեսակի էին, գետնի մակերևույթից մոտավորապես 3-4 արշին բարձրության և 4 արշին տրամագծով թմբեր, չուրջանակի քարերով պատած. 3-4 արշին խորության փորելուց հետո դուրս եկան կմախքներ, հյուսիսից դեպի հարավ ուղղված, կողքերին պուլիկներ, որոնցից մի քանիսը բավական մեծ էին: Երկու գերեզմանի միջից դուրս եկան նաև ձիու ոսկորներ: Այս գերեզմաններից դուրս եկան նաև հետևյալ բրոնզե իրերը. երկու դաշույն, 9 ճարմանդ (fibule) և մի քանի ապարանջան:

Ջափազանց նման էին այս կուրգաններին այն մի քանիսը, որ ես գտա Կնիշիկ գյուղում, մոտավորապես 30 վերստ հեռու Մոզից, դեպի արևմտահյուսիս: Այստեղ նշանավոր էին երկու կուրգան, որոնք գտնվում էին գյուղից 1,5 վերստ հեռու, դեպի արևմտահյուսիս, միմյանցից 9 սաժեն հեռավորության վրա: Յուրաքանչյուրը գետնից 4 արշին բարձրության էին, մոտ 3 սաժեն տրամագծով: Չորս արշինաչափ խորության և 1 սաժեն լայնության փորելով, ես նկատեցի, որ չուրջանակի քարեր էին դրված և վրան 5 կտոր մեծ, տափարակ քարեր դարսած: Սրանց տակից դուրս եկավ մոխրախառն հող և ապա բացվեց երկու կմախք, երկուսն էլ միմյանց մոտ, հյուսիսից

հարաւ ուղղված: Մեկի երեսի վրա դրված էր մի դաշույն, աջ ձեռին ասպարանջան և մի մատին 3 մատանի: Մյուս կմախքի կողքին դրված էր մի դաշույն իբրեն պատյանի մեջ: Վերջինիս մոտից դուրս եկան նաև ձիու ոսկորներ: Կմախքների չուրջը շարված էին պուլիկներ: Մյուս կուրգանը միանդամայն առաջինին նման էր, միայն սրա միջից դուրս եկան 4 գանգ և ոսկորներ, անկանոն կերպով ձգված. նաև մի բրոնզե ասպարանջան և երկու պուլիկ:

Այս գյուղից էլ դեպի արևմտահյուսիս, Խաչիկ գյուղում, ես բավականաչափ պեղումներ կատարեցի: Սրանցից ամենանշանավորն այն էր, որ մի կարաս բացվեց, մեջը մի մարդ՝ պպզած ձևով դրված, դեմն էլ մի պուլիկ: Կարասը պատկեցրած էր հյուսիսից հարավ, և բերանին մի կավե խուփ դրված. մեծությունը կլիներ 1,25 արշին: Գյուղից դուրս, միևնույն ուղղությամբ, բայց միմյանցից մոտ 100 սաժեն հեռավորությամբ կանգնած էին երեք մեծ կուրգաններ: Սրանցից մեկը միայն ես բաց անել տվի: Երեք արշինից ավելի փորելուց հետո ես գտա մի մարդու կմախք, հյուսիսից հարավ թաղված, միայն մոտը ոչ մի իր կամ պուլիկ չկար, այս պատճառով և ես բաց անել չտվեցի մյուս երկու կուրգանները: Միանգամայն սրան նման գերեզմաններ ես բաց արի Մարտիրոս, Փոր և Հերհեր գյուղերում:

Համեմատաբար նորագույն տիպի գերեզմաններ՝ բաղկացած 4 քարե տախտակներից, որոնց վրա դրված է մի կամ մի քանի քար, ես բաց արի Գնդեվազ, Կնիշիկ, Օրթաքենտ և Բաշքենդ գյուղերում: Սրանց մեջ լինում էին մի մի կմախք, հյուսիսից հարավ ուղղված, առանց մի որևէ իրի կամ պուլիկի: Գրեթե բոլոր կուրգաններում գտնված իրերը միջադարեա (միզոսեֆալ) էին:

Այս պեղումների արդյունքից հետևում է, որ Վայոց ձորում բնակությունը սկսվել է Դայլախլուի և սրա շրջակայքում և հետզհետե տարածվել է դեպի Մոզ, Կնիշիկ, Արփա, մի խոսքով ցածր և տաք կլիմայի տեղերում, ապա աստիճանաբար բարձրացել է դեպի լեռնային գյուղերը: Թե գերեզմանների չենքը և թե մանավանդ բրոնզե իրերը ցույց են տալիս, որ քաղաքակրթությունը բավական բարձր է եղել, մանավանդ Մոզում, Կնիշիկում և Փոռում:[383]

Պատմական շրջան. Վայոց ձորի ոչ միայն նախապատմական, այլև պատմական շրջանի մասին շատ քիչ հիշատակություններ կան: Միակ աղբյուրը համարվում է Ստեփանոս Օրբելյանի Սիսական նահանգի պատմությունը և մի քանի արձանագրություններ, որոնց հիման վրա արդեն գծել են Վայոց ձորի և Օրբելյան տոհմի պատմությունը պ. Քաջբերունին և

---

[383] Այս պեղումները կատարած լինելով Մոսկվայի Կայսերական հնագիտական ընկերության Կովկասյան ճյուղի հանձնարարությամբ՝ գտնված իրերը հանձնեցի նույն ճյուղին, որ գտնվեց Կովկասյան թանգարանի հնագիտական բաժնում, իմ գտած մյուս իրերի մոտ:

հայր Ալիշան: Սրանց վրա մի նոր բան ավելացնել ինձ միանգամայն չհաջողվեց, որովհետև նախ նոր աղբյուրներ, ինչպիսին են ձեռագիրների հիշատակարանները, մեծ մասամբ դեռևս մնում են անտիպ, հետևապես և ոչ շոշյալ չափով անմատչելի և երկրորդ՝ վայոց ձորի բնիկ համարված ժողովուրդը գրեթե ոչ մի ավանդություն չի պահպանել ոչ Օրբելյան տոհմի և ոչ մյուս իշխանների մասին, թեպետ և Օրբելյան տոհմի իշխաններից մի քանիսի՝ ինչպես Տարսայիճի, Լիպարիտի անուններն այժմ էլ բավական գործածական են: Ավելորդ համարելով արդեն հայտնիները մի անգամ ևս կրկնել, ես կաշխատեմ նորություններ որոնել ս. Էջմիածնի և այլ տեղերի ձեռագիրների հիշատակարաններում և եթե որևէ բան գտնեմ, կնշեմ Օրբելյան տոհմի քնարան Նորավանքի նկարագրության մեջ: Իսկ այժմ ես կամենում եմ առաջ բերել այն ավանդությունը, որ դեռևս մնացել է Վայոց ձորի բնիկ հայերի մեջ.

Թանահատ գյուղից մի մարդ սիրահարվում է իր սանամոր քրոջ վրա և շատ անգամ թուլլտվություն է խնդրում Ստեփանոս եպիսկոպոսից՝ ամուսնանալու: Սա թույլ չի տալիս: Մի անգամ էլ, երբ Ստեփանոս եպիսկոպոսը գալիս է Մոզ քաղաքը, այս երկու սիրահարները գնում են նրա մոտ և աղերսում թուլլտվություն, սակայն եպիսկոպոսն այս անգամ ևս մերժում է: Բարկությամբ լցված այս երկու սիրահարները դիշերը գնում են եպիսկոպոսին սպանելու: Սա քնած է լինում պատշգամբում: Դավադիր ամուսինը բարձրանում է կտուրը, այնտեղից ելնում պատշգամբի առաջ բուսած ծառի վրա, որպեսզի իջնի ներքև և սպանի եպիսկոպոսին: Սակայն հենց որ փոքրինչ մոտենում է, տեսնում է, որ եպիսկոպոսը հանգիստ քնած է, բայց բերանից լույս է բարձրանում. սարսռում է, հետ դառնում և ասում կնոջը, թե ինքը չի համարձակվում դաշույնը բարձրացնել նրա վրա, քանի որ նա սուրբ է, նրա բերանից լույս է բարձրանում: Կինն սկսում է կրկին համոզել, բայց երբ նա վերջնականապես մերժում է, խնդրում է, որ իրեն կտրից թոկով կախի ներքև, ինքը կսպանի նրան: Ամուսինը համաձայնում է, թոկը կապում է կնոջ մեջքին և կտրից ներքև կախում: Սա մոտենում է եպիսկոպոսին և դաշույնը խրում նրա կուրծքը: Հանգիստ քնած եպիսկոպոսը վեր է թռչում և բացականչում. վա՛յ, ձոր, քար մաղվես, մեջիդ չուն բնակվի: Իսկույն երկնքից քար է թափվում և կործանում Մոզը. հուլիս ամսին էլ երեք արշինաչափ ձյուն է գալիս և կոտորում բոլոր անասունները: Վերջն էլ շներ (թուրքեր) են գալիս և բնակվում այս ձորի մեջ, որ այնուհետև կոչվում է Վայայ-ձոր, որովհետև սուրբ եպիսկոպոսը վա՛յ տվեց նրան:

Նույն ավանդությունը գրի է առել Ստեփանոս Օրբելյանը, որ սակայն փոքր-ինչ տարբերվում է սրանից: Ուշագրավ է մանավանդ նրա վերջին մասը, ուր նկարագրվում է իրը այդ սպանման պատճառով առաջացած երկրաշարժը. «Եւ կալաւ խաւար շօշափելի զգաւառն ամենայն զաւուրս 40, և

չարժումն սաստիկ, դի եռայր երկիրն ահիղ դողացմամբ յանդնդոց և բարձրանայր մինչև ի վեր. և անդէն իբր զալիս ծովու փլուզանիւր, լերինք տապալէին, վէմք ի հիմանց քակդէին, տունք և ապարանք գեղեցիկք լինէին գերեզմանք բնակչաց, աղբիւրք խցէին, դեռք կորնչէին. և ամենայն տեղի երերէր տատանմամբ. և ձայնք մարդկեղէն բարբառոյ լսելի լինէին ի ներքուստ յանդնդոց և ի վերուստ յոդոց. «վա՛յ ձոր, վա՛յ ձոր», և կենդանեայն ընկղմեցան ոգիք իբրև 10, 000, զորս գիտէին և ի թիւ արկին, և զանծանօթիցն ոչ ոք գիտէր զհամարն. յաղագս որոյ կոչեցաւ անուն գաւառին Վայոց ձոր»:

Թեպետ և Թանահատի վանքում մինչև այժմ էլ ցույց է տրվում Ստեփանոս եպիսկոպոսի և դրան սպանող ու վերջն ապաշխարող կնոջ գերեզմանները, թեպետ և Դալիկ-թաւիա լեռան ձագարաձև բացվածքը և Մոզի, Մալիշկայի, Նավլարի, Քոթանլուի, Հերհերի մոտ թափված խանձողի շեղջակույտերը վկայում են, որ Վայոց ձորում տեղի է ունեցել հրաբխային վիժումնք, և թեպետ ժողովրդի երևակայությունն այս բոլորը շատ գեղեցիկ կերպով կապել է Ստեփանոս եպիսկոպոսի սպանման և Վայոց ձորի անվան հետ, սակայն և այնպես՝ Վայոց ձորի անունը շատ ավելի հին է, քան Ստեփանոս եպիսկոպոսը (+735), քանի որ թե Եղիշեն և թե Ղազար Փարպեցին այս դեպքից մոտ երեք դար առաջ գործ են ածել այդ անունը:[384]

Այս գավառը կոչվում էր նաև **Եղեգեաց ձոր** *կամ* **Եղեգնաձոր**, *Եղեգիս գյուղի անունով, որովհետև սա Սյունյաց Վասակյան հարստութեյան գահերեց իշխանների աթոռանիստն էր:*

Վերջին դարերումս այդ անունն այլազգիներից թարգմանվեց **Տէրէի ալաղըզ**[385] *(ձոր եղեգների) և փոքր-ինչ աղավաղվելով, դարձավ* **Դարալագեզ** *կամ* **Դարալագյազ**, *այժմյան պաշտոնական անունը:*

Ժե դարի մի գրիչ էլ այս գավառակին Վարդի ձոր է կոչում, ասելով՝ «յերկիրս վարդի ձորոյ, զոր այժմ Վայի-ձոր և Եղեգիս յորջորջի»:

Եղեգիսում նստող Վասակյան հարստութեյունից հետո Վայոց ձորի մեծագույն մասն ընկավ Օրբելյան իշխանների տիրապետութեյան ներքո, որոնք ԺԳ և ԺԴ դարերի ընթացքում ոչ միայն պաշտպանեցին ու կառավարեցին երկիրը, այլև շենացրին ու գեղեցկացրին հոյակապ շինութեյուններով:

Վայոց ձորի մի մասն էլ ընկավ Հաղբակյան կամ Վարդանյան Վասակ և սրա որդի Պռոշ իշխանների ու սրանց սերդնի իշխանութեյան ներքո, որոնք դրեթե մի ամբողջ դար (ԺԳ-ի կեսից մինչև ԺԴ-ի կեսը) քաջութեյամբ պաշտպանեցին երկիրը:

---

384 Ծովսէփ, որ էր ի գավառեն Վայոց ձորոյ:
385 Ալիշան, Սիսական, եր. 91.

Այնուհետև Լենկթեմուրի, Շահ-Աբասի, Նադիր-շահի և այլ աշխարհակալների ավերածության ներքո Վայոց ձորն սկսեց զրկվել իր բնակիչներից և նրա հոյակապ շինություններն ավերվել:

Նախավերջին դարում Վայոց ձորը կազմում էր Նախիջևանի խանության մի մասը, հետո միառժամանակ հանձնվեց վրաց Ալեքսանդր գահաժառանգին, որպես տիուլ, ապա պարսից տիրապետության վերջին տարիներում կապալով էր տրված Երևանի սարդարին 2000 թումանով կամ 8000 ռ.: Ապա 1828 թ. ընկավ Ռուսաց տիրապետության ներքո և համարվեց Նախիջևանի գավառի մի մասը, ի վերջո 1877 թ. Շարուրի հետ միասին կազմեց մի առանձին գավառ Շարուր-Դարալագյազի անունով, մնալով միանգամայն իբր մի առանձին, ոստիկանական շրջան:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍ

Դարալագյազի ոստիկանական շրջանը բաղկացած է 101 գյուղերից, բաժանված հինգ շինական հասարակությունների.

	Բոլոր գյուղերը	Որից հայ գյուղեր	Բնակիչները, տուն.
Քեշիշքենտի	20	7	1158
Ալագյազի	20	4	874
Գնդեվազի	22	3	814
Մարտիրոսի	18	5	769
Ղոզլըջայի	21	5	863
	101	24	4478

Շրջանի կենտրոնը համարվում է Քեշիշքենտ գյուղը, ուր ապրում են շրջանի կառավարիչ ոստիկանը և հաշտարար մի[illegible]դը:

Բոլոր բնակիչների թիվը, պաշտոնական վերջին տեղեկության համեմատ, 1902 թ. հասել է 21385 ար., 18136 իգ. և միասին՝ 39521 հոգի, հետևապես և յուրաքանչյուր ք. վերստի վրա 19 հոգի:

Ըստ ազգության և կրոնի

Հայեր՝ լուսավորչական	8811 ար.	7691 իգ. միասին	16502.
Ռուսներ՝ պրովոսլավ	17 ար.	-	17.
Վրացի՝ պրովոսլավ	3 ար.	2իգ.	5.
Թուրքեր՝ շիաներ	11974 ար.	9983 իգ.	21957.
Քրդեր՝ մահմեդական	580 ար.	460 իգ.	1040.
Շրջանի արմատական բնակիչներն են.			
Լուս. Հայեր	8791 ար.	7670 իգ. միասին	16461.
Շիա թուրքեր՝	11804 ար.	9845 իգ	21649.

Մահմեդ. քրդեր՝	462 ար.	357 իգ.	819.
Ընդամենը՝	21057 ար.	17872 իգ. միասին	38929.

Իսկ ժամանակավորապես ապրում են.

Լուս. հայեր՝	20 ար.	21 իգ. միասին	41.
Պրովոսլավ ռուսներ՝	17 ար.	-	17.
Պրովոսլավ վրացի՝	3 ար.	2 իգ.	5.
Շիա թուրքեր՝	170 ար.	138 իգ.	308.
Մահմեդ. քրդեր՝	118 ար.	103 իգ.	221.
Ընդամենը՝	328 ար.	264 իգ. միասին՝	592.

Բնական դիրքով Դարալագյազը բաժանվում է Արփաչայ գետի և սրա հյուսիսային ու հարավային վտակների հովիտների: Ավելի հարատև համարելով այս բնական բաժանմունքը, մենք կնկարագրենք Դարալագյազը համաձայն այդ հովիտների և ոչ թե քաղաքական բաժանման, որ համեմատաբար շատ փոփոխական է:

ԱՐՓԱՋԱՑԻ ՀՈՎԻՏ

Արփաչայի հովիտը, որ ձգվում է համանուն գետի ուղղությամբ, սկսվում է Ալլահդյուլի բարձրավանդակի հարավային կողմից և շրջապատվելով Կոնգուրթ-Ալանդյողի ու Հյուսիսային Դարալագյազի լեռնաշղթաներով, ձգվում է դեպի հարավ, և ապա Զայքենտ գյուղի մոտ ուղղվում է դեպի արևմտահյուսիս՝ նեղվելով Հարավային Դարալագյազի լեռնաշղթայից, բայց հետո Այար գյուղի մոտ փոքր-ինչ ընդարձակվելով ձգվում է գրեթե ուղիղ դեպի արևմուտք և ապա կրկին սեղմվելով ժայռապատ ափերի մեջ (Շնղուլի ձոր) Արփա գյուղի մոտ ծռվում է դեպի հարավ և հասնում մինչև Շարուրի սահմանը: Հովտի հյուսիսային ծայրում, Արփաչայի ակունքի մոտ, ուր բնությունը չափազանց դեղեցիկ է և բուսականությունը շատ հարուստ, գետեղված է, կարծես, որպես մի հակադրություն, թրքական մի կեղտոտ և աղքատիկ գյուղ, Իսախսու անունով: Սակայն սրա մոտի մի ավերակ գյուղատեղին, եկեղեցու հիմնապատերը, երեք դերեզմանատունն արդեն եղծված տապանաքարերով ու խաչարձաններով վկայում են, որ մի ժամանակ այդ միևնույն տեղում ավելի լավ չինություններ և ավելի խիտ բնակություն են եղել: Հավանական է, որ այդտեղ է գտնվել Օրբելյանի հիշած Ջերմուկ գյուղը, որի անվան թարգմանությունն է կրում և այժմյանը, անշուշտ մոտակա ջերմուկի պատճառով: Բնակիչները չիա թուրքեր են, ընդամենը 27 տուն, 110 ար., 109 իգ. և միասին՝ 219 հոգի:

Իսախսուից հարիվ 2 վերստ դեպի արևմտահարավ, այնտեղ ուր Մուրադ-թափա լեռից հոսող բազմաթիվ աղբյուրների ջուրը միախառնվելով մի աքանչելի ջրընկեց է կազմում, կանգնած է ձեյրանլու դարձյալ թրքաբնակ

գյուղը, որ հայր Ալիշանի կարծիքով հին Անկանք կամ Անգուք գյուղը պիտի լինի, ըրի անկումից անունն առած, որովհետև թուրքերեն ճեյրան՝ հոսում է նշանակում:[386] Բնակիչները չիա թուրքեր են, 28 տուն, 80 ար., 48 իգ. և միասին՝ 128 հոգի:

Ճեյրանլուի հանդիպ, դեպի արևելք, մոտ չորս վերստ հեռու, մի բարձրավանդակի վրա գետեղված է Զիրակ թրքաբնակ գյուղը: Սրա մոտ կա մի ընդարձակ հին գերեզմանատուն, մի կիսավեր, հասարակ եկեղեցի, խաչքարեր և այլն: Բնակիչները 48 տուն են, 197 ար., 159 իգ. և միասին՝ 356 հոգի:

Զիրակից դեպի արևմտահարավ, մի վերստ հեռու գտնվում է Բիլաք գյուղը, որ հին Պրակքը պիտի լինի: Սրա մոտ ևս կա հինգ գերեզմանատուն և եկեղեցու ավերակ: Բնակիչները չիա թուրքեր են՝ 64 տուն, 256 ար., 217 իգ. և միասին՝ 473 հոգի:

Բիլաքից դեպի հարավ արևմուտք, չորս վերստ հեռու, Արփաչայի ձախ ափին տեղավորված է Ղուշչի-Բիլաք գյուղը, որ հայերից հաճախ Կեչյութ է կոչվում, հին Կեչուտ անունով: Գյուղի արևմտյան կողմում, Արփաչայի ափին, կա մի հին գերեզմանատուն, մոտը ավերակ եկեղեցի: Խաչքարերի մեջ աչքի է ընկնում մեկը, որ 4 արշին բարձրության և 1,5 արշին լայնության քար է, մի ահագին անտաշ քարե պատվանդանի վրա կանգնեցրած: Խաչքարի դեպի արևելք դարձրած երեսին քանդակված է մի մեծ խաչ, իսկ հետևում գրված է.

ի թագաւորութեան վասակա Տր Բարգէն որդի Սիւնեաց իշխանին Հայոց թվականութեան որ ՅԼԵ (886) էր ես Դաւիթ կանգնեցի զխաչս վասն հոգւոյ...յաղաւթս յիշեցէք:

Գյուղի արևելյան ծայրումն էլ, մի ժայռի գագաթին, կանգնած են երեք խաչքար, միայն առանց արձանագրության:

Այստեղից փոքր-ինչ հեռու, Արփաչայի վրա ձգված է եղել մի կամուրջ, որի միայն երկու ծայրի պատերն են մնում:

Գյուղի արևելյան կողմից հոսում է Շարուրի կալվածատեր Շանգիրեի առուն, որ գյուղից մոտ 10 վերստ հեռու, Բազարչայ գետից է առնված և Ղուշչի-Բիլաք գյուղից փոքր-ինչ ներքև թափվում է Արփաչայի մեջ:

Գյուղի մեջ, մի ժայռի միջից, հոսում է հանքային ածխաթթու-երկաթային սառը ջուր:

Գյուղի մեջ, բացի մի հասարակ եկեղեցուց, ուրիշ հետաքրքրական բան չկա: Կլիման բավական ցուրտ է, այնպես որ ցանքերն սկսվում են մայիսի մեկից և աշնանացան տեղի չի ունենում, որովհետև յոթմսյա երկարատև ձմեռը թույլ չի տալիս: Բացի սրանից՝ ամառն էլ Ղըսըր լեռից չարունակ փչում է սառը, զորեղ քամի:

---

[386] Սիսական, եր. 103:

Բնակիչները 45 տարի առաջ գաղթել են Զանգեզուրի գավառի Ուզ (Խոյի գաղթականներ) և Նախիջևանի Ագնաբերդ (ընիկներ) գյուղերից. ընդամենը 90 տուն են, 412 արս., 376 իգ. և միասին՝ 788 հոգի:

Գլխավորապես պարապում են անասնապահությամբ և կաթնատնտեսությամբ, որովհետև հիանալի արոտատեղիներ կան: Շատերն էլ պանդխտում են Բաքու և Թիֆլիս՝ աշխատելու: Եվ որովհետև այդ գյուղի մոտով է անցնում Նախիջևանի գավառը տանող ճանապարհը և բացի դրանից, Ղարաբաղի թաթառական թուրքերը սրա մոտով անցնող Արխաշանի ճանապարհով են գալիս, անցնում Դարալագյազի հյուսիսային լեռները, ուստի ամառը մի առանձին շարժում է տիրում գյուղում, մանավանդ, երբ մոտակա Իսախսու ջերմուկն էլ շատ եկողներ են լինում, ուստի և այս պատճառով գյուղում բացվել են երեք ճոթի և մի մանրունքի խանութներ:

Ղուշչի-Բիլաքից հինգ վերստ դեպի արևմտահարավ, Ղըսըրդաղից դեպի Արփաչայն իջնող սարահարթի վրա փռված է Գնդեվազ գյուղը, որի առաջից, անդնդախոր ձորի միջով դալարվում է հարյուրամյա ընկուզենիների և ծիրանենիների հովասուն սաղարթներով հովանավորված արծաթափայլ Արփաչայը: Իր կուսական, հավերժ գեղեցկությամբ սքանչելի է այս ձորը, որի եզրին բևեռված խոխոմաձիգ ժայռերի խոռոչների ձեղունից վիժվող բյուրեղանման ցայտերը խաղալով ժայռի ամեն մի ծերպից կենդանության դիմող բույսերի հուսալից տերևների և արևի կենսատու ճաճանչների հետ՝ ձայնակցում են բնության հրապուրով հարբած թռչունների դայլայլիկին:

Հիրավի գեղեցկության մատանի է այս ձորակը՝ որի ակը կազմում է Սոփիա սիկնով պարգևած Գնդեվանքը, այժմ դարերի փոշուց փայլը կորցրած:

Ձորի մեջ, նույն ժայռերի ծերպերում կան բավականաչափ ճգնարաններ, մատուռներ, որոնց կայցելենք նշանավոր վանքերը նկարագրելիս, միայն այժմ հիանանք այն ահագին ըրընկեցով, որ թռավալվում է այստեղ ահագին բարձրությունից, և որ, մանավանդ, չափազանց գեղեցիկ է գարնան սկզբին, երբ սարահարթի վրա հալչում են ձյան շերտերը: Սրանից էլ փոքրինչ ներքև նույն ժայռի մեջ կա մի ահագին քարայր, ձորի կողմից պատով պատած, իսկ սրա հանդեպ, գետի ալ կողմին՝ մի ավերակ ամրոց, որ այժմ Ղալա-քյանդ է կոչվում:

Գնդեվազ գյուղը բաժանված է երկու առանձին մասի, հայկական և թրքական: Վերջինիս մեջ է գտնվում հայկական մի հին եկեղեցի սև քարերով շինած, որի դռան վրայի արձանագրությունից երևում է, որ շինել է Պետրոս վարդապետը 1686 թ.: Հայերը սրա հյուսիսային քանդված մասը վերանորոգելով՝ նոր եկեղեցի շինելու հոգսից ազատվել են: Հայկական մասում նշանավոր են շինական դատարանի և միդասյան դպրոցի բավական վայելուչ շենքերը, որոնք կառուցված են նախկին դերեզմանատեղիների վրա:

Հայկական մասում կա մի աղբյուր, որ բերել են մոտ հինգ վերստ հեռավորությունից միայն հայերը, իսկ թուրքերը չեն մասնակցել, այլ չարունակում են ջուր վերցնել ձորի միջի ժայռերից հոսող աղբյուրներից՝ ահագին նեղություններ կրելով: Բացի դրանից՝ ինչպես որ 1008 թ. Գնդեվանքի վանահայր հայր Սարգիսը Զկնարած գետից (Բազարչայի վտակ) մի առու էր բերել մինչև Գնդևազ գյուղը, որը սակայն 1760-ական թվականներին խափանվել էր, այնպես և 1895 թ. գնդեվազցիները 2000 ռ. ծախսելով նույն Բազարչայից մի առու բերին գյուղը, մեծ մասամբ հին ջրանցքը վերանորոգելով:

Բնակիչներից հայերը գաղթել են այստեղ 1866 թ. Կնիշկից, Խաչիկից և երկու տուն Քեչիշքենտից. ընդամենը 42 տուն են, 274 ար., 239 իգ. և միասին՝ 513 հոգի, իսկ թուրքերը ընդամենը 25 տուն, 105 ար., 91 իգ. և միասին՝ 196 հոգի, ուրեմն գյուղի բոլոր բնակիչներն են 67 տուն, 379 ար., 330 իգ. և միասին՝ 709 հոգի. պարապում են երկրագործությամբ, անասնապահությամբ և մասամբ՝ մեղվապահությամբ: Գյուղում կա մի ճոթեղենի և մի մանրուքի խանութ, ինչպես և 7 ջրաղաց և մի ձեթահանք:

Գնդեվազից դեպի արևմուտք, մոտ 5 վերստ հեռու, Արփաչայի ալ ափին տեղավորված է մի փոքրիկ թրքաբնակ գյուղ, Աղճա-քյանետ, որ հավանորեն հին Առչարը պիտի լինի: Այստեղ ևս կա մի ավեր եկեղեցի և մի հին, հայկական գերեզմանատուն: Բնակիչները 19 տուն են, 105 ար., 90 իգ. և միասին՝ 195 հոգի:

Պարապում են բացի երկրագործությունից և անասնապահությունից նաև ծիրանի մշակությամբ:

Գնդեվանքից 3 վերստ հեռու, դեպի հարավ արևելք, գտնվում է Կըլըչլու կամ Ղըլիչլու գյուղը, 13 տուն թուրք բնակչով, 56 ար., 48 իգ. և միասին՝ 104 հոգի: Սրանից ներքև կա մի ընդարձակ հին գերեզմանատուն, մի քիչ էլ հարավ, Արփաչայի ալ ափին տեղավորված է Մամարզակ կամ Մամարզա-կչլաղ փոքրիկ գյուղը, 12 տուն թուրք բնակչով, որից 57 ար., 54 իգ և միասին՝ 111 հոգի:

Այստեղից էլ մոտ հինգ վերստ հեռու, գտնվում է նույնպես աննշան Զայքենտ թրքաբնակ գյուղը, 12 տուն բնակչով, 78 ար., 63 իգ. և միասին՝ 141 հոգի:

Աննշան է նաև գրեթե նույնքան հեռավորության վրա գտնվող Ղայալու գյուղը, որն ունի 27 տուն թուրք բնակիչներ, 130 ար., 117 իգ և միասին՝ 247 հոգի:

Այստեղից էլ մոտ հինգ վերստ հեռու գտնվում է Սոյլանը, ուր բնակվում է միայն մի տուն, փորեցի Ջանփոլատյանը, վճարելով յոթ տան հարկ, որովհետև մյուս վեց տունը գաղթել են ուրիշ տեղեր և իրենց բոլոր հողերը սրանց թողել: Այստեղ ձգված են մի քանի հիանալի այգիներ, տնկված են

մի քանի շարք ուռենիներ և բարդիներ, պահվում են բավականաչափ անասուններ և ձիերի ջոկեր: Այստեղից մոտ կես վերստ դեպի հյուսիս մնում են **Հին Սոյլան** գյուղի ավերակները՝ մի եկեղեցի և մի քանի խաչքարեր. վերջիններիս վրա կան արձանագրություններ ԺԳ դարից: Այստեղից էլ փոքր-ինչ արևելահյուսիս, Արփաչայի աջ ափին, մի ապառաժոտ բլրի վրա նկատելի են մի ամրոցի պարիսպներն ու դարպասը: Ոչ մի հիշատակություն չկա այս ամրոցի մասին և ոչ էլ որևէ արձանագրություն: Բերդատեղը կոչվում է Ղալայ-չայ:

Այստեղից ևս մինչև Մոզ, մոտ ութ վերստ տարածության վրա ընկած են **Հախլու, Տաշալտի և Ջաղատա** թրքաբնակ գյուղերը, որոնց մոտ ևս ոչ մի հետաքրքրական բան չկա, բացի Տաշալտիի մոտ գտնվող հին կամուրջը, որ այժմ վերանորգված է: Հախլուն ունի 7 տուն, 13 ար., 10 իգ. և միասին՝ 23 հոգի: Տաշալտին 11 տուն, 21 ար., 19 իգ. և միասին՝ 40 հոգի, բոլորն էլ վարակված բորոտության ախտով: Ջաղատան ունի 19 տուն, 57 ար., 46 իգ. և միասին՝ 103 հոգի:

Ջաղատայի մոտից սկսվում են Մոզ քաղաքի ավերակները, որ ձգվում են Արփաչայի ուղղությամբ մոտ երեք վերստ, մինչև այժմյան Համանուն գյուղը: Սկզբում հովիտը նեղ է, բայց հետզհետե լայնանում է և արևմտյան մասում մի բավական ընդարձակ դաշտավայր կազմում: Այս մասում, ուր գետեղված է այժմյան Համանուն գյուղը, գետի ափին, բարձրանում է մի բլուր, որի վրա նկատելի են մի ավերակ եկեղեցու հիմնապատեր, երկու կոտրտված խաչքար Զի (1471 թ.) և ԶԼԲ (1483 թ.) և Արփաչայի ապառաժոտ եզրին՝ պարսպի հետքեր: Ամբողջ տարածությունը պատած է խանձողի չեղջակույտերով, որոնց մեջ նկատելի են շինությունների հետքեր, փողոցներ, հրապարակներ: Երեք փոքրիկ հրապարակներ պատած են մոխրով, ես պեղել ուզի այս հրապարակները մոտ չորս արշին խորության, դուրս էին գալիս կավե և հախճապակի ամանների կտորներ, վիզ, ոսկորներ և այլն: Արևմտյան կողմում հոսում է մի հորդ աղբյուր, որ գյուղացիների ասելով, շատ անգամ դուրս է բերում կավե ամաններ և բրոնզի ապարանջաններ և ճարմանդներ: Այս տարածության վրա են գտնվում բրոնզի դարի բավականաչափ գերեզմաններ, որոնցից ինը ես բացել տվեցի:[387]

Հիշենք, որ այս քաղաքից է եղել այն ավանդական կինը, որ սպանել է Ստեփանոս եպիսկոպոսին և այս պատճառով երկրաշարժ է տեղի ունեցել և ավերել այս քաղաքը, և որ այս ժամանակ անդունդից և օդի միջից լսելի է եղել մարդկային մի ձայն, որ կանչել է. «վայ ձոր, վայ ձոր» և այս պատճառով էլ երկիրը կոչվել է Վայոց ձոր:[388]

---

[387] Տե՛ս պատմական տեսության մեջ:
[388] Անդ:

Այժմյան Մոզ գյուղը պատած է ծիրանի և այլ ծառերով ու խաղողի այգիներով: Բնակիչները 12 տուն են, բոլորն էլ թուրքեր, 74 ար., 58 իգ. և միասին՝ 132 հոգի:

Մոզից մոտ հինգ վերստ ներքև գտնվում է Այարը, որ տեղավորված է Արփաչայի ձախ ափին, լեռներով պատած մի հարթ վայրում: Գյուղի միջով հոսում է մի առվակ, որ սկիզբ է առնում Վարդաբլուր լեռից. սրա ջուրը թեպետ և շատ լավն է, միայն սրա մեջ է թափվում Ենկիջայի և Ղուրդղուլազի ճանապարհի վրա գտնվող «Դռավ» կամ «Ոսոի ջուր» կոչված ածխաթթու-ալկալիական ջուրը, և որովհետև գյուղում աղբյուրներ չկան և միակ, գործածելի ջուրը այս է, այս պատճառով էլ բնակիչները բավական վնասվում են: Կլիման էլ տաք է և խեղդող, որովհետև չբջապատող լեռները թույլ չեն տալիս քամու հոսանքներն անցնելու: Ամառը չալթուկի լճակներից բարձրացած գոլորշիներն ամպի նման կանգնում են գյուղի վրա: Մոծակներն ու ճանճերն էլ անթիվ են ու անհամար: Հողը սաստիկ արգավանդ է և ամբողջովին պատած այգիներով ու չալթուկի, բամբակի, ցորենի ու գարու արտերով: Գյուղում ոչ մի հնություն չկա, միայն գյուղից դուրս, դեպի արևելահարավ, ժայռոտ լեռան գագաթին մնում են մի ամրոցի և մի եկեղեցու ավերակները: Տեղացիները եկեղեցուն «անապատ» են կոչում:

Այարը նախկին Ագարակի ձոր գյուղն է, որի մասին Ստեփանոս Օրբելյանն ասում է, թե Նորավանից առաջնորդ չնորհազարդ Տեր Ստեփանոսը խնդրեց Ելտկուզ ամիրայից Ագարակի ձոր գյուղը, և նա քաղցր կամքով այն ևս ընծայեց սուրբ եկեղեցուն և վանքին պատկանող բոլոր տեղերը՝ հողը, ջուրը, այգին, գյուղը և ագարակը և «զբերդն իսկ Անապատայ» ազատ կացոյց աշխարհական հարկերից:[389] Սակայն միառժամանակից այս գյուղը վանքից խլել են, ուստի և Տեր Սարգիս առաջնորդի օրով Լիպարիտ Օրբելյանը ցույց է տալիս սպասալար Զաքարեին աթաբեկ Ելտկուզի տված հրովարտակը և խնդրում է վերահաստատել: Զաքարե սպասալարը իր ձեռքով դրում է, թե դարձրի Ագարակի ձոր գյուղը Նորավանքին ամեն տեսակ հարկից ազատելով,[390] հայոց ՈԿ կամ փրկչական 1211 թ.:

Այարի բնակիչները գաղթած են Սալմաստի Շիտան և Ղարավերան գյուղերից, թուլակազմ, տգեղ, ծույլ և աղքատ մարդիկ են, ընդամենը 47 տուն, 167 ար. և 163 իգ. և միասին՝ 330 հոգի:

Այարից փոքր-ինչ ներքև գտնվում է Դադալի կոչված կամուրջը Արփաչայի վրա, իսկ սրանից էլ փոքր-ինչ ցածր Ղըզըլ-ղըշլաղ թրքաբնակ, աննշան, նոր հիմնված գյուղը, իսկ սրանից էլ 2 վերստ ներքև Էրգեչ գյուղը, որ հին Էրգեչ գյուղը պիտի լինի: Գյուղը գետեղված է Արփաչայի ձախ

---

389 Ստ. Օրբելեան, հ. Բ, գլ. կդ:
390 Ստ. Օրբելեան, հ. Բ, գլ. կե:

ափին և բավական դեղեցիկ տեսք ունի: Բնակիչները թուրքեր են, 43 տուն, 187 ար., 166 իգ. և միասին՝ 353 հոգի:

Գյուղի արևելահարավային կողմում ձգվում է մի ձոր, որ կոչվում է Մառմառ դարասի (Մարմարիոնի ձոր), որովհետև սրա միջով հոսող աղբյուրի բերած կճափայլ խիճը տեղացի թուրքերին մարմարիոն է թվում: Այս ձորում երեք կողմից ուղղահայաց և միանգամայն անմատչելի բարձրանում է մի քարաբլուր, որի վրա կա մի հին ամրոցի ավերակ, հյուսիսային կողմը կրաշաղախ պարիսպ, մի դարպասով, ներսում մի կրաշաղախ ջրամբար, տների հիմնապատեր և կոտրատված խաչքարեր, մի քանիսը ԺԳ դարից: Բերդի ստորոտում ևս կան տների հիմնապատեր և գերեզմանաքարեր:

Այստեղից էլ փոքր-ինչ բարձր՝ մի ձորակի մեջ գտնվում է **Մեզրե** կամ **Մոզրով** ավերակ գյուղը, իսկ սրանից դեպի արևմուտք Էրդիչ-պաշի երկրաձիգ լեռան ստորոտում **Գանձակ** կամ **Քյանձակ** գյուղատեղին:

Էրդիչից մինչև Արփա գյուղը, մոտ ութ վերստ հովիտը բավականաչափ նեղանում է, և Արփաչայի երկու կողմին բարձրանում են ահագին ժայռեր, շատ գեղեցիկ կիրճ կազմելով, որի միջով որոտընդոստ հոսում է գետը: Այս ձորը կոչվում է Շնղուլի ձոր: Այստեղ, գետի աջ ափին, կա մի կիսավեր եկեղեցի, շուրջը տան հիմնապատեր և մի քանի գերեզման: Եկեղեցին կոչվում է Ծծախաչ, որովհետև սակավակաթ կանայք ուխտ են գալիս եկեղեցու խաչքարին՝ հայցելու, որ իրենց ստինքի կաթը ավելացնի:

Արփա գյուղի մոտ Շնղուլի ձորին միանում է Ուվի կոչված ձորը, որ տանում է դեպի Ամաղու հռչակավոր վանքը:

Արփան տեղավորված է Արփաչայի ձախ ափին, մի փոքրիկ հարթության վրա, բավական ցածր դիրք ունի, ուստի կլիման սաստիկ տաք է, ու առատությամբ բուսացնում է բամբակ, արփեցիների հարստության ամենագլխավոր աղբյուրը: Այժմյան գյուղում հետաքրքրական ոչինչ չկա, նույնիսկ փոքրիշատե գեղեցիկ շենք, չնայելով որ այնտեղ է գտնվում շինական դատարանը և հասարակության պետական, միջազգային դպրոցը: Բնակիչները բնիկ են, որ մեկուկես դար առաջ գաղթել են մոտակա հին Արփա գյուղից, ընդամենը 72 տուն են, 295 ար., 259 իգ. և միասին՝ 554 հոգի: Բացի բամբակի մշակությունից, պարապում են նաև այգեպանությամբ, երկրագործությամբ և անասնապահությամբ: Ամբողջ Դարալագյազում Արփայի գինին համարվում է ամենալավը, ինչպես և իրենք, արփեցիք, համարվում են ամենալավ կոնծողներն ու հնչտասերը:

Գյուղը կալվածատիրական է, պատկանում է Զիվայի և Յուխարի Դանձիկի տեր Վեքիլով թուրք բեկերին: Գյուղում կա երկու ճոթի խանութ, բամբակ մաքրելու գործարան և չորս ջրաղաց:

Արփա գյուղից փոքր-ինչ բարձր, նրա հարավարևելյան կողմում, ապառաժոտ ժայռերի ստորոտում եղել է հին Արփա գյուղը, որից միայն տների

հիմնաքարերն ու մի ձիթահանքի քար են մնացել: Սրա հանդեպ, մի բլրակի վրա կանգնած է մի գեղեցիկ, կիսակործան եկեղեցի, շրջապատված հին և նոր գերեզմաններով, որովհետև այժմյան արփեցիներն էլ իրենց ննջեցյալներին այս գերագմանատանն են թաղում: Ուշագրավ է նաև այստեղից դեպի հյուսիս, Արփաչայի ալ ափին դեռևս մնացած հին կամուրջի սրբատաշ, մոխրագույն քարերից շինած երեք ոտները, որոնց վրա երբեմն բոլորելիս են եղել երեք կամարներ: Այս կամուրջը այժմ դետից փոքր-ինչ հեռու է մնացել, որովհետև վերջինս դեպի ձախ է թեքվել, տաշելով հին Արփայի բլուրը: Այս կամուրջը չինել է Նորավանքի Սարգիս եպիսկոպոսը Տարսայիճ իշխանի հրամանով ԺԳ դարի վերջում:[391] Հին Արփայից փոքր-ինչ հեռու, դեպի արևելք, մի քարաբլրի ստորոտում, որտեղից հոսում է Ղարա-սու (Սև ջուր) կոչված հորդ աղբյուրը, կան ս. Գրիգոր և Մարիամ նահատակների ուխտատեղիները՝ շրջապատված սուրբ համարված փշատի և այլ ծառերով:[392]

Կամուրջից դեպի արևմուտք էլ Վարդապետի հող կոչված տեղի մոտ, մի փոքրիկ բլրակի վրա, կանգնած է մի որմնափակ խաչքար, 1303 թվի արձանագրությամբ:

Հին Արփայի բնակիչները Օրբելյաններից առաջ եղել են Ախթամարյան զարմերը, որ «ի հին ժամանակաց բնակեալ էին յԱրփայ դյուղն»: Այս զարմի պայազատը Վասակ Խաչենեցու օգնությամբ խլեց պարսիկներից Հրասեկա բերդը: Սրանք նաև Նորավանքի շինության ժամանակ տվին «յիւրեանց հայրենեացն ղԴայեկիքարոյ այգւոցն զվերին բաժին»: Հին Արփայում Օրբելյան Տարսայիճ իշխանը շինել էր իր համար դարպաս, և այստեղ էլ 1290 թ. վախճանվել է և տարվել, թաղվել է Նորավանքում: Սրա ժամանակ Արփայում բնակվում էր նաև Մահևանյան կապանեցի իշխանների պայազատ Ջուբրի որդի Ամիրան, որ Տարսայիճից 4000 դրամի գնելով Արփայում Աղթա այգին, նվիրեց Նորավանքին:[393] Ժէ դարում Արփայի բնակիչների մի մասը Պարսկաստան գերի տարվեց և սրանցից մինը՝ Գրիգոր, պարթևահասակ և հաղթանդամ, և «սրտիւն արի, բանիւք և խելօք, հանճարեղ, և հաւատովն և սիրովն Քրիստոսի հաստատ և ջերմագոյն», բնակվում էր Փարիոլ գավառի Խոյիկան դյուղը և քաջալերում էր իր գերեկիցներին չհուսահատել իրենց հավատի մեջ, մոլորվելով Շահ-Աբասի արբանյակ-

---

[391] Ստ. Օրբելեան, հ. Բ, գլ. ԿԶ, եր. 176:

[392] Ավանդությունն ասում է, թե մի խումբ թուրքեր ստիպում են Գրիգորին առաջնորդել իրենց դեպի Արփա՝ որպեսզի կոտորեն և թալանեն: Սա նրանց երկար ման է ածում և գիշերը բերում Արփա դյուղի ապառաժոտ գագաթի վրա մի կածան ցույց տալիս, որ իջնեն, ինքն էլ առաջ է անցնում և մի ձեղքում թաքնվում, նրանց ձայն տալիս, որ գան: Թուրքերից չատերը գլորվում են ժայռից և մեռնում, իսկ մյուսները լսանալով Գրիգորի խարդախությունը մոտենում են, վայր գլորում նրան և իրենք փախչում: Դյուղը ազատվում է թուրքերի հարձակումից, և երախտապարտ դյուղացիները թաղում են նրան իր ընկած տեղը ու մատուռ կանգնեցնում վրան:

[393] Ալիշան, Սիսական, եր. 183:

նների հորդորներից: Նույնիսկ մի քանի անգամ նա ներկայացավ Շահ-Աբասին և թախանձանքով դրավոր հրաման ստացավ նրանից ազատորեն դավանելու քրիստոնեությունը: Սակայն նախանձորդ թուրքերից ամբաստանվեց և դատապարտվեց ուրացության կամ մահվան: Վերջինս ընտրելով՝ նահատակվեց 1621 թ.:[394]

Այս գյուղից է եղել Խաչիկի դուստր Ազիզը, որ ամբաստանվել է, թե ամուսնությունից առաջ որդի է ունեցել իր նշանած Միրմանից: Նախիջևանի Մուրադ խանը առաջարկել է ուրացություն կամ մահ, և երբ Ազիզը չի ուրացել, նրան պարանով կախել են քաղաքից դուրս՝ մի մինարեից և նա ընկել մեռել է: Քաղաքի քրիստոնյաները վերցրել են նրան ու պատվով թաղել 1679 թ.:[395]

Արփայից մոտ ութ վերստ ներքև, Արփաչայի աջ ափին, փռված է վերին կամ Ցուխարի տանձիկ Թրքաբնակ գյուղը: Այստեղ ուշադրավ ոչինչ չկա, միայն սրանից փոքր-ինչ արևմուտք, մի բարձր քարաժայռի տակ գտնվում են հին Տանձիկ գյուղի ավերակները: Թեպետ և ոչ մի արձանագրություն չկա այս ավերակների մեջ և ոչ էլ մի որևէ պատմական հիշատակություն, սակայն Նորավանքի զանգակատան արևմտյան դռան արձանագրությունը վկայում է, որ 1303 թ. «**Սանճար որդի Տանաղուին ոչ ունելով զավակ յերկրի...տուի յիմ հալալ հայրենեաց զՏանձիկ իւր սահմանաւքն և այգւովն ի Նորավանքս**»:[396]

Տանձիկից դեպի արևելահարավ, դեմի ձախ ափին բարձրանում են միմյանցից փոքր-ինչ հեռու երկու քարաժայռեր, որոնց վրա կան ջրամբար և բերդի ավերակներ, պարիսպ, կրաշաղախ սենյակներ: Սրանցից բարձրը այժմ կոչվում է Վիսալլի բերդ, իսկ ցածրը՝ Ուչ կարդաշ կալասի (երեք եղբայրների բերդ), իսկ սրանց պատմական անունը հայտնի չէ: Այս բերդերի մոտ է գտնվում մի ծծմբահամ աղբյուր:

Գյուղից փոքր-ինչ հեռու տարածվում է Օսաեր դաշտը, ուր կա մի ուխտատեղի՝ կրակից սևացած մի մեծ քար, որ հավատարմորեն պաշտվում է թե հայերից և թե թուրքերից: Ավանդաբար պատմվում է, թե այդտեղ է չարչարվել Հոր երանելին, և այդտեղ տարածված քարացած ժժմակները նրա վերքերից թափված ճիճուներն են: Վերին Տանձիկի բնակիչները ընդամենը 61 տուն են, 144 ար., 126 իգ. և միասին՝ 270 հոգի:

Վերին Տանձիկից ներքև, դեմի աջ ափին գտնվում են ներքին Տանձիկ և Դավա-օլան աննշան գյուղերը, առաջինը ունի 18 տուն թուրք բնակիչ. 57 ար. 40 իգ., և միասին՝ 97 հոգի, իսկ երկրորդը՝ 4 տուն, 17 ար., 16 իգ և միասին՝ 33 հոգի, նույնպես թուրք:

---

[394] Առաքել Դավրիժեցի, գլ. ԺԹ:
[395] Ալիշան, Սիսական, եր. 184:
[396] Տե՛ս Դիվան Հայ Վիմագրության, պրակ III, եր., 1967, էջ 222 (խմբ):

Դավա-օլանի հանդեպ, դեպի արևելք տարածվում է մի դաշտ, որ կոչվում է Սանդյուզան (ուղղաչար), ուր կա մի երկարաձիգ պատ, ուր ավանդության ասելով, Նադիր-շահը կանգնել է և զորքերի չարքերը համարել: Նույն շահի համար պատմում են, թե հանգստացել է այն քառանկյունի պատի վրա, որ չինված է Սանդյուզանից մոտ 4 վերստ դեպի հյուսիս, և որ այժմ էլ կոչվում է Շահ-թախտի: Սրանից հազիվ կես վերստ բարձր, դեպի հյուսիս, Արփաչայի աջ ափին, բայց մոխրագույն ժայռի մեջ ձգվում է մի դեղնագույն քարի շերտ, որին անվանում են Աժդահա-բուռուն (վիշապի ոլորք կամ քիթ) և որի մասին պատմում են, թե մի վիշապ է եղել, որն այդտեղ, հայտնի չէ, թե ում անեծքով, քարացել է: Սրա հանդեպ կա մի փոքրիկ ձորակ, ընկույզի հինավուրց ծառերով զարդարված, ինչպես և ժայռից բխող մի աղբյուր: Այս ձորը կոչվում է Քհչիչ-բաղի (քահանայի այգի) և պատմվում է, թե դրա տեր քահանան չափազանց քաջ է եղել, երկար կռվել է այդ վիշապի հետ և նրան քարացրել:

ՀՑՈՒՍԻՍԱՑԻՆ ՎԱՑՈՑ ՁՈՐ

Զորահովիտ Հերհերի. Սա ձգվում է Վայոց ձորի հյուսիս-արևելյան մասում, հյուսիսից դեպի հարավ, գրեթե ուղղաձիգ: Զորահովտի հյուսիսային մասում տարածվում է Քոթանկուի լեռնապաշտը, որի վրա բարձրանում է կոնաձև **Թափասի-դալիկ** կամ **Դալիկ-թափա** հրաբխային գագաթը. փոքրինչ էլ հարավ նշանավոր է Ղրմըզի-գյունեյ լեռը: Զորահովտի միջով հոսում է **Քոթանկուի** կամ **Հերհերի** գետակը, որ սկիզբ է առնում Դարալագյազի հյուսիսային լեռների Մուրացա-թափա, Սանդախլիդաղ, Խաբուզ-դաղ և այլ գագաթներից: Սրա հետ միանում է Ղաբախլի-չայ գետակը, սկիզբ առնելով Թեքե-գոնդուրան լեռից: Զորահովտի առավելապես արևելյան մասում, Հերհերի և նրա վտակների ափերին աճում են փոքրիկ անտառներ, իսկ լեռներն ընդհանրապես զուրկ են ծառերից:

Ղաբախլու-չայ և Հերհեր-չայ գետակների միջավայրում, Սանդախլի լեռան լանջին, մի առվակի եզրին տեղավորված է **Գենդարա** գյուղը, որն ունի 28 տուն թուրք բնակիչ, 134 ար., 132 իգ. և միասին՝ 266 հոգի:

Սրանից հարավ, Քոթանկու գետակի ձախ ափին, մոտ ժամանակներս հիմնված է **Արալըխ** թրքաբնակ, փոքրիկ գյուղը, որից հարավ, փոքրիկ հովտում, գետեղված է **Քոթանկու** թրքաբնակ գյուղը: Այստեղ կա հայկական մի եկեղեցու ավերակ, մոտին մի 3,5 սրչին բարձրության, կապտագույն խաչքար ՆԼԹ (990 թ.) արձանագրությամբ:[397] Նույնպիսի մի եկեղեցու ավերակ և մի քանի ընդարձակ դերեզմանատներ ԺԹ դարի խաչքարե-

[397] Տե՛ս արձանագրության մասում:

րով գտնվում են այս գյուղից դեպի արևմուտք, հին Քոթանքի գյուղատեղում, որտեղից այս գյուղի բնակիչները տեղափոխվել են այստեղ՝ ջրի պակասության պատճառով: Հայր Ալիշանի կարծիքով այս հին Քոթանքուն նախկին Գուտենի գյուղը պիտի լինի: Այժմյան Քոթանքուի բնակիչները թուրքեր են, 56 տուն, 309 ար., 217 իգ. և միասին՝ 526 հոգի:

Քոթանքուի հանդեպ, դեպի արևելք, հրաշալի ջրընկեցի մոտ, սեղմված է **Գյոգ-Աբաս** *թրքաբնակ, փոքրիկ գյուղը, ուր նույնպես կա մի հայկական եկեղեցու հիմնապատեր և մի քանի խաչքար: Սրանցից մեկի վրա քանդակված է Քրիստոսի պատկերը, գլխի երկու կողմում մի-մի աղավնի, սրանց ներքև մի-մի խաչակիր, կանգնած մարդ և ավելի ներքև մի առյուծ և ցուլ: Արձանագրության թվականն է ՋՂԴ (1345 թ.):*

Բնակիչները թուրքերն են, 25 տուն, 118 ար., 92 իգ և միասին՝ 210 հոգի:

Այստեղից մոտ հինգ վերստ դեպի հարավ գտնվում է այս ձորահովտի ամենամեծ գյուղը՝ **Հերհեր**, *որ հավանականորեն Օրբելյանի կազմած գյուղերի ցանկի մեջ հիշված* **Երերն** *գյուղը պիտի լինի: Թե գյուղի մեջ գտնված բրոնզե իրերը և թե բազմաթիվ տների հետքերն արդեն ապացույց են, որ թե շատ վաղ ժամանակից և թե բավական մեծ բնակություն է եղել այստեղ: Գյուղից դուրս, դեպի Ղուչչի-բիլաք տանող ճանապարհի վրա հս նկատեցի երեք հատ կուրգաններ, որոնց պեղելու, դժբախտաբար ժամանակ չունեցա:*

Գյուղը տեղավորված է գետի ալ ափին և բաժանված է երկու մասի՝ վերինը հայկական, ներքինը՝ թրքական: Վերջինս ավելի հարթ և ընդարձակ տեղ է բռնում, թեպետ և իր շինություններով, այնուամենայնիվ, ողորմելի է թվում հայկական, առանձնապես վերցրած շատ հասարակ, շինություններ առաջ: Երկու թաղերի գրեթե սահմանագծում, փոքրիկ հարթության վրա բարձրանում է մի հինավուրց, հասարակ եկեղեցի, որը վերանորոգել են և մոտի գեղեցիկ խաչքարը կանգնեցրել են կորանը՝ արևմտյան պատի մեջտեղում: Եկեղեցու շուրջը կան հին գերեզմաններ, հին խաչքարերով: Այստեղից փոքր-ինչ բարձր մի պարտեզի մեջ քարե պատվանդանի վրա կանգնած է երեք արշինաչափ մի գեղեցիկ խաչքար՝ 1282 թ. արձանագրությամբ:

Սակայն Հերհերի ուշադրավ հնությունները ս. Սիոն անապատը և ս. Գեորգի մատուռն են:[398] *Առաջինը գտնվում է գյուղից բարձր, դեպի հյուսիս, մի փոքրիկ բլրակի գագաթին, որի ստորոտով հոսում է մի հատակ առվակ: Այս փոքրիկ, երկու կից եկեղեցիներից բաղկացած անապատը, ինչպես հետո կտեսնենք, շատ հին է և շինված է Սյունյաց վարազդուխտ տիկնոջից: Շուրջը կան մոտ երեսուն լացերի ավերակներ, բավականաչափ գերեզ-*

[398] *Ժողովուրդը այդ մատուռին այժմ կոչում է Զիք վանք:*

մաններ, մի քանի նրբաքանդակ խաչքարերով, փոքր-ինչ հեռու էլ մի ձիթհանք:

Ս. Գեորգի մատուռը գյուղի հարավային ծայրումն է, մոտ կես վերստ հեռու, գետի ձախ ափին բարձրացած մի ապառաժոտ բլրի գագաթին, շինված է 1247 թ. Շաչ միայնակյացի և իր եղբայր Մաթուխի աշխատությամբ:

Գյուղի հանդեպ դեպի արևելյան կողմը բարձրանում է ապառաժոտ, մի բարձր գագաթ, որ համարվում է Գյոյ-դաղի մի ճյուղ: Սրա վրա կա մի փոքրիկ ամրոցի հետքեր, պարիսպ և մի մատրանման շինություն, մոտը երեք խաչքար, որոնցից մեկի վրա կա 1247 թ. արձանագրություն: Հավանական է, որ սա լինի Վայոց ձորի Կապույտ բերդը: Այս գագաթից մի ահագին ժայռ կտոր գլորվել է և կանգնել գյուղի հանդեպ, ուր այժմ նկատելի են տների հետքեր: Այդ ժայռի վրա կա մի ընդարձակ արձանագրություն, որ գրել է 1143 թ. Գրիգոր կրոնավորը:[399]

Հերհերի բնակիչներից հայերը գաղթած են Զանգեզուրի գավառի Ալիլու և Նախիջևանի գավառի Ջահրի գյուղերից: Բացի սովորական պարապմունքից պանդխտում են Թիֆլիս և Բաքու՝ մշակություն անելու: Ընդամենը 80 տուն են. 315 ար., 302 իգ. և միասին՝ 617 հոգի: Իսկ թուրքերը 97 տուն են, 393 ար., 399 իգ. և միասին՝ 732 հոգի: Ուրեմն գյուղի բոլոր բնակիչներն են 177 տուն, 708 ար., 641 իգ. և միասին՝ 1349:

Ջնայելով, որ գյուղի ամենալավ վարելահողերը թուրքերի ձեռքն են, այնուամենայնիվ հայերը տնտեսապես նրանցից շատ լավ են: Առաջները թուրքերը սաստիկ նեղում էին հայերին և շարունակ գողությամբ պարապում: Նրանք երկար ձողերի ծայրին երկաթե կեռ էին անցկացրել և գիշերները տների հերթիկներից ներս էին կոխում և պատահած իրը դուրս հանում: Այս պատճառով էլ հայերը խնդրամատույց եղան և 1902 թ. պահնորդների պահակ հաստատեցին այստեղ:

Հերհեր գյուղից 3 վերստ դեպի հարավ, այնտեղ, որտեղ Հերհեր չայը դուրս է գալիս ժայռերի նեղ և խոր կրծքից և որտեղ վերջանում է Հերհերի հարթավայրը՝ դրված է Բուլախլար կամ Բեգզադա գյուղը, որի բնակիչները տեղավորված են Հերհեր չայի աջ և ձախ ափերին: Բուլախլար անունը այդ գյուղը ստացել է այն պատճառով, որ գյուղի վերևում, հյուսիսային կողմի ժայռից թափվում են առատապես պատվական աղբյուրներ (թուրքերեն՝ բուլախլար), իսկ Բեկզադա անվանվում է այն պատճառով, որ այստեղ բնակվում են թուրք բեկեր, որոնք իրենց ծագումը հաստատում են զարաչոռլու ցեղի Ջաթալի խանից: Այդ գյուղի աղբյուրները հռչակավոր են Դարալագյազում իրենց կարմրախայտ ձկներով, որոնք ձմեռները ներս են մանում ու պահվում ժայռերի մեջ աղբյուրների ջրաբաշխում, իսկ գարնա-

399 Տե՛ս արձանագրության մասում:

նը դուրս են թափվում Հերհեր չայի մեջ: Բուլախլարի բնակիչները 12 տուն են, 80 ար., 60 իգ. և միասին՝ 140 հոգի:

Բուլախլարից մոտ երկու վերստ դեպի հարավ, Հերհեր չայի աջ ափին, մոխրագույն լեռների ստորոտում, փոքրիկ հարթութեան վրա գտնվում է **Արինջ** գյուղը, որի բնակիչները ոչնչացնելով լեռան լանջերը ծածկող անտառները, մերկացրել են և անտառների փոխարէն տնկել են ծիրանի ծառեր: Արինջն ունի 29 տուն թուրք բնակիչներ, 140 ար., 89 իգ. և միասին՝ 229 հոգի: Արինջից սկսած հովիտը հետզհետե նեղանում է և Հերհեր գետը կրկին սեղմվելով ու գրեթե անհետանալով ձորերի և ժայռերի մեջ՝ հոսում է մոտ 8 վերստ տարածութեամբ և թափվում Արփաչայի մեջ:

Մալիշկայի հովիտ. Այս գինեվետ հովիտը ձգվում է դարձյալ հյուսիսից հարավ, գրեթե ուղղաձիգ, Հերհերի ձորահովտից 8-10 վերստ դեպի արևմուտք: Հովտի միջով հոսում է Մալիշկու գետակը, որ բաղկացած է երկու վտակներից՝ Արգյազի չայ և Ղարավանքի չայ, որոնք միանում են Մալիշկա գյուղից բարձր՝ կարմիր-սար լեռան ստորոտում: Հովիտը շրջապատող լեռնային զագաթներից նշանաւոր են Աղ-դաղը, Մալիշկա գյուղի արևելեան կողմում, կարմիր սարը և Գանջի-մալը: Հրաբխային խանձողի շերտակույտեր և մանր կտորներ նկատելի են գրեթե ամբողջ հովտում, մանավանդ նրա հարավային ծայրում, ուր գտնվում է Մոզ քաղաքի ավերակները:

Հովտի հյուսիսային մասում կա մի հին գյուղատեղի մի քանի աղբյուրներով, որի պատճառով և կոչվում է **Բուլախլար (աղբյուրներ)**: Լեռնային հարուստ բուսականութիւնը նպաստում է նաև մեղվապահութեան, ուստի և սրա մոտակայքում պահում են մեղուներ մոտ 2 վերստ հեռաւորութեան վրա գտնվող Արգյազ գյուղի բնակիչները: **Արգյազը** մի փոքրիկ, աննշան գյուղ է, գետեղված մի չափազանց քարքարոտ սարի լանջին: Սա հին Արկազ կամ Արկազն գյուղն է, որի մասին Ստեփանոս Օրբելյանը պատմում է, թե 735 թվին սրա բնակիչներն իրենց տանուտերի առաջնորդութեամբ դուրս եկան Մոզում նահատակված Ստեփանոս եպիսկոպոսի մարմինը դեպի Թանահատի վանքը տանողների առաջ և խնդրեցին, «Հանգուցանել (մարմինը) ի սեննեակն, որ յանուն սրբոյն Քրիստափորի անյաղթ զօրավարի շինեալ էր...»: Նրանք էլ հարգեցին սրանց խնդիրը և ասա, վայոց ձորի քառասնօրյա պատուհասից հետո, ողջ մնացած բնակիչները հրավիրեցին կաթողիկոսին ու բազմաթիվ հոգևորականներ և տեղափոխեցին սրբի նշխարները Թանահատի վանքը:

Այժմյան գյուղը գեղեցիկ է իր դիրքով ու տեսարանով և գերազանցում է իր շինութիւններով մյուս թրքաբնակ գյուղերից: Բնակիչները թուրքեր են, 45 տուն, 382 ար., 341 իգ. և միասին՝ 723 հոգի: Սրա և Ջուլի բնակիչները համարվում են Դարալագյազի թուրքերի մեջ ամենահարուստը: Այս

և Հերհեր գյուղում միայն կան մի-մի մզկիթ, իսկ մյուս բոլոր թրքաբնակ գյուղերը զրկված են աղոթատներից:

Արգյագի թուրք բնակիչների մեծ մասը խանդաղայլու ցեղից են, որոնք սերել են Զանդեզուրի գավառի Խնածախ գյուղի մելիք Հայկազ կամ մելիք Էազ հայ մելիքի մահմեդականություն ընդունած որդիներից:[400]

Գյուղի ստորոտում, լեռնադաշտի վրա բարձրանում է Արգյագի սուրբ Խաչ վանքը, ուր ս. Խաչի տոնին ահագին բազմություն է ուխտ գալիս:[401] Վանքի հարավային կողմում նկատելի են հին շինությունների հիմնապատեր և նույնիսկ ավերակներ, աղբյուրի խողովակներ և բլրի վրա՝ մի սրբատաշ քարից շինված կիսավեր եկեղեցի:

Ս. Խաչ վանքի արևմտյան կողմը, մոտ 2 վերստ հեռու, Մալիշկայի գետակի երկրորդ վտակի ձախ ափին, գտնվում է Ղարա-վանք (սև վանք) գյուղը, որ իր անունն ստացել է մոտի տափարակ բլրակի վրա սև քարերով շինված վանքից: Այս, թուրքերից Ղարա-վանք կոչված մենաստանը, ԺԳ դարում շինված Թանահատի վանքն է, ուր ամփոփված է 735 թ. Մոզում նահատակված Սահիանոս եպիսկոպոսի մարմինը:

Թուրքերի կիսագետնափոր, ողորմելի տներն արդեն շրջապատել են վանքը և քարերից շատերը տարված են, որովհետև վանքը կիսավեր է և անխնամ թողնված:

Բացի վանքից, գյուղում ուրիշ հետաքրքրական բան չկա: Բնակիչները խանդաղայլու թուրքեր են, որոնց մեջ կան չափազանց գեղեցիկներ, ընդամենը 25 տուն են, 156 արս., 142 իգ. և միասին՝ 298 հոգի:

Ղարավանքից դեպի հարավ, մոտ հինգ վերստ հեռու գտնվում է վայոց ձորի հայաբնակ ամենաբազմամարդ գյուղը:

Մալիշկան, որ տեղավորված է հովտի փոքր-ինչ ընդարձակ մասում, համանուն գետակի ձախ ափին: Այստեղ սքանչելի են այն հորդաբուխ և սառնորակ աղբյուրները, որոնք ժայթքում են ձորը շրջապատող ժայռերի միջից, տեղ-տեղ բանաստեղծական խոռոչներ կազմելով: Գյուղի հարավ-արևելյան կողմը, դեպի Այար և Մոզ գյուղերը ծածկված է խաղողի և պտղատու ծառերի ընդարձակ այգիներով: Գյուղի մեջ կան մի քանի լայն փողոցներ և բավականաչափ գեղեցիկ տներ և մի անշուք եկեղեցի: Դեռևս կանգուն են մի քանիսը այն վաթսուն կրպակներից, որ Դարալագյազի ոստիկանական շրջանի կառավարիչ Պետրոս Մադաթյանը կառուցել էր տվել 1857 թ. ամեն ջանք թափելով, որ այստեղ հաստատվի մշտական շուկա և տոնավաճառ: Սակայն նրա ջանքերը իզուր են անցել: Գյուղից 0,5 վերստ հեռու, դեպի հյուսիս կա երկաթա-ալկալիական ջուր:

---

[400] Այս մասին տե՛ս «Բնակչություն» գլխում:
[401] Տե՛ս նշանավոր վանքերի մասում:

Բնակիչները Սալմաստի Սավրի և Սարամերիկ գյուղերից են, վայելչակազմ, առողջ և մանավանդ ճարպիկ մարդիկ, չատերը Ռուսաստան խաչադողություն արած: Գրագիտությունը բավական տարածված է, ունեն պետական մեկդասյան դպրոց, ընդամենը 160 տուն են, 771 ար., 527 իգ. և միասին՝ 1298 հոգի: Գլխավորապես պարապում են այգեգործությամբ և գինեգործությամբ, բացի հացահատիկներից, մասամբ ցանում են նաև չալտիկ և բամբակ: Մալիշկի գինին Արփիի գինուց հետո ամենալավն է համարվում և իր գավառին բավականություն տալուց զատ՝ մեծ քանակությամբ արտահանվում է Նոր-Բայազետի գավառ:

Հերհերի և Մալիշկայի հովիտների միջև ընկած են Հյուսիսում՝ **Նովլու**, իսկ հարավում՝ **Նովլար և Դայլախլու** գյուղերը: Նովլուն մի աննշան գյուղ է, 23 տուն թուրք բնակչով, 140 ար., 115 իգ. և միասին 255 հոգի:

Նովլար գյուղում կան ջրի քարե հնադարյան ավազաններ, նավեր, որից և առաջացել է գյուղի անունը՝ Նավլար: Բնակիչները խանաղայլու թուրքեր են, մեծ մասը բորոտության ախտով վարակված. ընդամենը 20 տուն են, 83 ար., 60 իգ. և միասին՝ 143 հոգի:

Դայլախլուն գտնվում է Մոզ քաղաքի ավերակներից դեպի արևելահյուսիս, այն հարթության ծայրին, որ այժմ կոչվում է Փշադյուզ, թերևս Ստ. Օրբելյանի հիշած Փշատիք գյուղի անունով: Ինչպես տեսանք,[402] սրա սահմանում գտնվում է Սոլթան քահասի կոչված գյուղատեղին, որ հղկած քարի գարի մնացորդ է: Ավելացնենք այստեղ, որ այդտեղ գտնված ծովային նստվածքներից բաղկացած բլրի մասին տեղական թուրք ավանդությունն ասում է, թե այդտեղի մի հարուստի դրամներն են քարացել, որովհետև նա մեղանչել է իր հարազատ հարսի դեմ:

Բացի հղկած քարի շրջանի վերոհիշյալ մնացորդներից, այստեղ կան նաև մի քանի, վերջին ժամանակի հնություններ, ինչպես ներքին Դայլախլուի մոտ գտնվում է մի տափարակ քար, թերևս տապանաքար, վրան քանդակված մի թագակիր կնոջ պատկեր, ձեռները դոտի մեջ դրած: Սրա մոտ մի ժայռի կրծքին փորագրված է. «**Ես Մարգարէ քահանայս կանգնեցի զխաչս և չինեցի զքաւարանս. ով կարդէք յիշեցէք**»: Սրա մոտ, հիրավի, նկատելի են մատուռի հետքեր, որ գյուղացիները բաց են արել և ուխտատեղի դարձրել: Այստեղից էլ մի կես վերստ հեռու, ժայռի մեջ կա մի մեծ քարայր, ուր դեռևս մնում է ձիթհանքի մի քար: Սրա շրջակայքում նկատելի են տների հետքեր:

Դայլախլու գյուղը բաժանվում է երկու մասի՝ վերին և ներքին, որ միմյանցից երկու վերստաչափ հեռու են: Վերինում բնակվում են 13 տուն միայն հայեր, իսկ Ներքինում՝ երկու տուն հայեր և երեք տուն թուրքեր:

---

[402] Տե՛ս «Պատմական տեսության» մեջ:

Հայերը Ազատակ գյուղից են, այն գյուղի վրա են ցուցակագրված և ձմեռը այնտեղ են անցկացնում:

Ղուրու-չայ ձոր կամ Սրկղոնք. Մալիշկայի ձորից արևմուտք ձգվում է մի ուրիշ, փոքրիկ ձորակ, որի միջով հոսում է Ղուրու-չայ գետակը, իր անունը տալով ձորակին, որ հնում Սրկղոնք էր կոչվում: Այս պատմական վայրի մասին ահա թե ինչ է պատմում Ստեփանոս Օրբելյանը. Վարդանանց նահատակությունից հետո մի փախստական դունդ կամենում էր անցնել Արցախ ամուր աշխարհը, որի հետևից պնդեց անիծված Աթաշխուդա կրակապաշտը Պարսից չարահնար զորքով և հասնելով «ի գավառամէջն Վայոց ձորոյ, մերձ ի բլուրն որ մեծամեծ վիմօք պատեալ էր վասն ամրութեան, ի պետամիջին Եղեգեաց և Մոզան» կռվեցին և կոտորեցին չատերին... Հետո պնդեցին մյուսների հետևից և հասնելով նրանց, կիսին մի բերդաքարի սարոռում, մի նեղ ձորակի մէջ, նրանց ևս կոտորեցին, սրանց գլխավորի անունն էր Մարտիրե, և տեղն էլ կոչվեց Անգեղձոր: Ապա ասպատակ առնելով հասան 300 մարդկանցն էլ «ի ջրկիցն որ **Ոստինք** կոչի և **Արտաբոյնք**» և այդտեղ նրանց էլ խողխողեցին: Սրանց վրա հետո տեղի բնակիչները եկեղեցի չիննեցին...Առաջին սրբերը, որ բլրի մոտ նահատակվեցին, իսկույն ամփոփվեցին քրիստոնյաների ձեռքով, բայց հետո, երբ Գյուտ կաթողիկոսը լսեց այդ մասին՝ հրամայեց մի մեծ վկայարան չինել այդ սրբերի վրա: «Եւ կատարեալ զնա մեծաձախ գանձիւք կանգնեցին ճեմարան իմն երկնանման հրաշագործարար չինուածովք երկագմբէթիս և եռախորանս. և յերկուց կողմանէ գաւիթս և սրահակս, վերնատունս սեամբք և սքանչելի յօրինուածովք չինեալ: Եւ վայրն ամենայն ի մեծ գետոյն մինչի վեր ի լեռնակողմն որ Սրկղոնք կոչի, ընծայեցաւ ի ժառանգութիւն ս. եկեղեցւոյն պաշտօնէիցն»:

Բայց ժամանակի ընթացքում ավերվեց այդ շենքը և ԺԳ դարում տեղը դարձավ չինանիստ և կոչվեց Խոտորակեզ:[403] Այժմ ամբողջ Դարալագյազում ոչ Սրկղոնք և ոչ Խոտորակեզ անունով գյուղ կամ ավերակ հայտնի չէ, այլ այդ նկարագրված վայրում կանգնած են Բաշքենտ, Օրդաքենտ և Քեչիչքենտ գյուղերը:

Բաշքենտ. Չհետևված է այն ձորակի բերանում, որ ապառաժոտ ժայռերով և լեռներով եղրափակված ձգվում է դեպի հյուսիս: Ձորակի միջով հոսում է Ղուրու-չայը, որի ափերին բարձրանում են հարյուրամյա սաղարթախիտ ընկուզենիներ: Գյուղը բավական բարձր դիրքի վրա գտնվելով, թե հիանալի տեսարան և թե զով կլիմա ունի, ուստի և հաճախ շրջանի ոստիկանի և այլ պաշտոնյաների համար իբրև ամառանոց է ծառայում: Գյուղի շրջակայքում կան ութ դերեզմանատուն, սակայն ոչ մի դերեզման բրոնզի

[403] Ստ. Օրբելեան, Պատմ., գլ. ԺԹ:

դարից: Գյուղի ծայրին, դարավոր ընկուզենիների ստվերի տակ գտնվում են Պռոշ իշխանի ապարանքի մնացորդները: Հոյակապ դռան կամարակալ քարը, որի վրա քանդակված է առյուծ և վագր, կոտր-կոտր եղած ընկած է մի կողմ: Սրբատաշ, ահագին մեծության քարերը տարված են և իբրև գեղեցկագործված: Ապարանքի հիմնատաշտերի վրա գյուղական խրճիթ է կանգնեցրած: Սրանից փոքր-ինչ հեռու գտնվում է մի հին, հասարակ եկեղեցի ս. Հակոբ անունով, որի հյուսիսային պատի մեջ կա մի խաչքար ԺԳ դարից:

Բաշքենտի ձորակը ուղղվելով դեպի հյուսիս՝ երկուսի է բաժանվում և գրկում մի բարձր, կոնաձև լեռնաբլուր, մի ամրոցի ավերակներով, որ հնում հայտնի է եղել **Բոլորաբերդ**, իսկ այժմ **Պռոշի բերդ** անունով, իսկ սրանից դեպի արևմուտք, փոքր-ինչ հեռու, Թևքե-դոնդուրան լեռան լանջին բարձրանում է **Սպիտակավոր ս. Աստվածածնի** վանքը:

Բաշքենտի բնակիչները գաղթել են Սալմաստի Ասլանիկ, Հմբանավա և Սավրի գյուղերից, ընդամենը 61 տուն են, 319 ար. և 258 իգ., միասին՝ 577 հոգի: Առավելապես սավրեցիները սկզբններում խաչագողության, իսկ այժմ առևտրի համար գնալով Ռուսաստան (առավելապես Արմավիր), թե հարստություն և թե որոշ քաղաքակրթություն են բերել գյուղը: Գրեթե բոլորը գրագետ են և ստանում են մի քանի լրագրեր: Գյուղում կա մի ճոթի կրպակ, 3 դերձակի և 2 մաշկակարի խանութ, մի դարբնոց, պարապմունքը նույնն է, միայն հողի սակավության պատճառով մշակում են մոտակա Ղարավանք թրքաբնակ գյուղի հողերը կիսովի:

Օրդաքենտ. Գտնվում է Քեչիշքենտ և Բաշքենտ գյուղերի մեջտեղում և այս պատճառով էլ կոչվել է Օրթաքենտ՝ միջագյուղ: Երկուսից էլ հեռու է մոտ 3 վերստ: Գյուղը տարածված է մի հարթավայրի վրա, Ղուռուչայ գետակի ափին և զարդարված է բարձր բարդիներով ու պտղատու ծառերով: Այստեղ կա մի հին եկեղեցի Հրեշտակապետաց անունով, շինված 1692 թ. և մի մատուռ:

Գյուղի արևմտյան կողմում, դաշտավայրի վրա, նկատելի են մի հին ամրոցի պարսպի և բուրգերի, ինչպես և մի քանի շենքերի մնացորդներ: Այստեղ կա նաև մի խաչքար, որի վրա եղած արձանագրությունից կարդացվում է միայն **ՉԿԵ (1316 թ.)**: Ավանդաբար Վարդանի բերդ են անվանում սրան, առանց կարողանալու մի որևէ մանրամասնություն պատմել: Թե այս բերդի մոտ և թե գյուղի շրջակայքում, մանավանդ հյուսիսային կողմում, կան հին գերեզմաններ՝ բարձր խաչքարերով, ԺԳ-ԺԸ դարերի տապանագրերով:

Գյուղի կլիման համեմատաբար զով է, ուստի և խաղողը լավ չի հասնում և գինի այնքան լավ չի լինում: Բնակիչները պարսկահայեր են, Սոմայի գյուղից, վայելչակազմ և առողջ: Ընդամենը 116 տուն են, 594 ար. և

432 իդ. և միասին՝ 1026 հոգի: Բացի սովորական պարապմունքից՝ երկրագործություն և այգեպանություն, բնակիչները վարելահողի և արոտատեղի սակավության պատճառով մշակություն են անում շրջակա գյուղերում և քաղաքներում: Գյուղում կան երկու մանրավաճառի խանութ և վեց դղրար, որ լավ թաղիք են պատրաստում գառան բրդից, և մի պայտառ:

Օրթաքենտից դեպի հյուսիս արևելք՝ ձորակի մեջ գտնվում է ԺԹ-ԺԴ դարերում մեծահռչակ Գայլաձոր կամ Գլաձոր մենաստանը, որ այժմ Ղարա-վանք է կոչվում:

Քեչիչքենտը տեղավորված է մի բարձրավանդակի վրա, որի ստորոտից հոսում է Ղուռուչայ առվակը: Բարձրավանդակի լանջից բխում է մի աղբյուր, որ խմելու ջուր է մատակարարում ամբողջ գյուղին: Այս աղբյուրի ջուրը փոքր-ինչ աղի է և անառողջարար: Գյուղի հարավային կողմում բարձրանում է մի բլուր, որի վրա նկատելի են ամրոցի հետքեր: Ուշագրավ են պարսպի ահագին քարերը և մի քանի դերեզմանաքարեր հայերեն, արդեն եղծված տապանագրերով:

Գյուղը ղուրկ է կանոնավոր փողոցներից, սակայն ունի բավականաչափ գեղեցիկ, եվրոպական ճաշակով շինված տներ, փոքրիկ պարտեզներով: Ամրոցի հանդիպ, մի հարթության վրա, բարձրանում է հայոց եկեղեցին, որի պատերի մեջ կան մի քանի հին, գեղեցկաքանդակ խաչքարեր: Կլիման համեմատաբար տաք է: Բնակիչները բոլորն էլ հայեր են, մի մասը Տաճկաստանի Աղբակ գավառից, մյուսը՝ Պարսկաստանի Սալմաստ գավառի Շորիկ, Ճուկելան և Գոլազամ գյուղերից են. ընդամենը՝ 155 տուն, 746 ար., 659 իդ. և միասին՝ 1405 հոգի: Պարապում են երկրագործությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ: Ցանում են նաև փոքր քանակով բամբակ և բրինձ: Կանանց մեջ բավական զարգացած է գորգագործությունը: Գյուղում կա երեք խանութ, երկու դարբնոց և երկու մաշկակարի արհեստանոց: Բնակիչների մեծագույն մասը աղքատ է, չնորհիվ այն հանգամանքի, որ մի քանի տզրուկներ իրենց ձեռքն են ամփոփել թե հողի լավ և մեծ մասը և թե առևտուրը: Պարսկաստանից գաղթած օրից մինչև այժմ նոր հողաբաժանում տեղի չի ունեցել:

Այս գյուղի մասին պատմական տեղեկություններ չկան: Ժողովուրդը ավանդաբար ասում է՝ թե գյուղի հին անունը Տանձաթաղ է եղել, իսկ հայր Ալիշան ենթադրում է, թե սա Փոնձաթաղը կարող է լինել:[404]

Գյուղի արևելահարավային կողմում, Ղուռուչայի ձախ ափին, գտնվում է մի գյուղատեղի, երկու մատուռներով, որոնցից մինը գրեթե ամեն կիրակի ունենում է ուխտավորներ շրջակա գյուղերից:

---

[404] Ալիշան, Սիսական, եր. 124 և 128:

Ալագյազի ձոր կամ Եղեգնաձոր. Ալագյազի ձորը Դարալագյազի շրջանում Արփաչայի ձորից հետո ամենաերկար և ամենահետաքրքրական ձորն է: Նա գեղեցիկ է ոչ միայն իր սքանչելի տեսարաններով, այլև իր հոյակապ հնություններով: Նրա միջից հոսում է համանուն գետը, որ սկիզբ է առնում Դարալագյազի հյուսիս-արևելյան կողմում բարձրացող Սողանլուի և Գյուզալ-դարայի լեռներից. նախ հոսում է դեպի հարավ, ապա Ջանի գյուղի մոտ թեքվում է դեպի արևմուտք, և ապա Ալագյազի մոտ կրկին թեքվում դեպի հարավ և Ղըզըլ-ղշլաղ գյուղից փոքր-ինչ արևելք թափվում Արփաչայի մեջ: Ալագյազը ընդունում է բազմաթիվ վտակներ առավելապես աջ կողմից, որոնցից նշանավոր են Այասուս-չայը, Էրդափինի-ջուրը, Սալլու-չայը և Հորսի-ջուրը: Ալագյազի ձորի ձախ ափը մեծ մասամբ պատած է ուղղահայաց ապառաժներով: Կլիման հյուսիսում բավական բարեխառն է, միայն հարավում համեմատաբար տաք: Սրա համեմատ և հյուսիսում տիրում է ալպյան բուսականությունը, իսկ հարավում հանդում է խաղող: Ձորը իր անունն ստացել է իր ամենանշանավոր Ալագյազ կամ Եղեգիս գյուղից, որ Սյունյաց Վասակյան հարստության մայրաքաղաքն է եղել:

Ձորի ամենահյուսիսային մասում գետեղված է **Գյադուկ վանք** կամ **Ղոդուղ-վանք** *Թրքաբնակ փոքրիկ գյուղը, 28 տուն բնակչով, 102 ար., 98 իգ. և միասին՝ 200 հոգի:*

Գյուղում կան երկու փոքրիկ, կից եկեղեցիներ, առանց խորանների, մինը սրբատաշ, կապույտ, իսկ մյուսը հասարակ քարից շինված: Երկուսն էլ կիսավեր են և անասնոց աղբով լցված: Դռան կամարակալ քարի վրա, որ այժմ վայր է ընկած, գրված է. Թվ. Հ. ՉԻ (1271): Այստեղից փոքր-ինչ հեռու կա երեք հին գերեզմանատուն:

Այստեղից փոքր-ինչ հարավ, մի ուրիշ առվակի վրա գրված է Ղարաղայա նույնպես փոքրիկ, Թրքաբնակ գյուղը, 30 տուն բնակչով, 110 ար., 92 իգ. և միասին՝ 202 հոգի: Այստեղ էս կան հայկական հին գերեզմանատուն և մի քանի ավերակներ:

Այստեղից էլ արևելահարավ գտնվում են Ջանի գյուղերը, վերին և ստորին: Վերջինս կոչվում է նաև Ղաբախլու-Ջանի: Երկուսում էլ կան հայկական ավերակ եկեղեցի և գերեզմանատուն: Ղաբախլու-Ջանին փռված է լեռնագաշտի վրա և բավական գեղեցիկ տեսք ունի, զարդարված լինելով բարձր բարդիներով: Այստեղ ձորի մեջ նկատելի են մի հին միակամար կամուրջի հիմնապատեր, որի վրա այժմ ձգված են հպատակ գերաններ: Կամուրջի հանդեպ, քարաժայռի դագաթից թավալվում է մի սքանչելի ջրվեժ, որից մոտ մի վերստ հեռու, բարձրավանդակի վրա կանգնած են մի հինավուրց տան ավերակներ, որի մասին տեղական ավանդությունը պատմում է, թե պատկանելիս է եղել մելիք Ջանի հայ իշխանին, որ երկար պատերազմներ է վարել Պարսից դեմ: Վերին-Ջանին ունի 27 տուն Թուրք բնա-

կիչ, 114 ար., 92 իգ. և միասին՝ 206 հոգի, իսկ Ղաբախլու-Ջանին՝ 55 տուն, նույնպես թուրք, 282 ար., 275 իգ. և միասին՝ 557 հոգի: Այստեղի կանայք շատ լավ կարպետներ և գորգեր են գործում:

Երկու Ջանինների մեջ ընկած են երկու Գյուլլի-դյուզ (վարդի հարթ) թրքաբնակ գյուղերը, որոնք իրենց անունն երևի ստացել են երբեմն վարդերով պատած այս դաշտից, ուր այժմ թրքական խրճիթների կողքին դեռևս մնում են հին եկեղեցու ավերակները և սրբատաշ խաչքարեր ԺԴ-ԺՉ դարերից: Բնակիչները 31 տուն են, 120 ար., 100 իգ. և միասին՝ 220 հոգի:

Գյուլլի-դյուզից դեպի արևմուտք ձգվում է մի ձորակ, չրջապատված մերկ, ապառաժոտ բլուրներով: Հյուսիսային մասում մի բլրակի երկու կողմից հոսում են հորդ աղբյուրներ, որոնք միանալով կազմում են մի թեբակղզի: Թե ձորակը, և թե նրանից բարձր սարահարթը պատած են ծառերով: Կլիման բավական մեղմ է և հաճելի, ջուրը հստակ և սառը: Ահա այստեղ տեղավորված է Այասի թրքաբնակ գյուղը իր ողորմելի խուղերով:

Բլրի գագաթին բարձրանում է Արատեսի հոյակապ վանքը իր չուրջը ունենալով այն ավեր խցերը, ուր մի ժամանակ սաստիկ չոգից ապաստանում էին Նորավանքի միաբանները:[405]

Այասի բնակիչները գրեթե բոլորն էլ սեիտներ են՝ Մահմեդի զարմից, որոնք սիրում են ոչ թե իրենց աշխատանքով, այլ հավատացյալների տուրքերով ապրել, և որովհետև այս տուրքերն այնքան առատ չեն, ուստի սրանք սաստիկ աղքատության մատնված՝ գողությամբ են պարապում: Ուշագրավ է այն փաստը, որ երբ ես կամենալով գյուղից փոքր-ինչ բարձր մի կուրգան պեղել տալ, տանուտերից մարդիկ պահանջեցի, մի րոպեում մոտ հիսուն մարդ վազեցին եկան, այնքան մեծ էր անգործների թիվը, սակայն գյուղում միմիայն մի բրիչ (քլունգ) կար, և սրանք այնքան թույլ և անչնորհք էին, որ վեց ժամից հետո ես ստիպված էի կիսատ թողնել պեղումը և հեռանալ: Տանուտերի փոքրիկ որդին միմիայն մի չապիկ ուներ, կեղտից սևացած և տասնյակ տեղից պատառոտված: Ընդամենը՝ 39 տուն են, 109 ար., 91 իգ. և միասին՝ 200 հոգի:

Հովտի վերջավորության վրա, ուր Այասի գետակը միանում է Ալագյազի գետակի հետ, գրված է Ղավշուղ թրքաբնակ գյուղը: Սա հավանորեն հին Գրկիք գյուղը պիտի լինի: Բնակիչները 27 տուն են, բոլորն էլ թուրքեր, 110 ար., 90 իգ. և միասին՝ 200 հոգի:

Նույնքան աննշան է նաև այստեղից փոքր-ինչ հյուսիս-արևմուտք, մի անտառապատ լեռան լանջին գետեղված Ղալասար թրքաբնակ գյուղը, ուր

---

[405] Տե՛ս նշանավոր վանքերի մասում:

նույնպես կա մի եկեղեցու ավերակ և գերեզմանատուն: Բնակիչները 24 տուն են, 50 ար., 40 իգ. և միասին՝ 90 հոգի:

Ղավշուղից երկու վերստ դեպի արևմուտք, Ալագյազ գետի աջ ափին, դրված է **Գյուննեյ-վանք** թրքաբնակ աննշան գյուղը՝ 15 տուն բնակչով, 50 ար., 40 իգ. և միասին՝ 90 հոգի:

Սրա մոտ, լեռան լանջին դեռևս մնում են Կնեվանքի հոյակապ, կիսակործան եկեղեցիները ու միաբանների խցերը, ինչպես նաև մի ջրաղաց փոքր-ինչ ներքև, որի 4 սաժենանոց նավը բաղկացած է երկու կաոր քարից:

Գյուննեյ-վանքից դեպի արևմուտք, Ալագյազ գետի աջ ափին, 3-4 վերստ տարածությամբ սփռված են նախկին Եղեգիս քաղաքի ավերակները, մի քանի հոյակապ եկեղեցիներ, բազմաթիվ հրաշակերտ խաչքարեր, տների, ձիթահանքի ավերակներ և այլն, որոնց մասին ամենայն մանրամասնությամբ խոսելու եմ նշանավոր վանքերի նկարագրության մասում: Այժմ միայն կասեմ, որ այդ հինավուրց մայրաքաղաքի ավերակների վրա գետեղված է **Ալագյազ** անվամբ մի թրքաբնակ գյուղ, չպարունակելով իր մեջ թրքական, հիշատակությանն արժանի որևէ բան: Բնակիչները բոլորն էլ թուրքեր են, 49 տուն, 240 ար., 160 իգ. և միասին՝ 400 հոգի:

Ալագյազից դեպի հյուսիս-արևմուտք, մի սիզավետ լեռան լանջին կանգնած է **Ղոշա-վանք** կոչված մենաստանը, որ հին **Ցախացքարն** է, այժմ կիսավեր և անխնամ թողնված:[406]

Այժմյան Ալագյազ գյուղից փոքր-ինչ արևմտահյուսիս բարձրանում է **Սմբատա բերդը**, իսկ արևմտահարավ, Եղեգիսի ավերակների մոտ, **Հոստուն** գյուղը, որ **Ոստինքն** է եղած: Այստեղ կա հայկական մի կիսավեր եկեղեցի, մի ընդարձակ գավթով, առանց մի որևէ արձանագրության: Բնակիչները բոլորն էլ թուրքեր են, 15 տուն, 52 ար., 50 իգ. և միասին՝ 102 հոգի:

Հոստունից փոքր-ինչ հարավ Ալագյազ գետակի հետ խառնվում է **Գյումուշ-բուլաղ** ծառազարդ վտակը, որի հովտում գտնվում են **Իրդափին** և **Հորբադըղ** գյուղերը:

Առաջինը՝ հին **Արտաբոյնք** գյուղն է, գետեղված Գյումուշ-բուլաղի աջ ափին, և զարդարված բազմաթիվ բարդի և պտղատու ծառերով ու խաղողի այգիներով: Գյուղի մեջ կան բավական վայելուչ, պատշգամբավոր տներ, երկու խանութ, և մի փոքրիկ քարաշեն մատուռ: Բնակիչները գաղթականներ են Պարսկաստանի Խոյ գավառի Խոյանա գյուղից, ընդամենը 47 տուն են. 320 ար., 280 իգ. և միասին՝ 600 հոգի:

Մյուս գյուղը՝ **Հորբադըղը**, դրված է սարալանջի վրա և շատ գեղեցիկ տեսք ունի, թեպետ իբրև թրքական գյուղ, կեղտոտ է և կարգին չինություններից զուրկ: Գյուղի հյուսիսային կողմում կան երկու գերեզմանա-

---

[406] Տե՛ս նշանավոր վանքերի բաժնում:

տուն, տների հիմնաքարեր և մի ձիթահանքի քար իր կիսավեր պատերով: Գյուղի մեջ ևս կա մի կիսավեր, հասարակ եկեղեցի, որ ինչպես երևում է առաստաղի կամարի արձանագրությունից, չինված է 1692 թ., Գաբրիել և Միքայել հրեշտակապետների անունով: Բնակիչները բոլորն էլ թուրքեր են 48 տուն, 349 ար., 328 իգ. և միասին՝ 677 հոգի:

Հորբադըղի և Էրդափինի միջում, հովտի մեջ կան երկաթաջրի աղբյուրներ, որոնցից գրեթե ոչ ոք չի օգտվում:

Հոստունից 4 վերստ արևմտահարավ, Ալադյազ գետի ձախ ափին, գտնվում է **Հասանի-գյուղը** կամ **Հասան-քյանդը**: Սա այսպես է կոչվել այն պատճառով, որ այժմյան հայ բնակիչների գալուց առաջ Հասան անունով մի թուրք այստեղ դոմեր է ունեցել: Գյուղը զետեղված է ձորի թեք լանջին, որից բարձր ցցվում են ապառաժոտ գագաթներ, իրենց մեջ պարփակելով Շատինի վանքը:[407] Գյուղի մեջ կա մի շատ հասարակ, փոքր եկեղեցի, ուրիշ ոչ մի ուշագրավ չենք: Գետի աջ ափին տարածվում են խաղողի այգիներ, սեխի, վարունգի պարտեզներ: Այստեղ տարածված է նաև մեղվապահությունը: Բնակիչները գաղթել են Պարսկաստանի Սոմայի գավառակից, ընդամենը 43 տուն են, 290 ար., 305 իգ. և միասին՝ 595 հոգի:

Հասանի գյուղից մոտ 2,5 վերստ դեպի հարավ, մի փոքրիկ բլրակի վրա, կիսավեր դրությամբ կանգնած է սրբատաշ քարից չինված մի շատ փոքրիկ մատուռ, որին բնիկ հայերը Ընգեղի մատուռ են կոչում: Շատ հավանական է, որ սա լինի հին Անգեղ-ձորը, ուր Ավարայրի ճակատից հետո Պարսից զորքի հալածանքից փախչող հայ զորքերից մի խումբ նահատակվեց իր Մարտիրե զորապետի հետ:[408]

Հասան-քյանդից 6 վերստ հարավ գտնվում է Ալիխան-փայասի թրքաբնակ մի աննշան փոքրիկ գյուղ, որ այսպես է կոչվում, որովհետև մի ժամանակ այդտեղ են գտնվել Ալիխանի դոմերը (փայասի): Բնակիչները 11 տուն են, 72 ար., 62 իգ. և միասին՝ 134 հոգի:

Ալիխան-փայասի գյուղից փոքր-ինչ ներքև, գետի վրա բոլորում է միակամար մի կամուրջ, որ թեպետ Մատուրի կամուրջ է կոչվում, սակայն չինել է Շատինու վանքի առաջնորդ Սարգիս վարդապետը 1666 թ., «ձեռնտուությամբ 90 միաբանից և բազում ողորմութեամբ ժողովրդեան»:[409]

Այս կամուրջից էլ ներքև գտնվում է այս հովտի վերջին գյուղը՝ Ղոյթուլ. տարածվում է Ալադյազ գետի աջ ափին բարձրացող փոքրիկ բարձ-

---

[407] Ստ. Օրբելեան, գլ. ԺԹ:

[408] Այս մատուռի մասին պատմում են, իբր թե այդտեղ թաղված է մի հայ աղջիկ, որ միայնակ մոտակա անտառը գնալիս ենթարկվել է թուրքերի հարձակմանը: Չկամենալով նրանց ձեռքն ընկնել, նա այդ մատուռի տեղում անձնասպանություն է գործել: Մի ուրիշ ավանդություն էլ ասում է, թե այդտեղ թաղված է մի թուրք երիտասարդ, որ քրիստոնեություն ընդունելու պատճառով նահատակվել է թուրքերից:

[409] Կամրջի վրայի արձանագրությունից, որ կարդացել է պ. Քաջբերունին, Փորձ, 1879, X, եր. 49:

բավանդակի վրա, Քեշիշքենտից 3 վերստ դեպի արևմուտք: Գյուղում կա մի հասարակ եկեղեցի: Կլիման բավական տաք է: Բնակիչները պարսկահայեր են Սոմայից. ընդամենը 115 տուն. 657 ար., 431 իգ. և միասին՝ 1088 հոգի: Առաջները մեծ մասամբ ցանում էին բամբակ և չալթուկ, բայց երբ Բաչ-Նորաշենից դեպի Նոր-Բայազետ տանող ճանապարհը այս գյուղի մոտով անցկացրին, սկսեցին բացի այգեգործությունից ու գինեգործությունից, պարտիզպանությամբ ևս պարապել և առավելապես սեխ ու ձմերուկ ցանել, որ մեծ մասամբ սպառվում են Նոր-Բայազետի գավառում: Այս գյուղացիների տնտեսական դրությունը փոքր-ինչ լավ լինելով՝ պանդխտողները քիչ են լինում, գալոց էլ չունեն, ուստի և մտավոր զարգացումը շատ դանդաղ է առաջ գնում. գրագետները չափազանց քիչ են: Գյուղում կան երկու խանութ և մի բամբակ մաքրելու գործարան: Գյուղը կալվածատիրական է, պատկանում է Զիվա գյուղի թուրք Վեքիլովներին: Ամբողջ Դարալագյազի գաղթական հայերի գյուղերի մեջ սա միակն է, որ կալվածատիրական է:

Սելիմի ձոր. Հասանի գյուղի մոտ Ալագյազ դետին խառնվում է սրա ամենամեծ վտակը, որ կոչվում է **Սելիմի գետակ**: Սա սկիզբ է առնում Առինջ բարձրավանդակի վիհերից և ընդունում է իր մեջ բավականաչափ վտակներ: Թե Սելիմի գետի, և թե սրա վտակների ուղղությամբ ձգվում են փոքրիկ և նեղ ձորակներ, ուր գետեղված են մի քանի թրքաբնակ և 2 հայաբնակ գյուղեր: Ընդհանրապես բարձրադիր և ծառազարդ լինելով՝ այս ձորերը չափազանց գեղեցիկ են: Թե գետը և թե ձորակը կոչվում են այն «Տանուտէր Սուլեմի» անունով, որ չինել է համանուն բերդը,[410] սույն ձորի հյուսիսային սահմանում, գետակի ձախ ափին ցցված քարաժայռի վրա: Սրանից փոքր-ինչ բարձր, 8001 ոտնաչափ բարձրություն ունեցող մի բարձրավանդակի վրա, կիսավեր կանգնած է Սելիմի կարավանատունը այն ճանապարհի կողքին, որ տանում է Վայոց ձորից Գեղարքունիք: Այս հոյակապ շենքը չինել է իշխանաց իշխան Սմբատի որդի Զեսարը 1332 թ.:

Սելիմի կարավանատնից դեպի հարավ, Ջան-ղուրդարան լեռան ստորոտում, Ղոշա-գյոլ լճից սկիզբ առնող վտակի եզրին, գտնվում է Աղ-դերե գյուղատեղին: Այստեղից դեպի արևելահարավ, Սելիմի գետակի աջ ափին, մի հարթության վրա փռված է **Աղքենդ** գյուղը, ուր նկատելի են հայկական եկեղեցու հիմնապատեր. իսկ փոքր-ինչ հյուսիս, գետակի ձախ ափին, տարածվում է մի ընդարձակ գերեզմանատուն, և սրա մոտ բարձրանում է մի սրբատաշ, կամարակապ, կիսավեր կարավանատուն: Գյուղը այժմ պատկանում է նախիջևանցի Հախնազարյանին: Բնակիչները թուրքեր են, 105

[410] Ստ. Օրբելեան, հ. Ա, էլ. Գ:

տուն, 420 ար., 380 իգ. և միասին՝ 800 հոգի: Գյուղից դեպի արևելք գտնվում է Յավար կամ Ռասուլ-Ղչլաղի անունով մի գյուղատեղի:

Աղբյանդից դեպի հարավ, նույն գետի վրա գտնվում է Թառաթուն հայաբնակ գյուղը, 34 տուն բնակչով, 190 ար., 180 իգ. և միասին 370 հոգի: Բոլորն էլ գաղթած են Խոյի Ղորուղ գյուղից:

Թառաթունից դեպի արևելահյուսիս, մի ուրիշ վտակի վրա տեղավորված է Քարագլուխ գյուղը, որ շատ դեղեցիկ տեսք ունի: Գյուղում հետաքրքրական առանձին բան չկա, միայն գյուղից 3 վերստ դեպի հյուսիս կա մի կիսավեր եկեղեցի, որ մի կերպ վերանորոգել են և ուխտատեղի դարձրել Թուխ-մանուկ անունով: Սրա մոտ կան բավականաչափ դերեզմանաքարեր ԺԶ դարի տապանագրերով: Այստեղից փոքր-ինչ հեռու, ձորակի մեջ, նկատելի է մի հին գյուղատեղի, որ այժմ կոչվում է Քալլա: Այստեղից էլ արևելք, մի բարձրավանդակի վրա վուված է մի դերեզմանատուն, ուր մնում են սուրբ Մամասի վանքի միմիայն հիմնապատերը:

Մի ուրիշ գյուղատեղի էլ ավերակ եկեղեցիով, տապանաքարերով ու խաչքարերով գտնվում է Քարագլխից դեպի հարավ, գետի աջ կողմում, և այժմ կոչվում է Ղարաղուզեյ:

Քարագլխի բնակիչները հայեր են, Խոյի Մահլազան և Ղորուլ գյուղերից գաղթած, ընդամենը 62 տուն, 513 ար., 433 իգ. և միասին՝ 946 հոգի: Պարապում են առավելապես երկրագործությամբ և անասնապահությամբ, մասամբ և այգեպանությամբ, թեպետ և խաղողը լավ չի հասնում:

Քարագլխից դեպի հարավ, երկու վտակների միախառնման մոտ, մի բլրակի վրա, կանգնած է երեք արշին բարձրության մի խաչքար, 1290 թ., Խորիշահի որդի Սարգսի դուստր Թացիկի բարեխոսության համար: Սրա ստորոտում, փոքր-ինչ արևելահարավ տարածվում է Սալլի գյուղատեղին և սրա մոտ համանուն թրքաբնակ գյուղը: Թե այս վերջինումս և թե սրանից փոքր-ինչ հարավ գտնվող Շահ-գյալդի և Ղչլաղում ոչ մի ուշագրավ բան չկա: Առաջինի բնակիչներն են 59 տուն թուրքեր, 393 ար., 307 իգ. և միասին՝ 700 հոգի, մյուսինը՝ 15 տուն, 90 ար., 64 իգ. և միասին՝ 154 հոգի:

Վերջին գյուղից դեպի հարավ, մի ձորի մեջ, կա մի գյուղատեղի Վախսե անունով, իսկ դեպի արևմուտք, մի ուրիշ ձորում՝ Հորս գյուղը: Վերջինս Օրբելյանի ցուցակում հիշված Հորքը պիտի լինի: Գյուղում կա մի փոքրիկ, սրբատաշ եկեղեցու ավերակ, տապանաքարեր, խաչարձաններ և, որ ամենից հետաքրքրականն է, մի դեռևս կանգուն, հին տուն, որի մասին տեղական ավանդությունն ասում է, թե պատկանել է Սելիմա դղյակը չինող Զեսար իշխանին: Տունը բաղկացած է եղել մի սենյակից և մի սրահից, որ այժմ բոլորովին քանդված է: Սենյակը դեռևս կանգուն է, և այժմ մի թուրքի բնակարան է: Շինված է սրբատաշ քարից, 11 արշին երկարության և 9 արշին լայնության: Արևելյան պատի մեջ բացվում է մի կամարակապ,

բարձր և լայն դուռ, որի երկու կողմում, ներսից, կան չորսական կամարակապ պատհաններ, միմյանց վերև: Սրա հանդեպ արևմտյան պատի մեջ բացվում է մի սաքու, այսինքն 4 արշ. երկ. և 2-2,5 արշ. լայնությամբ և տան հատակից 1 արշ. բարձր խորշ, որի դեպի սենյակը դարձված կողմը ամբողջովին բաց է: Սենյակի հյուսիսային պատի մեջտեղում կա մի բուխարի, իսկ երկու անկյուններում մի-մի թոնիր: Հատակի մեջ նկատելի են չորս որմնասյուներ, որոնց վրա, անշուշտ, բարձրացած են եղել սյուներ՝ կրելու փայտածածկ կտուրը: Այս ձևի տներ այժմ էլ պատահում են Ախալքալաքի և Ախալցխայի կողմերում:

Հորսի բնակիչները բոլորն էլ թուրքեր են, 125 տուն, 524 ար., 498 իգ. և միասին՝ 1022 հոգի:

Սուլիմա ձորում հիշատակության արժանի մնում է նաև կամուրջը, որ ձգվում է Սևլիմի դետակի վրա՝ նրա Ալապյաղի հետ խառնվելու տեղից փոքր-ինչ բարձր: Այս կամուրջը միակամար է, սրբատաշ քարից և շատ հին: Սրա մասին արձանագրված է մի տասը քայլ հեռու, բլրակի ստորոտում կանգնած երկու խաչքարերի վրա, սակայն չինողի անունը և թվականը, երևի չարամտությամբ, ջնջված են:

Աղավնաձոր. Հաճիասմլուի կամ Ղոյթուլի ձորից արևմուտք, բայց նույն ուղղությամբ, հոսում է մի փոքրիկ վտակ, սկիզբ առնելով Վանքիդյուզ կոչված սարահարթից: Այս վտակը այժմ կոչվում է Ըղնաձորի ջուր: Սրա ակունքների մոտ, սարալանջի մի փոքրիկ, տափարակ տեղում տեղավորված է Աղավնաձոր գյուղը, որ տեղացիներից Ըղնաձոր, իսկ թուրքերից Այնազյուր է կոչվում: Գյուղի մեջտեղում կա մի մեծ, բայց հասարակ եկեղեցի, մոտը գերեզմանատուն, մի քանի հին տապանաքարերով: Գյուղը թեպետ հին է համարվում, սակայն ոչ մի հնություն չունի: Գյուղից երեք վերստ դեպի արևելք կա Աբանա գյուղատեղին, որ հավանականորեն Օրբելյանի հիշած **Ապանա** գյուղը պիտի լինի: Սրանից էլ գրեթե նույնքան հեռու, դարձյալ դեպի արևելք, նկատելի է **Ըզդ-ղալա** բերդի հիմնապատերը, որի ստորոտից մի առվակ անցնելով միանում է Ըղնաձորի ջրի հետ: Այս առվակի ջուրը բխում է այն ջրհորներից, որ փորված են հնում առվակի ալ ափին և որոնք այժմ ևս նկատելի են: Այստեղից էլ հարավ գտնվում է **Քյահլիկ-բուլաղ** կոչված աղբյուրը, որը թերևս, լինի Օրբելյանի հիշած **Կաքավուց** աղբյուրը:

Աղավնաձորից վեց վերստ դեպի հարավ, հին ճանապարհի վրա դեռևս մնում են սրբատաշ, մոխրագույն քարից շինած կիսավեր կարավանատունը, 40 արշ. երկարության և 18 արշ. լայնության, կամարակապ և երեք մասի բաժանված:

Աղավնաձորի կլիման, չնորհիվ իր բարձր դիրքի, բավական մեղմ է, ուստի և այստեղ ամառանոց են դալիս Բաշ-Նորաշենից դավառապետը և այլ

պաշտոնյաներ: Սրանց ազդեցությամբ գյուղում չինված են մի քանի գեղեցիկ տներ և տնկված են բավականաչափ ծառեր: Բնակիչները բնիկ հայեր են, բացի մի քանի տուն պարսկահայերից, ընդամենը 74 տուն, 450 ար., 530 իգ. և միասին՝ 980 հոգի:

Աղավնաձորից դեպի արևելահարավ տեղավորված է **Նամազ-ալի** փոքրիկ գյուղը 37 տուն քուրդ բնակիչներով, 120 ար., 152 իգ. և միասին 272 հոգի: Սրանց գլխավոր պարապմունքը գողություն է: Թե Աղավնաձորը և թե Նամազ-ալին պատկանում են չուչեցի Թառումյաններին:

Էլփինի ձոր. Պատմական հիշատակարաններով ոչ այնքան նշանավոր այս ձորը ձգվում է համանուն գետի ուղղությամբ, որ սկիզբ է առնում գլխավորապես Դիդ-վանք և Ղարա-ղայա լեռներից և ընդունելով մի քանի վտակներ, առավելապես ձախ կողմից, թափվում է Արփա-չայը՝ Արփա գյուղի հանդեպ: Թե գետը և թե ձորը իրենց անունն ստացել են Էլփին գյուղից, որ հավանականորեն Օրբելյանի հիշած **Ապողեն** գյուղը պիտի լինի, հետևապես և թե գետը և թե ձորը կարելի է կոչել նաև այդպես:

Էլփին գետակի ամենամեծ օժանդակ **Ղոզլըճա-չայի** ակունքների մոտ տարածվում են հիանալի արոտատեղիներ, ուր ամառները սար են դուրս գալիս Աղավնաձորի և Ռինոտի բնակիչները: Հենց այս արոտատեղիների մոտ էլ գտնվում է հին **Ռինդ** կամ **Ըռեղի** գյուղի ավերակները, որ այժմ հայտնի են **Ծուլգյուրդ** անունով: Այս ավերակների մեջ նկատելի են մի եկեղեցու հիմնապատեր և մի արձանագրություն, որից երևում է, որ տաճարը կոչվում է **ս. Ստեփանոս** և որ 1292 թ. երկու եղբայրներ նվիրել են նրան իրենց հայրենական հողը: Այստեղից մոտ մի վերստ դեպի արևելք, մի փոքրիկ հարթության վրա կանգնած է մի կիսավեր, փոքրիկ եկեղեցի **ս. Աստվածածնի** անունով: Պատերի վրա կան մի քանի արձանագրություններ ԺԳ և ԺԴ դարերից: Եկեղեցու շուրջը կան մի քանի տապանաքարեր և փոքր-ինչ հեռու՝ տների ավերակ: Եկեղեցու կանգնած տեղը այժմ կոչվում է **Վանքի-դյուզ**: Այստեղից դեպի արևելահարավ գտնվում է Աղավնաձորը, իսկ դեպի արևմտահարավ՝ **Ղոզլըճան**, 57 տուն թուրք բնակչով, 369 ար., 391 իգ. և միասին՝ 760 հոգի: Թե այստեղ և թե սրա մոտի **Ռինդ** գյուղում հիշատակության արժանի գրեթե ոչինչ չկա: Վերջինիս բնակիչները բնիկ հայեր են, 43 տուն, 283 ար., 218 իգ. և միասին՝ 501 հոգի:

Էլփին գետակի և սրա մանր վտակների վրա սփռված են փոքրիկ և աննշան թրքաբնակ գյուղեր, որոնց մեջ միակ, ուշադրավ հնությունը մի հասարակ եկեղեցու հիմնապատերն ու մի քանի խաչքարեր են: Սրանք են.

Ալմալու, թուրքեր, 38 տուն, 182 ար., 200 իգ. և միասին՝ 382 հոգի:

Գենալու, թուրքեր, 19 տուն, 92 ար., 101 իգ. և միասին՝ 193 հոգի:

Աղ-քիլիսա, Ղարա-Ղայայի ստորոտում, թուրքեր՝ 13 տուն, 60 ար., 85 իգ. և միասին՝ 145 հոգի:

Վարդանես. Ըզգ-չալասի-դաղ լեռան ստորոտում, որ հավանորեն Օրբելյանի հիշած Վարդենիքը պիտի լինի:[411] Այստեղ ուշադրության արժանի է մի փոքրիկ լճակ, որ չինված է մի դոգավորության մեջ, հարավային կողմը միայն պատ քաշելով: Ինչպես երևում է, սա մի ժամանակ ծառայել է իբրև ջրամբար ոռոգելու մինչև Զվա գտնվող տափաստանները: Այժմ այս լճակն էլ կիսաքանդ է եղած: Բնակիչները նույնպես թուրքեր են, 23 տուն, 62 ար., 96 իգ. և միասին՝ 158 հոգի:

Էլփին. Տեղավորված է համանուն գետի երկու ափերին, շրջապատված անտառապատ բլուրներով: Հարուստ է աղբյուրներով և վայելուչ, նույնիսկ երկհարկանի բնակարաններով: Բնակիչները հայեր են, վայելչակազմ և առողջ մարդիկ, գաղթած Պարսկաստանի Սալմաստից և Սոմայից. ընդամենը 78 տուն, 425 ար., 360 իգ. և միասին՝ 785 հոգի: Պարապում են երկրագործությամբ, անասնապահությամբ և այգեգործությամբ: Սա միակ գյուղն է, ուր գեռևս գործում են կառավ, չալ և խոխր:

Էլփինի արևելահարավային կողմում բարձրանում է մի սար, որ այժմ **Շրեչի սար** է կոչվում, որովհետև վրան մեծ քանակությամբ շրեչ է բուսնում: Այս կոնաձև բլրի տափարակ գագաթին երևում են հին ամրոցի հետքեր: Թե պ. Քաջբերունին և թե հայր Ալիշանը ենթադրում են, թե Օրբելյանի հիշած Նրբոյն բերդը սա պիտի լինի:

Արդալաս. Գաղթել են Էլփինից, թուրքեր են՝ 42 տուն, 201 ար., 147 իգ. և միասին՝ 348 հոգի:

Հեչին. Թրքաբնակ, 33 տուն, 131 ար., 120 իգ. և միասին՝ 251 հոգի:

Քյոմուրլու. Համանուն լեռան լանջին, բոլորն էլ թուրքեր են, 25 տուն, 88 ար., 82 իգ. և միասին՝ 170 հոգի:

Զիվա. Գետի երկու ափին, մի հարթ տարածության վրա, զարդարված պաղատու ծառերով: Գյուղի արևմտյան կողմը գտնվում է Հին Զվայի գյուղատեղին, մի եկեղեցու հիմնապատերով և մի քանի անարձանագիր խաչքարերով: Սա ԺԳ դարում պատկանում էր Տարսայիճ Օրբելյանի որդի Զալալին, որից նրա եղբայր Ստեփանոս եպիսկոպոս պատմաբանը գնեց 22000 դրամի և ընծայեց Նորավանք վանքին 1298 թվականին:

Այժմ այս հողերը պատկանում են թուրք Վեքիլովներին, որ բնակվում են նույն այս գյուղում:

ՀԱՐԱՎԱՑԻՆ ՎԱՑՈՑ ՁՈՐ

Գյումուշխանեի ձոր. Արփաչայի ձախակողմյան առաջին վտակը Գյումուշխանեի-չայն է, որ Թերփ վտակի հետ միանալով՝ Թարփ-չայ անունով

---

[411] Սա. Օրբելեան, պլ. կե:

Թափվում է Արփաչայի մեջ Ջայքենտ գյուղի մոտ: Գյումուշխանեի վտակի վրա, Ղըսըր-գաղ լեռան լանջին, գետեղված է **Գյումուշխանե** *թրքաբնակ գյուղը, որ թեպետ շատ գեղեցիկ տեսք ունի, սակայն ոչ մի փոքրիշատե հարմարավետ տուն կամ սենյակ չունի: Այստեղ ևս կա հայկական եկեղեցու մի ավերակ և արևելյան բլրի վրա մի գերեզմանատուն, ուր կա 1309 թ. մի խաչքար: Գյուղի բնակիչները բոլորն էլ թուրքեր են, 27 տուն, 107 ար., 99 իգ. և միասին՝ 206 հոգի:*

Գյուղից երեք վերստ հեռու գտնվում է Գյումուշխանեի արծաթահանքը նույն Ղըսըր-գաղ լեռան մեջ:

Թերփ-վտակի և սրա ճյուղերի վրա տեղավորված են երեք փոքրիկ թրքաբնակ գյուղեր՝ **Թերփ, Լեյլիղաչան և Քոչպեկ կամ Քյոչպանգ**: *Սրանցից Թերփը, որ հին Դերբը պիտի լինի, տեղավորված է ձորակի մեջ, մի տափարակ տեղում և զարդարված է ծառերով: Գյուղի մեջ հոսում է մի աղբյուր, որի վրա բերել, դրել են մի խոյաձև գերեզմանաքար, 1334 փրկ. թվականի տապանագրով: Այսպիսի մի գերեզմանաքար էլ մի քիչ հեռու է կանգնեցրած: Գյուղի ներքին մասում կա մի ավեր եկեղեցի և մի գերեզմանատուն, ուր կան ԺԳ-ԺԷ դարերի տապանագրեր:*

Բնակիչները թուրքեր են, 45 տուն, 197 ար., 194 իգ. և միասին՝ 391 հոգի:

Լեյլիղաչանում նույնպես կան հին ավերակներ, գերեզմանաքարեր, ձիթահանք, բայց առանձին ուշադրության արժանի չեն: Այստեղ վերջերս բացել են հիսունի չափ հին հանքային հորեր, սակայն հանքային նոր չերտ չեն գտել: Գյուղի անունը առաջացել է այն հանգամանքից, որ ջուլեցի մի թուրք այստեղից Լեյլի անունով մի աղջիկ է փախցրել: Բնակիչները թուրքեր են, Թերփից գաղթած, ընդամենը 35 տուն, 169 ար., 180 իգ. և միասին՝ 349 հոգի:

Քոչպեկ կամ Քյոչպանգ, որ հավանորեն Օրբելյանի հիշած Քաչիմարգ գյուղը պիտի լինի, հիանալի է իր դիրքով, սակայն կեղտոտ է և զուրկ որևէ վայելուչ շինությունից: Այստեղ ևս եղել է հայկական մի հին եկեղեցի, որ այժմյան թուրք բնակիչները քանդել են և քարերը գործածել իրենց տների շինության վրա: Բնակիչները Ջայքյանտից գաղթած թուրքեր են, 54 տուն, 236 ար., 208 իգ. և միասին՝ 444 հոգի:

Այս գյուղի մոտ են **Թարփ, Դեմուրչիլար և Ջրախլու** *թրքաբնակ փոքրիկ գյուղերը, որոնց մեջ միակ ուշագրավ բանը մի երկու հին գերեզմանաքար է և ուրիշ ոչինչ: Թարփի բնակիչները 27 տուն են, 137 ար., 118 իգ. և միասին՝ 255 հոգի: Դեմուրչիլարինը՝ 17 տուն, 65 ար., 60 իգ. և միասին՝ 125 հոգի, իսկ Ջրախլուինը՝ 8 տուն, 28 ար., 24 իգ. և միասին՝ 52 հոգի:*

Ջուլի կամ Ջայ-քենտի ձոր. *Սրա միջով հոսում է Ջուլ կամ Ջայ-քենտի վտակը, որ սկիզբ է առնում Քեչալ-դաղ լեռից (10278) բխող բազմաթիվ աղբյուրներից և, ընդունելով Մարաթուզի կամ Քիլիսա-բուլախ փոքրիկ*

առվակը, թափվում է Արփաչայի մեջ Զայքենա գետի մոտ: Այս ձորի միակ գյուղն է **Ջուլը**, որ Օրբելյանի ցուցակի մեջ հիշված Աչողքը պիտի լինի: Գյուղը շատ գեղեցիկ տեսք ունի, փռված է առվակի ափին փոքրիկ տափարակի վրա: Հարավային կողմում ձգվող Ղայարասի լեռները ծածկված են ծառերով, տեղ-տեղ էլ մերկ են և ապառաժոտ: Այսպիսի մի տեղում, գյուղի հանդեպ, կան չորս անմատչելի քարայրներ: Գյուղի արևելյան կողմում, սարալանջին, կանգնած է սրբատաշ, բավական մեծ եկեղեցու չորս պատերը, առանց ձեղունի: Սրա արևմտյան դռան կողքին գրված է. **Շինեցաւ եկղեցս Թվին ՌՃԾՐ (1703)**, թեպետ այսքան ուշ, սակայն սեղանի մեջ կա մի գերեզմանաքար **ՉՆ (1491)** թվականից, հետևապես և գյուղը շատ ավելի հին է: Եկեղեցուց փոքր-ինչ բարձր, լեռան լանջին փռված է մի ընդարձակ գերեզմանատուն, որի տապանաքարերից շատերն արդեն տարված են և շինության համար գործածված: Տապանաքարերից շատերը ԺԷ և ԺԸ դարերի թվականն են կրում: Գյուղի մեջ նոր սկսել են շինել մի քանի կանոնավոր սենյակներ, մյուսները կիսագետնափոր գլխատներ են: Բնակիչները բոլորն էլ թուրքեր են, 116 տուն, 620 ար., 591 իգ. և միասին՝ 1211 հոգի: Պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Կանայք շատ լավ կարպետներ և բակեղաթներ են գործում: Զնայելով, որ բավական մեծ գյուղ է, այնուամենայնիվ ոչ մի խանութ չկա:[412]

Ջուլից 3-4 վերստ հեռու դեպի հարավ՝ Ղայարասի լեռն ապառաժոտ և ուղղահայաց կատարներով ձգվում է և միանգամայն անմատչելի դառնում: Ահա մի այսպիսի տեղում մի շատ նեղ կածան բարձրացնում է մինչև ապառաժի գրեթե գագաթը, ուր կան միմյանց կից երկու ահագին քարայրներ, առջևից պատ քաշած: Սրանցից մեկի մեջ կա մի ահագին, 3 արշ. երկարության, 2 արշ. լայնության և 1 արշ. հաստության կարմիր գերեզմանաքար, վրան մի մեծ և հասարակ խաչ քաշած: Մյուսի դռան ճակատին փորագրված է. **Քս. Ած. ողերմեա մեռ...բարի մարիտիրոսաց:**

Այս քարայրների հանդեպ, մոտ 100 սաժեն հեռու բարձրանում է մի ժայռապատ ցից գագաթ, որի մասին թուրք առաջնորդս ասում էր, թե ժամանակով ամրոց է եղած, թեպետ ոչ մի հետք չէր երևում, և ոչ մի հնարավորություն չկար գագաթը բարձրանալու: Ջուլից մոտ 2 վերստ դեպի արևելահյուսիս, երկու փոքրիկ առվակների միջավայրում, տեղավորված է **Մարաթուզ** գյուղը, որ Հավանորեն Օրբելյանի հիշած **Մայրադուրք** կամ **Մայրադուրսը** պիտի լինի: Այստեղ կա մի կիսավեր եկեղեցի, որի արևելյան լուսամուտի վերև քանդակված է մի կանգնած արծիվ և մի ցլի գլուխ: Եկե-

---

412 Ձեմ կարողանում մոռանալ, որ այս գյուղում եղած միջոցին՝ ինձ գարթնեցրից մի թուրքի ազիզդրմ լացը. խեղճի ցաված առամը հարևանը ահագին ունելով քաշելիս այնպես էր ձգել, որ ծնոտը տեղահան էր եղել: Երբ ինձնից ևս օգնություն չգտավ, բարեկամները տարան նրան Ախտա գյուղը սափրիչի մոտ:

ղեցու առջև բխում է մի հորդ աղբյուր, որ անցնում է եկեղեցու միջից: Գյուղի հյուսիսային կողմում բարձրացող բլրի վրա կան մի քանի կապույտ տապանաքարեր, բավական հետաքրքիր քանդակներով: Սրանց մոտ ընկած են ձիթահանքի երկու քար: Գյուղի արևելյան կողմում, մի ժայռի ստորոտում, հնում մի կողմից միայն պատ քաշելով կազմած են եղել մի մեծ ջրամբար, որ այժմ նույնպես կիսավեր է: Բնակիչները թուրքեր են, 29 տուն, 120 ար., 118 իգ. և միասին՝ 238 հոգի:

Ախտայի ձոր. Ջուլի ձորին զրեթե զուգահեռական ձգվում է Ախտայի ձորը, որի միջով հոսում է համանուն վտակը, սկիզբ առնելով Քեչալ դաղ և Քյուքի դաղ լեռներից: Այս ձորը ևս չատ դեղեցիկ տեսք ունի, ինքնատիպ են, մանավանդ, Ղայարասի լեռների մերկ և ժայռապատ, երբեմն կապուտակ, երբեմն կարմրավուն գագաթնների շարքը: Ջորի ամենահարավային մասը դեղեցիկ ձմեռանոց է, իսկ նրանից վերև՝ Յազ-յուրդի դագաթը՝ հիանալի ամառանոց: Ջորի ամենահարավային մասում, Յազ-յուրդ և Ղայարասի լեռների գոդավորության մեջ զրված է **Գյաբուտ** գյուղը, որ Օրբելյանի հիշած **Կապույտը** պիտի լինի: Գյուղը զարդարված է ծառերով և տների առաջ կան բանջարանոցներ: Հայկական եկեղեցու միայն հիմնապատերն են մնացել, չուրջն էլ մի երկու գերեզման:

Գյուղի հյուսիսային կողմում, զարձյալ նույն Ղայարասի և Յազ-յուրդ լեռների միացմամբ կազմված մի փոքրիկ հովտում կա մի անույշ, փոքրիկ, կիսավեր եկեղեցի, մոտը մի քանի կարմիր, դեղեցկաքանդակ խաչարձաններ, ԺԳ դարից, ինչպես նաև մի «մահարձան, բարձր և բարակ, որոյ երկայնութիւնն երեսուն քայլ և ի ծայր նորին պատկեր Տիրամօր ի գրկի ունելով զՓրկիչն աշխարհի»,[413] բայց ափսոս որ Սես գյուղի քահանան, կարծելով թե սրա տակ դանձ կա թաղված, եկել՝ տապալել ու կոտրատել է այս հիանալի կոթողը: Հանդիպակաց ժայռի կրծքին քանդակված են բավականաչափ մեծ և փոքր խաչեր: Մի քիչ ներքև, մի բլրակի գագաթին, կան բավական գերեզմանաքարեր: Ջորը դեղեցիկ տեսք ունի, միջով անցնում է մի փոքրիկ առվակ:

Գյաբուտի բնակիչները ղարաչորլի թուրքեր են, որոնց հին սերնդի մայրենի լեզուն քրդերենն է, սակայն նոր սերունդը միայն Ատրպատականի թուրքերենը գիտե, չափազանց անկիրթ, գող և անպիտան ժողովուրդ են. ընդամենը՝ 25 տուն, 90 ար., 84 իգ. և միասին՝ 174 հոգի:

Գյաբուտից դեպի արևմուտք, ձորի արևմտյան բարձրության վրա զրված է **Գյոմուր** կամ **Վերին Ախտա** գյուղը: Հավանական է, որ սա հին **Գոմքը** լինի, որ աշխարհաբար Գոմեր է դառել և սրանից թուրքերը Գյո-

---

[413] Հ. Ջալալեան, Ճանապարհ., հ. Բ, եր. 205: Ճչտորին նկարագրելով վանքը՝ Հ. Ջալալյանը սխալմամբ տեղավորել է նրան Վերին Ախտայում, մինչդեռ այն գտնվում է Գյաբուտի մոտ:

մուր են դարձրել: Գյուղը փռված է Յազ-յուրդի լանջին, և նրա հանդեպ, ձորի արևելյան կողմում, Ղայարասի ժայռապատ, մերկ լեռները մի սքանչելի տեսարան են ընծայում: Յազ-յուրդի ամբողջ լանջը, ինչպես և ձորը, պատած է հարուստ բուսականությամբ: Այս բնական գեղեցկության մեջ մի ցավալի հակադրություն են կազմում թուրք բնակիչների կիսագետնափոր, ողորմելի տները: Գյուղի մեջ կա մի բավական ընդարձակ, բայց հասարակ եկեղեցի մի գավթով, այժմ կիսավեր և անասնոց աղբով լի: Գյուղի հանդեպ, ձորի անմիջապես ափին, մի փոքրիկ հարթության վրա կանգնած է մի խաչարձան և մի փոքրիկ հրաչալի մատուռ, որ շինել են 1263 վրկչական թվին, Պռոշ իշխանի օրոք, Խոյդանի որդիներ Մխիթարը և Արևիկը: Խաչարձանը մի սաժեն բարձրություն ունի, կանգնած է մի արշին բարձրության պատվանդանի վրա և պատած է քարե գեղեցկաքանդակ շրջանակով, որի վերին մասում փորագրված է.

Կազմեցաւ խաչս ի բարեխոսութիւն Աւետարչաւին Թոռան Խոյդանայ,[414] իսկ շուրջը՝ ի թվ. Հ. ՉԺՒ (1263) բարեպաշտ իշխանութեան Պռոշոյ Մխիթար, Արեւիկ որդի Խոյդանայ կանգնեցաք խաչս եւ մատուռս. ի գիւղն եկեղեցի իսկ չկար շինած զեկեղեցիս այս մեք շինեցաք մեր հալալ արդեամբք բազում աշխատութեամբ մեզ. եւ ամուսնոյն մերոյ, որք կարդաք յիշեցէք յաղաւթս:[415]

Սուրբ խմաստը պարունակող մի արձանագրություն էլ կա խաչի ստորին մասում, պատվանդանի մոտ, որի վրա քանդակված է մի ցուլ և մի չղթայակապ առյուծ: [416]

Խաչարձանի արևելահայաց եզրին կից է մի փոքրիկ, կոփածոյ, սագաչեն մատուռ, մի դռնով: Մատուռի արևելյան պատին քանդակված է մի արծիվ, որ թևերը կիսով չափ տարածած, մագիլներով բռնել է մի խոյ: Աջ և ձախ վանդակների մեջ կանգնած են մի-մի աղավնի: Հյուսիսային պատին, միակ դռան վերև, դեղեցկաքանդակ խաչի շուրջը գրված է.

Կազմեցաւ խաչս բարեխոսութիւն Եղիսէ քահանային, որք պատարագէք յիշեցեք ի սուրբ պատարագս ձեր:

Հարավային կողմում, խաչարձանի շրջանակի վրա, քանդակված է արեգակնային ժամացույց հայկական թվահամարներով: Մատուռի մեջ կա մի փոքրիկ բեմ և մի կոտրած վեմ քար: Մի-մի փոքրիկ պատուհաններ էլ բացվում են երեք պատերի մեջ: Այս մատուռի շուրջը կան բավականաչափ գերեզմանաքարեր:[417]

---

[414] *Տե՛ս ԴՀՎ III, էջ 192:*

[415] *Տե՛ս ԴՀՎ III, էջ 193:*

[416] *Տե՛ս արձանագրությունների մասում:*

[417] *Հայր Ալիշանի Սիսականի մեջ այս մատուռը և խաչարձանը իրենց արձանագրություններով երկու անգամ են նկարագրված. մեկը Ջյումուր (Դյումուր), մյուսը Վերին Ախտա գյուղում, մինչդեռ այդ երկու անունն էլ միևնույն գյուղին են պատկանում:*

Գյումուրի կամ Վերին Ախտայի բնակիչները թուրքեր են, 47 տուն, 176 ար., 184 իգ. և միասին՝ 360 հոգի:

Գյումուրից մի ձորակ ձգվում է դեպի արևմուտք, ուր կա մի հորդ աղբյուր, մոտը մի խաչքար հետևյալ արձանագրությամբ.

Ի թվականիս հայոց ՉԼԷ (1288) իշխանութեան Պապաքին եւ Ամիր Հասանայ, ես Սարգիս եւ որդին իմ Պետրոս չինեցաք զաղբուրս եւ կանգնեցաք զխաչս... Ջորը այս խաչքարի պատճառով կոչվում է Խաչդարասի կամ Խաչի ձոր:

Գյումուրից հյուսիս, Ախտա-չայի ափին, գետեղված է **Ներքին Ախտան**, ուր կա նույնպես մի կիսավեր, հասարակ եկեղեցի և մի քանի գերեզմաններ: Բնակիչները թուրքեր են, 46 տուն, 206 ար., 197 իգ. և միասին՝ 403 հոգի:

Մարտիրոսի ձոր. Յազ-յուրդի կանաչազարդ լեռներին արևելյան կողմից միանում է Քհչալ-դաղ լեռնաշղթայի Նըզար ճյուղը, կազմելով մի ձորակ, որի միջով հոսում է Յազ-յուրդից ու Քյուքի-դաղ լեռից սկիզբ առնող Մարտիրոսի գետակը: Սա անցնելով Փաշալուի միջով՝ թափվում է Արփաչայը: Այս գետակի ձախ ափին, մի տափարակի վրա փռված է **Մարտիրոս** գյուղը, որի անցյալի մասին այսպես է պատմում գյուղի Մխիթարի-աղբյուրի մոտ կանգնած կարմիր, նրբաքանդակ, երկու սաժեն բարձրության խաչարձանը.

Ես Մխիթար որդի Դեղկայ հրամանաւ իշխանաց իշխանին Պռոշոյ եւ որդւոյ իւրոյ Հասանայ չինեցի զգիւղս Մարիտիրոս եւ կանգնեցի զխաչս ի դուռն սուրբ վկայարանիս, ի բարեխոսութիւն ինձ եւ ամուսնոյն իմոյ Մամիրին եւ որդւոյ իմոյ Խարիբշահին եւ դստերն իմոյ Ռուզուքանին: Կազմեցաւ ձեռամբ Շնորհաւորին ի թվին ՉԼԲ (1283), որք ընթեռնուք յիշեցէք:[418]

Ուրեմն գյուղը 600 տարուց ավելի է, որ շինված է, ուստի և ունի իր շրջակայքում հինգ ընդարձակ գերեզմանատներ: Այս խաչարձանից փոքրինչ հեռու բարձրանում է գյուղական եկեղեցին, գմբեթավոր զանգակատնով, որ կառուցված է հին եկեղեցու հիմնապատերի վրա: Գյուղի մեջ կան բավականաչափ գեղեցիկ շինություններ, որոնց առաջ տարածվում են փոքրիկ պարտեզներ: Բնակիչները Սալմաստի Ենգիջա, Փարաջիկ և Սավրի գյուղերից են, մի քանիսն էլ Խոյից, Աղբակից և Վանից: Գյուղի կլիման ցուրտ լինելու պատճառով բնակիչները պարապում են միայն անասնապահությամբ, երկրագործությամբ և մեղվապահությամբ, ցանում են նաև մեծ քանակությամբ կարտոֆիլ: Ընդամենը 125 տուն են, 681 ար., 638 իգ. և միասին՝ 1319 հոգի: Ընդհանրապես առողջ, հաղթանդամ և քաջ մարդիկ են, մասամբ և օղի սիրող: Գյուղում կա մի մանրունքի և մի ճոթեղենի խա-

---

[418] Տե՛ս ԴՀՎ III, էջ 183:

նուէր, 11 ղրաղաց և 2 ձիթահանք: Մարտիրոս գյուղից երկու վերստ արևելահարավ, գետակի աջ ափին, կան երկու վիմափոր եկեղեցիներ: Սրանք փորված են Նզար լեռան այն մասում, որ բաղկացած է կրախառն ավազաքարից: Դրսից երևում է մի բոլորակ պատուհան լեռան լանջին և մի փոքրիկ քարայր՝ ստորոտում: Այս քարայրից մի դուռ տանում է մի փոքրիկ գավիթ և ապա տանն արշինաչափ քառանկյունի մի եկեղեցի, անույուն: Ձեղունը գմբեթաձև փորված է և մի կլոր փոքրիկ պատուհանով լույս աշխարհի հետ հաղորդակցված: Ունի սեղան, նույնպես վիմափոր վեմ քարով, առանց խորանների: Արևմտյան պատի մեջ ևս, դռան վերևը բացվում է մի փոքրիկ պատուհան: Պատերի վրա փորված են մեծ և փոքր խաչեր: Հատակում կան երեք չարք տապանաքարեր առանց տապանագրերի: Հարավային պատի մեջ բացվող մի դուռ տանում է մի ուրիշ եկեղեցի, որ առաջինից փոքր է, 9 արշ. երկարության և 7 արշ. լայնության: Սրա ձեղունը ևս գմբեթաձև է փորված և պատերին կից 4 սյուն ձևացրած: Ունի սեղան և երկու խորան: Արևմտյան պատի մեջ կա մի դուռ ուղղակի դեպի դուրս, բայց պատով ծածկված է: Դռան վերև բացվում է մի լուսամուտ: Սեղանի աջ կողմում կա հետևյալ արձանագրությունը, որ համարվում է այս եկեղեցիների միակ, պատմական աղբյուրը.

Կամաւն Աստուծոյ ի հայրապետութեան Յակոբայ եւ ի քահանայապետութեան գաւառիս Տէր Սարգսի, եւ ի տէրութէան իշխանաց իշխանին Պռոշոյ եւ որդւոց նորին Պապաքայ եւ Հասանայ...եւ որդւոյ պարոն Եաչոյ եւ մաւր նորին Պարոն...ես Մատթէոս վարդապետ կանգնեցի...եւ կատարեցի զեկեղեցիս ի բարեխաւսութիւն ինձ եւ Պետրոսի եւ ծնողաց մերոց եւ պարոնաց մեր եւ ամենայն հաւատացելոց որք մտանէք Աստուած ողորմի ասէք մեզ, եւ ձեզ եղիցի. թվին ՉԼԵ (1286):[419]

Այս Մատթեոս վարդապետի կանգնեցրած մի խաչարձանն էլ այժմ գտնվում է այս եկեղեցուց արևմուտք, գերեզմանատան մեջ:

Այս եկեղեցիների մոտ կա նաև մի քարայր, մեջը մի փոքրիկ բեմ: Տեղացիները սրան ճգնավորի տեղ են կոչում և ավանդում են, թե մի ինչ-որ ճգնավոր է ճգնել այդտեղ: Այս վիմափոր եկեղեցիների առջև, գետակի ձախ ափին, նկատելի են մի ավեր եկեղեցի և տների հիմնապատեր, գետնի մեջ փորված հացահատիկներ պահելու հորեր, երկու ղրաղացի ավերակներ և այլն: Մարտիրոսի բնակիչները դաղթականներ լինելով, ոչ մի ավանդություն չունեն այս եկեղեցիների մասին, միայն կոչում են սրանց ս. Աստվածածնի անունով և նրա տոնին ուխտ գալիս այստեղ:

Բոլոր հնությունները նկարագրած լինելու համար հիշեմ նաև, որ մարտիրոսցիներն ունեն նաև ս. Հովհաննես անունով մի փոքրիկ մատուռ Յազ-

---

[419] Տե՛ս ԴՀՎ. III, էջ 180:

յուրդի ստորոտում, ուր միմյանց մոտ կանգնած երկու խաչքարերի մոտով անց են կենում ջերմողները՝ առողջություն հայցելով:

Մարտիրոսից դեպի հարավ, մոտ յոթ վերստ հեռու, նույն գետակի վրա դրված է Փաշալու գյուղը, որ հավանորեն Օրբելյանի հիշած Փշոնք գյուղը պիտի լինի: Ջորակը նեղ լինելով՝ տները կուտակված են միմյանց վրա: Գյուղում կա մի եկեղեցի և երկու ուխտատեղի ս. Հակոբ և ս. Վարվառե անունով: Վերջինիս միմիայն կանայք են ուխտ գնում, առավելապես երեխաները ծաղիկ հանած միջոցին: Այստեղ է գտնվում չինական դատարանը և Փաշալուի հասարակության պետական միդասյան դպրոցը: Բնակիչները դաղթականներ են Սալմաստի Առաչդիրան, Հավթվան, Սավրի և Ղարաբաղ կոչված գյուղերից. պարապում են երկրագործությամբ, անասնապահությամբ և մեղվապահությամբ: Վերջերս սկսել են խաղողի այգիներ ձգել, չբավականանալով պտղատու ծառերի պարտեզներով: Ընդամենը 77 տուն են, 460 ար., 424 իգ. և միասին՝ 884 հոգի, ընդհանարպես պճնասեր են և բարոյապես փոքր-ինչ ընկած: Փաշալուից մոտ 3 վերստ ներքև, նույն ձորում դրված է Ղարալար թրքաբնակ, աննշան գյուղը 19 տուն բնակչով, 50 ար., 42 իգ. և միասին՝ 92 հոգի:

Մարտիրոսի ձորից մինչև Կնիշիկի ձորը չկա ոչ մի նշանավոր ձոր, ուր գետեղված լինեն մի քանի գյուղեր, այլ փոքրիկ ձորակներ են, որոնց միջով հոսում են նրանց վերև, հարթության վրա տեղավորված գյուղի աղբյուրների ջրից գոյացած առվակները: Այսպես՝ Փաշալուից դեպի արևմտահյուսիս փոքրիկ հարթության վրա գետեղված է Փոր կամ հին Բոր գյուղը: Այստեղ հայկական պատմական շրջանից ոչ մի նշանավոր հնություն չկա, միայն կան բրոնզի դարից գերեզմաններ, որոնցից մեկի մեջ գտնվեց մի բավական գեղեցիկ դաշույն և մի քանի ապարանջաններ: Գյուղում կան բավական գեղեցիկ տներ, մի ուղիղ, լայն փողոց զարդարված ծառերով և մի եկեղեցի, որի տափարակ կտուրի վրա փորեցի խաչագողները թիթեղյա կեղծ գմբեթ են բարձրացրել, որպեսզի դրսից գեղեցիկ երևա, մինչդեռ ներսից չատ ողորմելի է: Բնակիչները Սալմաստի Սավրի գյուղից են, և այստեղ էլ, մանավանդ առաջները, մեծ մասամբ խաչագողությամբ են պարապում՝ ճանապարհորդելով Ռուսաստան: Այժմ մասամբ թողել են այդ և պարապում են առևտրով, Ռոստովում, Արմավիրում և այլ տեղեր խանութներ բաց անելով: Գյուղում տղամարդիկ չատ քիչ կան, մանավանդ ձմեռը, և կանայք չափազանց ընտելացած են ինքնուրույն կյանքին: Ընդամենը 75 տուն են, 395 ար., 265 իգ. և միասին՝ 660 հոգի:

Փորից դեպի արևմուտք, հարավից հյուսիս ձգվում են երկու խոր ձորեր, որոնցից հետո, հարթության վրա փռված է Ազատակ գյուղը: Սա ևս բավական գեղեցիկ տեսք, մեղմ կլիմա, մաքուր օդ և սառնորակ աղբյուրներ ունի: Գյուղում կա մի հասարակ, մեծ եկեղեցի, որ վերանորոգված է 1655

թ. Հակոբ կաթողիկոսի ժամանակ և մի, նույնպես հասարակ մատուռ, մի երկու խաչքարով: Գյուղի հարավային կողմում ցցված մի լեռան գագաթին էլ նկատելի են մի ամրոցի հետքեր և մի կիսավեր մատուռ: Ավանդությունն ասում է, թե մի հայ իշխան իր ժողովրդով եկել է, ապաստանել այս բերդում մի արյունարբու թշնամուց և այսպիսով ազատ է մնացել նրա սարկական լծից. թշնամին հեռանալուց հետո նա իջել է լեռից և նրա ստորոտում հիմնել այժմյան գյուղը և ի հիշատակ այդ ազատության Ազատ կամ Ազատակ կոչել: Վերջին ժամանակներս էլ այդ բերդը ազատել է ազատակցիներին մի ուրիշ բռնավորից՝ դարալագյազցի Շերին սուլթանից, որ 1855 թ. ռուս-թրքական պատերազմի ժամանակ ապստամբեց ռուսաց կառավարության դեմ և ցանկացավ կոտորել Դարալագյազի հայերին:

Բնակիչները Սալմաստի Սավրի և Սարամեր գյուղերից են, 7-8 տուն էլ մշեցիներ, նույն ժամանակներում գաղթած: Ընդամենը 110 տուն, 462 ար., 457 իգ. և միասին՝ 919 հոգի: Առավելապես պարապում են երկրագործությամբ և անասնապահությամբ: Առաջները սրանք ևս պարապում էին խաչագողությամբ, սակայն այժմ կամ առևտուր են անում Ռուսաստանում կամ բանվորություն և կամ ուղղակի մուրացկանություն, որովհետև այժմ այլևս նրանց հավատացողներ չկան: Գաղթականության որպես անմիջական հետևանք՝ գյուղը վարակված է վեներական ախտերով և բարոյականությունն էլ մասամբ ընկած է. թե զգեստի և թե նիստ ու կացի և թե լեզվի մեջ տիրում է բազմազանություն, խառնուրդ:

Ազատակից դեպի հյուսիս, մի ուրիշ առվակի վրա գտնվում է Ղաբախլու թրքաբնակ, աննշան գյուղը 33 տուն բնակչով, 143 ար., 124 իգ. և միասին՝ 267 հոգի:

Սրանից էլ դեպի արևմուտք Զեյթա կամ Զոփմաչոմախ գյուղը 26 տուն թուրք բնակչով, 195 ար., 157 իգ. և միասին՝ 352 հոգի:

Նույնքան աննշան է նաև սրա մոտ, մի փոքր-ինչ արևմտահյուսիս գտնվող Ղուրբան-քյասըլան գյուղը, որի մոտ, մի բլրակի վրա կա մի ավերակ եկեղեցի: Բնակիչները թուրքեր են, 20 տուն, 180 ար., 148 իգ. և միասին՝ 328 հոգի:

Ղուրբան-քյասըլանից արևմուտք ևս ձգվում է մի ուրիշ խոր և նեղ ձոր, մասամբ ընկուզենիներով պատած, որի պատճառով և կոչվում է Ոզլու-դարա, այսինքն Ընկուզաձոր: Սրա միջով հոսում է Ղուրդղուլաղի գետակը, որի հետ խառնվում է Քոսի ջուր հանքային ջուրը: Ձորի բարձրում կանգնած է Ղուրդղուլաղ սրածայր սարը, որ այսպես է կոչվում, որովհետև նրա վրա ցցված են երկու, իբր գայլի ականջի նմանություն ունեցող քարաժայռեր: Սարի լանջին փռված է Ղուրդ-ղուլաղ թրքաբնակ գյուղը, 45 տուն բնակչով, 322 ար., 225 իգ. և միասին՝ 547 հոգի: Այստեղ նշանավոր են երկու քարե ավազաններ, որոնց մեջ թափվում է հին ժամանակներում

խողովակներով բերված աղբյուրի ջուրը: Գյուղի հարավային կողմում, փոքր-ինչ հեռու կա մի գյուղատեղի, երկու ավերակ եկեղեցիներով, որոնցից մեկի վրայի արձանագրությունը ցույց է տալիս, որ այդ տեղում կանգնած գյուղի անունը **Ծուկրուկ** կամ **Ծկրիկ** է եղել և եկեղեցին էլ 1740 թ. է չինվել: Փոքր-ինչ հարավ նկատելի են մի բերդի ավերակներ, որ այժմ հայտնի են **Վարդաբլուր** անունով: Հավանական է, որ սա հին **Բերդիմայր** մեծ գյուղը լինի:

Այստեղից արևմտահյուսիս գտնվում է **Ենկիջան**: Սա հավանորեն նախկին Նորիք գյուղն է, տեղավորված Տաշխաչ լեռան լանջին: Հողը անջրդի է և զուրկ այգիներից: Ունի մի հասարակ եկեղեցի և մի մատուռ գյուղի ներքևում: Բնակիչները Սալմաստից գաղթականներ են, 50 տուն, 326 ար., 257 իգ. և միասին՝ 583 հոգի: Մեծ մասամբ պանդխտում են զանազան քաղաքներ՝ աշխատելու:

Սրանից էլ հյուսիս կա մի փոքրիկ, աննշան գյուղ, 4 տուն թուրք բնակչով, որ կոչվում է **Շորջա**:

Կնիշիկի ձոր. ԺԲ և ԺԳ դարերում այս ձորը կոչվել է Գինեչիկաձոր[420] կամ Թմաձոր[421] և, ինչպես երևում է բազմաթիվ դերեզմանատներից, բավական խիտ բնակություն է ունեցել: Այստեղ կատարված հնագիտական պեղումներն էլ ցույց են տալիս, որ բրոնզի դարում էլ բնակություն է եղել և բավական բարձր կուլտուրայի հասել: Ձորը բավական նեղ է և մեծ մասամբ ժայռապատ, մանավանդ նրա այն մասը, որ միանում է Արփաչայի հովտին և որ կոչվում է **Ուլփի-ձոր**: Այս մասում կան բավականաչափ քարայրեր, ուր երբեմն ապաստանել են հայերը թուրքերի հարձակումներից: Ձորի միջով հոսում է գետակ, որ առաջանում է թե այս և թե սրա մոտ գտնվող **Փայա-դարա** ձորակում բխող սառնորակ աղբյուրներից:[422] Գետակը թե Կնիշիկ գյուղի մոտ և թե նրանից ներքև կազմում է մի քանի հիանալի ջրընկեցներ:

Ձորի հյուսիսային մասում, ոչ անմիջապես ափին, այլ փոքր-ինչ բարձր, լեռների գոգավորության մեջ դրված է **Կնիշիկ** գյուղը: Սովորական ծուռումուռ և նեղ փողոցների երկու կողմում բարձրանում են քարաշեն, հասարակ տներ, առանց պարտեզների և կամ ծառերի: Գյուղերի ներքևում ձգված են պարտեզներ և տնկված առավելապես ուռենիներ: Գյուղում կա մի հին, հասարակ եկեղեցի, իսկ գյուղից դուրս ինը գերեզմանատուն, բավական դեղեցիկ խաչքարերով: Առավելապես հարավ-արևելյան մասում գտնվում են մեծ քանակությամբ ծովային քարացած ժժմակներ: Բնակիչներից 10 տուն բնիկներ են, մյուսները գաղթականներ Հին Բայազետից,

---

420 Նորավանքի ժամատան վրա Սմբատ իշխանի արձանագրության մեջ:
421 Ստ. Օրբելեան, գլ. Կե:
422 Այս աղբյուրներից հիշատակության արժանի է Զրախանա-աղբյուրը, որ բխում է Փայա-դարայում մի մեծ ստալակտիտներով պատած քարայրի մեջից: Այժմ առավելապես թուրքերը, մասամբ և հայերը ուխտ են գալիս այստեղ՝ սուրբ համարելով թե՛ աղբյուրը և թե՛ քարայրը:

Խոյից, Ալաչկերտից և Վանից: Ընդամենը 47 տուն, 291 ար., 269 իգ. և միասին՝ 560 հոգի: Գյուղի կեսը պատկանում է չիվացի Վեքիլովներին, իսկ մնացածը՝ իրենց, գյուղացիներին:

Կնիշիկից մոտ վեց վերստ ներքև, գետի աջ ափին, մի փոքրիկ հարթության վրա գտնվում է Նորավանք հռչակավոր մենաստանը, պաշտպանված ժայռապատ բնական ամրություններով:[423]

Սրա հանդեպ, գետակի ձախ ափին, Մսըրդաղ լեռան լանջին փռված է **Ամաղու** փոքրիկ, թրքաբնակ գյուղը, ուր այժմ գտնվում է մի կիսավեր, հասարակ եկեղեցի և գյուղից դուրս՝ մի հին գերեզմանատուն: Գյուղը պատկանում է երևանցի Եղիազարյանին: Բնակիչները բոլորն էլ թուրքեր են, որովհետև մի քանի տուն հայերը նեղվելով թուրքերից՝ գաղթել են ուրիշ գյուղեր: Ընդամենը 38 տուն են, 179 ար., 162 իգ. և միասին՝ 341 հոգի:

ԶԳԵՍՏ ԵՎ ԶԱՐԴ

Գլխի հարդարանք. Նախ սանրում են մազերը և 1-4 ծամ հյուսում: Թունքերի մոտի մազերն էլ ոլորում են և բկի տակ միմյանց հետ հանգուստում, եթե, իհարկե, այդքան երկար են, իսկ եթե ոչ՝ թելով կապում են: Ապա վերցնում են լաչակը, որ 3 արշին երկարության և 2 արշին լայնության եռանկյունաձև սալիտակ, բարակ կտոր է, կամ դունավոր չիթ, և կապում են գլխին այսպես. մի ծայրը ձգում են գլխին, մի անգամ փաթաթում բկի վրայով և ծայրը բկի մոտ ճխտում. հետո սրա վրայից դնում են պոլը գագաթին, լաչակի մյուս ծայրը եռ են դարձնում, ձգում գլխին, այս մյուս կողմից առաջինին հավասար կախ ձգում և ծայրը տանում մյուս ծայրի հետ հանգուստում, այնպես որ երեսի երկու կողմից կրկնակի, իսկ ետևից՝ մի տակ (գաթ) եռանկյունաձև կախ է ընկնում:

Պոլին մոտ 10 սմ տրամագծով, 3 սմ լայնության և մոտ 1 սմ հաստության փայտե շրջանակ է, վրան շոր փաթաթած և ետևի երկու կողմերից մի շորն ժապավեն՝ «քուլ» կապած, որը գլխին դրած ժամանակ անց են կացնում բկի տակ:

Պոլին ոսկանք չունում են և կարդոնից, միայն այապխինների ետևի մասը փոքր-ինչ թեքված են անում:

Պոլու վրայից կապում են ճակատանոց՝ պոլու լայնության թավշյա կամ շալի կտոր, վրան կլասպիտոնով կամ դուլնզդուլն ուլունքներով, փիլաքներով (գեղին թիթեղի մանրիկ շրջանակներ) ասեղնագործած:

Պոլի վրայից ձգում են եռանկյունաձև ծալված բաղդադի (մետաքսից) կամ շալ, որի աջ ծայրը քթի, իսկ ձախը՝ բկի տակից անցկացնելով տանում,

---

[423] Մանրամասն նկարագրությունը տե՛ս նշանավոր վանքերի մասում:

ծոծրակի մոտ իրար հետ հանգուստում են: Այսպիսով բերանը, հետևապես և երեսի կեսը, ծածկվում է. իսկ նորահարսի երեսը ամբողջովին ծածկում են, այն էլ առնվազը մի, իսկ առ-առավելը՝ չորս տարի, չալի կամ բազպադի փոխարեն մետակ ձգելով դլխին: Մետակը եռանկյունաձև, դեղնագույն, կարմիր և կամ կանաչ գույնի մետաքսյա կամ հասարակ կտոր է, որ ո՛չ մի դեպքում սև կամ սպիտակ չի կարող լինել: Մետակը ձգում են գլխին ուղիղ մեջտեղից, այնպես որ եռանկյունաձև կողմը կախվում է երեսի վրա և ամբողջովին ծածկում նրան, մյուս երկու ծայրերը ետ են դարձնում և ծոծրակի մոտ միմյանց հետ հանգուստում:

Աղջիկները, նույնիսկ նշանված ժամանակ էլ, գլխներին միայն մի յայլուղ կամ չալ են ձգում և բակի մոտ հանգուստում:

Խալ. *Հնում դեղեցկանալու տենչով երեք ասեղ միասին կապած խրում էին ճակատին, այտերին, քթի կողքերին, բազուկներին ու ծծերին, և երբ արյուն էր դուրս գալիս՝ սուրմա էին ցանում վրան և մատով հուպ տալիս: Սուրման մտնում էր ծակերի մեջ և սև բծեր առաջացնում, որ միառժամանակ մնում էր և իբր դեղեցկություն նկատվում: Այժմ այլևս չեն անում:*

Սուրմա. *Սևիկ և մեծ աչքերն ավելի դեղեցիկ համարվելով, թե հնում և թե այժմ, կանայք արվեստորեն սևացնում են «սուրմա քաշելով»: «Սուրմա» պատրաստելու համար կովի յուղ են ածում ձիթեճրագի մեջ, պատրույդ դնում, վառում և մի որևէ բան բռնելով պատրույդի վրա՝ մուրը հավաքում: Ահա այդ սև մուրը, որ կոչվում է սուրմա, միլչով (երկու վերշոկաչափ սրածայր փայտ), վերցնում են և քսում կոպերի եզրին, որպեսզի սևանան և մեծ ցույց տան:*

Սուրման ընդհանրապես քաշում են դեղեցկանալու նպատակով, սակայն կա երկու բան ևս, որոնք քաշում են՝ աչքերից հոսող ջուրը և քորը կտրելու նպատակով: Սրանք կարմիր և սպիտակ թուղթիան են: Կարմիր թուղթիան պատրաստում են ռասուղ և ջաֆարդար հավասարաչափ ածելով մի կավե ամանի մեջ, մի երեխայի միղել են տալիս վրան և հետո դնում կրակին եփ տալիս, մինչև որ մեզը բոլորովին գոլորշիանում է, ապա վերցնում են մանրում, մաղում են բարակ չորով ու ածում հավի ոտից հանած կաշվե քսակի մեջ պահում: Առավելապես հաց թխելիս, կամ շաբաթը երկու կամ երեք անգամ, երբ հաճախ թոնրի մեջ կռանալուց ծխից, աչքերից ջուր է հոսում, միլչիով վերցնում են և քաշում աչքի աղբյուրակները, որպեսզի ջուրը դադարի հոսելուց:

Սպիտակ թուղթիան գործ են ածում աչքի քորը կտրելու համար: Խաղողի ղոռը (այսինքն խակ խաղող) թուղթիայի (այսինքն արճիճի ?) հետ դնում են կրակին, հալում, հետո երբ պաղում, պնդանում է, մանրում են, մաղում և հավի ոտի կաշուց շինած քսակի մեջ պահում, հարկավոր եղած դեպքում միլչով քաշում աչքերին:

Անուշահոտությանն համար չորացած մեխակը բուստի հետ անց են կացնում թելի վրա և կապում վզին, հանդերձի տակ, այնպես որ չի երևում, թեպետ և հնում երևացնում էին:

Ականջները ծակելը և գինդ անցկացնելը թե հնում և թե այժմ շատ սովորական է:

Հանդերձ. *Նախ հագնում են շապիկ, շապկընկեր, ապա արխալուղ (խալուղ), որ իջնում է մինչև ծնկները և սրա վրայից դայրա: Վերջինս կարում են էֆից, շատ պարզ է, սեղմվում է մեջքում և իջնում մինչև ոտները: Կուրծքը կոճկվում է չափրաստով: Սրա վրայից կապում են գոգնոց, երբ աշխատում են:*

Ոտներին հագնում են գուլպա և քոշ:

Տղամարդկանց հանդերձները միանգամայն նման են մյուս տեղերի հայերի, մանավանդ դանձակեցիների հանդերձներին, ուստի և զանց եմ առնում կրկին նկարագրելու, առաջարկելով կարդալ իմ «Դանձակի գավառ» աշխատության մեջ:[424]

ԱՄՈՒՍՆՈՒԹՑԱՆ ԵՎ ՀԱՐՍԱՆԻՔԻ_ՍՈՎՈՐՈՒԹՑՈՒՆՆԵՐ

Հասակ. Վայոց ձորի բնիկները թե՛ հնում և թե՛ այժմ ամուսնանում են՝ աղջիկները՝ 13-17, իսկ տղաները՝ 16-35 տարեկան հասակում: Ավելի վաղ ամուսնանալու դեպքեր գրեթե չէին պատահում, որովհետև 1. երկիրը լեռնոտ լինելով բավական ուշ են հասունանում և 2. սարդարը այս կողմերից իր հարեմի համար աղջիկներ չէր հավաքում, ուստի և բնակիչները ստիպված չէին լինում իրենց աղջիկներին մատաղ հասակում ամուսնացնելու՝ հարեմն ընկնելու վտանգից ազատելու հույսով: Սակայն և այնպես՝ 18 տարին անց աղջիկը «պռաված» էր համարվում:

Ամուսնացողների հասակի համեմատությունը. *Գրեթե առանց բացառության միշտ ամուսինն էր հասակով մեծ լինում կնոջից, այն էլ 5-15 տարի: Հազիվ էր պատահում, որ այրի տղամարդն ամուսնանար դեռահաս աղջկա հետ, ինչպես և այրի կինը ամուրի երիտասարդի հետ:*

Ամուսնացողներն ըստ ազգության. *Վայոց ձորի բնակիչները չափազանց խուսափում են օտարազգիներին աղջիկ տալուց, իսկ նրանցից աղջիկ առնում են միայն այն դեպքում, երբ վերջինս ընդունում է լուսավորչական հավատը: Այսպես՝ տեղական մի ռուս ոստիկան ամեն միջոցի դիմել էր մի քահանայի աղջկա հետ ամուսնանալու, սակայն չի կարողացել հաջողացնել, նրան ընդդիմադրել են ոչ միայն քահանան, այլև աղջիկը և ժողովուրդը:*

---

424 Բնակարաններն էլ դլխատուն են, ուստի տե՛ս իմ «Զանգեզուրի գավառ» աշխատության մեջ:

Խաչիկում մի չափահաս աղջիկ իր մոր վատ վարքի պատճառով ուզողներ չունենալով՝ սիրահարվել է մի չոփմաչումախեցի թուրք երիտասարդի վրա, որ իրենց հարևանի տանը ծառայելիս է եղել: Երբ այս մասին իմացել են խաչիկեցիները, իրենց միջից մի գումար են հանգանակել, և տալով մի թեթևամիտ երիտասարդի՝ ամուսնացրել են այդ աղջկա հետ, որպեսզի վերջինս դադարի թուրքին սիրելուց. սակայն աղջիկը ոչ միայն չի ընդհատել իր հարաբերությունն այդ թուրքի հետ, այլև չորս ամսից հետո մոր ճեռնտվությամբ նրա հետ փախել է: Գյուղացիները սաստիկ զայրացել են և ստիպել են մորը հետևելու Խաչիկից, իսկ հորն այնքան թակել են, մինչև որ նա դիմել է ոստիկանին և հետ խլել իր աղջկան թուրք առևանդողի ճեռքից:

Նույն Խաչիկ գյուղից Ամիրզադայի աղջկան փախցրել է մի քուրդ և անցել Տաճկաստան: Ամիրզադան իր համագյուղացիների հետ սպանել է այդ քրդի մի բարեկամին և մի քանի հոգի ուղարկել Տաճկաստան՝ իր աղջկան որոնելու: Սրանք վանում գտել են այդ աղջկան ու քրդին և երկուսին էլ սպանել:

Ինչպես ասացի, բոլորովին ներողամտությամբ են վերաբերվում, երբ օտարազգի աղջիկը կամ տղան լուսավորչականություն է ընդունում և ամուսնանում հայի հետ: Այսպես՝ Ագնաբերդցի Խաչատուր Պիլիկլուն (Փիլիպպոս) փախցրել է գյումուշխանեցի Սաֆար-Ալու եղբոր աղջկան, տարել էջմիածին, լուսավորչական մկրտել և ապա հետը ամուսնացել:

Բնիկները խուսափում են նաև աղջիկ տալու Դարալագյազի գաղթականներին, որովհետև, ասում են, նրանք վատ են հարս պահում, թե չատ են ճնշում և թե չատ աշխատեցնում: Սակայն չեն քաշվում գաղթականների աղջիկը ուզելուց, դիտենալով որ նա՝ իրենց մոտ ավելի լավ վիճակի մեջ լինելով՝ գոհունակությամբ կապրի:

Աղջիկ փախցնել. *Թե անցյալում և թե այժմ տեղի է ունենում աղջիկ փախցնելը, որի թե պատճառները և թե փախցնելու կերպը միանգամայն նույնն են, ինչ որ Լոռինը:*[425]

Օրօրոցախազ. *Այս սովորությունը ևս եղել է հնում և այժմ էլ կա: Սրա պատճառները և եղանակը ևս միանգամայն նման են Լոռու սովորության:*[426]

Ամուսնացողների փոխադարձ համաձայնության մասին հնում բոլորովին հոգս չէին քաշում: Նույնիսկ մեծ ամոթ էր համարվում, որ ամուսնացողները հետաքրքրվեին այս հարցով և կամ իրենց ցանկությունը հայտնեին: Սրանց ծնողներն էին կատարում ընտրությունը և կամ ընդունում կամ մերժում առաջարկը: Աղջիկն ընտրելիս՝ ուշադրություն էին դարձնում նրա մոր վրա, հետևելով այն առածին՝ թե «ծերիկը տես՝ դօտիկը առ, մէրի-

---

[425] Տե՛ս իմ «Բորչալուի գավառ» աշխատության մեջ:
[426] Տե՛ս իմ «Բորչալուի գավառ» աշխատության մեջ:

կը տես՝ աղջիկն առ»: Իսկ տղայի արժանավորությունը չափում էին նրա հոր արժանավորությամբ. նախանձելի էր համարվում «հալալ կաթնակեր» հարսնացուն և «հոր որդի» փեսացուն:

Սակայն վերջին ժամանակներս երիտասարդներն իրենք սկսել են «սէր կապել», հարսնացու ընտրել, որին իրենց սերը արտահայտելու համար ուղարկում են մի խնձոր: Եվ եթե աղջիկն էլ բաժանում է նրա զգացմունքները, վերցնում է խնձորը և նրա մեջ չորացած մեխակներ ցցելով՝ հետ ուղարկում:

Թոնրի հարսանիք. Թեպետ Ղարաբաղում գոյություն ունեցող թոնրի հարսանիքի սովորությունն այս բնիկների մեջ չկա այժմ, սակայն մոտիկ անցյալում դեռևս տեղի էր ունենում հետևյալը, որ հավանականորեն դրա մնացորդն է: Հարսը հորանց տնից տղի տուն տանելիս՝ երեք անգամ պտտվում էր թոնրի շուրջը և չոքում համբուրում նրա շուրթը:

Աղջիկ ուզել. Հարսնացուն ընտրելուց հետո նախ կողմնակի կերպով աշխատում են իմանալ թե կտա՞ն, ապա տղայի հորեղբայրը կամ մորեղբայրը և կամ մի ուրիշ մոտիկ ազգական, բայց ոչ երբեք հայրը, գնում է նրանց տուն և տան մեծից խնդրում աղջկա ձեռքը:

Այս առաջարկը սովորաբար անում են հետևյալ ձևով. «մասու էամրովը ուզում ենք ձեր աղջիկը մեր այսինչ տղին կամ՝ եկել եմ ձեր օջախից մի բուռը հող տանեմ կամ՝ եկել եմ ձեր ճրագից մին կրակ տանեմ»:

Որքան էլ տրամադիր լինեն տալու, այնուամենայնիվ իսկույն խոսք չեն տա, այլ մի քանի օր կձգձգեն, որպեսզի «գնան գան էվել աքանան»:

Մերժելիս էլ քաղաքավարությամբ պատճառաբանում են, թե «էս տարի կարալ չենք տալ, հայերնիս պակաս է», կամ «մեր օջախի ճրագի պատրուքը հալա չենք պատրաստել», կամ «մեր օջախի ճրագը չի վառվել այսինչի տանը» և կամ ուղղակի՝ «քու կորցրածդ մեզանում չկա»:

Մինչև դրական պատասխան տալը խնամախոսներին զգուշանում են հյուրասիրել, որովհետև «որ էլչուն (խնամախոսին) հայ տաս՝ բեամա աղջիկդ էլ տաս»:

Վերջապես երբ հայտնում են իրենց համաձայնությունը, խնամախոսները հանում են իրենց զրպանում պահած մի շիշ օղին և շնորհավորելով՝ միմի բաժակ խմում, ապա վերադառնում, և նույն օրվա երեկոյին մի քանի ուրիշ տղամարդկանց և պատավ կանանց հետ գալիս են աղջկա տուն՝ բերելով իրենց հետ մի քանի շիշ օղի և մի քիչ չոր մրգեղեն: Աղջկա տերն էլ հրավիրած է լինում իր մոտիկ ազգականներն ու ազգականուհիները: Տղայի կողմի ամենատարիքավորը ուղղելով խոսքը աղջկա կողմի ամենատարիքավորին՝ խնդրում է աղջկա ձեռքը, և երբ սա «տար, խէրը տես» ասելով հայտնում է իրենց համաձայնությունը, իսկույն սկսում են խմել խնամախոսների բերած օղին և շնորհավորում ասելով. «Աստված շնորհավոր անէ,

Աստված բարի վայելում տա, ամենի ազապին էլ բորջ (պարտք) լինի»: Անմիջապես՝ մի արծաթե մատանի և մի յայլուղ հանձնվում է ամենատարիքավորին, որ օղին խմելուց հետո տալիս է աղջկա մորը: Աղջիկը ոչ միայն ներկա չի լինում, այլև տանը չի մնում, գնում է մի բարեկամի տուն: Բացակա է լինում նաև նշանադրվող երիտասարդը: Փոքր-ինչ հետո ընթրում են և ցրվում: Այս արարողությունը կոչվում է նշանդրեք:

Բարգյահ. Մի քանի օրից հետո տղի ծնողները հրավիրում են իրենց մոտիկ ազգականներին, ինչպես և քահանային, հյուրասիրում սրանց մի թեթև ընթրիքով, և ապա սրանց հետ մեկտեղ գնում են հարսնացուի տունը, տանելով իրենց հետ բավականաչափ մրգեղեն, կերակուրներ, մի գառան կամ ուղի խորով (թոնրում խորոված գառ կամ ուլ), մի գլուխ չաքար, հարսնացուի համար մի ձեռք հանդերձ կամ մի բաղդադի և մի զույգ քոշեր: Հարսնացուի տանը, ուր նույնպես հրավիրված են լինում բարեկամ տղամարդիկ և կանայք, ընթրիք է տրվում, որի ժամանակ տղայի տանից բերված խորովը դրվում է երեցփոխի առաջ, սա էլ հօգուտ եկեղեցու մի ռուբլի պահանջելով տղայի տիրոջից՝ կտրատում է և բաժանում սեղանակիցներին: Ընթրիքից հետո առաջ են բերում տղայի տանից բերված չաքարը և մրգեղենի հետ մի քիչ բաժանում, որ բերանները քաղցրացնեն: Ընթրիքից հետո հարսնացուն երեսը ծածկած նշանադրության ժամանակ բերված յայլուղով՝ մի հարսի առաջնորդությամբ գալիս է համբուրում բոլոր հրավիրյալների ձեռքերը, սկսելով քահանայից: Երբ նա հեռանում է, երբեմն էլ հենց նրա ներկայությամբ, հարսնացուի կողմից մի ազգական վերցնում է մի ափսե և հրավիրում փեսացուի կողմի ազգականներին «երեսաեսնուկ»՝ հարսի երեսը տեսնելու պատճառով նվեր տալ: Նախ տալիս է քավորը՝ 2-3 ռ. և ապա մյուսները: Ամեն անգամ նվեր հավաքողը բարձր ձայնով կանչում է. «Էլիկ (ժողովուրդ), ականջ դրեք, չեն մնա մեր այսինչը, Աստված նրա որդուն էլ էս ուրախությունը փոխ անե, այսքան մանեթ. չեն մնա, չեն կենա»:

Վերջապես՝ բոլոր նվերները հաշվելուց հետո հանձնում են հարսնացուի հորը: Այս դեմարն իրավունք չունեն ծախսելու, այլ օժիտի հետ վերադարձնելու են, և սա մնում է որպես հարսի առանձին սեփականություն:

Սրանից հետո հրավիրվածները ցրվում են, միայն փեսացուի հայրն ու մայրը գիշերում են այդտեղ. պարզ է, որ փեսացուն եկած չի լինում:

Հետևյալ օրը հարսնացուի տանից հրավիրում են երեկոյան հարսին երեսաեսնուկ տվողներին, ճաշ տալիս և մի-մի զույգ դուլպա նվիրում, ի տրիտուր նրանց տված նվերների:

Երբեմն կասկածելով, թե միգուցե փեսացուն հետ լինի՝ այն երեկոին օրհնել են տալիս նշանը. քահանան ընթրիքից հետո հարսնացուի ներկայությամբ, առանց փեսացուին, օրհնում է նշանի մատանին, գինով լի մի

բաժակի մեջ ձգած, և տալիս հարսնացուին, որ վերցնում է և հեռանում, գինին խմում, ու մատանին դնում աջ ձեռքի միջնամատին, հավատալով, որ այդ մատի երակները միացած են սրտի երակներին, հետևապես և դրա ազդեցությամբ կարելի է սրտանց սիրել ամուսնուն:

Բարդյահից հետո փեսացուն մի գիշեր աներոջից ծածուկ գնում է իր հարսնացուին տեսնելու, տանելով իր հետ մրգեղեններ: Զոքանչը ծածուկ ընդունում է նրան, հյուրասիրում ձվածեղով և ցույց տալիս հարսնացուն: Երբեմն զոքանչներն էլ սաստիկ խստապահանջ են լինում և ցույց չեն տալիս հարսնացուն, այսպես՝ կնիշլիկից մինը եկել է խաչիկ աներանց տունը, մինչև կեսգիշեր նստել, տեսել է, որ հարսը առաջ չեն բերում, վեր կացել, գիշերով վերադարձել է իրենց գյուղ:

Սակայն այժմ գրեթե բոլորովին վերացել է այս կեղծ ամոթխածությունը, և փեսացուներն օրը ցերեկով այցելում են իրենց աներանց տուն, և մինչև անգամ մի քանի գյուղերում, ինչպես Գնդեվազում, ընդունված է փեսական կազմել, այսինքն հանդիսավոր կերպով փեսին տուն հրավիրել. և այս կատարվում է այսպես. նշանադրությունից մի քանի օր հետո հարսնացուի մայրը հրավիրում է փեսացուին իրենց մոտ և սա քավորի և մի քանի հասակակից ընկերների հետ գնում է, դռան առաջ կանգնում և ներս չի մտնում, մինչև որ զոքանչը ընդառաջ չի ելնում և մի ծնած կով, կամ նույնպիսի ոչխար չի խոստանում նվեր ուղարկել հարսանիքից մի քանի օր հետո: Երբ փեսացուն ներս է մտնում, զոքանչը օրհնում է նրան ասելով. «Մեր տունը, մեր մալ ու դովլաթը քեզ փեշքեշ, ոտդ բարի լինի, Աստված խեր տա քեզ, դու և իմ աղջիկը մի բարձի ծերանաք, հայր Աբրահամի հացն ուտեք, օխտը որդով սեղան նստեք»:

Փեսացուի աները և մյուս հասակակից տնեցիները դիմամբ բացակայում են: Շուտով ընթրիք են տալիս, որից հետո հարսնացուն փեսացուին և հյուրերին թեյ է մատուցանում, շաքարի փոխարեն մեղր ածելով, որպեսզի նշանադրվածները քաղցր, սիրով լինեն: Հետո հյուրերը երեստեսնակ նվիրելով հարսնացուին գնում են, իսկ փեսացուն մի քիչ էլ մնում է հարսնացուի հետ փոքր-ինչ ժամանակ անցկացնելու:

Բաժին կամ Հարսնափայ. Առաջները վեց ամսից մինչև երեք տարի նշանադրված էին մնում, և այս երկար ժամանակամիջոցում նշանավոր տոներին խնամիները միմյանց ընծաներ էին ուղարկում, որոնք բաժին կամ հարսնափայ, փեսափայ էին կոչվում: Այժմ հետզհետե կարճանում է այս ժամանակամիջոցը, և վերանում է այդ բաժին ուղարկելու սովորությունը:

Ջրօրհնէքին փեսացուի տանից ուղարկվում է հարսնացուի տունը 10 ֆունտ բրինձ, մի քանի ֆունտ յուղ, մոմ, 20 կոպեկ քահանային աջհամբույր տալու:

Տեառնընդառաջին հարսնացուի սկեսուրը մի քանի բարեկամ կանանց հետ 14 հատ գաթա, աղանձ և մի դլխի մետաքսյա թաշկինակ առած գնում է խնամիների տուն և հարսին ու խնամի կանանց տանում եկեղեցի: Այստեղից ձեռներին վառած մոմեր վերադառնում են հարսնացուի տունը, բարձրանում կտուրը և հարսնացուին երեք անգամ թռցնում տերնդազի դեղի վրայից, որպեսզի ապագայում չատ զավակներ ունենա:

Բարեկենդանին տղայի տանից ուղարկվում է գաթա, մազա, հալվա, աղանձ, յայլուղ, հայելի, քոչ: Հարսնացուի տանից էլ վերադարձնում են խոնջան, գուլպաներ, քիսա, ղավլուղներ դնելով:

Մաղկազարդին փեսացուի տանից գաթա, հալվա և տապակած հավ է ուղարկվում: Հարսնացուին անչուշա եկեղեցի են տանում, ուր նրա ձեռքը մոմ են տալիս ու սկեսուրը և տալերը փող (20-ական կոպեկ) են նվիրում:

Զատկին դարձյալ տղայի տանից ուղարկվում է ներկած ձվեր (մոտ 100 հատ), 10 ֆունտ բրինձ, 3 ֆ. յուղ, 10 զույգ մոմ, մի զույգ կոշիկ, մի մետաքսե գլխի թաշկինակ, հայելի, չոր մրգեղեններ և մի ռուբլի փող աջհամբույրի համար: Ապա նախ տղայի և հետո հարսի տնեցիք այցելում են միմյանց և չնորհավորում Զատիկը:

Համբարձմանը տղի տանից ուղարկվում է ձու, գաթա, հալվա և մի թաշկինակ, իսկ հարսնացուի տանից հատուկ փեսացուին՝ որ ընկերների հետ քեֆ անի՝ գաթա, հալվա, հավ, դոլազ և այլն:

Վարդավառին. տղայի տնից՝ մրգեղեններ և ղայմաղ:

Ս. Խաչին. դարձյալ տղի տնից խըրով՝ թոնրի մեջ, ձավարի ճաշի վրա քաշ տված և խորոված մի ուլ, գաթա, հալվա, մրգեղեններ և հարսնացուին մի հանդերձեղեն:

Քավոր. Այս բնիկների մեջ ևս քավորը տոհմական է և փոխվում է միայն այն ժամանակ, երբ սանամայրը երեխաներ չի բերում և կամ չարունակ աղջիկներ է ունենում և կամ երեխաները մեռնում են: Այսպիսի դեպքերում ասում են, որ «քավորի ոտը խերով չի»: Նույն ակնածությունն ու չխոսկանությունը, որ ունեն մյուս գավառների սանամայրերը դեպի իրենց քավորները, այստեղ ևս տիրում է, մինչև իսկ Խաչիկ գյուղում Թառանը երեսը ծածկում էր, որովհետև քավոր Ղազարը հանդիպակաց լեռան վրա, երկու վերստ հեռու գութանն էր քշում:

Տոներին քավորին բաժին (նվեր) ուղարկելու սովորությունն այս բնիկների մեջ չկա:

Բարգյահ կտրեք. Հարսանիքից 8-10 օր առաջ փեսացուի հայրը մի քանի բարեկամների և քահանայի հետ գնում է հարսնացուի տուն, տանելով 5-10 չիշ օղի, ուր հրավիրվում են նաև աղջկա մոտիկ մի քանի բարեկամներ: Փեսացուի օղին խմելուց և հարսնացուի ճաշը ուտելուց հետո՝ քահանայի առաջարկով երկու կողմերն էլ ընտրում են մի քանի միջնորդներ (վեքիլ-

ներ), որոնք երկար և համառ սակարդությունից հետո որոշում են թե սլաքի օրը և թե ինչ է տալու փեսացուի հայրը՝ հարսնացուի հորը, որ մոտավորապես հետևյալն է լինում.

Բաշլըղ-30-50 ռուբլի: Յոթը խալաթ.

1. Մի արխալուղացու:

2. Յոթը գազ գյուլի չիթ հարսնացուին դայրացու:

3. Երեք գազ ղանավուզ՝ փեսացուի համար մի չապիկ կարելու:

4. Մի զույգ քոշ հարսնացուի հոր համար:

5. Մի լաչակ կամ գլխի շալ հարսնացուի մոր համար: Այս նվերը կոչվում է կաթի գին:

6. Մի չուխա հարսնացուի եղբոր համար, որ եղբոր կապա է կոչվում:

7. Մի մետաքսե յայլուղ հարսնաքրոջ համար:

2-3 փութ միս կամ մի ոչխար, 2-3 փութ գինի և 0,5-1 փութ օղի:

Շորձևեք. *Կատարվում է սլաքից մի քանի օր առաջ և միանգամայն նման է Լոռում տիրող սովորությանն. փեսացուի մայրը հրավիրում է բարեկամ կանայք, հյուրասիրում է նրանց ճաշով, ապա ցույց տալիս կտորեղենը և ընտրում մի բախտավոր համարված կին՝ շորերը ձևելու: Սա էլ մկրատը դնում է կտորի վրա, բայց չի կտրում, ասելով թե լավը չի՝ չի կտրում, մինչև որ թե փեսացուի մորից և թե մյուս կանանցից նվերներ չի ստանում: Ապա կանանցից չաուերը մի-մի բան վերցնում են իրենց տանը կարելու:*

Սովորաբար շորձևեքի օրը փեսացուն քավորի և քահանայի հետ այցելում է գյուղի սգավոր տները, ուր քահանան հոգոյ է ասում, քավորը իր հետ վերցրած օղուց մի-մի բաժակ տալիս է բոլորին ու մխիթարանք խոսում, և փեսացուն հրավիրում է սգավորներին իր հարսանիքին:

Ալուր-մաղեք. *Հարսանիքն սկսելու նախորդ օրը, սովորաբար հինդշաբթի, փեսացուի տանը հրավիրվում են բարեկամ կանայք, որոնք ճաշելուց հետո ընտրում են մի բախտավոր, կսկիծ չտեսած, ամուսինը դլխին (կենդանի), հասակավոր կին և խնդրում հարսանիքի ալյուրը մաղել: Սա էլ երկար բարեմաղթություններ անելուց հետո սկսում է մաղել: Ուրիշ ծիսակատարություններ չկան, ինչպես ուրիշ տեղեր, միայն հացը եփելիս հացթուխին նվերներ են տալիս մի քանի կոպեկ և առաջին թխված հացը, հնում, վերցնում պահում էին, և երբ հարսին բերում էին սկեսրանց տուն, այդ հացը տալիս էին նրան՝ որ բրդե մի ափսեի մեջ և հետո շաղ տա դետնին: Ապա մի ավել էին տալիս ձեռքը, որ ավլե այդ հացը. եթե դեպի ներս, օջախն էր ավլում, դուշակում էին որ բախտավորություն է բերելու, իսկ եթե դեպի դուրս՝ սկսում էին տրտնջալ, որ հարսը քանդելու է այդ տունը:*

Գիննեթափեք. *Նույն հինդշաբթի երեկոյան հրավիրում են մոտիկ ազգական տղամարդկանց և նրանց միջից ընտրում մի մարանպետ (մառանապետ), որի կառավարությանն է հանձնվելու գինին, օղին, հացը, սլանիրը,*

միսը և այլն: Սա էլ ընտրում է երկու օգնական, որ սաղի են կոչվում և երկու ուրիշը, որ քոմակչի (օգնական) են անվանվում:

Սաղիների պարտականությունն է մի ձեռում գավով գինի, մյուսում մի ափսեի մեջ դրած երկու բաժակ բռնած գինի բաշխել հրավիրյալներին, իսկ քոմակչիներինը լիքը գավը ձեռին՝ կանգնել սյան մոտ, և երբ սաղու գինին պարպի, այդ լիքը տա նրան և նրա դատարկ գավը տանի մառանապետին: Բացի սրանցից ընտրում են նաև մի թամադա՝ սովորաբար տան մեջ ամենից հարգվածին, մի քեյվանի (խոհարարուհի) պառավներից և սրան մի քանի օգնական կանայք, խալաթ կանչող և 2-10 կանչողներ, այսինքն հրավիրողներ: Ապա սրանց բոլորին հացով հյուրասիրելուց հետո հրավիրում են, որ ընտրվածներն իրենց պաշտոնն սատանձնեն:

Սկսում են գինին կարասից գավերի մեջ ածել, պատրաստել, ուստի և այս սովորությունը կոչվում է գինեթափեք:

Հետևյալ օրը, ուրբաթ, կեսօրին, կանչողները չրջում են ամբողջ գյուղը և թամադայի ցուցմամբ մարդկանց հարսանիքի հրավիրում:

Ով մտադիր է լինում ամբողջ հարսանիքին մասնակցելու և կանչ (նվեր) տալու՝ գալիս է, ով մտադիր չէ՝ մերժում է, ասելով. «Աստված չնորհավոր անե»:

Հրավիրյալներին ճաշով հյուրասիրելուց և լավ խմեցնելուց հետո հրավիրում են գավիթը, ուր դավուլ զուռնեն չարունակում է ածել: Իսկույն առաջ են բերում մի եզ: Թամադան բղավում է. «Օրհնեա Տեր, պատվելի ժողովուրդ, խնդրեմ իրավունք տվեք եզը մորթենք»:

«Իրավունք ա, գնացեք մորթեք, Աստված չնորհավոր անե»,-ձայն են տալիս այս ու այն կողմից:

Եզի ոտները կապում, վայր են գլորում, իսկույն դավուլչին ոտը դնում է եզան վզին, թույլ չտալով մորթել, մորթողն էլ բարձրացնում է դանակը և բղավում. «Դանակը կտրում չի, խալաթս բերեք»: Տանտերը թամադի հրավերով մի թաշկինակ կամ 20-30 կ. նվիրում է մորթողին, այդքան էլ թմբկահարին, որը ոտը ետ է քաշում և թույլ տալիս մորթելու:

Անմիջապես աղջիկները և հարսները սկսում են կաքավել, «ձեռնահախ խաղալ»: Այստեղ կանգնած է լինում նաև թագավորը իր քավորի և փեսեղբոր հետ: Երբեմն նախքան եզը մորթելը՝ թագավորը մի դրչահատով փոքրինչ կտրում է եզան վիզը, արյունոտում դանակը և բերնին դնելով պոչից քաշած մի մազ՝ փակում, դնում գրպանը: Այսպես մնում է մինչև առագաստի երեկոն, երբ նորից բաց է անում դանակը, և այս բոլորն այն հույսով, որ կապ չընկնի՝ չկորցնի առնականությունը:

Կաքավին հաջորդում է պարը՝ յայլին և մի սաղի, պարի մեջտեղ կանգնած, գինի է մատակարարում պարողներին:

Պարը շարունակվում է մինչև մութն ընկնելը, երբ դավուլ-զուռնի առաջնորդությամբ կաքավելով ու պարելով, մի քանի երիտասարդներ ու աղջիկներ մեկի մեջքին բարձած 3 փութ միսն ու բարգյահկտրիքի երեկոյին խոստացած նվերները՝ տանում են հարսնացուի տուն, ուր փոքր-ինչ պարելուց և հյուրասիրվելուց հետո վերադառնում են: Այս նվերներ տանողը կոչվում է աղվես, և սա աշխատում է հարսնացուի հավանոցը մտնել, մի քանի հավ ծածուկ մորթել և հետը բերել: Երբեմն մսի փոխարեն մի կենդանի ոչխար են ուղարկում հարսնացուի տուն, այս դեպքում երկու մոմ են վառում նրա եղջյուրների վրա, և վզին մի յայլուղ փաթաթում:

Գլուխ վերանել. Միսը հարսնացուի տուն տանելուց հետո մակարները վերադառնում են, չրջապատում թագավորին, նրան նստեցնում մի փայտի աթոռի վրա, որի տակ մի վառած մոմ են դնում, կողքերին էլ կանգնում են քավորն ու փեսաղբերը: Գալիս է սափրիչը, դինով թրջում թագավորի գլուխն ու երեսը, և «Աստված չնորհավոր անեն ասելով սափրում, հետո մերուքից մի քիչ թողնում է և կանչում. «Էկեք, թագաւորի հավատարնի, էկեք, ածլիս կտրում չի»: Նախ քավորը, ապա փեսաղբերը և բարեկամները համբուրվում են թագավորի հետ, «Աստված չնորհավոր անե, բարով վայելեսե ասում, և մի քանի կոպեկ դնում նրա ձեռը տված հայելու վրա: Մի տղա էլ, առնելով թագավորի տանից մի թաշկինակ, ձեռքին բռնած պար է գալիս և ապա նվիրում սափրիչին: Չի պահանջվում, ինչպես ուրիշ տեղեր, որ քավորն էլ անպատճառ սափրվի:

Նույն երեկոյին մարդ կանչողները թամադու կարգադրությամբ ցրվում են դյուղը ու հրավիրում հարսնևորներին, տան մեծերից մեկն էլ գնում է եկեղեցի և ժամվորներից ում ցանկանում է՝ հրավիրում է:

Եկողները ծալապատիկ նստում են թամադայի ցույց տված տեղերում: Մեջտեղում, թոնրի վրա, դրված են լինում կաթսաները, որոնց մեջ եփվում են եթե ուտիս է՝ շիլա, իսկ եթե պաս՝ շորվա: Տան մի անկյունում էլ թաղիթ է կապած լինում, և մի բարձ դրած, որի վրա կանգնած է լինում թագավորը, կողքին քավորն ու փեսաղբերը: Սրանք նստում են միայն այն ժամանակ, երբ քահանան իրավունք է տալիս և կանգնում ամեն անգամ, երբ մի ծերունի ներս է մտնում: Մի քիչ հետո ընթրում են, որի ժամանակ խմում են երկու խնամու, թագավոր-թագուհու և քավորի, ինչպես և ամբողջ հասարակության և հարսնևորների կենացը, չմոռանալով ոչ ոքի, որովհետև առածն ասում է. «Թուխսը ճառերով, շուրթը բոլորով»: Ընթրիքից հետո մի գավ դինի և մի բաժակ դնում են մեկիքի (տանուտերի) առաջ, սա էլ ածում է և հյուրասիրում ում ցանկանում է:

Այս ժամանակ թագավորը, քավորը և փեսաղբերը դալիս քահանայի առաջ չոքում են, սրանց մոտ էլ բերում դնում են մի սկուտեղով թագավորի հանդերձը՝ չուխան, արխալուղը և դդակը:

Քահանան օրհնում է հանդերձը և ստանում խաչհամբույր, որ դնում են Մաշտոցի վրա: Հետո քահանան ձայն է տալիս. «Ազապ-պաշին ո՞վ ա ըլնում, գա»: Ցանկացողներն առաջ են գալիս. սկսվում է սակարգություն: Վերջապես երիտասարդներից մինը վճարում է քահանային 0,20-1 ռ. և վերցնում է հանդերձների մոտ դրված թուրը, կապում իր մեջքին, և հետո հանում թագավորի չուխեն և հենց այստեղ, բազմության մեջ, հագցնում է արխալուղը հագի արխալուղի վրայից, և հետո չուխեն, միայն մի թևը չի անցկացնում: Ապա բղավում է՝ խալաթ բերեք: Եվ երբ մի թաչկինակ են նվիրում, հագցնում է և թևը: Հետո այս ազապ-պաշու առաջնորդությամբ քավորը, թագավորը և փեսացուները համբուրում են քահանայի և հարսնևորների ձեռքերը: Վերջը քահանան խաչակնքում է դղակը և իր ձեռքով դնում թագավորի գլխին: Անմիջապես դավուլ-զուռնան նորից սկսում է նվագել և կաքավն ու պարը վերսկսվում են:

Հետզհետե հաստակավոր հարսնևորները ցրվում են, և սրանցից պատվավորներին «մարդ կանչողները» մոմերը ձեռներին ուղեկցում են մինչև տուն:

Հինա տանել. Մի տասնյակ տարի առաջ այս սովորությունը դեռևս պահպանվում էր, բայց այժմ բոլորովին վերացել է: Ազապ-պաշին դավուլ զուռնու առաջնորդությամբ գնում էր քավորի տուն և նույն ձևով բերում հինան մի սկուտեղի մեջ քավորակնոջ գլխին դրած: Այդ կինը հինան «խաղացնում էր», այսինքն իր գլխին դրած պարը էր գալիս, հետո դնում էր քահանայի, ծերերի առաջ, որոնք «Աստուած չնորհաւոր անէ» ասելով ճկույթները ճխտում էին հինի մեջ և մի քանի կոպեկ ձգում սկուտեղի վրա՝ հօգուտ այդ բերող կնոջ: Հետո տանում էին թագավորին, որ նույնպես նվեր էր տալիս և ձեռները հինա դնում:

Ապա նույն դավուլ զուռնով և նույն, քավորակնոջ գլխին դրած հինան տանում էին հարսնացուի տունը, ուր նույն կերպ պար էին ածում, նվերներ հավաքում և հարսի ձեռները հինա դնում:

Հետևյալ օրը, շաբաթ առավոտյան, փեսացուի տան կտրին դավուլ զուռնան ածում է «սահարի» եղանակը, որ նշան է թե ճաշը արդեն պատրաստ է: Իսկույն մխենույն հարսնևորները գալիս են հարսնեատուն և բռնում իրենց նախկին տեղերը: Անմիջապես սաղինները մի ձեռքում կոնգ, մյուսում՝ սրվակ, ուսին էլ մի սրբիչ ձգած հերթով մոտենում են հարսնևորներին և ջուր ածում ձեռներին՝ լվացվելու: Ապա մի-մի բաժակ օղի են մատուցանում, որ «Աստուած չնորհաւոր անէ» ասելով խմում են: Մի քիչ հետո սփռոցները ձգում են և մատուցում են բոզբաշ ու տոլմա: Թամադի առաջարկով խմում են՝ 1. երկու խնամիների, 2. թագավորի և թագուհու, 3. Մայր աթոռի ու միաբանության, և վերջում՝ շոչբիննների (հարս բերողների) կենացը: Հարսնացուի տուն գնալ ցանկացողները գինով չնորհակալություն

են հայտնում: Ապա դավուլ զուռնան դուրս է գալիս և սկսում դռանը ածել, մինչև որ «կաղնաւորը»՝ ծառայողները ևս ճաշեն: Հարսնացուին նվեր տարվելիք հանդերձներն էլ մի դեյրա, վերարկու, քոշ, մետակ (երեսի ծածկոց), քամար, չամիչ և այլ մրգեր, մի սկուտեղի վրա դարսած հանում են դուռը: Այս ժամանակ քավորի քույրը կամ հարսը սար է գալիս և «կանաչկարմիր» (մի կարմիր թաշկինակ) կապում թագվորի կրծքին, աջ ուսից ձախ կռնատակը, ապա վերցնում է հարսի շորերի խոնչան (սկուտեղը) և թագվորի, քավորի, փեսեղբոր և հարսնևորների հետ, դավուլ զուռնի առաջնորդությամբ, գնում հարսնացուի տուն, ճանապարհին «կռնախաղ» (կաքավ) և յայլի (պար) պարելով, երբեմն և հրացան արձակելով: Փեսացուի հայրն ու մայրը չեն գնում:

Հարսնացուի տանն արդեն հավաքված են լինում ազգականները, և երբ «հարս բերողները» գալիս են, սրանք ընդառաջ են ելնում, սկսում են պարել: Քավորի քույրը ևս կաքավում է՝ խաղացնելով հարսնացուի շորերը: Ապա մտնում են ներս, նստում: Շոր բերողը մի խալաթ (մի թաշկինակ նվեր) ստանալով դնում է հանդերձը քահանայի առաջ: Մի քիչ հետո հարսնացուի կողմից ևս ճաշ է տրվում այս բոլոր հարսնևորներին. մատուցում են միայն բուղբաշ: Այստեղ օղի չի բաշխվում, այլ միայն գինի: Սեղանը կառավարում է հարսնացուի թամադան, որ նույնպես նախապես ընտրված է լինում: Ճաշի ժամանակ թագավորը իր քավորի և փեսեղբոր հետ նստած է լինում հատկապես իրեն համար պատրաստված թախտի վրա, որի ծայրին էլ նստում է ազապ-պաշին, չարունակ հսկելով, որ թագավորի քոշերն ու վերարկուն չգողանան:

Թագավորը գլխարկը գլխին ծանր ու մեծ նստում է, նա չի վերցնում գլխարկը, որովհետև նա օրհնված է քահանայից և վոխարինում է թագին, նա այն կրում է նաև եկեղեցում:[427]

Նա և հաց չի ուտում, մինչև որ աները չի մոտենում և մի ոչխար կամ այլ նվեր իբր «բերանբացիք» տալիս:

Ճաշից հետո քահանան օրհնում է հարսնացուի հանդերձը, խաչհամբույր հավաքում: Ապա հարսնաքուրը, որ սովորաբար լինում է հարսնացուին կար ու ձև սովորեցնողը, վերցնում է հանդերձը և տանում, տան կապերտով առանձնացրած մի անկյունում հագցնում հարսնացուին: Հետո կանչում են քավորին, որ 50 կ.-3 ռ. նվեր տալով հարսնաքրոջ, վերցնում է հարսնացուի դռոին, երեք անգամ պատեցնում գլխով և «Աստուած երեք տղայ մի աղջիկ տայ» ասելով կապում մեջքին ու վերջը՝ Աստված չնորհավոր անէ՝ բղավում:

---

[427] Հնում եղեգնյա փոքրիկ խաչի վրա մետաքսե դույնզդույն թելեր էին փաթաթում, ցցում մի խնձորի կամ նռան մեջ և դնում այդ գլխարկի ծայրին:

Մինչ այս՝ բազմութեան մեջ հարսնացուի տանեցիներից մի կին պարում է և մի կանաչ թաշկինակ կապում թագվորի կրծքին, ձախ ուսից՝ աջ կռնատակը, որդին կապած կարմիրի վրա, որով և լրանում է «կանանչ կարմիրը»: Ապա այդ միևնույն անձը մի-մի զույգ գուլպա է դնում թագավորի, քավորի և փեսեղբոր առաջ, որոնք անմիջապես հագնում են և իրենց հները նվիրում թագավորի քոչերը պահպանող ազապ-պաշուն: Հետո փեսացուի կողմից մի ծերունի բռնում է հարսնացուի կռնից և բերում, կանգնեցնում փեսացուի կողքին: Քահանան ձեռք-ձեռքի է տալիս և օրհնում: Հետո հարս ու թագվոր խոնարհվում են, համբուրում հարսնացուի ծնողների ձեռքերը և չարժվում դեպի դուռը, սակայն դռան առաջ կանգնած է լինում հարսնեղբայրը և չի թույլ տալիս անցնելու, մինչև որ մի քանի ռուբլի նվեր չի ստանում: Այս միջոցին էլ դավուլ զուռնան ածում է «Տանում են, տանում են, տանում են, աղջիկը մորից հանում են» երգի տխուր եղանակը:

Հարսնացուի մայրը սկսում է հեկեկալ:

Հարսնևորներն ահագին աղմուկով, հրացաններ արձակելով, պարելով ու կաքավելով ազապ-պաշու պարգած դրոշակի[428] առաջնորդությամբ գնում են եկեղեցի: Թագավորի աջ կողմից գնում է քավորը, ձախից՝ փեսաղբերը, իսկ հետևից թագուհին՝ աջ կողմում հարսնաքուրը, ձախում՝ հարսնաղբերը: Հարսնաքուրը բռնում է թագավորի չուխից, որպեսզի թագվորի և թագուհու միջով մարդ չանցնի, ապա թե ոչ՝ «թագուորը կապ կընկնի»՝ կկորցնի առնականությունը:

Շատ անգամ «հարս բերողները» հարսնացուի տանից կճուճի խփեր և գաթա են գողանում ու ճանապարհին պարելով երևան հանում, և այս այն հույսով, որ թագուհին բերանը խփի պես խուփ լինի, սկեսրոջը դիմադարձություն չանի, և նրա բախտը հացի, գաթի պես դամբով լինի: Մի քանի սաղիներ էլ ձեռներին մի-մի ափսեի վրա դրած բաժակներ ու մրգեղեն՝ սրան-նրան գինի են տալիս, երբեմն էլ մոտենում են թագվորին, և մինչդեռ գինու բաժակը մոտեցնում են նրա շրթունքներին, բոլոր շրջապատողները բարձր ձայնով կանչում են. «Լուսը լուսավորչին, հավատը Քրիստոսին, օրհնեալ է Աստված, անո՞շ, անոշ, անոշ, ուրա՞»:

Երբ մոտենում են եկեղեցու դռանը, քավորը մի քանի կոպեկ է նվիրում ժամկոչին՝ որ փակած դուռը բանա, հետո հանում է իր կողքից կախած թուրը և ծայրը դնում է դռան կամարին, և այդպես բռնում, մինչև որ թագավորն ու թագուհին անցնում են: Այսպես և ուրիշ դռներից անցնելիս թրով խաչաձև պիծ է քաշում դռան գլխին: Այստեղ քահանան սկսում է կատարել պսակի խորհուրդը, իսկ դրսում մակարները չարունակում են պարել, գոռեմարտել: Սրանցից մի քանիսն էլ հսկում են, որ ոչ ոք եկեղեցու

---

428 Գավազանի ծայրին մի մեծ թաշկինակ կապած:

կտուրը քար չձգի, որպեսզի թագավորը չկապվի, չեն թույլ տալիս որ քառասունքոտ կին կամ նոր պսակված երիտասարդ, հարս, եկեղեցի մտնի, որպեսզի հարսնացուն քառասունքակոխ չլինի (ամուլ մնա, կամ երեխաները չապրեն): Եկեղեցումն էլ թագվորի ազգական պառավներից մեկը մի կողպեք երեք անգամ կողպում է, բայց անում և ապա կրկին կողպում և պահում գրպանում, որ թագավորը կապ չլինի: Այս կողպեքը արձակում են առագաստի օրը:

Եկեղեցում, երբ քահանան սուրբ ճառը ճգում է թագուհու ու թագավորի գլխին, վերջինս 1-5 ռ. իրը նվեր դնում է թագուհու բռի մեջ: Պսակի խորհուրդը կատարելուց հետո քահանան Ավետարանը տալիս է թագավորի, խաչը՝ քավորի և մի մոմ՝ թագուհու ձեռքերը և հրավիրում հարսնևորներին խաչհամբույր ձգել:

Ապա թագվորի վրան շուրջառ ճգած,[429] Ավետարանը և երկու վառ մոմ ձեռներին դուրս են գալիս եկեղեցուց և միևնույն կերպ, միայն տարբեր փողոցով, վերադառնում են հարսի տունը: Ճանապարհին գառ, ոչխար են բերում և թագավորի առաջ պառկեցնելով դանակը քաշում են, որ մորթեն, «թագավորին մատաղ» անեն, բայց քավորը դրամական նվեր է տալիս և չի թողնում մորթելու: Բարեկամներն էլ «խոնչա» են բերում, այսինքն մի սկուտեղի մեջ դրված մրգեր, ձվածեղ, հալվա, եփած ձուկ, հավ, գինի են բերում և հյուրասիրում ինչպես թագավորին, այնպես էլ հարսնևորներին: Պարը, դոռեմարտը և հրացանաձգությունը ավելի սաստիկ է տեղի ունենում: Վերջապես հասնում են հարսի տուն: Հարսնամերն ընդառաջ է գալիս, մի ղույդ գուլպա խալաթ տալիս քահանային, համբուրում թագավորի ձեռքի Ավետարանը, վերցնում մոմերը, հանգցնում և տալիս ժամհարին, ապա համբուրում է նորապսակներին և ներս հրավիրում: Հարսը անմիջապես առանձնանում է իր սովորական անկյունում, իսկ փեսան իր փոքրիկ չքախմբով նստում է թախտի վրա և հարսի բարեկամ կանանց հետ ժամանակ անց կացնում, որովհետև բոլոր հարսնևորները իսկույն ցրվում են:

Կանանց համար ամենալավ առիթ է բացվում փեսին մոտից տեսնելու, նրա հետ խոսելու, ուստի և հավաքվում են նրա շուրջը, գուլպա, քիսա, տոլազ, թաշկինակներ նրան նվիրում իրը բերանբացիք և իրենց հետ խոսել տալիս: Փեսան էլ իր կողմից մրգեղեններ է բաժանում նրանց ու մոտիկներին թաշկինակներ նվիրում: Դարձյալ սկսվում է կեր ու խում, և այս անգամ փեսան հյուրասիրվում է մեղրախառն ձվածեղով:

Երեկոյան մարդ կանչողները դարձյալ հրավիրում են հարսնևորներին թագվորի տուն, ուր ընթրում են և հետո ցրվում, բացի երիտասարդներից, որոնք գավուլ գուռնի առաջնորդությամբ գալիս են հարսի տուն, թագվորի

---

[429] Խաչիկում այլևս չեն ճգում, այլ միայն Գնդևազում:

հետ միասին զվարճանալու, ուտելու, խմելու: Երբ ուշ գիշերին սրանք ևս ցրվում են, թագվորը միայն մնում է այստեղ գիշերելու: Եվ երբ տանեցիները քնում են, փեսայի համար մի առանձին անկյունում կամ ուրիշ սենյակում անկողին են պատրաստում, ու տան հարսներից մեկը նորահարսի կռնից բռնած՝ բերում է փեսայի մոտ ու ինքը հեռանում: Թագվորը մի նվեր է տալիս հարսին իբր «բերանբացեք», որ իրեն հետ խոսի, որից հետո սիրախոսում են մինչև լույս:

Կանչ. Կիրակի առավոտյան մարդ կանչողները դարձյալ հավաքում են հարսնևորներին թագվորի տուն և այստեղից դավուլ զուռնի առաջնորդությամբ, պարելով, հրացան արձակելով գնում հարսի տուն: Այս անգամ արդեն թագվորի հայրը նույնպես գնում է, իսկ մայրը՝ ոչ: Մի թեթև նախաճաշիկ անելուց հետո թագավորի տանից բերված գինին սաղիներն ածում են բաժակները և տալիս թագվորին, իսկ սա՝ բաժանում է ծերունիներին և պառավներին, նրանց ձեռքը համբուրելով, սրանք էլ երկար բարեմաղթություններ անելով խմում են: Մի քիչ հետո էլ նորահարսն է առաջ գալիս և համբուրում նախ ծնողների և ապա մյուսների ձեռները, հետո արդեն թագվորը քավորի և փեսեղբոր հետ առջևից, իսկ նորահարսը հարսնեղբոր և հարսնքրոջ հետ՝ հետևից ուղևորվում են դեպի թագվորի տուն: Նորափեսայի հայրը փոքր-ինչ մնում է նորահարսի տանը ծնողներին մխիթարելու և թույլ չտալու հարսնամորը շատ լաց լինելու:

Նորապսակների այս գնացքը ամենից հանդիսավոր և ամենից աղմկալին է լինում: Պարում են, կաքավում, հրացաններ արձակում, բարեկամները խոնչաներ են բերում, սա ու նա՝ գառ, ոչխար բերում մատղելու. ձի են բերում, իբր նվիրում են, քավորից խալաթ ստանում: Երբեմն էլ կարիճ երիտասարդները կորում են ճանապարհը և առաջարկում քավորին կամ կարիճ դուրս բերել իրենց հետ գոտեմարտելու՝ կամ խալաթ տալ: Շատ անգամ մակարները հանձն են առնում գոտեմարտել, գնացքը կանգ է առնում, հարսնևորները շրջան են կազմում և գոտեմարտիկները փորձում են իրենց ուժերը, եթե հրավիրող գոտեմարտիկն է հաղթում, քավորը մի խալաթ է տալիս նրան իբր տուգանք, իսկ եթե մակարը՝ մի բաժակ գինի են տալիս և գովաբանելով նրան՝ առաջ անցնում:

Երբ մոտենում են թագավորի տան դռանը, կտուրից մեկը, հաճախ թագվորամերը, մրգեղեններ է շաղ տալիս նորապսակների գլխին, հարսնևորները խռնվում են և սկսում ժողովել: Թագվորամերը ընդառաջ է գալիս, համբուրում թագվորին ու հարսին և մի նվեր, օրինակ, մի թաշկինակ, նվիրում հարսնքուրին, հետո թագվորահերն է գալիս, նույնպես համբուրում թագվորին ու թագուհուն և մի նվեր, օրինակ, մի ոչխար, ձի, չուխա և այլն, խոստանում տալ հարսնեղբորը: Երբեմն բարեկամ կանայք էլ մի-մի թաշկինակ կամ շալ բերում ձգում են նորահարսի գլխին՝ իբր նվեր:

Ի վերջո նորապսակները մտնում են ներս, անցնելով քավորի թրի տակով, հարսը գնում է մի առանձին սենյակ, ուր հատկապես իրեն համար տեղ է պատրաստված լինում, սակայն այդ տեղը մի փոքրիկ տղա բռնած է լինում: Հարսը մի ղուշդ փոքրիկ գուլպաներ[430] նվիրում է այդ տղային, որ վեր կենա և տեղը իրեն տա:

Թագավորի բարեկամ կանայք անմիջապես չրջապատում են նրան և սկսում են զբաղեցնել նրան, սակայն նա բոլորից էլ հարսնութիւն է անում, ոչ-ոքի հետ էլ չի խոսում:

Մի քիչ հետո առանց կանչելու բոլոր հարսնևորները գալիս խմբվում են և նստում ճաշի:

Այս անգամ տանտերը ամեն կերպ աշխատում է գոհացնել իր հյուրերին և որքան կարելի է շատ խմացնել, որպեսզի առատաձեռն դառնան ու կանչին մեծ նվեր տան: Ճաշից հետո մակարները, հարս ու աղջկա հետ, դավուլ-զուռնի առաջնորդութիամբ, գնում են քավորի տանից խոնչան բերելու: Սա լինում է մի խոնչի մեջ դրած մի ման հալվա, դաթա, հավ, մրգեղեն և 5-15 ռ. կանչի դրամ: Այս խոնչան մի հարսի գլխի դրած պարելով գալիս են, հանդիսականների առաջ էլ խոնչան պար է ածել տալիս կանչանող մարդուն, որ սովորաբար նախրաչին է լինում: Կանչը կանչողը վերցնում է խոնչից հալվան ու փողը, մնացածը հանձնում տնեցիներին, ապա բարձր ձայնով կանչում. «Ա՜յ թագավորի մակարնի»:

Մակարները ձայն են տալիս. «Ամմեն, ամմեն»:

Կանչողը շարունակում է. «Աստված Ձեզ բարի հրամմե. չեն կենա քավորը, Աստված իրան ազապներին արժանացնի, հիշացել ա մեր թագավորին 15 մանեթ: Տունը չե՜ն, չե՜ն կենա»: «Շե՜ն կենա, չե՜ն»,- ձայն են տալիս բոլորը:

Քավորին մի բաժակ գինի և մի քիչ հալվա են տալիս:

Հետո նորահարսի հայրն է նվեր տալիս, և կանչողը նվերն հիշելիս ավելացնում է. «Հիշացել ա մեր թագավորին մին աղջիկ, 100-200 ռ. բաժինք, 5-10 ռ. փող»:

Ապա միառմի հիշելով՝ նվերներ են հավաքում բոլոր հարսնևորներից, որից գոյանում է 100-300 ռ. և տալիս թագավորի հորը:

Այժմ կանչը հետզհետե վերանում է:

Կանչից հետո հեռավոր բարեկամներն ու ծերունիները ցրվում են, մնում են միայն մոտիկներն ու երիտասարդները, որոնք պարը շարունակելով, թագուհուն էլ մեջ են առնում և 7 պտույտ (պատ) պարեցնում: Հենց այս միջոցին թագավորը իր քավորի և փեսեղբոր հետ բարձրանում է կտուրը, քավորի թուրը դնում են հերթիկի վրա, թագավորը չոքում, 3 անգամ

---

[430] Գուլպաները կոչվում են գոտկում գյուլպա, որովհետև նորահարսի գոտիկում են պահված լինում հատկապես այդ երեխային տալու համար:

ծունը է դնում և համբուրում թուրը, ապա երկու հոգի վերցնում են թուրը և փոքր-ինչ բարձրացնում, միանգամայն պահելով հերթիկի վրա: Հետո թագավորը մի հավի ոտից բռնած խփում է թրին այնպես՝ որ գլուխը կտրվի ընկնի հերթիկից ներս՝ պարողների բռնած շրջանի մեջ: Թագավորին հետևում են քավորը, փեսաղբերը, երբեմն և ուրիշներ: Այս գլխատված հավերը հավաքում են, պահում, որ հետո ազապները քեֆ անեն:

Երբ նորահարսը լրացնում է պարի յոթերորդ պտույտը, պարը ընդհատվում է, և դավուլ-զուռնան բարձրանում է կտուրը, ուր թագավորն է պար բռնում, պարապլուխը մերկ թուրը ձեռքին բռնած նույնպես յոթ պտույտ է անում և կրկին իջնում տուն:

Այստեղ նորահարսին բերում մեջտեղը կանգնեցնում են, մի կին էլ կանգնում է մոտը՝ մի սկուտեղ ձեռքին: Սկսվում է կանչ հօգուտ նորահարսի: Նախ թագավորի մայրը և ապա մյուս կանայք են տալիս: Կանչ հավաքող կինը բարձրաձայն հայտարարում է. «Շեն կենա, չեն այսինչը, հարսին բաշխեց այսքան մանեթ»: Վերջը հաշվում են նվիրած փողերը, գումարը հայտարարում և տալիս հարսի սկեսրոջը, որպես հարսի առանձին սեփականություն: Այնուհետև չարունակում են պարել, և հետզհետե ցրվել:

Խաչի օր. Երկուշաբթի օրը թագավորի տունը հրավիրվում են տղամարդիկ, որոնց ճաշին մատուցանում են միայն խաշ, այս պատճառով և այդ օրը կոչվում է խաշի օր: Ճաշից հետո թագավորը իր ազապներով սկսում է զվարճանալ. նա բարձրանում, նստում է թախտի վրա, ազապները մոտենում են նրան և գանգատվում, թե այսինչ ազապը իր պարտավորությունները կարգին չկատարեց, այսինչ տեղ քո գորքիդ ծարավ թողեց, մի ուրիշը որոշյալ հացը չավեց և այլն, և այլն: Թագավորը քննություն է կատարում և մեկին մեղադրելով տուգանքի է ենթարկում, հրամայելով, որ նրան այուներից կապեն, կնոջ հետ միասին թոկով շերտեն, մի ոտը ծալեն և կապեն, և այլն: Տուգանքը լինում է հավեր և գինի, որ իսկույն առնում են և քեֆ անում:

Հետևյալ երեքշաբթի և չորեքշաբթի օրերը թագավորի տունը սաստիկ խառնված է լինում. իրենց մոտ իջած հյուրերին ճանապարհ են ձգում, գրեթե ամբողջ գյուղից հավաքած ամանեղենը, գդալները և այլն վերադարձնում են, տունը մաքրում, կարգի բերում: Այս խառնակ օրերում նորահարսը քնում է հարսնաքրոջ հետ:

Թագը վեր ընկել. Չորեքշաբթի երեկոյան հրավիրում են քահանային թագը վերցնելու: Քավորը թուրը և սրա պատյանը խաչաձև բռնում է քահանայի առաջ չոքած հարս ու թագվորի գլխներին, որոնց առաջ դրված է լինում մի բաժակ գինի: Թագվորի կանաչ-կարմիրն էլ կապած է լինում: Քահանան քանդում է նարոտը, վերցնում գինին տալիս թագավորին, որ կեսը

խմի, հետո քանդում է կանաչ-կարմիրը, իրեն վերցնում և ապա առնելով բաժակը թագվորից տալիս հարսին՝ որ մնացածը խմի:

Գիշերը առագաստ են մտնում: Հնում սավանը ցույց էին տալիս մոտիկներին, երբեմն էլ կտրից 3 անգամ հրացան էին արձակում, ի նշան նորահարսի կուսության:

Առավոտյան հարս ու փեսին մեղրով ձվածեղ և խավիծ են տալիս: Թագվորն ուտում է և անմիջապես տանից հեռանում, աշխատելով մարդկանց մեջ չերևալ:

Գլխալվա. Ութ օրից նորահարսի մայրը մի քանի բարեկամուհիների հետ հարսի հին հանդերձները, գաթա, հալվա, սապոն, սանր, լուցկի, ասեղ, թել, պուլպաններ և այլ մի քանի բաներ առած գալիս է նորահարսի մոտ, և նրա գլուխը լվանում: Խնամոնք հյուրասիրում են սրանց ճաշով, որից հետո բոլոր կանանց ներկայությամբ բաց են անում բաժինքը, որ նորահարսին տղի տուն բերելու օրը, նրանից փոքր-ինչ առաջ, բերած են լինում: Մի ճարտարախոս կին նստելով բաժինքի մոտ, մոտ մի ռուբլի նվեր է ստանում հարսի սկեսրոջից, և ապա մի-մի վերցնելով ցույց է տալիս հրավիրված կանանց և գովում:

Սովորաբար բաժինքը լինում է հետևյալը.

1 մաֆրաշ,

1 սանդուղ,

1 ձեռք անկողին-մի ներքնակ, մի վերմակ և մի բարձ,

1 հատ կարպետ,

1 հատ փալաս,

1 չարսաւ, որի մեջ կապում են անկողինը ցերեկները,

3-4 ձեռք սպիտակեղեն,

2-3 դեյրա,

Մի քանի ամանեղեն:

Բաժինքը բանալուց հետո նորահարսի սկեսուրը չնորհակալություն է հայտնում հարսնամորը և մի չալ ընծայում նրան:

Այն ափսեն, որով հալվա են բերած լինում նորահարսի տնից, այդ միևնույն օրը հետ չեն տալիս, որպեսզի թագավորը չմեռնի և հարսը հետ չգնա:

Այնուհետև սկսվում է սովորական կյանքը, միայն մինչև մեծ պասի առաջին օրը չեն թույլ տալիս նորահարսին՝ ջրի գնալու: Այդ առավոտ միայն, շատ վաղ, նա գնում է ջրի և վերադարձին իր հետ մի քանի չոփ է բերում: Այս չոփերը կոչվում են դովլաթ չոփի և պահվում են մինչև ամառ, որպեսզի կաթի տակ վառեն, կաթը առատ լինի:

Ծաղկազարդին նորահարսին «հերանց են տանում», ուր մնում է մինչև Համբարձում: Այս ժամանակ հերանք մի ձեռք չոր են կարում նրա համար:

Համբարձմանը տեգրը գալիս է տանելու նորահարսին և իր հետ բերում է գաթա, հալվա: Նորահարսն էլ գնալիս՝ մայրը հետը դնում է գաթա, հալվա, սկեսուրի և տեգրերի համար դուլպաներ:

ՏՂԱԲԵՐՔ ԵՎ ԿՆՈՒՆՔ

Դաշտան. Դաշտանն սկսվում է 15-16 տարեկան հասակում: Սովորաբար տևում է 4-6, երբեմն և ավելի օր: Այս ժամանակամիջոցում եկեղեցի չեն գնում, հաց չեն թխում, խմոր չեն հունցում, կերակուր չեն եփում, որովհետև «մեղավոր» են համարվում:

Առաջին դաշտանը կտրվելուց հետո քահանային ջուր են օրհնել տալիս և այդ ջրով լվացվում և լողանում են, որպեսզի սրբվեն:

Եթե դաշտանը սաստիկ է լինում, մեջքին յախուռ են ձգում և մեծ քանակությամբ մեղր ուտում, որպեսզի չուտով կտրվի:

Ամլություն. Այստեղ ևս ամլությունն աստվածային պատիժ է համարվում և ամուլ կինը նախատվում է թե ամուսնուց և թե հասարակությունից:

Ամլության առաջն առնելու համար դիմում են հետևյալ միջոցներին:

ա. Ուխտ են գնում Արկազի ս. Խաչ և Պարսկաստանի ս. Ստեփանոս Նախավկայի վանքերը (Դարաշամբում): Վերջինումս կա մի հրաշագործ աղբյուր, որ չատ ամուլ կանանց ուխտը կատարել է: Սովորաբար սրբի մոտից մի իր են գողանում, և երբ սուրբը որդի է տալիս, այդ իրը մի նվերի հետ միասին վերադարձնում են: Երեխան անկնունք մի քանի տարի պահում են և բերում այդ մուրազատու վանքում մկրտում. քառասունքին էլ մազերը, որ մինչև այդ ժամանակ երբեք չեն կտրել, խուզում են և տանում մի որևէ գերեզմանի մեջ թաղում, որպեսզի երկարակյաց լինի:

բ. Տեառնընդառաջի երեկոյին, երբ կտուրների վրա «դըռդառանջ» է վառվում, մի թոկ են կապում ամուլ կնոջ մեջքին, մի երեխա դնում գիրկը և կտուրից քաշելով հերթիկից հանում:[431] Այստեղ նա երեք անգամ անցնում, դառնում է «դըռդառանջի» կրակի վրայով և ոտաշորի ծայրը փոքրինչ վառում:

գ. Վերցնում են թխսի տակ դրված այն ձուն, որից ամենից առաջ ճագ է դուրս եկել, և սրանով քառասուն անգամ ջուր են ածում ամուլ կնոջ գլխին:

դ. Մի կուժ ջուր են դնում մի մահմեդականի գերեզմանի վրա, գիշերը մնում է, առավոտ բերում են և հանկարծ ածում ամուլ կնոջ գլխին:

---

[431] Խաչիկում Մկոյի կնոջը վեր հանելիս թոկը կտրվել է, կինը ընկել է վայր և սաստիկ վնասվել:

ե. Նոր ցկնած չան վրայով երեք անգամ անցնում է ամուլ կինը ասելով. «Իմը քեզ, քոնը ինձ»՝ հուսալով ստանալ նրա բեղմնավորությունը:

ղ. Լարախաղացի գլխին դրած ջրից, ոմանք էլ՝ նավթ են խմում:

Արգանդի պտուղը վիժելու համար Կնիշկում գնում կանգնում են ձորում հոսող առվակի բարձր և ուժեղ ջրընկեցի տակ, փորը ճմլում են, փայտի վրա են ընկնում, երկանք են գնում փորի վրա և աղում: Ընդհանրապես աշխատում են առաջին երկու ամիսների ընթացքում վիժել:

Հղիության միջոցում կինը տանից ձու է գողանում, խաշում, դնում կժի կանթի վրա, հետո վերցնում ուտում է, որպեսզի ապագա երեխան ծիծաղելիս այտի վրա փոսիկներ առաջանան: Ուխտատեղիում «օխնութիւնը» (սրբի գերեզմանահող) ձգում է բերանը և քորում իր այն տեղը, որին համապատասխան կկամենար, որ ծնվելիք երեխան խալ ունենար:

Հղիության ընթացքում չարունակում են առաջվա նման աշխատել, որովհետև կարծում են, որ եթե չաշխատեն, կգիրանան և երկունքը դժվարությամբ կկատարվի: Խաչիկում Նանուխը (Նաննն) օրվա ընթացքում 70 փութ ցորեն է լվացել և դիշերը հեշտությամբ ազատվել, Անահին (Անահիտը) վեց փութ հաց է թխել և հետևյալ օրը ազատվել, Զանոն կալ քշելիս ցավը բռնում է, ամուսնուց իրավունք է խնդրում տուն գնալու՝ չի թողնում, էլ ամանչում է պատճառը ասի, մտնում է մարագը և այնտեղ ազատվում:

Ոչ մի կերակրից կամ խմիչքից չեն զգուշանում, ընդհակառակը շրջապատողներն աշխատում են նրա բոլոր քմահաճույքները կատարել, որպեսզի վնաս չհասնի երեխային, որովհետև կարծում են, թե նրա պատճառով են «մաքափոխ» լինում՝ այս կամ այն բանը ցանկանում ուտել: Այսպես պատմում են, թե մի թագավոր իր հղի կնոջ հետ ճանապարհորդելիս, վերջինս ցեխի միջից վերցնում է նռան մի հատիկ և ուտում: Թագավորը զայրանում է, թե քանի այդքան որկրամոլ ես, որ ցեխոտ հատիկը ուտում ես, կարող ես շատ բան թուլլ տալ քեզ, և խփում, սպանում է նրան: Իմաստունները պալիս բաց են անում թագուհու փորը և ցույց են տալիս թագավորին, որ ցեխոտ հատիկը արգանդի երեխայի բերանում է, հետևապես և նրա պատճառով էր նա այդքան որկրամոլ դարձել:

Միակ բանը, որից հիրավի, հղի կինը զգուշանում է, այդ այն է, որ երեխան վատ մարդու, թուրքի, չան, էշի, «երեսին չխաղա», այսինքն երեխան որովայնի մեջ առաջին անգամ չարժվելիս, նրա հանդիպ կանգնած չլինեն վերոհիշյալներից որևէ մեկը, որովհետև կարծում են, որ այդ դեպքում, երեխան նրա բնավորությունը կատանա: Այդ պատճառով էլ ոճ է դարձել ասել. «չան, իշի դեմ է խաղացել»:

Երկունքից առաջ երեխայի սեռը որոշելու համար նայում են երեխայի մոր ծծերին, եթե ծայրը մոխրագույն է, արու է լինելու, իսկ եթե սովորա-

կան գույնի է՝ աղջիկ: Նաև աղ են ցանում ծծի պակի վրա և դիտում, եթե հալվի՝ աղջիկ է լինելու, իսկ եթե ոչ՝ տղա:

Ծննդյան օրերը մոտենալիս հաղորդություն են առնում, երկյուղ կրելով, թե միգուցե չկարողանան ազատվել: Միևնույն ժամանակ հրավիրում են ծննդկանի մորը, որովհետև ընդհանրապես տիրում է այն կարծիքը, թե երկունքը հեշտությամբ է անցնում, երբ մայրը ներկա է լինում: Երկունքի ժամանակ կանչում են տատմերին, իսկ հուսահատական դեպքում՝ սափրիչին, որ ածելիով կտրատում է երեխային և այդպես ազատում մորը մահից:

Ծննդաբերությունը հեշտացնելու համար դիմում են հետևյալ միջոցների:

ա. Ծննդկան կնոջ պառկած սենյակի դռան չեմքի մոտ մի փոքրիկ փոս են փորում և քառասուն գարի ածում մեջը, ապա մի ձի են բերում և անցկացնում այդ գարու վրայով, շրջում սենյակում ու դուրս հանում: Սա մի ուխտ է, որ անում են ծննդկանի կողմից, իբր թե ինչպես ձին անցավ իր սիրած գարու վրայից առանց ճարակելու, այնպես էլ ծննդկանը քառասուն օր կանցկացնի առանց ամուսնական կյանք ճաշակելու:

Մի կին բարձրանում է կտուրը և ասում. «Դու բերում ես՝ բեր, թե չես բերում, ես բերում եմ» և երդիկից առնվազը երեք ձու է վայր գցում՝ կոտրում: Մի աման ալյուրի վրա մի կտոր աղ են դնում և երեք անգամ ծննդկանի գլխին պտտեցնում են և տանում մի աղքատի տալիս: Ծննդկանի գլխին տղամարդու գլխարկ են ծածկում, որպեսզի չարերը կարծեն, թե նա տղամարդ է և հեռանան:

Մի քանի տղամարդու են կանչում, որ ձեռը տա ծննդկանին, որպեսզի չարերը նրանից վախենալով հեռանան: Նույն նպատակով մի ձի են բերում և ծննդկանի գրկում գարի տալիս: Եվ կամ սանձը ձգում են ծննդկանի բերանը, կանչում են օձի բերանից դորտին ազատող կնոջը կամ տղամարդուն, որ իր քղանցքով երեք անգամ ջուր տա խմելու ծննդկանին: Այդպիսի կանանցից հայտնի է խաչիկեցի Սարգսի կինը:

բ. Բամբակյա կտորներ են վառում ու ծուխը չնչել-հոտոտել տալիս ծննդկանին, որպեսզի քիթն ու բերանը ծխոտվին, չարքերը այդ տեղերից չմտնեն ու ջիգյարը տանեն:

գ. Ամուսինը բարձրանում է կտուրը և երեք անգամ հրացան արձակում, որպեսզի չարքերը փախչեն:

դ. Ծննդկանի մոտ են բերում մի շուն, աչքերը կապում են, և մեջքին մի կատու նստեցնում, նախապես բերանը և ճանկերը կապելով, որպեսզի չկծի կամ ճանկռի: Ապա կատուն չան մեջքին բռնած տան են ածում սենյակում, որպեսզի չար ոգիները այս անսովոր բանից վախենան և հեռանան:

ե. Ուշագնաց եղած միջոցին կարծում են, թե ալքերը մտել են փորը և կամենում է նրա ջիգյարը հանել-տանել, որպեսզի սրանց ուշքը գրավեն և

Հանկարծակի դուրս հանեն այնտեղից, սկսում են դափ ու զուռնա ածել ծննդկանի մոտ:

զ. Ի վերջո ծննդկանը դիմում է Զորեքշաբաթամուտա, Ուրբաթամուտա և Կիրակնամուտա ոգիների օգնության, որոնցից առաջին երկուսը կանացի, իսկ երրորդը՝ չաբաթ երեկոյան երիտասարդի, իսկ կիրակի՝ ծերունու կերպարանքով են երևում:

Երկունքի ժամանակ ծննդկանը չոքում է թոնրից հեռու մի տեղ, երկու կին բռնում են նրա կռնակից, իսկ տատմայրը նստում է նրա հետևում ու առնում նորածնին: Ազատվելուց հետո ծննդկանը մոտ մի ժամ չոքած մնում է, որպեսզի ընկերքը ընկնի, իսկ պորտը մոտ երկու ժամից առաջ չեն կտրում, հավատալով, որ որքան ուշ կտրեն՝ այնքան երկարակյաց կլինի երեխան: Պորտի արյունը քսում են նորածնին աղջկա այտերին, որպեսզի կարմիր լինեն: Պորտը կտրելուց հետո ծննդկանին պառկեցնում են մեջքի վրա՝ անկողնում, նախապես փոքր-ինչ տաք մոխիր ածելով տակը: Այս ժամանակ տատմերը ասում է նրան, թե հաշվիր ձեղունի գերանները, որովհետև քանիսը որ հաշվի, այնքան որդի կունենա:

Ապա տատմերը աղ է ցանում երեխայի վրա[432] խանձարուրում, և երեսին ու քթին ծնված տեղում գոյացած ցեխից քսում, որպեսզի չարքերը չմոտենան նրան: Հետո վերցնում է նրան և դնում ծննդկանի անկողնու վրա ասելով. «Ե՞ս եմ ծանր, թե դու»: Ծննդկանը պատասխանում է, թե ես, որպեսզի իր ցավերը պակասեն, ու ծննդաբերության չրջանը թեթևությամբ անցնի:

Երբ ընկերքը ընկնում է, թաղում են սենյակի մեջ երեխայի ծնված տեղում: Եթե ընկերքը չուտով չի ընկնում, ծննդկանի փորը պինդ կապում են և ձեռքով հուպ տալիս, ստիպելով որ նա ամենայն ուժով փչի մի սափորի մեջ, կամ ընկերքի ծայրը կապում են մի տրեխից: Մի քիչ հետո տատմայրը լողացնում է երեխային ասելով. «Սուրբ Քրիստոս, սուրբ Օհաննէս, սուրբ Արեգակ, սուրբ Լուսնակ, էս էրեխի օմըրը երկար անիք, բախտաւոր ըլնի, ուրախ ըլնի»:

Հետո խանձարուրում է և դնում հոր գիրկը ասելով. «Հերով մերով մեծանաս, երկար ապրիս ու ծերանաս» և այլն: Հետո տատմայրը կրկին վերցնում է երեխային, բալուլի վրա մի քիչ հաց ու աղ դնում և իր ձեռքն առնելով ծայրին երեք սալտակ սոխ անցկացրած մի չիչ (չամփուր), դուրս է գալիս տանից, գառնում դեպի արևելք ու ասում. «Սուրբ Օհաննէս, Սուրբ Քրիստոս, Սուրբ Հռիփսիմե, հավատով խոստովանիմ... աղաչեմ քեզ Տեր Աստած, ես մեղավոր եմ, էս երեխի փայը տաս, չատ տաս, չատ տաս, շուտ տաս, դետնից, երկնից ստանա իրուռուզին»:

---

[432] *Այժմ ոմանք այլևս աղ չեն ցանում, այլ՝ աղաջրում լողացնում են:*

Ապա մոնում է սենյակ, ձեռքի շշով չորս պատին խաչ քաշում՝ ասելով. «Խաչը, աջը քեզ պահապան»: Հետո նույն շշով դիծ քաշում ծննդկանի շուրջը, որ չարերը չկարողանան այդ դծից անցնել և մերձենալ ծննդկանին, և ապա երեխային դնում է ծննդկանի աջ կողքին, շիշը սոխերով նրա բարձի տակ, ավելացնելով և մի դաշույն, որպեսզի սրանց ազդեցությամբ չարերը հալածվեն:

Այս ժամանակ հրավիրում են քահանային, որ «տունը փարատե»: Սա էլ օրհնում է մի ման ջուր և շաղ տալիս սենյակի պատերին, հատակին, որպեսզի չարերը հալածվեն:

Սկսելով խնամել ծննդկանին, «խավիծ» և մեղրով թեյ են տալիս:[433] Ընդհանրապես ծննդկանի ուտեստը մի քանի օր շատ լավ է լինում, որովհետև բարեկամ կանայք տեսության գալով «ծննդկանաքրեղան» են բերում, որ բաղկացած է լինում զանազան կերակուրներից: Տատմայրը եկող հյուրերի գիրկը դնելով նորածնին՝ մի քանի կոպեկ «պորտակտրիք» է ստանում:

Երեխայի պորտը ընկնելիս թաղում են. եթե աղջիկ է՝ թոնրի անվածքի (ականի) մեջ, որպեսզի լավ տնտես լինի, իսկ եթե տղա է՝ եկեղեցու պատի տակ, որ եկեղեցասեր լինի և կամ մի որևէ խանութում, որ վաճառական դառնա և կամ հացի մեջ դրած տալիս են անասունի, որպեսզի անասնասեր լինի:

Երկու օր մի միևնույն անկողնում, չուտ-չուտ փոխվող մոխրի վրա ծննդկանին պառկեցնելուց հետո, երրորդ օրը տատմայրը լողացնում է նրան և երեխային, նոր անկողնու մեջ պառկեցնում, իսկ նրա տակի մոխիրն ու ցնցոտին բակի դռան շեմքի մոտ թաղում, որպեսզի երեխային աչքով չտան:

Մինչև կնունքը, որ կատարվում է սովորաբար ութ օրից հետո, ծննդկանը պառկած է մնում, և այս միջոցում նա պիղծ է համարվում, իրավունք չունի իր ձեռքն ընդհանուրի կերակրին, հացին և այլնին դիպցնելու: Նրա ափսեն, դդալը, բաժակը առանձին են պահվում:

Եվ երբ նա ցանկանում է փոքր-ինչ վեր կենալ, սենյակից սենյակ անցնել կամ դուրս գնալ, ձեռքը մի շիշ է վերցնում, որպեսզի չարերը չկարողանան խփել նրան:

Կնունքի նախօրեին տատմայրը մի տապակած հավ, մի-մի շիշ գինի և օղի, մի քանի ուրիշ կերակուրների հետ տանում է քավորենց տուն և խնդրում հետևյալ օրը գալ երեխան կնքելու:

Նույն երեկոյին ծննդկանի մայրը ուղարկում է մի օրորոց և օրորոցի ամբողջ սարքը իր թոռնիկի համար, եթե միայն առաջնեկն է:

---

433 Սանճու ուննալիս կինամոնով (դարչին) կամ սև պղպեղով թեյ են խմեցնում:

Վաղ առավոտյան գալիս է տատմայրը և լողացնում թե՛ երեխային և թե՛ ծննդկանին և ապա՝ մի կնոջ հետ միասին տանում է երեխային եկեղեցի, ուր գալիս է և քավորը, բերելով իր հետ մի կնդուղ և մի սավան, մի քանի արշին չիթ կամ շալ:

Դարալագյազի բնիկների մեջ ևս քավորը տոհմական է լինում և փոխվում է միայն այն ժամանակ, երբ նրա «ոտը վրա չի գալիս», այսինքն նրա մկրտած երեխաները շուտով մեռնում են: Քավորին չափազանց հարգում են և պատվում, մանավանդ սանամայրը, որ ի նշան իր անչափ հարգանքի՝ ցմահ անխոս է մնում նրա հետ և մինչև անգամ նրան տեսնելիս փախչում՝ թաք է կենում:

Մկրտության խորհուրդը կատարելուց հետո քավորը պրկում է երեխային՝ ծածկելով նրան իր բերած սավանով և քահանայի առաջնորդությամբ գնում ծննդկանի տուն: Քառորդ դար առաջ քահանան բացի շարականներ երգելուց՝ ճանապարհին փոքրիկ զանգակներ էլ էր հնչեցնում: Ծննդկանը կանգնում է անկողնու մեջ, և փոխանակ առաջվա նման համբուրելու քավորի ոտքը՝ փոքր-ինչ խոնարհում է և վերցնում երեխան դնում ալ կողմը մի բարձի վրա:

Առաջները երբեմն մկրտության խորհուրդը տան մեջ ևս կատարելուց հետո քավորը և քահանան նստում էին ծննդկանի անկողնու վրա՝ մեջքմեջքի տված և մի-մի ափսե ձվածեղ ուտում, թե ինչո՞ւ, չկարողացան ինձ ասել:

Կնունքի առիթով հրավիրված են լինում 10-20 տղամարդ, նույնքան կանայք էլ իրենք իրենց են գալիս ծննդկապավաթ բերելով: Քահանան և քավորը տղամարդկանց հետ ճաշում են, ասպա կանայք են հաց ուտում ծննդկանի հետ և ցրվում ասելով. «Աստված շնորհավոր անե», «Աստված հորուսմոր համար պինդ ձեռով պահի»:

Երեխայի անունը սովորաբար քահանան է որոշում շատ անգամ ընտրելով մկրտության օրը հիշատակված սրբերի անուններից: Երբեմն էլ դերդաստանի հայրն է կարգադրում դերդաստանի մեռած մի որևէ անդամի հիշատակը վերականգնելու ցանկությամբ:

Ամենագործածական անունները հետևյալներն են.

ԱՂՋԿԱ ԱՆՈՒՆՆԵՐ

	Կրճատ ձևը		Կրճատ ձևը
Անահիտ	Անահի	Վարդանուշ	Անուշ
Թագուհի	Թագուն	Վարդուհի	Վարթո
Թուխթա		Եղիսաբեթ	Եղսո
Հրանուշ		Մարիամ	Մարիան

Նանե կամ		Մարթա	
Նանուխ			
Ոսկի		Գյուլիզար	Գյուլո
Ոսկեհատ		Թամամ	
Սաթենիկ	Սաթո	Սալվինազ	Սալբի
Սիրանուշ	Սիրի	Սուսամբար	Սուսան

ՏՂԱՑԻ ԱՆՈՒՆՆԵՐ

Անուշավան	Վանուշ	Նավասարդիկ	Նավո
Աշոտ		Նորայր	
Ասատուր	Աստ	Պարույր	
Արտավազդ	Արտո	Սմբատ	
Բաբկեն		Սուրեն	
Բուրթել		Վահան	
Գառնիկ		Տարսայիճ	
Գրիգոր	Գյուքան	Բենիամին	Բենո
Երվանդ	Երո	Դանիել	Դաննել
Զարմայր		Մարտիրոս	
Լիպարիտ	Լիպո	Մկրտիչ	Մկո
Լևոն		Հակոբ	Հակո
Խաչատուր	Խաչո	Հովակիմ	Ավակիմ
Կարապետ	Կարո	Պետրոս	
Համազասպ	Համո	Պողոս	
Համայակ	Վամայակ	Սահակ	
	Համո		

Մկրտությունից 2-3 օր հետո «մեռոնահան» են անում. տատմայրը լողացնում է երեխային կամ հացի տաշտի կամ մի մաքուր ամանի մեջ և ջուրը ածում կամ թորոնը կամ եկեղեցու ավազանը:

Քառասուն օրից հետո «քառանքահան» են անում ու լողացնում են թե ծննդկանին և թե երեխային և սրանց յուրաքանչյուրի գլխին քառասնական թաս կամ բաժակ ջուր ածում:

Նորածնին առաջին անգամ ձիծ տալիս՝ բերանին ոսկի են քսում, որպեսզի հարուստ լինի, հաց են քսում, որպեսզի «ղամթով», բախտավոր լինի: Սովորաբար աղջկան ավելի ուշ են սկսում ձիծ տալ, որպեսզի համբերող լինի: Սովորաբար 1/2-2, 3-4 տարի կաթ են տալիս երեխային, իսկ ավելի երկար՝ դժուշանում են տալուց, որպեսզի չհիմարանա: Սակավակաթ կանայք

ուխտ են դնում Քարկոփա «ծծի խաչը», մոմ վառում, այս քարերից ճգում են ջրի մեջ՝ խմում, աղոթում, որ կաթն ավելանա: Եթե այս միջոցը չի օգնում, սկսում են կովի կաթով կերակրել, և այս դեպքում կաթի մեջ մի քիչ ջուր և շաքար են ավելացնում, երբեմն էլ մի քանի կաթիլ դինի, կամ մի քիչ խաչխաչ, որպեսզի երեխան քնի: Կովի կաթ են խմեցնում երեխային «ամզուկով», որ մի եղջյուր է, ծայրին ոչխարի մի ծիծ ամրացրած:

Կաթը սաստիկ առատ եղած միջոցին ուրիշ երեխայի էլ ծծել են տալիս, կթում են, ճիմ կամ խամ հող են դնում ծծի վրա, ինչպես և մի քանի այլ դեղեր են անում, որ հիշում ենք ժողովրդական դեղերի բաժնում:

Ծծից կտրելիս՝ պղպեղ են ցանում ծծի վրա կամ ծխամորճի կեղտ քսում: Հանդերձի կուրծքը կարում են:

Կնոջ կաթը իբր դեղ դործ են ածում, երբ երեխան աղջիկ է. բամբակը թաթախում են և դնում ցավող աչքի վրա:

Ցանկանալով, որ երեխան հանդիստ և երկար քնի, մայրը օձի շապիկ կամ նապաստակի ականջ է դնում նրա բարձի տակ: Եթե վատառողջ է՝ նրան կշռում է փողոցից հավաքած ոսկորների հետ:

Եթե «քառանքակոխ» է լինում երեխան, այսինքն՝ սկսում է հետզհետե նիհարել, երեք չորեքմուտք կշռում են նրան քաքորի հետ, եթե ծանրանում է՝ նշանակում է ապրելու է, իսկ եթե թեթևանում է՝ մեռնելու է: Կոխված երեխային լողացնում են և ապա մի ամուլ կնոջ քառասուն բաժակ ջուր են ածել տալիս երեխայի գլխին: Սա քառասներորդ բաժակի ժամանակ թքում է լողացած ջրի մեջ ասելով. «Ջնջվի վատ մարդը, քոռանայ չար աչքը, փչանայ չար նիաթը, չար նազարը»:

Եթե մի կնոջ երեխաները չեն ապրում, խնդրում է մի դարբնի, որ Ավագ ուրբաթ գիշերը մի «դող» չինի: Սա էլ անխոս մի կտոր պողպատի յոթ հարված է տալիս և ապա մի մանյակ, «դող», չինում, որը այդ կինը 1-2 տարի կրում է պարանոցին, ու ապա հանում, խնամքով պահում:

Այդպիսի ճակատագրական մահից ազատելու համար՝ երեխան աշխարհ գալիս դնում են մի խախալի (ցորենի մաղ) մեջ, ուր լինում են յոթ ասեղ, յոթ գույնի մետաքսի թել, մի պայտ, մի քոռամեխ: Ապա այս բոլորը բացի խախալից թաղում են հենց այդ, ծնված տեղում, ասելով. «Դու ըստեղ մնացական ըլես, երեխեն էլ մոր խըտըտին մնացական ըլի»:

Երեխային չար աչքից ազատելու համար դիմում են հետևյալ միջոցների:

ա. **Աչքահուլունք** են կախ անում երեխայի վզից, ուսից, մեջքից:

բ. **Թիկնանոց** են կարում մեջքին. սա մի համայիլ է, եռանկյունաձև չորի մեջ դրված, ասեղնագործված և վրան կապույտ ուլունքներ ու թելի փնջիկներ կարված:

գ. **Աչքահուլունք** (կապույտ ուլունքներ), կատվի մազ, աղ և հաց կապում են կապույտ չորի մեջ և կարում աջ ուսի վրա:

դ. Մի սխտորի գլուխ և մի քիչ չան դեզ դնում են սև շորի մեջ և կարում նույն, աջ ուսին:

ե. Մետաքսի թելով ասեղնագործում են մի երկտակ շոր, նախապես մի սխտորի գլուխ դնելով մեջը և կարում երեխայի մեջքին:

Դաղդաղան փայտի փոքրիկ կտորի վրա դանակով զանազան նշխեր են անում և կարում հանդերձի վրա կամ վզից քաշ անում:

Արդեն աչք տվածին բժշկելու համար խմորը քսում են երեխայի մարմնին և հետո ձգում թոնիրը, իսկույն տրաքվում է և չար աչքի ազդեցությունը ոչնչանում: Նույն նպատակով հրավիրում են աղոթող կանանց՝ աղոթելու:

Երբ երեխաները համզատ են լինում, այսինքն կապտում են և մեռնում, նոր ծնվելիք երեխային այդ կորստից ազատելու համար, հղի ժամանակ կինը իշի կամ ձիու կաթ է խմում, կամ նորածնին կշռում են մի մորթած հավի, կամ քաքորի հետ, երեխային դնում մոր աջ կողքին, իսկ հավը կամ քաքորը տանում դերեզմանատանը թաղում:

Երեխայի առաջին ատամները երևալիս մայրը «կեռքահատիկ» է անում. սիսեռ ու ցորեն խաչում են, քամում և լցնում երեխայի գլխին, նախապես մի շոր ձգելով: Նրան շրջապատած երեխաները հավաքում են այդ հատիկները, ոմանք էլ ասում:

Ատամահատիկ,
Սիրուն թաթիկ,
Ուտենք հատիկ,
Որ ատամիկ
Հեչտ տա տղիկ:

Խաչիկում հատիկը ածելիս՝ երեխայի առաջ մի սանր և մի դանակ են դնում. եթե նախ սանրը վերցնի, գուշակում են, որ քույր է ունենալու, իսկ եթե դանակը՝ եղբայր:

Երբ ատամը վայր է ընկնում, ձգում են թոնրի սնվածքը՝ ասելով. «Առ քեզ ոսկրէ ատամ, տու ինձ ոսկէ ատամ»: Կամ դնում են տան դռան ճխանի տակ և դուրը տարուբերելով ասում. Ես քեզ տամ չան ատամ, դու ինձ տու գառի ատամ:

Երբ երեխան ոտ է ելնում, ձեռքից բռնում են, կանգնեցնում ասելով:

Ա՜ թե,
Ոտի տակը վարդ է,
Կանանչներով զարդ է,
Մորըդ համար դարդ է:

Երբ երեխան ժամանակին ոտ չի ելնում, ջրաղացից ալյուր բերելիս, երեխայի երկու ոտը կապում են և դնում ալյուրի վրա և դանակով կտրում թելը, դանակը ձգում ոտների տակ և երեխային ալյուրի վրա թողնում՝ վախ-

չում: Այս միջոցին մի ուրիշը մոտ է վազում և վերցնում երեխային: Ոմանք էլ նոր գործած գորգը կտրելիս՝ երեխայի ոտները դնում են տորքի մեջ և գորգը կտրում:

Շատերը «ճըռռան» են չինում, որ երեխան բռնի ու ման գա:

Երբ երեխան ուշ է սկսում թոթովել, եկեղեցու բանալին են քսում բերանին և կամ խմորոտ ձեռքերը լվանում են և ջուրը խմեցնում երեխային:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՂԵՐ

Ականջացավ. Օղի են կաթեցնում ականջի մեջ և կամ կովի յուղ ածում:

Ամրության դեմ. Սինամաքի են եփում և խմեցնում չաքարով:

Կովի հում կաթ կամ կովի հալած յուղ և կամ դարալալու կոչված տերևները եռացնում են և ջուրը խմեցնում: Ամրության ժամանակ տաքությունը կարելու համար ուռենու տերևները եփում են և նրա ջրով լողացնում:

Այրվածք. Բուժելու համար էշի ականջը կտրում են և արյունը քսում այրված տեղը: Իսամ հողը թոնրի վրա խանձում են և ապա չաղախում, դնում այրվածի վրա:

Աչքացավ. Կարմիր նեռկ (ղրմըզ) քաշում աչքին: Շիլ են դյուռ աչքը: Դեղին կոճը ծեծում են, ցանում խաշած և կլոր ձվի վրա ու դնում մրսած աչքի վրա:

Աչքերը ուռչելիս եփած ձուն կալչում են, կլոր և տաք-տաք դնում աչքերի վրա: Իսկ մի քիչ հետո մեղրածոր քաշում աչքերին:

Ատամնացավ. Ափիոն են դնում ատամի վրա, որ ցավը կտրում է և հետո ատամը կոտրատում, թափում:

Արբեցողության դեմ. Մարդի արյուն են կաթեցնում գինու մեջ և անգիտակցորեն խմեցնում հարբեցողին:

Բկացավ. Յուղով ճմլում են:

Շլորաթթու են կապում վրան:

Գլխացավ. Քթախոտի նման աղ են քաշում քիթը:

Ծեծած սոխ են կապում ճակատին: Քթախոտ են քաշում: Քացախ են քսում ճակատին: Ձյուն, սառույց են քսում ճակատին:

Գորտնուկ. Համարում են և սրա թվի համեմատ քյարթի են անում մի ուռի վրա ու ճխտում դոմի ատիքը, հավատալով, որ երբ ուռի ճյուղը չորանա, կչորանա նաև գորտնուկը:

Թունավորվածին. Մածուն, կաթ և կամ թան են խմեցնում:

Լուծելու դեմ. Ջորմման են խմացնում: Սխտոր աղանձում են, կամ վայրի տանձը չորացնում, աղում, մեղրով չաղախում և ուտում են:

Հարբուխ. Գլուխը տաք ջրով լվանում են և փաթաթում:

Կարմիր քամի. էրմանի դիլի կոչված կարմիր ցեխը մանրացնում են և քսում երեսին: Ածելիով կտրատում են երեսը: Հավը կամ չան ձագը սպանում են, կուրծքը ճղում, փորոտիքը հանում են և տաք-տաք կապում երեսին:

Հազի դեմ. Եզան լեզու կոչված բույսի սերմը թեյի պես պատրաստում են և խմում: Խորոված սոխ, կամ տաք և կամ սերկևիլ են ուտում:

Հավկուր. Մի երեխա մի թռկ է ձգում հավկուր ընկնողի վիզը և քաշ տալի դեպի աղբյուրը: Սա չորքոտանու նման, երբեմնապես հաչելով գնում է և աղբյուրից չան նման ջուր խմում և նույն կերպ վերադառնում: Հավերի հետ կուտ է ուտում:

Ջայնը կտրելու դեմ. Հում ձու են խմում:

Ջերմ. Վառոդը մեղրի հետ շաղախում են, դնում արևի տակ թթվում է, հետո քսում են ջերմոդի մնջքին: Ջերմոդի մնջքին պուլիկ են դնում և ապա օղի քսում: Իշակաթնուկ են խմեցնում, որպեսզի սիրտը հետ գա. նույն նպատակով ուտեցնում են նաև միմյանց հետ խառնած մեղր, աղ և ծխախոտ:

Ջեռքի ճաքճքոց. Սեր (ռաժան) կամ ճրագու են քսում:

Մազմազակ. Այսպես կոչվող ճանճը, որ առավելապես ոչխարների հետ է լինում, երբ կծում է մարդկանց, առավելապես քթի և երբեմն աչքերի մեջ, խկույն կծած տեղը որթնոտում է: Բժշկելու համար փռնդատ կոչված խոտի սերմով ծուխ են տալիս, ածում են կրակի վրա և իրենք սավանով ծածկված կանգնում վրան, որպեսզի ծուխը արգելվելով սավանի մեջ բուժի վերքը:

Մալի կծած. Ոչխարի վրայից ընկած տղրուկը, որ միառժամանակ քաղցած մնալով երկարում և լղարում է, թունավոր կերպով կծում է մարդկանց: Սրանից ազատվելու համար սառը ջուր են ածում կծած տեղը և կաթ խմում, շաքար, չամիչ ուտում, որ հետ գա:

Շան կծածի. Բակլան երկու կտոր են անում և չան կծած տեղը դնում:

Սրի կտրածի. Մեղրի մեջ աղած չիբ են խառնում և դնում վերքի վրա:

Վախի դեմ. Մեռելից վախեցածից տանում են մի որևէ նոր ննջեցյալի գերեզմանի մոտ, վերցնում այդ գերեզմանից մի քիչ հող և դնում մի կույս գերեզմանի վրա մի քիչ ցախ վառում, խունկ ծխում, և ապա այստեղից էլ մի քիչ հող վերցնելով առաջին գերեզմանից վերցրած հողի հետ շաղախում և քսում վախեցածի վզին, ձեռներին և ոտներին ու ապա ուրիշ ճանապարհով վերադառնում:

Տափակ որթ. Բալանգի քաբի կոչված պղպեղանման բույսի չորացած հատիկներ, քիչմիչ և ընկույզ հնգական մսխալ խառնում են միմյանց, սանդում մանրացնում, շաղախում և առավոտ անոթուց ընդունում, նախապես երեկոյին մի մի յան 2 բաժակ կաթ խմելով: 3-4 ժամից հետո էլ լուծողական են խմում:

Ցրտի տարածք. Դամիշի կղկղանքը տաք-տաք քաշում են ցրտի տարած մասերի վրա: Եթե աչքերն են ցուրտը տարել, գինին եռացնում են, ապա հովացնում և քաշում աչքերին: Նաև սառույց են դնում աչքերի վրա:

Փորացավ. Արաղի սապոնը քսում են մի չորի վրա և կապում փորին:

ՄԱՀ, ԹԱՂՈՒՄ ԵՎ ՄԵՌԵԼՈՑ

Հիվանդին այցելության գնալը սաստիկ ընդունված է և այցելողները ոչ միայն չեն զգուշանում վարակիչ հիվանդություններից, այլև այցելելիս այնքան երկար են նստում և այնպիսի հարցերի մասին խոսում, որ շատ անգամ վրդովում են և նեղություն պատճառում հիվանդին:

Հոգեվարքը թեթևացնելու համար հիվանդի մոտիկները հեռանում են նրա մոտից, զսպում են իրենց արցունքը, մայրը իր ծիծը քսում է մեռնողի շրթունքին ասելով. «Ծիծս քեզ հալալ լինի», եթե նշանած է՝ նշանածին բերում են մոտը, օտարության մեջ եղողի չորերը ձգում վրան:

Եթե հոգեվարքի ժամանակ սաստիկ լաց լինեն, հիվանդը կարող է հոգեդարձ լինել, այս դեպքում ջուր են խմեցնում, որ հոգին ավանդի:

Մեռնելու լուրը առնելուն պես՝ տնեցիները թափվում են ննջեցյալի վրա, սաստիկ լալիս, բղավում, ննջեցյալին շարժում, կարծես կամենալով զարթեցնել:

Անմիջապես մեկը ծածկում է ննջեցյալի աչքերը՝ եթե բաց են մնացել, փակում բերանը, չորերը հանում, կին ննջեցյալի դլխին մի շալ փաթաթում:

Մի քիչ հետո հրավիրվում է քահանան, որ հոգոց է սառւմ և օրհնում մի թաս ջուր: Ապա ննջեցյալին տանում են մի առանձնացած տեղ՝ լողացնելու. պառկեցնում են մի տախտակի վրա, երեսը դեպի արևելք դարձրած:

Սովորաբար լողացնողները երեք հոգի են լինում, կնոջը՝ կին, տղամարդունը՝ տղամարդ: Թեպետև լողացնելու համար հատկապես ջուր են բերում, սակայն չեն կատարում այն մի քանի նախապաշարմունքները, որ ընդունված են ուրիշ գավառներում. միայն, երբ ննջեցյալը տանում են լողացնելու, նրա տեղում մի քար են դնում, «որպէսզի նրա հետևից ուրիշը չմեռնի»:

Լողացնողները նախ և առաջ լվանում են իրենց ձեռները, ապա նրանցից մեկը բռնում է ննջեցյալի երկու ձեռքը, երկրորդը ջուր ածում, իսկ երրորդը մի ձեռնոց՝ ալճակ անցկացնելով, սկսում է լողացնել, միայն ամենից առաջ երեք անգամ ջուր է ածել տալիս ննջեցյալի աջ ձեռի մեջ և բարձրացնում, նույն ձեռով երեսը լվանում, իբր ննջեցյալը ինքն է լվացվում և սրբվում մեղքերից:

Ապա լվանում է ամբողջ անդրին, ու ձեռնոցը հանում, դնում ծծի մոտ: Հետո մի ուրիշ ձեռնոց է անցկացնում, և սրանով էլ ներքին մասը լվանում,

ու ձեռնոցը դնում սեռական անդամի վրա: Ապա ննջեցյալին նստած դիրք են տալիս և քահանայի օրհնած ջուրը ածում գլխին: Հետո կաթսան բերանքսիվայր և սրա վրա թասը նույն կերպ դնում են ու այդպես թողնում մինչև յոթը տալը:

Ննջեցյալին լողացնելուց հետո հագցնում են չապիկ, չապկընկեր և ապա պատանքում, նախապես այդ կտորը երեք անգամ մեռելի վրայից իրար ձգում «Աստված ողորմի հոգուն» ասելով: Ավելացած կտորը պահում են և 3 օրից հետո լողացնողին տալիս: Պատանքի կուրծքն ու երեսը չեն կարում, այլ ասեղը վրան չուլուլած թողնում են, եկեղեցում կարելու: Ուրիշ տեղերի պես խաչաձև ուսկապ չեն կապում, միայն երեխայի պնչի մեջ և աչքերի վրա բամբակով վաթաթած խունկ են դնում, ձեռքերին մի-մի մոմ տալիս: Միայն նախապես մոմը վառում են, հետո նրանից մյուսը վառում, և ձեռքով հանգցնում առաջինը, ապա կրկին վառում առաջինը երկրորդից և վերջինս հանգցնում, հետո կրկին վառում առաջնից և երկուսը միմյանց մոտեցնում ու միասին հանգցնում:

Ննջեցյալին պատանքելուց հետո «ղոչբոյնուղ» կոչված գունավոր կապերտի մեջ փաթաթում են և պառկեցնում նաչի կամ դագաղի մեջ, նախապես մի բարձ դնելով գլխի տակ և երեսքաչը (վառ) քաշում երեսին:

Մեծ մասամբ նաչով են տանում գերեզմանատուն և միայն չատ քչերին թաղում դագաղով: Երիտասարդի դագաղի վրա կարմիր, իսկ ծերինը՝ սև կտոր են քաշում: Հանդերձներ հագցնում են նշանված, նորապսակ կամ մի հատիկ երիտասարդներին, այն էլ ոչ միշտ: Մեռած քահանայի կրծքին ավետարան, չուրջառ և գավազան են դնում:

Սովորաբար նույն, մեռած օրը, տանում են եկեղեցի: Երեխաներին նույն օրն էլ թաղում են, իսկ չափահասներին պահում են 2-3 օր, կամ եկեղեցու և կամ նրա մոտ մի սենյակի մեջ:

Տան մեջ թաղման կարգը կատարելով տղամարդիկ վերցնում են ննջեցյալին և ձեռներին բռնած (և ոչ թե ուսերին դրած) տանում եկեղեցի և դնում երկու աթոռների վրա, սնարի և ոտների մոտ մի-մի մոմ վառում:

Ապա բոլորը վերադառնում են ննջեցյալի տուն, ուր քահանան հոգոց է ասում և այժմ միայն ցրվում են:

Քանի ննջեցյալը եկեղեցումն է, պառավ կանայք թելով չափում են իրենց հիվանդներին և տանում այդ թելը դնում ննջեցյալի պատանքի մեջ, որպեսզի այս հիվանդների ցավն էլ նա հետը տանի: Այս նախապաշարմունքից առաջացել է «ցավդ տանեմ» փաղաքշական դարձվածքը, որ բավական տարածված է: Եվ այս հավատը այնքան խոր է, որ չատ անգամ ննջեցյալի տերերը որոնում են և այդպիսի թելերը հանում պատանքի մեջից դեն շպրտում, որպեսզի իրենց ննջեցյալը նեղություն չկրի:

Թաղման օրը կին ննջեցյալի դլուխը սովորական ձևով կապում-հարդարում են, իսկ տղամարդի՝ միայն մերուքն են սանրում: Նախքան պատարագը՝ մոտիկ կանայք համախմբվելով ննջեցյալի տանը՝ դնում են եկեղեցի, շատերը տանելով իրենց հետ սուսամբար և այլ ծաղիկներ, որ դնում են ննջեցյալի կողքերին: Այստեղ երկար լաց են լինում, ողբեր ասում և ապա վերադառնում տուն, ուր մնում են մինչև պատարագի ավարտը, երբ կրկին գալիս են եկեղեցի, և այս՝ այն պատճառով, որպեսզի իրենց լացով չխանգարեն ժամասացությունը:

Պատարագի ժամանակ ննջեցյալի բարեկամները մոմեր են դնում և վառում դագաղի շուրջը: Պատանք կարողը 50 կոպեկ կամ մի ռուբլի առնելով մեռելատիրոջից՝ դնում է մեռելի աջ բուի մեջ, ձեռքը վոքր-ինչ ուղղելով: Հետո երբ քահանան «աշխարհ է գալիս» («Բարեխոսությամբ» երգելով թափոր անելիս) կանգնում է ննջեցյալի մոտ և հոգոց ասում լռելյայն, ապա մի նշխարք է դնում ննջեցյալի բերանի վրա և վերցնում նրա բերած դրված դրամը: Այս ժամանակ մեկը ասում է. «Յիշեսջիր զմեզ առաջի անմահ գառին Աստուծոյ»: Քահանան էլ պատասխանում է. «Յիշեսալ լիցիս առաջի անմահ գառին Աստուծոյ»: Վերաբերումի ժամանակ ննջեցյալի տերը գնում, համբուրում է Ավետարանը: Պատարագն ավարտելուց հետո պատարագիչ քահանան հանում է եկեղեցական զգեստը և միայն մի սուրբառ առնելով վրան՝ գալիս՝ կատարում թաղման կարգը:

Նրա կտրած վարշամակը վերցնում է ննջեցյալի սեռից մի մարդ, դնում մեռելի երեսին և պատանքի կուրծքն ու երեսը կարում և ասեղը չուլուլում ճակատին, և ապա երեսքաշը քաշում վրան:

Հետո շատ անգամ գանձ են ասում և խաչհամբույրը ձգում ննջեցյալի դագաղի վրա դրված գանձանակի մեջ: Գանձի հետ միասին կանայք էլ չրջապատելով ննջեցյալը սաստիկ լալիս են և ողբեր ասում: Խաչիկում իբրև ողբոց մայր հայտնի են Իստոն (Իսկուհին) և Շողերը, որ գրեթե բոլոր մեռելների վրա դնում են ողբալու:

Թաղումից հետո վերադառնում են ննջեցյալի տուն, ուր տղամարդիկ լվանում են ձեռները և անմիջապես նստում հոգու հացը ուտելու: Այդ սովորությունը դեռևս չի վերացել այս բնիկների մեջ: Սովորաբար մորթում են մի եզ կամ կով և կամ 4-5 ոչխար, նախապես նրանց բերանը ձգելով քահանայի օրհնած ադը: Սակայն չբավականանալով այս օրհնած ադով, քահանան կրկին հրավիրվում է օրհնելու կաթսայով դրված կերակուրները, որ լինում են բոզբաշ և դոլմա կամ վլավ: Քահանան սեղանը օրհնելուց հետո, մի-մի բաժակ օղի են մատուցում, որ խմում են «Աստուած հոգին լուսավորէ» բարեմաղթելով: Ճաշից հետո քահանան կրկին օրհնում է սեղանը և ապա ամբիծք կատարում, որից հետո ցրվում են, ձեռք տալով տան սիրոջը և ասելով «Աստված քո մնացողդ պահի»:

Թաղման երկրորդ օրը, առավոտյան վաղ, կանայք գնում են գերեզմանատուն, շրջապատում գերեզմանը և ողբեր ասելով, սգում: Մի քիչ հետո գալիս են նաև տղամարդիկ՝ քահանայի հետ միասին: Վերջինս կատարում է այդը կամ «հիդնահողեքը», հետո վերադառնում են մեռելատիրոջ տունը ճաշում և ցրվում:

Թաղման օրից մինչև յոթերորդ օրը՝ հոգին ավանդած տեղում չարունակ ճրագ (լիս) են վառում, ամեն երեկո խունկ են ծխում: Ննջեցյալի մոտիկները գործ չեն անում, ճախարակ չեն մանում, տղամարդիկ չեն սափրվում: Ամեն երեկո քահանան եկեղեցում ամբիծք է կատարում և գալիս սգվորի տուն՝ մխիթարելու: Գալիս են նաև բարեկամները՝ հերթով զանազան կերակուրներ և խմիչք բերելով, որով հյուրասիրվում են բոլորը: Այս յոթ օրերի ընթացքում ընթրիք է տրվում նաև գերեզմանահատներին (հողհաս) և ննջեցյալին լողացնողներին:

Յոթերորդ օրը «օխտն են տալիս»՝ յոթն են կատարում: Ամառը երբեմն այս կարգը հինգերորդ օրն են կատարում, որպեսզի ավելի չուտ կարողանան վերսկսել աշխատել, որովհետև մինչև այդ՝ իրը սգվոր ոչ մի գործ չեն անում:

«Յոթը» կատարելիս սովորաբար պատարագ են մատուցանել տալիս, որից հետո տղամարդ բարեկամները քահանայի հետ գնում են գերեզմանատուն, օրհնում գերեզմանը և վերադառնում սգվորի տուն՝ հոգու հացը ուտելու, որը բաղկացած է լինում ուտիսին միայն բողբաշից, իսկ պասին՝ ձեթով փլավից կամ սիսեռով չորվայից:

Նախ ճաշում են տղամարդիկ և ապա կանայք, ապա մոտիկ կանայք ջուր են տաքացնում, անպատճառ այն կաթսայով, որ գործ էին ածել ննջեցյալին լողացնելու համար ջուր տաքացնելիս: Սովորաբար սանամերը լվանում է ննջեցյալի հանդերձները և տեղաշորը, իսկ մյուս մոտիկ կանայք լվանում են սգվորների գլուխները, տղամարդիկ էլ կանչում են սափրիչին և սափրել տալիս սգվոր տղամարդկանց մորուքները: Սրանից հետո արդեն վերսկսում են աշխատել:

Ննջեցյալի հանդերձներից մի քանի կտոր տալիս են մեռելը լողացնողներին և գերեզմանահատներին, իսկ քահանային միայն երեսքաշը («վառը»):

Մինչև մահվան քառասներորդ օրը սգվորները եկեղեցի չեն գնում: Այդ օրը բարեկամ կանայք և տղամարդիկ գալիս են և նրանց եկեղեցի տանում, ուր քահանան ամբիծք է կատարում:

Ամբողջ մի տարվա ընթացքում ամեն կիրակի բարեկամ կանայք հավաքվում են սգվորների տանը, մխիթարում սգվորներին, գնում գերեզմանատուն, խունկ ծխում, լաց լինում, և ապա վերադառնալով տուն՝ առանց հաց ուտելու ցրվում:

Հինգ նավակատիքներին և նավասարդին բարեկամները գնում են սգվորի տուն՝ ամեն մեկը այս տոներից մեկում մի որևէ ընծա տանելով: Հրավիրվում է քահանան, հոգոց ասում և մասնակցում բարեկամներին տված ճաշին:

Մեռելոցներին ամեն ընտանիք զանազան կերակուրներ, գաթա, հալվա, գինի և օղի առած գնում է գերեզմանատուն, այդ բոլորը դարսում իր մեռելի գերեզմանի վրա և հրավիրում քահանային՝ օրհնելու գերեզմանը, որից հետո սփռում է ուտել և խմել գերեզմանի վրա դրածներից: Հետո, երբ բոլորի գերեզմաններն էլ այսպես առանձին-առանձին օրհնում են, բոլորը հավաքվում են մի ընդհանուր սփռոցի շուրջ, խառը դարսատում իրենց բերած կերակուրներն ու խմիչքները և միասին ճաշում, որից հետո սեղանակցող քահանան կատարում է հոգեհանգիստ բոլոր ննջեցյալների համար: Սեղանի մնացորդները տալիս են աղքատներին:

Զարչարանաց շաբաթի Ավագ ուրբաթ օրը բարեկամները կրկին հավաքվում են սգվորի տունը՝ թե ննջեցյալին սգալու և թե մոտիկներին մխիթարելու: Կանայք ողբեր են ասում, լաց լինում: Քահանան գալիս է և հոգոց ասում:

Ս. Խաչի ուրբաթ օրը կրկին գնում են սգվորի տուն «սրգահանեք»՝ զանազան թխվածքներ տանելով: Քահանան հոգոց է ասում և մասնակցում բոլորին մատուցվող ճաշին: Նույն ս. Խաչի կիրակի օրը, առավոտյան «խրով» են անում. մարմանդ թոնրի մեջ կախում են մի մաշկած, փորոտիքը մաքրած ուլ, տակը ճավարով լի մի կճուճ դնելով: Այդ ուլի մի բուդը տալիս են քահանային, մյուսը՝ որ մեռելափայ է կոչվում, պահում, իսկ մնացածը նույն օրը ուտում: Հետևյալ օրը, մեռելոցին՝ այդ «մեռելափայ» բուդը և այլ ուտելիքներ և խմիչքներ առած՝ գնում են գերեզմանատուն, ուր մի ընդհանուր սփռոցի շուրջը բոլորելով ճաշում են նախ տղամարդիկ և ապա կանայք, հետո հոգեհանգիստ են կատարում բոլոր ննջեցյալների համար: Սեղանի մնացորդները տուն չեն բերում, այլ տալիս են աղքատներին:

ՎԱՑՈՑ ՁՈՐ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Տալով Վայոց ձորի մանրամասն տեղագրությունը (Ազգագրական հանդես, XII)՝ ես առանձնապես կանգ եմ առնում նրա վանքերի վրա, որովհետև սրանք նշանավոր են ոչ միայն պատմական, այլև ճարտարապետական տեսակետից: Ես սրանց նկարագրությունը դասավորում եմ ոչ թե տեղագրության համեմատ, ինչպես ընդհանրապես կատարվում է, այլ ժամանակագրական կարգով, որպեսզի ավելի հեշտ լինի գծելու Վայոց ձորի պատմության և ճարտարապետության էվոլյուցիան:

Այս վանքերի լուսանկարներն առաջին անգամ (1904 թ.) ես անձամբ հանեցի, սակայն մի ավազակային խումբ այլ իրերիս և ժողովրդական բանահյուսության վերաբերյալ նյութերիս հետ տարավ նաև այդ նեգատիվները, ուստի 1908 թ. լուսանկարիչ Երմակովին իմ անձնական միջոցներով տարա ինձ հետ և նրա հանած լուսանկարներից կազմեցի մի լուսանկար ալբոմ: Դժբախտաբար նյութականի սղությունը թույլ չէր տալիս հրատարակելու այդ լուսանկար ալբոմը ֆոտոտիպիայով, որով մատչելի կդառնար չատերին, մինչդեռ լուսանկարչականը ձեռք բերին միայն արտասահմանի և ռուսաց հայտնի թանգարաններն ու գիտական հիմնարկությունները և մի քանի անձնավորություններ, ինչպես Վ.Ս. Սիսոև, որ մեծապես օգտվեց դրանից: Այժմ ս. Հայկանուշ Մարտիրոսյանը, Ազգագրական ընկ. խորհրդի փոխնախագահուհին, ընկերության տրամադրության ներքո դրեց 1500 ռ. այդ ալբոմը ֆոտոտիպիայով հրատարակելու, ուստի և նրա մանրամասն նկարագրությունը տպագրում ենք Ազգագրական հանդեսի այս գրքում, ցուցումներ տալով ընթերցողներին պատկերները նայելու այդ ալբոմի մեջ: Եկեղեցիների հատակագծերը հատկապես ինձ համար պատրաստել է պ. Տարագրոս Վարդանյանը, այն անձնավորությունը, որ պ. Սիսոևի համար ևս կատարել է միևնույն աշխատանքը: Եվ որովհետև պ. Սիսոևը, հակառակ Մոսկվայի Կայսերական Հնագիտական Ընկերության Կովկասյան ճյուղի 1911 թ. նոյեմբերի 12-ի նիստում իմ բողոքի պատճառով տված խոստման՝ չօգտվել իմ լուսանկար-ալբոմի նկարներից մինչև ֆոտոտիպիական հրատարակությունը,[434] մեծապես օգտվեց, այս պատճառով և Մոսկվայի Հնագիտական ընկերության նախագահուհի կոմսուհի Ուվարովան, լսելով իմ բողոքը, դրեց իմ տրամադրության ներքո այն արձանագրությունների և օրնամենտների քլիշեները, որոնք հատկապես պատրաստել էր նաև ինձ համար պ. Տարագրոս Վարդանյանը՝ իմ խնդրով կրկին անգամ այցելելով այդ վանքերին:

---

[434] *Известия Кавказского Отделения Императорского Московского Археологического общества, вып. III, с. 64.*

Այստեղ տպված արձանագրություններն իրենց լուսանկարներով մտել են իմ «Հայկական արձանագրություններ» աշխատության մեջ ևս, որ արժանացավ Լազարյան ճեմարանի Ղանանյան մրցանակին 1914 թվին:

ՆՇԱՆԱՎՈՐ ՎԱՆՔԵՐ

ԳՆԴԵՎԱՆՔ

Տեղադրություն. Վայոց ձորի ամենահին և ճարտարապետական տեսակետից բավական նշանավոր այս վանքը տեղավորված է Արփաչայի հրաշագեղ հովտում, Գնդեվազ գյուղից հազիվ կես կիլոմետր հեռու:

Այստեղ մի անգամ ևս չեշտվում է այն հանգամանքը, որ մեր վանքերը մեծ մասամբ բարձրանում են բնության սքանչելի տեսարաններով օժտված վայրերում, չէ՞ որ գեղարվեստը բարձրացնելով մարդու հոգին տանում է դեպի գեղեցկության տիպարի պաշտամունքը:

Սա մի անդնդախոր ձոր է, որի միջով գալարվում է Հարյուրամյա ընկուզենիների և ծիրանիների հովասուն սաղարթներով հովանավորված արծաթափայլ Արփաչայը: Ձորի եզրին բևեռված խոխոմաձիգ ժայռերի խոռոչների ձեղուններից վիժվող բյուրեղանման ցայտերը, խաղալով ժայռի ամեն մի ծերպից կենդանության դիմող բույսերի երփներանգ տերևների և արևի կենսատու ճաճանչների հետ՝ ձայնակցում են բնության հրապուրով հարբած թռչունների դայլայլիկին:

Հիրավի գեղեցկության մատանի է այս ձորը, որի ակը կազմում է Սոփիա տիկնոջ պարգևած Գնդեվանքը, այժմ դարերի փոշուց փայլը կորցրած:

Մի սաստիկ քարքարոտ ճանապարհ Գնդեվազ գյուղից ոլորապտույտ իջնում է մինչև Գնդեվանքը:

Պատմական տեսություն. Այս վանքի մասին Օրբելյանը հետևյալն է պատմում (Գլ. Ծ):

Սյունյաց Սմբատ իշխանի երանելի ու բարեպաշտ կին Սոփիան (որ Դեբենիկ Արծրունու աղջիկն էր), ուխտ է գնում այն խորաձոր վայրը, որ Գնդեվանք է կոչվում, ուր կային սուրբ վկաների բազմաթիվ նշխարներ և ուր բնակվում էին միայնակյացներ: Տիկինը սաստիկ հավանելով տեղին, մտածում է մի եկեղեցի կանգնել այդտեղ: Գիշերը ս. վկաներն երևում են նրան և խնդրում կատարել մտադրությունը: Ուստի և անմիջապես քարտաշներ է կանչել տալիս և սկսում շինությունը, վերակացու կարգելով Սահակ քահանային և գործակալ Եղիշա քահանա նկարչին, իսկ վանքի ավարտման հոգսաբարձությունը հանձնում է Հակոբ անունով մեկին: Յուր ճգնությամբ փայլում էր այստեղ նաև Սուփան Գնդունին: Շինում են Աստծո տունը և նկարներով զարդարում առաստաղն ու պատերը և մեծահան-

դես ժողովով օրհնում են ու անվանում ս. վկաների անունով և բնակեցնում են այդտեղ պաշտոնյաներ ու կրոնավորների բազմություն: Նաև ամբողջ ձորի պատշաճավոր տեղերում չինում են անապատներ և բնակեցնում նրանց մեջ ճգնավորներ: Երանելի տիկինն անվանում է այս վանքը Գնդեվանք, և չինում է վանքի վերև, քարի գլխին, մի գյուղ և ժառանգություն է տալիս եկեղեցուն, ազատ կացուցանելով ամեն տեսակ հարկերից: Եվ այս լինում էր Հայոց 385 թվին (Քրիստոսի 936 թ): Նույնպես այս վանքին է հատկացնում Առչար գյուղը: Իսկ ամբողջ ձորը վերից վար մինչև Գոլոշտի քար ասված տեղը, հրամայում է պտղատու ծառեր տնկել և այգիներ ձգել: Ապա գրում է յուր հիշատակարանը, որ վերջանում է հետևյալ գեղեցիկ բացատրությունով.

Մատանի էր անակն Վայոց ձոր, չիննեցի զսա եւ եդի ակն ի վերայ:

Մի քանի տարի հետո, Հայոց 448 թ. (Քր. 999 թ.) Քրիստափոր վանահայրը չինում է եկեղեցու գավիթը, նաև երանելի և սուրբ հայր Գուրգենը ևս մեծ հիշատակներ ունի այդ վանքում: Շատ տարիներ հետո, 1008 թվին այս վանքի վանահայր Տեր Սարգիսը Զկնարած գետից ջուր է բերում վանքը:

Այս մենաստանը շատ անգամ վերանորոգված է, սակայն վերանորոգողներից միայն երկուսի անուններն են հայտնի, մինը՝ մի ոմն Գրիգոր, 1309 թ. և մյուսը՝ Պետրոս վարդապետը, 1671 թ.: Վերջինս չինել է նաև գյուղի եկեղեցին:

Հատուկտոր արձանագրություններից և Օրբելյանի վկայություններից երևում է, որ վանքի առաջնորդներ եղել են.

Սուփան Գնդունին, 930 թվականից առաջ,
931-6. Հայր Սարգիս,
999. Քրիստափոր,
... Գուրգեն,
1008. Սարգիս Բ,
1307. Գրիգորես,
? Առաքել,
1685-91. Տեր Պետրոս,
1875. Հովհաննես Տեր Հարությունյան,
... Պետրոս վարդապետ Տաթևացի,
1899 մինչև 1916 թ. Մամբրե վարդապետ Հովհաննիսյան Ռշտունի, Նոր գյուղից:

Այս վանքի մասին գնդեվազցի Մարտիրոս Գրիգորյան իննսուն և հինգ ամյա ծերունին, որի հայրը 120 տարի էր ապրել, պատմեց ինձ հետևյալ ավանդությունը:

Գնդեվազի վանքի տեղում Նախավկայի անունով մի ուխտատեղի է եղել, ուր ուխտ է եկել նաև Սմբատ Թագավորի կին Սոփիա տիկինը: Սա

կամեցել է այստեղ մի վանք շինել և նույն գիշերն երազում տեսել է մի մարդ, որ ասում է իրեն. «Սուխիա խանում, այդ բանը որ մտածեցիր՝ կատարիր»: Տիկինն առավոտյան ձեռնարկել է վանքի շինութեան և երբ ավարտել է՝ հրավիրել է այս ձորի այրերում ճգնող ճգնավորներին այդտեղ տեղափոխվելու: Սրանց մեջ եղել է նաև Օվանես անունով մի ճգնավոր, որ չափազանց ծեր լինելով չի կարողացել կանգնել և միշտ նստած է աղոթել, այս պատճառով էլ նրան կոչել են Գուննա Օվանես: Սա դառել է վանքի առաջին վանահայրը, այս պատճառով էլ վանքը նրա անունով կոչվել է Գուննա Օվանես՝ Գնտավանք: Մի առ ժամանակից հետո էլ այստեղ եղել են Պետրոս անունով մի քահանա և Սարգիս անունով մի վարդապետ: Սրանք խորհուրդ են արել, որ վանքի մոտ մի դյուղ ձգեն, որպեսզի նրա արդյունքով վանքը կառավարվի: Պետրոս քահանան շինել է մի եկեղեցի, իսկ Սարգիս վարդապետը երեք տարի շարունակ ահագին ծախսեր անելով, արխ է փորել, որ ջուր բերի, բայց ջուրը չի եկել: Վերջը մի գիշեր երազում տեսել է մի մարդ, որ ասել է թե արի ցույց տամ, թե որտեղից պետք է արխը ձգես, որ ջուրը գա: Եվ տարել է, ցույց է տվել: Սարգիս վարդապետն առավոտը վեր է կացել, այդ ցույց տված տեղով արխ փորել տվել և ջուրը բերել: Այդ օրվանից այդտեղ դյուղ է հիմնվել:

Վանքը երկար ժամանակ չեն է եղել, բայց հետո Շահ-Աբասը ավերել է և գնդեվազգիներին գերի տարել:

Վերջին տարիներս միայն Խաչիկից և Կնիշիկից հայերը հավաքվել են և թուրքերից հեռու մի առանձին թաղ կազմել:

Վանքի նկարագրությունը. Վանքը շինված է սև, սրբատաշ քարերով. բաղկացած է մի եկեղեցուց և մի գավթից:


Նկ. 1

Եկեղեցին արտաքուստ գրեթե քառակուսի է (12x11 մ), իսկ ներքուստ (10x9 մ), խաչաձև (նկ. 1), չորս թևերն էլ կիսաբոլոր են: Արևելյան կողմն ունի երկու խորան (3x5 մ և մոտ 3 մ բարձր), որ ըստ երևույթին հետո են շինված, այնպես որ եկեղեցին սկզբում արտաքուստ ևս խաչաձև է եղել, միայն այս խորանները և գավիթը շինելով, դառել է քառակուսի: Եկեղեցու սեղանը 1 մ բարձրության է և երկու կողքերից երեքական աստիճաններ ունի: Կոզակը կամարակապ է և կիսաբոլոր, զարդարված նկարներով, որոնցից մինը՝ ս. Աստվածածինը, դեռևս նկատելի է:

Եկեղեցին ունի չորս քառանկյունի որմնասյուն, յուրաքանչյուրը երեք կիսասյունից բաղկացած, որոնք հանդչում են քառանկ-

յունի խարսխի վրա և վերջանում նախ կիսաբոլոր և ապա քառանկյունի խոյակով: Այս չորս որմնասյուների վրա բոլորում են կիսաբոլոր կամարներ, որոնց վրա բարձրանում է գմբեթը և որոնց միացման անկյուններում քանդակված են չորս ավետարանիչների հատկանիշները:

Արտաքուստ բոլոր պատերի մեջ ևս կան երկուական ներսանկված, հարավային և արևմտյան պատերի մեջ բացվում են մի-մի դուռ, որոնցից արևմտյանը թե ավելի լայն է (1,50x1,10 և 2x0,88 մ) և թե ավելի դեղեցիկ: Եզրափակ երեք կիսասյուների վրա բոլորում է մի կիսաբոլոր կամար, որի վերև կանգնած է մի դեղեցիկ խաչարձան, իսկ սրանից բարձր բացվում է մի պատուհան, ունենալով աջ ու ձախ կողքերին մի-մի խաչքար: Հարավային դռան վերև ևս կա մի պատուհան, պայտաձև կամարով, նկատելի է, որ սա վերաբերում է վերանորոգության ժամանակին, մանավանդ որ սրա վրա կա մի խաչքար, որ ոչ թե կանգեցրած է, այլ տգեղ կերպով պառկեցրած իբր շինության քար: Մի դեղեցիկ վարդազարդ էլ բարձրանում է հյուսիսային պատի երկու ներսանկվածների միջև:

Գմբեթի թմբուկը տասնվեց անկյունանի է, բավական լայն, 4,5 մ տրամագծով և ցած, միայն 2,2 մ բարձրության, զարդարված չորս փոքրիկ պատուհաններով: Վերջանում է կոնաձև, 2,2 մ կաթողիկեով, որ այժմ փոքրինչ քանդված է:

Եկեղեցու բարձրությունն է 11 մ, 6,5 մ մինչև գմբեթը:

Եկեղեցին հանդչում է երեք աստիճաններով բարձրացող հիմքի վրա:

Գավիթը գտնվում է եկեղեցու արևմտյան պատին կից և բռնում է ոչ թե ամբողջ, այլ միայն նրա 2/3 մասը, այն էլ ոչ թե մեջտեղում է շինված, այլ բավական հետ, այնպես որ հարավային կողմից մոտ 1 մ հետ է, իսկ հյուսիսային կողմից մոտ 0,5 մ անցկացած:

Սա ևս շինված է սև, սրբատաշ քարով: Երկարությունն է 7 և լայնությունը 6 մ: Սա թաղակապ է եղել, որի ձեղունի մեծագույն մասը այժմ արդեն խոնարհված է: Այս գավթի հյուսիսային կողմում մի ամբողջական և երեք կիսասների վրա բոլորում են երեք կիսաբոլոր բաց կամարներ: Սրանցից առաջինը, որ կից է եկեղեցու պատին, և որի վրա կա մի դեղեցիկ վարդազարդ, ծառայում է իբրև դուռ այն թաղակապ խորանին, որ շինված է եկեղեցու հյուսիսային պատին կից, դրսի կողմից: Մյուս երկու կամարները բացվում են նույնպես թաղակապ, 4,5 մ երկարության և 1,5 մ լայնության շենքի մեջ, որի արևելյան պատում կա մի քառանկյունի պատրհան, իսկ արևմտյան պատում՝ մի նեղ և երկար պատուհան:

Այս կամարների և սյան հանդեպ հարավային պատի վրա բարձրանում են նույն ձևի և նույն մեծության որմնասյուներ, որոնց վրա բոլորում են կիսաբոլոր կամարներ՝ կազմելով 40 հարյուրամետր խորության խորշեր:

Գավթի արևմտյան պատի մեջ բացվում է մի դուռ, պայտաձև կամարով պատած, կողքերին մի-մի խաչ և բարձրում՝ մի նեղ և երկար պատուհան:

Գավթի մեջ եկեղեցու արևմտյան ներսանկյունաձևներում զետեղված են մի-մի կարմիր, գեղեցկաքանդակ խաչքար, որոնցից աջակողմյանն այժմ վայր է ընկած:

Վանքը շրջապատված է պարսպով, որ ունի երկու դուռ. արանցից արևմտյանի վրա չինված է գիշերապահի մի սենյակ: Պարսպի մեջ՝ եկեղեցու հարավային կողմում, կա մի ընդարձակ նկուղից, 8 խցից և մի դռմից բաղկացած մի ամուր շենք, որ այժմ էլ կանգուն է: Այս շինության առջև եղել է մի աղբյուր և ավազան, սակայն այժմ ավազանը քանդված է, իսկ աղբյուրը բխում է պարսպից դուրս, արևելյան դռան մոտ:

Գնդեվանքին իբր սեփականություն այժմ համարվում է միմիայն պարսպի պարփակված տեղը, ուր պարապեզ և այդի է ձգված:

Արձանագրություններ. Եկեղեցու հարավ-արևմտյան անկյունում, արտաքուստ (նկ. 2):

Նկ. 2

Ես Սուքի տիկնաց տիկին, Դերանկին դուստր կին Սմպատա որդի Աշոտի Սիւնեց իշխանի շինեցի զեկեղեցիս:[435]

Սրանից բարձր.

Մատանի էր անակն, եղեր Սիւնեաց Սուքի տիկին:[436]

Եկեղեցու հարավային պատի վրա.

---

[435] *Տե՛ս ԴՀՎ III, էջ 13:*

[436] *Տե՛ս ԴՀՎ III, էջ 13:*

ՅԶ թվականիս (931) ես Եղիշայ երէց և նկարիչ արարի առաջնորդու-թեամբ Սարգիս քահանայի որք կարդայք Տէր ողորմէ ասացէք:

Մի խաչքարի վրա.

Հայր Ստեփաննոս կանգնող սբ. նշանիս յաղօթս յիշեցէք ի Քրիստոս Յիսուս, ի թվին ՆԺԶ (967) չինեցաւ սբ. խաչս:

Մի հին խաչքարի վրա.

ՉՀայր Սուփան կանգնող սբ. նշանիս յաղաւթս յիշեցէք ի Քրիստոս Յիսուս ՆԺԶ (967) թվին չինեցաւ սրահս:

Եկեղեցու արևմտյան դռան ձախ կողմը:

Կամաւն Այ. ես Գրիգորէս նորոգեցի զսբ. վկայքս ի փրկութի հոգւո իմոյ Առաքելն և այլ միաբանքս սահմանեցին ինձ Բ. պատ. Աւագ. Եշաբ. կատարիչքն ահնին յԱյ խափանողքն դատին ի Տէ թվ. ՋՃԸ (1309) գր. գրիչ յչ.[437]

Եկեղեցու հարավային կողմում կա մի գերեզմանաքար հետևյալ տապանագրով. (նկ. 3):

նկ. 3

Այս է հանգիստ պարոն Աւաքին որ կարճաւրեա ի + ելավ առ անդառամ պսակն. նա էր որդի պրն. Ամիր ղուլին և թոռն պարոն Շահմասուրի թվ. ՌԺԶ (1567) Շանդամազն, Մուքայիլն, Հայրապետն հիշէք ի Քս.[438]

Եկեղեցու արևմտյան դռան կամարի մեջ ամրացրած և այժմ կոտրված-ընկած խաչքարի վրա քանդակված է Քրիստոսի, սրբերի, թռչունների և ձկների պատկերները և ներքևում գրված.

Ես Ղարտաչս կազմեցի...Մայիխասմին կողակցի. թվկ. ՌԻԲ (1573).

Եկեղեցու արևմտյան պատի ձախակողմյան ներսանկվածում կանգնեցրած կարմրագույն խաչքարի վրա (նկ. 4):

Խաչս բարէխաւս կաեցա...իր որդոցն իւրոց. ես Վարդանս կազմեցի թվ. ՋԸ (1459):

Եկեղեցու արևմտյան ճակատին, մի խաչքարի վրա.

Խաչս Սարգսի առաջնորդի եկեղեցւոյ է:

---

[437] Տե՛ս ԴՀՎ. III, էջ 16:

[438] Տե՛ս ԴՀՎ. III, էջ 18:

Գավթի հյուսիսային պատի այան վրա.

Անվամբն Այ ես Աշոտ Բոլկայ որդի Ած ինձ ողորմեցաւ իմ աւագ որդին ի Քս. փոխեցաւ. ես տվի զմեծ այգի Ըխրատանին հողն յեկեղեցիս. ի տարին Բ. աւր ժամ զնոր կիրակէն առնեն Հա-սա...[439]

Նկ. 4

1875 թ. Հովհաննես վարդապետ Հա-բուեթյունյանը Գնդեվանքում գտել է պղնձե ամաններ, կաթսաներ, ունելիներ, զանգակ, բուրվառ, ծնծղա և այլն, որոնք հայտնի չէ, թե ուր են այժմ: Սրանցից մի քանիսի վրա եղել են հետևյալ արձանագ-րութեյունները.[440]

Ծնծղայի վրա.

Ցիշատակ է Գնդեվանայ սուրբ Նախա-վկայի թվ. ՌՃԽ (1691):

Մի զանգակի վրա.

ՉԾԶ (1307) ՉՍարկաւագ քահանայ յի-շէք ի Քրիստոս, որ ստացաւ զսա:

Պղնձե ամանների վրա.

Ցիշատակ է Գնդեվանա Սուրբ Նախավ-կին.

Պղնձե բուրվառի վրա.

Ցիշատակ է Ծատուրի որդի Ակոբին, որ ետ ի դուռն Նախավկային:

ՑԱԽԱՑ ՔԱՐ

Տեղագրութեյուն. Ցախաց-քարի «բարձ-բահռչակ և սուրբ առաքինաբան» վանքը գտնվում է Էրդափին և Ալադյազ գյուղերի միջև բարձրացող մի երկարաձիգ լեռան հարթ գագաթին, Թաքադոնդուրան լեռան հյուսիսային կողմը, Սմբատա բերդից հյուսիս, փոքր-ինչ բարձր դիրքի վրա:

Ճանապարհը դեպի Ցախաց-քար բարձրանում է Էրդափին գյուղի միջից և կամ Ալադյազից, չափազանց դժվարելանելի է և նեղ:

Պատմական տեսութեյուն. Այս վանքը կոչվում է Ցախաց-քար, կամ Ցա-խա-քար և երբեմն, մանավանդ արձանագրութեյունների մեջ, գրվել է նաև

[439] Տե՛ս ԴՀՎ III, էջ 16:
[440] Ալիշան, Սիսական, եր. 107:

Ցաղաց-քար: Այժմ հայտնի է առավելապես Ղոչա (գուլդ) վանք անունով, որ դրված է թուրքերից՝ ի նկատ առնելով միմյանց մետ կանգնած գույդ եկեղեցիները:

Ըստ Ասողիկի, Ցախաց-քարի վանքը հիմնված է «ի ձեռն հօր Ստեփանոսի» ժ դարի կեսին, Աբաս Բագրատունու թագավորության միջոցին: Մոտ մի դար հետո, Ստեփանոս Օրբելյանի ասելով, 1041 թվին, Գագիկ Բ թագավորության ժամանակ, «Հայր ոմն վանից Վարդիկ շինէ պայծառ եկեղեցիս երկու ի հանգստարանի առաջին սուրբ Հարցն, զմին գմբէթայարկ յանուն սրբոյ Կարապետին, և զմիւսն սագաչէն, հրաշալի յօրինուածովք», որ ըստ արձանագրության՝ կոչվել է ս. Հովհաննես:

Բացի այս երկու եկեղեցիներից սրանց մոտ, հազիվ 100 մ հեռու, կան ուրիշ եկեղեցիներ էլ, ս. Աստվածածնի և ս. Նշան, որոնց շինության թվականն անհայտ է, միայն վերանորոգված են 1222 թվին մի ոմն Գրիգորի ձեռքով:

Եկեղեցիների վրա եղած արձանագրություններից երևում է, որ 1061 թվին Տարսայիճ իշխանը նվիրել է այս վանքին Ցախաց-քարի հողը, Գեղարքունիքում Գառնի գյուղը և Մճռակաձորում յուր ձեռատունկ այգին: Եվ այդ ժամանակ վանքի առաջնորդ Տեր Գրիգորը մյուս միաբանների հետ այդ նվիրաբերության պատճառով սահմանել են տարեկան երկու պատարագ, մինը Տարսայիճին, մյուսը նրա երկրորդ կնոջը՝ Մինա խաթունին:

Այս նվիրաբերության մասին վկայում է և Լիպարիտի որդի Ստեփանոս Օրբելյանը յուր պատմության մեջ:[441]

Տարսայիճ իշխանն ուրիշ վանքերի հետ Ցախաց-քարն էլ ժառանգություն է թողել յուր որդուն՝ Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսին:

1317 թ. Պռոշի թոռ և Հասանի որդի Եաչին յուր ձեռնատունկ այգին է նվիրել այս վանքին:

Նույն 1317 թ. Գրամիկ անունով մինը մի ուրիշ այգի է նվիրել այս ուխտին:

1376 թ. մի ոմն Սամսոնի որդի իր ամուսնու հետ թաղել է այս վանքում յուր որդի Սամսոնին և այս առիթով նվիրաբերություն արել:

1462-3 թվին գրված մի ավետարանի հիշատակարանում ասված է. «Գրեցաւ ընդ հովանեաւ ս. Աստուածածնի և սուրբ Կարապետիս, երկնամանն կաթուղիկէի», իսկ սրանից 25 տարի առաջ գրված է մի շարական «ի գաւառիս Եղեգեաց, ի վանս Ցաւղաց-քար, ընդ հովանեաւ կենարար ս. Նշանիս... ձեռամբ Մատթէոս քահանայի»:[442] Գուցե սխալմամբ է գրված Ցաղաց-քար:

---

[441] Ստ. Օրբելեան, գլ. ԿԶ:
[442] Ալիշան, Սիսական, եր. 157:

Ոչինչ հայտնի չէ այս վանքերի մասին XIV դարից սկսած, սակայն ներքին վերանորոգություններից, ինչպես ծեփից, նկատելի է, որ կյանքը դադարած չի եղել: Այժմ բոլորովին անխնամ է թողնված և մոտակա Ալագյազի թուրքերը սրանց մեջ ոչխար են պահում:

Այս վանքի եկեղեցիներից նշանավոր են ս. Հովհաննեսը և ս. Կարապետն իրենց չքնաղ քանդակներով և ս. Աստվածածինը իր հատակագծով, որ բավական նման է ս. Հռիփսիմեի և Աղթամարի եկեղեցիներին:

Վանքի նկարագրությունը. Ցախաց-քարի վանքը բաղկացած է չորս եկեղեցիներից, սրանցից ս. Կարապետն ու ս. Հովհաննեսը կանգնած են միմյանց մոտ, իսկ ս. Աստվածածինը և ս. Նշանը սրանցից մոտ 100 մ հեռու, դարձեալ միմյանց կից և առանձին պարսպով պատած:

Ս. Կարապետ. Շինված է կարմրավուն, սրբատաշ քարից, երկարությունն է 10 մ, լայնությունը 6,5 և բարձրությունը մոտ 9 մ (ներքուստ երկարությունը 8,5, լայնությունը 5 մ): Ճարտարապետական տեսակետից սա այս վանքի ամենագեղեցիկ շենքն է:

Ներքուստ եկեղեցին անույն է և խաչաձև: Ունի մի սեղան և չորս խորան, որոնցից երկուսն արևմտյան կողմը (տե՛ս նկ. 5 և 6): Չորս որմնասյուների վրա բոլորում են կիսաբոլոր կամարներ՝ կրելով իրենց վրա գեղեցիկ կաթուղիկեն:



Նկ. 5



Նկ. 6

Որմնասյուները բաղկացած են երկու կիսաբոլոր և սրանց միջև մի քառանկյունի կիսասյուներից, հանգած կիսաբոլոր և քառանկյունի պատվանդանի վրա և վերջացած նուշնոլիսի, միայն հակադիր խոյակով:

Կիսաբոլոր և կամարակապ կողակի մեջտեղում բացվում է մի պատուհան: Սեղանի սանդուխտները ոչ թե կողքերից, այլ մեջտեղից են: Սեղանի ճակատը զարդարված է չորս կամարներով, որոնցից յուրաքանչյուրի մեջ կա մի-մի բարձրաքանդակ սափոր: Խորաններից մեջ կան մի-մի բոլորաձև սեղան, վեմ քարով և մի-մի փոքրիկ պատուհան: Խորանների վերև նկատելի են գաղանի պահաբաններ: Եկեղեցու հատակը սալահատակած է:

Արտաքուստ արևելյան պատն ունի երկու ներսանկված, որոնց միջև բացվում է մի փոքրիկ պատուհան, մի քանի գեղեցիկ շրջանակներով շրջապատված: Խորանների տեղում բացվում են մի-մի փոքրիկ պատուհան, կամարակապ և վարդանման քանդակներով զարդարված:

Հարավային պատի մեջ ևս կան երկու ներսանկված՝ գեղեցկաքանդակ կամարով: Սրանց միջև բացվում է մի դուռ՝ պարզ շրջանակով, միայն ուղղաձիգ կամարը զարդարված է ողկույզանման և այլ գեղեցիկ քանդակներով:

Դռան վերև բացվում է մի ռոզաս՝ երկու համակենտրոն շրջանակներով և սրանց մեջ՝ գնդակներ:

Սրա ձախ կողմում կա մի շատ գեղեցիկ ցածրաքանդակ, թևատարած մի արծիվ, մագիլների մեջ մի խոյ բռնած՝ Մամիկոնյան իշխանների դրոշմը: Ափսոս որ արծվի գլուխը այժմ կոտրված է:

Նույն սեղանի աջ կողմում եղել է մի ուրիշ ցածրաքանդակ՝ մի մարդ, որ բռնած է այս եկեղեցու կաղապարը: Այս ցածրաքանդակն այժմ ընկած է այս պատի առջև, միայն մարդու գլխի մասը կոտրված է:

Արևմտյան պատի մեջտեղում, բարձրից, բացվում է մի երկար պատուհան, կրկնակ շրջանակներով եզրափակված և ավաստիկային քանդակներով զեղազարդված: Այժմ պատուհանի վերին, ձախ մասը քանդված է: Այս պատուհանից փոքր-ինչ ներքև՝ խորանների վրա կան մի-մի փոքրիկ պատուհան, կամարակապ, միայն ոչ միևնույն բարձրության վրա, այլ աջակողմյանը փոքր-ինչ ցածր: Վերջինիս վերև, իսկ ձախակողմյանի կողքին, կանգնած են միևնույն բարձրության վրա մի-մի գեղեցկաքանդակ խաչքար:



Նկ. 7

Հյուսիսային պատի վրա ներսանկվածները չկան և ոչ էլ պատուհան, միայն բարձրում երկու մետրաչափ միակտոր քարի վրա քանդակված է մի առյուծ, որ առաջի թաթերով հարձակված է մի ցուլի վրա:

Եկեղեցու գմբեթը գլանաձև է, կոնաձև կատարով, առանց խաչի և զարդարված չորս նեղ և եր-

կար պատուհաններով:

Ս. Հովհաննես. Բարձրանում է ս. Կարապետից դեպի հյուսիս-արևելք, մոտ 30 մ հեռու: Սա բաղկացած է մի փոքրիկ եկեղեցուց, սրան կից մի փոքրիկ գավթից (նկ. 7) և վերջինիս վրա շինված մի փոքրիկ մատուռից: Ամբողջ շենքը շինված է կարմրավուն սրբատաշ քարերից:

Ս. Հովհաննես եկեղեցու երկարությունն է 5 մ, լայնությունը 2,5 մ և բարձրությունը 4 մ: Եկեղեցին սագաչեն է, ներքուստ անսյուն և թաղակապ: Խորաններ չունի, այլ միայն մի սեղան, որի երկու կողմում բարձրանում են քառանկյունի որմնասյուներ՝ կրելով մի կիսաբոլոր կամար: Արտաքուստ արևելյան պատի վրա կա մի ռոզաս, միանգամայն նման սուրբ Կարապետի վրա եղածին: Մյուս պատերը միապաղաղ են, առանց որևէ քանդակի: Արևմտյան կողմը, միակ պարզ դռան առաջ, ձգվում է գավիթը, 3 մ երկարությամբ և նույն լայնությամբ: Գավիթը նույնպես անսյուն է և ձեղունը աստղաձև քանդակներով գեղազարդված:

Գավիթը ևս ունի միայն մի դուռ, արևմտյան կողմում, նույնպես չատ պարզ:

Գավթի կտրին կա մի ուրիշ մատուռ, թերևս ս. Նշան անունով, որ իսկապես կազմում է այս շենքի առանձնահատուկ, ուշագրավ մասը: Այս մատուռի երկարությունն է 2 մ, լայնությունը 1,5 մ և բարձրությունը 3 մ:



Նկ. 8

Ներքուստ անսյուն է, թաղակապ, ունի միայն մի կիսաբոլոր սեղան վեմ քարով: Մի դուռ բացվում է հյուսիսային կողմում՝ գավթի կտրան վրա. մի քառանյունի պատուհան կա արևելյան պատի մեջ և մի ռոզաս՝ արևմտյան կողմը: Կտրան փլվածքներից կարելի է ենթադրել, որ չորս սյուների վրա բարձրանալիս է եղել մի փոքրիկ զանգակատուն: Այս մատուռի ամենագեղեցիկ մասը արևմտյան ճակատն է. այստեղ կանգնած են 2 մետրաչափ կարմիր, գեղեցկաքանդակ երկու խաչքար, որոնց միջև կա մի երկ-

համարակապ ներսանկված, որի մեջ կանգնած են մի մեծ և մի փոքր խաչքար:

Աստվածածնի եկեղեցին. Ս. Կարապետի եկեղեցուց մոտ 100 մ դեպի արևմուտք գտնվում են երկու ուրիշ եկեղեցիներ, առանձին պարսպով պատած: Այս պարսպի արևելյան մասը մեծ մասամբ դեռևս կանգուն է, և սրա հարավային ծայրում բացվում է մի մեծ դուռ (նկ. 8), որի կամարի վրա դեռևս մնում են սրբատաշ քարից շինված մի փոքրիկ մատուռի կիսավեր պատերը: Դռան երկու կողմին կանգնած են մի-մի եկեղեցի, այժմ կիսավեր:

Արձանագրություններից երևում է, որ այս եկեղեցիներից հյուսիսայինը կոչվել է ս. Աստվածածին: Եկեղեցին ներքուստ անսյուն է, անկյունները բոլորաձև, ինչպես Հռիփսիմեի եկեղեցին, թաղակապ, մի սեղանով և չորս խորաններով, որոնցից երկուսն արևմտյան կողմը: Արևելյան մասի խորաններից հյուսիսայինը բացվում է ուղղակի սեղանի վրա: Եկեղեցու երկարությունն է արտաքուստ 9, ներքուստ 7,60 մ, լայնությունը արտաքուստ 8, ներքուստ 7,25 մ, բարձրությունը 6,5 մ: Այս եկեղեցին հարավային դռնով հաղորդակցվում է մի մատուռի հետ, որ կամարափակ սյուներով մի թաղակապ շենք է և ունի մի սեղան՝ վեմ քարով: Այստեղ մի գեղեցկաքանդակ գերեզմանի վրա խնդրված է հիշել «Զազնիւն յընտրեալսն և զքաջն ի զօրականսն զպարոն Ուքաննն» թվին ՉՀԵ (1326):

Նույն եկեղեցին արևմտյան դռնով էլ հաղորդակցվում է մի ընդարձակ կամարակապ գավթի հետ, որի մեջ կան մի քանի գերեզմանաքարեր և մի մեծ խաչքար:

Դարպասի հարավային կողմի եկեղեցին անսյուն է, թաղակապ և առանց խորանների. երկարությունը՝ 9,5, լայնությունը՝ 4,25 մ:

Այս եկեղեցիների շուրջը պարսպի մեջ կան բավականաչափ խցերի հիմնապատեր, ինչպես նաև ձիթհանքի երկու մեծ քար:

Արձանագրություններ. Ս. Կարապետի եկեղեցու արևմտյան պատի վրա, ներքուստ.

Թվին ՈՀԹ (1230) յիշեցէք ի Քս.

Ս. Կարապետ եկեղեցու հարավային դռան կամարի վրա.

Տր. Ած. ողորմեայ Գագկայ ի քում գալստեանդ և պահեա ի չարէ.

Սրա ներքև կա մի եղծված արձանագրություն, որի չարունակությունը կազմում է դռան աջ կողմում ձգվող երկու տողը.

Ցաւտարաց մասնուբաժին ընդ Ցուդայի եղիցի. Աստուածածնին տաւնին:

Սրա ներքև.

Ողորմեայ Քս. Ած. Վարդկայ ի քում գալստեանդ որպէս աւազակին ի խաչին և մաքսաւորին ի տաճարին: Ես Վարդիկ հայր ստացայ զսբ. Կարա-

պետս. արդ որ սբ. Սարգիսն աւր յայս :Ե: եկեղեցումս ժամ Վարդկա չառնէ սբ. Կարապետէս եղիցին նզվեալ իսկ առնելին աւրհնեալք եղ. յԱյ.[443]

Ներսը՝ հարավային պատի վրա.

Ի թվին Ջ...(1251): Այս գիր ճշմարիտ յուսոյ յիշատակ հոգւոյ...Տարսայիճի իշխանաց իշխանի, որդի մեծին Լիպարիտի, եղբայր Սմբատայ արքայի կողմնակալի այսմ նահանգի, որ իշխեցաւղ է ի Բարգուշատայ մինչ ց Գառնի սահմանք մեր երասխայ, մեր յոյս Քրիստոս է... զհոգւոց մերոց տուաք ի սուրբ ուխտս զՅախաքարի հողն ի հայրենեաց մերոց, ի Գեղարքունի զգեղն Գառնի և ի Մճռակաճոր զմեր ձեռատունկ այգին Ա....ութիւնց: Սպասաւորք Տէր Գրիգոր և այլ մխաբանք սահմանեցին Զատկի սուրբ տաւնին, առաքելոց Պետրոսի և Պաւղոսի եկեղեցիս ամենայն պատարագն Ա. աւուր ինձ առնեն Տարսայիճիս, Ա. աւրն ամուսնոյ իմոյ Մինա խաթունին: Արդ թէ ի մերոց կամ յաւտարաց կամ յիշխանաց հակառակի ՅԺԼ հայրապետացն նզոված եղ...[444]

Ս. Կարապետի գավթի հարավային պատի վրա.

Յանուն Այ. ես Մարտիրոս զիմ հայրենի հողն զՓորադափնին, զկայուժեռանէ ի Յաղացքարի սուրբ Յովհաննէս տուի, իմ հայրենեաց անդարձ էր որ իմ մահուն յետու Յաղացքարէն որու ոչ ում հետ ոչինչ հաշիւ (չկայ)...Որ զիմ անդարձն յետ դարձուցանէ ՅԺԼ հայրապետացն նզոված եղիցի:[445]

Ս. Հովհաննես եկեղեցու գավթի դռան վերև.

Ես հայր Վարդիկ առաջնորդ սուրբ Ուխտիս Յախացքարիս չինեցի զսուրբ կաթուղիկէս և կանգնեցի զնշան սուրբ երրորդութեան վասն իմ հոգւոյս փրկութեան, թերևս ողորմութիւն գտից ի յապագային, ի տիեզերական հրապարակին, ուր բանքն սպառին եւ գործքն թագաւորեն: Արդ ով սրբազարդ քահանայք, որք զսուրբ պատարագն համարձակ մատուցանէք, զիս յաղաւթս յիշեցէք առաջի զինլոյն Քրիստոսի. ամեն չաբաթ աւր զայն ինձ առնէ այն քահանայն որ ի սմա պատարագ մատուցանէ:[446]

Ս. Հովհաննես եկեղեցու արևմտյան դռան վերև, որ բացվում է գավթի մեջ.

Թուին ՇԺ (1061) կամ եղև ինձ հայր Վարդկայ եւ ամենայն եղբարց գրել զյիշատակ վասն Վարդայ՝ Զաքարէի որդւոյ, որ մեծ յուսով երետ զԲվեայ մարգ և Սիղայի այգին և այլ շատ իրք, եւ մեք գրեցաք որչափ ի հաստատութեան է եկեղեցիս զՎարդավառին չաբաթն ԺԵ ժամ, որ խափանէ ՅԺԼ հայրապետացն նզոված է և մեր մեղացն տէր է:[447]

---

[443] Տե՛ս ԴՀՎ. III, էջ 146:
[444] Տե՛ս ԴՀՎ. III, էջ 149-150:
[445] Տե՛ս ԴՀՎ. III, էջ 152-153:
[446] Տե՛ս ԴՀՎ. III, էջ 151:
[447] Տե՛ս ԴՀՎ. III, էջ 152:

Ս. Աստվածածնի եկեղեցու դռան վրա.

Ես Գրիգոր, որդի Սմբատայ Ոստնի տէր, երկու...նիս տնկեցի, երկու ի ս. Յովհաննէս: Գրեցաւ ի տարին ԺԲ աւր ժամ պատարագ: Որ գրոյս հակառակի ՅԺԼ հայրապետացն նզովեալ եղիցի:

Սուրբ Աստվածածնի եկեղեցու պարսպի դռան վրա.

Թվին ՈՀԱ (1222). Նորոգեցաւ Սբ. Աստուածածինս ի ձեռն Գրիգորո եւ եղբարքս գրեցին իւր տաւնին Ա. ժամ: Կատարիչք աւրհնին յԱյ:

Ս. Աստվածածնի եկեղեցու պարսպի մուտքի հյուսիսային պատի վրա.

Կամաւն Այ ես Էաչէ որդի Հասանա, թոռն Պռաւչայ միաբանեցայ սբ. Ուխտիս Ցաղացքարու և ետու յիմ հայրենեաց ի Արկղունս զմեր ձեռատունկ այգին նորակերտ իւր ջրովն. մեր եղբայրն Տէր Աւրպէլի Ովանէս և միաբանքն ի տարին սահմանեցին Դ. պատարագ մեզ եւ ծնողաց մերոց եւ ամուսնոյն իմոյ Մամախաթունին ի տաւնի Դավթի և Յակոբայ: Կատարիչք աւրհնին յԱյ. ի թվին ՉԿԶ (1317).[448]

Այս արձանագրության ալ կողմը.

Կամաւն Այ. յիշխանութեան Իւանէի ի հայրապետութեան Տեառն Ներսիսի...որդի Սամփսոնայ եւ ամուսին իմ Արուզ խաթունս թաղեցաք մեր Սամփսոն որդիս ի վանքս. մեք էլ գերեզմանա...մատաղ արարաք եւ... հրեշտակաբնակ սբ. Ուխտի Ցաղացքարի...ծախեցին ամենայն հարկէ ազատ Սիրկնայ այգին... Բուրզա թուրքի...գերի թափեցին...այգի... չորեքս. Ա. իմ հոգւոյս. Ա. ամուսնոյ խաթունի հոգւոյն. Ա. Սամփսոնայ հոգւոյն տուաք ի սբ. Յովանէս վասն ծովացեալ մեղաց մերոց: Սպասաւորք Ներսէս եւ այլ միաբանքս տարին վեց պատարագ տուին մեզ. ծնողաց մերոց. ով հակառակի դատի յԱյ. մասն ու բաժին Յուդային եւ այլ խաչահանուացն առցէ: Թվ. ՊԺԶ (1367).[449]

Պարսպի դռան հարավային պատի վրա.

Ի թվին ՉԿԶ (1317). Կամաւն Այ ես Գրամիկ միաբանեցա սբ. ուխտիս Ցաղացքարո եւ ետու ի հալալ ընչից իմոց...նոյն յայգոյն...[450]

ՆՈՐԱՎԱՆՔ

Տեղադրություն. Նորավանքը գտնվում է Ամաղու գյուղից դեպի արևելահարավ, հազիվ երկու կիլոմետր հեռու, մի նեղ ձորակում, որի միջից հոսում է մի փոքրիկ գետակ՝ սկիզբ առնելով Կնիշիկի և Փայաղարա ձորի աղբյուներից: Ձորի երկու կողմը պատած են ահագին, կարմիր ժայռեր, որոնք միանգամայն անմատչելի են դարձնում ձորը: Լերկ ժայռերին իբր

---

[448] *Տե՛ս ԴՀՎ III, էջ 143:*
[449] *Տե՛ս ԴՀՎ III, էջ 144-145:*
[450] *Տե՛ս ԴՀՎ III, էջ 144:*

հակադրություն, ամբողջ ձորակը ծածկված է ճոխ բուսականությամբ, մանավանդ ուռենիներով և պտղատու ծառերով:

Գետակի աջ կողմը, բավական բարձր, փոքրիկ հարթության վրա, կանգնած են Նորավանքի եկեղեցիները՝ պաշտպանված մի քառանկյունի հաստ և բարձր պարսպով, որի երկարությունը հասնում է 110 և լայնությունը 65 մ, ունի երկու դարպաս, մինը հյուսիսային, մյուսն՝ արևելյան պատի մեջ:

Այս պարսպապատ տարածության մեջ կանգնած են երեք եկեղեցիներ, որոնցից երկուսը կից են միմյանց, իսկ մինը 5 մ հեռու սրանցից: Երկու կից եկեղեցիներից հարավայինը, այն, որ իր առջևում ունի մի ընդարձակ ժամատուն, կոչվում է Նախավկա կամ ս. Կարապետ, իսկ մյուսը՝ ս. Գրիգոր: Ս. Կարապետից արևելահարավ, առանձին կանգնած երկհարկանի եկեղեցու անունը որոշ հայտնի չէ, սակայն շատ հավանական է, որ ս. Աստվածածին լինի: Այս եկեղեցու առջևում նկատելի են խցերի հետքեր և մի մեծ ցրնի հոր:

Պարսպից դուրս կան կիսավեր մի փոքրիկ մատուռ, որ Հյուրատուն է կոչվում, մի քանի խուց և տների հետքեր:

Վանքից դեպի արևելահարավ, ծառերի մեջ կանգնած է հաստարակ քարից շինված մի մատուռ, որի մեջ կա մի աղբյուր՝ բավական մեծ ավազանով: Այս ավազանը այժմ էլ սուրբ է համարվում և շատ հիվանդներ՝ նույնիսկ մահմեդական, գալիս են սրանից բժշկություն հայցելու: Թեև ոչ մի արձանագրություն չկա սրա վրա և մատուռի շենքն էլ շատ հին չէ, սակայն շատ հավանական է, որ սուրբը Փոկասի մատուռը լինի:

Նորավանք գալու համար պետք է նախ գալ Արփա գյուղը, որ խճուղիով միացած է թե Բաշ-Նորաշենի երկաթուղու կայարանին և թե Նոր-Բայազետ քաղաքին, թեև դեռևս փոստային հաղորդակցություն չի հաստատված:

Արփայից մի նեղ կածան հազար ու մեկ պտույտներ անելով և սոսկալի նեղություններ պատճառելով բարձրանում է մինչև Ամաղու թրքաբնակ գյուղը, որտեղից նույն ձևով իջնում վանքը: Միայն տեղական ջորին և ձին կարող են անցնել այս կածանով:

Պատմական տեսություն. Նորավանքը ոչ միայն չափազանց նշանավոր է ճարտարապետական տեսակետից, այլ պատմական մեծ դեր է կատարել, լինելով Սյունյաց եպիսկոպոսության աթոռ և Օրբելյան իշխանների հանգստարան:

Այս «գերահռչակ և փառաւոր ուխտի, աշխարհադէտ խմբարանի»[451] մասին ևս պատմական տեղեկությունները շատ կցկտուր են, միակ հավաստի աղբյուրն Ստեփանոս Օրբելյանն է, և նա էլ նրա հիմնարկության ժամանակի վերաբերմամբ շատ անորոշ ձևով է խոսում. «Յառաջ քան զայս բազում ժամանակօք, վաղ աւուրբք և հնագոյն ամօք» մի նեղ և անձուկ ձորակի

[451] Օրբելեան, պլ. կդ:

մեջ, կրաշաղախ քարով շինված էր ս. Կարապետի անունով մի եկեղեցի «յոյժ սքանչելագործ և ահարկու և անուանի մերձակայ սահմանացն»:

Սրա մոտից բխում էր մի քաղցրահամ աղբյուր և ամբողջ ձորը զարդարված էր այգիներով և պտղատու ծառերով: «Նաև ի թանձրամած կաչկառուտին», նույն ձորում կար մի եկեղեցի ս. Փոկաս Հայրապետի անունով շինված և եկեղեցու մեջ, բեմի տակ բխում էր «ջուր սակաւ և ընդ ջրոյն ելանէր և ձէթ բժշկարար», «զորմէ լուաք ի հնագոյն աւանդութեանց, ասում է Օրբելեան, եթե բերեալ եղև ի նշխարաց սրբոյ Հայրապետին Փոկասու և անդ հանգուցեալ», որի անունով և տեղը ս. Փոկաս է կոչվել: «Եւ առնէր հրաշս զարմանալիս, զի ամենայն անբուժելի ցաւք և անհնարինք ի մարդկանէ՝ դնդութիւնք և բորոտութիւնք և վէրք բազմաժամանակեայ նեխեալք և ապականեալք, ի ժամանելն ի տեղին յայն հաւատովք, և ի լուանալ ի ջուրն և յօծանելն ձիթով, բժշկեալ լինէին. և եթե մահացու լինէր՝ առժամայն վախճանէր»: Եվ սրա համար նրա հռչակը մեծապես տարածված էր «ընդ ամենայն աշխարհ»:

Թանի-որ այս ուխտը հռչակ է ստացել յուր բժկարար ջրի շնորհիվ և քանի-որ ջրի պաշտամունքը բնապաշտության մնացորդ է, հետևապես և կարելի է ենթադրել, որ այս տեղը նույնիսկ հեթանոսության միջոցին որոշ սրբավայր է եղել և մինչև ԺԲ դարը գլխավորապես հիվանդ մարդկանց ուխտատեղի:

ԺԲ դարի սկզբում, երբ թուրքերն ավերեցին Սյունյաց աշխարհը, սպանեցին Սենեքերիմ թագավորին ու վերացրին Բաղաց թագավորությունը՝ այնպես, որ «լռեցին ամենայն ուխտք վանորէիցն ի պաշտամանէ», Հովհաննու վանքից Բաղաց իշխանական տոհմից Համտունյան Հասանի որդի Հովհաննես եպիսկոպոսը, «որ ունէր ընդ ձեռամբ զամենայն ազատս թագաւորութեան այնմ», այս ու այն կողմ երկար թափառելուց հետո, 1105 թվին եկել է Վայոց ձոր գավառը և կամեցել բնակվել «ի խորաձոր անապատին Նորավանից՝ մերձ անառիկ դղեկին Հրասկաբերդոյն, առ հիազօր և մեծաքանչ եկեղեցւոյն սրբոյ Կարապետին»: Սրա մոտ եկել է սրա եղբայր Համտուն իշխանը և այստեղ կրոնավոր դարձել:

Երկու եղբայրներն իրենց շուրջը հավաքելով կրոնավորներ և ճգնազգեցիկ մարդիկ, հեռացրել են այստեղից աշխարհական մարդկանց, տերունի նշաններ կանգնեցրել վանքի շուրջը, որպեսզի կանայք և լկտի մարդիկ չանցնեն, ապա սահմանակից գանձակեցի և տխարբերցի գյուղացիներից հողեր են գնել և հետզհետե սկսել են կազմակերպվել:

Տեղի ընտրությունն այդ խառնակ, անվերջ ասպատակությունների միջոցի համար, շատ հաջող է եղել, որովհետև Ամաղու ձորն ահագին, անանցանելի ժայռերով պատած լինելով՝ անմատչելի էր, միայն հարկավոր էր սրա մոտ բարձրացող Հրասեկա բերդը ձեռք ձգել, որին արդեն տիրացել էր

մի պարսիկ իշխան, որը նույնպես աշխատում էր որսալ և սպանել Հովհաննես եպիսկոպոսին և ավերել վանքը: Սակայն վերջինս, հմուտ լինելով պարսից լեզվին, պարսկական շորեր հագնելով, գնացել է Սպահան, ուր բժշկելով շահի մահամերձ որդուն՝ ստացել Հրասեկա և Անապատի (այժմյան Այարի) բերդերը և 12 ագարակ: Կես դար շարունակ առաջնորդություն անելուց հետո՝ Հովհաննես եպիսկոպոսը 1154 թվին վախճանվել է և թաղվել նույն վանքի մեջ և «զօրութիւնք մեծամեծք ելանեն ի գերեզմանէ նորա»: Նրա մոտ թաղվել է նրա եղբայր Համտուն իշխանը, որ վախճանվել է երեք տարի հետո (1157 թ.):

ԺԳ դարի երրորդ քառորդին Մեղրեցի Գրիգոր եպիսկոպոսի որդի Ստեփաննոս «չնորհազարդ» եպիսկոպոսը, որ Աթաբեկից Փախրը մսեհ (քրիստոսասեր) էր կոչվել՝ եկել հաստատվել է այս վանքի մեջ, ուր թաղվել էր և յուր հայրը 1168 թվին: Սա այստեղ հաստատել է թեմական աթոռ՝ Սյունյաց ավերված աթոռի փոխարեն, հաստատություն ստանալով Շնորհալու եղբայր Գրիգորիս կաթողիկոսից և Ելտկուզ սուլթանից, որից և նվեր է ստացել Ագարակի ձորը և Անապատի բերդը, միանգամայն աշխարհական հարկից ազատելով վանքերն ու վանական կալվածները: Ստեփաննոս եպիսկոպոսը վախճանվել է Արփա գյուղում 1216 թվին և մարմինը բերվել Նորավանք: Սրա քեռորդին, Տեր Սարգիս եպիսկոպոսը, որ դեռ Ստեփաննոս եպիսկոպոսից ձեռնադրված է եղել իբր նրա հաջորդ՝ զինել է Տաթևի վանքի նոր առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսին այն վիճակները, որ Ստեփաննոս եպիսկոպոսը, օգտվելով Սյունյաց աշխարհի ավերումից, հաստատել էր Նորավանքի վրա: Վերջինիս մնացել է միայն Վայոց ձորը, Ճահուկը և Նախիջևանը: Ապա Կոստանդին կաթողիկոսի մոտ գնալով, նրանից չրջաբերական թուղթ է առել, որ այլևս ոչ ոք չկարողանա խլել գոնե այդ երեք գավառները: Տաթևի և Նորավանքի եպիսկոպոսական աթոռները որպես միմյանցից անկախ առաջ են գնացել, մինչև որ Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելյանը կարողացել է նորից միացնել:

Սակայն Սարգիս եպիսկոպոսի ամենանշանավոր գործն այն է եղել, որ Վայոց ձորի իշխանաց իշխան Լիպարիտ Օրբելյանի հետ 1216 թվին սկսել է շինել «զգիհեցիկայարմար եկեղեցին ի Նորավանս» և 1221 թվին ավարտելով, մեծ հանդիսով օծել է ավել: Ներկա եղող բազմաթիվ նշանավոր անձերից Բուլպակ իշխանը, Լիպարիտ Օրբելյանի անները, նվիրել է այս «նորահերտ քաւարանին» Ագբերիս ագարակը՝ յուր սահմաններով:

Այս միջոցներին վանքից հափշտակված Ագարակի ձոր գյուղը Զաքարե սպասալարը Լիպարիտ իշխանի խնդրով վերադարձրել է Նորավանքին: Այս «բարեպաշտ» Լիպարիտ իշխանը ևս թաղվել է այս վանքում՝ բերվելով Գոլոշոի վանքից:

Ստեփաննոս եպիսկոպոսի ժամանակ Լիպարիտ իշխանի որդի Սմբատը, որ և «Թագաւոր», «արքայ» է կոչվել, 1261 թվին «չինէ ժամատուն մի հրաշակերտ յօրինուածովք՝ տեղի աղօթարանի, ի դրան ս. Նախավկային, ի տաշածոյ վիմանց և ի կոփածոյ քարանց, և...աննման զարդուք զարդարէ զեկեղեցին մեծածախ դանձուք յոսկւոյ և յարծաթոյ և ի պատուական մետաքսէից»:

Ստեփաննոս եպիսկոպոսին հաջորդել է նրա ազգական Վահրամ ճգնավորի որդի Սարգիս եպիսկոպոսը: Սրա ժամանակ Սմբատ իշխանը նվիրել է Նորավանքին Ավեշ, Անապատ և Ազատ գյուղերը և այգիներ Ակոռի, Արփա, Ամաղու, Հողմոց, Ծաղկաձոր և Զվա գյուղերում:

Այս Սարգիս եպիսկոպոսը Տարսայիճ իշխանի հրամանով չինել է Արփա գյուղի մոտ, Արփաչայի վրա, մի նշանավոր կամուրջ, որի հետքերն են մնում այժմ:

1273 թվին Սմբատ իշխանը Դավրիժում մեռել է և նրա մարմինը մեծ հանդեսով բերել են «ի հայրենի դամբարանն սուրբ ուխտին Նորավանից... ուր չինէ եղբայր իւր Տարսայիճն նմա Տուն տապանի և եկեղեցի յանուն սրբոյն Գրիգորի և անդ փոխէ ի հանգիստ զեղբայր իւր Սմբատ»: Այս շինութեան վերահսկողութիւնը Տարսայիճը հանձնել է Սիրանես անունով մի վարդապետի և հօգուտ այդ եկեղեցու հատկացրել է Հալիճոր գյուղից վաթսուն սպիտակ հարկ:[452]

Սարգիս եպիսկոպոսին հաջորդել է նրա քեռորդի Ստեփաննոս եպիսկոպոսը: Սա դիմել է Կոստանդին կաթողիկոսին և նրա շրջաբերական թղթով նորից հաստատել Նորավանքի վրա Վայոց ձորի, Ճահուկի և Նախիջևանի գավառները:

1287 թվին Տարսայիճի որդի Ստեփաննոսը Սյունյաց մետրոպոլիտ է ձեռնադրվել և միապետել Նորավանքի և Տաթևի աթոռները: Սարգիս եպիսկոպոսը Նորավանքում խոնարհութեամբ հնազանդվել է նրան և մնացել որպես վանքի առաջնորդ մինչև 1298 թվականը, երբ մեռել է և թաղվել Նորավանքի ժամատանը: Հավանորեն այս Սարգիս եպիսկոպոսն է չինել Հյուրատուն կոչված փոքրիկ մատուռը՝ Տարսայիճ իշխանի հրամանով:

1339 թվին Բուրթել իշխանը չինել է Աստվածածնի հրաշակերտ երկհարկանի եկեղեցին:

Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելյան պատմաբանը, որ Նորավանքի յոթներորդ առաջնորդն է եղած, և նույն վանքի ժամատան մեջ թաղված 1304 թվին, նվիրել է վանքին Աբասաշեն և ս. Սահակ Փողահանքի մեջ, յուր հայրենաբաժին Հրասեկա բերդը, Արատես գյուղը, Զվա գյուղը և այլն:

---

452 Արձանագրութիւն նույն եկեղեցու հյուսիսային պատին:

Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելյանին հաջորդել է Հովհաննես եպիսկոպոսը, որը նույնպես թաղված է ժամատան մեջ և որի չիրիմի վրա արձանագրված է «Հռչակավոր մետրապոլիտ Սիւնեաց»:

Այնուհետև տեղեկություններ պակասում են մինչև ԺԶ դարը: 1569 թվին մի ոմն եղիշա եպիսկոպոս մի խաչքար է կանգնել յուր հորեղբոր Առաքել եպիսկոպոսի հոգու փրկության համար:

Ս. Կարապետի գավթի տապանաքարերից մինը, 1571 թվից, պատկանում է Առաքել եպիսկոպոսին:

1813 թվին պարսից Ֆաթհալի շահը մի հրովարտակով «Ամազուլ կարմիր վանքի իրաւունքը սեփականացրել է Մելիք Սանբէգի որդի Պետրոս-բէգ Օրբելեանին...և այս նրա համար, որ նա (իւր երկու եղբայների հետ) յիշեալ գիւղի բոլոր եկամուտը դարձնելով վանքի օգտին, կարողանան խաղաղութեամբ աղօթել պետութեան մշտնջենական յարատևութեան համար»:[453]

1850-ական թվականներին այս մենաստանը ոչխարանոց է դարձել: 1872 թ. ս. Սինոդը տեսուչ է նշանակել վանքի վրա Արփա գյուղի ծխատեր քահանա Տեր Մկրտիչ Տեր Մկրտչյանցին, սակայն վերջինիս մահից հետո կրկին անտեր-անտիրական է թողնվել մինչև այժմ: Սրա շրջակա հողերն այժմ պատկանում են երևանցի եղիազարյաններին:

Վանքի նկարագրությունը. *ս. Կարապետի եկեղեցին. Լիպարիտ Օրբելյանի և Սարգիս եպիսկոպոսի 1221 թվին կառուցած այս եկեղեցին (նկ. 9) չինված է տաշած, կարմրավուն քարից: Սրա երկարությունն է՝ արտաքուստ 12,15, ներքուստ՝ 9,45 մ, լայնությունը՝ 9,50, իսկ ներքուստ՝ 8 մ, իսկ բարձրությունը մինչև գմբեթը՝ մոտ 9 մ:*

Եկեղեցին ներքուստ (նկ. 10) անույն է, մի սեղանով և չորս երկհարկ խորաններով: Չորս որմնասյուների վրա բոլորում են կիսաբոլոր կամարներ, կրելով մի մանյակ, որի վրա երբեմն բարձրացել է ութանկյուն, մոտ 3,5 մ տրամագիծ ունեցող գմբեթը:

Որմնասյուներից սեղանի երկու կողքերն գտնվողները բաղկացած են մի-մի, իսկ մյուսները երկուսական կիսասյուներից: Խոյակները կիսաբոլոր և քառանկյունի են, իսկ խարիսխները՝ մեկինը նախ կիսաբոլոր և ապա ութանկյունի, իսկ մյուսներինը՝ քառանկյունի, վրան բազմանկյունի, վերին եզրերը եռանկյունաձև կտրած:

Սեղանի երկու կողմի որմնասյուների խոյակները՝ միևնույն բարձրությամբ բոլորում են սեղանի շուրջը:

Սեղանը կիսաբոլոր է, 3,5 մ լայնության և 3,15 մ երկարության, նույնպիսի կոզակով և երկկամար, որոնք միմյանցից հեռու են 53 սմ տարածու-

---

[453]Հրովարտակի թարգմանությունը տպված է Քաջբերունու «Ճանապարհորդական նկատողութիւնք»-ի մեջ, Արարատ, 1890, եր. 402:

թյամբ: Այս տարածության մեջ բացվում են մի-մի դուռ, որ չորս ոտ սանդուխտերով բարձրանում են երկրորդ հարկի ավանդատան մեջ:

Կողակի մեջ, միմյանց հանդեպ կան երկու պատուհան, 1 մ բարձրությամբ և սեղանի երկու կողքերին կան հնդակաձև աստիճանի քարե սանդուխտներ: Սեղանի ճակատը չրջանակով եզրափակված է և երեք չարք փոքրիկ խաչերով զարդարված:



Նկ. 9



Նկ. 10

Բոլոր ավանդատներն էլ գրեթե միաչափ են, 2,30 մ երկարության, 1,15 մ լայնության և 2,60 մ բարձրության: Բոլորի մեջն էլ կան մի-մի կիսաբոլոր սեղան, մի-մի փոքրիկ, նեղ և երկար պատուհանով արևելյան կողմի պատի մեջ, այնպես որ արևմտյան կողմի ավանդատների պատուհանները բացվում են եկեղեցու մեջ:

Երկրորդ հարկի ավանդատների դռներն այսպես են. սեղանի երկու կողքին գտնվողներինը, ինչպես ասացինք, բացվում են սեղանի վրայից, կողակի մեջ, երկու կամարների միջև, իսկ արևմտյան կողմը գտնվողներինը՝ ներքին հարկի ավանդատան դռան վերև, դեպի որը բարձրանում է 7 աստիճանից բաղկացած մի քարե սանդուխտ:

Եկեղեցու հյուսիսային պատի մեջ բացվում է մի խորշ (պտրհան) 1,50 մ բարձրության, 85 սմ լայնության և 60 սմ խորության, որ գուցե մի ժամանակ պատուհան եղած լինի:

Եկեղեցին ունի միայն մի դուռ արևմտյան կողմում, որ 5 աստիճան սանդուխտով իջնում է դավթի մեջ: Ուրեմն եկեղեցու հատակը մոտավորապես 1,25 մետրաչափ բարձր է դավթի հատակից, հետևապես և կարելի է

ենթադրել, որ այստեղ մի ներքնահարկ, գուցե գաղտնի պահարան կա: Այս դուռը բավական լայն է՝ 1,30 մ և 1,90 մ էլ բարձրություն ունի, եզրափակված է կիսաբոլոր սյուներով և կիսաբոլոր կամարով:

Եկեղեցու արևելյան պատի մեջ, արտաքուստ, կան երկու ներսանկվածներ, որոնց մեջ կան կիսաբոլոր քանդակով եզրափակված ներսակված: Այս երկու ներսանկվածների միջև բացվում է մի երկար և նեղ, 1 մ բարձրության և 15 հարյուրամետր լայնության մի պատուհան, չորս կողմից երկու կիսաբոլոր և երկու քառանկյունի երիզավոր շրջանակով պատած:

Ավանդատների տեղերում կան մի-մի, փոքր և նեղ, 27 հարյուրամետր բարձրության և 12 հարյուրամետր լայնության պատուհան՝ փոքրիկ կամարով պատած:

Հարավային պատի բարձրում կա մի ռոզաս, շրջանակով պատած: Սրանից ներքև ամբողջ պատը բռնված է մի ավեր և հողով լցված եկեղեցու պատով:

Արևմտյան պատը գտնվում է գավթի մեջ և գրեթե ամբողջովին պատած է խաչքարերով: Բավական բարձր, գավթի ճեղունից վերև կա մի երկար և կամարակապ, գեղեցիկ խաչքար:

Հյուսիսային պատը նույնպես պատած է ս. Գրիգոր եկեղեցու պատով: Ներքուստ երևում է, որ այս պատի մեջ եղել է մի ռոզաս:

Ս.Կարապետի գավիթ-դամբարանը (շինված 1261 թ.): Ս. Կարապետի արևմտյան պատին կից կառուցված է մի մեծ գավիթ, որ իբր դամբարան է ծառայել Օրբելյան տոհմին: Շինված է կարմրավուն, սրբատաշ քարով, 8,30 մ երկարության, և 9,85 մ լայնության, այնպես, որ ս. Կարապետ եկեղեցուց 2,85 մ լայն է: Բարձրությունն ուղիղ 9 մ է: Գավիթը ներքուստ անսյուն է, միայն 12 որմնասյուն ունի, որոնցից երկուսը, որ արևելյան պատին կից են, հնգանկյունի են, իսկ մնացածը՝ կիսաբոլոր: Անկյուններուի չորս որմնասյուները համեմատաբար փոքր են: Խարիսխները որմնասյուների ձևի համեմատ են, հնգանկյուններինը՝ հնգանկյուն, իսկ կիսաբոլորները կիսաբոլոր են, բոլորն էլ քառանկյունի պատվանդանի վրա հանգած: Խոյակ միայն երկուսը՝ արևմտյան կողմերինն ունեն, քանդակներով զարդարված:

Արևելյան կողմից որմնասյուների վրա՝ պատին կից, բոլորում են երեք կիսաբոլոր կամարներ, որոնցից միջինն ընդգրկում է դուռը, իսկ կողքի երկուսի մեջ կանգնեցրած են գեղեցիկ, մեծ խաչքարեր՝ պատվանդանի վրա ամրացրած, աջ կողմում երկու, ձախում՝ երեք հատ: Որմնասյուներից բարձր, այս երեք կամարների մեջ էլ կան երկու գեղեցիկ, փոքրիկ խաչքար: Մի գեղեցիկ խաչքար էլ ընկած է հատակին և վերին մասը կոտրված (նկ. 11):

Մյուս որմնասյուների վրա 2,65 մ բարձրությամբ ձգվում է 40 հարյուրամետր լայնության և 25 հարյուրամետր հաստության մի կարնիզ, որի

Նկ. 11

վրա, յուրաքանչյուր պատի մեջ բացվում են մի-մի պատուհան, կողքերին մի-մի խորշ: Պատուհանները մի-մի այունակով բաժանվում են երկու կամարակապ մասի: Յուրաքանչյուր խորշի մեջ, պատվանդանի վրա կանգնեցրած է մի-մի գեղեցկաքանդակ խաչքար:

Ջեղունը բրգաձև բարձրանալով վերջանում է մի 1,70 մ երկարութեյան և 1 մ ավելի հաստութեյան քառանկյունի, երկու կտորից բաղկացած քարով, որի մեջ հետզհետե նեղանալով, զանազան քանդակներով զարդարված բացվում է երդիկը:

Այս ձեղունի վրա, արևելյան կողմը ամրացված են երկու խաչքար, իսկ հյուսիսային կողմը, առաջին խորշից բարձր քանդակված է մի ձիավոր, որ սուրը ձեռին կռվում է իր առաջ ծառս ելած վագրի հետ:

Այս գավիթն ունի երկու դուռ (երկուսն էլ 1,80x1,40 մ մեծութեյան), մինը հարավ-արևելյան անկյունում, որ այժմ կիսով չափ ծածկված է, մյուսը արևմտյան կողմը: Այս վերջինս մի քանի կիսասյուներով եզրափակված է և կիսաբոլոր երեք կամարով պսակված. կամարակալ քարի վրա ունի մի գեղեցիկ ցածրաքանդակ, որ ներկայացնում է Աստվածածինը՝ նստած, դրկում Հիսուսը: Նկատելի են նաև ծաղիկների մեջ երկու, դուցե մոգերի անդրիներ: Մի ցածրաքանդակ էլ սրանից բարձր կա, կրկնակ պատուհանի կամարին, որ ներկայացնում է Հայր Աստծուն, աջ ձեռը վերև պարզած իբրև թե օրհնում է, իսկ ձախ ձեռը դրված է կրծքին և բռի մեջ ունի մի թագակիր գլուխ: Հայր Աստծո գլխի վերև քանդակված է Սուրբ Հոգին աղավնակերպ: Աջ կողմում գտնվում է Հիսուսը՝ խաչված, ներքևում երկու հրեշտակ:

Ուշագրավ է նաև այս դռան հյուսիսային կողմում կանգնած գեղեցկաքանդակ խաչքարը, որի գագաթին քանդակված է Հիսուս՝ գահի վրա բազմած, ձախ ձեռին Ավետարանը: Հիսուսի երկու կողքերին կան մի-մի առաքյալ:

Ժամատան հատակը ծածկված է երեք շարք գեղեցիկ, մեծ տապանաքարերով, որոնց թիվը հասնում է 23-ի: Սրանց տապանագրերը գետեղելով արձանագրութեյան բաժնում՝ այստեղ հիշում ենք նշանավոր ննջեցյալների անունները.

Իշխանաց իշխան Այլիկում, որ վախճանվել է 1253-5 թ.,

Ասիա տիկին, Լիպարիտի կինը, Բուբաք իշխանի դուստրը, Տարսայիճ իշխանի մայրը, որ վախճանվել է 1263 թ.,

Փախրադուլայն, Լիպարիտի և Ասիայի որդին, Տարսայիճի և Սմբատի եղբայրը, վախճանվել է 1260 թ.,

Իվանե, Լիպարիտի որդին, որ վախճանվել է 1260 թ.,

Տեր Ստեփաննոս Սյունյաց եպիսկոպոս, որ վախճանվել է 1260 թ.,

Հովհաննես մետրապոլիտ Սյունյաց, վախճանվել է 1274 թ.,

Սարգիս Սյունյաց եպիսկոպոս և անհաղթ հռետոր, վախճանվել է 1298 թ.,

Ստեփաննոս Սյունյաց մետրապոլիտ, վախճանվել է 1304 թ.,

Տեր Գրիգոր Սյունյաց եպիսկոպոս, որ վախճանվել է 1305 թ.,

Առաքել եպիսկոպոս, որ վախճանվել է 1571 թ.,

Տեր Հովհաննես Սյունյաց եպիսկոպոս, որի մասին ոչինչ հայտնի չէ:

***Ս. Գրիգոր** (չինվել է 1273 թ.). ս.Կարապետ եկեղեցու հյուսիսային պատին կից կառուցված է ս. Գրիգորի եկեղեցին, նույնպիսի սրբատաշ, կարմրավուն քարով, ներքուստ 8,5 մ երկարության, 5 մ լայնության և մոտ 7 մ բարձրության:*

Եկեղեցին ներքուստ անսյուն է, թաղակապ և անդմբեթ: Հարավային պատի մեջտեղում մի որմնասյուն է բարձրանում, որից երկու կիսաբոլոր կամարներ են ձգվում աջ և ձախ, պատին կից, որոնք, սակայն հանդչում են ոչ թե որմնասյուների, այլ միայն խոյակների վրա, որ ցցված են պատի ծայրերում: Այսպիսի երկու կամարներ էլ հյուսիսային պատի վրա են բոլորում, հանկելով միմիայն երեք խոյակների վրա, առանց որմնասյուների:

Եկեղեցու կոզակը բոլորաձև է և թաղակապ, առանձին կամարով: Սեղանը բավական ցածր է, 90 հարյուրամետր և երկու կողմից չորսական աստիճանով սանդուխտներ ունի: Սեղանի երկու կողմը, ուր խորաններ պիտի լինեին, մի-մի մեծ խաչքար է կանգնեցրած, որոնց վրա բացի խաչաձև չրջանակով պատած խաչից, մի-մի հատ էլ մեծ աղավնի է քանդակված:

Սա իսկապես դամբարան է, որի հատակը ծածկված է երկու շարք դերեզմանաքարերով: Այստեղ թաղված են.

Սմբատ արքան, որ վախճանվել է 1273 թ.,

Աթաբակ Տարսայիճը, որ վախճանվել է 1289 թ.,

Փախրադոլը, Տարսայիճի որդին, որ վախճանվել է 1296 թ.,

Արքայուհի Մինա խաթունը, Աղվանից Ջալալ կողմնակալի դուստրը, որ վախճանվել է 1290 թ.,

Էլիկումը, Տարսայիճի որդին, որ վախճանվել է 1300 թ.,

Թամթայ խաթունը՝ Բուրթելի մայրը, որ վախճանվել է 1312 թ.: Սա Սմբատի և Տարսայիճի ավագ եղբայր Էլիկումի կինն է եղել, Գրիգոր Մարզպանյանի դուստրը:

Սմբատ՝ Բուրթելի տղան:

Բուղդան, մեծ Բուրթելի եղբայրը, Էլիկումի որդին և Տարսայիճի թոռը, որ վախճանվել է 1318 թ.:

Տապանաքարերից ուշագրավ են՝
Էլիկում իշխանի տապանաքարը.

Սա մի քառանկյունի տափարակ քար է, որի երեսին քանդակված է մարդկային, թագապսակ գլխով մի առյուծ, ալ կողքի վրա պառկած, ալ թաթը գլխի տակ, իսկ ձախը ձախ ազդրի վրա պարզած: Երկար պոչը փաթաթված է ձախ ոտի վրա և դրված ալի վրա (նկ. 12): Այս պատկերով ցանկացել են արտահայտել, որ «առիւծօրէն խրոխտ մռնչէր ընդ դէմ այլասեռ դնդին»:[454]

Նկ. 12

Երկրորդը՝ Բուրթելի որդի Սմբատ «վարդագոյն տղայի» դերեզմանաքարն է, որ նույնպես մի քառանկյունի տափարակ քար է, վրան երկու, միմյանց դեմ կանգնած աղավնիներ քանդակված, կտուցներում մի կոտրված վարդ, որով կամեցել են արտահայտել, թե Վարդագոյն տղան՝ Սմբատը, ապրեց որքան վարդը կապրի:



Նկ. 13

Այս եկեղեցու արևմտյան պատի մեջ բացվում է միակ դուռը՝ երկուական կիսաբոլոր որմնասյուներով եզրափակված և կիսաբոլոր կամարով պսակված: Սրա կամարակապ քարի վրա գրված է, որ Տարսայիճ իշխանը չինել է այս «դամբարանը» յուր եղբայր Սմբատ արքայի համար, 1275 թվին:

---

[454] *Այս տապանաքարի տապանագրից:*

Այս արձանագրություններից բարձր կան մի քանի հասարակ խաչեր, ապա մի շարք չափազանց գեղեցիկ վարդազարդեր և մի նրբաքանդակ խաչ: Բարձրում կա մի նեղ և երկար պատուհան, շրջանակով պատած և երկու վարդազարդով պսակված:

Եկեղեցին արտաքուստ սագաչեն է և շատ պարզ: Արևելյան պատի մեջ ունի մի նեղ և երկար պատուհան, գեղեցիկ և ինքնատիպ շրջանակով պատած (նկ. 13): Հարավային կողմը առանձին պատ չունի, այլ ս. Կարապետ եկեղեցու պատն է, հյուսիսային կողմի պատն էլ շատ պարզ է, ծածկված մի ընդարձակ արձանագրությունով:

Բուրթելաշեն եկեղեցին, թերևս ս. Աստվածածին (1339 թ.). Սա բարձրանում է հարթության արևելահարավային մասում և կանգնած է առանձին, ս. Կարապետ եկեղեցուց դեպի արևելահարավ մոտ 40 մ հեռու: Շինված է կարմրավուն, սրբատաշ քարից:

Եկեղեցին երկհարկանի է, որի ներքինը ծառայել է իբր դամբարան, իսկ վերինը՝ իբր աղոթատուն:

Վերին հարկը համեմատաբար ավելի փոքր է ներքինից, ավելի գեղեցիկ և նուրբ քանդակներով պատած:



Նկ. 14

Ներքին հարկը մի քառանկյունի շենք է. արտաքուստ 12,65 մ երկարության, 8,60 մ լայնության և 4,20 մ բարձրության, մի մետրաչափ էլ գետնի մակերևույթից ցածր է, այնպես որ պետք է իջնել չորս աստիճանի սանդուխտով: Պատերի հաստությունը մի-մի մետր է: Ներքին հարկը (նկ. 14) ներկայացնում է մի քառանյունի շենք, չորս որմնասյուներով, որոնց վրա բոլորում են պայտաձև կամարներ՝ պահպանելով թաղակապ ձեղունը: Սեղանի մասը, որ նույնպես քառանկյունի է և ոչ կիսաբոլոր, մի առանձին կամար է կազմում 1,35 մ լայնության, այնպես որ սրա և որմնասյուների միջև մնում են 51 հարյուրամետր լայնության և 25 հարյուրամետր խորության խորշեր: Արևմտյան կողմն էլ, որմնասյուներից նույնքան, այսինքն 55 հարյուրամետր հեռու, 1,70 մ լայնության դարձյալ մի առանձին կամար է կազմվում, որի մեջ, աջ և ձախ կողմերում բացվում են մի-մի շրջանակավոր խորշ կամ պատրհան, 1,10 մ բարձրության, 60 հարյուրամետր լայնության և 20 հարյուրամետր խորության:

Այս ներքին հարկը ոչ ավանդատներ և ոչ սեղան ունի: Արևելյան պատի մեջ, պատուհանից ներքև, բոլորում է մի քանդակազարդ կիսաբոլոր

կամար, որի մեջ քանդակված է մի մեծ խաչ, աջ և ձախ կողքերին մի-մի փոքրը, բարձրում՝ Հիսուսի ցածրաքանդակը: Առաստաղի վրա էլ քանդակված են ցուլ, առյուծ և արծիվ:

Հատակի վրա կան երեք մեծ գերեզմանաքարեր՝ առանց տապանագրի, մի քանիսն էլ կոտրատված են և խառնիխուռն ձգված: Երեք պատուհան և մի դուռն բացվում են սրա մեջ:

Վերին հարկը (նկ. 15) ներքինի երկարության և լայնության է, միայն յուրաքանչյուր անկյունից 1 մ լայնության և 2 մ երկարության կտրված լինելով, խաչաձև է դարձրած: Ներքուստ անսյուն է, մի սեղանով և երկու ավանդատնով. միայն արևմտյան կողմում, ավանդատների փոխարեն կան կամարակապ խորշեր: Ջեղունը մեծ մասամբ քանդված է, իսկ մեջն ընկած սյուներից հետևում է, որ սյունազարդ գմբեթ է ունեցել: Սեղանը բոլորաձև է, նույնպիսի կոզակով և երկու կողմում ունի մի-մի որմնասյուն: Սրանք բաղկացած են երկու կիսաբոլոր և սրանց մեջ մի քառանկյունի կիսասյուներից: Խոյակներն էլ նույն ձևի են, այսինքն կիսաբոլոր և քառանկյունի: Այս խոյակների նմանությամբ և նույն բարձրությամբ մի կարնիզ ձգվում է բոլոր պատերի վրա, պատուհանների մոտ կիսաշրջանակ կազմելով:



Նկ. 15

Սեղանի երկարությունն է 4,15 մ, իսկ լայնությունը 3 մ: Բեմը քարուքանդ է արված: Բոլորաձև կոզակի մեջտեղում բացվում է մի երկար և նեղ պատուհան, աջ և ձախ մի-մի դեղեցիկ խորշ: Լուսամուտից վերև կիսաբոլոր շրջանակի մեջ քանդակված է մի աղավնի և կողքերին գրված Հոդին Սուրբ Աստված: Սրանից բարձր քանդակված է Քրիստոս, չորեքկերպյանների վրա նստած, երկու կողքին մի-մի թևատարած հրեշտակ:

Ավանդատները շատ փոքր են, 1,95 մ երկարության, 1,05 մ լայնության և մոտ 2 մ էլ բարձրության: Ունեն կամարակապ սեղան և վեմ քար: Սրանց դռները զարդարված են պայտաձև կամարներով և մի-մի վարդազարդով: Նույնիսկ ձեղունը, որ կիսաբոլոր է, նույնպես զարդարված է խաչաձև քանդակներով, իսկ աջում կա մի պսակազարդ գլուխ:

Արևմտյան կողմի խորշերը 2 մ բարձրության են, 95 սմ լայնության, փոքրիկ կիսասյուներով եզրափակված և կիսաբոլոր կամարով զարդարված:

Այս խորշերին կից բարձրանում են մի-մի կիսաբոլոր որմնասյուն, կամարներ տալով ինչպես միմյանց վրա, այնպես և սեղանի երկու կողմը, ավանդատների վերև:

Եկեղեցին ունի երեք պատուհան և մի դուռ՝ արևմտյան կողմում, որոնք արտաքուստ պատած են նրբաքանդակ շրջանակներով:

Այս երկհարկ եկեղեցին, որի վերակազմած պատկերը ներկայացնում է նկ. 16, արտաքուստ հետևյալ տեսքն ունի



Նկ. 16

Արևելյան պատի գրեթե մեջտեղում կա մի շատ գեղեցիկ վարդազարդ՝ շրջապատված նախ խաչաձև և ապա ութանկյունի, լայն շրջանակներով: Վերջինիս միանում են երկու այլ, խաչաձև շրջանակներ, որոնք շրջապատում են վերև և ներքև գտնված պատուհանները: Ներքին պատուհանի կամարակալ քարի վրա ծաղկագրով գրված է.



Բուրթէլ իշխանաց իշխան (է) Տէր Ած աւգնեա:

Պատերը եզրափակված են կիսաբոլոր որմնասյուներով, իսկ վերին և ներքին հարկերի միացման տեղում գտնվում է մի կարնիզ, որ ծայրերից երեքական մետր ձգվելուց հետո ոչ թե միանում է, այլ բարձրանում վերև, և երեք տեղ ուղիղ անկյունով փոքր-ինչ կոտրվելով միանում է՝ շրջապատելով վերին պատուհանը և վարդապարդը:

Երկուական որմնասյուների վրա բոլորող կիսաբոլոր որմնակամարները զարդարում են վերին հարկի պատի աջ և ձախ կողմերը:

Հարավային կողմում ևս, երկու հարկերի միացման տեղում, ձգվում է նույնպիսի մի կարնիզ, որը սակայն վերև չի բարձրանում, այլ միանում է վերին հարկի միակ պատուհանի շրջանակին: Այս երկար և նեղ բյուզանդական պատուհանի երկու կողմը, երկուական որմնասյուների վրա, բոլորում են կիսաբոլոր որմնակամարներ: Պատի աջ կողմում ավանդատան վրա կա մի փոքրիկ կամարակապ պատուհան:

Ներքին հարկի պատը բոլորովին պարզ է և ունի միայն մի փոքրիկ պատուհան՝ երկար շրջանակով պատած:

Այս կողմին միանգամայն նման է հյուսիսայինին կողմը, միայն տարբերվում են պատուհանների շրջանակները և վերին հարկի պատուհանը, որ այժմ քանդված է և որ մի քանդակազարդ սյունակով երկու մասի է բաժանված եղել:

Արևմտյան կողմում ևս, երկու հարկերի միացման տեղում ձգվում է նույն կարնեզը, որ վերև բարձրանալով՝ երկու տեղ ուղիղ անկյունով փոքրանում է և ներփակում կամարակապ, միակ դուռը: Սրա վերև եղել է մի խաչաձև, փոքր և նեղ պատուհան, որ այժմ քանդված է, մի դեղեցիկ խաչքար դեռևս մնում է աջ կողմում:

Դռան երկու կողմում կան երկուական որմնասյուների վրա բոլորող կիսաբոլոր որմնակամարներ:

Ներքին հարկի մեջ ևս կա մի կամարակապ դուռ, որի երկու կողքից տասնչորսական աստիճանի քարե սանդուխտներ բարձրացնում են վերին հարկը:

Այս ներքին հարկի դուռը բավական լայն է, 1,20 մ, իսկ բարձրությունը հասնում է 1,70 մ: Եզրափակված է երկուական կլոր որմնասյուներով, որոնց մեջ ձգվում է քառանկյունի մի երիզ՝ քանդակներով դեղազարդված: Որմնասյուների վրա բոլորում է քանդակազարդ կիսաբոլոր մի կամար, որի աջ և ձախ կողմերում թառած են մարդկային գլխով մի-մի աղավնի: Դրվագների մի երիզ և մի շրջանակ պատում են ամբողջ դուռը: Կամարակապ քարի վրա կա մի ցածրաքանդակ, որ ներկայացնում է Աստվածածինը՝ Հիսուսը գրկում, բազկաթոռի վրա նստած և շրջապատված երկու թևատարած հրեշտակներով: Աստվածածնի գլխի վերև գրված է. Մայր Այ., աջ հրեշտակի տակ՝ Միք. (Միքայէլ), ձախի տակ՝ Գաբ. (Գաբրիէլ): Սրանցից բարձր շրջանակի վրա գրված է. Թվ. ՉՀԸ (1339):

Վերին հարկի դուռը նույնպես պատած է դեղեցիկ, քանդակազարդ, կիսաբոլոր կամարով, որի վրա թառած են երկու սիրամարգ: Քանդակների մի սքանչելի երիզ նույնպես պատում է այս կամարը, որի վերև արձանագրված է, որ Բուրթել իշխանաց իշխանը և նրա ամուսին Վախախը և Բեչկեն ու Իվանե որդիքը չինեցին այս եկեղեցին:

Այս դռան կամարակալ քարի վրա կա մի ցածրաքանդակ, որ ներկայացնում է Հիսուսին, աջ ձեռը պարզած՝ ինչպես անում են այժմ կրոնավորները՝ խաղաղություն տալիս, իսկ ձախ ձեռում՝ մի գիրք բռնած: Սրա երկու կողքին կանգնած են մի-մի առաքյալ, ձեռներին մի-մի բանալի: Հիսուսի գլխի վերև գրված է Յս. Քս., աջ առաքյալի տակը՝ Պղ. (Պողոս), ձախինը՝ Պետ. (Պետրոս):

Ճարտարապետական տեսակետից ուշագրավ են նաև հետևյալ 3 այուները, որոնցից երկուսը ընկած են ս. Աստվածածնի վերին, իսկ մինը՝ ներքին հարկում: Սրանք բոլորն էլ կլոր են, 40 հարյուրամետր տրամագծով: Առաջինի (նկ. 17) բարձրությունն է 1,40 մ, վրան մի թագակիր մարդու ցածրաքանդակ. թագը կոնուսաձև բարձրանում է և մի երիզով վերջանում: Այս երիզը կոտրված լինելով չի կարելի որոշել, թե խաչ է ձևացրել, թե մի ուրիշ բան: Հագածը ֆարաջի նման մի զգեստ է, ոչ այնքան լայն թևերով: Մեջքին կապած է մի գոտի, որի ծայրերը իջնում են մինչև ֆարաջի քղանցքը: Գոտու վրա կան զարդեր: Ձեռները մեկնված են այնպես, իբր թե կամենում է մի բան ցույց տալ: Այսն ներքին մասը կոտրված լինելով, չի կարելի որոշել, թե ագանելիքը ինչպիսին են եղել:

Նկ. 17

Նկ. 18

Նկ. 19

Երկրորդ սնից (նկ. 18) կա միայն երկու կտոր. մինը 85, մյուսը 35 հարյուրամետր բարձրության: Սրանց վրա ևս քանդակված է մի մարդ, ձեռին բռնած այս եկեղեցու կաղապարը: Դժբախտաբար մարդու դլխի մասը կոտրված է: Շատ հավանական է, որ սա եկեղեցին շինող Բուրթել իշխանի պատկերը եղած լինի:

Ներքին հարկում գտնված այսն վրա քանդակված է Աստվածածինը Քրիստոսը գրկում (նկ. 19):

Այս եկեղեցու հանդեպ ձգված է և մի ուրիշ այուն, նույն տրամագծով և 90 հարյուրամետր բարձրության: Սրա վրա ևս քանդակված է մի մարդ՝ ձեռին մի բազե բռնած: Գլխի մասը կոտրված է, հանդերձը ֆարաջու նման է և գոտիով ամրացած:



Նկ. 20

Հյուրատուն. Պարսպից դուրս արևելյան կողմում կա մի սագաչեն, փոքրիկ մատուռ (նկ. 20) թաղակապ, հասարակ չենքով, 4 մ երկարության, 2,35 մ լայնության և մոտ 5 մ բարձրության: Ունի մի հասարակ դուռ և երկու փոքրիկ պատուհան: Սրա բոլորաձև սեղանի երկու կողքին կան մի-մի խաչքար, որոնցից աջակողմյանը բավական մեծ է և կրում է իր վրա մի ընդարձակ արձանագրություն: Սա հայտնում է, թե Սարգիս եպիսկոպոսը «Հրամանաւ պարոնաց իւրոց Տարսայիճին, եղբաւր Սմբատայ արքայի և ամուսնոյ իւրոյ Մինայ խաթունին և եղբարց իւրոց Լիպարիտի և Թադային չինեցի զհիւրատունս», ապա հիշատակում է այն դյուղը, ջրաղացը, այգին, հողաբաժինը, որ հատկացրել է հյուրատունը, որպեսզի սրանց «մուտքն հիւրերին պէտքն, անցուր օտարքն ուտեն, իւր պարոնաց համար աղօթք անեն» և իրեն հիշեն:

Արձանագրություններ. *ս. Կարապետի հյուսիսային պատի վրա՝ ներքուստ.*

Ի թվն. ՈՀ (1221) կամաւն Այ. ես Լիպարիտ որդի Ալակումի եւ թոռն մեծին Աւրպելեանց զի հայրն իմ Ալակումին քենացաւ ի թագաւորէն Աբխազաց գնաց ի տուն Աթաբակի Ելտկուզանց եւ նա մեծաւ գատով (գթով) մեծարեաց զնա. եւ նմա զմեծ քաղաք Համիան, ես Լիպարիտս որդի նորա մանուկ գոլով դարձա վերստին ի լուսաւոր հաւատն սրբոյն Գրիգորի. եկի առ մեծ Աթաբակ Իւանէ. հայրենեացն փոխան երեւ զՀրաշկաբերդ իւր կերովն եւ ես չինեցի զվանքս, որ կոչի Նորավանք յառաջնորդութեան Տն. Սարգսի Սիւնեաց վերադիտողի. չինեցի զեկեղեցիս եւ Աւագ սբ. Նշանս առ Աթաբակ Իվանէին աւանդ էր... եւու այլ... գեղը զԱգարակի ձորու, Տխարբ իւր սահմանաւքն: Տէր Սարգիս եւ միաբանքս հաստատեցին ինձ զաւագ խորանն Դ. աւր ժամ կիրակէն ի շաբաթն եւ զհինգշաբաթն ի յամէն շաբաթու իմ եւ կենակցին իմոյ Ազփային. սահմանեցին ի տարին Տեառն ընդ առաջ աւրն զամէն եկեղեցիքս. արդ որք ընթերցայք զգիրս խնդրեցէք ի Քէ իմ որդոցն Ալուկումին, Սմպատա, Իւանէի, Փախրադաւլային, Տարսայիճին արեւշատութիւն: Արդ որք այս հաստատուն գրոյս հակառակ կայ յիմոց կամ յաւտարաց աւագաց Հայոց կամ ի Վրաց զայն գեղաւրէքն հանել չանան կամ զժամն խափանել ՅԺԸ հայրապետաց նզոված է եւ մեր մեղացն պարտական է, եւ թէ տաճիկ աւազ փոխի եւ հանել չանայ՝ իւր հաւատէն ու ի Մահմետէ ապիզար է ու Ռ. Ռ. Ռ. Նալաթ Նալաթ:[455]

Ժամատան հյուսիսային պատի վրա.

---

[455] *Սրա տակ գտնվում է Ստեփաննոս եպիսկոպոսի 1296 թ. արձանագրությունը: Տե՛ս ԴՀՎ III, էջ 211:*

Թվ. ՈՁԱ (1232) Գ(է)որգ զիմ հոգոյ արդիւնք տվի ի սբ. Նախավկայս մասն պահարանով ...եւ Տէր Սարգիս եւ միաբանք սահմանեցին զսբ Գէորգին չաբաթն Բ. պատարագ անխափան:[456]

Ժամատան հարավային պատի վրա.

Ցանուն Այ. ես Շատլոյս եկի ի Նորավանս եւ եկեղեցոյս միաբանեցայ ու զիմ ձեռատունկ այգին ի սբ. Նախավկայս տվի. Տէր Ստեփաննոս եւ միաբանք հաստատեցին Աստուածածնի տաւնին Ա. պատարագ ինձ Շատլոյսիս: Արդ որ մեր բանիս հակառակ կան ի մերոց կամ յաւտարաց կամ պարոնաց կամ ձեռնաւորաց հակառակին ՅԺԸ հայրապետացն նզովեալ եղեցի, իմ մեղացն պարտական եղեցի. ի թվին ՉԵ (1256) հաստատ է:[457]

Սրա մոտ.

Կամաւն Այ. ես Հաջարի եւ ամուսին եմ Մէլիք ոչ ունէաք զաւակ, երբ որ խոստացաք զմեր կանգնած երանելի սբ. Նշանս եւ տուաք զմեր ձեռատունկ այգին ու չորս դուռն տուն մեր շինած ի Զվայ. Տէր Սարգիս եւ միաբանք հաստատեցին ի տարին Դ. պատարագ: Կատարիչքն աւրհնին յԱյ. եւ խափանիչքն դատին ի Տեառնէ: Ով որ հակառակ կայ ՅԺԸ հայրապետացն նզովեալ եղիցի:[458]

Ժամատան հարավային պատի վրա ներքուստ.

Ի թվիս ՉԺ (1261). Այս գիր յիշատակի եւ արձան անջնջելի իմ Սմբատայ իշխանաց իշխանի որդւոյ մեծին Լիպարիտի...չինեցի զեկեղեցիքս, վերատին նորոգեցի... պահարանաւք եւ ետու իմ հայրենեացն Բ գիւղ ի սբ. Նախավկայս, զԱւէշ ու Անապատ եւ յԱկոռի զնորատունկ մեծ այգին իւր կիւրակաջրովն. Տէր Սարգիս եւ միաբանքս հաստատեցին զաւագ խորանն որ հանապազ պատարագ պարոնացն առնեն. զչաբաթն ու զկիրակի՝ Լիպարիտի, հինգշաբաթ՝ Ասփային, զերկուշաբաթ ու զերեքշաբաթն՝ Ելիկումին, չորեքշաբաթն՝ Իւանէին, ուրբաթն՝ Փախրադուլային... Արդ որ յետ մեր ժառանգեն ի տեղոյս յիմոց կամ յաւտարաց եւ այս հաստատեալ պայմանիս հակառակել ջանայ եւ կամ ի սբ. եկեղեցոյս հանել կամ զժամն խափանել՝ մեր մեղացն պարտական է եւ զանէծս ցաւագին զԿայէնին եւ զԳայիզին առցէ ի բաժին զՅուդային եւ զխաչահանացն. եթե ոք ի տաճիկէ յաւագ փոխի ու հանել ջանայ յԱյ...[459]

Սրա շարունակութիւնը գտնվում է արևմտյան պատի վրա.

Ցուսովն Այ. ես Սմբատ իշխանաց իշխան իմ սրտի յաւժարութեամբ տվի ի սբ. Նախավկայս իմ հայրենեացն զԱզատն իւր սահմանաւք լերամբք եւ դաշտաւք և զիմ... Գինէշեկաճոր վասն փրկութեան հոգւոյ եղբաւր որդւոյ

---

[456] Տե՛ս ԴՀՎ III, էջ 217:
[457] Տե՛ս ԴՀՎ III, էջ 218:
[458] Տե՛ս ԴՀՎ III, էջ 224:
[459] Տե՛ս ԴՀՎ III, էջ 218-219:

իմոյ Բուրթէլին, որ դեռաբոյս նորափթիթ փոխեցաւ առ Քս. պատերազմաւ ի դաշտին Սկիւթացւոց. խաւար էած տեսողաց. եւ... Գ. իւր նուաւ զաւակ յիշատակի: Տէր Սարգիս և այլ միաբանքս հաստատեցին ժԵ աւր պատարագ. Ե. աւր աւագ տաւներն Ե. Պետրոսի և Պաւղոսի տաւնին եւ Յովհաննու եւ Յակովբայ եւ Նոր Կիրակէին: Կատարիչքն աւրհնին եւ խափանիչքն դատին ի Տէ. եւ որ զգեղն եւ զայգին հանել ջանայ, ՅԺԸ հայրապետացն նզովեալ եղիցի:[460]

Կամաւն Այ. ի տէրութեան իշխանաց իշխանի Սմբատայ եւ յառաջնորդութեան Գրիգորի ես Ասփասլան եւ Մխիթար քահանայ Այ...եւ տվի զԴահեկոյ քարոյ այգին Նախավկայս...եւ գետովն, Գրիգոր եւ այլ միաբանք տվին Համբարձման աւրն զամենայն... տիրացու Դաւիթն... եկեղեցիքս պատարագ Ը. աւր. Ա. Թամարին, Ե. Ալփասլանին Բ. Դամաին: Կատարիչքն աւրհնին յԱյ:[461]

Ս. Կարապետի արևմտյան պատի կամարի վրա, ներքուստ.

Ես Տէր Սարգիս, քեռորդի Տէր Ստեփաննոսի Սիւնեաց արհի եպիսկոպոսի շինեցի զեկեղեցիս ի բարեխաւսութիւն ինձ եւ Լիպարտին եւ նախնեաց մերոց եւ երկուց հարազատ եղբարցն, որ սպանան ի Թուրքաց պատերազմաց. վասն որոյ աղաչեմ հանդիպողացդ յիշել զմեզ ի Քս.:[462]

Ս. Կարապետի արևմտյան կողմի ներքին ավանդատան հարավային պատի վրա.

Ցանուն Այ. այս գիր է Տեր Սարգսի եւ սպասաւորաց սբ. Կարապետիս, որ տվաք զխորանս Հասանայ Ամաղուհացւոյ, որ նորա հալալ արդեամբ շինեցավ. ի տարին Բ. աւր ժամ հաստատեցաք զՊետրոսի եւ զՊաւղոսի տաւնին. Ա. Հասանայ, Ա. իւր կնոջն եւ որ հակառակ...[463]

Ժամատան արևմտյան պատի վրա (նկ. 21).

Նկ. 21

---

[460] *Տե՛ս ԴՀՎ. III, էջ 218-219:*
[461] *Տե՛ս ԴՀՎ. III, էջ 219:*
[462] *Տե՛ս ԴՀՎ. III, էջ 212:*
[463] *Տե՛ս ԴՀՎ. III, էջ 212:*

Յանուն Այ. ես Սարկաւագ երէց որդի Մկրտչին եկի ի Նորավանս... Նշանիս առաջի, իմ սրտի յաւժարութեամբ զիմ գնած հայրենիքն...զխաչ... դենց այգին եւ զիմ հովատունս իւր սահմանաւն... եւ խոճատաքատուն... յԵղեգնաձոր իմ գնած՝ եկեղեցոյս տվի, որ ի տարին միաբանքն սահմանեն պատարագ ի տաւնին Աստուածածնի...յիս հայրենեաց Թվ. ՉԻ (1271):[464]

Ս. Գրիգոր դամբարանի դռան վերև.

Կամաւն Այ. ես Տարսայիճ իշխանաց իշխան չինեցի զդամբարանս յաղագս եղբաւր իմոյ Սմբատայ արքայինվասնորոյ աղաչեմ յիշել, Թվին ՉԻԴ (1275).

Նուին դամբարանի հյուսիսային պատի վրա մեծ մեծ տառերով.

Կամաւն Այ. այս իմ գիր է Տարսայիճիս իշխանաց իշխանիս, որ իշխեցող էի Սիւնեաց նահանգիս Որոտան եւ Շնհերոյ, որ եկեղեցի տվի չինել Սիրանէս վարդապետին ու Հալիճորոյ ու Շնհերոյ հայրենիքն տվի իւր սահմանաւքն յորդեց յորդիքն նորա հայրենիք տվի ու ինչ զեկեղեցին լմնեցին Խիշայ կուտայաք Ծ. սպիտակի այն խիլային փոխան զԱղազար Աղերծեցին տվաք նորայ հայրենիքն լինի, նորայ գեղին կա յազգէ յազգ ու զՀալէճորոյ հարկն սահմանեցաք ի տարումն վաթսուն սպիտակ տա, այլ ազատ է յամէն հարկաց. այլ ոչ ամիրա, ոչ պարոն, ոչ ձեռնաւորի ոչինչ հաշիւ չկայ հետ Հալէճորոյ ոչ չոր տացի ոչ այլ ոչ ում, ով յետ մեր զայս հաստատ վճիռս խափանէ ու զմեր հրամանքս ունայն առնէ յերից սուրբ ժողովոցն որոշեալ եղիցի եւ մասն եւ բաժին ընդ Յուդայի եւ ընդ խաչահանուացն եղիցի. ես Տարսայիճս իմ ձեռաւք հաստատեցի զգիրս զայս:[465]

Ժամատան արևմտյան պատի վրա (նկ. 22).



Նկ. 22

Կամաւն Այ ես Ամիրայս, թոռն Զուրջին եկի ի Նորավանս առաջի սբ. Նշանիս ու զՅաղթիա այգին որ ի պարոն Տարսայիճէն գնեցի Դ. Ռ. դրամաւ

---

[464] *Տե՛ս ԴՀՎ III, էջ 220:*

[465] *Տե՛ս ԴՀՎ III, էջ 234-235:*

և Գ. ջորի տվի սբ. Ուխտիս վասն իմ հոգւոյս և իմ մաւրն Գոհար խաթունին: Տէր Ստեփաննոս և միաբանք կարգեցին Դ. ժամ. Բ. ինձ, Բ. իմ մաւրն Հռիփսիմե(ա)նց տաւնին: Արդ՝ թէ ի մեր յետամնացողաց կամ ի պարոնաց և յաւագաց հակառակել չանայ ու զիմ. Դ. Ռ. դրամն և Գ. ջորին ի Նորավանիցն հանէ...ի սբ. Երրորդութենէն և յերից սբ. Ժողովոցն նզովեալ եղիցի և բաժին զՅուդային առցէ, եւ մեր մեղացն պարտական եղիցի. ի թիվն ՉԽ (1291) հաստատ է գիրս կամաւն Այ.:[466]

Դամբարանի հյուսիսային պատի վրա.

Կամաւ Ամենակալին Աստուծոյ այս գիր յիշատակի եւ արձան անջնջելի Մինա խաթունիս է, դստեր մեծի արքային Ջալալին և ամուսնո մեծարգի իշխանի Տարսայիճին, և իմ որդւոյս Ջալալին, որ գնեցաք ի մեր հալալ ընչից զՆորպետին այգին ի Վէդի և զայլն ի Կորդո գնեցաք ի հայրենատիրացն եւ տնկեցաք. և բոլորեցի զԴ դեհն. Ա. ճակատն Բնաշահու Ահնուէլպղումին այգին. Ա. ճակատն իրիցին այգին, Ա. ճակատն Որբէկին այգին, Ա. ճակատն Բրէհիմին այգին: Տեղն ԺԲ գրվի զոր յառաջ այլ տված էր վանիցս՝ մեք մեր յաւժարութեամբ վերստին տվաք ի Նորավանս յԱւագ սբ. Նշանս և ի Տր. Ստեփաննոս վասն հոգեց արքասաշուք տուռ իմո տարսաիճին. իսկ Տր. Ստեփաննոս և միաբան եղբարքս կարգեցին ժամ յիշատակ անջինջ գտաւնին Համբարձման, զի յայնմ աւուր հանդիսիւ աւրհնեսցեն զչիրիմս նորա և Ժ. աւր պատարագ մատչի. և այս տուրքս ոչ ի զրկանց, ոչ ի գեղէ, ոչ ի պարոնահողաց, այլ մեր հալալ դրամագին, ազատ յամէն հարկաց, որ ոչ ում հաշիւ չկա ի հետ: Արդ՝ թէ ի մերոցս կամ յաւտարաց կամ յիշխանաց կամ ի ձեռնաւորաց զինչ և իցէ պատճառաւ նենգել կամ հանել չանան զայս այգիս ի Նորավանից կտրեալ լիցին նոքա յերկու կենաց, ընդ աւձին և ընդ սատանաի նզովեալ եղիցի յամենակալ բերանէն յԱյ. զԿայէնին և զՅուդային, զՅուլիանոսին առցէ վարձ, ընդ Վասակա ուրացողին դատեսցի, յերից սուրբ ժողովոցն և յամենայն սրբոց անիծեալ լիցի ի մահ եւ ի կեանք. եւ թէ տաճկաւ ոք փոխի և հանել չանայ Ռ. Ռ. Ռ. նահլաթ լինի. յիւր Մահմետէն ապիզար լինի. ի թիվն ՉԽԱ (1292) հաստատ է գիրս կամաւն Այ.:[467]

Ժամատան հյուսիսային պատի աջ կողմը.

Կամաւն Այ. ես Խաթունս՝ դուստր Խալայչահի միաբանեցայ սբ. Նշանիս ու տվի Ց. սպիտակ: Ի յԱւափա այգի գնեցի մաւտ ի...Տէր Սարգիս և միաբանք սահմանեցին Բ. աւր պատարագ Խաթունիս:

Սրա տակ.

---

[466] Տե՛ս ԴՀՎ. III. էջ 220:

[467] Տե՛ս ԴՀՎ. III. էջ 238-239:

Կամաւն Այ. ես Գոնցէ՝ թոռն Հասանայ, դուստր պարոն Խաւսրավկայ միաբանեցայ սբ. ուխտիս Նորավանից վասն բարութեան իշխանաց իշխանայ Բուրթէլին եւ տվի զԽանագահի էգին Ամադինի հոգւոյն. միաբանքն խոստացան Ջ. պատարագ Ցայտնութեան ութաւրացն. Բ. ինճ. Բ. Ամադինայ Բ. Հասանայ: Այս մեր թուղթն է. թիվն ՉԽԴ (1295).

Ս. Կարապետի հյուսիսային պատի վրա, ներքուստ, ՈՀ թվականի արձանագրության տակ.

Շնորհաւք և ողորմութեամբ սբ. Երրորդութեան, յուսովն առ Քս. ես յոգնամեղ և ապիկար Ստեփաննոս, որդի իշխանաց իշխանին Տարսայիճին, եպիսկոպոս Սիւնեաց եւ տեսուչ երկնահանդէս աթոռոյս Տաթևոյս եւ Նորավանից, յիշելով զունայնութիւն վայրկենի կենացս, եառւ զիմ հոգւոյ մասն եւ բաժին Այ. եւ ժառանգ(ութիւն) սբ եկեղեցւոյս զՋուվայ գիւղն իւր բոլոր սահմանաւքն ազատ յամեն յաշխարհական հարկաց ի դիւանէ, ի խալանէ եւ յամեն չարէ, զոր գնե(ա)լ էի յիմ ախբաւրէն ի Ջալալէն եւ տվեալ ԻԱ հազար դրամ եւ Փողահանքն զսբ. Սահակ եւ զԱբասաշէն. եւ այլ եառւ յիմ հալալ հայրենաբաժնէն ի Հրաշկաբերդ Քարկովիյեանքն իւր սահմանաւքն յեղեգիսաձորին, զԱրատեան իւր գեղաւքն եւ ամէն հայրենիքն իմ արարի ժառանգութիւն սբ. ուխտ(ի)ս Նորավանից հայրենիք անխախտ եւ անդառնալի մինչ ի գալուստն Այ. եւ այլ բազումս: Եւ կամաւ միաբան եղբարցս Հաստատեցի ինձ յիշատակ ի սա զի զկնի կրկնազատկին պատարագեսցեն եւ ամէն աւր անբիծք եւ աւետարան ինչ ի Հոգոյ գալուստն. եւ զաւր Պենտէկոստէին մեզ յիշատակ կատարեն զենմամբ զուարակաց եւ առատ ռոճկաւք, եւ յամէն եկեղեցիքս մեզ պատարագ. Թերևս զտից յԱստուած Հոգոյն ողորմութիւն եղկելի հոգւոյս ի մեծի աւուրն աներեկի, ուր բանքն սպառին եւ գործքն թագաւորեն: Եւ արդ՝ եթէ ոք զայս խաբանել խորհի կամ յափշտակել զտուրքս եւ կամ ի ժառանգաւորացդ ծուլանալ եղեալ սահմանիս, ընդ անլոյծ նզովիւք եղիցին յԱյ. ամենակալէն եւ յամենայն սրբոց յերկնաւորաց եւ յերկրաւորաց, ընդ Կայէնի եւ ընդ Ցուդայի եւ Արիոսի պատժեալ խայտառակեսցին եւ մեր մեղացն պարտական եղիցին. եւ թե տաճիկ փոխի եւ խլել ջանայ, յԱյ. եւ ամենայն սրբոց նզոված եղիցի, եւ յիւր փեղամբարէն ի Մահմետէն ապիզար. Ռ. Ռ. նալաթ լինի մեռելաւք եւ կենդանաւք ի թիվս ՉԽԷ (1298) հաստատ է:[468]

Մի քիչ ներքև.

Կամաւն Այ. ես Տարսայիճս եառւ էրենարտն իւր սահմանաւքն Նորավանից վանս:

Կամաւն Այ. ես Սանճար որդի Տարնորաղուին ոչ ունելով զաւակ երկրի՝ որ ստացայ ինձ զաւակ զսբ. Նշան եւ տվի իմ հալալ հայրենեացն զՏանճեկ

---

[468] *Տե՛ս ԴՀՎ. III. էջ 215-216:*

իւր սահմանաւքն եւ այգովն ի Նորավանքս. եւ Տէր Ստեփաննոս եւ միաբանքս սահմանեցին ինձ ի տարին Ե. Ժամ. Թէ ոք խափանել չանա, ի սբ. Երրորդութենէն նզովեալ եղիցի եւ մասն զՅուդային եւ զխաչահանուացն առցէ եւ մեր մեղացն պարտական եղիցի. ի Թվիս ՉԾԲ (1303).[469]

Դամբարանի հյուսիսային պատի վրա, ներքևում.

Կամաւն Այ. ի հայրապետութեան Տէր Աւրբէլի Յովանէս Սիւնեաց եպիսկոպոսի ես Գրիգոր Թոռն Դոփին գնեցի ի Դամեկոբարոյ զՇատենց եւ զՄարգարտայ այգին ՌՇ սպիտակ. եւ ետու ի սբ. ուխտս. վասն որոյ ի տարին ամուսնոյ իմոյ Ասփային, դատեր արքայաշուք իշխանին Տարսայիճին պատարագ Գ. աւր փոխման Աստուածածնին. Ա. Տեառնընդառաջին, Բ. բուն բարեկենդանին, չաբաթ աւրն եւ կիւրակէն անխափան: Կատարիչքն աւրհնին յԱյ. եւ խափանիչքն դատին ի Տեառնէ. Թիւն ՉԿԱ (1312).[470]

Նկ. 23

Ս. Աստվածածնի վերին դռան բարձրում.

Կամաւն Այ. ես պարոն Բուրթէլ իշխանաց իշխան եւ ամուսինն իմ Վախխա եւ որդիք իմ Բէչկէն եւ Իվանէ կանգնեցաք զեկեղեցիս ի մեր հալալ արդեանց.[471]

Այս արձանագրության երկրորդ քարը վայր էր ընկած, որ ես նկարել տվի: Սա պարունակում է արձանագրության հետևյալ տողերը.

---

[469] Տե՛ս ԴՀՎ. III, էջ 222:
[470] Տե՛ս ԴՀՎ. III, էջ 239:
[471] Տե՛ս ԴՀՎ. III, էջ 240:

Պարոն Բիւր(թէլ) (ե)ւ ամուսին իմ Վ(ախախ եւ որդի)ք կանգ(նեցաք) զեկեղեցիս մեր Հալալ (արդեանց):

Ս. Աստվածածնի արեւելյան ներքին պատուհանի վերև.

Բուրթէլ իշխանաց իշխանի Տէր Աստուած աւգնէ:

«Հյուրատուն» կոչուած մատուռի հարավային պատի միջի խաչքարի վրա.

Ցուսովն որ առ Ած. ես Սարգիս անարժան եպիսկոպոս կամաւ եւ հրամանաւ ամենաւրհնեալ պարոնացն իմոց Տարսայիճին, եղբաւր Սմբատայ արքայի եւ ամուսնոյ իւրոյ Մինայ Խաթունին եւ եղբարց իւրոց Լիբարիտի եւ Թաղային, չինեցի զհիւրատունս եւ ետու հիւրանոցս գիւղ զԱւէշ իւր ամէն սահմանաւքն, եւ զերկու ակն ի ջաղացն յԱրփայ եւ այգի զԱխթամարենց բաժինն ի վանքս զԹոմային, զՈվանէսին եւ զՊետրոսին յԱկոռի զՆծնսադուռն ի Վէդէ զպարոնէն գնած բաժինն հող, ի Նրբոյն զՄարական փորակ, զԱգարակի ձոր՝ Վարդուտն, յԱզատին՝ զՃադուռնն Սարին՝ զԱկներ, յԱնապատ զթզենին: Որ զայսոց մուտքն ի հիւրերին պէտքն անցուորաւտարքն եւ կամ ուտելիքն ուտեն, պարոնացն երախտաւորացն աղաւթք եւ Ած. ողորմեա ասեն. Ցիշելով զիս եւ զիմ աշխատասէր Առաքելն. Որ յետ մեր զայս սահմանեալն...յայս Հիւրատունէս հանել չանայ կամ խափանել՝ ինքն յԱյ. դատի եւ մեր մեղացն պարտական է:[472]

Ս. Կարապետի Հարավային ավանդատան դռան վերև դրված են մի քանի հին տապանաքարեր և մի խաչքար, վերջինս նույնիսկ գլխիվայր: Սրանց տապանադրերն են.

Ցիշեա Քրիստոս Ած. զՍարգսի հոգին եւ ողորմեա թվ. ՈԺ (1201).

Ցիշեա Քրիստոս Աստուած...եւ ողոմեա.

Ի թվ. ՈԿԲ (1213) կանգնեցաւ խաչս ի բարեխաւսութիւն Գրիգորի, որ փոխեցաւ ի Քս....

Մի խաչքարի վրա.

Այս նշան աւծելոյն Այ. կանգնեալ ի բարեխաւսութիւն իշխանաց իշխանի Հասանայ որդւոյ Սենեքերիմայ արքայի, որ կէսաւրեայ փոխեցաւ առ Քս. զրկեալ ի հայրենի փառացն...

Ժամատան մեջ. Ա. շարքի Գ. դամբան.

Բարեպաշտ իշխանաց իշխանին Այլիկումի է տապանս:[473]

Ժամատան Ա. շարքի Դ. դամբան.

Գեղեցկածաղիկն է Իվանէ:[474]

Ժամատան մեջ Ա. շարքի Ե. դամբան.

---

[472] *Տե՛ս ԴՀՎ. III. էջ 246:*

[473] *Վախճանվել է 1253-5 թթ.:*

[474] *Լիպարիտի որդին է, որ վախճանվել է 1260 թ.:*

Քաջ սպառազէնն է Փախրադուլայն:[475]

Ժամատան մեջ Ա. չարքի Ը. դամբան.

Տէր Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս. թվ. ՉԹ (1260).

Ժամատան մեջ Ա. չարքի Զ. դամբան.

Զբարեպաշտ մայր իշխանացս զԱսփնայն յիշեցէք:[476]

Մի խաչքարի վրա.

ՉԺԸ (1269). Ես Դեղ կանգնեցի զխաչս յիշատակ հոգւոյ իմոյ եւ բարեխաւսութիւն...

Ս. Գրիգորի դամբարանում Ա. չարքի Բ. դամբան.

Սմբատ արքային է տապանս. յիշեցէք թվ. ՉԻԲ (1273):

Ժամատան մեջ Գ. չարքի ԺԹ. դամբան.

Թվիս ՉԻԳ (1274). Տուն իմաստից եւ հանճարոյ Աւրպել Յովհաննէս հռչակաւոր մետրապոլիտ Սիւնեաց:

Ժամատան հարաւային կողմը մի խաչքարի վրա.

Կամաւն Այ. ես Կուգոր որդի Ախթամարին կանգնեցի զխաչս յաղագս մաւր իմոյ Աափային: Որ երկրպագէք յիշեցէք ի Քս. ի թվիս ՉԼԳ (1284):

Սրա մոտ մի այլ խաչքարի վրա.

Կամաւն Այ. ես Կուգոր որդի մեծ Ախթամարին կանգեցի զխաչս եղբաւր իմոյ Փալկայ որ կիսաւերայ փոխեցաւ ի Քս. թվ. ՉԼԴ (1285):

Ս. Գրիգորի դամբարանում Ա. չարքի Դ. դամբանի վրա.

Ի թվիս ՉԼԸ (1289). Այս է հանգիստ արքայաշուք կողմնակալին հզաւր եւ մեծ գործակալին եւ քաջապահ մենամարտին Աթաբակ Տարսայիճին:

Մի խաչքարի վրա.

ՉՏիրատուր եւ զամուսին իւր Խաթուն յիշեցէք. թվին ՉՀ (1291):

Ժամատան մեջ. ԺԷ դամբան.

Զգեղեցկափթիթ ծաղիկն եւ զքաջուղէշ մանուկն վաղաթառամ Իվանէ, յիշեցէք թվ. ՉՀԳ (1294):

Ժամատան մեջ Բ. չարք ԺԲ. դամբան.

Զբարեպաշտ տիկինն զՆաթէլն յիշեցէք. թվ. ՉՀԴ (1295):

Ժամատան մեջ Բ. չարք ԺԶ. դամբան.

Վայելչագեղ եւ դեռաբոյս պատանին Ուլուան յիշեցէք. թվ. ՉՀԴ (1295):

Ս. Գրիգորի դամբարանում Ա. չարքի Ա. դամբանի վրա.

Այս յարկ տապանի բանդ բարկութեան է եւ գուբ դերութեան հրաշագեղ մանկանն եւ քաջազաւր երիտասարդին Փախրադաւլին որդւոյ մեծափառ իշխանին Տարսայիճին, վասն որոյ աղաչեմ յիշել. թվին ՉՀԵ (1296):[477]

Ս. Գրիգորի դամբարանի Բ. չարքի Բ. դամբանի վրա.

---

[475] Տարսայիճի եւ Սմբատի եղբայրն է, վախճանվել է 1260 թ.:

[476] Սա Տարսայիճի Հոր՝ Լիպարիտի կինն է, Բուբաք իշխանի դուստրը, վախճանված 1263 թ.:

[477] Տե՛ս ԴՀՎ. III, էջ 236-237:

Ի թվին ՉԽԷ (1298). Թագաւորմ արքայուհին է Մինայ խաթունն, դուստր մեծ կողմնակալին Աղուանից Ջալալին:

Ժամատան մէջ Ա. շարք Ժ. դամբան.

Այս չիրիմ չնորհալիը Սարգսի է Սիւնեաց եպիսկոպոսի եւ անյաղթ հռետորի. թվ. ՉԽԷ (1298):

Ս. Գրիգորի դամբարանի Ա. շարքի Գ. դամբանի վրա, ուր կա մի առյուծի ցածրաքանդակ (նկ. 12):

Թվին ՉԽԹ (1300) Զգեղեցկատիպն էլիկում, որդի մեծին Տարսայիճին, որ առիւծաւրէն խրոխտ մռնչէր ընդդէմ այլասեռ գնդին, աղաչեմ յիշել յաղաւթս:

Դամբարանի հյուսիսային պատի մէջ կողքի վրա դրված մի խաչքարի վրա.

Զայս նշան Յիսուսի խաչելոյն...Տեառն Աստուծոյ վասն փրկութեան մարդկան՝ կանգնէ յուսով քրիստոսասէր իշխանուհի Թաթմա խաթուն ի բարեխաւսութիւն գլի...իւր մեծափառ իշխանին էլիկումին, եւ վասն յերկար կենաց զաւակաց իւրոց Բուրթէլին եւ Բուղդային:

Ժամատան մէջ Գ. շարք Ի. դամբան.

Ի թվին ՉԾԳ (1304) Այս է չիրիմ հանգստեան մեծի մետրապոլիտ Սիւնեաց Ստեփաննոսի:

Ժամատան մէջ Ա. շարք Թ. դամբան:

Տէր Գրիգոր Սիւնեաց եպիսկոպոս թվ. ՉԾԴ (1305):

Ժամատան արևմտյան դռան աջ կողմը կանգնած գեղեցիկ խաչքարի վրա.

Ես Թամթա խաթունս կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգւո Աթապէկ Տարսաիճին եւ յարեւշատութիւն որդւոց իմոց Բուրթէլին և Բուղդային. թիւն ՉԾԷ (1308). Մոմիկ վարդապետ յիշեցէք:

Ս. Գրիգորի դամբարանի Բ. շարքի Դ. դամբանի վրա.

Զաշխարհաշէն դչխոյափառ պարոն զԹաթմայ խաթունն, մայր Բուրթէլին յիշեցէք[478] թվին ՉԿԱ (1312):

Ժամատան արևելյան պատի հյուսիսային կողմի խաչքարի վրա.

Ի թվիս ՉԺ (1261). Ի կամս ողորմութեան Արարչին ես Բուրթել որդի էլիկումին, որդւոյ մեծ Լիպարտին կանգնեցի զխաչ աստուածընկալ սբ. նշանս մաւր իմոյ Թաթմայ. յիշատակ յաւիտենից. աղաչեմ յաղաւթս յիշեցէք ի Քս.

Ս. Կարապետի ժամատան մէջ Բ. շարք ԺԱ. դամբան.

Զբարեպաշտ պարոնն զՆաթէլն յիշեցէք. թվ. ՉԿԲ (1313):

Ս. Գրիգորի դամբարանի Բ. շարքի Գ. գերեզմանաքարի վրա.

---

[478] *Թաթմա խաթունը Տարսայիճի որդի էլիկում Գ կինն է եղել:*

Եղբայր մեծ Բուրթէլին զգեղահրաշ Բուղդային երիտասարդ հասակաւ, որ յետ յոլով քաջ մրցմանց տիգախոցեալ զանթառամն ընկալաւ զպսակ. թվին ՉԿԷ (1318):

Կոտրված և դուրս ձգված մի դերեզմանաքարի վրա.

Վարդապոյն տղային Սմպատ որդի Բուրթէլին. յիշեցէք.

Ժամատան մէջ Գ. շարք Ի Գ. դամբան.

Այս է հանգիստ Առաքէլ եպիսկոպոսին, որ հանգեաւ թվ. ՌԻ (1571):

Ժամատան մէջ Բ. շարք Ժ Դ. դամբան.

Զվաղաթառամ զՍամու(էլ) յաղաւթս յիշեցէք:

Ժամատան մէջ Ա. շարքի Բ. դամբան.

Աւրիորդն է Թամթիկ. յաղաւթս յիշեցէք:

Ժամատան մէջ Ա. շարքի Է. դամբան:

Տէր Յոհաննէս Սիւնեաց եպիսկոպոս:

Ժամատան մէջ Ա. շարքի Ա. դամբան.

Զպարոն Թաղենց:

Ժամատան առջև մի խաչքարի վրա.

Ցիշատակ է հաւրեղբաւր իմոյ Առաքէլ եպիսկոպոսին. թվին ՌՃԺ (1661):

Մի խաչքարի վրա.

Տէր Ած. Ցս. Քս. Այս է Տէր իմ աւրհնեալ ահեղ անուն Այ. ի ծագաց մինչև ի ծագս ծագի լոյս. թվին ՉՀ (1321):

Ժամատան արևելյան պատի հարաւային կողմի դեղեցիկ խաչքարի վրա.

Ես Յովհաննէս Աւրպէլ Սիւնեաց արհի եպիսկոպոս շինող սբ. եկեղեցւոյս, յիշել աղաչեմ (զիս) եւս, եւ զբարեպաշտ իշխանաց իշխան զարեան մերձաւորն իմ զքաջ մենամարտիկն զԲուրթէլն եւ զդշխոյափառ քրիստոսասէր զոյգն իւր Վախախն, նորաբողբոջ զաւակաւքն իւրեանց Բէչքէնիւն եւ Իվանէիւն. թվին ՉՀԱ (1322):

Սրա կողքի խաչքարի վրա.

Այս Գայիսոն մխեալ արեամբ աւծելոյն Ցիսուսի, որով հարեալ խոցեցաւ գոռոզն անմարմին. եւ կանգնեցաւ հրամանաւ ածապաշտ իշխանաց իշխանի Սմպատի ի փրկութիւն որդւոյ իւրոյ Բուրթէլին. յիշեցէք:

Ս. Աստվածածին եկեղեցու մոտ մի խաչքարի վրա.

Ես պարոն Բուրթէլ կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգւոյ վասն եղբաւր իմ Բուղդային:

Ս. Կարապետի եկեղեցու մոտ մի տապանաքարի վրա.

Կայ հանդուցեալ յայս տապանի,
Զքնաղ մանուկ զարմանալի,
Որ Իվանէ անուն կոչի,
Եղբիւր ծագեալ Աւրբելեցի,

Որդի Զեսար մեծ իշխանի:

Տապանաքարերի վրա.

Զհայր տեառն Սարգսի զՅովսէփ յիշեցեք ի Քս:

Զհայր տեառն Ստեփաննոսի Տէր Գրիգոր. յիշեցէք:

Մի խաչքարի վրա.

Գնեալք արեամբ գառին Այ. երկրպագողք սրբոյ խաչիս զՄխիթար քահանայ հանդերձ ծնողաւք (յիշեցէք):

Ժամատան հյուսիսային պատի որմնասյան վրա.

Ես Աբաս կանգնեցի զխաչս որդւոց իմոց Սմբատայ եւ Դաւթի, որ կիսաւրեայ փոխեցան առ Քս. եւ Թողին ինձ կսկիծ. որք երկեպագէք յաղաւթս յիշեցէք. ամէն:

Մի խաչքարի վրա.

Ես Եղիշայ եպիսկոպոս կանգնեցի զխաչս ի վրկութիւն հաւրեղբաւր իմոյ Առաքէլ եպիսկոպոսին. Թվին ՌԺԸ (1569):

ԵՂԵԳԻՍԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Տեղադրություն. Եղեգիսի եկեղեցիները գտնվում են այժմյան Ալագյազ գյուղում, որ համանուն ձորի ամենանշանավոր գյուղն է, այժմ թուրքաբնակ:

Պատմական տեսություն. Եղեգիս կամ Եղեգիք հին պատմական գյուղը, որ այսպես կոչվել է շրջակա եղեգնի լճակների պատճառով, այժմյան Ալագյազ գյուղն է, որին իբր ապացույց կարող է ծառայել նախ այն, որ Ստ. Օրբելյանն ասում է. «Երանելի եպիսկոպոսն Սիւնեաց պատահեալ ի տեղի մի յեղեգեաց ձորի ի վերայ Ոստին գեղջն»:[479] Իսկ Ոստին գյուղը այժմյան Հոստուն գյուղն է, և Ալագյազի ձորը նրանից վերև է գտնվում: Երկրորդ՝ այս անունը պահպանվել է Վայոց ձորի բնիկ հայերի մեջ, նրանք Ալագյազի ձորին Ըղնքա ձոր են անվանում, իսկ Ըղնքը Եղիպի ռամկական ձևն է:

Եղեգիսը երբեմն Վայոց ձորի իշխաններին, Սյունյաց երկրորդ հարստության բոլոր տերերի և հետո Օրբելյան իշխանների աթոռանիստ է եղել, ուստի և ոչ միայն գյուղաքաղաք, քաղաք, այլև մայրաքաղաք է կոչվել: Այս գյուղի հիմնարկության ժամանակամիջոցը հայտնի չէ, և ըստ երևույթին շատ հին է: Սյունյաց իշխանությունը վաստակ նահապետից նորոգված միջոցին սա է դարձել աթոռանիստ, ինչպես հայտնապես վկայվում է Վաստակի Թոռնորդի Սմբատ Մեծի վերաբերությամբ, որ Բչրա կամ Նորա արշավանքի ժամանակ, 923 Թվին «Հորդան տուեալ զօրացն՝ ամբոխս բազումս

[479] Ստ. Օրբելեան, պլ. Ծ, հիշ. Քաջբերունի:

սպայակոյտ զօրու չուրջ զիւրեաւ կացուցանէր յիւրում արքունական սպառանքն՝ որ ի գիւղաքաղաքն Եղեգիս. եկեալ սպա Նորն և տեսեալ՝ զնա այնպիսի պատրաստութեամբ և անվանելի զօրութեամբ, զգուշացեալ՝ ոչ ինչ կարաց յայտնել յիւրայոց անտի, այլ ի խաղաղութիւն խօսեցեալ ընդ նմա...ուխտ հաշտութեան հաստատէր: Եւ սպա եկեալ առ միմեանս՝ խնդութիւն մեծ առնէին և բազում օժիտս և պարգեւս ընկալեալ Նորն ի Սմբատայ՝ չուէ և երթայ»:[480]

Մի ուրիշ տեղ էլ նույն Օրբելյանն ասում է այս Սմբատ իշխանի մասին 936 թվին...«Ելեալ յաւուր միում յարքունեաց իւր՝ որ էր յԵղեգիս գիւղաքաղաք»: Սրա վերջին պայազատներն իրենց դահը փոխել են Բաղաց և Կապանի մեջ: Բայց երբ Զաքարե և Իվանե սպասալարներն այս կողմերը խլել են Թուրքերի ձեռքից, տվել են Օրբելյաններին, որոնցից Ելիկումը և սրա որդի Սմբատն իրենց դահն այստեղ են հաստատել: Սմբատի եղբայր Տարսայիճը ևս ինչպես այստեղ, այնպես և Արփայում ունեցել է արքունիք:

Եղեգիս կամ այժմյան Ալագյազ գյուղում կան չորս ավեր եկեղեցիներ, որոնց մասին ոչ միայն պատմական տեղեկություններ չկան, այլև անուններն որոշապես հայտնի չեն: Միայն 1495 թվին, այս «մայրաքաղաք Եղեգիսում» գրված մի ավետարանի հիշատակարանում ասված է. «Ընդ հովանեաւ երից տաղաւարաց սուրբ կաթուղիկէիս եւ սր. Աստուածածնիս և սուրբ Ստեփաննոսիս և կենդանարար սուրբ Նշանիս»:[481] Այստեղ թեև ասում է ընդ հովանեաւ «երից տաղաւարաց», սակայն չորսի անուն է տալիս, և հենց չորս ավեր եկեղեցիներ էլ այժմ կան: Սրանցից առաջինը, ինչպես երևում է յուր վրայի արձանագրությունից, շինված է Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելյանից, այս պատճառով և հավանական է, որ ս. Ստեփաննոսը սա լինի, այսպես կոչված իր հիմնադրի անունով: Մյուսների մասին ոչ մի տեղեկություն չկա:

Եկեղեցիների նկարագրությունը. *Ս. Ստեփաննոսի եկեղեցին (ԺԳ դար):* Սա գտնվում է այժմյան գյուղից դուրս, նրա արևելյան կողմը, Ալագյազ գետի ալ ափին, հարթության վրա: Սա միանգամայն ինքնատիպ է նրանով, որ կողակի մասն իր երկու խորաններով մի առանձին շենք է ներկայացնում, այնպես որ նույնիսկ կարելի է ենթադրել, որ նրա առջև շինված ժամատան հասարակ շենքն սկզբում չի եղել, և ժողովուրդը, մանավանդ զորքը, կանգնել է սեղանի առջև տարածված ընդարձակ դաշտի վրա և լսել ժամասացությունը:

Այս առաջի մասը, այսինքն կողակը, իր երկու խորանով (նկ. 24-26) շինված է սրբատաշ, կարմրավուն քարով. ունի 5,30 մ երկարություն և 10,35 մ լայնություն: Բարձրությունը հասնում է 9 մ:

---

[480] Սա. Օրբելեան, գլ. ԼԸ:
[481] Ալիշան, Սիսական, եր. 149:



Նկ. 24



Նկ. 25



Նկ. 26

Արտաքուստ սագաչեն է, սակայն ներքուստ, կոզակի ձեղունն ոչ թէ թաղակապ՝ այլ գմբեթաձև է: Կոզակը բոլորաձև է և կամարակապ, հանկած երկու որմնասյուների և երկու սյուների վրա, սակայն վերջիններս արդեն գետին են տապալվել: Կամարներից բարձր, ամբողջ արևմտյան ճակատը ծածկված է սրբատաշ քարով, ունի մի նեղ և մի երկար պատուհան և զար-

դարված է երկու խաչքարով: Սեղանի երկարությունն է 4,70 մ, լայնությունը՝ 4,50 մ: Վեմաքարը դեռ կանգուն է, միայն հատակի սալ քարերը քանդված են և մի մասը տարված:

Կողակի երկու կողմի խորանները թաղակապ են, 4 մ երկարության և 1,5 մ լայնության, և ունին մի-մի սեղան, մոտավորապես 1 մ երկարության: Հյուսիսային խորանը երկու դուռ ունի, մինն արևմտյան, մյուսը հարավային պատի մեջ, որ անմիջապես բացվում է սեղանի վրա: Հարավային խորանը միայն ունի մի արևմտյան դուռ: Երկու դռներն էլ զարդարված են պայտաձև կամարով: Երկու խորանն էլ լուսավորվում են մի-մի, փոքրիկ և նեղ պատուհանով, որ բացվում են արևելյան պատի մեջ:

Կողակի արևելյան պատի մեջ կան երկու ներսանկված, արեգակնային ճաճանչով և փոքրիկ կամարով զարդարված: Սրանց միջև մի երկար ու նեղ պատուհան՝ խաչաձև չրջանակով և երկու վարդազարդով: Երկու վարդազարդ էլ բարձրում կան: Մի-մի փոքրիկ և նեղ, կամարակապ պատուհան բացվում են խորանների մեջ:

Հարավային պատը բոլորովին պարզ է և ունի միայն մի փոքրիկ, կամարակապ պատուհան. ճիշտ այսպես է և հյուսիսային պատը, որի սրբատաշ քարերից չատերը թափված են:

Այս չենքի առջև՝ իբրև ժամատուն մնում են հատարակ քարից չինուած 4 կիսավեր պատեր՝ մոտ 1 մ բարձրության: Այս ժամատան լայնությունը նույնն է եղել, իսկ երկարությունը 9,70 մ: Ունեցել է միայն մի, հարավային դուռ:

Եկեղեցու շուրջը կան բավականաչափ գերեզմաններ՝ ԺԳ դարի տապանագրերով: Այս տապանաքարերի մեծագույն մասն այժմ վերացրել են և տեղը ցանել: Նկատելի են և խցերի հետքեր:

Այս եկեղեցին պարսպապատ է եղել, որի արևելյան և արևմտյան կողմի դռներն այժմ էլ կանգուն են:

Արձանագրություններ. *Ս. Ստեփաննոս եկեղեցու արևելյան կողմի տապանաքարի վրա.*

Թվ. ՉՉՌ (1333). Այս է հանգիստ Խաչին դուստր Դոփենց պարոն Վահրամին:

Ս. Ստեփաննոս եկեղեցուց փոքր-ինչ հեռու, դեպի արևելք, քարաժայռի ստորոտում մոտ 3 մ բարձրության մի խաչքարի վրա.

Թ. Հայոց ՉԻՀ (1279) ի բարեպաշտ իշխանութեան Տարսայիճին Շերին-շահի որդի Գրիգոր կանգնեցի խաչս ի...ամուսնոյ իմոյ և զաւակաց իմոց. Ած. ողորմի Տիկո...

Ս. Ստեփաննոսի արևելյան կողմի ձախակողմյան խաչքարի վրա.

Քրիստոս ողորմի Իգնատիոսին:

Ս. Ստեփաննոս եկեղեցու արևելյան կողմը, լուսամուտի ճակատին.

Ես Տէր Ստեփաննոս որդի իշխանաց իշխանի մեծի Տարսայիճին հիմնարկեալ չինեցի զեկեղեցիս ի յիշատակ հաւր իմոյ…

Նույն լուսամուտի եզրերին.

Տէր Յիս. Քս. Ած. աւգնէ Բուրթէլին Բէշքէնին եւ Իվանէին:

Ս. Ստեփաննոսի մոտ մի քարի խաչքարերի վրա կան հետևյալ տապանագրերը.

Թվ. ՉՌ (1253) կամաւն Աստուծոյ ես Մարգարէս կանգնեցի զխաչս ի բարեխաւսութիւն հոգւոյ իմոյ եւ ամուսնոյ իմոյ եւ զաւակաց իմոց:

Ես Մխիթար կանգնեցի զխաչս հաւրն իմոյ Ամլկան եւ մաւրն իմոյ Ամիսթէ:[482]

Ս. Ստեփաննոսի մոտ մի քանի տապանաքարերի վրա.

Թվին ՉՂԴ (1344) Այս է հանգիստ պարոն Վաղթանդին որդւոյ պարոն Ումեկին:

Այս է հանգիստ Փռանակչահի թվ. ՉՀԴ (1325):

Թվ. ՉԾԷ (1508) Այս է հանգիստ Սիմէոնի:

Այս է հանգիստ Շմավոնի:

Երկրորդ եկեղեցին (ԺԴ. դար). Ս. Ստեփաննոս եկեղեցուց դեպի արևմուտք, մոտ 100 մ հեռու, նույն հարթության վրա և նույն գետակի աջ ափին բարձրանում է երկրորդ եկեղեցին: Սա շինված է սև, սրբատաշ քարով, 7 մ երկարության, 5,25 մ լայնության և անհամեմատ մեծ, մոտ 13 մ բարձրության:



Նկ. 27



Նկ. 28

Ներքուստ (նկ. 27, 28) անույշն է, միայն արևմտյան կողմում ունի բավական առաջացած երկու, կիսաբոլոր որմնասյուներ, որոնց և սեղանի կողքերին բարձրացող կեղծ որմնասյունների վրա բոլորում են կիսաբոլոր կամարներ՝ կրելով իրենց վրա կաթուղիկեն, որի թմբուկը 3,50 և գմբեթը 3 մ -

---

[482] *Տե՛ս ԴՀՎ III, էջ 114:*

բարձրությունն ունի: Գմբեթը ներսից զեղազարդված է կարմիր ու սև խաչքարերով: Եկեղեցին ավանդատներ չունի: Հյուսիսային պատի մեջ կա մկրտության մի գեղեցիկ ավազան:

Արտաքուստ չորս պատերն էլ պարզ են, միապաղաղ, մի-մի փոքրիկ, կամարակապ պատուհաններով, որոնցից հարավայինի վերին մասում քանդակված է երկու վիշապի բերանբաց գլուխներ, իսկ ներքևում արեգակնային ժամացույց:

Գմբեթը գլանաձև է, չորս փոքրիկ պատուհաններով և վերջանում է կոնաձև գագաթով, խաչը չկա:

Արևմտյան կողմի մեկուկես, կամարակապ դռան առջև եղել է մի գավիթ, որի հիմնապատերն են այժմ նկատելի, և որի մեջ մի խաչքար կա ՋԾԴ (1505) թվականով:

Այս եկեղեցին ևս պարսպապատ է եղել, որից մնում են միայն հիմնապատերը:

Եկեղեցու շուրջը ընդարձակ գերեզմանատուն է եղել, որի մասին մի խաչքարի վրայի տապանագիրն ասում է. **«Ես Ապլիկ գնեցի զայս հողս ի դիկանի եւ արարի գերեզմանատուն Հայոց»:**

Տապանագրերի մեծագույն մասը ԺԴ դարից են:

Այս եկեղեցու հարավային կողմում, մոտ 25 մ հեռու կա մի տափարակ գերեզմանաքար, որի չորս կողմը կիսավեր պատեր կան և մի դուռ: Տապանաքարի փորվածքի մեջ ամրացված են սպիտակ մարմարիոնի քարեր, որոնց վրա դրված է հայերեն և պարսկերեն.

...Զհոգիս ճշմարիտ հաւատով եւ ուղիղ սրտիւ եւ լի չնորհաւք նահատակեցաւ եւ Քրիստոսի լուսոյն արժանի եղեւ, եւ Քրիստոսի ողորմութեանն հասաւ...ամենայն ցաւոց բժիշկ...յաղօթս յիշեցէք եղբարք մեր սուրբ Ներսէս...վասն անուան Քրիստոսի:

Ալագյազ գյուղի թուրքերն, այս գերեզմանը մահմեդական նահատակի համարելով, պաշտում են և ուխտ գալիս:

Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանը տեսել է այս եկեղեցու պարսպի հարավային կողմում մի կիսաբոլոր վեմ, որի վրա քանդակված է եղել երկու արձան: «Առաջինն՝ այր փառաշուք բազմեալ ի ճարտարաքանդակ աթոռ՝ թագ ականակուռ ի գլուխն, և գայիսոն ի ձեռին, զդեցեալ զպճնաւոր վերարկու՝ որոյ քղանց ծածկէ զոտս, իսկ երկրորդն կին գեղեցկատեսիլ, ի պճնազարդ և ի ծալծալ հանդերձս չքեղացեալ, ունելով ի պարանոցին զմեհեանդ և զմահիկ, զմի ձեռն ի ծնօտին թիկն զաթոռովն ածեալ, և միովն աջակցեալ ընդ առն, և որպէս երևի՝ է քար դրանդի տան Տարսայիճ իշխանաց իշխանին. և յայսոցիկ արձանաց մինն է Տարսայիճ իշխանն և միւսն ամուսինն իւր Մինա խաթուն՝ դուստր Ջալալ իշխանի. ըստ որում ի նմին

վիմի դրի. «Աստուած չնորհաւոր առնէ դարբաս պարոն Տարսայիճի եւ ամուսնոյն իւրոյ Մինայ խաթունին: Ի թվին Հայոց ՉԽԹ (1294)»:

Այս չափազանց հետաքրքրական քարը տեսել է նաև Քաջբերունին.[483] «Նահատակի մատուռից հինգ քայլ դէպի հիւսիս, դէպի դմբէթաւոր եկեղեցին, հողի տակ թաղուած է երկու կտորից բաղկացած կիսաբոլորակ քար, բարձրութեամբ մօտաւորապէս երեք արշին, իսկ երկարութեամբ չորս արշին: Ստորին կտորը ներկայացնում է երկու մարդոց կերպարանքներ աթոռների վրայ բազմած: Զննողի աջ կողմից նստած այր մարդը հագած է երկայն շորեր և փեշերի տակից երևում են ոտների մերկ թաթերը. նորա բոյ գլուխը շրջապատած է լուսեղէն ճառագայթներով և մանեակը զարդարում է նրա պարանոցը: Նորա աջ ձեռքը դրած է ծնկան վրայ, իսկ ձախ ձեռքը քարի հետ կոտրուած անհետացել է: Այս մարդու աջ կողմում, միևս աթոռի վրա բազմած է մի կին, նոյնպէս երկար շորերով և տակից երեւում են միմեանց վերայ ծալած ոտերը: Նորա աջ ձեռքը դրած է իւր գօտկում, իսկ ձախը համապատասխան ծնկան վերայ, երկու ականջի առաջից կախուած են ոլորած կարճ գլխամազերը, ինչպէս այժմ ևս սովորութիւն է Թիֆլիսում... նրա գլուխը ծածկում է վերի մասը քառանկիւնի գլխարկ: Այդ պատկերների վերը գրած է. «Թվ. ՉԻԳ (1274) Աստուած չնորհաւոր անէ՝ դարապաս պարոն Տարսայիճին Մինա խաթունին իւր ամուսնոյ»:

Ընթերցողը պարզ տեսնում է, թե որքան տարբերվում է այս միևնույն քարի նկարագրությունը երկու ճանապարհորդների դրչի տակ, նույն իսկ արձանագրությունը, նրա թվականը միատեսակ չեն արտագրված: Եվ որովհետև այս քարը եղել է Տարսայիճ իշխանի պալատի դռան կամարաքարը, ուստի ես ցանկացա գտնել և լուսանկարել: Եվ որովհետև Քաջբերունին ծածկել էր նրան հողի մեջ, ուստի ես սկսեցի պեղումներ կատարել: Այս միջոցին թուրքերն լինէ ասացին, թե իրենցից մինը գտել է այտեղից մի քանդակազարդ քար, կոտրել և տարել իր տան պարսպի մեջ գործ ածել: Անմիջապէս ես գնացի տեսա և նկարեցի տվի (նկ. 29): Սա երեք կտոր արած կիսաբոլոր քար է, արդեն հիշված մեծութեան, և Տարսայիճի ու Մինա խաթունի բարձրաքանդակներով. միայն Մինա խաթունը ոչ թե Քաջբերունու նկարագրվածի պես զննողի աջ, այլ ձախ կողմն է գտնվում, կրծքին մանյակ ունի, իսկ գլխին թագ չկա, թագ ունի Տարսայիճը, կախ ընկած արտախուրակով: Երկուսի գլխի չուրջն էլ կա լուսապսակ: Սրանից վերև կամարաձև երիզի մեջև գրված է.

Ա՛ծ. Շ(ն)հաւոր անէ դարապաս պարոն Տարսայիճին Մամայ խաթ. ին իւր ա՛ս...

---

[483] Քաջբերունի, Ճանապարհ. նկատողութիւնք, Արարատ, 1888, եր. 138:

Իսկ երկու գլխների միջև ին իւր տառերի տակ իբրև երրորդ տողի վրա նկատվում է մի փակագիծ, որ կարելի է կարդալ իբր անա, այնպես որ կարող է լինել իւր անա ես: Ուշագրավ է, որ դարասկսա և պարոն բառերի մէջ Պ. տառը գրված է երեսը դեպի ալ դարձած:

Նկ. 29

Երրորդ եկեղեցին գտնվում է դյուղի մեջ, չինված է հասարակ, սև քարից, երկարությունն է 20,50, լայնությունը 13,50 և բարձրությունը մոտ 7 մ: Եկեղեցին սագաչեն է, չորս ամբողջական և նույնքան որմնափակ սյուների վրա (նկ. 30), թե երկարությամբ և թե առ ի չեղ (նկ. 31) բոլորում են կիսաբոլոր կամարներ, կրելով թաղակապ ձեղունը: Այս սյուներով և կամարներով եկեղեցին բաժանվում է երեք մասի (nef), որոնցից միջինը մյուսներից լայն է: Ունի մի սեղան և միայն երկու ավանդատուն. 3,70 մ երկարության 3 մ լայնության և 4,5 մ բարձրության: Հյուսիսային պատի մեջ կա ավազան: Յուրաքանչյուր պատի վրա բացվում են երեքական փոքրիկ պատուհաններ: Երկու դռներից արևմտյանը դեղեցիկ չրջանակով պատած է և կամարակալ քարի վրա քանդակված են երկու աղավնիներ՝ ձախինը կնոջ, իսկ աջինը՝ թաղակիր տղամարդու գլխով: Սրանից բարձր կա մի չրջանակով պատած խորշ, մեջը մի խաչ, տակը գրված. Եկեղեցի թվի ՌՃԾԲ (1703): Հավանական է, որ այս թվականը վերաբերի եկեղեցու վերանորոգության, մանավանդ որ եկեղեցու կոզակը անհամեմատ ավելի հին տեսք

ունի և այստեղ մի հնուխյունից մաշված միաւոտ արձանագրութխյան մնջ որոշելի են Սմբատ, Աչոտ, Շահնչահ բառերը:[484]



Նկ. 30



Նկ. 31



Նկ. 32

Ջորրորդ եկեղեցին գտնվում է դյուղից դեպի հարավ, դեսի ափին, բազմաթիվ փլատակների մեջ: Շինված է եղել սրբատաշ, մոխրագույն քարից: Եկեղեցին եղել է անսյուն (նկ. 32), ունեցել է մեջտեղում երկու որմնասյուն: Չի ունեցել նաև խորաններ: Այժմ սրանց միայն կիսավեր պատերը և սեղանի կամարն են մնում:

Այս եկեղեցու հյուսիսային և հարավային կողմերում կան մի-մի փոքրիկ մատուռ, կիսավեր դրութխյամբ:

Այս եկեղեցու հարավային կիսավեր պատի մեջ կանգնած մի խաչքարի վրա կազացվում է.

Այս է հանգիստ տէր Աւագ քահանային թ. ՉԼԹ (1290):

---

[484] Բաջրիերունի, Արարատ, 1888, եր. 436:

Այստեղ, դեռ 80-ական թվականներին եղել է երկու միմյանց կից խաչքար, կիսով չափ թաղված հողի մեջ: Սրանց վրայի կիսաբոլոր և դեռ այն ժամանակ ընկած քարի վրա ծաղկահյուս նկարի մեջ ձևացրած է եղել Աստվածածնի պատկերը աթոռի վրա նստած, ձախ ձեռքում ավետարան, և աջ ձեռքի վրա հենված Քրիստոսը: Աստվածածնի գլխին լինում է աղավնակերպ սուրբ Հոգին: Կիսաբոլորակի վրա գրված է եղել.[485]

Աւրհնեալ Աստուածածին իւր միածին Ցիսուս Քրիստոս Աստուած...

Խաչի ներքին մասում եղել է տապանագիր և ՉԻԲ (1273) թվականը:

Ալագյազից մոտ երկու կիլոմետր հեռու, դեպի Հոստուն գյուղը կան 2 գեղեցկաքանդակ խաչքարեր, հետևյալ տապանագրերով.

Ի բարեպաշտ իշխանութեան Տարսայիճոյ ես Աւետիս Մխիթարայ որդի Խոցադեղա... թվին ՉԼԲ (1283):

Գյուղից դեպի ահմուտք, գետի աջ ափին, այգիների մեջ, ուր երբեմն ընդարձակ գերեզմանատուն է եղել, դեռևս կանգուն է մի դամբարան, որին տեղացի թուրքերը «Մայր Մարիամ» (Մարիամ անա) են կոչում և պաշտում:

Սա չինված է սև, սրբատաշ քարով. մի մետրաչափ, քառանկյունի պատվանդանի վրա բարձրանում է 2,5 մ լայնության, 1,5 մ հաստության և 3 մ բարձրության և եռանկյունաձև վերջացած մի չինք, որի արևմտյան երեսին ամրացրած է մի մեծ խաչքար, գեղեցիկ քանդակներով և շրջանակներով եղրափակված: Խաչի վերին մասում քանդակված է Հիսուս Քրիստոս՝ աթոռի վրա, կողքերին Աստվածածին և Հովհաննես Մկրտիչը: Խաչի շրջանակի շուրջը գրված է:

Այս գայիսոն մխեալ արեամբ աւծելոյն Ցիսուսի, կանգնեցաւ իշխանութեամբ Բուրէթլին. մեք Գրիգոր եւ Մխիթար ի բարեխաւսութիւն մեզ և ծնողաց մերոց. թվին ՉՂԹ(1340):[486]

Այժմ սրա հարավային կողմի քարերից շատերը թափված են, խաչի երեսն էլ բավական քերված է, որովհետև հիվանդները սովորություն ունին քար քսելով խաչի երեսին՝ առաջացած փոշին հավաքել և ածել ջրի մեջ, որպեսզի նրա զորությամբ բժշկվին:

ԱՐԱՏԵՍ

Տեղադրություն. Արատեսի վանքը բարձրանում է Այսասի գյուղի մեջ ընկած մի բլրի գագաթին, որի մի կողմից հոսում է համանուն գետակը: Վանքը պարսպապատ է եղել, որի միայն հիմնապատերն են մնացել այժմ:

---

[485] Բաշխերունի, Արարատ, 1888 թ., եր. 444:
[486] Վերջի տողն արտագրված է Հ. Ալիշանի Սիսականից:

Վանքից դեպի հյուսիս, գետի ձախ ափին, բարձրանում է մի այլ, ժայռապատ բլուր, որի շուրջը ևս, թեպետ տեղ-տեղ, նկատվում են պարսպի հետքեր: Երևի սա մի փոքրիկ մարտկոց է եղել: Այստեղ կան երկու բնական մեծ քարայր:

Թե այստեղից և թե վանքի բլուրից դեղեցիկ տեսարան է բացվում, մանավանդ դեպի գետի ափագահժոտ եզերքը: Այստեղի կլիման բավական մեղմ է: Կաքի ճանապարհ չկա, մի կածան է, որ հազարավոր պտույտներ անելով բարձրանում է այստեղ:

Պատմական տեսություն. Արատեսի վանքի հիմնարկության տարեթիվը և հիմնարկողի անունը հայտնի չէ: Վանքի արձանագրությունները վկայում են միայն հետևյալը.

Ի թվին ՉԺԹ (1270) ի տէրութեան փառաւոր իշխանին Սմբատայ և հարազատի իւրոյ Տարսայիճին ես նուաստ աբեղայ Հայրապետ...կրկին չինեցի զվանս և նորոգեցի զեկեղեցիս, չինեցի զգաւիթս:[487]

Սրանից մի կամ երկու տասնյակ տարի հետո, վերոհիշյալ Տարսայիճ իշխանի որդի Ստեփաննոս Սյունյաց եպիսկոպոսը. «Ծանեալ ալի բազում ժամանակաց ժառանգութիւն էր լեալ այս Նորավանից սուրբ ուխտին, հաստատեցի ես զԱրատէս, որ մեր սեփական հայրենիք էր... ժառանգութիւն և հայրենիք սուրբ և գերափառ դամբարանին մեր Նորավանից»:

Միևնույն բանը հիշատակելով իր պատմության վերջին (ՀԱ) գլխում՝ Ստեփաննոս Օրբելյանը հայտնում է, որ «վասն տօթոյ տեղւոյս (Նորավանից) որ յամարայնի չկարէին բնակել եպիսկոպոսքն և սպասաւորքն, սահմանեցաք զԱրատէսի վանքն»:

Սարգիս եպիսկոպոս Ջալալյանը ասում է, թե այս վանքի գանգակատան ներսը, արևմտյան դռան առաջ, մի «դեղեցկակերտ» տապանի վրա գրված է եղել. «Ստեփաննոս պատանի որդի Կարապետ աղին կրկին նորոգեցի զԱրատէս. թվին ՉԾԲ (1303):[488]

Միևնույնը ավանդում է և Բաջբերունին, միայն տապանագիրը այսպես է ընդօրինակում.

Ստեփաննոս պատանին չինեց զԱրատէս թվակ. ՉՉԲ (1533):

Այս միմյանցից բավական տարբեր, և թվականով 230 տարով զանազանվող տապանագիրը ես, իմ ուղեկիցներիս հետ շատ որոնեցի, սակայն չգտա: Զարմանալի է, որ միևնույն բառը մինը կարդացել է կրկին նորոգեցի, մյուսը՝ չինեց:

Մի ուրիշ արձանագրություն էլ վկայում է, որ Ստեփաննոս Սյունյաց եպիսկոպոսը տվել է այստեղի երեք եկեղեցիներին՝ սուրբ Սիոնին, Աստվածածնին և ս. Կարապետին՝ իր «սեփական վիճակէն ի Գեղաքունեաց գեղն

---

[487] Տե՛ս Դիվան III, էջ 124:
[488] Ս. Ջալալեան, Ճանապարհորդութիւն, հ. Բ, եր. 158:

Վանեվան, զ Կիտանոցն, զ Փառագունի, Վասակաշէն, զ Շիկարբեն, Խուլինակն, Քաւթարանց, զ Դարբանան»:

Մի նշանավոր արձանագրություն էլ վկայում է, որ Խաղբակա որդի Վասակը, որ կողմնակալ է եղել Գառնիից մինչև Բարկուշատ, 1220 թվին, ուրեմն եկեղեցու վերաշինությունից առաջ, տիրել է Եկեղեաց ձորի ամրոցներին, որի համար և այս և Նորավանից վանքերի միաբանությունները Գ. պատարագ են հաստատել:

Վանքի նկարագրությունը. Արատեսի վանքը (նկ. 33) բաղկացած է երեք եկեղեցիներից և մի գավթից: Ինչպես երևում է գավթի հարավային պատի արձանագրություններից, եկեղեցիների անուններն եղել են ս. Սիոն, ս. Աստվածածին և ս. Կարապետ, միայն հնարավորություն չկա որոշելու, թե այս անուններից որը որ եկեղեցուն է տրված: Երեք եկեղեցիներն էլ միմյանց կից են, արևելյան կողմից միևնույն գծի վրա, միայն արևմտյանից՝ հյուսիսային եկեղեցին փոքր-ինչ հետով է: Գավիթը բարձրանում է հարավային ամբողջ և միջին եկեղեցու կեսի առջև:

Հնագույն կամ հյուսիսային եկեղեցին (նկ. 33 և 34) չինված է սև, սրբատաշ քարից. երկարությունն է 9,5, լայնությունը՝ 3,90 և բարձրությունը՝ մոտ 8 մ: Եկեղեցին անույն է, մի սեղանով, որ բռնում է ամբողջ լայնությունը և ունի բոլորաձև կոզակ: Սեղանի աջ կողմում կա մի մեծ ավանդատուն (նկ. 35), որ չինված է միջին եկեղեցու տարածության մեջ, երկու այլ ավանդատների կից և դուռը սեղանի կողքից է: Նույն սեղանի ձախ կողքումն էլ կա մի ուրիշ ավանդատուն, որի դուռը սեղանի վրայից է: Այս ավանդատունն էլ եկեղեցու տարածությունից դուրս է և իր առջևում մի ուրիշ ավանդատուն ևս ունի, որի մեջ մի դուռ բացվում է այս եկեղեցու արևմտահյուսիսային կողմից: Այս երեք ավանդատներն էլ համարակալ սեղաններ ունին:



Նկ. 33



Նկ. 34



Նկ. 35

Եկեղեցու հարավային և հյուսիսային պատերին կից բարձրանում են քառանկյունի որմնասյուներ, որոնց վրա դեպի ճեղունը բոլորում են պայտաձև կամարներ: Ճեղունը թաղակապ է և մեծ մասը խոնարհված:

Արևելյան և արևմտյան պատերի մեջ կան մի-մի երկար և նեղ պատուհան: Մի-մի փոքրիկ պատուհան էլ բացվում են ավանդատների մեջ:

Հարավային պատի վրա, ավանդատան դռան մոտ, կա մի սրվակի բարձրաքանդակ, 40 հարյուրամետր բարձրությամբ:

Արևմտյան պատի մեջ բացվում է մի դուռ, որ արտաքուստ ոչ մի զարդարանք չունի: Սրա ձախ կողմի քարերից մինը, որ գույնով մյուսներից փոքր-ինչ տարբերվում է, բայց կանոնավոր կերպով դրված է, իր վրա կրում է մի դեղեցկաքանդակ խաչ՝ հետևյալ արձանագրությունով. Սբ. **Խաչս կանկեսցուցի Ցուլպէկին թվ. ՌՀԵ (1626):**

Եկեղեցու պատերից միայն արևմտյանի վրա կան քանդակներ. պատուհանը եզրափակված է խաչաձև շրջանակով և բարձրում մի դեղեցիկ վարդազարդ ունի:

Այս եկեղեցու հարավային պատի մեջ էլ կա մի դուռ, որ բացվում է մի ինքնատիպ շենքի մեջ: Վերջինս մի քառակուսի դավիթ է և արևելյան կողմը, առաջին եկեղեցու ավանդատան կից ունի երկու, միմյանց մեջ բացվող ավանդատներ կամ մատուռներ (նկ. 33 և 36):

Բուն դավիթը 5,5 մ երկարություն ունի, նույնքան էլ լայնություն և մոտ 6 մ բարձրություն: Անույշն է, միայն հարավային և հյուսիսային պատերի մեջ կան երեքական քառանկյունի որմնասյուներ, որոնց վրա, պատերին կից, բոլորում են կիսաբոլոր կամարներ, առաջացնելով 35 հարյուրամետր խորության խորշեր, ամբողջովին ծածկված արձանագրություններով:

Արևելյան պատի մեջ կա մի երկար և նեղ պատուհան, սրա ներքև մեկը մյուսի տակ, երկու խաչքար, մի քիչ հեռու, աջ կողմում, մի ուրիշը:



Նկ. 36

Ջեղունը ներքուստ թաղակապ է, իսկ արտաքուստ՝ սադաչեն:

Արևելյան պատի մեջ բացվում է մի դուռ, մի փոքրիկ, 3,15 մ երկարության, 1,40 մ լայնության և մոտ 3,5 մ բարձրության թաղակապ ավանդատան կամ մատուռի մեջ, որ ունի մի բոլորաձև սեղան և մի փոքրիկ ռոզաս՝ արևելյան պատի մեջ: Այս ավանդատան հյուսիսային պատի մեջ բացվում է մի ուրիշ դուռ՝ դեպի մի ուրիշ, նույն մեծության և նույնպիսի ավանդատան կամ մատուռի մեջ, որ ռոզասի փոխարեն ունի մի նեղ և երկար պատուհան: Այս ավանդատան կից է, միայն անհաղորդ, առաջին եկեղեցու ավանդատունը:

Գավթի արևմտյան պատի մեջ ևս բացվում է մի ուրիշ դուռ, որ տանում է դեպի գեղեցկաշեն, երկրորդ գավիթը, որ չինված է հատկապես երրորդ, ամենագեղեցիկ, եկեղեցու առջև:

Նախ նկարագրենք եկեղեցին, որ կից է առաջին գավթին և նրա մատուռներին:

Սա չինված է սև, սրբատաշ քարից. երկարությունն է 9,50, լայնությունը՝ 6,75 և բարձրությունը՝ մոտ 6 մ մինչև կաթուղիկեն, որ քանդված է: Նույն վիճակին է ենթարկված նաև ձեղունը և հարավային պատն ամբողջովին՝ կոշկոռները լցված են նաև եկեղեցու մեջ:

Եկեղեցին ներքուստ անսյուն է: Ունի երկու ավանդատուն, իսկ արևմտյան կողմում, նախնական ավանդատների փոխարեն, նույն մեծությամբ կամարակապ խորշեր:

Վեց որմնասյուների վրա բոլորում են կիսաբոլոր կամարներ, որոնցից միայն արևմտյան կողմում բոլորողներն են կանգուն մնացել: Որմնասյուները բաղկացած են մի կիսաբոլոր և քառանկյունի խոյակով, և երևի նույնպիսի, միայն հակադիր խարիսխով: Սեղանը կիսաբոլոր է, բոլորաձև կոզակով: Յուրաքանչյուր պատի մեջ կա մի-մի նեղ և երկար պատուհան:

Արտաքուստ՝ արևելյան պատի մեջ կան երկու ներսանկված՝ ճաճանչավոր արեգակով պսակված: Սրանց մեջև բացվում է մի նեղ և երկար պատուհան, գեղեցիկ շրջանակով եզրափակված: Նույնպիսի, միայն համեմատաբար ավելի փոքր պատուհաններ, բացվում են խորանների մեջ:

Զորս գեղեցիկ խաչքարեր զարդարում են արևելյան ճակատը:

Հարավային պատը մեծ մասամբ քանդված է, մնում է միայն արևմտյան կամարի մասը, ուր կա մի ներսանկված և մի արեգակնային ժամացույց՝ հայկական թվանշաններով:

Արևմտյան պատի մեջ բացվում է մի դուռ դեպի գավիթը:

Հյուսիսային պատը ծածկված է կողքին չինված առաջին գավթի պատով, որ ավելի հասարակ է: Մի նեղ և երկար պատուհան, գեղեցիկ շրջանակով, բացվում է նույն գավթի մեջ:

Այս գավիթը (նկ. 33), որ հավանորեն Հայրապետ արհղայի չինածն է ԺԳ դարում, կառուցված է սև, սրբատաշ քարով: Երկարությունն է 7,15, լայնությունը՝ 9,15 և բարձրությունը՝ մոտ 6 մ: Ամբողջ չինքը անույն է, թաղակապ և մեջտեղում մի կլոր երդիկ ունի (նկ. 37):



Նկ. 37

Այս երդիկը արտաքուստ քառանկյունի հիմք ունի և 1,5 մետրաչափ բարձրանում է ութանկյունի ձևով. ներքուստ շրջանակաձև է և, զանազան արաբեսկներով նեղանալով, մոտ 70 սանտիմետրաչափ բացվածքով վերջանում (նկ. 38):

Գավթի երեք անկյուններում մի-մի, հարավային և հյուսիսային պատերի մեջտեղ նույնպես մի-մի, իսկ արևելյան և արևմտյան պատերում, դռնների կողքերից, երկուական, ընդամենը 9 որմնասյուներ են բարձրանում, որոնց վրա բոլորում են պատերին կից կիսաբոլոր, իսկ ձեղունին կից՝ պայտաձև կամարներ: Որմասյուներից չորսը, որ բարձրանում են դռների մոտ, ներկայացնում են վեցակողմյան կիսասներ՝ հանկած որմնասյան վրա: Խոյակը կիսաբոլոր է և քառանկյունի, իսկ խարխսը՝ քառանկյունի:



Նկ. 38

Մյուս վեց որմնասյուները կիսաբոլոր են և կողքերը քառանկյունի: Սրանց բոլորի բներն էլ միակտուր քարերից են, 1,60 մ բարձրության:

Գավթի հարավային պատն ամբողջապես քանդված է. մնում է միայն մեջտեղի սյունը և նրանից դեպի ձեղունը բարձրացող կամարը, ինչպես և անկյունների որմնասյուները: Կանգուն են նաև հյուսիսային պատի միջին սյունն ու կամարը և արևելյան կամարը, իսկ արևմտյանը քանդված է:

Արևմտյան պատի մեջ բացվում է մի դուռ, և սրա վերև՝ մի ուղաս, որը միայն ներսից է նկատելի, որովհետև դրսի կողմից պատը քանդված է:

Դուռը զարդարված է կլոր և քառանկյունի կիսասներով և պայտաձև կամարներով: Կամարակապ քարի վրա կա մի բարձրաքանդակ, որ ներկայացնում է Աստվածածինը՝ մանուկ Հիսուսը գրկին, աջ կողքին մի կին, ձախին մի միրուսավոր տղամարդ՝ դաստակները միմյանց հենած և առաջ պարզած: Աստվածածնի աջ կողմին քանդակված է արևը՝ մարդու երեսի ձևով: Երկու դեղեցիկ խաչեր քանդակված են կամարի և շրջանակի միջև: Աջ կողմի խաչի մոտ մի փոքրիկ խաչ էլ է քանդակված:

Արձանագրություններ. Արատես եկեղեցու դռան ձախ կողմը (նկ. 39):

Կամաւ կարող հզաւրին Այ. ես Տր. Ստեփանոս Սիւնեաց եպիսկոպոս որդի մեծի եւ բարեպաշտ իշխանաց իշխանին Տարսայիճին, ծանեալ զի ի բազում ժամանակաց ժառանգութի էր լեալ այս եկեղեցիս Նորավանից սբ. ուխտին հաստատեցի ես զԱրատէս որ մեր սեփական հայրենիք էր իւր ամէն սահմանաւքն գեղս վեց հայրենիք հաւր մեր ժառանգութի և հայրենիք սբ. և գերափառ դամբարանին մեր Նորավանից. զոր մի ոք իշխեսցէ խախ-

տել և խափանել կամ յիշխանաց կամ ձեռնաւորաց ի մերոց կամ յաւտարաց եթէ հակառակին անէծս և նզովս առցեն ի սբ. Երրորդութենէն և յամենայն սրբոց և մեր պարտեացն տէր է առաջի Այ. և թէ Տաճիկ աւազ փոխի և հանել չանայ յԱյ. և յիւր Մահմետէ ապիզար է և Ռ. Ռ. նալաթ լինի:[489]



Նկ. 39

Սրա տակ.

Կամաւն Այ. ես Նուլուննս աղախին Քի. միաբանեցա ի սբ. ուխտս Արատէս եւ ետու Ե. ամբարք եւ սահմանեցին միաբանքն սբ. Սարգսի չաբաթ աւրն պատարագն ինձ յիշատակ եւ զկիրակէն առն իմո Հասանա. կատարիչքն աւրհնեալ եղիցին յԱյ.:

Սրա կողքին, դռան մոտ, ներքուստ.

Ես Թաճմելէքս միաբանեցայ սուրբ ուխտիս. միաբանք սահմանեցին սբ. Խաչին չաբաթ աւրն Ա. պատարագ:

Գավթի արևելյան պատի միջին կամարի մեջ.

Ի թվին ՉԺԹ (1270) ի տէրութեան փառաւոր իշխանին Սմբատայ եւ հաբազատին իւրոյ Տարսայիճին, ես նուաստ աբեղայ Հայրապետ անուն սպասաւոր բանի կրկին չինեցի զվանս եւ նորոգեցի զեկեղեցիս, չինեցի զգա-

[489] Տե՛ս ԴՀՎ III, էջ 125:

ւիթս եւ զայլ ինչ որ...զկոչոց՝ այգին յՈստին եւ զթեղուտն ի...Մճռագաձորում...մք գնեցի եւ տուի ի ս. Սիոնս...Հաստատեցաք զսուրբ Գրիգորին զշաբաթն և կիւրակէն ինձ յիշատակ կրկին...կատարիչք աւրհնին յամէն սրբոց, եւ հակառակաւղքն տանջեսցին ընդ Յուդայի եւ ընդ Բելիարայ ի մեծի աւուրն, ամէն:[490]

Ժամատան կամարի վրա.

Ես Մամաքս մխիթանեցա եւ ետու զինչ ունէի ի սուրբ եկեղեցիս, սպասաւորք սահմանեցին Ա. ժամ պատարագել ի վերափոխման սբ. Աստուածածնին. կատարիչքն աւրհնին Աստուծոյ, եւ խափանիչքն դատին ի Տեառնէ:

Գավթի հարավային պատի վրա.

Կամաւ կարող հզաւրին Այ. ես Տէր Ստեփանոս Սիւնեաց արհեպիսկոպոս, որդի մեծի եւ բարեպաշտ իշխանաց իշխանին Տարսայիճին ետու սուրբ Սիաւնիս և Աստուածածնիս սուրբ Կարապետիս ի մեր սեփական վիճակէն ի Գեղաքունոյ զգեղն Վանեվան, զԿիտնանոցն, զՓառագունի, զՎասակաշէն, զՇիկակարբն, Խուլինակն, Քաւթարանց, զթամբարարքն, զի թէ ոք իշխեսցէ խախտել կամ խափանել ի մերոց կամ յաւտարաց, զիմ պատիժս կրեսցէ յԱյ. Այսր սահմանեցաք որ տիրէ մեր նստագահի ու մեծ իշխանաց իշխան իմ փառաւոր հարազատին Ելիկումին՝ յիշատակն այլ իմաստ իւր կարգած: Կամովին մեր սահմանած կտակս այլ ցեղս գնէ մասն ու բաժին զՈւդաի առցէ ու զայլ խաչահանուացն, եւ մեր պարտեացն տէր է առաջի Աստուծոյ, ի թվիս ՉԾ (1301):[491]

Արատեսի դռան ներսի կողմը.

Ի ՈԿԹ (1220)

Ի թագաւորութեան վրաց Լաշային եւ յաշխարհակալութեան Իւանէ Աթաբէգի, ես Վասակ որդի Խաղբակա կողմնապահ ի Գառնո մինչեւ ի Բարգուշատ եւ առի զամրոցանիս Եղեգեաց Ջորոյս աւգնութեբն Այ. ի հայրապետութեն Տր Սարգիս եւ առաջնորդքս վանացս եւ Նորավանաց հաստատեցաք Գ. ժամ զՀամբարձմանն զերեք աւրն զամենայն եկեղեցիքս Ջորոյս՝ Վասակ կատարեն եւ կատարիչքն աւրհնին յԱյ. ամէն:[492]

Տապանագրեր. Եկեղեցիների արևելյան կողմը մի օրորոցաձև տապանաքարի վրա 28 հարյուրամեայ երկարութեան տառերով գրված է.

Զերջանիկ բարեւնապետն Հայրապետ նորոգող այսմ ուխտի յիշ. թվ ՉԼԹ (1290).

Գետեզրին եղած գերեզմանատան խաչքարերի վրա.

---

[490] *Տե՛ս ԴՀՎ III, էջ 124:*
[491] *Տե՛ս ԴՀՎ III, էջ 126:*
[492] *Տե՛ս ԴՀՎ III, էջ 123:*

Թվին ՉԺԲ (1363) Նշանս Թանկին է. Աստուած ողորմի նմա. ամէն:

Թվին ՉԺԴ (1364) Տէր Աստուած ողորմէ Այսախուխին. ամէն:

Սուրբ նշանս Հասանայ է, որք կարդաք յիշեցէք ի Քս. Թվին ՉԺԵ (1366).

Մի նորագույն գերեզմանաքարի վրա.

Այս է հանգիստ Սարգսի Թվին ՌՃԿԲ (1713).

Գետեզրին նղած գերեզմանատան մի հասարակ խաչքարի վրա.

Խաչս բարեխաւս Նատալղուլին որ տղայ հասակ մեռաւ Թվին ՉՉ (1531).

Եկեղեցու արևմտյան դռան ձախ կողմի քարերից մինի վրա քանդակված է մի խաչ և արձանագրված.

Սրբ խաչս կանկեսցուցի Ծուլպէկին Թվ. ՌՀԵ (1626):

Մի տապանաքարի վրա.

Այս յարկ տապանի Ծովսէփու աստուածախաւս վարդապետի. Թվ. ՉԼԱ (1282):

Ժամատան առջև, պարտիզում ընկած մի օրօրոցաձև տապանաքարի վրա.

Այս Մխիթար կխսաւրեայ փոխեցաւ ի Քս եւ եթող սուք անմխիթար ծնողացն. Թվ. ՉԺԴ (1464):

Ժամատան հարավային պատի առջև մի խաչքարի պատվանդանի վրա.

Սուրբ խաչս բարեխաւս Մէհրապին:

Նույն տեղի մի ուրիշի վրա.

Սահակ երէցս յաղաւթս. Թվին ՆԻԴ (975):

Նույն տեղում մի ուրիշ խաչքարի վրա.

Սուրբ խաչս բարեխոս Ջանաղին:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Արաղ չահ, 311
Արաղա խան, 301
Արաս, 610
Արաս Բազրատունի, 577
Արել, 382, 440
Արիւրատ խան, 224
Արլ Հասան, 480
Արրահամ (Աբրահամ), 36, 290, 363, 435, 447, 472, 478, 480, 540
Արրահամ Աստապատեցի, 16
Արրահամ Դ կաթողիկոս, 439
Արրահամ կաթողիկոս, 222
Արրահամ Կրետացի, 139
Արրահամ, վարդապետ, 28, 439
Արրահամ, քահանա, 280
Ադամ, 212, 392
Ադախ, 442
Ադատ խան, 463
Ադատյան Ռ., 379
Ադարիա, 149
Ադարիա Գանձակեցի, 263, 463
Ադիբ, 309
Ադիլ, 365, 506
Ադրի, 149
Աթանաս, 277, 312, 424, 425, 433, 447
Աթանաս Մակվեցի, 463
Աթանէս երեց, 261
Աթաշխուդա, 514
Ալիբան, 259
Ալիբանդը, վրաց թագաժառանգ, 497
Ալէբանդը, 259
Ալէբանոս, 36
Ալէբոս, 263
Ալի, 308
Ալիշան Ղ., 8, 9, 13, 41, 45, 49, 56, 122, 201, 229, 282, 327, 422, 423, 425, 448, 451, 458, 462, 483, 495, 496, 499, 505, 506, 508, 515, 524, 528, 576, 577, 611, 620
Ալլահվերդի, 128, 463
Ալմազ, 365
Ալփասլան, 602
Ախթամար, 607
Ազաբեկ, 55
Ազազար, 272
Ազազար Ագերծեցի, 602
Ազա Մահմադ խան, 16
Ազամյան Զաքարիա, 57
Ազաջան, 300
Ազասի խան, 214
Ազաւնի, 309
Ազիբանդը Ա կաթողիկոս, 442
Ազիբանդը Մեծ, 121
Ամապին, 604
Ամատունի Սահակ, 467, 468, 475
Ամէկ, 448
Ամիաթէ, 614
Ամիր (Ամիրա), 58, 123, 253, 272, 276, 293, 333, 505, 602
Ամիրաղա, 276
Ամիր Գիւնա, 453
Ամիրզատ, 305
Ամիրզադա, 537
Ամիրխան, 18, 294, 331
Ամիր Հասան, 482, 529
Ամիր ղուլի, 576
Ամիրճան, 294
Ամիրպար, 302
Ամիր Սուլթան, 309
Ամիր Վասակ, 253
Այիվալտ, 464
Այվազ (Էյվազ) բեկ, 203, 220-223
Անահիտ (Անահիթ), 554, 558
Անանիա, 301, 302
Անանիա կաթողիկոս, 14
Անանիա Սյունյաց եպիսկոպոս, 11, 12
Անդոկ իշխան, 10-12
Անդրե առաքյալ, 438
Անթառամ, 212
Անտոնյան Հովհաննես Տիխոնեցի, 465
Անուշ, 364, 558
Անուշյան, 559
Աչխեն (Աչխո), 364, 472
Աչոտ, 31, 559, 576, 618
Աչոտ Ա Բագրատունի, 31, 268, 270, 279, 447, 451, 458, 459, 475, 476
Աչոտ Բ Երկաթ, 460
Աչոտ Գ Շահնշահ, 460
Աչոտ, Սյունյաց մեծ իշխան, 13, 31, 63, 574, 618
Աչրաֆ, 327
Ապաղա, 281
Ապիրատ, 422, 424
Ապլիկ, 615
Ապուսահ, 460
Աջահար, 440
Առաքել, 254, 309, 425, 440, 571, 575, 588, 592, 606
Առաքել Դավրիժեցի, 36, 297, 327, 438, 456, 506
Առաքել, եպիսկոպոս, 16, 33, 588
Աստատուր (Աստ), 363, 561
Ասլամազ-ղուլի խան, 208
Ասլան, 276, 364, 415
Աստղիկ, 287, 364, 451, 456, 460, 577
Աստվածատրյան Արսեն, 154
Աստվածատուր (Աստուածատուր, Աստուր), 203, 204, 253, 254, 260, 363

Աստվածատուր Մրգմրգ-օղլի, 16
Ասփա տիկին, 303, 591, 592, 599, 600, 605, 607
Ավագ (Աւագ), 123, 258, 260, 272, 292, 434, 440, 445, 575, 619
Ավակիմ, 559
Աւանէս, 272, 274, 288, 311, 453
Աւետ, 32
Ավետիս (Աւետիս), 316, 363, 450, 619
Ավետիք, 469
Ասիպէկ, 302
Ասրներսեհ, 12
Աբաբշահ, 273
Արգիշտի, 268
Արզման, 364
Արզու, 583
Արեգնազան (Արեգ), 364
Արիոս, 604
Արիստակես, 472
Արիստակես Լաստիվերտցի, 327
Արծրունի Բարսեղ աղա, 278, 466, 480
Արծրունի Դերենիկ, 570
Արծրունի Մկրտիչ աղա, 253
Արղուն, 253
Աւշակ Բ, 10
Աբսեն սուլթան, 328
Արտավազդ (Արտո), 559
Արուս խաթուն, 34
Արուսյակ, 364
Արևիկ, 528
Արևշահ, 321
Արևշատ, 363
Աֆրիկյան Պ. Տ., 270
Բաբա, 221, 222
Բաբախաթուն, 50
Բալաջան, 315
Բարաք, 289
Բաբիկ, 10-13
Բաբկին, 147, 559
Բագրատունի Գագիկ Բ, 432, 577
Բագիկյան Սահակ, 257
Բալա, մելիք, 139
Բալայան Ավետիք, 468
Բալու Նոյ, 40
Բաղդասար, 33
Բաղր, 123, 206, 216
Բարաթ, 278, 453
Բարեղամ (Բաղդ), 363
Բարեք, մելիք, 259
Բարթուղիմեոս, 9
Բարխուդար, 146
Բարխուդար Ա, 125-129
Բարխուդար Բ, 129, 143
Բարսեղ, վարդապետ, 424, 462, 479
Բարսեղ, քահանա, 282, 294, 302
Բհհրության Բարսեղ, 319, 426
Բհհրությանց Զաքարիա, 467
Բենիամին, 12, 149, 559
Բեշիր, ոստիկան, 460
Բեշկեն (Բէշքէն), 597, 614
Բենջան, 364
Բէգլար, 276
Բէրամ, 452
Բիժան, 462
Բյուլբյուլյան Կարապետ, 467
Բյուրեղ, 475
Բոլ, 130
Բոլիկ, 576
Բրանդ, պրոֆեսոր, 240
Բուբաք, 586, 591, 607
Բուդաղյան եղբայրներ, 468
Բուդդա, 592, 609
Բունիաթ, 484
Բուրթել, 559
Գաբրիել հրեշտակապետ, 358, 379, 414, 415, 416, 518
Գաբուռն Վասակ, 276, 450, 458
Գագիկ, 577, 580
Գազան, 11-13
Գալուստ, 203, 225, 425
Գալուստ, վարդապետ, 467
Գալուստ, քահանա, 285
Գայանե (Գարան), 364
Գաջան Լաւռնցի, 288
Գառնիկ, 558
Գասպար, 261, 263, 272, 309
Գեղամ նահապետ, 9, 230, 259
Գեորգ (Գէորգ), 12, 29, 48, 94, 600
Գեորգ Ուլծեցի, 61
Գեորգի իշխան, 206
Գէորգէ, վրաց թագավոր, 423, 432
Գիչի, 143
Գիչուկ, 433
Գինիխան, 306
Գիւլ աղա, 254
Գիւլիզար (Գյուլիզար), 264, 558
Գյուլնազ (Գյուլո), 364
Գյումուշխանեցի Մանուել, 456, 457, 461, 464, 467
Դյուտ կաթողիկոս, 513
Դոհար խաթուն, 602
Գոնցէ, 604
Գոր, 11
Գորոյան Գ., 253
Գրիգոր, 32, 46, 47, 63, 257, 263, 280, 281, 283, 286, 300, 301, 312, 327, 423, 431, 433, 437, 444, 449, 451, 504, 508, 558, 571, 577, 581, 600, 605, 607, 609, 613, 619
Գրիգոր (Գյուքան), 559, 604
Գրիգոր, եպիսկոպոս, 15, 30, 272, 273, 309, 311, 326, 425, 442
Գրիգոր, իշխան, 302, 304, 324, 443, 444
Գրիգոր Լուսավորիչ, 9, 10, 13, 15, 65, 279, 392, 422, 423, 424, 431, 445, 446, 457, 472

Դրիգոր կաթողիկոս, 440
Դրիգոր Մագիստրոս, 319, 328, 422, 427, 432, 441, 461, 571
Դրիգոր Մեղրեցի, 15, 586
Դրիգոր Մոնոնիկ, 425
Դրիգոր Մուժկանց, 429
Դրիգոր, Սյունյաց եպիսկոպոս, 10, 30, 592
Դրիգոր Սուփան, 258, 281, 448, 453
Դրիգոր, վարդապետ, 432, 433
Դրիգոր վարդապետ Ակռուցի, 466, 467
Դրիգոր վարդապետ Դանձակեցի, 464
Դրիգոր Տաթևացի, 16, 23, 27-30
Դրիգոր Տեր-Ավագյան, 483
Դրիգոր, բարեբնաստիտ, 33
Դրիգոր քահանա Վարդապետեան, 277
Դրիգորիս (Դրիգորէս), 571, 575
Դրիգորիս Գ կաթողիկոս, 424, 586
Դրիգորիս, վարդապետ, 17
Դրիգորյան Մարտիրոս, 571
Դուլաղ, 254
Դուլապ, 301
Դուլաստյան Զաքարիա, 456, 457, 464, 465, 469
Դուռնկէա բեկ, 259
Դուռնատուղ (Կուռնատուղ), 259, 262, 263
Դուռնա Օվանես (Օվանես ճգնավոր), 572
Դուրգեն, 571
Դևորդ կաթողիկոս, 328
Դևորդ Դ կաթողիկոս, 459, 467
Դևորդ զորավար, 475
Դամա, 603
Դանիել (Դանել), 558
Դանիել, վարդապետ, 461, 472
Դավիթ (Դաւիթ), 19, 31, 286, 293, 297, 300, 425, 449, 499, 601
Դավիթ Բեկ 41, 127, 201, 203-212, 214, 216, 218, 230, 233
Դաւիթ, եպիսկոպոս, 13, 451, 452
Դավիթ կաթողիկոս, 475
Դաւլաթ, 254, 309
Դատ, 215
Դատ Մալիք, 127
Դեղ, 607
Դեղիկ, 528
Դերենիկ, 574
Դլեն իչխան, 150
Դոլուխանյան, 146, 151
Դոփ, 311, 604
Դումբաձե Պ., 484, 489
Եաչի, Էաչի, 577, 583
Եաւբի պեկ, 305
Եզր կաթողիկոս, 321
Ելակուզ, 503, 586, 599
Եղիա (Եղո), 402
Եղիազար Դանձասարեցի, 463
Եղիա մարգաբե, 394
Եղիշա, 306, 570, 575, 588, 609
Եղիշե, 33, 496
Եղիսաբեթ (Եղսո), 557
Ենովք (Ենոք), 362
Եսվաղեն, Աղվանից թագավոր, 12
Եվստաթեն (Ստաթեն), 13
Երևմիա, 425
Երմակով Դ., 1, 570
Երմոլով, 16
Երվանդ, 558
Եփրեմ, 48
Եփրեմ, եպիսկոպոս, 441
Եփրեմ կաթողիկոս, 125, 479
Եփրոյսիմ, 309
Զագա, աթաբակ, 327
Զալ, 461
Զանազան (Զանո), 363
Զարմայր, 558
Զաքարիա, արքեպիսկոպոս, 33
Զաքարիա Սարկավագ, 461
Զաքարիա (Զաքարե) ոսպասալար, 259, 312, 327, 425, 444, 445, 461, 503, 582, 586, 611
Զաքարյան, բժիշկ, 372
Զելինսկի Ստ., 68, 96, 136, 160
Զեյնալ, 364
Զիլֆիղար բեկ, 17, 19
Զնդանշահ, 437
Զոհրաբ (Զաւբհաս), 273, 276, 296, 309, 363
Զոնդի Դիբի, 130, 131
Զումրուխտ, 364
Էլրխք, 435
Թագուհի (Թագուն), 363, 558
Թաղեոս առաքյալ, 13, 297, 397, 424, 441, 474
Թադեոս (Թադէոս, Թադո), 271, 363
Թադևոսյան Մկրտիչ, 426
Թաթմա խաթուն, 607
Թալիվիա, բժիշկ, 369
Թահմազ շահ, 209, 306, 310
Թաղա, 478, 479, 599, 606
Թաճմնելիք, 627
Թաճուռ, 146
Թամամ, 437, 559
Թամար, 600
Թամթա, 572
Թամթիկ, 608
Թամիրյան Թ., 153
Թայիրյան Ալեքսանդր, 476
Թայիրեանց Ղուլի, 461
Թանգի Ա, մելիք, 18, 19,
Թանգի Բ, մելիք, 19, 20, 41, 55
Թանգյան Կարապետ, 18, 19
Թաջուռ, 254
Թառան, 540
Թացիկ, 521
Թեոդոս կայսր, 11

Թեոդորոս (Թէոդորոս), 12, 63, 309
Թեոփիլոս կայսր, 287
Թոմա, 256
Թոմաս, 399
Թովմա, ճգնավոր, 398
Թովմա Մեծոփեցի, 327, 442
Թորոս Իշխան, 202, 203, 213, 214, 215, 216
Թոփչյան, 475
Թուխթակ, 143
Թումա, 254, 312
Թուման, 130
Իբրահիմ խան, 19, 29, 127, 128, 152, 224
Իգնատիոս, 271, 613
Իգնատիոս Տեր-Մովսիսյան, 354
Ինճիճյան Ղ., 461, 483
Իսկանդար բեկ, 19
Իսկուհի, Սկուն, 363, 565
Իսրայէլ, 304
Իսրայել Օրի, 18, 58
Իվանն ապաստայար, 259, 260, 272, 312, 327, 434, 445, 583, 599, 600, 605, 606, 607, 609, 611, 614
Իւանիկ, 260
Լալա, 123, 253
Լալայան Երվանդ, 5, 6, 143
Լաչա, վրաց խապավոր, 628
Լիննկթեմուր (Լանդ-Թամուր), 16, 22, 327, 439, 442, 497
Լիպարիտ (Լիպո), 559, 495
Լորիկ, 46
Լուսիկ (Լուսո), 363
Լուսամաքոս, 269
Լևոն, 559
Լևոն Բ թագավոր, 15
Խաֆուն, 280, 299, 595, 603, 607
Խալայչահ, 603
Խաղրակ, 423, 434, 621, 628
Խանպէկ, 301
Խանում, 364
Խաչատուր (Խաչիկ), 276, 362, 439, 460, 506, 536, 560
Խաչատուր Պլլիկլու (Փիլիպպոս), 537
Խաչատուր, վարդապետ, 448, 449, 451
Խաչում, 281
Խարիբշահ, 528
Խարնոթո, 280
Խոյդան, 528
Խոշաք (Խօշաք), 258, 445
Խոջա Լազար, 123
Խոջա Պետրոս, 441
Խոջա Պողոս, 45, 46, 441
Խոսրով, 12, 38, 153
Խորիշահ, 445, 521
Խոյապնդ, 618
Խուդան, 304
Խուբչուդ, 123, 124
Մաղիկ (Մաղո), 202, 213, 363
Մատիկ (Աստվածատուր), 202
Մատուր, 36, 149, 193, 398, 478, 576
Մատուրյան Առաքել, 56, 142
Մովինար (Մովիկ, Մովո), 363
Կախայբեր, 423, 432
Կայեն (Կայէն), 391, 600, 602, 603
Կատինկա (Կատոս), 365
Կարապետ, 17, 19, 20, 29, 40, 150, 442, 559, 561, 621
Կարապետ, եպիսկոպոս, 461
Կարապետ, վարդապետ, 464, 466, 478, 479
Կնսլեր, 237, 240, 241
Կիրակոս (Կիկո), 362
Կիրակոս Գանձակեցի, 461
Կիրակոս Վիրապեցի կաթողիկոս, 442
Կնյազ, 363
Կոհապատ, 63
Կոմիտաս կաթողիկոս, 12
Կոստանդ, 305
Կոստանդին կաթողիկոս, 444, 586, 587
Կոստանդին Մոնոմախ, 422, 432
Կուռդ Սալդխա, 424
Կուտուդով, 230
Հաղամ, 143
Հախնազար, 253, 293, 305
Հակոբ (Ակոբ), 25, 29, 36, 63, 263, 273, 276, 282, 310, 363, 450, 452, 559, 570, 576
Հակոբ առաքյալ, 437, 475
Հակոբ Դվնացի, 14
Հակոբ, եպիսկոպոս, 24, 25
Հակոբ կաթողիկոս, 37, 149, 450, 452, 479., 530, 532
Հակոբ Մծբնա Հայրապետ, 475
Հակոբ, վարդապետ, 456
Հաղբակյան Վասակ, 495
Համադասպ (Համո), 425, 433, 558
Համայակ (Համո), 558
Համասպրուհի, 146
Համավար, եպիսկոպոս, 422
Համբարձում (Համբո), 362
Համբարձումյան Գրիգոր, 165
Համուն, 585, 586
Համունյան Հասան, 585
Հայկազ, մելիք, 122, 128, 129, 145
Հայկանուշ, 364
Հայկաբամ, 362
Հայրապետ, 25, 32, 46, 151, 439, 480, 574, 575, 620, 621, 623, 626, 627
Հայրապետ (Հայրո), 363
Հայրապետ, եպիսկոպոս, 15
Հայրում, 214, 279
Հասան, 301-303, 309, 312, 422-424, 432, 433, 435, 529, 530, 577, 583, 588, 601, 604, 606, 627, 629
Հասան Ամադուեցի, 601

Հասիկ, 311
Հարութիւն, 123, 125, 140, 202
Հարութիւն Գանձակեցի, 465
Հարութիւն (Հարթին, Հարո), 45, 362
Հարութիւն, վարդապետ, 466, 467
Հարութիւնյան Հովհաննես, 576
Հեթում, 202, 215
Հեճուպ, 447
Հեյտար խան, 18
Հերակլ, 475
Հոր Երանելի, 425, 505
Հովազ, 363
Հովակիմ, 467, 559
Հովակիմ (Յովակիմ) Սյունյաց եպիսկոպոս, 12, 16, 28, 29, 218
Հովասաբ (Յովասաբ), 292, 438
Հովհան, 31, 438, 439
Հովհան-Ալան խան, 41
Հովհան Որոտնեցի, 16, 22, 23, 38, 65
Հովհան Փիլիսոփա, 321
Հովհաննես, 15, 16, 203, 205, 297, 425, 439, 441, 442, 472
Հովհաննես, արքեպիսկոպոս, 25, 33
Հովհաննես Դրասխանակերտցի, 14, 256, 456-460
Հովհաննես, եպիսկոպոս, 13, 14, 442, 585, 586, 588
Հովհաննես եպիսկոպոս Շապանօղլի, 45
Հովհաննես Համատունյան, եպիսկոպոս, 584, 585, 587
Հովհաննես, մելիք, 203
Հովհաննես Մկրտիչ, 471
Հովհաննես Նորատուղցի, 463
Հովհաննես Շնաթաղցի, 16
Հովհաննես Ռնդամալցի, 442
Հովհաննես, վարդապետ, 297, 439, 463-465, 469, 478
Հովհաննես Տաթևացի, 16
Հովհաննիսյան Մամբրե Ռչտունի, 571
Հովհաննյան, մելիք, 202, 223, 224
Հովսեփ (Հոսեփ, Յովսէփ), 123, 124, 423, 496, 610, 629
Հովսեփ, վարդապետ, 466
Հովսեփ, քահանա, 123
Հովսեփյան Գ., 432
Հռիփսիմե (Հռեփ, Խոռոմ), 16, 36, 42, 150, 364, 556
Հրանուշ, 558
Հրուշան, 130, 131
Հուդա (Յուդա), 423, 432, 440, 581, 583, 600, 602-605, 628
Հունադուր, 11
Հուսեյն (Սեի), մելիք, 122-125
Ձագ, նահապետ, 121
Ձաղիկ իշխան, 202
Ղազար, 432, 449, 451, 540
Ղազար Ջահկեցի կաթողիկոս, 439, 463
Ղազար վարդապետ, 476, 478
Ղազար Փարպեցի, 326, 496
Ղազարոս, 480
Ղալամ, 297
Ղալամեանց Դրիգոր, 33
Ղամա, սուլթան, 270
Ղամար, 299
Ղամենյան Հովակիմ, 467
Ղասում, 127, 128
Ղասումճան, 301
Ղատիֆա (Ղատո), 364
Ղարա բեյ, 126
Ղարիպ, 253
Ղարսաչ, 575
Ղոմս, 392
Ղորղանյան Ս., 372
Ղուլի, 44
Ղուկաս, 29, 55, 220-224, 288
Ղուկաս, եպիսկոպոս, 453
Ղուկաս, կաթողիկոս, 29
Ղուկաս Աղբաստեցի, 297, 309
Ղուկաս Սեբաստացի, 201
Ղուկասյան Ավետիք, 468, 475, 481
Մաղաթ, մելիք, 18
Մաղաթյան Պետրոս, 511
Մաթիկոս, 269, 281, 330
Մաթոս, 272, 302
Մաթոսի Գևս, 406
Մաթուխ, 509
Մաթուսաղա Քևրթող, 12
Մալխաս մելիք, 274
Մակար Շամչատինեցի, 464
Մահմեդ, 214, 516, 457, 627
Մաղաք, 301
Մամսխութուն, 253, 423, 433, 583
Մամաս, 286
Մամաք, 433, 627
Մամիր, 528
Մամշահ, 305
Մամբան, 301, 303, 309, 424, 434
Մայիլ, 306
Մանպուբ, 310
Մանուել (Մնա), 359
Մանուշակ, 285
Մանուչար բեկ, 18, 123, 125, 137, 140, 641
Մանուչար, մելիք, 271, 274
Մաշտոց, Սյունաց եպիսկոպոս, 10
Մաշտոց, վարդապետ, 437, 458, 459, 460, 468, 473, 475
Մաջնուժ, 364
Մաո Ն., 475, 476
Մաոյանյան Հարութիւն Շիրակեցի, 466, 467
Մատթեոս ափեսարանիչ, 438
Մատթեոս կաթողիկոս, 278, 456
Մատթեոս, վարդապետ, 529, 530, 577

Մատթեոս Ուռհայեցի, 327
Մարալ, 364
Մարդարէ, 439, 512, 614
Մարկարիտ, 258, 363
Մարուն, 293
Մարզպանյան Գրիգոր, 594
Մարթա, 559
Մարիամ, 29, 277, 364, 505, 558
Մարիամ, Սյունաց տիկին, 446, 458-460, 466, 471, 474
Մարիան, 558
Մարկոս, 281
Մարջան, 215
Մարտիրոս, 29, 36, 48, 57, 143, 480, 558, 581
Մարտիրոս, եպիսկոպոս, 16
Մարտիրոս Զերքեզյանց, 461
Մարտիրոս, վարդապետ, 478
Մարտիրոսյան Հայկանուշ, 569
Մեթոր, 438
Մելիք-Ազարյան Ազնքսանդր, 387
Մելիք-Ստեփանյան Մանուչար-բեկ, 202, 212
Մելիք-Ստեփանյան Մովսես, 201
Մելիք-Փաթսադանյան Եղիա բեկ, 206, 218, 219
Մելիք-Փաթսադանյան Սողոմոն, 202, 203
Մելիքսեդեկ կաթողիկոս, 461
Մելքիսեթ, 254, 259
Մելքոն, 311, 312, 438
Մելքոն ճղնավոր Տփխիսեցի, 466, 482
Մելքում, 308
Մելքումյան Հովհաննես, 21
Մեհմի խան, 124
Մեղիսոն, 434
Մեսրոպ, 11, 442
Մեսրոպ, եպիսկոպոս, 33
Մէլիք աղա, 274, 310
Մէլիք բէգ, 306, 312
Մէլիք Խաթուն, 300
Մէլիքխան, 282
Մէլիքսեթ (Մէլքյսէթ), 273, 274, 302, 306
Մէհրապ, 629
Մինա խաթուն, 47, 272, 577, 592, 599, 603, 606, 608, 616, 617
Մինաս, վարդապետ, 465
Մինաս Զինավոր, 475
Մինաս կաթողիկոս, 439
Մինաս Շնաթաղցի, 16
Միր, 292
Միրզա, 128, 253, 300, 306
Միրզախան, մելիք, 310
Միրզաճան, 306, 312
Միրզա Մկրտիչ, 277
Միրզա Սայիլ, 220
Միրզատ, 259
Միրզոյան, ճարտարապետ, 255
Միրման, 506
Միրվէլ, 479
Միրումյան Գ., 138
Միքայել Հրեշտակապետ, 518, 596
Մխիթար, 32, 39, 259, 260, 437, 440, 462, 528, 529, 614, 619, 620, 629
Մխիթար Գոշ, 268, 269, 425, 461
Մխիթար, եպիսկոպոս, 462, 479
Մխիթար, քահանա, 601, 610
Մխիթար Շամքորեցի, 464
Մխիթար Սեբաստացի, 462
Մխիթար սպարապետ, 143, 204-208, 211, 216, 218-220
Մխիթար, վարդապետ, 424, 434, 464, 478
Մխիթարիչ, 425, 434
Մկրտիչ, 33, 559
Մկրտիչ Ա կաթողիկոս, 462
Մկրտիչ, եպիսկոպոս, 451
Մկրտիչ, վարդապետ, 465, 466
Մնացական (Մնն), 362
Մովսես, 203, 287, 305, 425
Մովսէս Երզնկացի, 461
Մովսես Խորենացի, 9, 12, 230
Մովսես կաթողիկոս, 41
Մովսես մարգարե, 48, 398, 399
Մովսես, վարդապետ, 441,442
Մորիե, 464
Մուշեղ, 362
Մուսի, մելիք, 209, 212
Մուստաֆա, 202, 215
Մուրադբեկյան Խորեն, 255, 256
Մուրադ խան, 506
Մուրացան, 457
Մուքայիլ, 575
Յակոբոս, 31
Յակոբյան, 29
Յաղուպ բեկ, 425, 477
Յոհան, մելիք, 123
Յոհաննէս (Յոհաննէս), 25, 31-33, 149, 254, 282, 293, 311, 312, 423, 433
Յովհաննէս բարեւնապետ, 312
Յոհնիկ, 438
Յովհաննէս Սիւնեաց եպիսկոպոս, 613

Յովսէփ Սիւնեաց եպիսկոպոս, 67
Յուլիանոս, 603
Յուլպէկ, 623
Յուսէփ, 437
Յուսուփ, ոստիկան, 460
Նադիր շահ, 222, 224, 463, 497, 507
Նազիե, 364
Նաղլու, 29
Նաթէկ, 606-608
Նահապետ կաթողիկոս, 442
Նանուխ (Նանն), 557
Նասիպ, 140
Նավասարդիկ (Նավո), 558

Նատարդուլ, 629
Նար, մելիք, 20
Նարդիզ, 364
Նեռ, 392
Ներսես, 32, 288, 306, 583, 616
Ներսես Ե կաթողիկոս, 466
Ներսես, եպիսկոպոս, 16, 33, 461, 478
Ներսես Մեծ, 10, 13, 287
Ներսես Շնորհալի, 586
Ներսես, վարդապետ, 35, 425
Ներսես, ծառունապետ, 33
Ներսես, քահանա, 285
Նիազ, 450
Նիկոդայոս, 149
Նոյ, 392
Նորայր, 560
Նուբար, 203-205
Նուլուն, 627
Նունուֆար, 364
Նպատ, 283
Շահ Աբաս, 29, 45, 305, 438, 451, 497, 505, 506, 572
Շահանդուխտ Թադուհի, 32, 42, 65, 66, 146
Շահզադ, 306
Շահէ, 313
Շահիկ, 55
Շահխաթունյան Հովհաննես, եպիսկոպոս, 457, 465, 469, 473
Շահզուլ, 271
Շահմասուր, 575
Շահյան Մատթեոս, 201
Շահնազար, 29, 145
Շահնազար, մելիք, 123, 127, 215, 305-306
Շահնշահ, 258, 260, 285, 288, 312, 327, 441, 445, 460, 618
Շահ Սուլէյման, 148
Շահումյան, 203
Շահում, 203-206, 300, 303
Շաղուբաթ, 254, 262, 282
Շամիր, 265
Շամ շահ, 22
Շաչ Միայնակյաց, 509
Շապուհ Բ, 10, 11
Շապուհ Բագրատունի, 447
Շատլոյս, 332, 600
Շարո, 277
Շարդեն, 441
Շեկո, մելիք 322
Շիկոյան Հակոբ, 336
Շիրինյան, 150
Շիրինշահ, 613
Շմավոն, 280, 614
Շմաւոն, եպիսկոպոս, 32, 283-286
Շմաւոն, վարդապետ, 40
Շողակաթ (Շողո), 364
Շողեր, 565
Շուշան (Շուշանիկ), 13, 363
Ոհան, 440
Ոհանէս, 149, 242
Ոսկան, 223, 273, 279, 299
Ոսկան, վարդապետ, 426
Ոսկեհատ (Ոսկի), 560
Ովանէս, 269, 605
Ովհաննէս, 281, 296
Ումեկ, 614
Ովսաննա (Օսան), 363
Որբէկ, 603
Որդոր, 286
Զաղար, 50
Զամչյան Հ., 18, 43, 463
Զեսար, 519, 520, 610
Զերբեզյանց Մարտիրոս, 462
Զիլթախյան Զալ, Զորաբ, Սուլխան, 462
Պալասան, 212, 310
Պալի, մելիք, 203, 204, 216, 217
Պալիյանց, քահանա, 150
Պահլավունի Ապիրատ, 422
Պահլավունի Գրիգոր Դ կաթողիկոս, 443
Պահլավունի Հասան, 422
Պահլավունի Վասակ (Հոլում), 326, 327, 422, 424, 444
Պաղի, 311
Պապ, 56, 218, 294, 310, 478, 479
Պապախան, 450
Պապաք, 529, 530
Պատալ, 146
Պատվական, 362
Պարիք, 44
Պարոն, 123, 124
Պարոն Վաչէ, 433
Պարսամ, 452, 454
Պարուլր, 558
Պետրոս, 29, 45, 152, 423-425, 434, 471, 529, 530, 559, 582, 606
Պետրոս առաքյալ, 13,132,152, 433, 451, 479, 597
Պետրոս Գետադարձ, 441, 460
Պետրոս, եպիսկոպոս, 464
Պետրոս, վարդապետ, 260, 310, 500, 571
Պետրոս Բիբթող, Սյունաց եպիսկոպոս, 12
Պետրոսյան Վ., 337, 355
Պկինադար, 264
Պողոս (Պաւղոս), 425, 481, 559
Պողոս առաքյալ, 13, 582, 597, 603
Պռոշ իշխան, 311, 312, 317, 423, 496, 514, 528-530, 577
Ջալալ, Աղվանից կողմնակալ, 592, 608
Ջալալ Երեց, 282
Ջալալ, Տարսայիճի որդի, 523, 602, 603
Ջալալ, վարդապետ, 466

Ջալալյան Եղիա, 456, 467, 475
Ջալալյան Հ., 39, 268, 483, 527, 616, 621
Ջահան, 254
Ջանադ, 629
Ջանան, 369
Ջանի, մելիք, 516
Ջանշահ, 312
Ջանփոլատյան, 501
Ջավահիր (Ջավո), 364
Ջիվան, 364
Ջիվանշիր, 14, 363
Ջհանշիր, 283
Ջուրջ, 505, 602
Ռափայել Գանձակեցի, 464
Ռափայէլ, մելիք, 265
Ռոստոմ, 63
Ռոփչէն, 16
Ռըստակէս (Ռոստակէս), 311, 312, 433
Ռուզուքան, 423, 434, 436, 529
Ռուսա, 293
Ռուստամ, 215, 217, 264
Ռուստամ, մելիք, 125
Սադայել, 403
Սադուն, 33
Սարանդարյան Նևրաես, 144
Սաֆինովիկ (Սաֆո), 363, 558
Սալվինազ (Սալվի, Սալվի), 360, 558
Սահակ, 36, 258, 272, 300, 304, 309, 460, 559, 629
Սահակ Պարթև, 12, 13
Սահակ, քահանա, 570
Սահիպ-պիվան, 445
Սաղաթել, 271
Սամանզուլ, 284
Սամսոն, 577, 583
Սամուել, վարդապետ, 463
Սանամ, 364
Սանդուխտ, 363
Սանճար, 506, 604
Սասուն, 300
Սարգուր, 293, 297
Սարգիս, 15, 39, 148, 221, 259, 270, 272, 276, 299, 303, 332, 363, 423, 433, 435, 437, 442, 445, 447, 448, 501, 503, 521, 529, 571, 600, 601, 603, 628
Սարգիս, արքեպիսկոպոս, 267
Սարգիս, եպիսկոպոս, 424, 461, 465, 466, 490, 505, 586-590, 606
Սարգիս Իմաստասեր, 461, 469
Սարգիս կաթողիկոս Ձդնակեցի, 460, 469
Սարգիս Ռակառապատցի, 464, 466, 466
Սարգիս Սյունեցի եպիսկոպոս, 596, 599
Սարգիս, վարդապետ, 297, 328, 464, 466, 519, 572
Սարգիս, քահանա, 575
Սարգսյան Լյուդվիգ, 468
Սարկավագ, քահանա, 576
Սարուխան, 449, 451
Սարուխանյան, ուսուցիչ, 231
Սաֆրազ, մելիք, 18, 19, 58, 203, 204, 205, 220
Սաֆրազբեկյան Նազար, 18
Սէթ, 395
Սենեքերիմ, թագավոր, 40, 584, 66
Սէն Մարտեն, 422, 423
Սեւադա, 66, 277
Սերգեյ (Սերգո), 363
Սիդա, 582
Սիմեոն Անդեղակոթեցի, 16
Սիմեոն, եպիսկոպոս, 441
Սիմեոն կաթողիկոս, 16, 276, 290, 441, 463
Սիմոն (Սիմէոն), 56, 61, 432, 614
Սիսեւ Վ. Ս., 569
Սիրական (Սիրո), 362
Սիրանես (Սիրանէս), 587
Սիրանուշ (Սիրի), 559
Սիրմա, 270
Սիրուն Նան (Սուսնան), 216
Սմբատ, 559, 583, 610, 618
Սմբատ արքայազն, 41
Սմբատ թագավոր, 21, 145, 447, 571, 592, 593, 611
Սմբատ Շահնշահ, 441, 444, 447
Սմբատ, Սյունյաց իշխան, 39-41, 520, 533, 569, 574, 587 592, 611
Սմբատյան Մեսրոպ, 264, 268, 288, 293, 297, 306, 332, 438, 439, 440, 457, 468, 475
Սոլթան (Սուլտան), 48, 310
Սոլթան դուլի, 293
Սողոմոն, 201, 203 425, 447, 468
Սողոմոն, քահանա, 33
Սոփիա, 499, 570-572, 574
Ստարացկի, 137
Ստեփան (Ստեփանոս), 18, 29, 32, 65, 203-205, 208, 211, 212, 216-218, 220, 301, 302, 440, 450, 502, 503, 575, 600, 603
Ստեփանյան Միսաք, 338
Ստեփաննոս Մեղրեցի (Փախրը մսեհ), 590
Ստեփաննոս Աղվանից կաթողիկոս, 423, 433
Ստեփաննոս եպիսկոպոս, 253, 292, 495, 496, 502, 510, 511, 524, 581, 590, 591
Ստեփաննոս կաթողիկոս, 309
Ստեփաննոս, Սյունյաց եպիսկոպոս, 12, 15, 592, 607, 621, 626, 628
Ստեփաննոս, վանական, 460, 469, 465, 480

Ստեփանոս, քահանա, 259, 263, 285
Ստեփանոսյան Անտոն, 282
Սրբուհի (Սրբա), 364
Սուլթան, 258, 271, 478
Սուլթան Դիւլի, 294
Սուսամբար, 365, 559
Սուսան, 559
Սուբեն, 559
Սուփան Դնդունի, 570, 571
Սուփան իշխան, 449, 450, 575
Սուբիաս, 287, 398
Սևադա, 66
Սևուկ, նահապետ, 9
Վախախ, 597, 605, 609
Վախթանդ, 424, 433, 614
Վահան, 14, 444, 559
Վահան կաթողիկոս, 460
Վահրամ (Վարհամ), 55, 301, 437, 440, 587, 614
Վաղարշակ (Վաղո), 363
Վանական, հովհաննես, 327, 423, 440, 442, 445
Վաննեի, 56
Վանուշ, 59
Վաչե, 423, 433, 434
Վաչուա, 423, 433
Վառվառ կույս, 375, 402
Վասակ, 40, 423, 424, 460, 603, 610, 621
Վասակ իշխան, 277, 288
Վասակ Խաչենցի, 435, 505
Վասիլ իշխան, 253
Վարազդուխտ, 508
Վարազ Տրդատ, 42
Վարդ, 4204 582
Վարդ Երևանո, 424, 434
Վարդ Պատրոն, 425
Վարդան, 411, 422, 475, 481, 575
Վարդան Բարձրաբերդցի, 424
Վարդանիս, 299
Վարդանյան Վասակ, 496
Վարդանյան Տարսայրոս, 569
Վարդանշահ, 279
Վարդանուշ, 558
Վարդապետեան Յօհան, 278
Վարդիկ, 204, 577, 581, 582
Վարդկմրիկ, 423, 434
Վարդուհի, 364, 558
Վարսենիկ (Վարսա), 364
Վերապշահ, 424
Վեցիկ, վարդապետ, 435, 650
Վեցիկ, քարագործ, 435
Վիլաս, 57
Վիկտոր Լմմանուել, 467
Վիրապշահ, 433
Վրթանես, եպիսկոպոս, 424, 433, 441, 472
Վրթանես, հայրապետ, 260
Վուշ, 333
Տաթևու պեկ, 306
Տաթևացի Պետրոս, 571
Տալիզա, 255
Տաճատ, 293
Տաշուբակ, 299
Տատուղան, 262
Տեր-Աբրահամյան Ավետիս, 484
Տեր-Ավագյան Գրիգոր, 484
Տեր Ավետիք, 207-211
Տեր-Թադևոսյան Միքայէլ, 426
Տեր-Հարությունյան Հովհաննես, 571, 576
Տեր-Հարությունյան Մխիթար,202
Տեր-Մարտիրոսյանց Հովհաննես, 464
Տեր-Միքայելյան Եղիազար, 336
Տեր-Միքայէլյան Կարապետ, 484
Տեր-Միքայէլյանց Միքայէլ, 588
Տեր-Մովսիսյան Իգնատիոս, 535
Տեր-Սահակյան Անտոն, 282
Տիգրան, 363
Տիլիճան, 270, 271
Տիրատուր, 439, 607
Տիրացու, քահանա, 280
Տիրոտ, քահանա, 11
Տիրուհի (Տիրուն), 364
Տրդատ Թագավոր, 9, 10, 457, 472
Տրդատ, կալմոդ, 254
Տրուն, 285
Տուրնըփոր, 441
Ռադդև, 240
Ռաֆֆի, 214
Ռևպևկա, 481
Ուլուբէկ, 310
Ուլուխան, 310
Ուլուս, 607
Ուհան, 303
Ուղուբ, 274
Ուվարովա, 569
Փալիկ, 607
Փախպադուխ, 592, 599, 600, 607
Փանահ, 29, 123, 127, 199, 215
Փանէս, 57
Փանի, 214
Փանոս, 452
Փաչա, 294
Փաչախաթուն, 297
Փառանձեմ, թագուհի, 10
Փասարա, 294
Փարամազ, մելիք 122, 128
Փարի, 310
Փարիխաթուն, 36
Փարսադան, մելիք, 462
Փարսադան Ա, մելիք, 202, 203
Փարսադան Բ, մելիք, 203, 204-209, 211-213
Փարսադան Գ, մելիք, 203, 220, 224, 225
Փիանդ, 312
Փիլիպպէ, նահապետ, 13

Փիլիպպոս, եպիսկոպոս, 425, 441, 442
Փիլիպպոս, կաթողիկոս, 16, 442, 462
Փիլոյան Սարգիս, 337, 410, 457, 462, 468, 469
Փիրհամզա, 262, 270, 273, 274
Փիրիմ, 303
Փոկաս, Հայրապետ, 584, 585
Փռանակշահ, 614
Փրանգյուլ, մելիք, 45, 202, 203, 213-215, 217, 218
Քամալ, 310
Քամալպէկ, 307
Քաջաղոր, 261
Քաջբերունի, 483, 494, 519, 524, 588, 610, 616-621
Քասպար, 312
Քարամ, 202, 213-215, 218, 222, 223, 302
Քարամպուլի, 29
Քիշմիր, 272
Քիրամ, կազմող, 254, 274, 282, 284, 399
Քյոռօղլի, 331
Քոչաքչեր, 445
Քրխտասփոր, 32, 510, 571
Քուրդ (Քյուրդ), 423, 433, 472, 482
Օհան, 139, 203, 207, 208, 212
Օհանես, 40
Օլանես, 225, 572
Օվսան, 265
Օրբելյան Ավագ, 258, 272
Օրբելյան Բուրթել, 39, 260, 587, 592-594, 601
Օրբելյան Էլիկում (Ալակում), 40, 592, 593, 599, 608, 611
Օրբելյան Լիպարիտ, 40, 503, 524, 577, 586-588, 591, 592, 599
Օրբելյան Պետրոս-բեգ, 588
Օրբելյան Սմբատ, 40, 520, 537, 587, 600, 601, 618, 621, 627
Օրբելյան Ստեփանոս, 11-13, 15, 25, 32, 39, 42, 153, 299, 308, 437-449, 451, 453, 456, 458, 483, 490, 494, 495, 498, 503, 505, 508, 510, 512, 513, 519, 521-527, 531, 570, 571, 577, 584, 587, 588, 591, 592, 599, 605, 610, 611, 616, 621
Օրբելյան Տարսայիճ, 32, 33, 39, 40, 50, 148, 151, 281, 490, 495, 505, 524, 559, 577, 582, 591, 592, 593, 599, 602-608, 611, 614-617, 619, 621, 626-628
Օրդուխան, 364
Ֆաթալի խան, 213-216, 219, 509
Ֆաթալիշահ, 588
Ֆեթվաճյան, 472

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբասաչեն, գյուղ, 587
Ագարակ, դյուղ, 202, 203, 213
Ագարակի ձոր (Այար), դյուղ, 491, 498, 503, 511, 586
Ագռավախաչ, 152
Ագուլիս, 149, 209, 211, 212,
Ագուլիս Վերին, 201
Ադա-Թափա, գագաթ, թերակղզի, 227, 230, 244, 246, 314, 316
Ադամխան, գյուղ, 277
Ադիաման Ներքին, գյուղ 280, 283
Ադատ (Ադատակ), գյուղ, 513, 531, 532, 587
Ադնաբերդ, գյուղ, 500
Ադնվաձոր (Գյոզալդարա), գյուղ, լեռ, գետակ, 234, 291, 292, 294, 295, 389, 402
ԱԹ-տաչ, գյուղ, 300
Աժդահա-բուռուն, ժայռ, 507
Ալադյազ (Ղոյթուլ), գետ, 488, 490, 516-519, 522, 611
Ալա-գյոլ, լիճ, 51, 132, 227, 228, 301
Ալաղայա, լեռ, 132, 133
Ալաշկերտ, 261, 263, 275-280, 283-288, 292-295, 298, 321-323, 534
Ալափարս, գյուղ, 320, 421, 325, 438, 467
Ալափափախ, սար, 267
Ալ բերդ, ամրոց, 287
Ալբուլաղ, գյուղ, 318
Ալեար, գյուղ, 490
Ալելու, գյուղ, գետակ, 19, 53, 54, 59, 66
Ալեքսանդրապոլ, 465, 473, 489
Ալեքսանդրապոլի գավառ, 226, 265, 268, 314, 335
Ալեքսանդրովկա, գյուղ, 266, 335
Ալիանլի, Հնթաշրջան, 136
Ալիբեկ, լեռ, 248, 251, 319, 320, 325, 329
Ալիլու, գյուղ, 509
Ալիխան-փայասի, գյուղ, 490, 519
Ալիղուլի, գյուղ, 123, 154
Ալիչար, գյուղ, 52
Ալմալու, գյուղ, 523
Ալմերան, լեռ, 43
Ախալցխա, 522
Ախալքալաք, 522
Ախալթյան, գյուղ, 52, 53, 56, 66, 67, 87
Ախվերան, գյուղ, 329
Ախտա (Գոմք, Գոմեր, Գյոմուր), Ախտա (Գոմք, Գոմեր, Գյոմուր), գյուղ, գետ, 233, 235, 252, 317-319, 321, 336, 372, 321, 490, 527, 529
Ախուրյան, գետ, 441
Ակնախառ (Զորախաչ), գյուղ, 286
Ակորի, գյուղ, 467, 587, 600, 606
Ահմանկան (Գեղամա), գագաթ, լեռնաշղթա, 227-229, 233, 234, 250, 330
Աղահեճք, գավառակ, 51, 122
Աղանձ, գյուղ, գետ, 24
Աղավնաձոր (Ըղնաձոր, Այնագյուլ), գյուղ, գետակ, 522, 523
Աղբազար, գյուղ, 297
Աղբակ, գավառ, 515, 529
Աղբաշ, գետ, 42
Աղբերիս, ագարակ, 586
Աղբուլաղ, գյուղ, 234, 316
Աղգիլիր, գյուղ, 257, 264, 320
Աղթամարի եկեղեցի, 578
Աղիտու (Աղուտի), գյուղ, 12, 66
Աղճա-քյանտ, գյուղ, 501
Աղմաղան, լեռ, լեռնաշղթա, 229, 331, 332, 333, 334, 387
Աղջկա բերդ, 332
Աղստև, 444
Աղ-սու, գետակ, 313, 314
Աղվանք, 12
Աղ-փարա, գյուղ, 321, 334
Աղքենդ, գյուղ, 34, 57, 290, 520
Աղքիլիսա, գյուղ, 311, 492, 523
Աճամ խան, գյուղ, 263
Ամաղու, գյուղ, վանք, 504, 534, 583, 584, 587, 588
Ամարասի վանք, 424
Ամենափրկիչ, մատուռ, 281
Այլախ, գավառակ, 9
Այասախ, գյուղ, գետակ, 492, 517, 620
Այրի գետ, 42, 52, 53, 58, 61, 233
Այրիջա, գյուղ, գետ, 227, 288, 290, 291
Այրի-սար, 52
Այրիվանք, գյուղ, 265, 439
Այրիվանք (Հովհաննավանք), 265, 439, 651
Անապատ, բերդ, գյուղ, 586, 587, 600
Անգեղակոթ, գյուղ, 20, 19, 57, 65, 66
Անգեղձոր (Մարտիրե), 513
Անգիր վանք (Գանձավանք), 454
Անդուք (Անկանք), գյուղ, 499
Անդրկովկաս, 230, 240
Անի, 18, 425, 441, 474
Անձուկ, գյուղ, 267
Աչտարակ, 329
Ապանա, 519
Ապարան (Բաշ-Ապարան), գյուղ, 234, 235
Ապողեն, գյուղ, 523

Ապրակունիս, գյուղ, 210
Առաչգիրան, գյուղ, 531
Առաջաձոր, գյուղ, 201, 203, 223
Առաքելոց Եկեղեցի, 14, 32, 437-462, 471-474, 478, 482
Առնեղ, գյուղ, 262
Ասաղ, բերդ, 287
Ասլանիկ, գյուղ, 514
Աստվածածին սբ., եկեղեցի, 18, 28, 30, 37, 38, 47, 57, 111, 212, 255, 259, 273, 276, 277, 281, 285, 291, 317, 318, 320, 325, 448, 449, 453, 462, 464, 465, 467, 468, 473, 479, 480, 481, 530, 577, 578, 581, 583, 584, 587, 594, 605, 606, 609, 611, 621, 652
Աստվածածին սբ., վանք, 326, 328, 438, 440-442
Աստվածընկալ, մատուռ, 268
Աստրախան, 464
Ավաջուղ, գյուղ, 269, 322, 325
Ավարայր, 519
Ավդալ-ալալու, գյուղ, 284
Ավեշ, գյուղ, 587
Առէար, գյուղ, 501, 571
Աորպատական, 14, 157, 527
Արաբիա, 232
Արաժին, լեռ, 51
Արալըխ, գյուղ, 507
Արաշատ, գետակ, 234
Արավուղ, գյուղ, 154
Արատես, գյուղ, վանք, 517, 587, 604, 620, 621, 626, 628
Արարատյան դաշտ, 456
Արարատյան նահանգ, 252, 253, 425, 441, 485
Արաքս (Երասխ), 9, 26, 52, 60, 89, 134, 211, 220, 222, 232, 233, 485, 488, 489, 582
Արդինի, գյուղ, 290
Արզալաս, գյուղ, 524
Արզիէ, գաղաթ, 488
Արևգունի (Գյունեյ), լիճնաշղթա, 59, 234, 237, 252, 311, 315
Արզաքենտ (Արտազական), գյուղ, 325, 329, 439
Արզումանի կամուրջ, 48
Արիկլի, լեռ, գետ, 19, 51, 52, 65
Արինջ, գյուղ, 510
Արխաշան, լեռ, 228, 234, 500
Արծափ, գյուղ, 262, 268, 271, 323, 328
Արծիվաքար, գյուղ, 270
Արծվաթռիչ, մատուռ, 272
Արծվանիկ, գյուղ, 202, 203, 213, 215-219
Արզյաղ (Արկաղ), գյուղ, 475, 489, 510, 553
Արճիշ, գավառ, 288, 321
Արմազ, լեռ, 43
Արմավիր (Ռուսաստան), 514, 531
Արջանոց, լեռ, 270
Արտաբոյնք (Էրդաւիին), գյուղ, գետակ, 491, 492, 513, 516, 518, 519, 576
Արտանիշ, գյուղ, 313, 314
Արտաշավ, լեռ, 133
Արտավաղդա վանք, 324, 436
Արտավուճ, սար, 234
Արտից (Սոդեից) գավառ, 252, 309
Արցախ, 51, 460, 513
Արփա-գյոլ, լճակ, 235
Արփա, գյուղ, 490, 491, 494, 498, 504-506, 512, 523, 584, 586-588, 606, 611
Արփաչայ, գետ, 228, 488-492, 498-507, 510, 516, 523-526, 529, 533, 570, 587
Արփաչայ արևելյան, գետ, 228, 487, 488
Արևելյան Նիդ, գավառ, 252, 253
Արևիք, 51, 227
Արևմտյան Եվրոպա, 47
Աւան, գյուղ, 437
Աֆրիկա, 232
Բաբաջան-դարասի, գյուղ, 315
Բաբաքիշի, գյուղ, 324
Բագարչայ, գետ, գյուղ, 49, 51, 52, 57, 61, 64, 124, 134, 135, 150
Բաղաբրենա, գյուղ, 9, 47, 52, 53, 69
Բաղրկյան, գյուղ, 269
Բալխում, 275
Բալաք, գյուղ, 19, 63, 66
Բահրլու, գյուղ, 49
Բաղաբերդ (Բաղակու-քար), ամրոց, 14, 15, 208
Բաղավուրճ, գյուղ, 224
Բաղք, գավառ, 9, 23, 42, 51, 611
Բայանդուր, գյուղ, 135, 154
Բանտի թաղ (ք. Նոր Բայազետ), 254, 256
Բաշարեան, լեռ, 133
Բաշ-Նորաշեն, գյուղ, 335, 486, 520, 552, 584
Բաշքենտ, գյուղ, 272, 494, 513, 514
Բասարգեչար (Վասակաշեն), 234, 252, 276, 295, 296-298, 335, 336
Բավն, գյուղ, 278
Բարաթու, լեռ, 268
Բարաքայթ, գյուղ, 271
Բարգուշատ (Բարկուշատ), 52, 66, 122, 132, 134-137, 147, 213, 215, 582, 621, 628
Բաքու 60, 67, 68, 72, 92, 119, 141, 143, 144, 155, 156, 161, 169, 198, 275, 283, 468, 500, 509, 582, 621, 628
Բենգալա (Բուլախլար), գյուղ, 509

Բնդղեհեմ եկեղեցի, 300, 304
Բնխ, գյուղ, 202-204, 224, 225
Բերդաքար, ամրոց, 204
Բերդիմայր, գյուղ, 533
Բերդի սար, 63
Բերդքն, գյուղ, 459
Բնունիս, գյուղ, 56, 57, 66, 67
Բոլորաբերդ (Պառչի բերդ), 514
Բորչալու, 307, 332, 372, 389, 410, 411, 537
Բջնի, բերդ, գյուղ, 232, 247, 253, 326-328, 423, 440-445
Բռնակոթ, գյուղ, 17-19, 55, 66, 67, 70, 80, 91, 109
Բուլբուլյան, գյուղ, 492
Բուրթելաշեն, եկեղեցի, 594
Գաղրել, լեռ, 24
Գալաստար, գյուղ, 287
Գանձակ (Գանձասարյանտառ, Գյոտամահմատ), գյուղ, 262, 263
Գանձակ, գավառ, քաղաք, 9, 15, 154, 202, 215, 226, 250, 259, 263, 315, 372, 411, 485, 487, 535
Գանձասար, գյուղ, 298
Գանձավանք, 454
Գառնի, գյուղ, 449, 459, 577, 582, 621
Գավառապետ (Քավառ), 233, 253, 257, 270
Գարահող, լեռնաշղթա, 130
Գեղամա երկիր, 287, 300, 306
Գեղայու բերդ, 332
Գեղարքունի, գյուղ, 213
Գեղարքունիք (Գեղամա գավառ, Գեղարքունի), 5, 227, 230, 252, 257, 264, 268, 287, 293, 297, 387, 388, 412, 448, 460, 462, 463, 465, 466, 468, 469, 474, 520, 583, 621, 643
Գեղի, գետ, 208
Գենալու, գյուղ, 523
Գենդարա, գյուղ, 507
Գետաբեկ, գյուղ, 315
Գետաթաղ, գյուղ, 43, 44, 46
Գետիկ, գետակ, վանք, 32, 234, 269
Գետամէջ, գյուղ, 447
Գիլ (Մաղրա, Սոդ), գաչտավայր, գետ, 226, 227
Գիլլ, լիճ, գետակ, 231, 234, 245, 252, 300, 303
Գինալ-գադ, լեռ, 227, 228
Գինեչիկաձոր (Թմաձոր), 529
Գլաձոր (Գայլաձոր, Ղարա-վանք), 515
Գյարուտ (Կապույտ), գյուղ, 527
Գյադուկ, վանք, գյուղ, 516
Գյավուր-գալա, 142
Գյարմարի, գյուղ, 61
Գյոդ-Աբաս, գյուղ, 489, 508
Գյողչա, գետակ, լեռնաշղթա, 262, 488
Գյողակ-բուլաղ, գյուղ, 295, 296, 298, 301, 448
Գյողալղարա, գյուղ, լեռ, գետակ, 228, 234, 291, 292, 294, 295, 389, 405, 488
Գյոյ-սու, գյուղ, գետակ, 308
Գյուլաստար, գյուղ, 292
Գյուլլի-գյուղ, գյուղ, 517
Գյումբետ, լեռ, 294
Գյումուշխանեն, գյուղ, գետակ, 490, 524, 525
Գյունեյ-վանք, գյուղ, 492, 518
Գնդեվանք, 500, 501, 570, 571, 574, 576
Գնդեվազ, գյուղ, 484, 494, 497, 500, 501, 540, 548, 570, 574
Գոլաղամ, գյուղ, 515
Գոլաստակու գետակ, 234
Գոլոչաի վանք, 586
Դամաձոր, գյուղ, 232, 270, 313, 459, 471, 476, 232, 459, 471, 476
Դորխ, գյուղ, գետ, 26, 38, 68, 72, 96, 122-125, 135-142, 144, 145, 148, 152, 154, 155, 159, 167, 172, 174, 192, 194
Դորխ Հին (Վերի Շեն), գյուղ, 123, 139, 140
Դրիգորապոլ, քաղաք, 474
Դրիգոր Լուսավորիչ սբ., եկեղեցի, վանք (Տաթևի վանք), 13-15, 28, 279
Դրիգոր սբ., եկեղեցի, 422-424, 426, 428, 429, 431, 432, 433, 435, 446, 447, 584, 592
Գևորգ (Գեորգ) սբ., եկեղեցի, 45, 62, 111, 272, 275
Գևորգ (Գեորգ) սբ., մատուռ, 151, 269, 328, 444, 508, 509
Դուգարք, 41, 441
Դադալի կամուրջ (Դալի-պերան), 489, 504
Դաղաղըչլաղ, գյուղ, 323, 325
Դալիղարդաշ, գյուղ, 233, 235, 270, 271, 274, 275, 462
Դալի փաշա, գյուղ, 323, 325
Դալիկ-թափա, գյուղ, լեռ, 328, 329, 489, 496, 507
Դալլակլու, գյուղ, 334
Դալլար, գյուղ, 328, 329
Դաղձանոց (Յարփուզլու), գյուղ, գետ, 296
Դայլախլու, գյուղ, 490, 493, 494, 512
Դանիել (Ստեփանոս) սբ., մատուռ, 62
Դաստակերտ, գյուղ, 34, 53
Դավաղյոզ, դագաթ, 228, 234, 235, 487
Դավալու, գյուղ, 290

Դավա խարապա, գյուղ, 332
Դավա-օլան, գյուղ, 506
Դարարաս, գյուղ, 42-44, 46, 47, 66, 67
Դարալագյազ, 210, 484, 485, 487-492, 496-500, 504, 507, 509-511, 513, 515, 520, 532, 537, 558
Դարաչամբ, գյուղ, 553
Դարաչիչակ, գավառակ, գետակ, 226, 227, 246, 253, 319, 321, 335, 336, 435, 454, 467
Դարբանա, գյուղ, 621
Դաուղլու, գյուղ, 135, 147
Դափուց վանք, 260
Դգմաչեն, գյուղ, 267
Դեմուրչիլար, գյուղ, 525
Դիաղին, գավառ, 297
Դիդամ, գյուղ, 292
Դիզ-վանք, գաղաթ, 488, 523
Դիզա, գյուղ, 263
Դիզափայտ, 210
Դունայան, մատուռ, 46
Դվին, 459
Դրախտիկ, գյուղ, սար, 234, 316
Դուդաղ, գյուղ, 278
Եղեգիս (Եղեգիք, Ալագյազ), գյուղ, 497, 516, 518, 576, 578, 610, 611, 616, 619
Եղեգնաձոր (Եղեգեաց ձոր), գավառ, 496, 516, 602, 609, 628
Ելենովկա, գյուղ, 231, 232, 235, 236, 240, 241, 254, 255, 265, 335, 336, 467, 471, 476
Ելիսավետպոլի (Գանձակի) նահանգ, 9
Եղիակ, լեռ, 45, 46
Եղնանխաս (Եղնանխաս), գետակ, 233
Եղվարդ, գյուղ, 203 213, 214, 215, 458
Եմազլու, գյուղ, 213
Ենղիջա, գյուղ, 491, 503, 529, 533
Եվրոպա, 47
Երանոս (Զագ), գյուղ, գետ, 233, 276
Երիցվանք, 202
Երնջակ, 51, 474
Երուսաղեմ, 31, 269, 416, 418, 465-467
Երևան, 17, 126, 204, 264, 265, 289, 292, 319, 320, 325, 326, 331, 334, 335, 336, 423, 426, 434, 435, 441, 449, 459, 463, 464, 465, 467, 476, 480, 484, 485
Երևանի նահանգ, գավառ, խանություն, 226, 233, 246, 250, 255, 257, 288-291, 308, 334, 485, 487
Զարուխ, գյուղ, գետ, 134, 147
Զակ, գետակ, 52
Զաղալու, գյուղ, 230, 295, 298, 404
Զանգնդոր, գյուղ, 270, 275
Զանգեզուր, 7-9, 17, 26, 51, 52, 59, 68, 69, 122, 125, 128, 132-138, 153, 154, 157, 158, 165, 171, 178, 182, 189, 192, 196, 201, 274, 288, 485, 487, 491, 500, 509, 511
Զառ, գյուղ, 332-334
Զարղիբիր, գյուղ, 311
Զեյթա, գյուղ, 532
Զեյվա, գյուղ, 154, 202, 213
Զիարետ, լեռ, 132, 228, 229
Զիրակ, գյուղ, 499
Զիրոյի, գյուղ, 287
Զիք վանք (սբ. Գևորգի մատուռ), 508
Զող (Սող, Սոդք), գյուղ, գետակ, 231, 234, 244-246, 252, 301, 308, 309, 311
Զորավոր խաչ, խաչքար, 286, 389
Էլփին, գյուղ, գետակ, 490, 523, 524
Էճանան, 223
Էջմիածին, 30, 34, 126, 226, 233, 293, 438, 442, 456, 457, 461, 462, 464, 465, 467, 480, 495, 537
Էլդիզ, գյուղ, 503
Էֆենտի-քենտ (Ռախման-քենտ), գյուղ, 265
Ընգեղի մատուռ, 519
Ընկուզաձոր, 532
Ըրկենանց, գյուղ, 202, 213
Թաղեաս սբ., եկեղեցի, վանք, 267, 297
Թաղա գյուղ, 19, 279
Թալալոց մատուռ, 292
Թաղամիր, գյուղ, 221
Թամաքեչու եկեղեցի, 208
Թայչարուխ, գյուղ, 323, 324, 454
Թանահատ, գյուղ, վանք, 495, 496, 510, 511
Թանդրլու, լեռ, 487
Թառաթուն, գյուղ, 521
Թառատափ, գյուղատեղի, 268
Թավլի, գյուղ, 297
Թավրիզ (Դավրեժ), 16, 58, 61, 206, 587
Թաքալու, գյուղ, 323, 324, 436
Թեղխարապա, գյուղ, 331, 333
Թեհրան, 128
Թեղուտ, գյուղ, 628
Թերփ, գյուղ, 525
Թխու աղբյուր, 318
Թիֆլիս, 44, 155, 161, 204, 226, 252, 256, 275, 283, 464, 476, 483, 500, 509, 616
Թիկուտ (Եկդաստա), գյուղ, 206
Թյաք-սար, 24
Թյուաքյուլլու, գյուղ, 298
Թոխլուճա, գյուղ, 316, 331
Թումմայի սբ., վանք, 211, 212
Թորոսաձոր, 213, 214
Թուխ դաղ, դաղաթ, 228, 487, 488
Թոփրաղ-դալա, գյուղ, 280, 283

Թուխ մանուկ, 269, 273-275, 292, 320
Ինակ, գյուղ, լեռ, 229, 246, 308
Ինճա, գյուղ, 313
Իշխանագետ (Կոթա գետ), 233, 234, 283
Իշխանադյուղ, 283
Իշխանաձոր, 284
Իշխանավանք, 283, 292
Իտալիա, 467
Իրիմիս, գյուղ, 49
Լաթար, գյուղ, 295, 298
Լաչին, լեռ, 133
Լաստ, լեռ, 51, 56, 137, 178
Լեհաստան, 47
Լեհվազ, գյուղ, 221
Լծեն, գյուղ, 34, 44, 49, 52, 66
Լճատեղ (Գյոլ), գյուղ, 279, 280
Լյուլապար, լեռ, 51, 133
Լոռի, 125, 394, 425, 441, 461, 537
Լոր, գյուղ, լեռ, 42, 44-46, 51, 66, 67, 111
Լորաձոր, հովիտ, 23, 24, 42-44, 49, 51, 66
Խազախաչ, ուխտատեղի, 389, 400
Խամուր, գյուղ, 287, 292
Խաչ սբ., եկեղեցի, 278, 317
Խաչ սբ., վանք, 511
Խաչ սբ., ուխտատեղի, 270
Խաչաձոր (Ալիղրուզի), գյուղ, 285
Խաչեն, 424, 433
Խաչեր, եկեղեցի, 55
Խաչիկ, գյուղ, 494, 501, 537, 541, 548, 561, 572
Խաչ-քար, լեռ, 24
Խասթուր, գյուղ, 283
Խասխասիկ, գյուղ, 34
Խարխլըղ, գյուղ, 289, 290
Խզրանց, գյուղ, 202, 213
Խերսոնի նահանգ, 474
Խմայդատ, գագաթ, 132
Խնածախ, գյուղ, գետակ, 122, 128, 134, 144, 153, 154, 511
Խնձորեսկ, գյուղ, գետակ, 68, 72, 76, 116, 122, 125-128, 135, 139, 142-144, 154, 155, 161, 165, 193, 204, 219, 220
Խոզնավար, գյուղ, 154
Խոյ, գավառ, 60, 62, 64, 267, 322, 323, 325, 500, 518, 521, 529, 534
Խոյախան, բերդ, 424, 433
Խոյանա, գյուղ, 518
Խոյիկան, գյուղ, 505
Խոսո, գյուղ, 34, 46, 123, 124, 147, 151, 154, 206, 207
Խոտանան, գյուղ, 216
Խորասան, 118, 258
Խչաղբյուր, լեռնաշղթա, 45
Խուդափերինի կամուրջ, 213, 214
Խուլինակ, գյուղ, 621
Ծակերի ձոր, 55, 122, 123, 138
Ծակ-քար (Դալիկ-դաշ), գյուղ, գետակ, 233, 278, 279, 314, 452, 459
Ծաղկաձոր, գավառակ, 247, 253, 267, 422
Ծաղկաձոր, Ծաղկոցաձոր (Դարաչիչակ, Կոստանտինովկա), գյուղ, 235, 319, 421, 426, 587, 648, 650, 654, 657, 658, 659, 661, 663, 664
Ծաղկավանք, մաստուռ, 274, 279, 280, 401
Ծաղկունք, գյուղ, 267, 462
Ծառու սբ. Յոհաննէս, ուխտատեղի, 46, 111
Ծառուբի կամուրջ, 519
Ծար, գավառակ, գետ, 51, 252, 297
Միծեռնավանք, 131, 132, 134, 152, 153, 178, 181, 190, 197, 641
Միրանավոր, ուխտատեղի, 325
Մծախաչ, եկեղեցի, 504
Մկրիկ (Մուկրուկ), գյուղ, 533
Մղուկ, գավառ, 9, 23
Մմակ, գավառ, 252
Մմու բերդ, 287
Մովեր, գյուղ, 205
Կաբախլու, գյուղ, 324
Կաթնաղբյուր, 255, 319, 367, 388, 444
Կաթուղիկե սբ., եկեղեցի (Կեչառիսի վանք), 422, 423, 426, 429
Կալա-Հասանլի, գյուղ, 52
Կալեր, գյուղ, թաղ, 202, 218, 220, 254, 255
Կալերու ջուր (Ղըրխ-բուլաղ), գետակ, 234
Կաղզվան, 424
Կանանչ աղբյուր, 388
Կապան (Ղափան), 14, 40, 203, 206, 225
Կապանի (Ղափան) գավառ, 9, 14, 51, 68, 201, 202, 611
Կապույտ բերդ, 509
Կապույտ ջուր, 307
Կատոս, գյուղ, 154
Կարալար, գյուղ, 52
Կարա-կալա, գյուղ, ամրոց, 324, 331, 332, 335
Կարապետ սբ., եկեղեցի, 66, 254, 273, 356, 472-474, 478, 577, 578, 580-582, 584, 585, 588, 590, 592, 594, 599, 601, 604, 606, 621
Կարապետ սբ., վանք, 210, 474
Կարավանսարայ, գյուղ, 235, 314
Կարենավանք, 329, 437
Կարենիս (Գյումուշ), գյուղ, 236, 329, 437
Կարմիր դաշ, լեռ, 24

Կարճաղբյուր, գյուղ, գետակ, 234, 295
Կարճևան, գյուղ, 211, 220-222
Կարմիր կոնտ, գյուղ, 271
Կարմիր-սահիկա, լեռ, 487
Կարմիր-սար, 510
Կարմիր վանք, 64, 216, 217, 269, 465, 588
Կարմրաքար, բերդ, 205
Կարս, 335
Կեչաչկատ, լեռնաշղթա, 229, 233
Կեչառիս, 318, 319, 421, 422, 424-426, 441, 647, 648, 658, 659, 661, 663, 664
Կեչուտ (Դուշչի-բլուր), գյուղ, 499
Կեսարիա, 10, 287
Կետան-Թափա, լեռ, 51
Կղնուտների գետակ (Ղարանլըղ), 234
Կըզկալա, գյուղ, բերդ, 332, 333
Կըզըլ-բուլաղ, գյուղ, 300
Կըզըլ-ղշլաղ, գյուղ, 490
Կըլըչլու, գյուղ, 441
Կթանոց, գյուղ, գետակ, 234, 447
Կթանոց Սաոլին (Ալուջալու Ներքին), գյուղ, 294
Կիս եկեղեցի, 55
Կիտանոց, գյուղ, 621
Կիրակոսիկ, գյուղ, 57
Կիրակոս սր., անապատ, 61
Կյարկիրաշ, գյուղ, 295
Կյուպրու սար, 51
Կնեվանք, 518
Կնիշիկ, գյուղ, գետ, 490, 492-494, 501, 531, 533, 534, 540, 554, 571, 572
Կնիշիկի ձոր (Թմաձոր), 531, 533, 583
Կոթ, գավառակ, գյուղ, գետակ, 32, 233, 252, 453
Կոթա սր. Աստվածածին (Կոթավանք), 277, 278, 444, 449, 470
Կոթիկ, գետակ, 234
Կոզա (Կոզակա), գետակ, 233
Կոնդուրո-ալանդյոզ, լեռնաշղթա, 227, 228, 487, 488, 489, 498
Կոչա-բուլաղ, գյուղ, 304
Կոռնիձոր, գյուղ, 125, 144, 154
Կովկաս, 34, 154, 248
Կոտայք, գավառ, 441
Կորչուլու, գյուղ, 325
Կորու, գյուղ, 123, 154
Կուի, գյուղ, 293, 295
Կ. Պոլիս, 47, 204
Կռգաբակ, գավառակ, 252
Կռնատու բերդ, 204, 205
Կրով եկեղեցի, 109
Կումուր-գազ, գագաթ, 228
Կուլլի, գյուղ, 334
Կույա Վառվառ, մատուռ, 397

Հարանդ, գավառ, 23, 53
Հաղկա, լեռ, 330, 331, 334
Հաղարածիրկիչ սր., եկեղեցի, 58
Հալիձոր, գյուղ, բերդ, 34, 36, 52, 123, 124, 147, 148, 154, 202, 203, 206, 207, 209-212, 216, 217-220, 224, 225, 587
Հալիձորի ծակեր, քարայր, 149
Հալլավար, գյուղ, 304
Հախլու, գյուղ, 502
Հակոր սր., ուխտատեղի, 531
Հաղպատ, 441
Հաճի սամլի, գյուղ, 136
Համասուր, լեռ, 487
Համոկան, գյուղ, 278
Հայաստան, 40, 47, 57, 121, 461, 463, 468, 480, 483
Հայկական նահանգ, 319, 426
Հայկաձոր, գյուղ, 317
Հայրավանք (Հայր Հովհաննու վանք, Մարգաղավնյաց վանք), 265, 439, 474
Հանդ, գյուղ, 220
Հաչաջուր, գյուղ, 464
Հասանի գյուղ, 518-520
Հավթման, գյուղ, 531
Հարար, գյուղ, 154
Հարժիա (Յայհի), գյուղ, 49, 207, 323, 490
Հարութիւն սր., եկեղեցի, 423, 431, 434, 457, 466, 647
Հաքարի, գետ, հովիտ, 52, 132, 134, 136, 137, 145, 157
Հեչին, գյուղ, 524
Հերիկ, գյուղ, 135, 154
Հերհեր (Երերն), գյուղ, գետ, 489-492, 494, 496, 507-512
Հին Բայազետ, 256, 262, 267-269, 274, 275, 299, 321-323, 533
Հյուլյուլթ, գյուղ, 34
Հյուսիսային Դարալագյազի լեռնաշղթա, 488-490, 498
Հնդկաստան, 204
Հողոմոց, գյուղ, 587
Հոչաս, գյուղ, գետ, լեռ, 121, 133, 134, 136, 154
Հոռոմոսի վանք, 460
Հոսպակ (Ալուջալու Վերին), գյուղ, 294
Հոստուն (Ոստինք), գյուղ, 492, 513, 518, 519, 610, 619
Հովհաննես սր., եկեղեցի, 63, 263, 321, 577, 578, 580, 582
Հովհաննես սր., մատուռ, 256, 276, 387, 389, 399, 400, 444, 530
Հորթաղբղ, գյուղ, 518, 519
Հորզլու, գյուղ, 296
Հորթեկյուղ, գյուղ, 64

Հոբս (Հոբք), գյուղ, 492, 516, 521, 522
Հոխիսիմե սբ., եկեղեցի, 126, 143, 577
Հոխիսիմե սբ., մատուռ, 280
Հռոմ, 10, 57, 131, 422
Հրազդան (Հուրաստան, Ջանգու), գետ, 226-228, 232-234, 236, 237, 243, 247, 267, 318, 320-322, 324-327, 329, 435, 440, 443, 467, 476
Հրաշկարերդ (Հրասկաբերդ), 505, 585-587, 599, 604
Հրեշտակապետաց եկեղեցի, 514
Հրուշանի ձոր, 130
Ձագ, գյուղ, գետ, 233, 276
Ձագեձոր, 14, 24, 25, 122, 135, 138, 139
Ձկնարած, գետ, 501, 571
Ձորագեղ (Վալի աղալու), գյուղ, 277, 451
Ձորի սբ. Աստվածածին, եկեղեցի, 285
Ղարախլու, գյուղ, 323, 490, 492, 532
Ղազախ, 226, 267, 303, 307, 308, 313, 310, 332, 333, 459, 464, 466
Ղալաջըղ, գյուղ, 66
Ղալասար, գյուղ, 517
Ղամրլի, լեռ, 24, 42
Ղայալու, գյուղ, 490, 501
Ղավչուղ (Գրկիք), գյուղ, 492, 517, 518
Ղարաբաղ, 74, 127, 132, 163, 204, 205, 210, 213, 216, 218, 307, 314, 424, 500, 538
Ղարաբաղ, գյուղ, 531
Ղարա-գյոլ, լիճ, 51, 134
Ղարա-պաղ, գագաթ, 229, 307
Ղարայալը, գյուղ, 531
Ղարաղայա,գյուղ, լեռ, 51, 228, 487, 488, 492, 516, 523
Ղարաղչաղ, գյուղ, 153, 154, 210
Ղարանլուղ Ներքին (Կղնուտ Ներքին), գյուղ, 252, 284, 289, 336
Ղարանլուղ Վերին (Կղնուտ Վերին), գյուղ, 287-289, 336
Ղարավներան, գյուղ, 503
Ղարաքանդ, գյուղ, 299
Ղարաքիլիսա, գյուղ, լեռ, 17, 34, 54, 63-66, 265, 266, 268, 335, 336
Ղզլար, 464
Ղըզըլ-խարապա, գյուղ, 291
Ղըզըլ-գայա, գյուղ, 229, 233
Ղշլաղ, գյուղ, 270, 271, 307, 403, 521
Ղոշուն գաշ (Ձորքի քար), 54
Ղոխս, գյուղ, 60
Ղուլալի, գյուղ, 233, 256, 273, 311, 356, 357
Ղումլուճա, գյուղ, 292
Ղուչչի-գարասի, գյուղ, 314
Ճահուկ, գավառ, 51, 586, 587
Ճանիկ (Ցանըղ), գագաթ, 228
Ճգնավորի սար, 60
Ճկլրանկու., գյուղ, 498, 499
Ճուկիկան, գյուղ, 515
Մազաղ, գավառ, 252, 253, 330
Մազմազակ, լեռ, 133
Մաղրա, գյուղ, 19, 52, 53, 60, 61, 66, 304, 305
Մաղրա Մեծ, գյուղ, 305, 307
Մալիշկա, գյուղ, գետ, 489, 491, 496, 510-512
Մակու, 267, 269, 270, 317, 320-323, 325, 334, 317, 320-323, 325, 334, 317
Մահլաղան, գյուղ, 521
Մաղանջուղ, գյուղ, 123, 133, 154
Մաղավուզ, գյուղ, 122, 133, 154
Մամաս սբ., մատուռ, 287
Մամաս սբ., վանք, 521
Մամաբզակ, գյուղ, 501
Մայմեղ, լեռ, 235
Մայրավանք (Մայրադոմ), 321
Մանիչարի հովիտ, 271
Մանկեվ, գյուղ, 221
Մանկասար, գյուղ, 284, 287, 288
Մաշտոցնեք, սար, 458
Մառան, գյուղ, 317
Մասիս, 121, 393
Մասրուց անապատ, 278, 452
Մատինա, գյուղ, 288, 289
Մալաթուղ (Մայրադուբս), գյուղ, 525, 527
Մարահունջ, լեռ, 47, 640
Մարաղա, 62
Մարիամ Եգիպտացի սբ., եկեղեցի (Հռոմ), 57
Մարտիրոս, գյուղ, գետ, 490, 492, 494, 497, 529-531
Մաքինյաց (Մաքինացոց, Մաքենոց) վանք, 295, 437, 448, 449, 459, 460
Մաքրավանք, 321, 435
Մաքրավանք, գյուղ, 235, 269, 321
Մնկրե (Մողրով), գյուղ, 504
Մեծ Ախտարան, լեռ, 51
Մղրի, 9, 132, 201, 209, 211, 221
Մեսրովբ սբ., եկեղեցի, 299
Մերիկ, գյուղ, գետակ, 134, 154
Միապոր, գավառակ, 460
Մինաս սբ., եկեղեցի, 35, 49
Մինաս սբ., մատուռ, 143
Մինքենդ, գյուղ, 134, 135, 154
Միջադեաք, 327
Միջին Ասիա, 68
Մխսխանա (Աբասաձոր, Նովո-Միխայլովկա), գյուղ, պղնձահանք, 235, 324

Միսխանա (Պղնձահանք), լեռնաշղթա, գետ, 229, 233-235, 322-324, 436
Միսիթար Դոշ, մատուռ, 269
Մոզ, 489, 491, 493-496, 502, 503, 510-513
Մոռամուսուն, գյուղ, 328
Մոսկվա, 475, 494, 569
Մորենի, գյուղ, 12
Մշէրտլու, գյուղ, 292
Մուղան, 222
Մուշ, 59, 267, 280, 271, 298
Մուսուն, գյուղ, 292
Յոնճալու, գյուղ, 292, 293
Յուխարի տանձիկ, գյուղ, 504
Նադեժդինո (Շորժա), գյուղ, 227, 316, 335
Նախիջևան, գավառ, խանություն, լեռնաշղթա, գետ, 9, 18, 19, 20, 48, 51, 59, 60, 61, 124, 132, 154, 210, 228, 290, 471, 485, 487, 497, 500, 506, 509, 586, 587
Նահատակի մատուռ, 143, 616
Նահեն, գավառ, 287
Նամազ-ալի, գյուղ, 523
Նավլար, գյուղ, 489, 496, 512
Նարակնունք (Նորակնունք) եկեղեցի, 140
Նեղուցի սր. Աստվածածին, վանք, 328, 438
Նիգ, 252, 253, 444
Նիկիա, 423
Նիկոմեդիա, 456
Նյու-Յորք, 432
Նշան սբ., եկեղեցի, 312, 422, 423, 426, 430, 431, 433-435, 438, 575, 577, 578, 599, 600, 602, 603, 604, 664
Նովո-Նիկոլաևկա, գյուղ, 235
Նոլագյուղ (Միրաբաթ), գյուղ, 279
Նորադուզ (Նորատուս), գյուղ, 232, 233, 254, 257, 262, 293, 313, 314, 396, 400, 404
Նորաշեն, գյուղ, գետակ, 210, 233, 271
Նորավանք, 15, 490, 495, 503, 505, 506, 517, 524, 534, 583, 584, 586, 587, 599, 605, 621
Նոր Բայազետ, քաղաք, գավառ, 5, 226, 228, 229, 232, 233, 235, 236, 240, 241, 252, 293, 256, 257, 261, 265, 270, 271, 273, 276, 288, 298, 311, 319, 320, 336, 356-358, 372, 387, 388, 399, 410, 421, 435, 448, 467, 476, 522, 584, 485, 487, 512, 520
Նոր գյուղ, 571
Նորիք, գյուղ, 523
Նոր-Ռեհի (Նորջալու), գյուղ, 303
Նըզար, լեռ, 529
Նուխի, 207
Շահանդուխտի ձոր, ժայռ, գագաթ, 27, 41, 147
Շահ-դաղ, լեռնաշղթա, 226, 227, 313, 314, 314
Շահրիվ, գյուղ, 267, 462
Շաղատ, գյուղ, 10-12, 19, 52, 57, 60-63, 66, 111
Շամախի, 154
Շամբ, գյուղ, 44, 48
Շամիրամի լեռ, 330
Շամփուր, սար, 234
Շամքոր, գյուղ, 481
Շանդիրեյ, առու, 499
Շատինի վանք, 519
Շարուր, 485, 487, 498, 499
Շարուր-Դարալագյազ, 5, 9, 51, 52, 154, 226, 228, 288, 290, 335, 483-487, 497
Շաքարլու, գետ, 17
Շաքեի վանք, 65
Շաքի, գյուղ, 12, 57, 65, 464
Շեյխ աղուր, գյուղ, 293
Շէնդաւիթ, 329, 423, 433
Շիկահող, գյուղ, 203, 205
Շիկարխ, գյուղ, 621
Շինուհայր (Շնհեր, Հայրաշեն), գյուղ, 19, 34, 47, 122, 123, 424, 131, 132, 147, 148, 151, 154, 206, 207, 602
Շիշթափա, լեռ, 49, 51, 227
Շիշ-կայա, գյուղ, լեռ, 234, 307, 308, 315
Շիտան, գյուղ, 503
Շիրակ, 465
Շլորդվաց եկեղեցի, 45
Շխլար, գյուղ, 52, 53
Շնաթաղ (Շինաթաղ), գյուղ, գետ, 42-44, 46, 49, 66, 67
Շղուլի ձոր, 498, 504
Շողագա, գետակ, 233
Շողագա վանք (Շողավանք), 277, 451, 460
Շոռ-ջուր, գետակ, 134, 138
Շորիկ, գյուղ, 515
Շռան, լրվիժ, 141
Չվանիձոր, գյուղ, 34
Չվեյցարիա, 133
Շրեչի (Շըրեչ), սար, 488, 524
Շուշի, 9, 18-20, 59-61, 69, 129, 132, 137, 151, 215, 224
Շուքար, գյուղ, 52, 65
Ոսկեբակ, գյուղ, 440
Որոտան, գետ, 24, 27, 36-38, 41-43, 48, 49, 52, 131
Որոտան (Որոտնա), գյուղ, բերդ, 19, 26, 38, 40, 41, 207, 602
Որոտնա կամուրջ, 19

Որոտնավանք, 38, 52, 65, 66, 108, 207
Զախըլլու, գյուղ, 298, 300, 304
Զամուրլու, գյուղ, 295, 296
Զայքենտ, գյուղ, գետակ, 498, 501, 525, 526
Զանախչի, գյուղ, 123
Զափնի, գյուղ, 202, 213
Զիբուխլու (Ճապուտիկ), գյուղ, գետ, 231, 233, 246, 268, 480
Զիվա, գյուղ, 504, 520, 524, 587
Զլկանի, գյուղ, 278
Զրախլու, գյուղ, 154, 525
Պաղաբերդ, լեռ, 24
Պանտալեան բժշկի մատուռ, 153
Պառավի վանք (Ձահրավանք, Իլիկի վանք), 275, 402
Պատպատ, լեռ, 56
Պարսկաստան, 9, 19, 44, 60-62, 66, 68, 154, 207, 209, 213, 224, 318, 327, 329, 464, 485, 505, 515, 518, 519, 524, 553
Պետրոսախաչ, լեռ, 24
Պետրոսի դար, բլուր, 318
Պրուհնոտ, ձոր, 142
Պրոբվըքումբ, գյուղ, 205, 206
Պողոս սբ., եկեղեցի, 279
Պողոս-Պետրոս սբ., եկեղեցի, 28-30, 36, 278, 285
Ջահրի, գյուղ, 509
Ջահուկ, գավառ, 463
Ջաղատա, գյուղ, 502
Ջաղայաձոր, 252
Ջանի, գյուղ, 492, 516
Ջավախք, 80, 83, 172, 392, 410, 411
Ջերմուկ (Իսախսու), գյուղ, 489, 491, 498, 500
Ջիրրայիլ, 9, 59, 68, 154
Ջիլ, գյուղ, 244, 313, 316
Ջիջիմլի, գյուղ, 154
Ջիվանչիր, գավառ, 9, 51, 132, 154, 226, 485, 487, 490
Ջրաիններ, լեռնաշղթա, 45
Ջուլ (Ակողք), գյուղ, գետակ, 490, 510, 525, 526
Ռինդ (Ըռնդի, Յուլգյուրդ), գյուղ, 523
Ռմբատար, գագաթ, 228, 309
Ռնդամալ (Մելիքի-գյուղ), 233, 318, 322
Ռոստով, 531
Ռուսաստան, 9, 512, 514, 531, 532
Սալմաստ, 62-64, 503, 512, 514, 515, 524, 529, 531-533
Սալլի, գյուղ, 521
Սալվարտ, լեռ, 51, 59
Սաղսաղան, սար, 130, 133, 134, 210
Սամալայի Նահանգ, 316
Սառնըձակեր, սար, 46
Սավրի, գյուղ, 512, 514, 529, 531, 532
Սատանախաչ, գյուղ, լեռ, 227, 228, 244, 314, 315
Սատանի կամուրջ, 24-26, 37, 52, 147
Սատարակ, գյուղ, 289
Սարամեր (Սարամերիկ), գյուղ, 512, 532
Սարաջալար, գյուղ, 233
Սարգիս սբ., եկեղեցի, մատուռ, 46, 277, 443
Սարի բաբա, լեռ, 133
Սարի-Ցայղուր, գյուղ, 304
Սելիմ, կարավանատուն, լեռնանցք, 228, 288, 289, 520
Սեմյոնովկա, գյուղ, 227, 228, 266
Սերկևիլ, լեռ, 327
Սիոն սբ., անապատ, 508, 621
Սիսական, Նահանգ, 9, 15, 39, 201, 229, 282, 448, 451, 458, 462, 484, 494
Սիսիան, գյուղ, գետ, բերդ, 9, 13, 17, 22-24, 34, 51-55, 58, 59, 64, 66, 68, 69, 72, 76, 80, 96, 124, 132, 135, 159, 165, 181, 192, 193, 196, 635
Սմբատաբերդ, 210, 518, 576
Սյունիք (Սյունյաց աշխարհ), 5, 8-13, 15, 230, 252, 461, 462, 485, 586
Սոլակ, գյուղ, 320, 321
Սոմա, գյուղ, գավառակ, 514, 519, 520, 524
Սոյլան, գյուղ, 491, 501, 502
Սոփիա սբ., մատուռ, 276
Սոսգորտ, գյուղ, 335
Սորանչի, գյուղ, 297
Սպահան, 63, 586
Սվարանց, գյուղ, 49, 207
Ստեփանոս սբ., եկեղեցի, մատուռ, 11, 47, 58, 118, 148, 253, 275, 321, 523, 611, 614
Ստեփանոս Նախավկա սբ., վանք, 553
Սրնձից սբ. Մինաս, անապատ, 292
Սրչանլի, գագաթ, գյուղ, 229, 278, 291, 488
Սրոնոցի ձոր, 142
Սուբատան, գյուղ, 205, 295
Սուղեգանի լեռնաշղթա, 247
Սուլթան-քենդ, գյուղ, 145
Սուլու-քար, լեռ, 24, 60
Սուխոյ-Ֆանտան, գյուղ, 235, 266, 320, 441
Սունասար, գյուղ, 154
Սուրբ Աչ, վանք, 321
Սուրբ Սահակ, գյուղ, 587
Սուրբ Օհան, գյուղ, 274
Սուրմալու, 332
Սևանա լիճ (Գեղամա, Գյոգչա), 9, 132, 226-237, 240, 241, 244, 245, 252, 257, 262, 264-266, 268, 276,

295, 296, 298, 300, 314, 316, 394, 405, 437, 439, 441, 458, 462, 464
Սևանի կղզի, 455-458, 460, 463, 467
Սևանի վանք, 269, 270, 277, 279, 292, 434, 439, 451, 453, 455-457, 459-461, 465-469, 474, 476, 479, 643
Սևաքար, գյուղ, 202, 213
Սև լեռ, 441
Սև ջուր, ակբյուր, 505
Վահան սբ., մատուռ, 273
Վահանավանք, 202
Վաղագնի վանք, 65
Վաղարշապատ, 11, 456
Վաղուդի (Վաղագին), գյուղ, 65
Վայոց ձոր, 5, 40, 51, 228, 287, 289, 290, 447, 448, 475, 484, 485, 487, 489, 490, 492, 494-497, 502, 507, 509-511, 513, 520, 536, 569-571, 585-587, 610, 665
Վան, 317, 321, 323, 328, 529, 534, 537
Վանանդ, 209, 270
Վանեվան, գյուղ, վանք, 294, 446, 447, 621, 628
Վասակաշեն, գյուղ, գետակ, 234, 296, 297, 621
Վասպուրական, 422, 432, 460
Վարաժնունիք, 252, 253, 441
Վարանդա, 76, 80, 83, 389, 410, 411
Վարարակ, 14, 24, 25, 134, 141
Վարդավուր, լեռ, բնդ, 503, 533
Վարդան սբ., նկեղեցի, 281, 291, 325
Վարդանաբակ (Վարդաշեն, Ղըրխ-բուլաղ), գյուղ, 299, 300
Վարդանանց սբ., եկեղեցի, 58
Վարդանես (Վարդենիք), գյուղ, 462, 492, 524
Վարդանի բերդ, 514
Վարդանլու, գյուղ, 314
Վարդաշեն, 207, 212
Վարդենոց, գետակ, 234
Վարսեր (Զըրչըր), գյուղ, 267, 459
Վարվառե սբ., մատուռ, 273, 531
Վժանիս, գյուղ, 213
Վիեննա, 476
Վրաստան, 203, 204, 205
Տաթև, գյուղ, 13, 16, 18, 23, 26, 27, 34, 35, 51, 206, 207, 216
Տաթևի վանք, 12-19, 22-27, 31, 34, 35, 37, 39, 41, 42, 45, 49, 57, 59, 64, 146, 147, 151, 178, 206-208, 218, 224, 441, 463, 475, 586, 587, 604, 632
Տաթևի Մեծ անապատ (Հարանց անապատ), 24, 31, 36, 38, 52, 147
Տաճկաստան, 297, 515, 537
Տամրովի նահանգ, 266, 317
Տանալուա, գյուղ, 270
Տանձաթաղ, գյուղ, 515
Տանձատափ (Դարարաբա), գյուղ, 27, 34, 203, 207, 213, 215
Տանձիկ, գյուղ, 506, 604
Տանձուտ, գյուղ, 24
Տաշալտի, գյուղ, 489, 502
Տաշխաչ, լեռ, 533
Տաշտոն, գյուղ, 202, 218
Տարոն, 10, 432
Տեղ, գյուղ, 122, 125, 126, 128, 133, 143, 145, 147, 154, 155
Տիկնաձոր, 389, 403
Տխարր, գյուղ, 599
Տյուսկուլու, գյուղ, 295
Տոմա, գյուղ, 278
Տուլորս, գյուղ, 52, 53, 58, 59
Ցախաց-քար (Ցուղաց-քար, Ղոչավանք), 518, 576-578, 582, 583
Ցամաքաբերդ, գյուղ, Հրվանդան, 229, 231, 269, 369, 458, 459, 464, 466, 476
Ցղնա, գյուղ, 150
Ցղունի (Ալակչի), գյուղ, գետ, 58, 59, 134
Ուլաշիկ, գյուղ, 324
Ույծ (Ուլ), գյուղ, 12, 19, 52, 61, 66, 500
Ուչթափա, լեռ, 51
Փամրակ, 226, 229, 232, 233, 246, 247, 304, 313, 314
Փաշաբինդ, գյուղ, 235, 256, 261, 262, 323, 325, 388
Փառազուն, գյուղ, 621, 628
Փարաջիկ, գյուղ, 529
Փարվիզ, 155
Փիր-Մաղրա, գյուղ, 220
Փշատիր, գյուղ, 512
Փշունք (Փաշալու), գյուղ, 529, 531
Փոկաս սբ., եկեղեցի, 584, 585
Փոդահանք, գավառակ, 490, 587, 604
Փոնձաթաղ, գյուղ, 515
Փոր (Փոռ, Բոր), գյուղ, 494, 531
Փորակ, գավառակ, 252
Փոքր Ասիա, 47
Փոքր Գիլանլար, գյուղ, 289
Փոքր Իշխլի, լեռ, 51
Փոքր Կռվկաս, 227
Փոքր Զազ, գյուղ, 275
Փոքր Մաղրա, գյուղ, 307
Փոքր Բաղոխ, գյուղ, 320
Փչանիս, գյուղ, 154
Փուխրուտ, գյուղ, 220
Փուտկու սբ. Գէորգ, 410
Քաղոխ, գյուղ, 243, 320
Քանաքեռ, գյուղ, 440
Քաչալ լեռ, գագաթ, 51, 132
Քաջարանց, գյուղ, 220
Քաջ նահատակ, ուխտատեղի, 292

Քասիկ բաշ, գյուղ, 289
Քարաբերդ, ամրոց, 270
Քարագլուխ, գյուղ, 287, 521
Քարահունջ, գյուղ, լեռ, 123, 124, 132, 133, 135, 141, 142, 154, 287, 521, 640
Քարաչեն, գյուղ, 124, 135, 154
Քարկոփ, գյուղ, 560
Քաւթարանց, գյուղ, 621
Քեթի, գավախ, գետակ, 228, 234, 304
Քեչիշ աբխ, ջրանցք, 25
Քեչիշքենտ (Ստոտրալիզ), գյուղ, 489-491, 497, 501, 513, 514, 515, 520
Քեչաբերդ, լեռ, 51, 62
Քեփլու, գյուղ, 301
Քիրամաշեն, գյուղ, 263
Քիրս, գյուղ, լեռ, 34, 132, 134
Քյանքյան, գյուղ, 253, 330, 331, 335
Քյասաման, գյուղ, 308
Քյարքի-բաշ, գյուղ, 300
Քյոլաղաան, գյուղ, 293, 294
Քյոմուրլու, գյուղ, 524
Քյուսաճըղ, գյուղ, 275, 388, 402
Քյուփարա, գավառակ, 202, 213, 215
Քոթան-գաղ, լեռ, 330, 333, 334
Քոթանլու (Գուտենի), գյուղ, գետ, 496, 507, 508
Քոլանլու, գյուղ, 293
Քոչի-գեղ, 278
Քոչ պեկ (Քաշխմալգ, Քյոչպանգ), գյուղ, 525
Քոռամուսուն, գյուղ, 328
Քոռուն, գյուղ, 292
Քրդիկանց, գյուղ, 220
Քրհանանց, գետակ, 24
Քուալղրան, գյուղ, 288
Օղանլար, գյուղ, 329
Օխնած ջուր, աղբյուր, 151
Օխչի, գետ, 208, 211
Օղակ, գյուղ, 320, 334
Օղրուջա, գյուղ, գետակ, 308
Օրդակլու (Գորտակ), գյուղ, 230, 234, 268, 269, 335, 454, 457, 476
Օրլուբադ, 154, 209, 211, 218
Օրթաքենտ, գյուղ, 494, 513, 514, 515
Օփավոր, լերդ, 141
Ֆարուխ, գյուղ, 322, 323

ՆԿԱՐՆԵՐ

Սատանայի կամուրջը

Տաթևի վանքը



Տաթեւի վանքի Սյունե գավազանը

Որոտնավանք

Կրոմլեխներ և մանհիրներ

Borchini inc.









ա. էյվան (սրահ), բ. տուն, գ. տան օթախ, դ. ղոնաղ օթախ: 1. ղազմա, 2. քոչ, 3. չանաբանտ

Կինն ամուսնու ձեռքին ջուր է ածում

Մնողներ

Կյորես ավան

Ջրվեժ Քարահունջում, Շուռան

Միծեռնավանք

Քարահունջեցի կին

Գորիսեցի — Մանուչար բեկ Մելիք Հուսեինյան

Գեղարքունիք



Սևանի վանք

Ս. Աստվածածնի եկեղեցին (հնում)

Նահապետական հայ գերդաստան

Նոր Բայազետ քաղաքը

Ծաղկաձոր. Կեչառիսի ս. Հարություն եկեղեցին հյուսիս-արևմուտքից

Ծաղկաձոր. Կեչառիսի ս. Հարութիւն եկեղեցու գաւիթը

Մաղկաձոր. խաչքար

Մաղկաձոր. խաչքար

Ծաղկաձոր. Վեսիկ վարդապետի դամբարանը

Հովհաննավանք կամ Այրի-վանք

Բջնիի ս. Աստվածածին եկեղեցին

Ծաղկաձոր. Երեք եկեղեցիների ընդհանուր տեսքը

Ծաղկաձոր. Երեք եկեղեցիների արևելյան պատը

Ծաղկաձոր. ս. Գրիգոր եկեղեցին հարավից

Ծաղկաձոր. Կեչառիսի ս. Գրիգոր եկեղեցու հյուսիսարևմտյան պատերը



Ծաղկաձոր. Կաթողիկե եկեղեցու արևմտյան մուտքը

Ծաղկաձոր. Կեչառիսի ս. Գրիգոր եկեղեցու սեղանը



Ծաղկաձոր. Կեչառիսի ս. Գրիգոր Նիկեցու դավթի արևմտյան դուռը



Ծաղկաձոր. Կեչառիսի ս. Գրիգոր եկեղեցու գավիթը ներքուստ

Ծաղկաձոր. Կեչառիսի ս. Կաթուղիկե եկեղեցին
Հյուսիս-արևմուտքից



Ծաղկաձոր. Կեչառիսի ս. Կաթուղիկե եկեղեին հարավից

Ծաղկաձոր. Կեչառիսի ս. Նշան եկեղեցին
հարավ-արևմուտքից

Ծաղկաձոր. Կեչառիսի ս. Նշան եկեղեցու արևմտյան դուռը

Կանալը վարում են չորացած գետի հունը, որպեսզի անձրև գա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կալմոզի կողմից 5

ՋԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԱՎԱՌ
ՍԻՍԻԱՆ (ՆՑՈՒԹԵՐ ԱՊԱԳԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)

ԱՌԱՋԱԲԱՆ 7

ՍԻՍԻԱՆ
Պատմական տեսություն 9
Սյունյաց մետրապոլտություն 9
Տաթև 13
Սևսեանի մելիքություն 17

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Տաթև 22
Գավազան-սյուն 22
Հովհան Որոտնեցի 22
Գրիգոր Տաթևացի 23

ՏԱԹԵՎ
Բնակրություն 23
Քաղաքական մաս 27
Ս. Լուսավորչի եկեղեցի 30
Գավազան սյունը 30
Տաթևի վանքի արձանագրություններ 31
Տապանագրեր 33
Տաթև գյուղ 35
Հարանց անապատ 36
Մեծ կամ Տաթևի անապատ 37
Որոտնա վանքը 38
Որոտնա վանքի արձանագրությունները 39
Որոտնա բերդ 40
Շահանդուխտի ժայռ 41

ԼՈՐԱՁՈՐ
Բնակրություն 42
ՆՇԱՆԱՎՈՐ ԳՑՈՒՂԵՐ 44

ՍԻՍԻԱՆ

Բնագրություն 51
Նշանավոր տեղեր և դյուղեր 54
Նշանավոր վանքեր 61
Բնակիչներ 66
Բնակարան 69
Զգեստ և զարդ 72

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ

Ամուսնություն և հարանյաց սովորություններ,
նշանադրություն 76
Պսակ 79
Ծախսը 88
Տղաբերք և կնունք 89
Ընտանեկան կյանք 92
Ազգակցական անուններ 95
Հիվանդություն և բժշկություն 96
Մահ, թաղում և մեռելոց 99
Նշանավոր տոներ 103
Ժողովրդական երգեր 112
Ավանդություններ Աղեքսանդր Մեծի մասին 121

ԶԱՆԳԵԶՈՒՐ

Պատմական համառոտ տեսություն 122
Մելիք Հյուսեինյաններ 123
Մելիք Բարխուդարյաններ 125

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հրուշան և Զոնգի Գիլքի 130
Բոլ 131
Ծիծեռնավանք 131
Տեղագրություն, բնագրություն 132
Քաղական մաս 136
Բարկուշատի ձոր 147

ՆՇԱՆԱՎՈՐ ՎԱՆՔԵՐ

Ծիծեռնավանք 152
Պանտալեոն բժշկի մատուռը 153

Հայկական ավերակ եկեղեցիներ 153

ԲՆԱԿԻՉՆԵՐ 154

ԲՆԱԿԱՐԱՆ 158

ԶԳԵՍՏ ԵՎ ԶԱՐԴ
Կանանց զգեստ 161
Զգեստի արժեքը 163
Տղամարդկանց զգեստ 164

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ
Ամուսնություններ և հարսանյաց սովորություններ,
նշանադրություն 165
Հարսանիք 169
Ծախսը 177
Տղաբերք և կնունք 178

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔ 182
Ժողովրդական դեղեր 185
Մահ, թաղում, մեռելոց 189
Թաղման ծախսեր 192

ՆՇԱՆԱՎՈՐ ՏՈՆԵՐ 192
Ժողովրդական երգեր 197
Վիճակի երգեր 198

ԿԱՊԱՆ ԿԱՄ ՂԱՓԱՆ
Պատմական համառոտ տեսություն 201
Մելիքություններ 202

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻ ԳԱՎԱՌ ԿԱՄ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ
Բնակություն 226
Հանքեր 234
Հանքային ջրեր 235
Կլիման 236
Կենդանիները 236
Բուսականություն 242

ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գավառի բաժանումը 252
Նոր-Բայազետ քաղաք 253
Աղվիբերդի գյուղական հասարակություն 257
Ելենովկայի գյուղական հասարակություն 265
Դալի-Ղարդաշի գյուղական հասարակություն 270
Գյոլի գյուղական հասարակություն 276
Ղարանլըղլի գյուղական հասարակություն 284
Գյոզալդարայի գյուղական հասարակություն 291
Բասարդեչարի գյուղական հասարակություն 296
Մազրայի գյուղական հասարակություն 305
Ջիլի գյուղական հասարակություն 313
Հայոց Ներքին Ախտայի գյուղական հասարակություն, տեղագրություն 317
Ռնդամալի գյուղական հասարակություն 322
Թայչարուխի գյուղական հասարակություն 323
Արզաքենտի գյուղական հասարակություն 325
Քյանքյանի գյուղական հասարակություն 330

ԳԱՎԱՌԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ 335
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ
Ամուսնություն և հարսանիքի սովորություններ 337
Տղաբերք և կնունք 355
Տղամարդկանց անուններ 363
Կանանց անուններ 364
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՂԵՐ 372
ՄԱՀ, ԹԱՂՈՒՄ ԵՎ ՄԵՌԵԼՈՑ 379

ՀԱՎԱՏՔ

Լեռների պաշտամունք 387
Ջրի պաշտամունք 387
Քարերի պաշտամունք 388
Կրակի պաշտամունք 389
Կենդանիների պաշտամունք 390
Շեմքի պաշտամունք 391
Տարրերի և ֆիզիկական երևույթների պաշտամունք 391

ՈԳԻՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Բարի ոգիներ 397
Սրբեր 399
Չար ոգիներ 402
Կախարդություն 407
Սնոտիապաշտություններ 417
Համավոր պատեր և տոներ 420

ՆՇԱՆԱՎՈՐ ՎԱՆՔԵՐ

Կեչառիս 421
Արճանապրություններ 432
Մաքրավանք 435
Արտավազդա վանք 436
Կարենավանք 437
Նեղուցի Ս. Աստվածածին 438
Հայր Հովհաննավանք կամ Այրի վանք 439
Բջնիի ս. Աստվածածնի վանք 440
Արճանապրություններ 444
Ծանեվանու վանք 446
Արճանապրություններ 447
Մաքինյաց վանք 448
Շողագա վանք 451
Մասրուց անապատ 452
Կոթա Ս. Աստվածածին 453
Գանձավանք կամ Անդիր վանք 454
Թայչարուխի վանք 454

Սեվան 455
Սևանի կղզին 455
Սևանա վանքի պատմություն 457
Սևանի վանքի պատմական էվոլյուցիան 468

ՎԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Եկեղեցիները 471
Շենքեր 473

ՎԱՆՔԻ ՍՐԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եկեղեցական զարդերն ու անոթները 474
Վանքի ձեռագրերը 475

Վանքի կալվածները 476
Վանքի ելևմուտը վերջին երեք տարիներում 477
Արձանագրություններ 478
Տապանագրեր 480

ՇԱՐՈՒՐ-ԴԱՐԱԼԱԳԵԱՋԻ ԳԱՎԱՌ
Երկու խոսք 483
Ներածություն 485
Տեղագրություն, բնագրություն 487
Պատմական տեսություն 492
Քաղաքական մաս 497
Արփաչայի Հովիտ 498
Հյուսիսային Վայոց ձոր 507
Հարավային Վայոց ձոր 524

ՋԳԵՍՏ ԵՎ ՋԱՐԴ 534
ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐՍԱՆԻՔԻ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 536
Տղաբերք և կնունք 553
Աղջկա անուններ 558
Տղայի անուններ 559
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՂԵՐ 562
ՄԱՀ, ԹԱՂՈՒՄ ԵՎ ՄԵՌԵԼՈՑ 564

ՎԱՅՈՑ ՁՈՐ
Երկու խոսք 569

ՆՇԱՆԱՎՈՐ ՎԱՆՔԵՐ
Գնդեվանք 570
Յախաց քար 576
Նորավանք 583
Եղեգիսի եկեղեցիները 610
Արատես 619

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ 629

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ 639

ՆԿԱՐՆԵՐ 653

ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆ
ԵՐԿԵՐ
ՀԱՏՈՐ 4

Խմբագիր՝ Սուրեն Հարության

Գրախոսներ՝ Սամվել Մկրտչյան, Թամար Հայրապետյան

Սրբագրիչներ՝ Անժելա Ամիրխանյան, Հասմիկ Հարությունյան, Լիանա Քևնակպյան

Համակարգչային ձևավորումը՝ Սեդրակ Հակոբյանի

60X84 1/16: Տպագրությունը՝ օֆսեթ
Տպ. մամուլ՝ 43.5: Տպաքանակը՝ 300 օրինակ

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ

ԼՈՒՍԱԿՆ

Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ 055-52-79-74
էլ. փոստ lusakn@rambler.ru

[3000 գր.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0669194

II
A108300

ISBN 978-9939-886-24-4